ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

2023

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ 2024

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

2023 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 16

1. Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության զարգացումը 16

2. Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության երաշխիքները 18

3. Համագործակցությունը հանրային իշխանության մարմինների հետ 19

4. Համագործակցությունը քաղաքացիական հասարակության հետ 22

5. Համագործակցությունը միջազգային կառույցների հետ 24

6. Գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունը 35

7. 2023 թվականի վիճակագրական տվյալներ 37

8. Արտահերթ հրապարակային զեկույցներ և ուսումնասիրություններ 40

9. Մարդու իրավունքների կրթություն և վերապատրաստումներ 41

ԲԱԺԻՆ 2. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 44

ԳԼՈՒԽ 1. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 45

1. Կենսաթոշակի իրավունքի իրացման հետ կապված գործնական և օրենսդրական խնդիրներ 45

2. Սոցիալական աջակցության իրավունքների ապահովումը 57

ԳԼՈՒԽ 2. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 73

1. Պետության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու հետևանքով սեփականության իրավունքը սահմանափակելու խնդիր 73

2. «Դալմայի» այգիների նախկին հողօգտագործողների օտարված հողատարածքների դիմաց փոխհատուցման խնդիր 76

3. Սեփականության իրավունքով պատկանող հողամասերը սխալ չափագրելու և կադաստրային քարտեզում ամրագրելու պատճառով առաջացած հողամասերի համադրումները շտկելու խնդիր 79

4. Աղետի գոտու բնակավայրերի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում երկրաշարժից հետո տեղադրված կամ կառուցված ոչ հիմնական շինություններում բնակվող անձանց խնդիր 80

5. Անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերի կողմից ԽՍՀՄ ռուբլով վճարված գումարի արժեզրկումից կրած կորուստների դիմաց հատուցումը 86

ԳԼՈՒԽ 3. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 90

1. Աշխատանքից ազատվելիս աշխատողների հետ վերջնահաշվարկ չկատարելը կամ մասնակի կատարելը 90

2. Հաստիքների կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության օրենսդրական չափորոշիչների բացակայությունը 91

3. Աշխատանքային իրավունքների և օրենսդրության նկատմամբ պետական հսկողություն իրականացնող արտադատական մարմնի բացակայությունը և աշխատանքային իրավունքների վերաբերյալ իրազեկման պակասը 93

4. Գործադուլի իրավունքի սահմանափակումը 96

5. Խախտված աշխատանքային իրավունքների հարցով ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին անանուն բողոքներ ներկայացնելու հնարավորության բացակայությունը 100

6. Աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման իրավունքների պաշտպանություն 102

7. Աշխատանքային իրավունքների պաշտպանության ու խթանման հարցում արհեստակցական միությունների դերի բարձրացումը 110

ԳԼՈՒԽ 4. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 119

1. Հանրակրթական ուսումնական հաստատություններում դասագրքերի օգտագործման համար ներդրումային գումարների գանձումը 119

2. Ջրի և սանիտացիայի հասանելիության հարցը նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում 123

3. Սննդի անվտանգության ապահովումը հանրակրթական ուսումնական հաստատություններում 127

4. Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում շենքային, գույքային պայմանների և ջեռուցման ապահովման վերաբերյալ խնդիրներ 131

5. Բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքի դիտարկումը սահմանադրաիրավական հարթությունում 136

ԳԼՈՒԽ 5. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ 142

1. Բժշկական օգնության մատչելիության խնդիր 143

2. Բժշկական օգնության հասանելիությունը 149

3. Պետական մարմնի առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի խնդիր 154

4. Պալիատիվ բուժօգնությունը 157

5. Շուրջօրյա խնամքի կենտրոններում (տուն-ինտերնատներում) ինքնասպանության դեպքերի կանխարգելում 162

ԲԱԺԻՆ 3. ՊԱՏՇԱՃ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ 166

1. Կատարողական գործողությունների իրականացումը դրանց կասեցման միջնորդությունը դատարանի կողմից բավարարված լինելու պայմաններում..... 171

2. Մարդկանց վրա թափառող շների պարբերաբար հարձակումների խնդիր.....173

ԲԱԺԻՆ 4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 176

1. Շրջակա միջավայրի հարցերի վերաբերյալ հանրային իրազեկման և հանրության պատշաճ ներգրավվածության ապահովումը, էկոլոգիական իրավունքների պաշտպանության արտադատական մեխանիզմի բացակայությունը.....176

2. Քիմիական նյութերի և թափոնների անվտանգ հեռացումն ու ոչնչացումը 181

3. ՓՀԷԿ-երը և ջրային ռեսուրսների գերօգտագործումը.....188

4. Հանքավայրերի շինարարության և շահագործման հետ կապված խնդիրներ.192

5. Առողջ և բարենպաստ շրջակա միջավայրում ապրելու իրավունքի ապահովման խնդիր.....205

ԲԱԺԻՆ 5. ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 208

1. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում ձերբակալված և կալանավորված անձանց ընտրական իրավունքի իրացմանն առնչվող խնդիրներ.....210

2. Հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքների և երեխաների լավագույն շահի պահպանման խնդիրները ընտրությունների համատեքստում.212

3. Ընտրական գործընթացների թափանցիկության և հանրային հաշվետվողականության ապահովմանն առնչվող խնդիրները ընտրությունների կազմակերպման և իրականացման համատեքստում 213

4. Ընտրական գործընթացում անհանդուրժողականությանն առնչվող խնդիրներ 215

ԲԱԺԻՆ 6. ԿԱՐԾԻՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ 216

1. Տեղեկատվության ազատությունը. օրենսդրություն և իրավակիրառ պրակտիկա 217

2. Լրագրողների մասնագիտական գործունեության անխոչընդոտ իրականացումը դատական իշխանության գործունեության համատեքստում..... 222

3. Ատելության խոսքը հանրային տիրույթում..... 224

ԲԱԺԻՆ 7. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 234

1. Անձնական տվյալների պաշտպանությունը՝ որպես լրագրողական հարցումներին չպատասխանելու կամ ոչ լիարժեք տեղեկատվության տրամադրման հիմք 234

2. Անձնական տվյալների պաշտպանությունը «ԴատաԼեքս» համակարգում դատական գործերի հրապարակման համատեքստում 239

3. Արհեստական բանականության զարգացմանը զուգընթաց անձնական տվյալների պաշտպանությունը 243

ԲԱԺԻՆ 8. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 251

ԳԼՈՒԽ 1. ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ 253

1. Անմեղության կանխավարկածի պահպանումը և ենթադրյալ հանցանք կատարած անձի կամ քրեական վարույթի վերաբերյալ հանրությանը տեղեկություններ տրամադրելու անհրաժեշտությունը 253

2. Հանցագործությունների վերաբերյալ ֆիզիկական անձանց հաղորդումները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով չընդունելու և չքննարկելու՝ հաղորդումն ընդունող մարմնի հայեցողական պրակտիկան 258

3. «Փաստացի քրեական հետապնդման» վտանգները և դրանից անձի պաշտպանության երաշխիքները 263

4. Քրեական վարույթին ներգրավված անձանց պաշտպանությունը 265

5. Մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման գործնական խնդիրներ 270

6. Կալանավորված անձին մերձավոր ազգականների, այդ թվում՝ ընտանիքի անդամների և օրինական ներկայացուցչի հետ տեսակցություններն ու հեռախոսային խոսակցություններն արգելելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցագործություն կատարած անձանց ձերբակալման կամ ժամանակավոր կալանավորման հետ կապված խնդիրներ 274

7. Խուզարկություն քննչական գործողությանն առնչվող գործնական խնդիրներ 276

8. Քրեական վարույթի ընթացքում սեփականության իրավունքի սահմանափակմանն առնչվող խնդիրներ 280

9. Մասնավոր անձանց կողմից հեռախոսային խոսակցություններ ձայնագրելու և որպես ապացույց օգտագործելու պրակտիկան քրեական վարույթի շրջանակում՝ մարդու իրավունքների պաշտպանության համատեքստում 285

10. Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու պրակտիկան 287

11. Քրեական վարույթի նյութերին ծանոթանալու ժամկետներին և կարգին առնչվող գործնական խնդիրներ 301

12. Քրեական վարույթներով քննության ողջամիտ ժամկետների պահպանմանն առնչվող խնդիրներ 305

13.Քրեական արդարադատության ոլորտում միջազգային համագործակցության շրջանակում իրականացվող գործընթացների հետ կապված խնդիրներ 310

ԳԼՈՒԽ 2. ԱՆՁՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ 314

1. Ազատությունից զրկելիս անձի իրավունքների ապահովման երաշխիքները ... 314

2. Հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով անձին ձերբակալելու պրակտիկայում մարդու իրավունքների խնդիրներ 317

3. Քրեական վարույթի շրջանակում անձի՝ ոչ պատշաճ ծանուցված լինելու և դրանով պայմանավորված՝ վարույթն իրականացնող մարմին հարկադրաբար ներկայացնելու ոչ իրավաչափ պրակտիկան 322

4. Վարչական իրավախախտման վարույթով ազատությունից զրկելու կարգավորումները և անձի համար ծագող գործնական խնդիրները 324

ԳԼՈՒԽ 3. ԱԶԱՏ ՏԵՂԱՇԱՐԺՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ 328

1. Մեղադրյալի ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման ոչ իրավաչափ պրակտիկան 328

2. Քրեական վարույթով վկայի և տուժողի, ինչպես նաև վարույթի մասնակից չհանդիսացող անձանց նկատմամբ Հայաստանից դուրս գալու արգելք սահմանելու ոչ իրավաչափ պրակտիկան 330

3. ՀՀ տարածքում գտնվող օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ այլ երկրների իրավապահ մարմինների կողմից հետախուզում հայտարարված լինելու պարագայում նրանց նկատմամբ Հայաստանից դուրս գալու արգելքը տևական ժամանակ պահպանելու հետ կապված խնդիրներ 332

ԳԼՈՒԽ 4. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ 334

1. Փաստաբանի մասնագիտական գործունեությունն ու նրա դերի պատշաճ հանրային ընկալումը 334

2. Իրավաբանական օգնության իրավունքը և փաստաբանի մատչելիությունը՝ որպես քրեական հետապնդման ենթարկվող անձի այլ իրավունքների ապահովման երաշխիք 335

3. Փաստաբանների նկատմամբ բռնության անթույլատրելիությունը 346

ԳԼՈՒԽ 5. ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՅԼ ԽՆԴԻՐՆԵՐ 350

1. ՀՀ ՆԳՆ ոստիկանության Ճանապարհային ոստիկանության և Պարեկային ծառայության գործունեությանն առնչվող բողոքներով բարձրացված խնդիրներ 350

2. Ներխուժումը կանխելիս կամ վերացնելիս ՀՀ ՆԳՆ ոստիկանության լիազորությունների իրացման ընթացքում վեր հանված գործնական խնդիրներ 354

3. ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության գործունեության ոլորտին առնչվող խնդիրներ 357

ԳԼՈՒԽ 6. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԵՎ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ 362

1. Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և իրավապաշտպանների գործունեության երաշխավորումը՝ որպես պետության պարտավորություն 362

2. Զանգվածային լրատվության միջոցների գործունեության երաշխիքների ապահովումը 365

ԲԱԺԻՆ 9. ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 370

1. Հավաքի մասնակիցներին ազատությունից զրկելու հիմքերի և պատճառների չներկայացումը 372

2. Սահմանված ժամկետից ավելի անձին անազատության մեջ պահելը և ազատությունից զրկելու սկզբնական պահի որոշակիացումը 375

3. Ազատությունից զրկված անձի ընտրած անձին տեղյակ պահելու իրավունքն անհապաղ չապահովելը 377

4. Ոչ համաչափ ուժի գործադրում և վերաբերմունքն ազատությունից զրկված անձանց նկատմամբ 378

5. Փաստաբանների կողմից Ոստիկանության բաժիններ և քննչական մարմինների վարչական շենք մուտք գործելու առնչությամբ առկա խնդիրներ . 383

6. Հավաքի մասնակից անձանց կողմից վրանի տեղադրման արգելքի առնչությամբ խնդիրներ 384

ԲԱԺԻՆ 10. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 392

ԳԼՈՒԽ 1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 393

1. Վճարային քարտերով անկանխիկ վճարումներ ընդունելու հնարավորություն չապահովելու համար սահմանված փուգանքների անհամաչափության և անհատական մոտեցման բացակայության խնդիր 393

2. Առանց մաքսատուրքի անձնական օգտագործման ապրանքները ՀՀ ներմուծելու խնդիր 394

3. ՀՀ մշտական բնակության տեղափոխվող անձանց կողմից մաքսային վճարների արտոնություններից չօգտվելու խնդիր 396

4. Ստուգումներ իրականացնող պետական մարմինների ծառայողների գործունեության թափանցիկության ապահովման խնդիր 396

5. Մաքսակետերում գոյացող հերթերի և Պետական եկամուտների կոմիտեի հեռախոսազանգերի կենտրոնի մշտական հիմունքներով չգործելու խնդիր 398

ԳԼՈՒԽ 2. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 401

1. Մատակարարված ծառայությունների համար չվճարելու դեպքում բաժանորդին ջրի նվազագույն քանակով չապահովելը 401

2. Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցումը ներդրումային ծրագրերում ներառելը 403

3. Խմելու ջրի մատակարարման խափանումներ 406

4. Առևտրային հաշվառքի սարքի խափանման կամ վնասման դեպքում առանց մեղքի ապացուցման բաժանորդին պատասխանատվության ենթարկելը 407

5. Ոռոգման ջրի մատակարարման խափանումներ 409

6. Անձին սեփականության իրավունքով պատկանող հողամասում էլեկտրահաղորդման գծերի հենասյուներ տեղադրելու խնդիր 412

7. Էլեկտրաէներգիայի մատակարարման հաճախակի ընդհատումների խնդիր 413

ԲԱԺԻՆ 11. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ 416

ԳԼՈՒԽ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 418

1. Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության անկախ մեխանիզմ 418

2. Հանրային իշխանության մարմինների և քաղաքացիական հասարակության հետ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով համագործակցությունը 420

3. Միջազգային համագործակցությունը զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում 424

ԳԼՈՒԽ 2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ 427

1. Զինվորական հաշվառման և զորակոչի կազմակերպման գործընթացը 427

2. Զինվորական ծառայության անցնելու ծրագրերի հետ կապված խնդիրներ («Պատիվ ունեմ», «Պաշտպան հայրենյաց» ծրագրեր) 429

3. Ընտանեկան պայմաններից ելնելով՝ զորակոչից տարկետում ստանալու իրավունքը 431

ԳԼՈՒԽ 3. ԶԻՆԱՊԱՐՏ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՊԱՏՇԱՃ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ 433

1. Բժշկական հետազոտությունների ու փորձաքննությունների հետ կապված խնդիրները 433

2. Մի շարք հիվանդություններով զինվորական ծառայությանը սահմանափակումով պիտանի ճանաչված զինապարտների տարկետման իրավունքը 436

3. Զինվորական ծառայության համար քաղաքացիների պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկի վերանայման անհրաժեշտությունը 438

4. Բժշկական փաստաթղթերը ստանալու իրավունքը 440

ԳԼՈՒԽ 4. ՊԱՏՇԱՃ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 442

1. Առողջության պահպանումը զինվորական ծառայության ընթացքում 442

2. Զինծառայողների առաջնահերթ հետազոտման և բուժման իրավունքը 444

3. Զինծառայողների հոգեբուժական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը 445

4. Զինվորական ծառայության ավարտից հետո բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը 448

5. Առողջական վիճակին հակացուցված ծառայության պայմանները պահպանելու իրավունքը 449

ԳԼՈՒԽ 5. ԶԻՆԱՊԱՐՏ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՐՁԱԿՎԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ 451

1. Պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու իրավունքը և զինծառայողների ատեստավորման գործընթացը 451

2. Զինծառայողների իրավունքների պաշտպանությունը ծառայությունից արձակվելու գործընթացում 455

3. Զինվորական արհմիություններ կամ ընկերակցություններ կազմելու և դրանց անդամակցելու իրավունքը 457

ԳԼՈՒԽ 6. ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ 459

1. Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես կարգապահական վարույթի մասնակիցների բողոքներ քննող անկախ մեխանիզմ 459

2. Իրավունքի գերակայության վրա հիմնված կարգապահությունը՝ որպես զինված ուժերում մարդու իրավունքների երաշխիք 462

ԳԼՈՒԽ 7. ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԲՈԼՈՐ ՁԵՎԵՐԻ ԱՐԳԵԼՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ 470

1. Զինված ուժերում մահվան և ինքնավնասման դեպքերը և դրանց վերաբերյալ հանրային հաղորդակցությունը 470

2. Զինված ուժերում վատ վերաբերմունքի բոլոր ձևերի արգելքը 473

ԳԼՈՒԽ 8. ԿԱՆԱՅՔ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ 475

1. Զինված ուժերի գործունեությանը կանանց ներգրավվածության և առաջխաղացման խնդիրները 475

2. Զինված ուժերում կանանց իրավունքների օրենսդրական երաշխիքները 481

ԳԼՈՒԽ 9. ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 485

1. Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների բնակարանային ապահովումը 485

2. Զինծառայողների կենսաթոշակային իրավունքի ապահովումը 491

3. Զինծառայողների իրավունքների ապահովումը մարտական գործողությունների մասնակցության համատեքստում 493

4. Զինվորական հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովումը 495

ԳԼՈՒԽ 10.ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ 498

1. Վարժական հավաքների ներգրավված անձանց իրավունքների ապահովման օրենսդրական և գործնական խնդիրները 498

2. Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների հետ կապված խնդիրները ռազմական գործողությունների ավարտից հետո 501

3.Գտնվելու վայրն անհայտ զինծառայողների ծնողներին քրեական վարույթի շրջանակում տուժող ճանաչելը 506

ԲԱԺԻՆ 12. ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 511

1. Կանանց նկատմամբ բռնություն և ընտանիքում բռնություն 511

2. Կանանց մասնակցությունը քաղաքական և հասարակական կյանքին 526

3. Առողջության պահպանման իրավունքի սահմանափակման խնդիրներ 533

4. Աշխատանքային իրավունքների սահմանափակման խնդիրներ 537

ԲԱԺԻՆ 13. ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 543
ԳԼՈՒԽ 1. ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 545

1. Երեխաների իրավունքների պաշտպանության համակարգը 545

2. Երեխայի իրավունքների պաշտպանության համալիր ծրագիրը 547

ԳԼՈՒԽ 2. ԵՐԵԽԱՅԻ՝ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԱՊՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄՆ ՈՒ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԽՆԱՄՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ 549

1. Երեխայի խնամքը կենսաբանական ընտանիքում կազմակերպելու հետ կապված խնդիրներ 550

2. Որդեգրման հետ կապված խնդիրներ 552

3. Խնամակալության կամ հոգաբարձության հետ կապված խնդիրներ 554

4. Խնամատար ընտանիքում երեխայի խնամքի կազմակերպման հետ կապված խնդիրներ 556

5. Հաստատություններում երեխայի խնամքի և պաշտպանության կազմակերպման հետ կապված խնդիրներ 557

6. Հետխնամքի ապահովման հետ կապված խնդիրներ 575

7. Մանկալքության կանխարգելման հետ կապված խնդիրներ 578

ԳԼՈՒԽ 3. ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՇՓՎԵԼՈՒ ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ 580

1. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործողությունների իրավաչափությունը երեխայի իրավունքների ապահովման տեսանկյունից 580

2. Երեխայի հետ շփման իրավունքի ապահովումը երեխային օտարերկրյա պետություն անօրինական տեղափոխելու և ՀՀ տարածքում փաստացի բնակության վայրը փոփոխելու դեպքում 586

3. ՀՀ-ի տարածքում երեխայի բնակության վայրի փոփոխության դեպքում երեխայի հայտնաբերման և հետագայում երեխայի հետ շփման կառուցակարգերի հետ կապված խնդիրներ 587

4. Երեխայի հետ շփվելու իրավունքի ապահովումը անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշման կիրառման դեպքերում 588

ԳԼՈՒԽ 4. ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ 592

1. Նախադպրոցական ուսումնական հաստատությունների հասանելիության հետ կապված խնդիրներ (թվաքանակ, բաշխվածություն) 593

2. Նախադպրոցական ուսումնական հաստատությունների ընդունելությունը կազմակերպելիս առաջնահերթություն ունեցող երեխաների շրջանակի հետ կապված խնդիրներ 595

3. ՀՀ մարզերում համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների վճարովիության հետ կապված խնդիրներ 596

4. Նախադպրոցական ուսումնական հաստատությունից սանի ազատմանը վերաբերելի կարգավորումների հետ կապված խնդիրներ 597

ԳԼՈՒԽ 5. ԵՐԵԽԱՅԻ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ 600

1. Հանրակրթական ուսումնական հաստատությունների հասանելիության հետ կապված խնդիրներ 600

2. Հանրակրթական ուսումնական հաստատությունների ներքին կարգապահական կանոնների, սովորողի վարքագծի կանոնների և դրանց հասանելիության հետ կապված խնդիրներ 602

3. Երեխաների պարտադիր կրթությունից դուրս մնալու հետ կապված խնդիրներ 603

ԳԼՈՒԽ 6. ԵՐԵԽԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ, ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ 609

1. Երեխաների նկատմամբ բռնության բացահայտման, կանխարգելման և արձագանքման հարցում համապարփակ մոտեցումներ ապահովող ռազմավարության բացակայության և թերի օրենսդրական կարգավորումների հետ կապված խնդիրներ 612

2. Երեխաների նկատմամբ բռնության դեպքերի բացահայտման, կանխարգելման և արձագանքման հարցում մասնագիտական պատրաստվածության հետ կապված խնդիրներ 614

3. Իրավագիտակցության և իրազեկվածության մակարդակի բարձրացման, կարծրատիպերի վերացման հետ կապված խնդիրներ 617

4. Երեխաների նկատմամբ բռնության վերաբերյալ ճշգրիտ վիճակագրական միասնական տվյալների բացակայության հետ կապված խնդիրներ 619

ԳԼՈՒԽ 7. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 622

1. Կանխարգելիչ համայնքային ծառայությունների հետ կապված խնդիրներ 623

2. Օպերատիվ տեղեկատու քարտադարանում հաշվառման վերցվող անձանց շրջանակի հետ կապված խնդիրներ 623

3. Որպես խափանման միջոց տնային կալանք կիրառելու դեպքում երեխայի կրթության իրավունքի իրացման հետ կապված խնդիրներ 625

4. Իրավախախտում կատարած անչափահասների վերասոցիալականացման արդյունավետ ծրագրերի իրականացման հետ կապված խնդիրներ 625

5. Տուժող և վկա երեխաների հետ վերականգնողական աշխատանքի իրականացման և անչափահասների մասնակցությամբ քննչական գործողությունների իրականացման հետ կապված խնդիրներ 629

ԳԼՈՒԽ 8. ԵՐԵԽԱՅԻ ԿԱՐԾԻՔ ԱՐՏԱՀԱՅՏԵԼՈՒ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 631

ԳԼՈՒԽ 9. ԵՐԵԽԱՅԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 637

1. «Դատալեքս» համակարգում երեխայի անձնական տվյալների մշակման և հրապարակման հետ կապված խնդիրներ 638

2. Զանգվածային լրատվության միջոցներով երեխաների անձնական տվյալների մշակման և հրապարակման հետ կապված խնդիրներ 638

ԳԼՈՒԽ 10. ՄԱՆԿԱԿԱՆ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ 641

ԳԼՈՒԽ 11. ՄՈՒՐԱՑԿԱՆՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԹԱՓԱՌԱՇՐՋԻԿՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 645

ԲԱԺԻՆ 14. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 649

ԳԼՈՒԽ 1. ԱՆԿԱԽ ԱՊՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆԵՐԱՌՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ 652

1. Ապահինստիտուցիոնալացման ապահովման, հաշմանդամություն ունեցող անձի անկախ կյանքի հմտությունների զարգացմանն ուղղված, համայնքահենք ծառայությունների տրամադրման հետ կապված խնդիրներ 653

2. Անձին հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելու գործընթացի, գնահատման արդյունքում յուրաքանչյուր անձի կարիքից բխող հասցեական ծառայությունների և աջակցող միջոցների տրամադրման հետ կապված խնդիրներ 657

3. Հաշմանդամություն ունեցող անձանց՝ իրենց վերաբերելի հարցերում անձամբ որոշումներ կայացնելու իրավունքն ապահովելու հետ կապված խնդիրներ 665

ԳԼՈՒԽ 2. ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ 667

1. Ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովման հետ կապված համակարգային խնդիրներ 668

2. Տեղեկատվության և հաղորդակցության, ներառյալ տեղեկատվական ու հաղորդակցության տեխնոլոգիաների և համակարգերի մատչելիության ապահովման հետ կապված համակարգային խնդիրներ 674

ԳԼՈՒԽ 3. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 680

1. Մատչելիության ապահովման և խելամիտ հարմարեցումների տրամադրման հետ կապված խնդիրներ 681

2. Կրթության որակի և արդյունավետության ապահովման հետ կապված խնդիրներ 686

3. Հաշմանդամություն ունեցող երեխաների կրթությունը առանձին միջավայրում կազմակերպելը 688

ԳԼՈՒԽ 4. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 690

ԳԼՈՒԽ 5. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ 693

1. Հաշմանդամության հիմքով խտրականության արգելքի պահպանման նկատմամբ վերահսկողության ապահովման հետ կապված խնդիրներ 694

2. Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության, ինքնազբաղվածության, ձեռնարկատիրության խթանման հետ կապված խնդիրներ 695

ԳԼՈՒԽ 6. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՆ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ 697

1. Ընտրական տեղամասերի մատչելիության հետ կապված խնդիրներ 698

2. Ընտրություններին առնչվող տեղեկատվության և հաղորդակցության մատչելիության ապահովման հետ կապված խնդիրներ 700

3. Հաշմանդամություն ունեցող անձանց՝ հասարակական կյանքին մասնակցության իրավունքի իրացմանն առնչվող խնդիրներ 701

ԲԱԺԻՆ 15. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 703

1. Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների հաշվառման վայրերում մարդու իրավունքների պաշտպանի փաստահավաք աշխատանքներն ու դրանց արդյունքները 703

2. Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ժամանակավոր պաշտպանության ենթակա անձի կարգավիճակի, ինչպես նաև անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրման հետ կապված գործնականում առաջացող խնդիրներ 711

3. Լեռնային Ղարաբաղից Հայաստան բռնի տեղահանված անձանց սոցիալական ապահովության իրավունքի երաշխավորման, ինչպես նաև սոցիալական աջակցության միջոցառումների հետ կապված խնդիրներ 714

4. Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հետ կապված խնդիրներ 721

5. Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված երեխաների իրավունքների պաշտպանության հետ կապված խնդիրներ 722

ԲԱԺԻՆ 16. ՀՀ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԱՊՐՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 726

1. ՀՀ սահմանամերձ բնակավայրերի բնակիչների կյանքի, խաղաղ և անվտանգ ապրելու իրավունքների խախտմանն առնչվող խնդիրներ 727

2. ՀՀ սահմանամերձ բնակավայրերի բնակիչների սեփականության իրավունքի, զբաղվածության ապահովման և ապրուստի միջոցը հոգալու հետ կապված խնդիրներ 730

3. ՀՀ սահմանամերձ բնակավայրերում երեխաների կրթության իրավունքի ապահովման խնդիրները 733

4. ՀՀ սահմանամերձ բնակավայրերում տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունքի խախտմանն առնչվող խնդիրներ 735

5. Սահմանամերձ բնակավայրերի բնակչության ահաբեկումը՝ որպես հայատյաց քաղաքականության դրսևորում 737

ԲԱԺԻՆ 17. ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՌԱՆՁԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ 740

ԳԼՈՒԽ 1. ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽԹԱՆՈՒՄԸ 741

1. Խտրականության արգելքին առնչվող խնդիրները ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության համատեքստում ... 745

2. Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց լեզվի պահպանման իրավունքին առնչվող խնդիրներ 746

3. Վաղ ամուսնությունները ազգային փոքրամասնությունների համայնքներում 753

4. Ազգային փոքրամասնությունների մշակութային իրավունքների ապահովումը 758

ԳԼՈՒԽ 2. ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 762

1. ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության վիճակը ՀՀ-ում 762

2. Օրենսդրական խնդիրներ 766

3. Պետական մարմինների աշխատանքը և քաղաքացիական հասարակության արձագանքը կատարված աշխատանքներին 768

ԳԼՈՒԽ 3. ՍԵՌԱԿԱՆ ՈՏՆՁԳՈՒԹՅՈՒՆ 772

1. Սեռական ոտնձգությունն աշխատավայրում 773

2. Սեռական ոտնձգությունը ուսումնական հաստատություններում 781

ԳԼՈՒԽ 4. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ԻՄՈՒՆԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԻՐՈՒՍ/ՁԵՌՔԲԵՐՈՎԻ ԻՄՈՒՆԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇ (ՄԻԱՎ/ՁԻԱՀ) ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԻՄՔՈՎ 786

ԳԼՈՒԽ 5. ՊՏՂԻ ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄՆԵՐ 797

ԲԱԺԻՆ 18. ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 805

1. Պաշտպանի գործունեության հիմնական ուղղությունները 807

2.Արձանագրված հիմնական խնդիրները 809

ԲԱԺԻՆ 19. ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 821

ԲԱԺԻՆ 20. ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ....828

1.Ընդհանուր տեղեկատվություն **.....828**

2.Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության հիմնական ուղղությունները **.....829**

3.Խնդրի համակարգային դիտարկում **.....832**

ԲԱԺԻՆ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1. Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության զարգացումը

1995 թվականի հուլիսի 5-ին Սահմանադրությամբ ամրագրվել էր պետության պարտականությունն՝ ապահովելու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը Սահմանադրության և օրենքների հիման վրա՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Սահմանադրահիրավական նորմի իրագործումն ապահովելու նպատակով 1998 թվականի ապրիլի 27-ի՝ ՀՀ Նախագահի ՆՀ-32 հրամանագրով ստեղծվեց ՀՀ նախագահին առընթեր մարդու իրավունքների հարցերի հանձնաժողովը: Հանձնաժողովը խորհրդակցական մարմին էր, որի հիմնական խնդիրներն էին մարդու իրավունքների և ազատությունների աջակցությունն ու պաշտպանությունը, մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների առնչությամբ Նախագահին ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերլուծությունը, մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների առնչությամբ Նախագահի ստորագրմանը ներկայացված օրենքների և վավերացմանը ներկայացված կառավարության որոշումների մասին եզրակացություն տալը, մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ Նախագահին կամ Հանձնաժողով ներկայացված գանգատների քննարկումը, մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների ու վիճակի վերաբերյալ ամենամյա զեկույցի պատրաստումը: Հանձնաժողովի գործունեությունը հետագայում հիմք դարձավ ՀՀ-ում Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես անկախ պաշտոնատար անձի և նրա աշխատակազմի կազմավորման համար:

2003 թվականի հոկտեմբերի 21-ին ընդունվեց «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքը, որով 2004 թվականին հիմնադրվեց ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը: Որպես մարդու իրավունքների ազգային հաստատություն, անցնելով զարգացման երկու տասնամյակ, այն նպաստել է ինչպես երկրում մարդու իրավունքների պաշտպանությանն ու խթանմանը, այնպես էլ ժողովրդավարության զարգացմանն ու իրավունքի գերակայությանը:

2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեով ընդունված սահմանադրական փոփոխությունների արդյունքում սահմանվեցին մի շարք իրավանորմեր, որոնք ամրագրեցին Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես սահմանադրական ինստիտուտի դերն ու կարևորությունը: Սահմանադրության 18-րդ հոդվածում, մասնավորապես, ամրագրվեց անձի՝ իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար օրենքով սահմանված հիմքերով և կարգով մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը ստանալու իրավունքը:

Սահմանադրությամբ ամրագրվեցին նաև Մարդու իրավունքների պաշտպանի անկախության և անձեռնմխելիության երաշխիքները, սահմանվեց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ Պաշտպանի հետ համագործակցելու պարտականությունը:

2015 թվականի սահմանադրական փոփոխությունները հիմնարար ազդեցություն ունեցան հաստատության զարգացման վրա՝ որակապես նոր հիմքեր ապահովելով իրավական համակարգում Պաշտպանի ինստիտուտի՝ որպես սահմանադրական մարմնի տեղի ու դերի համար: Սահմանադրության՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ 2-րդ գլխում առանձին հոդվածով

ամրագրվել է Պաշտպանին դիմելու սահմանադրական բացարձակ իրավունքը: Սահմանադրությամբ ամրագրվել է Պաշտպանի վերաբերյալ առանձին գլուխ, որով նախատեսվել են Պաշտպանի գործառույթներին և լիազորություններին, ընտրությանը, ինչպես նաև գործունեության երաշխիքներին վերաբերող կարգավորումներ: Սահմանադրական փոփոխությունների հիման վրա՝ 2016 թվականին ընդունվեց և 2017 թվականին ուժի մեջ մտավ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքը: Օրենքով ընդլայնվել են Պաշտպանի և նրա աշխատակազմի գործունեության երաշխիքները, իրավասության ոլորտները՝ հատկապես անկախության երաշխիքների ամրապնդման տեսանկյունից: Այդ փոփոխությունների հիման վրա նախագծվեցին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքի նոր ուղղություններ[1]:

Ավելին, 2022 թվականի դեկտեմբերի 7-ին լրացումներ կատարվեցին «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքում, որով Պաշտպանի կողմից քննարկվող հարցերի շրջանակն ընդլայնվեց՝ դրանում ներառելով կազմակերպությունների կողմից ազդարարների և նրանց հետ փոխկապակցված անձանց իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ հարցերը: Փոփոխությունների արդյունքում Պաշտպանն ազդարարների պաշտպանության ոլորտում իրականացնում է մոնիտորինգ և տվյալների հավաքում, ինչպես նաև հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց, կազմակերպությունների կողմից ազդարարների իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է ազդարարների իրավունքների և ազատությունների վերականգնմանը:

2023 թվականի տարեկան հաղորդման շրջանակներում Պաշտպանն առաջին անգամ ամփոփում և հրապարակում է ազդարարման հետ կապված հաշվետվությունը և վիճակագրությունը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ ազդարարման հետ կապված համապատասխան վիճակագրական տվյալների հիման վրա:

Այս լիազորության պատշաճ իրացման համար Պաշտպանի աշխատակազմում նշանակվել է Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձ: Միաժամանակ նախատեսվում է ստեղծել մասնագիտացված ստորաբաժանում՝ ապահովելով նոր մանդատի իրականացման համար անհրաժեշտ ոլորտային մասնագիտացումը:

Հարկ է անդրադարձ կատարել նաև Մարդու իրավունքների պաշտպանի միջազգային կոնվենցիոն կարգավիճակներին:

Այսպես, «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի՝ 1984 թվականի կոնվենցիայի 2002 թվականի դեկտեմբերի 18-ին ընդունած կամընտիր արձանագրության տեսանկյունից ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանն իրականացնում է կանխարգելման ազգային մեխանիզմի գործառույթը: Այս մանդատի շրջանակներում իրականացված գործունեությունն առավել մանրամասն ներկայացված է Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության մասին տարեկան զեկույցում:

Մարդու իրավունքների պաշտպանը նաև «Երեխայի իրավունքների մասին» 1989 թվականի նոյեմբերի 20-ի ՄԱԿ-ի կոնվենցիայով նախատեսված մշտադիտարկում

[1] Տե՛ս առավել մանրամասն տե՛ս 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումները, էջեր 22-69, հասանելի է https://ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

իրականացնող անկախ մարմին է: Սույն կարգավիճակի հիմքով իրականացված գործունեությունը ներկայացված է հաղորդման՝ «Պաշտպանը՝ որպես «Երեխայի իրավունքների մասին» 1989 թվականի նոյեմբերի 20-ի ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկող մարմին» բաժնում:

Պաշտպանը նաև «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» 2006 թվականի դեկտեմբերի 13-ի ՄԱԿ-ի կոնվենցիայով նախատեսված մշտադիտարկում իրականացնող անկախ մարմին է: Այս ոլորտում իրականացված աշխատանքներն ու արձանագրումները ներկայացված են սույն հաղորդման՝ «Պաշտպանը որպես «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» 2006 թվականի դեկտեմբերի 13-ի ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկող մարմին» բաժնում:

2. Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության երաշխիքները

Պաշտպանի գործունեության արդյունավետության և մարդու իրավունքների նկատմամբ պետության վերաբերմունքի գնահատման տեսանկյունից հիմնաքարային նշանակություն ունեն Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության երաշխիքներն ու դրանց փաստացի իրացման վիճակը:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով ամրագրված են Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության երաշխիքները՝ Պաշտպանի *անկախությունը* (Հոդված 5), *անձեռնմխելիությունը* (Հոդված 6), *անվտանգությունը* (Հոդված 7) ***գործունեության ֆինանսավորումը և սոցիալական երաշխիքները*** (Հոդված 8), *Պաշտպանի գործունեությանն աջակցելու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների պարտականությունը* (Հոդված 9), և *պատասխանատվությունը Պաշտպանի գործունեությանը խոչընդոտելու համար* (Հոդված 10):

2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում ՀՀ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով ամրագրվեցին Պաշտպանի ֆինանսական անկախության երաշխիքները: Այս առումով, հատկանշական է, որ յուրաքանչյուր տարի Պաշտպանի և նրա աշխատակազմի, ինչպես նաև Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի ֆինանսավորման համար պետական բյուջեով նախատեսված հատկացման չափը չի կարող պակաս լինել նախորդ տարվա պետական բյուջեով նախատեսված հատկացման չափից:

Ֆինանսական անկախության առումով կարևոր է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձերի պատշաճ և բավարար մակարդակի ապահովումը՝ նկատի ունենալով վերջին տարիներին քննիչների, դատախազների ամսական վարձատրության բարձրացման միտումն (հավելման նախատեսում պաշտոնական դրույքաչափի 92 տոկոսի չափով) ու այդ համատեքստում Պաշտպանի աշխատակազմի աշխատավարձերի անփոփոխ մնալը: Պաշտպանի գործունեության առանձնահատկությունները նկատի ունենալով և մարդու իրավունքների պաշտպանության նկատմամբ պետության վերաբերմունքի տեսանկյունից՝ կարևոր կլինի նշված համակարգերում և Պաշտպանի աշխատակազմում աշխատավարձերի չափի մեծ խզվածքի վերացմանն ուղղված կառուցակարգերի մշակումը:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով ամրագրված են նաև Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձանց և կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետների գործունեության երաշխիքները:

Ավելին, 2022 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսվում է պատասխանատվություն մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների իրականացումը խոչընդոտելու (Հոդված 492), մարդու իրավունքների պաշտպանի նկատմամբ սպառնալիքի կամ նրա մասին տեղեկություն հրապարակելու կամ նրա գույքը ոչնչացնելու կամ վնասելու կամ նրա նկատմամբ բռնություն գործադրելու (Հոդված 493), ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանին վիրավորանք հասցնելու կամ նրա նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու (Հոդված 494) համար:

3. Համագործակցությունը հանրային իշխանության մարմինների հետ

Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում խնդիրների արդյունավետ լուծումը ենթադրում է համագործակցություն ինչպես ներպետական մարմինների, այնպես էլ միջազգային գործընկերների հետ: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունն ***ինստիտուցիոնալ անկախության պահպանմամբ*** իր մանդատի շրջանակներում մշտապես համագործակցում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանության, տեղական ինքնակառավարման մարմինների, իրավապահ ու օրենքով ստեղծված այլ մարմինների հետ:

Մարդու իրավունքների պաշտպանության և խթանման ազգային հաստատությունների կարգավիճակին և գործունեությանը վերաբերող սկզբունքները (Փարիզյան սկզբունքներ)[2] սահմանում են, որ մարդու իրավունքների ազգային հաստատությունը պետք է իրավասու լինի «ներկայացնել կառավարությանը, խորհրդարանին կամ որևէ այլ իրավասու մարմնին մարդու իրավունքների խթանման և պաշտպանության վերաբերյալ կարծիքներ, առաջարկություններ և զեկույցներ՝ խորհրդատվական հիմունքներով կամ շահագրգիռ իշխանությունների խնդրանքով կամ իր լիազորությունների իրականացման միջոցով՝ առանց միջնորդության» :

Մարդու իրավունքների պաշտպանի և օրենսդրի հետ համագործակցությունն ու փոխգործակցությունը կարևորվում է մարդու իրավունքների չափանիշների խթանման տեսանկյունից, ինչը նպաստում է երկրում մարդու իրավունքների համակարգի ամրապնդմանը[3]:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածով Պաշտպանն իրականացում է նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանն առնչվող սահմանադրական գործառույթ: 2023 թվականի ընթացքում Պաշտպանին կարծիքի է ներկայացվել մի շարք սահմանադրական օրենքների, օրենսգրքերի և նոր կարգավորման առարկա ունեցող կամ ամբողջովին փոփոխվող օրենքների և այլ իրավական ակտերի 202 նախագիծ, որոնց վերաբերյալ ներկայացվել է 483 նկատառում՝ հաշվի առնելով միջազգային չափանիշները և ՀՀ-ում գործող օրենսդրական կարգավորումներն ու իրավակիրառ պրակտիկան:

---

[2] Տե՛ս ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի «Փարիզյան սկզբունքները», թիվ 48/134 բանաձև, 1993թ., (այսուհետ՝ Փարիզյան սկզբունքներ), հասանելի է https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Publications/PTS-4Rev1-NHRI_en.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[3] ԵԽԽՎ, Բարելավել համագործակցությունը Մարդու իրավունքների ազգային հաստատությունների և խորհրդարանների միջև իրավահավասարության և խտրականության դեմ ուղղված խնդիրների լուծման գործում, 2014թ., հասանելի է https://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=20554&lang=en հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

2023 թվականի ընթացքում օրենսդրի հետ համագործակցության շրջանակներում Պաշտպանը և աշխատակազմի ներկայացուցիչները մասնակցել են հանրային քննարկումների, խորհրդարանական լսումների, խորհրդակցությունների, հանդիպել են Հայաստան այցելած օտարերկրյա պատգամավորների, խորհրդարանական բարեկամական խմբերի անդամների հետ:

Օրենսդրի հետ համագործակցության համատեքստում հատկանշական է նաև հաշվետու տարում Պաշտպանի հանդիպումն Ազգային ժողովի «Ամառային դպրոց» ծրագրի մասնակից դպրոցականների հետ: Հանդիպմանը մասնակցել է 61 երեխա Երևանից և ՀՀ տարբեր մարզերից: Հանդիպման ընթացքում Պաշտպանը ներկայացրել է Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների շրջանակն ու աշխատանքների հիմնական ուղղությունները, ինչպես նաև զրուցել է մարդու իրավունքների պաշտպանությանն ու բուլինգի, ատելության խոսքի, անհանդուրժողականության և խտրականության դեմ պայքարին վերաբերելի հարցերի շուրջ[4]:

Փարիզյան սկզբունքներով մարդու իրավունքների ազգային հաստատություններին խրախուսվում է մշտադիտարկել ՄԱԿ-ի Համընդհանուր պարբերական վերանայման և միջազգային պայմանագրերով պետության ստանձնած պարտավորությունների կատարումը[5]: Պետության միջազգային պարտավորությունների կատարման մշտադիտարկման համատեքստում 2023 թվականի հունվարին Պաշտպանի հաստատությունը ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդին է ներկայացրել ՄԱԿ Համընդհանուր պարբերական դիտարկման (UPR) գործընթացի շրջանակում ՀՀ-ին տրված համապատասխան հանձնարարականների ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ Պաշտպանի միջանկյալ այլընտրանքային զեկույցը[6]:

Կոնկրետ ոլորտներում մարդու իրավունքների պաշտպանության և խթանման հարցերով Պաշտպանն ակտիվ համագործակցում է իրավասու պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների հետ, ինչը դրականորեն անդրադարձել է մարդու իրավունքների պաշտպանության ու խթանման համակարգի վրա: Մարդու իրավունքների պաշտպանության հարցերով գործադիր իշխանության, պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, իրավապահ մարմինների և մի շարք այլ մարմինների հետ համագործակցությանը առավել մանրամասն անդրադարձ է կատարվում տարեկան հաղորդման՝ հիմնական իրավունքների պաշտպանությանը նվիրված կոնկրետ բաժիններում:

Պաշտպանը և աշխատակազմի ներկայացուցիչները, ինստիտուցիոնալ անկախության պահպանմամբ և Մարդու իրավունքների պաշտպանի համաձայնությամբ, ներգրավված են մարդու իրավունքների պաշտպանության և խթանման հարցերին վերաբերելի առանձին հանձնաժողովներում, խորհուրդներում և միջգերատեսչական աշխատանքային խմբերում, օրինակ՝ Սահմանադրական բարեփոխումների խորհուրդը, Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագրի կատարումը համակարգող հանձնաժողովը, ՀՀ-ում կանանց հարցերով խորհուրդն ու աշխատանքային խումբը, ՀՀ-

[4]Հասանելի է https://www.ombuds.am/am/site/VideoGalleryView/908?fbclid=IwAR0OietHUfAmy4hhCpoG1ZPeozsC9Us9qbIs-vG2H1xpcAcjD338rydFEuU հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[5] Հասանելի է https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Publications/PTS-4Rev1-NHRI_en.pdf հղումով:

[6] Հասանելի է https://www.ohchr.org/sites/default/files/documents/hrbodies/upr/midtermreports/nhrismidtermreports/hrd-armeniaupr.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

ում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի հարցերով խորհուրդն ու աշխատանքային խումբը և այլն:

Հատկանշական են պետական մարմինների հետ կարողությունների զարգացման համատեղ միջոցառումների անցկացման օրինակները: Օրինակ՝ Պաշտպանի նախաձեռնությամբ ՆԳՆ ոստիկանության տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ հանդիպում-քննարկումը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավոր Արմեն Հարությունյանի հետ՝ «ՄԻԵԴ նախադեպային իրավունքը հավաքների ազատության իրավունքի երաշխավորման համատեքստում. միջազգային իրավական չափանիշների և ներպետական հիմնախնդիրների ներկայացումը» թեմայով[7]*:*

Ելնելով մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից սահմանադրական արդարադատության բացառիկ կարևորությունից՝ կայուն համագործակցություն է ձևավորվել նաև Սահմանադրական դատարանի հետ: Համագործակցության շրջանակներում Պաշտպանին են ներկայացվում սահմանադրականության հարցի որոշման վերաբերյալ դատարանին ուղղված բոլոր դիմումները, որոնց վերաբերյալ ներկայացվում է հատուկ կարծիք (*amicus curiae briefs*): Հատուկ կարծիքներն արտահայտում են Մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշումը բարձրացված հարցերի վերաբերյալ՝ ներառելով Պաշտպանի կողմից անհատական բողոքների քննարկման, ինչպես նաև մշտադիտարկման արդյունքում իրավունքների և ազատությունների վերաբերյալ իրականացված վերլուծություններն ու կոնկրետ հարցի սահմանադրականության մասին միջազգային սկզբունքներն ու չափանիշները:

2023 թվականի ընթացքում Սահմանադրական դատարանի կողմից վարույթ ընդունված մի շարք գործերով Պաշտպանի աշխատակազմը ներկայացրել է 4 հատուկ կարծիք, որոնք վերաբերել են խտրականության արգելքին, անմեղության կանխավարկածին, համաչափության սկզբունքին, անձնական ազատության իրավունքին, դատական պաշտպանության իրավունքին, արդար դատաքննությանը և ազատ տեղաշարժվելու իրավունքին:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով Պաշտպանը լիազորված է նաև դիմելու Սահմանադրական դատարան օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և վարչապետի որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով: 2023 թվականին Սահմանադրական դատարանը բավարարել է Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացված 1 դիմում:

Պաշտպանը կարևորում է Սահմանադրական դատարանի որոշումներում տեղ գտած դիրքորոշումները՝ որպես անձանց իրավունքների պաշտպանության և օրենսդրության կատարելագործման կարևոր երաշխիք, և ընդգծում այդ ակտերի իրացման պատշաճ պրակտիկայի կարևորությունը: Այդ հանգամանքի կենսական նշանակությանը Պաշտպանն անդրադարձել է նաև Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցին 2023 թվականին ներկայացրած իր զեկույցում:

Հաշվետու տարում Սահմանադրական դատարանի հետ համագործակցության ամրապնդման շրջանակներում Պաշտպանը մասնակցել է «Սահմանադրական արդարադատության հարթակ» նոր նախաձեռնությանը, որին մասնակից են այն պետական մարմիններն ու քաղաքացիները, որոնք Սահմանադրության ուժով իրավունք

[7] Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2620 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

ունեն դիմելու ՀՀ Սահմանադրական դատարան: Նախաձեռնության մեկնարկին նվիրված միջոցառմանը Պաշտպանը՝ որպես Սահմանադրական դատարան դիմումներ և հատուկ դիրքորոշումներ ներկայացնելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձ, իր խոսքում հատկապես կարևորել է Սահմանադրական դատարանի հետ արդյունավետ համագործակցությունն ու կառուցողական երկխոսությունը և դրա շարունակական ամրապնդումը[8]:

2023 թվականի նոյեմբերի 3-ին Հայաստանի «Արդարադատության ոլորտի աջակցություն» ծրագրի կողմից իրականացվող «Սահմանադրական արդարադատության հարթակի» շրջանակներում տեղի է ունեցել ԱՄՆ Միջազգային գործակալության, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի և Սահմանադրական դատարանի աշխատակազմի համատեղ աշխատաժողովը, որը նպատակ էր հետապնդում խթանել հետագա համագործակցությունը, զարգացնել Պաշտպանի ու Սահմանադրական դատարանի աշխատակազմերի կարողությունները՝ ստեղծելով արդյունավետ քննարկումների հարթակ[9]:

4. Համագործակցությունը քաղաքացիական հասարակության հետ

Հասարակական կազմակերպություններն իրավունք ունեն բոլոր մակարդակներում մասնակցելու հանրային քաղաքականության նպատակների ու որոշումների շուրջ երկխոսության և խորհրդակցությունների կառավարական և միջկառավարական գործընթացներին՝ առանց խտրականության[10]: Ուստի՝ որոշումների կայացման գործընթացում հասարակական կազմակերպություններին ներգրավելու առումով բաց և հասանելի լինելը կարևոր նախապայման է՝ հիմնվելով մասնակցության համաձայնեցված չափանիշների վրա[11]:

Փարիզյան սկզբունքներով հատուկ դրույթներ են նախատեսված ՀԿ-ների հետ համագործակցության համար՝ վերջիններիս առանցքային դերակատարության մատնանշմամբ:

Պաշտպանն ընդգծում է, որ հասարակական կազմակերպությունները բաց և ժողովրդավարական հասարակության մասնակցայնության կարևոր բաղադրիչ են և հատուկ տեղ ունեն մարդու իրավունքների պաշտպանության համակարգում՝ իրականացնելով պետության նկատմամբ վերահսկողության կարևոր գործառույթ:

Իրավապաշտպանների ու ՀԿ-ների հետ Պաշտպանի համագործակցությունը կրում է շարունակական և ինստիտուցիոնալ բնույթ մարդու իրավունքների պաշտպանության բոլոր ոլորտներում:

Նշված համագործակցությունը դրսևորվում է նաև Պաշտպանին առընթեր գործող խորհուրդների համատեքստում: Սույն հաղորդման հրապարակման պահին գործում է **Պաշտպանին առընթեր 6 խորհրդատվական խորհուրդ:**

---

[8] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2684 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[9] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2756 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[10] ԵԽ Նախարարների կոմիտե, Եվրոպայում ոչ կառավարական կազմակերպությունների իրավական կարգավիճակի վերաբերյալ հանձնարարական, 2007թ. , 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[11] Եվրոպայի խորհուրդ, «Որոշումների կայացման գործընթացին քաղաքացիական հասարակության մասնակցության լավագույն պրակտիկայի կանոնակարգ», 2019թ., հասանելի է https://rm.coe.int/code-of-good-practice-civil-participation-revised-301019-en/168098b0e2 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:



2023 թվականին Պաշտպանի նախաձեռնությամբ ստեղծվել է Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության և խթանման հարցերով խորհուրդը: Խորհուրդը նպատակ ունի ազգային փոքրամասնությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ համատեղ աշխատանքի արդյունքում նպաստելու ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանությանը և խթանմանը:

2023 թվականի ընթացքում անցկացվել է Պաշտպանին առընթեր խորհուրդների 13 նիստ.

- ✓ Երեխաների և երիտասարդների իրավունքների հարցերով խորհրդի 5 նիստ,
- ✓ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցերով խորհրդի 2 նիստ,
- ✓ Խոշտանգումների կանխարգելման խորհրդատվական խորհրդի 2 նիստ,
- ✓ Կանանց իրավունքների հարցերով խորհրդի 2 նիստ,
- ✓ Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով փորձագիտական խորհրդի 1 նիստ,
- ✓ Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության և խթանման հարցերով խորհրդի 1 նիստ:

Բացի այդ, Պաշտպանն ու աշխատակազմի ներկայացուցիչները մի շարք հանդիպումներ ու քննարկումներ են ունեցել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ, ինչպես նաև մասնակցել են նրանց կողմից կազմակերպված բազմաթիվ միջոցառումների: Պաշտպանի կողմից կազմակերպված միջոցառումներին ակտիվորեն մասնակցել են նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները:

Համատեղ իրականացված միջոցառումների ընթացքում վերհանված բազմաթիվ խնդիրներ ներկայացվել են պետական իրավասու մարմիններին:

5. Համագործակցությունը միջազգային կառույցների հետ

Մարդու իրավունքների պաշտպանը (այսուհետ՝ Պաշտպան) 2023 թվականին ունեցել է ավելի քան 100 հանդիպում Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների, մասնավորապես՝ ՀՀ-ում ԵՄ, ԱՄՆ, Էստոնիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի, Շվեդիայի, Ֆինլանդիայի, Նիդերլանդների, Բրազիլիայի, Ուկրաինայի, Արգենտինայի, Չեխիայի, Ճապոնիայի, Բելգիայի, Շվեյցարիայի դեսպանների, ինչպես նաև ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի, ԵԽ-ի, ԱՄՆ ՄԶԳ/Հայաստանի առաքելության, Ռաուլ Վալլենբերգ ինստիտուտի, «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի և մի շարք այլ միջազգային կառույցների և կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Հանդիպումները և համագործակցությունը կրում են շարունակական բնույթ:

Հանդիպումների ընթացքում ներկայացվել են Պաշտպանի գործունեության ուղղությունները՝ ընդգծելով կանանց, երեխաների, ազգային փոքրամասնությունների, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, զինված ուժերում, քրեական վարույթի շրջանակում անձանց իրավունքների պաշտպանության, քաղաքացիական և սոցիալ-տնտեսական իրավունքների պաշտպանության, ատելության խոսքի, անհանդուրժողականության մթնոլորտի, խտրականության դեմ պայքարի շրջանակներում և մի շարք այլ ոլորտներում իրականացվող աշխատանքները: Քննարկվել են նաև Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանությանը, գտնվելու վայրն անհայտ զինծառայողների և քաղաքացիական անձանց ու նրանց ընտանիքների իրավունքների ապահովման վիճակին առնչվող և մի շարք այլ հարցեր:

Պաշտպանի հաստատությունը 2023 թվականին շարունակել է իր անդամակցությունը մի շարք միջազգային օմբուդսմանական կազմակերպությունների՝ մասնավորապես Օմբուդսմանի միջազգային ինստիտուտին (The International Ombudsman Institute), Եվրոպական օմբուդսմանի ինստիտուտին (The European Ombudsman Institute), Մարդու իրավունքների պաշտպանության և զարգացման ազգային ինստիտուտների միջազգային կոորդինացիոն կոմիտեին (The International Coordinating Committee for National Human Rights Institutions), Երեխաների հարցերով օմբուդսմանների եվրոպական ցանցին (The European Network of Ombudspersons for Children), Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների եվրոպական ցանցին (European Network of National Human Rights Institutions), Ֆրանկոֆոն օմբուդսմանների և հաշտարարների ասոցիացիային (l'Association des Ombudsmans et Médiateurs de la Francophonie), Միջերկրածովային օմբուդսմանների ասոցիացիային (The Association of Mediterranean Ombudsman), Ասիական Օմբուդսմանների Ասոցիացիային (Asian Ombudsman Association (AOA), Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների գլոբալ դաշինքին (Global Alliance of National Human Rights Institutions (GANHRI)):

2023 թվականին Պաշտպանի ներկայացուցիչները շարունակել են իրենց անդամակցությունը Եվրոպայի խորհրդի Ղեկավար կոմիտեներին՝ Երեխայի իրավունքների հարցերով ղեկավար կոմիտեում (CDENF) և Կանանց և տղամարդկանց իրավահավասարության հարցերով ղեկավար կոմիտեում (CDEG), ԵԽ «Մարդու

իրավունքները կենսաբժշկության մեջ» ծրագրի Համակարգող խորհրդում: Անդամակցությունը շարունակվել է նաև ԱՊՀ մարդու իրավունքների հանձնաժողովին և ԱՊՀ անդամ երկրների երեխաների իրավունքների հանձնակատարների հանձնաժողովին: ՄԻՊ հաստատությունը ներկայացված է նաև Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների եվրոպական ցանցի ապաստանի և միգրացիայի հարցերով, բիզնեսի և մարդու իրավունքների հարցերով, համագործակցության հարցերով, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների և իրավական հարցերով աշխատանքային խմբերում: Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչը Երեխաների հարցերով օմբուդսմանների եվրոպական ցանցի գործունեության շրջանակներում հանդիսանում է Երիտասարդ խորհրդատուների եվրոպական ցանցի (ENYA) համակարգող:

Պաշտպանը կատարել է մի շարք աշխատանքային այցեր այլ երկրներ, մասնակցել է միջազգային տարբեր միջոցառումների, որոնց շրջանակներում ներկայացրել է Պաշտպանի գործունեության հիմնական ուղղությունները և առաջնահերթությունները, ինչպես նաև ժամանակակից աշխարհում մարդու իրավունքների պաշտպանության ու խթանման համակարգերի զարգացման տեսլականին առնչվող իր մոտեցումները: Մասնավորապես.

ա) Մայիսի 11-ին Պաշտպանը միջգերատեսչական հանձնաժողովի անդամների պատվիրակության կազմով Ստրասբուրգում հանդիպում է ունեցել Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Մարիա Պեյչինովիչ Բուրիչի հետ: Պաշտպանը ԵԽ գլխավոր քարտուղարին է ներկայացրել ՀՀ սահմանամերձ բնակավայրերի բնակիչների իրավունքների ոտնահարման հետ կապված խնդիրները:[12]

բ) Պաշտպանը մասնակցել է հունիսի 18-20-ը Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում անցկացվող Զինված ուժերի օմբուդսմանական հաստատությունների՝ «Կլիմայի փոփոխության ազդեցությունների կառավարում, օմբուդսմանական հաստատություններ և զինված ուժեր» խորագրով 15-րդ միջազգային համաժողովին: Միջոցառումը կազմակերպել էր Անվտանգության ոլորտի կառավարման ժնևյան կենտրոնն (DCAF) Ավստրիայի դաշնային զինված ուժերի հարցերով խորհրդարանական հանձնաժողովի հետ համատեղ, մասնակցել են մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ավելի քան 50 երկրների հաստատություններ:

[12] Տե՛ս «Visit of a high-level delegation of the Interagency Committee of the Republic of Armenia for oversight over the execution of the European Court of Human Rights judgments», հասանելի է https://www.coe.int/en/web/human-rights-rule-of-law/-/visit-of-a-high-level-delegation-of-the-interagency-committee-of-the-republic-of-armenia-for-oversight-over-the-execution-of-the-european-court-of-human-rights-judgments?fbclid=IwAR1IkN1taXmGozWFI30E33HL66BkM8j7Vx8TmYyPiNN9zz3FbtuuS7JFWt8 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

գ) Դեկտեմբերի 1-ին Թբիլիսիում՝ Վրաստանի Ժողովրդական պաշտպանի գրասենյակում, Անահիտ Մանասյանը հանդիպել է Վրաստանի Ժողովրդական պաշտպան (օմբուդսման) Լևան Իոսելիանիի հետ: Պաշտպանն ընդգծել է մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում երկու երկրների արդյունավետ համագործակցության կարևորությունը: Այս համատեքստում վրաց գործընկերոջ հետ քննարկվել են երկկողմ համագործակցությանը վերաբերելի մի շարք հարցեր, այդ թվում՝ համագործակցության հետագա ուղղությունների պլանավորման տեսանկյունից:

դ) Պաշտպանը Թբիլիսի կատարած աշխատանքային այցի շրջանակներում մասնակցել է իրավունքի գերակայության և բոլորի համար արդարադատության մատչելիության բարելավման Թբիլիսիի տարածաշրջանային համաժողովին և դրա շրջանակներում կազմակերպված պանելային քննարկմանը, որին ներկա էին միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև պետական մարմինների բարձրաստիճան ներկայացուցիչներ, տարբեր երկրների մարդու իրավունքների պաշտպաններ: Միջոցառման շրջանակներում Պաշտպանը խոսել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերի մասին, ներկայացրել անձամբ իր և աշխատակազմի կողմից իրականացված փաստահավաք աշխատանքների արդյունքները:

ե) Թբիլիսի կատարած երկօրյա այցի շրջանակներում Անահիտ Մանասյանը հանդիպում է ունեցել Վրաստանի Ժողովրդական պաշտպանին կից կրոնների և էթնիկ փոքրամասնությունների խորհուրդների անդամների հետ:

Պաշտպանը շարունակել է ակտիվ համագործակցությունը մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունների միջազգային ցանցերի շրջանակներում՝ մասնակցելով միջազգային տարբեր հանդիպումների, հանդես գալով ելույթներով, հաստատությունների կարողությունների ամրապնդմանը և զարգացմանն ուղղված առաջարկություններով, ներկայացնելով Հայաստանի ՄԻՊ հաստատության փորձառությունը:

ա) Պաշտպանը Օսլոյում օգոստոսի 31-ին մասնակցել է Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցի (ENNHRI) կողմից կազմակերպված հանդիպմանը: Միջոցառման շրջանակներում իրականացվել է տեղեկատվության և փորձի փոխանակում օմբուդսմանական հաստատությունների նորընտիր ղեկավարների միջև: Մասնակիցներին մանրամասն ներկայացվել են Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների եվրոպական ցանցի մանդատն ու սկզբունքները:

բ) Պաշտպանը հոկտեմբերի 9-10-ը Բրյուսելում մասնակցել է Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների եվրոպական ցանցի (ENNHRI) Գլխավոր վեհաժողովին: Քննարկումների օրակարգում ընդգրկված են եղել տարբեր տարածաշրջաններում և ոլորտներում մարդու իրավունքների պաշտպանության հետ կապված մի շարք հարցեր:

Հանդիպմանը մասնակցել են ավելի քան 40 երկրների մարդու իրավունքների ազգային ինստիտուտների ներկայացուցիչներ:

Պաշտպանը միջազգային գործընկերների հետ զրույցների ընթացքում ներկայացրել է ՄԻՊ հաստատության առաջնահերթությունները՝ հատուկ անդրադառնալով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերին: Պաշտպանն ազգային ինստիտուտների եվրոպական ցանցի անդամ գործընկերների հետ ձեռք է բերել հետագա համագործակցության վերաբերյալ մի շարք պայմանավորվածություններ և պատրաստակամություն հայտնել՝ ակտիվ կերպով ներգրավվել նոր նախաձեռնություններում: Մարդու իրավունքների ազգային

ինստիտուտների ղեկավարները քննարկել են նաև Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների եվրոպական ցանցի 2024 թվականի գործունեության նախնական ծրագիրը, ներկայացրել դիտարկումներ և առաջարկություններ:

գ) Պաշտպանը նոյեմբերի 6-8-ը Կոպենհագենում մասնակցել է Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների գլոբալ դաշինքի (GANHRI) 14-րդ միջազգային համաժողովին: Այն անցկացվել է «Խոշտանգումներ և այլ վատ վերաբերմունք. մարդու իրավունքների ազգային ինստիտուտների դերը» խորագրով: Միջազգային համաժողովի նպատակն էր ուսումնասիրել և բացահայտել պետությունների և մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կառույցների գործառույթներն ու մարտահրավերները խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի ռիսկերի և արմատական պատճառների դեմ պայքարում ու կանխարգելման գործում: Քննարկվել են նշված հարցերում մարդու իրավունքների ազգային ինստիտուտների դերի հետ կապված հարցեր: Համաժողովի շրջանակներում իրականացվել է փորձի փոխանակում՝ ընդգծելով մարդու իրավունքների խախտումների դեմ պայքարում ուժերը համախմբելու կարևորությունը: Անահիտ Մանասյանը միջազգային գործընկերներին է ներկայացրել որպես կանխարգելման ազգային մեխանիզմ Հայաստանի Հանրապետությունում Պաշտպանի փորձը: Անդրադարձ է կատարվել խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված հարցերի առնչությամբ Պաշտպանին առընթեր հասարակական խորհրդի աշխատանքին և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ համագործակցության մշակույթին: Ընդգծվել է նաև խոցելի տարբեր խմբերի՝ վերոնշյալ երևույթներից պաշտպանված լինելու կարևորությունը: Առանձին քննարկումների ընթացքում Պաշտպանը ներկայացրել է բռնի տեղահանված անձանց պարագայում խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի բացահայտման, հասցեավորման և իրավունքների երաշխավորման առանձնահատուկ մեխանիզմների հետ կապված հարցեր՝ ընդգծելով Լեռնային Ղարաբաղից Հայաստան անձանց բռնի տեղահանման վերջին զարգացումների համատեքստում նշված հարցի կարևորությունը: Այդ համատեքստում շեշտադրվել են Պաշտպանի կողմից իրականացված փաստահավաք աշխատանքների շրջանակներում վեր հանված խնդիրները:

2023 թվականին աշխատանքային այցերի հետ մեկտեղ Պաշտպանն ընդունել է նաև մի շարք բարձրաստիճան միջազգային դերակատարների և օտարերկրյա պատվիրակությունների ներկայացուցիչների, մասնավորապես՝ Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության, Թրանսվերսալ մարտահրավերների և բազմակողմ ծրագրերի իրականացման վարչության ղեկավար Տիգրան Կարապետյանի գլխավորած պատվիրակությանը, ԵԽԽՎ իռլանդացի պատգամավոր Փոլ Գավանին, Եվրոպայի խորհրդի քարտուղարության քաղաքական և արտաքին կապերի գծով տնօրեն Միրոսլավ Պապային և Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և օրենքի գերակայության (DGI) գլխավոր տնօրեն Խրիստոս Ջակումոպուլոսին, Իրանի Իսլամական Հանրապետության արդարադատության նախարարի՝ մարդու իրավունքների և միջազգային կապերի գծով տեղակալ դոկտոր Ասքար Ջալալիանի գլխավորած պատվիրակությանը, Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգողի պաշտոնակատար, ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակի տնօրեն և ներկայացուցիչ Նաննա Սկաուին, Ժնևում ՄԱԿ Հումանիտար հարցերի համակարգման գրասենյակի (OCHA) ղեկավար և ներկայացուցիչ Մոհան Ռամեշ Ռաջասինգամի գլխավորած պատվիրակությանը, ԱՄՆ Կալիֆոռնիայի

նահանգի Գերագույն դատարանի դատավոր, Ամերիկայի հայ իրավաբանական միության անդամ Արմենուհի Էմի Աշվանյանին, Ֆրանսիայի Ազգային ժողովի պատգամավոր, Ֆրանսիայի Սենատի Ֆրանսիա-Հայաստան բարեկամական խմբի համանախագահ Անն-Լորանս Պետելին, ՄԱԿ-ի ճշմարտության խթանման, արդարադատության, հատուցման և չկրկնվելու երաշխիքների խրախուսման հարցերով հատուկ զեկուցող Ֆաբիան Սալվիոլիին և ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի Հատուկ ընթացակարգերի բաժնի մարդու իրավունքների պատասխանատու Բրենդա Վուկովիչին, Եվրոպական խորհրդարանի պատգամավոր Ժոֆրուա Դիդիեի գլխավորած պատվիրակությանը, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում Ֆրանսիայի պատվիրակության նախագահ Բերտրան Բուիքսին և այլն:

Հանդիպումների ընթացքում ներկայացվել են Պաշտպանի գործունեության ուղղությունները, մասնավորապես՝ կանանց, երեխաների, ազգային փոքրամասնությունների, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, զինված ուժերում, քրեական վարույթի շրջանակում անձանց իրավունքների պաշտպանության, քաղաքացիական և սոցիալ-տնտեսական իրավունքների պաշտպանության, ատելության խոսքի, անհանդուրժողականության մթնոլորտի, խտրականության, վատ վերաբերմունքի դեմ պայքարի շրջանակներում և մի շարք այլ ոլորտներում իրականացվող աշխատանքները: Քննարկվել են նաև Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանությանը, գտնվելու վայրն անհայտ զինծառայողների և քաղաքացիական անձանց ու նրանց ընտանիքների իրավունքների ապահովման վիճակին առնչվող և մի շարք այլ հարցեր:

Օտարերկրյա գործընկերների հետ համագործակցության շրջանակներում մի քանի համատեղ այցելություններ են իրականացվել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ժամանակավոր կացարաններ.

ա) Պաշտպանը սեպտեմբերի 25-ին ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի ղեկավար Կավիտա Բելանիի հետ Գորիսում և Կոռնիձորում, այնուհետև սեպտեմբերի 26-ին Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի ներկայացուցիչ Քրիսթինե Վայգանդի հետ Կոռնիձորում հանդիպումներ է ունեցել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց հետ:

Նրանք հետևել են կարիքների գնահատման գործընթացին, զրուցել անձնակազմի, այդ թվում՝ բուժաշխատողների հետ: Պաշտպանը տեղում իրականացրել է փաստահավաք աշխատանքներ, հավաքագրել մանրամասն տեղեկություններ: Բռնի տեղահանվածների հետ տեղի են ունեցել զրույցներ, ուսումնասիրվել են նրանց գրանցման և կացարանով ապահովման հետ կապված հարցերը: Բազմաթիվ հարցեր քննարկվել են իրավասու պետական մարմինների հետ և տրվել են անհրաժեշտ լուծումներ:

բ) Հոկտեմբերի 16-ին Պաշտպանն ընդունել է Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Դունյա Միյատովիչին:

ԵԽ մարդու իրավունքների հանձնակատարի հետ համատեղ՝ Պաշտպանը հոկտեմբերի 17-ին և 18-ին այցելել է Աղավնաձոր բնակավայրում և Կոտայքի մարզում ժամանակավոր բնակություն հաստատած Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց:

Նրանք Պաշտպանին և ԵԽ մարդու իրավունքների հանձնակատարին են ներկայացրել իրենց կրած զրկանքները և բռնի տեղահանման արդյունքում առաջացած խնդիրները: Անդրադարձ է կատարվել կենսաթոշակների, պետական նպաստների վճարման հետ կապված հարցերին: Հատուկ ուշադրություն է դարձվել երեխաների և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման հետ կապված հարցերին:

գ) Նոյեմբերի 17-ին Պաշտպան Անահիտ Մանասյանը, ԵԱՀԿ Խորհրդարանական Վեհաժողովի նախագահ Պիա Կաուման և ԵԱՀԿ ԽՎ գլխավոր քարտուղար Ռոբերտո Մոնտելլան համատեղ այց են իրականացրել Կոտայքի մարզի Աբովյան խոշորացված համայնքում տեղակայված՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ժամանակավոր կացարան: Շրջայց է կատարվել կացարանում, առանձնազրույցներ են տեղի ունեցել բռնի տեղահանված անձանց հետ, ուսումնասիրվել են նրանց պահման պայմանները, կարիքների գնահատման, բժշկական օգնության և սպասարկման, սննդի, անձնական հիգիենայի պարագաների տրամադրման հետ կապված հարցերը: Հատուկ ուշադրություն է դարձվել խոցելի խմբերի, այդ թվում՝ երեխաների, տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վիճակին: Բռնի տեղահանված անձինք Պաշտպանին, ԵԱՀԿ ԽՎ նախագահին և գլխավոր քարտուղարին ներկայացրել են Ադրբեջանի զինված ուժերի կողմից Լեռնային Ղարաբաղի նկատմամբ ագրեսիայի, ինչպես նաև Լաչինի միջանցքի արգելափակման ընթացքում իրենց կրած զրկանքները, իրավունքների համատարած խախտումները, կյանքի և անվտանգության տեսանկյունից ի հայտ եկած իրական սպառնալիքները և բռնի տեղահանման հետևանքով առաջացած խնդիրները:

2023 թվականին Պաշտպանը շարունակել է համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ տարբեր ծրագրերի շրջանակներում, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի (ԵԽ), Եվրոպական միության (ԵՄ), Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի (ՄԱԶԾ), Միավորված ազգերի միջազգային մանկական ճգնաժամային հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ), Միավորված ազգերի կազմակերպության Բնակչության հիմնադրամի (ՄԱԿԲՀ), Եվրոպայում Անվտանգության և Համագործակցության Կազմակերպության (ԵԱՀԿ), Կանադայի Խորհրդարանական կենտրոնի, Հայաստանի Հանրապետությունում Մեծ Բրիտանիայի դեսպանության, Հայաստանի Հանրապետությունում Նիդերլանդների Թագավորության դեսպանության, ինչպես նաև մի շարք այլ միջազգային գործընկերների հետ: Օրինակ՝

ա) Պաշտպանի աշխատակազմը հանդիսանում է Եվրոպայի խորհրդի՝ Հայաստանի համար իրականացվող 2023-2026թթ. Գործողությունների ծրագրի շրջանակներում իրականացվող **«Մարդու իրավունքների պաշտպանությունը կենսաբժշկության մեջ II»**[13] ծրագրի գործընկեր: Փետրվարի 7-ին Պաշտպան Անահիտ Մանասյանը մասնակցել է «Մարդու իրավունքների պաշտպանությունը կենսաբժշկության մեջ II» ծրագրի համակարգման խորհրդի երկրորդ նիստին և հանդես եկել բացման խոսքով: Միջոցառման նպատակն էր քննարկել Օվիեդոյի կոնվենցիայի հնարավոր վավերացմանն առնչվող հարցեր՝ համախմբելով ծրագրի գործընկերներին, դերակատարներին ու փորձագետներին, ներկայացնել համագործակցության ուղղություններն ու առաջնահերթությունները:

բ) Պաշտպանի աշխատակազմը գործընկեր է հանդիսանում նաև Եվրոպայի խորհրդի՝ Հայաստանի համար իրականացվող գործողությունների 2023-2026թթ. ծրագիր շրջանակներում իրականացվող **«Մարդու իրավունքների խթանումը Հայաստանի զինված ուժերում»**[14] ծրագրին:

Ապրիլի 21-ին Պաշտպանը մասնակցել է «Մարդու իրավունքների խթանումը Հայաստանի զինված ուժերում» Եվրոպայի խորհրդի ծրագրի բացման միջոցառմանը:

Ծրագրի նպատակն է կատարելագործել զինված ուժերում մարդու իրավունքների խախտումների նախականխմանը և դրանց արձագանքմանը վերաբերող իրավակարգավորումները և կառուցակարգերը՝ մարդու իրավունքների եվրոպական չափանիշներին համապատասխան, ինչպես նաև զինված ուժերի անձնակազմի կողմից իրականացնել մարդու իրավունքների քաղաքականություն՝ Եվրոպայի խորհրդի սկզբունքներին և առաջարկություններին համապատասխան՝ հատուկ ուշադրություն

[13] Հասանելի է «Մարդու իրավունքների պաշտպանությունը կենսաբժշկության մեջ II» https://www.coe.int/hy/web/yerevan/protection-of-human-rights-in-biomedicine-ii հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[14] Տե՛ս «Մարդու իրավունքների խթանումը Հայաստանի զինված ուժերում», հասանելի է https://www.coe.int/hy/web/yerevan/fostering-human-rights-in-the-armed-forces-in-armenia հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

դարձնելով զինվորական անձնակազմի, այդ թվում՝ կանանց և վետերանների սոցիալական պաշտպանության և առողջապահական իրավունքներին առնչվող հարցերին:

գ) Ապրիլի 28-ին տեղի է ունեցել Եվրոպայի Խորհրդի **«Աջակցություն Հայաստանում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների արդյունավետ կատարմանը»**[15] ծրագրի մեկնարկը: Հանդես գալով բացման խոսքով՝ Պաշտպանը կարևորել է ծրագրի իրականացումը Հայաստանի Հանրապետությունում և պատրաստակամություն հայտնել իր մանդատի շրջանակում աջակցել դրա հաջող ընթացքին:

դ) Նոյեմբերի 30-ին տեղի է ունեցել Պաշտպանին առընթեր ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության և խթանման հարցերով հասարակական խորհրդի անդրանիկ նիստը: Նիստն անցկացվել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի համաֆինանսավորմամբ՝ համատեղ «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագրի՝ **«Հավասարության խթանումը և խտրականության բացառումը Հայաստանում»**[16] ծրագրի հետ համագործակցության շրջանակներում:

Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի հետ համագործակցության շրջանակներում Պաշտպանի աշխատակազմի համար անցկացվել է «Հավասարության խթանումը և խտրականության բացառումը Հայաստանում» թեմայով վերապատրաստման դասընթաց, որն իրականացվել է **«Գործընկերություն հանուն լավ կառավարման»** ծրագրի շրջանակում: Դասընթացի նպատակն էր խորացնել մասնակիցների գիտելիքները խտրականության դեմ պայքարի ոլորտում, մասնավորապես ռասիզմի և անհանդուրժողականության տեսանկյունից:

ե) **«Հաշվետու հաստատություններ և մարդու իրավունքների պաշտպանությունը Հայաստանում»**[17] ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և իրականացվում է ՄԱԶԾ-ի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և ԵԱՀԿ-ի աջակցությամբ, հունիսի 14-ին, Արագածոտնի մարզում անցկացվել է Պաշտպանին առընթեր կանանց իրավունքների հարցերով հասարակական խորհրդի նիստը: Նիստի շրջանակում անցկացվել են պանելային քննարկումներ. ամփոփվել են անդրանիկ նիստին հաջորդած աշխատանքները, ներկայացվել համայնքների կողմից արձանագրված խնդիրները, քննարկվել քրեակատարողական հաստատություններում ազատությունից զրկված կանանց վերարտադրողական առողջությանն առնչվող խնդիրների վերհանման և լուծման ուղիների մշակման առաջիկա տարվա ծրագիրն ու գործողությունները:

Պաշտպանին առընթեր կանանց իրավունքների հարցերով հասարակական խորհրդի հաջորդ նիստը տեղի է ունեցել դեկտեմբերի 5-ին՝ նվիրված «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ» միջազգային քարոզարշավին: Խորհրդի նիստն իրականացվել է «Հաշվետու հաստատություններ և մարդու իրավունքների պաշտպանությունը Հայաստանում» ծրագրի շրջանակներում:

---

[15] Տե՛ս «Աջակցություն Հայաստանում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների արդյունավետ կատարմանը», հասանելի է https://www.coe.int/hy/web/yerevan/support-to-the-effective-execution-of-the-judgments-of-the-european-court-of-human-rights-in-armenia հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[16] Տե՛ս «ԳԼԿ III. Հավասարության խթանումը և խտրականության բացառումը Հայաստանում», հասանելի է https://www.coe.int/hy/web/yerevan/promoting-equality-and-non-discrimination-in-armenia հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[17] Տե՛ս Launching event of EU funded "Accountable Institutions and Human Rights Protection in Armenia" project, հասանելի է https://armenia.un.org/en/169548-launching-event-eu-funded-%E2%80%9Caccountable-institutions-and-human-rights-protection-armenia%E2%80%9D հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Նիստի շրջանակում անցկացվել են քննարկումներ՝ «Ընտանիքում բռնության դեմ պայքարում Հայաստանի Հանրապետությունում առկա իրավիճակը. արձանագրված խնդիրներն ու արդի մարտահրավերները» և «Սեռական ոտնձգությունն աշխատավայրում և ուսումնական հաստատություններում» թեմաներով: Մասնավորապես՝ նշվել են ընտանիքում բռնության և գենդերային հիմքով բռնության, սեռական ոտնձգության ենթարկված անձանց իրավունքների պաշտպանության մեխանիզմները, ոլորտային բացերն ու հասարակությունում առկա կարծրատիպերը, անդրադարձ է կատարվել միջազգային իրավական կառուցակարգերին ու կարգավորումներին:

զ) Հուլիսի 4-ին Վանաձոր քաղաքում տեղի է ունեցել ՄԻՊ աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանման բացման արարողությունը: Ստորաբաժանման բացումն իրականացվել է «Հաշվետու հաստատություններ և մարդու իրավունքների պաշտպանությունը Հայաստանում» ծրագրի աջակցությամբ: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և իրականացվում ՄԱԶԾ-ի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և ԵԱՀԿ-ի կողմից:

է)

«Հաշվետու հաստատություններ և մարդու իրավունքների պաշտպանությունը Հայաստանում» ծրագրի շրջանակում Եվրոպական միության ֆինանսավորմամբ ՄԱԶԾ-ի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և ԵԱՀԿ-ի աջակցությամբ, դեկտեմբերի 21-ին անցկացվել է քննարկում «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների ապահովման հիմնախնդիրները» թեմայով: Միջոցառման ընթացքում քննարկվել են հոգեբուժական կազմակերպություններում անձանց իրավունքների ապահովման վիճակը, մասնավորապես՝ համայնքահեն ծառայությունների ապահովումը, ոլորտի միասնական քաղաքականության անհրաժեշտությունը, հոժարակամ և ոչ հոժարակամ բուժմանն առնչվող խնդիրները, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների և զսպման մեխանիզմների կիրառումը, հոգեբուժական հաստատություններում առկա ոչ բավարար պահման պայմանները, գերբնակեցումը, ժամկետանց դեղորայքի կիրառումը և մի շարք այլ հարցեր: Անդրադարձ է կատարվել նաև հոգեբուժական կազմակերպություններում բուժանձնակազմի մասնագիտական

վերապատրաստումների և սոցիալական երաշխիքների բարելավման անհրաժեշտությանը:

ը) Կանադայի Խորհրդարանական կենտրոնի կողմից իրականացվող **«Աջակցություն Հայաստանի խորհրդարանին»** ծրագրի շրջանակներում տեղի է ունեցել Պաշտպանին առընթեր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հասարակական խորհրդի հերթական նիստը՝ «Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց անձնական օգնականի ծառայությունների մատուցում» թեմայով:

Ծրագրի շրջանակներում իրականացվել է հաշմանդամություն ունեցող անձանց անձնական օգնականի ծառայության տրամադրման կարգն ու պայմանները հաստատելու մասին որոշման վերանայում, ինչպես նաև 2024 թվականի ռազմավարության պլանի մշակում

թ) Համագործակցությունը Պաշտպանի աշխատակազմի և Հայաստանի Հանրապետությունում Մեծ Բրիտանիայի դեսպանատան միջև շարունակվել է Միացյալ Թագավորության կառավարության Հակամարտությունների, կայունության և անվտանգության հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Գենդերային հավասարության խթանում Հայաստանի իրավապահ համակարգում» ծրագրի շրջանակներում:

2023 թվականի ընթացքում իրականացվել է պարեկային ծառայությունում կանանց ընդունելությանը խոչընդոտող օրենսդրության՝ ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 23-ի թիվ 175-Ն որոշման վերանայում և օրենսդրական փոփոխությունների նախագծի մշակում, ինչպես նաև քննարկումներ Ներքին գործերի նախարարության ոստիկանության ներկայացուցիչների հետ: Արդյունքում, հաշվի առնելով Պաշտպանի աշխատակազմի կողմից ներկայացված առաջարկությունները՝ «2023 թվականի Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 23-ի N 175-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» որոշմամբ վերանայվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 27-ի «Ոստիկանության ծառայողին ներկայացվող ֆիզիկական պատրաստակամության, առողջական վիճակի հետ կապված պահանջները սահմանելու մասին» N 175-Ն որոշումը:

ժ) Պաշտպանը դեկտեմբերի 15-ին հրապարակել է ուսումնասիրություն ՀՀ քրեադատավարական համակարգում ատելության հրահրման և բռնության կոչերի դեպքերի քննության վերաբերյալ, վերլուծվել է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված՝ ատելության հրահրման և բռնության կոչերի քննության ներպետական պրակտիկան, վեր են հանվել առկա խնդիրները և ներկայացվել են դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ: ՈՒսումնասիրությունն իրականացվել է «Լիբերալ քաղաքականության ինստիտուտ» հասարակական կազմակերպության հետ համատեղ Հայաստանի Հանրապետությունում Նիդերլանդների Թագավորության դեսպանության օժանդակությամբ իրականացվող «Ատելության խոսքի դեմ պայքար հանուն ժողովրդավարական հասարակությունում բազմակարծության և հանդուրժողականության հաստատման» ծրագրի շրջանակներում:

Ծրագրի շրջանակներում մշակվում են նաև ատելության խոսքի վերաբերյալ տեսահոլովակներ, որոնք տեղադրվել են նաև ՀՀ ՄԻՊ պաշտոնական սոցիալական հարթակում:

ի) Նոյեմբերի 2-ին Պաշտպանը հրապարակել է արտահերթ զեկույց ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում բուլինգի հիմնախնդրի

վերաբերյալ, որը պատրաստվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ **«Երեխաների և երիտասարդների պաշտպանության բարելավում և մասնակցության խթանում»** ծրագրի շրջանակներում: Արտահերթ զեկույցի շրջանակներում վեր են հանվել և ներկայացվել բուլինգի հիմնախնդիրը, դրա հիմքում ընկած պատճառները, բուլինգի աննախադեպ ծավալները Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություններում, ինչպես նաև ներկայացվել են իրավասու պետական մարմիններին ուղղված՝ խնդրի լուծմանն առնչվող առաջարկներ:

Վերոնշյալ և մի շարք այլ ծրագրերի համատեքստում գործունեությունն ու համագործակցությունը կրում են շարունակական բնույթ:

6. Գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունը

2023 թվականի ընթացքում ապահովվել է ինչպես Մարդու իրավունքների պաշտպանի, այնպես էլ աշխատակազմի ներկայացուցիչների աշխատանքի հրապարակայնությունը տարբեր ոլորտներում: Այս հարցում առանցքային նշանակություն ունեն զանգվածային լրատվության միջոցների ու լրագրողների հետ ձևավորված համագործակցությունը, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հետ լրագրողների պարբերական հանդիպումներն ու հարցազրույցները: Հաշվետու տարվա ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի մասնակցությամբ կազմակերպվել է 45-ից ավել հարցազրույց: Պաշտպանն ունեցել է նաև մոտ 40 հրապարակային այց և ելույթ, որոնք լուսաբանվել են Պաշտպանի աշխատակազմի կողմից:

Հաշվետու տարվա ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը պարբերաբար կազմակերպել է նաև տարաբնույթ հանդիպումներ երեխաների, ուսանողների և այլ շահագրգիռ խմբերի հետ, որի ընթացքում ներկայացվել են Պաշտպանի իրավասությունը, աշխատանքի սկզբունքները, գործունեության ուղղությունները և մարդու իրավունքներին վերաբերելի տարատեսակ հարցեր:

Հատկանշական է, որ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի քարտուղարությամբ գործող Մարդու իրավունքների ազգային հաստատությունների համաշխարհային միավորման անկախ հանձնախումբը 2019 թվականի մարտին վերահաստատել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատության ամենաբարձր «A» միջազգային հեղինակավոր կարգավիճակը: Մարդու իրավունքների ազգային հաստատությունների գործունեության վերանայումը կատարվում է Փարիզյան սկզբունքներով սահմանված մարդու իրավունքների ազգային ինստիտուտներին առաջադրվող անկախության պահանջներին համապատասխանության տեսանկյունից:

Անկախ հանձնախմբի կողմից առաջարկված «A» կարգավիճակը Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությանն իրավունք է վերապահում մասնակցել միջազգային կառույցների, այդ թվում՝ ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի աշխատանքներին և որոշումների կայացմանը, հանդես գալ հատուկ ելույթներով, օգտվել միջազգային համապատասխան կառույցների ղեկավար մարմիններում ընտրվելու և այդ մարմինների ընտրություններին քվեարկության իրավունքից:

2023 թվականին ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան ընտրված Անահիտ Մանասյանը 2024 թվականի փետրվարի 7-ին ընտրվել է Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցի (ENNHRI) Կառավարման խորհրդի անդամ: Կառավարման խորհրդի կազմում ընդգրկվում են բացառապես «A» կարգավիճակ ունեցող մարդու իրավունքների ազգային հաստատությունների ներկայացուցիչները: Պետք է ընդգծել, որ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունն առաջին անգամ է ներկայացվում եվրոպական ցանցի կառավարման մարմնում[18]:

Հաշվետու տարում Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն նոյեմբերի 29-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանին ընտրել է Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեում (ԽԿԿ [CPT]) Հայաստանի անդամ: ԽԿԿ-ն ստեղծվել է՝ համաձայն Եվրոպայի խորհրդի «Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոնվենցիայի»: Այն գործում է Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում: Կոմիտեն կազմված է անկախ և անկողմնակալ փորձագետներից՝ իրավաբաններից, բժիշկներից, հոգեբաններից և այլ մասնագետներից[19]:

Միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI) հարցումների արդյունքներով Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի նկատմամբ գոհունակության ցուցանիշը 2023 թվականի դեկտեմբերին՝ նույն տարվա մարտի համեմատ աճել է 11%-ով: Այսպիսով, ըստ ուսումնասիրության՝ 2023 թվականի մարտին Պաշտպանի աշխատանքից գոհ է եղել հարցվածների 41 %-ը, իսկ դեկտեմբերին՝ արդեն 52 %-ը: 2023 թվականի ապրիլի 12-ին Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնը ստանձնելու առաջին իսկ օրվանից Անահիտ Մանասյանը որդեգրել է հրապարակային և թափանցիկ աշխատաոճ[20]:

[18] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2809 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[19] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2809 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[20] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2890 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

7. 2023 թվականի վիճակագրական տվյալներ

Վերջին տարիներին էականորեն աճել է Պաշտպանին ներկայացվող դիմումների ու բողոքների թիվը: Դրանց համեմատական պատկերը ցույց է տալիս, որ 2022 թվականին դիմում-բողոքների թիվը կազմել է 15.473, իսկ 2023 թվականին՝ 15889[21]:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՑՎՑԱԼՆԵՐ՝ ԸՍՏ ԱՆՁԱՆՑ

	2019	2020	2021	2022	2023
Գրավոր և բանավոր բողոքների և սեփական նախաձեռնությունների ընդհանուր տվյալներ	13140	14780	21181	15473	15889
Գրավոր դիմում-բողոքներ	3987	3781	6968	3024	3958
Քաղաքացիներին տրամադրված խորհրդ., այդ թվում՝ թեժ գիծ հեռախոսահամարներին ստացված զանգերի հիման վրա	9153	10999	14213	12449	11931
Թեժ գիծ հեռախոսահամարներին ստացված ընդհանուր զանգերի քանակ	6210	11735	14124	9851	9988
Դրական լուծված գործեր	1287	2203	2754	1282	1922
Այցեր	910	193	760	603	512

[21] Թվային տվյալները ներկայացվում են՝ ըստ անձանց:



2023 թվականին իրականացվել է 512 այց: Մասնավորապես, այցեր՝

- ՀՀ սահմանամերձ բնակավայրեր, զորամասեր, զինվորական հաստատություններ, հոսպիտալներ,
- խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման շրջանակում՝ քրեակատարողական հիմնարկներ, հոգեկան առողջության կենտրոններ, ՀՀ ՆԳՆ ոստիկանության բաժիններ, ձերբակալվածներին պահելու վայրեր և այլ փակ հաստատություններ,
- քրեական արդարադատության ոլորտում անձանց իրավունքների պաշտպանության նպատակով՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության տարբեր ստորաբաժանումներ, ձերբակալվածներին պահելու վայրեր, քննչական մարմիններ, քրեակատարողական հիմնարկներ,
- քաղաքացիական, սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների պաշտպանության ոլորտում անձանց իրավունքների պաշտպանության նպատակով՝ տուն-ինտերնատներ, երեխաների աջակցության կենտրոններ, մանկատներ,
- կոնվենցիոն մանդատների ապահովման շրջանակներում՝ մանկատներ, երեխաների խնամքի և պաշտպանության հաստատություններ, դպրոցներ, մանկապարտեզներ,
- ինչպես նաև աշխատանքային բնույթի ընթացիկ այլ այցեր:

Աճել է նաև անհատական գործերով աշխատանքի արդյունավետությունն ու դրական գործերի քանակը: Այսպես, 2022 թվականին դրական լուծում ստացած գործերի թիվը կազմել է 1282՝ 2023 թվականին դառնալով 1922:

Աճի միտում ունեն նաև Պաշտպանի աշխատակազմի թեժ գիծ հեռախոսահամարներին ստացվող հեռախոսազանգերը: Այսպես, 2022 թվականին՝ դրանց թիվը եղել է 9851, իսկ 2023 թվականին՝ 9988:

Հարկ է նշել, որ այցերի արդյունքները, ուսումնասիրությունները և վերլուծությունները՝ արձանագրված խնդիրների լուծմանն ուղղված առաջարկների հետ մեկտեղ, ներկայացվել են պետական իրավասու մարմիններին:

Դիմում-բողոքներ և սեփական նախաձեռնություններ՝ ըստ վարչատարածքային միավորների



Դիմում-բողոքներ և սեփական նախաձեռնություններ՝ ըստ մարմինների ու կազմակերպությունների



8. Արտահերթ հրապարակային զեկույցներ և ուսումնասիրություններ

Պաշտպանի աշխատանքի հիմնարար ուղղություններից է առանձին թեմաներով արտահերթ զեկույցների, ուղեցույցների, ուսումնասիրությունների և այլ փաստաթղթերի հրապարակումը:

Զեկույցներում ներկայացվում են անհատական դիմումների, այցերի և մշտադիտարկումների արդյունքում վեր հանված խնդիրներն ու դրանց հաղթահարմանն ուղղված առաջարկները՝ մանրակրկիտ ուսումնասիրության և վերլուծության արդյունքում: Բացի հրապարակված զեկույցներից, կատարված աշխատանքի հիման վրա իրավասու մարմիններին ներկայացվել են մարդու իրավունքներին վերաբերելի տարատեսակ հարցերի առնչությամբ բազմաթիվ առաջարկություններ, իսկ դրանց կատարման նկատմամբ իրականացվել է հետագա հետևողական մշտադիտարկում:

Զեկույցներն ուղարկվել են պետական իրավասու գերատեսչություններին, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մանդատ ունեցող կազմակերպություններին և դերակատարներին:

2023 թվականի ընթացքում Պաշտպանը հրապարակել է թվով 11 զեկույց, 2 ուսումնասիրություն և 3 իրավական դիրքորոշում:

- ✔ Հայաստանի և ԼՂ մարդու իրավունքների պաշտպանների հաստատությունների համատեղ արտահերթ զեկույցը Լաչինի միջանցքի արգելափակման հումանիտար հետևանքների վերաբերյալ (թարմացված)[22]
- ✔ Արտահերթ հրապարակային զեկույց ՀՀ-ի կողմից Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման 2013-2022 թվականների վիճակի վերաբերյալ[23]
- ✔ Արտահերթ հրապարակային զեկույց 2023 թվականի ապրիլ-մայիս ամիսներին Սյունիքի և Գեղարքունիքի մարզերի սահմանամերձ բնակավայրերում փաստահավաք աշխատանքների վերաբերյալ[24]
- ✔ Արտահերթ հրապարակային զեկույց Լաչինի միջանցքի արգելափակման հումանիտար հետևանքների վերաբերյալ[25]
- ✔ Արտահերթ հրապարակային զեկույց Երասխի ուղղությամբ ադրբեջանական ագրեսիայի հետևանքով մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ[26]
- ✔ Արտահերթ հրապարակային զեկույց Բարձրագույն դատական խորհրդի՝ 2023 թվականի հուլիսի 3-ի նիստին լրագրողների մասնագիտական գործունեության առերևույթ սահմանափակումների առնչությամբ[27]

---

[22] Զեկույցը հասանելի է https://ombuds.am/images/files/8015e970b4e618c7e518be045acd382b.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[23] Զեկույցը հասանելի է https://www.ombuds.am/images/files/2c1f6e50692f92df376290b6a4ec5121.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[24] Զեկույցը հասանելի է https://www.ombuds.am/images/files/e12940a4c1afee3703896176aa538251.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[25] Զեկույցը հասանելի է https://www.ombuds.am/images/files/798e81176d93081e6199ca90cfa31466.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[26] Զեկույցը հասանելի է https://ombuds.am/images/files/4e73af39ae6617df7437605f57eb01cd.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[27] Զեկույցը հասանելի է https://ombuds.am/images/files/d9937ce0e903b33e2c4a6df32ff9f2c3.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

✔ Արտահերթ նախնական զեկույց Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների հաշվառման վայրերում փաստահավաք աշխատանքների արդյունքների վերաբերյալ[28]

✔ Արտահերթ հրապարակային զեկույց ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում բուլինգի հիմնախնդրի վերաբերյալ[29]

✔ Ուսումնասիրություն Պաշտպանի աշխատակազմի կողմից «Երևանի N 34 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ և «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» ՊՈԱԿ կատարված այցերի վերաբերյալ[30]

✔ Ուսումնասիրություն ՀՀ քրեադատավարական համակարգում ատելության հրահրման և բռնության կոչերի դեպքերի քննության վերաբերյալ[31]

✔ Իրավական դիրքորոշում «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվող՝ բժշկական գաղտնիք համարվող տվյալների՝ մարդու իրավունքների պաշտպանին փոխանցելու ընթացակարգերի վերաբերյալ[32]

✔ Իրավական դիրքորոշում գտնվելու վայրն անհայտ զինծառայողների ծնողներին քրեական վարույթով տուժող ճանաչելու հարցի վերաբերյալ[33]

✔ Իրավական դիրքորոշում «Լեռնային Ղարաբաղում հումանիտար աղետը օր օրի ավելի է խորանում. Մարդու իրավունքների պաշտպանը խստորեն դատապարտում է Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղում բնակվող հայերի հիմնարար իրավունքների կոպիտ խախտումները»[34]

9. Մարդու իրավունքների կրթություն և վերապատրաստումներ

Պաշտպանի աշխատանքի առանցքային ուղղություններից է մարդու իրավունքների խթանումը, որի շրջանակներում բացառիկ կարևորություն ունեն մարդու իրավունքների կրթության բնագավառում իրականացվող աշխատանքներն ու իրազեկման միջոցառումները:

Փարիզյան սկզբունքները սահմանում են, որ մարդու իրավունքների ազգային հաստատությունները պարտավոր են «աջակցել մարդու իրավունքների ուսուցման և հետազոտության ծրագրերի ձևավորմանը և մասնակցել դպրոցներում, համալսարաններում ու մասնագիտական շրջանակներում դրանց իրականացմանը»[35]:

Մարդու իրավունքների ազգային հաստատությունների գլոբալ դաշինքի հավատարմագրման ենթահանձնաժողովի ընդհանուր դիտարկումներում նշվում է, որ

---

[28] Զեկույցը հասանելի է https://www.ombuds.am/images/files/e76a3b67b4a56fadb3271705e33eeec5.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[29] Զեկույցը հասանելի է https://www.ombuds.am/images/files/34b7bedf65b11eccc9be20dd5ee9d22a.pdf հղումով:

[30] Ուսումնասիրությունը հասանելի է https://www.ombuds.am/images/files/91d555b651b85fd76fb2351f937e05e6.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[31] Ուսումնասիրությունը հասանելի է https://www.ombuds.am/images/files/59d3e8766a8ef5c75bec65afff6426e0.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[32] Դիրքորոշումը հասանելի է https://ombuds.am/images/files/598cebfa48add59a19771e6ae745d41b.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[33] Դիրքորոշումը հասանելի է https://ombuds.am/images/files/00921e1bd79ec76336266b5f9c9f2c95.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[34] Իրավական դիրքորոշումը հասանելի է https://www.ombuds.am/images/files/3f865b29b06f4e4785047109cacec95a.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[35] Տե՛ս «Փարիզյան սկզբունքները», հասանելի է https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Publications/PTS-4Rev1-NHRI_en.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

բոլոր մարդու իրավունքների ազգային հաստատությունները պետք է օրենսդրորեն լիազորված լինեն հատուկ գործառույթներով՝ ինչպես խթանելու, այնպես էլ պաշտպանելու մարդու իրավունքները: Ըստ Հավատարմագրման ենթահանձնաժողովի՝ «խթանումը» ընդգրկում է այն գործառույթները, որոնք ձգտում են ստեղծել մի հասարակություն, որտեղ մարդու իրավունքները լայն շրջանակներում հասկացված և հարգված են: Նման գործառույթները կարող են ներառել կրթությունը, վերապատրաստումը, խորհրդատվությունը, հանրային իրազեկումն ու շահերի պաշտպանությունը:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածով ամրագրված է, որ աշխատակազմի մասնագիտական վերապատրաստումները և մարդու իրավունքների վերաբերյալ կրթական ծրագրերն իրականացնում է Պաշտպանը՝ իր աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման կամ այլ հաստատության միջոցով: Միաժամանակ, ըստ նույն հոդվածի՝ Պաշտպանը կարող է իրականացնել նաև շահառու մարմինների և կազմակերպությունների՝ մարդու իրավունքներին և ազատություններին առնչվող հարցերով վերապատրաստումներ:

2023 թվականին Պաշտպանը շարունակել է մարդու իրավունքների կրթության բնագավառում իր գործունեությունը: Պաշտպանը և աշխատակազմի ներկայացուցիչները տարբեր ձևաչափերով մարդու իրավունքների պաշտպանության հարցերի վերաբերյալ վերապատրաստումներ ու իրազեկման աշխատանքներ են իրականացրել շահառու հանրային իշխանության մարմինների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, կրթական հաստատությունների աշխատակիցների, ուսանողների ու դպրոցականների համար:

Մարդու իրավունքների պաշտպանն անձամբ իրականացրել է իրազեկման աշխատանքներ և քննարկումներ հասարակության տարբեր շրջանակների, այդ թվում՝ դպրոցականների և ուսանողների հետ՝ Պաշտպանի մանդատի, գործունության ուղղությունների, կառույցի առաքելության, մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ, սահմանադրականության, իրավունքի գերակայության և մի շարք այլ թեմաներով[36]:

Օրինակ՝ 2023 թվականի հուլիսի 5-ին, Սահմանադրության օրվա առթիվ՝ Տավուշի մարզի Դիլիջան խոշորացված համայնքում գտնվող Դիլիջանի համայնքային կենտրոնում Պաշտպանը քննարկում է իրականացրել կենտրոնի երիտասարդների հետ՝ մարդակենտրոն հասարակության ամրապնդման գործում սահմանադրական արժեքների դերին առնչվող թեմայով: Հանդիպմանը մասնակցել են նաև մանկավարժներ, իրավապաշտպաններ և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ[37]:

Մարդու իրավունքների միջազգային օրվա և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ընդունման 75-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում 2023

[36] Հասանելի են, օրինակ՝ https://ombuds.am/am/site/ViewNews/2646 և https://ombuds.am/am/site/ViewNews/2625 հղումներով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[37] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2603 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

թվականի դեկտեմբերի 11-ին Պաշտպանը Արմավիրի մարզի Նորապատ համայնքի միջնակարգ դպրոցում հանդիպել է դպրոցականների հետ[38]:

Հաշվետու տարում Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները նույնպես իրականացրել են մի շարք վերապատրաստման դասընթացներ շահառու պետական մարմինների և այլ հաստատությունների ներկայացուցիչների համար՝ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման, փախստականների և ապաստան հայցողների պաշտպանության միջազգային և ազգային չափանիշների, երեխայի նկատմամբ բռնության ու հարցազրույցի վարման առանձնահատկությունների, բուլինգի կանխարգելման, բացահայտման և արձագանքման, ուսուցիչ-ծնող արդյունավետ համագործակցության վերաբերյալ և այլ թեմաներով:

Առանձնահատուկ կարևորելով աշխատակազմի կարողությունների զարգացմանն ուղղված շարունակական միջոցառումները՝ մեծ ակտիվությամբ իրականացվել են նաև Պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստման դասընթացներ:

Այսպես, 2023 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների համար իրականացվել են կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստումներ թրաֆիքինգի դեմ պայքարի[39], հավասարության խթանման և խտրականության բացառման[40], ատելության խոսքի և ատելության շարժառիթով կատարված հանցագործությունների[41], հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների ապահովման հիմնախնդիրների, հուզական այրման[42], ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրականության բացառման, սահմանադրական արդարադատության[43], Պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկման կարողությունների զարգացման[44] և մի շարք այլ ոլորտներին վերաբերելի տարբեր թեմաների առնչությամբ:

Ավելին, 2023 թվականի ընթացքում ազգային փորձագետները մշակել են փաստահավաք աշխատանքներ կատարելու վերաբերյալ ուղեցույց և հարցաշար, որոնց հիման վրա Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները 2024 թվականին վերապատրաստվել են փաստահավաք աշխատանքների մեթոդաբանության, առանձնահատկությունների ու գործնական խնդիրների վերաբերյալ[45]:

[38] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2804 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[39] Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2631 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[40] Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2792 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[41] Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2820 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[42] Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2761 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[43] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2756 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[44] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2810 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[45] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2840 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

ԲԱԺԻՆ 2. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Սոցիալական ապահովության իրավունքի պահպանումը ենթադրում է պետության գործունեության ուղղություն, որը խնդիր է դնում պետության առջև՝ հոգ տանել սոցիալական արդարության, իր քաղաքացիների բարեկեցության և սոցիալական պաշտպանվածության մասին: Բնակչության սոցիալական պաշտպանությունը կամ սոցիալական ապահովությունը մարդկանց՝ օրենսդրորեն ամրագրված իրավական և սոցիալ-տնտեսական երաշխիքների ամբողջություն է, որն ապահովում է ընդունելի կենսամակարդակ: Այն կոչված է երկրում ստեղծելու այնպիսի պայմաններ, որոնք կարող են ապահովել յուրաքանչյուր քաղաքացու համար արժանավայել կյանք և բավարար կենսապայմաններ:

2023 թվականի ընթացքում ՄԻՊ-ի ուշադրության ներքո են եղել մարդկանց սոցիալական իրավունքների ապահովման հարցերը: Պաշտպանը տարվա ընթացքում շարունակել է ինչպես գրագրությամբ, այնպես էլ՝ պետական մարմինների հետ հաղորդակցության տարբեր ձևաչափերով ներկայացնել ոլորտային խնդիրներն ու դրանց լուծման եղանակները:

Հաշվետու տարվա ընթացքում Պաշտպանը ինչպես անձամբ, այնպես էլ՝ իր ներկայացուցիչների միջոցով կատարել է քաղաքացիների ընդունելություն: Վերջիններիս կողմից բարձրացված բազմաթիվ հարցեր Պաշտպանի աջակցությամբ ստացել են դրական լուծում:

Պաշտպանը հատուկ կարևորում է նաև իրավասու մարմինների հետ ձևավորված արդյունավետ համագործակցության առանձին ձևաչափերը: ԱՍՀՆ-ի, վերջինիս ենթակա ՄՍԾ-ի հետ ձևավորված համագործակցության արդյունքում լուծում են ստացել բազմաթիվ խնդիրներ:

ՄԻՊ-ը կարևորում է նաև ոլորտում գործունեություն իրականացնող ՔՀԿ-ների հետ ձևավորված արդյունավետ համագործակցությունը, ինչի արդյունքում վեր են հանվել և պետական մարմինների ուշադրությանն են ներկայացվել բազմաթիվ համակարգային խնդիրներ:

Սոցիալական ապահովության ոլորտում սույն բաժնում առկա խնդիրները վեր են հանվել երկու դիտանկյունից՝ կենսաթոշակի և սոցիալական աջակցության իրավունքների իրացման հետ կապված գործնական և օրենսդրական խնդիրներ: Պաշտպանին հասցեագրված բողոքների արդյունքում վեր են հանվել նաև համակարգային խնդիրներ, այդ թվում՝ տարիներ շարունակ բարձրացվող և դեռևս լուծում չստացած:

Սոցիալական ապահովության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից սույն բաժնում ուսումնասիրություններն արվել են և խնդիրները վեր են հանվել Պաշտպանին հասցեագրված գրավոր ու բանավոր բողոքների և ահազանգերի հիման վրա:

Պաշտպանն իր գործունեության ողջ ընթացքում, այդ թվում՝ սոցիալական ապահովության ոլորտին առնչվող խնդիրների մասով առանցքային է համարել իրավունքահեն կառուցակարգերի միջոցով կանխորոշված խնդիրների հաղթահարումն ու սոցիալական իրավունքների անխոչընդոտ իրացումը:

ԳԼՈՒԽ 1. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Կենսաթոշակի իրավունքի իրացման հետ կապված գործնական և օրենսդրական խնդիրներ

1.1 Արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակելու խնդիր

Մարդու իրավունքների պաշտպանն իր գործունեությունն ամփոփող հաղորդումներում տարիներ շարունակ բարձրացնում է արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունքի իրացման համար սահմանված՝ անձանց կատարած աշխատանքը, պաշտոնը կամ մասնագիտությունը որպես ծանր կամ վնասակար մասնագիտություն, պաշտոն կամ աշխատանք նախատեսված չլինելու խնդիրը46:

«Պետական կենսաթոշակների մասին» օրենքում գործածվող վնասակար, ծանր, առանձնապես վնասակար և առանձնապես ծանր ձևակերպումներն առաջացնում են տարընկալում այն դեպքում, երբ անձինք փաստացի կատարել են արտոնյալ կենսաթոշակի իրավունք տվող աշխատանք, սակայն զրկվել են արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունքից կատարված աշխատանքի՝ ՀՀ կառավարության 2012 թվականի հունվարի 12-ի թիվ 12-Ն և 2014 թվականի հուլիսի 10-ի թիվ 674-Ն որոշումներով սահմանված աշխատանքի նույն անվանումը չունենալու պատճառով: Այլ կերպ, քանի որ դիմումատուների աշխատանքային գրքույկներում ՀՀ կառավարության որոշումներին համապատասխան՝ մասնագիտության անվան փոփոխության մասին համապատասխան գրառումներ չեն կատարվել, փաստացի կատարած աշխատանքը չի դիտարկվել արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող:

Թեև անհատական մակարդակում Պաշտպանի միջամտությամբ և իրավասու մարմնի հետ արդյունավետ համագործակցության արդյունքում որոշ բողոքներ ստացել են լուծում, այնուհանդերձ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունքի իրացման հետ կապված հարցը համակարգային առումով շարունակում է խնդրահարույց մնալ:

Բարձրացված խնդրի վերաբերյալ Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով քաղաքացին հայտնել է, որ 31.05.1984-22.10.2002 թվականներին աշխատել է «Երևանի քաղաքային նյարդահոգեբուժական դիսպանսեր»-ում՝ որպես բուժակ, իսկ 2019 թվականից ի վեր աշխատում է «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ում՝ որպես հերթապահ հիվանդապահ: Բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ կենսաթոշակի նշանակման վերաբերյալ դիմումին կից ներկայացված փաստաթղթերն ամբողջովին հիմնավորում են արտոնյալ պայմաններով կենսաթոշակի նշանակումը, ուստի Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնը անհիմն մերժում է իր դիմումը:

Բողոքի շրջանակում Պաշտպանի՝ պարզաբանումներ ներկայացնելու գրությանն ի պատասխան՝ ԱՍՀՆ-ից տեղեկացրել են, որ ստացված լրացուցիչ փաստաթղթերի և կատարված ուսումնասիրությունների հիման վրա 15.10.1997-14.04.1998 թվականների և 1992 թվականի դեկտեմբեր, 1995 թվականի հուլիս և 1997 թվականի սեպտեմբեր ամիսները հաշվառվել են քաղաքացու արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժում և իրավունքը ձեռք բերելու օրվանից նրան նշանակվել է արտոնյալ պայմաններով կենսաթոշակ:

46 Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2019, 2020 և 2021 թվականների տարեկան հաղորդումները (համապատասխանաբար՝ էջեր 62-64, 84-89, 97-103):

Պաշտպանի աշխատակազմ մուտքագրած մեկ այլ բողոքով քաղաքացին տեղեկացրել է, որ դիմել է ՄՍԾ տարածքային կենտրոն՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակելու համար, սակայն կենսաթոշակի նշանակումը մերժվել է ընդհանուր աշխատանքային ստաժը 24 տարի 4 ամիս 14 օր, իսկ արտոնյալ պայմաններով աշխատանքային ստաժը 19 տարի 9 ամիս 24 օր կազմելու հիմնավորմամբ: Ընդհանուր՝ 25 տարի աշխատանքային ստաժը ձեռք բերելուց հետո կրկին դիմել է կենսաթոշակային մարմնին կենսաթոշակ նշանակելու ակնկալիքով, սակայն այս անգամ մերժվել է՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող ստաժը 19 տարի 9 ամիս 24 օր կազմելու հիմնավորմամբ: Ըստ քաղաքացու՝ ՄՍԾ տարածքային կենտրոնն իր՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող ստաժում չի հաշվառել 01.02.1996-01.05.1997 թվականներին վնասակար, ծանր պայմաններում հակատուբերկուլոզային դիսպանսերում՝ որպես թաղամասային բուժքույր, 01.07.2007-20.10.2007 թվականներին՝ որպես լաբորանտ աշխատած ժամանակահատվածները, որի պատճառով էլ ստաժը չի կազմել «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով սահմանված անհրաժեշտ 20 օրացուցային տարի: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ մերժման մասին որոշումը բողոքարկել է վերադասության կարգով և ստացել պատասխան այն մասին, որ աշխատանքային գրքույկում առկա գրառումների հաշվառմամբ՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող ստաժը կազմում է 10 տարի 2 ամիս, ըստ այդմ՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակելու իրավական հիմքեր չկան:

Բողոքի շրջանակներում Պաշտպանը գրություն է հասցեագրել ԱՍՀՆ, որտեղից ստացված պարզաբանման համաձայն՝ դիմողի արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող ստաժը կազմում է 10 տարի 2 ամիս (21.11.1995-01.02.1996 թվականներ, 01.05.1997-01.05.2007 թվականներ): Ըստ պարզաբանման՝ հակատուբերկուլոզային դիսպանսերում որպես սանիտար աշխատած ժամանակահատվածը, Կառավարության 2012 թվականի հունվարի 12-ի թիվ 12-Ն որոշմամբ հաստատված արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող թիվ 2 ցուցակի XXI բաժնի (Առողջապահության և սոցիալական ապահովության կազմակերպություններ) «գ» ենթակետի /տուբերկուլոզային և վարակիչ հիմնարկություններում, բաժանմունքներում, կաբինետներում/ թիվ 2260000գ ծածկագրով նախատեսված չէ: Ըստ այդմ, արտոնյալ պայմաններով (թիվ 2 ցուցակ) կենսաթոշակ նշանակելու իրավական հիմքեր չկան:

Ստացվում է, որ անձը փաստացի կատարել է առողջության համար վտանգավոր աշխատանք, սակայն հակատուբերկուլոզային դիսպանսերում սանիտարի պաշտոնը ՀՀ կառավարության 2012 թվականի հունվարի 12-ի թիվ 12-Ն որոշման թիվ 2 ցուցակում բառացի նախատեսված չլինելու պատճառով զրկվել է արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունքից:

Մարդու իրավունքների պաշտպանն, իր նախորդ տարեկան հաղորդումներում անդրադառնալով բարձրացված խնդրին, ներկայացրել է հստակ առաջարկներ, որոնք հանգում են հետևյալին.

- կենսաթոշակները նշանակելիս անհրաժեշտ է առաջնորդվել այն սկզբունքով, որ, եթե տվյալ անձի աշխատանքային գրքույկում նշված պաշտոնն իր էությամբ համապատասխանում է ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված արտոնյալ կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտությունների և պաշտոնների ցանկում նախատեսված պաշտոնի իրական անվանմանը կամ բնույթին, անձին նշանակվի կենսաթոշակ,

• իրավակիրառ պրակտիկայում առաջացած յուրաքանչյուր դեպքի հիման վրա կատարելագործել ՀՀ կառավարության 2012 թվականի հունվարի 12-ի թիվ 12-Ն որոշմամբ հաստատված արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքի ցուցակները[47]:

Հաշվի առնելով ընթացիկ տարում ստացվող բողոքներով բարձրացված խնդրի արդիականությունը՝ Պաշտպանի՝ 2023 թվականի տարեկան հաղորդման նախապատրաստման շրջանակներում խնդրի կարգավորման համար ձեռնարկված միջոցների առնչությամբ ԱՍՀՆ-ին ուղղված հարցմանն ի պատասխան՝ ներկայացվել է տեղեկատվություն առ այն, որ 2023 թվականի ընթացքում Կառավարության որոշումներով հաստատված արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող ցուցակների կատարելագործման ուղղությամբ օրենսդրական փոփոխություններ և լրացումներ կատարելու համար առաջարկություններ չեն նախաձեռնվել:

Ըստ ԱՍՀՆ-ի՝ «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով սահմանափակված են արտոնյալ պայմաններով աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային գործունեության ժամկետները՝ ***նպատակ ունենալով ասպիճանաբար վերացնել կենսաթոշակի այդ տեսակը***, ինչը բխում է կենսաթոշակային ապահովության բնագավառում Կառավարության որդեգրած քաղաքականության սկզբունքներից:

Մինչդեռ, ԱՍՀՆ-ի կողմից չի ներկայացվել տեսլական արտոնյալ պայմաններով կենսաթոշակի տեսակի վերացման դեպքում այլընտրանքային մոտեցումների առնչությամբ:

Նկատի ունենալով արտոնյալ պայմաններով կենսաթոշակի տեսակի վերացման վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը՝ Պաշտպանը կարևորում է երկար տարիներ վտանգավոր կամ ծանր պայմաններում աշխատած անձանց կենսաթոշակային ապահովության ուղղությամբ այնպիսի այլընտրանքային մոտեցումների որդեգրումը, որոնք համապատասխան կլինեն ոլորտին առնչվող միջազգային չափանիշներին:

Տնտեսական համագործակցության և զարգացման միջազգային կազմակերպությունը (ՏՀԶԿ), վերլուծելով վտանգավոր ու ծանր պայմաններում աշխատած անձանց սոցիալական ապահովության ոլորտին առնչվող անդամ 38 երկրների փորձը, նշել է՝
«Քանի որ որոշ աշխատատեղերի առանձնահատկությունների (օրինակ՝ ֆիզիկական լարվածություն, աղմուկ կամ աշխատաժամանակի ոչ սովորական օրինաչափություններ) արդյունքում անձանց առողջության վրա հետագայում առաջացող վնասակար ազդեցությունները սովորաբար չեն ծածկվում հաշմանդամության նպաստներով, որոշ հատուկ կենսաթոշակային դրույթներ կարող են լրացնել հատուցումը: Նշյալի նպատակն է փոխհատուցել վտանգավոր կամ ծանր պայմաններում աշխատած անձանց հնարավոր երկարաժամկետ հետևանքների համար, որոնց առաջացումը պետք է հիմնավորված լինի հիմնավոր ապացույցներով՝ վաղաժամկետ կենսաթոշակի անցնելուն նպատակաուղղված տարբերակների միջոցով: Վտանգավոր կամ ծանր պայմաններում աշխատանքի համար հատուկ կենսաթոշակային դրույթները հիմնված են ՏՀԶԿ երկրների տարբեր մոտեցումների վրա՝ փոխհատուցելու մինչև կենսաթոշակային տարիքը աշխատելու կարողությունների

47 Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2019, 2020, 2021 թվականների տարեկան հաղորդումը (համապատասխանաբար՝ էջեր 62-64, 84-89, 97-103)

անկման և աշխատանքային պայմանների հետևանքով առողջության վրա բացասական հետևանքների (անմիջական կամ հետաձգված ձևով առաջացող) արդյունքում հասցված վնասը:»48:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումների համաձայն՝

• *(...) եթե պետությունն ունի գործող օրենսդրություն, որը երաշխավորում է սոցիալական ապահովության իրավունքը, ապա այդ* ***օրենսդրությունը պետք է համարվի որպես գույքային շահ****, որը մտնում է թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի շրջանակում դրա պահանջները բավարարող անձանց համար:*

• *ՄԻԵԴ-ը, անդրադառնալով սոցիալական ապահովության ոլորտում պետության քաղաքականությանը, առանձնահատուկ նշանակություն է տվել «լավ կառավարման» սկզբունքին, համաձայն որի՝ պետական իշխանությունները պետք է գործեն առավելագույն «բծախնդրությամբ», երբ զբաղվում են անհատների համար կենսական նշանակություն ունեցող հարցերով, ինչպիսիք են սոցիալական ապահովությունը և գույքային այլ իրավունքները:49*

Պաշտպանն ընդգծում է, որ սոցիալական ապահովության քաղաքականության ոլորտում առանցքային է կենսաթոշակի իրավունքին վերաբերելի հարցերի նկատմամբ պետության «բծախնդիր» մոտեցումը:

Ելնելով վերոգրյալից՝ Պաշտպանն ընդգծում է, որ պետությունը պետք է մշակի և իրացնի պատշաճ կառուցակարգեր՝ վտանգավոր կամ ծանր պայմաններում աշխատած անձանց առողջության վրա ազդող բացասական հետևանքների համարժեք փոխհատուցումն ապահովելու նպատակով:

1.2 Մասնակի կենսաթոշակ նշանակելու խնդիր

Մասնակի կենսաթոշակի իրավունքի իրացման վերաբերյալ Պաշտպանի նախորդ տարիներին արձանագրած խնդիրների համեմատությամբ 2023 թվականի ընթացքում դրական տեղաշարժ է նկատվել:

Մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից ԱՍՀՆ-ի հետ ակտիվ համագործակցության շրջանակում որոշ դեպքերով բարձրացված խնդիրները ստացել են դրական լուծումներ:

Օրինակ՝ քաղաքացին դիմել է Պաշտպանին՝տեղեկացնելով է, որ 1986 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2023 թվականը զբաղվել է մանկավարժական գործունեությամբ: Մասնակի կենսաթոշակի իրավունքի իրացման համար 55 տարին լրանալուց հետո դիմել է ՄՍԾ, սակայն, ստացել է պատասխան այն մասին, որ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ից և համայնքապետարանից ստացված տեղեկատվության հիման վրա՝ մինչև 2003 թվականի օգոստոսի 1-ը մասնագիտական ստաժը կազմել է 11 տարի 11 ամիս 26 օր, և պահանջվող 12 տարվա մասնագիտական ստաժ չունենալու պատճառով դիմումը մերժվել

48 Տե՛ս Pension provisions for workers in hazardous or arduous jobs: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.oecd-ilibrary.org/sites/fc70bc9f-en/index.html?itemId=/content/component/fc70bc9f-en, 2024 թվականի մարտի 28-ի դրությամբ:

49 Տե՛ս Մոսկալն ընդդեմ Լեհաստանի գործով ՄԻԵԴ-ի 2009 թվականի սեպտեմբերի 15-ի որոշումը, գանգատ՝ 10373/05, կետեր՝ 72-73:

է: Մինչդեռ, բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ նշված ժամանակահատվածների համար աշխատանքային ստաժը հաստատող հիմնական փաստաթուղթ համարվող աշխատանքային գրքույկով հաստատվում է, որ ունի պահանջվող մասնագիտական ստաժը:

Պաշտպանը պարզաբանումներ ստանալու նպատակով գրություն է հասցեագրել ԱՍՀՆ, որին ի պատասխան՝ տրամադրվել է պարզաբանում առ այն, որ կատարված լրացուցիչ ուսումնասիրությունների արդյունքում, առաջնորդվելով Կառավարության թիվ 665-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով ՄՍԾ տարածքային կենտրոն ներկայացված դիմումը, բողոք ներկայացրած անձին 12 տարի 1 ամիս 19 օրվա մասնագիտական ստաժով նշանակվել է մասնակի կենսաթոշակ:

Նմանատիպ մեկ այլ բողոքով քաղաքացին տեղեկացրել է, որ մասնակի կենսաթոշակի նշանակման նպատակով դիմել է ՄՍԾ, սակայն իր դիմումը մերժվել է: Վերջինս հավելել է, որ ունի համապատասխան աշխատանքային ստաժ՝ մասնակի կենսաթոշակի նշանակման համար: Ըստ բողոքի՝ 01.04.1993-01.09.1998 թվականներին քաղաքացին աշխատել է Երևանի թիվ 106 միջնակարգ դպրոցում, որը 01.09.1998 թվականին միավորվել է թիվ 1 վարժարանին և անվանվել՝ «Վարդանանց ասպետներ» կրթահամալիր: Բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ 01.09.1998-01.03.2003 թվականներին «Վարդանանց ասպետներ» կրթահամալիրում աշխատած ժամանակահատվածը չի ընդգրկվել իր մասնագիտական ստաժում, ինչով պայմանավորված՝ մասնագիտական ստաժը չի բավարարել մասնակի կենսաթոշակի նշանակման համար:

Բողոքի քննարկման շրջանակներում գրություն է հասցեագրվել ԱՍՀՆ, ինչին ի պատասխան՝ տեղեկացվել է, որ «Վարդանանց Ասպետներ» ՊՈԱԿ-ում 01.09.1998-01.03.2003 թվականներին աշխատած ժամանակահատվածը մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտական ստաժում հաշվառելու նպատակով ուսումնասիրվել են «Վարդանանց ասպետներ» հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի 1998 թվականի և 2003 թվականի կանոնադրությունները: Ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ կազմակերպությունը իրականացնում է պետական պատվեր՝ դպրոցի կառավարման և Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության որոշումներին համապատասխան և ֆինանսավորվում է պետական բյուջեի միջոցներից: Ըստ այդմ, ՄՍԾ-ին տրվել է համապատասխան հանձնարարական՝ քաղաքացու աշխատանքային ստաժում 01.09.1998-01.03.2003 թվականներին «Վարդանանց ասպետներ» թիվ 106 պետական հանրակրթական միջնակարգ դպրոց ոչ առևտրային պետական կազմակերպությունում աշխատած ժամանակահատվածը հաշվառելու համար:

ՄԻՊ աշխատակազմ մուտքագրված մեկ այլ բողոքով քաղաքացին հայտնել է, որ 1986 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 1990 թվականի մայիսի 31-ը աշխատել է Կամոյի մանկապարտեզում՝ որպես դաստիարակչուհի, իսկ 1990 թվականի հունիսի 1-ից մինչ օրս՝ որպես դաստիարակչուհի աշխատում է Լանջաղբյուրի մանկապարտեզում: Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ 2022 թվականի հունվարի 10-ին լրացել է 55 տարին, ինչով պայմանավորված՝ մասնակի կենսաթոշակ նշանակելու համար դիմել է ՄՍԾ տարածքային կենտրոն՝ ներկայացնելով անհրաժեշտ փաստաթղթերը: Ըստ բողոքի՝ քաղաքացին 2022 թվականի մայիսի 11-ին ստացել է պատասխան այն մասին, որ Հայաստանի ազգային արխիվից և համայնքապետարանից ստացված տեղեկատվության հիման վրա մինչև 2003 թվականի օգոստոսի 1-ը մասնագիտական ստաժը կազմել է 11

տարի 11 ամիս 26 օր, և պահանջվող 12 տարվա մասնագիտական ստաժ չունենալու պատճառով դիմումը մերժվել է: Մինչդեռ, բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ նշված ժամանակահատվածների համար աշխատանքային ստաժը հաստատող հիմնական փաստաթուղթ համարվող աշխատանքային գրքույկով հաստատվում է, որ ունի պահանջվող մասնագիտական ստաժը: Այնուհետև, ըստ քաղաքացու՝ նշվածով պայմանավորված՝ նորից է դիմել ՄՍԾ, սակայն 2023 թվականի օգոստոսի 18-ի գրությամբ հայտնել են, որ մասնագիտական ստաժը կազմում է 11 տարի 10 ամիս 18 օր:

Պաշտպանի՝ պարզաբանումներ ներկայացնելու գրությանն ի պատասխան՝ ստացվել է տեղեկատվություն, որ կատարված լրացուցիչ ուսումնասիրությունների արդյունքում, առաջնորդվելով Կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշման 1-ին հավելվածի 14.6-րդ կետով (կետը լրացվել է Կառավարության 19 հունվարի 2023 թվականի թիվ 78-Ն որոշմամբ, ուժի մեջ է մտել 21.01.2023 թվականին) և հիմք ընդունելով Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոն ներկայացված քաղաքացու դիմումը, վերջինիս 12 տարի 1 ամիս 19 օրվա մասնագիտական ստաժով նշանակվել է մասնակի կենսաթոշակ (մասնագիտական ստաժն օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառվել է մինչև 01.08.2003 թվական):

Անդրադառնալով օրենսդրական մակարդակում ձեռնարկված միջոցառումներին՝ Պաշտպանը ողջունելի է համարում 2023 թվականի հունվարի 19-ին ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-ն որոշման մեջ կատարված լրացումները և փոփոխությունները, որի արդյունքում 1992 թվականի հունվարի 1-ից մինչև 2004 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթ չի պահանջվում, եթե անձն աշխատել է (զբաղեցրել է պաշտոն) (...) ՀՀ կառավարության որոշմամբ մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտությունների ցանկում ընդգրկված կազմակերպություններում՝ անկախ այդ կազմակերպությունում զբաղեցրած պաշտոնից կամ կատարած աշխատանքից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը կարևորում է մասնակի կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց համար աշխատանքային ստաժի հավաստման մատչելի կառուցակարգերի մշակման և իրացման անհրաժեշտությունը:

1.3 Կենսաթոշակ նշանակելիս աշխատանքային ստաժի հաշվարկման հետ կապված խնդիր

Կենսաթոշակի իրավունքի իրացման կապակցությամբ շարունակում են արդիական մնալ աշխատանքային ստաժի հաշվարկման և աշխատանքային ստաժի հավաստման վերաբերյալ Պաշտպանի տարեկան հաղորդումներում արձանագրված խնդիրները50:

Պաշտպանին 2023 թվականի ընթացքում հասցեագրվել են բազմաթիվ բողոքներ՝ 1992 թվականից հետո աշխատանքային գրքույկում առկա գրառմամբ՝ աշխատած ժամանակահատվածը հավաստելու համար աշխատանքային գրքույկից բացի լրացուցիչ այլ փաստաթղթեր ներկայացնելու պահանջի իրավաչափության վերաբերյալ: Ընդ որում,

50 Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2020, 2021 թվականների տարեկան հաղորդումները (համապատասխանաբար՝ էջեր 104-110, 110-117):

կենսաթոշակային մարմնի կողմից նման պահանջի իրավաչափության հարցի քննարկումը պայմանավորված է ինչպես գործատուների կողմից սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթղթերը չպահպանելու կամ արխիվ չհանձնելու, այնպես էլ այն հանգամանքով, երբ կենսաթոշակ նշանակելիս դադարել են գործել (վերացված կամ լուծարված են լինում) այն կազմակերպությունները, որտեղ անձինք աշխատել են: Քաղաքացիների մտահոգությունը պայմանավորված է նրանով, որ կենսաթոշակ նշանակելիս աշխատանքային ստաժում չհաշվառվող ժամանակահատվածում նրանք աշխատել են, սակայն կենսաթոշակ նշանակելիս չեն կարողանում ներկայացնել օրենսդրությամբ սահմանված աշխատած ժամանակահատվածը հաստատող փաստաթղթեր: Վիճելի ժամանակահատվածում աշխատած լինելու փաստն ապացուցելու բեռն ամբողջությամբ կրում են կենսաթոշակառուները: Խնդիրն առավել հաճախ իր լուծումն է ստանում դատական ճանապարհով:

ՄԻՊ աշխատակազմ մուտքագրված բազմաթիվ բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ կենսաթոշակառուների համար անհասկանալի է 1992 թվականից հետո աշխատանքային գրքույկում առկա գրառմամբ աշխատանքային ստաժը չհաշվարկելու հանգամանքը: Նշվածը վկայում է նաև իրավասու մարմինների կողմից անձանց պատշաճ պարզաբանում չտրամադրելու, վարչական ակտ կայացնելիս պատշաճ հիմնավորումներ չներկայացնելու մասին, ինչն անձանց մոտ տպավորություն է ձևավորում կենսաթոշակի իրավունքից ոչ իրավաչափ զրկվելու հանգամանքի մասին:

Հաշվի առնելով Հայաստանում գործող օրենսդրական կարգավորումների վերաբերյալ հասարակության իրազեկվածության ցածր մակարդակը և կենսաթոշակային հարաբերություններին տարեցների մասնակցության հանգամանքը՝ Պաշտպանն ընդգծում է, որ իրավասու մարմինն առավել հետևողական պետք է լինի անձանց կենսաթոշակ նշանակելու, վճարելու և նմանատիպ այլ ընթացակարգերի շրջանակներում անձանց հետ պատշաճ հաղորդակցություն վարելու և խորհրդատվություն տրամադրելու հարցերում: Կենսաթոշակ նշանակելու համար դիմած անձանց պետք է հնարավորինս մանրամասն ներկայացվեն օրենսդրության առանձնահատկություններն ու կայացվող վարչական ակտի հիմքերն ու հետևանքները:

Տարեկան հաղորդման պատրաստման շրջանակներում խնդրի կարգավորման համար ձեռնարկված միջոցների վերաբերյալ ԱՍՀՆ-ի պարզաբանման համաձայն՝ Հայաստանում 1992 թվականից հետո աշխատած ժամանակահատվածն աշխատանքային ստաժում հաշվառելու առավել դյուրին մեխանիզմներ սահմանելու ուղղությամբ 2023 թվականին կատարվել է օրենսդրական փոփոխություն: Մասնավորապես, 2023 թվականի հունվարի 21-ին ուժի մեջ է մտել Կառավարության 2023 թվականի հունվարի 19-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 78-Ն որոշումը, որում, ի թիվս այլ փոփոխությունների, սահմանվել է, որ մինչև 1996 թվականի նոյեմբերի 10-ը աշխատած ժամանակահատվածի համար սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթ չի պահանջվում, եթե անձն աշխատել է մասնավորապես՝ քաղաքային, շրջանային, ավանային, գյուղական խորհուրդների գործադիր կոմիտեների ենթակա դպրոցներում, գրադարաններում, բնակշահագործման (բնակարանային շահագործման) գրասենյակներում (տեղամասերում, տնտեսություններում):

Պաշտպանը ողջունելի է համարում նման փոփոխությունների իրականացումը՝ ընդգծելով աշխատանքային ստաժի հաստատման կառուցակարգերն առավել մատչելի դարձնելու ուղղությամբ շարունակական աշխատանքների իրականացման կարևորությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Պաշտպանն ընդգծում է, որ անհրաժեշտ է՝

- ***մշակել և իրացնել կենսաթոշակառուի համար աշխատանքային ստաժի հաստատման մատչելի և պատշաճ կառուցակարգեր,***
- ***վարչարարություն իրականացնելիս և դրա արդյունքում վարչական ակտ ընդունելիս՝ խստորեն պահպանել օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ վարչական վարույթի մասնակիցներին իրենց իրավունքները և պարտականությունները պարզաբանելու և վարչական ակտը պատշաճ հիմնավորելու տեսանկյունից:***

1.4 Կենսաթոշակի վճարման շարունակականության ապահովման գործընթացի խնդիր

2023 թվականի ընթացքում շարունակել են արդիական մնալ կենսաթոշակի վճարման շարունակականությունն ապահովելու համար կենսաթոշակառուի համար նախատեսված որոշ պարտականությունների կատարմանը վերաբերելի խնդիրները:

ՄԻՊ աշխատակազմ մուտքագրված գրավոր և բանավոր բողոքների ուսումնասիրության արդյունքների հաշվառմամբ՝ սույն պարագրաֆի շրջանակներում կենսաթոշակի վճարման շարունակականության ոլորտում առկա խնդիրները վեր են հանվել երկու հարթություններում՝

1. կենսաթոշակառուները հենաշարժողական կամ անհնարինություն առաջացնող այլ խնդիրներ (օրինակ՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող, սակայն սահմանված կարգով անգործունակ չճանաչված) ունենալու պատճառով չեն կարողանում տարեկան առնվազն մեկ անգամ ներկայանալ բանկ,
2. 12 ամսից ավել ժամանակահատվածում ՀՀ-ում չգտնվող և ՀՀ վերադառնալու օբյեկտիվ խոչընդոտների առկայության պարագայում (հիմնականում առողջական խնդիրներ) կենսաթոշակառուները զրկված են իրենց չվճարված կենսաթոշակն ամբողջությամբ (*բացի դիմում ներկայացնելու ամսվան նախորդող 12 ամսից, ավելի վաղ ժամանակահատվածի համար*) ստանալու հնարավորությունից:

Անդրադառնալով առաջին խնդրին՝ հարկ է նշել, որ «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ կենսաթոշակն անկանխիկ եղանակով ստացող կենսաթոշակառուն *(անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում՝ կենսաթոշակառուի օրինական ներկայացուցիչը՝ ծնողը, որդեգրողը կամ խնամակալը)* կենսաթոշակի վճարումը շարունակելու համար պարտավոր է տարեկան առնվազն մեկ անգամ՝ վերջին անգամ բանկ ներկայանալու ամսվան հաջորդող տասներկուերորդ ամսվա վերջին աշխատանքային օրվանից ոչ ուշ, ներկայանալ բանկ և հայտարարություն ստորագրել ՀՀ-ում լինելու մասին:

ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի թիվ 284-Ն որոշմամբ սահմանվում է, որ շահառուի՝ ՀՀ-ում լինելը ***բանկի կողմից կարող է*** հաստատվել նաև առանց նրա

բանկ ներկայանալու, եթե շահառուի՝ ՀՀ-ում լինելը բանկը հաստատել է՝ բանկի աշխատակցի՝ ՀՀ-ում շահառուի գտնվելու վայր այցելությամբ կամ իր ներքին ընթացակարգերին համապատասխան՝ տեղեկատվատեխնիկական միջոցների կիրառմամբ (հաստատելով շահառուի՝ ՀՀ-ում լինելը):

Ասվածից բխում է, որ շահառուի կողմից բանկ չներկայանալու դեպքում բանկի աշխատակցի կողմից տնային այցելության իրականացումը, ինչպես նաև տեղեկատվատեխնիկական միջոցների կիրառմամբ շահառուի՝ ՀՀ-ում լինելու փաստը հաստատելը բանկի հայեցողության շրջանակներում է:

ՄԻՊ աշխատակազմ մուտքագրված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ նշյալ կարգավորումների պարագայում էլ շարունակում են արդիական մնալ բանկ ներկայանալու հետ կապված խնդիրները (օրինակ՝ հենաշարժողական կամ հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ), քանի որ բանկի կողմից ոչ միշտ է ապահովվում տնային այցելության կամ տեղեկատվատեխնիկական միջոցներով շահառուի՝ ՀՀ-ում լինելու փաստը հավաստելը (օրինակ՝ կենսաթոշակառուին պատկանող բջջային հեռախոսը չունի նման հնարավորություն):

Նկատի ունենալով ընթացիկ տարում ստացված բողոքների աճը՝ Պաշտպանի 2023 թվականի տարեկան հաղորդման նախապատրաստման նպատակով ներկայացված համապատասխան հարցադրմանն ի պատասխան՝ ԱՍՀՆ-ն պարզաբանել է, որ ՀՀ-ում լինելը հավաստելու վերաբերյալ հայտարարություն ստորագրելու օրենսդրական պահանջի կատարումը կենսաթոշակառուի համար հեշտացնելու նպատակով «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում կատարված փոփոխությամբ (2022 թվականի մայիսի 4-ի ՀՕ-113-Ն օրենք) սահմանվել է, որ կենսաթոշակառուի՝ ՀՀ-ում լինելը կարող է հաստատվել կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման կողմից՝ ***անձամբ կենսաթոշակառուի ներկայացրած՝ կենսաթոշակին առնչվող ցանկացած գրավոր դիմումի հիման վրա***:

ԱՍՀՆ-ի տրամադրած տեղեկատվությամբ նշվել է՝ «Անկանխիկ եղանակով կենսաթոշակների վճարման վերաբերյալ բողոքների թվի և դրանց ընթացք տալու վերաբերյալ առանձին հաշվառում չի իրականացվել: Հեռախոսազանգերով հիմնականում բարձրացվել է բանկ ներկայանալու դժվարության խնդիրը: Կենսաթոշակի վճարման դադարեցման հարցի վերաբերյալ 2024 թվականի դրությամբ բանկ չներկայանալու հիմքով կենսաթոշակի, ծերության նպաստի, հաշմանդամության նպաստի, կերակրողին կորցնելու դեպքում նպաստի, պարգևավճարի վճարումը դադարեցված է թվով 11033 գործում (շուրջ 600.000 գործից): ***Բարձրացված հարցն աշխատանքային կարգով քննարկվել է նաև բանկերի միության նախաձեռնությամբ կազմակերպված՝ կենսաթոշակների վճարման ծառայություններ մատուցող բանկերի ներկայացուցիչների մասնակցությամբ կայացած խորհրդակցության ընթացքում***: Ըստ բանկերի՝ վերջիններս հիմնականում ընդառաջում են շահառուներին և տունայցի միջոցով կարգավորում են խնդիրները»:

Ըստ ԱՍՀՆ-ի՝ կենսաթոշակների վճարման գործընթացի կազմակերպման ընթացքում, սոցիալական ապահովության մարմինների կողմից տնային այցելություն կատարելու միջոցով դիմումներ ընդունելու դրույթ օրենսդրությամբ նախատեսված չէ: Սակայն, կենսաթոշակի վճարման եղանակը փոխելու համար անձանցից, որոնք տեղաշարժման դժվարություններ ունենալու պատճառով հնարավորություն չունեն անձամբ դիմում ներկայացնել, անհրաժեշտության դեպքում, ստացված բանավոր հաղորդումների

հիման վրա տնային այցելության միջոցով դիմումը ընդունվում է ՄՍԾ աշխատակիցների կողմից:

Ասվածից ստացվում է, որ իրականացված օրենսդրական փոփոխությունների արդյունքում կրկին շահառուն պետք է ներկայանա կենսաթոշակ նշանակող մարմին:

Պաշտպանը կարևորում է իրավասու պետական մարմնի հետ համագործակցության արդյունքում նշված խնդիրների լուծման ուղղությամբ տարվող աշխատանքները: Ողջունելի է նաև խնդրի կարգավորման հարցում Նախարարության կողմից ձեռնարկված միջոցառումների իրականացումը և՛ օրենսդրական բարեփոխումների, և՛ իրավասու մարմինների հետ քննարկումների համատեքստում:

Հարկ է նկատել, որ թեև ԱՍՀՆ-ն ձեռնարկել է առանձին միջոցներ խնդիրը հաղթահարելու ուղղությամբ, այնուամենայնիվ, դրանք բավարար չեն եղել խնդրի համակարգային կարգավորման տեսանկյունից, մասնավորապես՝ ***փոփոխությունների արդյունքում տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց կողմից օրացուցային տարվա ընթացքում բանկ կամ կենսաթոշակ նշանակող մարմին այցելելու անհնարինության արդյունքում ի հայտ եկող խնդիրը շարունակում է արդիական մնալ:***

ՄԻՊ-ը հարկ է համարում նշել, որ տարեցների և խոցելի անձանց իրավունքների երաշխավորման հարցում պետության պոզիտիվ պարտավորությունը ձեռք է բերում հատուկ նշանակություն՝ պայմանավորված իրենց առանձնահատուկ կարիքներով: Պաշտպանն ընդգծում է, որ կենսաթոշակների վճարման շարունակականության ապահովման համար կենսաթոշակառուի՝ ՀՀ-ում լինելը հավաստելու համար բանկ կամ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում ներկայանալու պարտականությունը սահմանելիս՝ անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ մի շարք անձինք օբյեկտիվորեն զրկված են նշված պարտականությունը կատարելու իրական հնարավորությունից: Ուստի այս առումով կարևորվում է հատուկ կարիքներ ունեցող անձանց համար իրենց կարիքներին համապատասխան ընթացակարգերի արդյունավետ կիրառումը:

Համակարգային առումով շարունակում են չլուծված մնալ նաև ՀՀ տարածքից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիների կենսաթոշակի վճարումը շարունակելու համար տարեկան առնվազն մեկ անգամ բանկ ներկայանալու պարտավորության կատարման և չվճարված կենսաթոշակն ամբողջությամբ վճարելուն վերաբերելի հարցերը:

ՄԻԵԴ-ի և ՍԴ-ի իրավական դիրքորոշումների համաձայն՝[51] կենսաթոշակի նշանակման պահից կենսաթոշակառուին տրամադրման ենթակա գումարները հանդիսանում են նրա սեփականությունը, հետևաբար, վերջինս ունի այդ գումարներն իր հայեցողությամբ օգտագործելու, տիրապետելու և տնօրինելու իրավունք:

Տարեկան առնվազն մեկ անգամ բանկ չներկայանալու փաստը չի կարող վկայել այն մասին, որ կենսաթոշակառուն սեփականության իրավունքով իրեն պատկանող դրամական միջոցներից հրաժարվելուն ուղղված որևէ գործողություն է կատարել52:

Այս կապակցությամբ ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը, որպես այդպիսին, (...) չի բացառում այն, որ կենսաթոշակի վճարման դադարեցման դեպքում

51 Տե՛ս օրինակ՝ «ՄԻԵԿ-ի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի վերաբերյալ» ուղեցույցը, ՍԴ-ի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ ՍԴՈ-723 որոշումը:

52 Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2020 թվականի տարեկան հաղորդումը (էջ՝ 97-100):

կարող է լինել միջամտություն սեփականության իրավունքին, ինչը պահանջում է ողջամիտ պատճառաբանություն[53]:

Վերահաստատելով նախկինում արտահայտած դիրքորոշումը՝ Պաշտպանն ընդգծում է, որ անհրաժեշտ է հիմք ընդունել այն, որ կենսաթոշակի վճարումը գործնականում սեփականությունը սեփականատիրոջը ***փոխանցելու միջոց է***[54], ուստի, կենսաթոշակի վճարման շարունակականության ապահովման համար սահմանված պարտավորությունը չկատարելն անձին չի կարող զրկել չվճարված կենսաթոշակն ամբողջությամբ ստանալու իրավական հնարավորությունից:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պաշտպանն ընդգծում է, որ անհրաժեշտ է միջոցառումներ ձեռնարկել՝ տեղաշարժման դժվարություններ ունեցող կենսաթոշակառուի՝ ՀՀ-ում լինելը հավաստելու վերաբերյալ հայտարարություն ստորագրելու օրենսդրական պահանջի կատարման առավել դյուրին կառուցակարգեր օրենսդրորեն մշակելու և իրացնելու ուղղությամբ:

Պաշտպանը խիստ կարևորում է նաև այնպիսի կառուցակարգերի մշակումն ու իրացումը, որոնք ՀՀ-ում չլինելու ամբողջ ժամանակահատվածի համար կենսաթոշակառուին չվճարված կենսաթոշակն ամբողջությամբ վճարելու իրավական հնարավորություն կտան:

1.5 Սխալմամբ ավել վճարված կենսաթոշակի՝ պետական բյուջե վերադարձնելու պահանջը կենսաթոշակառուին ներկայացնելու խնդիր

2023 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի անմիջական ուշադրության ներքո են եղել սխալմամբ ավել վճարված կենսաթոշակի գումարները ՀՀ պետական բյուջե վերականգնելուն վերաբերելի հարցերը:

«Պետական կենսաթոշակների մասին» օրենքով սահմանվում է, որ սխալմամբ (ՀՀ օրենքի խախտմամբ) ավել վճարված կենսաթոշակի գումարները կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման հետ փոխհամաձայնեցված ժամանակացույցի հիման վրա կարող են ՀՀ պետական բյուջե վերականգնվել նաև՝

1. կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման այն աշխատակցի կողմից, որի մեղքով (գործողությունների կամ անգործության արդյունքում) վճարվել են ավել վճարված կենսաթոշակի գումարները,

2. կենսաթոշակառուի, նրա օրինական ներկայացուցչի, նրանց փոխարեն կենսաթոշակն ստանալու՝ օրենքով այդ իրավունքն ունեցող անձի կամ այլ անձի կողմից:

Նշվածի առնչությամբ՝ կենսաթոշակառուն Պաշտպանին հասցեագրված բողոքով հայտնել է, որ միայնակ կենսաթոշակառու է, ընդգրկված է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում, ստանում է սոցիալական նպաստ: Վերջինս հայտնել է նաև, որ կենսաթոշակ նշանակելիս 01.01.1992-01.03.1996 թվականներին աշխատած ժամանակահատվածը չի հաշվառվել աշխատանքային ստաժում: ԱՍՀՆ-ի կողմից վերանայվել է 2020 թվականից նշանակված և վճարվող

53 Տե՛ս Վալկովն ու ուրիշները ընդդեմ Բուլղարիայի գործով ՄԻԵԴ-ի 2011 թվականի հոկտեմբերի 25-ի որոշումը, գանգատ թիվ՝ 2033/04, 19125/04, 19475/04, 19490/04, 19495/ 04, 19497/04, 24729/04, 171/05 և 2041/05, կետ՝ 84: Գրուդիչն ընդդեմ Սերբիայի գործով ՄԻԵԴ-ի 2012 թվականի ապրիլի 7ի թրթռումը, գանգատ թիվ՝ 31925/08, կետ՝ 72:

54 Տե՛ս ՍԴ-ի 2006 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ ՍԴՈ-649 որոշումը:

տարիքային աշխատանքային կենսաթոշակը, որի արդյունքում ընդհանուր աշխատանքային ստաժից նվազեցվել է 01.04.1990-09.09.1991 թվականներին աշխատած ժամանակահատվածը: Կենսաթոշակառուն հավելել է, որ նվազեցման արդյունքում ընդհանուր աշխատանքային ստաժը 35 տարվա աշխատանքային ստաժից դարձել է 33 տարի 4 ամիս 21 օր: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ վերջինս ԱՍՀՆ-ից տեղեկացվել է, որ մինչև 2020 թվականի հունիսի 11-ը՝ կենսաթոշակի իրավունքը ձեռք բերելու օրվա դրությամբ ավել վճարված 295.294 ՀՀ դրամը ենթակա է վերադարձման:

Նմանատիպ մեկ այլ բողոքով քաղաքացին հայտնել է, որ իրեն կենսաթոշակ նշանակվել է 2020 թվականին, սակայն ՄՍԾ-ի կողմից 2022 թվականի դեկտեմբերի 5-ին քաղաքացու աշխատած ընկերություններից մեկում իրականացված ստուգումների արդյունքում իր աշխատանքային ստաժից նվազեցվել են 01.11.2000-20.11.2005 թվականների աշխատած տարիները՝ աշխատանքային ստաժը հաստատող փաստաթղթերի բացակայության պատճառով: Ըստ այդմ, ՄՍԾ-ն պահանջել է վերադարձնել ավել վճարված 109 809 ՀՀ դրամ կենսաթոշակի գումարը:

Ըստ բողոք ներկայացրած անձի՝ վերջինս դիմել է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, որի՝ 2023 թվականի հունիսի 22-ի վճռով իր դիմումը՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման պահանջի մասին, բավարարվել է, հաստատվել է իրավաբանական նշանակություն ունեցող փաստն այն մասին, որ անձը 2000 թվականից մինչև 31.07.2006 թվականն աշխատել է ընկերությունում: Նշված դատական ակտը ՄՍԾ ներկայացնելուց հետո քաղաքացուց կրկին պահանջվել է վերադարձնել ավել վճարված 109 809 ՀՀ դրամ կենսաթոշակի գումարը:

Բարձրացված բողոքների կապակցությամբ Պաշտպանի կողմից հասցեագրված գրություններին ի պատասխան՝ ԱՍՀՆ-ն տեղեկացրել է, որ ղեկավարվելով «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասով և հաշվի առնելով քաղաքացիների գործով առկա դիմումներն ու փաստաթղթերը՝ հաշվարկված ավել վճարված կենսաթոշակի գումարները դիմողներից ենթակա չեն բռնագանձման:

Բարձրացված խնդրի առնչությամբ ՄԻՊ-ը հարկ է համարում նշել, որ վարչական մարմինը կենսաթոշակի նշանակման վերաբերյալ վարչական ակտ կայացնելիս պարտավոր է ապահովել գործի բոլոր փաստական հանգամանքների քննարկումը՝ ձեռնարկելով համապատասխան միջոցառումներ աշխատանքային գրքույկում առկա գրառումների հավաստիության ստուգման նպատակով, որոնք անհրաժեշտ երաշխիք են գործով իրավաչափ որոշում կայացնելու համար: Ավելին, սխալմամբ ավել վճարված կենսաթոշակի դեպք բացահայտելիս՝ սեփական նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելու դեպքում սահմանված հայեցողական լիազորությունն իրացնելիս վարչական մարմինը պետք է ապահովի գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները: Միևնույն ժամանակ, վարչական վարույթի ընթացքում պետք է քննարկման առարկա դառնան այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են կենսաթոշակառուի միայնակ լինելը, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված լինելը, կենսաթոշակի գումարի՝ ամսական միակ եկամուտը լինելը և այլն:

Այս համատեքստում Պաշտպանը կարևորում է իրավասու մարմինների հետ համագործակցությունը, ինչի արդյունքում հնարավոր է լինում վեր հանել գործի ելքի վրա ազդող մի շարք հանգամանքներ և առանձին խնդիրներով հասնել դրական լուծումների:

Ելնելով վերոգրյալից՝ Պաշտպանն ընդգծում է, որ սխալմամբ ավել վճարված կենսաթոշակի գումարները ՀՀ պետական բյուջե վերադարձնելու պահանջ ներկայացնելու հայեցողական լիազորությունն իրացնելիս էական նշանակություն ունի գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը ու գործի ելքի վրա ազդող բոլոր հանգամանքների հաշվառումը:

2. Սոցիալական աջակցության իրավունքների ապահովումը

2.1 Աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման կամ մասնագիտական հիվանդության կամ աշխատանքային պարտականությունների կատարման ընթացքում մահանալու դեպքում՝ վնասի փոխհատուցում ստանալու իրավունքի իրացման խնդիր

2023 թվականի ընթացքում դրական տեղաշարժ է արձանագրվել՝ աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման կամ մասնագիտական հիվանդության կամ աշխատանքային պարտականությունների կատարման ընթացքում մահանալու դեպքում՝ վնասի փոխհատուցում ստանալու խնդրին օրենսդրական լուծումներ տալու ուղղությամբ:

Այսպես, 2023 թվականին ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 23-ի «Կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար՝ սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման կամ սնանկ ճանաչման դեպքում համապատասխան վճարների կապիտալացման և դրանք տուժողին վճարելու կարգը հաստատելու մասին» թիվ 914-Ն որոշման մեջ կատարված փոփոխությունների[55] արդյունքում սահմանվեց պատճառված վնասի փոխհատուցման համար պատասխանատու իրավաբանական անձի լուծարման դեպքում կապիտալացված միջոցների բացակայության կամ անբավարար լինելու պարագայում՝ աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման կամ մասնագիտական հիվանդության կամ աշխատանքային պարտականությունների կատարման ընթացքում մահանալու դեպքում՝ վնասի փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող անձին վնասի փոխհատուցումը ՀՀ պետական բյուջեի միջոցներից տրամադրելու կարգը:

Պաշտպանը ողջունելի է համարում իրավակարգավորումների նշված փոփոխությունները: Այնուամենայնիվ, 2023 թվականին Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ նախատեսված իրավակարգավորումների առկայության պայմաններում էլ խնդրին ամբողջական լուծում չի տրվել:

Այսպես, ՄԻՊ-ին ներկայացված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ իր ամուսինը հանդիսացել է «Հայկական ավիաուղիներ» ՓԲԸ-ի աշխատակից: Վերջինս 2001

55 Այդ փոփոխությունները պայմանավորված են ՍԴ-ի 2021 թվականի նոյեմբերի 30-ի թիվ ՍԴՈ-1618 որոշմամբ: Ըստ այդմ, ՀՀ կառավարության 1992 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 579 որոշմամբ ամրագրված իրավակարգավորումները ճանաչվել են Սահմանադրությանը համապատասխանող այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ մինչև ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 22-ի թիվ 1094-Ն որոշմամբ կատարված փոփոխությունն ուժի մեջ մտնելն աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնաս կրած անձինք կազմակերպության գործունեության դադարեցման դեպքում կապիտալացված միջոցների բացակայության կամ անբավարար լինելու պարագայում պահպանում են պետական բյուջեի հաշվին փոխհատուցում ստանալու իրավունքը:

թվականին տեղի ունեցած օդանավի վթարի արդյունքում մահացել է: Այդ պահին ընտանիքում եղել է չորս անչափահաս երեխա: Նշել է նաև, որ ամուսնու մահից հետո՝ մինչև 2008 թվականը, ընկերությունն ընտանիքին վճարել է վնասի հատուցում: Դիմումատուն հավելել է, որ ՀՀ տնտեսական դատարանի 2004 թվականին կայացված վճռով ընկերությունը ճանաչվել է սնանկ, ինչպես նաև հաստատվել է ընկերության պարտատերերի վերջնական ցուցակը, որի համաձայն՝ իր ընտանիքը համարվել է պարտքերի մարման առաջին հերթի անդամ:

Բողոք ներկայացրած անձն իր մտահոգությունն է հայտնել այն մասին, որ վնասի փոխհատուցման համար պատասխանատու իրավաբանական անձի կողմից վնասի հատուցման գումարի վճարումը դադարեցնելու պատճառով 2008 թվականից իր ընտանիքը զրկված է վնասի փոխհատուցում ստանալու իրավունքից: Բողոք ներկայացրած անձը հայտնել է նաև, որ աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի փոխհատուցում նշանակելու նպատակով 2023 թվականին դիմել է ՄՄԾ տարածքային կենտրոն, սակայն դիմումը մերժվել է: ՄՄԾ-ի կողմից պարզաբանվել է, որ ***պետական բյուջեի միջոցների հաշվին վնասի փոխհատուցում ստանալու իրավունքը ծագում է կազմակերպության պետական ռեգիստրում լուծարումը գրանցելու պահից:*** Ուստի, հաշվի անելով, որ «Հայկական ավիաուղիներ» ՓԲԸ-ի լուծարման վերաբերյալ գրանցումը պետական միասնական գրանցամատյանում կատարվել է 2021 թվականին, ապա վնասի փոխհատուցում ստանալու իրավունքը դիտարկվում է տվյալ օրվա դրությամբ:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ բողոք ներկայացրած անձին տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ 2021 թվականի դրությամբ երեխաների տարիքը 18 տարեկանից բարձր է եղել, ինչպես նաև մինչև 23 տարեկանը ցերեկային ուսուցմամբ ուսումնական հաստատությունում երեխաներից որևէ մեկը չի սովորում56:

Բարձրացված հարցի կապակցությամբ համապատասխան պարզաբանումներ ստանալու նպատակով Պաշտպանը գրություն է հասցեագրել ԱՍՀՆ: Ստացված պարզաբանումների համաձայն՝ աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման կամ մասնագիտական հիվանդության կամ աշխատանքային պարտականությունների կատարման ընթացքում մահանալու դեպքում վնասի փոխհատուցման իրավունք ունեցող անձանց՝ պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցում վճարվում է, եթե պետական ռեգիստրում կազմակերպության լուծարումը գրանցելու պահին նրանք ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 23-ի թիվ 914-Ն որոշման հավելվածում լրացված IV-րդ գլխի իրավակարգավորումների համաձայն՝ հանդիսանում են վնասի փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող:

Ելնելով բողոք ներկայացրած անձի խնդրի առանձնահատկությունից և հաշվի առնելով ՍԴ-ի 2021 թվականի նոյեմբերի 30-ի թիվ ՍԴՈ-1618 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Պաշտպանը ԱՍՀՆ-ին հասցեագրված գրությամբ

56 Ըստ ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 23-ի թիվ 914-Ն որոշման 4-րդ գլխի 33-րդ կետի 1-ին ենթակետի՝ վնասի փոխհատուցում ստանալու իրավունք ունեն նաև մինչև Կառավարության 2004 թվականի հուլիսի 22-ի N 1094-Ն որոշումն ուժի մեջ մտնելն աշխատանքային պարտականությունների կատարման ընթացքում մահացած անձի խնամքի ներքո գտնվող կամ նրա մահվան օրը նրանից խնամք ստանալու իրավունք ունեցող անաշխատունակ անձինք, եթե կազմակերպության լուծարման արդյունքում կապիտալացված միջոցների բացակայության կամ անբավարար լինելու պատճառով չեն ստացել (կամ ստանում) կամ մասնակի են ստացել կրած վնասի փոխհատուցումը: Ըստ նույն գլխի 34-րդ կետի՝ 33-րդ կետում նշված դեպքերում վնասի փոխհատուցումը վճարվում է՝ 1) անչափահասներին՝ մինչև տասնութ տարեկան դառնալը, 2) տասնութ տարեկանից բարձր տարիքի սովորողներին՝ մինչև ցերեկային ուսուցման ձևով ուսումնական հաստատություններում ուսման ավարտը, սակայն ոչ ավելի, քան մինչև քսաներեք տարեկան դառնալը (...):

առաջարկել է քննարկել ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 23-ի թիվ 914-Ն որոշման մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու հնարավորության հարցը:

Նշված հարցի կապակցությամբ տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ հիշյալ որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

Անդրադառնալով անհատական բողոքում մատնանշված հանգամանքներին՝ անհրաժեշտ է արձանագրել, որ կազմակերպության լուծարման վերաբերյալ գրանցումը պետական միասնական գրանցամատյանում կատարվել է ***2021 թվականին***: Մինչդեռ, կազմակերպությունը 2004 թվականին փաստացի դադարեցրել է իր գործունեությունը, նույն թվականին ՍԴ-ի վճռով ճանաչվել է սնանկ, իսկ ***2008 թվականից*** ամբողջությամբ դադարեցրել է փոխհատուցման գումարի վճարումը:

Այսպիսով, ստացվում է, որ փոխհատուցման գումարի վճարման դադարեցման պահից մինչև կազմակերպության պետական ռեգիստրում լուծարումը գրանցելու պահը (շուրջ 13 տարի)՝ համապատասխան իրավակարգավորումների բացակայության պատճառով, բողոք ներկայացրած անձի ընտանիքը փաստացի զրկված է եղել փոխհատուցում ստանալու իրավունքից:

Հատկանշական է, որ այդ ընթացքում բողոք ներկայացրած անձի ընտանիքում եղել է չորս անչափահաս երեխա: Երեխաները տասնութ տարեկան դարձել են 2011, 2012, 2014 և 2017 թվականներին: ***Այսինքն, կազմակերպության կողմից փոխհատուցման վճարումը դադարեցնելու պահից մինչև երեխաների տասնութ տարին լրանալը վերջիններս փոխհատուցում ստանալու օրինական ակնկալիք են ունեցել:***

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Պաշտպանն ընդգծում է, որ նույնիսկ այն պարագայում, երբ մինչև կազմակերպության լուծարման պետական գրանցումը լրացել է աշխատանքային պարտականությունների կատարման ընթացքում մահացած անձի խնամքի տակ գտնված անձանց 18 տարին, վերջիններս պետք է ունենան փոխհատուցման գումարի չվճարված մասը ստանալու իրավունք, ինչի ապահովման պարտականությունը կրում է պետությունը: Բացի այդ, անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել փոխհատուցման գումարի չափը այն պահից հաշվարկելու հարցը, երբ կազմակերպությունը փաստացի դադարել է վճարել վնասի հատուցման գումարը՝ մինչև անձանց տասնութ տարին լրանալը:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է մշակել և իրացնել պատշաճ և բավարար կառուցակարգեր, որոնք հնարավորություն կտան ապահովելու աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման կամ մասնագիտական հիվանդության կամ աշխատանքային պարտականությունների կատարման ընթացքում մահանալու դեպքում փոխհատուցման իրավունքի իրացումն այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը զրկված է եղել այդ հնարավորությունից համապատասխան կառուցակարգերի բացակայության պատճառով:

2.2 Ընտանիքների անապահովության գնահատման գործընթացի օրենսդրական և գործնական խնդիր

2023 թվականի ընթացքում ՄԻՊ աշխատակազմ մուտքագրվել են բողոքներ, որոնցում բարձրացված խնդիրները վերաբերել են ընտանիքների անապահովության

գնահատման համակարգում գործող ոչ պատշաճ վարչարարությանը, ընտանիքի անապահովության միավորի հաշվարկման բանաձևի կիրառման թերություններին, անապահովության գնահատման միավորի վրա մարդկային գործոնի՝ ՄՍԾ տարածքային կենտրոնների աշխատակիցների ունեցած մեծ ազդեցությանը և այլն:

Ստացված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ համակարգային առումով շարունակում են խնդրահարույց և արդիական մնալ այն դեպքերը, երբ անհրաժեշտ է լինում ընտանիքի՝ բնակության հասցեում հաշվառված, բայց այդ վայրում փաստացի չբնակվող և ըստ էլեկտրոնային համակարգի՝ «բացակա» համարվող անդամի ՀՀ-ից դուրս բնակվելու փաստը հաստատելու համար ներկայացնել վերջինիս օտարերկրյա պետությունում բնակվելու և հաշվառված լինելու վերաբերյալ տեղեկանք: ՄԻՊ-ին հասցեագրված բողոքներից կարելի է եզրահանգել, որ նման փաստաթղթի ձեռքբերումը դժվարություն է ներկայացնում ՀՀ քաղաքացիների համար (օրինակ՝ պաշտոնական փաստաթղթերը ապոստիլով վավերացնելու համար ֆինանսական բեռ է դրվում անձանց վրա):

ՀՀ-ում նպաստի իրավունքի իրացման համար դիմողի կողմից ընտանիքի գտնվելու վայրում հաշվառված, բայց այդ վայրում փաստացի չբնակվող անձին՝ որպես «հարգելի բացակա» գրառում կատարելու համար հիմք չեն ընդունվում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրված տեղեկանքները, այլ պահանջվում են հավելյալ հավաստումներ օտարերկրյա պետության իրավասու մարմիններից, ինչը, Պաշտպանի գնահատմամբ, լրացուցիչ խնդիրներ է առաջացնում անձանց համար:

Այս առնչությամբ ԱՍՀՆ-ից տեղեկացրել են, որ լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնելու պահանջը վերանայելու հարցը 2023 թվականի ընթացքում քննարկման առարկա չի դարձել, սակայն այն նախատեսվում է քննարկել 2024 թվականին գործարկող անապահովության գնահատման նոր համակարգի ներդրման համատեքստում:

Ասվածի առնչությամբ հարկ է նշել, որ 2023 թվականի ընթացքում ԱՍՀՆ-ի կողմից ձեռնարկվել են համապատասխան օրենսդրական և ինստիտուցիոնալ փոփոխություններ՝ ուղղված ընտանիքների անապահովության գնահատման համակարգի կատարելագործմանը:

Մասնավորապես, 2023 թվականին շրջանառության մեջ է դրվել «Ընտանիքի անապահովության գնահատման համակարգի հայեցակարգը և ընտանիքի անապահովության գնահատման համակարգի հայեցակարգից բխող՝ ՀՀ պետական կառավարման համակարգի մարմինների, ինչպես նաև կազմակերպությունների կողմից ԱՍՀՆ-ին փոխանցվող (առկայության դեպքում՝ փոխգործելիության հարթակի միջոցով) թվային տվյալների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը57:

Պաշտպանը կարևորում և ողջունելի է համարում ընտանիքների անապահովության գնահատման համակարգի կատարելագործմանն ուղղված պետության քայլերը:Բողոքների ուսումնասիրությամբ արձանագրվել է նաև ընտանիքին ***բարեկեցիկ*** ճանաչելու հիմքով նպաստի իրավունքը դադարեցնելու խնդիր:

Օրինակ՝ անձը, դիմելով ՄԻՊ-ին, տեղեկացրել է, որ ընտանիքը բաղկացած է 10 անձից, որից 5-ը անչափահաս են: Ընտանիքը սոցիալապես անապահով է, ընդգրկված է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում և ստանում է ընտանեկան նպաստ: Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ վերջինիս ընտանեկան նպաստ

57 Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.e-draft.am/projects/5830/about, 2024 թվականի մարտի 28-ի դրությամբ:

ստանալու իրավունքը դադարեցվել է՝ ընտանիքի՝ բարեկեցիկ ճանաչվելու հիմքով: Դիմողի հավաստմամբ՝ իր ընտանիքին բարեկեցիկ ճանաչելու տարածքային կենտրոնի եզրակացությունն ու նպաստի իրավունքի դադարեցումն անհիմն են, քանի որ ընտանիքի սոցիալ-տնտեսական պայմաններում փոփոխություններ տեղի չեն ունեցել:

Բողոքի քննարկման շրջանակում ԱՍՀՆ-ին հասցեագրված գրությանն ի պատասխան՝ վերջինս տեղեկացրել է, որ ՄՄԾ տարածքային կենտրոնի համապատասխան աշխատակիցը, ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի թիվ 145-Ն (այսուհետ՝ Որոշում) որոշմամբ սահմանված կարգով կատարել է տնային այցելություն, ուսումնասիրել ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակը և կատարել նույն Որոշմամբ սահմանված՝ ընտանիքին բարեկեցիկ ճանաչելու մասին առաջարկություն: Հաշվի առնելով բողոք ներկայացրած անձի առարկությունը՝ ՄՄԾ տարածքային կենտրոնի աշխատակիցների կողմից կատարվել է կրկնակի տնային այցելություն, որի արդյունքում ընտանիքը ճանաչվել է բարեկեցիկ և զրկվել ընտանեկան նպաստ ստանալու իրավունքից: Ըստ ստացված պարզաբանման՝ ՄՄԾ տարածքային կենտրոնի աշխատակիցը գործել է Որոշմամբ սահմանված լիազորությունների և պարտականությունների շրջանակում:

Նույն գրությամբ ԱՍՀՆ-ն տեղեկացրել է նաև, որ ընտանիքին բարեկեցիկ ճանաչելու ուղենիշային հստակ չափանիշների խնդիրը նախատեսվում է լուծել 2024 թվականի մարտի 1-ից ներդրվող՝ անապահովության գնահատման նոր համակարգի շրջանակներում, որի դեպքում տնային այցելությունների ժամանակ ընտանիքի կեցության պայմանների ուսումնասիրությունն իրականացվելու է թվայնացված գործիքի միջոցով:

Այս համատեքստում Պաշտպանը կարևորում է ընտանիքի անապահովության գործընթացում անկախ հասարակական կազմակերպությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների ներգրավվածության ապահովումը՝ ընդգծելով, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքով ընտանիքին բարեկեցիկ ճանաչելու հարցը անհրաժեշտ է որոշել որոշակի չափանիշների հիման վրա:

Նկատի ունենալով բարձրացված խնդիրների արդիականությունը՝ Պաշտպանը տարեկան հաղորդման պատրաստման աշխատանքների կապակցությամբ ԱՍՀՆ-ին ուղղված հարցմանն ի պատասխան՝ տեղեկացվել է, որ ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի ««Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 145-Ն որոշման 3-րդ հավելվածի 47-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ ՄՄԾ տարածքային կենտրոնի կողմից դիմումն ընդունվելուց հետո դիմողի բնակության վայրը սպասարկող աշխատողը 15 աշխատանքային օրվա ընթացքում կատարում է տնային այցելություն՝ ուսումնասիրելու համար դիմողի ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակը, կազմում է արձանագրություն, եզրակացություն և ներկայացնում է առաջարկություն՝ ընտանիքին բարեկեցիկ ճանաչելու մասին: Նշվել է նաև, որ 2023 թվականի ընթացքում շարունակվել են անապահովության գնահատման համակարգի հասցեականության մասով զարգացումները, այդ թվում՝ սոցիալական դեպքի վարման շրջանակներում ընտանիքների սոցիալական կարիքների գնահատման համապատասխան սոցիալական ծառայությունների տրամադրման աշխատանքները:

Տեղեկատվության համաձայն՝ «Սոցիալական աջակցություն տրամադրող մարմինների աշխատակիցների շրջանում իրականացվել են վերապատրաստումներ՝ ուղղված աշխատակիցների մասնագիտական և գործնական հմտությունների կատարելագործմանը (այդ թվում՝ մասնագիտական էթիկայի, վարքագծային կանոնների,

բարեվարքության և հարակից այլ թեմաներով): Սոցիալական աջակցության քաղաքականությունը հիմնվելու է սոցիալական կարիքի գնահատման և դրան համաչափ սոցիալական ծառայություններ տրամադրելու սկզբունքի վրա՝ խրախուսելով անձի սոցիալ-տնտեսական ակտիվացումը»:

Պաշտպանը կարևորում է ԱՍՀՆ-ի կողմից բարձրացված խնդիրների հաղթահարմանն ուղղված քայլերը՝ կարևորելով իրավունքահեն կառուցակարգերի միջոցով սոցիալական ապահովության իրավունքի երաշխավորումը:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***մշակել հստակ չափանիշներ ընտանիքի անապահովության գնահատման, ներառյալ՝ ընտանիքին բարեկեցիկ ճանաչելու գործընթացը պատշաճ իրականացնելու համար,***
- ✓ ***ձեռնարկել համապատասխան քայլեր՝ նոր համակարգը նաև այն ընտանիքների համար կիրառելու ուղղությամբ, որոնք նախկինում չեն օգտվել թափանցիկ և ճկուն համակարգի միջոցով իրենց անապահովության գնահատման հնարավորությունից կամ զրկվել են նպաստի իրավունքից տնային այցելությամբ բարեկեցիկ ճանաչվելու հիմքով:***

2.3. ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված դրամական ավանդի փոխհատուցման խնդիր

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ՝ 2023 թվականի ընթացքում արդիական են եղել ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված դրամական ավանդների փոխհատուցման հասցեականության վերաբերյալ խնդիրները:

Մասնավորապես, ՄԻՊ-ին շարունակել են հասցեագրվել բողոքներ ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված դրամական ավանդների փոխհատուցման իրավունք ունեցող անձանց վճարման ցուցակներում ուշ ընդգրկվելու, մինչև վճարման ցուցակներում ընդգրկվելը փոխհատուցման իրավունք ունեցող անձանց մահվան, ինչպես նաև փոխհատուցում ստանալու նպատակով հաշվառման համար ներկայացվող փաստաթղթերից՝ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի կողմից տրվող տեղեկանքի ժամկետների ուշացման վերաբերյալ:

Պաշտպանն իր գործունեության նախորդ հաղորդումներում արձանագրել է, որ նախատեսված չեն ավանդների փոխհատուցման հստակ միջանկյալ և վերջնական ժամկետներ: Ուստի ավանդի փոխհատուցումը պետք է իրականացվի հնարավոր կարճ ժամկետներում՝ հաշվի առնելով նաև, որ հասցեատերերը հիմնականում տարեց անձինք են58: Նշյալի կապակցությամբ՝ ՄԻՊ-ն առաջարկել է ավանդների փոխհատուցման հնարավորինս կարճ ժամկետներ սահմանել59:

Իր գործունեության նախորդ հաղորդումների շրջանակներում Պաշտպանը նաև ընդգծել է, որ ծրագրի իրականացման հենց սկզբից պետությունը, որդեգրելով դրամական ավանդների դիմաց սոցիալապես խոցելի ավանդատուներին սոցիալական աջակցության տրամադրման նպատակ, ավանդների փոխհատուցման գործընթացում նախատեսել է

58 Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2019 թվականի տարեկան հաղորդումը (էջ՝ 106);
59 Տե՛ս նույն տեղում:

սոցիալապես խոցելի ավանդատուների սահմանափակ շրջանակ, ինչը չի բխում սոցիալական աջակցության սուբյեկտների հասցեականությունից և սոցիալական աջակցության սկզբունքներից: Խնդրի կարգավորման նպատակով Պաշտպանն առաջարկել է ընդլայնել նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող սուբյեկտային կազմի շրջանակը60:

2023 թվականի ընթացքում ՄԻՊ-ին հասցեագրած բողոքներով քաղաքացիներն իրենց դժգոհությունն են հայտնել առ այն, որ ՀՀ կառավարության որոշման իրավակարգավորումների համաձայն՝ ավանդատուի փոխհատուցում ստանալու պահանջի իրավունքը համարվում է անձի հետ անխզելիորեն կապված իրավունք, այսինքն՝ այն չի կարող (...) **մտնել ժառանգության զանգվածի մեջ61:**

Այսպես, Պաշտպանին ներկայացրած բողոքներից մեկով անձը հայտնել է, որ իր մայրը ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված դրամական ավանդների փոխհատուցում ստանալու համար դիմել է ՄՍԾ, սակայն մինչ վճարման ցուցակներում ներառվելը մայրը մահացել է: Դիմողը նշել է, որ հաշվի առնելով այն, որ ներդրված ավանդի դիմաց փոխհատուցում ստանալու դիմում մուտքագրելուց հետո իրավունքը ծագում է ավանդատուների՝ փոխհատուցման ցուցակներում ընդգրկվելու փաստով, Կառավարության որոշմամբ սահմանվում է, որ ներդրված ավանդի դիմաց փոխհատուցում ստանալու իրավունքը ժառանգության զանգվածի մեջ կարող է մտնել, եթե ավանդատուն ներառվել է փոխհատուցման վճարման ցուցակներում: Հետևաբար, քաղաքացու պնդմամբ՝ ինքն անհիմն զրկվել է փոխհատուցում ստանալու և ժառանգման իրավունքներից:

Նմանատիպ մեկ այլ դիմումով քաղաքացին հայտնել է, որ ինչպես «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի կողմից սահմանված 90-օրյա ժամկետի ուշացման, այնպես էլ՝ ԱՍՀՆ-ի կողմից ողջամիտ ժամկետում վարչարարություն չիրականացնելու հետևանքով և՛ հայրը, և՛ ինքը զրկվել են ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված դրամական ավանդների փոխհատուցում ստանալու և ժառանգման իրավունքից:

Բարձրացված հարցերի կապակցությամբ պարզաբանումներ ստանալու նպատակով Պաշտպանը գրություններ է հասցեագրել ԱՍՀՆ:

ԱՍՀՆ-ի պարզաբանման համաձայն՝ նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցումը կրում է հասցեական բնույթ և նպատակաուղղված է առաջին հերթին հանրապետության բնակչության սոցիալապես առավել անապահով խմբերին դասված քաղաքացիների սոցիալական վիճակի բարելավմանը՝ որպես սոցիալական օգնություն: Ըստ պատասխան գրության՝ տեղեկացվել է, որ ***յուրաքանչյուր տարվա համար շահառուների շրջանակը որոշում է Նախարարությունը, որը պետության հայեցողական ազատության շրջանակն է:***

60 Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2021 թվականի տարեկան հաղորդումը (էջ՝ 153):

61 Տե՛ս ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 16-ի թիվ 352-Ն որոշման հավելված 1-ի 28-րդ կետի համաձայն՝ հաշվի առնելով, որ «ՀՀ 2006 թվականի պետական բյուջեի մասին» *ՀՀ օրենքի N 8 հավելվածի առաջին մասի համաձայն փոխհատուցման տրամադրումը պետք է կրի հասցեական բնույթ,* ***փոխհատուցում ստանալու ավանդատուի պահանջի իրավունքը համարվում է անձի հետ անխզելիորեն կապված իրավունք, այն չի կարող*** *անցնել այլ անձի (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 398-րդ հոդված), լինել գրավի առարկա (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 230-րդ հոդվածի առաջին մաս),* ***մտնել ժառանգության զանգվածի մեջ*** *(ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի երկրորդ մաս)*:

ԱՍՀՆ-ի ներկայացմամբ՝ ավանդի փոխհատուցում ստանալու իրավունքը ծագում է անձի սոցիալական կարգավիճակով պայմանավորված, ուստի այն անխզելիորեն կապված է հենց այդ անձի հետ և չի կարող ներառվել ժառանգության զանգվածի մեջ:

Բարձրացված խնդրի կապակցությամբ ՄԻՊ-ն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նախ ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված դրամական ավանդների փոխհատուցման սոցիալական բնույթին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշմամբ.
Սոցիալական օրենսդրության ոլորտում, պետություններն ունեն հայեցողության լայն շրջանակ, որը ելնելով սոցիալական արդարության և տնտեսական բարեկեցության շահերից, կարող է իրավաչափորեն հանգեցնել բնակչությանը վճարվող սոցիալական աջակցությունների կարգավորմանը և հարմարեցմանը (...): Այնուամենայնիվ, ցանկացած այդպիսի միջոց պետք է համապատասխանի համաչափության պահանջներին62: ՄԻԵԴ-ն արձանագրել է նաև, որ օրենսդրին տրված հայեցողության շրջանակը քաղաքականության ընտրության հարցում պետք է լինի լայն, և նրա կողմից պետք է հարգվի «հանրային շահի» գնահատումը63:

ՍԴ-ն արձանագրել է, որ սեփականության իրավունքի պաշտպանություն տրամադրվում է նաև այն անձանց, ում ***սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է կամ երբ անձինք օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք*64:**

Հետևաբար, ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված դրամական ավանդների փոխհատուցում ստանալու իրավունքը ենթակա է քննարկման սեփականության սահմանադրաիրավական երաշխիքների լույսի ներքո:Այսպես, սեփականության և սոցիալական ապահովության իրավունքներին սերտորեն առնչվում է առանձնակի կարևորություն ունեցող՝ նյութական միջոցը ձեռք բերելու լեգիտիմ ակնկալիքի իրավունքը: Ըստ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի՝ գույք է համարվում ոչ միայն գոյություն ունեցող նյութական միջոցը, այլ նաև նյութական միջոցը ձեռք բերելու լեգիտիմ ակնկալիքը65:

ՍԴ-ի դիրքորոշման համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների66՝ «սեփականություն» հասկացությունը բովանդակում է ոչ միայն ֆիզիկական բարիքների սեփականությունը, այլև սեփականություն կարող են համարվել որոշ գույքային այլ իրավունքներ և շահեր, ինչպես նաև անվիճելի և կատարման ենթակա պահանջի իրավունքը: ՄԻԵԴ-ի վճիռների համաձայն՝ «պահանջի իրավունքը ևս կարող է համարվել «սեփականություն» Կոնվենցիայի նշված դրույթի իմաստով, եթե հիմնավորապես հաստատվել է, որ այդ պահանջը ենթակա է կատարման»67:

62 Տե՛ս ՍԴ-ի 2012 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ ՍԴՈ-1061 որոշումը:
63 Տե՛ս Կարսոնն ու ուրիշները ընդդեմ Միացյալ թագավորության գործով ՄԻԵԴ-ի 2009 թվականի սեպտեմբերի 15-ի որոշումը, գանգատ թիվ՝ 42184/05:
64 Տե՛ս ՍԴ-ի 2016 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ ՍԴՈ-1326 որոշումը:
65 Տե՛ս Տրգոն ընդդեմ Խորվաթիայի գործով ՄԻԵԴ-ի 2009 թվականի հունիսի 11-ի վճիռը, կետ 44:
66 Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի, 2002 թվականի մայիսի 7-ի գանգատ թիվ 33509/04, Բեյլերն ընդդեմ Իտալիայի, 2000 թվականի հունվարի 15-ի գանգատ թիվ 33202/96:
67 Տե՛ս ՍԴ-ի 2016 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ ՍԴՈ-1326 որոշումը:

ՍԴ-ն 2019 թվականի մարտի 19-ի թիվ ՍԴՈ-1448 որոշմամբ նշել է՝ «Սահմանադրության 60 և 75-րդ հոդվածներով ամրագրված իրավակարգավորումների ուժով պետությունը երաշխավորում է անձի՝ սեփականության իրավունքի նկատմամբ օրինական ակնկալիքների իրավունքի իրացումը, ի թիվս այլնի՝ վերջինիս իրացման համար արդյունավետ ընթացակարգերի և կառուցակարգերի օրենսդրական ամրագրման միջոցով:

Այսինքն, ***օրինական հիմքով ձեռք բերված սեփականություն է ոչ միայն ավանդի գումարի պահանջի իրավունքը***, որը ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ավանդ ներդնելուց հետո անձը ձեռք է բերել, ***այլ նաև տոկոսներ ստանալու օրինական ակնկալիքը***, որն անձն ունեցել է բանկում ավանդ ներդնելիս:

Այսպիսով, Պաշտպանն ընդգծում է, որ ներդրված ավանդի պահանջի իրավունքը՝ որպես Սահմանադրությամբ ամրագրված յուրաքանչյուրի՝ ***օրինական հիմքով ձեռք բերած սեփականություն***[68] պրակտիկայում չի կարող կիրառվել Սահմանադրությանը հակասող մեկնաբանությամբ:

Միաժամանակ, ներդրված ավանդի փոխհատուցման պահանջի իրավունքի՝ անձի հետ անխզելիորեն կապված լինելու և ժառանգության զանգվածի մեջ չմտնելու տեսանկյունից անհրաժեշտ է նկատի ունենալ, որ սեփականատիրոջ իրավունքների պաշտպանությանն է միտված ժառանգական իրավունքների ապահովումը սեփականատիրոջ մահից հետո՝ հնարավոր դարձնելով նրա սեփականատիրական իրավազորությունների հաջորդականությունը: Միևնույն ժամանակ, այն ժառանգի համար առաջացնում է ժառանգատուի սեփականության հանդեպ իրավահաջորդության սահմանադրորեն երաշխավորված և պաշտպանված հնարավորություն[69]:

Այսպիսով, անձի սեփականության իրավունքի պաշտպանությանն է միտված ինչպես անձին սեփականությունից զրկելու օրենսդրական հստակ և սահմանափակ հիմքերի առկայությունը, այնպես էլ սեփականատիրական հարաբերություններում իրավահաջորդության կարգով փոխանցվող իրավունքների երաշխավորված պաշտպանությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանն արձանագրում է, որ ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունքն անհրաժեշտ է դիտարկել որպես սեփականության լեգիտիմ ակնկալիք և ժառանգության զանգվածի մաս, որի մեջ, ըստ Քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին մասի, ներառվում է ժառանգատուին պատկանող գույքը՝ ներառյալ դրամը, արժեթղթերը, գույքային իրավունքները և պարտականությունները:

ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 16-ի թիվ 352-Ն որոշման 1-ին հավելվածի 28-րդ կետի կարգավորումն առ այն, որ «Հայաստանի Հանրապետության 2006 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի թիվ 8-րդ հավելվածի առաջին մասի համաձայն՝ փոխհատուցման տրամադրումը պետք է կրի հասցեական բնույթ, **փոխհատուցում ստանալու ավանդատուի պահանջի իրավունքը համարվում է անձի հետ անխզելիորեն կապված իրավունք, այն չի կարող** (...) **մտնել ժառանգության զանգվածի մեջ**: Կառավարության որոշմամբ ավանդի փոխհատուցման իրավունքը ժառանգության զանգվածի մեջ չընդգրկելու համար որպես լիազորող նորմ է համարվում Քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը, որն օրենսդրին

68 ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

69 Տե՛ս ՍԴ-ի 2010 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ ՍԴՈ-917 որոշումը:

հնարավորություն է տալիս սահմանափակել ժառանգության զանգվածի մեջ մտնող իրավունքների ծավալը:

Այնուհանդերձ, հարկ է նկատել, որ Քաղաքացիական օրենսգրքով սահմանվում է, որ գույք է համարվում նաև գույքային իրավունքը: Ընդ որում, ***գույքային իրավունքների՝ ժառանգության զանգվածի մեջ ընդգրկելու հարցն արդեն իսկ կարգավորված է Քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին մասով:***

Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ կառավարության վերոնշյալ որոշման համաձայն՝ եթե ավանդատուն մահացել է իր տվյալները փոխհատուցման վճարման ցուցակում ներառվելուց հետո, ապա մահացած ավանդատուին հասանելիք փոխհատուցումը վճարվում է նրա ժառանգին (ժառանգներին)՝ ավանդատուի բնակության վայրը սպասարկող տարածքային կենտրոն ներկայացրած դիմումի և նոտարի կողմից տրված ժառանգության իրավունքի վկայագրի հիման վրա:

Ասվածից ստացվում է, որ անձանց սեփականությունը ժառանգության միջոցով իրենց ժառանգներին փոխանցելու իրավունքը պայմանավորվում է վճարման ցուցակում ընդգրկվելու հանգամանքով: Ընդ որում՝ յուրաքանչյուր տարվա համար շահառուների շրջանակը որոշում և վճարման ցուցակները կազմում է ԱՍՀՆ-ն: Արդյունքում՝ պետության հայեցողության իրացման շրջանակներում անձինք զրկվում են իրենց սեփականությունը ժառանգման կարգով փոխանցելու իրավունքից:

Քննարկվող հարցի կապակցությամբ հետխորհրդային երկրների փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 25-ի 1092-Ն որոշման 2-րդ կետով նախատեսվում է, որ մինչև 1991 թվականի հունիսի 20-ի դրությամբ ներդրած դրամական ավանդների մնացորդի եռապատիկի չափով փոխհատուցում ստանալու իրավունք ունեն 1945 թվականը ներառյալ ծնված ՌԴ քաղաքացիները, այդ թվում՝ նրանց ժառանգները: ՌԴ օրենսդրությունը նախատեսում է, որ 1991 թվականի հունիսի 20-ի դրությամբ ներդրած դրամական ավանդների մնացորդի կրկնապատիկի չափով փոխհատուցում ստանալու իրավունք ունեն նաև 1946-1991 թվականները ծնված քաղաքացիները և նրանց ժառանգները[70]:

Ընդ որում, ժառանգներին ավանդատուի ներդրած գումարների մնացորդի կրկնապատիկի կամ եռապատիկի չափով փոխհատուցում տրամադրվում է՝ անկախ մահացած ավանդատուի տարիքից[71]:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է մշակել պատշաճ իրավական կառուցակարգեր այն հանգամանքների հաշվառմամբ, որ ներդրված ավանդի դիմաց փոխհատուցում ստանալու իրավունքը համարվում է անձի սեփականություն, իսկ ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված ավանդների փոխհատուցման իրավունքը ներառվում է ժառանգության զանգվածի մեջ:

2.4 ԽՍՀՄ Խնայբանկից ձեռք բերված արժեթղթերի՝ փոխառության պարտատոմսերի, սերտիֆիկատների և գանձատնային պարտավորությունների փոխհատուցման խնդիր

70 Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://base.garant.ru/12172005/, 2024 թվականի մարտի 28-ի դրությամբ:
71 Տե՛ս նույն տեղում:

2023 թվականի ընթացքում Պաշտպանին են հասցեագրվել բողոքներ ԽՍՀՄ Խնայբանկից ձեռք բերված փոխառության պարտատոմսերի, սերտիֆիկատների և գանձատնային պարտավորությունների հատուցում ստանալու իրավունքի ապահովման վերաբերյալ:

ՀՀ կառավարության 1992 թվականի մարտի 26-ին ընդունած թիվ 181 որոշմամբ սահմանվել է, որ գնված արժեթղթերի համար փոխհատուցում տրամադրվում է միայն այն դեպքում, եթե մինչև 1993 թվականի հունվարի 1-ն արժեթղթերը մարդիկ ձևակերպել են որպես ավանդ:

Նման կարգավորումը նպատակ է հետապնդում ԽՍՀՄ Խնայբանկից ձեռք բերված արժեթղթերի համար հետագայում հատուցումն ապահովել ՀՀ կառավարության որոշումներով սահմանված՝ ավանդների փոխհատուցման կարգին համապատասխան, քանի որ նախկինում գործող արժեթղթերի թողարկման կարգին համապատասխան՝ արժեթղթերը չեն եղել անվանական և թվագրված:

Բարձրացված խնդրի վերաբերյալ ՄԻՊ-ին հասցեագրված բողոքներից մեկով քաղաքացին հայտնել է, որ ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկից իր կողմից ձեռք բերված ոչ անվանական տոկոսային սերտիֆիկատների համար մինչ օրս փոխհատուցում չի ստացել: Բողոք ներկայացրած անձը հայտնել է, որ արժեթղթերի իրացման համար տարիներ շարունակ դիմել է Խորհրդային միության տարբեր երկրների պատկան մարմիններին, սակայն իր դիմումները մերժվել են նշված սերտիֆիկատներում հայկական կնիքի առկայության պատճառով: Հավելել է, որ իր կողմից գնված արժեթղթերը չի փոխանակել այլ վճարային արժեթղթերով, ինչպես նաև չի ձևակերպել որպես ավանդ:

Բողոքի կապակցությամբ պարզաբանումներ ստանալու նպատակով գրություն է հասցեագրվել ԱՍՀՆ-ին, որտեղից ստացված պարզաբանման համաձայն՝ ՀՀ քաղաքացիների կողմից մինչև 1993 թվականի հունվարի 1-ն արժեթղթերը այլ վճարային արժեթղթերով փոխանակելու կամ որպես ավանդ ձևակերպված լինելու պարագայում վերջիններս փոխհատուցում կարող են (էին) ստանալ ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 16-ի թիվ 352-Ն, ՀՀ կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1103-Ն, ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 23-ի թիվ 460-Ն և ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի թիվ 22-Ն, 2016 թվականի փետրվարի 11-ի թիվ 117-Ն որոշումներով սահմանված կարգով: Որպես ավանդ չձևակերպված արժեթղթերի դիմաց փոխհատուցման տրամադրման ընթացակարգեր ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված չեն:

Նկատի ունենալով ընթացիկ տարում ստացված բողոքները՝ Մարդու իրավունքների պաշտպանի 2023 թվականի տարեկան հաղորդման պատրաստման շրջանակներում խնդրի կարգավորման համար ձեռնարկված միջոցների վերաբերյալ ԱՍՀՆ-ից ստացվել է պարզաբանում առ այն, որ փոխառության պարտատոմսերի հետգնման և այդ պարտատոմսերը ավանդներ ձևակերպելու գործընթացի կազմակերպման համար 2023 թվականին որևէ գործընթաց չի իրականացվել: Ընդհանուր առմամբ, հաշվի առնելով քաղաքացիների՝ պարտատոմսերի ձեռքբերման ժամկետները (1982թ.)՝ խնդրահարույց է առաջարկվող գործընթացն իրականացնելու նպատակահարմարության հարցը:

Ըստ ստացված տեղեկատվության՝ նշված դեպքում կարևոր է նաև ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ Կենտրոնական բանկի դիրքորոշումը: Հաշվի առնելով վերջին տարիների զարգացումները (պայմանավորված՝ համավարակով, Ադրբեջանի կողմից տարբեր ժամանակահատվածներում սանձազերծած ռազմական գործողություններով,

Լեռնային Ղարաբաղից անձանց բռնի տեղահանումով և այլն)՝ նպատակահարմար է հնարավոր ֆինանսական ռեսուրսների առկայության պարագայում սոցիալական ծախսերի առաջնահերթություններ սահմանել այլ՝ առավելապես առկա սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի համար:

Վերոգրյալ խնդիրների առնչությամբ Պաշտպանն ընդգծում է, որ պետությունը, սոցիալական ապահովության ոլորտում քաղաքականություն մշակելիս և իրականացնելիս, պետք է առաջնորդվի մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերելի չափորոշիչներով՝ բացառելով այնպիսի գործելաոճը, որը կարող է մարդու իրավունքների հնարավոր խախտումների պատճառ դառնալ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է քննարկման առարկա դարձնել ԽՍՀՄ Խնայբանկից ձեռք բերված արժեթղթերի՝ փոխառության պարտատոմսերի, սերտիֆիկատների և գանձապնային պարտավորությունների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունքի պատշաճ իրացումն ապահովելու նպատակով կառուցակարգերի մշակման և իրացման հարցը:

2.5 Անօթևան անձանց կացարանով ապահովման և խնամքի կազմակերպման խնդիրներ

2023 թվականին **Պաշտպան**ը ստացել է բազմաթիվ բողոքներ անօթևան մնացած քաղաքացիներից, ինչպես նաև զանգեր պետական մարմիններից այս կամ այն քաղաքացու դրսում հայտնվելու և կացարանի կարիք ունենալու վերաբերյալ: Ընթացիկ տարում խնդրի վերաբերյալ ՄԻՊ աշխատակազմ է մուտքագրվել թվով 101 գրավոր և բանավոր բողոք, որոնց քանակական ցուցանիշն արդեն իսկ մտահոգիչ է:

ՄԻՊ աշխատակազմ ստացված բողոքներից մեկով քաղաքացին հայտնել է, որ ստանում է հեմոդիալիզ և հայտնվել է անօթևանի կարգավիճակում՝ խնդրելով Պաշտպանի աջակցությունը ժամանակավոր կացարանում տեղավորվելու հարցում:

ՄԻՊ աշխատակազմի ներկայացուցիչը բողոքի քննարկման շրջանակներում կապ է հաստատել «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի տնօրենի հետ բողոք ներկայացրած անձին կացարանում տեղավորելու նպատակով: Միաժամանակ, հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվելու նպատակով առաջարկվել է դիմել ՄՍԾ բժշկասոցիալական փորձաքննություն անցնելու համար:

Պաշտպանի աջակցությամբ դիմողը տեղավորվել է «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամում:

Նմանատիպ մեկ այլ բողոքով քաղաքացին հայտնել է, որ հանդիսանում է «Հանս Քրիստիան Կոֆոեդ» հիմնադրամի շահառու, սակայն իրեն տեղեկացրել են, որ անհրաժեշտ է անցնել մի քանի բժշկական հետազոտություններ՝ տուն-ինտերնատ տեղափոխվելու համար: Վերջինս խնդրել է Պաշտպանի աջակցությունը կացարանում գտնվելու ժամկետի երկարաձգմանը աջակցելու հարցում: Միաժամանակ հավելել է, որ անօթևանների կացարանում բնակության ժամկետը երկարաձգելու համար ցանկացել է դիմել կացարանի վարչակազմին, սակայն դիմումը մերժվել է:

«Հանս Քրիստիան Կոֆոեդ» հիմնադրամի հետ համագործակցության շնորհիվ քաղաքացու կողմից բարձրացված հարցը ստացել է դրական լուծում:

Բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ անօթևան անձանց կացարանով ապահովման և խնամքի կազմակերպման հարցում ամրագրված իրավական երաշխիքների առկայության պայմաններում դրանց գործնական կիրառությունը պատշաճ մակարդակով չի ապահովվում:

Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 84-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր կարիքավոր և տարեց մարդ, օրենքին համապատասխան, ունի արժանապատիվ գոյության իրավունք:

«Սոցիալական աջակցության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը սահմանում է, որ կացարանը տրամադրվում է որոշակի բնակության վայր չունեցող անձին՝ որպես ժամանակավոր օթևան: Որոշակի բնակության վայր չունեցող անձին՝ որպես ժամանակավոր օթևան՝ կացարան և այլ սոցիալական ծառայություններ տրամադրելու կարգն ու պայմանները սահմանվում է ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1069-Ն որոշմամբ: Որոշման 4-րդ հավելվածի 2-րդ կետն էլ սահմանում է, որ որոշակի բնակության վայր չունեցող կամ անօթևան է համարվում հատուկ սոցիալական կարիքներ ունեցող անձը, ով չունի բնակարան կամ ընտանիքում առկա միջանձնային անառողջ հարաբերությունների հետևանքով առաջացած անհաղթահարելի խոչընդոտների պատճառով ի վիճակի չէ ապրել սեփական բնակարանում կամ ձեռք բերել բնակարան, ով սոցիալապես ու հոգեբանորեն մեկուսացված է և կարիք ունի ապաստարանի ու սոցիալական աջակցության:

Ասվածից բխում է, որ պետությունն ունի անօթևաններին բավարար կենսամակարդակով ապահովելու ուղղությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու պարտականություն:

Պաշտպանն իր նախորդ տարեկան հաղորդումներում ևս արձանագրել է անօթևանության կանխարգելման և անօթևան մնացած անձանց կացարանով ապահովման արդյունավետ և բավարար միջոցների ձեռնարկման անհրաժեշտության խնդիրը: ՄԻՊ-ը մշտապես նշել է, որ անօթևանների ժամանակավոր խնամք Հայաստանում ներկայում իրականացնում է միայն մեկ բարեգործական հիմնադրամ և այդ ծառայությունը միակն է մեր երկրում, որպիսի հանգամանքն անհրաժեշտ է դարձնում նման դեպքերին պետության պատշաճ արձագանքը72:

Մասնավորապես, անօթևան անձանց կացարանով ապահովման ծառայություն մատուցում է «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամը, որի կենսաապահովման պայմանների՝ շենքային պայմանների բարելավման առաջարկին ի պատասխան՝ ստացվել է տեղեկատվություն, որ ԱՍՀՆ-ն անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայությունները 2023 թվականին պատվիրակել է «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամին, որը ժամանակավոր օթևանի ծառայություն մատուցող կազմակերպություն է և չի հանդիսանում ԱՍՀՆ համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպություն, ուստիև նախարարության կողմից չեն կարող կենսաապահովման պայմանների ընդլայնման միջոցառումներ ձեռնարկվել:

Կարևորելով անօթևանության կանխարգելմանն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու անհրաժեշտությունը և նկատի ունենալով Պաշտպանին հասցեագրվող բողոքների մեծաքանակությունը՝ ԱՍՀՆ-ին ուղղված գրությամբ Պաշտպանը շեշտել է

72 Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2020, 2021 թվականների տարեկան հաղորդումը (համապատասխանաբար՝ էջեր 153-159, 155-160)

ինչպես անօթևան մնացած անձանց դեպքերին անմիջական հասանելիություն ունենալու անհրաժեշտությունը (օրինակ՝ շուրջօրյա թեժ-գիծ ծառայություն ապահովելու), այնպես էլ՝ կացարանների ստեղծման և առկա կացարանների կենսաապահովման պայմանների բարելավման համար միջոցառումներ ձեռնարկելու հրատապությունը:

ԱՍՀՆ ներկայացրած պարզաբանման համաձայն՝ շուրջօրյա թեժ գծի ծառայություն ունենալու հարցը ներկայումս գտնվում է քննարկման փուլում, սակայն, ժամանակավոր կացարանով ապահովելու ծառայության տեսակետից շուրջօրյա թեժ գծի ծառայությունը կարող է լինել արդյունավետ ժամանակավոր կացարանների առկայության դեպքում:

Նշվել է նաև, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2019 թվականի հունիսի 5-ի թիվ 71-Ա/1 հրամանի համաձայն՝ ԱՍՀՆ-ի և «Հուսո տուն բարեգործական կենտրոն» հիմնադրամի միջև կնքվել է «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» պայմանագիրը, որի շրջանակներում նախատեսվում է սոցիալական ծառայությունների տրամադրում՝ թվով 536 անապահով ընտանիքների:

Ստացվում է, որ պետությունը դրամաշնորհի ձևով հիմնադրամին տրամադրում է ֆինանսական աջակցություն:

ՄԻՊ-ի 2023 թվականի տարեկան հաղորդման պատրաստման շրջանակներում խնդրի կարգավորման համար ձեռնարկված միջոցների վերաբերյալ ԱՍՀՆ-ից ստացվել է պարզաբանում, որ Նախարարի 2019 թ. հունիսի 5-ի թիվ 71-Ա/1 հրամանով հաստատված սոցիալական շտապօգնության համակարգի ծրագրի նպատակն է արագ արձագանքել արտակարգ՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, անհետաձգելի օգնության կարիք ունեցող անձանց (ընտանիքներին) սոցիալական առաջնային կարիքների բավարարման հարցում: Այդ նպատակով ***պահեստներում հավաքագրվել է անհրաժեշտ (բնաիրային) ապրանքատեսականի, պահեստավորվել և բաշխվել սոցիալապես անապահով, դրա կարիքն ունեցող ընտանիքներին (ծրագրի իրականացման ժամանակահատվածում՝ 12 ամսում, աջակցություն է տրամադրվել ավելի քան 800 ընտանիքի):***

Ըստ տեղեկատվության՝ ծրագիրն իրականացվել է Երևան քաղաքում և առնվազն մեկ մարզում: Նախատեսվում է 2024 թվականի ընթացքում ծրագրի շարունակականության ապահովում և ընդլայնում՝ անհատական/զանգվածային ճգնաժամերի արձագանքման ընթացակարգերի մշակման, ընդլայնման, մշակված տրիաժ կենտրոնի մոդելի փորձարկման, հերթապահ ծառայության պիլոտի իրականացման միջոցով:

Պաշտպանը կարևորում է մարդու իրավունքների պաշտպանության ու իրավունքահեն գաղափարների վրա հիմնված սոցիալական ապահովության քաղաքականության իրականացումը: Ողջունելի է անհետաձգելի օգնության կարիք ունեցող անձանց (ընտանիքներին) սոցիալական առաջնային կարիքների բավարարման հարցում ԱՍՀՆ-ի կողմից ավելի քան 800 ընտանիքի բնաիրային օգնության տրամադրումը: Կարևոր է նաև սոցիալական շտապօգնության համակարգի ծրագրի ապահովման տեսանկյունից նախատեսված միջոցառումների շարունակականության ապահովումը:

Պաշտպանն ընդգծում է, որ մեր երկրում առանցքային կարևորություն ունի անօթևան մնացած անձանց ժամանակավոր հիմունքներով բնակելի տարածքով ապահովելու հարցը, այդ թվում՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2019 թվականի հունիսի 5-ի թիվ 71-Ա/1 հրամանով թվով 536 անապահով ընտանիքների սոցիալական ծառայությունների տրամադրման հրատապությունը:

Պաշտպանն ընդգծում է նաև, որ պետության սոցիալական քաղաքականությունը, ի թիվս այլնի, պետք է ուղղված լինի անօթևանության կանխարգելմանն ու այդպիսի կարգավիճակում հայտնված անձանց՝ հասարակության մեջ ինտեգրելուն: Անօթևան անձանց կացարանով ապահովելը և խնամքը պատշաճ կազմակերպելը կարևոր է դիտարկել որպես պետության և իրավասու մարմինների գործունեության առաջնահերթություն:

Պաշտպանը կարևորում է պետության կողմից համապատասխան միջոցառումների իրականացումը՝ անապահով ընտանիքներին և խոցելի այլ խմբերին մշտական կամ ժամանակավոր կացարաններով ապահովելու, ինչպես նաև ժամանակավոր կացարանների ստեղծման և առկա կացարաններում կենսապահովման ծայրահեղ պայմանների բարելավման ուղղությամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է մշակել անօթևանության կանխարգելման հայեցակարգ, ռազմավարություն և գործողությունների ծրագիր՝ ի թիվս այլնի անդրադառնալով նաև նման կարգավիճակում հայտնված անձանց սոցիալական ինտեգրման խնդիրների հաղթահարմանն ուղղված կառուցակարգերին:

2.6 Երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակման պրակտիկ խնդիրներ

2023 թվականին երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակման կապակցությամբ Պաշտպանին հասցեագրված բողոքները հիմնականում վերաբերել են նոր ծնված երեխայի հերթական կարգաթվի որոշմանն այն ընտանիքներում, որտեղ երեխաները սերված են տարբեր ամուսնություններից:

Այսպես, ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի թիվ 275-Ն որոշմամբ սահմանվում է, որ նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելիս հաշվի են առնվում նպաստը նշանակելու համար դիմելու օրվա դրությամբ բնակչության պետական ռեգիստրում հաշվառված՝ (...) նոր ծնված երեխայի ծնողից (հորից կամ մորից) սերված երեխաները և զավակները (նոր ծնված երեխայի համահայր կամ համամայր քույրերն ու եղբայրները) (...) եթե՝ (...)

դ) նոտարական ակտով հաստատված է այդ երեխաների՝ նոր ծնված երեխայի ծնողի խնամքի տակ լինելու փաստը

(…)

է) ծնողի (ով չի հանդիսանում նոր ծնված երեխայի ծնողը) գրավոր համաձայնությամբ այդ երեխայի խնամքն ու դաստիարակությունն իրականացնում է նոր ծնված երեխայի ծնողը:

Սակայն բողոքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նշված որոշման «է» կետի կիրառման դեպքում ամուսնալուծված ծնողը հիմնականում խուսափում է նման հայտարարություն ներկայացնելուց: Արդյունքում կարգաթիվը ճիշտ չի որոշվում:

ՄԻՊ-ին հասցեագրվող բողոքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պրակտիկայում նոտարները նման գործարք կատարելուց հրաժարվում են, լավագույն դեպքում հաստատում են ծնողի հայտարարությունն այն մասին, որ երեխաների խնամքն իրականացնում է ծնողը (հայր կամ մայր), որպիսի փաստաթուղթն էլ սոցիալական ծառայությունում հիմք չէ նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելու համար: Առանձին դեպքերում քաղաքացիները բավարար ֆինանսական միջոցներ չունեն ինչպես

նոտարների կողմից մատուցվող ծառայությունների համար սահմանված պետական տուրքը վճարելու, այնպես էլ՝ նոտարական ծառայություններից օգտվելու համար վերջինիս գտնվելու վայր փոխադրվելու համար:

Այսպես, օրինակ՝ ՄԻՊ-ին հասցեագրված բողոքներից մեկով քաղաքացին տեղեկացրել է, որ 4-րդ երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստ նշանակելու համար կինը դիմել է ՄՍԾ տարածքային կենտրոն, սակայն նպաստի նշանակումը մերժվել է մնացյալ երեխաների՝ նոր ծնված երեխայի ծնողի խնամքի տակ լինելու փաստը նոտարական ակտով հաստատված չլինելու պատճառով:

Ըստ դիմողի՝ վերջինս բնակվում է Արարատի մարզում, սոցիալապես անապահով է, չի կարող վճարել նոտարական գործարքի համար, բացի այդ՝ մարզում գործունեություն իրականացնող նոտարները հրաժարվել են նոտարական գործողություն կատարելուց:

Բարձրացված խնդրի կապակցությամբ ուշադրության է արժանի ՍԴ-ի արտահայտած դիրքորոշումն առ այն, որ ցանկացած նոր ծնված երեխա, անկախ որևէ հանգամանքից, իրավունք ունի ստանալու միանվագ նպաստ, իսկ պետությունն իր հերթին պարտավոր է այն տրամադրել երեխայի ծնողներին կամ ծնողին՝ հորը կամ մորը, կամ օրինական ներկայացուցիչներին, կախված կոնկրետ իրավիճակից[73]:

Ուշադրության է արժանի Վերաքննիչ վարչական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը, որում անդրադառնալով երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելիս հաշվի առնվող փաստաթղթերին՝ նշվել է, որ ինքնանպատակ չէ երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը՝ ըստ նոր ծնված երեխայի հերթական կարգաթվի որոշելը, քանի որ պետության կողմից բազմազավակության խրախուսումն ունի ժողովրդագրական ցուցանիշների շարունակական բարելավման նպատակ, որոնք ուղղված են առաջիկա տարիներին ծնելիության կայուն աճն ապահովելուն, իսկ երկարաժամկետ հեռանկարում՝ հանրապետության բնակչության թվի էական աճ գրանցելու նախադրյալներ ստեղծելուն[74]:

Վերոգրյալից բխում է, որ նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշվում է ընտանիքում փաստացի խնամվող երեխաների քանակով, ինչն էլ, իր հերթին, պայմանավորում է վճարվող նպաստի չափը:

Ուստի Պաշտպանն ընդգծում է կարգաթվի որոշման ընթացակարգերի մատչելիության կարևորությունը՝ հաշվի առնելով այն, որ վերջինիս ճիշտ որոշումն է պայմանավորում երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է կատարելագործել նոր ծնված երեխայի հերթական կարգաթվի որոշման և դրա հիման վրա երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու կառուցակարգերը:

73 Տե՛ս ՍԴ-ի 2019 թվականի հունվարի 15-ի թիվ ՍԴՈ-1438 որոշումը, կետ 4.1:
74 Տե՛ս Վերաքննիչ վարչական դատարանի 2024 թվականի հունվարի 15-ի թիվ ՎԴ6/0004/05/21 գործը:

ԳԼՈՒԽ 2. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Սահմանադրությունը և բազմաթիվ միջազգային-իրավական փաստաթղթեր ճանաչում և երաշխավորում են յուրաքանչյուրի՝ օրինական հիմքով ձեռք բերված սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքը: Պետությունն ապահովում է սեփականության հարաբերությունների կայունությունը և սեփականության իրավունքի պաշտպանությունը:

Հաշվետու տարում այս ոլորտում ծառացած խնդիրների քննարկման և լուծման համար ՄԻՊ հաստատությունում անցկացվել են մի շարք աշխատանքային քննարկումներ և հանդիպումներ, այդ թվում՝ ՔՀԿ ներկայացուցիչների հետ:

Համատեղ քննարկումների ընթացքում անդրադարձ է կատարվել պետության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու արդյունքում սեփականության իրավունքի սահմանափակումների, երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների, «Դալմայի» այգիների նախկին հողօգտագործողների և տարիներ շարունակ մեր երկրում լուծում չստացած այլ խնդիրներին:

2023 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքները, ինչպես նաև տեղեկատվության հրապարակային աղբյուրներից ստացված տվյալները վկայում են, որ այս իրավունքի իրացման հարցում մարդիկ բախվում են մի շարք խնդիրների, որոնք ներկայացված են ստորև:

1. Պետության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու հետևանքով սեփականության իրավունքը սահմանափակելու խնդիր

2023 թվականին Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ համակարգային առումով շարունակել է չլուծված մնալ հանրության գերակա շահ ճանաչելու մասին որոշումներով՝ քաղաքաշինական ծրագրերի իրականացման համար մի շարք տարածքներ ձեռքբերող կազմակերպություններին օտարելու, սակայն այդ կազմակերպությունների կողմից օրենսդրության անկատարության հետևանքով տարածքների նախկին բնակիչներին համարժեք փոխհատուցում չտրամադրելու հարցը: Բողոքների ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ թեև պետությունը 2023 թվականին փորձել է առանձին միջոցներ ձեռնարկել խնդիրը հաղթահարելու ուղղությամբ, այնուամենայնիվ, դրանք բավարար չեն եղել խնդրի համակարգային կարգավորման տեսանկյունից:

Շարունակում է չլուծված մնալ Կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1528-Ն որոշմամբ Երևան քաղաքի Գլխավոր պողոտայի՝ Աբովյան, Փավստոս Բուզանդի, Եզնիկ Կողբացու և Արամի փողոցներով պարփակված տարածքների քաղաքաշինական ծրագրերի իրականացման նպատակով բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու, սակայն շահառուներին մինչ օրս բնակարանային կամ գումարային համարժեք փոխհատուցում չտրամադրելու հարցը: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ ընդունված առաջին որոշումից անցել է շուրջ 16 տարի, սակայն հանրության գերակա շահը

դեռ իրագործված չէ: Ըստ պնդման՝ պետությունն անտեսել է օտարվող գույքի սեփականատերերի իրավունքներն ու օրինական շահերը, մասնավորապես, երկար տարիներ սեփականատերերի անշարժ գույքը գտնվել է պետության կարիքների համար օտարվող և հանրային գերակա շահ ճանաչված տարածքում, արգելվել է կատարել գույքը սեփական հայեցողությամբ օգտագործելու, տնօրինելու և բարելավելու գործողություններ: Սեփականության վկայականներում կատարվել են «***գույքը գտնվում է բացառիկ գերակա շահ ճանաչված տարածքում»*** պարտադիր գրառումը և այդ սահմանափակումների պատճառով վերջիններս կրել են մեծ վնասներ: Մշտապես գտնվել են մտահոգ իրավիճակում՝ հարկադիր օտարման հետևանքով սեփականությունից զրկվելու, համապատասխան գույք գնել չկարողանալու հանգամանքով պայմանավորված: Ըստ պնդման՝ սեփականության դիմաց, որպես փոխհատուցում, մշտապես առաջարկվել է կադաստրային արժեքից 8-9 անգամ ցածր գին, որն ակնհայտորեն չի համապատասխանել նշված հողի իրական արժեքին:

Պաշտպանն իր 2019, 2020, 2021 թվականների տարեկան հաղորդումներում մշտապես բարձրաձայնել է հարցի շուրջ ծագած համակարգային խնդիրները:75 Մասնավորապես, խնդրահարույց են դիտարկվել «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքում տեղ գտած ձևակերպումները՝ կապված օտարվող սեփականության դիմաց նախնական համարժեք փոխհատուցում տրամադրելու պահանջի հետ:

2023 թվականին շարունակել է արդիական մնալ նաև պետության սուբսիդիար պատասխանատվության խնդրահարույց հարցը: «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքում պետության սուբսիդիար պատասխանատվության շրջանակը շատ նեղ է և բացակայում են օտարման գործընթացի նկատմամբ պետական լիարժեք վերահսկողության կառուցակարգերը: Այսպես, պետության սուբսիդիար պատասխանատվությունը ծագում է ձեռքբերողի կողմից միայն օրենքով նշված որոշակի գործողությունների չկատարման դեպքում: Նշված խնդրի կապակցությամբ Պաշտպանը նախորդ տարիների հաղորդումներով առաջարկել է «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքում կատարել համապատասխան փոփոխություն՝ կնքված պայմանագրերի կատարման նկատմամբ ևս սահմանելով պետության սուբսիդիար պատասխանատվություն: Այս տեսանկյունից 2023 թվականին դրական տեղաշարժ չի արձանագրվել:

ՄԻՊ-ին ներկայացված բազմաթիվ բողոքների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ պետության սուբսիդիար պատասխանատվություն չի սահմանվել այն դեպքերի համար, երբ ձեռքբերող կազմակերպությունների և օտարված բնակելի տարածքների իրավատերերի միջև կնքվել են պայմանագրեր, որոնց ուժով նշված կազմակերպությունները պարտավորվել են պայմանագրերում սահմանված ժամկետներում կառուցել բազմաբնակարան շենքեր և տրամադրել բնակարաններ, սակայն նշված շենքերի կառուցման աշխատանքները մինչ օրս մնացել են անավարտ: Խնդրի լուծման նպատակով Պաշտպանն առաջարկել է սահմանել օրենսդրական

75 Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2019, 2020, 2021 թվականի տարեկան հաղորդումները, (համապատասխանաբար՝ էջեր 112-119, 180-185, 161-166 հասանելի է հետևյալ հղումներով՝
https://www.ombuds.am/images/files/15b2661f76d10eb07746d7d4d4dec84f.pdf,2024 թվականի մարտի 28-ի դրությամբ,
https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf, 2024 թվականի մարտի 28-ի դրությամբ,
https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf, 2024 թվականի մարտի 28-ի դրությամբ:

կառուցակարգեր որպես հրաժարագին հրաժարված, սակայն համարժեք փոխհատուցում չստացած անձանց հետ կնքված պայմանագրերն արտադատական կարգով վերանայելու համար: Այնուհանդերձ, այս ուղղությամբ տարիներ շարունակ քայլեր չեն ձեռնարկվում:

Հատկանշական է, որ ոլորտում առկա խնդիրների քննարկման և լուծման նպատակով Պաշտպանը 2023 թվականի ընթացքում մի շարք հանդիպումներ և քննարկումներ է ունեցել քաղաքացիների, ՔՀԿ ներկայացուցիչների հետ: Քննարկվել են ինչպես համակարգային խնդիրներ, այնպես էլ անհատական դեպքեր, նախանշվել են դրանց լուծման ուղիներ: Հանդիպումները կրել են շարունակական բնույթ:

ՄԻԵԴ-ը 2018 թվականին կայացրած վճռով Օսմանյանը և Ամիրաղյանն ընդդեմ Հայաստանի գործով արձանագրել է.

խախտվել է սեփականատիրոջ իրավունքը՝ ՄԻԵԿ-ի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի հիմքով: Այս վճիռը սեփականության օտարման վերաբերյալ կայացված մյուս վճիռներից առանձնանում է նրանով, որ ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ դիմումատուներին տրված փոխհատուցումը համաչափ չի եղել76:

Մասնավորապես, դիմումատուները Լոռու մարզի Շնող և Թեղուտ գյուղերի բնակիչներ են, որոնց վարելահողերը հասարակության և պետության կարիքների համար օտարվել են հանքարդյունաբերության նպատակներով: ՄԻԵԴ ներկայացված գանգատներով դիմումատուները պնդել են, որ պետության կարիքների համար օտարվող սեփականությունը հանդիսացել է իրենց եկամտի միակ աղբյուրը և օտարվող սեփականության դիմաց սահմանված փոխհատուցման գումարը շատ ցածր է եղել:

ՄԻԵԴ-ը համարել է, որ կարող են լինել այնպիսի իրավիճակներ, երբ տվյալ անշարժ գույքի շուկայական գինն արտահայտող փոխհատուցումը՝ նույնիսկ օրենքով սահմանված լրացուցիչ տոկոսի ավելացմամբ, չհամարվի բավարար փոխհատուցում՝ գույքից զրկելու դիմաց:

Մաշինյանը և Ռամազյանն ընդդեմ Հայաստանի գործով ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ դիմումատուներին չի տրվել պատշաճ արդարացի փոխհատուցում և վերջիններս սեփականության օտարման արդյունքում կրել են ավելորդ բեռ:77 Օտարումն իրականացվել է ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտմամբ:

ՀՀ վերաբերյալ մի շարք վճիռներով ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ սեփականության օտարման ժամանակ հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ պետության կարիքների համար օտարվող սեփականությունը հանդիսացել է դիմումատուների եկամտի միակ աղբյուրը և օտարվող սեփականության դիմաց սահմանված փոխհատուցման գումարը շատ ցածր է եղել:

Ելնելով վերոգրյալից, Պաշտպանը վերահաստատում է նախորդ տարիների արտահայտած դիտարկումներն ու դրանց լուծման ուղղությամբ մատնանշած առաջարկները, մասնավորապես՝

76 Տե՛ս Օսմանյանը և Ամիրաղյանն ընդդեմ Հայաստանի (Osmanyan and Amirghanyan v. Armenia) գործով 2018 թվականի հոկտեմբերի 11-ի վճիռը, գանգատ թիվ 71306/11, կետ 69:

77 Տե՛ս Մաշինյանը և Ռամազյանն ընդդեմ Հայաստանի (Mashinyan and Ramazyan v. Armenia) գործով 2019 թվականի փետրվարի 14-ի վճիռը, գանգատ թիվ 65124/09, կետ 58:

- ✓ ***փոփոխել «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասը՝ այս հոդվածում ևս ամրագրելով «նախնական համարժեք» փոխհատուցում եզրույթը,***
- ✓ ***«Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքում կատարել հետևյալ փոփոխությունները,***
- ➢ ***կնքված պայմանագրերի կատարման նկատմամբ ևս սահմանել պետության սուբսիդիար պատասխանատվություն՝ այն տարածելով ոչ միայն ձեռքբերող կազմակերպությունների և շահառու անձանց միջև ապագայում, այլ նաև նախկինում ծագած իրավահարաբերությունների նկատմամբ,***
- ➢ ***սահմանել պետական վերահսկողության կառուցակարգեր սեփականության օտարման գործընթացում ձեռքբերողի կողմից շահառուի նկատմամբ ունեցած պարտավորությունների կատարման նկատմամբ՝ նախատեսելով համապատասխան պատասխանատվության միջոցներ,***
- ➢ ***«փոխհատուցում» բառը ցանկացած հոդվածում օգտագործել «նախնական համարժեք» բառերի հետ միասին՝ այն տարածելով նախկինում ծագած, սակայն մինչ օրս չկատարված իրավահարաբերությունների նկատմամբ:***

2. «Դալմայի» այգիների նախկին հողօգտագործողների օտարված հողատարածքների դիմաց փոխհատուցման խնդիր

2023 թվականի ընթացքում Պաշտպանին շարունակվել են հասցեագրվել բողոքներ «Դալմայի» այգիներում հողամասեր վարձակալած կամ զբաղեցրած անձանց հողատարածքներն այլ նպատակային նշանակության համար վերցնելու և փոխհատուցում չտրամադրելու հարցի վերաբերյալ:

Այսպես, 2023 թվականին Պաշտպանին հասցեագրած բողոքով անձինք հայտնել են, որ 1991 թվականին Շահումյանի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի հետ կնքված վարձակալության պայմանագրի հիման վրա «Դալմայի այգիներ» տարածքում իրենց հատկացվել է հողամաս: Մինչդեռ, ըստ դիմումատուների, առանց իրենց իմացության և համաձայնության, ինչպես նաև առանց գնման նախապատվության իրավունքը հաշվի առնելու՝ 2003-2004 թվականներին Երևանի քաղաքապետարանն այդ հողամասերն աճուրդային կարգով օտարել է առանձին անհատների ու կազմակերպությունների: Ըստ բողոք ներկայացրած անձանց՝ օտարման արդյունքում՝ ֆինանսական և (կամ) գույքային որևէ փոխհատուցում չի տրամադրվել:

Բողոք ներկայացրած անձինք Պաշտպանին ներկայացրել են նաև Երևանի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ին կայացած 4-րդ նստաշրջանի 4-րդ նիստի արձանագրության սղագրությունը: Ըստ որի, Երևանի քաղաքապետարանը դեռևս այդ ժամանակ խոստացել է փոխհատուցման գործընթացն ավարտին հասցնել:

Բացի այդ, նշված ժամանակահատվածում փոխհատուցման գործընթացն ավարտին հասցնելու հնարավոր ժամկետների կապակցությամբ Երևանի քաղաքապետարանից բողոք ներկայացրած անձանց տեղեկացրել են, որ Երևան համայնքը կամ Երևանի քաղաքապետարանն օրենքով կամ իրավական այլ ակտերով չի կրում փոխհատուցում տրամադրելու որևէ պարտականություն, սակայն հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ Երևանի քաղաքապետարանի իրականացրած համապատասխան աշխատանքների արդյունքում բազմաթիվ նախկին հողօգտագործողների հողամասերի ներկայիս սեփականատերերն օժանդակության

գումարներ են տրամադրել: Նշել են նաև, որ Դալմայի այգիներում հողամասեր զբաղեցրած անձանց փոխհատուցման տրամադրման հարցում միջոցներ են ձեռնարկվում հողամասերի սեփականատերերի կողմից դրամական փոխհատուցման տրամադրման գործընթացն ավարտելու ուղղությամբ:

Դիմում-բողոքի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ դեռևս չի լուծվել Պաշտպանի հաղորդումներում տարիներ շարունակ բարձրաձայնված «Դալմայի» այգիներում հողամասեր վարձակալած կամ զբաղեցրած անձանց հողատարածքներն այլ նպատակային նշանակության համար վերցնելու և փոխհատուցում չտրամադրելու հարցը[78]:

ՄԻՊ-ը 2023 թվականի ընթացքում հանդիպումներ և քննարկումներ է ունեցել փոխհատուցում չստացած «Դալմայի» այգիների նախկին հողօգտագործողների, ինչպես նաև այդ խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Քննարկման ընթացքում ՄԻՊ-ը, մասնավորապես, ընդգծել է, որ խնդիրների լուծման ուղղությամբ աշխատանքները պետք է լինեն համակարգային և շարունակական:

Բարձրացված հարցի կապակցությամբ 2023 թվականին Պաշտպանը գրություններ է հասցեագրել Վարչապետի աշխատակազմ: Ի պատասխան՝ ստացվել են պարզաբանումներ այն մասին, որ Երևան համայնքը, Երևանի տեղական ինքնակառավարման մարմինները (Երևանի քաղաքապետ, Երևան քաղաքի ավագանի), ինչպես նաև Երևանի քաղաքապետարանն օրենքով կամ այլ իրավական ակտերով կամ պայմանագրով, Երևան քաղաքի նախկին Դալմայի այգիների նախկին հողօգտագործողներին փոխհատուցում տրամադրելու որևէ պարտավորություն չեն կրում, իսկ քննարկվող հողամասը հանդիսացել է պետության սեփականություն, որը մարզպետի կարգավիճակ ունեցող Երևանի քաղաքապետի կողմից առանձնացվել և օտարվել է աճուրդային եղանակով: Ըստ պարզաբանումների՝ ՀՀ կառավարության 1994 թվականի մարտի 9-ի թիվ 108 որոշմամբ՝ Երևանի քաղաքապետին են վերապահված եղել Երևանի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող պահուստային ֆոնդի հողերը, գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության և բնական կերահանդակների օգտագործման նպատակով, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություններին, ինչպես նաև ֆիզիկական անձանց վարձակալության հանձնելու մրցույթների անցկացման, պայմանագրերի կնքման լիազորությունները: Երևանի թաղային համայնքների ղեկավարները նման պայմանագրեր կնքելու լիազորություններ չեն ունեցել, հետևաբար այդ պայմանագրերից ծագող իրավունքները պետական գրանցման չէին կարող ենթարկվել և այդ պայմանագրերը կողմերի համար իրավական հետևանքներ չէին կարող առաջացնել, իսկ պետությունը չի երաշխավորում հողամասի նկատմամբ չգրանցված իրավունքների պաշտպանությունը և անձեռնմխելիությունը:

Գործող ՀՀ հողային օրենսգրքի իրավակարգավորումներով սահմանված է, որ քաղաքացիները պետության ու համայնքների հողերի այն հողամասերի նկատմամբ, որոնց տիրապետում են առանց իրավաբանական ձևակերպման և որոնցից օգտվում են

78 Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2019, 2020, 2021 թվականի տարեկան հաղորդումները (համապատասխանաբար՝ էջեր 127-131, 197-200, 166-169 էլեկտրոնային տարբերակները հասանելի են հետևյալ հղումներով՝
https://www.ombuds.am/images/files/15b2661f76d10eb07746d7d4d4dec84f.pdf, 2024 թվականի մարտի 28-ի դրությամբ,
https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf, 2024 թվականի մարտի 28-ի դրությամբ,
https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf, 2024 թվականի մարտի 28-ի դրությամբ:

անընդմեջ ու բացահայտ ավելի քան տասը տարի, ունեն օգտագործման իրավունքի ձեռքբերման վաղեմության իրավունք: Նշյալ հողամասերն այլ նպատակային նշանակության համար վերցնելու դեպքում ձեռքբերման վաղեմության իրավունք ունեցող անձանց պետք է փոխարենը տրամադրվեն այլ հողամասեր կամ պետք է հատուցվեն նրանց վնասները: Նույն օրենսգրքով սահմանված է, որ քաղաքացիները, որոնք ավելի քան տասը տարի անընդմեջ, բարեխիղճ ու բացահայտ, սակայն առանց իրենց իրավունքների իրավաբանական ձևակերպման, օգտվում են պետության կամ համայնքի հողերից, ունեն այդ հողերից սեփականության իրավունքով հողամասեր ձեռք բերելու նախապատվության իրավունք, եթե արգելված չէ սեփականության իրավունքով տվյալ հողամասերը ձեռք բերելը կամ, եթե դրանք վաճառվում կամ անհատույց փոխանցվում են միևնույն նպատակային նշանակության համար: Նշված իրավակարգավորումներից հետևում է, որ եթե քաղաքացիների կնքված վարձակալության պայմանագրերն անվավեր են և տարածքներն օգտագործել են առանց իրավաբանական ձևակերպման, ապա հողամասերն այլ անձանց օտարելուց առաջ պետք է այգիների նախկին հողօգտագործողներին դրանք գնելու առաջարկություն արվեր: Հողօգտագործողների հրաժարվելու դեպքում միայն համապատասխան փոխհատուցման դիմաց դրանք կարող էին օտարվել այլ անձանց:

Երևանի քաղաքապետարանի իրավահաջորդության հարցի լուծումը տարիներ շարունակ կրել է համակարգային բնույթ, որի հետևանքով բազմաթիվ անձինք չեն կարողացել իրացնել իրենց իրավունքները: Հարցի հրատապ կարգավորման անհրաժեշտությունից ելնելով՝ Պաշտպանն իր տարեկան հաղորդումներում մշտապես բարձրաձայնել է այն՝ առաջարկելով լուծել հարցը պետական մարմնի լիազորությունը տեղական ինքնակառավարման մարմնին պատվիրակելու միջոցով:

Նշվածից հետևում է, որ եթե վիճարկվող հողատարածքները քաղաքացիներն օգտագործել են առանց իրավաբանական ձևակերպման, ապա հաշվի առնելով վերոնշյալ իրավակարգավորումները՝ հողամասերն այլ անձանց օտարելուց առաջ պետք է այգիների նախկին հողօգտագործողներին դրանք գնելու առաջարկություն արվեր: Հողօգտագործողների հրաժարվելու դեպքում միայն համապատասխան փոխհատուցման դիմաց դրանք կարող էին օտարվել այլ անձանց: Այսպիսով, չի պահպանվել նշված ընթացակարգը, ինչպես նաև չեն փոխհատուցվել մի շարք նախկին հողօգտագործողների կրած վնասները:

Հարկ է նշել, որ 2021 թվականի նոյեմբերի 17-ին ԱԺ-ի կողմից ընդունվել է «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-353-Ն օրենքը, որով Երևանի քաղաքապետին են պատվիրակվել մարզպետի կարգավիճակ ունեցող Երևանի քաղաքապետի, Երևան քաղաքի շրջանային խորհուրդների և նրանց գործադիր մարմինների, Երևանի քաղաքային խորհուրդների ընդունած և իրենց իրավական ուժը պահպանած ակտերի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, դրանք ուժը կորցրած ճանաչելու լիազորությունները:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է մշակել և իրացնել կառուցակարգեր հողամասերն այլ նպատակային նշանակության համար վերցնելու դեպքում ձեռք բերման վաղեմության իրավունք ունեցող անձանց այլ հողամասեր տրամադրելու կամ նրանց վնասները հատուցելու, իսկ նման հողամասերը վաճառելու

դեպքերում գնման նախապատվության իրավունք ունեցող անձանց շահերը հաշվի առնելու նպատակով:

3. Սեփականության իրավունքով պատկանող հողամասերը սխալ չափագրելու և կադաստրային քարտեզում ամրագրելու պատճառով առաջացած հողամասերի համադրումները շտկելու խնդիր

2023 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ, որոնք վերաբերել են անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերը սխալ չափագրելու և կադաստրային քարտեզում ամրագրելու հետևանքով առաջացած իրավունքների խախտումներին:

Ընթացիկ տարում բողոքներից մեկով անձը տեղեկացրել է, որ 2022 թվականի նոյեմբերի 1-ին գրանցվել է իր սեփականության իրավունքը անշարժ գույքի նկատմամբ, սակայն 2023 թվականի սեպտեմբերի 6-ին Կադաստրի կոմիտեի կողմից նույն կադաստրային ծածկագրով հողամասը գրանցվել է մեկ այլ անձի անվամբ: Բողոք ներկայացրած անձը դիմել է Պաշտպանին իր սեփականության իրավունքի պաշտպանության խնդրանքով:

Ի պատասխան Պաշտպանի՝ ՀՀ կադաստրի կոմիտե կատարված հարցմանը՝ հայտնել են, որ նշված հասցեում գտնվող 0.1007 հա մակերեսով և բողոքում նշված կադաստրային ծածկագրով հողամասի նկատմամբ առաջին անգամ պետական գրանցում է կատարվել դեռևս 2004 թվականի մայիսի 13-ին: Տվյալ պահին գործող օրենսդրության համաձայն՝ հողամասը տեղադրվել է կադաստրային քարտեզում չափագրման հիման վրա մոտավոր և առանց կոորդինատային համակարգի տվյալների: Տվյալ հասցեում գտնվող 0.099976 հա մակերեսով, սակայն վերոգրյալ նույն կադաստրային ծածկագրով հողամասի նկատմամբ 2023 թվականի սեպտեմբերի 6-ին պետական գրանցում է կատարվել որակավորման վկայական ունեցող անձի կողմից կազմված, համայնքի ղեկավարի կողմից հաստատված ներկայումս գործող կոորդինատային համակարգով հատակագծի և համայնքի ղեկավարի համապատասխան գրության հիման վրա: Կադաստրային քարտեզում տեղադրելուց հետո առաջացել է համադրում նախկինում գրանցված քաղաքացուն պատկանող 0.1007 հա մակերեսով հողամասի հետ:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ կադաստրի կոմիտեից առաջարկվել է հետևյալը. քանի որ 0.099976 հա մակերեսով հողամասը գրանցվել է համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի հիման վրա, ուստի հարցի լուծման համար բողոք ներկայացրած անձը կարող է սահմանված կարգով դիմումին կից ներկայացնել 0.1007 հա մակերեսով հողամասի հատակագիծ՝ կազմված որակավորման վկայական ունեցող անձի կողմից, հաստատված համայնքի ղեկավարի կողմից և վերջինիս կողմից տրված համապատասխան գրություն՝ քարտեզում ուղղում կատարելու վերաբերյալ, որին կտրվի համապատասխան ընթացք:

Հողամասերի համադրումները շտկելու, այն է՝ ՀՀ ամբողջ տարածքում առկա համակարգային խնդիրը կարգավորելու ուղղությամբ ձեռնարկվող քայլերի առնչությամբ Կադաստրի կոմիտեից ՄԻՊ-ին տարեկան հաղորդման շրջանակներում կատարված հարցմանն ի պատասխան՝ տեղեկացրել են, որ իրականացվում են ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի «Կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը սահմանելու մասին» թիվ 698-Ն որոշման N 2 հավելվածի դրույթներով սահմանված, կադաստրային քարտեզներում առկա վարչական սահմանների և

կադաստրային թաղամասերի տեղադիրքի ու սահմանների սխալների ուղղման աշխատանքներ: Մինչև որոշման ուժի մեջ մտնելը փորձնական (պիլոտային) եղանակով ուղղվել են Արարատի մարզի 4, իսկ ուժի մեջ մտնելուց հետո Շիրակի, Սյունիքի և Արարատի մարզերի, Կոտայքի մարզի Ծաղկաձոր ու Հրազդան խոշորացված համայնքների, Վայոց ձորի մարզի Արենի և Եղեգնաձոր խոշորացված համայնքների, Արագածոտնի մարզի Թալին խոշորացված համայնքի Դաշտադեմ և Կոտայքի մարզի Նաիրի խոշորացված համայնքի Քասախ բնակավայրերի 344 (որից 186-ը՝ 2023 թվականի ընթացքում) կադաստրային քարտեզներ և տարածքային ստորաբաժանումների կողմից քարտեզների վարումը իրականացվում է ուղղված կադաստրային քարտեզներով: Հավելել են, որ 10 բնակավայրերի կադաստրային քարտեզների ուղղման նախագծերը համաձայնեցման փուլում են: Տեղեկացրել են նաև, որ վերոնշյալ աշխատանքները նախատեսվում է ավարտել մինչև 2026 թվականը: Նշված հավելվածով սահմանված աշխատանքների ավարտից հետո գործում է անշարժ գույքերի (հողամասերի) սահմանների սխալների ուղղման պարզեցված ընթացակարգ: Վերոնշյալ հավելվածի դրույթների համաձայն՝ դեռևս չուղղված բնակավայրերում գտնվող առանձին գույքային միավորների նկատմամբ ուղղման աշխատանքներն իրականացվում են նույն որոշման N 1 հավելվածով սահմանված կարգով:

Պաշտպանը ողջունելի է համարում իրավասու մարմնի կողմից խնդրի լուծմանն ուղղված որոշակի քայլերի ձեռնարկումը՝ միևնույն ժամանակ արձանագրելով, որ հարցը պետք է ստանա շուտափույթ համակարգային լուծում:

Ելնելով վերոգրյալից՝ Պաշտպանը վերահաստատում է նախորդ տարիներին արտահայտած դիրքորոշումներն ու ներկայացված առաջարկները, մասնավորապես՝

- ✓ ***իրականացնել պատշաճ վերահսկողություն գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների իրականացման նկատմամբ՝ կադաստրային քարտեզում սխալները բացառելու համար,***
- ✓ ***իրականացնել պատշաճ վարչարարություն՝ սեփական նախաձեռնությամբ ձեռնարկելով միջոցներ կադաստրային քարտեզներում անշարժ գույքի (հողամասի) միավորների գծային չափերի կամ տեղադիրքի կամ երկրաչափական տեսքի կամ արտացոլմանը վերաբերող սխալները ուղղելու համար:***

4. Աղետի գոտու բնակավայրերի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում երկրաշարժից հետո տեղադրված կամ կառուցված ոչ հիմնական շինություններում բնակվող անձանց խնդիր

2023 թվականի ընթացքում Պաշտպանին շարունակել են հասցեագրվել բողոքներ երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման խնդրի վերաբերյալ:

Բողոքներն առավելապես վերաբերել են աղետի գոտու բնակավայրերի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում երկրաշարժից հետո տեղադրված կամ կառուցված ոչ հիմնական շինությունների քանդման (ապամոնտաժման) գործընթացին: Ընդ որում, բողոքները սկսել են Պաշտպանին ներկայացվել ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 13-ի «Աղետի գոտու բնակավայրերի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը երկրաշարժից հետո տեղադրված կամ կառուցված ոչ հիմնական շինություններից ազատելու կարգը

հաստատելու մասին» թիվ 1601-Ն որոշման կիրարկման նախնական փուլում, երբ ոչ հիմնական շինությունները տիրապետող կամ օգտագործող քաղաքացիները համայնքի ղեկավարից ստացել են գրավոր ծանուցում հողամասերը ոչ հիմնական շինություններից ազատելու և քանդելու (ապամոնտաժելու) վերաբերյալ:

ՄԻՊ աշխատակազմի կատարած ուսումնասիրությունները վկայում են, որ բողոքների գերակշիռ մասը կազմում են հետևյալ դեպքերը՝

1. պետական ծրագրի շրջանակում բնակարանի հատկացման պահին ընտանիքը չի եղել բազմանդամ, այն է՝ հատկացված բնակտարածքը բավարար է եղել ընտանիքի ամբողջ կազմի բնակության համար, ինչով պայմանավորված՝ ոչ հիմնական շինությունը քանդվել է, իսկ ընտանիքը բնակության է տեղափոխվել հատկացված բնակարան: Հետագայում, ընտանիքի կազմն ավելացել է և այլևս հնարավոր չի եղել բնակվել մեկ հարկի տակ, ուստի ընտանիքի մի մասը բավարար ֆինանսական միջոցներ չունենալու պատճառով ստիպված է եղել ձեռք բերել տնակ և տեղափոխվել այնտեղ բնակության: Բողոք ներկայացրած անձանց պնդմամբ՝ իրենք համայնքի կողմից ծանուցվել են **ոչ հիմնական շինության քանդման ենթակա լինելու, ինչպես նաև փոխհատուցում չստանալու վերաբերյալ.**

2. մեկ այլ դեպքում քաղաքացին հայտնել է, որ 1988 թվականի երկրաշարժի հետևանքով կորցրել է բնակարանը և ընտանիքի հետ բնակվում է վագոն տնակում: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ երկրաշարժից առաջ ինքը և եղբայրը բնակվել են նույն հասցեում, այնուհետև, երկրաշարժից հետո իրենց ընտանիքներին հատկացվել են երկու տարբեր հասցեներով վագոն տնակներ:

2000 թվականին Կարմիր խաչի ընկերության կողմից կառուցված բնակարանների վիճակահանությանը մասնակցելու արդյունքում իրեն և եղբորը հատկացվել է 3 սենյականոց բնակարան: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 3 սենյականոց բնակարանում 8 անձով բնակվել հնարավոր չի եղել՝ իր ընտանիքը շարունակել է բնակվել վագոն տնակում, իսկ եղբոր ընտանիքը տեղափոխվել է հատկացված բնակարան: Բողոք ներկայացրած անձը 2023 թվականին Գյումրու համայնքապետարանից ստացել է ծանուցում այն մասին, որ իր ընտանիքին պատկանող վագոն տնակը ենթակա է քանդման, որի դիմաց, սակայն փոխհատուցում չի տրամադրվելու:

Բարձրացված հարցերի կապակցությամբ Գյումրու համայնքապետարանը հայտնել է, որ ՀՀ կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 1402-Ն որոշումը տարածվում է 2009 թվականի նոյեմբերի 26-ից հետո պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների (բնակարանների) հատկացման նկատմամբ: Դիմողի ընտանիքին բնակարան հատկացվել է Ամերիկյան կարմիր խաչի ընկերության կողմից 2001 թվականին՝ այսինքն՝ վերոնշյալ որոշման ընդունումից առաջ: Միաժամանակ, տեղեկացրել է, որ ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 1601-Ն որոշման 10-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ **բնակարանի (բնակելի տան) նկատմամբ սեփականության իրավունք ունեցող ընտանիքներին պետական աջակցություն չի տրամադրվում:**

3. մեկ այլ բողոքով քաղաքացին հայտնել է, որ 1988 թվականի երկրաշարժի հետևանքով իրենց բնակելի շենքը դարձել է 3-րդ աստիճանի վթարային: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակությունը տվյալ բնակարանում շարունակելն

այլևս եղել է անհնար (առկա չեն եղել կոմունալ հարմարություններ, առաստաղը անջատված է եղել բնակարանի պատերից, սենյակի պատերը միմյանցից հեռացված են եղել, արտաքին և ներքին պատերի վրա առկա են եղել ճաքեր)՝ ապա ընտանիքը 7 անդամով տեղափոխվել է վագոն տնակ և մինչ օրս բնակվում է այնտեղ: Շիրակի մարզպետարանից ստացված գրությամբ քաղաքացուն տեղեկացվել է, որ շենքի ուժեղացման-վերականգնման հարցն ընդգրկվել է Շիրակի մարզի՝ 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրերի հայտում:

Դիմողը հավելել է, որ 2023 թվականի ապրիլի ամսին Գյումրու համայնքապետարանի կողմից ծանուցվել է այն մասին, որ վագոն տնակը մեկ ամսվա ընթացքում ենթակա է քանդման:

Բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ վթարային շենքում բնակվելն անհնար է, իսկ տնակի քանդման պարագայում էլ ընտանիքը կհայտնվի անօթևանի կարգավիճակում:

Բարձրացված հարցի կապակցությամբ Գյումրու համայնքապետարանը հայտնել է, որ ՀՀ կառավարության թիվ 1601-Ն որոշման հիման վրա տվյալ ժամանակավոր կացարանի բնակիչներն ընդգրկված են «Բնակարանի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող ընտանիքների կողմից զբաղեցված ոչ հիմնական շինություններ» կատեգորիայում, ուստի վերջիններիս պետական աջակցություն չի տրամադրվում:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Պաշտպանը Շիրակի մարզպետարանից տեղեկատվություն է պահանջել՝ քանդման ենթակա ոչ հիմնական շինություններում բնակվող ընտանիքների, ինչպես նաև այդ շինություններում բնակվող ընտանիքներին տրամադրված կամ տրամադրվելիք պետական աջակցության քանակական տվյալների վերաբերյալ:

Շիրակի մարզպետարանի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 1601-Ն որոշման կիրարկման շրջանակներում պետական աջակցության տրամադրում չի նախատեսվում թվով 878 ընտանիքների: Միաժամանակ, տեղեկացվել է, որ **ՀՀ կառավարության նշված որոշմամբ աջակցություն չստացող ընտանիքների համար բնակարանային պայմանների բարելավման այլ ծրագրեր նախատեսված չեն:**

Քննարկվող հարցերի առնչությամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտեից ստացվել է հետևյալ տեղեկատվությունը.

ՀՀ կառավարության թիվ 1601-Ն որոշման շրջանակներում համայնքների ղեկավարների կողմից հաստատված ցուցակների համաձայն՝ Շիրակի և Լոռու մարզերի բնակավայրերի պետական և համայնքային հողամասերի վրա տեղադրված/կառուցված տնակների թիվը 4068 է:

Ցուցակների նախնական ուսումնասիրության արդյունքում նշված 4068 տնակներից՝

- 3869-ը բնակեցված են,
- 182-ը բնակեցված չեն,
- 3-ն օգտագործվում են համայնքային ենթակայության կազմակերպությունների կողմից ծառայությունների մատուցման նպատակով,
- 6-ը տնակի համարակալմամբ քարաշեն շինություններ են և քաղաքացիները ցանկություն են հայտնել օրինականացնել դրանք,

- 8 տնակ տիրապետող անձինք ցանկություն են հայտնել ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման համաձայն համայնքից ստանալ ոչ հիմնական շինությունով ծանրաբեռնված հողամասը:

Բնակության նպատակով օգտագործվող 3869 տնակներում բնակվող ընտանիքներից՝

- 1089 ընտանիք հավակնում է պետական աջակցության (բնակարանի գնման վկայագրի կամ ուղղակի ֆինանսական աջակցության կամ բնակարան վարձակալելու համար աջակցության գումարի տրամադրում):
- 1843 ընտանիք հավակնում է սոցիալական աջակցության՝ սոցիալական բնակարանային ֆոնդի կառուցման և դրանից բնակելի տարածության հատկացմամբ՝ սոցիալական վարձակալության կամ իրեն վարձակալությամբ տրված բնակարանը տարաժամկետ վճարման եղանակով կամ հիփոթեքային միջոցների ներգրավմամբ հետ գնելու տարբերակներով: Այս խմբին դասված, սակայն սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ներառված՝ բնակարանային կարիքներն ինքնուրույն բավարարելու հնարավորություն չունեցող անձանց խնդիրը դիտարկել սոցիալական բնակարանային ֆոնդից կացարանի հատկացման կամ կացարանի կարիք ունեցող ընտանիքների կողմից բնակարանի կամ բնակելի տան ձեռքբերմանը պետական աջակցություն տրամադրելու նպատակային ծրագրի շրջանակներում:
- 937 ընտանիքի համար աջակցության տրամադրում նախատեսված չէ:

Նշված 937 ընտանիքներից՝

- 442-ը պետությունից բնակարան ստացած, սակայն տնակը չքանդելու պատճառով հատկացված բնակարանի նկատմամբ իրենց սեփականության իրավունքը դեռևս չգրանցած ընտանիքներն են,
- 464-ը ունեն սեփականության իրավունքով պատկանող բնակարան (բնակելի տուն),
- 31-ը բարեգործական ծրագրերի շրջանակներում ստացել են բնակարան:

Այսինքն, թիվ 1601-Ն որոշմամբ աջակցության տրամադրում նախատեսված չէ միայն այն ընտանիքների համար, որոնք վերը նշված հիմքերով ունեն բնակարան կամ բնակելի տուն և անօթևան չեն:

Միաժամանակ, տեղեկացրել են, որ աջակցություն ստանալու հավակնող քաղաքացիների կողմից զբաղեցված տնակների ապամոնտաժումը նախատեսված է միայն աջակցության տրամադրումից հետո՝ թիվ 1601-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 8-րդ կետի համաձայն:

ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 1601-Ն որոշման 11-րդ կետով սահմանված կարգավորման համաձայն՝ պետության կամ համայնքի կողմից բնակարան ստացած կամ բնակարան ձեռք բերելու համար տրամադրված ֆինանսական աջակցության միջոցով ձեռք բերած բնակարանն օտարած ընտանիքներին տրամադրվում է աջակցություն՝ բնակելի տարածության վարձակալության համար, 1 տարի ժամկետով (մեկ ամսվա համար 60.000 դրամի չափով):

ՄԻՊ-ի կողմից առաջարկվել է քննարկման առարկա դարձնել սահմանված 60 000 դրամի չափը փոփոխության ենթարկելու և անշարժ գույքի ներկա շուկայական արժեքներին համապատասխանեցնելու հարցը: Նշվածի կապակցությամբ Քաղաքաշինության կոմիտեն հայտնել է, որ հաշվի առնելով որոշմամբ նախատեսված առաջնահերթությունները՝ պետության կամ համայնքի կողմից բնակարան ստացած կամ

տրամադրված բնակարանի գնման վկայագրով ձեռքբերած բնակարանն օտարած ընտանիքներին բնակելի տարածության վարձակալության համար աջակցության տրամադրումը նախատեսվում է 2026-2027 թվականների ընթացքում: Այդ պարագայում, բնակելի տարածության վարձակալության համար տրամադրվելիք աջակցության չափն անշարժ գույքի շուկայական արժեքներին համապատասխանեցնելու հարցին անհրաժեշտության դեպքում նպատակահարմար է անդրադառնալ վերը նշված ժամկետներում՝ հաշվի առնելով տվյալ ժամանակահատվածում անշարժ գույքի շուկայական արժեքները:

Միաժամանակ, տեղեկացվել է, որ բնակարանային ծրագրերի բյուջետային գլխավոր կարգադրիչ հանդիսացող ԱՍՀՆ-ի կողմից ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի «Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն» բաժնի 8.4-րդ կետի միջոցառման համաձայն՝ մշակման փուլում է գտնվում «Բնակարանով ապահովելու միասնական սոցիալական ռազմավարությունը և հնգամյա գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» կառավարության որոշման նախագիծը:

Հետևաբար, ըստ ԱՍՀՆ-ի՝ հանրապետությունում անօթևան և բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների բնակապահովման խնդրի մասով մոտեցումները կհստակեցվեն մշակվող ռազմավարության շրջանակներում, իսկ բուն խնդիրների լուծումը կդիտարկվի ռազմավարությամբ հաստատվելիք գործողությունների ծրագրի շրջանակներում: Իսկ առանձին խումբ ընտանիքների բնակարանային խնդիրը կարող է դիտարկվել որպես նշված ռազմավարության առանձին գործողություն կամ ռազմավարությամբ նախատեսվող գործողությունների շրջանակներում այդ ընտանիքների մասով սահմանել առաջնահերթություն:

Վերոնշյալի համատեքստում հարկ է նշել, որ ՀՀ կառավարության թիվ 1601-Ն որոշման շրջանակում պետական աջակցության տրամադրումն իրականացվում է ընտանիքների՝ ոչ հիմնական շինությունում բնակվողի կարգավիճակում հայտնվելու հիմքերի գնահատման արդյունքում: Մինչդեռ, ոչ հիմնական շինություններում փաստացի բնակվող ընտանիքների հարցը անհրաժեշտ է քննարկել և գնահատել իրական կարիքի անհրաժեշտության տեսանկյունից, այլապես, ոչ հիմնական շինություններում փաստացի բնակվող ընտանիքը, չունենալով պետական աջակցություն ստանալու հիմքեր, միաժամանակ, չունենալով անհրաժեշտ միջոցներ կացարան ձեռք բերելու կամ վարձակալելու համար, ոչ հիմնական շինության քանդումից հետո հայտնվելու է անորոշ կարգավիճակում՝ չունենալով բնակարանային բավարար պայմաններ կեցությունը շարունակելու համար:

Նշվածի համատեքստում անհրաժեշտ է նաև ընդգծել, որ նույն որոշման շրջանակում պետական աջակցության հավակնորդ չեն հանդիսանում այն ընտանիքները, որոնք պետական կամ բարեգործական ծրագրերի շրջանակում արդեն իսկ ստացել են բնակարաններ: Նշվածից հետևում է, որ նախորդիվ ժամանակահատվածում պետությունը կատարել է անձի նկատմամբ ունեցած իր պարտավորությունը, որից հետո, սակայն, ընտանիքի կազմի ընդլայնման, ընտանիքի տրոհման կամ այլ պատճառներով վերջիններս կրկին հայտնվել են վագոն տնակում:

Հաշվի առնելով այն, որ աղետի գոտու բնակավայրերում բնակարան կորցրած անձանց իրավունքների պատշաճ իրացման, ինչպես նաև աղետի գոտու բնակավայրերը պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը երկրաշարժից

հետո տեղադրված կամ կառուցված ոչ հիմնական շինություններից ազատելու հարցերը տարիներ շարունակ ծառացած են եղել պետության առջև, ուստի ՀՀ կառավարության թիվ 1601-Ն որոշումը կիրարկելիս կարևոր է որպես առաջնային նպատակ սահմանել ոչ միայն համայնքային հողերը ոչ հիմնական շինություններից ազատելու հարցը, այլ խնդրին մոտենալ համակարգային տեսանկյունից՝ քննարկվող հարցերին մեկընդմիշտ լուծում տրամադրելու նպատակով: Հարկ է ընդգծել, որ սույն որոշմամբ արդեն իսկ նախատեսվել են արդյունավետ լուծումներ, այդ թվում՝ համապատասխան կարգավիճակ ունեցող անձանց պետական աջակցության տրամադրման եղանակով: Դրան զուգահեռ կարևոր է ուշադրության կենտրոնում պահել նաև վերը նշված ընտանիքների հարցը, որոնց պետական աջակցություն չի տրամադրվելու: Հակառակ պարագայում ձեռնարկվող գործողությունները կարող են նպաստել անօթևանության թվի և այլ սոցիալական խնդիրների արհեստական աճին:

Հարկ է ընդգծել, որ 2023 թվականին ՄԻՊ ներկայացուցիչները մասնակցել են ոլորտում գործող ՀԿ-ներից մեկի կողմից կազմակերպված քննարկմանը: Քննարկումն իրականացվել է երկրաշարժի տարելիցի կապակցությամբ և Մարդու իրավունքների միջազգային օրվան ընդառաջ: Այն նվիրված է եղել երկրաշարժից տուժած անձանց բավարար բնակարանային պայմաններ ունենալու իրավունքի իրացման հիմնահարցերին և դրանց հասցեագրման ուղիներին: Քննարկմանը մասնակցել են ինչպես շահագրգիռ պետական մարմինների, այնպես էլ ՀԿ-ների ներկայացուցիչներ[79]:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***միջոցներ ձեռնարկել ոչ հիմնական շինության քանդման կամ ապամոնտաժման արդյունքում անձանց անօթևանի կարգավիճակում հայտնվելու դեպքերը բացառելու ուղղությամբ: Այս տեսանկյունից կարևոր է ՀՀ կառավարության թիվ 1601-Ն որոշման շրջանակում պետական աջակցության չհավակնող և ապամոնտաժման ենթակա ոչ հիմնական շինություններում բնակվող ընտանիքների հարցը դիտարկել ԱՍՀՆ-ի՝ բնակարանով ապահովելու միասնական սոցիալական ռազմավարության շրջանակում:***
- ✓ ***ոչ հիմնական շինություններում բնակվող, սակայն ՀՀ կառավարության թիվ 1601-Ն որոշման շրջանակում պետական աջակցություն ստանալու հավակնորդ չհանդիսացող յուրաքանչյուր դեպքով իրականացնել առանձին դիտարկում՝***

[79] Մանրամասն տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://progressgyumri.am/news/17349, 2024 թվականի մարտի 28-ի դրությամբ:

առանձնահատուկ ուշադրություն դարձնելով այն ընտանիքներին, որոնց կազմում կան երեխաներ, կենսաթոշակառուներ, հաշմանդամություն ունեցող անձինք, ինչպես նաև հատուկ խնամքի կարիք ունեցող այլ անձինք:

5. Անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերի կողմից ԽՍՀՄ ռուբլով վճարված գումարի արժեզրկումից կրած կորուստների դիմաց հատուցումը

2023 թվականի ընթացքում Պաշտպանին շարունակել են հասցեագրվել բողոքներ, որոնք վերաբերել են կոոպերատիվ հիմունքներով բազմաբնակարան շենք կառուցելու և բնակարաններ հատկացնելու նպատակով կանխավճարային մուծումներ կատարելու, Խորհրդային Միության ռուբլով վճարված գումարի արժեզրկման հետևանքով կառուցվելիք շենքերը կիսակառույց մնալու և բնակարաններով չապահովվելու խնդրին:

ՀՀ կառավարության 2000 թվականի օգոստոսի 2-ի «Անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերի կողմից Խորհրդային Միության ռուբլով վճարված գումարի արժեզրկումից փայատերերի կրած կորուստների դիմաց դրամական օգնության տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 432 որոշման համաձայն՝ անավարտ շենքերի բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերին նախատեսվել էր տրամադրել համապատասխան դրամական օգնություն, ինչը սակայն կոոպերատիվների բազմաթիվ անդամներին մինչ օրս չի վճարվել: Ընդ որում, նշված դրամական օգնությունը նախատեսվել էր տրամադրել ՀՀ կառավարության 2002 թվականի մարտի 12-ի «Անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերի կողմից Խորհրդային Միության ռուբլով վճարված օգնության տրամադրման ժամանակացույցի մասին» թիվ 229 որոշմամբ հաստատված ժամանակացույցով նշված հերթականությամբ: Հարկ է նշել, որ ըստ այդ հերթականության՝ դրամական օգնության տրամադրման գործընթացը նախատեսվել է ավարտել 2011 թվականին:

Հաշվետու տարվա ընթացքում նշված համակարգային խնդիրը նախորդ տարիների համեմատ ավելի է սրվել, քանի որ 2023 թվականին օրենսդրական փոփոխության արդյունքում անձինք այլևս չունեն նախատեսված դրամական օգնությունը ստանալու իրավական հնարավորություն:

2023 թվականին ՄԻՊ-ին հասցեագրած բողոքներով անձինք նշել են, որ բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերը չեն կարողացել իրացնել ԽՍՀՄ ռուբլով վճարված գումարի արժեզրկումից կրած կորուստների դիմաց փոխհատուցում ստանալու իրենց իրավունքը, քանի որ լիազոր մարմնին սահմանված ժամկետում դիմում չեն ներկայացրել կամ սահմանված ժամկետում հանրապետությունում չեն եղել և զրկվել են փոխհատուցում ստանալու իրավունքից:

Այսպես, Պաշտպանին հասցեագրած բողոքներից մեկով, քաղաքացին տեղեկացրել է, որ եղել է «Հադիս» բնակարանաշինարարական կոոպերատիվի անդամ և տեղեկանալով ՀՀ կառավարության 2000 թվականի օգոստոսի 2-ի «Անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերի կողմից Խորհրդային Միության ռուբլով վճարված գումարի արժեզրկումից փայատերերի կրած կորուստների դիմաց դրամական օգնության տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 432 որոշման մասին՝ 2004 թվականից դիմել է տարբեր պետական մարմինների, սակայն ապարդյուն: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ 2007 թվականին «Հադիս»

բնակարանաշինարարական կոոպերատիվի այլ անդամները ստացել են դրամական օգնություն, իսկ իրենք չեն ստացել, քանի որ նշված ժամանակահատվածում գտնվել են Ռուսաստանի Դաշնությունում:

Նմանատիպ մեկ այլ բողոքով՝ քաղաքացին հայտնել է, որ 1986 թվականին «Շահումյան» բանկում կատարել է ներդրում 4700 ԽՍՀՄ ռուբլու չափով: Գումարն ուղղված է եղել Երևան քաղաքում բնակարան ձեռք բերելուն, սակայն մինչ այսօր ո՛չ բնակարանն է տրամադրվել, ո՛չ էլ գումարն է փոխհատուցվել:

Մեկ այլ բողոքով քաղաքացին տեղեկացրել է, որ 1980 թվականին հաշվառվել է ՀԽՍՀ պետական բնակարանային հերթում: 1990 թվականին Երևան քաղաքում գտնվող անավարտ շենքում բնակարան ստանալու վերաբերյալ որոշում է ստացել, սակայն, «ՀՀ պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» օրենքի 29-րդ հոդվածով սահմանված բնակարանային ֆոնդի սեփականաշնորհումը մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը չիրականացնելու պատճառով բնակարանները հանձնվել են համայնքներին և տնօրինվել են օրենքով սահմանված կարգով, ուստի, ինքը զրկվել է և՛ հատուցում, և՛ բնակարան ստանալու հնարավորությունից:

Մտահոգիչ է այն, որ ՀՀ կառավարությունը 2023 թվականի հունվարի 12-ին ընդունել է «ՀՀ կառավարության որոշումը ՀՀ կառավարության 1997 թվականի ապրիլի 30-ի թիվ 110, 2000 թվականի օգոստոսի 2-ի թիվ 432 և 2002 թվականի մարտի 12-ի թիվ 229 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 42-Ն որոշումը, որի արդյունքում անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերն այլևս ***զրկվել են նախատեսված դրամական օգնությունը ստանալու իրավական հնարավորությունից***:

Այսպես, ըստ նշված իրավական ակտի նախագծի ընդունման հիմնավորման[80]՝ ՀՀ 2021 թվականի և ՀՀ 2022 թվականի պետական բյուջեներով այդ միջոցառման գծով գումարներ նախատեսված չեն եղել: Հաշվի է առնվել նաև այն հանգամանքը, որ կոոպերատիվների ձևավորման և փայավճարների կատարման գործընթացում պետության և կոոպերատիվների փայատերերի միջև որևէ իրավահարաբերություն չի ծագել, ուստի և, կոոպերատիվների փայատերերին փոխհատուցում տրամադրելու ՀՀ կառավարության պատրաստակամությունը չի հանգեցնում փայատերերին դրամական օգնություն տրամադրելու պոզիտիվ պարտականության առաջացմանը, ուստի, միջոցառումը շարունակելը նպատակահարմար չէ:

Նախագծի վերաբերյալ Պաշտպանը ներկայացրել է կարծիք՝ նշելով, որ իրավաչափ չէ որոշման ընդունման հիմնավորումն առ այն, որ նախագծի ներկայացումը պայմանավորված է գործնականում կիրառություն չունեցող իրավական ակտերը (իրավական ակտերի դրույթները) ուժը կորցրած ճանաչելու անհրաժեշտությամբ, առանց հաշվի առնելու հանրային իրազեկվածության խիստ ցածր մակարդակը: Պաշտպանը նշել է, որ հիշատակված հիմնավորումների համատեքստում հնարավոր անձանց կողմից փոխհատուցում ստանալու հավանականության վերացումն արդարացված չէ, համանման իրավիճակում արդեն իսկ փոխհատուցում ստացած և նման հնարավորություն ունեցող, սակայն մինչ այս պահը գործողություններ չձեռնարկած անձանց համար հավասար պայմաններ ապահովելու տեսանկյունից, ինչպես նաև հիմնավորված չէ պետական իշխանության համապատասխան մարմինների մոտ անհրաժեշտ տեղեկատվության

80 Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.e-draft.am/projects/4830/justification, 2024 թվականի մարտի 28-ի դրությամբ:

բացակայությամբ պայմանավորված՝ անձանց արդեն իսկ ընձեռված իրավունքների սահմանափակումը:

ՄԻՊ-ին ներկայացված բողոքների ուսումնասիրությունը նույնպես վկայում է, որ կարևոր է անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերի կողմից ԽՍՀՄ ռուբլով վճարված գումարի արժեզրկումից կրած կորուստների դիմաց հատուցման քաղաքականությունը նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար իրավական հնարավորություններով ապահովման սկզբունքի վրա կառուցելը:

Մասնավորապես, ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածն ամրագրում է յուրաքանչյուրի սեփականության իրավունքը՝ երաշխավորելով, որ ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Այսպես, ՄԻԵԴ-ը X v. Germany գործով կայացված որոշմամբ արձանագրել է.
«գույք» հասկացությունը չի վերաբերում միայն «շոշափելի գույքին»: Գույք են համարվում նյութական այլ արժեքները ևս, այդ թվում՝ այնպիսի պահանջները, որոնց կապակցությամբ դիմողը կարող է վիճարկել, որ ինքն առնվազն «օրինական հավակնություններ» ունի, որ դրանք կիրագործվեն[81]*:*

ՄԻԵԴ-ը Pressos Compania Naviera SA and others v. Belgium գործով կայացված վճռով նշել է.
փոխհատուցման պահանջի իրավունքը առաջանում է վնասի առկայության դեպքում: Հետևաբար, պահանջն իրենից նյութական արժեք է ներկայացնում և համարվում է գույք: Բացի դրանից, նախքան նոր օրենսդրության ընդունումը, համաձայն Բելգիայի Վճռաբեկ դատարանի նախադեպերի, դիմողները կարող էին վիճարկել, որ ներպետական դատարանները պետք է որոշում կայացնեին իրենց օգտին, այսինքն՝ ընդունեին խնդրո առարկա դեպքերի կապակցությամբ իրենց ներկայացրած պահանջները[82]*:*

Այսպիսով, վերոնշյալ նախադեպային պրակտիկայի հաշվառմամբ՝ Պաշտպանն արձանագրում է, որ սեփականության իրավունքը հարգելու պարտավորությունը ներառում է թե՛ բացասական, թե՛ դրական պարտավորություններ: Սոցիալական արդարության, սեփականության իրավահարաբերությունների կայունության նկատմամբ պետության հանձնառության տեսանկյունից կարևոր է, որպեսզի վերջինս անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերի կողմից ԽՍՀՄ ռուբլով վճարված գումարի արժեզրկումից կրած կորուստների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունքի պաշտպանությունը ապահովի նաև կոնկրետ միջոցառումների ձեռնարկմամբ՝ փոխհատուցում ստանալու իրավունքի՝ որպես սեփականության իրավունքի պաշտպանությունը երաշխավորելու նպատակով:

Այսպիսով, Պաշտպանն ընդգծում է, որ անհրաժեշտ է մշակել և իրականացնել իրավունքահեն քաղաքականություն, որը հնարավորություն կընձեռի նույն

81 Տե՛ս *Իքսն ընդդեմ Գերմանիայի* գործով վճիռը, գանգատ թիվ 3672/68:
82 Տե՛ս Պրեսսո կոմպանիա Նավիերան և այլք ընդդեմ Բելգիայի գործով վճիռը, գանգատ թիվ 17849/91:

կարգավիճակում գտնվող անձանց ստանալ հավասար իրավական հնարավորություններ իրենց իրավունքներն իրացնելու տեսանկյունից: Կարևոր է առաջնորդվել միջազգային այնպիսի չափանիշներով, որոնց մեկնաբանումը հնարավորություն կտա գույք դիտարկել ոչ միայն գոյություն ունեցող նյութական միջոցը, այլ նաև նյութական միջոցը ձեռք բերելու լեգիտիմ ակնկալիքը[83]:

Ելնելով վերոգրյալից և կարևորելով անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերի կողմից Խորհրդային Միության ռուբլով վճարված գումարի արժեզրկումից փայատերերի կրած կորուստների դիմաց դրամական օգնության տրամադրման գործընթացի շարունակականության ապահովումը, անհրաժեշտ է ձեռնամուխ լինել օրենսդրական մակարդակում խնդրի լուծմանը՝ քննարկման առարկա դարձնելով անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերի կողմից Խորհրդային Միության ռուբլով վճարված գումարի արժեզրկումից փայատերերի կրած կորուստների դիմաց դրամական օգնության տրամադրման գործընթացի վերսկսումը:

83 Առավել մանրամասն տե՛ս Տրգոն ընդդեմ Խորվաթիայի (Trgo v. Croatia) գործով 2009թ թվականի սեպտեմբերի 11-ի վճիռը, գանգատ թիվ 35298/04, կետ 44:

ԳԼՈՒԽ 3. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

1. Աշխատանքից ազատվելիս աշխատողների հետ վերջնահաշվարկ չկատարելը կամ մասնակի կատարելը

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ հաշվետու տարում աշխատանքային իրավունքների հետ կապված առավել տարածված խնդիրները վերաբերել են աշխատանքից ազատվելիս աշխատողների հետ վերջնահաշվարկ չկատարելուն, ոչ ամբողջովին կատարելուն կամ օրենսդրությամբ սահմանված ժամկետը չպահպանելով կատարելուն: Նշված խնդիրներին Պաշտպանը մշտապես անդրադառնում է իր գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդումներում[84], արտահերթ հրապարակային զեկույցներում[85], իրազեկող տեսանյութերում[86]:

Հարկ է նշել, որ կոնկրետ դեպքերով վերջնահաշվարկի կատարման վերաբերյալ բողոքների մի մասը Պաշտպանի աջակցությամբ ստացել է դրական լուծում: Հաշվի առնելով այն, որ վերջնահաշվարկի ուշացումների, ոչ ամբողջական վճարումների կամ չվճարումների խախտումները հիմնականում վերաբերել են մասնավոր ոլորտին, իսկ Պաշտպանը մասնավոր կազմակերպությունների դեմ բողոքներ քննարկելու իրավասություն չունի, ՄԻՊ աշխատակազմ ստացված գրավոր բողոքներն ուսումնասիրվել և փոխանցվել են ԱԱՏՄ-ին: Դրանց ընթացքի նկատմամբ իրականացվել է հետագա հետևողական աշխատանք:

Պաշտպանը վերահաստատում է նախկինում արտահայտած այն դիրքորոշումը, ըստ որի՝ աշխատանքային պայմանագիրը լուծելիս աշխատողի հետ վերջնահաշվարկ կատարելը գործատուների ոչ թե իրավունքն է, այլ պարտականությունը, իսկ գործատուի և աշխատողի համաձայնությամբ վերջնահաշվարկի այլ կարգ նախատեսելու հնարավորությունը վերաբերում է ոչ թե վերջնահաշվարկ կատարելու կամ չկատարելու կողմերի հայեցողությանը, այլ վերջնահաշվարկի կատարման կարգին, օրինակ՝ ժամկետին: Այսինքն՝ գործատուն որևէ կերպ իրավասու չէ սահմանափակելու աշխատանքից ազատվելուց հետո աշխատողի հետ վերջնահաշվարկ կատարելու իրավունքը:

Գործատուների կողմից վերջնահաշվարկ կատարելու կարգի պատշաճությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում պահել նշված խնդիրը, ինչպես նաև ջանքեր գործադրել՝ բարձրացնելու աշխատողների իրազեկվածությունն իրենց աշխատանքային իրավունքների և դրանց պաշտպանության կառուցակարգերի վերաբերյալ:

Նշվածի կապակցությամբ Պաշտպանի 2023 թվականի տարեկան հաղորդման կազմման նպատակով ներկայացված համապատասխան հարցադրմանն ի պատասխան (առ այն, թե ի՞նչ միջոցառումներ են իրականացվել աշխատանքային իրավունքների վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու ուղղությամբ)՝ ԱԱՏՄ-ն տրամադրել է

84 Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ, 2019, 2020 և 2021 թվականների տարեկան հաղորդումները (համապատասխանաբար՝ էջեր 149-150, 225-227, 202-204: Էլեկտրոնային տարբերակները հասանելի են հետևյալ հղումներով՝
https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf, 2024 թվականի մարտի 28-ի դրությամբ:
85 Տե՛ս Պաշտպանի 2022 թվականի «Աշխատանքային իրավունքների մի շարք խնդիրներ՝ ըստ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ուղղված դիմում-բողոքների քննարկման» արտահերթ հրապարակային զեկույցը: Էլեկտրոնային տարբերակը հասանելի է հետևյալ հղումով՝
https://ombuds.am/images/files/3e8c442679f3517741050c3a1bcc4fa8.pdf, 2024 թվականի մարտի 28-ի դրությամբ:
86 Հասանելի է հետևյալ հղումներմով՝ https://www.ombuds.am/am/site/VideoGalleryView/614, 2024 թվականի մարտի 28-ի դրությամբ:

տեղեկատվություն այն մասին, որ 2023 թվականին տեսչական մարմնի մասնագետների կողմից պարբերաբար իրականացվել են իրազեկման միջոցառումներ՝ հանրապետության ողջ տարածքում, որոնց մասնակցել են Երևանի և մարզերի աշխատողներ և գործատուների ներկայացուցիչներ: Իրազեկման սեմինարների ընթացքում մասնագետները ներկայացրել են տեսչական մարմնի գործառույթները, լիազորությունների շրջանակը, աշխատողներն իրազեկվել են իրենց աշխատանքային իրավունքների մասին: Դրանց վերաբերյալ հրապարակումները զետեղվել են ԱԱՏՄ պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում: Իրազեկվածության բարձրացման նպատակով պարբերաբար նյութեր են պատրաստվել և տեղադրվել տեսչական մարմնի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան հարթակում: Գործընկեր կազմակերպությունների կողմից հրավիրված միջոցառումներին ևս պարբերաբար մասնակցել են ԱԱՏՄ ներկայացուցիչները:

2023 թվականին պետական տարբեր մարմինների, աշխատանքային իրավունքների պաշտպանության ոլորտում գործող ՀԿ-ների, ինչպես նաև լրատվամիջոցների հրավերներով Պաշտպանը և նրա ներկայացուցիչները մասնակցել են աշխատանքային իրավունքների ոլորտում առկա խնդիրների (այդ թվում՝ վերջնահաշվարկի չկատարման խնդրի հետ կապված) բազմաթիվ քննարկումների[87]:

Այսպիսով, Պաշտպանն ընդգծում է, որ անհրաժեշտ է՝

- ✓ ***մշտապես առաջնորդվել օրենսդրության պահանջների պահպանմամբ. աշխատանքից ազատվող աշխատողի հետ կատարել պատշաճ և լրիվ վերջնահաշվարկ՝ պահպանելով նաև օրենսդրությամբ սահմանված ժամկետները.***
- ✓ ***պարբերաբար կազմակերպել միջոցառումներ աշխատանքային իրավունքների և դրանց պաշտպանության կառուցակարգերի վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով:***

2. Հաստիքների կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության օրենսդրական չափորոշիչների բացակայությունը

Մարդու իրավունքների պաշտպանն իր տարեկան հաղորդումներում մշտապես բարձրացրել է հաստիքների կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության օրենսդրական չափորոշիչների բացակայության խնդիրը, ինչով պայմանավորված՝ գործատուները ձեռք են բերում այդ նախապատվությունը որոշելու լայն հայեցողություն[88]:

Օրենսդրական հստակ չափորոշիչների բացակայությունը գործատուներին իրավական հնարավորություն է տալիս հաստիքի կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվությունը որոշելիս կիրառել հայեցողական, աշխատողների համար ոչ կանխատեսելի մոտեցում՝ հաշվի չառնելով կրճատվող աշխատողների աշխատանքային ստաժը, առավել բարձր դասային աստիճան կամ կատարողականի գնահատման ավելի բարձր արդյունքներ ունենալը և այլն: Միևնույն ժամանակ, նման աշխատողներին աշխատանքից ազատելիս մասնագիտական

87 Տե՛ս օրինակ՝ https://ombuds.am/am/site/VideoGalleryView/817, 2024 թվականի մարտի 28-ի դրությամբ:

88 Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2019, 2020 թվականի տարեկան հաղորդումները, (համապատասխանաբար՝ էջեր 153-154, 227-230, էլեկտրոնային տարբերակները հասանելի են հետևյալ հղումներով՝
https://www.ombuds.am/images/files/15b2661f76d10eb07746d7d4d4dec84f.pdf, 2024 թվականի մարտի 28-ի դրությամբ:
https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf, 2024 թվականի մարտի 28-ի դրությամբ:

որակավորմանը, ունակություններին և առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, որպես կանոն, չի առաջարկվում:

2023 թվականին ևս Պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքներով բարձրաձայնվել է հաստիքների կրճատման հիմքով աշխատանքից ազատելիս կրճատվող հաստիքը զբաղեցնող աշխատակիցների միջև ընտրության չափանիշների բացակայության խնդիրը:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված բողոքով անձը տեղեկացրել է, որ զբաղեցրել է քաղաքացիական ծառայության պաշտոն: Երկրորդ երեխայի ծննդով պայմանավորված՝ գտնվել է մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդում: Գործատուն զանգի միջոցով վերջինիս տեղեկացրել է, որ հաստիքների կրճատման պատճառով աշխատանքից ազատվել է: Ընդ որում, աշխատանքից ազատելիս դիմողին այլ աշխատանք չի առաջարկվել:

Նշվածի կապակցությամբ գրություն է հասցեագրվել իրավասու պետական մարմիններին: Ստացված պարզաբանման համաձայն՝ կրճատվել են այն հաստիքները և զբաղեցված պաշտոնները, որոնց բացակայությունը չի խոչընդոտել աշխատակազմի ստորաբաժանումների աշխատանքների պատշաճ իրականացմանը:

Անդրադառնալով արձակուրդում գտնվող աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծելու հարցին՝ հարկ է նշել, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հիմքերով աշխատանքային պայմանագիրը գործատուն կարող է լուծել, եթե իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում աշխատողին առաջարկել է նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ աշխատողը հրաժարվել է առաջարկված աշխատանքից: Իսկ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետն արգելում է աշխատանքային պայմանագրի լուծումը գործատուի նախաձեռնությամբ աշխատողի՝ արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում:

ՀՀ օրենսդրության կարգավորումները վկայում են, որ պետությունն ընդունում է որոշակի խումբ անձանց, օրինակ՝ հղի կանանց և մինչև մեկ տարեկան երեխա խնամողների համար հատուկ արտոնությունների նախատեսումը, ինչպիսին է գործատուի նախաձեռնությամբ որոշակի դեպքերում աշխատանքային պայմանագրի լուծման արգելքը:

ՍԴ-ն քննարկման առարկա դարձնելով աշխատանքային պայմանագիրը լուծելիս աշխատողին օրենքով տրված երաշխիքները՝ նշել է, որ աշխատանքային օրենսգրքի 114-րդ հոդվածով սահմանվում են գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու արգելքները, որոնք աշխատողների իրավունքների պաշտպանության լրացուցիչ երաշխիքներ են: Եթե գործատուն նախատեսում է աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատում և դրա արդյունքում այս կամ այն աշխատողի հետ աշխատանքային պայմանագրի լուծում, ապա այդ գործընթացը նախաձեռնելու պահից գործատուն պետք է ստուգի՝ արդյոք աշխատանքային օրենսգրքի 114-րդ հոդվածով նախատեսված այս կամ այն երաշխիքը տարածվում է տվյալ աշխատողի վրա: Այսպիսով, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման դեպքում առկա են ընդհանուր և հատուկ երաշխիքներ: Ընդհանուր երաշխիքը գործատուի կողմից իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում աշխատողին իր մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին

համապատասխան այլ աշխատանք առաջարկելու պարտականությունն է: Միաժամանակ, օրենսդրությամբ նախատեսված են նաև հատուկ երաշխիքներ, որոնք արգելում են աշխատանքային պայմանագրի լուծումը, ուստի այդ պարագայում համապատասխան երաշխիքներից օգտվող աշխատողներին այլ աշխատանք առաջարկելու անհրաժեշտություն չկա, քանի որ նշված աշխատողների հետ աշխատանքային պայմանագրի լուծումն արդեն իսկ արգելված է[89]:

Պաշտպանը ողջունելի է համարում 2023 թվականին ՀՀ աշխատանքային օրենսգրքում կատարված փոփոխությունը, համաձայն որի՝ հաստիքների կրճատման դեպքում աշխատանքում մնալու նախապատվության իրավունք է սահմանվել հաշմանդամության կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողի, ինչպես նաև հաշմանդամության կենսաթոշակ ստացող նախկին զինծառայողի կամ զոհված կամ անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողի ընտանիքի անդամի համար:

Այդուհանդերձ, աշխատանքը կամայական կորցնելու իրավունքի համատեքստում դեռևս առկա չեն բավարար իրավական երաշխիքներ իրավական որոշակիության և կանխատեսելիության տեսանկյունից բոլոր այն աշխատողների համար, որոնք չեն պատկանում նշված սոցիալական խմբին:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանը կարևորում է այնպիսի կառուցակարգերի մշակումն ու իրացումը, որոնք հնարավորություն կտան կանխատեսելի և որոշակի դարձնելու հաստիքների կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության տրամադրմանը վերաբերելի հարաբերությունները,այդ թվում՝ կոնկրետ չափորոշիչների օրենսդրական ամրագրման միջոցով:

3. Աշխատանքային իրավունքների և օրենսդրության նկատմամբ պետական հսկողություն իրականացնող արտադատական մարմնի բացակայությունը և աշխատանքային իրավունքների վերաբերյալ իրազեկման պակասը

Նախորդ տարիների ընթացքում՝ սկսած 2015 թվականից, Պաշտպանը թե՛ տարեկան հաղորդման շրջանակում, թե՛ հանրային քննարկումների ընթացքում մշտապես բարձրաձայնել է աշխատանքային իրավունքների և օրենսդրության կիրառման նկատմամբ պետական հսկողություն իրականացնող արտադատական մարմնի բացակայության և դրանից բխող խնդիրների մասին:

Բազմիցս ներկայացվել է այն տեսակետը, որ աշխատանքային իրավունքների պաշտպանության պատշաճ համակարգի տեսանկյունից կարևոր է ստեղծել արտադատական մարմին կամ գործող Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին վերապահել այնպիսի լիազորություններ, որոնցով վերջինս, բացի աշխատանքի անվտանգության ապահովման և առողջության պահպանման նորմեր պարունակող իրավական ակտերի կիրարկման նկատմամբ պետական հսկողությունից և վերահսկողությունից, իրավասու կլինի վերահսկելու նաև աշխատանքային իրավունքների պահպանումը և հանդես գալու որպես այդ իրավունքների խախտումները կանխարգելող մարմին:

89 Տե՛ս ՍԴ 2019 թվականի մարտի 19-ի ՍԴՈ-1449 որոշման 4.3-րդ կետը:

Վերոգրյալի առնչությամբ պետք է նկատել, որ «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-265-Ն ՀՀ օրենքով ՀՀ աշխատանքային օրենսգրքում իրականացվել են փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտել 2021 թվականի հուլիսի 1-ից: Այդ փոփոխություններով Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին վերապահվել է աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի այլ պահանջների, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու և պատասխանատվության միջոցներ կիրառելու լիազորություն:

Չնայած նշվածի մարմնի առկայությանը՝ դրա հետ մեկտեղ, ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկով իր հերթին նախատեսվել է ներդնել աշխատանքային վեճերի լուծման արտադատական համակարգ:

Այդ առումով կարևոր է հստակեցնել նախատեսվող արտադատական մարմնի լիազորությունների ծավալը և բացառել դրանց նույնացումը Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին վերապահված լիազորությունների ծավալի հետ:

Նշված հարցի կապակցությամբ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստացվել է պարզաբանում այն մասին, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 33-րդ հոդվածի կարգավորումների համաձայն՝ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինն իրականացնում է գործատուների կողմից աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողություն, իսկ աշխատանքային վեճերի լուծման արտադատական համակարգի ներդրումը նպատակ ունի ապահովել վեճերի լուծումը առավել կարճ ժամկետներում և առանց դատական ծախսերի:

Վերը նշվածն ամփոփելով՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ընդգծել է, որ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինն իրականացնում է աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ միայն պետական վերահսկողություն և չունի աշխատանքային վեճերի լուծման իրավասություն:

Հետևաբար, այս առումով կարևորվում է աշխատանքային վեճերի լուծման արդյունավետ և այլընտրանքային տարբերակի՝ աշխատանքային վեճերի լուծման արտադատական համակարգի շուտափույթ ներդրման անհրաժեշտությունը:

Աշխատանքային վերահսկողության համակարգ ունենալու պարտավորության առկայության կարևորության մասին նշված է միջազգային մի շարք փաստաթղթերում, ինչպիսին է օրինակ՝ Վերանայված եվրոպական սոցիալական խարտիան[90], որով հստակ սահմանվում է պետությունների՝ աշխատանքային վերահսկողության համակարգ ունենալու պարտավորությունը:

Այն հարցին, թե ինչ փուլում է գտնվում Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային վեճերի լուծման արտադատական համակարգի մոդելի ներդրումը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պատասխանել է, որ ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածով հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության

90 Հասանելի է https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=24230 հղումով:

միջոցառումների ծրագրի՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը վերաբերող հատվածի 2-րդ նպատակի 2.4-րդ կետով նախատեսվել է «աշխատանքային վեճերի լուծման արտադատական համակարգի ներդրմանն ուղղված օրենքներին հավանություն տալու մասին ՀՀ կառավարության որոշումն ընդունելու» միջոցառումը, որի համար, որպես վերջնաժամկետ սահմանված է 2025 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակը: Մինչ այդ արդեն իսկ կազմվել է Աշխատանքային վեճերի լուծման արտադատական համակարգի ներդրման մոդելի և ֆինանսական գնահատականի վերաբերյալ վերլուծությունը: Վերլուծությամբ ներկայացվել է Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային վեճերի լուծման արտադատական համակարգի ներդրման համար նախընտրելի մոդելի վերաբերյալ առաջարկություն և մոդելի ներդրման համար պահանջվող ֆինանսական միջոցների գնահատականը: Ըստ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ զուգահեռ նաև առաջիկայում պետք է աշխատանքներ տարվեն վերը նշված վերլուծության հիման վրա համապատասխան օրենսդրական փոփոխություն իրականացնելու ուղղությամբ:

Պաշտպանը բազմիցս անդրադարձել է նաև աշխատանքային իրավունքների վերաբերյալ աշխատողների իրազեկվածության պակասի և դրա հետևանքով առաջ եկող խնդիրների մասին՝ նկատի ունենալով այն, որ մարդու իրավունքների խախտման հանգեցնող պատճառներից մեկն իրազեկվածության պակասն է:

Աշխատանքային իրավունքների վերաբերյալ իրազեկվածության ցածր մակարդակը շատ հաճախ հանգեցնում է ոչ միայն իրավունքների խախտման, այլև իրավունքի խախտման դեպքերի չբացահայտման, իսկ բացահայտվելու պարագայում աշխատողի՝ դեպքի բարձրաձայնման, սեփական իրավունքների վերականգնման հնարավորության և վերջինիս օրենսդրական մեխանիզմների մասին անտեղյակության:

Այսպիսով, աշխատանքային իրավունքների խախտումների քանակը, դրանց կանխումը և վերականգնումը ուղիղ համեմատակ են իրազեկվածության մակարդակին:

Մարդու իրավունքների պաշտպանն իր լիազորությունների շրջանակում շարունակական կերպով տարբեր գործիքների կիրառմամբ իրականացնում է աշխատանքային իրավունքների վերաբերյալ իրազեկող միջոցառումներ, ինչպես նաև հրապարակում իրազեկող տեսանյութեր, ուղեցույցներ[91]:

Պաշտպանի աշխատակազմը աշխատանքային իրավունքների ենթադրյալ խախտումների իրավիճակներում քաղաքացիներին խորհրդատվություն է տրամադրում իրենց իրավունքների առնչությամբ, ներկայացնում դրանց պաշտպանության կառուցակարգերը, աշխատանքային վեճերի լուծման տարբերակները և այլն:

Ի հավելումն պետք է նշել, որ աշխատողների և գործատուների շրջանում իրազեկվածության բարձրացման անհրաժեշտությանը, նաև աշխատանքային իրավունքների մի շարք այլ խնդիրներին Պաշտպանն անդրադարձել է նաև իր՝ «Աշխատանքային իրավունքների մի շարք խնդիրներ՝ ըստ ՀՀ մարդու իրավունքների

91 Տե՛ս «Աշխատողների աշխատավարձերից անհիմն պահումներ, աշխատանքից անհիմն ազատումներ, վերջնահաշվարկի չիրականացում. մարդու իրավունքների պաշտպանի արձանագրած խնդիրները», հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/1223 հղումով, 2024 թվականի փետրվարի 11-ի դրությամբ, «Համաճարակային իրավիճակով պայմանավորված արտակարգ դրությունը հանգեցրել է աշխատանքային բազմաթիվ վեճերի ու խնդիրների:», հասանելի է https://www.facebook.com/watch/?v=1180620635633587 հղումով, 2024 թվականի փետրվարի 11-ի դրությամբ:

պաշտպանին ուղղված դիմում-բողոքների քննարկման» արտահերթ հրապարակային զեկույցի[92] շրջանակներում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2023 թվականի ընթացքում աշխատանքային իրավունքների, այդ թվում՝ դրանց պաշտպանության միջոցների վերաբերյալ հանրային իրազեկման աշխատանքների շրջանակում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացվել են մի շարք աշխատանքներ: Հրապարակումներ են տեղադրվել, որոնք (տեղեկատվական նյութեր, տեսանյութեր, հարցազրույցներ, մամուլի ասուլիսներ) առնչվել են աշխատող-գործատու հարաբերություններին, Աշխատանքային օրենսգրքում կատարված փոփոխություններին, ամենամյա արձակուրդի տրամադրման նոր կարգավորումներին, հեռավար աշխատանքի կազմակերպման ընթացակարգին և այլն:

Մասնավորապես՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայքում, ֆեյսբուքյան հարթակում, ինչպես նաև յութուբյան և տելեգրամյան ալիքներում տեղադրվել են հրապարակումներ, որոնցից յուրաքանչյուրը տարածվել է մի քանի տասնյակ լրատվամիջոցներում:

Աշխատանքային իրավունքների, այդ թվում՝ դրանց պաշտպանության միջոցներին առնչվող մի շարք թեմաներին անդրադարձ է կատարվել նաև «Սոցիալական հարթակ», ինչպես նաև «Հարց՝ քաղաքացուց» հաղորդումների շրջանակում: Վերոնշյալից զատ, զանգվածային լրատվամիջոցների հետ ակտիվ համագործակցությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացված աշխատանքները լուսաբանվել են նաև վերջիններիս կողմից՝ հարցազրույցների, ռեպորտաժների և այլ ձևաչափերով:

Այսպիսով, հարկ է ընդգծել, որ իրազեկման աշխատանքներն ունեն բացառիկ կարևորություն իրավունքների խախտման կանխարգելման, խախտումների բացահայտման և հետագայում՝ բացառման տեսանկյունից: Ուստի կարևոր է իրազեկման միջոցառումների շարունակական և համակարգային տրամաբանությամբ իրականացումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***սահմանված ժամկետներում իրականացնել աշխատանքային վեճերի լուծման արտադատական մարմնի ստեղծումը,***
- ✓ ***զանգվածային լրատվության և այլ հնարավոր միջոցներով պարբերաբար հասարակությանն իրազեկել աշխատանքային իրավունքների և դրանց պաշտպանության կառուցակարգերի վերաբերյալ:***

4. Գործադուլի իրավունքի սահմանափակումը

Մարդու իրավունքների պաշտպանը տարիներ շարունակ իր տարեկան հաղորդումներում անդրադարձել է գործադուլի իրավունքի իրացման խնդիրներին:

Հայաստանի Հանրապետությունում թեև գործադուլի իրավունքն ամրագրված է, սակայն դրա իրականացման կառուցակարգերը պարզ չեն, որի արդյունքում գործնականում հնարավոր չի լինում օրինական գործադուլ իրականացնել:

92 Տե՛ս «Աշխատանքային իրավունքների մի շարք խնդիրներ՝ ըստ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ուղղված դիմում-բողոքների քննարկման» արտահերթ հրապարակային զեկույցը, 2022 փետրվար, հասանելի է https://ombuds.am/images/files/3e8c442679f3517741050c3a1bcc4fa8.pdf հղումով:

Գործադուլի իրավունքը երաշխավորվում է ՀՀ Սահմանադրության 58-րդ հոդվածով, ըստ որի՝ աշխատողները իրենց տնտեսական, սոցիալական կամ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով ունեն գործադուլի իրավունք:

Գործադուլի իրավունքը սահմանված է նաև Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրով[93], Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայով[94] և այլ ներպետական ու միջազգային փաստաթղթերով: Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) Վարչական խորհրդի Միավորման ազատության կոմիտեի որոշումները և սկզբունքներն ամփոփող ժողովածուի[95] 5-րդ հրատարակության 522-րդ կետով գործադուլի իրավունքը համարվում է այն էական միջոցներից, որի միջոցով աշխատողները և նրանց կազմակերպությունները կարող են նպաստել և պաշտպանել իրենց տնտեսական և սոցիալական շահերը, իսկ նույն ժողովածուի 523-րդ կետով գործադուլի իրավունքը բնական կերպով բխում է միավորվելու ազատության իրավունքից, որը պաշտպանված է ԱՄԿ-ի N87 Կոնվենցիայի դրույթներով: Այսպիսով, գործադուլի իրավունքը ԱՄԿ մարմինների կողմից դիտարկվում է որպես ԱՄԿ թիվ 87 կոնվենցիայով երաշխավորված միավորման ազատության իրավունքի իրականացման ուղղակի հետևանք: Գործադուլի կազմակերպման և իրականացման իրավունքի ներառումը ԱՄԿ թիվ 87 կոնվենցիայի շրջանակներում բխում է աշխատողների կազմակերպությունների կողմից աշխատողների տնտեսական և սոցիալական շահերը պաշտպանելու նպատակից:

Գործադուլի իրականացման հետ կապված իրավահարաբերությունները ՀՀ-ում կարգավորվում են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 11-րդ գլխով:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 74-րդ հոդվածով գործադուլ հայտարարելու մասին որոշում ընդունելու իրավունքը վերապահվել է արհեստակցական միությանը: Մինչդեռ, ՀՀ-ում ոչ բոլոր կազմակերպություններում են գործում արհեստակցական միություններ: Գործատուի մոտ արհեստակցական միության բացակայության դեպքում գործադուլ հայտարարելու մասին որոշման ընդունումը և գործադուլ հայտարարելու հետ կապված այլ գործառույթների իրականացումն աշխատողների ժողովի (համաժողովի) որոշմամբ կարող են վերապահվել համապատասխան ճյուղային կամ տարածքային արհեստակցական միությանը, իսկ նաև համապատասխան ճյուղային կամ տարածքային արհեստակցական միության բացակայության դեպքում գործադուլ հայտարարելու մասին որոշման ընդունումը և գործադուլ հայտարարելու հետ կապված այլ գործառույթները կարող են (է) իրականացնել աշխատողների ժողովի (համաժողովի) ընտրած ներկայացուցիչները (մարմինը) (ՀՀ աշխատանքային օրենսգիրք, 74-րդ հոդված, 1.1. մաս):

Գործադուլը ամբողջ աշխարհում համարվում է արհմիությունների հզոր գործիքներից: Գործադուլն այն գործիքներից է, որով աշխատողները բարձրացնում են իրենց բողոքը կամ անհամաձայնությունը այս կամ այն հարցի վերաբերյալ: Գործադուլի իրավունքի իրացումը կարևորագույն երաշխիք է աշխատողի համար, ուստի այն կարգավորող նորմերը պետք է լինեն այնպիսին, որ անհիմն չսահմանափակեն կամ չդժվարացնեն տվյալ իրավունքի իրացումը:

93 Տե՛ս Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիրը, հասանելի է http://www.irtek.am/views/act.aspx?aid=37347 հղումով:
94 Տե՛ս Վերանայված եվրոպական սոցիալական խարտիան, հասանելի է https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=24230 հղումով:
95 Հասանելի է https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---ed_norm/---normes/documents/publication/wcms_090632.pdf հղումով:

Մինչև օրենսդրական փոփոխությունները, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 73-րդ հոդվածի տրամաբանությամբ՝ գործադուլը կարող էր օրինական համարվել միայն կոլեկտիվ պայմանագրի կնքման հետ կապված կոլեկտիվ վեճը չլուծվելու դեպքում:

Վերոգրյալ կարգավորման առնչությամբ 2007 թվականին Սահմանադրական դատարանն իր որոշմամբ[96] հստակ արձանագրել էր, որ աշխատողի գործադուլի իրավունքը միայն կոլեկտիվ վեճի առկայությամբ սահմանափակելն անթույլատրելի է, քանզի գործադուլի իրավունքն առնչվում է ոչ միայն «աշխատողներ-գործատու» իրավահարաբերություններին, այլև «աշխատողներ-երրորդ անձինք (հասարակություն)», «աշխատողներ-պետական մարմիններ», «գործատու-պետական մարմիններ» փոխհարաբերություններին:

Նույն որոշմամբ Սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածի 3-րդ մասին և 43-րդ հոդվածին հակասող և անվավեր էր ճանաչել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 73-րդ հոդվածում ամրագրված դրույթները՝ այնքանով, որքանով գործադուլի իրավունքը պայմանավորում են միայն կոլեկտիվ պայմանագրի կնքման հետ կապված կոլեկտիվ վեճը չլուծվելու հանգամանքով և արգելափակում են գործադուլի իրավունքը նոր հանգամանքներում:

Որպես դրական փոփոխություն պետք է ընդգծել, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքում կատարված օրենսդրական փոփոխությունների համաձայն՝ գործադուլ կարող է իրականացվել նաև հետևյալ դեպքերում.

1) աշխատանքային վեճն աշխատողի և գործատուի համաձայնությամբ չլուծվելու դեպքում,

2) կոլեկտիվ աշխատանքային վեճը չլուծվելու դեպքում,

3) գործատուի կողմից հաշտեցման գործընթաց իրականացնելուց խուսափելու դեպքում,

4) հաշտեցման հանձնաժողովի՝ Աշխատանքային օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան ընդունած որոշումը գործատուի չկատարելու դեպքում,

5) նախօրոք կնքված կոլեկտիվ աշխատանքային պայմանագրով ստանձնած պարտավորությունները գործատուի չկատարելու դեպքում,

6) կոլեկտիվ բանակցություններ վարելու վերաբերյալ գրավոր ծանուցում ստացած գործատուի՝ Աշխատանքային օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված ժամկետում կոլեկտիվ բանակցություններին մասնակցելու իր դիրքորոշման մասին կոլեկտիվ բանակցությունների ցանկություն հայտնած կողմին չտեղեկացնելու դեպքում:

Ի հավելումն՝ պետք է նկատել, որ Աշխատանքի միջազգային կազմակերպության «Գործադուլի վերաբերյալ ԱՄԿ սկզբունքները» աշխատության[97] համաձայն՝ գործադուլի միջոցով կարող են բարձրացվել խնդիրներ և առաջադրվել պահանջներ, որոնք աշխատանքային պայմաններին և արհմիությունների իրավունքների երաշխավորմանը վերաբերելուց զատ կարող են ունենալ նաև քաղաքական բնույթ: Միավորումների ազատության հանձնաժողովը, սակայն, ճանաչել է գործադուլի օրինականությունը այն դեպքերում, երբ արտահայտված մասնագիտական կամ արհմիութենական պահանջները չեն հանդիսացել զուտ քաղաքական նպատակները քողարկող պատրվակ: Քաղաքական բնույթի պահանջները պետք է կապ ունենան աշխատողների իրավունքների խթանման և պաշտպանության հետ: Միավորման ազատության կոմիտեն հայտարարել է նաև, որ

96 Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2007 թվականի փետրվարի 7-ի ՍԴՈ-677 որոշումը:

97 Տե՛ս «Գործադուլի վերաբերյալ ԱՄԿ սկզբունքները», Աշխատանքի միջազգային կազմակերպություն, Ժնև, հասանելի է https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---ed_norm/---normes/documents/publication/wcms_087987.pdf հղումով:

արհմիութենական կազմակերպությունները չպետք է թույլ տան իրենց մասնագիտական պահանջները զուտ քաղաքական պահանջ դիտարկել, քանի որ դժվար է հստակ տարբերակել քաղաքական և արհմիութենական պահանջները: Այդ դեպքում արհմիութենական կազմակերպությունները կարող են իրավացիորեն պնդել, որ իրենց գործունեությանը չպետք է միջամտություն լինի:

Աշխատանքային օրենսգրքի համաձայն՝ գործադուլը հայտարարվում է այն դեպքում, երբ այդ մասին որոշումը գաղտնի քվեարկությամբ հավանության է արժանացել՝

1) գործատուի մոտ գործադուլի դեպքում (աշխատողների կոլեկտիվի գործադուլի դեպքում)՝ քվեարկությանը մասնակցած աշխատողների ձայների մեծամասնությամբ, որը չի կարող պակաս լինել աշխատողների ընդհանուր թվի կեսից,

2) գործատուի առանձնացված կամ կառուցվածքային ստորաբաժանումում կամ գրասենյակում կամ գործատուի հիմնարկում գործադուլ հայտարարելիս՝ այդ ստորաբաժանման կամ գրասենյակի կամ հիմնարկի քվեարկությանը մասնակցած աշխատողների ձայների մեծամասնությամբ, որը չի կարող պակաս լինել այդ ստորաբաժանման կամ գրասենյակի կամ հիմնարկի աշխատողների ընդհանուր թվի կեսից:

ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, սակայն, նախատեսված են նաև այն ոլորտները, որտեղ գործադուլի իրավունքը արգելվում է (ոստիկանությունում, զինված ուժերում (դրան հավասարեցված այլ ծառայություններում), պահպանության ծառայություններում, ինչպես նաև կենտրոնացված էլեկտրամատակարարման, ջերմամատակարարման, գազամատակարարման կազմակերպություններում, անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններում):

Նշված դրույթների առնչությամբ պետք է ընդգծել, որ Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն Հայաստանի վերաբերյալ 2022 թվականի եզրակացություններում հանգել էր նրան, որ Հայաստանում իրավիճակը չի համապատասխանում Վերանայված եվրոպական սոցիալական խարտիային այն հիմքով, որ՝

- գործադուլ հրավիրելու համար պահանջվող աշխատողների թվաքանակը չափազանց բարձր է,
- էներգամատակարարման ծառայություններում գործադուլներն արգելված են,
- ոստիկանությունը զրկված է գործադուլ անելու իրավունքից,
- որոշ ոլորտներում գործադուլի իրավունքի սահմանափակումները լայն են և դուրս են Խարտիայով թույլատրված սահմաններից:

Այսպիսով, ի տարբերություն գործադուլի իրավունքի իրացման դեպքերի շրջանակի, որը օրենսդրական փոփոխությունների արդյունքում ընդլայնվել է, ՀՀ աշխատանքային օրենսգրքով շարունակում են ուժի մեջ մնալ այն դրույթները, որոնցով որոշակի ոլորտներում գործադուլի իրավունքն արգելվում է:

2023 թվականի ընթացքում աշխատողների գործադուլի անցկացման իրավունքն ընդլայնելու ուղղությամբ կատարված աշխատանքները հանգում են նրան, որ 2023 թվականի մայիսի 3-ին ընդունված «ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-160-Ն օրենքով, ի թիվս այլ փոփոխությունների՝ փոփոխվել են գործադուլի իրավունքին վերաբերող և այդ իրավունքի իրացման հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերը՝ գործադուլը չպայմանավորելով միայն կոլեկտիվ աշխատանքային վեճով: Մեղմացվել են գործադուլ հայտարարելու որոշումը կայացնելուն վերաբերող իրավակարգավորումները, որոնք, նախատեսում են

ավելի քիչ աշխատողների կամահայտնության դեպքում գործադուլ հայտարարելու հնարավորություն:

Գործադուլին առնչվող իրավակարգավորումների համատեքստում թեև որոշակի դրական փոփոխություններ իրականացվել են և նվազեցվել են գործադուլի իրականացմանը ներկայացվող **պ**ահանջները, սակայն դրանք բավարար չեն գործադուլի իրավունքի՝ միջազգային չափանիշներին համապատասխան պատշաճ իրացման տեսանկյունից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ օրենսդրորեն ամրագրել գործադուլի իրավունքի առավել պարզ և կիրառելի կարգավորումներ՝ նվազեցնելով գործադուլ իրականացնելու համար պահանջվող աշխատողների թվաքանակը (օրինակ՝ գործադուլ իրականացնել ոչ թե աշխատողների ընդհանուր թվի կեսի, այլ մեկ երրորդի համաձայնությամբ),

✓ ընդլայնել այն ոլորտները, որտեղ արգելված չի լինի գործադուլի իրականացումը:

5. Խախտված աշխատանքային իրավունքների հարցով ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին անանուն բողոքներ ներկայացնելու հնարավորության բացակայությունը

Պաշտպանը դեռ «Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» 2021 թվականի տարեկան հաղորդմամբ[98] իր մտահոգությունն է հայտնել խախտված աշխատանքային իրավունքների հարցով ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին անանուն բողոքներ ներկայացնելու հնարավորության բացակայության շուրջ:

«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 2019 թվականի դեկտեմբերի 4-ին ընդունված ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 33-րդ հոդվածը շարադրվել է հետևյալ բովանդակությամբ.

«Գործատուների կողմից աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում է ոլորտի լիազորված տեսչական մարմինը՝ օրենքով նախատեսված դեպքերում կիրառելով պատասխանատվության միջոցներ:»:

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 755-Լ որոշման հավելվածի 11-րդ կետի 10-րդ ենթակետի «ժա» պարբերությունն էլ սահմանում է, որ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի լիազորություններից են, ի թիվս այլնի, աշխատանքային պայմանագրերի կնքման և (կամ) լուծման կարգի պահպանման, աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի կամ գրավոր աշխատանքային պայմանագրի բացակայությամբ աշխատանքների (անօրինական աշխատանք) դեպքերի հայտնաբերման, աշխատաժամանակի և հանգստի ժամանակի տևողությունների

98 Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի «Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» 2021 թվականի տարեկան հաղորդումը, հասանելի է https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով:

պահպանման, օրենքով սահմանված կարգով և ժամկետներում աշխատավարձի հաշվարկման ու վճարման նկատմամբ վերահսկողության իրականացումը:

Այսպիսով, աշխատանքային իրավունքների և օրենսդրության նկատմամբ պետական վերահսկողությունը 2021 թվականի հուլիս ամսից վերապահվել է միայն ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին, ինչը կարևոր և ողջունելի քայլ է:

Հարկ է նկատել, սակայն, որ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը, իրեն վերապահված լիազորություններն իրականացնելիս, անանուն բողոքներ չի քննարկում, ինչի կապակցությամբ Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ, որոնցով մարդիկ իրենց մտահոգությունն են հայտնել:

Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գործնականում շատ են դեպքերը, երբ մարդիկ, խուսափում են դիմել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին, քանի որ անանուն բողոքներ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը չի ընդունում, իսկ իրենք չեն ցանկանում, որ գործատուն նույնականացնի բողոք ներկայացրած անձին:

Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնից ստացված տեղեկատվության համաձայն՝ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը 2021 թվականի հոկտեմբերի 1-ից պետք է գործարկեր աշխատանքային իրավունքի պաշտպանության EmployeeProtect.am հարթակը, որի հիմնական նպատակն էր ուժեղացնել Հայաստանի Հանրապետությունում աշխատողների իրավունքների պաշտպանության համակարգը: EmployeeProtect.am-ն հարթակի միջոցով աշխատողները պետք է կարողանային դիմում-հայտ ներկայացնել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին: Հարթակում հետագայում պետք է նաև գործարկվեր անանուն դիմումներ ներկայացնելու գործիքը:

Մինչդեռ, պետք է նկատել, որ այժմ տնտեսվարող սուբյեկտներից և աշխատողներից անանուն բողոքների ստացման www.employeeprotect.am էլեկտրոնային հարթակը չի գործում:

Ինչ վերաբերում է անանուն դիմում-բողոքներ ներկայացնելու հնարավորությանը, ապա Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը հայտնել է, որ դիմումների ներկայացումը իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, ըստ որի՝ վարչական մարմին դիմումը ներկայացվում է գրավոր և, ի թիվս այլնի, պետք է պարունակի նաև դիմողի անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա լրիվ անվանումը, դիմողի հասցեն (իրավաբանական անձի գտնվելու վայրը) և այլն:

Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը հայտնել է նաև, որ 2023 թվականի ընթացքում Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին անանուն դիմում-բողոքներ չեն ներկայացվել, իսկ այն դեպքերում, երբ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը ստանում է աշխատանքային իրավունքի խախտման առերևույթ հատկանիշներ պարունակող անանուն տեղեկատվություն, հարուցվում է վարչական վարույթ՝ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի նախաձեռնությամբ:

Այսպիսով, եթե նույնիսկ էլեկտրոնային հարթակները հնարավորություն տան դիմում/բողոքներ ներկայացնել նաև անանուն, ապա, միևնույն է, Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնում վարչական վարույթ հարուցելու հիմքը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 31-րդ

հոդվածով նախատեսված՝ դիմումին ներկայացվող ընդհանուր պահանջները բավարարող դիմումն է:

Ուստի, շարունակում է արդիական մնալ խախտված աշխատանքային իրավունքների հարցով ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին անանուն բողոքներ ներկայացնելու հնարավորության նախատեսումը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին անանուն դիմում-բողոքներ ներկայացնելու և դրանց հիման վրա վարույթ հարուցելու հնարավորությունը:

6. Աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման իրավունքների պաշտպանություն

Աշխատողների առողջ, անվտանգ աշխատանքային պայմանների իրավունքի պատշաճ ապահովման անհրաժեշտության հարցը Պաշտպանի ուշադրության կենտրոնում է տարիներ շարունակ: Պաշտպանը դեռ 2019 թվականին հրապարակել է արտահերթ հրապարակային զեկույց[99] Եվրոպական միության իրավունքի չափանիշների տեսանկյունից ՀՀ աշխատանքային օրենսդրության վերլուծության վերաբերյալ, որով անդրադարձել է նաև աշխատողի առողջության պահպանման ոլորտի իրավունքներին:

ՀՀ Սահմանադրության 82-րդ հոդվածով երաշխավորվում է յուրաքանչյուր աշխատողի, օրենքին համապատասխան, առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների իրավունքը: Օրենսդրության մակարդակում աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 23-րդ գլխով:

Աշխատողների անվտանգության ապահովումը և առողջության պահպանությունը աշխատանքային գործունեության ընթացքում աշխատողների կյանքի և առողջության պաշտպանության համակարգն է, որը ներառում է իրավական, սոցիալ-տնտեսական, կազմակերպական-տեխնիկական, սանիտարահիգիենիկ, բուժկանխարգելիչ, վերականգնողական և այլ միջոցառումներ (ՀՀ աշխ օր. 242-րդ հոդված): Աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման նպատակով աշխատավայրում պետք է ստեղծվեն պատշաճ, անվտանգ և առողջության համար անվնաս պայմաններ:

Պաշտպանը հատկապես կարևորում է աշխատավայրում աշխատանքի անվտանգության ապահովման հարցերը, քանի որ դրանք անձի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության ապահովման նվազագույն երաշխիքներն են: Բացի այդ, այսպիսի պայմանների ապահովումը երաշխավորում է անձի արժանապատվություն ու հարգանքը դեպի աշխատողը: Իր հերթին, աշխատանքի անվտանգության ապահովումն աշխատողի մոտ մեծացնում է գործատուի հանդեպ վստահության զգացողությունը և ազդեցություն ունենում աշխատանքի արդյունավետության բարձրացման վրա:

Քաղաքացիական հասարակության կազմակերպության կողմից Հայաստանում բնակչության աշխատանքային իրավունքների պաշտպանվածության ընդհանուր վիճակը

99 Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի «Եվրոպական միության իրավունքի չափանիշների տեսանկյունից ՀՀ աշխատանքային օրենսդրության վերլուծություն» արտահերթ հրապարակային զեկույցը, 2019թ., հասանելի է https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/15436.pdf հղումով:

պարզելու նպատակով հրապարակված հետազոտությունը[100] ցույց է տվել, որ աշխատանքային պայմաններում առկա է առողջության համար վտանգավոր կամ վնասակար գործոնների ազդեցություն (թույլատրելիից բարձր աղմուկ, փոշի, վիբրացիա, ճառագայթում և այլն), այդ թվում՝ շատ բարձր: Ամենաշատ վտանգավորության աստիճանը նշվել է պաշտպանության ոլորտի աշխատողների կողմից, այնուհետև՝ շինարարության, վերամշակող արտադրության, առողջապահության:

2023 թվականի ընթացքում ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին է ներկայացվել աշխատավայրերում տեղի ունեցած թվով 20 մահվան ելքով դժբախտ դեպքերի վերաբերյալ տեղեկատվություն, իսկ աշխատանքով պայմանավորված հիվանդությունների առաջացման դեպքեր չեն արձանագրվել:

Ըստ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի, շինհրապարակներում առավել հաճախ արձանագրվում են հետևյալ խախտումները.

• ոչ բոլոր աշխատողներն են կրում անհատական պաշտպանության միջոցներ՝ պաշտպանիչ հագուստ, սաղավարտ, աշխատանքին համապատասխան կոշիկ, գլխարկ, ակնոց,

• շինհրապարակի՝ վտանգ ներկայացնող տեղամասերը կահավորված չեն կոլեկտիվ պաշտպանության միջոցներով՝ պաշտպանիչ ցանկապատ, բազրիք, նշահարում,

• չկան սանիտարակենցաղային շինություններ՝ ցնցուղարան, հանգստի սենյակ, հանդերձարան,

• վնասակար և վտանգավոր գործոնների պայմաններում աշխատողները չեն անցնում նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական բժշկական զննություն:

Շինհրապարակում խախտվում են աշխատանքի անվտանգության կանոնները՝ հաճախ դառնալով դժբախտ պատահարի պատճառ: Այդ դեպքերով պարզվում է, որ գործատու-աշխատող հարաբերությունները ձևակերպված չեն աշխատանքային պայմանագրով: Սա հաճախ հանդիպող պրակտիկա է, ինչը դժբախտ պատահարի դեպքում դժվարացնում է փոխհատուցում ստանալու գործընթացը:

Հանքարդյունաբերության ոլորտում աշխատանքային պայմանների և աշխատանքի անվտանգության վերաբերյալ հետազոտության[101] շրջանակներում արձանագրվել է, որ Հայաստանում բավականաչափ կանոնակարգված չեն հանքարդյունաբերության ոլորտի աշխատողների առողջության և անվտանգության պայմանների առանձնահատկությունները, որը գործնականում հանգեցնում է աշխատողների առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների իրավունքի խախտման: Հետազոտությունում որպես խնդրի լուծման ուղղությամբ կարևոր քայլ առաջարկվում է մշակել աշխատողների աշխատանքի անվտանգության և առողջության պաշտպանությանն ոլորտում ազգային քաղաքականություն:

Աշխատողների առողջ, անվտանգ աշխատանքային պայմանների իրավունքը երաշխավորվում է նաև միջազգային փաստաթղթերով:

---

100 Տե՛ս Աշխատանքային իրավունքների պաշտպանվածության վիճակի ուսումնասիրության արդյունքները, Հայաստան, 2022թ., հասանելի է https://hcav.am/wp-content/uploads/2022/02/Report_Interactive_Web.pdf?fbclid=IwAR0ZFRiQKxMqVbQEvmV_LezjY9geuSzpw6h1H3qb_pI9rafKaiYpyFz-N14 հղումով:

101 Տե՛ս «Աշխատանքային պայմանները և աշխատանքի անվտանգությունը հանքարդյունաբերության ոլորտում» Հայաստանի վերաբերյալ հետազատությունը, հասանելի է https://crm.aua.am/files/2021/05/Policy_Brief_Working_conditions_and_occupational_safety_EN.pdf հղումով:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 7-րդ հոդված.

Սույն դաշնագրին մասնակցող պետությունները ճանաչում են աշխատանքի արդար և նպաստավոր պայմանների՝ յուրաքանչյուրի իրավունքը, մասնավորապես,

աշխատանքի այնպիսի պայմանները, որոնք համապատասխանում են անվտանգության և հիգիենայի պահանջներին:

Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 3-րդ հոդված.

Անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային պայմանների իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով Կողմերը, խորհրդակցելով գործատուների և աշխատողների կազմակերպությունների հետ, պարտավորվում են՝

1. ձևակերպել, իրականացնել և պարբերաբար վերանայել աշխատանքային անվտանգությանը, աշխատանքային առողջությանը և աշխատանքային միջավայրին վերաբերող առանձնահատուկ ազգային քաղաքականությունը: Այդ քաղաքականության առաջնային նպատակը պետք է լինի աշխատանքային անվտանգության ու առողջության բարելավումը և աշխատանքի ընթացքում ծագող, դրա հետ կապված կամ տեղի ունեցող վթարների և առողջությունը վնասելու հնարավորության կանխումը՝ մասնավորապես նվազեցնելով աշխատանքային միջավայրին հատուկ վտանգների պատճառները,

2. թողարկել անվտանգության և առողջության պահպանման կանոնակարգեր:

(…)

Աշխատողների անվտանգության ապահովումն ու առողջության պահպանումն աշխատանքային իրավունքում և օրենսդրության մեջ և՛ սկզբունք է, և՛ նպատակ: Այդ նպատակին հասնելու համար պետություններն ունեն աշխատանքային պայմանների բարելավմանն ուղղված միջոցներ ձեռնարկելու պարտականություն: Ընդ որում, իր պարտականությունների կատարման հարցում պետությունը չպետք է բավարարվի աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովմանն ուղղված հիմնական կանոններ ու նորմեր սահմանելով, ինչպես որ նախատեսված է ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ: Նպատակը ոչ միայն աշխատողներին աշխատավայրերում դժբախտ պատահարներից պաշտպանելն ու մասնագիտական ռիսկերից ապահովագրելն է, այլև դրանց պաշտպանությունն ու կանխարգելումը կազմակերպելու համար հատուկ միջոցներ ներդնելը: Ուստի, աշխատողների առողջության և անվտանգության ապահովման հարցում պետությունից պահանջվում է ինչպես ապահովել համապատասխան տեխնիկական պահանջները, այնպես էլ ձեռնարկել պաշտպանության ու կանխարգելմանն ուղղված սկզբունքային մոտեցումներ: Դրանք, մասնավորապես, պետք է վերաբերեն մասնագիտական ռիսկերի կանխարգելմանը, առողջության ու անվտանգության ապահովմանը, ռիսկերի և դեպքերի գործոնների վերացմանը, տեղեկացվածության, աշխատողների և նրանց ներկայացուցիչների խորհրդատվության ու հավասարակշռված մասնակցության ապահովմանը:

ՄԻԵԴ-ը իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 2-րդ հոդվածով երաշխավորված կյանքի իրավունքը պաշտպանելու համար անհրաժեշտ բոլոր քայլերը ձեռնարկելու դրական պարտավորությունը նախևառաջ ենթադրում է պետության առաջնահերթ պարտականություն՝ ստեղծելու օրենսդրական և վարչական դաշտ, որը նախատեսված է կյանքի իրավունքի սպառնալիքների դեմ արդյունավետ զսպում ապահովելու համար[102]:

ՀՀ աշխատանքային օրենսդրությունում գործածվող «առողջություն» և «անվտանգություն» հասկացությունների իմաստային բովանդակության մասին պատկերացում կազմելը դժվար է այս ոլորտում դատական գործերի բացակայության պատճառով: Որպես օրինակ կարելի է նշել, որ «առողջության» եզրույթի հարցում «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքն առաջնորդվում է ՄԱԿ-ի առողջապահության միջազգային կազմակերպության կանոնադրությունում առկա սահմանմամբ, ըստ որի՝ առողջությունը համարվում է լիարժեք ֆիզիկական, հոգեկան և սոցիալական բարեկեցության վիճակ, ոչ թե միայն հիվանդության կամ հաշմանդամության:

ՀՀ աշխատանքային օրենսգրքով, աշխատավայրում աշխատողների առողջության և անվտանգության պահպանությունն ապահովելու պարտականությունը գործատուինն է:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 243-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջները բավարարելու համար, որով հստակեցվում է աշխատողի համար «օրենքով սահմանված պատշաճ, անվտանգ և առողջության համար անվնաս պայմաններ» ստեղծելու պարտականության բովանդակությունը, գործատուն պարտավոր է միայն ապահովել օրենքով սահմանված պայմանների առկայությունը: Սրանով են պայմանավորված նաև ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի լիազորությունների առկայությունն աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման նորմերի կիրառման նկատմամբ ու դրա իրականացման սահմանները: Ըստ տեսչական մարմնի կանոնադրության 11-րդ կետի՝ դա աշխատատեղում աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջների, այդ թվում՝ աշխատանքի անվտանգության կոլեկտիվ և անհատական պաշտպանիչ միջոցների առկայության, պահպանման և շահագործման նկատմամբ վերահսկողության իրականացումն է:

Պաշտպանն արձանագրում է, որ գործատուի պարտականությունները պետք է ներառեն անվտանգության և առողջության պահպանության համար անհրաժեշտ և բավարար միջոցների ձեռնարկումն ու պարտադիր պայմանների ապահովումը, այդ թվում՝ այդ պայմանների բարելավումն ու կանխարգելիչ միջոցների ձեռնարկումը խթանելու միջոցով: Գործատուն աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման ոլորտում պետք է նաև կրի հետևյալ պարտականությունները.

- ռիսկերի գնահատում, կանխարգելում ու պաշտպանություն.
- առաջին բուժօգնություն, աշխատողների տարհանում, հրդեհային անվտանգության ապահովում.
- կանխարգելիչ միջոցների և սարքավորումների ընտրություն.

102 Տե՛ս Բրինկատը և մյուսներն ընդդեմ Մալթայի (Brincat and others v. Malta) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2014 թվականի հուլիսի 24-ի վճիռը, գանգատների թիվ 60908/11, 62110/11, 62129/11, 62312/11, 62338/11:

- աշխատանքային պատահարների գրանցում և աշխատանքային պատահարների մասին լիազոր պետական մարմնին հայտնում.
- աշխատողներին իրենց պարտականությունների և անվտանգության կանոնների իրազեկում.
- աշխատողներին անվտանգության ապահովման և առողջության պահպանմանն առնչվող հարցերի շուրջ քննարկումներին մասնակցության ապահովումը և նրանց հետ խորհրդակցելը.
- աշխատողների վերապատրաստում և այլն:

Աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման նշված ուղղություններում պարտականություններ իրականացնելիս գործատուն պարտավոր է հաշվի առնել հետևյալ սկզբունքները՝

- ռիսկերից խուսափում.
- անխուսափելի ռիսկերի գնահատում.
- ռիսկերի դեմ պայքար.
- աշխատանքային պայմաններն աշխատողի անհատական կարիքներին հարմարեցում, հատկապես, եթե դա վերաբերում է աշխատատեղերի նախագծմանը, աշխատանքային սարքավորումների և աշխատանքային ու արտադրական մեթոդների ընտրությանը՝ նպատակ ունենալով ապահովել ողջամիտ աշխատանքային ծանրաբեռնվածություն, փոփոխել միօրինակ աշխատանքային ռիթմը, ինչպես նաև նվազեցնել դրանց ազդեցությունը առողջության վրա.
- տեխնիկական առաջընթացին հարմարեցում.
- վտանգավորը ոչ վտանգավորով կամ նվազ վտանգավորով փոխարինում.
- կանխարգելման համընդհանուր քաղաքականության զարգացում, որը ներառում է տեխնոլոգիան, աշխատանքի կազմակերպումը, աշխատանքային պայմանները, սոցիալական հարաբերությունները, ինչպես նաև աշխատանքային միջավայրին առնչվող գործոնների ազդեցությունը.
- անհատական պաշտպանության միջոցների նկատմամբ կոլեկտիվ պաշտպանության միջոցներին առաջնահերթության տրամադրում.
- աշխատողներին համապատասխան հրահանգավորումներով ապահովում:

Գործատուի՝ աշխատողների առողջության և անվտանգության պահպանությունն ապահովելու պարտականության հարցում ներպետական օրենսդիրը գործատուին պարտավորեցնում է կամ իրականացնել այդ գործառույթն անձամբ կամ ներգրավել աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման որակավորված ծառայություն:

Պաշտպանը կարևորում է գործատուի պարտականությունները և աշխատավայրում անվտանգության ու առողջության ապահովմանն ուղղված միջոցառումների կառավարման նոր ձև մշակելու հարցը: Գործատուի այդ գործառույթն անձամբ իրականացնելու հնարավորությունը պետք է լինի ընդհանուր կանոնից բացառություն: Անհրաժեշտ է օրենսդրությամբ նախատեսել գործատուի՝ աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման համար մեկ կամ ավելի պատասխանատու նշանակելու, ընտրելու կամ ընտրություններ կազմակերպելու, իսկ դրա անհնարինության դեպքում՝ որակավորված արտաքին ծառայություն ներգրավելու պարտականություն, որն աշխատավայրում կիրականացնի մասնագիտական ռիսկից պաշտպանելու ու այն կանխարգելելու համար անհրաժեշտ գործողություններ:

Գործատուն, աշխատողները և ծառայություններ մատուցողը անհրաժեշտության դեպքում պետք է համագործակցեն անվտանգության պահանջները կիրարկելիս. գործատուն պետք է ապահովի ներքին և արտաքին հաղորդակցությունը, համակարգի բոլոր մասնակիցների գործողությունները, աշխատողներին, նրանց ներկայացուցիչներին ու ծառայություններ մատուցողներին տրամադրի անհրաժեշտ տեղեկատվություն կամ ապահովի դրա հասանելիությունը:

Պատասխանատուների աշխատանքի արդյունավետությունն ապահովելու համար պետք է հստակեցվեն աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման հարցում գործատուի և պատասխանատու անձանց միջև իրավունքների ու պարտականությունների, ինչպես նաև պատասխանատվության հարցերը: Նման ընտրություն կամ նշանակում կատարելու դեպքում ակնհայտ է, որ պետք է աշխատողի հանդեպ գործատուի պարտավորություններն աճեն:

Աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման աշխատանքների կազմակերպման համար պատասխանատու անձինք պետք է ունենան՝

- անհրաժեշտ կարողություններ և միջոցներ, որոնց ցանկը սահմանելու պարտականությունը պետությանն է.
- անհրաժեշտ կարողություններ, անձնակազմ ու մասնագիտական միջոցներ՝ որակավորված արտաքին ծառայության դեպքում.
- թե՛ նշանակված անձանց, թե՛ ծառայությունների քանակը պետք է լինի բավարար:

Պաշտպանն անհրաժեշտ է համարում աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման հարցում գործատուի պատասխանատվության ամրագրումը: Ընդ որում՝ գործատուն չի կարող խուսափել պատասխանատվությունից ո՛չ աշխատողների ներկայացուցիչների շարքից պատասխանատու(ներ) նշանակելու, ընտրելու կամ նրանց ընտրվելու, ո՛չ էլ արտաքին ծառայություն ներգրավելու դեպքերում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքով պատասխանատու անձանց կառուցակարգի բացակայության պայմաններում աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման վերաբերյալ պարտականությունների զգալի զանգվածը գործատուից փոխանցվել է աշխատողներին:

Պաշտպանն անհրաժեշտ է համարում նախատեսել նաև գործատուի պարտականությունն ու, հետևաբար՝ աշխատողի իրավունքը, ապահովելու աշխատողների մասնակցությունը անվտանգության ապահովման և առողջության պահպանմանն առնչվող հարցերի քննարկումներին: Աշխատողների մասնակցությունը պետք է ապահովվի աշխատողի անվտանգությանն ու առողջությանն էականորեն ազդող միջոցների, պատասխանատու անձանց նշանակելու, ընտրելու կամ ընտրվելու, ինչպես նաև արտաքին ծառայություն ներգրավելու, ռիսկերի գնահատման, աշխատանքային պատահարների վարման վերաբերյալ:

Գործատուի պարտականությունն է ապահովել, որպեսզի աշխատողը մինչև աշխատանքային պարտականությունների կատարմանը անցնելը ստանա աշխատանքի անվտանգության ուսուցում և (կամ) հրահանգավորում: Գործատուի նման պարտականությունը ՀՀ աշխատանքային օրենսգրքում նախատեսված է որպես պահանջելուց ձեռնպահ մնալու նեգատիվ պարտականություն, որով գործատուն չի կարող աշխատողից պահանջել աշխատանքային պարտականությունների կատարմանն անցնել, եթե նա չի անցել աշխատանքի անվտանգության ուսուցում և/կամ հրահանգավորում: Իսկ աշխատանքային պարտականությունների կատարմանն անցնելիս կազմակերպությունում

գոյություն ունեցող հնարավոր ռիսկի գործոնների մասին տեղեկացվելու և աշխատանքի որոշակի վայրում անվտանգության հրահանգավորում ստանալը ապահովելու պարտականությունը գործատուն ունի միայն գործուղված աշխատողի հանդեպ: Ճիշտ է, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 250-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով աշխատանքը ժամանակավորապես դադարեցվում է, եթե աշխատողը չի ծանոթացել աշխատանքի անվտանգ կատարման կանոններին, սակայն իրավանորմում հստակեցված չեն թե՛ գործատուի, թե՛ աշխատողի կողմից իրավախախտումների դեպքում հնարավոր անբարենպաստ հետևանքների հարցերը:

Գործնականում գործատուները չեն ծանոթացնում աշխատողին աշխատավայրում գործող անվտանգության կանոններին: Ուստի, Հայաստանի Հանրապետությունում աշխատողների առողջ, անվտանգ աշխատանքային պայմանների իրավունքի խախտմանը նպաստում է այդ թվում՝ աշխատողների իրազեկվածության ցածր մակարդակը, որը շատ հաճախ հանգեցնում է ոչ միայն այդ իրավունքի խախտմանը, այլև իրավունքի խախտման դեպքերի չբացահայտմանը, իսկ բացահայտվելու պարագայում աշխատողի՝ դեպքի բարձրաձայնման, սեփական իրավունքների վերականգնման հնարավորության և դրա օրենսդրական կառուցակարգերի մասին անտեղյակությանը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 206-րդ հոդվածի համաձայն՝ գործատուի կողմից աշխատանքի անվտանգության և առողջության ապահովմանն ուղղված կանոնների չպահպանման դեպքում աշխատողը որպես պաշտպանության միջոց կարող է հրաժարվել իր աշխատանքային պարտավորությունները կատարելուց:

Իրավունքի ինքնապաշտպանության այս միջոցը բավարար չափով հստակ ձևակերպված չէ, որպեսզի աշխատողին հնարավորություն տա պատկերացում կազմել այն հիմքերի մասին, որոնց առկայության պարագայում բավարար կամ անհրաժեշտ կլինի օգտվել պարտականությունների կատարումից հրաժարվելու իր իրավունքից, իսկ դրա չարաշահման դեպքում՝ կանխատեսել հնարավոր բացասական հետևանքները: Առավել նպատակահարմար կլիներ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 20-րդ գլխում նախատեսված նշված նորմը սահմանել նույն օրենսգրքի 23-րդ գլխում, որով կարգավորվում են աշխատողների անվտանգության և առողջության պահպանման հարցերը: Իրավական կանխատեսելիության, ուստի և կայունության նկատառումներից ելնելով՝ անհրաժեշտ է, որպեսզի աշխատողների անվտանգության և առողջության պահպանման հարցերին առնչվող իրավանորմերը համախմբված լինեն մեկ գլխի մեջ, որտեղ կներառվեն ինչպես կանոնների չպահպանման համար իրավական անբարենպաստ հետևանքների, այնպես էլ իրավունքի պաշտպանության վերաբերյալ իրավադրույթները:

Պարտադիր բժշկական զննություն անցնելու հարցում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 249-րդ հոդվածով նախատեսվել է, որ աշխատանքի ընդունման ժամանակ և աշխատանքի ընթացքում բժշկական զննություն անցնելն աշխատողի պարտականությունն է: Աշխատողի անվտանգության ապահովման և առողջության պահպանման ոլորտում գործատուի սուբյեկտիվ պարտականությունների առկայությունը պայմանավորված է աշխատողի՝ անվտանգության ապահովման և առողջության պահպանման սուբյեկտիվ իրավունքով: Ուստի, հրահանգով հիշյալն իրավացիորեն սահմանվում է որպես աշխատողի իրավունք և ոչ պարտականություն:

Առողջության և աշխատանքի անվտանգության պայմանների պահպանման վերաբերյալ իրազեկման ուղղված կոնկրետ աշխատանքներ 2023 թվականի ընթացքում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից չեն իրականացվել:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից 2023 թվականի ընթացքում աշխատանքային իրավունքների, այդ թվում՝ դրանց պաշտպանության միջոցների վերաբերյալ հանրային իրազեկման աշխատանքների շրջանակում հրապարակումներ (տեղեկատվական նյութեր, տեսանյութեր, հարցազրույցներ, մամուլի ասուլիսներ) են եղել, որոնք առնչվել են աշխատող-գործատու հարաբերություններին, Աշխատանքային օրենսգրքում կատարված փոփոխություններին, ամենամյա արձակուրդի տրամադրման նոր կարգավորումներին, հեռավար աշխատանքի կազմակերպման ընթացակարգին և այլն:

Մասնավորապես՝ նախարարության պաշտոնական կայքում, ֆեյսբուքյան հարթակում, ինչպես նաև յութուբյան և տելեգրամյան ալիքներում տեղադրվել են հրապարակումներ, որոնցից յուրաքանչյուրը տարածվել է մի քանի տասնյակ լրատվամիջոցներում: Աշխատանքային իրավունքների, այդ թվում՝ դրանց պաշտպանության միջոցներին առնչվող մի շարք թեմաներին անդրադարձ է կատարվել «Սոցիալական հարթակ», ինչպես նաև «Հարց՝ քաղաքացուց» հաղորդումների շրջանակում: Զանգվածային լրատվամիջոցների հետ համագործակցությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացված աշխատանքները լուսաբանվել են նաև վերջիններիս կողմից՝ հարցազրույցների, ռեպորտաժների և այլ ձևաչափերով:

Աշխատավայրում աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանների խախտումների վերաբերյալ տեսչական մարմնում դիմումի հիման վրա հարուցվել է 11 վարչական վարույթ: Հարուցված վարչական վարույթների արդյունքում խախտումները վերացնելու համար տրվել է 7 կարգադրագիր, 3 վարույթ կարճվել է, այդ թվում 1-ը՝ դիմումից հրաժարվելու հիմքով, 1 վարչական վարույթի ժամկետը երկարաձգվել է՝ մինչև փորձագիտական եզրակացություն ստանալը:

Վերոգրյալի հաշվառմամբ կարելի է եզրակացնել, որ թեև աշխատողների առողջ, անվտանգ աշխատանքային պայմանների իրավունքը ՀՀ-ում երաշխավորված է օրենսդրական մակարդակով, սակայն օրենսդրական, ինստիտուցիոնալ և գործնական մակարդակներում դեռևս առկա են այնպիսի խնդիրներ ու բացեր, որոնք հաճախ խոչընդոտում են աշխատողների առողջ, անվտանգ աշխատանքային պայմանների իրավունքի պատշաճ իրացմանը և հանգեցնում են այդ իրավունքի խախտումների:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է՝

- ***✓ վավերացնել «Աշխատանքի անվտանգության և առողջության մասին» ԱՄԿ թիվ 155 կոնվենցիան,***
- ***✓ վերանայել ՀՀ աշխատանքային օրենսդրությունը՝ նախատեսելով աշխատավայրում առողջության և անվտանգության ապահովման համար կանխարգելման համակարգ, որի նպատակը կլինի ռիսկերի նվազեցումը և մասնագիտական վտանգները կանխումը,***
- ***✓ նախատեսել աշխատավայրում անվտանգության ու առողջության ապահովմանն ուղղված միջոցառումների կառավարման նոր ձևաչափ,***
- ***✓ հստակ ամրագրել գործատուի պարտականությունը՝ մինչև աշխատանքային պարտականությունների կատարումը աշխատողներին իրազեկելու աշխատանքի անվտանգության կանոններին,***

- ✓ ***հստակ ամրագրել աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման հարցում գործատուի պատասխանատվությունը,***
- ✓ ***նախատեսել գործատուի պարտականությունն ու աշխատողի իրավունքը ապահովելու աշխատողների մասնակցությունը անվտանգության ապահովման և առողջության պահպանմանն առնչվող հարցերի քննարկումներին,***
- ✓ ***ընդլայնել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի գործիքակազմը՝ կատարելագործելով առկա կառուցակարգերը,***
- ✓ ***աշխատողների շրջանում իրականացնել աշխատանքի անվտանգության խնդիրների վերաբերյալ իրազեկման լայնածավալ միջոցառումներ և վերապատրաստումներ՝ ներգրավելով աշխատողների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին ու արհեստակցական կազմակերպություններին:***

7. Աշխատանքային իրավունքների պաշտպանության ու խթանման հարցում արհեստակցական միությունների դերի բարձրացումը

2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան միավորել է 18 ճյուղային հանրապետական միություններ, որոնցում ընդգրկված են եղել 587 արհմիութենական կազմակերպություններ՝ 189479 արհմիության անդամով:

ՀՀ-ի արհեստակցական միություններում (արհմիություն) աշխատողների ներգրավվածության ցածր տեսակարար կշիռ է առկա: Ցածր ներգրավվածությունը պայմանավորվում է նախևառաջ այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետությունում ոչ բոլոր կազմակերպություններում են գործում արհմիություններ, իսկ գործող արհմիություններն էլ ինստիտուցիոնալ առումով ունեն հզորացման կարիք[103]:

Կազմակերպություններում արհմիություններ ստեղծելու ու դրանց անդամակցելու շահագրգռվածությունը բացակայում է արհմիությունների՝ որպես իրավապաշտպան ու հասարակական կազմակերպությունների սոցիալական ցածր դերակատարության պատճառով: Ավանդաբար արհմիությունների հիմնադրման գործընթացի նախաձեռնող և դրանց գործունեության երաշխավորող տեսնում են գործատուներին, այլ ոչ թե աշխատողների միավորված կոլեկտիվը:

Արհմիությունների դերի բարձրացման անհրաժեշտության մասին Պաշտպանի տարեկան հաղորդումներում պարբերաբար անդրադարձ է կատարվել: Արհմիությունների ամրագրված նպատակների ու լիազորությունների պատշաճ իրագործման, ինչպես նաև աշխատանքային իրավունքների պաշտպանության գործում արհմիությունների բավարար ներգրավվածության համար ոլորտի մասնագետները, Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային հարաբերություններում աշխատողների շահերը ներկայացնող հիմնական կառույցը՝ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան (ՀԱՄԿ), բազմիցս բարձրացրել են արհմիությունների ինստիտուցիոնալ և գործառնական կարողությունների հզորացման անհրաժեշտության և կարևորության հարցը:

Թեպետ օրենսդրությամբ արմիություններին վերապահվել են իրավապաշտպան լիազորություններ, սակայն գործնականում աշխատանքային իրավունքների

[103] Տե՛ս «ԵՄ-ն հանուն աշխատանքային իրավունքների» ծրագրի հետազոտությունների արդյունքները, 17.02.2022, հասանելի է https://oxygen.org.am/wp-content/uploads/2022/02/Presentations_Labour-Rights_17.02.2022.pdf հղումով:

պաշտպանության հետ կապված վարույթներում արմիությունների ներգրավվածությունը կոնկրետ իրավիճակներում ապահովող հատուկ օրենսդրական նորմեր չկան:

«Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով արհեստակցական միության նպատակներից է գործատուի ներկայացմամբ քննարկել աշխատանքային կարգապահության խախտում թույլ տված արհեստակցական միության մասնակցի (անդամի) հարցը: Նույն օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ գործատուի նախաձեռնությամբ, այդ թվում՝ նաև աշխատատեղերի կրճատման դեպքում աշխատողի աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու, ինչպես նաև աշխատողին այլ աշխատանքի փոխադրելու, նրան կարգապահական տույժի ենթարկելու հետ կապված հարաբերություններին, կոլեկտիվ և անհատական վեճերին արհմիության մասնակցությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ: Մինչդեռ, ՀՀ աշխատանքային օրենսգրքով հիշյալ իրավահարաբերություններին արհմիությունների մասնակցության բավարար կառուցակարգեր նախատեսված չեն:

Աշխատողների աշխատանքային, սոցիալական, տնտեսական իրավունքներն ու շահերի պաշտպանությունն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է ապահովել աշխատողների իրավունքների մասնագիտացված պաշտպանությունը և իրավաբանական խորհրդատվության մատչելիությունն ինչպես արհմիության անդամ աշխատողների, այնպես էլ ոչ անդամ աշխատողների համար:

Անհրաժեշտություն կա հստակեցնելու աշխատողների իրավունքների պաշտպանությանն առնչվող մինչդատական, արտադատական, ինչպես նաև դատական վարույթներում արհմիությունների մասնակցության ձևերն ու կարգը:

2019 թվականին «Արհմիութենական շարժումը Հայաստանի Հանրապետությունում. պատմությունը, ներկա վիճակը և զարգացման հեռանկարները» խորագրով քննարկման արդյունքում եկել են եզրահանգման, որ Հայաստանյան իրականության մեջ հանրության ուշադրությանն արժանացած գրեթե բոլոր աշխատանքային շարժումներն իրականացվել են առանց արհմիությունների կազմակերպման կամ միջամտության: Սա ևս վկայում է արհմիությունների դեռևս թույլ դերի մասին[104]:

Արհմիությունների ոչ բավարար հեղինակության պատճառներից է նաև այն, որ արհմիությունները բավարար չափով թափանցիկ և հրապարակային կերպով չեն ներկայացնում իրենց կողմից իրականացված ծախսերը, արհմիությունների գործունեությանը գրեթե ներգրավված չեն երիտասարդները և կանայք, արհմիությունների մի շարք կարողություններ բավարար չափով զարգացած չեն, վերջիններս գրեթե չեն համագործակցում ոլորտային Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և գործատուների միությունների հետ, օժտված չեն բավարար լծակներով[105]:

---

[104] Տե՛ս Աշխատանքային իրավունքների պաշտպանության մեխանիզմները Հայաստանում» հետազոտությունը, հասանելի է https://www.osf.am/wp-content/uploads/2017/11/%D4%B1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A1%D5%B6%D6%84%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%B8%D6%82%D5%B6%D6%84%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%BA%D5%A1%D5%B7%D5%BF%D5%BA%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%B4%D5%A5%D5%AD%D5%A1%D5%B6%D5%AB%D5%A6%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8-%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B41.pdf հղումով:

[105] Տե՛ս «Արհեստակցական միությունների ներկա վիճակ, զարգացման հեռանկարներ» կառավարություն-քաղաքացիական հասարակության կազմակերպություններ երկխոսության համաժողովի ամփոփում –առաջարկությունները, 2019 թվական փետրվար, հասանելի է https://armla.am/wp-content/uploads/2019/02/%D4%B1%D6%80%D5%B0%D5%B4%D5%AB%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%AA%D5%B8%D5%B2%D5%B8%D5%BE%D5%AB-

Դեռ 2019 թվականի՝ ՄԱԿ-ի խաղաղ հավաքների և միավորումների ազատության հարցերով հատուկ զեկուցողի՝ Հայաստանի վերաբերյալ զեկույցում[106] բարձրաձայնվել է արհմիությունների դերի կարևորությունը, միևնույն ժամանակ նշվել է, որ Հայաստանում դրանք շատ թույլ են, ինչպես նաև բացակայում են արդյունավետ քննարկումներն արհմիությունների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և քաղաքական կազմակերպությունների միջև:

Արհմիությունները որպես միավորման ազատության դրսևորում.

Անձանց միավորվելու ազատությունը յուրաքանչյուր ժողովրդավարական հասարակության կարևորագույն ազատություններից է:

Արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը միավորվելու ազատության դրսևորումներից է, ինչը երաշխավորված է ՀՀ Սահմանադրությամբ (45-րդ հոդ.), Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով (11-րդ հոդ.), Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայով (5-րդ հոդ.) և այլն:

ՄԻԵԴ նախադեպային իրավունքի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ձևավորել արհմիություններ և անդամակցել դրանց, ինչպես նաև ազատ է պաշտպանել արհմիության անդամների շահերը արհմիության կոլեկտիվ գործողությունների միջոցով, որոնց իրականացումը պետք է թույլատրվի կոնվենցիային անդամ պետությունների կողմից: Միաժամանակ պետությունը պարտավոր է հարգել ընդհանուր նպատակներին հասնելու համար անձանց խմբավորման ցանկացած փորձ107: Նույն որոշմամբ ՄԻԵԴ ընդգծել է նաև, որ աշխատողների իրավունքները և շահերը պաշտպանելու համար արհմիություններ կազմելը չպետք է լինի միակ ձևաչափը[108]:

ՄԻԵԴ-ը նշել է նաև, որ Կոնվենցիայի հոդվածը ներառում է միավորվելու նեգատիվ իրավունքը: Եթե միավորվելու պոզիտիվ ազատությունը ենթադրում է միավորումներ ձևավորելու և դրանց անդամակցելու ազատությունը, ապա նեգատիվ ազատությունը ենթադրում է, որ ոչ ոք չի կարող պարտադրվել անդամակցելու կամ դուրս գալու որևէ արհեստակցական կազմակերպությունից[109]:

Արհմիությունների կարգավիճակի հարցը.

«Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով արհեստակցական կազմակերպությունը հասարակական միավորում է, որն օրենքով սահմանված կարգով և ազատ կամքի դրսևորումով միավորում է տվյալ գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող աշխատողներին՝ իրենց աշխատանքային ու դրա հետ կապված մասնագիտական, տնտեսական, սոցիալական իրավունքներն ու շահերը ներկայացնելու և աշխատանքային հարաբերություններում դրանք պաշտպանելու նպատակով:

%D5%A1%D5%B4%D6%83%D5%B8%D6%83%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A1%D5%BC%D5%A1%D5%BB%D5%A1%D6%80%D5%A,,F%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80-1.pdf հղումով:

[106] Տե՛ս ՄԱԿ-ի խաղաղ հավաքների և միավորումների ազատության հարցերով հատուկ զեկուցողի՝ Հայաստանի վերաբերյալ զեկույց, 2019 թվականի մայիսի 13, հասանելի է https://documents.un.org/doc/undoc/gen/g19/136/82/pdf/g1913682.pdf?token=Fp2GTSdU25aV5WsJzk&fe=true հղումով:

[107] Տե՛ս Բելգիայի ոստիկանության ազգային միությունն ընդդեմ Բելգիայի (National union of Belgian police v. Belgium) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1975 թվականի հոկտեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 4464/70:

[108] Տե՛ս Բելգիայի ոստիկանության ազգային միությունն ընդդեմ Բելգիայի (National Union of Belgian Police v. Belgium) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 1975 թվականի հոկտեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 4464/70:

[109] Տե՛ս Սիգուդուր Ա. Սիգուրջոնսսոն ընդդեմ Իսլանդիայի (Sigurdur A. Sigurjonsson v. Icland) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 1993 թվականի հունիսի 30-ի վճիռը, գանգատ թիվ 16130/90:

Սահմանադրությունը, բոլոր տեսակի միությունների զանգվածում առանձնացնելով արհմիություններին, դրանց վերագրում է հատուկ՝ իրավապաշտպան առաքելություն՝ աշխատանքային իրավունքների ոլորտում: Սահմանադրությունը սահմանում է միավորումների ազատության հիմնական իրավունքի դրսևորման հատուկ իրավակարգավորում՝ դրանով ճանաչելով արհմիություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքը: Սահմանադրական դատարանը նշել է նաև, որ արհմիություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքը, թղթակցելով անհատների աշխատանքային իրավունքներին և հատկապես դրանց պաշտպանության իրավունքին, չի կորցնում իր՝ որպես հիմնական իրավունքի ինքնուրույն նշանակությունը, որովհետև համարվում է աշխատողների աշխատանքային շահերի և աշխատանքային իրավունքների պաշտպանության անհատական (մինչդատական և դատական) ձևին զուգահեռ գործող, վերջինին չկրկնող՝ կոլեկտիվ և անհատական աշխատանքային իրավունքների կոլեկտիվ պաշտպանության ինքնուրույն ձև[110]:

Սահմանադրական դատարանը իր որոշմամբ ընդգծել է աշխատանքային իրավունքների պաշտպանության կարևորությունը ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային ոլորտում, այդ թվում՝ յուրաքանչյուր աշխատողի կողմից կատարվող գործունեության արդյունավետության ապահովման նկատառումներով: Այսպիսով, որքան երաշխավորված ու պաշտպանված են աշխատանքային իրավունքներն ու օրինական շահերը, այնքան բարձր է կատարվող աշխատանքի արդյունավետությունը[111]:

Պաշտպանը դրական է գնահատում այն, որ «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2023 թվականի մայիսի 3-ի ՀՕ-160-Ն ՀՀ օրենքով ընդլայնվել է աշխատողների ներկայացուցիչների (արհմիությունների) լիազորությունների շրջանակը. որպես աշխատողների ներկայացուցիչ՝ աշխատողների իրավունքներին առնչվող հարցերում նրանց մասնակցության մակարդակի բարձրացման օրենսդրական հիմքեր են ապահովվել: Կատարված լրացումների արդյունքում աշխատողների ներկայացուցիչներին իրավունք է տրվել

1) գործատուին ներկայացնելու առաջարկություններ աշխատանքի կազմակերպման և աշխատանքի պայմանների վերաբերյալ,

2) դատական կարգով բողոքարկելու նաև աշխատողների իրավունքները խախտող գործատուի և նրա լիազորած անձանց որոշումները և գործողությունները:

Հարկ է նկատել, որ 2023 թվականի ընթացքում Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի աջակցությամբ դատական կարգով վերականգնվել են 3 աշխատողի խախտված աշխատանքային իրավունքներ: Մեկ դատական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում դատական ակտերը կայացվել են հօգուտ աշխատողի: Գործը գտնվել է ՀՀ վճռաբեկ դատարանում, թվով 8 աշխատանքային վեճերով քաղաքացիական գործեր ընթացքի մեջ են եղել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում, որոնց թվում եղել է նաև արհմիության նախագահի նկատմամբ խտրական վերաբերմունքի խախտման վեճով գործ[112]:

[110] Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2023 թվականի ապրիլի 11-ի թիվ ՍԴՈ–1683 որոշումը:
[111] Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2023 թվականի ապրիլի 11-ի թիվ ՍԴՈ–1683 որոշումը:
[112] 2024 թվականի մարտի 6-ի դրությամբ:

Վերոնշյալ փոփոխությունների շրջանակում սահմանվել է նաև, որ գործատուն պարտավոր է աշխատողների ներկայացուցիչներին տրամադրել տարածք և նյութատեխնիկական միջոցներ՝ իրենց լիազորությունների իրականացման համար՝ կոլեկտիվ պայմանագրով կամ կողմերի համաձայնությամբ սահմանված կարգով:

«Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքով կարգավորվում են արհմիությունների հիմնադրման կարգը, նրանց գործունեության սկզբունքները և հարաբերությունները պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ, ինչպես նաև արհմիությունների և նրանց մասնակիցների (անդամների) իրավունքների ու շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

«Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով արհեստակցական միության նպատակներն են՝

- ներկայացնել և պաշտպանել աշխատողների աշխատանքային ու դրա հետ կապված սոցիալական ու այլ շահերը և իրավունքները գործատուի և (կամ) երրորդ անձի մոտ,
- սոցիալական գործընկերության տարբեր մակարդակներում ապահովել աշխատողների և գործատուների շահերի համաձայնեցումը կոլեկտիվ աշխատանքային հարաբերություններում,
- գործատուի հրավերով մասնակցել արտադրական ծրագրերի մշակմանը և դրանց կենսագործմանը և այլն:

Աշխատանքային հարաբերությունների կարգավորման մեխանիզմների պարզեցումը և բարելավումը՝ համապատասխանեցված նաև ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների պահանջներին, աշխատանքային վեճերի լուծման ճկուն մեխանիզմների ներդրումը, ինչպես նաև աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ոչ պետական վերահսկողության գործիքակազմի ընդլայնումը և բոլոր մակարդակներում սոցիալական գործընկերության զարգացումը և խորացումը որպես նպատակ ամրագրված են ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրում: Նշված նպատակի իրականացման արդյունքում ակնկալվում է արհմիությունների դերին (արհմիությունների դերի բարձրացման նպատակով արհմիությունների լիազորությունների վերանայում, աշխատողների ներկայացուցչական մարմիններում ընտրված աշխատողների պաշտպանվածությանը վերաբերող) վերաբերող կարգավորումների նախատեսում, ինչպես նաև այնպիսի կարգավորումների սահմանում, որոնք ուղղված են գործուն արհմիությունների ձևավորմանը, որոնք արդյունավետորեն կհամագործակցեն նաև գործատուների հետ՝ կոլեկտիվ աշխատանքային հարաբերությունների շրջանակներում:

Արհմիությունների ինստիտուցիոնալ դերի բարձրացման, աշխատողների և գործատուների կողմից արհմիության կարևորության ընկալման, արհմիությունների գործունեության վերաբերյալ օրենսդրության կատարելագործման պահանջներ ամրագրված են նաև ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 5-ի N 1753-Լ որոշմամբ, որով ընդգծվել է այն, որ աշխատանքային պայմանների բարելավման ամենակարևոր գործոններից է ոչ միայն արդյունավետ Աշխատանքային օրենսգրքի առկայությունը, այլև օրենքների կիրարկումն ապահովելը: Նույն որոշմամբ արձանագրվել է, որ սահմանափակ ռեսուրսների պատճառով պետությունը չի կարողանում արդյունավետ կերպով հետևել յուրաքանչյուր տնտեսվարողի կողմից աշխատողների իրավունքների երաշխավորված պաշտպանությանը, մինչդեռ դրա լավագույն երաշխիքներից կարող է

լինել գործուն արհմիության առկայությունը, որի առաքելությունն աշխատողների շահերի և իրավունքների ներկայացումը և պաշտպանությունն է կոլեկտիվ բանակցությունների և այլ գործիքակազմով:

Նույն որոշմամբ արձանագրվել է նաև, որ գործող ոչ բոլոր արհմիություններն են արդյունավետ կերպով իրականացնում օրենքով սահմանված իրենց գործառույթը: Բացի այդ, օրենսդրական լիազորությունների բացակայության պատճառով՝ գործող արհմիությունները չեն կարողանում լիովին և պատշաճ ձևով ներկայացնել և պաշտպանել աշխատողների շահերն ու իրավունքները:

Հանրային ծառայություններում աշխատողների արհմիությունների Եվրոպական ֆեդերացիայի (EPSU) հրապարակած ուղեցույցում[113] ընդգծվել է, որ արհմիությունում անգամ անդամների քանակի ավելացումը բավարար չի երաշխավորում արհմիության հզորության ավելացումը: Ոչ միայն պետք է ապահովվի, որպեսզի ավելացող անդամների քանակը գերազանցի արհմիությունը լքողների քանակին, այլև պետք է ստեղծվի ակտիվ անդամակցություն. այնպիսին, որը հնարավոր կլինի արագ մոբիլիզացնել արհմիության արշավների ու բանակցությունների ժամանակ:

Նույն ուղեցույցում նշվում է նաև, որ արհմիության անդամությունը շատ երկրներում լճացած է կամ անկում է ապրում, իսկ արհմիության անդամների միջին տարիքն ավելանում է, քանի որ դանդաղում կամ պակասում է երիտասարդ անդամների հավաքագրումը և անհրաժեշտ է, որ բոլոր արհմիությունները գործեն: Անդամակցության նվազումը կանգնեցնելու համար արհմիությունները պետք է նոր ռազմավարություններ և մեթոդներ մշակեն:

EPSU-ն ուղեցույցում նաև նախանշել է որոշակի գործողությունների շրջանակ, որոնց իրականացումն անհրաժեշտ է արհմիությունների ինստիտուցիոնալ հզորացման, նոր անդամների ներգրավման և այդ ինստիտուտի կատարելագործման համար:

Դրանցից են, օրինակ այն, որ արհմիությունը պետք է նկատի ունենա ազգային և տեղային մակարդակներում աշխատուժի դինամիկան, որպեսզի ավելի երկարաժամկետ հեռանկարներ ունենա և միջոցառումներ կարողանա ձեռնարկել: Պետք է քարտեզագրել գոյություն ունեցող և պոտենցիալ անդամակցությունը, գնահատել արհմիության ուժեղ և թույլ կողմերն ու որոշել, թե որ ուղղությամբ պետք է ներդրվեն օրգանայզինգի ռեսուրսները, որպեսզի դրանք ապահովեն լավագույն արդյունքը և այլն:

Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի Հայաստանի վերաբերյալ 2022 թվականի եզրակացությունում[114] ընդգծվել է, որ անհրաժեշտ է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ «Արհեստակցական միությունների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու ուղղությամբ՝ ապահովելու համար, որ դատախազության մարմինների ծառայողները, դատավորները, այդ թվում՝ Սահմանադրական դատարանի դատավորները, ոստիկանության աշխատակիցները, ինքնազբաղված անձինք և ոչ ֆորմալ աշխատողները կարողանան հիմնել և միանալ կազմակերպություններին՝ առաջ մղելու և պաշտպանելու իրենց շահերը:

Վերոգրյալի առնչությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 2022 թվականին դիմում է ներկայացրել Սահմանադրական դատարան՝ «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Ազգային

113 Տե՛ս Հանրային ծառայություններում աշխատողների արհմիությունների Եվրոպական ֆեդերացիայի ուղեցույցը, հասանելի է https://www.epsu.org/sites/default/files/article/files/Organising%20guide_ARM.pdf հղումով:

114 Տե՛ս Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի Հայաստանի վերաբերյալ 2022 թվականի եզրակացությունը, հասանելի է https://rm.coe.int/conclusions-2022-armenia-e/1680aa984a հղումով:

անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ:

Մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշումները հանգել են նրան, որ ինչպես Սահմանադրության, այնպես էլ մարդու իրավունքների պաշտպանության միջազգային իրավական կարգավորումների մեկնաբանությունից բխում է, որ ոստիկանությունում, զինված ուժերում և այլ ռազմականացված մարմիններում (ներառյալ՝ ազգային անվտանգության մարմիններում) ծառայողների միավորումների ազատության սահմանափակումն ուղղակիորեն չի բխում այդ ազատության բուն էությունից, ուստիև՝ այդ ազատությունը սահմանափակող յուրաքանչյուր միջոցի սահմանադրականությունը պետք է քննարկվի իրավաչափ նպատակի առկայության և կիրառված միջոցների համաչափության գնահատման համատեքստում:

Պաշտպանը փաստել է, որ արհեստակցական միությունները ծառայում են որպես աշխատողների անհատական և կոլեկտիվ իրավունքների պաշտպանության, ինչպես նաև նրանց սոցիալական բարեկեցության ապահովման հիմնական և առավել արդյունավետ մեխանիզմ: Արհեստակցական միությունների ստեղծումն, այսպիսով, բոլոր աշխատողների հիմնարար իրավունքն է, որից վերջիններիս զրկումը կարող է էականորեն խաթարել գործատուի և աշխատողների միջև կայուն և բնականոն երկխոսությունը, ինչն իր հերթին կառաջացնի գործատուի կողմից աշխատողների իրավունքների խախտման և վերջիններիս նվազ պաշտպանվածության ռիսկեր:

Պաշտպանն ընդգծել է, որ արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքի հիմնական նպատակն աշխատողների իրավունքների արդյունավետ պաշտպանության ապահովումն է, ուստի՝ նման սահմանափակումը չի կարող համահունչ լինել իրավունքի բուն էությանը և բխել դրա նպատակներից:

Պաշտպանն արձանագրել է, որ արհեստակցական միություններին անդամակցությունն ինքնին որևէ կերպ չի հակադրվում ոստիկանությունում, ազգային անվտանգության մարմիններում ծառայության կամ զինծառայության բնույթին և նպատակներին, ուստի իրավաչափ նպատակների ապահովումը կարող է իրականացվել նվազ սահմանափակող միջոցների կիրառմամբ: Այլ կերպ ասած՝ տվյալ ծառայողների արհեստակցական միությունների գործունեությունը կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, որոնք կբացառեն այդ գործունեության արդյունքում պետական անվտանգության կամ հասարակական կարգի վտանգումը՝ առանց ընդհանուր և բացարձակ արգելքների նախատեսման:

Այսպիսով, «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասն այնքանով, որքանով ՀՀ զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողների, ինչպես նաև դատավորների և Սահմանադրական դատարանի դատավորների համար սահմանում է արհեստակցական կազմակերպության մասնակից լինելու բացարձակ արգելք, ՄԻՊ դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանը ճանաչել է Սահմանադրության 45-րդ, 75-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներին հակասող[115]:

[115] Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2023 թվականի ապրիլի 11-ի ՍԴՈ-1683 որոշումը:

Հաշվի առնելով իրավական անվտանգությունը չխաթարելու անհրաժեշտությունը՝ Սահմանադրական դատարանի նույն որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների իրավական ուժը կորցնելու վերջնաժամկետ է սահմանվել 2023 թվականի նոյեմբերի 11-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին՝ «Ոստիկանությունում ծառայության մասին», «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին», «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին», «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումները համապատասխանեցնելու նույն որոշմանը:

Այսպիսով, Սահմանադրական դատարանի որոշման մեջ ներկայացվել են մարդու իրավունքների ոլորտում օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտության վերաբերյալ իրավական դիրքորոշումներ, սակայն տարեկան հաղորդման հրապարակման պահին «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ մասի 5-րդ կետում փոփոխություններ կատարված չեն՝ չնայած նրան, որ դրույթն արդեն համարվում է ուժը կորցրած:

Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն եզրակացրել է նաև, որ Հայաստանում իրավիճակը չի համապատասխանում Եվրոպական սոցիալական խարտիայի 5-րդ հոդվածին այն հիմքով, որ անդամության նվազագույն պահանջները արհմիություններ և գործատուների կազմակերպություններ ստեղծելու համար չափազանց բարձր են:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տվյալների համաձայն՝ արհմիությունների գործիքակազմի ընդլայնման, գործուն արհմիությունների առկայության ապահովման, ինչպես նաև արհմիությունների գործունեությունը կարգավորող օրենսդրությունը ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների (Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաներ և Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա) պահանջներին համապատասխանեցնելու նպատակով մշակվել և շրջանառվել է ««Արհեստակցական միությունների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, որը գտնվում է լրամշակման փուլում:

Այսպիսով, Պաշտպանն արձանագրում է, որ թեև առկա են որոշակի դրական փոփոխություններ արհմիության կարողությունների զարգացման, դերի բարձրացման առումով, սակայն դրանք բավարար չեն խնդրի համակարգային լուծման տեսանկյունից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ իրականացնել «Արհեստակցական միությունների մասին» օրենքում փոփոխություններ՝ ամրապնդելով արհմիությունների ինստիտուցիոնալ և նյութական անկախության երաշխիքները՝ որպես իրավապաշտպան և քաղաքացիական հասարակության միավորներ,

✓ օրենսդրությունը համապատասխանեցնել Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին,

✓ իրականացնել հանրային իրազեկման աշխատանքներ և վերապատրաստումներ՝ ուղղված արհմիությունների սոցիալական դերակատարության բարձրացմանը, դրանց ձևավորման և անդամակցության, անդամակցության արդյունքում առաջացող հնարավորությունների մասին,

- ✓ ***ամրապնդել արհմիությունների ներկայությունը և գործուն դերակատարությունը աշխատողների կարգապահական վարույթներում,***
- ✓ ***ապահովել արհմիությունների ներկայացուցիչների ներկայացվածությունը տարբեր աշխատանքային հաստատությունների խորհուրդներում կամ ներկայացուցչական մարմիններում՝ հնարավորություն տալով բարձրաձայնելու աշխատողների խնդիրները,***
- ✓ ***ապահովել արհմիությունների մասնակցությունը աշխատողների իրավունքներին առնչվող քաղաքականության մշակման և դրա կատարման վերահսկման գործընթացներին, մասնավորապես՝ օրենսդրորեն ամրագրել, որ աշխատանքային և արհմիության գործունեությանն առնչվող ոլորտների օրենսդրության մեջ փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարվում են՝ նախապես դրանք քննարկելով արհմիությունների կազմակերպությունների հետ:***

ԳԼՈՒԽ 4. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Հանրակրթական ուսումնական հաստատություններում դասագրքերի օգտագործման համար ներդրումային գումարների գանձումը

2023 թվականին հանրակրթական ուսումնական հաստատություններում դասագրքերի օգտագործման համար ներդրումային գումարների գանձման խնդիրը մնացել է արդիական, որին անդրադարձ է կատարվել Մարդու իրավունքների պաշտպանի 2018, 2019, 2020 և 2021 թվականների տարեկան հաղորդումներում: Խնդիրը նրանում է, որ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում պետական բյուջեի միջոցների հաշվին անվճար շարունակում են ապահովվել միայն առաջինից չորրորդ դասարանի աշակերտների՝ տարրական ընդհանուր կրթական ծրագրերով նախատեսված դասագրքերը:

Հաշվետու տարում Պաշտպանը կարևորել է հանրապետության ողջ տարածքում գործող հանրակրթական դպրոցներում ուսումնական տպագիր բոլոր դասագրքերի՝ սահմանված ժամկետում տրամադրումն, ինչպես նաև էլեկտրոնային դասագրքերի՝ միջազգային չափորոշիչներին համապատասխանեցումը և դրանցից օգտվելու հասանելի հնարավորությունների երաշխավորումը: Պաշտպանն ընդգծել է, որ հանրակրթական դպրոցներում էլեկտրոնային դասագրքերով ուսումնական գործընթացի կազմակերպումը պետք է համապատասխանի ոչ միայն «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով երաշխավորված՝ հավասար հնարավորությունների հիման վրա կրթության մատչելիության ապահովման ստանձնած պարտավորությանը, այլև երեխաների առողջության պահպանմանը և բնականոն զարգացմանը՝ հաշվի առնելով ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի կողմից հաստատված թվային դասագրքերի և օժանդակ թվային ուսումնական նյութերի որակի հատուկ չափորոշիչները[116]:

«Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2111-Ն Կառավարության որոշման *««1146.Հանրակրթության ծրագրի» 11016. Կրթական հաստատությունների աշակերտներին դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովում»* միջոցառման շրջանակներում ԿԳՄՍ նախարարությունը պետական բյուջետային միջոցներով կազմակերպում և համակարգում է ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 1-ից 4-րդ դասարանների, ազգային փոքրամասնությունների սովորողների, ինչպես նաև տեսողության խնդիրներ ունեցող երեխաների բրայլյան տառատեսակով տպագրվող դասագրքերով ապահովման գործընթացը՝ առաջնորդվելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021 թվականի նոյեմբերի 29-ի N 81-Ն և 2022 թվականի հունիսի 9-ի N 20-Ն հրամաններով հաստատված կարգերով:

Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների չորրորդից բարձր դասարանների աշակերտների դասագրքերի տրամադրման համար պարտադիր պայման է դրանց օգտագործման դիմաց աշակերտների ծնողների (օրինական ներկայացուցիչների) կողմից դասագրքերի ներդրումային գումարների վճարումը՝ համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2009 թվականի օգոստոսի 21-ի «Հանրակրթական ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու, հանրակրթական առարկաների դասագրքերը հրատարակելու և հանրակրթության պետական չափորոշչին դասագրքերի

116 Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2679 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

համապատասխանության գնահատման առարկայական հանձնաժողովների ձևավորման կարգը հաստատելու մասին» N 752-Ն հրամանի հավելվածի 5-րդ կետի:

Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին դասագրքերով ապահովելու համար ներդրումային վճարների վերաբերյալ հրամանով բացառություն նախատեսված չէ: ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերի հաշվարկման, պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերում կատարվող վերաբաշխումների կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 25-ի N 773 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1262-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ բոլոր պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների, ըստ աշակերտների թվի, ֆինանսավորման իրականացման բանաձևը:

2020 թվականի օրենսդրական փոփոխություններով «Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու կարգը հաստատելու իրավասությունը կրթության պետական կառավարման լիազորված մարմինն է:

2021 թվականի նոյեմբերի 29-ի «ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանը ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու կարգը հաստատելու և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2009 թվականի օգոստոսի 21-ի N 752-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 81-Ն հրամանով հաստատված հավելվածի 7-րդ կետով ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված կամ պետության կողմից իրականացվող սոցիալական աջակցության ծրագրերում ընդգրկված ընտանիքների սովորողներին հատկացվող դասագրքերի համար ներդրումային գումարների փոխհատուցումն իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցներից՝ «Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում» ծրագրի շրջանակներում: Հաստատության սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների ցուցակը կազմվում է Հաստատության մանկավարժական և ծնողական խորհուրդների համատեղ նիստում և հաստատվում տնօրենի կողմից:

Խնդրի կապակցությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 2017 թվականին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան, ինչի արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանը 2018 թվականի հունիսի 12-ի ՍԴՈ-1419 որոշմամբ հաստատել է, որ պետությունը պարտավոր է երաշխավորել սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների համար դասագրքերի հասանելիությունն ապահովող բավարար որոշակի, թափանցիկ և հավասարության վրա հիմնված ընթացակարգեր: Սահմանադրական դատարանը որոշման մեջ ընդգծել է սոցիալապես անապահով ընտանիքի սովորողներին դասագրքերի անվճար հասանելիությունն ապահովելու կարգը օրենքով ամրագրելու և ի կատարումն այդ օրենքի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտությունը:

ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-1419 որոշմամբ հայտնած դիրքորոշմամբ «Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում» ծրագրի շրջանակներում փոխհատուցման կարգը խնդրահարույց է դասագրքերի հասանելիությունը երաշխավորելու առումով առնվազն երկու պատճառով: Նախ՝ նշված կարգը չի հստակեցնում ընտանիքի՝ «սոցիալապես անապահով»

կարգավիճակ ձեռք բերելու և այդ կարգավիճակով պայմանավորված՝ դասագրքերն անվճար կամ էականորեն նվազեցված գնով հասանելիությունն ապահովելու հստակ ընթացակարգեր: Երկրորդ՝ մարդու հիմնական իրավունքների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգերը և կառուցակարգերը՝ տվյալ դեպքում սոցիալապես անապահով ընտանիքի սովորողներին դասագրքերի անվճար հասանելիությունն ապահովելու կարգը, պետք է ամրագրվեն օրենքով և ի կատարումն այդ օրենքի ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով:

Խնդիրն արդիական է նաև գործնականում դրա իրավաչափ կիրառման ապահովման տեսանկյունից: Մասնավորապես, օրենսդրական մակարդակում նախատեսված չեն այն հստակ չափանիշները, սկզբունքները և փաստերը, որոնց հաշվառմամբ պետք է ընտրվեն ծրագրի շահառու երեխաները: Գործող իրավական ակտերի կիրառողների համար նշված չափանիշների բացակայության արդյունքում առաջացած լայն հայեցողությունը գործնականում առաջացնում է տարբեր խնդիրներ: Երեխաների սոցիալական կարիքների գնահատումը գործնականում կարող է իրականացվել երկակի չափորոշիչների հիման վրա, այդ թվում՝ օբյեկտիվ չափանիշների բացակայության և թերի կարգավորումների արդյունքում:

Այս առումով, ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ 2022 և 2023 թվականների ընթացքում ԿԳՄՍ նախարարության սոցիալական ցանցերի հաշիվների և «Թեժ գիծ» ծառայության միջոցով ստացվել է 7 բողոք՝ սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների համար դասագրքերի հասանելիությունն ապահովելու վերաբերյալ:

Միասնական չափորոշիչների բացակայության պայմաններում հանրապետության տարբեր ուսումնական հաստատություններում ներդրումային գումարների գանձումը կարող է տարբեր կերպ իրականացվել: Ավելին, ներդրումային գումարների չվճարելու արտոնությունից օգտվելու հարցի շուրջ մոտեցումները երբեմն հանգեցնում են երեխաների նկատմամբ խտրական վերաբերմունքի նույնիսկ ուսումնական հաստատության անձնակազմի կողմից, ինչի պատճառով երեխաները կամ նրանց ընտանիքները հաճախ խուսափում են այդ արտոնությունից օգտվելու մասին բարձրաձայնելուց:

Կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարության տվյալներով 5-ից 12-րդ դասարանների սովորողների դասագրքերով ապահովման գործընթացն իրականացնում է «Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամը»: 2023 թվականին 5-ից 12-րդ դասարանների սովորողների գործընթացն իրականացվել է «Մեկ աղբուրից» գնման ձևով և «Հանրակրթության պետական նոր չափորոշչի» փուլային ներդրմամբ պայմանավորված 2-րդ, 5-րդ, 7-րդ, 10-րդ դասարանների հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման համար ԿԳՄՍ նախարարության կողմից հայտարարված և անցկացրած դրամաշնորհային մրցույթի արդյունքների ամփոփման միջոցով՝ դպրոցների սովորողների, ուսուցիչների թվաքանակի և դասագրքերի պահանջարկների հիման վրա:

ԿԳՄՍ նախարարությունից տեղեկացրել են նաև, որ պետական բյուջեի միջոցներով տպագրվող դասագրքերի պահանջարկը ձևավորվում է «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Դասագրքեր» բաժնում, և ամփոփ տվյալները տրամադրվում են նախարարությանը, որը պահանջարկի հիման վրա կազմակերպում է դասագրքերի ձեռքբերման գործընթացը՝ ապահովելով «Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 26.13-րդ կետի պահանջները:

Այնուամենայնիվ, ստացվում է, որ Սահմանադրական դատարանի դեռևս 2018 թվականի հունիսի 12-ի ՍԴՈ-1419 որոշմամբ դիրքորոշումը, այն է՝ սոցիալապես անապահով ընտանիքի սովորողներին դասագրքերի անվճար հասանելիությունն ապահովելու կարգը օրենքով ամրագրելու և ի կատարումն այդ օրենքի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր սահմանելու պահանջը, 2023 թվականի ընթացքում, ինչպես նախորդ տարիներին, չի կատարվել:

Միաժամանակ, պետությունը, նախատեսելով դասագրքերի համար վճար, օրենսդրությամբ որևէ տարանջատում չի սահմանում սոցիալապես անապահով երեխաներին դասագրքերով ապահովելու համար:

Հարկ է նշել, որ անվճար միջնակարգ կրթության իրավունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածով, որի համաձայն՝ պետությունը խթանում է կրթության և գիտության զարգացումը: Ավելին, ՀՀ Սահմանադրության՝ անձի հիմնարար իրավունքներն ամրագրող 2-րդ գլխի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է:

Խնդրի առնչությամբ պետք է նշել նաև, որ ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներից է կրթության բոլոր մակարդակներում խոցելի խմբերի ներկայացուցիչների, մասնավորապես՝ հաշմանդամություն ունեցող անձանց, համայնքաբնակ անձանց և խոցելի վիճակում գտնվող երեխաների համար կրթության հավասար հասանելիության ապահովումը[117]:

ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային հանձնաժողովի Տնտեսական, սոցիալական և մշակութային միջազգային դաշնագրի վերաբերյալ 13-րդ ընդհանուր մեկնաբանություն[118].

Թեև պետությունները պետք է առաջնահերթություն տան անվճար տարրական կրթության ապահովմանը, վերջիններս նաև պարտավոր են կոնկրետ քայլեր ձեռնարկել անվճար միջնակարգ և բարձրագույն կրթության հասնելու համար:

ՄԱԿ-ի կրթության իրավունքի վերաբերյալ հատուկ զեկուցող[119].

Օգտագործելով հաշմանդամություն ունեցող անձանց համար մշակված մոտեցումը՝ ներառական կրթության իրավունքը պետք է կիրառվի բոլոր մարգինալացված խմբերի համար: «Ներառում» նշանակում է խոչընդոտները հաղթահարելու համար փոփոխել կրթական բովանդակությունը, ուսուցման մեթոդները, մոտեցումները, կառուցվածքները և ռազմավարությունները, որպեսզի բոլոր սովորողները ունենան հավասար ուսուցման փորձառություն և համապատասխան միջավայր:

117 Տե՛ս ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներ, 4.5 նպատակ, հասանելի է https://www.un.org/sustainabledevelopment/education/ հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

118 Տե՛ս ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային հանձնաժողովի Տնտեսական, սոցիալական և մշակութային միջազգային դաշնագրի վերաբերյալ 13-րդ ընդհանուր մեկնաբանությունը, 1999թ., կետ 14, հասանելի է https://docstore.ohchr.org/SelfServices/FilesHandler.ashx?enc=4slQ6QSmlBEDzFEovLCuW%2BKyH%2BnXprasyMzd2e8mx4cYID1VMUKXaG3Jw9bomilLKS84HB8c9nIHQ9mUemvt0Fbz%2F0SS7kENyDv5%2FbYPWAxMw47K5jTga59puHtt3NZr հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

119 Տե՛ս ՄԱԿ-ի Կրթության իրավունքի վերաբերյալ հատուկ զեկուցողի թիվ A/HRC/53/27 զեկույցը, «Կրթության իրավունքի ապահովում. առաջընթացներ և կարևոր մարտահրավերներ», 2023թ., կետ 46, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Այսպիսով, ճանաչելով անվճար միջնակարգ կրթության իրավունքը և ամրագրելով ՀՀ-ում տասներկուամյա միջնակարգ կամ նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին մասնագիտական պարտադիր կրթությունը՝ պետությունը պարտավոր է ուշադրության կենտրոնում պահել կրթության իրավունքի իրացման համար անհրաժեշտ բաղկացուցիչ մաս կազմող դասագրքերի համար նախատեսված ներդրումային վճարների օրենսդրական կարգավորման հարցը, ընդ որում՝ այնպիսի մեթոդաբանությամբ, որը նկատի կունենա հարցի զգայունությունն ու առանձին խումբ երեխաների նկատմամբ չի հանգեցնի փաստացի խտրական վերաբերմունքի:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***ապահովել անվճար դասագրքերով պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների չորրորդից բարձր դասարանների՝ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին,***
- ✓ ***ապահովել Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1419 որոշմամբ հայտնած դիրքորոշման կատարումը, այն է՝ օրենքով ամրագրել սոցիալապես անապահով ընտանիքի սովորողներին դասագրքերի անվճար հասանելիությունն ապահովելու կարգը և ի կատարումն այդ օրենքի՝ ընդունել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:***

2. Ջրի և սանիտացիայի հասանելիության հարցը նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում

2018 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը նախաձեռնել ու իրականացրել է նախադպրոցական ուսումնական, հանրակրթական ուսումնական, ինչպես նաև երեխաների խնամք իրականացնող հաստատություններում ջրի և սանիտարական պայմանների ուսումնասիրման ծրագիրը: Ծրագրի շրջանակներում ուսումնասիրվել է ոլորտի օրենսդրությունը, կատարվել են այցեր և մշտադիտարկումներ ուսումնական հաստատություններում՝ ջրի և սանիտարական պայմանների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով:

2019 թվականին Պաշտպանը հրապարակել է «Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության իրավունքի ապահովման վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկույցը[120], որում ներկայացվել են մշտադիտարկման արդյունքում վեր հանված ջրի և սանիտացիայի հասանելիության վիճակը, խնդիրներն ու դրանց լուծման ուղղությունները:

Նախորդ տարիների ընթացքում հանրակրթական և նախադպրոցական ուսումնական հաստատություններում և երեխաների խնամք իրականցող հաստատություններում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի պարբերական մշտադիտարկումների արդյունքում արձանագրվել են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ ջրամատակարարման բացակայությունը կամ անհասանելիությունը, ծորակների և սանհանգույցների անբավարար քանակը, ըստ սեռերի առանձնացված սանհանգույցների բացակայությունը, ցայտաղբյուրների բացակայությունը, խմելու ջրից օգտվելու ոչ հիգիենիկ եղանակները, սանհանգույցներում զուգարանակոնքի ոչ փակ խցիկներում տեղադրված լինելը: Մշտադիտարկումների արդյունքում արձանագրված խնդիրներն

[120] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի «Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության իրավունքի ապահովման վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկույցը, 2019թ., հասանելի է https://ombuds.am/images/files/1c2de2c4d7e5715dd0fe05676136de73.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

առավել մանրամասն ներկայացվել են Մարդու իրավունքների պաշտպանի 2021 թվականի տարեկան հաղորդման մեջ[121]:

Նախադպրոցական ուսումնական, հանրակրթական ուսումնական, ինչպես նաև երեխաների խնամք իրականացնող հաստատություններում ջրի և սանիտարական պայմաններին առնչվող խնդիրներն ունեն շարունակական բնույթ, ուստիև պարբերաբար բարձրաձայնվել են Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունն ամփոփող նախորդ տարեկան հաղորդումներում[122]:

Մարդու իրավունքների պաշտպանն իր նախորդ տարեկան հաղորդումներում պարբերաբար բարձրացրել է այն հարցը, որ ի տարբերություն հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ գործող օրենսդրությամբ ամրագրված չեն նախադպրոցական ուսումնական հաստատությունների, շինարարական նորմերի, ջրի որակի, անընդհատության և մատակարարվող ջրի ջերմաստիճանի, ինչպես նաև սանիտացիայի վերաբերյալ իրավական կարգավորումներ:

Առողջապահության նախարարի 2024 թվականի փետրվարի 12-ի N 50-Ն հրամանով ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի ««Նախադպրոցական կազմակերպությունների (հիմնարկների)» N 2.III.1 սանիտարական նորմերը և կանոնները հաստատելու մասին» թիվ 857 հրամանը և հաստատվել է «Նախադպրոցական ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» 2.1.2.001-24 սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմատիվները՝ համաձայն հավելվածի: Ըստ 2024 թվականի փետրվարի 12-ի N 50-Ն հրամանի՝ նախադպրոցական ուսումնական հաստատությունների և նախադպրոցական ծառայություններ մատուցող կազմակերպություններն ապահովվում են ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 876 հրամանի պահանջներին համապատասխանող խմելու ջրի որակի ջրով:

Հաստատության ջրամատակարարմանը և կոյուղուն ներկայացվող պահանջները սահմանվում են ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 95-Ն և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 25-Ն հրամաններով:

Պաշտպանը դրական առաջընթաց է համարում՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 25-Ն հրամանով հաստատված հավելվածը, որով սահմանվում են նախադպրոցական հաստատությունների շենքերի նախագծման նորմերի վերաբերյալ շինարարական նորմերը: Ըստ այդմ՝ Նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքերը (շենքերը) պետք է կահավորված լինեն խմելու ջրի մատակարարման, հակահրդեհային և տաք ջրամատակարարման, կոյուղու և ջրահեռացման համակարգերով:

Ուսումնական հաստատություններում ներպետական օրենսդրությամբ սահմանված պահանջների և չափորոշիչների չպահպանումը պայմանավորված է նաև ներպետական օրենսդրությամբ սահմանված սանիտարական կանոնների մասին իրազեկվածության ոչ

[121] Առավել մանրամասն տե՛ս 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումները, էջեր 234-237, հասանելի է https://ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[122] Հասանելի են https://ombuds.am/images/files/8f03a4f279d0491fd510fca443f8f269.pdf (էջեր 151-156), https://ombuds.am/images/files/15b2661f76d10eb07746d7d4d4dec84f.pdf (էջեր 195-202), https://ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf (էջեր 285-295) հղումներով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

բավարար մակարդակով: Պաշտպանի աշխատակազմի կողմից հաստատություններում իրականացված հարցումների արդյունքները վկայում են, որ երեխաները և որոշ դեպքերում հաստատության անձնակազմը պատշաճ կերպով իրազեկված չեն մանկական հանրակրթական և նախադպրոցական օբյեկտների կառուցվածքի, գույքով ու սարքավորումներով ապահովման վերաբերյալ նորմատիվային դրույթների և դրանց չկիրառման հետևանքով հնարավոր բացասական հետևանքների մասին:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության տվյալներով՝ 2023 թվականի ընթացքում ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության խնդիրներ չեն արձանագրվել և ջրամատակարարման և սանիտացիայի հետ կապված ահազանգներ չեն ստացվել, և դրանով պայմանավորված միջոցառումներ չեն իրականացվել:

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից տեղեկացրել են նաև, որ 2023 թվականի ընթացքում ջրի և սանիտացիայի հասանելիության ապահովման նպատակով ՀՀ ԿԳՄՍ նախարարության կապիտալ շինարարության բաժնի և ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության վարչության համապատասխան աշխատակիցները իրականացրել են ուսումնասիրություններ ՀՀ Արմավիրի մարզի «Բաղրամյանի միջնակարգ դպրոց», «Վանանդի միջնակարգ դպրոց», «Հուշակերտի միջնակարգ դպրոց», «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց», «Նոր Արտագերսի միջնակարգ դպրոց», «Վաղարշապատի N 1 հիմնական դպրոց», «Վաղարշապատի N 6 հիմնական դպրոց», «Երասխահունի միջնակարգ դպրոց», «Ջրառատի միջնակարգ դպրոց», «Գեղակերտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ներում:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տվյալներով ՀՀ Արագածոտնի մարզի Ոսկեվազի միջնակարգ դպրոցում իրականացվել են սանհանգույցների վերանորոգման աշխատանքներ: Կոտայքի մարզում վերանորոգվել են դպրոցների, նախադպրոցական հաստատությունների ջրագծեր, կոյուղագծեր, իրականացվել են դեռատիզացիայի աշխատանքներ՝ պայմանագրերի համաձայն: Որոշ դպրոցներ ապահովվել են շուրջօրյա ջրամատակարարմամբ, տեղադրվել են նոր լվացարաններ՝ հիգիենայի պարագաներով: Միաժամանակ, ՏԿԵՆ-ից տեղեկացրել են, որ ՀՀ մյուս մարզերի մարզպետարանների ենթակայությամբ գործող նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության ապահովման ուղղությամբ քայլեր չեն ձեռնարկվել՝ պայմանավորված խնդիրների բացակայությամբ:

Սովորողների շրջանում իրազեկման աշխատանքներ իրականացնելու համատեքստում ԿԳՄՍ նախարարությունից տեղեկացրել են, որ ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի, հիգիենայի կանոնների վերաբերյալ իրազեկման աշխատանքները տարվել են «Առողջ ապրելակերպ» խմբակի միջոցով, որի ծրագրում ընդգրկված են եղել հիգիենայի վերաբերյալ թեմաներ:

2023 թվականի ընթացքում ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի նախաձեռնությամբ կազմակերպվել է իրազեկման սեմինար նաև Երևանի քաղաքապետարանում նախադպրոցական կազմակերպությունների պատասխանատուների համար: Իրազեկման միջոցառմանը մասնակցել են Արաբկիր, Կենտրոն, Էրեբունի Աջափնյակ, Նոր Նորք, Դավթաշեն, Ավան, Նուբարաշեն, Քանաքեռ-Զեյթուն, Մալաթիա-Սեբաստիա, Շենգավիթ և Նորք-Մարաշ վարչական շրջանների նախադպրոցական 160-ից ավելի հաստատությունների և զարգացման կենտրոնների շուրջ

200 ներկայացուցիչներ:

Մասնակիցներն իրազեկվել են ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857 հրամանով հաստատված «Նախադպրոցական կազմակերպությունների (հիմնարկների)» N 2.III.1 սանիտարական նորմերի և կանոնների, ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի ապրիլի 09-ի հրամանով հաստատված թիվ 14-Ն «Աղիքային վարակիչ հիվանդությունների կանխարգելմանը ներկայացվող պահանջներ» N 3.1.1.-027-2013 սանիտարական կանոնների և հիգիենիկ նորմատիվների, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի օգոստոսի 12-ի հրամանով հաստատված թիվ 42-Ն «Նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխաների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջները» N 2.3.1-01-2013 սանիտարական կանոնների և նորմերով սահմանված պահանջների վերաբերյալ[123]:

Հարկ է նշել, որ դպրոցներում ջրի, հիգիենայի և սանիտացիայի պայմանների բավարար հասանելիությունը յուրաքանչյուր երեխայի իրավունքն է, որը ճանաչված է 2030 թվականի ՄԱԿ-ի Կայուն զարգացման օրակարգում, ՄԱԿ-ի Ջրի և առողջության մասին արձանագրությունում և Շրջակա միջավայրի և առողջության մասին Օստրավայի հռչակագրում:

Առողջապահության համաշխարհային կազմակերպություն[124].
Երեխաները պետք է ունենան առողջ ուսումնական միջավայր՝ ապահով և կայուն ջրի, սանիտարական և հիգիենայի ծառայությունների հեշտ հասանելիությամբ: Ապահով և կայուն ջրի, սանիտարական և հիգիենայի համապատասխան հարմարեցումների հասանելիության բացակայությունը կարող է նվազեցնել հաճախելիությունը և կրթական առաջընթացը դպրոցներում: Դպրոցներում ապահով և կայուն ջրի, սանիտացիայի և հիգիենայի ապահովումը առաջնահերթություն է ՄԱԿ-ի Ջրի և առողջության մասին արձանագրությամբ:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ կարող ենք եզրահանգել, որ պետությունը պարտավորություն ունի պարբերաբար նախաձեռնելու և մշտադիտարկման պարբերական աշխատանքների միջոցով հետևողական լինելու նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության ապահովման առնչությամբ առկա խնդիրների արձանագրմանն ու դրանց լուծմանը՝ երեխայի կրթության իրավունքի երաշխավորման համատեքստում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ***իրականացնել բոլոր ուսումնական հաստատությունների՝ գործող նորմերին համապատասխանության համակարգային ուսումնասիրություն,***
- ***ուսումնասիրությունների հիման վրա՝ մշակել կոնկրետ գործողությունների ծրագիր՝ նախատեսելով միջոցառումներ և սահմանելով հաստատություններն օրենսդրությամբ սահմանված նորմերին համապատասխանեցնելու ժամանակացույց,***
- ***ներդնել հատուկ կառուցակարգ, որի միջոցով կիրականացվի պարբերական մշտադիտարկում՝ ոլորտային նորմերի պահպանման նկատմամբ՝ նախանշելով***

[123] Հասանելի է https://www.hlib.am/seminarhigienaavart/ հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[124] Հասանելի է https://www.who.int/europe/activities/ensuring-water-sanitation-and-hygiene-in-schools հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

հաստատություններում համապատասխան գործողությունների անհրաժեշտությունը,

- ***ՀՀ առողջապահության նախարարի 2024 թվականի փետրվարի 12-ի N 50-Ն և 2017 թվականի N 12-Ն հրամաններում կատարել լրացումներ՝ հստակ կարգավորումներ նախատեսելով նախադպրոցական ուսումնական հաստատությունում երեխաների կողմից խմելու ջրից օգտվելու կարգի առնչությամբ՝ հաշվի առնելով վարակների տարածման ռիսկերը: Այդպիսին կարող է լինել հստակ ամրագրված նորմը, ըստ որի՝ երեխաներին կտրամադրվեն բացառապես անհատական օգտագործման այնպիսի բաժակներ, որոնք նրանց համար հեշտ տարանջատելի կլինեն մյուս բաժակներից կամ մեկանգամյա օգտագործման բաժակներ և այլն,***
- ***կազմակերպել նախադպրոցական կազմակերպությունների պատասխանատուների համար իրազեկման սեմինարներ ՀՀ առողջապահության նախարարի 2024 թվականի փետրվարի 12-ի N 50-Ն հրամանով սահմանված կարգավորումների վերաբերյալ,***
- ***իրականացնել իրազեկման աշխատանքներ զանգվածային լրատվության միջոցներով, սոցիալական ցանցերով, ինչպես նաև կրթական ծրագրերի միջոցով ջրի և սանիտացիայի, հիգիենայի կանոնների վերաբերյալ ուսումնական հաստատությունների աշակերտների, վերջիններիս ծնողների համար, ինչպես նաև ուսումնական հաստատությունների պատասխանատու անձանց շրջանում,***
- ***տեղադրել հաստատություններում երեխաների համար սանիտացիայի և հիգիենայի կանոնների պահպանման վերաբերյալ իրազեկող և մատչելի պաստառներ,***
- ***մշակել հստակ ժամանակացույց մինչև ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի N 12-Ն հրամանի ընդունումը կառուցված շենքերում ցայտաղբյուրի առկայությունն ապահովելու համար և վերանայել նույն հրամանի 9-րդ կետի պահանջը՝ նախատեսելով ցայտաղբյուրի քանակի վերաբերյալ համապատասխան նորմեր՝ հաշվի առնելով դպրոցում երեխաների քանակը,***
- ***վարել տարբերակված վիճակագրություն նախադպրոցական ուսումնական, հանրակրթական ուսումնական, ինչպես նաև երեխաների խնամք իրականացնող հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության վերաբերյալ՝ հիմնված տարբեր վերաբերելի չափանիշների վրա:***

3. Սննդի անվտանգության ապահովումը հանրակրթական ուսումնական հաստատություններում

Հայաստանի Հանրապետությունում գործող ուսումնական հաստատություններում սննդի անվտանգության ապահովման հարցը գտնվում է Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության ներքո և տարիներ շարունակ բարձրացվում է Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում ու զեկույցներում: 2023 թվականի ընթացքում խնդիրը մնում է արդիական:

Սննդային գործոնով պայմանավորված՝ զանգվածային վարակիչ հիվանդությունների և սննդային թունավորումների առաջացման ու տարածման, ինչպես նաև զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման նպատակով, ինչպես նաև ելնելով առողջ և ռացիոնալ սննդի սկզբունքից՝ ուսումնական հաստատություններում չօգտագործվող սննդամթերքը և չպատրաստվող ճաշատեսակներն ու խոհարարական կերակրատեսակները սահմանված են ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի «Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի

կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.3.1-02-2014 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» N 32-Ն հրամանով: Ավելին, ըստ Առողջապահության նախարարի N 32-Ն հրամանի՝ ուսումնական հաստատություններում ալերգիկ և քրոնիկ հիվանդություններ ունեցող սովորողների համար սնունդը կազմակերպվում է՝ ելնելով առկա ախտաբանությունից՝ համաձայն սովորողների բուժական և կանխարգելիչ սննդակարգի:

ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի N 32-Ն հրամանի 48-րդ կետի համաձայն՝ ուսումնական հաստատության ղեկավարը սննդի կազմակերպման և դրանում սովորողներին լիարժեք ընդգրկելու պատասխանատու անձն է: Ըստ նույն հրամանի՝ ուսումնական հաստատությունում սովորողների առողջության պահպանմանն ուղղված կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու նպատակով հաստատության ղեկավարի կողմից ապահովվում են՝ սանիտարական կանոնների առկայությունը, սանիտարական կանոնների կատարման ապահովումը և այլն:

Չնայած ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ոլորտային կարգավորումներին՝ Հայաստանի Հանրապետության մի շարք ուսումնական հաստատությունների սննդի կետերում վաճառվում են ուսումնական հաստատություններում արգելված սննդատեսակներ: Միաժամանակ, շարունակում են չլուծված մնալ սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջները պահպանելու և կանխարգելիչ և վերահսկողական պատշաճ կառուցակարգերի և հստակ կարգավորումների բացակայության հետ կապված հարցերը:

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից տրամադրված տվյալներով՝ 2023 թվականի տարեկան ստուգման ծրագրով իրականացվել է՝ 119 մանկապարտեզների ու դպրոցների պլանային և արտապլանային ստուգում: Ստուգումների արդյունքում արձանագրվել է. ժամկետանց սննդամթերք (պահպանված չեն եղել պատրաստողի կողմից սահմանված պահպանման պայմանները և պիտանիության ժամկետները), սննդի կառույցը՝ պահեստների պատերը, չեն ունեցել հարթ մակերես, չեն գտնվել նորոգ վիճակում, պատրաստված չեն եղել անջրանցիկ, չներծծվող, լվացվող նյութերից, սննդի կառույցը՝ պահեստների առաստաղները, նախագծված և կառուցված չեն այնպես, որ կանխարգելվի կամ նվազեցվի կեղտի կուտակումը, գոլորշու խտացումը, անցանկալի բորբոսների աճը և մասնիկների թափվելու հնարավորությունը, խոհանոցի բացվող պատուհանները չեն ունեցել հեշտությամբ բացվող և մաքրվող միջատապաշտպան ցանցեր, փաթեթավորված սննդամթերքի մականշվածքը չի ներառել սննդամթերքի բաղադրությունը՝ սննդամթերքի մականշվածքը զետեղված չի եղել հայերեն լեզվով:

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի արձանագրած խախտումներով սննդամթերքների իրացումը օրենքով սահմանված կարգով կասեցվել և ոչնչացվել է, ինչպես նաև տրվել են հանձնարարականներ խախտումները վերացնելու վերաբերյալ:

2023 թվականի սեպտեմբեր ամսին ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի տեսուչները վերահսկողական միջոցառումներ են անցկացրել Հայաստանի Հանրապետության 22 միջնակարգ դպրոցներում: Խախտումներ արձանագրվել են միայն 4 մարզի 5 դպրոցում, մասնավորապես՝ Արմավիրի մարզի «Արմավիրի 10 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում, Շիրակի մարզի «Հոռոմի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում և «Ամասիայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, Տավուշի մարզի «Աչաջրի Հ. Թամրազյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում: Արձանագրված խախտումների առնչությամբ ՀՀ

սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից տրվել են խախտումները վերացնելու կարգադրագրեր, իսկ ժամկետանց և անհայտ ծագմամբ սննդամթերքը տեղում ոչնչացվել է:

Երևանի քաղաքապետարանից տեղեկացրել են, որ 2023 թվականի ընթացքում Երևանի ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններից սննդի որակի և անվտանգության վերաբերյալ բողոքներ չեն ստացվել: Մարզպետարանների ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատություններում սննդի որակի վերաբերյալ բողոքների ստացման և խնդրի շուրջ ձեռնարկված քայլերի վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից հայտնել են, որ սննդի որակի վերաբերյալ բողոքներ և թերություններ չեն արձանագրվել: Միաժամանակ, ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմից ստացված տեղեկատվության համաձայն՝ ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Կոտայքի մարզային կենտրոնի տեսուչների կողմից իրականացված ստուգման արդյունքում դպրոցի ճաշարանում հայտնաբերվել է ժամկետանց սննդամթերք /ձու և մածուն/: Տեսուչների կողմից կազմվել են արտադրանքի իրացումն արգելելու, ոչնչացնելու մասին կարգադրագիր և վտանգավոր արտադրանքի ոչնչացման ակտ: Դպրոցի տնօրենի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ:

«Դպրոցական սնունդ» ծրագրի միջոցով վերանորոգվել, կահավորվել են դպրոցական ճաշարանները և անցում է կատարվել տաք սննդին, որից հետո քայլ առ քայլ ծրագրի կառավարումը հանձնվել է ՀՀ կառավարությանը: Ծրագիրը ամբողջովին ազգայնացվել է 2023 թվականի հուլիսին: 2023 թվականի դրությամբ ծրագրից օգտվում են ՀՀ բոլոր մարզերի 1000 դպրոցների 100 հազարից ավելի երեխաներ:

«Դպրոցական սնունդ» ծրագիրը մինչ այդ ՀՀ մարզերում ավելի քան 13 տարի իրականացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության, Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» հիմնարկի (SFCWA), Ռուսաստանի Դաշնության Սննդի ճյուղային ինստիտուտի (SIFI), ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի (ՊՀԾ) և նրա տեխնիկական գործընկերների հետ ռազմավարական համագործակցության արդյունքում:

2023 թվականի ընթացքում «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի «Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» հիմնարկը վերահսկել է դպրոցներում ծրագրի իրականացումը՝ մշակելով ճաշացանկեր և կազմակերպելով մասնագիտական դասընթացներ ծրագրի շահագրգիռ կողմերի համար:

Ծրագիրը ոչ միայն երեխաներին սնունդ տալու համար է, այլ նաև կրթական բաղադրիչ է պարունակում իր մեջ: Մասնավորապես, այն ներառվել է «Առողջ ապրելակերպ» դասընթացում:

ԿԳՄՍ նախարարությունից ստացված տվյալներով՝ 2023 թվականին ՀՀ կառավարության որոշմամբ ՀՀ Շիրակի մարզպետարանի ենթակայությամբ գործող 128 հանրակրթական դպրոցներում իրականացվել են ճաշարանների համար անհրաժեշտ գույքի և սարքավորումների ձեռքբերման աշխատանքներ՝ «Դպրոցական սնունդ» ծրագրի արդյունավետության բարձրացման նպատակով:

ՀՀ Շիրակի մարզը «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրին անցում է կատարել 2018 թվականի սեպտեմբերին, որի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է ապահովել դպրոցների ճաշարանների համապատասխան շենքային պայմանները, գույքի, սարքավորումների և այլ անհրաժեշտ պարագաների առկայությունը: «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի «Դպրոցական

սնունդ և երեխաների բարեկեցություն» հիմնարկը մարզի 146 դպրոցներում իրականացրել է ճաշարանների կարիքների գնահատման և հավաքագրման գործընթաց:

ՀՀ Շիրակի մարզի օրինակով այժմ կարիքների գնահատում է իրականացվում ՀՀ Արմավիրի մարզի հանրակրթական դպրոցների ճաշարաններում՝ անհրաժեշտ միջոցառումների կազմակերպման նպատակով:

Խնդրի առնչությամբ պետք է նշել, որ մարդու իրավունքների միջազգային իրավունքի համաձայն՝ պետությունը բոլոր մակարդակներում առաջնային պատասխանատվություն է կրում դպրոցում բավարար սննդի իրավունքի իրացման հարցում: Դպրոցում համապատասխան սննդի իրավունքի երաշխավորումը ենթադրում է ոչ միայն քանակապես բավարար սննդի, այլև դրա անվտանգության և որակի համապատասխանության ապահովում[125]:

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի թիվ 15 ընդհանուր մեկնաբանություն երեխայի՝ առողջության ամենաբարձր հասանելի չափանիշներից օգտվելու իրավունքի վերաբերյալ.

Դպրոցական սնունդը ցանկալի է ապահովի բոլոր աշակերտների ամենօրյա լիարժեք սնունդը, ինչը կարող է նաև մեծացնել երեխաների ուշադրությունը ուսման նկատմամբ և դպրոցում ներգրավվածությունը: ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոմիտեն առաջարկում է, որ դա զուգակցվի սնուցման և առողջապահական կրթության հետ, ներառյալ դպրոցական այգիների ստեղծումը և ուսուցիչների վերապատրաստումը երեխաների սնվելու և առողջ սննդի սովորույթները խթանելու համար:

Այսպիսով, Պաշտպանն ընդգծում է, որ հանրակրթական և նախադպրոցական հաստատություններում սովորողների համար սննդամթերքի անվտանգությունը, առողջ և ռացիոնալ սննդի կազմակերպումը կարևոր նախապայմաններ են երեխայի առողջ ֆիզիկական զարգացման և դասընթացներին լիարժեք մասնակցության, արդյունքում՝ կրթության իրավունքի պատշաճ իրացման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***ապահովել հանրակրթական ուսումնական հաստատություններում սննդի կազմակերպումը՝ «Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.3.1-02- 2014 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի N 32-Ն հրամանի պահանջներին համապատասխան,***
- ✓ ***իրականացնել պատշաճ վերահսկողություն ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի N 32-Ն հրամանի պահանջների պահպանման նկատմամբ,***
- ✓ ***նախաձեռնել իրազեկման աշխատանքներ ռացիոնալ և առողջ սննդի վերաբերյալ նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների, ուսուցիչների և հաստատության անձնակազմի համար,***
- ✓ ***դպրոցներում ապահովել առողջապահական կրթական ծրագրեր, որոնք հաղորդում են տեղեկատվություն սննդի հիգիենայի սկզբունքների վերաբերյալ:***

[125] Տե՛ս ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության Դպրոցական սննդի և սնուցման վերաբերյալ իրավական ուղեցույցը, 2020թ., հասանելի է https://www.fao.org/3/ca9730en/CA9730EN.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

4. Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում շենքային, գույքային պայմանների և ջեռուցման ապահովման վերաբերյալ խնդիրներ

2023 թվականի ընթացքում ուսումնական հաստատություններում շենքային, գույքային անբավարար ու վատ պայմանների, ինչպես նաև ջեռուցման հետ կապված խնդիրները շարունակում են չլուծված մնալ, ուստիև պարբերաբար բարձրացվել են Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ինչպես տարեկան հաղորդումներում ու հատուկ զեկույցներում, այնպես էլ իրավասու պետական մարմիններին հասցեագրված գրություններով:

Նախորդ տարիների ընթացքում հանրակրթական ու նախադպրոցական կրթական ուսումնական հաստատությունների շենքային ու գույքային անբավարար ու վատ պայմանների և ջեռուցման խնդիրներ արձանագրվել են Մարդու իրավունքների պաշտպանին ուղղված անհատական բողոքների քննարկման, ինչպես նաև մշտադիտարկման աշխատանքների իրականացման արդյունքում:

Ուսումնական հաստատությունների շենքային և գույքային անբավարար ու վատ պայմանները մտահոգություն են առաջացնում ուսուցման գործընթացի կազմակերպման և երեխայի, ուսուցչական ու վարչական անձնակազմի կյանքի ու առողջության պահպանման իրավունքի տեսանկյունից:

Շենքային և գույքային անբավարար պայմաններն իրենց մեջ ընդգրկում են շենքի վթարային կարգի կամ նյութական պայմանների ոչ բավարար մակարդակի, դասասենյակների անհրաժեշտ կահավորման, որոշ դեպքերում նաև մարզական դահլիճների բացակայության և բարեկարգության հարցերը: Երեխաների համար հատկապես գյուղական բնակավայրերում, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող սովորողների համար շենքային վատ պայմանները լուրջ խնդիրներ են առաջացնում: Դպրոցական շենքերը, ներառյալ սանհանգույցները և դասասենյակները խնդրահարույց են նաև վերջիններիս մատչելիության տեսանկյունից[126]:

Այս առումով, 2023 թվականի ընթացքում Պաշտպանին առընթեր Երեխաների ու երիտասարդների հարցերով խորհրդի անդամները նույնպես դիտարկումներ են ներկայացրել ուսումնական հաստատությունների շենքային անբավարար պայմանների վերաբերյալ: Մասնավորապես, հայտնել են, որ իրենց դպրոցներում չկա մարզադահլիճ կամ մարզադահլիճը վերափոխվել է պահեստի, իսկ սանհանգույցները գտնվում են ոչ բարեկարգ վիճակում և հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար:

ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ բաժնի 4.3-րդ ենթաբաժնի համաձայն՝ նախատեսվում է մինչև 2026 թվականը կառուցել, հիմնանորոգել կամ վերանորոգել առնվազն 300 դպրոց՝ ապահովելով դրանց ամբողջական հագեցումն անհրաժեշտ գույքով և սարքավորումներով:

Այս առումով, հաշվետու տարվա ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել է բողոք Շիրակի մարզի Գետափի Գ. Արշակյանի անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի տնօրենի և մանկավարժական ու ծնողական խորհուրդների անդամների՝ Գ. Արշակյանի անվան միջնակարգ դպրոցը ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված՝ մինչև 2026 թվականը կառուցվող,

[126] Մանրամասն տե՛ս սույն հաղորդման «Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ» վերտառությամբ բաժնի «Կրթության իրավունքը» վերտառությամբ գլխում:

հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների ծրագրում ընդգրկված չլինելու վերաբերյալ: Բողոք ներկայացրած անձինք հայտնել են, որ Գ. Արշակյանի անվան միջնակարգ դպրոցը կառուցված է չափազանց խոնավ տեղանքում և գրունտային հիմք չունենալու արդյունքում այն արագ խոնավություն է ներծծում, ինչի հետևանքով՝ երեխաների մոտ մշտապես նկատվում է սրտխառնոց և գլխացավ: Վերջիններս նշել են նաև, որ առողջապահության ոլորտի մասնագետների կողմից դպրոցում իրականացվել են մշտադիտարկումներ, որոնց արդյունքներով արձանագրվել է, որ նման պայմաններում դասապրոցես անցկացնելը հակացուցված է:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքով նշվել է, որ 2022 թվականի դեկտեմբերի 20-ին Շիրակի մարզպետարանից բողոք ներկայացրած անձանց գրավոր տեղեկացրել են, որ Գ. Արշակյանի անվան միջնակարգ դպրոցն ընդգրկվել է 2021-2026 թվականների դրությամբ կառուցվող, վերակառուցվող և հիմնանորոգվող հանրակրթական ուսումնական հաստատությունների ցանկում: Այնուամենայնիվ, ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշման շրջանակներում կազմվել է հրատապ կառուցման, վերանորոգման և հիմնանորոգման ենթակա ուսումնական հաստատությունների ցանկ, որում Գ. Արշակյանի անվան միջնակարգ դպրոցը չի ընդգրկել: Դպրոցի տվյալները բացակայում են նաև Շիրակի մարզի բնակավայրերում իրականացվելիք աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման ուղղությամբ տարվող աշխատանքների ցանկում:

Բողոք ներկայացրած անձինք հայտնել են, որ ՀՀ կառավարության թիվ 1363-Ա որոշմամբ սահմանված ցանկից Գ. Արշակյանի անվան միջնակարգ դպրոցը հանելու վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով դիմել են իրավասու մարմիններին, սակայն որևէ արդյունքի չեն հասել:

Բողոքի ուսումնասիրության հիման վրա Պաշտպանը գրություն է հասցեագրել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն: Գրությանն ի պատասխան՝ Նախարարությունը տեղեկատվություն է տրամադրել այն մասին, որ Գ. Արշակյանի անվան միջնակարգ դպրոցը ներառված չէ ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության մինչև 2026 թվականը «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի «Կրթություն» ենթաբաժնում նախատեսվող՝ մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների և 500 մանկապարտեզների ծրագրում: Միաժամանակ, Նախարարությունից հայտնել են, որ դպրոցների ցանկի համալրման հնարավորության դեպքում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը կդիտարկի Գ. Արշակյանի անվան միջնակարգ դպրոցի՝ ծրագրում ներառվելու հարցը:

Հարկ է նշել, որ հարցը բանավոր եղանակով քննարկվել է Նախարարության իրավասու ներկայացուցչի հետ: Պաշտպանի ներկայացուցչին տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ դպրոցների ընդգրկման հարցը քննարկելիս առաջնորդվել են որոշակի չափորոշիչներով, ինչպես նաև հաշվի են առնվել առաջնահերթության հարցերը՝ պայմանավորված դպրոցների վիճակի և կարիքների հրատապությամբ: Միաժամանակ, տեղեկացվել է, որ դպրոցների ընդգրկման հարցը քննարկել է ձևավորված համապատասխան հանձնաժողովը:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Պաշտպանը լրացուցիչ գրություն է հասցեագրել ՀՀ ԿԳՄՍ նախարարություն՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն և առաջարկել է քննարկել Գ. Արշակյանի անվան միջնակարգ դպրոցը մինչև 2026 թվականը կառուցվող,

հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների ծրագրում ընդգրկելու հնարավորության հարցը:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գ. Արշակյանի անվան միջնակարգ դպրոցի շենքային անբավարար պայմանները բացասաբար են ազդում երեխաների առողջության պահպանման իրավունքի վրա՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը գրություն է հասցեագրել Վարչապետի աշխատակազմ՝ դպրոցը մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների ծրագրում ընդգրկելու հնարավորության հարցը քննարկելու և արդյունքների մասին տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ:

Միաժամանակ, Երևանի քաղաքապետարանի տվյալների համաձայն՝ 2023 թվականի ընթացքում հանրակրթական ուսումնական հաստատություններում շենքային և կոմունալ վատ պայմանների պատճառով դասապրոցեսի խաթարման դեպքեր հիմնականում չեն արձանագրվել:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տվյալների համաձայն՝ 2023 թվականի ընթացքում ՀՀ Արագածոտնի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի և Վայոց ձորի մարզերում գործող հանրակրթական ուսումնական հաստատություններում շենքային և կոմունալ վատ պայմանների պատճառով դասապրոցեսի խաթարման դեպքեր նույնպես չեն արձանագրվել:

Ուսումնական հաստատություններում շենքային անբավարար պայմաններից զատ կան նաև ջեռուցման, ջրամատակարարման, ջրահեռացման և այլ խնդիրներ: Այս խնդիրները տարիներ շարունակ բարձրացնում են նաև Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունները և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները[127]: 2023 թվականի ընթացքում ևս արձանագրվել են ուսումնական հաստատություններում ջեռուցման խնդիրներ: Այս մասին են վկայում իրավասու պետական մարմինների պարզաբանումները:

Երևանի քաղաքապետարանի տվյալներով ջեռուցման համակարգի ժամանակավոր խաթարման պատճառով երբեմն դասապրոցեսը կազմակերպվել է հեռավար եղանակով: Դպրոցների ջեռուցման խնդիրների վերաբերյալ բողոքներն ուսումնասիրվել են աշխատակազմի հանրակրթության վարչության աշխատակիցների կողմից, ըստ անհրաժեշտության՝ կրթական հաստատությունների ղեկավարներից պահանջվել են բացատրություններ, տրվել հանձնարարականներ սեղմ ժամանակահատվածում խնդիրների լուծման, ինչպես նաև ջեռուցումն ըստ եղանակային պայմանների, այլ ոչ թե որոշակի ամսաթվից սկսած ապահովելու վերաբերյալ:

Ըստ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տվյալների՝ «ՀՀ Լոռու մարզի Վարդաբլուրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի համար կառուցվող մարզադահլիճի շինարարական աշխատանքների պատճառով ուսումնական մասնաշենքը չէր միացվել նորակառույց կաթսայատանը, որի պատճառով սանիտարական նորմերին համապատասխան ջերմային ռեժիմ հնարավոր չէր ապահովել; 2023 թվականի նոյեմբերի 23-ից դպրոցը կրթությունն իրականացնում էր հեռավար: 2024 թվականի հունվար ամսվա դրությամբ դպրոցը ջեռուցվում է:

Ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավման, սեյսմիկ

[127] Տե՛ս ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հայտարարությունը (ՅՈՒՆԻՍԵՖ), հասանելի է https://cutt.ly/itd6fO9 հղումով, «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» և «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ների ՀՀ հանրակրթական դպրոցների նյութատեխնիկական և սանիտարահիգիենիկ պայմանների մոնիտորինգի արդյունքների վերաբերյալ զեկույցը, էջ 42, հասանելի է https://transparency.am/files/publications/1575983241-0-311692.pdf?v=4 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

անվտանգության խնդիրների շուրջ միջոցառումների իրականացումը ներառված է ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» 2019 թվականի մայիսի 16-ի N 650-Լ որոշման 1-ին հավելվածի 169-րդ կետում:

ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման Հավելված N 1-ով հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունության միջոցառումների ծրագրի 18-րդ կետով նախատեսվում է հանրակրթական նշանակության օբյեկտների շենքային պայմանների բարելավում:

Կրթական բարենպաստ միջավայրի ստեղծման համար հանրակրթական ուսումնական հաստատությունների դպրոցական գույքի նորացման, շենքային պայմանների բարելավման, միջազգային չափանիշներին համապատասխանեցման հարցերը ներառված են նաև ՀՀ Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-Լ N 45-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 184-Ա որոշման հավելվածով ամրագրված Երևանի զարգացման 2019-2023 թվականների հնգամյա ծրագրում:

Վերոնշյալ խնդիրների լուծման ուղղությամբ դեռևս 2015 թվականին ՀՀ կառավարության թիվ 797-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագիրը»:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տվյալներով՝ 2023 թվականին Նախարարությունը կազմակերպել է հանրակրթական ուսումնական հաստատություններում շենքային անբավարար պայմանների վերաբերյալ պարբերական այցեր և մշտադիտարկումներ ՀՀ բոլոր մարզերում և Երևանում: ՀՀ կառավարության 2021-2026թթ.-ի ծրագրով ամրագրված 300 դպրոցի կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման ծրագրի շրջանակներում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը ՀՀ քաղաքաշինության կոմիտեի օժանդակությամբ մեկնարկել է ՀՀ մարզերի գյուղական բնակավայրերում կրթահամալիրների ստեղծման ծրագիրը: Կրթահամալիրների ստեղծմամբ նախատեսվում է բարձրացնել նախադպրոցական կրթության մատչելիության և հասանելիության աստիճանը բոլոր համայնքներում, բարելավել շենքային պայմանները, ներդնել դպրոցական կառավարման բարելավված համակարգ և փոքրաթիվ աշակերտական համակազմ ունեցող դպրոցների կրթության կազմակերպման արդյունավետ մոդելներ:

ԿԳՄՍ նախարարությունից տեղեկացրել են նաև, որ ՀՀ կառավարության թվականի ապրիլի 6-ի թիվ 491-Ն, 2023 թվականի մայիսի 4-ի թիվ 682-Ն, 2023 թվականի մայիսի 23-ի թիվ 823-Ն, 2023 թվականի հունիսի 16-ի թիվ 977-Ն և 2023 թվականի հուլիսի 6-ի թիվ 1140-Ն որոշումներով գումարներ են հատկացվել բոլոր մարզերում 36 համայնքների 178 բնակավայրերը ներառող 75 կրթահամալիրների կառուցման նպատակով:

ԿԳՄՍ նախարարությունից տեղեկացրել են, որ 2023 թվականին դպրոցական միջավայրի բարելավման ծրագրի ճշտված բյուջեն կազմել է 12,708,844.5 հազար դրամ, որը 2022 թվականի համեմատ 9,2%-ով ավելի է:

Երևանի քաղաքապետարանի կոմունալ տնտեսության վարչության «Երևան քաղաքում հրատապ լուծում պահանջվող ընթացիկ աշխատանքներ» ծրագրի շրջանակում «Երևանի Խրիմյան Հայրիկի անվան հ.10 հիմնական դպրոց», «Երևանի հ. 160 հիմնական դպրոց», «Երևանի Նաիրի Զարյանի անվան հ. 130 հիմնական դպրոց», «Թաթուլ

Կրպեյանի անվան թիվ 62 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ներում իրականացվել են ջրահեռացման համակարգի վերակառուցման աշխատանքներ:

Այսպիսով, կարելի է եզրահանգել, որ չնայած ձեռնարկվող քայլերին, հանրապետության հատկապես համայնքային մի շարք պետական ուսումնական հաստատությունների շենքային և գույքային պայմանների անբավարարության վիճակը դեռևս առկա է, ինչը առաջացնում է երեխայի կրթության իրավունքի պատշաճ իրացման տեսանկյունից խնդիրներ: Այս հարցերը խնդրահարույց են ինչպես դասապրոցեսի բնականոն ընթացքի կազմակերպման և երեխայի կրթության իրավունքի իրացման, այնպես էլ երեխայի առողջության, անվտանգության և զարգացման համար:

Թեև հանրակրթական դպրոցների շենքային և գույքային պայմանների խնդիրներ առկա են թե՛ քաղաքային, և թե՛ մարզային ու գյուղական դպրոցներում, սակայն ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ այս առումով առավել խոցելի են գյուղական դպրոցները:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտե[128].

Հաշվի առնելով Կրթության նպատակների վերաբերյալ իր թիվ 1 ընդհանուր մեկնաբանությունը (CRC/GC/2001/1), Կոմիտեն առաջարկում է, որ մասնակից պետությունը ներդրումներ կատարի դպրոցական ենթակառուցվածքների բարելավման համար, ներառյալ ջեռուցման, անվտանգ ջրի և ջրահեռացման հասանելիության ապահովման համար, մասնավորապես նախադպրոցական շենքերի համար:

Նման առաջարկ է արել նաև ՄԱԿ-ի՝ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն՝ նշելով, որ չնայած մասնակից պետության կողմից իրականացված բարեփոխումներին, ներառյալ 2014-2025 թվականների ազգային ռազմավարության բարեփոխումը, Կոմիտեն մտահոգված է դպրոցական ենթակառուցվածքների և նյութերի որակի թերություններով, ռեսուրսների պակասով և ուսուցիչների անբավարար թվով՝ հատկապես գյուղերում: Կոմիտեն նաև մտահոգված է ներառական կրթության բացակայությամբ, հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքներին հարմարեցված ենթակառուցվածքների բացակայությամբ և այն փաստով, որ թերապևտիկ, մանկավարժական և հոգեբանական աջակցությունը միշտ չէ, որ հասանելի է[129]:

Պաշտպանն ընդգծում է, որ ճանաչելով յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքը՝ պետության ջանքերը պետք է նպատակաուղղված լինեն յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար պայմանների և հավասար հնարավորության որակի ապահովմանը: Ուստի, նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում շենքային և գույքային անբավարար պայմանների և ջեռուցման հետ կապված խնդիրների լուծումը նախապայման է կրթության իրավունքի պատշաճ իրացումն ապահովելու համար:

Հարկ է նկատել, որ ուսումնական հաստատությունների շենքային պայմանների

[128] Տե՛ս ՄԱԿ-ի՝ Երեխայի իրավունքների կոմիտեի՝ Հայաստանի 3-4-րդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, 2013թ., հասանելի է http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[129] Տե՛ս ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումները, 2023թ., հասանելի է https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=E%2FC.12%2FARM%2FCO%2F4&Lang=en հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

բարելավման, սեյսմիկ անվտանգության խնդիրների շուրջ միջոցառումների իրականացումը ներառված է ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրում: 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա Կառավարության որոշմամբ հաստատված 2021-2026թթ. Կառավարության ծրագրի «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի «Կրթություն» ենթաբաժնում նախատեսվում է մինչև 2026 թվականը կառուցել, հիմնանորոգել կամ վերակառուցել առնվազն 300 դպրոց և 500 մանկապարտեզ: Պաշտպանը կարևորում է պետության կողմից դպրոցների և մանկապարտեզների կառուցման և վերակառուցման աշխատանքների շարունակականությունը՝ միջազգային չափանիշերին համապատասխան:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***համակարգային ուսումնասիրության և գնահատման ենթարկել ՀՀ-ում գործող բոլոր ուսումնական հաստատությունների՝ գործող օրենսդրությամբ սահմանված հանրակրթական նշանակություն ունեցող շենքերի շինարարական նորմերին համապատասխանությունը,***
- ✓ ***ավելացնել հանրակրթական ուսումնական հաստատություններում շենքային և գույքային պայմանների բարելավման համար հատկացվող ֆինանսական միջոցները,***
- ✓ ***կոնկրետ միջոցառումներ ձեռնարկել (կամ շարունակել դրանց իրականացումը) հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքային և գույքային պայմանների բարեկարգման ուղղությամբ,***
- ✓ ***դպրոցներն ապահովել առարկայական ծրագրերին համապատասխան անհրաժեշտ գույքով և սարքավորումներով,***
- ✓ ***ապահովել դպրոցների և մանկապարտեզների կառուցման և վերակառուցման աշխատանքների շարունակականությունը՝ միջազգային չափանիշերին համապատասխան,***
- ✓ ***ապահովել հանրակրթական ուսումնական հաստատություններում օդային և ջերմային ռեժիմի պահպանման պահանջների կատարումը՝ ուժեղացնելով վերահսկողությունը դրա խախտման դեպքերի բացահայտման ուղղությամբ:***

5. Բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքի դիտարկումը սահմանադրաիրավական հարթությունում

Բուհերի ինքնակառավարման սահմանադրական իրավունքին միջամտություն ենթադրող ցանկացած գործընթաց մշտապես գտնվել է Մարդու իրավունքների պաշտպանի անմիջական ուշադրության ներքո: 2021 թվականի օրենսդրական փոփոխությունների և դրանցով պայմանավորված՝ գործնական մի շարք գործընթացների վերաբերյալ Պաշտպանի գնահատականներն արտահայտվել են Սահմանադրական դատարան դիմումներ, ինչպես նաև հատուկ կարծիք ներկայացնելու, ոլորտը կարգավորող օրենսդրական նախաձեռնությունների վերաբերյալ դիրքորոշումներ ներկայացնելու միջոցով՝ բուհերի ինքնակառավարման իրավունքի՝ որպես կրթության իրավունքի կարևորագույն բաղադրիչի երաշխավորման համատեքստում: Ողջ գործընթացին Մարդու իրավունքների պաշտպանի մասնակցությունը և ձևավորած դիրքորոշումները հիմնված են եղել բուհերի ինքնակառավարման սահմանադրական իրավունքի և բուհական ինքնավարության վերաբերյալ միջազգային-իրավական չափանիշների վրա:

Դեռևս 2020 թվականին շրջանառության դրված և ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի նիստում հաստատված «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի և հարակից 22 օրենքների նախագծերի վերաբերյալ ներկայացված կարծիքով Մարդու իրավունքների պաշտպանն իր մտահոգություններն է հայտնել բուհի կառավարման խորհրդի ձևավորմանը վերաբերելի նախագծային լուծումների վերաբերյալ[130]:

Մարդու իրավունքների պաշտպանի դիմումով Սահմանադրական դատարանում քննարկման առարկա դարձած հաջորդ կարգավորումը վերաբերում է «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի այն դրույթին, որի համաձայն՝ եթե հոգաբարձուների խորհրդի բոլոր անդամների լիազորությունների դադարման դեպքում 2-ամսյա ժամկետում հոգաբարձուների խորհրդի կեսից ավելին չի նշանակվում, ապա ՀՀ արդարադատության նախարարը 2-ամսյա ժամկետում նշանակում է 3 անդամից կազմված ժամանակավոր խորհուրդ: Ընդ որում, այդ խորհրդին վերապահվել են հոգաբարձուների խորհրդին վերապահված ողջ լիազորությունները:

Նկատի ունենալով, որ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը նախատեսում է ՀՀ արդարադատության նախարարի կողմից 3 անդամից կազմված ժամանակավոր խորհրդի ստեղծման հնարավորություն, որի գործառույթների շրջանակը հաշվի չի առնում կրթության սահմանադրական իրավունքի կարևորագույն բաղադրիչը՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքը, և հանգեցնում է այդ իրավունքի անհամաչափ սահմանափակման՝ Մարդու իրավունքների պաշտպանը 2021 թվականի հուլիսի 15-ին դիմել է սահմանադրական դատարան: Բարձր դատարան ներկայացված դիմումով Պաշտպանը վիճարկել է «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի վիճարկվող կարգավորումների համապատասխանությունը Սահմանադրության 38-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին, 78-րդ և 81-րդ հոդվածներին:

Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1629 որոշմամբ նշել է, որ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթները և այդ դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված նույն օրենքի այլ կարգավորումները՝ իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ խնդրահարույց են հիմնադրամի կարգավիճակ ունեցող բարձրագույն ուսումնական հաստատությունների մասով՝ պայմանավորված վերջիններիս գործունեության առանձնահատկություններով, հանրային բնույթով, սոցիալ-գործառնական նշանակությամբ և սահմանադրական երաշխիքների առկայությամբ: Սահմանադրական դատարանը որոշել է, որ բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքի արդյունավետ իրականացման սահմանադրական պահանջի պահպանման և համաչափության սկզբունքի ապահովման համատեքստում «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասը հակասում է Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասին և 78-րդ հոդվածին:

Բուհերի ինքնակառավարման իրավունքի՝ որպես կրթության իրավունքի կարևորագույն բաղադրիչի երաշխավորման խնդիրը հատկապես արդիական է եղել 2021 թվականի օրենսդրական փոփոխությունների և դրանցով պայմանավորված գործնական գործընթացներով: Մասնավորապես, «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ

[130] Խնդրի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը հանդես է եկել նաև հրապարակային հայտարարությամբ, որը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/1416 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

օրենքի նախագծի[131] նախնական տարբերակով, ի թիվս այլ կարգավորումների՝ սահմանվում էր, որ բուհի կառավարման խորհուրդը բաղկացած է 12 անդամից, որոնցից 1-ն՝ ուսանողության ներկայացուցիչն է, որին առաջադրում է բուհի ուսանողական խորհուրդը, 4-ը՝ բուհի հիմնական ակադեմիական կազմից են, որոնց առաջադրում է բուհի ակադեմիական խորհուրդը, ևս 1-ը՝ բուհի հետ համագործակցող կազմակերպություններից, որոնց ներկայացուցչին առաջադրում է բուհի ակադեմիական խորհուրդը, ելնելով բուհի առանձնահատկություններից և ոլորտային ուղղվածությունից, իսկ 6 անդամին գործարարներից, կրթության, գիտության, մշակույթի կամ տնտեսության այլ ոլորտների ներկայացուցիչներից՝ համապատասխան ոլորտի լիազոր մարմնի ղեկավարը:

2021 թվականի մարտի 24-ին «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունմամբ սահմանվել է, որ հանրային բուհի կառավարման խորհուրդը բաղկացած է 9 անդամից: Ընդ որում՝ բուհի կառավարման խորհրդի անդամներից 4-ին առաջադրում է բուհի ակադեմիական խորհուրդը, իսկ 5-ին՝ համապատասխան լիազոր մարմինը: Սահմանվել է նաև, որ կառավարման խորհրդի բուհի 4 անդամին նույն հոդվածով սահմանված ժամկետում չառաջադրելու կամ 4-ից պակաս առաջադրելու դեպքում կառավարման խորհրդի բուհի չառաջադրած անդամների համալրումն իրականացնում է համապատասխան լիազոր մարմնի ղեկավարը:

2021 թվականի ապրիլի 22-ին ՀՀ Նախագահը, իրացնելով Սահմանադրության 129-րդ հոդվածի 1-ին և 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով իրեն վերապահված լիազորությունը, դիմել է Սահմանադրական դատարան՝ բարձրացնելով վիճարկվող օրենքի՝ Սահմանադրության 28-րդ, 29-րդ և 38-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխանության հարցը: Այդ գործով Սահմանադրական դատարանը 2021 թվականի օգոստոսի 2-ին կայացրել է թիվ ՍԴՈ-1608 որոշումը[132], որով Բարձր դատարանում վիճարկվող օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը ճանաչել է Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասին հակասող[133]:

Սահմանադրական դատարանում քննվող այս գործի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանը ներկայացրել է հատուկ կարծիք, որով մտահոգիչ է համարել այն, որ վիճարկվող օրենքի կարգավորումները չեն ապահովում բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքը՝ որպես Սահմանադրության 38-րդ հոդվածով երաշխավորված կրթության իրավունքի իրացման նախադրյալ:

Նշված որոշմամբ Բարձր դատարանը սկզբունքային մի շարք մտահոգություններ է հայտնել, որոնք, սակայն, այդ որոշման կայացումից հետո 2021 և 2022 թվականներին շրջանառված և հանրային քննարկման դրված «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նոր նախագծերով ամբողջությամբ չեն լուծվել: Հարկ է նշել, որ ԿԳՄՍՆ-ից ստացված տեղեկատվության համաձայն՝ 2022 թվականին շրջանառված «Բարձրագույն կրթության և գիտության մասին» և հարակից օրենքների նախագծերի փաթեթը սույն հաղորդման հրապարակման պահին լրամշակման փուլում է: Նախագծերի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանը ներկայացրել է մի շարք դիտարկումներ՝ կարևորելով

[131] Հասանելի է https://www.e-draft.am/projects/2164 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[132] Հասանելի է https://concourt.am/armenian/decisions/common/2021/pdf/sdv-1608.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[133] Սահմանադրական դատարանում քննվող այս գործի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանը ներկայացրել է իր հատուկ կարծիքը, որով հայտնած դիրքորոշմամբ մտահոգիչ է համարվել այն, որ վիճարկվող օրենքի կարգավորումները չեն ապահովում բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքը՝ որպես Սահմանադրության 38-րդ հոդվածով երաշխավորված կրթության իրավունքի իրացման նախադրյալ:

այնպիսի գործիքների առկայությունը, որոնք հնարավորություն կտան երաշխավորել բուհերի ինքնակառավարման իրավունքն ու կսահմանեն կառավարման խորհուրդների կազմավորման և գործունեության առավել «ժողովրդավարական մոդել»:

Բուհերի ինքնակառավարման երաշխավորման պահանջին անդրադարձ է կատարվել մի շարք իրավական փաստաթղթերով:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Բարձրագույն ուսումնական հաստատությունների դասախոսական կազմի կարգավիճակի վերաբերյալ հանձնարարական[134].

Բուհերի ինքնավարությունը ակադեմիական ազատության ինստիտուցիոնալ ձևն է և անհրաժեշտ նախապայման՝ երաշխավորելու բարձրագույն կրթության ուսուցչական անձնակազմին և հաստատություններին վստահված գործառույթների պատշաճ կատարումը:

ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի 13-րդ համընդհանուր մեկնաբանության 40-րդ կետի համաձայն՝ ակադեմիական ազատությունը պահանջում է բարձրագույն կրթության հաստատությունների ինքնավարություն:

ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե[135].

Ինքնավարությունն ինքնակառավարման այն աստիճանն է, որն անհրաժեշտ է բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից արդյունավետ որոշում կայացնելու համար՝ կապված նրանց ակադեմիական աշխատանքի, ստանդարտների, կառավարման և դրանց հետ կապված գործունեության հետ:

Այս առումով, Եվրոպական համալսարանների ասոցիացիան ընդգծել է, որ ուսումնական հաստատությունների կառավարման մարմինները քննարկում և որոշում են երկարաժամկետ ռազմավարական հարցեր, ինչպիսիք են՝ կանոնադրություններն ու բյուջեն, ինչպես նաև ակադեմիական հարցեր[136]:

Համալսարանների միջազգային ասոցիացիայի «Ակադեմիական ազատությանը և համալսարանի ինքնավարությանը սպառնացող վտանգների մասին» վերլուծության համաձայն՝ պետությունների պարտականությունը ոչ թե համալսարաններին վերահսկելն է, այլ կարգավորելն ու հաշվետվողականության և ինքնավարության հավասարակշռությունը երաշխավորելը: Միևնույն ժամանակ, համալսարանական ղեկավար կազմը պետք է հաշվի առնի այն հանգամանքը, որ ինքնավարությունը չպետք է օգտագործվի որպես պատրվակ բարձրագույն կրթության հաստատությունների դասախոսական կազմի իրավունքները սահմանափակելու համար[137]:

Եվրոպայի խորհրդի «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» զեկույցը[138].

Հայաստանում պետք է մշակել բարձրագույն կրթությանը վերաբերող նոր առաջնային օրենք, որով պետք է ամրապնդվի բուհերի պատշաճ ինքնավարությունը՝ ներառելով կառավարության տարանջատումը բուհերի կառավարումից՝ հատկապես բուհերի կառավարման մարմինների անդամակցության մասով: ՀՀ կառավարությունը

[134] Տե՛ս ՅՈՒՆԵՍԿՕ-ի Բարձրագույն կրթության դասախոսական կազմի կարգավիճակի վերաբերյալ հանձնարարականը, 1997թ., հասանելի է https://en.unesco.org/about-us/legal-affairs/recommendation-concerning-status-higher-education-teaching-personnel հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[135] Տե՛ս ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի 13-րդ համընդհանուր մեկնաբանությունը, 1999թ., հասանելի է https://www.refworld.org/pdfid/4538838c22.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[136] Տե՛ս Եվրոպական համալսարանների ասոցիացիայի «Համալսարանի ինքնավարությունը Եվրոպայում IV» զեկույցը, 2023թ., հասանելի է https://www.university-autonomy.eu/dimensions/organisational/ հղումով:

[137] Տե՛ս Համալսարանների միջազգային ասոցիացիայի «Ակադեմիական ազատությանը և համալսարանի ինքնավարությանը սպառնացող վտանգների մասին» զեկույցը, 2018թ., հասանելի է https://iau-aiu.net/IMG/pdf/iau_horizons_vol.22.2.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[138] Տե՛ս Եվրոպայի խորհրդի «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» վերտառությամբ զեկույցը, 2015թ., հասանելի է https://rm.coe.int/16804895e7 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

պետք է հարգի բուհերի պատշաճ ինքնավարությունը ոչ միայն նոր օրենսդրության ընդունման ժամանակ, այլև իր հետագա քաղաքական գործունեության ընթացքում:

Հայաստանում տեղի ունեցող բարձրագույն կրթության բարեփոխումների շրջանակում Համաշխարհային բանկն իր 2013 թվականի զեկույցում անդրադարձել է բարձրագույն ուսումնական հաստատությունների կառավարմանը: Զեկույցում քննարկվել են Հայաստանում բարձրագույն ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ կառավարման շրջանակներում դրանց կազմակերպական ինքնավարության հարցերը: Մասնավորապես, Զեկույցի 40-րդ կետի համաձայն՝ կառավարությունը, ընտրելով բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդի ներկայացուցչության մեծամասնությանը, ներգործում է բարձրագույն ուսումնական հաստատությունների կառավարման վրա: Նույն Զեկույցի 39-րդ կետում Համաշխարհային բանկը հանգել է եզրահանգման, ըստ որի՝ բարձրագույն ուսումնական հաստատության մարմիններին վերաբերող կանոններն ուշադիր ուսումնասիրելիս կբացահայտվի կառավարության ճնշող ներկայությունը համալսարանի ղեկավարման և կառավարման մեջ՝ վտանգելով համալսարանի ինքնավարությունը[139]:

Վերոգրյալի հաշվառմամբ, Պաշտպանն ընդգծում է, որ յուրաքանչյուր օրենսդրական նախաձեռնության դեպքում և բարձրագույն ուսումնական հաստատություններին վերաբերող օրենսդրական կարգավորումներ սահմանելիս պետք է հիմնվել բուհերի ինքնակառավարման միջազգային չափանիշների վրա՝ բացառելով ցանկացած ոչ համաչափ միջամտություն նշված իրավունքին: Պետությունը պարտավոր է հարգել բուհերի ինքնավարությունը ոչ միայն նոր օրենսդրության նախագծման, այլև նաև իր քաղաքականության իրականացման ողջ ընթացքում:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***բարձրագույն ուսումնական հաստատություններին վերաբերող օրենսդրական նախաձեռնությունների դեպքում հիմք ընդունել բուհերի ինքնակառավարման միջազգայնորեն ու ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված պահանջը և բացառել վերջիններիս ինքնակառավարման իրավունքին ոչ իրավաչափ միջամտություն ենթադրող ցանկացած կարգավորում կամ նախագծային լուծում,***
- ✓ ***երաշխավորել բուհերի ինքնակառավարման իրավունքը, սահմանել կառավարման խորհուրդների կազմավորման և գործունեության առավել «ժողովրդավարական մոդել»՝ բուհի կառավարման խորհրդի անդամների համամասնությունը բաշխելով այն տրամաբանությամբ, որ լիազոր մարմնի կողմից նշանակված անդամների ձայնը որոշումների կայացման հարցում որոշիչ չլինի, ինչը բխում է բուհի ինքնակառավարման իրավունքի պատշաճ երաշխավորման անհրաժեշտությունից:***

[139] Տե՛ս Համաշխարհային բանկի «Անդրադառնալով կառավարմանը Հայաստանի բարձրագույն կրթության բարեփոխումների կենտրոնում» զեկույցը, 2013թ., հասանելի է https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/16531/776690WP0P127300governance000final.pdf?sequence=1&isAllowed=y հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

ԳԼՈՒԽ 5. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ

Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) Սահմանադրության նախաբանում որպես հիմնարար սկզբունք սահմանված է, որ առողջության առավել բարձր մակարդակի առկայությունը և դրանից օգտվելու հնարավորությունը յուրաքանչյուր մարդու հիմնարար իրավունքներից է՝ անկախ ռասայից, կրոնից, քաղաքական համոզմունքներից, տնտեսական կամ սոցիալական պայմաններից: Ըստ ԱՀԿ-ի՝ առողջության իրավունքը ենթադրում է, որ պետք է լինեն բավարար առողջապահական ծառայություններ, որոնք հնարավորություն կտան հիվանդությունները բուժելու, կանխարգելելու և կառավարելու:

Առողջության պահպանման իրավունքն անմիջականորեն կապված է մյուս իրավունքների, այդ թվում՝ կյանքի իրավունքի հետ: Ուստի, առողջության պահպանման, այդ թվում՝ առողջապահական ծառայություններից օգտվելու նպատակով պետությունը պետք է գործադրի առավելագույն ջանքեր:

Կյանքի իրավունքը մարդու բնական և անօտարելի իրավունքն է: Դա նշանակում է, որ ոչ ոք՝ ոչ պետությունը (պետական մարմինները), ոչ անհատ քաղաքացիները չեն կարող կամայականորեն մարդուն զրկել կյանքից: Մարդու կյանքի իրավունքը ամրագրված է, նախ և առաջ, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 3-րդ հոդվածում, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք ունի կյանքի, ազատության և սեփական անձի անձեռնմխելիության իրավունք:

2023 թվականին ՄԻՊ-ին հասցեագրած ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր բողոքներով մարդիկ, մասնավորապես, բարձրացրել են անվճար և արտոնյալ պայմաններով բուժօգնություն չստանալու, պալիատիվ բուժօգնության, շտապ օգնության ծառայության գործունեության, պոլիկլինիկաներում անհրաժեշտ բուժօգնություն չստանալու, բժշկական օգնության ծառայությունները թանկարժեք լինելու, անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղորայք չստանալու, պետական մարմնի առջև իրավական պաշտպանության բացակայության հետ կապված խնդիրներ:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ հաշվետու տարում Պաշտպանի աշխատակազմի և Առողջապահության նախարարության, ինչպես նաև բժշկական հաստատությունների միջև ավանդաբար հաստատված է եղել արդյունավետ համագործակցություն, որի արդյունքում քաղաքացիների կողմից բարձրացված բազմաթիվ խնդիրներ ստացել են լուծում:

Պաշտպանի հաստատության նախաձեռնությամբ ԵԽ-ի հետ առաջին անգամ ԵԽ անդամ երկրների տարածքում իրականացվում է կենսաբժշկության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ ծրագիր, որի նպատակն է նպաստել կենսաբժշկության ոլորտում մարդու իրավունքների և էթիկական սկզբունքների եվրոպական չափանիշների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը: Ծրագրով նախատեսված է ամրապնդել փաստաբանների, բժիշկների, պետական մարմինների աշխատակիցների կարողությունները կենսաբանության և բժշկության ոլորտում մարդու իրավունքների չափանիշների վերաբերյալ: Այս ծրագրի շրջանակում կարևորվում է նաև բուժաշխատողների դերի բարձրացումը, աշխատանքի արժանապատիվ պայմանների ու սոցիալական երաշխիքների ամրագրումը: 2023 թվականի ընթացքում Պաշտպանի հաստատության աշխատակիցները մասնակցել են ծրագրի շրջանակում կազմակերպված

միջոցառումներին, այդ թվում՝ «Իրավունքահեն մոտեցումներն առողջապահության ոլորտում» խորագրով միջոցառմանը:

Միջոցառմանը Պաշտպանի ներկայացուցիչները ներկայացրել են առողջապահության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող խնդիրներ, որոնք արձանագրվել են անհատական բողոքների քննարկման, ինչպես նաև իրավական ակտերի կատարելագործմանը նպաստելու՝ Պաշտպանի սահմանադրական գործառույթի իրացման արդյունքում:

2024 թվականի փետրվարի 7-ին Պաշտպանը մասնակցել է «Մարդու իրավունքների պաշտպանությունը կենսաբժշկության մեջ II» ծրագրի համակարգման խորհրդի երկրորդ նիստին և հանդես եկել բացման խոսքով: Միջոցառման նպատակն էր քննարկել Օվիեդոյի կոնվենցիայի հնարավոր վավերացմանն առնչվող հարցեր՝ համախմբելով ծրագրի գործընկերներին, դերակատարներին ու փորձագետներին, ներկայացնել համագործակցության ուղղություններն ու առաջնահերթությունները:

1. Բժշկական օգնության մատչելիության խնդիր

Բժշկական օգնության և սպասարկման տեսակ է մասնագիտացված բժշկական օգնությունը, որի պետական պատվերի շրջանակներում չիրականացվելու վերաբերյալ բողոքներ 2023 թվականի ընթացքում հաճախ են ստացվել: Բողոքներով քաղաքացիները նշել են, որ ըստ բժշկական կազմակերպությունների՝ մերժումները մեծամասամբ կապված են պետության կողմից տրամադրված գումարներն սպառված լինելու հետ և նման պարագայում առաջարկվել են հերթագրումներ: Նրանց պնդմամբ՝ հերթագրման դեպքում իրենց բժշկական հետազոտության օր է նշանակվել դիմելուց ամիսներ անց: Նման դեպքերում, որպես կանոն, բողոք ներկայացրած անձինք խնդրել են Պաշտպանի աջակցությունն անհրաժեշտ բուժօգնությունն անվճար պայմաններով հնարավոր սեղմ ժամկետում ստանալու հարցում: Քաղաքացիների կողմից մատնանշվել են անհապաղ բուժօգնության անհրաժեշտության տարբեր պատճառներ. անհանգստացնող ցավեր, հիվանդության, մասնավորապես՝ օնկոլոգիական հիվանդության բարդացում կամ հսկողության բացթողում և այլն:

Բողոքների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դրանց դեպքում քաղաքացիներին, որպես կանոն, լիազոր մարմնի կողմից առաջարկվում է դիմել այլ բժշկական կենտրոններ,

որտեղ, սովորաբար, նույն իրավիճակն է լինում: Իսկ դա վերջիններիս (հատկապես օնկոլոգիական հիվանդություններ ունեցող անձանց) մոտ առաջացնում է դժգոհություն: Ըստ բուժառուների՝ նրանք ստիպված հրաժարվում են սպասել իրենց հերթին և հերթագրման կարգից դուրս բուժօգնությունն ստանում են վճարովի հիմունքով, իսկ անվճարունակ քաղաքացիները գումարը հայթայթում են ազգականներից կամ ծանոթներից՝ պարտք վերցնելու միջոցով:

Այսպես, բողոքներից մեկով քաղաքացին տեղեկացրել է, որ հայրը մարտական գործողությունների մասնակից է: Սուր ինֆարկտ ախտորոշմամբ շտապ օգնության մեքենայով տեղափոխել են բժշկական կենտրոն, որտեղ կատարվել է սրտի կորոնար անոթի ստենտավորում՝ «Stent of live» ծրագրի շրջանակում: Բժշկի ցուցմամբ անհրաժեշտ է եղել կատարել ևս 3 ստենտի տեղադրում, ինչը հնարավոր չի եղել իրականացնել պետական պատվերի շրջանակում, քանի որ պետության կողմից տրամադրված գումարը սպառվել է: Պահանջել են նաև վճարել հիվանդասենյակի, ինչպես նաև ներարկման համար անհրաժեշտ «Ինտեգրիլ» դեղամիջոցի գումարը: ՄԻՊ աշխատակազմից դիմողին պարզաբանվել է, որ որպես մարտական գործողությունների մասնակից՝ անձն օգտվում է պետական պատվերի շրջանակում տրամադրվող բժշկական օգնությունից և սպասարկումից անվճար, ուստի այդ իրավունքը կարող է իրացնել նաև այլ բժշկական կենտրոնում, որտեղ առկա է պետական պատվերի համար տրամադրված գումար: Հետագայում դիմողը տեղեկացրել է, որ հորը տեղափոխել է այլ բժշկական կենտրոն, որտեղ պետական պատվերի շրջանակում իրականացվել է ևս 2 ստենտի տեղադրում:

Մեկ այլ բողոքով քաղաքացին տեղեկացրել է, որ 6-ամյա որդին 3 տեսլա ձևաչափով ՄՌՏ հետազոտության կարիք ունի, սակայն բժշկական հաստատություններում, որտեղ առկա է նման ձևաչափով ՄՌՏ սարք, պետպատվերի գումարը սպառվել է: Ըստ դիմողի՝ իրականացվել է հերթագրում, որպիսի պարագայում երեխային կարող են ընդունել միայն 3 ամիս անց:

ՄԻՊ ներկայացուցիչը դիմողին պարզաբանել է, որ ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման (այսուհետ նաև՝ Որոշում) համաձայն՝ հերթագրված պացիենտներին կարող է արտահերթ բժշկական օգնություն տրամադրվել համապատասխան բժշկական ցուցումների առկայության դեպքում, որի մասին որոշումն ընդունվում է հերթագրման մասնագիտական հանձնաժողովի կողմից:

Նշված պարզաբանումից հետո քաղաքացին դիմել է բժշկական հաստատություն՝ բժշկական հետազոտությունն արտահերթ կազմակերպելու նպատակով, սակայն արդյունքի չի հասել: Ստիպված հետազոտությունը կատարել է վճարովի հիմունքներով:

Մեկ այլ դեպքի շրջանակում բողոք ներկայացրած անձը հայտնել է, որ դիմել է պոլիկլինիկա իր 15 տարեկան դստեր զննության նպատակով: Երեխան զննվել է նյարդաբանի կողմից և ցուցվել է Մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիա հետազոտություն: Քաղաքացին դստեր հետ այցելել է մի շարք բժշկական կենտրոններ ցուցված հետազոտությունն անցնելու նպատակով, սակայն պետական պատվերի շրջանակներում իրականացնելու համար առաջարկվել է հերթագրում, իսկ իրականացում՝ 2-5 ամիս անց: Դիմողը պնդել է, որ իր դստերն այն անհրաժեշտ է անհապաղ, քանի որ վերջինս ունենում է ցնցումներ և գիտակցության կորուստ: Խնդրել է Պաշտպանի աջակցությունն իր դստերը նշանակված հետազոտությունն անհապաղ իրականացնելու հարցում: Վերոգրյալի հաշվառմամբ՝ դիմողին պարզաբանվել է արտահերթ բժշկական օգնության տրամադրման կարգը:

Վերոգրյալի առնչությամբ հարկ է նշել, որ Որոշման համաձայն՝ բժշկական կազմակերպություններում պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ծառայություններն իրականացվում են տվյալ կազմակերպության տարեկան պայմանագրային գումարի շրջանակներում՝ ամսական կտրվածքով հաստատված տվյալ ծրագրի համամասնությունների չափով: Պայմանագրային գումարի ամսական համամասնության սպառման կամ բժշկական կազմակերպության համապատասխան ծառայության թողունակության անբավարարության դեպքում բժշկական կազմակերպությունը բժշկական օգնություն և սպասարկում իրականացնում է հերթագրման եղանակով՝ բացառությամբ որոշ ծառայությունների:

Առողջապահության նախարարությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ 2023 թվականի ընթացքում պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցած կազմակերպությունների պայմանագրային գումարները սպառված լինելու պատճառով դիմողին չսպասարկելու և հերթագրում առաջարկելու վերաբերյալ ստացվել է 497 բողոք: Ըստ ԱՆ-ի՝ քաղաքացիներն ուղղորդվել են այն բուժհաստատություններ, որտեղ տվյալ պահին առկա են եղել մնացորդներ և իրականացվել են ցուցված հետազոտությունները: Ամենօրյա կարգով ստացված բողոքները քննարկվել են վերադասության կարգով, ինչի արդյունքում իրականացվել են վերաբաշխումներ բուժհաստատությունների պայմանագրային գումարներում: Միաժամանակ, բուժհաստատություններում անհետաձգելի գնահատված դեպքերը սպասարկվել են արտահերթ հիմունքներով՝ համաձայն Որոշմամբ հաստատված N 4 հավելվածով սահմանված կարգի:

Չնայած նախարարության ձեռնարկած գործողություններին՝ այնուամենայնիվ, Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ հաշվետու տարում շարունակվել են դեպքերը, երբ անվճար բուժօգնությունը բնակչության սոցիալապես անապահով ու առանձին խմբին պատկանող անձանց համար փաստացի հասանելի չի եղել:

Պաշտպանին ներկայացված բողոքների մի մասն էլ վերաբերել է դեղորայքի թանկարժեք լինելուն: Օրինակ, քաղաքացին տեղեկացրել է, որ կինը ձախ կրծքագեղձի չարորակ ուռուցքի վիրահատության է ենթարկվել, ներկայում նրան անհրաժեշտ է քիմիաթերապիա, սակայն հնարավորություն չունի անհրաժեշտ դեղորայքը գնելու:

Չնայած նրան, որ քիմիաթերապևտիկ բուժման ծավալը փոխհատուցվում է պետության կողմից երաշխավորված արտոնյալ պայմաններով՝ համավճարային սկզբունքի կիրառմամբ, այնուհանդերձ, բողոքները վկայում են, որ այդ նպատակով պետության կողմից հատկացվող գումարը բավարար չէ:

ՀՀ առողջապահության նախարարի 10.01.2019 թվականի թիվ 20-Ա հրամանով հաստատվել են ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների և սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բժշկական օգնության ծառայությունների փոխհատուցման սկզբունքները, համաձայն որի՝

սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց համար քիմիապրեպարատների ծախսի փոխհատուցումը կատարվում է հիվանդին հատկացված քիմիապրեպարատների փաստացի ծախսի չափով՝ ոչ ավելին՝ քիմիաթերապևտիկ 1 կուրսի համար 60.0 հազար դրամը, իսկ մեկ հիվանդի համար տարեկան 300,0 հազար դրամը,

սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերում չընդգրկված անձանց համար քիմիապրեպարատների ծախսի փոխհատուցումը կատարվում է հիվանդին հատկացված քիմիապրեպարատների փաստացի ծախսի չափով՝ ոչ ավելին՝ քիմիաթերապևտիկ 1 կուրսի համար 30.0 հազար դրամը, իսկ մեկ հիվանդի համար տարեկան 150,0 հազար դրամը: Փոխհատուցումը կատարվում է մեկ տարվա ծախսի չափով:

Կազմակերպության միջոցներով գնված և հիվանդին տրամադրված քիմիապրեպարատների ծախսը գերազանցելու դեպքում փոխհատուցվում է հիվանդի կողմից:

Մինչդեռ, ըստ բողոք ներկայացրած անձանց՝ քիմիաթերապիան նշանակվում է 4-8 կուրս: Մեկ կուրսի համար անհրաժեշտ է 100-120 հազար դրամ:

Մեկ այլ քաղաքացի հայտնել է, որ 2-ամյա որդին «Նեյրովասկուլիտ» ախտորոշմամբ ստացիոնար բուժում է ստանում բժշկական հաստատությունում: Բուժող բժիշկը տեղեկացրել է, որ բուժման արդյունավետ ընթացքն ապահովելու համար անհրաժեշտ է «Օկտոգամ» դեղամիջոցը: Բողոք ներկայացրած անձը հայտնել է, որ դեղամիջոցը թանկարժեք է, և ինքը չունի բավարար ֆինանսական միջոցներ այն ձեռք բերելու համար: Խնդրել է Պաշտպանի աջակցությունն իր երեխայի բուժօգնությունն արդյունավետ ապահովելու համար նշված դեղամիջոցը ձեռք բերելու հարցում: ՄԻՊ աշխատակազմի և բժշկական հաստատության միջև համագործակցության արդյունքում դեղամիջոցն անվճար հիմունքներով տրամադրվել է դիմողին:

Բողոքներից մեկով էլ քաղաքացին հայտնել է, որ ինքն ու քույրը միայնակ կենսաթոշակառուներ են: Քույրը 1-ին խմբի հաշմանդամություն ունի, կարիք ունի դեղամիջոցների, որոնք իրենք չեն կարողանում ձեռք բերել: Հավելել է, որ ընտանիքը ստանում է սոցիալական նպաստ: Խնդրել է Պաշտպանի աջակցությունը «Գեպտրալ», «Մեքսիդոլ», «Նոլիպրել», «Մագնեզիում», «Նատրի քլոր» դեղամիջոցներն անվճար ստանալու հարցում: ՄԻՊ աշխատակազմից առաջարկվել է դիմել առողջության պահպանման առաջնային օղակ (պոլիկլինիկա): ՀՀ առողջապահության նախարարի հրամանով սահմանված ՀՀ դեղերի հիմնական ցանկում ներառված լինելու դեպքում կտրամադրվեն նշված դեղամիջոցները, հակառակ պարագայում՝ դրանց փոխարինողները:

ՄԱԿ-ի հատուկ զեկուցող Դայնիյուս Պուրասի՝ դեռևս 2017 թվականին Հայաստան կատարած այցի արդյունքում կազմված զեկույցով նշվել է, որ չնայած էական առաջընթացին, Հայաստանում առողջապահության ոլորտը լուրջ մարտահրավերների է բախվում՝ կապված ֆինանսավորման հետ: Կառուցվածքային մարտահրավերներից մեկը առողջությանը հատկացվող պետական ծախսերի ցածր մակարդակն է, որն աշխարհում ամենացածրներից է (2%): Մեկ շնչի հաշվով առողջապահական ծախսերը եվրոպական տարածաշրջանում ամենացածրն են: Ըստ հատուկ զեկուցողի՝ առողջության իրավունքը ներառում է բազմաթիվ իրավունքներ, ինչպիսիք են որակյալ առողջապահական հաստատությունների առկայությունը, առաջին անհրաժեշտության դեղամիջոցների հասանելիությունը, իսկ դրանց իրացումը պահանջում է հանրային ֆինանսավորում: Անբավարար ծախսերը կամ հանրային ռեսուրսների սխալ տեղաբաշխումը կարող է հանգեցնել ֆիզիկական անձանց կամ խմբերի, մասնավորապես խոցելի կամ մարգինալ

իրավիճակներում գտնվող անձանց առողջության իրավունքի չիրացման, ինչը նշանակում է պետության՝ առողջության իրավունքի իրականացման պարտավորության խախտում[140]:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի (այսուհետ՝ Դաշնագիր)[141] 12-րդ հոդվածի համաձայն՝

յուրաքանչյուր ոք ունի ֆիզիկական և հոգեկան առողջապահության հնարավորինս բարձր մակարդակից օգտվելու իրավունք: Պետությունները պարտավոր են քայլեր ձեռնարկել այդ իրավունքի լիարժեք իրականացման համար, մասնավորապես՝ պայմաններ ստեղծեն, որոնք հիվանդության դեպքում կապահովեն բոլոր բժշկական ծառայությունները և բժշկական օգնությունը:

Առողջապահական ծառայությունների մատչելիությունը առողջության իրավունքի կարևոր տարրերից է, որոնք ամրագրված են Դաշնագրում: Պետությունների ընդհանուր պարտականությունն է ապահովել տնտեսական, սոցիալական և մշակութային բոլոր իրավունքների նկատմամբ հավասար մատչելիություն[142]:

Ըստ միջազգային իրավունքի աղբյուրների՝ մատչելիությունը նշանակում է առողջապահության հավասար մատչելիություն՝ առանց որևէ հիմքով խտրականության: Դաշնագիրը նախատեսում է պայմանների ստեղծման շարունակականություն, որոնք բոլորի համար կապահովեն բժշկական սպասարկում և ուշադրություն հիվանդության դեպքում: ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոնվենցիան ավելի հստակ մատնանշում է երեխաների առաջնային առողջության պահպանման զարգացումը: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան պահանջում է ոչ միայն հավասար, այլ նաև անվճար և մատչելի առողջապահական ծառայությունների մատչելիություն:

Մատչելիությունն արտացոլված է Դաշնագրում համապատասխան իրավունքների վերաբերյալ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հանձնաժողովի Ընդհանուր մեկնաբանություններում: Ըստ մեկնաբանությունների՝ առողջապահական ծառայությունների վճարումը պետք է հիմնված լինի արդարության սկզբունքի վրա՝ ապահովելով, որ այդ ծառայությունները մատչելի են բոլորի՝ ներառյալ սոցիալապես անապահով խմբերի համար: Արդարությունը պահանջում է, որ ավելի աղքատները չպետք է անհամաչափորեն ծանրաբեռնվեն առողջապահական ծախսերով[143]:

Մեկնաբանությունում այնուհետև պարզաբանվում է, որ մատչելիությունը ենթադրում է հավասար և ժամանակին մատչելիություն հիմնական կանխարգելիչ, բուժիչ, վերականգնողական առողջապահական ծառայությունների, կանոնավոր սքրինինգի ծրագրեր, տարածված հիվանդությունների, վնասվածքների և հաշմանդամության պատշաճ բուժում՝ նախընտրելի է համայնքի մակարդակում, հիմնական դեղերի տրամադրում, հոգեկան առողջության համապատասխան բուժում և խնամք[144]: Այն պետությունների համար հատուկ պարտավորություն է սահմանում «բավարար միջոցներ չունեցողներին տրամադրել անհրաժեշտ առողջապահական ապահովագրություն և ապահովել առողջապահական հաստատությունների մատչելիությունը, ինչպես նաև կանխել միջազգայնորեն արգելված հիմքերով ցանկացած խտրականություն

[140] Տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.ohchr.org, 2024 թվականի մարտի 28-ի դրությամբ:
[141] Տես նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 25-րդ հոդվածը (1948թ.):
[142] Տե՛ս Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հանձնաժողով, Ընդհանուր մեկնաբանություն թիվ 25, կետ 37:
[143] Տե՛ս Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հանձնաժողով, Ընդհանուր մեկնաբանություն թիվ 14՝ Առողջապահական ծառայությունների հնարավորինս բարձր մակարդակից օգտվելու իրավունք (2000թ.), կետ 12:
[144] Նույն տեղում, կետ 17:

առողջապահական խնամքի և առողջապահական ծառայությունների մատուցման հարցում, հատկապես՝ առողջության իրավունքի գծով հիմնական պարտավորությունների առնչությամբ»[145]:

Միջազգային դատական ատյաններն անդրադարձել են մատչելիության որոշ տարրերի՝ որպես պոզիտիվ միջազգային իրավունքի մաս, ներառյալ հիմնական առողջապահական ծառայությունների և դեղերի մատչելիությունն ապահովելու պետության պարտավորությանը[146], քաղցկեղով հիվանդների՝ համապատասխան անվճար բուժում ստանալու իրավունքին՝ ներառյալ հակաքաղցկեղային դեղամիջոցները147:

Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ բժշկական օգնության ծառայությունների հասանելիությունն ու մատչելիությունն ապահովելու տեսանկյունից կարևոր է առողջապահական համակարգի արդյունավետությունը բարձրացնել՝ ոլորտին, հատկապես առաջնային բուժօգնության ոլորտին, բավարար ու շարունակական ֆինանսական հատկացումներ տրամադրելով: Պաշտպանը միաժամանակ ընդգծում է, որ առողջապահական համակարգերում ֆինանսական միջոցների հատկացումների արդյունավետությունը, ի թիվս այլնի, պայմանավորված է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների գործունեության թափանցիկությամբ, բուժառուների առջև բարենպաստ և հաշվետվողական գործելաոճով:

Առողջապահական ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության նպատակով ԵԽ-ի հետ ձևավորված համագործակցության շրջանակներում ՄԻՊ-ը կենսաբժշկության ոլորտում իրականացրել է տարբեր ծրագրեր,բարձրացրել ՀՀ կողմից Օվիեդոյի կոնվենցիան վավերացնելու կարևորության հարցը:

Օվիեդոյի կոնվենցիան միակ իրավաբանորեն պարտադիր միջազգային փաստաթուղթն է, որը սահմանում է կիրառելի օրենսդրական շրջանակ և՛ ամենօրյա բժշկական պրակտիկայի, և՛ կենսաբժշկության մեջ նոր տեխնոլոգիաների ներդրման համար: Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված է, որ կողմերը, հաշվի առնելով առողջապահական կարիքները և մատչելի ռեսուրսները, անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում իրենց իրավազորության տարածքում պատշաճ որակի առողջապահական ծառայությունների հավասար մատչելիություն ապահովելու համար:

ԵԽ մի շարք երկրներ վավերացրել են նշված կոնվենցիան, օրինակ՝ Բուլղարիան, Խորվաթիան, Կիպրոսը, Հունաստանը, Հունգարիան, Լատվիան, Լիտվան, Ֆինլանդիան, Նորվեգիան, Ռումինիան, Շվեյցարիան, Վրաստանը, Ֆրանսիան և այլն:

Պաշտպանը, կարևորելով Օվիեդոյի կոնվենցիայի վավերացումը նշված ոլորտում իրավունքահեն գաղափարների ամրապնդման տեսանկյունից, միևնույն ժամանակ ընդգծում է իրազեկման աշխատանքների կարևորությունը՝ հանրության և մասնագետների շրջանում Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների մասին իրական պատկերացում ձևավորելու համար: Այս հարցում առանցքային է նաև լրագրողների դերակատարությունը:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝

✓ ***մշակել և իրացնել առողջապահության ոլորտում անհավասարությունը նվազեցնելու համալիր քաղաքականություն, որով կապահովվի առողջապահական***

[145] Նույն տեղում, կետ 19:

[146] Cuscul Pivaral-ն և այլք ընդդեմ Գվատեմալայի, Մարդու իրավունքների միջամերիկյան դատարան, 2018 թվականի օգոստոսի 23-ի վճիռ, Series C No 359, կետ 105:

[147] Panaitescu-ն ընդդեմ Ռումինիայի, ՄԻԵԴ (2017թ.):

ծառայությունների ֆինանսական մատչելիությունն՝ անկախ սոցիալական վիճակից,

- ✓ ***ֆինանսական միջոցների տեղաբաշխումն իրականացնել այնպիսի կառուցակարգով, որպեսզի բուժօգնությունը տրամադրվի ժամանակին և պատշաճ,***
- ✓ ***նախաձեռնել և իրականացնել գործուն քայլեր՝ ուղղված ՀՀ կողմից Օվիեդոյի կոնվենցիայի վավերացմանը՝ նախապես իրականացնելով հանրային իրազեկման աշխատանքներ:***

2. Բժշկական օգնության հասանելիությունը

2023 թվականին Պաշտպանին հասցեագրվել են պոլիկլինիկաների վերակազմակերպման վերաբերյալ բողոքներ: Ընդ որում, դրանք ներկայացվել են ոչ միայն պոլիկլինիկայի աշխատակիցների, այլ նաև բնակիչների կողմից՝ ընդգծելով, որ Երևան քաղաքի ավագանու կողմից 2022 թվականի մայիսի 24-ին կայացված «Երևանի ենթակայության մի շարք բաժնետիրական ընկերությունների վերակազմակերպման մասին» որոշման համաձայն՝ Երևանի ենթակայության «Թիվ 1 պոլիկլինիկա», «Թիվ 5 պոլիկլինիկա» և «Քաղաքային էնդոկրին դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերությունները վերակազմակերպվել են՝ միացվելով «Թիվ 4 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը: Բողոք ներկայացրած անձինք նշել են, որ «Թիվ 1 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տեղափոխությունը լի է քաղաքացիներին լրացուցիչ ֆինանսական ծախսերի առջև կանգնեցնելու վտանգով:

Բարձրացված հարցի կապակցությամբ Երևանի քաղաքապետարան հասցեագրած գրությանն ի պատասխան՝ Պաշտպանին ներկայացվել են պարզաբանումներ առ այն, որ Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող թվով 6 փոքր /10000-25000 ազգաբնակչություն սպասարկող/ պոլիկլինիկա վերակազմակերպվել է միացման ճանապարհով: Նշված գործընթացն իրականացվել է Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվող ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատությունների առողջացմանը, մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը և ծավալների ավելացմանն ուղղված ծրագրի շրջանակներում՝ հիմնվելով կատարված ուսումնասիրությունների վրա: Կատարված բարեփոխումների արդյունքում ստեղծվել են միջին մեծության և մեծ խառը տիպի պոլիկլինիկաներ, որը հնարավորություն է տալիս ապահովել բուժհաստատության բոլոր պարտադիր նեղ մասնագիտական և դիսպանսերային կաբինետների աշխատանքն ամբողջ աշխատաժամանակով՝ բնակչության թվի ավելացման շնորհիվ:

Երևանի քաղաքապետարանի ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատությունների առողջացմանը, մատուցվող ծառայությունների որակի բարելավմանն ուղղված գործողությունները Պաշտպանը ողջունելի է համարում՝ միևնույն ժամանակ ընդգծելով, որ դրանք պետք է իրացվեն անձանց առաջնային բժշկական օգնության իրավունքի առնչությամբ գործող միջազգային չափանիշներին համապատասխան, այդ թվում՝ տեղաշարժման հետ կապված դժվարություններ ունեցող անձանց (հաշմանդամություն ունեցող անձինք, տարեցներ) առաջնային բժշկական օգնության իրավունքի իրացումը ֆիզիկական և աշխարհագրական մատչելիության, ինչպես նաև ԱԱՊ բժշկի համար տնային այցելություններ կատարելու տեսանկյունից:

Բուժօգնության հասանելիության սկզբունքը սերտորեն կապված է մատչելիության հետ: Այն վերաբերում է առողջապահական հաստատությունների, ծառայությունների առկայությանը և բաշխմանը, դեղերի տրամադրմանը և աշխարհագրական

անհավասարությունների վերացմանը: Բոլոր անձինք պետք է ունենան առողջապահական ծառայությունների հավասար հասանելիություն առանց խտրականության:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ոլորտում մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը պետություններից պահանջում է առաջնային առողջապահությունը հասանելի դարձնել համայնքի բոլոր անհատների և ընտանիքների համար[148]:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան պետություններին պարտավորեցնում է՝ «հաշմանդամություն ունեցող անձանց մատուցել հաշմանդամության հատուկ կարիքներին անհրաժեշտ առողջապահական ծառայություններ, ներառյալ վաղ հայտնաբերումն ու միջամտությունը, ինչպես նաև հետագա հաշմանդամությունը նվազեցնելուն ու կանխելուն միտված ծառայություններ նաև երեխաների և տարեցների շրջանում»[149]:

Պաշտպանը կարևորում է անհրաժեշտ և բավարար թվով գործող առողջապահական հաստատությունների առկայությունը, պետության կողմից առողջապահական հաստատությունները (թե՛ պետական, և թե՛ մասնավոր), ապրանքները (հատկապես հիմնական դեղերը), ծառայությունները և տեղեկատվությունը քաղաքացիներին գործնականում հասանելի դարձնելուն ուղղված պարտավորությունների պատշաճ կատարումը: Դրանք պետք է համարժեք լինեն, քանի որ առաջնային օղակի բուժաշխատողը մատուցում է առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) ծառայություններ, կազմակերպում առաջնային բուժօգնության այլ ծառայություններ:

Պաշտպանին հասցեագրվել են նաև անվճար կամ արտոնյալ պայմաններով բնակչության սոցիալապես անապահով խմբերին դեղերով սպասարկող պոլիկլինիկաների կողմից դեղորայք չտրամադրելու կամ ուշացումով տրամադրելու առնչությամբ բողոքներ: Բողոքների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ քաղաքացիները դեղերով չեն ապահովվել՝ մրցույթները չկայանալու (գնային առաջարկ չլինելու) պատճառով: Հայտարարվել է նոր մրցույթ, մինչև նոր մրցույթի կայանալը բուժհաստատության կողմից հնարավորության սահմաններում դեղն ապահովվել է սեփական միջոցների հաշվին, կամ միջազգային, կամ մարդասիրական կազմակերպությունների կողմից ստացված դեղով (առկայության դեպքում). ՀՀ առողջապահության նախարարության անունով մարդասիրական օգնությամբ ստացված և բաշխված, ինչպես նաև անմիջապես առողջապահական կազմակերպությունների անունով այլ մարդասիրական խողովակներով ստացված դեղերն անվճար տրվում են բոլոր պացիենտներին, ըստ բժշկական ցուցումների՝ անկախ սոցիալական կամ հատուկ խմբերի ցանկում ընդգրկվածությունից:

Այսպես, բողոքներից մեկով քաղաքացին հայտնել է, որ ունի 1-ին խմբի հաշմանդամություն, իսկ պոլիկլինիկան պատշաճ կերպով չի տրամադրում իրեն անհրաժեշտ դեղորայքը: Պաշտպանի աշխատակազմում իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ պատճառը մրցույթի չկայանալն է: Արդյունքում՝ պոլիկլինիկայի տնօրենին առաջարկվել է հաշմանդամություն ունեցող անձի իրավունքի իրացման նպատակով այլ ձևաչափ մշակել: Հետագայում բողոք ներկայացրած անձը Պաշտպանի աշխատակազմ ներկայացրել է դեղերը ստացած լինելու առնչությամբ տեղեկատվություն:

---

[148] Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ոլորտում մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիայի լրացուցիչ արձանագրություն, հոդված 10(ա):

[149] Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիա, հոդված 25(բ):

Մեկ այլ բողոքով քաղաքացին տեղեկացրել է, որ ունի շաքարային դիաբետ: Պոլիկլինիկայից ստանում է «Դիաբետոն» և «Մեդֆորմին» դեղամիջոցները, սակայն փետրվար և մարտ ամիսներին դեղամիջոցները չի ստացել՝ առկա չլինելու պատճառաբանությամբ: Խնդիրը ՄԻՊ աշխատակազմի կողմից աշխատանքային կարգով ներկայացվել է Առողջապահության նախարարություն: Նախարարության կողմից աշխատանքային կարգով փոխանցվել է տեղեկատվություն դեղորայքը 1-2 օրվա ընթացքում հասանելի լինելու, ինչպես նաև վերաբաշխումները ժամանակին իրականացնելու առնչությամբ ձեռնարկված միջոցառումների մասին:

ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 30-ի թիվ 642-Ն որոշման համաձայն՝ անվճար կամ արտոնյալ պայմաններով բնակչության սոցիալապես անապահով խմբերին դեղերով ապահովում է սպասարկող պոլիկլինիկան՝ մասնագետի նշանակմամբ (ՀՀ հիմնական դեղերի ցանկին համապատասխան):

Բողոքների մի մասի ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ բողոք ներկայացրած անձն ընդգրկված է բնակչության սոցիալական կամ հատուկ խմբերում, որի դեպքում դեղերն ստանում են դրանց արժեքի լրիվ կամ մասնակի փոխհատուցմամբ: ՄԻՊ աշխատակազմում բողոքների քննարկման շրջանակներում անձինք նախ իրազեկվել են իրենց իրավունքների, այդ թվում՝ ՀՀ առողջապահության նախարարության անունով մարդասիրական օգնությամբ ստացված և բաշխված, ինչպես նաև անմիջապես առողջապահական կազմակերպությունների անունով այլ մարդասիրական խողովակներով ստացված դեղեր ստանալու ընթացակարգի մասին: Ավելին, Պաշտպանի միջամտությամբ անձինք ստացել են այն դեղերը, որոնք ներկայացված են ՀՀ հիմնական դեղերի ցանկում:

Բողոքներ են ստացվել անվճար տրամադրվող դեղորայքի անարդյունավետության վերաբերյալ: Սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված քաղաքացիները տեղեկացրել են, որ հրաժարվել են դրանցից՝ նախընտրելով սեփական միջոցներով ձեռք բերել որակյալ դեղեր:

Առողջապահության նախարարությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ բնակչության սոցիալական կամ հատուկ խմբերի ցանկում ընդգրկված շահառուներին պետության կողմից անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի ժամանակին տրամադրելու համար ԱԱՊ կազմակերպությունները, հաջորդ տարվա իրենց կարիքների համար գնման ընթացակարգերը կազմակերպում և իրականացնում են ընթացիկ տարվա հոկտեմբեր ամսվա ընթացքում՝ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների համաձայն՝ շահառուներին դեղերով անընդհատությունն ապահովելու նպատակով: Ըստ ԱՆ-ի՝ դեղամիջոց ստանալու իրավունք ունեցող սուբյեկտին չտրամադրելու վերաբերյալ 2023 թվականին ստացվել է 35 բողոք, իսկ տրամադրվող դեղերի որակի կամ արդյունավետ չլինելու վերաբերյալ դժգոհություններ չեն ստացվել:

ՏԿԵՆ-ից Պաշտպանին ներկայացրած տեղեկատվության համաձայն՝ Սյունիքի մարզպետի աշխատակազմում 2023 թվականին ստացվել է 5 դիմում-բողոք մարզպետարանի ենթակայության բուժհաստատությունների, մասնավորապես բժշկական կենտրոնների պոլիկլինիկական և առողջության առաջնային պահպանման ծառայությունների գործունեության վերաբերյալ: Բողոքների զգալի մասը վերաբերել է անվճար և արտոնյալ պայմաններով դեղորայքի տրամադրման խնդիրներին: Բոլոր դիմումներում բարձրացված հարցերին տրվել է սպառիչ պատասխան, մասնավորապես իրականցվել է վերոգրյալ դեղորայքի ներմարզային բաշխում՝ դիմումատուներին

անհրաժեշտ դեղորայքը տրամադրելու նպատակով: ՀՀ Կոտայքի մարզպետի ենթակայությամբ գործող բժշկական հաստատություններում (պոլիկլինիկա, ամբուլատորիա) 2023 թվականի բողոքները կապված են եղել շտապօգնության հասանելիության հետ, ինչը պայմանավորված է եղել ծառայության գերծանրաբեռնվածությամբ: ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմ ստացված բողոքները հիմնականում եղել են շտապօգնության կանչերի ուշացման հետ կապված /մարզի չորս տարածքներում հերթապահում են՝ Աշտարակ-2, Ապարան, Թալին, Ծաղկահովիտ 1-ական շտապօգնության հերթապահ խմբեր/: Կենտրոնացված կարգով հատկացվող դեղորայքի երբեմն ուշացման կամ ոչ բավարար քանակով տրամադրման համար, ինչպես նաև արտոնյալ պայմաններով հատկացվող դեղորայք տրամադրելիս եղել են այնպիսի դեղորայքի պահանջներ, որոնք բժշկական կազմակերպությունը իրավասու չէ ձեռք բերելու:

Ըստ Երևանի քաղաքապետարանի՝ անվճար, արտոնյալ պայմաններով դեղ ստանալու իրավունք ունեցող բուժառուների կողմից ստացվել են դիմում-բողոքներ /թվով մոտ 50/ անհրաժեշտ դեղը ուշ տրամադրելու վերաբերյալ: Տրամադրման ուշացումները պայմանավորված են եղել մի շարք հանգամանքներով: Մասնավորապես՝ արժեքի 50% հատուցմամբ դեղեր ստացող 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց 2023 թվականի սեպտեմբեր ամսից դեղերը հատկացվել են անվճար հիմունքներով, ինչը հանգեցրել է նախնական գնումների պլանով նախատեսված դեղերի լրացուցիչ քանակի ձեռքբերման անհրաժեշտության: Միևնույն ժամանակ, անվճար հիմունքներով տրամադրվող մի շարք դեղեր տրամադրվել են նաև Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և ենթակա առողջության կենտրոններում հաշվառված բուժառուներին, ինչը ևս առաջացրել է դեղորայքի լրացուցիչ քանակի ձեռքբերման անհրաժեշտության: Հարցի կարգավորման նպատակով հայտարարվել են լրացուցիչ մրցույթներ: Միաժամանակ արձանագրվել են կայացած մրցույթների արդյունքում հաղթած կազմակերպությունների կողմից հաստատված ժամանակացույցին համապատասխան պատշաճ մատակարարում չիրականացնելու կամ մատակարարման ուշացումների դեպքեր: Արդյունքում բուժհաստատությունները բուժառուներին չեն կարողանում ապահովել հասանելիք դեղորայքով: Քաղաքապետարանից կապ է հաստատվել անբարեխիղճ մատակարարի տնօրինության հետ, հնարավորության սահմաններում կարգավորելու խնդիրը: Դիմում-բողոքներ արձանագրվել են նաև հաստատված ուռուցքաբանական ախտորոշմամբ հիվանդների կողմից՝ նշանակված հակաուռուցքային դեղորայքի ձեռքբերման հետ կապված խնդիրներ:

Շարունակում է խնդրահարույց լինել նաև դեղերի ու բժշկական արտադրանքի որակի հարցը: 2018 թվականին ՀՀ-ն վավերացրել է «Բժշկական նշանակության արտադրանքի կեղծման և հանրային առողջության համար վտանգ ներկայացնող նմանատիպ հանցագործությունների մասին» ԵԽ կոնվենցիան: Կոնվենցիայի նպատակը հանրային առողջության դեմ ուղղված սպառնալիքների կանխարգելումն ու դրանց դեմ պայքարն է՝ Կոնվենցիայով նախատեսված արարքների քրեականացման, տուժողների պաշտպանության և այդ ոլորտում ազգային ու միջազգային համագործակցությունը խթանելու միջոցով: Ընդ որում՝ Կոնվենցիայի դրույթների կիրառումը, մասնավորապես՝ տուժողների իրավունքների պաշտպանությանը վերաբերող միջոցների օգտագործման հնարավորությունը, պետք է լինի ապահովված՝ բացառելով որևէ խտրականություն (Կոնվենցիայի 2-րդ հոդված):

Թեև օրենսդրական փոփոխություններ իրականացվել են բժշկական նշանակության արտադրանքի որակի և անվտանգությանը վերաբերող Կոնվենցիայի պահանջներն ազգային մակարդակում ներդնելու հարցում, այնուամենայնիվ, 2016 թվականին Կոնվենցիայի ընդունումից հետո ներպետական օրենսդրության՝ Կոնվենցիային համապատասխանության գնահատում չի իրականացվել, ինչի անհրաժեշտությունը նկատելի է: Անհրաժեշտ է հատուկ ուշադրության արժանացնել կանխարգելման ու պաշտպանության միջոցների ներդրման արդյունավետությունը, մասնավորապես՝ բժշկական նշանակության կեղծ արտադրանքի վերաբերյալ հանրության իրազեկման մակարդակը բարձրացնելուն ուղղված միջոցառումների կազմակերպումը, տուժողների իրավունքների պաշտպանության համար ներդրված օրենսդրական ու կանխարգելիչ, պաշտպանության, համագործակցության և տեղեկատվության փոխանակման ազգային միջոցների արդյունավետությունը և այլն:

Կոնվենցիայով կարևորվում է բժշկական նշանակության արտադրանքի կեղծիքները և հանրային առողջության համար վտանգ ներկայացնող այլ նմանատիպ իրավախախտումները կանխելու և դրանց դեմ արդյունավետ պայքարելու նպատակով ոլորտի իրավասու մարմինների միջև տեղեկատվության փոխանակումն ու համագործակցությունը: Այս նպատակով Կոնվենցիան պարտավորեցնում է ստեղծելու և ամրապնդելու մեխանիզմներ, որոնք կապահովեն Կոնվենցիայով նախատեսված պահանջների կատարումը, կխթանեն համագործակցությունը: Պահպանելով անհատական տվյալների պաշտպանության պահանջները՝ յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է օրենսդրական և այլ անհրաժեշտ միջոցներ՝ ստեղծելու կամ ամրապնդելու մեխանիզմներ հետևյալի համար.

ա. բժշկական նշանակության արտադրանքի կեղծիքները և հանրային առողջության համար վտանգ ներկայացնող այլ նմանատիպ իրավախախտումները կանխելու և դրանց դեմ պայքարելու նպատակով տեղեկատվության և տվյալների ստացում ու հավաքագրում.

բ. այլ իրավասու մարմինների կողմից ձեռք բերված տեղեկատվության և տվյալների մատչելիության ապահովում՝ վերջիններիս միջև համագործակցություն ապահովելու նպատակով.

գ. գերատեսչություններում պատասխանատու անձանց, ստորաբաժանումների կամ ծառայությունների վերապատրաստումները համակարգելու նպատակով:

Առողջության պահպանման իրավունքը մարդու հիմնարար իրավունք է, որն անհրաժեշտ է մարդու այլ իրավունքների իրացման համար: Առողջության պահպանման իրավունքն անմիջականորեն կապված է մյուս իրավունքների, այդ թվում՝ կյանքի իրավունքի հետ: Հետևաբար, առողջության պահպանման, այդ թվում՝ առողջապահական ծառայություններից օգտվելու և օրենքով սահմանված կարգով անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղորայք, ինչպես նաև բուժօգնություն ստանալու իրավունքների ապահովման նպատակով պետությունը պարտավոր է իրացնել պատշաճ և համալիր մեթոդաբանությամբ քաղաքականություն և ցուցաբերել բավարար փութաջանություն: Պաշտպանն ընդգծում է դեղամիջոցների՝ անհրաժեշտ քանակով և հաստատված որակով առկայության կարևորությունը, դեղերի շրջանառության նկատմամբ պատշաճ վերահսկողության անհրաժեշտությունը: Անհրաժեշտ է վերանայել պետության կարիքների համար ձեռք բերվող դեղերի գնումների գործընթացի մեթոդաբանությունը, մասնավորապես՝ մշակել և իրացնել դեղորայքի որակական հատկանիշներին

առաջնահերթություն տալու, գործընթացի ռիսկերը պատշաճ գնահատելու կառուցակարգեր:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***պոլիկլինիկաների վերակազմակերպման գործընթացն իրականացնելուց հետո գնահատել փոփոխությունները՝ հանրային առողջության ցուցանիշների տեսանկյունից (բժշկական, տնտեսագիտական ու սոցիալական արդյունավետության բարելավման առումով).***
- ✓ ***մշակել և իրացնել բնակչության սոցիալական կամ հատուկ խմբերի ցանկում ընդգրկված շահառուներին պետության կողմից անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի անխափան տրամադրումն ապահովելու նպատակով դրանք ձեռք բերելու գործընթացի վերահսկողության պատշաճ կառուցակարգեր.***
- ✓ ***իրականացնել «Բժշկական նշանակության արտադրանքի կեղծման և հանրային առողջության համար վտանգ ներկայացնող նմանատիպ հանցագործությունների մասին» ԵՄ կոնվենցիայի պահանջների՝ ազգային մակարդակում իրականացման գնահատում:***

3. Պետական մարմնի առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի խնդիր

Պետական մարմնի առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի բացակայության խնդիրը բարձրացվել է Պաշտպանի նախորդ՝ 2019, 2020 և 2021 թվականների տարեկան հաղորդումներով[150], և որպես լուծում առաջարկվել է բուժառուների բողոքների քննարկման մասնագիտացված և արդյունավետ մեթոդների մշակում, ինչպես նաև իրավունքների պաշտպանության մեխանիզմների ապահովում:

2023 թվականին շարունակել են բողոքներ ստացվել բուժօգնության որակի, ծավալի, բժիշկների գործողությունների վերաբերյալ, որոնք տարբեր պետական մարմիններում բողոքարկելով՝ անձինք ստացել են «իրավասություն չունենալու» առնչությամբ պատասխան: Բուժառուի իրավունքների պաշտպանություն ապահովելու համար վերջինս պետք է ունենա բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի գործողությունն ու անգործությունը վիճարկելու պատշաճ հնարավորություն, եթե գտնում է, որ նրա գործողություններով կամ անգործությամբ խախտվել են իր՝ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքները:

Բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ անձը չի կարողանում վերականգնել իր իրավունքը բողոքարկման կառուցակարգերի բացակայության պատճառով: Օրինակ՝ բժշկի բուժումը ոչ արդյունավետ է, թերի է կամ հետազոտություններն ավելորդ են ցուցվել, բժշկական հաստատություններում արժանացել են կոպիտ կամ արհամարհական վերաբերմունքի և այլն: Ըստ դիմողների՝ նման դեպքերում, դիմելով Առողջապահության նախարարություն, բուժառուները, որպես կանոն, արդյունքի չեն հասնում, քանի որ ԱՆ-ն նրանց պատասխանում է, որ բարձրացված հարցերը դուրս են իր իրավասության շրջանակներից:

Պաշտպանին ներկայացվող բողոքների շրջանակներում համապատասխան գրություններ են հասցեագրվում ՀՀ առողջապահության նախարարություն: Որպես կանոն՝

[150] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2019, 2020, 2021 թվականի տարեկան հաղորդումները, (համապատասխանաբար էջեր՝ 217, 328, 277):

նախարարությունը Պաշտպանի գրությունները վերահասցեագրում է այն բժշկական հաստատություն, որի գործողությունների դեմ բողոքում է բուժառուն, այնուհետև Պաշտպանին է վերահասցեագրում բժշկական հաստատության պարզաբանումները:

Այսպես, բողոքներից մեկով քաղաքացին տեղեկացրել է, որ կինը սուր թունավորումով տեղափոխվել է բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունք: Նշել է, որ առանց իր համաձայնության, օրեր անց կնոջը տեղափոխել են վերակենդանացման բաժանմունքի «VIP» հիվանդասենյակ և պահանջել յուրաքանչյուր օրվա համար վճարել 25.000 ՀՀ դրամ՝ նշելով, որ հակառակ պարագայում բուժօգնությունը կդադարեցվի և անձը դուրս կգրվի: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ կնոջ առողջական վիճակը ծանր է, ունի պառկելախոցեր, ինքնուրույն չի շնչում, թթվածինն ապահովվում է շնչառական ապարատի միջոցով, ուստի չի կարող տնային պայմաններում խնամել վերջինիս: Խնդրել է Պաշտպանի աջակցությունը կնոջը դուրս գրում չկատարելու և բուժօգնությունը վերակենդանացման բաժանմունքում կազմակերպելու հարցերում: Բողոքի կապակցությամբ ՀՀ առողջապահության նախարարությունից ստացվել է բժշկական կենտրոնի պարզաբանումը հետևյալի մասին.

Վերակենդանացման բաժանմունքում բուժառուի մոտ նկատվել է դրական տեղաշարժ, որը չի համապատասխանել ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 65-Ն հրամանով հաստատված, վերակենդանացման միջոցառումների և ինտենսիվ թերապիա պահանջող հիվանդությունների և վիճակներին, ուստի կարիք է ունեցել ինտենսիվ խնամքի: Նշվածը հաղորդվել է բուժառուի ընտանիքի անդամներին, միաժամանակ տեղեկացվել է բուժառուին վերականգնողական կենտրոն տեղափոխելու անհրաժեշտության մասին: Ընտանիքի անդամները տեղեկացվել են վերակենդանացման բաժանմունքի կողմից մատուցվող ինտենսիվ խնամք պահանջող ծառայությունների վճարովի լինելու վերաբերյալ:

Նշված պարզաբանումները, ըստ դիմողի, չեն համապատասխանել իրականությանը, ինչի կապակցությամբ կրկին գրություն է հասցեագրվել ՀՀ առողջապահության նախարարություն: ԱՆ-ից ստացվել են նույն պարզաբանումները, ինչպես նաև այն, որ հիվանդին բժշկական օգնության տրամադրումը, հոսպիտալացումը և դուրսգրումը իրականացվում է առողջական վիճակից ելնելով՝ համապատասխան բժշկական ցուցումների առկայության դեպքում:

Այնուհետև, բողոք ներկայացրած անձը ՄԻՊ աշխատակազմ տեղեկություն է ներկայացրել, որ կնոջը դուրս են գրել բժշկական կենտրոնից, մինչդեռ վերջինիս առողջական վիճակը գնալով վատթարանում է:

Դեպքի շրջանակներում դիմողն ու բժշկական հաստատությունը փաստացի ներկայացրել են իրար հակասող տեղեկատվություն:

«Բոթոյանն ընդդեմ Հայաստանի» (5766/17) գործով ՄԻԵԴ-ի 2022 թվականի փետրվարի 8-ի վճռով արձանագրվել է 8-րդ հոդվածի (անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք) խախտում.

Այսպես, դիմումատուն 2008 թվականին Արթիկ բժշկական կենտրոնում ենթարկվել է ոտքի վիրահատության՝ մետաղական իմպլանտի տեղադրման եղանակով, ինչն իրականացվել է թերացումներով ու բացթողումներով, որն էլ պատճառ է հանդիսացել վերջինիս հաշմանդամության:

Գանգատը ՄԻԵԴ ներկայացվել է այն հիմքով, որ պետությունը թերացել է բուժսպասարկման կանոնակարգող պարտավորություններում, և այն հիմքով, որ դիմումատուի խնամքն ու բուժումը հանրային հիվանդանոցում հանգեցրել են առողջական բարդությունների՝ պատճառելով հաշմանդամություն: Ավելին, դիմումատուն պատշաճ կերպով չի տեղեկացվել բժշկական օգնության ընթացքի և հնարավոր ռիսկերի մասին: Դիմելով ՄԻԵԴ՝ դիմումատուն հարց է բարձրացվել նաև այն մասին, որ Հայաստանում որևէ կառուցակարգ չի եղել, որը հնարավորություն կտար կրած վնասների համար փոխհատուցում ստանալ:

Ուսումնասիրելով ներկայացված գանգատը՝ ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ պետությունները պոզիտիվ պարտավորություն ունեն սահմանելու արդյունավետ բուժսպասարկում և կանոնակարգող հիմքեր: Հիմք ընդունելով ներկայացված փաստերը՝ ՄԻԵԴ-ը հաստատված է համարել այն հանգամանքը, որ Արթիկ ԲԿ-ում վիրահատությունը կատարվել է մասնագետի կողմից, ով տվյալ վիրահատության մասնագիտացում չի ունեցել, ավելին՝ տեղադրված մետաղական իմպլանտը պաշտոնապես ձեռք չի բերվել:

ՄԻԵԴ-ն ընդունել է նաև, որ դիմումատուի կողմից ներկայացված փաստերը ստացված բժշկական օգնության պատշաճության վերաբերյալ լուրջ հանգամանքներ են: Նմանապես, խնդրահարույց է վիրահատության արդյունքում կրած խնդիրների համար վնասի փոխհատուցման բացակայությունը:

Անդրադառնալով բժշկական սխալի համար ՀՀ-ում գործող պաշտպանության այլ միջոցներին՝ ՄԻԵԴ-ը փաստել է, որ բարոյական վնասի, բժշկի նկատմամբ կարգապահական պատասխանատվության, ինչպես նաև Առողջապահության նախարարության կոնսուլտացիաները վիճարկելու հնարավորությունը, որոնց մասին փաստարկել էր Կառավարությունը, անարդյունավետ և կիրառելի չեն:

Ըստ այդմ, ՄԻԵԴ-ը հաստատել է, որ այս ամենը հանգեցրել է դիմումատուի անձնական ու ընտանեկան կյանքի իրավունքի խախտման՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի ներքո:

Իբրև դրական առաջընթաց՝ ողջունելի է, որ Կառավարության 17.02.2022թ. թիվ 182-Ն որոշմամբ հաստատվել են բուժաշխատողի մասնագիտական էթիկայի կանոնները, ՀՀ առողջապահության նախարարի 08.11.2022թ. թիվ 75-Ն հրամանով՝ Էթիկայի հանձնաժողովի անդամների մրցութային ընտրության կարգը, աշխատակարգը, հանձնաժողովում գործերի քննության կարգը: Ըստ այդմ, Հանձնաժողովին կարող են դիմել բուժառուները, որոնք գտնում են, որ բուժաշխատողը խախտել է մասնագիտական էթիկայի կանոնները: Հանձնաժողովին կարող են դիմել նաև բուժաշխատողները՝ այլ բուժաշխատողների կողմից էթիկայի կանոնների խախտում արձանագրելու դեպքում: Հանձնաժողովը կազմված է 7 անձից, այստեղ ներգրավված են իրավաբաններ, հոգեբան, բժիշկ, բուժառուների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող մարմինների ներկայացուցիչներ: Հանձնաժողովի անդամներն ընտրվում են 3 տարի ժամկետով:

Տարեկան հաղորդման շրջանակներում Մասնագիտական էթիկայի կանոնների խախտման դեպքերը քննող էթիկայի հանձնաժողովից ստացված պարզաբանման համաձայն՝ Պաշտպանին վիճակագրություն (բողոքների քանակի, բնույթի, արդյունքների) չի ներկայացվել՝ գրավոր դիմումների բացակայության պատճառով: Մինչդեռ, Առողջապահության նախարարությունն ու այլ գերատեսչությունները բողոքներ ստացել են,

ինչը հիմք է տալիս եզրակացնելու, որ քաղաքացիները պատշաճ և բավարար մակարդակով իրազեկված չեն հանձնաժողովի առկայության և գործունեության մասին:

Այսպես, 2023 թվականի ընթացքում բուժհաստատություններում հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի դեպքերի վերաբերյալ ՀՀ առողջապահության նախարարությունում ստացվել է 31 բողոք: Ըստ ԱՆ-ի՝ բոլոր դեպքերն արժանացել են հատուկ քննարկման բուժհաստատության ադմինիստրացիայի և ԱՆ-ի կողմից: Առանձին դեպքերում գրություններ են ուղարկվել Երևանի քաղաքապետարան, մարզպետարաններ և համապատասխան բուժհաստատություններ, որի արդյունքում որոշ բուժաշխատողներ ենթարկվել են կարգապահական տույժի գործատուի կողմից: Կապ է հաստատվել բուժհաստատության տնօրինության հետ և առաջարկվել է իրազեկել բուժաշխատողներին իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ՝ հետագայում նմանատիպ դեպքերը բացառելու նպատակով՝ պահպանելով բժշկական էթիկայի կանոնները:

ՄԻՊ աշխատակազմ դիմած անձանց հետ հանդիպումների ընթացքում ևս պարզ է դարձել, որ քիչ թվով քաղաքացիներ են տեղյակ նման հանձնաժողովի առկայության մասին:

Իր հերթին, Երևանի քաղաքապետարանից տեղեկացրել են, որ քաղաքապետարանին ենթակա առողջության կենտրոններում բժիշկների կողմից ցուցաբերված վատ կամ խտրական վերաբերմունքի հետևանքով թվով 42 բժշկի նկատմամբ /այդ թվում՝ 3 բուժքույր/ կիրառվել է կարգապահական տույժ՝ գրավոր նկատողության տեսքով:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝

- ***ապահովել «Բոթոյան ընդդեմ Հայաստանի» ՄԻԵԴ վճռով ընդհանուր միջոցառումներով նախատեսված պահանջների պատշաճ կատարումը՝ նախատեսելով իրավական պաշտպանության արդյունավետ միջոց՝ մշակելով ու գործարկելով բժշկական սխալի դեպքերում ոչ նյութական վնասի փոխհատուցման մեխանիզմ.***
- ***զարգացնել Մասնագիտական էթիկայի կանոնների խախտման դեպքերը քննող էթիկայի հանձնաժողովի ինստիտուցիոնալ ու գործնական կարողությունները, այդ թվում՝ երաշխավորելով հատուկ կարիքներ ունեցող անձանց համար հանձնաժողովին դիմելու մատչելիությունը.***
- ***իրականացնել Մասնագիտական էթիկայի կանոնների խախտման դեպքերը քննող էթիկայի հանձնաժողովի գործունեության մասին լայնածավալ իրազեկման աշխատանքներ, որոնք կներառեն հանձնաժողովի լիազորությունների, դիմելու հիմքերի, ընթացակարգերի ու սպասվող արդյունքների մասին տեղեկատվություն:***

4. Պալիատիվ բուժօգնությունը

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ պալիատիվ բժշկական օգնությունը կյանքին վտանգ սպառնացող և անբուժելի հիվանդություն ունեցող պացիենտի և նրա ընտանիքի կյանքի որակի բարելավմանն ուղղված բժշկական օգնություն և սպասարկում է, որը նպատակ ունի մեղմելու պացիենտի ցավը, տառապանքը և հիվանդության հետ կապված ֆիզիկական, սոցիալ-հոգեբանական և այլ խնդիրները:

Պալիատիվ խնամքը նպատակ ունի բարելավել կյանքին սպառնացող, ինչպես նաև անբուժելի հիվանդության հետ կապված ֆիզիկական, հոգեբանական, սոցիալական մարտահրավերներ ունեցող հիվանդների և նրանց ընտանիքների կյանքի որակը, նպաստել նրանց հարմարավետ, արժանապատիվ կյանքով ապրելուն:

Պետք է փաստել, որ 2023 թվականին ևս շարունակում է արդիական մնալ պալիատիվ բուժօգնության և դրա ամբողջական ներդրման անհրաժեշտությունը, որը տարիներ շարունակ գտնվում է Մարդու իրավունքների պաշտպանի, ինչպես նաև հասարակական և միջազգային մի շարք կազմակերպությունների ուշադրության ներքո:

Առողջապահության ազգային քաղաքականությունը և համակարգերը պարտադիր պետք է ներառեն պալիատիվ խնամքը, պետք է ապահովվի առողջապահության մասնագետների համար պալիատիվ խնամքի վերաբերյալ ուսուցումը, բնակչության համար օփիոիդային ցավազրկողները պետք է բավարար լինեն և համապատասխանի հիմնական դեղերի հասանելիության միջազգային կոնվենցիաներին:

Մարդկային ռեսուրսները նույնպես հզորացման և ընդլայնման կարիք ունեն, ներառյալ՝ առկա առողջապահական համակարգում աշխատողների վերապատրաստումը, բոլոր նոր առողջապահական մասնագետների հիմնական ուսումնական ծրագրերում պալիատիվ խնամքի վերաբերյալ դասընթացի ներդրումը, ինչպես նաև կամավորներին և հանրությանը կրթելը:

Պետք է երաշխավորվի բոլոր մարդկանց հնարավորությունը՝ անկախ եկամուտից, հիվանդության տեսակից կամ տարիքից, օգտվելու հիմնական առողջապահական ծառայություններից, ներառյալ՝ պալիատիվ խնամքը:

Պետք է փաստել, որ մինչ այժմ էլ հասարակության շրջանում չկա լիարժեք պատկերացում պալիատիվ բուժօգնության, տրամադրվող խնամքի վերաբերյալ: Բացի այդ, բուժաշխատողները ևս լիարժեք չեն տիրապետում պալիատիվ բուժօգնությանը և ունեն կարիք շարունակաբար վերապատրաստվելու ցավային համախտանիշի կառավարման, արդյունավետ ցավազրկման, պացիենտների իրավունքների մասին իրազեկելու և այլնի վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետությունում պալիատիվ բուժօգնությունը շարունակում է մնալ ոչ բոլորին հասանելի, քանի որ դեռ չի տրամադրվում մի քանի մարզերում: Հայաստանի Հանրապետությունում 2023 թվականի ընթացքում պետական պատվերի շրջանակներում արտահիվանդանոցային պալիատիվ բժշկական օգնության ծառայություն մատուցվել է թվով միայն 6 բժշկական կազմակերպություններում՝ ՀՀ Արարատի մարզում՝ 1, ՀՀ Արմավիրի մարզում՝ 1, ՀՀ Կոտայքի մարզում՝ 1, ՀՀ Տավուշի մարզում՝ 1, ՀՀ Արագածոտնի մարզում՝ 1 և ՀՀ Վայոց ձորի մարզում՝ 1:

Այսպիսով, համապատասխան դեղերի ոչ բավարար քանակի, ֆիզիկական և տարածքային անհասանելիության պատճառով շատ մարդիկ զրկվում են պալիատիվ բուժօգնություն ստանալու իրենց իրավունքից:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների և 2023-2025 թվականների գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» N 1978-Լ որոշմամբ հաստատվել են պալիատիվ բուժօգնության ոլորտում առկա խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներ:

Մասնավորապես, նշված որոշման 3-րդ հավելվածի 5.9. գործողությամբ նախատեսվում է բարձրացնել հանրային իրազեկվածությունը պալիատիվ բժշկական

օգնության և սպասարկման մասին, որը նպատակ ունի պալիատիվ բժշկական օգնության վերաբերյալ բնակչության համար ապահովել ամբողջական և մատչելի տեղեկատվություն, իսկ նույն որոշման 5.10. գործողությամբ նախատեսվում է իրականացնել պալիատիվ խնամքի և ցավային համախտանիշի կառավարման վերաբերյալ շարունակական վերապատրաստումներ՝ բուժաշխատողների համար:

Նույն որոշման համաձայն՝ 2020-2022թթ.-ին ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ում 90 բուժաշխատող անցել են պալիատիվ խնամք թեմայով վերապատրաստման դասընթացներ:

Պետք է նկատել, որ 2023 թվականին կատարված աշխատանքների վերաբերյալ Առողջապահության նախարարության տրամադրած տվյալները վկայում են այն մասին, որ 2023 թվականին ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ում իրականացվել է «Պալիատիվ բժշկություն» թեմայով դասընթաց, որին մասնակցել են միայն 2 ավագ բուժաշխատող, իսկ «Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամում իրականացվել են «Պալիատիվ (ամոքիչ) բուժօգնության ժամանակակից մոտեցումներն օնկոլոգիական հիվանդությունների ժամանակ», «Ցավի կառավարման ժամանակակից մոտեցումներ», «Պալիատիվ խնամքի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները» թեմայով դասընթացներ, որոնց մասնակցել են 5 ավագ բուժաշխատող, «Բուժքրոջ դերը պալիատիվ (ամոքիչ) բժշկության և խնամքի հարցերում» թեմայով դասընթաց, որին մասնակցել են 6 միջին բուժաշխատողներ:

Պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման, ցավային համախտանիշի կառավարման վերաբերյալ (այդ թվում՝ ոլորտի իրավակարգավորումների) շարունակական կրթական ծրագրերի իրականացումը և այդպիսով կարողությունների և պրոֆեսիանալիզմի բարձրացումն ուղիղ համեմատական են տրամադրվող ծառայության որակին, պացիենտի իրավունքների իրացման ապահովմանը: Ուստի խնդրահարույց է այն, որ 2023 թվականին վերապատրաստման դասընթացներին ավելի քիչ թվով բուժաշխատողներ են ներգրավված եղել, քան նախորդ տարիներին:

Պետք է նշել, որ 2023 թվականի դրությամբ նվազել է նաև պալիատիվ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական կազմակերպությունների քանակը: Այսպես, եթե 2021 թվականի դրությամբ Երևանում և մարզերում պալիատիվ բուժօգնության ծառայություն են մատուցել շուրջ 30 արտահիվանդանոցային և հիվանդանոցային հաստատություններ, ապա 2023 թվականին պալիատիվ բժշկական օգնություն և սպասարկում է իրականացրել 5 հիվանդանոցային և 9 արտահիվանդանոցային բժշկական կազմակերպություն:

«Յուրաքանչյուրի իրավունքը ֆիզիկական և հոգեկան առողջության ամենաբարձր հասանելի ստանդարտից օգտվելու վերաբերյալ» Հայաստան կատարած այցի ժամանակ հատուկ զեկուցողի զեկույցում[151] արձանագրվել է, որ առողջապահության ոլորտի մասնագետները պատշաճ պատրաստվածություն չունեն, որպեսզի տրամադրեն պալիատիվ խնամքի ծառայություններ, ներառյալ հոգեսոցիալական աջակցություն և խորհրդատվություն, իսկ պալիատիվ խնամքի դեղամիջոցները հասանելի չեն ողջ երկրում:

Նույն զեկույցում նշվում է նաև, որ պալիատիվ բուժօգնության քաղաքականության բարեփոխում է անհրաժեշտ՝ դրանց հասանելիությունն ապահովելու համար, ինչպես նաև

[151]Տե՛ս «Յուրաքանչյուրի իրավունքը ֆիզիկական և հոգեկան առողջության ամենաբարձր հասանելի ստանդարտից օգտվելու վերաբերյալ» Հայաստան կատարած այցի ժամանակ հատուկ զեկուցողի զեկույցը, 2018 թվականի ապրիլի 23:

անհրաժեշտ է բուժաշխատողների կրթությունը՝ համապատասխան էթիկական ծառայություններ մատուցելու համար:

Զեկույցում արձանագրվել է նաև, որ Հայաստանում դեռ առկա են շատ հիվանդներ, ովքեր տառապում են քրոնիկ ցավերով և իրենց կյանքն ավարտում են անտանելի տառապանքով, որը հակասում է ցավի դեմ պայքարի միջազգային չափանիշներին, խախտում է առողջության իրավունքը և ստեղծում է դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի վտանգ:

Բացի այդ, հարկ է ընդգծել, որ ՀՀ-ում պալիատիվ խնամք տրամադրվում է միայն կյանքին վտանգ սպառնացող կամ անբուժելի հիվանդություն ունեցող պացիենտներին, սակայն Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը նշել է, որ պալիատիվ խնամքը պետք է հասանելի լինի ոչ միայն մահացու հիվանդներին, այլև խրոնիկական հիվանդներին և անհատական խնամքի բարձր մակարդակ պահանջող անձանց, որոնք կշահեն պալիատիվ խնամքից[152]:

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը նկատել է, որ առհասարակ համապատասխան պալիատիվ խնամքի ծառայությունների բացակայությունը ոչ միայն մեծացնում է տառապանքը հիվանդների և ընտանիքների համար, այլև ավելի մեծ ծախսեր է առաջացնում առողջապահական համակարգի համար, քանի որ դա հանգեցնում է մեծաթիվ անձանց հիվանդանոցներում տեղավորմանը, ինչպես նաև շտապ օգնության թանկարժեք ծառայություններից օգտվելուն: Հետևաբար, չափազանց կարևոր է հնարավորինս շուտ բացահայտել պալիատիվ խնամքի կարիքները և պալիատիվ խնամքի ծառայություններ մատուցել խնամքի բոլոր մակարդակներում: Այն պետք է ներառի, մասնավորապես, պալիատիվ խնամքի ծառայությունները համայնքային մակարդակում և տնային խնամքը, որը կարող է տրամադրվել ավելի ցածր գնով, և որոնց միջոցով կարելի է հասնել բժշկական հաստատություններում սահմանափակ հասանելիությամբ մարդկանց:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Խորհրդարանական վեհաժողովը կոչ է արել Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին ինչպես մեծահասակների, այնպես էլ երեխաների համար, ովքեր ունեն պալիատիվ խնամքի կարիք, ձեռնարկել հետևյալ միջոցները՝ պալիատիվ խնամքի ծառայություններն ուժեղացնելու և որակյալ պալիատիվ խնամքի հասանելիությունն ապահովելու համար.

- ճանաչել պալիատիվ խնամքը որպես մարդու իրավունք, սահմանել այն որպես առողջապահական համակարգի մաս և անհրաժեշտ ռեսուրսներ տրամադրել դրա համար,
- ինտեգրել պալիատիվ խնամքը առողջապահական համակարգի բոլոր ծառայությունների և պարամետրերի մեջ, մասնավորապես, ընդլայնել պալիատիվ խնամքի ծառայությունները, որոնք տրամադրվում են կյանքին սպառնացող կամ կյանքը սահմանափակող քրոնիկական հիվանդություններ ունեցող բոլոր հիվանդներին,
- ապահովել ցավի բուժման հասանելիությունը՝ վերացնելով իրավական խոչընդոտները, որոնք սահմանափակում են ցավազրկող դեղամիջոցների հասանելիությունը պալիատիվ խնամքի համատեքստում,
- լուծել կրթական և վերաբերմունքի խոչընդոտները՝ բարձրացնելով առողջապահական մասնագետների և հանրության շրջանում ցավի համապատասխան և արդյունավետ կառավարման, ներառյալ՝ օփիոիդների վրա հիմնված բուժումների մասին իրազեկվածությունը,

[152] Հասանելի է https://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=25214&lang=en հղումով:

- ապահովել պալիատիվ խնամքի վերաբերյալ համապատասխան ուսուցում առողջապահության ոլորտի մասնագետների համար, մասնավորապես՝ ներառել հիմնական պալիատիվ խնամքի ուսուցումը բժշկական և բուժքույրական դպրոցներում և ապահովել պալիատիվ խնամքի վերաբերյալ շարունակական մասնագիտական կրթություն,
- ճանաչել պալիատիվ խնամքը որպես բժշկական մասնագիտություն,
- համակարգված եղանակով տրամադրել հոգեբանական, հուզական և հոգևոր աջակցություն հիվանդներին և ընտանիքներին,
- բարելավել պալիատիվ խնամքի մասին հանրային իրազեկվածությունը լրատվամիջոցների և տեղեկատվական արշավների միջոցով,
- միջոցներ ձեռնարկել՝ խթանելու կառավարության և քաղաքացիական հասարակության միջև համագործակցությունը պալիատիվ խնամքի ծառայությունների մատուցման հարցում,
- խորհրդակցել կյանքին սպառնացող կամ կյանքը սահմանափակող պայմաններով ապրող մարդկանց, ինչպես նաև նրանց խնամողների և առողջապահական մասնագետների հետ՝ պալիատիվ խնամքի հետ կապված քաղաքականության և ծառայությունների մշակման վերաբերյալ[153]:

Առողջապահության համաշխարհային ասամբլեան ևս հորդորել է անդամ պետություններին անհրաժեշտության դեպքում մշակել, ամրապնդել և կիրառել պալիատիվ խնամքի քաղաքականությունը, աջակցել առողջապահական համակարգերի համապարփակ հզորացմանը՝ ինտեգրելու ապացույցների վրա հիմնված, ծախսարդյունավետ և արդար պալիատիվ խնամքի ծառայություններ, ապահովել խնամքի շարունակականությունը բոլոր մակարդակներում, անհրաժեշտության դեպքում ապահովել համապատասխան ներքին ֆինանսավորում և մարդկային ռեսուրսների բաշխում պալիատիվ խնամքի նախաձեռնությունների համար, ներառյալ պալիատիվ խնամքի մշակումն ու իրականացումը, քաղաքականությունը, կրթությունը և ուսուցումը, ներառել պալիատիվ խնամքը որպես շարունակական կրթության անբաժանելի բաղադրիչ և ուսուցում, որն առաջարկվում է խնամք տրամադրողներին՝ համաձայն նրանց դերերի և պարտականությունների, խթանել համագործակցությունը կառավարությունների և քաղաքացիական հասարակության, ներառյալ հիվանդների միջև և այլն[154]:

2023 թվականին պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման վերաբերյալ հանրության իրազեկվածությունը բարձրացնելու համար Առողջապահության նախարարության կողմից իրականացվել են հետևյալ հանրային իրազեկման աշխատանքները՝ պալիատիվ օգնության համաշխարհային օրվան նվիրված հաղորդագրություններ են հրապարկվել հետևյալ կայք-էջերում՝ newsarmenia.am, galatv.am, armtimes.com, hetq.am, politik.am, aravot.am, shantnews.am, Operativ.am, 4news.am, «Պալիատիվ օգնությունը Հայաստանում» թեմայով հաղորդում[155] «Հ1» հեռուստաալիքով, «Թոքի քաղցկեղի մասին իրազեկման ամիս» թեմայի շրջանակներում Հանրային ռադիոյի «Ես առողջ եմ» հաղորդաշար[156]:

---

[153] Տե՛ս նույն տեղում:

[154] Տե՛ս Առողջապահության համաշխարհային ասամբլեայի WHA67.19 բանաձևը, 2014 թվականի մայիսի 24, հասանելի է https://apps.who.int/gb/ebwha/pdf_files/WHA67/A67_R19-en.pdf հղումով:

[155] Հասանելի է https://www.facebook.com/OncologyMedicalCenter/videos/1357968268427726/ հղումով, 2024 թվականի փետրվարի 10-ի դրությամբ:

[156] Հասանելի է https://www.facebook.com/OncologyMedicalCenter/videos/1479829172868431/ հղումով, 2024 թվականի փետրվարի 10-ի դրությամբ:

Այսպիսով, հարկ է նկատել, որ 2023 թվականի ընթացքում շարունակել է արդիական մնալ պալիատիվ բուժօգնության ամբողջական ներդրման անհրաժեշտությունը, քանի որ պալիատիվ խնամքը շարունակել է շատ անձանց համար մնալ անհասանելի: Մի քանի մարզերում, նույնիսկ, նման ծառայություններ ընդհանրապես չեն մատուցվել, իսկ այն մարզերում, որտեղ մատուցվել են պալիատիվ բուժօգնության ծառայություններ, անհասանելի են եղել դրա կարիքն ունեցող մի շարք անձանց համար՝ ծառայությունների վճարովի լինելու պատճառով:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***պալիատիվ բուժօգնություն տրամադրել ոչ միայն կյանքին վտանգ սպառնացող և անբուժելի հիվանդություն ունեցող պացիենտներին, այլև կենսակերպը սահմանափակող քրոնիկական հիվանդություններ ունեցող բոլոր հիվանդներին,***
- ✓ ***շարունակել ընդլայնել պետական պատվերի շրջանակներում արտահիվանդանոցային և հիվանդանոցային պայմաններում պալիատիվ բուժօգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունների ցանկը՝ ներառելով բոլոր մարզերը,***
- ✓ ***վերացնել իրավական խոչընդոտները, որոնք սահմանափակում են ցավազրկող դեղամիջոցների հասանելիությունը պալիատիվ խնամքի համատեքստում,***
- ✓ ***շարունակել պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման մասին հանրային իրազեկվածության աշխատանքները և բուժաշխատողների համար պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման, ցավային համախտանիշի կառավարման վերաբերյալ շարունակական կրթական ծրագրերի, վերապատրաստումների իրականացումը՝ ներգրավելով ավելի մեծ թվով բուժաշխատողների:***

5. Շուրջօրյա խնամքի կենտրոններում (տուն-ինտերնատներում) ինքնասպանության դեպքերի կանխարգելում

Վերջին տարիների ընթացքում Պաշտպանի հաստատության կատարած ուսումնասիրությունները, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ սկսած քննարկման ընթացակարգերի արդյունքները վկայում են, որ ԱՍՀՆ համակարգում գործող «Երևանի № 1 տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպությունում[157] գրանցված ինքնասպանության դեպքերի ցուցանիշը մտահոգիչ է:

Այսպես, ըստ ԱՍՀՆ-ի տրամադրած տեղեկությունների՝ նախարարության համակարգում գործում են տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի 4 կենտրոններ[158]: Տրամադրված տվյալների համաձայն՝ 2020-2023 թվականներին միայն «Երևանի № 1 տուն-ինտերնատ»-ում է արձանագրվել ինքնասպանության 4 դեպք:

[157] Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 2341-Ն որոշմամբ «Երևանի № 1 տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանել է ««Հաղթանակ» շուրջօրյա խնամքի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության: ԱՍՀՆ տրամադրած տեղեկությունների համաձայն՝ ներկայում տեղի է ունենում անվանափոխման հետ կապված գրանցման գործընթացը:

[158] «Երևանի № 1 տուն-ինտերնատ», «Նորքի տուն-ինտերնատ», «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» և ««Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունները: Ըստ նախարարության տրամադրած տեղեկությունների՝ ՀՀ կառավարության 2019 թվականի 1786-Ա, 2020 թվականի 628-Ն և 2020 թվականի 1341-Ա որոշումներով Հայկական Կարմիր Խաչի ընկերությանն է հանձնվել Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոնը:

Ընդ որում, նշված 4 դեպքերից 1-ը տեղի է ունեցել 2020 թվականին, 2-ը՝ 2022 թվականին, 1-ը՝ 2023 թվականին:

ՄԻՊ հաստատության կատարած ուսումնասիրությունները վկայում են, որ շուրջօրյա խնամքի կենտրոններում (տուն-ինտերնատներում) ինքնասպանության դեպքերի կանխարգելման խնդրին համակողմանի լուծում տալու համար ներկայում առկա չէ հստակ կառուցակարգ (օրինակ՝ ռազմավարություն): Մինչդեռ, այս ոլորտում համակարգված և արդյունավետ քաղաքականության որդեգրումն ու դրա հետևողական իրականացումը կարող է կարևոր նշանակություն ունենալ ինքնասպանությունների կանխարգելման հարցում: Այս խնդրի լուծմանն ուղղված գործնական բավարար քայլերի, նման դեպքերի կանխարգելմանն ուղղված համապատասխան կազմակերպական մեխանիզմների առկայությունը, ի թիվս այլնի, անհրաժեշտ է նաև վերը նշված հաստատությունների շահառուների իրավունքների արդյունավետ պաշտպանության համար: Ռազմավարության իրավական կարգավորման առարկա կարող են դառնալ օրինակ՝ շուրջօրյա խնամքի կենտրոններում արձանագրված ինքնասպանության դեպքերի հիմքում ընկած հանգամանքների (պատճառների) ու նպաստող գործոնների գնահատման, շուրջօրյա խնամքի կենտրոնում ինքնասպանության դեպքերի կանխարգելման համալիր ծրագրի մշակման և իրականացման հետ կապված հարցերը[159]:

Դրա հետ մեկտեղ, ինքնասպանության ռիսկի խմբին դասվող շահառուներին կյանքից զրկելու միջոցներին *(օրինակ՝ երկարացման լար, պարան, կոշկաքուղեր, սավան, գոտի և այլն)* անհրաժեշտ ժամանակահատվածով հասանելիությունը սահմանափակելու օրենսդրական հնարավորության նախատեսման հետ կապված հարցը նույնպես կարող է դառնալ ռազմավարության իրավակարգավորման առարկա: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ թեև, ըստ նախարարության տրամադրած պարզաբանումների, հագուստ, կոշիկ ընտրելիս հաշվի է առնվում գոտիների, կոշկաքուղերի առկայությունը, այնուհանդերձ դա օբյեկտիվորեն չի կարող անհրաժեշտ և բավարար պայման լինել: Ասվածի մասին են վկայում նաև ինքնասպանությունների կատարման եղանակները: *Այսպես, ըստ «Երևանի № 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի տրամադրած տեղեկությունների՝ ինքնասպանությունների հիշյալ 4 դեպքերից 3-ն իրականացվել են երկարացման լարով կախվելու միջոցով և միայն 1-ն է կատարվել այլ եղանակով՝ երրորդ հարկի սենյակից ցած նետվելու միջոցով:*

Ռազմավարությամբ անհրաժեշտ է նախատեսել նաև ինքնասպանության վտանգի նախանշանների և այդ կապակցությամբ ձեռնարկվող անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ ուսուցում անցնելու պահանջ:

Այս առումով ողջունելի են նախարարության կողմից գործադրվող ջանքերը: Այսպես, տրամադրված պարզաբանումների համաձայն՝ «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ը 2023 թվականին իրականացրել է տարեցների շուրջօրյա խնամքի 50 մասնագետի վերապատրաստում՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց ծառայությունների մատուցման առանձնահատկությունները» և «Տուն-ինտերնատներում բնակվող տարեցների հետ տարվող սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները» թեմաներով:

Միաժամանակ, տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ 2023 թվականին «Երևանի № 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի աշխատողների և ՆԳՆ փրկարարական

[159] Ըստ ՀՀ գլխավոր դատախազության կողմից շուրջօրյա խնամքի կենտրոններում (տուն-ինտերնատներում) գրանցված ինքնասպանության դեպքերի վերաբերյալ տրամադրած պարզաբանումների՝ պետության վերահսկողության տակ գտնվող կազմակերպություններում գրանցված մահվան, այդ թվում՝ ինքնասպանության յուրաքանչյուր դեպքով ՀՀ դատախազությունը ձեռնարկում է միջոցներ՝ իր լիազորությունների շրջանակներում արդյունավետ քննություն ապահովելու ուղղությամբ:

ծառայության հոգեբանական աջակցության բաժնի միջև կազմակերպվել է փորձի փոխանակում՝ ինքնասպանության վտանգի նախանշանների և այդ կապակցությամբ ձեռնարկվող անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ:

Ըստ ԱՍՀՆ տրամադրած տեղեկատվության՝ հաշվի առնելով Հայկական Կարմիր Խաչի ընկերության հարուստ փորձառությունը խնամքի տրամադրման գործընթացում, ինչպես նաև ցանկություն ունենալով ներդնել Կարմիր Խաչի և Կարմիր մահիկի շարժման փորձը՝ նախարարությունը 2023 թվականին դիմել է ընկերությանը՝ աջակցելու շուրջօրյա խնամքի չորս կենտրոնների աշխատողների համար մի շարք թեմաներով վերապատրաստումներ *(այդ թվում՝ նաև սուիցիդալ վարքի հոգեբանություն, կենսաթոշակի տարիքի մարդկանց մոտիվացիա կյանքի հանդեպ)* կազմակերպելու համար:

Տեղեկատվություն է տրամադրվել նաև այն մասին, որ «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվող 2024 թվականի վերապատրաստումների հայտում ևս նախարարության կողմից առաջարկվել է «Շուրջօրյա խնամքի կենտրոններում բնակվող տարեցների հետ տարվող հոգեբանական աշխատանքների առանձնահատկությունները» թեմայի շրջանակում ավելացնել նոր ենթաթեմա՝ «Սուիցիդալ վարքի բացահայտումը և սուիցիդի դեպքերի կանխարգելումը շուրջօրյա խնամքի կենտրոններում»:

ԱՍՀՆ-ի նման մոտեցումը, անշուշտ, ողջունելի է: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ ինքնասպանությունների կանխարգելման գործում մեծ է նաև շուրջօրյա խնամքի կենտրոնների շահառուների դերը *(հատկապես ինքնասպանության ռիսկի խմբին դասվող շահառուների հետ նույն սենյակում համատեղ բնակվող շահառուների պարագայում):* Հետևաբար, ինքնասպանության վտանգի նախանշանների մասին իրազեկելու նպատակով կարևոր է ոչ միայն շուրջօրյա խնամքի կենտրոնների աշխատողների, այլ նաև շահառուների համար դասընթացների կազմակերպումը:

Շուրջօրյա խնամքի կենտրոններում ինքնասպանության դեպքերի կանխարգելման տեսանկյունից, ի թիվս վերոգրյալի, կարևոր նշանակություն ունի նաև հաստատություն ընդունվելիս շահառուների նախնական բժշկական զննությունը և հոգեկան առողջական վիճակի գնահատումը: Ըստ ՀՀ կառավարության 2022 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 1744-Ն որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 46-րդ կետի՝ շուրջօրյա խնամքի կենտրոն ընդունվելուց անմիջապես հետո շահառուն ենթարկվում է բժշկական զննության տվյալ կենտրոնի բժշկի կողմից (…): Նույն հավելվածի 48-րդ կետի համաձայն՝ շուրջօրյա խնամքի կենտրոնում նոր ընդունված շահառուի տեղավորումը բաժանմունքներում և սենյակներում իրականացվում է անձի՝ սոցիալական աշխատողի, հոգեբանի և բժշկի կողմից իրականացրած սոցիալական կարիքի գնահատման հիման վրա:

Համաձայն ԱՍՀՆ-ի տրամադրած տեղեկությունների՝ այդ ընթացքում կենտրոնում շահառուին տրամադրվում է հոգեբանի անհատական խորհրդատվություն, որի արդյունքում հնարավորինս ի հայտ է բերվում ինքնասպանության ռիսկայնությունը և կազմվում է անհատական կանխարգելիչ և վերականգնողական ծրագիր: Կիրառվում են հետազոտական թեստեր, զրույց, խաղ-վարժություններ: Տարվող աշխատանքների հիման վրա բացահայտվում են հոգեբանական տրավմաները, ընկճվածությունը, կպչուն մտքերը: Ըստ տրամադրած տեղեկությունների՝ ինքնասպանությունների կանխարգելման նպատակով կենտրոններում կազմակերպվում են անհատական և խմբային հոգեբանական թերապիաներ:

Վերոգրյալը, իհարկե, պետք է դիտել իբրև դրական առաջընթաց: Այնուամենայնիվ, շուրջօրյա խնամքի կենտրոններ իրականացրած մշտադիտարկման այցերի արդյունքները վկայում են, որ անհրաժեշտ է բարձրացնել հոգեբանական ծառայությունների մատուցման որակը և արդյունավետությունը: Մասնավորապես, շահառուների հոգեկան առողջական վիճակի գնահատման և դրա վատթարացման կանխարգելման նպատակով անհրաժեշտ է ներդնել սկրինինգային հետազոտությունների ծրագիր: Այն հնարավորություն կընձեռի վաղ փուլում բացահայտել ինքնասպանության ռիսկի խմբին դասվող շահառուներին, խորքային հոգեբանական աշխատանքներ իրականացնել նրանց հետ, ինչպես նաև դինամիկ հսկողություն սահմանել վերջիններիս նկատմամբ:

Այսպիսով, խնդրին համակողմանի լուծում տալու նպատակով անհրաժեշտ է՝ մշակել և պատշաճ իրացնել ինքնասպանությունների կանխարգելման համալիր կառուցակարգեր (օրինակ՝ ռազմավարություն): Այդ կառուցակարգերով նախատեսվող միջոցառումների իրականացմամբ անհրաժեշտ է ապահովել համակարգված, թիրախային և արդյունավետ քաղաքականություն շուրջօրյա խնամքի կենտրոններում ինքնասպանության դեպքերի կանխարգելման ուղղությամբ, ստեղծել համապատասխան իրավակազմակերպական նախադրյալներ նման դեպքերի հայտնաբերման, գնահատման և բուժման համար, ապահովել անձնակազմի և շահառուների պատշաճ մասնագիտական պատրաստվածությունը:

ԲԱԺԻՆ 3. ՊԱՏՇԱՃ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

2023 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ համակարգային առումով արդիական են եղել պատշաճ վարչարարության իրավունքի իրացման վերաբերյալ խնդիրները:

Ստացված բողոքները հիմնականում վերաբերել են կամայականության արգելքի, հայեցողական լիազորությունների, հավասարության կանխավարկածի, առավելագույնի սկզբունքի սահմանափակումներին, վարչական վարույթի ընթացքում կոնկրետ գործով փաստական հանգամանքները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չքննարկելուն, վարչական վարույթի ժամկետները չպահպանելուն, լսված լինելու իրավունքի սահմանափակման կամ վարչական բողոքարկման ընթացակարգային պահանջները չպահպանելուն:

Այսպես, օրինակ՝ ՄԻՊ աշխատակազմ մուտքագրած բողոքներից մեկով քաղաքացին հայտնել է, որ դեռևս 2020 թվականի դեկտեմբերին դիմել է ՀՀ ՊՆ զինվորական կենսաթոշակ ստանալու համար: Սակայն, կենսաթոշակի վկայականը ՊՆ-ից ստացել է 2021 թվականի մարտին: 2021 թվականի փետրվարին հանկարծակի գիտակցության կորստով շտապ օգնության մեքենայով տեղափոխվել է բժշկական կենտրոն, որտեղից էլ 2 օր անց տեղափոխվել մեկ այլ բժշկական կենտրոն: Օրեր անց կատարվել է վիրահատություն: Կենսաթոշակի վկայականի բացակայության պատճառով բողոք ներկայացրած անձի հետ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու համար կնքվել է վճարովի ծառայությունների մատուցման պայմանագիր, և նա զրկվել է անվճար պայմաններով պետական պատվերի շրջանակում բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքից:

Բողոքի կապակցությամբ ՊՆ-ից ստացված պարզաբանման համաձայն՝ քաղաքացու անձնական գործը ՊՆ համակարգի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում է առաքվել 2021 թվականի փետրվարի սկզբին:

«Պետական կենսաթոշակների մասին» օրենքով սահմանված կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը դիմումն ընդունելուց հետո՝ տասն աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է կենսաթոշակ նշանակելու կամ կենսաթոշակ նշանակելը մերժելու մասին որոշում: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքը նախատեսում է, որ վարչական վարույթի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ վարույթն իրականացնող վարչական մարմինն ընդունում է որոշում, որի մասին սահմանված կարգով պետք է ծանուցի վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին, ինչպես նաև վարույթին մասնակցող այլ անձանց:

Ստացվում է, որ երաշխավորելով յուրաքանչյուրի կենսաթոշակ ստանալու իրավունքը՝ «Պետական կենսաթոշակների մասին» օրենքը սահմանում է հայցվող իրավունքի վերաբերյալ վարչական ակտի կայացման հնարավորին սեղմ ժամկետ: Սահմանված ժամկետում վարչական ակտ չկայացնելու դեպքում վարչական մարմինը պետք է կայացնի վարչական վարույթի ժամկետը երկարաձգելու մասին որոշում, որի մասին պետք է պատշաճ ծանուցվեն վարույթի մասնակիցները: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չկայացնելու և վարչական վարույթի ժամկետը երկարաձգելու մասին որոշումը չկայացնելու հետևանք է իրավական ֆիկցիան, ըստ որի՝ վարչական ակտ ընդունելու իրավասություն

ունեցող վարչական մարմինն օրենքով սահմանված ժամկետում որևէ որոշում չի կայացնում, ապա վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրացմանը: Օրենքով սահմանվում է նաև, որ եթե դիմումով հայցվում է որոշակի փաստ հաստատելու կամ արձանագրելու վերաբերյալ վարչական ակտի ընդունում, որով սահմանված իրավունքները անձինք կարող են հավաստել սահմանված ձևի փաստաթղթով, ապա փաստաթուղթը չստացած անձն ազատվում է այն պատասխանատվությունից կամ պարտականություններից, որոնք օրենքով սահմանվում են այդ փաստաթուղթը չունենալու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով նախատեսված՝ օրենքի ուժով վարչական ակտի ընդունված համարվելու իրավական կառուցակարգը գործում է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1) անձը դիմել է վարչական մարմնին՝ հայցելով որոշակի բարենպաստ վարչական ակտի ընդունում, այսինքն՝ վարչական վարույթը հարուցվել է անձի դիմումի հիման վրա, և դիմումը համապատասխանում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված նվազագույն պահանջներին,

2) բացակայում է վարչական ակտի՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով նախատեսված առոչնչության հիմքը,

3) տվյալ վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթն իրականացնող վարչական մարմինն օժտված է այդ վարչական ակտն ընդունելու իրավասությամբ,

4) վարչական վարույթն իրականացնող վարչական մարմինն օրենքով սահմանված ժամկետում ցուցաբերել է անգործություն՝ չի ընդունել հայցվող բարենպաստ վարչական ակտը կամ չի կայացրել անձի դիմումը մերժելու մասին որոշում կամ վարչական վարույթը եզրափակող օրենքով նախատեսված որևէ այլ անհատական իրավական ակտ:[160]

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանն ընդգծում է, որ վարչական վարույթի ժամկետները չպահպանելու իրավական հետևանքը վերը նշված պայմանները բավարարելու դեպքում վարչական ակտն ընդունված համարվելու իրավական հնարավորությունը կիրառելն է:

Վերոնշյալի լույսի ներքո մտահոգիչ է ամրագրված իրավունքի և ձևավորված դատական պրակտիկայի առկայության պայմաններում նման իրավիճակների առաջացումը, որոնք անձին զրկում են իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներից օգտվելու իրական հնարավորությունից:

Նմանատիպ մեկ այլ բողոքով քաղաքացին տեղեկացրել է, որ Երևան քաղաքի բնակիչ է: 2023 թվականի փետրվարի սկզբին դիմել են Երևանի քաղաքապետարան նույն շենքի ապօրինի կերպով զավթած ձեղնահարկն իրենց վերադարձնելու, ընդհանուր օգտագործման համար ծառայեցնելու, տանիքի վերականգնման, ինչպես նաև աստիճանավանդակից դեպի ձեղնահարկ մուտք բացելու թույլտվություն տրամադրելու խնդրանքով: Սահմանված մեկամսյա ժամկետում պատասխան չեն ստացել:

Պաշտպանը մտահոգիչ է համարում Երևանի քաղաքապետարանի կողմից վարչարարության իրականացման ընթացքում օրենքով սահմանված ժամկետների, ծանուցումների՝ համակարգային բնույթ կրող խախտումները, ինչի արդյունքում անձինք զրկվում են պատշաճ վարչարարության հիմնարար իրավունքի արդյունավետ իրացումից:

[160] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2023 թվականի մարտի 24-ի թիվ ՎԴ/8759/05/19 որոշումը:

Պաշտպանն արձանագրում է, որ վարչական մարմինները վարչական վարույթի ընթացքում պետք է խստորեն հետևեն օրենքով սահմանված ժամկետների պահպանմանը, ինչն իրավունքի գերակայության սկզբունքի ապահովման կարևոր բաղադրատարր է:

Ընթացիկ տարում ՄԻՊ աշխատակազմ են մուտքագրվել բողոքներ, որոնք վերաբերում են վարչական վարույթի ընթացքում լսված լինելու իրավունքի և վարչական ակտը վերադասության կարգով բողոքարկելու արդյունքում հարուցվող վարչական վարույթում ընթացակարգային պահանջների պահպանմանը:

Այսպես, բողոքներից մեկով քաղաքացին հայտնել է, որ ՄՍԾ-ում իր դիմումի հիման վրա հարուցվել է վարչական վարույթ, որից հետո իր մասնակցությամբ վարչական մարմնում լսումներ են անցկացվել և կազմվել է արձանագրություն: Բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ վարչական վարույթի արդյունքում կայացված վարչական ակտի հետ համաձայն չլինելու հիմքով բողոքարկել է վերադասության կարգով, ինչի շրջանակում ՄՍԾ-ի կողմից իրականացվել են վարչական լսումներ: Վարչական լսումների արդյունքում կազմվել է արձանագրություն: Ըստ կազմված արձանագրության՝ անդրադարձ է կատարվել դիմումատուի բարձրացրած հարցերին, հղում է կատարվել ոլորտը կարգավորող իրավական ակտերին, այդ թվում՝ արձանագրվել, որ կայացված վարչական ակտը թողնվել է անփոփոխ:

Բողոքի կապակցությամբ ԱՍՀՆ հասցեագրած գրությանն ի պատասխան՝ տեղեկացվել է, որ ՄՍԾ-ն իրավասու էր վարչական լսման արդյունքում ընդունելու արձանագրություն, ինչն արվել է, իսկ վարչական բողոքարկման արդյունքում նոր վարչական ակտ ընդունելու պարտավորություն տվյալ հիմքով վարչական մարմինը չունի, քանի որ արձանագրությամբ, ի թիվս այլնի, նշվել է նաև, որ ընդունված վարչական ակտն անփոփոխ է թողնվել:

Սահմանադրությամբ երաշխավորված պատշաճ վարչարարության իրավունքն ընդգրկում է վարչարարության ամբողջ իրավական ինստիտուտը, որը ենթադրում է մի շարք իրավունքների իրացումն ապահովելու վարչական մարմնի պարտավորությունը, այդ թվում՝ վարչարարությանը ներկայացվող որակական չափանիշները, որոնք ուղղված են մի կողմից՝ ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրավունքների իրականացումն, իսկ մյուս կողմից՝ վարչարարության արդյունավետությունն ապահովելուն:

Բարձրացված խնդրով վարչական մարմինը վարչական վարույթի արդյունքում միջամտող վարչական ակտ ընդունելուց հետո, վերադասության կարգով կրկին վարչական վարույթ է հարուցել, որի արդյունքում իրականացվել է վարչական լսում, կազմվել է արձանագրություն: Մինչդեռ, վարչական մարմնի կողմից հարուցված վերադաս վարույթի արդյունքում փաստացի վարույթը եզրափակող ակտ չի ընդունվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 75-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական բողոքի քննարկումն իրականացվում է վարչական վարույթի համար սահմանված բոլոր կարգավորումներին համապատասխան: Հետևաբար, վարչական մարմնի կողմից վարչական բողոքի հիման վրա ևս հարուցվում է վարչական վարույթ և վարույթի եզրափակիչ փուլում վարչական մարմինն ունի վարչական ակտ ընդունելու պարտավորություն՝ անկախ ենթադրվող վարչական ակտի նույնաբովանդակ լինելու հանգամանքից:

ՄԻՊ աշխատակազմ են ստացվել գրավոր և բանավոր բողոքներ, որոնք վերաբերում են անձանց դիմումներն իրավասու մարմնին վերահասցեագրելու պարտականությունը չիրականացնելուն:

Մասնավորապես, գործերից մեկով՝ դիմողը հայտնել է, որ կանաչապատման և շրջակա միջավայրի պահպանության առնչությամբ բազմիցս դիմումներ է հասցեագրել Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարին, որին ի պատասխան՝ տեղեկացել է, որ բարձրացված հարցերը դուրս են վարչական շրջանի ղեկավարի լիազորություններից և գտնվում են «Կանաչապատում և շրջական միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի իրավասության ներքո: Պատասխան գրություններով առաջարկվել է անձամբ դիմում հասցեագրել ՀՈԱԿ-ին՝ դիմումներով բարձրացված հարցերին պատասխան ստանալու համար: Բողոք ներկայացրած անձը նշել է նաև, որ 2023 թվականի փետրվար ամսին ծառահատման թույլտվության առկայության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար դիմում է հասցեագրել Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարին և պատասխան գրությամբ տեղեկացել, որ այլ քաղաքացու դիմումի հիման վրա վարչական շրջանի ղեկավարը դիմել է ՀՈԱԿ-ին, որի հիման վրա էլ թույլտվություն է տրվել ծառահատման վերաբերյալ:

Բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ Աջափնյակ վարչական շրջանը կատարված վարչարարությամբ խախտել է ինչպես օրենքի առջև բոլորի հավասարության, այնպես էլ կամայականության արգելքի և պատշաճ վարչարարություն ստանալու իր իրավունքները:

Բողոքի կապակցությամբ՝ Երևանի քաղաքապետին հասցեագրած գրություններով Պաշտպանը խնդրել է պարզաբանումներ տրամադրել ստացված դիմումը մի դեպքում իրավասու ՀՈԱԿ-ին չվերահասցեագրելու և քաղաքացուն անձամբ դիմելու առաջարկ ներկայացնելու, իսկ մյուս դեպքում՝ իրավասու ՀՈԱԿ-ին վերահասցեագրելու մոտեցման իրավաչափության վերաբերյալ:

Ըստ ներկայացված պարզաբանման՝ Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի կողմից կանաչապատման և շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող բողոքով իրականացվող վարչարարության վերաբերյալ տեղեկացվել է, որ խնդրո առարկա հասցեի ծառահատման աշխատանքներն իրականացվել են Երևանի քաղաքապետարանի «Կանաչապատում և շրջակա միջավայր» ՀՈԱԿ-ի կողմից՝ տրված արտակարգ իրավիճակների կանխարգելման ծառահատման տոմսի հիման վրա: Իսկ դիմումի վերահասցեագրման և կամայականության արգելքի պահպանման վերաբերյալ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը, ինչպես նաև վարչական շրջանի ղեկավարի գործողություններն իր լիազորությունների շրջանակում իրականացվել է իրավաչափ:

Վարչական մարմնի կողմից դիմումների վերահասցեագրման լիազորության իրացումը պայմանավորում է նաև արդյունավետ վարչարարության իրականացումը, անձանց հնարավորինս ձևական պահանջներով չծանրաբեռնելը: Ուստի, ստացված դիմումն իրավասու մարմնին վերահասցեագրելու պարտականության չկատարումը որոշ դեպքերում կարող է վկայել կոնկրետ վարչական մարմնի կողմից վարչարարության իրականացման համակարգային բնույթ կրող խնդրի մասին:

Պատշաճ վարչարարությանն առնչվող կարևոր հարցերից է հայեցողական լիազորությունների իրացման իրավաչափության խնդիրը:

ՄԻՊ աշխատակազմ մուտքագրած բողոքներից մեկով քաղաքացին հայտնել է, որ կենսաթոշակ նշանակելիս 01.01.1992-01.03.1996 թվականներին աշխատած ժամանակահատվածը չի հաշվառվել աշխատանքային ստաժում: ԱՍՀՆ-ի կողմից վերանայվել է 2020 թվականից նշանակված և վճարվող տարիքային աշխատանքային կենսաթոշակը, որի արդյունքում ընդհանուր աշխատանքային ստաժից նվազեցվել է 01.04.1990-09.09.1991 թվականներին աշխատած ժամանակահատվածը: Հավելել է, որ

նվազեցման արդյունքում ընդհանուր աշխատանքային ստաժը 35 տարվա աշխատանքային ստաժից դարձել է 33 տարի 4 ամիս 21 օր, ինչով պայմանավորված՝ վերջինս կորցրել է կենսաթոշակի իրավունքը: Բողոք ներկայացրած անձը նշել է, որ ԱՍՀՆ-ից տեղեկացվել է, որ մինչև 2020 թվականի հունիս՝ կենսաթոշակի իրավունքը ձեռք բերելու օրվա դրությամբ ավել վճարված շուրջ 300.000 ՀՀ դրամը ենթակա է հետ վերադարձման:

Բարձրացված խնդրի վերաբերյալ «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով սահմանվում է, որ սխալմամբ ավել վճարված կենսաթոշակի գումարները կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման հետ փոխհամաձայնեցված ժամանակացույցի հիման վրա կարող են ՀՀ պետական բյուջե վերականգնվել ***կամ*** կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման այն աշխատակցի կողմից, որի մեղքով վճարվել են ավել վճարված կենսաթոշակի գումարները ***կամ*** կենսաթոշակառուի, նրա օրինական ներկայացուցչի, նրանց փոխարեն կենսաթոշակը ստանալու՝ օրենքով այդ իրավունքն ունեցող անձի կամ այլ անձի կողմից:

Ամրագրված՝ սխալմամբ ավել վճարված կենսաթոշակի գումարը վերականգնելու լիազորության իրացման ընթացքում վարչական մարմնին տրված է հայեցողություն, որը պետք է իրացվի համաչափության և այլ սկզբունքների պահպանմամբ:

Հայեցողական լիազորություն իրականացնելիս անհրաժեշտ է, որպեսզի յուրաքանչյուր դեպքով վարչական մարմինը քննարկման առարկա դարձնի գործի բոլոր հանգամանքները, այդ թվում՝ անձի օգտին առկա հանգամանքները: Ուստի, վարչական ակտի ընդունման իրավաչափությունը պայմանավորված է ապացույցների և գործի հանգամանքների պատշաճ գնահատման և հայեցողության պատշաճ իրացման հանգամանքներով:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված հայեցողական լիազորությունների իրացման խնդրին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, վերջինիս գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ:

ՀՀ վճռաբեկ դատարանը կարևորել է «հայեցողություն» կատեգորիայի իրավական բովանդակության բացահայտման անհրաժեշտությունը: Ըստ Վճռաբեկ դատարանի՝ «հայեցողությունը» թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրության կամ դրսևորման հնարավորությունն է: Որպես ուղենիշ պետք է հիմք ընդունվի իրավունքի գերակայության սկզբունքը, մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության գաղափարը[161]:

Վերահաստատելով նշված իրավական դիրքորոշումները՝ ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ արձանագրել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով ամրագրված վարչական մարմնի հայեցողական լիազորության հասկացությունից հետևում է, որ.

1) հայեցողական լիազորությունը պետք է վարչական մարմնին վերապահված լինի օրենքով,

2) հայեցողական լիազորությունը հանգում է մի քանի լուծումներից մեկն ընտրելու և այն իրացնելու՝ վարչական մարմնի հնարավորությանը,

[161] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2022 թվականի ապրիլի 14-ի թիվ ՎԴ/0424/05/18 որոշումը:

3) վարչական մարմնի կողմից ընտրվող և իրացվող բոլոր լուծումները պետք է լինեն իրավաչափ. վարչական մարմինը չի կարող ընտրել որևէ լուծում, որը դուրս է հայեցողական լիազորությունների՝ օրենքով սահմանված շրջանակներից և ուղղված չէ օրենքով հետապնդվող նպատակներին:

Նշված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ իրավական պետությունում պետաիշխանական լիազորություններով օժտված բոլոր սուբյեկտներին վերապահված հայեցողական լիազորությունները կարող են գործադրվել միայն իրավունքի սահմաններում:[162]

Այսպիսով, հայեցողական լիազորության իրացումը յուրաքանչյուր գործով փաստերի և ներկայացված ապացույցների համակցության մեջ գնահատման միջոցով և օրենքով կանխորոշված նպատակի հետ ողջամիտ հարաբերակցություն է ենթադրում: Ուստի, առանցքային է, որ վարչական մարմինը յուրաքանչյուր դեպքում ուշադրության արժանացնի գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտի առկա հանգամանքները:

Պաշտպանն ընդգծում է, որ պատշաճ վարչարարության իրավունքին համապատասխանում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պարտականությունը՝ ապահովելու այդ իրավունքի երաշխավորված իրացումը:[163]

Պաշտպանն արձանագրում է, որ կարևոր է, որ յուրաքանչյուր դիմումով վարչական մարմինը անհատական մոտեցում ցուցաբերի գործով նշանակություն ունեցող փաստերը վերհանելու և իրավաչափ որոշում կայացնելու հարցերին: Առանցքային է, որպեսզի վարչական մարմինները հրաժարվեն միատեսակ գործերով մեխանիկական գործընթաց իրականացնելու պրակտիկայից և առաջնորդվեն յուրաքանչյուրի իրավունքների առավելագույն պաշտպանության և օրինական շահերը հաշվի առնելու գաղափարներով:

Այսպես, ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***վարչական վարույթի ընթացքն ապահովել օրենքով սահմանված և ողջամիտ ժամկետում.***
- ✓ ***անձի համար երաշխավորել լսված լինելու իրավունքի պատշաճ իրացումը.***
- ✓ ***վարչական վերադասության կարգով բողոքի քննարկում իրականացնելիս պահպանել օրենսդրությամբ սահմանված ընթացակարգային նորմերը.***
- ✓ ***յուրաքանչյուր գործով ցուցաբերել անհատական մոտեցում, քննարկել գործի բոլոր հանգամանքները, այդ թվում՝ դիմողի օգտին վկայող.***

հայեցողական լիազորությունն իրացնել օրենքով կանխորոշված նպատակների և գործով ձեռքբերված հանգամանքների ողջամիտ հարաբերակցությամբ:

1. Կատարողական գործողությունների իրականացումը դրանց կասեցման միջնորդությունը դատարանի կողմից բավարարված լինելու պայմաններում

2023 թվականի ընթացքում Պաշտպանին շարունակել են հասցեագրվել բողոքներ այն մասին, որ «Բնակարանից հարկադիր վտարելու մասին» հարկադիր կատարումն ապահովող ծառայության որոշումը դատական կարգով վիճարկելու ընթացքում հայցվորի՝ վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցնելու միջնորդությունը դատարանի

[162] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2015 թվականի նոյեմբերի 27-ի թիվ ԵՇԴ/3780/02/14 որոշումը:
[163] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2020 թվականի տարեկան հաղորդումը, էջ 367):

կողմից բավարարվում է, սակայն մինչ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելն իրականացվում են վտարման կատարողական գործողություններ:

Այսպես, օրինակ Պաշտպանին ներկայացված բողոքներից մեկով անձը նշել է, որ ՀԿԱԾ-ում հարուցված կատարողական վարույթի շրջանակում «Բնակարանից հարկադիր վտարելու մասին» որոշում է կայացվել: Բողոք ներկայացրած անձը նշված որոշումն անվավեր ճանաչելու պահանջ է ներկայացրել դատարան, միաժամանակ, համապատասխան միջնորդությամբ խնդրել է վարչական ակտի կատարումը կասեցնել: Դատարանը բավարարել է միջնորդությունը և որոշում կայացրել՝ «Բնակարանից հարկադիր վտարելու մասին» որոշման կատարումը մինչև գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը կասեցնելու վերաբերյալ: Բողոք ներկայացրած անձը հավելել է, որ վերոնշյալ դատական ակտի առկայության պարագայում ՀԿԱԾ-ն իրականացրել է վտարման գործողություններ՝ դա պատճառաբանելով այն հանգամանքով, որ «Բնակարանից հարկադիր վտարելու մասին» որոշման կատարումը կասեցնող միջանկյալ դատական ակտը դեռևս օրինական ուժի մեջ մտած չի եղել:

Պաշտպանը բարձրացված խնդրի վերաբերյալ նախորդ տարիներին արձանագրել է, որ «Բնակարանից հարկադիր վտարելու մասին» որոշումների վիճարկման բոլոր դեպքերում անհրաժեշտ է վարչական ակտի կատարման կասեցման վերաբերյալ ներկայացված միջնորդության բավարարման մասին դատարանի միջանկյալ դատական ակտի՝ հրապարակման պահից օրինական ուժի մեջ մտնելու դրույթ սահմանել, քանի որ միայն նման դեպքերում վիճարկումը կծառայի իր նպատակին, և գործնականում կբացառվեն այն փակուղային իրավիճակները, երբ դատարանի որոշմամբ կասեցվի այնպիսի կատարողական գործողությունների կատարումը, որպիսիք արդեն կատարվել են[164]:

Պաշտպանն արձանագրել է նաև, որ մինչև բավարարված դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը՝ սահմանված հնգօրյա ժամկետի ընթացքում իրականացվում են վտարման կատարողական գործողություններ, որի արդյունքում ստացվում է, որ նշված դատական ակտն օրինական ուժ է ստանում վտարումից օրեր անց՝ դրանով իսկ դառնալով առարկայազուրկ և իր նպատակին չծառայող[165]:

Այս առումով մտահոգիչ է այն, որ Մարդու իրավունքների պաշտպանի՝ տարիներ շարունակ բարձրաձայնած խնդիրը համակարգային առումով շարունակում է մնալ չլուծված:

ՄԻՊ-ի 2023 թվականի տարեկան հաղորդման կազմման նպատակով ներկայացված համապատասխան հարցադրմանն ի պատասխան՝ ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրամադրվել է պարզաբանում այն մասին, որ ՀԿԱԾ-ում միատեսակ պրակտիկա ձևավորելու նկատառումներից ելնելով և Վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի միատեսակ կիրառումն ու մեկնաբանությունն ապահովելու նպատակով գործածության մեջ է գտնվում շրջաբերական, որով մեկնաբանվել են Վարչական դատարանի կողմից հարկադիր կատարողի որոշման կատարումը կասեցնելու որոշումն ուժի մեջ մտնելու, այդ որոշումը Վերաքննիչ վարչական կամ Վճռաբեկ դատարան բողոքարկվելու դեպքում

[164] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2021 թվականի տարեկան հաղորդումը, էջեր 328-331 էլեկտրոնային տարբերակը հասանելի է https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf, 2024 թվականի մարտի 28-ի դրությամբ:

[165] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2020 թվականի տարեկան հաղորդումը, էջեր 387-391, էլեկտրոնային տարբերակը հասանելի է https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf, 2024 թվականի մարտի 28-ի դրությամբ:

կատարողական վարույթի ընթացքը լուծելու վերաբերյալ հարցերը: Մասնավորապես՝ հարկադիր կատարողներին առաջարկվել է հարկադիր կատարողի որոշումը Վարչական դատարանում վիճարկվելու և Վարչական դատարանի կողմից վիճարկվող որոշման կատարումը կասեցնելու վերաբերյալ որոշում կայացվելու դեպքում ՀԿԱԾ-ում այդ որոշումը ստանալուց հետո 6-րդ աշխատանքային օրվանից սկսած (մինչ 6-րդ աշխատանքային օրը վիճարկվող որոշումը ենթակա է կատարման) ձեռնպահ մնալ որոշման կատարմանն ուղղված որևէ գործողություն կատարելուց, իսկ մինչ այդ պահը որոշման կատարմանն ուղղված որևէ գործողություն կատարած լինելու դեպքում դադարեցնել այն, իսկ որոշման կատարման կասեցման պայմաններում կատարողական վարույթով այլ գործողություններ կատարելու անհնարինության դեպքում՝ կասեցնել նաև կատարողական վարույթը՝ անհաղթահարելի ուժի առկայության հիմքով («Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 38-րդ հոդված, կետ 6): Միաժամանակ, գրությամբ տեղեկացվել է, որ շրջաբերականով առաջարկվել է նաև Վարչական դատարանի կողմից հարկադիր կատարողի որոշման կատարումը կասեցնելու վերաբերյալ որոշում կայացնելու դեպքում ՀԿԱԾ-ի կողմից այդ որոշումը ստանալուց հետո 6-րդ աշխատանքային օրը վիճարկվող որոշման կատարումը կասեցնել նաև այն դեպքերում, երբ կատարողական վարույթի կողմերից որևէ մեկը կամ ՀԿԱԾ-ը վերաքննության կամ վճռաբեկության կարգով բողոքարկել են Վարչական դատարանի՝ վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ որոշումը:

ԱՆ-ն հավելել է, որ նշված հարցին առնչվող օրենսդրական փոփոխություններ 2023 թվականի ընթացքում ՀԿԱԾ-ի կողմից չեն նախաձեռնվել:

Չնայած վերը նշված հանգամանքին՝ Պաշտպանի կողմից ստացված դիմում-բողոքները վկայում են, որ հարցը համակարգային առումով լուծում չի ստացել:

Այսպիսով, Պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 127-րդ և 131-րդ և 83-րդ հոդվածներում կատարել համապատասխան փոփոխություններ՝ սահմանելով կարգավորումներ, որոնց ուժով կկասեցվի հարկադիր կատարողի կողմից կայացված և վիճարկվող վարչական ակտի կատարումը՝ դատարանի միջանկյալ դատական ակտի հրապարակման պահից:

2. Մարդկանց վրա թափառող շների պարբերաբար հարձակումների խնդիր

2023 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքների, թեժ գծին ստացված զանգերի, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների հիման վրա նախաձեռնված ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ մարդկանց, այդ թվում՝ երեխաների վրա թափառող շների պարբերաբար հարձակումների խնդիրը նախորդ տարիների համեմատ ավելի է սրվել:

Հաշվի առնելով մարդու իրավունքների խախտումների վտանգավորության աստիճանն ու խնդրի հրատապությունը՝ Պաշտպանը, ինչպես յուրաքանչյուր դեպքով, այնպես էլ համակարգային հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու պահանջով գրություններ է հասցեագրել իրավասու մարմիններին՝ հատուկ ընդգծելով, որ խնդրի արդյունավետ լուծման համար անհրաժեշտ են համատեղ ջանքեր ու մասնագիտական քննարկումներ բոլոր շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ կենդանիների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների հետ: Անհրաժեշտ է նաև ստեղծել համապատասխան իրավական դաշտ և նախատեսել բավարար ֆինանսավորում՝

արձանագրված խնդիրներին պատշաճ լուծում տալու համար: Ընդ որում, խնդրի լուծմանն ուղղված միջոցառումները պետք է կրեն համալիր բնույթ: Այս տեսանկյունից կարևոր է նաև համայնքներում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների ապահովումը:

Բարձրացված խնդրով կատարված հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ՏԿԵՆ-ը տրամադրել է պարզաբանումներ այն մասին, որ ՀՀ կառավարությունը որդեգրել է ստերջացման ճանապարհով թափառող կենդանիների վնասազերծման խնդրին լուծում տալու տարբերակը: Թափառող կենդանիների վնասազերծման խնդրին լուծում տալու, համայնքներին մեթոդական օժանդակություն տրամադրելու, ինչպես նաև թափառող կենդանիների վնասազերծման ծառայությունների մատուցման գործընթացում միասնական մոտեցում ցուցաբերելու նպատակով Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Երևանի քաղաքապետարանի և Երևան քաղաքում «Կենդանիների խնամքի կենտրոն» ՀՈԱԿ-ի հետ համատեղ մշակվել է ՀՀ համայնքներում «Թափառող կենդանիների ստերիլիզացման/ամլացման ծառայությունների» տեխնիկական բնութագիրը, որը կենդանիների վնասազերծման ծառայությունների մատուցման համար մրցույթներ հայտարարելու նպատակով տրամադրվել է համայնքներին:

Պարզաբանումներ են տրամադրվել նաև այն մասին, որ 2023 թվականի ընթացքում շուրջ 25 համայնքում (Երևանից բացի) իրականացվել է թափառող կենդանիների վնասազերծման գործընթաց: Համայնքները հայտարարված մրցույթների արդյունքներով պայմանագրեր են կնքել տվյալ բնագավառում գործունեություն ծավալող կազմակերպությունների հետ թափառող կենդանիների վնասազերծման ծառայության ձեռքբերման նպատակով: Այդ ծառայությունների մեջ մտնում են ստերջացումը, քնեցումը, կատաղության դեմ պատվաստումը, վարակիչ հիվանդությունների, մասնավորապես՝ լեյշմանիոզ հիվանդության հայտնաբերումը: Բացի այդ, նշել են, որ գործընթացն իր բնույթով երկարատև է և հարկավոր են ֆինանսական մեծ միջոցներ: Երբեմն, համայնքների ֆինանսական միջոցները բավարար չեն լինում ստերջացման գործընթացն ամբողջությամբ իրականացնելու համար, ինչի հետևանքով գործընթացը դանդաղում է: Ըստ տրամադրված տեղեկատվության՝ համայնքապետարանների մի մասը 2023 թվականի բյուջեով համապատասխան ֆինանսական միջոցներ չի նախատեսել, ուստի հնարավորության սահմաններում դրանք կնախատեսվեն 2024 թվականի տարեկան բյուջեով:

Հավելել են, որ ԱԺ պատգամավորների կողմից մշակվել է «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի նախագիծ և հարակից նախագծերի փաթեթ, որոնք ուղղված են լինելու ոլորտի համապարփակ կարգավորմանը:

Նշել են նաև, որ խնդիրը գտնվում է ՏԿԵՆ-ի ուշադրության կենտրոնում: Այնուհանդերձ փաստել են, որ խնդրի լուծման համար անհրաժեշտ են ֆինանսական մեծ միջոցներ:

Այս առումով խիստ մտահոգիչ է այն, որ տարիներ շարունակ ՄԻՊ-ի կողմից բարձրացվող և լրջագույն բացասական հետևանքների հանգեցնող խնդրին լուծում չի տրվում՝ ֆինանսական բավարար միջոցներ չունենալու պատճառով:

Բարձրացված հարցի կապակցությամբ գրություններ են հասցեագրվել նաև Երևանի քաղաքապետարան: Ըստ Երևանի քաղաքապետարանի՝ ստերջացման և հետագա խնամքի գործընթացի ավարտից հետո կենդանիները վերադարձվում են տարածք՝

ականջներին կրելով տարբերանշաններ: «Կենդանիների խնամքի կենտրոն» ՀՈԱԿ-ը նախատեսում է կառուցել համայնքային կացարաններ անտուն կենդանիների համար, որոնց գործարկման պարագայում մայրաքաղաքի փողոցներում թափառող կենդանիների քանակն էապես նվազելու է: Վերջիններս ապրելու են կացարաններում՝ ապահովված լինելով անհրաժեշտ բոլոր պայմաններով:

2023 թվականին ՄԻՊ աշխատակազմում բողոքներ են ստացվել նաև թափառող շների հարձակման հետևանքով մարդկանց առողջությանը պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ: Այս կապակցությամբ Երևանի քաղաքապետարանը, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի մի շարք իրավակարգավորումներ, հայտնել է, որ վնասի հատուցման պահանջի հիմնավորվածության հարցը քննարկման առարկա չի դարձվում, քանի որ թափառող շները չեն հանդիսանում Երևան համայնքի սեփականությունը և վերջիններիս կողմից պատճառված վնասի հատուցման պարտավորությունը Երևանի քաղաքապետարանը չի կրում:

Վերոգրյալի համատեքստում հարկ է նշել, որ ՄԻԵԴ-ը *Ջեորջելը և Ջեորջետա Ստոիչեսկուն ընդդեմ Ռումինիայի* գործով, մասնավորապես, անդրադառնալով Ընտանի կենդանիների պաշտպանության եվրոպական կոնվենցիայի (European Convention for the Protection of Pet Animals[166]) 12-րդ հոդվածի դրույթներին *(ըստ այդմ՝ երբ կողմը համարում է, որ թափառող կենդանիների թիվն իր համար խնդիր է ներկայացնում, այն պետք է ձեռնարկի համապատասխան օրենսդրական և (կամ) վարչական միջոցներ այդպիսի կենդանիների թվի կրճատման համար, այն միջոցներով, որոնք չեն առաջացնում ցավ, տառապանք կամ տանջանք)՝ արձանագրել է պետության պոզիտիվ պարտականության խախտում Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի հիմքով*[167]*՝ հարձակման հետևանքով պատճառված վնասի հատուցման պարտավորությունը դնելով պետության վրա:*

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանն ընդգծում է.

- ✓ ***մարդկանց վրա թափառող շների հարձակման դեպքերը կանխելու ուղղությամբ պետությունը պետք է մշակի և իրացնի առավել արդյունավետ և գործուն կառուցակարգեր, որոնք առավելագույնս կնպաստեն խնդրի լուծմանը, կապահովեն մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությունը և կբխեն կենդանիների նկատմամբ մարդասիրական վերաբերմունքի պահանջներից:***
- ✓ ***մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում ունեցած պոզիտիվ պարտականությունների համատեքստում պետությունը պետք է մշակի և իրացնի կառուցակարգեր՝ թափառող շների հարձակման հետևանքով քաղաքացիների առողջությանը պատճառված վնասի հատուցման վերաբերյալ իրավական հիմքերի ստեղծման և գործնականում դրանց պատշաճ կիրառության նպատակով:***

[166] Հասանելի է https://rm.coe.int/168007a67d հղումով 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[167] Տե՛ս Ջեորջելը և Ջեորջետա Ստոիչեսկուն ընդդեմ Ռումինիայի (Gerorgel and Georgeta Stoicescu v. Romania) գործով 2011 թվականի հոկտեմբերի 26-ի վճիռը, գանգատ թիվ 9718/03, կետեր 33, 49, 62, 63 և 80:

ԲԱԺԻՆ 4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Քաղաքակիրթ աշխարհն արդի ժամանակահատվածում ձգտում է ուղղակիորեն ճանաչելու ու ամրագրելու մարդու՝ առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունքը: Միջազգային իրավական մի շարք փաստաթղթերում ամրագրված է առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունքը, ինչպես օրինակ՝ Ստոկհոլմի 1972 թվականի, Ռիոյի 1992 թվականի հռչակագրերում:

2022 թվականի հուլիսի 28-ին Միավորված ազգերի կազմակերպությունը ողջունել է Գլխավոր Ասամբլեայի կողմից մաքուր, առողջ և կայուն միջավայրում ապրելու՝ որպես մարդու իրավունքի ճանաչումը[168]: Նշվածը հաջորդել էր ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի բանաձևին, որով նույն իրավունքը ճանաչվել էր դեռևս 2021 թվականի հոկտեմբերի 8-ին[169]:

Այս բանաձևերը ուղենիշային կարևոր ձեռքբերումներ են՝ ուղղված մարդու առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունքի ու այդ իրավունքի հետ անբաժանելիորեն փոխկապված այլ իրավունքների պաշտպանությանը:

Շրջակա միջավայրին առնչվող մարդու իրավունքներ են նախատեսում շուրջ 150 երկրների սահմանադրություններ:

Ներկայացվածի առնչությամբ հարկ է նկատել, որ 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 33.2-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը: 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության՝ «Սահմանադրական կարգի հիմունքները» գլխի 12-րդ հոդվածով, ի տարբերություն վերը նշվածի, սահմանվում է յուրաքանչյուրի՝ շրջակա միջավայրի պահպանության մասին հոգ տանելու պարտականությունը: Դրա հետ մեկտեղ, Սահմանադրության նույն հոդվածով ամրագրվում է, որ պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը, հաշվի առնելով առողջ, անվտանգ, ինչպես նաև կայուն զարգացող շրջակա միջավայրի առանցքային դերակատարությունը մարդու իրավունքների պատշաճ իրացման հարցում, իր զեկույցների ու տարեկան հաղորդումների, տարատեսակ հրապարակային ելույթների և այլ քննարկումների շրջանակներում մշտապես բարձրացնում է շրջակա միջավայրի պահպանության ոլորտի խնդիրները, որոնք արդիական են և ունեն համակարգային բնույթ:

1. Շրջակա միջավայրի հարցերի վերաբերյալ հանրային իրազեկման և հանրության պատշաճ ներգրավվածության ապահովումը, էկոլոգիական իրավունքների պաշտպանության արտադատական մեխանիզմի բացակայությունը

Տարիներ շարունակ Մարդու իրավունքների պաշտպանն իր տարեկան հաղորդումներում բարձրացրել է շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ հանրային

[168] Տե՛ս ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի՝ 2022 հուլիսի 28-ի A/RES/76/300 բանաձևը, հասանելի է https://daccess-ods.un.org/access.nsf/Get?OpenAgent&DS=A/RES/76/300&Lang=E հղումով:

[169] Տե՛ս ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի՝ 2021 հոկտեմբերի 18-ի A/HRC/RES/48/13 բանաձևը, հասանելի է https://daccess-ods.un.org/access.nsf/Get?OpenAgent&DS=A/HRC/RES/48/13&Lang=E հղումով:

իրազեկմանն ու հանրության պատշաճ ներգրավվածությանն առնչվող հարցերը, որոնք 2023 թվականի ընթացքում ևս արդիական են եղել:

Մարդու իրավունքների պաշտպանը խնդրահարույց է համարել նախքան հանրային լսումները շահագրգիռ հանրության համար փաստաթղթերին ծանոթանալու նպատակով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով նախատեսված ժամկետի անհամապատասխանությունը Օրհուսի կոնվենցիայի դրույթներին՝ հիմք ընդունելով նաև «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» ՄԱԿ-ի 1998 թվականի կոնվենցիայի (Օրհուսի կոնվենցիա)[170] Կողմերի հանդիպմամբ (Meeting of the Parties) հաստատված մի շարք որոշումներն ու Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեի զեկույցները[171]:

Շրջակա միջավայրի հարցերի վերաբերյալ հանրային իրազեկման և հանրության պատշաճ ներգրավվածության ապահովման, էկոլոգիական իրավունքների պաշտպանության արտադատական մեխանիզմի բացակայության հարցերը՝ որպես միջազգային պահանջ, բարձրացվել են Օրհուսի կոնվենցիայի Կողմերի հանդիպմամբ հաստատված մի շարք որոշումներում՝ ընդգծելով այդ հարցերի լուծմանն ուղղված ջանքերի գործադրման անհրաժեշտությունը:

Այսպես, ըստ Օրհուսի կոնվենցիայի Կողմերի հանդիպմամբ հաստատված՝ Հայաստանի վերաբերյալ VII/8ա որոշման[172]՝ Հայաստանի Հանրապետությունը չի կատարել Օրհուսի կոնվենցիայի Կողմերի հանդիպմամբ հաստատված՝ Հայաստանի վերաբերյալ VI/8ա[173] որոշման 3(ա), 3(բ), 3(գ) և 3(դ) կետերը: Վերահաստատելով Հայաստանի վերաբերյալ VI/8ա[174] որոշմամբ արտահայտած դիրքորոշումները՝ Հայաստանի վերաբերյալ VII/8ա որոշմամբ[175] առաջարկվել է հրատապ միջոցներ (օրենսդրական, կարգավորող ու վարչական) ձեռնարկել՝ ուղղված հանրային լսումների պատշաճ իրականացմանը (կետ 2(ա)), շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում հանրության կողմից դիտողություններ և առաջարկություններ ներկայացնելու համար ավելի երկար ու ողջամիտ ժամկետների սահմանմանը (կետ 2(բ)), Օրհուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ կետով ամրագրված արդարադատության մատչելիության ապահովմանն (կետ 2(գ)), ինչպես նաև կոնվենցիոն պահանջներին համապատասխան ներպետական օրենսդրության կիրառումը խթանելուն ուղղված դատական համակարգի իրազեկվածության բարձրացմանը (կետ 2(դ)):

---

[170] Տե՛ս «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» ՄԱԿ-ի 1998 թվականի կոնվենցիա, հասանելի է http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/documents/cep43e.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[171] Առավել մանրամասն տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի «2021 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» տարեկան հաղորդումը, «Շրջակա միջավայրի պահպանություն» բաժինը, հասանելի է https://ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով:

[172] Տե՛ս ՀՀ՝ Օրհուսի կոնվենցիայի պահանջներին համապատասխանության վերաբերյալ Կողմերի հանդիպմամբ հաստատված 2021 թվականի VII/8ա որոշում, հասանելի է https://unece.org/sites/default/files/2022-01/Decision_VII.8a_eng_0.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[173] Տե՛ս ՀՀ՝ Օրհուսի կոնվենցիայի պահանջներին համապատասխանության վերաբերյալ Կողմերի հանդիպմամբ հաստատված 2017 թվականի VI/8ա որոշում, հասանելի է https://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/compliance/MoP6decisions/Compliance_by_Armenia_VI-8a.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[174] Տե՛ս նույն տեղում:

[175] Տե՛ս ՀՀ՝ Օրհուսի կոնվենցիայի պահանջներին համապատասխանության վերաբերյալ Կողմերի հանդիպմամբ հաստատված 2021 թվականի VII/8ա որոշում, հասանելի է https://unece.org/sites/default/files/2022-01/Decision_VII.8a_eng_0.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Օրհուսի կոնվենցիայի 6-րդ հոդվածի (հասարակության մասնակցությունը կոնկրետ հարցերի կապակցությամբ որոշումներ ընդունելուն) 3-րդ մաս.

Հասարակության մասնակցության ընթացակարգերի տարբեր փուլերի համար պետք է նախատեսվեն ողջամիտ ժամկետներ, որոնք նույն հոդվածի 2-րդ մասին համապատասխան կապահովեն բավարար ժամանակ հասարակության իրազեկման, նախապատրաստման և շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ որոշումների ընդունման գործընթացին արդյունավետ մասնակցության համար:

Հայաստանի առնչությամբ Օրհուսի կոնվենցիայի կողմերի VII/8a որոշման կատարման առաջընթացի առաջին հաշվետվությունում ևս նշվում է, որ VII/8a որոշման կետ 2(բ)-ով նախատեսված առաջարկների մի մասն իրագործվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի ընդունմամբ, իսկ մյուս մասն իրագործվելու է համապատասխան Կառավարության որոշման մեջ փոփոխություն կատարելու միջոցով:

Մարդու իրավունքների պաշտպանին Շրջակա միջավայրի նախարարությունից տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2023 թվականի մայիսի 3-ին ընդունվել է ««Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքը, որի համաձայն՝ օրենքով երկարաձգվել են ինչպես ծանուցումից հետո հանրային լսումների կազմակերպման, այնպես էլ հանրության առաջարկությունների, դիտողությունների և կարծիքների ներկայացման ժամկետները:

Ընդունվել է Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ին «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343-Ն որոշումը, որով հստակ սահմանվել են հանրության իրազեկման և հանրային լսումների ծանուցման բովանդակությունը, հանրային լսումների ընթացակարգը, շահագրգիռ հանրության կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման ընթացակարգը և ժամկետները:

Փոփոխությունների արդյունքում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվել է, որ շահագրգիռ հանրության գրավոր կամ էլեկտրոնային առաջարկությունները, դիտողությունները և կարծիքները ներկայացվում են՝

1) նույն օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքում՝ ծանուցումից հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում.

2) փորձաքննության ընթացքում՝ հիմնադրույթային փաստաթղթի նախագծի և Ա կատեգորիայի գործունեության տեսակների դեպքում՝ ծանուցումից հետո՝ 25 աշխատանքային օրվա ընթացքում.

3) փորձաքննության ընթացքում՝ Բ կատեգորիայի գործունեության տեսակների դեպքում՝ ծանուցումից հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն ժամկետները փոփոխությունների արդյունքում սահմանվել են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշմամբ:

Ասվածի հետ մեկտեղ պետք է նշել, որ Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեն դեռևս Հայաստանի վերաբերյալ 2021 թվականի

զեկույցում, անդրադառնալով հանրության մասնակցության ժամկետներին և համարելով դրանք ոչ բավարար, նշել է, որ թեև ընդունելի է տարբեր ժամկետներ նախատեսելը տարատեսակ գործողությունների համար, սակայն այն փաստը, որ այդ ժամկետները յուրաքանչյուր կատեգորիայի շրջանակներում բոլոր տեսակի նախագծերի վրա են տարածվում առանց առավել ծավալուն ու բարդ նախագծերի համար առավել երկար ժամկետներ նախատեսելու հնարավորության առկայության, նշանակում է, որ նախատեսված ու առաջարկվող ժամկետները ողջամիտ չեն Օրհուսի կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով[176]:

2023 թվականի ընթացքում միջազգային չափանիշներին համապատասխանեցմանն ուղղված քայլեր են ձեռնարկվել ու համապատասխան օրենսդրական փոփոխություններ են իրականացվել: Սակայն, վերոնշյալ զեկույցում արտահայտված դիրքորոշմանը համահունչ կարգավորում, որը կամրագրի յուրաքանչյուր կատեգորիայի շրջանակներում առավել ծավալուն ու բարդ նախագծերի համար առավել երկար ժամկետներ նախատեսելու հնարավորություն, օրենսդրական փոփոխություններով չի նախատեսվել:

Մեկ այլ խնդիր է հասարակական կազմակերպությունների համար արդարադատության մատչելիության հարցը ՀՀ ներպետական իրավակարգավորումների՝ Օրհուսի կոնվենցիային համապատասխանության տեսանկյունից, որը ևս 2023 թվականի ընթացքում առկա է եղել: Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեն, անդրադառնալով ՀՀ ներպետական իրավակարգավորումներին, խնդրահարույց է համարել «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 216.6-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դրույթները՝ ելնելով այն հանգամանքից, որ նույն դրույթներով հասարակական կազմակերպությունների կողմից հայց ներկայացնելու համար նախապայման է նախատեսում հիմնադրույթային փաստաթղթերի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրային քննարկումներին մասնակցած լինելը կամ հանրային քննարկումներին մասնակցելու հնարավորության բացակայությունը:

Օրհուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածով ճանաչվում է էկոլոգիական իրավունքների խախտման համար դատական և արտադատական պաշտպանության դիմելու իրավունքը:

Օրհուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածի (արդարադատության մատչելիությունը) 2-րդ մաս.

Յուրաքանչյուր Կողմ ազգային օրենսդրության շրջանակներում պարտավոր է ապահովել, որ շահագրգիռ հասարակության ներկայացուցիչները, ովքեր՝

ա) ցուցաբերում են բավականաչափ շահագրգռվածություն

կամ որպես այլընտրանքային տարբերակ

բ) համարում են, որ տեղի է ունեցել այս կամ այն իրավունքի խախտում, եթե դա համապատասխան Կողմի վարչական վարույթի նորմերով սահմանվում է որպես նախապայման,

ունենան հնարավորություն, ազգային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և առանց նույն հոդվածի 3-րդ մասի կամ սույն Կոնվենցիայի այլ համապատասխան դրույթների խախտման, դատարանում և/կամ օրենքին համապատասխան ստեղծված անկախ և անկողմնակալ մարմնում՝ ընդունված որոշումների վերանայման

[176] Տե՛ս Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեի՝ ՀՀ իր կոնվենցիոն պարտավորությունների կատարման մասին 2021 թվականի զեկույցը, հասանելի է https://unece.org/sites/default/files/2021-11/ECE_MP.PP_2021_46_E.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

հնարավորություն՝ 6-րդ հոդվածի դրույթների շրջանակներում ընդունված ցանկացած որոշման, կատարված գործողության կամ անգործության օրինականությունը նյութական և ընթացակարգային իրավունքի տեսակետից վիճարկելու նպատակով:

Բավարար շահագրգռվածության առկայությունը և այս կամ այն իրավունքի խախտված լինելը որոշվում է՝ ելնելով ազգային օրենսդրության դրույթներից և սույն Կոնվենցիայի իմաստով շահագրգիռ հասարակայնությանն արդարադատության լայն մատչելիություն ապահովելու նպատակից: Այս իմաստով՝ վերը նշված ա) ենթակետի նպատակի համար բավարար է 2-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներին համապատասխան ցանկացած հասարակական կազմակերպության շահագրգռվածությունը: Վերը նշված բ) ենթակետի նպատակների համար այդպիսի կազմակերպությունները իրավունք ունեն նաև հայտարարելու իրենց իրավունքների խախտման մասին:

Կոմիտեի դիրքորոշմամբ՝ արդարադատության մատչելիության իրավունքի համար նախապայմաններ սահմանող ներպետական կարգավորումները չեն համապատասխանում Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ մասին[177]:

Օրհուսի կոնվենցիայի Կողմերի հանդիպմամբ հաստատված՝ Հայաստանի վերաբերյալ VII/8ա որոշման Օրհուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ կետով ամրագրված արդարադատության մատչելիության ապահովման (կետ 2(գ)) առնչությամբ իրականացված գործողությունների վերաբերյալ Հայաստանի առնչությամբ Օրհուսի կոնվենցիայի կողմերի VII/8a որոշման կատարման առաջընթացի առաջին հաշվետվությունում նշվում է, որ քննարկվել է ««Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» նախագծի մշակման անհրաժեշտությունը:

Բացի այդ, 2023 թվականի ընթացքում ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1978-Լ որոշման Հավելված N 3-ով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագրում որպես գործողություն է նախատեսվել հասարակական կազմակերպությունների համար դատարան դիմելու իրավունքի սահմանումը հանրային նշանակության, կարևորության հարցերով, այդ թվում՝ ինչպես վարչական, այնպես էլ քրեական վարույթներով՝ հաշվի առնելով actio popularis սկզբունքը: Որպես նշված գործողության արդյունք է նշված, ի թիվս այլնի, շրջակա միջավայրի պահպանության հարցերով դատարան դիմելու համար հասարակական կազմակերպություններին ներկայացվող պահանջների նվազեցումը: Նույն գործողության վերջնաժամկետը 2024-2025թթ. են:

Արդարադատության մատչելիության ապահովմանն ուղղված Օրհուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածով էկոլոգիական իրավունքների խախտման համար դատական և արտադատական պաշտպանության դիմելու իրավունքի համատեքստում ընդգծվում է **անկախ և անաչառ մարմնի կողմից վեճերի քննման ընթացակարգերի նախատեսման անհրաժեշտությունը**: 2023 թվականի ընթացքում ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ Շրջակա միջավայրի նախարարությունը տեղեկացրել է, որ հարցի

[177] Տե՛ս Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեի՝ ՀՀ իր կոնվենցիոն պարտավորությունների կատարման մասին 2017 թվականի զեկույցը, հասանելի է http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/mop6/English/ECE_MP.PP_2017_33_E.pdf հղումով, Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեի՝ ՀՀ իր կոնվենցիոն պարտավորությունների կատարման մասին 2021 թվականի զեկույցը, հասանելի է https://unece.org/sites/default/files/2021-11/ECE_MP.PP_2021_46_E.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

առնչությամբ անցկացվել է խորհրդակցական հանդիպում-քննարկում ԵՊՀ էկոիրավունքի գիտաուսումնական կենտրոնի ղեկավարի հետ, անհրաժեշտություն է առաջացել հարցը շահագրգիռ կողմերի ավելի լայն շրջանակներում քննարկելու համար:

Վերոշարադրյալի ամփոփմամբ՝ պետք է փաստել, որ թեև 2023 թվականի ընթացքում իրավասու մարմինների կողմից տարվել են աշխատանքներ ուղղված ոլորտում տարիներ շարունակ կարգավորման կարիք ունեցող հարցերի ու խնդիրների լուծման ուղղությամբ, սակայն որոշ խնդիրներ շարունակում են արդիական լինել, այդ թվում՝ Օրհուսի կոնվենցիային համապատասխան՝ հանրության պատշաճ ներգրավվածության, արդարադատության մատչելիության, նաև՝ կենտրոնացված մշտադիտարկող անկախ և անաչառ արտադատական մարմնի ստեղծման և այլ խնդիրներ: Ուստի, Պաշտպանն ընդգծում է, որ Կոնվենցիոն ու միջազգային հանձնարարականներով պահանջված արդյունքին հասնելու համար շարունակական համակարգային աշխատանքների իրականացումը անհրաժեշտություն է:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ի կատարումն Կողմերի հանդիպմամբ ընդունված հանձնարարականների՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***համապատասխանեցնել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի կարգավորումները Օրհուսի կոնվենցիային՝ սահմանելով հանրային լսումների համատեքստում հանրության մասնակցության առավել ճկուն ժամկետներ՝ ըստ Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեի դիրքորոշումների,***
- ✓ ***օրենսդրորեն երաշխավորել հասարակական կազմակերպությունների արդարադատության մատչելիության իրավունքը՝ ապահովելով Համապատասխանության կոմիտեի առաջարկությունների կատարումը,***
- ✓ ***քայլեր ձեռնարկել՝ ուղղված Օրհուսի կոնվենցիայով նախատեսված անկախ և անկողմնակալ արտադատական մարմնի ստեղծմանը:***

2. Քիմիական նյութերի և թափոնների անվտանգ հեռացումն ու ոչնչացումը

Թափոններն աղտոտում են մթնոլորտային օդը, ընդերքը, ջրերն ու հողերը, դրանց բացասական ազդեցությունը տարածվում է բնական միջավայրի, մարդկանց, կենդանական ու բուսական աշխարհի վրա: Շրջակա միջավայրի վրա բացասական են անդրադառնում ինչպես հանքարդյունաբերության հետևանքով առաջացող քիմիական նյութերն ու թափոնները, այնպես էլ կենցաղային թափոնները: Ուստի, քիմիական նյութերի և թափոնների անվտանգ հեռացումն ու ոչնչացումը կարևորագույն նշանակություն ունեն շրջակա միջավայրի պահպանության հարցում:

Աղտոտման վնասակար հետևանքները առողջ և անվտանգ շրջակա միջավայրի վրա տարիներ շարունակ բարձրացվում է Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում:

Հայաստանի Հանրապետությունը մարդու առողջությունն ու շրջակա միջավայրը կայուն օրգանական աղտոտիչներից պահպանելու պարտավորություն է ստանձնել Կայուն օրգանական աղտոտիչների մասին Ստոկհոլմի կոնվենցիայի վավերացմամբ:

Կայուն օրգանական աղտոտիչների մասին Ստոկհոլմի կոնվենցիա

Հոդված 1.

Հաշվի առնելով շրջակա միջավայրի և զարգացման Ռիո դե Ժանեյրոյի հռչակագրի 16-րդ սկզբունքում ամրագրված նախազգուշական միջոցներ ձեռնարկելու սկզբունքը, սույն Կոնվենցիայի նպատակն է պահպանել մարդու առողջությունն ու շրջակա միջավայրը կայուն օրգանական աղտոտիչներից:

Ստոկհոլմի կոնվենցիան պարտավորեցնում է պետություններին ձեռնարկել առանձին քիմիական նյութերի արտանետման կրճատմանը, քիմիական նյութեր պարունակող պաշարների և թափոնների կառավարմանն ուղղված այնպիսի միջոցառումներ, որոնք կապահովեն մարդու առողջության ու շրջակա միջավայրի պաշտպանությունը[178]:

Առողջ և անվտանգ շրջակա միջավայրի ապահովման համատեքստում ջրի որակի բարելավման, հետևաբար նաև քիմիական նյութերով ու թափոններով ջրերի աղտոտվածության դեմ պայքարի անհրաժեշտությունն ընդգծվում է նաև ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներով:

ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակ 6

Մաքուր ջուր և սանիտարական պայմաններ

Ապահովել բոլորի համար ջրի ու սանիտարական պայմանների հասանելիություն

- 6.3 Մինչև 2030 թ. բարելավել ջրի որակը՝ կրճատելով աղտոտումը, վերացնելով վտանգավոր քիմիկատներ և նյութեր թափելը և նվազեցնելով դրանց արտահոսքերը, կիսով չափ կրճատելով չմաքրվող կեղտաջրերի համամասնությունը և էականորեն մեծացնելով վերամշակումը և անվտանգ վերօգտագործումն ամբողջ աշխարհում

Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի պահպանության ոլորտում 2023 թվականի գլխավոր մարտահրավերներից է եղել ջրերի աղտոտվածության խնդիրը:

Թափոններն ու դրանց արտանետումները, ներթափանցելով ջրային օբյեկտներ ու ռեսուրսներ, վնաս են հասցնում ջրային էկոհամակարգին: Այս խնդրի մասին են վկայում ՀՀ շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքները: ՀՀ շրջակա միջավայրի մոնիթորինգի[179] արդյունքներով՝ օրինակ՝ Շնող գետի ջրի որակը գետաբերանի հատվածում 2023 թվականի բոլոր եռամսյակների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)[180]: Ընդհանուր առմամբ Շնող գետի ջրի որակի ընդհանրական դաս գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված մի շարք նյութերով (մոլիբդեն, սուլֆատ իոն, պղինձ, ԿՉՆ և այլն): Հարկ է նկատել, որ Շնող գետի աղտոտվածության հարցը Պաշտպանի տարեկան հաղորդումներում բարձրացվում 2020 թվականից ի վեր, ընդ որում՝ 2020 թվականից ի վեր գետի ջրի որակը գնահատվում է «վատ» (5-րդ դաս, որն ամենացածրն է):

[178] «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայի 6-րդ հոդված:

[179] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի «ՀՀ շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների մասին» տեղեկագիր 2023 թվականի 4-րդ եռամսյակ, հասանելի է http://env.am/storage/files/2023-i.pdf, http://env.am/storage/files/2023-2.pdf, http://env.am/storage/files/3-yeramsyak-2023.pdf, http://env.am/storage/files/iv-eramsyak-2023.pdf հղումներով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[180] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի «ՀՀ շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների մասին» տեղեկագիր 2021 թվականի երրորդ եռամսյակ, հասանելի է http://env.am/storage/files/iii-eramsyak-2021.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Ախթալա, Մասրիկ, Ձկնագետ, Վարդենիս գետերի ջրերի որակի ընդհանրական դասը 2023 թվականի առաջին եռամսյակում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)[181]: Նույն ժամանակահատվածում միայն Մարցիգետ գետի ջրի որակի ընդհանրական դասն է գնահատվել «լավ» (2-րդ դաս):

Ախթալա, Սոթք, Կարճևան գետերի ջրերի որակը գետաբերանում 2023 թվականի 4-րդ եռամսյակի երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)[182]: Սոթք, Մասրիկ, Գետառ, Հրազդան, Մեղրիգետ, Աճանան և մի շարք այլ ջրային ռեսուրսների ջրերի որակի ընդհանրական դասը 2023 թվականի չորրորդ եռամսյակում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Ընդհանուր առմամբ, այն ջրային ռեսուրսները, որոնց ջրի որակի ընդհանրական դասը գնահատվում է լավ (2-րդ դաս), փոքրամասնություն են կազմում:

Այլ ջրային օբյեկտներում ևս աղտոտվածության խնդիրը լուրջ է: Այսպես, 2021 թվականի 4-րդ եռամսյակի վերաբերյալ ՀՀ շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների համաձայն՝ օրինակ՝ նոյեմբեր ամսին Երևանյան լճի, Ախուրյանի ջրամբարների ջրի կարգավիճակի ընդհանրական դասը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Ներկայացվածը ուղղակի վկայությունն է այն բանի, որ ջրային օբյեկտների որակային ցուցանիշները մտահոգիչ ու խնդրահարույց են:

2023 թվականի ընթացքում զանգվածային լրատվության միջոցներն ու բնապահպանները ևս ահազանգել են ջրային օբյեկտների աղտոտվածության մասին: Օրինակ՝ Դեբեդ գետի՝ հանքարդյունաբերության և այլ, այդ թվում՝ կենցաղային թափոններով աղտոտվածության խնդիրը, ինչը ոչ միայն վտանգում է գետի էկոհամակարգը, այլև գետավազանի բնակավայրերն ու բնակչության առողջությունը183:

Հարկ է նկատել, որ ջրի աղտոտվածության մակարդակն ու որակը պարզելու նպատակով շատ կարևոր է կենսաբանական մոնիթորինգի իրականացումը: Ջրի որակի վերաբերյալ անհրաժեշտ հիմնական տեղեկատվությունը տրամադրվում է հենց կենսաբանական մոնիթորինգի միջոցով: Կենսաբանական մոնիթորինգը հնարավորություն է ընձեռում հստակ պատկերացում կազմելու էկոհամակարգի և գործունեության վրա աղտոտման ազդեցության վերաբերյալ: Մինչդեռ Հայաստանում կենսաբանական մոնիթորինգ համակարգային առումով չի իրականացվում, փոխարենը իրականացվում է քիմիական և հիդրոմորֆոլոգիական մոնիթորինգ, որը տրամադրում է միայն աջակցող տեղեկատվություն:

Այս առնչությամբ, ըստ Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի՝ Շրջակա միջավայրի նախարարության՝ Կլիմայի փոփոխության մասին չորրորդ ազգային հաղորդագրությունում[184] ևս նշվում է, որ անհրաժեշտ է ներդնել և իրականացնել մակերևութային ջրերի կենսաբանական մոնիթորինգ՝ էկոհամակարգի էկոլոգիական կարգավիճակը և խոցելիությունը կլիմայի փոփոխությունների նկատմամբ գնահատելու համար:

---

[181] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի «ՀՀ շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների մասին» տեղեկագիր 2023 թվականի 4-րդ եռամսյակ, հասանելի է http://env.am/storage/files/2023-i.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[182] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի «ՀՀ շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների մասին» տեղեկագիր 2023 թվականի 4-րդ եռամսյակ, հասանելի է http://env.am/storage/files/iv-eramsyak-2023.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[183] Հասանելի է https://www.ecolur.org/hy/news/mining/15280/, https://cvmedia.am/page17-2916--88- հղումներով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[184] Տե՛ս Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության «Կլիմայի փոփոխության մասին չորրորդ ազգային հաղորդագրություն»,հասանելի է http://env.am/storage/files/fnc-arm.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Ասվածի համատեքստում հարկ է նկատել, որ ոլորտի մեծագույն խնդիրներից է վտանգավոր թափոնների էկոլոգիապես անվտանգ գործածության հիմնախնդիրները: Դեռևս լուծված չեն այդ թափոնների էկոլոգիապես անվտանգ եղանակով հեռացման, վնասազերծման, վերամշակման, օգտահանման և ոչնչացման հարցերը[185]: 2023 թվականի ընթացքում արդիական է եղել վտանգավոր թափոնների տեղակայման, կուտակման և վնասազերծման համար նախատեսված հատուկ վայրերի առկայության հարցը: Նման պայմաններում վտանգավոր թափոնները շատ հաճախ կուտակվում են ընդհանուր աղբավայրերում: Առավել հաճախ վտանգավոր թափոնները հայտնվում են ոչ թե հատուկ այդ թափոնների համար նախատեսված, այլ պատահական վայրերում՝ դրանով աղտոտելով շրջակա միջավայրը: Նշվածի պատճառներից է, ի թիվս այլնի, այն, որ մասնագիտացված աղբավայրերը (արտադրական, շինարարական թափոնների) բացակայում են ու դրանով նաև պայմանավորված՝ աղբի տեսակավորումն իրականացվում է ոչ լրիվ և հատվածական կերպով: Խնդիրն այն է, որ աղբի տեսակավորումն իրականացվում է միայն Երևան քաղաքում, այն էլ՝ մասամբ, մարզերում առհասարակ աղբամանների տեղադրման խնդիր կա:

Այս խնդիրների մասին դեռևս 2021 թվականին Պաշտպանին ուղղված իր պարզաբանումներում Շրջակա միջավայրի նախարարությունը նշել է, որ չկան վտանգավոր թափոնների տեղադրման հատուկ վայրեր կամ վնասազերծման օբյեկտներ, վտանգավոր թափոնների հեռացման խնդրի ժամանակավոր լուծումը ներկայումս թափոններ առաջացնող անձանց մոտ անվտանգ եղանակով պահելն է՝ մինչև վտանգավոր թափոնների տեղադրման հատուկ վայրերի կամ վնասազերծման օբյեկտների ստեղծումը:

Խնդրի արդիականությունը պահպանվում է մինչ օրս. վտանգավոր թափոնների տեղադրման կամ պահման համար նախատեսված հատուկ վայրեր՝ նույնիսկ ժամանակավոր տեղադրման կամ պահման համար, չկան: Որպես այդ ամենի հետևանք, վտանգավոր թափոնները, հայտնվելով դրանց համար չնախատեսված և կենցաղային թափոնների համար նախատեսված բաց վայրերում, վնաս են հասցնում շրջակա միջավայրին[186]:

Շրջակա միջավայրի նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2023 թվականի ընթացքում ևս՝ ստացվել են հարցումներ վտանգավոր թափոնների գործածության՝ դրանց տեղակայման, կուտակման և վնասազերծման առնչությամբ: Մասնավորապես՝ Շրջակա միջավայրի նախարարությունը ստացել է բանավոր հարցումներ՝ կապված ուսումնական հաստատություններում և արտադրական ձեռնարկություններում առկա ժամկետանց ռեակտիվները կամ համանման այլ թափոնները վնասազերծման նպատակով մասնագիտացված կազմակերպություններին հանձնելու հարցի հետ, սակայն նման գործունեության համար լիցենզավորված կազմակերպությունների բացակայության պատճառով, առաջնորդվելով վտանգավոր քիմիական թափոնների գործածությանը և վտանգավոր քիմիական նյութերի պահպանմանը և փոխադրմանը ներկայացվող հիգիենիկ պահանջները սահմանող N2.1.7.001-09 սանիտարական կանոններով և նորմերով, առաջարկվել է այդ թափոններն անվտանգ եղանակով ժամանակավորապես պահել կազմակերպությունների պահեստային տարածքներում:

[185] Հասանելի է https://armenpress.am/arm/news/1130989 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[186] Հասանելի է https://fb.watch/bkExMc_VZ9/ հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Միաժամանակ, Շրջակա միջավայրի նախարարության պարզաբանումների համաձայն՝ 2023 թվականի ընթացքում 1 կազմակերպության տրամադրվել է Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզիա և լիցենզիայի հինգ ներդիր՝ «Կենցաղային էլեկտրատեխնիկական և ռադիոտեխնիկական արտադրատեսակների/խմբի կամ ենթախմբի/ թափոնատեսակներ» անվանումով թափոնների հավաքում, փոխադրում, պահում, վերամշակում և օգտահանում գործունեության տեսակների համար:

Դեռևս 2019 թվականին Շրջակա միջավայրի նախարարությունը որպես խնդիր էր ներկայացրել այն, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի N 121-Ն որոշման մեջ կատարված փոփոխությամբ «Վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզիա» արտահայտությունը փոխարինվել է «Վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզիա» արտահայտությամբ: Դրա հետ մեկտեղ, սակայն, նախկինում տնտեսվարողներին տրամադրված՝ գործող «Վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզիաները» փոփոխության չեն ենթարկվել և չեն վերաձևակերպվել: Նշվածը, ըստ Նախարարության, առաջ է քաշել խնդիրներ նախկինում լիցենզիա ստացած տնտեսվարողների հետ կապված: Բանն այն է, որ վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման լիցենզիա ստացած տնտեսվարողերն իրավասու են միայն այն գործողությունն իրականացնել, որի համար շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացություն են ստացել: Սակայն, գործնականում տնտեսվարողները փաստացի իրականացում են նաև գործունեություն, որի համար չեն ստացել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացություն[187]: Խնդիրը արդիական է եղել նաև 2023 թվականի ընթացքում:

Շրջակա միջավայրի նախարարության պարզաբանումների համաձայն՝ «Թափոնների մասին» օրենքում օրենսդրական փոփոխությունների միջոցով նախատեսվում է սահմանել ժամկետ, որի ընթացքում «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության» լիցենզիա ստացած իրավաբանական անձինք իրավունք կունենան հայտ ներկայացնելու Նախարարություն՝ իրենց լիցենզիան վերաձևակերպելու և «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության» լիցենզիա ու լիցենզիայի համապատասխան ներդիրներ ստանալու համար:

Նախատեսվող փոփոխությունների շնորհիվ վտանգավոր թափոնների գործածության ոլորտում գործունեություն իրականացնող բոլոր լիցենզավորված անձանց համար կապահովվեն գործունեության հավասար պայմաններ և դա կհանդիսանա կանխարգելիչ միջոց «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության» լիցենզիա ստացած իրավաբանական անձանց այն գործողությունների

[187] Առավել մանրամասն տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի «2021 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» տարեկան հաղորդումը, «Շրջակա միջավայրի պահպանություն» բաժինը, հասանելի է https://ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով:

իրականացման համար, որոնց համար վերջիններս չեն ստացել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացության:

Վերոգրյալից բացի, ոլորտի խնդիրների լուծմանն ուղղված որոշակի քայլեր են ձեռնարկվել ոլորտի իրավասու մարմնի կողմից: Շրջակա միջավայրի նախարարության՝ Սնդիկ պարունակող ապրանքների արտադրությունն ու ներմուծումը սահմանափակելու և դրա շնորհիվ սնդիկային թափոնների առաջացումը կանխարգելելու նպատակով ընդունվել են Կառավարության 2023 թվականի օգոստոսի 11-ի «Հայաստանի Հանրապետությունից արտահանման և Հայաստանի Հանրապետություն ներմուծման համար արգելված սնդիկի հավելիչով արտադրանքի ցանկը սահմանելու մասին» N 1341-Ն և Կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետությունից սնդիկի արտահանման և Հայաստանի Հանրապետություն սնդիկի ներմուծման կարգերը սահմանելու մասին» N 1510-Ն որոշումները:

Աղբավայրերի շահագործման ընթացքում մարդկանց առողջության և շրջակա միջավայրի վրա դրանց վնասակար ազդեցության կանխարգելման կամ հնարավորինս նվազեցման նպատակով ընդունվել է Կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի «Աղբավայրերի մոնիթորինգի իրականացման կարգը սահմանելու մասին» N 2105-Ն որոշումը: Որոշմամբ կարգավորվում է աղբավայրի և դրա սանիտարական պահպանման գոտու տարածքում մթնոլորտային օդի, հողի, ջրի աղտոտվածության վերաբերյալ անհրաժեշտ տվյալների հավաքագրումը, ինչի արդյունքում ստացված տվյալները հնարավորություն կտան գնահատելու աղբավայրը շահագործողի կողմից իրականացրած բնապահպանական միջոցառումների արդյունավետությունը և ըստ անհրաժեշտության կայացնելու խնդրի կարգավորմանն ուղղված որոշումներ:

Հայաստանում ամերիկյան համալսարանի Յակոբեան բնապահպանական կենտրոնի աջակցությամբ Շրջակա միջավայրի նախարարության կողմից իրականացվում են աշխատանքներ՝ ուղղված «Արտադրողի ընդլայնված պատասխանատվության համակարգի» իրավական հենքի ստեղծմանը՝ նպատակ ունենալով պատասխանատու դարձնել արտադրողին կամ ապրանք ներմուծողին ապրանքի՝ թափոն դառնալուց հետո ճակատագրի համար, ինչպես նաև խթանելով թափոնների տեսակավորված հավաքման, վերամշակման, վերօգտագործման ենթակառուցվածքների ներդրմանը, հանրության ներգրավվածության բարձրացմանը՝ թափոնների տեսակավորված հավաքման և վերամշակման թիրախներին հասնելու գործում:

2023 թվականի նոյեմբերի 22-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքը, ինչով երկարաձգվել է բացառապես էլեկտրական շարժիչով աշխատող տրանսպորտային միջոցների, մասնավորապես, մեծ, միջին և փոքր ավտոբուսների, մարդատար տրանսպորտային միջոցների, մոտոցիկլների և մոպեդների ներմուծման և (կամ) օտարման համար գործող ԱԱՀ-ից ազատման արտոնությունը: Արտոնության գործողության ժամկետ է սահմանվել մինչև 2026 թվականի հունվարի 1-ը:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2023 թվականի նոյեմբերի 24-ի որոշմամբ N134 սահմանվել է մաքսային արտոնության քվոտա՝ առանց մաքսատուրքի վճարման էլեկտրական շարժիչներով տրանսպորտային միջոցների ՀՀ տարածք ներմուծման համար: Արտոնության գործողության ժամկետ է սահմանվել մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Չնայած 2023 թվականին կատարված գործողություններին՝ ոլորտում արձանագրված խնդիրները շարունակում են առկա լինել: Մինչ օրս ձեռնարկված քայլերը բավարար չեն ոլորտի խնդիրների հաղթահարման համար, ինչի ուղղակի վկայությունն է այս խնդիրների՝ ինչպես 2023 թվականի ընթացքում, այնպես էլ տարիներ շարունակ առկայությունը: Հարկ է նկատել, որ արձանագրված խնդիրները առավել մտահոգիչ են դառնում դրանց տևականության տեսանկյունից: Ասվածի համատեքստում, թափոնների վերացման և կառավարման համար բավարար կազմակերպական և տեխնիկական պայմանների ապահովումը խիստ կարևոր է: Հարկ է նաև ընդգծել, որ թեև կենցաղային թափոնների տեսակավորման հարցում վերջին տարիներին լուրջ դրական տեղաշարժ ու միտում է

նկատվել[188], մասնավորապես՝ Երևան քաղաքում թափոնների տեսակավորման ամանների տեղադրման և դրանց հասանելիության ապահովման ուղղությամբ, կենցաղային թափոնների տեսակավորման խնդիրը 2023 թվականին շարունակել է առկա լինել ինչպես Երևանում կենցաղային թափոնների սահմանափակ տեսակների համար նախատեսված թափոնամանների առանձնացման, այնպես էլ Երևանից դուրս ոչ միայն թափոնների տեսակավորման ամանների բացակայության, այլև առհասարակ աղբամանների առկայության առնչությամբ: Ուստի, ողջ հանրապետությունում թափոնների տեսակավորման խնդիրը շարունակում է առկա լինել՝ դրա ոչ լրիվ և հատվածական իրականացմամբ, որոշ մասնագիտացված աղբամանների բացակայությամբ, ինչպես նաև բնակչության ոչ բավարար իրազեկվածությամբ պայմանավորված:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է՝

- ***էկոհամակարգի էկոլոգիական կարգավիճակի և դրա գործունեության վրա աղտոտման ազդեցությունը պատշաճ գնահատելու նպատակով Հայաստանում ներդնել մակերևութային ջրերի կենսաբանական մոնիթորինգի համակարգ՝ ապահովելով դրա համակարգային իրականացումը,***
- ***օրենսդրական փոփոխությունների միջոցով ստեղծել արտոնություններ տրամադրող ու տնտեսական խրախուսանքի այլ միջոցներ կիրառող ծրագիր (քաղաքականություն) այն տնտեսվարողների համար, ովքեր կներդնեն, կկիրառեն կամ կիրականացնեն առավելագույն անթափոն միջոցներ, մեխանիզմներ կամ տեխնոլոգիաներ, կամ կընտրեն դրանց այն տեսակները, որոնք էկոլոգիապես անվտանգ են և շրջակա միջավայրի վրա ունեն նվազագույն վնասակար ազդեցություն,***
- ***ստեղծել թափոնների տեսակավորման և վերամշակման գործուն, համապարփակ և կայուն համակարգ համապետական մակարդակով՝ ապահովելով դրա նկատմամբ արդյունավետ վերահսկողությունը:***

3. ՓՀԷԿ-երը և ջրային ռեսուրսների գերօգտագործումը

Ջրային էկոհամակարգերի պաշտպանությունն ու վերականգնումը կարևորագույն նշանակություն ունեն շրջակա միջավայրի պահպանության համար: Ջուրն ու դրա կայուն կառավարումը կազմում են Միավորված ազգերի կազմակերպության կայուն զարգացման 17 նպատակների առանցքը:

ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակ 6[189] *Մաքուր ջուր և սանիտարական պայմաններ*
Ապահովել բոլորի համար ջրի ու սանիտարական պայմանների հասանելիություն ➢ 6.1 Մինչև 2030 թ. ձեռք բերել անվտանգ և մատչելի խմելու ջրի համընդհանուր և հավասար հասանելիություն բոլորի համար ➢ 6.4 Մինչև 2030 թ. էականորեն մեծացնել ջրօգտագործման արդյունավետությունը բոլոր ոլորտներում և ապահովել քաղցրահամ ջրի կայուն ջրառը

[188] Հասանելի է https://greenyerevan.am/%d5%af%d5%a5%d5%b6%d6%81%d5%a1%d5%b2%d5%a1%d5%b5%d5%ab%d5%b6-%d5%a1%d5%b2%d5%a2%d5%ab-40-%d5%a8-%d5%ba%d5%b8%d5%ac%d5%ab%d5%a7%d5%a9%d5%ab%d5%ac%d5%a5%d5%b6%d5%a1%d5%b5%d5%ab%d5%b6-%d5%bf%d5%b8-2/, https://www.facebook.com/YerevanTesakavorum/posts/260954815487887 հղումներով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[189] Տե՛ս Կայուն զարգացման նպատակ 6, հասանելի է http://un.am/hy/p/sustainable-development-goal-6 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

և ջրամատակարարումը՝ լուծելու սակավաջրության խնդիրը և էականորեն կրճատել սակավաջրությունից տառապող մարդկանց թիվը

- 6.5 Մինչև 2030 թ. իրականացնել ջրային ռեսուրսների համապարփակ կառավարում բոլոր մակարդակներում, այդ թվում՝ համապատասխան դեպքերում, անդրսահմանային գործակցության միջոցով
- 6.6 Մինչև 2020 թ. պաշտպանել և վերականգնել ջրաէկոհամակարգերը, այդ թվում՝ լեռները, անտառները, ջրաճահճային տարածքները, գետերը, ջրաբեր շերտերը և լճերը
- 6.բ Սատարել և ուժեղացնել տեղական համայնքների մասնակցությունը ջրամատակարարման և ջրահեռացման կառավարման բարելավմանը

Հայաստանի Հանրապետությունում ջրային, այդ թվում՝ էկոհամակարգերի հետ կապված խնդիրները մշտապես առկա են. պատճառը ջրային ռեսուրսների գերօգտագործումն ու վատնումն է: Ջրային ռեսուրսների գերօգտագործման ու վատնման խնդիրը 2023 թվականի ընթացքում ևս առկա է եղել: Որպես ջրային ռեսուրսների գերօգտագործման հիմնական աղբյուր հանդես են գալիս ՓՀԷԿ-երն ու դրանց շահագործման ընթացքում թույլ տրվող խախտումները:

Ըստ Շրջակա միջավայրի նախարարության ներկայացրած տեղեկատվության՝ 2023 թվականի տվյալների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում շահագործվում է 10 հէկ, որից 7-ը («Միջազգային Էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ) դերիվացիոն, իսկ 3-ը («Քոնթուրգլոբալ Հիդրո կասկադ» ՓԲԸ)՝ ջրային համակարգերի վրա,

2) 192 փհէկ, որից 132-ը գետերի վրա, իսկ 60-ը՝ ջրային համակարգերի:

Տարիներ շարունակ արձանագրվում են խնդիրներ ջրօգտագործման թույլտվություններով տրված ջրաքանակների գերազանցման հետ կապված: Այս խնդիրների կիզակետում Եղեգիս գետի ծանրաբեռնվածության խնդիրն էր[190]: Եղեգիս գետի ծանրաբեռնվածության խնդիրը գրավել էր և՛ բնապահպանների, և՛ տեղի բնակչության, և՛ ոլորտի իրավասու մարմինների ուշադրությունը՝ հրատապ լուծումների պահանջով:

2023 թվականի ընթացքում ևս բնապահպանների, տեղի բնակչության ու համայնքի ներկայացուցիչների համատեղ հանդիպման[191] շրջանակներում բարձրացվել է Եղեգիս գետի ծանրաբեռնվածության հարցը, ի թիվս այլնի, առ այն, որ Եղեգիս գետի և նրա վտակների վրա գործում է 17 ՓՀԷԿ, իսկ 2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ էլեկտրաէներգիայի արտադրության համար տրված է ևս 5 լիցենզիա: Հանդիպման ընթացքում կրկին մտահոգիչ է համարվել գետի հոսքի ծանրաբեռնվածության աստիճանը (դերիվացիոն խողովակներով՝ 51.46 %-ով, նախատեսվող ՓՀԷԿ-երի շահագործման դեպքում՝ 76.69 %, ինչն արգելված է ՀՀ Ջրային օրենսգրքով):

Հանդիպմանը կողմերը մտահոգություն են բարձրացրել առ այն, որ փոքր ՀԷԿ-երի ճնշումը Եղեգիս գետի և իր վտակների վրա դարձել է սոցիալ-տնտեսական զարգացման, կենսապայմանների ու կենսապահովման վրա ազդող հիմնական գործոն: Վատացել են Եղեգիս գետի ջրի ֆիզիկաքիմիական ցուցանիշները, գետի սանիտարական վիճակը, վերացել է հանգստի գոտիների մի մասը, ամռանը չորացած գետի ափամերձ տարածքը

[190] Առավել մանրամասն տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի «2021 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» տարեկան հաղորդումը, «Շրջակա միջավայրի պահպանություն» բաժինը, հասանելի է https://ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով:

[191] Հասանելի է https://www.ecolur.org/hy/news/biodiversity/15094/ հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

կորցրել է կանաչ ծածկույթը, վատացել է միկրոկլիման: Ակտիվ բնակչությունը փորձել է պաշտպանել բարենպաստ պայմաններում ապրելու իր իրավունքները, սակայն բնակչության կարծիքը հաշվի չի առնվել: Ավելին, ահազանգել են առանց ջրօգտագործման թույլտվության ջրային ռեսուրսներից օգտվելու դեպքերի մասին:

Այս առնչությամբ հարկ է նկատել, որ Ջրային օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ի մասով սահմանվում են Հայաստանի Հանրապետությունում ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի կառավարման, օգտագործման և պահպանության հիմնական սկզբունքները, որոնց շարքում նախատեսվում է ազգային ջրային պաշարի ծավալների պահպանումը և ավելացումը, ջրօգտագործման թույլտվությունների միջոցով ջրօգտագործման կարգավորումը, էկոլոգիական թողքերի հաշվին ջրօգտագործողների պահանջների բավարարման արգելումը, ջրային ռեսուրսների կառավարման և պահպանման գործընթացում հասարակության մասնակցության և իրազեկության կարևորության ճանաչումը և այլն:

Ըստ Շրջակա միջավայրի նախարարությունից Մարդու իրավունքների պաշտպանին տրամադրած տեղեկությունների՝ Եղեգիս գետի սակավաջրության խնդրից ելնելով՝ Նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 28-ի N369-Ա հրամանով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խումբը 2021 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ընթացքում Եղեգիս գետի և դրա Այսաս, Արտաբույնք, Կարակայա, Քարագլուխ վտակների վրա կառուցված թվով 18 ՓՀԷԿ-ում կատարած ուսումնասիրությունների արդյունքում արձանագրել է մի շարք խախտումներ ու թերություններ: Այդ արդյունքներով պայմանավորված՝ 2021 թվականի ընթացում Վայոց ձորի մարզի Եղեգիս գետի և նրա վտակների վրա կառուցված 18 ՓՀԷԿ-երից վերանայվել է 9 ՓՀԷԿ-երի ջրօգտագործման թույլտվություն՝ ղեկավարվելով Սևանա լիճ «Արփա–Սևան» թունել N2-ով տեղափոխման, ոռոգման պահանջարկի բավարարման և Եղեգիս գետում բնապահպանական թողքի ապահովման առաջնահերթություններով:

Ըստ Շրջակա միջավայրի նախարարությունից ստացված տեղեկատվության՝ այս խնդիրներից ելնելով ու ջրային ռեսուրսների կառավարման առնչությամբ օրենսդրական կարգավորումների բարելավման նպատակով՝ ՀՀ ջրային օրենսգրքում ամրագրվել են ջրօգտագործման թույլտվության վերանայման վերաբերյալ կարգավորումներ:

Նույն օրենսգրքի 33.1-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ ջրօգտագործման թույլտվությունները վերանայվում են, ի թիվս այլնի, էկոլոգիական թողքի վերահաշվարկի անհրաժեշտություն առաջանալու կամ ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի նախաձեռնությամբ ջրօգտագործման թույլտվությամբ տրված ջրառի ծավալների նվազեցում նախատեսվելու դեպքում՝ ջրօգտագործման թույլտվությամբ տրված ջրառի ծավալները տվյալների առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի միջոցով ստացված ջրառի փաստացի ծավալներին համապատասխանեցնելու նպատակով:

Ջրային օրենսգրքի փոփոխությունների արդյունքում օրենսգրքի 37-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրվել է, որ ջրօգտագործման և էկոլոգիական թողքի փաստացի չափաքանակները հաշվառելու համար Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կողմից, նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի համաձայն, ջրօգտագործման թույլտվության մեջ ամրագրվում է տվյալների առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքեր տեղադրելու պահանջը (բացառությամբ կրկնակի (երկրորդային) ջրօգտագործման դեպքի):

Շրջակա միջավայրի նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ 2022 և 2023 թվականների ընթացքում 2020 թվականի սեպտեմբերի 28-ի N369-Ա հրամանով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի շրջանակներում փիէկ-երում և հէկ-երում ուսումնասիրություններ չեն կատարվել, Եղեգիս գետի վրա տեղակայված հիդրոէլեկտրակայանների ջրօգտագործման թույլտվություններ չեն վերանայվել:

Հարկ է նկատել, որ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի պարզաբանումների համաձայն՝ 2023 թվականի ընթացքում Եղեգիս գետի վրա գտնվող ՓՀԷԿ-երի շահագործման շրջանակներում ստուգումներ չեն իրականացվել:

Ըստ նույն տեսչական մարմնի՝ 2023 թվականի ընթացքում ՓՀԷԿ-երի և ՀԷԿ-երի շահագործման շրջանակներում արված ստուգումների արդյունքում պարզվել է, որ բացակայում են ձկնապաշտպան կառույցները, ձկնանցարանները, իրականացվել է ավել ջրառ: Հայտնաբերված խախտումների համար իրավախախտների նկատմամբ կիրառվել են վարչական տուգանքներ և տրվել են խախտումները վերացնելու մասին հանձնարարականներ:

Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը 2023 թվականին ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության ուղղությունով արձանագրել է թվով 161 իրավախախտման դեպք (2022 թվականին՝ 99), որոնցից թվով 112-ով կիրառվել է վարչական տույժ (2022 թվականին՝ 80) և նշանակվել է 45,850,000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք (2022 թվականին՝ 22,230,000 ՀՀ դրամ) և 33 դեպքով հաշվարկվել է շրջակա միջավայրին պատճառված վնաս՝ 1,638,276,029 ՀՀ դրամի չափով (2022 թվականին՝ 94,974,272 ՀՀ դրամ), որից 378,631 ՀՀ դրամը ընդերքօգտագործման ստուգումների արդյունքում[192]:

Ըստ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2023 թվականի տարեկան հաշվետվության[193]՝ ջրօգտագործում իրականացնող ընկերությունների մոտ առավել հաճախ արձանագրված խախտումներից են առանց ջրօգտագործման թույլտվության ջրառը, ջրօգտագործման թույլտվությունների պայմանների խախտումները, ջրօգտագործման թույլտվություններ ստանալու, ժամկետները լրացած ջրօգտագործման թույլտվությունները սահմանված կարգով երկարաձգելու և անվանափոխվելուց հետո ձևակերպելու, ջրաչափերի տեղադրման, կապարակնքման գործունեությունը ջրային օրենսգրքի պահանջներին համապատասխանեցնելու համար միջոցներ չձեռնարկելը:

Ներկայացված խնդրի համատեքստում կարևոր է արձանագրել, որ ՀՀ ջրային օրենսգրքի 30.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ նոր կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների համար ջրօգտագործման թույլտվությունների հայտերը մերժվում են նաև, եթե փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցումը նախատեսվում է այն գետերի վրա՝

ա. որոնցում առկա են Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կամ տարածքին բնորոշ՝ էնդեմիկ ձկնատեսակների ձվադրավայրեր,

բ. որոնց ծանրաբեռնվածությունը դերիվացիոն խողովակներով 40 տոկոս և ավելի է,

---

[192] Տե՛ս Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2023 թվականի տարեկան հաշվետվությունը, հասանելի է https://www.ecoinspect.am/site/uploads/files/%D5%80%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/6261a39bf552b28ec423360fdfe3aad9296297549fee65df097fc002a79935d5.pdf?fbclid=IwAR2dPTQFI_wDWdeDz_tXqHf8KN6Ygnw798tbwThQQEuN-xvZh3U0Qzh7JAM հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[193] Տե՛ս նույն տեղում:

գ. որոնց վրա կան ջրաչափական դիտակետեր և նախատեսվող ջրառի և ջրահեռացման նիշերը շրջանցում են ջրաչափական դիտակետերը:

ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 19-ի «Նոր կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների ջրօգտագործման թույլտվությունների հայտերի մերժում՝ նախատեսված Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կամ տարածքին բնորոշ՝ էնդեմիկ ձկնատեսակների ձվադրավայրեր հանդիսացող կամ դերիվացիոն խողովակներով 40 տոկոս և ավելի ծանրաբեռնված գետերի ցանկը սահմանելու մասին» N 488-Ն որոշմամբ 25 գետ, այդ թվում՝ Եղեգիս գետը, ընդգրկված է քննարկվող ցանկում:

ՀՀ ջրային օրենսգրքի 30.1-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ նոր կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների համար ջրօգտագործման թույլտվությունների հայտերը մերժվում են նաև, եթե փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցումն իրականացվում է, ի թիվս այլնի, գետահատվածներում, որտեղ առկա են սողանքային տարածքներ:

Հարկ է ընդգծել, որ 2023 թվականի ընթացքում, Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, Հայաստանի Հանրապետության սողանքավտանգ տարածքների ցանկը սահմանված չի եղել: ՀՀ վարչապետի 2022 թվականի սեպտեմբերի 26-ի N 1099-Ա որոշմամբ «Հայաստանի Հանրապետության սողանքավտանգ տարածքների ցանկը սահմանելու մասին» արտակարգ իրավիճակների նախարարի հրամանի նախագծի մշակման ժամկետ է սահմանվել 2024թ. հուլիսի 3-րդ տասնօրյակը:

2023 թվականի ընթացքում առկա խնդիրները հիմք են տալիս փաստելու, որ ջրերի գերօգտագործման խնդիրը շարունակական է, իսկ արձանագրվող դեպքերի թիվը չի զիջում նախորդ տարիների դեպքերի թվին: Ասվածը ևս մեկ անգամ հիմնավորում է այն, որ ՓՀԷԿ-երի շահագործումն ու ջրօգտագործումը պետք է ենթարկվի համակարգային և պարբերական մշտադիտարկման ու պատշաճ վերահսկողության:

Կարևոր համարելով 2023 թվականի ընթացքում կատարված աշխատանքները՝ այնուամենայնիվ, Պաշտպանն ընդգծում է, որ անհրաժեշտ է ուժեղացնել ՓՀԷԿ-երի շահագործման նկատմամբ վերահսկողությունը, որպեսզի կանխվեն և վերացվեն դրանց շահագործման հետևանքով առաջացող ջրային ռեսուրսների գերօգտագործումն ու էկոհամակարգերի հետ կապված խնդիրները:

4. Հանքավայրերի շինարարության և շահագործման հետ կապված խնդիրներ

Շրջակա միջավայրի վրա հանքարդյունաբերության բացասական ազդեցությունը հանքարդյունաբերական գործունեություն իրականացնող երկրներում ամենատարածված խնդիրներից է[194]: Հանքարդյունաբերության ուղղակի ազդեցության օբյեկտն են կազմում շրջակա միջավայրն ու բնակչության առողջությունը: Այն բացասաբար է անդրադառնում շրջակա միջավայրի, մասնավորապես՝ օդի, ստորերկրյա և մակերևութային ջրերի, ծովային և առափնյա տարածքների որակի վրա: Ամբողջ աշխարհում հանքարդյունաբերության ոլորտի լրջագույն խնդիրներից է դրա

[194] Տե՛ս «Տնտեսական և սոցիալական հարցերի կայուն զարգացման վարչություն», հասանելի է https://sdgs.un.org/partnerships/sustainable-development-mining-activities հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

անհամապատասխանությունը շրջակա միջավայրի չափանիշներին՝ պատշաճ մշտադիտարկման ու իրավակիրառման բացի հետևանքով:

Այս ամենը նկատի ունենալով՝ մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրվել է հանքարդյունաբերական գործունեության շրջանակներում անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկելու, այդ թվում՝ համապատասխան օրենսդրական կարգավորումներ ու կառուցակարգեր նախատեսելու միջոցով հանքարդյունաբերական գործունեության՝ շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության նվազեցման ու նույն գործունեության համատեքստում հանրային մասնակցության ապահովման անհրաժեշտությունը:

Կայուն զարգացման համաշխարհային գագաթաժողովի 2002 թվականի օգոստոսի 26-սեպտեմբերի 4-ի A/CONF.199/20 զեկույց[195]

Կայուն զարգացման համատեքստում հանքարդյունաբերության, օգտակար հանածոների և մետաղների ներդրման խթանումը ներառում է գործողություններ բոլոր մակարդակներում.

(ա) խթանել գործադրվոց ջանքերը՝ նկատի ունենալով հանքարդյունաբերության, օգտակար հանածոների և մետաղների ազդեցությունն ու օգուտը բնապահպանական, տնտեսական, առողջապահական և սոցիալական, այդ թվում՝ աշխատողների առողջության ու անվտանգության հարցերում,

(բ) ապահովել շահագրգիռ պետությունների, միջկառավարական կազմակերպությունների, հանքարդյունաբերական ընկերությունների և աշխատողների ու այլ շահագրգիռ կողմերի միջև ազգային և միջազգային մակարդակներում համագործակցությունն ու առկա գործունեության շարունակականությունը՝ խթանելով թափանցիկությունն ու հաշվետվողականությունը հանքարդյունաբերության և օգտակար հանածոների կայուն զարգացման համատեքստում,

(գ) ընդլայնել շահագրգիռ կողմերի մասնակցությունը, ներառյալ՝ տեղական և բնիկ համայնքների ու կանանց՝ ուղղված օգտակար հանածոների, մետաղների և հանքարդյունաբերության զարգացման գործում ակտիվ դերակատարության ապահովմանը հանքարդյունաբերության գործունեության ողջ ընթացքում:

ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 2012 թվականի հուլիսի 27-ի A/RES/66/288 բանաձև

227. Հանքարդյունաբերական գործունեության շրջանակներում պետք է առավելագույնի հասցվեն դրա սոցիալ-տնտեսական օգուտները և արդյունավետորեն հասցեավորվեն դրա սոցիալական ու շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունն ու հետևանքները: Ուստի, կայուն զարգացման նպատակով հանքարդյունաբերության ոլորտի արդյունավետ կառավարումն ու կարգավորումը անհրաժեշտություն է:

228. Կարևոր են հանքարդյունաբերության ոլորտում խիստ ու արդյունավետ օրենսդրական կարգավորումները, քաղաքականություններն ու պրակտիկան՝ ուղղված

[195] Տե՛ս Կայուն զարգացման համաշխարհային գագաթաժողովի 2002 թվականի օգոստոսի 26-սեպտեմբերի 4-ի A/CONF.199/20 զեկույցը, հասանելի է https://digitallibrary.un.org/record/478154?v=pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

սոցիալ-տնտեսական օգուտների առաջացմանն ու սոցիալական ու բնապահպանական ազդեցությունը նվազեցնելու նպատակով արդյունավետ երաշխիքների ներառմանը, ինչպես նաև կենսաբազմազանության ու էկոհամակարգերի պահպանմանը, ներառյալ հանքարդյունաբերական գործունեության ավարտին հաջորդող փուլում: Պետությունները պետք է խթանեն գործընթացի հաշվետվողականությունն ու թափանցիկությունը, ինչպես նաև համապատասխան կառուցակարգերի արդյունավետությունը՝ ուղղված ապօրինի ֆինանսական հոսքերի կանխմանը[196]:

2023 թվականի ընթացքում ևս հանքավայրերի շինարարության ու շահագործման հետ կապված խնդիրները շարունակել են արդիական մնալ և գտնվել են Մարդու իրավունքների պաշտպանի մշտական ուշադրության ներքո:

4.1 Ամուլսարի հանքավայրի շահագործման հետ կապված խնդիրներ

Տարիներ շարունակ քաղաքացիական հասարակությունը, ներառյալ՝ հասարակական կազմակերպություններն ու անհատ բնապահպանները, բարձրացնում է Ամուլսար լեռան վրա կատարվող ոսկու հանքի շինարարական աշխատանքների և հետագայում հանքավայրի շահագործման հետևանքով շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության խնդիրը: Մարդու իրավունքների պաշտպանին այս հարցի առնչությամբ բազմիցս բողոքներ են հասցեագրել հանքավայրի շրջակա բնակավայրերի բնակիչները, հանքի շահագործման համար թույլտվություն ստացած ընկերության աշխատակիցներն ու ընկերությունը: Բողոքներից բացի, հարցի կարևորությունից ու հանրային հետաքրքրությունից ելնելով՝ Մարդու իրավունքների պաշտպանն իրականացրել է քննարկվող խնդրի ամբողջական դիտարկում իր սահմանադրական կարգավիճակի հնարավորությունների շրջանակներում և իր իրավասությանն առնչվող մասով:

Խնդրի առանցքն է կազմում «Լիդիան Արմենիա» կազմակերպության կազմած «Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի հանքարդյունահանման համալիր փոփոխված նախագծի՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում»» փաստաթղթին տրված դրական եզրակացությունն առոչինչ ճանաչելու և հանքավայրի շինարարական աշխատանքները կասեցնելու հարցը. մի շարք բնապահպաններ ու փորձագետներ պնդում են, որ Ամուլսարի հանքի շահագործումը լրջագույն էկոլոգիական վտանգների առաջացման սպառնալիք է: Ավելին, ըստ վերջինների՝ պետական փորձաքննական եզրակացությունը տրվել է առանց փորձաքննության լիարժեք իրականացման[197]:

Հարկ է նկատել, որ Ամուլսարի հանքավայրի շահագործման բնապահպանական և սոցիալական հետևանքների վերաբերյալ հետազոտությունները բազմաթիվ են: Դրանք ուղղված են, ի թիվս այլնի, հանքավայրի շահագործման բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման վերլուծության ու կենսաբազմազանության վրա դրա շահագործման ազդեցության[198], հանքավայրի շահագործման սոցիալական հետևանքների վերաբերյալ ազդակիր համայնքների բնակչության ընկալումների ու

[196] Տե՛ս ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 2012 թվականի հուլիսի 27-ի գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված բանաձևը, հասանելի է https://www.un.org/en/development/desa/population/migration/generalassembly/docs/globalcompact/A_RES_66_288.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[197] Հասանելի է https://econews.am/?p=8721&l=am,%20https://www.ecolur.org/hy/news/mining/--/10594/ հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[198] Տե՛ս «Կենսաբազմազանության փոխհատուցումը և Հայաստանում Ամուլսարի ոսկու ծրագրի «Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում» փաստաթղթի այլ խնդիրները», 2019 թվականի հունվար, հասանելի է https://bankwatch.org/wp-content/uploads/2019/01/Amulsar.-Report-2-Biodiversity-min.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

գնահատականների[199], Ամուլսարի հանքավայրի շահագործման խնդրի շուրջ տիրող իրավիճակի, շրջակա միջավայրի վրա դրա հնարավոր ազդեցության և 2020 թվականի ընթացքում խնդրի շրջանակներում տեղի ունեցած իրադարձությունների[200], մարդու իրավունքների և շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից խնդրահարույց լինելու[201] պարզմանը:

Ավելին, Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման թույլտվության գործընթացում հնարավոր չարաշահումների վերաբերյալ քննվող քրեական գործի շրջանակներում Ամուլսարի հանքավայրի շահագործման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ու դրա հնարավոր ռիսկերի ուսումնասիրության նպատակով դեռևս 2019 թվականին կատարվել էր Ամուլսարի հանքավայրի շահագործման ծրագրի միջազգային բնապահպանական փորձաքննություն, որով Ամուլսարի հանքի շահագործման նախագծում արձանագրվել են մի շարք խախտումներ, թերություններ, թերհաշվումներ[202]: Փորձաքննության արդյունքների հրապարակմանը հաջորդել են Ամուլսարի հանքավայրի շահագործման դեմ պայքարող բնապահպանների ու ակտիվիստների բողոքի ակցիաներ[203]:

Այս կապակցությամբ դեռևս 2019 թվականին ՄԱԿ-ի խաղաղ հավաքների և միավորումների ազատության հարցերով հատուկ զեկուցողը բնական ռեսուրսների շահագործման դեմ բողոքի ակցիաների առնչությամբ իր դիտարկումներ է ներկայացրել, որոնք տեղ են գտել վերջինիս՝ Հայաստանի վերաբերյալ զեկույցում[204]: Հատուկ զեկուցողն այցելել է Ամուլսար հանքավայրի հարող տարածք ու լսել հանքավայրի հասանելիությունը արգելափակած բողոքի ակցիա անող անձանց մտահոգությունները:

ՄԱԿ-ի խաղաղ հավաքների և միավորումների ազատության հարցերով հատուկ զեկուցողի՝ Հայաստանի վերաբերյալ 2019 թվականի մայիսի 13-ի զեկույց

[199] Տե՛ս «Լիդիան Արմենիա» ընկերության կողմից Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման վերաբերյալ սոցիալական հետևանքների գնահատականը ազդակիր համայնքների բնակչության կողմից» սոցիոլոգիական հետազոտությունը, 2018 թվականի հոկտեմբերի 2-6, հասանելի է https://bankwatch.org/wp-content/uploads/2019/01/Amulsar.-Report-1-Social-min.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[200] Հասանելի է https://bankwatch.org/wp-content/uploads/2021/01/RAW-DEAL.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[201] Հասանելի է https://www.ecolur.org/hy/news/amulsar/14101/ հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[202] Առավել մանրամասն տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի «2021 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» տարեկան հաղորդումը, «Շրջակա միջավայրի պահպանություն» բաժինը, հասանելի է https://ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
Հասանելի է https://www.ecolur.org/hy/news/amulsar/lydians-eia-is-incomplete-elard/11500/ հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[203] Ամուլսար լեռան վրա կատարվող ոսկու հանքի շինարարական աշխատանքների և հետագայում հանքավայրի շահագործման հետևանքով շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության խնդրի, այդ թվում՝ փորձաքննության արդյունքների հրապարակմանը հաջորդած Ամուլսարի հանքավայրի շահագործման դեմ պայքարող բնապահպանների ու ակտիվիստների բողոքի ակցիաների, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների՝ Ամուլսարի հանքի շահագործման վերաբերյալ բազմակողմանի ուսումնասիրություն իրականացնելու նպատակով հարակից համայնքների բնակիչների և բնապահպան մասնագետների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ հանդիպումների և դրանց արդյունքների, Ամուլսարի հանքի շահագործմանը հակընդդեմ դիրքորոշումների, հանքավայրը շահագործող ընկերության աշխատակիցների աշխատանքային իրավունքի իրացման խոչընդոտների վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի «2021 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» տարեկան հաղորդումը, «Շրջակա միջավայրի պահպանություն» բաժինը, հասանելի է https://ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[204] Տե՛ս ՄԱԿ-ի խաղաղ հավաքների և միավորումների ազատության հարցերով հատուկ զեկուցողի՝ Հայաստանի վերաբերյալ զեկույցը, 2019 թվականի մայիսի 13, էջ 10, հասանելի է https://digitallibrary.un.org/record/3807221/files/A_HRC_41_41_Add-4-EN.pdf?ln=en հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

77. Հատուկ զեկուցողը կարևորում է կառավարության՝ համայնքների հետ խորհրդակցումը՝ շահագործման սոցիալական և շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության, ինչպես նաև դրանից բխող օգուտների վերաբերյալ: Զեկույցում արձանագրվում է, որ ստեղծված իրավիճակը շտկելու համար առաջին քայլը, որ կառավարությունը պետք է ձեռնարկի՝ խորհրդատվություններ անցկացնելն է՝ հավաստիանալու, որ այս ծրագրերը համապատասխանում են գործարարության և մարդու իրավունքների ուղենիշային սկզբունքներին:

Հարկ է արձանագրել նաև, որ Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման թույլտվության գործընթացում հնարավոր չարաշահումների վերաբերյալ քննվող քրեական գործով վարույթը կարճվել է: Սակայն, ըստ Քննչական կոմիտեի՝ նախաքննության ընթացքում բացահայտվել է, որ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացի կարգավորման իրավական ընթացակարգում առկա են թերություններ, ինչը վերացնելու նպատակով նույն քրեական գործի շրջանակներում համապատասխան փաստաթղթեր են ուղարկվել նաև ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն[205]:

Ըստ Շրջակա միջավայրի նախարարության պարզաբանումների՝ նշված խնդիրները ևս նկատի ունենալով՝ 2023 թվականի ընթացքում համակարգային փոփոխություններ են կատարվել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում, ի թիվս այլնի, վերանայվել են սկզբունքային նշանակություն ունեցող հասկացությունները:

Ներկայացվածից բացի, դեռևս 2018 թվականի ընթացքում կատարված տեսչական ստուգումների արդյունքում արձանագրվել են շինարարական աշխատանքների ընթացքում օրենսդրության պահանջների և հանքավայրերի շահագործման մի շարք խախտումներ[206]: Ստուգումների արդյունքներն ամրագրող վարչական ակտը բողոքարկվել է դատական կարգով: Վարչական դատարանը 2020 թվականի փետրվարի 26-ի վճռով «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության հայցը բավարարել է մասնակի՝ անվավեր ճանաչել ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 24.08.2018թ. թիվ 30 ստուգման ակտի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ կետերը և ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի վարչական բողոքը մերժելու մասին 15.11.2018թ. թիվ 30/1 որոշումը, հայցը մնացած մասով՝ մերժել:[207]

Դեռևս 2020 թվականին Մարդու իրավունքների պաշտպանը ուղղակի հարցադրումներ է արել Շրջակա միջավայրի նախարարությանը Ամուլսարի հանքավայրի շահագործման, ինչպես նաև դրա՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նոր գնահատման իրականացման անհրաժեշտության վերաբերյալ Շրջակա միջավայրի

[205] Առավել մանրամասն տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի «2021 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» տարեկան հաղորդումը, «Շրջակա միջավայրի պահպանություն» բաժինը, հասանելի է https://ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով:

[206] Մանրամասն տե՛ս «2018 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» տարեկան հաղորդումը, էջեր 204-205, հասանելի է https://ombuds.am/images/files/8f03a4f279d0491fd510fca443f8f269.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[207] Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 26.02.2020 թվականի վճիռը բողոքարկվել է Վերաքննիչ վարչական դատարան, որն էլ իր 2021 թվականի հուլիսի 29-ի վճռով որոշել է Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 26.02.2020 թվականի վճիռը թողնել անփոփոխ:
Տե՛ս Վարչական դատարանի 2020 թվականի փետրվարի 26-ի թիվ ՎԴ/11628/05/18 վարչական գործով կայացված վճիռը, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

նախարարության դիրքորոշումը պարզելու նպատակով, որին ի պատասխան՝ նախարարությունը ներկայացրել է 2019 թվականին Վարչապետի աշխատակազմին ուղղված իր գրությունը: Գրության մեջ արտացոլված են «Լիդիան Արմենիա» ՓԲԸ փաստաթղթերի (այդ թվում՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության) վերաբերյալ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի, պետական կառավարման լիազոր մարմինների, Elard ու TRC ընկերությունների դիրքորոշումները, որոնցով արձանագրվում են «Լիդիան Արմենիա» ՓԲԸ փաստաթղթերի (այդ թվում՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության) վերաբերյալ մի շարք խնդիրներ: Նշված գրությամբ Շրջակա միջավայրի նախարարությունը այդ դիրքորոշումների հիման վրա խնդրում է Վարչապետին ստուգումներ իրականացնելու վերաբերյալ հանձնարարական տալ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին[208]:

Մինչդեռ, ըստ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի պարզաբանումների՝ ինչպես 2019-2022 թվականներին, այնպես էլ 2023 թվականի ընթացքում, տեսչական մարմինը Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրում ստուգումներ չի իրականացրել:

Հարկ է նկատել, որ Գնդեվազի մի շարք բնակիչներ արդեն 8 տարուց ավելի դատարանում վիճարկում են ՀՀ Վայոց Ձորի մարզի Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի նախագծին դրական եզրակացություն տալը: Գործը ներկայում գտնվում է դատաքննության փուլում[209]:

Ջերմուկ խոշորացված համայնքի ավագանին 2018 թվականի դեկտեմբերի 18-ին որոշում է ընդունել, որով հավանություն է տվել համայնքի բնակիչների կողմից համայնքի ավագանուն ներկայացրած կոլեկտիվ հանրագրում նշված «Ջերմուկ համայնքն էկո-տնտեսական տարածք դարձնելու և համայնքում մետաղական հանքարդյունաբերությունն արգելելու վերաբերյալ» առաջարկությանը: Բնակիչները, ի թիվս այլնի, հանրագրում նշել էին, որ Ամուլսարում ոսկու արդյունահանմանը դրական եզրակացություն տալու հետ մեկտեղ մինչև 2016 թվականը Ջերմուկը չի համարվել Ամուլսարի ծրագրի ազդակիր, իսկ 2016 թվականին ազդակիր հայտարարվելուց հետո էլ այնտեղ պատշաճ կարգով չեն կազմակերպվել հանրային լսումներ[210]: 2023 թվականի ընթացքում ևս Ջերմուկ համայնքը բարձրացրել է հանրային լսումների իրականացման հարցը: Մասնավորապես, 2023 թվականի մարտի 17-ին Ջերմուկի համայնքապետի ու ավագանու անդամների հետ հանդիպման ժամանակ Վայոց ձորի մարզի Ջերմուկ խոշորացված համայնքի բնակիչները պահանջել են Ամուլսարի ծրագրի վերաբերյալ նոր քննարկում կազմակերպել[211]:

2021 թվականին «Էկոլուր» տեղեկատվական հասարակական կազմակերպությունն ու «CEE Bankwatch Network» ՀԿ-ների միջազգային ցանցը բողոք էին ներկայացրել Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին Բեռնի կոնվենցիայի քարտուղարություն այն կապակցությամբ, որ Ամուլսարում ոսկու հանքի ծրագիրը խախտում է կոնվենցիայով Հայաստանի ստանձնած պարտավորությունները:

---

[208] Առավել մանրամասն տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի «2021 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» տարեկան հաղորդումը, «Շրջակա միջավայրի պահպանություն» բաժինը, հասանելի է https://ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով:

209 Տե՛ս Վարչական վերաքննիչ դատարանի 2015 թվականի հունիսի 12-ի թվի ՎԴ/1049/05/15 վարչական գործը:

210 Հասանելի է https://www.ecolur.org/hy/news/amulsar/-/10701/, http://www.jermuk.am/upload/DocFlow/Council/Th18122715383371823_100001.pdf հղումներով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

211 Հասանելի է https://www.ecolur.org/hy/news/amulsar/14777/ հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին Բեռնի կոնվենցիա

Հոդված 1.

1. Կոնվենցիան նպատակ է հետապնդում ապահովել վայրի ֆլորայի ու ֆաունայի և նրանց բնական միջավայրերի պահպանությունը՝ հատուկ կարևորելով այն տեսակները և բնական միջավայրերը, որոնց պահպանման համար անհրաժեշտ է համագործակցություն մի քանի պետությունների միջև, ինչպես նաև՝ խթանել նման համագործակցությունը:

Հոդված 3.

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է ձեռնարկի քայլեր վայրի ֆլորայի, վայրի ֆաունայի և բնական միջավայրերի պահպանությանն ուղղված ազգային քաղաքականությունը խթանելու համար՝ հատուկ ուշադրություն դարձնելով վտանգված և խոցելի, հատկապես տեղական տեսակներին և վտանգված բնական միջավայրերին՝ Կոնվենցիայի դրույթներին համաձայն:

Հոդված 4.

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է ձեռնարկի համապատասխան և անհրաժեշտ օրենսդրական ու վարչական միջոցներ՝ վայրի ֆլորայի ու ֆաունայի տեսակների բնական միջավայրերի, հատկապես Կոնվենցիայի 1-ին և 2-րդ հավելվածներում նշված տեսակների, և վտանգված բնական միջավայրերի պահպանությունն ապահովելու նպատակով:

2. Պայմանավորվող կողմերն իրենց քաղաքականությունը ծրագրելիս ու մշակելիս պետք է հաշվի առնեն նախորդ կետում սահմանված՝ պաշտպանության ենթակա տարածքների պահպանման պահանջները՝ նման տարածքների վատթարացումից խուսափելու կամ այն հնարավորինս նվազեցնելու համար:

3. Պայմանավորվող կողմերը պարտավորվում են հատուկ ուշադրություն դարձնել 2-րդ և 3-րդ հավելվածներում նշված չվող տեսակների համար կարևոր և, ըստ միգրացիայի ուղիների, համապատասխանորեն տեղաբաշխված տարածքների պահպանությանը: Նման տարածքներին են պատկանում ձմեռելու, հանգրվանելու, կերակուր հայթայթելու, բազմացման և մազաթափման համար նախատեսված տարածքները:

4. Պայմանավորվող կողմերը պարտավորվում են պատշաճ կերպով համակարգել իրենց ջանքերը սույն հոդվածում հիշատակված բնական միջավայրերի պահպանության համար, երբ դրանք գտնվում են սահմանամերձ գոտիներում:

Նույն բողոքում բարձրացված է այն հարցը, թե ինչպես է ՀՀ կառավարությունն անտեսել Ամուլսարի ոսկու հանքի ծրագրի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականում առկա ապացույցները, որոնք մատնանշում էին էմերալդ բնապահպանական հատուկ հետաքրքրություն ներկայացնող թեկնածու երեք տարածքների (ԲՀՀՏ)՝ Ջերմուկի, Գորայքի և Սևանա լճի բուսական և կենդանական աշխարհների վրա զգալի ազդեցությունները: Ամուլսարի տարածքը ներառված է Բեռնի

կոնվենցիայով նախատեսված «Էմերալդ» գոտում՝ այսինքն՝ կենսաբազմազանության առումով արժեքավոր և պաշտպանության ենթական տարածք է[212]:

Էմերալդ ցանցը հատուկ պահպանության ենթակա տարածքների էկոլոգիական ցանց է: Ցանցի ներդնումը Բեռնի կոնվենցիայի համատեքստում նախաձեռնել է Եվրոպայի Խորհուրդը Բեռնի կոնվենցիայի Մշտական կոմիտեի 1989 թվականի N 16 հանձնարարականի ընդունմամբ[213]:

Բեռնի կոնվենցիայի Մշտական կոմիտեի 1989 թվականի հունիսի 9-ի N 16 հանձնարարական[214]

Անհրաժեշտ է՝

1. քայլեր ձեռնարկել հատուկ պահպանության հետաքրքրություն ներկայացնող տարածքներ նշանակելու համար՝ ապահովելու համար, որ պահպանության անհրաժեշտ և համապատասխան միջոցներ են ձեռնարկվում իրենց տարածքում կամ իրենց պատասխանատվության տակ գտնվող յուրաքանչյուր տարածքի համար, երբ այդ տարածքը համապատասխանում է հետևյալ պայմաններից մեկին կամ մի քանիսին.

ա. այն էապես նպաստում է վտանգված տեսակների, էնդեմիկ տեսակների կամ Կոնվենցիայի I և II հավելվածներում թվարկված տեսակների գոյատևմանը.

բ. այն ապահովում է տեսակների զգալի քանակությունն ու բարձր բազմազանությունը տարածքում կամ աջակցում է կարևոր նշանակություն ունեցող տեսակներին.

գ. այն պարունակում է վտանգված կենսամիջավայրերի կարևոր և/կամ ներկայացուցչական նմուշ.

Այս կապակցությամբ 2021 թվականին Բեռնի կոնվենցիայի Բյուրոն վերահաստատել է իր հանձնարարականը՝ ընդգծելով, որ անհրաժեշտ է կասեցնել ցանկացած զարգացում, որը կարող է բացասաբար ազդել Կոնվենցիայով պաշտպանվող կենսամիջավայրերի և տեսակների վրա, անկախ նրանից դա վերաբերում է «Էմերալդ» ցանցի տարածքներին, թե՞ ոչ: Հանձնարարականով մեկ անգամ ևս ՀՀ իշխանություններին ներկայացվել է այնպիսի զեկույց ներկայացնելու խնդրանք, որը մասնավորապես կարձագանքի Ամուլսարի ոսկու հանքի խնդրին: Բյուրոն հիշեցրել է, որ «Էմերալդ» ցանցի ներքո ստանձնած պարտավորությունները գոյություն ունեն ինչպես թեկնածուների, այնպես էլ հաստատված տարածքների համար և որ իշխանությունները պետք է հետևեն Մշտական հանձնաժողովի թիվ 208 (2019) հանձնարարականին՝ «Էմերալդ» ցանցի տարածքների էկոլոգիական բնույթի փոփոխությունները հայտնաբերելու, զեկուցելու, գնահատելու և արձագանքելու վերաբերյալ: Նրանք պետք է հարգեն «Էմերալդ» ցանցի իրական շահերը: Բյուրոն նաև խրախուսել է իշխանություններին գործընթացում ներգրավել բոլոր համապատասխան շահագրգիռ կողմերին: Այս մասին նշված է Բեռնի կոնվենցիայի քարտուղարության կողմից 2021թ-ի ապրիլի 30-ին ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանն ուղղված նամակում[215]:

[212] Տե՛ս Ամուլսարի ոսկու հանքավայրի ծրագիրը և դրա ազդեցությունը Էմերալդ ցանցի տեղամասերի վրա, հասանելի է https://rm.coe.int/other-complaint-armenia-amulsar-gold-project-comp-report/1680a1db9b հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[213] Հասանելի է https://www.coe.int/en/web/bern-convention/emerald-network հղումով:

[214] Տե՛ս «Եվրոպական վայրի բնության պահպանման մասին կոնվենցիա և բնական միջավայրեր», հասանելի է https://search.coe.int/bern-convention/Pages/result_details.aspx?ObjectId=0900001680746c25, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[215] Հասանելի է https://rm.coe.int/report-1st-meeting-of-the-bureau-14-15-april-2021/1680a24efe հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Հարկ է նշել, որ Կառավարությունը, սրան ի պատասխան, նշել է, որ իրականացվում է հնարավոր տարածքների սահմանների հստակեցում և ճշգրտում, փորձագետների ուսումնասիրություններից հետո նախարարությունը Կոնվենցիայի Քարտուղարությանը պաշտոնապես կներկայացնի «Էմերալդ» ցանցի թեկնածու տարածքների օպտիմալացված ցանկը[216]:

Ավելին, 2023 թվականի նոյեմբերի 27-ից դեկտեմբերի 1-ը Ստրասբուրգում կայացել է Բեռնի կոնվենցիայի Մշտական կոմիտեի 43-րդ հանդիպումը[217], որի օրակարգում ընդգրկված հարցերից մեկը վերաբերել է Ամուլսարին:

Բեռնի կոնվենցիայի Մշտական կոմիտեի 43-րդ հանդիպումը
184. Մտահոգիչ է Հայաստանում «Էմերալդ ցանցի» տարածքի, ներառյալ այն պահպանվող տարածքի, որտեղ գտնվում է Ամուլսարի հանքավայրը, կտրուկ կրճատման ուղղությամբ տարվող գործընթացի շարունակականությունը: Այդ տարածքի կրճատումը կարող է բացասական առումով ճակատագրական լինել պահպանվող տարածքների համաեվրոպական ցանցի արդյունավետության տեսանկյունից: 185. Մտահոգիչ է, որ ըստ պնդումների՝ այս կարևոր գործընթացներում հանրության ներգրավվածությունը կարծես թե անտեսվել է Հայաստանի կառավարության կողմից, որ նոր ռազմավարությունը, կարծես թե, թույլ կտա շրջանցել հանրության մասնակցությունը, չնայած Օրհուսի կոնվենցիայով նախատեսված պարտավորությանը, և որ աննախադեպ թվով «հանրության մասնակցությունը խոչընդոտելու նպատակով հարուցված ռազմավարական վարույթներ (դատավարություններ) են եղել ընդդեմ հանրային մասնակցության (SLAPPs), անկախ փորձագետների, իրավաբանների և լրագրողների, ովքեր դեմ էին նախագծին: 187. ՀՀ կառավարությունը պետք է դադարեցնի Ամուլսարում ոսկու հանքի հետ կապված աշխատանքները, քանի որ դրանք կարող են բացասաբար ազդել Կոնվենցիայի պաշտպանության ներքո գտնվող կենսատարածքների ու տեսակների վրա՝ անկախ այն բանից՝ ներառված են դրանք Էմերալդ ցանցում, թե՞ ոչ: Ընդգծվել են տարածաշրջանում պարսկական ընձառյուծի (Panthera pardus tulliana) ներկայության մասին արձանագրված փաստերը, ինչպես նաև այլ արժեքավոր տեսակների հայտնաբերումը վերջին շրջանում: Հարկ է վերանայել Ամուլսարի հանքարդյունաբերական ծրագրի ՇՄԱԳ-ը, փաստացի՝ նոր ՇՄԱԳ իրականացնել՝ հաշվի առնելով կենսաբազմազանության մասին նոր հայտնագործությունները, տեղական գիտնականների և քաղաքացիական հանրության փորձագիտական կարծիքները, ինչպես նաև միջսահմանային ազդեցությունների հնարավորությունը: Հայաստանի կառավարությունը պետք է արագացնի «Ջերմուկ» ազգային պարկի ստեղծումը: 188. Ամուլսարին և Էմերալդ ցանցին վերաբերող գործընթացներում պետք է պարտադիր ներգրավել քաղաքացիական հասարակությանը:

Նշվածի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանը հարցադրումներ է ուղղել Շրջակա միջավայրի նախարարությանը՝ պարզելու, թե ի՞նչ քայլեր են

[216] Հասանելի է https://rm.coe.int/files50e-2021-armenia-amulsar-gold-project-govt-report/1680a2dc9c հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[217] Հասանելի է https://rm.coe.int/misc-e-2023-final/1680ad9230 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

ձեռնարկվել Բեռնի կոնվենցիայի Մշտական կոմիտեի 43-րդ նիստի արդյունքում Ամուլսարի առնչությամբ ՀՀ-ին ուղղված վերոնշյալ հանձնարարականների իրականացման կապակցությամբ:

Ըստ Շրջակա միջավայրի նախարարության՝ նշված հանձնարարականների կապակցությամբ աշխատանքները դեռևս ընթացքում են.

2023 թվականի հունիսի վերջից «ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ կողմից մեկնարկել են կենսաբազմազանության մոնիթորինգի աշխատանքներ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոլոգիայի գիտական կենտրոնի կողմից վայրի բնության, կենսամիջավայրի, Կարմիր գրքում ընդգրկված և էնդեմիկ տեսակների մշտադիտարկման նպատակով, որի վերաբերյալ ամփոփ տվյալներ և տեղեկատվություն նախատեսվում է ներկայացնել տարեկան հաշվետվությունում:

«ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի: Հայաստան. Էմերալդ ցանցի ստեղծման առաջխաղացում և Էմերալդ տարածքների կառավարում» ծրագրի շրջանակում ԳԱԱ Արմեն Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտը և հունական «ԿարտԷԿՈ» կազմակերպությունը իրականացնում են Էմերալդ թեկնածու տարածքների վերանայման գործընթացը: Աշխատանքները ավարտական փուլում են և Շրջակա միջավայրի նախարարությունը վերջնական նյութերն ստանալուն պես նախատեսում է կազմակերպել քննարկում՝ շահագրգիռ կողմերի և հանրության ներգրավմամբ:

Ասվածի հետ մեկտեղ, հարկ է նկատել, որ չնայած հանրության մտահոգություններին, ոլորտի մասնագետների կողմից արձանագրված մի շարք խնդիրներին ու ընթացող դատական գործընթացներին՝ 2023 թվականի փետրվարի 22-ին ՀՀ կառավարությունը Եվրասիական զարգացման բանկի և «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի հետ կնքել է եռակողմ փոխըմբռնման հուշագիր՝ վերսկսելու Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման ծրագիրը:

Այս առումով Պաշտպանը կարևորում է Կառավարության կողմից հարցն անմիջական ուշադրության կենտրոնում պահելը՝ ինչպես պետական մարմինների հետ քննարկումների, այնպես էլ անմիջականորեն Վայոց Ձորի մարզ այցերի ու բնակիչների հետ հանդիպումների ձևաչափերով՝ ապահովելով պատշաճ հանրային լսումների իրականացումը, հանրության պատշաճ մասնակցությունն ու ներգրավվածությունը, ինչպես նաև գործընթացի շրջանակներում հրապարակայնության սկզբունքի պահպանումը:

Չափազանց կարևոր է նաև իրավասու մարմինների կողմից խնդրին առնչվող իրազեկման լայնածավալ աշխատանքների շարունակական իրականացումը ոչ միայն ազդակիր համայնքի, այլև ողջ հանրապետության տարածքի ընդգրկմամբ:

4.2 Հանքարդյունաբերության հարցերում հանրության մասնակցության խոչընդոտներ

Շրջակա միջավայրի պահպանության հարցում, այդ թվում՝ հանքարդյունաբերական գործունեության համատեքստում խիստ կարևոր է հանրության մասնակցության ու այդ մասնակցության անխոչընդոտ իրականացման երաշխավորումը:

2023 թվականի ընթացքում ևս Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության ներքո են գտնվել հասարակական կազմակերպությունների, անհատ բնապահպանների ու իրավապաշտպանների, ինչպես նաև համայնքների ներկայացուցիչների՝ շրջակա միջավայրի պահպանության հարցերում մասնակցության առնչությամբ բարձրացված մտահոգությունները: Ըստ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների՝ տևական ժամանակ է, որ ՀՀ-ում ընթանում են ճնշումներ բնապահպան ակտիվիստների, բնապահպանական կազմակերպությունների, իրավապաշտպանների, ազդակիր համայնքների՝ հանքարդյունաբերության վնասակար ծրագրերին դեմ արտահայտվող բնակիչների նկատմամբ՝ այդ թվում՝ փորձեր անելով աղավաղել վերջիններիս իրական նպատակը: Նշվածը, ըստ այդ անձանց, արտահայտվում է ատելության խոսքի, վիրավորանքների, զրպարտչական բնույթի հրապարակումների առկայությամբ, որոնք տեղ են գտնում, ի թիվս այլնի, հրապարակային ելույթներում ու հարցազրույցներում: Ըստ իրավապաշտպանների և բնապահպանների՝ դա արտահայտվում է նաև հանրության մասնակցության դեմ ռազմավարական դատավարությունների իրականացմամբ (SLAPP)[218]: Այս խնդիրները մտահոգիչ են համարում նաև տարբեր միջազգային դերակատարներ, որոնց գործունեության առանցքում մարդու իրավունքները, էկոլոգիական հարցերն ու հանրային մասնակցությունն են[219]: Հանրության ներգրավվածության խնդիրների ու ընդդեմ հանրային մասնակցության աննախադեպ թվով «հանրության մասնակցությունը խոչընդոտելու նպատակով հարուցված ռազմավարական վարույթների ու դատավարությունների (SLAPPs) վերաբերյալ պնդումները մտահոգիչ է համարել նաև Բեռնի կոնվենցիայի մշտական կոմիտեն[220]:

Վերոշարադրյալը նկատի ունենալով՝ 2024 թվականի փետրվարի 19-ին Մարդու իրավունքների պաշտպանն ընդունել է բնապահպանական խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին:

Հանդիպման նպատակն էր քննարկել բնապահպանական ոլորտում առկա այն խնդիրները, որոնք առնչվում են մարդու իրավունքների պաշտպանության համակարգին:

Հանդիպման ընթացքում ևս քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներն անդրադարձել են ինչպես բնապահպանների նկատմամբ նկատվող ճնշումներին, այնպես էլ շրջակա միջավայրին առնչվող հարցերով տեղեկատվության հասանելիության ու տեղեկություններ ստանալու խոչընդոտներին: Այս կապակցությամբ Պաշտպանը հանդիպման ընթացքում ևս ընդգծել է մասնագիտական և իրավապաշտպան գործունեություն իրականացնելիս ցանկացած անձի, այդ թվում՝ բնապահպանների իրավունքների՝ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորված լինելու կարևորությունը:

---

[218] Հասանելի է https://www.ecolur.org/hy/news/amulsar/15359/, https://www.ecolur.org/hy/news/amulsar/15391/ , https://rightsindevelopment.org/wp-content/uploads/securepdfs/Wearing-blinders-v6.pdf հղումներով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[219] Հասանելի է https://rightsindevelopment.org/news/armenia-environmental-defenders-defamation/, https://bankwatch.org/press_release/international-groups-stand-in-solidarity-with-armenian-environmental-and-, human-rights-defenders-facing-defamation-and-criminalisation հղումներով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[220] Հասանելի է https://rm.coe.int/misc-e-2023-final/1680ad9230 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Ռիո դե Ժանեյրոյի շրջակա միջավայրի և զարգացման վերաբերյալ հռչակագիր[222]

Սկզբունք 10.

Շրջակա միջավայրի հարցերը լավագույնս կարգավորվում են շահագրգիռ հասարակության մասնակցությամբ բոլոր մակարդակներում: Ազգային մակարդակում ցանկացած անհատ պետք է ունենա բավարար հասանելիություն պետական մարմինների կողմից տնօրինվող շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվությանը, այդ թվում՝ վտանգավոր նյութերի ու իրենց համայնքներում տեղի ունեցող գործողությունների վերաբերյալ տեղեկատվությանը, ինչպես նաև պետք է ունենա որոշումների կայացման գործընթացին մասնակցելու հնարավորություն: Պետությունները պետք է նպաստեն ու խրախուսեն հասարակության իրազեկվածությանն ու մասնակցությանը՝ տեղեկատվությունը լայնորեն հասանելի դարձնելու միջոցով: Արդյունավետ դատական ու վարչական վարույթներին հասանելիությունը, ներառյալ փոխհատուցումն ու պաշտպանության միջոցները, պետք է ապահովված լինեն:

Մտահոգություն է բարձրացվել առ այն, որ 2024 թվականին այս զրպարտչական հարձակումներն ու ատելության խոսքը ակտիվացել են նույն թվականի հունվարին՝ Ամուլսարի հանքավայրի վիճահարույց ծրագրի շուրջ հայտարարության հրապարակումից հետո, որը ստորագրել էին Հայաստանի 118 հասարակական կազմակերպություններ և 57 քաղաքացիներ[221]:

Շրջակա միջավայրին առնչվող հարցերում հասարակության մասնակցության ու ներգրավվածության հարցերը կարգավորվում են միջազգային իրավական մի շարք փաստաթղթերով.

Օրհուսի կոնվենցիա[223]

Հոդված 1. Նպատակը

Ներկա և ապագա սերունդների յուրաքանչյուր անդամի առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում ապրելու իրավունքի պաշտպանությանն օժանդակելու համար սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան՝ յուրաքանչյուր Կողմ երաշխավորում է շրջակա միջավայրին առնչվող հարցերով տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման

[221] Հասանելի է https://cvmedia.am/page2-4019--88, https://rightsindevelopment.org/news/armenia-environmental-defenders-defamation/ հղումներով, 2024թվականի մարտի 29-ի դրությամբ:

[222] Հասանելի է https://www.un.org/en/development/desa/population/migration/generalassembly/docs/globalcompact/A_CONF.151_26_Vol.I_Declaration.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[223] Օրհուսի կոնվենցիայի 6-8-րդ հոդվածներով առավել մանրամասն կարգավորվում է հասարակության մասնակցության հարցերը: Տե՛ս https://unece.org/DAM/env/pp/documents/ACtext/Aarhus_Convention_Armenian.pdf հղումով, 2024 թվականի մարտի 24-ի դրությամբ:

գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության իրավունքը:

Հոդված 4. Բնապահպանական տեղեկության մատչելիությունը

Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ սույն հոդվածի ներքոհիշյալ կետերին հետևելու դեպքում պետական մարմինները, ի պատասխան շրջակա միջավայրին վերաբերող տեղեկատվության տրամադրման հարցման, ազգային օրենսդրության շրջանակներում հասարակայնությանը տրամադրեն այդպիսի տեղեկատվություն, ներառյալ՝ այդպիսի տեղեկատվություն պարունակող կամ ներառող փաստաթղթերի պատճենները:

Վերոգրյալի հաշվառմամբ՝

✓ անհրաժեշտ է ապահովել ինչպես միջազգային իրավական փաստաթղթերում, այնպես էլ ներպետական օրենսդրությամբ ամրագրված՝ շահագրգիռ հասարակության պատշաճ ու անխոչընդոտ մասնակցությունն ու ներգրավվածությունը շրջակա միջավայրին առնչվող հարցերում, այդ թվում՝ հանքարդյունաբերական գործունեության համատեքստում երաշխավորելու պահանջը.

✓ բացառել ցանկացած ճնշում հասարակական կազմակերպությունների, անհատ բնապահպանների ու իրավապաշտպանների, ինչպես նաև համայնքների ներկայացուցիչների նկատմամբ՝ շրջակա միջավայրի պահպանության հարցերում վերջիններիս մասնակցության իրավունքն իրացնելիս:

4.3 Թեղուտի հանքավայրի շահագործման հետ կապված խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանն իր տարեկան հաղորդումներում տարիներ շարունակ բարձրացրել է «Թեղուտ» ՓԲԸ-ում բնապահպանական ստուգումների իրականացման, ինչպես նաև հանքավայրի շահագործման ընթացքում անվտանգության ապահովման հարցերը[224]:

Հանքավայրի շահագործման առնչությամբ բարձրաձայնվել են դրա շահագործման ռիսկերի ու հանքավայրի պոչամբարի անկայունության[225], հանքավայրի շահագործման դրական եզրակացության բացակայության[226], ինչպես նաև **Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրում հանքարդյունաբերության՝ մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության**[227] հետ կապված խնդիրներ:

[224] Առավել մանրամասն տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի «2021 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» տարեկան հաղորդումը, «Շրջակա միջավայրի պահպանություն» բաժինը, հասանելի է https://ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով:

[225] Հասանելի է https://www.azatutyun.am/a/30085282.html, https://www.ecolur.org/hy/news/teghout/12403/ հղումներով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[226] Հասանելի է https://www.ecolur.org/hy/news/mining/-/l11903/ հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[227] Հասանելի է https://www.ecolur.org/hy/news/teghout/13605/ հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ: https://www.ecolur.org/hy/news/teghout/13458/, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
Ջրային ռեսուրսների որակային ցուցանիշներին անդրադարձը տե՛ս սույն բաժնի «Քիմիական նյութերի և թափոնների անվտանգ հեռացումն ու ոչնչացումը» պարագրաֆում:

Իրավական հիմքերի հստակեցման նպատակով Թեղուտի հանքավայրի շահագործման փորձաքննական եզրակացության ժամկետի պարզաբանման պահանջ է ներկայացվել ոլորտի իրավասու մարմիններին՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը և ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին: Ըստ Շրջակա միջավայրի նախարարության՝ նախարարության կողմից 2023 թվականի մայիսի 11-ին տրվել է ԲՓ № 0078 պետական փորձաքննական եզրակացությունը՝ «Լոռու մարզի Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի ժամկետի երկարաձգման և ընդլայնման օգտակար հանածոների արդյունահանման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության» վերաբերյալ: Հարկ է նկատել, որ ըստ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի պարզաբանումների, 2023 թվականի ընթացքում հանքավայրում ստուգումներ չեն իրականացվել:

Միևնույն ժամանակ, ըստ «Թեղուտ» ՓԲԸ-ի՝ նախագծային փաստաթղթերի համաձայն՝ 1-ին փուլի ավարտմամբ պոչամբարի պատվարի ամրացման աշխատանքներն ավարտվել են, և իրականացվել է պատվարի բեռնում շուրջ 1 մլն տոննա ապարով: Սկսվել են 2-րդ փուլի աշխատանքներն ու 2022թ. մարտից հանքի շահագործման աշխատանքները դադարեցվել են՝ մասշտաբային պլանային-կանխարգելիչ վերանորոգման աշխատանքներ իրականացնելու նպատակով[228]:

Հիմք ընդունելով վերոգրյալն ու շահագրգիռ հասարակության, այդ թվում՝ տեղի բնակչության տարիներ շարունակ բարձրացրած մտահոգությունները՝ Պաշտպանը կարևորում է Թեղուտի հանքավայրի շահագործման գործընթացի նկատմամբ պատշաճ վերահսկողության ապահովումը՝ օրենսդրության պահանջների պահպանման տեսանկյունից:

5. Առողջ և բարենպաստ շրջակա միջավայրում ապրելու իրավունքի ապահովման խնդիր

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության առաջնահերթություններից է մարդու էկոլոգիական իրավունքների պաշտպանությունն ու խթանումը: 2023 թվականի ընթացքում Պաշտպանի անմիջական ուշադրության ներքո են եղել տնտեսական գործունեությամբ պայմանավորված՝ շրջակա միջավայրի պահպանման, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեության հետևանքով մթնոլորտային օդ արտանետումների վնասակար ազդեցության և դրանով իսկ հարակից բնակավայրերի բնակիչների առողջ և բարենպաստ շրջակա միջավայրում ապրելու իրավունքի ապահովման հետ կապված հարցերը:

2023 թվականին խնդրին առնչվող հրապարակային տեղեկությունների համաձայն՝ Երևանի շենքերից մեկի բնակիչներն իրենց դժգոհությունն են հայտնել, որ շենքի նկուղում շահագործվող ձուլարանի գործունեությունն էկոլոգիական լուրջ վտանգ է ներկայացնում: Ըստ հրապարակումների՝ ձուլարանի շահագործման արդյունքում շրջակա բնական միջավայրի համար վտանգ ներկայացնող նյութեր են արտադրվում, որի հետևանքով բնակիչների առողջությանը լուրջ վնաս է հասցվում:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանի հանձնարարությամբ անմիջապես սկսվել է ուսումնասիրության ընթացակարգ: Պաշտպանը դիմել է ՀՀ բնապահպանության և

[228] Հասանելի է https://www.ecolur.org/hy/news/teghout/13840/ հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշմամբ.

Պետությունը պատասխանատվություն է կրում ոչ միայն այն դեպքում, երբ ինքն անմիջականորեն էկոլոգիական վնաս հասցնողն է, այլ նաև այն դեպքերում, երբ չի ձեռնարկել միջոցառումներ շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունը կանխելու համար, այդ թվում՝ աղտոտման հետ կապված հարցերի օրենսդրական կարգավորման բացերի և թերությունների համար[229]*:*

ընդերքի տեսչական մարմին՝ հարուցված վարույթի ընթացքի մասին պարզաբանումներ ստանալու նպատակով:

Պատասխան գրություններով տեսչական մարմինը տեղեկացրել է, որ մարմնի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 271-Ա հանձնարարագրի հիման վրա ստուգում է իրականացվել արտադրական գործունեություն իրականացնող *(թուջե իրերի արտադրություն՝ էլեկտրական ինդուկցիոն վառարաններով)* ընկերությունում: Ստուգման արդյունքում պարզվել է, որ ընկերության 2019, 2020, 2022 և 2023 թվականների գործունեությունն իրականացվել է սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագծի գերազանցումներով, որի հիման վրա ընկերության նախագահի նկատմամբ հարուցվել է վարչական իրավախախտման վարույթ և նշանակվել տուգանք:

Պաշտպանը մտահոգիչ և խնդրահարույց է համարում այն, որ 2019 թվականից ի վեր ընկերության գործունեությունն իրականացվել է սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագծի գերազանցումներով, սակայն կատարված վարչական իրավախախտումը բացահայտվել է 2023 թվականին: Ուստի, Պաշտպանն արձանագրում է, որ պետությունը պետք է առավել հետևողական լինի ձեռնարկատիրական գործունեության հետևանքով մթնոլորտային օդ արտանետումների և դրանով իսկ հարակից բնակավայրերի բնակիչների իրավունքերի պաշտպանության հարցում:

Տեսչական մարմնի կողմից պարբերաբար իրականացվող ստուգումների և պատշաճ վերահսկողության այլ միջոցառումների շնորհիվ հնարավոր կլինի կանխարգելել ձեռնարկատիրական գործունեության արդյունքում մթնոլորտային օդ արտանետվող սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագծի գերազանցումների դեպքերը և դրանց տալ համարժեք իրավական գնահատական:

Պաշտպանն իր տարեկան հաղորդումներում մշտապես անդրադարձել է էկոլոգիական իրավունքների պաշտպանության կապակցությամբ պետության գործառույթներին, ինչի համատեքստում պետության և քաղաքացիական հասարակության փոխգործակցությունն ու փոխադարձ պատասխանատվությունն անչափ կարևոր են՝ նկատի ունենալով նաև շրջակա միջավայրի վրա մարդու ազդեցության անընդհատ մեծացումը[230]:

Այսպիսով, պետությունն ունի պոզիտիվ պարտականություն ապահովելու առողջ և բարենպաստ շրջակա միջավայրում ապրելու իրավունքի երաշխավորված իրացումը, այդ թվում՝ միջոցառումներ ձեռնարկելու՝ կանխելու համար շրջակա միջավայրի վրա վնասակար ցանկացած ազդեցություն:

229 Տե՛ս Փոուելն ու Ռայներն ընդդեմ Միացյալ թագավորության գործով 1990 թվականի փետրվարի 21-ի վճիռը, գանգատ թիվ *9310/81*, Լոպես Օստրան ընդդեմ Իսպանիայի գործով 2019 թվականի հոկտեմբերի 17-ի վճիռը, գանգատ թիվ 1874/13 և 8567/1 , Յանգը, Ջեյմսը ու Վեբստեռնն ընդդեմ Միացյալ թագավորության գործով 1982 թվականի հոկտեմբերի 18-ի վճիռը, գանգատ 7601/76, 7806/77:

230 Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2019, 2020, 2021 թվականների տարեկան հաղորդումը (համապատասխանաբար՝ էջեր 226-228, 342-347, 292-297):

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանը կարևոր է համարում շրջակա միջավայրի պաշտպանության վերաբերյալ պետական քաղաքականությունն այնպիսի չափանիշների հաշվառմամբ կառուցելը, որը հիմնված կլինի մարդու առողջ և բարենպաստ շրջական միջավայրում ապրելու իրավունքի առավելագույն չափով երաշխավորման և պաշտպանության վրա:

Այսպիսով, անհրաժեշտ է՝ պարբերաբար իրականացնել ստուգումներ և պատշաճ վերահսկողության այլ միջոցառումներ, որոնց շնորհիվ հնարավոր կլինի կանխարգելել ձեռնարկատիրական գործունեության արդյունքում մթնոլորտային օդ արտանետվող սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագծի գերազանցումների դեպքերը և դրանց տալ համարժեք իրավական գնահատական:

ԲԱԺԻՆ 5. ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

2023 թվականին Հայաստանի Հանրապետությունում տեղի են ունեցել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ:

Պաշտպանի աշխատակազմը թե՛ նախընտրական, թե՛ հետընտրական ժամանակահատվածում աշխատել է արտակարգ ռեժիմով՝ իրականացնելով ընտրական գործընթացի անկախ մշտադիտարկում, որը հիմնված է անաչառ ու ապաքաղաքական աշխատանքի հիմնարար սկզբունքների վրա: Նշված աշխատանքների պատշաճ կազմակերպումն ու իրականացումն ապահովելու նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ:

Մշտադիտարկման շրջանակներում աշխատանքային խումբն ուսումնասիրել է ընտրական իրավունքների ենթադրյալ խախտումների վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցների հրապարակումները, ապահովել է Պաշտպանին հասցեագրված բանավոր և գրավոր բողոքների պատշաճ քննարկումը, ինչպես նաև իրականացրել քաղաքացիների ընդունելություն՝ տրամադրելով իրավական խորհրդատվություն[231]:

Աշխատանքային խումբը Երևանի ավագանու ընտրությունների քարոզարշավի ժամանակահատվածում ուսումնասիրել է ընտրական իրավունքի ենթադրյալ խախտումների վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցներում, սոցիալական ցանցերում տեղ գտած շուրջ 500 հրապարակում:

Վերջիններս վերաբերել են Երևանի ավագանու ընտրություններին առնչվող գործընթացի շրջանակներում վարչական ռեսուրսի օգտագործման, նախընտրական քարոզչությանը մասնակցելու նպատակով անձանց նյութապես շահագրգռելու կամ պարտադրելու ենթադրյալ դեպքերին, նշված ժամանակահատվածում քարոզչական պաստառի, քարոզչական տպագիր և այլ նյութերի օգտագործման կարգի ենթադրյալ խախտումներին, նախընտրական պաստառները պատռելուն, ընտրական գործընթացի շրջանակներում երեխաների և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հետ կապված հարցերին և այլն:

Նշված ժամանակահատվածում Պաշտպանի աշխատակազմը ստացել է Երևանի ավագանու հերթական ընտրություններին առնչվող շուրջ 79 դիմում-բողոք:

Դիմումները հիմնականում վերաբերել են տարածքային ընտրական ցուցակներում առկա անճշտություններին, տեղաշարժման դժվարություններ և հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի իրացման հարցերին, կացության կարգավիճակ ունենալու պարագայում ընտրական տեղամասերի ճշգրտմանը, քվեարկությանը մասնակցելու համար անձը հաստատող փաստաթղթի բացակայությանը կամ վավերականության ժամկետի ավարտված լինելուն առնչվող խնդիրներին, հաշվառման վայրից դուրս գտնվող այլ ընտրատեղամասում քվեարկությանը մասնակցելուն, անձի՝ ինքնուրույն կերպով ընտրական իրավունքի իրացման անհնարինության դեպքում վերջինիս օգնություն տրամադրելուն, ընտրական ցուցակներում մահացած անձանց ընդգրկված

[231] Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2686 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

լինելուն, անձանց բնակության հասցեներում այլ անձանց հաշվառմանը, ընտրատեղամասերից մեկում քվեաթերթիկների խոտանվածությանը՝ որպես քվեարկության գաղտնիության վրա ազդող գործոն:

ՏԻՄ ընտրությունների օրը Պաշտպանի ներկայացուցիչները իրականացրել են նաև մոնիթորինգային այցեր ընտրական տեղամասեր[232]:

Պաշտպանը կարևորում է հանրային իշխանության մարմինների, քաղաքացիական հասարակության հետ ընտրական իրավունքների պաշտպանության հարցերով համագործակցությունը:

2023 թվականի ընթացքում ընտրական իրավունքների պաշտպանության իր գործառույթի համատեքստում Պաշտպանն ակտիվ համագործակցել է պետական իրավասու մարմինների, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների հետ:

Մասնավորապես, Երևանի ավագանու հերթական ընտրություններին քաղաքացիների ընտրական իրավունքի արդյունավետ պաշտպանությունն իրականացնելու նպատակով Պաշտպանի աշխատակազմում հանդիպում է կազմակերպվել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են ընտրական գործընթացի պատշաճ կազմակերպմանը, ընտրական իրավունքների իրացմանը վերաբերելի մի շարք հարցեր: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից ներկայացվել են նախորդ ընտրությունների ժամանակ արձանագրված և ներկայումս ևս հավանական համարվող խնդիրները[233]:

Պաշտպանը աշխատանքային խմբի կողմից հայտնաբերված ենթադրյալ իրավախախտումների դեպքերի առնչությամբ համագործակցել է նաև Գլխավոր դատախազության, ինչպես նաև Ներքին գործերի նախարարության և այլ իրավասու մարմինների հետ:

Ներքին գործերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ վերջինիս ենթակա ստորաբաժանումների ծառայողները այցելել են ընտրական տեղամասեր ընտրական ցուցակներում առկա հնարավոր անճշտությունները հայտնաբերելու նպատակով: Իրականացված այցելությունների արդյունքում հայտնաբերվել են թվով 213 մահացած անձանց տվյալներ: Ընտրական ցուցակներում ընդգրկված անձանց մահվան վերաբերյալ հայտնաբերված տեղեկությունների առնչությամբ ծառայողների կողմից ձեռնարկվել են համապատասխան միջոցներ՝ մահվան փաստը հավաստող փաստաթղթեր, դրանց բացակայության դեպքում՝ այլ լրացուցիչ փաստական տվյալներ ձեռք բերելու նպատակով: Ցուցակներում առկա անճշտությունների վերաբերյալ տվյալները փոխանցվել են նաև տարածքային անձնագրային ծառայությունների ղեկավարներին:

Ըստ Գլխավոր դատախազության տրամադրած տեղեկատվության՝ Երևան քաղաքի ավագանու հերթական ընտրությունների վերաբերյալ ստացված հաղորդումների հիման

[232] Ընտրական տեղամասերում մոնիթորինգն իրականացվել է հատուկ Պաշտպանի աշխատակազմի համար մշակված՝ «Ազգային ժողովի ընտրություններ. ուղեցույց Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի համար» ուղեցույցի հիման:
[233] Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2677 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

վրա նախաձեռնվել է թվով 13 քրեական վարույթ, որից 5-ը՝ Քրեական օրենսգրքի 210-րդ հոդվածի (ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրականացումը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը կամ հանրաքվեին մասնակցող անձանց իրավունքների կամ պարտականությունների իրականացումը խոչընդոտելը), 5-ը՝ Քրեական օրենսգրքի 211-րդ հոդվածի (քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելը կամ քարոզչություն կատարելուն այլ կերպ խոչընդոտելը), 2-ը՝ Քրեական օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասի (հանրաքվեի կամ ընտրության ժամանակ բարեգործության արգելքը խախտելը), իսկ 1-ը՝ Քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասի (հավաք անցկացնելուն կամ դրան մասնակցելուն խոչընդոտելը կամ հարկադրելը, ինչպես նաև հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռելը) հատկանիշներով: Նախաձեռնված թվով 1 քրեական վարույթի նախաքննությունն ավարտվել է, և մեկ անձի վերաբերյալ գործը մեղադրական եզրակացությամբ՝ Քրեական օրենսգրքի 211-րդ հոդվածի 1-ին մասով, ուղարկվել է դատարան: Իրականացված նախաքննության ընթացքում 6 քրեական վարույթներ կարճվել են, իսկ 6 քրեական վարույթներով քննությունը դեռևս շարունակվում է:

Շիրակի մարզի Անի համայնքի ՏԻՄ ընտրությունների վերաբերյալ Գլխավոր դատախազության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Ոստիկանության Շիրակի մարզային վարչությունում ստացված թվով 4 հաղորդումների հիման վրա՝ Քրեական օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախաձեռնվել են քրեական վարույթներ, որոնք, սակայն, կարճվել են՝ Քրեական օրենսգրքով նախատեսված որևէ հանցանքի բացակայության հիմքով:

Պաշտպանը ընդգծում է, որ իրավասու մարմինների կողմից պետք է ապահովվի նշված գործերի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմ քննության իրականացումն ու մեղավոր անձանց՝ պատասխանատվության անխուսափելիությունը: Այս համատեքստում Պաշտպանը կարևորում է ընտրական գործընթացների ժողովրդավարական բնույթի լիարժեք ապահովման նպատակով պետության կողմից ընտրական իրավախախտումների կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

1. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում ձերբակալված և կալանավորված անձանց ընտրական իրավունքի իրացմանն առնչվող խնդիրներ

Երևանի ավագանու ընտրությունների ընթացքում արձանագրված մտահոգիչ խնդիրներից է ձերբակալված և կալանավորված անձանց ընտրական իրավունքների իրացման կառուցակարգերի բացակայությունը:

Ընտրական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ձերբակալված ընտրողները քվեարկությանը մասնակցում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով՝ շրջիկ արկղի միջոցով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեակատարողական հիմնարկներում քվեարկությունը կազմակերպվում և իրականացվում է ***Ընտրական օրենսգրքով և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով***:

Ընտրական օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ ընտրողների ռեգիստրում ընդգրկվում են ՀՀ բնակչության պետական ռեգիստրում ընդգրկված, ՀՀ որևէ համայնքում հաշվառված և ընտրելու իրավունք ունեցող ՀՀ քաղաքացիները:

Նույն օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ ընտրողների ռեգիստրի հիման վրա կազմվում է համայնքի ընտրողների ցուցակ՝ ըստ ընտրական տեղամասերի, որում ընդգրկվում են սույն օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ համապատասխան ընտրության ժամանակ ընտրելու իրավունք ունեցող անձինք, որոնք քվեարկության օրվան նախորդող 6 ամսվա ընթացքում ունեցել են անձը հաստատող վավեր փաստաթուղթ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 128-Ն որոշմամբ կարգավորվում են ***Ազգային ժողովի ընտրությունների, հանրաքվեի*** ժամանակ քրեակատարողական հիմնարկներում հաշվառված ընտրողների թիվը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնելու և քրեակատարողական հիմնարկներում քվեարկությունը նախապատրաստելու, կազմակերպելու և անցկացնելու հետ կապված հարաբերությունները:

ՀՀ կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի թիվ 1231-Ն որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 8-րդ կետի «ե» ենթակետի համաձայն՝ ռեգիստրում անձի մշտական բնակության վայրի (կացարանի) հասցեն փոխվում է ***ազատազրկման դատապարտվելու կապակցությամբ՝ պատիժը քրեակատարողական հիմնարկում կրելիս***:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի՝ ընտրական իրավունքի միջազգային չափանիշներին վերաբերող «Հասարակական գործերին մասնակցելու, քվեարկության և հավասար հիմունքներով հանրային ծառայության հասանելիության իրավունքների մասին» թիվ 25 մեկնաբանությունների 14-րդ կետում որպես ազատությունից զրկված անձանց ընտրական իրավունքի ապահովման կարևորագույն նշանակություն ունեցող հանգամանք նշվում է, որ **(...) ազատությունից զրկված, բայց չդատապարտված անձանց ընտրական իրավունքի իրացումը չպետք է բացառվի**[234]:

Վերոնշյալ իրավակարգավորումների, ինչպես նաև միջազգային չափանիշների համակարգային վերլուծությունից բխում է, որ ձերբակալված անձանց՝ քվեարկությանը մասնակցելը, ինչպես նաև քվեարկության կազմակերպումն ու իրականացումը կարգավորվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած որոշմամբ: Մինչդեռ նշված որոշմամբ ամրագրված կարգավորումները վերաբերելի են միայն ***Ազգային ժողովի ընտրությունների, հանրաքվեի ժամանակ*** քվեարկության կազմակերպմանը և անցկացմանը: Բացի այդ, Կառավարության վերոնշյալ որոշմամբ ամրագրված կարգավորումները ռեգիստրում անձի մշտական բնակության վայրի հասցեի փոփոխման հնարավորությունը նախատեսում են միայն ***ազատազրկման դատապարտված անձանց համար՝ պատիժը քրեակատարողական հիմնարկում կրելիս***: Այսինքն՝ ձերբակալված և կալանավորված անձանց մշտական բնակության վայրի հասցեն փոփոխության չի ենթարկվում, վերջիններս շարունակում են մնալ իրենց համայնքի ընտրողների ցուցակում, սակայն նրանք չեն կարողանում մասնակցել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին:

Ասվածից կարելի է եզրահանգել, որ ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում ձերբակալված և կալանավորված անձանց ընտրական իրավունքի իրացման անհրաժեշտ և բավարար երաշխիքներ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է մշակել և իրացնել պատշաճ և բավարար իրավական կառուցակարգեր ձերբակալված և կալանավորված անձանց

[234] Հասանելի է https://www.osce.org/files/f/documents/4/a/19154.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

ընտրական իրավունքի երաշխավորման, ներառյալ՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու հնարավորությունն ապահովելու նպատակով:

2. Հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքների և երեխաների լավագույն շահի պահպանման խնդիրները ընտրությունների համատեքստում

2023 թվականին շարունակել է խնդրահարույց մնալ տեղաշարժման դժվարություններ և հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի իրացման ապահովումը[235]:

2023 թվականին Պաշտպանի ներկայացուցիչների կողմից իրականացված մոնիթորինգային այցերի ընթացքում պարզ է դարձել, որ ընտրատեղամասերի ճնշող մեծամասնությունն իրապես շարունակում է անմատչելի մնալ տեղաշարժման դժվարություններ և հաշմանդամություն ունեցող անձանց համար: Արձանագրվել է, որ հիմնականում բացակայել են ընտրական տեղամասերի մուտքի և շենքի ներսում թեքահարթակներն ու խելամիտ այլ հարմարեցումները: Նշված միջավայրային խոչընդոտների հետևանքով անձինք զրկվել են ինքնուրույն՝ առանց լրացուցիչ աջակցության ընտրատեղամաս մուտք գործելու, ներսում տեղաշարժվելու հնարավորությունից[236]:

Ըստ Պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքում ձեռք բերված տեղեկատվության՝ նախընտրական քարոզչությանը ներգրավվել են նաև երեխաներ[237]:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համար մասնակից պետություններն ապահովում են դրանք ազատորեն արտահայտելու իրավունք այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային: Երեխայի հայացքների նկատմամբ ցուցաբերվում է նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրություն:

Նշված կոնվենցիայի 12-րդ հոդվածի վերաբերյալ Ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ երեխայի լսված լինելու իրավունքի ապահովմանն առնչվող բոլոր գործընթացները պետք է լինեն թափանցիկ, կամավոր, տեղեկատվական, հարգալից, անվտանգ, ներառական, երեխայակենտրոն,ռիսկերի նկատմամբ զգայուն և հաշվետու:

ԵԽ Նախարարների կոմիտեն մինչև 18 տարեկան երեխաների և երիտասարդների մասնակցության մասին հանձնարարականում[238] նշել է, որ կարծիքն ազատ արտահայտելու իրավունքի տարիքային սահմանափակում չկա: Բոլոր երեխաներն ունեն իրենց առնչվող բոլոր հարցերում լսված լինելու իրավունք: Սակայն վերջինս կարևորել է նշված գործընթացում հետևյալ սկզբունքների պահպանման անհրաժեշտությունը.

---

[235] Հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի իրացման խնդիրներն արձանագրվել են նաև Պաշտպանի 2018 և 2021 թվականների տարեկան հաղորդման շրջանակներում:

[236] Տեղաշարժման դժվարություններ և հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի իրացման ապահովման խնդիրներն առավել մանրամասն ներկայացված են սույն հաղորդման՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին վերաբերելի գլխում:

[237] Հասանելի է https://www.facebook.com/share/PE9539LzhG7brNMz/?mibextid=WC7FNe, https://www.facebook.com/share/QPNmn7mNp1BNFRHs/?mibextid=WC7FNe, https://www.facebook.com/share/p/UESMCNVZVPX6GCen/?mibextid=WC7FNe, https://www.facebook.com/share/aCBWgWWQ9yVrjBAE/?mibextid=WC7FNe հղումներով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[238] Հասանելի է https://rm.coe.int/168046c478 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

1) երեխաների իրազեկված մասնակցությունն ապահովելու նպատակով նրանց տեղեկացվածությունն ապահովելու անհրաժեշտությունը,

2) իրենց կարծիքի ազատ արտահայտման իրավունքն իրացնող երեխաներին հնարավոր վտանգավոր հետևանքներից, ներառյալ՝ սպառնալիքից, անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտումներից պաշտպանվածությունն ապահովելը,

3) երեխաների կողմից իրենց մասնակցության շրջանակի, վերջինիս սահմանափակումների, մասնակցության ակնկալվող և իրական արդյունքների վերաբերյալ տեղեկացվածությունն ապահովելը:

Ընդգծվում է, որ հաճախ մեծահասակները կարող են երեխաներին օգտագործել սեփական քաղաքական օրակարգը քարոզելու համար: Հետևաբար, կարևոր է, որ հանրային իրադարձություններում և նախաձեռնություններում ներառվեն հստակ սկզբունքներ և հիմնական կանոններ, որոնք կսահմանեն, թե ինչպես և ում կողմից են կայացվում որոշումները, ինչպես նաև կարգավորվում մեծահասակների և երեխաների միջև համապատասխան հարաբերությունները[239]:

Մարդու իրավունքների պաշտպանը հատուկ ընդգծում է ընտրական գործընթացներում երեխաների իրավունքների, այդ թվում՝ անձնական տվյալների պաշտպանության իրավունքի երաշխավորման կարևորությունը:

Երեխաների կողմից իրենց տեսակետներն արտահայտելու իրավունքը պետք է իրացվի միջազգային չափորոշիչների հաշվառմամբ՝ ապահովելով երեխաների անվտանգությունը և իրենց տարիքին և հասունությանը վերաբերելի հանգամանքները: Երեխաների մասնակցությամբ լուսանկարների և տեսանյութերի հրապարակումը պետք է իրականացվի երեխաների լավագույնի շահի պահպանմամբ և «մի՛ վնասիր» սկզբունքով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***մշակել և ներդնել հաշմանդամություն և տեղաշարժման դժվարություններ ունեցող անձանց ընտրական գործընթացներում մասնակցությունն ապահովելու պատշաճ կառուցակարգեր,***
- ✓ ***երաշխավորել ընտրական գործընթացներում երեխայի մասնակցության, երեխայի կարծիքի ազատ արտահայտման իրավունքների պատշաճ ապահովումը՝ առաջնորդվելով երեխաների լավագույն շահի սկզբունքի և ոլորտում առկա միջազգային չափորոշիչների պարտադիր պահպանմամբ:***

3. Ընտրական գործընթացների թափանցիկության և հանրային հաշվետվողականության ապահովմանն առնչվող խնդիրները ընտրությունների կազմակերպման և իրականացման համատեքստում

Ընտրական գործընթացի ժողովրդավարական բնույթի ապահովման կարևորագույն երաշխիքներից է վերջինիս թափանցիկության և այդ գործընթացի շրջանակում հանրային հաշվետվողականության ապահովումը: Այս առումով լուրջ դերակատարություն ունեն լրագրողները և լրատվական գործունեություն իրականացնողները, որոնց անխոչընդոտ մասնագիտական աշխատանքի երաշխավորումը ապահովում է ընտրական գործընթացների հրապարակայնությունը:

[239] Հասանելի է https://www.unicef-irc.org/publications/pdf/insight6.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Երևանի ավագանու ընտրությունների քարոզարշավի վերջին օրը զանգվածային լրատվության միջոցներով տեսանյութ[240] է տարածվել այն մասին, որ նախընտրական քարոզարշավի ժամանակ քայլերթի մասնակիցներից մեկը հայհոյանք է հնչեցրել և դրոշով հարվածել մասնագիտական գործունեությունն իրականացնող լրագրողին:

Նշվածի կապակցությամբ Պաշտպանը գրություն է հասցեագրել ՀՀ Գլխավոր դատախազություն, որտեղից պարզաբանում է ստացվել այն մասին, որ լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանն առերևույթ խոչընդոտելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 237-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ: Քրեական վարույթը դեռևս գտնվում է նախաքննության փուլում:

Հարկ է նշել, որ դեպքից հետո Մարդու իրավունքների պաշտպանն իր նախաձեռնությամբ ընդունել է լրագրողին և առավել մանրամասն քննարկել վերը նշված հարցերը[241]:

Պաշտպանի աշխատակազմի կողմից զանգվածային լրատվության միջոցներում իրականացված մշտադիտարկման արդյունքում նաև ստացվել է տեղեկատվություն «Ականատես» դիտորդական առաքելության դիտորդի գործունեությունը խոչընդոտելու վերաբերյալ[242]:

Նշված դեպքի առնչությամբ ևս գրություն է հասցեագրվել ՀՀ Գլխավոր դատախազություն: Ստացված տվյալների համաձայն՝ 2023 թվականի սեպտեմբերի 14-ին ՀՀ քրեական օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում որևէ անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդում չի հարուցվել, իսկ նախաձեռնված քրեական վարույթը կարճվել է՝ քրեական օրենսգրքով նախատեսված որևէ հանցանքի բացակայության հիմքով:

Պաշտպանը հատուկ ընդգծում է, որ ազատ լրատվական գործունեությունը կայուն ժողովրդավարության կառուցման հիմնասյունն է, այլակարծության և առողջ բանավեճի ապահովման գրավականը: Անգնահատելի է բարեխիղճ և արհեստավարժ լրագրողների աշխատանքը՝ ուղղված հանրությանը հուզող խնդիրների բարձրաձայնմանը, ինչպես նաև պետական կառավարման մարմինների և պաշտոնատար անձանց հաշվետվողականության երաշխավորմանը: Միաժամանակ, պրոֆեսիոնալ լրատվական գործունեությունը կարող է ապահովվել միայն էթիկայի կանոնների պահպանման և լրագրողների գործունեության արդյունքում ատելության խոսքի բացառման պարագայում:

Մարդու իրավունքների պաշտպանն ընդգծում է, որ լրագրողների մասնագիտական իրավաչափ գործունեությանը խոչընդոտելու ցանկացած դեպք անթույլատրելի է և խիստ մտահոգիչ: Պաշտպանը կարևորում է, որ պետությունը մշակի և գործարկի այնպիսի կառուցակարգեր, որոնք կերաշխավորեն բնականոն լրատվական գործունեության համար լիովին բարենպաստ միջավայրի առկայությունը և լրագրողների անվտանգությունը: Ընդ որում՝ նշված կառուցակարգերը պետք է ուղղված լինեն ինչպես լրագրողների իրավաչափ գործունեությանը չխոչընդոտելուն, այնպես էլ նման խոչընդոտները կանխարգելելուն, դեպքերի առնչությամբ արդյունավետ քննություն իրականացնելուն, այդ թվում՝ պատասխանատվության անխուսափելիությունը

[240] Հասանելի է https://armday.am/post/244714?fbclid=IwAR1EjQu_BaEPy7UnXIGTOCYohdyxUt5mQNeKdqqN_HuaP2zHDzk3TZ1LodU հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[241] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2691 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[242] Հասանելի է https://www.aravot.am/2023/09/06/1366722/ հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

երաշխավորելուն: Պակաս կարևոր չէ մասնագիտական լրատվական գործունեության իրականացումը բացառապես էթիկայի կանոնների, «պատասխանատու լրագրության» սկզբունքների պահպանման և լրագրողների գործունեության արդյունքում ապելության խոսքի բացառման համատեքստում[243]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ երաշխավորել լրագրողների և լրատվական գործունեություն իրականացնողների մասնագիտական աշխատանքն առերևույթ խոչընդոտելու դեպքերում գործերի արդյունավետ քննությունն ու մեղավոր անձանց պատասխանատվության անխուսափելիությունը,

✓ երաշխավորել լրագրողների և լրատվական գործունեություն իրականացնողների մասնագիտական անխոչընդոտ աշխատանքը՝ ձեռնարկելով պատշաճ և բավարար միջոցառումներ:

4. Ընտրական գործընթացում անհանդուրժողականությանն առնչվող խնդիրներ

Պաշտպանի աշխատակազմի ուսումնասիրությունները վկայում են, որ տարատեսակ հիմքերով հանրության բևեռացման աստիճանը Հայաստանի Հանրապետությունում բավականին բարձր է, ինչի արդյունքում հանրային միջավայրում լայն տարածում են ստացել անհանդուրժողականությունը, վիրավորանքը և համանման երևույթները: Դրանք տեսանելի են նաև ընտրական գործընթացների շրջանակներում:

Այդ հանգամանքը նկատի ունենալով՝ Պաշտպանը ևս մեկ անգամ ընդգծում է, որ հանդուրժողականությունն անկյունաքարային նշանակություն ունի ժողովրդավար, բռնությունից և խտրականությունից զերծ հասարակություն կառուցելու հարցում: Դա վերաբերելի է նաև ընտրական գործընթացներին:

Պաշտպանը կարևորում է ընտրական գործընթացների շրջանակներում հանրային ազատ բանավեճի երաշխավորումը կարծիքի արտահայտման ազատության իրավունքի թույլատրելի շրջանակներում, այլոց իրավունքների և ազատությունների հարգման ու համերաշխության մթնոլորտում՝ ընդգծելով պետության կողմից համապատասխան կառուցակարգերի գործադրման անհրաժեշտությունը հանրային անհանդուրժողականությունը հաղթահարելու, ապելության խոսքն ու համանման երևույթները բացառելու ուղղությամբ:

[243] Լրագրողի մասնագիտական գործունեությունը խոչընդոտելու վերաբերյալ խնդիրներն առավել մանրամասն ներկայացված են սույն հաղորդման մյուս հատվածներում:

ԲԱԺԻՆ 6. ԿԱՐԾԻՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

Կարծիքի արտահայտման ազատությունն ու տեղեկատվության ազատությունը կենսական նշանակություն ունեն ժողովրդավարության ամրապնդման համար: Դրանք կարևոր նախապայման են հանրային կառավարման ոլորտում թափանցիկությունն ու մասնակցայնությունն ապահովելու տեսանկյունից: Ուստի, կարևոր է կարծիքի արտահայտման ազատության ու դրա հետ փոխկապակցված տեղեկատվության ազատության իրավունքի երաշխավորումը ինչպես համապատասխան օրենսդրական կառուցակարգերի ամրագրմամբ, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայում այդ կառուցակարգերի պատշաճ գործարկմամբ:

Այս իրավունքները երաշխավորված են ինչպես Սահմանադրությամբ (42-րդ և 51-րդ հոդվածներ), այնպես էլ մարդու իրավունքների միջազգային մի շարք փաստաթղթերով՝ ինչպիսիք են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (19-րդ հոդված), Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան (10-րդ հոդված), «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան[244] և այլն:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա

Հոդված 10[1]. Արտահայտվելու ազատություն

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: (...)

«Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա

Հոդված 2. Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության իրավունքը

Կողմերից յուրաքանչյուրը երաշխավորում է յուրաքանչյուր անձի՝ ներկայացված հարցման հիման վրա, առանց որևէ խտրականության, պետական մարմինների տնօրինության տակ գտնվող փաստաթղթերի մատչելիության իրավունքը:

2023 թվականի ընթացքում ևս կարծիքի արտահայտման ազատության ու տեղեկություններ ստանալու սահմանադրական իրավունքների երաշխավորման հարցերը գտնվել են Մարդու իրավունքների պաշտպանի անմիջական ուշադրության ներքո: Այս համատեքստում, նույն թվականի ընթացքում Պաշտպանն իր նկատառումներն է ներկայացրել ՀՀ արդարադատության նախարարության կողմից շրջանառված ««Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ՝ անդրադառնալով, ի թիվս այլնի, լրագրողների հավատարմագրման հարցերին:

Բացի այդ, նույն սահմանադրական իրավունքների ապահովման բարձր նպատակից ելնելով՝ Պաշտպանն անդրադարձել է հանրային տիրույթում տարածված ատելության

[244] ««Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունվել է 2022 թվականի մարտի 23-ին:

խոսքի ու տիրող անհանդուրժողականության անթույլատրելիության ու հանրային համերաշխության մթնոլորտի հաստատման անհրաժեշտության, լրագրողների մասնագիտական գործունեության անխոչընդոտ իրականացման երաշխավորման հարցերին՝ արձագանքելով դրանց և՛ համակարգային խնդիրների առնչությամբ հայտարարությունների հրապարակմամբ, և՛ կոնկրետ դեպքերով Պաշտպանի սահմանադրական մանդատի շրջանակներում Պաշտպանին վերապահված գործիքակազմի գործադրմամբ:

1. Տեղեկատվության ազատությունը. օրենսդրություն և իրավակիրառ պրակտիկա

2023 թվականի ընթացքում ևս Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում են եղել տեղեկատվության ազատությանն առնչվող, այդ թվում՝ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի շրջանակներում պատշաճ իրավակիրառման հարցերը:

Այսպես, 2023 թվականին տեղեկություններ ստանալու իրավունքի խախտումների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանին է հասցեագրվել թվով 62 դիմում-բողոք: Դիմում-բողոքները բովանդակում են այնպիսի խնդիրների մասին տեղեկատվություն, ինչպիսիք են, օրինակ, լրագրողական գործունեության ընթացքում տեղեկություններ ստանալու նպատակով հարցման առնչությամբ տեղեկության տրամադրումը մերժելու, օրենքով սահմանված ժամկետում հայցվող տեղեկությունը չտրամադրելու կամ ամբողջությամբ չտրամադրելու հարցերը:

2023 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ստացված տեղեկատվության ազատությանը վերաբերող գրավոր և բանավոր դիմում-բողոքների վիճակագրական տվյալները՝ ըստ մարմինների և կազմակերպությունների



Պաշտպանին հասցեագրված բողոքների բովանդակությունը վկայում է ինչպես տեղեկություններ ստանալու իրավունքի իրացման շրջանակներում պետական մարմինների գործողությունների, այնպես էլ հասարակության իրազեկվածության համատեքստում առկա խնդիրների մասին:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պատշաճ կիրարկման առնչությամբ իրենց մտահոգություններն են բարձրացրել նաև ոլորտի հասարակական կազմակերպությունները: Այսպես, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով կարգավորվում են տեղեկությունների մատչելիության և հրապարակայնության ապահովման հարցերը: Նույն հոդվածի 3-րդ մասի 11-րդ կետի համաձայն՝ եթե ՀՀ Սահմանադրությամբ և (կամ) օրենքով այլ բան նախատեսված չէ, ապա տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է իր գործունեությանն առնչվող ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական և ամփոփ տվյալները, այդ թվում՝ մերժման հիմքերը:

Ըստ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության դիտարկումների՝ առկա չեն վիճակագրությունը կազմելու և հրապարակելու միասնական ձևաչափ և մեթոդաբանություն: Տեղեկատվություն տնօրինողները նշված պահանջն իրականացնում են իրենց կարողությունների սահմաններում: Միևնույն ժամանակ, նույն հասարակական կազմակերպությունը խնդրահարույց է համարել վիճակագրության

հրապարակման պարտականության կատարումը դրա ամբողջականության տեսանկյունից: Օրինակ՝ խնդիր է բարձրացվում առ այն, որ հարցումների վիճակագրությունը հրապարակվում է ընդհանուր փաստաթղթաշրջանառության ամսական հաշվետվության շրջանակում և չի պարունակում հարցումների մերժման հիմքերի մասին տվյալները, ինչը ևս օրենքի պահանջ է[245]:

Այս առումով պետք է նկատել, որ Հայաստանի Հանրապետության՝ 2023 թվականի հունվարի 12-ի Եվրոպայի խորհրդի տեղեկատվության մատչելիության խմբին ուղղված AIG/Inf(2023)02 զեկույցում[246], անդրադառնալով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված հրապարակման ենթակա տեղեկատվության, այդ թվում՝ նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված տեղեկատվության հրապարակման ձևաչափին ու հանրությանը հասանելի դարձնելու միջոցներին, հիշատակվում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ կետը, որի համաձայն՝ նշված տեղեկությունները հրապարակվում են հանրության համար մատչելի ձևով, տեղեկատվություն տնօրինողի ինտերնետային էջի առկայության դեպքում՝ նաև դրանով:

Միևնույն ժամանակ, հրապարակվող տեղեկատվության ձևաչափին ու ներդրված չափանիշներին զեկույցում անդրադարձ չի կատարվում:

Մարդու իրավունքների պաշտպանը հարցադրումներ է ուղղել պետական գերատեսչություններին՝ պարզելու, թե տեղեկատվության հարցերով պատասխանատու անձի համար «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի և վերջինիս կիրարկման կառուցակարգերի վերաբերյալ վերապատրաստումներ իրականացվել են, թե՞ ոչ: Նշված հարցին ի պատասխան՝ հարցի հասցեատեր մարմինների մեծամասնությունը հայտնել է, որ վերապատրաստման դասընթացներ չեն կազմակերպվել: Նշված հարցերով կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ են ձեռնարկվել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, Պետական եկամուտների կոմիտեի, Կադաստրի կոմիտեի, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ու Արդարադատության նախարարության կողմից:

Հայաստանի Հանրապետության՝ 2023 թվականի հունվարի 12-ի Եվրոպայի խորհրդի տեղեկատվության մատչելիության խմբին ուղղված AIG/Inf(2023)02 զեկույցում[247] անդրադարձ է կատարվել նաև կրթությանն ու վերապատրաստումների իրականացմանը: Պետական մարմինների՝ տեղեկատվության ազատության համատեքստում իրենց լիազորությունների ու պարտականությունների իրազեկվածության առնչությամբ զեկույցում նշվում է, որ հանրային ծառայողների վերապատրաստումներն իրականացվում են դրվագային՝ տարբեր ծրագրերի կամ միջոցառումների շրջանակներում, ոլորտային հասարակական կազմակերպությունների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ: Համապատասխան դեպքերում տեղեկատվության ազատության (պաշտոնական փաստաթղթերի մատչելիության) հետ կապված հարցերը քննարկվում են նաև անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի կողմից անցկացվող դասընթացների ժամանակ:

---

[245] Հասանելի է https://foi.am/researches/34955 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[246] Տե՛ս Հայաստանի Հանրապետության՝ 2023 թվականի հունվարի 12-ի Եվրոպայի խորհրդի տեղեկատվության մատչելիության խմբին ուղղված AIG/Inf(2023)02 զեկույցը, հասանելի է https://rm.coe.int/report-submitted-by-armenia-/1680aa2e3e հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[247] Տե՛ս նույն տեղում:

Հարկ է նշել, որ 2023 թվականին շրջանառության մեջ է դրվել ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալության հետ համատեղ մշակված «Տեղեկատվության ազատության և հանրային տեղեկությունների մասին» օրենքի և հարակից օրենքների լրամշակված նախագծերի փաթեթը, որը ներկայացել է նաև Մարդու իրավունքների պաշտպանին՝ կարծիքի: Մարդու իրավունքների պաշտպանը նույն փաթեթի նախագծային կարգավորումները դիտարկել է.

- «Տեղեկատվության ազատության և հանրային տեղեկությունների մասին» օրենքի, այլ օրենքների և դրանց հիման վրա ընդունված ենթաօրենսդրական իրավական ակտերի կիրառման ապահովման, դրանցով սահմանված պահանջների խախտումների կանխարգելման և կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնող լիազոր մարմնի ստեղծման հետ մեկտեղ նույն խնդրով զբաղվող՝ Սահմանադրությամբ արդեն իսկ ձևավորված մարմնի՝ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրականացվող լիազորությունների համընկնման անընդունելիության,
- տեղեկության հասանելիությունն ապահովելու հետ կապված ողջամիտ ծախսերի փոխհատուցման հաշվետվության տրամադրման անհրաժեշտության,
- հաշմանդամություն ունեցող անձանց տեղեկատվություն ստանալու իրավունքի իրականացման,
- տեղեկության վերարտադրման ծախսերի հատուցման բացառությունների նախատեսման,
- սահմանափակ տարածման ծառայողական տեղեկության շարքին դասվող արգելվող տեղեկությունների ցանկի,
- տեղեկության հասկացության և տեղեկատվության տնօրինողների շրջանակի,
- գրավոր հարցման պատասխանը ներկայացնելու բավարար ժամկետների,
- գրավոր հարցման ստորագրված լինելու պահանջի,
- մի շարք կարգավորումների որոշակիության և այլ տեսանկյուններից:

Դիտարկումների արդյունքում Պաշտպանը ներկայացրել է մի շարք առաջարկներ: Օրինակ՝ «Տեղեկատվության ազատության և հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագծում հղում կատարել «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքին՝ նույն նախագծի կարգավորումների շրջանակներում ևս մեկ անգամ ընդգծելու համար Մարդու իրավունքների պաշտպանի իրավասությունները տեղեկատվության ազատության պաշտպանության ոլորտում: Պաշտպանն անհրաժեշտ է համարել անձի պահանջի դեպքում տեղեկությանը հասանելիություն ապահովելու հետ կապված ողջամիտ ծախսերի հիմնավորվածության վերաբերյալ հաշվետվության տրամադրման նպատակով կարգավորումների նախատեսումը: Բացի այդ, Պաշտպանն առաջարկել է նաև «Տեղեկատվության ազատության և հանրային տեղեկությունների մասին» օրենքի նախագծում ամրագրել հատուկ կարգավորումներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար ժամանակին, մատչելի ձևով և առանց հավելյալ ֆինանսական բեռի տեղեկատվության տրամադրումն ապահովելու վերաբերյալ: Պաշտպանն անհրաժեշտ է համարել տեղեկության տրամադրման համար նախատեսված ծախսերի փոխհատուցման պարտականությունից ազատելու հստակ պարտականության նախատեսումը՝ անձի սոցիալական դրությամբ պայմանավորված՝ անկախ նրանից, թե ինչ նպատակով է անհրաժեշտ այդ տեղեկատվությունը:

Այսպիսով, Պաշտպանը, հիշատակելով, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ «Պետական մարմինների տրամադրության տակ գտնվող տեղեկատվության հասանելիության մասին» NR(81)19 հանձնարարականը, առաջարկել է նախագծային փոփոխությունները նախատեսել այնպես, որով հաշվի կառնվեն նույն հանձնարարականի պահանջները և կապահովվեն տեղեկատվության ազատության իրավունքի պատշաճ և արդյունավետ իրականացումը:

Բացի այդ, 2023 թվականի դեկտեմբերի 27-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության ապատեղեկատվության դեմ պայքարի 2024-2026 թվականների հայեցակարգը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշումը, որի նախագծային տարբերակների վերաբերյալ իր նկատառումներն է ներկայացրել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը և՛ 2022, և՛ 2023 թվականներին: Որոշմամբ նախատեսված հայեցակարգը, ի թիվս այլնի, նպատակ է հետապնդում նպաստել պաշտոնական տեղեկությունների մատչելիությանը և պրոակտիվ հաշվետվողականությանը՝ ակնկալելով պետական կառույցների առավել թափանցիկ, հաշվետու աշխատանքին միտված ձևաչափերի և հարթակների գործարկում, առկա ռեսուրսների բարելավում, պետական կառույցներում հաղորդակցության մասնագետների աշխատանքի բարելավում, մեդիագրագիտության և փաստերի ստուգման հմտությունների զարգացում և այլն:

Նշված արդյունքներին հասնելու համար էլ նույն որոշմամբ նախատեսվել են մի շարք գործողություններ, օրինակ՝ տեղեկատվության ազատության պատասխանատուների վերապատրաստումների իրականացում, ինչի անհրաժեշտության հարցը բարձրացվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում[248]:

Պաշտպանը ողջունում է պետության քայլերն՝ ուղղված տեղեկատվության ազատության երաշխավորման համատեքստում միջազգային պարտավորությունների ստանձնմանն ու կատարմանը: Միևնույն ժամանակ, վերոշարադրյալի հաշվառմամբ՝ դեռևս արդիական է տեղեկատվության ազատության համատեքստում պատշաճ իրավակիրառման ու «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով նախատեսված կառուցակարգերի ու իրավակարգավորումների վերաբերյալ հանրության իրազեկվածության բարձրացման ու նույն օրենքով նախատեսված մարմինների ու անձանց կարողությունների զարգացման ուղղությամբ լուրջ քայլեր ձեռնարկելու անհրաժեշտությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է.

✓ ներդնել միասնական ձևաչափեր ու չափանիշներ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված տեղեկատվության հրապարակման համար,

✓ կազմակերպել վերապատրաստման դասընթացներ պետական մարմինների աշխատակազմերի տեղեկատվության հարցերով պատասխանատու անձանց համար «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի ու վերջինիս կիրարկման կառուցակարգերի վերաբերյալ՝ ապահովելով դասընթացների շարունակականությունն ու մեթոդաբանության միասնականությունը:

[248] Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի «Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» 2021 թվականի տարեկան հաղորդումը, հասանելի է https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

2. Լրագրողների մասնագիտական գործունեության անխոչընդոտ իրականացումը դատական իշխանության գործունեության համատեքստում

2023 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում իրականացվել են Բարձրագույն դատական խորհրդի՝ նույն թվականի հուլիսի 3-ի նիստին լրագրողների մասնագիտական գործունեության առերևույթ սահմանափակումների առնչությամբ մամուլում տարածված հրապարակումների մշտադիտարկում և ուսումնասիրություն՝ դատական վարույթին չմիջամտելու սկզբունքի պահպանմամբ: Նշված ուսումնասիրությունների արդյունքում Մարդու իրավունքների պաշտպանը նույն թվականին հրապարակել է արտահերթ զեկույց Բարձրագույն դատական խորհրդի՝ 2023 թվականի հուլիսի 3-ի նիստին լրագրողների մասնագիտական գործունեության առերևույթ սահմանափակումների առնչությամբ[249]:

Լրագրողների գործունեության անխոչընդոտ իրականացման երաշխիքները սահմանված են ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով, ներպետական այլ իրավական ակտերով, այնպես էլ միջազգային պայմանագրերով և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային դիրքորոշումներով: Տեղեկատվություն ստանալու իրավունքը ներառում է նաև տեղեկությունների հասանելիության իրավունքը, ինչի ապահովմանն է ուղղված լրագրողի մասնագիտական գործունեությունը: Լրագրողների և լրատվամիջոցների մասնագիտական պաշտպանված և արդյունավետ աշխատանքն ունի մեծ հանրային կարևորություն:

[249] Առավել մանրամասն տե՛ս https://ombuds.am/images/files/d9937ce0e903b33e2c4a6df32ff9f2c3.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի 2020 թվականի թիվ 2317 բանաձև

Առանց խոսքի ազատության իրավունքի և ազատ, անկախ ու բազմակարծիք լրատվամիջոցների չկա իրական ժողովրդավարություն: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի համատեքստում՝ անդամ պետությունները լրագրողների և լրատվամիջոցների այլ ներկայացուցիչների անվտանգ գործունեության համար պատշաճ իրավական հիմք ստեղծելու դրական պարտավորություն ունեն:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2016 թվականի ապրիլի 13-ի «Լրագրողական գործունեության և լրագրողների ու մամուլի մասնակիցների ապահովության պաշտպանության մասին» թիվ CM/Rec(2016)4 հանձնարարական[250]

Հասարակությունն ունի հանրային հետաքրքրություն ներկայացնող այնպիսի տեղեկություններ և գաղափարներ ստանալու իրավունք, որոնք լրատվական գործունեություն իրականացնողները խնդիր ունեն տարածելու: *Տեղեկությունների հավաքագրումը լրագրողական գործունեության կարևոր նախապատրաստական քայլ է և մամուլի ազատության պաշտպանության ենթակա բաղկացուցիչ մաս:* Իսկ ինչ վերաբերում է վերջիններիս գործունեության սահմանափակմանը, ապա լրագրողների և մամուլի այլ ներկայացուցիչների մասնակցությունը հանրային իրավաչափ մտահոգության հարցերով հանրային բանավեճերին չպետք է խոչընդոտվի, օրինակ, տեղեկությունը հասանելի դարձնելու միջոցները ծանրաբեռնելով կամ կամայական սահմանափակումներով, որոնք կարող են դառնալ անուղղակի գրաքննության եղանակներ:

Հաշվի առնելով վերոգրյալը, այդ թվում՝ բարձրացված հարցի առնչությամբ հանրային մտահոգությունները, ինչպես նաև դատական իշխանություն-լրագրող փոխգործակցությանն ու ըստ այդմ՝ դատական իշխանության գործունեության թափանցիկության ու հանրային հաշվետվողականության ապահովման անհրաժեշտությունը՝ Մարդու իրավունքների պաշտպանը նախաձեռնել է քննարկվող ուսումնասիրությունը:

Որպես ուսումնասիրության ազդակ են ծառայել 2023 թվականի հուլիսի 3-ին տեղի ունեցած Բարձրագույն դատական խորհրդի՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի դռնփակ քննության արդյունքով որոշումը հրապարակելու դռնբաց նիստի առնչությամբ տեղի ունեցած իրադարձությունները. հրապարակային մտահոգություններ են ներկայացվել առ այն, որ նույն նիստին լրագրողների՝ նիստերի դահլիճ մուտքն արգելվել է: Միևնույն ժամանակ, Բարձրագույն դատական խորհրդի վարչական շենքում լրագրողների համար առանձնացվել է առանձին սենյակ՝ նիստերի դահլիճից ուղիղ հեռարձակումը դիտելու նպատակով: Չնայած նշվածին՝ ուսումնասիրության շրջանակներում դատական իշխանություն-լրագրող փոխգործակցության հարցերին անդրադարձ է կատարվել համակարգային առումով:

[250] Տե՛ս Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2016 թվականի ապրիլի 13-ի «Լրագրողական գործունեության և լրագրողների ու մամուլի մասնակիցների ապահովության պաշտպանության մասին» թիվ CM/Rec(2016)4 հանձնարարականը:

Ուսումնասիրության արդյունքում, համադրելով հանրային մտահոգություններն ու Բարձրագույն դատական խորհրդի՝ խնդրի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանի հարցադրումներին ի պատասխան ներկայացրած տեղեկատվությունը, ներպետական օրենսդրական կարգավորումներն ու միջազգային իրավական չափանիշներն ու մոտեցումները, Պաշտպանը ներկայացրել է հետևյալ առաջարկությունները.

- ***Նկատի ունենալով մամուլի ազատության և լրագրողական գործունեության կարևորությունը ժողովրդավարական հասարակությունում՝ դատական նիստերի դահլիճում կարելի է նախատեսել լրագրողների համար առանձնացված հատուկ տեղեր՝ նրանց աշխատանքային անհրաժեշտ պայմանները ապահովելու նպատակով:***
- ***Բացառիկ դեպքերի համար կարելի է նախատեսել նիստը հեռավար կարգով դիտարկելու նպատակով հատուկ հարմարեցված տարածք: Ընդ որում՝ նշված քայլերը պետությունը պետք է ձեռնարկի կանխավ, այլ ոչ կոնկրետ իրավիճակին արձագանքելու նպատակով՝ նկատի ունենալով իրավական կանխատեսելիության և որոշակիության սկզբունքների պահպանման կարևորությունը:***
- ***Անհրաժեշտ է պահպանել զանգվածային լրատվության միջոցների ներկա լինելու մասին հաղորդագրության հրապարակման, նիստին ներկա գտնվելու նպատակով զանգվածային լրատվության միջոցների գրանցման ընթացակարգերը:***
- ***Անհրաժեշտ է մշակել և իրացնել դատական նիստին մասնակցելու նպատակով գրանցված զանգվածային լրատվության միջոցների և նիստի այլ մասնակիցների միջև դատական նիստին մասնակցության առումով խտրական վերաբերմունքը բացառելուն ուղղված կառուցակարգեր:***
- ***Կախված գործի նկատմամբ հանրային հետաքրքրությունից՝ կարևոր է նախապես կանխորոշել նիստի մասնակիցների հնարավոր թիվն ու նախապես իրականացնել նիստի հրապարակայնության երաշխավորմանն ուղղված միջոցառումները:***
- ***Լրագրողական գործունեության ցանկացած սահմանափակում պետք է լինի իրավաչափ, իսկ նման սահմանափակման ցանկացած հնարավորություն պետք է լինի կանխատեսելի և որոշակի: Այդ առումով կարևոր է քննարկվող հիմնախնդրի կանոնակարգմանն ուղղված կոնկրետ իրավակարգավորումների առկայությունն ու պահպանումը:***
- ***Բոլոր դերակատարները պետք է խստորեն պահպանեն իրենց վերաբերելի՝ էթիկայի և վարքագծի կանոնները:***

3. Ատելության խոսքը հանրային տիրույթում

2023 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ուղղություններից ու առաջնահերթություններից է եղել անհանդուրժողականության ու ատելության խոսքի դեմ պայքարը: Կարևորելով կարծիքի արտահայտման ազատությունն ու դրա առանցքային նշանակությունը ժողովրդավարության հաստատման գործում՝ Պաշտպանը խիստ մտահոգիչ է գնահատել հանրային տիրույթում տարածված ատելության խոսքն ու անհանդուրժողականության մթնոլորտը: Ելնելով ատելության խոսքի դեմ պայքարում գործուն քայլեր ձեռնարկելու անհրաժեշտությունից՝ Պաշտպանն այս հարցերը մշտապես բարձրացրել է ինչպես իր հրապարակային ելույթներում ու հայտարարություններում, այնպես էլ ոչ հրապարակային հարթակներում ու տարբեր ձևաչափերով:

2023 թվականին Պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկումն արձանագրել է հանրային քննարկումներում, այդ թվում՝ սոցիալական հարթակներում անհանդուրժողականություն, ատելություն, թշնամանք, խտրականություն հրահրող, բռնություն քարոզող կամ արդարացնող խոսքի և վիրավորանքի լայն տարածումը: Ընդ որում, արձանագրվել է նաև պաշտոնատար անձանց և հասարակական ու քաղաքական գործիչների կողմից վիրավորական կամ արժանապատվությունը նվաստացնող արտահայտությունների կիրառում:

Այս առնչությամբ, նկատի ունենալով նաև ատելության խոսքի խիստ բացասական ազդեցությունը մարդու իրավունքների պաշտպանության ամբողջ համակարգի վրա՝ Պաշտպանը հանդես է եկել հայտարարություններով՝ քննադատելով ատելության խոսքի տարածումը և կոչ անելով բացառել նման խոսքը՝ քննարկումները վարելով համերաշխության և փոխադարձ հարգանքի մթնոլորտում:[251]

Պաշտպանը, մասնավորապես, ընդգծել է, որ հանդուրժողականությունն անկյունաքարային նշանակություն ունի ժողովրդավար, բռնությունից և խտրականությունից զերծ հասարակություն կառուցելու հարցում: Մինչդեռ հանրային բևեռացումը խաթարում է իրավական և ժողովրդավարական պետության հիմքում ընկած արժեքները: Ցանկացած հարցի վերաբերյալ հանրային ազատ բանավեճը ժողովրդավարական հասարակության կարևոր ձեռքբերումներից է: Միևնույն ժամանակ, յուրաքանչյուր քննարկում պետք է ընթանա կարծիքի արտահայտման ազատության իրավունքի թույլատրելի շրջանակներում, այլոց իրավունքների և ազատությունների հարգման ու համերաշխության մթնոլորտում:

Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է, որ ատելության խոսքի, բռնության կոչերի, վիրավորանքի, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ցանկացած դրսևորում՝ անկախ նրանից, թե ում կողմից է այն տարածվում կամ ում է հասցեագրված, անընդունելի է, լուրջ վտանգ է ներկայացնում մարդու իրավունքների պաշտպանության ամբողջ համակարգի տեսանկյունից, ուստի պետք է բացառվի հանրային խոսքից ու հանրային հարաբերությունների տիրույթից:

Պաշտպանն ընդգծել է, որ «պաշտոնատար անձանց հրապարակային խոսքը, նրանց փոխհարաբերություններն ու այդ առումով առկա խնդիրները էական ազդեցություն են ունենում նաև մարդու իրավունքների պաշտպանության ընդհանուր համակարգի վրա: Այս տեսանկյունից հատկապես կարևոր է խորհրդարանում հնչող խոսքի և վարքագծի իրավաչափությունը՝ որպես հանրության լայն շերտերի համար հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ քննարկումների գլխավոր հարթակ: Ուստի կարևոր է, որ պետական մարմինների, պաշտոնատար անձանց միջև փոխհարաբերությունները, քաղաքական և այլ հանրային գործունեության համար ընտրվող մեթոդաբանությունը համապատասխանեն իրավաչափության վերը նշված չափանիշներին: Ցանկացած քաղաքական բանավեճ կամ քննարկում պետք է ընթանա համերաշխության ու հարգանքի մթնոլորտում՝ բացառելով ոչ իրավաչափ խոսքը, այդ թվում՝ վիրավորանքը, արժանապատվության նվաստացումը, ատելության խոսքն ու բռնության քարոզը: Հանրային պաշտոն զբաղեցնող յուրաքանչյուր անձ և հանրային ծառայող ուղղակի պարտականություն ունի պահպանելու վարքագծի կանոնները, իր խոսքով ու վարքագծով բացառելու և մեղմելու հանրային բևեռացումը, բռնությունը, ատելության խոսքը, ոչ

[251] Տե՛ս, օրինակ, Մարդու իրավունքների պաշտպանի հայտարարությունը հանրային միջավայրում առկա անհանդուրժողականության մթնոլորտի վերաբերյալ, հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2505 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

իրավաչափ երևույթների, այդ թվում՝ բռնության ուղղակի կամ անուղղակի արդարացումը կամ խրախուսումը: Ավելին, կարևոր է, որպեսզի պաշտոնյաներն իրենց հանրային հարթակն օգտագործեն խոսքի և վարքագծի ոչ իրավաչափ դրսևորումներին, այդ թվում՝ հասարակության տարբեր խմբերին թիրախավորող արտահայտություններին ու ապատեղեկատվությանը հակազդելու նպատակով: Մարդու իրավունքների պաշտպանության պատշաճ համակարգ ձևավորելու տեսանկյունից առանցքային է, որպեսզի այդ հանգամանքը նկատի ունենան նաև հանրային ճանաչում ունեցող այլ անձինք, հասարակական ու քաղաքական գործիչները:

Մարդու իրավունքների պաշտպանը հատուկ ընդգծում է, որ մեր հասարակությունում առկա քաղաքական և հանրային բանավեճի մշակույթն ունի վերափոխման անհրաժեշտություն, ինչն առաջնահերթ խնդիր է հանրային հանդուրժողականության, համերաշխության և իրավունքի գերակայության երաշխավորման ճանապարհին»:

Անհանդուրժողականություն և ատելություն հրահրող արտահայտությունների հատկապես մեծ տարածվածությունը արձանագրվել է նաև 2023 թվականի սեպտեմբերին՝ Լեռային Ղարաբաղի քաղաքացիական բնակչության վրա Ադրբեջանի կողմից զինված հարձակման, Լեռնային Ղարաբաղի հայության բռնի տեղահանման և այս իրադարձություններին հաջորդող օրերին: Այդ օրերին հատկապես նկատելի է եղել հանրային խոսքում ծննդավայրի կամ բնակության վայրի հիմքով հայերի տարանջատումը, այդ հիմքով անձանց խմբերի նկատմամբ անհանդուրժողականության քարոզումը: Ընդ որում, նման խոսք տարածվել է ոչ միայն սոցիալական ցանցերի օգտատերերի, այլ նաև սեպտեմբերի 19-ից 26-ն ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած որոշ հավաքների մասնակիցների և զանգվածային լրատվության միջոցների կողմից:

Այս առնչությամբ ևս Պաշտպանը հանդես է եկել հայտարարություններով՝ շեշտելով, որ առանցքային է, որ պաշտոնատար անձինք, հասարակական և քաղաքական գործիչներն ու զանգվածային լրատվության միջոցները ոչ միայն չտարածեն ատելության խոսք, այլ նաև հակազդեն նման խոսքին:[252]



2023 թվականին «Լիբերալ քաղաքականության ինստիտուտ» հասարակական կազմակերպության հետ համատեղ Պաշտպանի նախաձեռնությամբ իրականացվել և հրապարակվել է «Ատելության հրահրման և բռնության կոչերի դեպքերի քննությունը Հայաստանի Հանրապետության քրեադատավարական համակարգում» վերտառությամբ ուսումնասիրություն[253]: Ուսումնասիրությամբ վեր են հանվել այն հիմնական հանգամանքները, որոնք իրավապահ մարմինների և դատարանների կողմից պետք է ուշադրության արժանանան ատելության խոսքի դեպքերի քննության ընթացքում և գնահատվել է, թե որքանով են նշված հանգամանքները գործնականում հաշվի առնվում: Ուսումնասիրությունները վկայում են դատավորների, քննիչների և դատախազների՝

[252] Հայտարարությունները հասանելի են՝ https://www.ombuds.am/am/site/ViewNews/2701 և https://www.ombuds.am/am/site/ViewNews/2711 հղումներով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[253] Տե՛ս Ատելության հրահրման և բռնության կոչերի դեպքերի քննությունը Հայաստանի Հանրապետության քրեադատավարական համակարգում» ուսումնասիրությունը, հասանելի է https://ombuds.am/images/files/59d3e8766a8ef5c75bec65afff6426e0.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

ատելության խոսքի քննության առնչությամբ կարողությունների զարգացման անհրաժեշտության մասին:

Ուսումնասիրության շրջանակներում, ի թիվս այլնի, ներկայացվել են նաև առաջարկներ, որոնց մի մասը հանգում է հետևյալին.

• վերանայել քննիչների, դատավորների և դատախազների վերապատրաստման դասընթացների նյութերը կամ մշակել նոր դասընթաց՝ առավել մանրամասն անդրադառնալով ատելության խոսքի (Քրեական օրենսգրքի 329-330-րդ հոդվածներ) քննության մեթոդիկային և առանձնահատկություններին և իրականացնել պարբերական վերապատրաստումներ,

• քննիչների, դատախազների և դատավորների համար մշակել ատելության խոսքի քննության ուղեցույց-ձեռնարկներ,

• կատարելագործել հանցագործությունների վերաբերյալ տվյալների հավաքագրման առկա մեխանիզմները՝ ապահովելով խտրականության, ատելության խոսքի և ատելության հիմքով հանցանքների վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքագրումը՝ տարանջատված՝ ըստ պաշտպանվող հատկանիշների:

«Լիբերալ քաղաքականության ինստիտուտ» հասարակական կազմակերպության հետ համատեղ և Հայաստանի Հանրապետությունում Նիդերլանդների Թագավորության դեսպանության օժանդակությամբ «Ատելության խոսքի դեմ պայքար՝ հանուն ժողովրդավարական հասարակությունում բազմակարծության և հանդուրժողականության հաստատման» ծրագրի շրջանակներում ատելության խոսքի անթույլատրելիության վերաբերյալ հանրության իրազեկվածության բարձրացման նպատակով հրապարակվել են հոլովակներ[254]:

Միջազգային Իրավական Համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) աջակցությամբ 2023 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի համար իրականացվել է «Պայքար ատելության խոսքի և ատելության շարժառիթով կատարված հանցագործությունների դեմ» թեմայով վերապատրաստման դասընթաց, որի շրջանակներում անդրադարձ է կատարվել, ի թիվս այլնի, ատելության խոսքից բխող վտանգներին, ատելության խոսքը ատելություն հրահրող խոսքի այլ դրսևորումներից տարանջատելու սկզբունքներին[255]:

Ատելության խոսքի անթույլատրելիության ու դրա դեմ պայքարելու անհրաժեշտության հարցերը բարձրացվում են նաև միջազգային իրավական մի շարք փաստաթղթերում ու միջազգային մարմինների դիտարկումներում:

[254] Հասանելի է https://www.youtube.com/watch?v=TWqjHuty0T8, https://www.youtube.com/watch?v=nk3OmRHv_Ow հղումներով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[255] Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2797 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա

Հոդված 4.

Մասնակից պետությունները դատապարտում են ցանկացած քարոզչություն և բոլոր այն կազմակերպությունները, որոնք հիմնված են մի ռասայի կամ մաշկի որոշակի գույն կամ էթնիկական ծագում ունեցող անձանց խմբի գերազանցության գաղափարների կամ տեսությունների վրա կամ որոնք փորձում են արդարացնել կամ խրախուսել ռասայական ատելությունն ու խտրականությունը, ինչ ձևով էլ որ դրանք դրսևորվելիս լինեն, պարտավորվում են ձեռնարկել անհապաղ ու դրական միջոցներ՝ ուղղված նման խտրականության ցանկացած հրահրում կամ իրականացում վերացնելուն (…):

Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտեի Ռասիստական ատելության խոսքի պայքարի վերաբերյալ թիվ 35 ընդհանուր հանձնարարական[256]

13. Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի մասնակից պետությունները պարտավոր են ընդունել օրենսդրություն՝ ռասիստական ատելության խոսքի դեմ պայքարելու համար, որը մտնում է կոնվենցիայի 4-րդ հոդվածի շրջանակի մեջ:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր

Հոդված 20

2. Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության օգտին որևէ ելույթ, որն իրենից ներկայացնում է խտրականության, թշնամանքի կամ բռնության սադրանք, պետք է արգելվի օրենքով:

Ելնելով ատելության խոսքի՝ առցանց հարթակում անթույլատրելի աստիճանի հասնող երևույթի դեմ պայքարելու անհրաժեշտությունից՝ Ռասիզմի, ռասայական խտրականության, այլատյացության և հարակից անհանդուրժողականության ժամանակակից ձևերի Հատուկ զեկուցողը ներկայացրել է մի շարք առաջարկներ՝ ուղղված ինչպես պետական մարմիններին, այնպես էլ հասարակական կազմակերպություններին ու նշված գործընթացի դերակատարներին: Առաջարկները, ի թիվս այլնի, հանգում են հետևյալին.

Ռասիզմի, ռասայական խտրականության, այլատյացության և հարակից անհանդուրժողականության ժամանակակից ձևերի Հատուկ զեկուցողի զեկույցը[257]

- Արդյունավետորեն իրագործել Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի դրույթները և հատկապես 4-րդ հոդվածը, ապահովել, որ առցանց ռասիստական ատելության խոսքի դեմ ուղղված բոլոր ջանքերն ուղղված լինեն Կոնվենցիայի բոլոր դրույթների իրագործմանը:

[256] Տե՛ս Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտեի Ռասիստական ատելության խոսքի պայքարի վերաբերյալ թիվ 35 ընդհանուր հանձնարարականը, հասանելի է https://www.refworld.org/legal/general/cerd/2013/en/101142 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

257 Հասանելի է https://documents.un.org/doc/undoc/gen/n23/311/40/pdf/n2331140.pdf?token=oRM0hfcGACGXvpp3Kx&fe=true հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

• Կազմակերպել մարդու իրավունքների սկզբունքներին համահունչ վերապատրաստումներ իրավասու հանրային ծառայողների, այդ թվում՝ քաղաքացիական ծառայողների, իրավապահ ու դատական համակարգի ներկայացուցիչների համար՝ առցանց հարթակում ռասիստական ատելության խոսքը հասցեավորող ու կանխարգելող մարդու իրավունքների միջազգային չափանիշների վերաբերյալ:

Մամուլի ազատության ու ժողովրդավարության վերաբերյալ համատեղ հռչակագիրը[258]

Լրատվամիջոցների՝ որպես ժողովրդավարության երաշխավորների ու հանրային վերահսկողների հանրային վստահությունն ու լեգիտիմությունը երաշխավորելու համար անհրաժեշտ է, որ լրագրողական գործունեություն իրականացնողները զերծ մնան ապատեղեկատվություն, խտրականություն, ատելության խոսք ու քարոզչություն տարածելուց:

Ռասիզիմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովն ընդգծում է, որ իշխանությունները պետք է քայլեր ձեռնարկեն առցանց հարթակում ատելության խոսքի կանխարգելման ու դրա դեմ պայքարի շրջանակներում, այդ թվում՝ ապահովելով, որ այդպիսի խոսքի հեռացման ընթացակարգերի ու պայմանների, ինչպես նաև պատասխանատվության առնչությամբ կարգավորումները լինեն թափանցիկ, հստակ ու կանխատեսելի պատասխանատվության առնչությամբ կարգավորումները լինեն թափանցիկ, հստակ ու կանխատեսելի[259]:

Հանձնաժողովը նշում է, որ պետական իշխանությունները պետք է ատելության խոսքի վտանգների ու անթույլատրելիության վերաբերյալ հանրության իրազեկվածությունը բարձրացնեն, այդ թվում՝ ապատեղեկատվության, բացասական կարծրատիպերի ու խարանի դեմ պայքարի միջոցով՝ ինչպես աջակցելով քաղաքացիական հասարակությանն ու այն հաստատություններին, որոնք աշխատանքներ են տանում ատելության խոսքի կանխարգելման ու վերացման ուղղությամբ, այնպես էլ խրախուսելով հանրային գործիչների արագ արձագանքն ատելության խոսքին:

Ռասիզիմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովն առաջարկում է.

i) ուրվագծել ու սահմանել պետական և մասնավոր դերակատարների պարտականություններն առցանց ատելության խոսքի դեմ պայքարում.

ii) առցանց ատելության խոսքի գնահատման և հետաքննության հարցում այդ դերակատարների և նրանց միջև արդյունավետ համագործակցության հստակ կանոններ և ընթացակարգեր մշակել.

iii) ապահովել, որ հեռացման ընթացակարգերն ու պայմանները, ինչպես նաև ամրագրված պարտականություններն ու պատասխանատվություն սահմանող կարգավորումները լինեն թափանցիկ, պարզ և կանխատեսելի.

iv) խստորեն խրախուսել և աջակցել լրատվամիջոցների ներկայացուցիչների և լրագրողների վերապատրաստումների իրականացմանը՝ թիրախավորելով այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ ինչպես ճանաչել, հաղորդել և արձագանքել ատելության խոսքին,

[258] Տե՛ս Մամուլի ազատության ու ժողովրդավարության վերաբերյալ համատեղ հռչակագիրը, հասանելի https://www.osce.org/files/f/documents/3/2/542676.pdf է հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[259] Հասանելի է https://www.coe.int/en/web/yerevan/news/-/asset_publisher/UlNPvpZUDPS7/content/armenia-ecri-notes-progress-but-says-all-discrimination-grounds-must-be-covered-by-law-hate-speech-tackled-effectively հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

ինչպես նաև խուսափել այն օգտագործելուց և տարածելուց՝ չվտանգելով լրատվամիջոցների անկախությունը կանխատեսելի պատասխանատվության առնչությամբ կարգավորումները լինեն թափանցիկ, հստակ ու կանխատեսելի[260]:

Հանձնաժողովը նշում է, որ պետական իշխանությունները պետք է ատելության խոսքի վտանգների ու անթույլատրելիության վերաբերյալ հանրության իրազեկվածությունը բարձրացնեն, այդ թվում՝ ապատեղեկատվության, բացասական կարծրատիպերի ու խարանի դեմ պայքարի միջոցով՝ ինչպես աջակցելով քաղաքացիական հասարակությանն ու այն հաստատություններին, որոնք աշխատանքներ են տանում ատելության խոսքի կանխարգելման ու վերացման ուղղությամբ, այնպես էլ խրախուսելով հանրային գործիչների արագ արձագանքն ատելության խոսքին:

Ռասիզիմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովն առաջարկում է.

i) ուրվագծել ու սահմանել պետական և մասնավոր դերակատարների պարտականություններն առցանց ատելության խոսքի դեմ պայքարում.

ii) առցանց ատելության խոսքի գնահատման և հետաքննության հարցում այդ դերակատարների և նրանց միջև արդյունավետ համագործակցության հստակ կանոններ և ընթացակարգեր մշակել.

iii) ապահովել, որ հեռացման ընթացակարգերն ու պայմանները, ինչպես նաև ամրագրված պարտականություններն ու պատասխանատվություն սահմանող կարգավորումները լինեն թափանցիկ, պարզ և կանխատեսելի.

iv) խստորեն խրախուսել և աջակցել լրատվամիջոցների ներկայացուցիչների և լրագրողների վերապատրաստումների իրականացմանը՝ թիրախավորելով այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ ինչպես ճանաչել, հաղորդել և արձագանքել ատելության խոսքին, ինչպես նաև խուսափել այն օգտագործելուց և տարածելուց՝ չվտանգելով լրատվամիջոցների անկախությունը:

ՌԱՍԻԶՄԻ ԵՎ ԱՆՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ՌԱԵՀ) ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹԻՎ 15 ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ[261]

Անհրաժեշտ է՝

- նախաձեռնել եռանդուն ջանքեր ոչ միայն բազմակարծության նկատմամբ հարգանքի կարևորության և ատելության խոսքի հետ կապված վտանգների մասին հանրության իրազեկությունը բարձրացնելու, այլև դրա հիմքերի սխալականությունը և դրա անընդունելիությունը մատնանշելու համար՝ ատելության խոսքը սահմանափակելու և կանխելու նպատակով,
- սատարել հանրային և մասնավոր հաստատությունների (ներառյալ՝ ընտրված մարմինների, քաղաքական կուսակցությունների, կրթական հաստատությունների, մշակութային և սպորտային կազմակերպությունների) ինքնակարգավորմանը՝ որպես ատելության խոսքի օգտագործման դեմ պայքարի միջոց,

[260] Հասանելի է https://www.coe.int/en/web/yerevan/news/-/asset_publisher/UlNPvpZUDPS7/content/armenia-ecri-notes-progress-but-says-all-discrimination-grounds-must-be-covered-by-law-hate-speech-tackled-effectively հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[261] Տե՛ս Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի (ՌԱԵՀ) ընդհանուր քաղաքականության թիվ 15 հանձնարարական ատելության խոսքի դեմ պայքարի վերաբերյալ, հասանելի է https://rm.coe.int/ecri-general-policy-recommendation-no-15-on-hate-speech-armenian-trans/1680a1dced հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

• կիրառել կարգավորող լիազորություններ զանգվածային լրատվամիջոցների (ներառյալ՝ համացանցային ծառայություն մատուցողների, առցանց միջնորդների և սոցիալական մեդիայի) նկատմամբ՝ խթանելու ատելության խոսքի դեմ պայքարի գործողությունները և մերժելու դրա ընդունելի լինելը՝ միաժամանակ չխախտելով արտահայտվելու և սեփական կարծիք ունենալու ազատության իրավունքը,

• հստակեցնել քաղաքացիական և վարչական պատասխանատվության շրջանակը և կիրառելիությունը ատելության խոսքի օգտագործման դեպքում, որը նպատակաուղղված է կամ ողջամտորեն կարող է ակնկալվել, որ ուղղված է բռնություն, ահաբեկում, թշնամանք կամ խտրականություն հրահրելուն ատելության խոսքով թիրախավորված անձանց նկատմամբ՝ միաժամանակ հարգելով արտահայտվելու և կարծիքի ազատության իրավունքը:

Միջազգային իրավական փաստաթղթերում վերոնշյալից բացի խիստ կարևորվում է նաև հանրային գործիչների ու պաշտոնատար անձանց դերակատարությունը ատելության խոսքի դեմ պայքարում՝ ելնելով վերջիններիս ազդեցիկ դիրքից:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի ատելության խոսքի դեմ պայքարի վերաբերյալ CM/Rec(2022)16 հանձնարարական[262]

28. Պետական պաշտոնյաները, հատկապես նրանք, ովքեր ղեկավար պաշտոններ են զբաղեցնում, պետք է, հաշվի առնելով իրենց ազդեցիկ դիրքը, խուսափեն ատելության խոսքի մեջ ներգրավվելուց, հավանություն տալուց կամ տարածելուց: Խրախուսվում է վերջիններիս կողմից հրապարակայնորեն մարդու իրավունքների մշակույթի խթանումն ու ատելության խոսքի խստորեն և անհապաղ դատապարտումը ՝ հարգելով կարծիքի արտահայտման և տեղեկատվության ազատությունը, ներառյալ քննադատությունն ու տեղեկատվությունը, որը կարող է վիրավորել, ցնցել կամ անհանգստացնել պետությանը կամ բնակչության որևէ հատվածի:

29. Խրախուսվում է խորհրդարանների, այլ ընտրված մարմինների և քաղաքական կուսակցությունների կողմից ատելության խոսքի դեմ պայքարի հատուկ քաղաքականության կիրառումը, հատկապես՝ ընտրարշավների և ներկայացուցչական ժողովների քննարկումների համատեքստում: Այդ նպատակով վերջիններս պետք է ընդունեն վարքագծի կանոններ, որոնք նախատեսում են ներքին բողոքների և պատժամիջոցների ընթացակարգեր: Այս մարմինները պետք է խուսափեն ցանկացած արտահայտությունից, որը կարող է խթանել անհանդուրժողականությունը և պետք է բացահայտորեն դատապարտեն ատելության խոսքը:

Վերոգրյալը նկատի ունենալով՝ Պաշտպանն ընդգծում է, որ պետությունը պետք է ներդնի ատելության խոսքի , ներառյալ՝ առցանց տիրույթում տարածված) դեմ պայքարում արդյունավետ կառուցակարգեր՝ ընդունելով համապատասխան օրենսդրական կարգավորումներ ու ապահովելով այդ կարգավորումների պատշաճ իրացումը, բարձրացնելով հանրային իրազեկվածությունն ու ոլորտի դերակատարների՝ հանրային գործիչների, պաշտոնատար անձանց, լրագրողների և այլոց կարողությունները նշված ոլորտում:

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովն ընդգծել է, որ հայաստանյան հանրային և քաղաքական տիրույթում ժամանակ առ ժամանակ

[262]Տե՛ս Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի ատելության խոսքի դեմ պայքարի վերաբերյալ CM/Rec(2022)16 հանձնարարականը, հասանելի է https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectId=0900001680a67955 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

տարածվում է ատելության խոսք, ներառյալ՝ բռնության կոչեր՝ ընդգծելով, որ նման խոսքը գլխավորապես տարածվում է քաղաքական գործիչների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և լրագրողների նկատմամբ[263]:

Միևնույն ժամանակ, Հանձնաժողովի արձանագրմամբ՝ Հայաստանի իշխանությունների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից ձեռնարկվել են ատելության խոսքի և ատելության շարժառիթով հանցագործությունների վերաբերյալ համապատասխան մասնագետների վերապատրաստմանն ուղղված միջոցառումներ՝ հատկապես Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրի իրազեկման բաղադրիչի շրջանակներում:

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագրում՝ նախատեսված ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1978-Լ որոշման Հավելված N3-ով, ատելության խոսքի դեմ պայքարի շրջանակներում որոշակի միջոցառումներ են նախատեսված իրավահավասարության ու խտրականության արգելքի, ինչպես նաև կարծիքի արտահայտման ազատության համատեքստում: Մասնավորապես՝ նույն ծրագրի միջոցառումներից են «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում ատելության խոսքի և խոսքի ազատության սահմանազատումը՝ համապատասխան չափորոշիչների սահմանմամբ, ատելության խոսքի առավել մեղմ դրսևորումների համար վարչական կամ քաղաքացիական պատասխանատվության միջոցների սահմանումը, իրազեկման արշավների իրականացումը, այդ թվում՝ հասարակության լայն շերտերի ներգրավմամբ՝ ուղղված ատելության խոսքի, դրա բացասական ազդեցության բացառմանը, այլակարծության և կարծիքի ազատության իրավունքի նկատմամբ հարգանքի խթանմանը, Ոստիկանության, քննչական մարմինների, դատախազության համար խտրականության, ատելության խոսքի և ատելության հիմքով հանցագործությունների քննության շարժառիթով գործերի քննության ուղեցույցների մշակումն ու հաստատումը:

Պաշտպանը ողջունում է պետության կողմից նշված քայլերի իրականացումը: Միևնույն ժամանակ, պետք է արձանագրել, որ 2023 թվականի ընթացքում շարունակել է մտահոգիչ լինել հանրային տիրույթում անհանդուրժողականության, ատելություն խոսքի տարածվածության աստիճանը, ինչը վկայում է ատելության խոսքի դեմ պայքարում գործուն և միասնական ջանքեր գործադրելու անհրաժեշտության մասին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է

✓ հանրային խոսույթում բացառել ատելության խոսքի, բռնության կոչերի, վիրավորանքի, անհանդուրժողականության, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ցանկացած դրսևորում, ինչպես նաև հակազդել նման խոսքին,

✓ իրականացնել լրագրողների շարունակական վերապատրաստումներ՝ խոսքի ազատության, ատելության խոսքի և համանման թեմաների առնչությամբ՝ ուղղված, ի թիվս այլնի՝ վերջիններիս կողմից ատելության խոսքի կիրառման կամ նման խոսք պարունակող նյութերի տարածման կանխարգելմանն ու նման խոսք պարունակող նյութերի հակազդմանը,

✓ իրականացնել հանրային ծառայողների շարունակական վերապատրաստումներ՝ խոսքի ազատության, ատելության խոսքի և համանման թեմաների առնչությամբ՝ ուղղված, ի թիվս այլնի՝ վերջիններիս կողմից ատելության

[263] Հասանելի է https://rm.coe.int/sixth-report-on-armenia/1680ab9e33 հղումով, էջ 13, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

խոսքի կիրառման կամ նման խոսք պարունակող նյութերի տարածման կանխարգելմանն ու ատելության խոսքին հակազդմանը,

- ✓ ***իրականացնել ատելության խոսքի վերաբերյալ հանրության իրազեկման լայնածավալ միջոցառումներ՝ ներկայացնելով ինչպես դրա բացասական հետևանքները, այնպես էլ օրենքով սահմանված պաշտպանության կառուցակարգերը:***

ԲԱԺԻՆ 7. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Անձնական տվյալների պաշտպանությունը՝ որպես լրագրողական հարցումներին չպատասխանելու կամ ոչ լիարժեք տեղեկատվության տրամադրման հիմք

Վերջին տարիների ընթացքում լրատվական գործունեություն իրականացնող անձինք և լրագրողներ Մարդու իրավունքների պաշտպանին պարբերաբար հասցեագրել են հարցադրումներ և դիմումներ՝ պետական մարմինների կողմից անձնական տվյալների հիմքով հայցվող տեղեկությունների տրամադրումը մերժելու իրավաչափության վերաբերյալ:

Նախորդ տարիների ընթացքում Պաշտպանի իրականացրած ուսումնասիրությունները ցույց են տվել, որ անհրաժեշտություն կա սահմանելու կոնկրետ չափանիշներ, որոնք կկիրառվեն այն դեպքերում, երբ լրագրողը հայցում է անձնական տվյալներ պարունակող տեղեկություններ, իսկ պետական մարմինը քննարկում է անձնական տվյալներ պարունակող տեղեկատվության տրամադրման հարցը: Ուսումնասիրությունների արդյունքում Մարդու իրավունքների պաշտպանը մշակել է անձնական տվյալների պաշտպանությունը, որպես լրագրողական հարցումներին չպատասխանելու կամ ոչ լիարժեք տեղեկատվության տրամադրման հիմքի առնչությամբ ուղենշային կանոններ, որոնք ներկայացվել են 2021 թվականի տարեկան հաղորդման մեջ[264]: Այդ չափանիշների կիրառումը շարունակում է արդիական մնալ լրագրողի՝ անձնական տվյալներ պարունակող տեղեկություններ հայցելիս պետական մարմնի՝ դրանց տրամադրման հարցի քննարկման յուրաքանչյուր դեպքում:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են հարցադրումներ՝ լրագրողների կողմից հայցվող տեղեկությունների տրամադրումը պետական մարմինների կողմից մերժելու հիմքերի և իրավաչափության կապակցությամբ: Ըստ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմումների՝ մերժման հիմքում դրվում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված պահանջը, այն է՝ տեղեկատվության տնօրինողը մերժում է տեղեկատվության տրամադրումը, եթե դա խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը: Ուստի՝ պետական մարմինները մերժում են լրագրողներին այլ անձի անձնական կյանքի վերաբերյալ տեղեկություններ պարունակող տեղեկատվության տրամադրումը՝ նշելով, որ տվյալները փոխանցման ենթակա չեն առանց անձի համաձայնության:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքում փոփոխություններ են կատարվել 2016 թվականի դեկտեմբերի 16-ին, որի արդյունքում օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասն ուժը կորցրած է ճանաչվել, որով սահմանվում էր, որ անձնական տվյալներ մշակելու սահմանափակումները չեն տարածվում լրագրության, գրական և գեղարվեստական նպատակներով մշակվող անձնական տվյալների վրա: Դրույթն ուժը կորցրած ճանաչելով՝ անձնական տվյալների մշակման, հետևաբար նաև՝ դրանց տարածման սահմանափակումները սկսեցին գործել նաև լրագրողական մասնագիտական գործունեության դեպքում:

[264] Առավել մանրամասն տե՛ս 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության,մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումները, էջեր 434-436, հասանելի https://ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Ստացվում է, որ լրագրողի մասնագիտական գործունեության համատեքստում անձնական տվյալների պաշտպանության հարցերի օրենսդրական հատուկ կանոնակարգումներ առկա չեն, ինչը նշանակում է, որ լրագրողների և լրագրողական գործունեության վրա տարածվում են «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի ընդհանուր կարգավորումները:

Եվրոպական միության Տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգի (GDPR) 85-րդ հոդվածի համաձայն՝ անդամ պետությունները պետք է համաձայնեցնեն անձնական տվյալների պաշտպանության իրավունքը կարծիքի արտահայտման և տեղեկատվության ազատության հետ՝ ներառյալ անձնական տվյալների մշակումը լրագրողական, ակադեմիական, գեղարվեստական կամ գրական նպատակներով: Նույն հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ լրագրողական նպատակներով տվյալների մշակման կամ ակադեմիական, գեղարվեստական կամ գրական արտահայտման նպատակներով անդամ պետությունները պարտավոր են նախատեսել բացառություններ կամ վերապահումներ անձնական տվյալների պաշտպանության կանոնակարգի մի շարք դրույթներից, ինչպիսիք են՝ սկզբունքները, անձնական տվյալների սուբյեկտի իրավունքները, անկախ վերահսկողական մարմինները, համագործակցությունն ու շարունակականությունը, տվյալների մշակման առանձնահատուկ իրավիճակներ[265]:

Կանոնակարգի վերոնշյալ դրույթով սահմանված՝ լրագրողական գործունեությամբ պայմանավորված բացառությունները միջազգային իրավաբանության մեջ հայտնի են որպես «**լրագրողական բացառություն**» (journalistic exemption):

Թեև Կանոնակարգն այս բացառության կիրառության առանձնահատկությունների սահմանումը թողնում է անդամ պետությունների հայեցողությանը, այդուհանդերձ այն նախանշում է, որ լրագրողական գործունեության՝ իբրև կարծիքի արտահայտման ազատության ու մամուլի, որպես հանրային վերահսկողության կարևորագույն օղակի, գործունեության ապահովման համար անձնական տվյալների ընդհանուր կանոնները չեն կիրառվում:

Ուստի՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում 2016 թվականին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում օրենքը չի համապատասխանում Եվրոպական միության Տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգի (GDPR) 85-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված կարգավորմանը, որն անդամ պետություններին պարտավորեցնում է լրագրողական նպատակներով տվյալների մշակման համար նախատեսել անձնական տվյալների պաշտպանության կանոնակարգի դրույթներից բացառություններ կամ վերապահումներ:

«Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով լրագրողական գործունեության համատեքստում անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ հատուկ կանոններ ու առանձնահատկություններ նույնպես ամրագրված չեն, այդ թվում՝ անձնական տվյալների պաշտպանության ու լրագրողական գործունեությամբ հետապնդվող հանրային շահի հարաբերակցության առումով՝ ինչպես լրագրողի կողմից տեղեկությունների հավաքման, այնպես էլ հրապարակման փուլերում:

Մարդու իրավունքների պաշտպանի դիտարկմամբ՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքում անձնական տվյալներ մշակելու սահմանափակումները լրագրության վրա չտարածելու բացառության սկզբնական ամրագրումը և հետագայում դրա վերացումն առկախված են թողնում լրագրողական

[265] Հասանելի է https://gdpr-info.eu/ հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

գործունեության ընթացքում անձնական տվյալների պաշտպանության, լրագրողական գործունեության առանձնահատկություններն ու դրանց վերաբերյալ իրավական մոտեցումները:

Այս համատեքստում խնդրահարույց են նաև «հանրային շահի»՝ որպես անձնական տվյալների հրապարակումը «թույլատրող» հիմքի գնահատման իրավական չափանիշները: Մասնավորապես, լրատվական միջոցները հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի լուսաբանման առաքելությունն իրականացնելիս բախվում են տեղեկացված լինելու հանրային շահի և անձնական տվյալների պաշտպանության հավասարակշռման խնդրին:

Հունգարիայի Հելսինկյան կոմիտեն ընդդեմ Հունգարիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումը.

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ «անդամ պետությունները, բացառությամբ որոշ դեպքերի, պետք է երաշխավորեն յուրաքանչյուրի իրավունքը ստանալու պետական փաստաթղթերը, որոնք պահպանվում են հանրային իշխանությունների կողմից: Եվրոպական դատարանը գտել է, որ պահանջվող տեղեկությունը, տվյալները կամ փաստաթղթերը պետք է ներկայացնեն հանրային շահագրգռվածություն, որպեսզի առաջանա դրանք բացահայտելու անհրաժեշտությունը: Նման անհրաժեշտությունն առաջանում է այն դեպքերում, երբ այն նպատակ է հետապնդում ապահովել թափանցիկություն հանրային գործառույթների իրականացման ոլորտում, ինչպես նաև հասարակության հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերի վերաբերյալ, ինչով հասարակության լայն զանգվածներին հնարավորություն է ընձեռվում մասնակցել հանրային կառավարմանը» [266]:

Եվրոպական դատարանն ընդգծել է նաև, որ հանրային շահերին վերաբերող տեղեկության բովանդակությունը կախված է յուրաքանչյուր գործի հանգամանքներից:Նույն գործով Եվրոպական դատարանն առանձնացրել է չափանիշներ, որոնց միջոցով յուրաքանչյուր կոնկրետ դեպքում գնահատվում է, թե արդյոք պետության (պետական մարմինների) կողմից պահվող տեղեկությունների մատչելիության մերժումը միջամտություն է անձի արտահայտվելու ազատության իրավունքին, թե ոչ:

Այդ չափանիշներն են՝

1) տվյալ տեղեկությունը հայցելու նպատակը. հարցումը պետք է հետապնդի ազատորեն արտահայտվելու իրավունքի իրացման, այդ թվում՝ սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու նպատակ,

2) հայցվող տեղեկության բնույթը. այն պետք է հանրային հետաքրքրություն ներկայացնի, որպեսզի առկա լինի դրա բացահայտման անհրաժեշտությունը: Նման անհրաժեշտությունն առկա է, եթե, ի թիվս այլնի, նման բացահայտումն ապահովում է հանրային կառավարման և հանրության շահերին առնչվող հարցերի թափանցիկությունը և այդպիսով հնարավորություն է տալիս հանրությանը մասնակցելու պետական կառավարմանը,

3) տեղեկություն հայցողի դերը. կոնկրետ անձի կողմից համապատասխան տեղեկատվության հայցումը պետք է միտված լինի ստացված տեղեկատվությունը հասարակությանը փոխանցելուն՝ ի սկզբանե նպատակ ունենալով պաշտպանելու հասարակության շահը,

[266] Տե՛ս Հունգարիայի Հելսինկյան կոմիտեն ընդդեմ Հունգարիայի (Magyar Helsinki Bizottság v. Hungary) գործով 2016 թվականի նոյեմբերի 8-ի վճիռը, գանգատ թիվ 18030/11, կետեր 145, 161, 162:

4) հավաքագրված, ամփոփված և հասանելի տեղեկատվության առկայություն (“ready and available”). տեղեկատվության տրամադրման մերժումը որպես «տեղեկատվության ստացման և տարածման ազատության» իրավունքի իրացման «միջամտություն» գնահատելու համար կարևոր չափանիշ է տեղեկատվության նախապատրաստվածությունը[267]:

Տեղեկատվության մատչելիության և հանրային շահագրգռվածության, դրանում մամուլի դերակատարության հարցերը քննարկման առարկա են դարձել նաև ներպետական պրակտիկայում: Սահմանադրական դատարանը իր՝ 2016 թվականի փետրվարի 23-ի թիվ ՍԴՈ-1256 որոշմամբ կարևորել է հանրային նշանակություն ունեցող տեղեկությունների մատչելիությունը՝ վերահաստատելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումը, ըստ որի՝ հասարակության համար հետաքրքրություն ներկայացնող տեղեկության տրամադրման խոչընդոտները կարող են բացասաբար ազդել զանգվածային լրատվության միջոցներում և հարակից ոլորտներում գործունեություն ծավալող անձանց վրա[268]:

Վճռաբեկ դատարանն իր 2019 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ ՎԴ/4169/05/15 որոշմամբ արձանագրել է, որ արտահայտվելու իրավունքն անձի՝ Կոնվենցիայով և ՀՀ Սահմանադրությամբ պաշտպանվող հիմնարար իրավունքներից մեկն է, որը բացարձակ իրավունք չէ և ենթակա է որոշ սահմանափակումների: Նշված իրավունքը ենթակա է սահմանափակումների օրենքով սահմանված կարգով՝ ելնելով պետական անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը կամ հասարակության անվտանգությունը պահպանելու, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակից[269]:

Հանրային շահի գնահատման խնդրին և լրագրողական նպատակով անձնական տվյալների մշակմանն անդրադարձել է նաև ՀՀ արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալությունն իր 2019 թվականի գործունեությունն ամփոփող հաշվետվությամբ: Գործակալությունը դիրքորոշում է հայտնել, որ անձնական տվյալների մշակման և մարդու անձնական և ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկություն տարածելու յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է, որ լրատվամիջոցը (լրագրողը) սահմանի տվյալների մշակման նպատակ և գնահատի՝ արդյո՞ք առկա է հանրային այնպիսի շահ, որի պաշտպանության նպատակով անհրաժեշտ է ստորադասել մարդու անձնական տվյալների պաշտպանության շահը և մարդու անձնական և ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկություն տարածել: Միաժամանակ, սահմանված նպատակը պետք է լինի որոշակի և օրինական, այսինքն՝ հանրային շահի պաշտպանությունը պետք է ոչ թե պատրվակ լինի, այլ պետք է իրականում արտացոլի տարածվող տեղեկության (տվյալ դեպքում՝ անձնական տվյալներ պարունակող տեղեկության) սոցիալական անհրաժեշտությունը և կարևորությունը, իսկ հրապարակվող անձնական տվյալները պետք է լինեն սահմանված նպատակին համաչափ՝ լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր, մշակվեն այն քանակով, որն անհրաժեշտ է սահմանված

[267] Տե՛ս Հունգարիայի Հելսինկյան կոմիտեն ընդդեմ Հունգարիայի (Magyar Helsinki Bizottság v. Hungary) գործով 2016 թվականի նոյեմբերի 8-ի վճիռը, գանգատ թիվ 18030/11, կետեր 159, 161, 168, 170, հասանելի է https://hudoc.echr.coe.int/fre#{%22itemid%22:[%22001-167828%22]} հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[268] Տե՛ս Սահմանադրական դատարանի 2016 թվականի փետրվարի 23-ի թիվ ՍԴՈ-1256 որոշումը:
[269] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2019 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ ՎԴ/4169/05/15 որոշումը:

նպատակին հասնելու համար, և պետք է բացառվի այն տվյալների մշակումը, որոնք անհրաժեշտ չեն նպատակի համար կամ անհամատեղելի են դրա հետ[270]:

«Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով)՝ «Տեղեկատվության ազատության մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի վերաբերալ թիվ CDL-AD(2009)016 կարծիքը.

«Տեղեկատվության ազատության մասին» **ՀՀ օրենքի նախագծի** 8-րդ հոդվածի ընդհանուր խնդիրն այն է, որ այն չի պարունակում վնասի կամ հանրային շահի ստուգում համար որևէ չափանիշ: Սա հակասում է «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 3.2-րդ հոդվածին և նախագծի ամենալուրջ թերություններից մեկն է[271]:

Հարկ է նշել, որ հանրային շահի թեստին վերաբերող պահանջներ ամրագրված են մի շարք պետությունների ազգայիին օրենսդրությամբ, ինչպես օրինակ՝ Իռլանդիայի Հանրապետությունում, Մոլդովայի Հանրապետությունում, Սերբիայի Հանրապետությունում, Խորվաթիայի Հանրապետությունում[272]:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ մի կողմից՝ լրագրողի մասնագիտական գործունեության համատեքստում անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ օրենսդրական հատուկ կանոնակարգումներ սահմանված չեն, մյուս կողմից էլ՝ օրենսդրությամբ նախանշված չեն «հանրային շահի» գնահատման չափանիշներ, որոնք կնախանշեն հանրային շահերի պաշտպանության համար առանց անձի համաձայնության վերջինիս անձնական տվյալների հրապարակման իրավաչափությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է՝

- ✓ ***օրենսդրական մակարդակում նախանշել անձնական տվյալների մշակման և տարածման վերաբերյալ լրատվական գործունեությամբ զբաղվող անձանց և լրագրողների մասնագիտական գործունեության համար հատուկ կարգավորումներ՝ միջազգային իրավական չափանիշների հաշվառմամբ,***
- ✓ ***սահմանել լրագրողական գործունեության առանձնահատկություններով պայմանավորված կամ, այսպես կոչված՝ «լրագրողական բացառության» շրջանակներում անձնական տվյալների պաշտպանությանն առնչվող կարգավորումներ,***
- ✓ ***հանրային շահի պաշտպանության համատեքստում նախանշել առանց անձի համաձայնության վերջինիս անձնական տվյալների հրապարակման իրավաչափության գնահատման չափանիշներ,***

[270] Տե՛ս ՀՀ արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալության 2019 թվականի գործունեությունն ամփոփող հաշվետվությունը, հասանելի է https://www.moj.am/storage/uploads/2019Annual-report-2019-ATPG.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[271] Տե՛ս ԵԽ Վենետիկի հանձնաժողովի կողմից «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 2008 թվականի նախագծի վերաբերյալ ներկայացված թիվ 511/2009 կարծիքը, 2009թ:, հասանելի է https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL(2009)019-e հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[272] Տե՛ս «Բաց հասարակություն հիմնադրամներ-Հայաստան» ՀԿ-ի զեկույցը ՀՀ-ում տեղեկատվության ազատությանն առնչվող խնդիրների վերաբերյալ, էջ 57, հասանելի է https://www.osf.am/wp-content/uploads/2020/09/Final-book-FOI.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

✓ ***իրականացնել վերապատրաստման դասընթացներ պետական մարմինների ներկայացուցիչների և լրագրողների համար «անձնական տվյալներ» հասկացության, ինչպես նաև լրագրողական գործունեության ոլորտում անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ:***

2. Անձնական տվյալների պաշտպանությունը «ԴատաԼեքս» համակարգում դատական գործերի հրապարակման համատեքստում

Մարդու իրավունքների պաշտպանն իր նախորդ տարեկան հաղորդումներում և հրապարակումներում բազմիցս բարձրացրել է այն հարցը, որ ՀՀ օրենսդրությամբ ամրագրված է դատական իշխանության պաշտոնական կայքում[273] («ԴատաԼեքս» տեղեկատվական համակարգ) անձնական տվյալների ապանձնավորման հնարավորություն, այնուամենայնիվ, գործնականում դրա իրականացումն ապահովող գործուն կառուցակարգեր ներդրված չեն:

2023 թվականի ընթացքում խնդիրը շարունակում է արդիական մնալ դատական ակտերի հրապարակման համատեքստում՝ անձնական տվյալների պաշտպանության օրենսդրական ոչ լիարժեք ու ամբողջական կարգավորումների արդյունքում: Լուրջ մտահոգության տեղիք են տալիս հատկապես այն դատական գործերը, որոնք պարունակում են երեխաների և սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների հետ կապված քրեական գործերով տուժող ճանաչված անձանց անձնական տվյալներ:

Ինչպես նախորդ տարիների ընթացքում, այնպես էլ 2023 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են դիմումներ, որոնցով քաղաքացիները բարձրաձայնել են դատական տեղեկատվական համակարգում իրենց անձնական տվյալների, այդ թվում՝ անձնական և ընտանեկան կյանքի մանրամասներ պարունակող դատական ակտերի հրապարակայնության հարցը: Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ուսումնասիրվել են քաղաքացիների դիմումները և պարզաբանվել են դատական տեղեկատվական համակարգից վերջիններիս անձնական տվյալները հեռացնելու ընթացակարգերը:

Մարդու անձնական կամ ընտանեկան կյանքի վերաբերյալ տվյալները, այդ թվում՝ սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերով շարունակում են հասանելի մնալ հրապարակային տիրույթում՝ առանց որևէ ողջամիտ և իրավաչափ հիմնավորման:

Այսպես, համաձայն «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածի 10-րդ մասի՝ «*Դատական իշխանության պաշտոնական կայքում անձնական կյանքի տվյալներ, կենսաչափական և հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ, երեխայի անձնական տվյալներ պարունակող դատական ակտերը հրապարակվում են ապանձնավորված կարգով: Բարձրագույն դատական խորհուրդը կարող է սահմանել անձնական տվյալների ապանձնավորման այլ դեպքեր: Ապանձնավորման կարգը սահմանում է Բարձրագույն դատական խորհուրդը:*»

Համապատասխանաբար Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ ԲԴԽ-40-Ո-105 որոշմամբ սահմանվում է ֆիզիկական անձանց վերաբերյալ սահմանված անձնական տվյալների ապանձնավորման կարգը: Ընդ որում, հրապարակման ենթակա դատական ակտում դատավարության մասնակցի՝ Բարձրագույն

[273] Հասանելի է https://datalex.am/ հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

դատական խորհրդին ուղղված դիմումի հիման վրա կարող են ապանձնավորվել նաև օրենսդրությամբ սահմանված՝ ֆիզիկական անձանց վերաբերյալ անձնական տվյալ հանդիսացող այլ տեղեկություններ:

«Դատական համակարգ» համակարգչային ծրագիրն ավտոմատ կերպով դատական ակտի տեքստում նույնականացնում և ապանձնավորում է սույն կարգում նշված ապանձնավորման ենթակա անձնական տվյալները՝ պահպանելով ապանձնավորման գործընթացին ձեռքով միջամտելու հնարավորությունը, իսկ անձնական տվյալների ապանձնավորման նկատմամբ հսկողությունն իրականացնում է տվյալ ակտն ընդունող դատավորը:

Մինչդեռ, մինչ օրս դատական իշխանության պաշտոնական կայքում անձնական տվյալների ապանձնավորման ծրագիր դեռևս ներդրված չէ, ինչը չի ապահովում ինչպես 2018 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ ԲԴԽ-40-Ո-105 որոշման ընդունումից առաջ, այնպես էլ դրանից հետո կայացրած դատական ակտերի ապանձնավորման հնարավորությունը:

Նշված խնդրին անդրադաձել է նաև Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը՝ նշելով, որ հատկապես մտահոգիչ է այնպիսի զգայունության անձնական տվյալների հրապարակումը, որոնք առնչվում են անձի ֆիզիկական և հոգեկան առողջությանը, մարդու իմունային անբավարարության հարուցիչով[274] վարակված լինելու հանգամանքին: Մասնավորապես, ՄԻԱՎ-ով ապրելու վերաբերյալ տեղեկատվության գաղտնիության պաշտպանության հարցում, ըստ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի՝ նման տվյալների բացահայտումը կարող է էապես ազդել անհատի անձնական և ընտանեկան կյանքի, ինչպես նաև սոցիալական և զբաղվածության վիճակի վրա՝ ենթարկելով նրան դատապարտման և օստրակիզմի վտանգի[275]:

Անձնական տվյալների հրապարակման նշված պրակտիկան խնդրահարույց է անձնական տվյալների պաշտպանության միջազգային իրավական չափանիշների և ներպետական օրենսդրության կարգավորումների տեսանկյունից:

Անձնական տվյալների պաշտպանությունը երաշխավորված է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով, որի համաձայն՝ անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի իրացումը կարող է սահմանափակվել այն դեպքերում, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի համատեքստում անդրադառնալով դատական վարույթի հրապարակայնությանը, նշել է, որ ազգային մարմիններին պետք է որոշակի ազատություն տրվի՝ արդար հավասարակշռություն հաստատելու համար, մի կողմից՝

[274] Այսուհետ՝ ՄԻԱՎ:

[275] Տե՛ս Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի 2021 թվականի հոկտեմբերի 13-ի դիրքորոշումը «ԴատաԼեքս» դատական տեղեկատվական համակարգում անձնական տվյալների պաշտպանության և ապանձնավորման խնդրի վերաբերյալ, հասանելի է https://hcav.am/wp-content/uploads/2021/10/%D4%B4%D5%A1%D5%BF%D5%A1%D4%BC%D5%A5%D6%84%D5%BD-%D5%80%D5%94%D4%B1%D5%8E-%D5%A4%D5%AB%D6%80%D6%84%D5%B8%D6%80%D5%B8%D5%B7%D5%B8%D6%82%D5%B4%D5%A8.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

դատական գործընթացների հրապարակայնության պաշտպանության, որն անհրաժեշտ է դատարանների նկատմամբ վստահությունը պահպանելու համար, իսկ մյուս կողմից՝ կողմի կամ երրորդ անձի շահերի՝ իր տվյալների գաղտնիությունը պահպանելու հարցում: Այս լուսանցքի շրջանակը կախված կլինի այնպիսի գործոններից, ինչպիսիք են քննարկվող շահերի բնույթն ու լրջությունը և միջամտության աստիճանը[276]: Դատարանը ընդգծել է, որ միջամտությունը կհամարվի «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում» օրինական նպատակի համար, եթե այն համապատասխանի «անհետաձգելի հասարակական պահանջի», և եթե այն համարժեք լինի հետապնդվող օրինական նպատակին, և եթե ազգային իշխանությունների ներկայացրած պատճառները դա հիմնավորելու համար «համապատասխան և բավարար» լինեն: Անձնական տվյալների բացահայտմանը միտված ցանկացած միջոց, անկախ անձի դատավարական կարգավիճակից, պետք է բավարարի գերակա սոցիալական կարիքը[277] և պետք է հնարավորինս սահմանափակվի այն ամենով, ինչը խիստ անհրաժեշտ է՝ ելնելով վարույթի հատուկ բնույթից[278]:

Դատական ակտերի որոնման համակարգում դատավարության մասնակիցների անձնական տվյալների պաշտպանության ուղղությամբ միջոցառումների ձեռնարկումը նախատեսված էր դեռևս ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրից բխող միջոցառումների ծրագրով: Չնայած նրան, որ գործողության իրականացման համար լիարժեք կառուցակարգեր չեն ներդրվել, վերջինս ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրից բխող միջոցառումների 2016 թվականին կատարման վիճակի վերաբերյալ հաշվետվությամբ ներկայացվել է որպես ամբողջությամբ կատարված՝ 2015 թվականի մայիսի 18-ին ընդունված և 2015 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջների հիման վրա, որոնք սահմանում են պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների կամ կազմակերպությունների, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից անձնական տվյալները մշակելու, դրանց նկատմամբ պետական հսկողություն իրականացնելու կարգն ու պայմանները:

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025թթ. գործողությունների ծրագրի 3.10-րդ գործողությամբ նախատեսված է 2025 թվականին ներդնել դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվող դատական ակտերում անձնական տվյալների ապանձնավորման ծրագիր և վերահսկողություն սահմանել իրագործման նկատմամբ՝ ի կատարում Դատական օրենսգրքի 11-րդ հոդվածի 10-րդ կետի:

Փաստացի, դատական իշխանության պաշտոնական կայքում անձնական տվյալների ապանձնավորման ծրագիր դեռևս ներդրված չէ, և նախատեսվում է այն ներդնել միայն 2025 թվականին: Ուստի՝ ինչպես 2018 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ ԲԴԽ-40-Ո-105

[276] Տե՛ս Ս.Ս.-ն ընդդեմ Իսպանիայի (C.C. v. Spain) գործով 2009 թվականի հոկտեմբերի 6-ի վճիռը, գանգատ թիվ 1425/06, կետ 35, հասանելի է https://hudoc.echr.coe.int/fre#{%22itemid%22:[%22001-94632%22]} հղումով:

[277] Տե՛ս Վիսենտ Դել Կամպոն ընդդեմ Իսպանիայի (Vicent Del Campo v. Spain) գործով 2018 թվականի հոկտեմբերի 6-ի վճիռը, կետ 46, հասանելի է https://hudoc.echr.coe.int/fre#{%22itemid%22:[%22001-187509%22]} հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[278] Տե՛ս Լ.Լ.-ն ընդդեմ Ֆրանսիայի L.L. v. France, գործով 2006 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 7508/02, կետ 45, հասանելի է https://hudoc.echr.coe.int/eng#{%22fulltext%22:[%22L.L.%20v.%20France%22],%22documentcollectionid2%22:[%22GRANDCHAMBER%22,%22CHAMBER%22],%22itemid%22:[%22001-77356%22]} հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

որոշման ընդունումից առաջ, այնպես էլ դրանից հետո գործնականում չի ապահովվել կայացրած դատական ակտերի ապանձնավորման հնարավորությունը:

Ավելին, 2018 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ ԲԴԽ-40- Ո-105 որոշմամբ սահմանված կարգին համապատասխան դատական իշխանության պաշտոնական կայքում անձնական տվյալների ապանձնավորման ծրագրի ներդրման և գործարկման ուղղությամբ 2023 թվականի ընթացքում նախաձեռնված գործողությունների ԲԴԽ-ին ուղղված հարցադրմանն ի պատասխան՝ Դատական դեպարտամենտը տեղեկացրել է, որ համապատասխան գործողություններ դեռևս չեն ձեռնարկվել՝ հաշվի առնելով, որ «Դատական համակարգ» համակարգչային ծրագրում բացակայում է ապանձնավորում իրականացնելու ծրագրային հնարավորությունը և առկա է նոր էլեկտրոնային համակարգի ներդրման անհրաժեշտություն:

Արդարադատության նախարարությանը հասցեագրված գրությանն ի պատասխան՝ Նախարարությունից հայտնել են, որ 2023 թվականի ընթացքում դատարանում քննվող՝ սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների հետ կապված քրեական գործերով տուժող ճանաչված անձի, այդ թվում՝ անչափահասի անձնական տվյալները «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում չհրապարակելու կամ արդեն հրապարակված՝ անձնական տվյալներ պարունակող տեղեկատվությունը նախքան դատական նիստը դռնփակ անցկացնելու մասին դատարանի որոշման կայացումը սահմանափակելու վերաբերյալ օրենսդրական մակարդակում փոփոխություններ չեն նախատեսվել:

Այնուամենայնիվ, Արդարադատության նախարարության տրամադրած տեղեկություններով՝ սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների հետ կապված քրեական գործերով տուժող ճանաչված անձի, հատկապես՝ անչափահասի անձնական տվյալները «Դատալեքսում» հրապարակելու վերաբերյալ բողոքներ Նախարարությունը չի ստացել:

ԲԴԽ-ից տեղեկացրել են, որ Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնում 2023 թվականի ընթացքում ստացվել են թվով 6 դիմումներ՝ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում հրապարակված դատական ակտերում անձնական տվյալները ոչ հրապարակային դարձնելու վերաբերյալ:

Այսպիսով, ստացվում է, որ թեև ներպետական օրենսդրությամբ սահմանված է դատական իշխանության պաշտոնական կայքում անձնական տվյալների ապանձնավորման հնարավորություն, այնուամենայնիվ, գործնականում դրա լիարժեք իրականացումն ապահովող գործուն կառուցակարգեր ներդրված չեն:

- ✓ ***Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝***
- ✓ ***հնարավորինս սեղմ ժամկետում ներդնել դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվող դատական ակտերում անձնական տվյալների ապանձնավորման ծրագիրը՝ ապահովելով նաև արդեն իսկ հրապարակված անձնական տվյալների հեռացումը,***
- ✓ ***հասարակության շրջանում իրականացնել իրազեկման աշխատանքներ՝ ՀՀ դատական դեպարտամենտին ուղղված դիմումի հիման վրա դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակված դատական ակտերում անձնական տվյալների հասանելիության սահմանափակման հնարավորության մասին:***

3. Արհեստական բանականության զարգացմանը զուգընթաց անձնական տվյալների պաշտպանությունը

Արհեստական բանականության համակարգերի կիրառումը կարող է ունենալ ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն մարդու իրավունքների վիճակի, ժողովրդավարության և իրավունքի գերակայության վրա[279]: Թեև արհեստական բանականությունը կարող է կիրառվել արդարադատության հասանելիությունը բարելավելու, պետական մարմինների գործունության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը բարձրացնելու, ինչպես նաև հանրային ծառայությունների մատուցումն ավելի մատչելի դարձնելու նպատակով, վերջինս կարող է վտանգներ պարունակել մարդու իրավունքների պաշտպանության համակարգի տեսանկյունից:

Արհեստական բանականության համակարգերի կիրառման առումով պարտադիր է ոլորտի առանձնահատկությունների լիարժեք ուսումնասիրություն, մարդու իրավունքների վրա ազդեցության գնահատում, մարդու իրավունքների պաշտպանության հստակ օրենսդրական կարգավորումների և կառուցակարգերի նախատեսում, ինչպես նաև հանրության շրջանում իրազեկվածության մակարդակի բարձրացում:

Մարդու իրավունքների պաշտպանի դերը արհեստական բանականության ոլորտում

Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների գլոբալ դաշինք, «Հանրային քաղաքականություն և թվային տեխնոլոգիաներ. Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների դերը քաղաքականությունը համահունչ դարձնելու գործում» [280]**.**

Թվային տեխնոլոգիաների կիրառման համատեքստում մարդու իրավունքների պաշտպանությունը պետք է առաջնահերթություն լինի, որտեղ *կենտրոնական դերակատարում ունեն մարդու իրավունքների ազգային հաստատությունները*:

Արհեստական բանականության համակարգերի կիրառման դեպքում Մարդու իրավունքների ազգային հաստատություններն առանցքային նշանակություն ունեն՝ մարդու իրավունքների պաշտպանության վիճակի վերահսկման, հաշվետվողականության ապահովման, բողոքների ուսումնասիրության, իրազեկվածության բարձրացման և արհեստական բանականության համակարգեր մշակող կազմակերպություններին ուղղորդելու առումով[281]:

---

[279] Տե՛ս Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցի 2023 թվականի «Իրավունքի գերակայություն» զեկույցը, էջ 94, հասանելի է https://ennhri.org/wp-content/uploads/2023/08/ENNHRI-2023-Report-on-the-State-of-the-Rule-of-Law-in-Europe.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[280] Տե՛ս Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների գլոբալ դաշինքի «Հանրային քաղաքականություն և թվային տեխնոլոգիաներ. Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների դերը քաղաքականությունն համահունչ դարձնելու գործում» հրապարակումը, 2021թ., հասանելի է https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Issues/Business/B-Tech/b-tech-blog-policy-coherence-nhris-tech.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[281] Տե՛ս ENNHRI-Equinet-ի համատեղ հայտարարությունը Եվրոպայի խորհրդի Արհեստական բանականության հանձնաժողովի լիագումար նիստին Արհեստական բանականության, մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության մասին կոնվենցիայի [Շրջանակային] VII գլխի նախագծի վերաբերյալ, հասանելի է https://equineteurope.org/wp-content/uploads/2023/04/CoE_AI_Convention_Chapter-7_ENNHRI_Equinet-Joint-Statement_Public.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցի 2023 թվականի «Իրավունքի գերակայություն» զեկույցը[282]

Տարածաշրջանային և միջազգային դերակատարներն ու ազգային իշխանությունները պետք է ապահովեն մարդու իրավունքների սկզբունքներին համահունչ մոտեցում արհեստական բանականության կիրառման դեպքում և հատուկ ուշադրություն դարձնեն վերջինիս ազդեցությանը իրավունքի գերակայության, ժողովրդավարության և մարդու իրավունքների վրա՝ *համագործակցելով մարդու իրավունքների ազգային հաստատությունների հետ*:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը հաշվետու տարվա ընթացքում մեկնարկել է արհեստական բանականության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված աշխատանքները՝ նախևառաջ աշխատակազմի կարողությունների զարգացման և փորձի փոխանակման միջոցով:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը 2023 թվականի մարտի 30-ից 31-ը Նիդերլանդներում մասնակցել է ԵԽ Մարդու իրավունքների հանձնակատարի կազմակերպած արհեստական բանականության և մարդու իրավունքների հարաբերակցության վերաբերյալ մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունների ներկայացուցիչների բարձրաստիճան հանդիպմանը[283]:

2023 թվականի նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 1-ը Սլովենիայի Հանրապետությունում Պաշտպանի ներկայացուցիչը մասնակցել է արհեստական բանականության թեմայով կարողությունների զարգացման դասընթացին, որը կազմակերպել է Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցը: Դասընթացի նպատակն էր ամրապնդել և զարգացնել մասնակիցների գիտելիքներն արհեստական բանականության և մարդու իրավունքների փոխազդեցության, արհեստական բանականության արդի զարգացումների, հնարավոր մարտահրավերների և հնարավորությունների վերաբերյալ՝ նպաստելով մարդու իրավունքների ազգային հաստատությունների միջև փորձի փոխանակմանը և ոլորտում համատեղ աշխատանքներին:

Օրենսդրական կարգավորման և արհեստական բանականության ազդեցության գնահատման անհրաժեշտությունը

Նորագույն տեխնոլոգիայի միջոցով տարբեր գործընթացների կազմակերպումն ու ծառայությունների մատուցումը կարող է վտանգներ պարունակել խտրականության արգելքի, անձի մասնավոր կյանքի իրավունքի և անձնական տվյալների պաշտպանության տեսանկյունից: Այս առումով ոլորտի մասնագետները պնդում են, որ Հայաստանում քաղաքացիների անձնական տվյալների պաշտպանության համար պատշաճ կառուցակարգեր նախատեսված չեն, և կիբեռանվտանգության ոլորտում վերահսկողություն իրականացնելու համար նախատեսված գործիքակազմերը խիստ սահմանափակ են[284]:

[282] Տե՛ս Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցի 2023 թվականի «Իրավունքի գերակայություն» զեկույցը, էջ 8, հասանելի է https://ennhri.org/wp-content/uploads/2023/08/ENNHRI-2023-Report-on-the-State-of-the-Rule-of-Law-in-Europe.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[283] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2486 հղումով:

[284] Հասանելի է https://cyberhub.am/hy/blog/2023/01/28/personal-data-of-armenian-citizens-regularly-leaked/ հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

ՀՀ օրենսդրությամբ չեն կարգավորվում արհեստական բանականության, և, առհասարակ, նորագույն տեխնոլոգիաների կիրառման միջոցով անձնական տվյալների մշակման գործընթացներն ու անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները: Անձնական տվյալները կարգավորող հիմնական փաստաթուղթը «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքն է, որն ընդունվել է դեռևս 2015 թվականին: Թեև օրենքով ամրագրված են անձնական տվյալների մշակման օրինականության և համաչափության սկզբունքները, այնուամենայնիվ, կարգավորումներ նախատեսված չեն արհեստական բանականության տեխնոլոգիաների միջոցով անձնական տվյալների մշակման համար, ուստիև՝ այդ համատեքստում իրավունքների պաշտպանության պատշաճ կառուցակարգեր:

Միաժամանակ, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված է, որ տեղեկատվական համակարգերում անձնական տվյալները մշակելու անվտանգությունն ապահովելուն ներկայացվող պահանջները, կենսաչափական անձնական տվյալների նյութական կրիչներին և տեղեկատվական համակարգերից դուրս այդ անձնական տվյալները պահպանելու տեխնոլոգիաներին ներկայացվող պահանջները սահմանվում են ՀՀ կառավարության որոշմամբ:

«Տեղեկատվական համակարգերում անձնական տվյալների մշակման անվտանգության ապահովմանը ներկայացվող պահանջները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը նախատեսված էր դեռևս 2015 թվականի հուլիսի 3-ի **ՀՀ վարչապետի** N 573-Ա **որոշմամբ, սակայն մինչ օրս այն** չի ընդունվել:

Այս առումով Պաշտպանն ընդգծում է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով արհեստական բանականության համակարգերի միջոցով անձնական տվյալների պաշտպանության համար անհրաժեշտ կարգավորումների, գործիքակազմի ու ընթացակարգերի նախատեսման անհրաժեշտությունը:

Օրենսդրական նախաձեռնությունների համատեքստում 2017 թվականին Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը շրջանառել էր ՀՀ կառավարության «Կիբեռանվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» արձանագրային որոշման նախագիծը, ինչը, սակայն, մինչ օրս մնացել է նախագծային փուլում:

2021 թվականի փետրվարի 11-ին ընդունվել է **«Հայաստանի թվայնացման ռազմավարությանը, ռազմավարության միջոցառումների ծրագրին և արդյունքային ցուցանիշներին հավանություն տալու մասին»** ՀՀ կառավարության N 183-Լ որոշումը: Այս առումով, կարևորելով մարդու իրավունքների պաշտպանության հիմնարար նշանակությունը արհեստական բանականության ոլորտում՝ Պաշտպանը նշում է, որ անհրաժեշտ է ռազմավարական փաստաթղթերում ամրագրել մարդու իրավունքների պաշտպանությանը, այդ թվում՝ անձնական տվյալների պաշտպանությանը վերաբերելի սկզբունքներ՝ մարդու իրավունքների միջազգային չափանիշներին համահունչ: Պաշտպանը խնդրահարույց է համարում նաև Հայաստանի թվայնացման ռազմավարությամբ կոնկրետ միջոցառումների իրականացումը վերահսկելու կառուցակարգերի և գնահատելի արդյունքային ցուցանիշների բացակայությունը: Միաժամանակ, նկատի ունենալով արհեստական բանականության համակարգերի առանձնահատկություններն ու ոլորտի արագ զարգացումներն՝ անհրաժեշտ է իրականացնել ոլորտում խորը ուսումնասիրություն, որի հիման վրա կվերանայվի թվայնացման ռազմավարությունը:

2023 թվականի դեկտեմբեր ամսին Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը շրջանառել է «Կիբեռանվտանգության մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների լրամշակված նախագծերի փաթեթը: Նախագծով կարգավորվում են կիբեռմիջադեպերի հայտնաբերման, դրանց մասին ծանուցման, կանխարգելման և լուծման, օրենքի պահանջների պահպանման նկատմամբ հսկողության, վերահսկողության և պատասխանատվության միջոցների կիրառման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև սահմանում է այն սուբյեկտների շրջանակը, ովքեր պարտավոր են ապահովել իրենց կողմից օգտագործվող տեղեկատվական համակարգերի և կրիտիկական ենթակառուցվածքների կիբեռանվտանգությունը, դրանց շարունակական անխափան և անվտանգ օգտագործումը:

Օրենքի նախագծի վերաբերյալ Պաշտպանը ներկայացրել է կարծիք՝ առաջարկելով նախագծով նախատեսված սկզբունքների շարքում, ի թիվս այլնի, նախատեսել մարդու իրավունքների պաշտպանության, մարդու արժանապատվության, անձնական տվյալների պաշտպանության, արդարության, ինչպես նաև թափանցիկության սկզբունքների ամրագրումը՝ մարդու իրավունքների միջազգային չափանիշներին համահունչ:

ՄԱԿ-ի կարծիքի և արտահայտվելու ազատության իրավունքի խթանման և պաշտպանության հատուկ զեկուցող[285]

Արհեստական բանականության համակարգեր կամ հավելվածներ ձեռք բերելիս կամ տեղակայելիս պետությունները պետք է գործեն մարդու իրավունքների սկզբունքներին համահունչ: Սա ներառում է, ի թիվս այլնի, *հանրային խորհրդակցությունների անցկացումը և մարդու իրավունքների ազդեցության գնահատումը մինչև արհեստական բանականության համակարգերի գնումը կամ տեղակայումը*:

Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար, «Բացահայտենք արհեստական բանականությունը. 10 քայլ ուղղված մարդու իրավունքների պաշտպանությանը» [286]

Պետությունները պետք է ձեռնարկեն գործողություններ՝ *ներդնելու օրենսդրական կարգավորումներ և կանոնակարգեր, որոնց միջոցով կգնահատեն արհեստական բանականության համակարգերի ազդեցությունը մարդու իրավունքների վրա, որոնք ձեռք են բերվել կամ կարող են ձեռք բերվել, մշակվել և/կամ տեղակայվել պետական մարմինների կողմից:*

Պաշտպանն ընդգծում է, որ ցանկացած արհեստական բանականության համակարգ ներդնելիս անհրաժեշտ է հաշվի առնել դրա հնարավոր ազդեցությունը մարդու իրավունքների վրա: Միաժամանակ, հիմնական իրավունքների և արհեստական բանականության փոխազդեցության գնահատումները պետք է իրականացվեն ինչպես նախքան արհեստական բանականության համակարգի տեղակայումը, այնպես էլ կանոնավոր կերպով՝ դրանից հետո:

[285] Տե՛ս ՄԱԿ-ի կարծիքի և արտահայտվելու ազատության իրավունքի խթանման և պաշտպանության հատուկ զեկուցողի թիվ A/73/348 զեկույցը, 2019թ., կետ 62, հասանելի է https://undocs.org/Home/Mobile?FinalSymbol=A%2F73%2F348&Language=E&DeviceType=Desktop&LangRequested=False հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[286] Տե՛ս ԵԽ մարդու իրավունքների հանձնակատարի հանձնարարականները, «Բացահայտենք արհեստական բանականությունը. 10 քայլ ուղղված մարդու իրավունքների պաշտպանությանը», 2019թ., հասանելի է https://rm.coe.int/unboxing-artificial-intelligence-10-steps-to-protect-human-rights-reco/1680946e64 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Ներպետական մակարդակում մարդու իրավունքների միջազգային չափորոշիչների ներդրման խթանումը

2023 թվականի դեկտեմբերի 18-ին ԵԽ արհեստական բանականության հանձնաժողովն ընդունել է «Արհեստական բանականության, մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության մասին» շրջանակային կոնվենցիայի նախագիծը[287]: Կոնվենցիայի նախագծով նախատեսվում է սահմանել պետությունների՝ միջոցներ ձեռնարկելու կամ պահպանելու պարտավորությունը, որով կապահովվի մարդու իրավունքների սկզբունքների կիրարկումն արհեստական բանականության համակարգերը գործարկելիս:

Այսպես, Կոնվենցիայով նախատեսված հիմնարար սկզբունքներից է գաղտնիության և անձնական տվյալների պաշտպանության սկզբունքը: Ըստ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր կողմ պետք է ընդունի կամ պահպանի միջոցներ՝ ուղղված արհեստական բանականության համակարգերի օգտագործման (within the lifecycle) շրջանակներում ֆիզիկական անձանց գաղտնիության պաշտպանվածության ապահովմանը, այդ թվում՝ անձնական տվյալների պաշտպանության և [տվյալների կառավարման] ներպետական և միջազգային օրենքների, [և] չափանիշների միջոցով:

Ողջունելով ԵԽ կոնվենցիայի նախագիծը՝ Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցը մտահոգություն է հայտնել Կոնվենցիայի նախագծի վերաբերյալ՝ մարդու իրավունքների էական երաշխիքների բացակայության առումով, որոնք հիմնականում հանգում են հետևյալին.

1. Կոնվենցիան պետք է հավասարապես կարգավորի և՛ պետական, և՛ մասնավոր հատվածը, քանի որ մասնավոր կազմակերպությունները նույնպես մշակում և գործարկում են արհեստական բանականության համակարգեր:
2. Կոնվենցիան պետք է կարգավորի նաև այն արհեստական բանականության համակարգերը, որոնք օգտագործվում են ազգային անվտանգության ոլորտում:
3. Մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցման սկզբունքային տարրեր բացակայում են Կոնվենցիայի նախագծում, ինչպես օրինակ՝ արհեստական բանականության համակարգերի նկատմամբ մարդկային վերահսկողության ապահովումը, օգտագործման համար արգելված արհեստական բանականության տեսակների գնահատման հստակ ու միանշանակ չափանիշներն ու օրինակները:
4. Կոնվենցիայի նախագծում առկա են անորոշ հասկացություններ, ինչպիսիք են՝ «ձգտել ապահովել», «որտեղ հնարավոր է» կամ «ներպետական օրենսդրության համաձայն», որոնք դժվարացնում են Կոնվենցիայի նախագծով նախատեսված պարտավորությունների կատարումը, ինչը հակասում է նաև Կոնվենցիայի՝ միջազգային իրավական չափանիշներն ապահովելու նպատակին[288]:

[287] Տե՛ս ԵԽ Արհեստական բանականության հանձնաժողովի «Արհեստական բանականության, մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության մասին» շրջանակային կոնվենցիայի նախագիծը, 2023թ., հասանելի է https://rm.coe.int/cai-2023-28-draft-framework-convention/1680ade043 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[288] Տե՛ս Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցի մտահոգությունն «Արհեստական բանականության, մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության մասին» ԵԽ կոնվենցիայի նախագծի վերաբերյալ, 2024թ., հասանելի է https://ennhri.org/wp-content/uploads/2024/03/ENNHRI-statement-of-concern-on-AI-Convention-at-CAI-plenary.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Այս առումով, Պաշտպանը «Արհեստական բանականության, մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության» շրջանակային կոնվենցիայի նախագծի մշակման աշխատանքների գործընթացներում չափազանց կարևորում է պետության կողմից մարդու իրավունքների սկզբունքներին համահունչ առաջարկների և նկատառումների ներկայացումը, այդ թվում՝ Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցի մտահոգությունների հաշվառմամբ:

Պաշտպանը եզրահանգում է, որ օրենսդրական կարգավորումները և ոլորտի ազգային ռազմավարությունը ոլորտի առաջընթացի համար կարող են նպաստավոր լինել բացառապես այն դեպքում, երբ ապահովում են մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության սկզբունքները: Ընդ որում, անհրաժեշտ է ոլորտի օրենսդրական և ռազմավարական փաստաթղթերի մշակման գործընթացում, բացի պետական իրավասու մարմիններից, ներգրավել նաև ոլորտի մասնագիտական հասարակական և մասնավոր կազմակերպությունների ու գիտահետազոտական լայն շրջանակների՝ ապահովելով գործընթացի բազմակարծությունն ու հրապարակայնությունը:

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ սույն հաղորդման հրապարակման պահին Նախարարության ներկայացուցիչները ներգրավված են նշված կոնվենցիայի նախագծի մշակման աշխատանքներին: Այս առումով, Պաշտպանն ընդգծում է, որ ԵԽ Արհեստական բանականության հանձնաժողովի «Արհեստական բանականության, մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության» շրջանակային կոնվենցիայի նախագծի մշակման աշխատանքներին մասնակցելիս կարևոր է նկատի ունենալ Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցի՝ մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ ներկայացված դիտարկումները:

Արհեստական բանականության և դրա հնարավոր վտանգների վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացումը

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունից և Արդարադատության նախարարությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ 2023 թվականի ընթացքում նորագույն տեխնոլոգիայի կիրառությամբ պայմանավորված՝ անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ բողոքներ նախարարությունները չեն ստացել: Նշվածը, սակայն, ըստ ոլորտի մասնագետների՝ հանրության շրջանում իրազեկվածության ցածր մակարդակի արդյունքն է[289]:

ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ ՀՀ-ում արհեստական բանականության ոլորտի վերաբերյալ իրականացվում են կրթական ծրագրեր: Հատկանշական է, որ 2022 թվականի սեպտեմբերի 1-ին և 2023 թվականի հունիսի 15-ին Նախարարության և Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի (FAST) միջև ստորագրվել են համագործակցության համաձայնագրեր՝ «ԱԲ սերունդ» դպրոցական ծրագրի իրականացման վերաբերյալ: «ԱԲ սերունդ» ծրագիրը նպատակ ունի ստեղծելու ԱԲ ոլորտի գիտնականի և նորարարի կրթական ուղին՝ սկսած դպրոցից, ծրագրերը մշակվել են Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի կողմից և իրականացվում են

[289] Հասանելի է https://cyberhub.am/hy/blog/2023/01/28/personal-data-of-armenian-citizens-regularly-leaked/ հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

ՀՀ ԿԳՄՍՆ աջակցությամբ և ոլորտի կառույցների ու մասնավոր հատվածի հետ լայնամասշտաբ համագործակցությամբ: «ԱԲ սերունդ» դպրոցական ծրագրի շրջանակներում պիլոտային փուլ է սահմանվել 2023 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2026 թվականի օգոստոս ամիսը: Ծրագրի շրջանակներում ձևավորված մասնագիտական խորհրդի կողմից ընտրվել և ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի հուլիսի 28-ի N 1253-Ա/2 հրամանով հաստատվել է ծրագրի շահառու դպրոցների ցանկը:

ԿԳՄՍՆ-ից տեղեկացրել են նաև, որ «ԱԲ սերունդ» դպրոցական ծրագրի իրականացման առաջին տարում 16 դպրոցներում սովորում է 391 աշակերտ՝ 10-րդ դասարանցի, որից 250-ը (64%) տղաներ, իսկ 141-ը՝ աղջիկներ: Յուրաքանչյուր դպրոցում ձևավորված է 1-2 դասարան՝ շուրջ 25 աշակերտով: «ԱԲ սերունդ» դպրոցական ծրագրի 16 դպրոցներում ներգրավված է ընդհանուր 41 դպրոցի ուսուցիչ, որից 25-ը՝ մաթեմատիկայի ուսուցիչ, իսկ 16-ը՝ «Թվային գրագիտություն և համակարգչային գիտության» ուսուցիչ՝ մեկական յուրաքանչյուր դպրոցից: Նաև ներգրավված է ոլորտային կազմակերպություններից 8 մասնագետ՝ Python ծրագրավորման լեզվի դասավանդման համար: Այս պահին գործունեություն է ծավալում 41 դպրոցի ուսուցիչ, 8 տեխնոլոգիական ոլորտի մասնագետ՝ մանկավարժության փորձառությամբ:

Միաժամանակ, ԿԳՄՍՆ-ի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ՀՀ-ում գործող գրեթե բոլոր բուհերում նորագույն տեխնոլոգիայի, այդ թվում՝ արհեստական բանականության հնարավոր վտանգների, մասնավորապես՝ անձնական տվյալների պաշտպանության հարցերը ընդգրկված են պարտադիր ուսումնական ծրագրերի նյութերում, սակայն որպես առանձին առարկա չեն դասավանդվում:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանը, ողջունելով «ԱԲ սերունդ» դպրոցական ծրագրի իրականացումը, կարևորում է արհեստական բանականության վերաբերյալ շարունակական իրազեկման աշխատանքների կազմակերպումը ինչպես, առհասարակ, հանրության շրջանում արշավների իրականացման միջոցով՝ թվային գրագիտության բարձրացման նպատակով, այնպես էլ պետական մարմինների ներկայացուցիչների համար՝ վերապատրաստման դասընթացների կազմակերպմամբ:

- ✓ ***Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝***
- ✓ ***իրականացնել մարդու իրավունքների վրա արհեստական բանականության համակարգերի ներդրման գնահատում՝ ներգրավելով համապատասխան մասնագետների,***
- ✓ ***վերանայել «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը՝ նախատեսելով կարգավորումներ ու պատշաճ կառուցակարգեր արհեստական բանականության համակարգերի միջոցով անձնական տվյալների մշակման համար,***
- ✓ ***սահմանել տեղեկատվական համակարգերում անձնական տվյալների մշակման անվտանգության ապահովման պահանջները, կենսաչափական անձնական տվյալների նյութական կրիչներին և տեղեկատվական համակարգերից դուրս այդ անձնական տվյալները պահպանելու տեխնոլոգիաներին ներկայացվող պահանջները՝ ի կատարումն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի,***
- ✓ ***վերանայել 2021 թվականի փետրվարի 11-ի «Հայաստանի թվայնացման ռազմավարությանը, ռազմավարության միջոցառումների ծրագրին և արդյունքային ցուցանիշներին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության N 183-Լ որոշումը՝***

նախատեսելով մարդու իրավունքների միջազգային չափանիշներին համապատասխան կարգավորումներ,

- ✓ ***ապահովել ԵԽ Արհեստական բանականության հանձնաժողովի «Արհեստական բանականության, մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության» շրջանակային կոնվենցիայի նախագծի մշակման աշխատանքներին բովանդակալից և շարունակական մասնակցությունը՝ նկատի ունենալով Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցի՝ մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ ներկայացված դիտարկումները,***
- ✓ ***հանրության շրջանում իրականացնել իրազեկման աշխատանքներ արհեստական բանականության գործարկման ռիսկերի և վտանգների մասին, հատկապես՝ անձնական տվյալների պաշտպանության համատեքստում,***
- ✓ ***կազմակերպել վերապատրաստման դասընթացներ պետական մարմինների ներկայացուցիչների համար արհեստական բանականության և մարդու իրավունքների փոխազդեցության վերաբերյալ:***

ԲԱԺԻՆ 8. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Մարդու իրավունքների պաշտպանը մշտապես կարևորել է իրավապահ մարմինների դերն իրավախախտումների կանխման, հանցավորության դեմ պայքարի, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության հարցում: Միևնույն ժամանակ, նկատի ունենալով մարդու իրավունքների պաշտպանության պատշաճ կառուցակարգերի առկայության կարևորությունը քրեական արդարադատության ամբողջ շղթայի համատեքստում՝ նշված ոլորտը մշտապես եղել է Պաշտպանի գործունեության առաջնահերթությունների թվում:

2023 թվականին ևս թե՛ անհատական բողոքներով ներկայացված, և թե՛ հանրային հետաքրքրություն ներկայացնող քրեական վարույթների քննությանն առնչվող հարցերը գտնվել են Մարդու իրավունքների պաշտպանի անմիջական ուշադրության ներքո: 2023 թվականի ընթացքում Պաշտպանը հանրային հետաքրքրություն վայելող մի շարք դեպքերի առնչությամբ սեփական նախաձեռնությամբ սկսել է քննարկման ընթացակարգեր:

Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է նշված քրեական վարույթների արդյունավետ քննությունը, ինչպես նաև դրանց ընթացքի վերաբերյալ հանրությանը պարբերաբար իրազեկելու անհրաժեշտությունը՝ մեղադրվող անձանց անմեղության կանխավարկածի ապահովմամբ:

Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունները, ոստիկանության բաժիններ կամ այլ փակ հաստատություններ պարբերաբար իրականացված այցերը վկայում են, որ քրեական արդարադատության ամբողջ շղթայի համատեքստում մարդու իրավունքներին վերաբերելի որոշ հարցեր կրում են համակարգային բնույթ և պայմանավորված են երկար տարիների ընթացքում ձևավորված ոչ իրավաչափ պրակտիկայով: Անդրադառնալով ոլորտում առկա խնդիրներին՝ Պաշտպանը մշտապես հանդես է եկել դրանց հաղթահարման վերաբերյալ կոնկրետ առաջարկություններով, որոնք հիմնված են միջազգային իրավական չափանիշների վրա:

Պաշտպանն ընդգծում է, որ ՀՀ քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի կիրառմամբ իրավական կարգավորում են ստացել ոլորտում կուտակված բազմաթիվ խնդիրներ՝ զուգորդված անձի իրավունքների և ազատությունների ուժեղացված պաշտպանությամբ: Այդ առումով նկատելի է նոր օրենսգրքերի կիրառմամբ պայմանավորված՝ երկար տարիներ պրակտիկայում առկա խնդիրների լուծման դրական դինամիկան: Միևնույն ժամանակ, բազմաթիվ համակարգային խնդիրներ դեռևս շարունակում են մնալ արդիական:

Մարդու իրավունքների պաշտպանը հատուկ կարևորում է նաև իրավասու մարմինների հետ ձևավորված արդյունավետ համագործակցության առանձին ձևաչափերը: ՀՀ ներքին գործերի նախարարության, Դատախազության, Քննչական կոմիտեի, Հակակոռուպցիոն կոմիտեի, Ազգային անվտանգության ծառայության հետ ձևավորված համագործակցության արդյունքում լուծում են ստացել բազմաթիվ խնդիրներ: Կարևոր է նաև ընդգծել օրենսդրությամբ նախատեսված իրավասությունների շրջանակում մարդու իրավունքներին և ազատություններին առնչվող հարցերի վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի հետ ձևավորված համագործակցությունը:

Պաշտպանը կարևորում է նաև փաստաբանների, ինչպես նաև ոլորտում գործունեություն իրականացող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ ձևավորված արդյունավետ համագործակցությունը, ինչի արդյունքում վեր են հանվել և պետական մարմինների ուշադրությանն են ներկայացվել բազմաթիվ համակարգային խնդիրներ:

ԳԼՈՒԽ 1. ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

1. Անմեղության կանխավարկածի պահպանումը և ենթադրյալ հանցանք կատարած անձի կամ քրեական վարույթի վերաբերյալ հանրությանը տեղեկություններ տրամադրելու անհրաժեշտությունը

Հանցավորության դեմ պայքարը պետության կարևորագույն հանձնառությունն է: Այդ պայքարի արդյունավետությամբ է, այդ թվում՝ պայմանավորված երկրում իրավակարգի հաստատումը, սոցիալական արդարության վերականգնումն ու իրավունքի գերակայության արմատավորումը:

Միևնույն ժամանակ, իրավական պետության գաղափարը պահանջում է վերը նշված գործընթացում իրավական սկզբունքների և արժեքների պահպանում, որից շեղումը չի կարող արդարացվել անգամ հանցավորության դեմ պայքարի իրավաչափ նպատակով: Ասվածը նախ և առաջ նշանակում է, որ պետության, իսկ կոնկրետ դեպքում՝ իրավապահ մարմինների գործողությունները, պետք է խարսխված լինեն մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները հարգելու, դրանց սահմանափակումներն իրավաչափության չափանիշներին համապատասխան իրականացնելու սահմանադրական պահանջի վրա:

Արդար դատաքննության իրավունքի անբաժանելի և անկյունաքարային բաղադրիչներից մեկն է անմեղության կանխավարկածի սկզբունքի երաշխավորումը: Այն ենթադրում է, որ հանրային իշխանության մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են ձեռնպահ մնալ անձի մեղավորության մասին կանխակալ ու վաղաժամ գնահատականներից՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտի բացակայության պայմաններում:

Քրեադատավարական ցանկացած ընթացակարգի ժամանակ անմեղության կանխավարկածի չպահպանումը կարող է խաթարել արդարադատության ողջ գործընթացը, ձևավորել անձի մեղավորության՝ որպես հաստատված փաստի մասին հասարակական ընկալում, խոչընդոտել փաստաբանների և լրագրողների աշխատանքը, ազդեցություն ունենալ իրավապահ համակարգի և դատական իշխանության մարմինների նկատմամբ վերաբերմունքի վրա:

Հարկ է նկատի ունենալ, որ պետական մարմինների և պաշտոնատար անձանց պարագայում անմեղության կանխավարկածի սկզբունքի պահպանման պահանջը կարող է ունենալ տարբերակված բովանդակություն՝ պայմանավորված նրանցից յուրաքանչյուրի իրավասության շրջանակով կամ կարգավիճակով:

Անմեղության կանխավարկածի էությանը և դրա պահպանման կարևորությանը Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է 2018, 2019, 2020 և 2021 թվականների գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդումներում[290]: Ըստ այդմ, մշտապես կարևորվել է, որ պետական մարմինները և պաշտոնատար անձինք պետք է ապահովեն իրենց գործունեության հանրային հաշվետվողականությունն ու թափանցիկությունը՝ հարգելով մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները և իրավունքի գերակայության հիմքում ընկած արժեքները:

[290] Տե՛ս 2021 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդումը, էջեր 441-450 հասանելի է https://ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 29.03.2024թ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում իրականացված ուսումնասիրությունները վկայում են, որ անմեղության կանխավարկածի սկզբունքի պահպանման հետ կապված խնդիրների արդիականությունը պահպանվել է նաև 2022 և 2023 թվականների ընթացքում: Արձանագրվել են անմեղության կանխավարկածի պահպանմանն առնչվող խնդրահարույց դեպքեր ինչպես իրավապահ մարմինների կողմից տարածվող իրազեկող տեսանյութերում կամ տեքստային հայտարարություններում և հանցավորության դեմ պայքարի ոլորտի պատասխանատու պաշտոնատար անձանց ելույթներում, այնպես էլ զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներում:

Քրեական հետապնդման ենթարկվող անձանց վերաբերյալ հրապարակումների ուսումնասիրությունը վկայում է, որ, որպես կանոն, բոլոր իրավապահ մարմինները ոլորտին վերաբերելի հայտարարությունների վերջում ձայնային և տեքստային ծանուցման ձևով ներկայացնում են անմեղության կանխավարկածի մասին մեջբերումները: Նշվածն, անշուշտ, ողջունելի է:

Միևնույն ժամանակ, հարկ է նկատի ունենալ, որ ոլորտին առնչվող չափանիշների տեսանկյունից անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտում են դիտարկվում նաև այն դեպքերը, երբ հայտարարությունը պարունակում է քննարկված ծանուցումները, սակայն տեքստի բովանդակությունն, ընդհանուր առմամբ այնպիսին է, որ հանգեցնում է անձի մեղավորության՝ որպես հաստատված փաստի վերաբերյալ հանրային ընկալման:

Պաշտպանի աշխատակազմում ուսումնասիրված հրապարակումները վկայում են, որ դրանցում, ընդհանուր առմամբ չեն նշվում անձանց նույնականացման տվյալները, արտաքին և ձայնային տվյալները թաքցվում են տեխնիկական միջոցներով, չեն տրվում արարքին սուբյեկտիվ որակումներ, գնահատականներ, և շեշտվում է, որ դեպքերը ներկայացվում են՝ ըստ նախնական տվյալների: Անձին իրավապահ մարմին ներկայացնելու կամ ձերբակալման տեսանյութը հրապարակելիս հիմնականում դեմքի հատվածը մշակվում է, կամ նկարահանումը կատարվում է այնպիսի դիրքից, որ հնարավոր չլինի նույնականացնել անձին:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ Պաշտպանի աշխատակազմում արձանագրվել են ինչպես օրինակելի դեպքեր, երբ իրավապահ մարմինների հրապարակումներն ունեն բարձր մշակվածություն և անմեղության կանխավարկածի տեսանկյունից խնդրահարույց չեն, այնպես էլ դեպքեր, երբ համապատասխան չափանիշները առերևույթ չեն պահպանվել:

Այն դեպքերում, երբ իրավապահ մարմինը նախաքննության սկզբնական փուլում հանդես է գալիս անձի մեղավորությունը հաստատող հրապարակային հայտարարությամբ, դա կարող է իրական ռիսկեր ձևավորել հասարակության մեջ անձին վարկաբեկելու և հեղինակությունն ու բարի համբավն արատավորելու տեսանկյունից՝ անգամ վերջում անմեղության կանխավարկածի սկզբունքը հիշատակելու պարագայում: Նշվածը հատկապես արդիական է, երբ կիրառված խափանման միջոցի պայմաններում (օրինակ՝ կալանք, տնային կալանք) մեղադրյալը, որպես կանոն, չի ունենում հնարավորություն հրապարակային հայտնելու իր դիրքորոշումը: Անգամ իր դիրքորոշումը հայտնելիս մեղադրյալը չի կարող օգտվել հանրային լայն լսարանին տեղեկություն ներկայացնելու միջոցներից նույն տրամաբանությամբ և ծավալով, ինչ պետական մարմինը: Խնդրահարույց է և այն, երբ հետագայում քրեական վարույթի քննության ընթացքում պարզված հանգամանքները, այդ թվում՝ անձի անմեղության մասին վկայող,

վարույթն իրականացնող մարմնի կողմից չեն հրապարակվում՝ «նախաքննության գաղտնիությունը» պահպանելու պատճառաբանությամբ:

Պաշտպանը հարկ է համարում ընդգծել, որ պետությունը կրում է անմեղության կանխավարկածի տեսանկյունից խնդրահարույց իրավիճակներ թույլ չտալու պատասխանատվություն, և պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են խստորեն պահպանել քննարկվող սկզբունքն ու դրա հիմքում ընկած արժեքանությունը: Ընդ որում, անգամ, եթե պետությունը չի նպաստել անձի մեղավորության առնչությամբ հասարակական կանխակալ ընկալումների, դրա արդյունքում՝ արդարադատություն իրականացնող մարմինների նկատմամբ ճնշման ձևավորմանը, միևնույն է՝ այդպիսի իրավիճակի պարագայում պարտավոր է գործադրել առավելագույն ջանքեր՝ իրավիճակը հաղթահարելու, արդար դատաքննության իրավունքի, անմեղության կանխավարկածի սկզբունքի անշեղ իրացումն ու իրավասու մարմինների՝ իրավունքի գերակայության սկզբունքին համահունչ գործունեությունն ապահովելու ուղղությամբ:

Առանցքային դերակատարություն ունի քննարկվող սկզբունքի պահպանումը իրավապահ, այդ թվում՝ քրեական հետապնդում իրականացնող մարմինների կողմից:

Պաշտպանն ընդգծում է, որ իրավապահ մարմինների գործունեության թափանցիկության և հաշվետվողականության պահանջների պահպանման տեսանկյունից ողջունելի է իրավախախտումների, դրանց պատճառված վնասների կամ քրեական վարույթների ընթացքի վերաբերյալ հանրությանը օբյեկտիվ տվյալներ պարունակող տեղեկությունների տրամադրումը: Դա նպաստում է հանրային վստահության և քաղաքացիական վերահսկողության դերի բարձրացմանը: Այնուամենայնիվ, նշվածը չի ենթադրում, որ կատարված վարութային գործողություններն ու դրանց արդյունքները կարող են ներկայացվել՝ վերջիններիս անհերքելիության և ապացուցված փաստեր լինելու հաստատմամբ: Ուստի, անհրաժեշտ է խստագույնս հետևել նաև ապացույցների գնահատման քրեադատավարական սկզբունքներին, մասնավորապես, նկատի ունենալ, որ ոչ մի տվյալ նախապես հաստատված ապացույցի ուժ չունի:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումները

ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 2-րդ կետը ոչ միայն արգելում է դատարանի կողմից «քրեական հանցանքի մեջ մեղադրվողի» մեղավորության վերաբերյալ վաղաժամ արտահայտություններ կատարելը՝ նախքան դրա օրենքով ապացուցված լինելը, այլև վերաբերում է հանրային այլ պաշտոնյաների կողմից ընթացիկ քրեական վարույթների վերաբերյալ հայտարարություններին, որոնք ուղղորդում են հանրությանը հավատալ մեղադրյալի մեղավոր լինելուն և կանխորոշում են իրավասու դատական մարմնի կողմից փաստերի գնահատումը: Անգամ ֆորմալ եզրակացության բացակայության դեպքում բավական է նույնիսկ որևէ փաստարկ, որը վկայում է, որ դատարանը կամ պաշտոնատար անձը մեղադրյալին համարում է մեղավոր[291]:

Թեև անմեղության կանխավարկածի պահպանման սկզբունքը չի կարող խոչընդոտ հանդիսանալ իշխանությունների համար քննվող քրեական վարույթների մասին հանրությանը տեղեկություններ տրամադրելու տեսանկյունից, սակայն

[291] Տե՛ս Կարամանն ընդդեմ Գերմանիայի (Karaman v. Germany) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2014 թվականի հուլիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 17103/10, 41-րդ կետ:

իշխանությունները դա պետք է անեն զուսպ և նրբանկատորեն՝ հարգելով քննարկվող սկզբունքը[292]:

Անմեղության կանխավարկածի սկզբունքը կարող է խախտվել ոչ միայն դատարանի կամ դատավորի, այլև այլ պաշտոնատար անձանց կողմից ևս[293]:

ՄԻԵԴ-ի արտահայտած դիրքորոշման համաձայն՝ անմեղության կանխավարկածի խախտում է համարվում այն իրավիճակը, երբ դատական որոշման կամ պաշտոնատար անձի կողմից արված հայտարարության մեջ կարծիք է արտահայտվում հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի մեղքի վերաբերյալ՝ նախքան նրա մեղքը կհաստատվի օրենքով սահմանված կարգով[294]: ՄԻԵԴ-ը մեկ այլ գործով արձանագրել է, որ անմեղության կանխավարկածը կխախտվի, եթե պաշտոնատար անձը կարծիք արտահայտի հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի մեղավորության վերաբերյալ՝ նախքան նրա մեղքը կհաստատվի օրենքով սահմանված կարգով: Դատարանն ընդգծել է պաշտոնատար անձանց կողմից կատարվող հայտարարություններում բառերի ընտրության կարևորությունն այն դեպքում, երբ խոսքը գնում է հանցանքի կատարման մեջ օրենքով սահմանված կարգով մեղադրված, սակայն դեռևս չդատապարտված անձանց մասին[295]:

Ալենտ դե Ռիբեմոնն ընդդեմ Ֆրանսիայի գործով ՄԻԵԴ-ը արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի խախտում, քանի որ Ոստիկանության բարձրաստիճան պաշտոնատար անձինք առանց որևէ պարզաբանման կամ ենթադրության համոզել են հասարակությանը հավատալ, որ դիմողը մեղավոր է՝ չնայած նրան, որ դատարանի կողմից գործի փաստական հանգամանքները դեռ հետազոտված չեն եղել[296]:

ՄԻԵԴ-ը հատուկ արձանագրել է, որ անմեղության կանխավարկածի խախտումը չի կարող արդարացված լինել՝ մեղադրյալի հանրային անձ լինելու հանգամանքով պայմանավորված: Որոշումներից մեկով ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ մեղադրյալի հանրային անձ լինելով պայմանավորված՝ պետական պաշտոն զբաղեցնող անձինք (այդ թվում՝ Գլխավոր դատախազը և օրենսդիր մարմնի ղեկավարը) պետք է հանրությանն իրազեկեն նրան առաջադրված մեղադրանքի մասին: Այնուամենայնիվ, Դատարանն ընդունելի չի համարել Կառավարության այն պնդումը, որ այդ հանգամանքը արդարացնում է պաշտոնատար անձանց կողմից մամուլին տված հարցազրույցներում ցանկացած ձևակերպման օգտագործումը[297]:

---

[292] Տես, օրինակ, Ալենտ դե Ռիբեմոնն ընդդեմ Ֆրանսիայի (Allent de Ribemont v. France) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1995 թվականի փետրվարի 10-ի վճիռը, գանգատ թիվ 15175/89, 38-րդ կետ:

[293] Տես, Ալենտ դե Ռիբեմոնն ընդդեմ Ֆրանսիայի (Allent de Ribemont v. France) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1995 թվականի փետրվարի 10-ի վճիռը, գանգատ թիվ 15175/89, 35-36-րդ կետեր:

[294] Տե՛ս Գարիցկին ընդդեմ Լեհաստանի (Garycki v. Poland) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2007 թվականի փետրվարի 6-ի վճիռը, գանգատ թիվ 14348/02, 66-րդ կետ:

295 Տե՛ս Դակթարասն ընդդեմ Լիտվայի (Daktaras v. Lithuania) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2000 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 42095/98, 41-րդ կետ:

[296] Տես, Ալենտ դե Ռիբեմոնն ընդդեմ Ֆրանսիայի (Allent de Ribemont v. France) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1995 թվականի փետրվարի 10-ի վճիռը, գանգատ թիվ 15175/89, 41-րդ կետ:

297 Տե՛ս Բուդկևիչուսն ընդդեմ Լիտվայի (Butkevicius v. Lithuania) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2002 թվականի հունիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 48297/99, 50-րդ կետ:

Իրավապահ մարմինների գործունեության վերաբերյալ հասարակությանը իրազեկելու և անմեղության կանխավարկածի սկզբունքի պահպանման միջև հավասարակշռությունն ապահովելու տեսանկյունից ընդհանուր տրամաբանությունն այն է, որ սկզբունքի պահպանումը չի բացառում քրեական հետապնդման մարմինների կողմից անձի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելը և նրան մեղադրանք ներկայացնելը: Նշված գաղափարը ներպետական մակարդակով իր արտահայտությունն է գտել Սահմանադրական դատարանի 2010 թվականի մարտի 30-ի ՍԴՈ-871 որոշմամբ, որով արձանագրվել է, որ Սահմանադրության 21-րդ հոդվածում ամրագրված անմեղության կանխավարկածի սկզբունքը՝ նպատակ ունենալով պաշտպանել անձին հանիրավի մեղադրանքից, միաժամանակ չի կարող բացառել իրավասու մարմնի կողմից նրան քրեական հանցագործության մեջ կասկածելու հանգամանքը՝ մինչև այն պահը, երբ այդ կասկածներն այդ մարմնի իրավաչափ գործողությունների արդյունքում հնարավոր չի եղել հիմնավորել: Ուստի, կոնկրետ քրեական վարույթն իրականացնող քննիչի, հետաքննության և նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող կամ դատարանում մեղադրանքը պաշտպանող դատախազի հայտարարությունն անձի մեղավորության մասին չի կարող դիտվել անմեղության կանխավարկածի խախտում:

Վերոնշյալ դիրքորոշումների լույսի ներքո հարկ է արձանագրել, որ պաշտոնական հայտարարություններում կամ մամլո հաղորդագրություններում հանցանքի կամ անձի մեղավորության առնչությամբ տեղեկատվությունը պետք է ներկայացվի այն տրամաբանությամբ, որպեսզի դրանում տեղ գտած տեղեկությունները չընկալվեն որպես անձի մեղավորության մասին արդեն իսկ հաստատված փաստ: Ընդ որում՝ հիշյալ համատեքստում կարևոր է նկատի ունենալ, որ քննարկվող սկզբունքը կարող է խախտվել նույնիսկ անմեղության կանխավարկածի առնչությամբ ծանուցման առկայության պայմաններում, եթե հաղորդագրության բովանդակությունն ինքնին կառուցված է անձի մեղավորության և արարքի հաստատված լինելու տրամաբանության վրա: Միևնույն ժամանակ, իրավասու մարմինների կողմից նման հայտարարությունները պետք է լինեն բավարար չափով մշակված՝ որպես կանոն, բացառելով մեղադրվող անձի նույնականացումը հնարավոր դարձնող տեղեկությունների հրապարակումը, ընդ որում՝ խոսքը չի վերաբերում միայն անձնական տվյալներին: Դեպքը, երբ հրապարակվող տեղեկության ամբողջությունը հնարավոր է դարձնում անձի հստակ նույնականացումը (անվան և ազգանվան առաջին տառեր, կազմակերպության անուն, գործունեության ոլորտ, առանձնահատուկ պաշտոն) և դիտողի մոտ ձևավորում է անձի մեղավորության հաստատված լինելու վերաբերյալ ընկալում, կարող է պարունակել անմեղության կանխավարկածի պահպանման էական ռիսկեր: Այս իմաստով հարկ է ընդգծել, որ ՄԻԵԴ-ը նույնպես արձանագրել է, որ հայտարարությունները պետք է ընթերցվեն որպես ամբողջություն և իրենց պատշաճ համատեքստում[298]*:*

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանն արձանագրում է, որ ընթացիկ քրեական վարույթների շրջանակում *անձի վերաբերյալ հայտարարություններ անելիս պետական մարմինները և դրանց ներկայացուցիչները պետք է բացառեն, մինչև իրավասու դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայությունը, անձի մեղավորությունը որպես հաստատված փաստ ներկայացնելու դրսևորումները:*

[298] Տե՛ս Բոհմեր ընդդեմ Գերմանիայի (Böhmer v. Germany) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2003 թվականի մայիսի 21-ի վճիռը, գանգատ թիվ 37568/97, 60-րդ կետ:

Նշվածը հատկապես կարևոր է այն տեսանկյունից, որ պաշտոնատար անձանց արտահայտած կարծիքներն ու հայտարարությունները տարածվում են զանգվածային լրատվության միջոցներով և հասանելի դառնում հանրության ավելի լայն շրջանակներին՝ ձևավորելով անձի մեղավորության վերաբերյալ կանխակալ մոտեցում:

Այս համատեքստում հարկ է նկատի ունենալ, որ հասարակության իրազեկվածության և հավաստի տեղեկություններ ստանալու իրավունքի ապահովման տեսանկյունից կարևորագույն առաքելություն ունեն զանգվածային լրատվության միջոցներն ու լրագրողները, ովքեր իրենց մասնագիտական աշխատանքով ապահովում են երկրում ընթացող գործընթացների վերաբերյալ հանրությանը տեղեկատվության փոխանցումը, արդյունքում՝ քաղաքացիական վերահսկողության առկայությունը: Իրավասու մարմիններում քննվող քրեական վարույթների վերաբերյալ տեղեկություններ ստանալը խոսքի ազատության կարևոր բաղադրիչներից է:

Այդ համատեքստում կարևոր է, որպեսզի լրագրողի մասնագիտական գործունեությունն իրականացվի իրավունքի գերակայության սկզբունքների և արժեքների հիման վրա: Այդ առումով առանցքային է, որպեսզի լրագրողները ևս պահպանեն անմեղության կանխավարկածի սկզբունքի հիմքում ընկած տրամաբանությունը, զգայուն լինեն մարդու մեղավորության վերաբերյալ գնահատականներ հնչեցնելիս՝ բացառելով մինչև իրավասու դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայությունը նրա մեղավորության վերաբերյալ որևէ կանխակալ հանրային վերաբերմունքի ձևավորումը: Դա պատասխանատու լրագրության կարևորագույն բաղադրիչներից է:

ՄԻԵԴ-ը ևս արտահայտել է այն դիրքորոշումը, որ ընթացիկ քրեական վարույթի վերաբերյալ նյութ պատրաստող լրագրողները պարտավոր են հարգել մեղադրյալի անմեղ համարվելու իրավունքը[299]:

Միևնույն ժամանակ, «Լրատվամիջոցներով քրեական վարույթներին վերաբերող տեղեկությունների տրամադրման մասին» ԵԽ Նախարարների կոմիտեի Rec(2003)13 հանձնարարականի և ԵԽԽՎ «Լրագրության էթիկայի մասին» թիվ 1003 (1993թ.) բանաձևի դրույթներից հետևում է, որ ընթացիկ քրեական վարույթին վերաբերող տեղեկությունները կարող են տրամադրվել կամ տարածվել լրատվամիջոցներով, եթե դա չի պարունակում գնահատականներ և չի խախտում անձի անմեղության կանխավարկածը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանն արձանագրում է, որ կատարված առերևույթ հանցագործության և անձի մեղավորության առնչությամբ ձևակերպումները չպետք է ձևավորեն կանխակալ ընկալում արարքի կատարումը անձի կողմից որպես հաստատված փաստ ներկայացնելու տեսանկյունից՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի բացակայության պայմաններում:

2. Հանցագործությունների վերաբերյալ ֆիզիկական անձանց հաղորդումները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով չընդունելու և չքննարկելու՝ հաղորդումն ընդունող մարմնի հայեցողական պրակտիկան

Մարդու իրավունքների պաշտպանը բազմիցս անդրադարձել է անձանց՝ հանցագործությունների մասին հաղորդումների ընդունման և քննարկման՝ օրենքով նախատեսված ընթացակարգերի չպահպանման խնդիրներին: Մարդու իրավունքների

[299] Տե՛ս Դյու Ռոյը և Մալոռին ընդդեմ Ֆրանսիայի (Du Roy and Malaurie v. France) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2001 թվականի հունվարի 3-ի վճիռը, գանգատ թիվ 34000/96, 34-րդ կետ:

պաշտպանի տարեկան հաղորդումներում նշված խնդրին առանձին անդրադարձ է կատարվել՝ դեռևս սկսած 2017 թվականից[300]:

ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի (տվյալ ենթագլխում այսուհետ նաև՝ Օրենսգիրք) կարգավորումների համաձայն՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանությունը, չի կարող քննարկել հանցագործության մասին հաղորդումները և կայացնել օրենսգրքով սահմանված վարութային ակտերից մեկը: Այնուամենայնիվ, Ոստիկանության ծառայողները պետք է ընդունեն համապատասխան հաղորդումները՝ դրանք քննչական մարմինների քննարկմանը փոխանցելու նպատակով:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացված բողոքներն ու ահազանգները վկայում են, որ Ոստիկանության ծառայողների կողմից հանցագործության մասին հաղորդումները չընդունելու վերաբերյալ խնդիրները չեն կորցրել արդիականությունը: Ստացվել են բողոքներ նաև այն մասին, որ հանցագործության մասին հաղորդումները քննարկելիս իրավապահ այլ մարմինների կողմից ոչ բոլոր դեպքերում է կայացվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված վարութային ակտերից մեկը:

Օրենսգրքի 173-րդ հոդվածի համաձայն՝ հանցանքի մասին պատշաճ հաղորդումը համարվում է առերևույթ հանցանքի մասին, եթե դրանով փաստվում է այնպիսի դեպք կամ գործողություն կամ անգործություն, որին ողջամտորեն կարող է տրվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական: Օրենսգրքում հանցագործության մասին հաղորդման սահմանումը ներառելը, անշուշտ, կարևոր է: Միևնույն ժամանակ, դա հաղորդման մեջ նշվող տեղեկատվության վերաբերյալ միակ չափանիշն է:

Ավելին, Օրենսգրքի 174-177-րդ հոդվածներում նկարագրված է համապատասխան սուբյեկտներից յուրաքանչյուրի կողմից հանցագործության մասին հաղորդում ներկայացնելու կարգը: Հանցագործության մասին հաղորդման համար հատուկ չափանիշներ նախատեսող հոդվածների առկայությունը միանշանակ ողջունելի է: Հարկ է ընդգծել, որ դրանք բացառապես ձևական (ֆորմալ) բնույթի չափանիշներ են:

Ընդ որում, Օրենսգիրքը սահմանում է, որ ֆիզիկական անձանց հաղորդումները կարող են լինել ինչպես անմիջական, այնպես էլ փոստային եղանակով ուղարկված: Առերևույթ հանցանքի մասին ֆիզիկական անձի անմիջական հաղորդումն ընդունում է ՀՀ ոստիկանության կամ համապատասխան իրավասություն ունեցող պետական այլ մարմնի իրավասու ծառայողը՝ քննիչին փոխանցելու նպատակով, կամ անմիջականորեն քննիչը:

Քննիչն իր իրավասության սահմաններում պարտավոր է քրեական վարույթ նախաձեռնել, եթե առերևույթ հանցանքի մասին պատշաճ հաղորդումը ստացվել է ֆիզիկական անձից, իրավաբանական անձից, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրա պաշտոնատար անձից՝ նրա գործունեության իրականացման կապակցությամբ, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնից, քննիչից, դատախազից կամ դատավորից՝ իր լիազորություններն իրականացնելու կապակցությամբ:

[300] Տե՛ս 2021 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդումը, էջ 450-457: Առավել մանրամասն տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի 2017 թվականի (էջ 194-199), 2018 թվականի (էջ 288-291), 2019 թվականի (էջ 281-284) և 2020 թվականի (էջ 462-467) մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդումներում:

Այսինքն, օրենքը հանցանքի մասին հաղորդումն ընդունելու փուլում իրավասու մարմիններին հնարավորություն չի ընձեռում հանցագործության մասին տեղեկության արժանահավատության և հավաստիության գնահատման համար: Քրեական վարույթի կոնկրետ փուլում հաղորդման համար օրենքը լրացուցիչ չափանիշեր չի սահմանում, ինչը հիմնավոր է այնքանով, որ օրենսդրությամբ վարութային գործողությունները ողջ ծավալով կատարելը հասանելի է քրեական վարույթի նախաձեռնված լինելու պարագայում:

Այս առումով հարկ է անդրադառնալ ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և դրանց ընթացք տալու կարգը սահմանելու մասին» թիվ 1495-Ն որոշմանը: Նշված որոշման համաձայն՝ *հաղորդումները, անկախ իրավախախտումների կատարման կամ պատահարների առաջացման վայրից և ժամանակից, ինչպես նաև դրանցում պարունակվող տեղեկությունների ամբողջականությունից, պարտադիր ենթակա են ընդունման և գրանցման* պարեկային կարգախմբի կողմից, ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնում, իրավասու ստորաբաժանումներում, ոստիկանության տարածքային մարմիններում: Ընդ որում, նշվածը վերաբերում է նաև փոստային կամ էլեկտրոնային եղանակներով ստացված հաղորդումներին, ավելին՝ բանավոր հաղորդումները ևս ենթակա են արձանագրման Ոստիկանության ծառայողների կողմից: Ողջունելի է, որ Քրեական դատավարության օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո կառավարության նշված որոշումը համապատասխանեցվել է գործող օրենսդրության դրույթներին:

Այդուհանդերձ, 2023 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքների և ահազանգների ուսումնասիրությունը փաստում է, որ ՀՀ ՆԳՆ ոստիկանության գործունեության ոլորտում այս առումով արձանագրված խնդիրներից մեկն այն է, որ անձանց հաղորդումները, որպես այդպիսին, չեն դիտարկվել իբրև հանցագործության մասին հաղորդում: Դրանից բացի, երբեմն, երբ Պաշտպանի ներկայացուցիչները քաղաքացիներին առաջարկել են իրենց հայտնի տեղեկությունների վերաբերյալ ներկայացնել հանցագործության մասին հաղորդում, նրանք մտահոգություններ են հայտնել առ այն, որ հնարավոր է հաղորդումը պատշաճ չարձանագրվի կամ քննության չառնվի:

Բողոքների քննարկման շրջանակում արձանագրված հանգամանքները հաստատում են, որ հանցագործության մասին հաղորդումը որպես ահազանգ դիտարկելու, ստուգման ընթացակարգը եզրակացությամբ ավարտելու, հաղորդում ներկայացրած անձին չպատասխանելու կամ գրությամբ պատասխանելու անընդունելի պրակտիկան շարունակվում է:

Մի շարք քաղաքացիներ Պաշտպանին հասցեագրված բողոքներով հայտնել են, որ իրենց կողմից ՀՀ ՆԳՆ ոստիկանության տարածքային ստորաբաժանում ներկայացվել է հանցագործության մասին հաղորդում, որի կապակցությամբ տևական ժամանակ չեն ստացել որևէ պատասխան: Բողոքների քննարկման շրջանակում ՀՀ ՆԳՆ ոստիկանության հետ իրականացված գրագրությամբ պարզվել է, որ հաղորդումը դիտարկվել է որպես դիմում, դրա քննարկմամբ չեն հիմնավորվել նշված հանգամանքները, քննարկումը համարվել է բավարար և կազմված փաստաթղթերը

եզրակացությամբ կցվել են համապատասխան ստորաբաժանման քարտուղարության կարգագրին:

Նշվածն անընդունելի է առնվազն այն տեսանկյունից, որ Քրեական դատավարության օրենսգիրքը հաղորդումն ընդունող մարմնին չի վերապահում հանգամանքները ստուգելու լիազորություն: Մյուս կողմից նման դեպքերի մեծ մասում ստուգման արդյունքների և կարգագրին կցելու վերաբերյալ տեղեկությունը համապատասխան կարգով քաղաքացուն տրամադրված չի եղել, որի հետևանքով անձը, ըստ էության, զրկվել է նաև հետաքննության մարմնի աշխատակցի գործողությունները բողոքարկելու հնարավորությունից:

Պաշտպանի աշխատակազմում արձանագրված մյուս խնդիրն այն է, որ օտարերկրյա քաղաքացիները, փախստականները, ՀՀ-ում ապաստան հայցող անձինք կամ հայերենին բավարար չափով չտիրապետող ՀՀ քաղաքացիները ՀՀ ՆԳՆ ոստիկանություն ներկայացրել են հանցագործության մասին հաղորդումներ, սակայն դրանք չեն ընդունվել՝ հայերեն գրված չլինելու պատճառաբանությամբ: Ընդ որում, ըստ քաղաքացիների պնդման՝ Ոստիկանության ծառայողները պահանջել են, որ հանցագործության մասին հաղորդում ներկայացրած անձն իր միջոցներով իրականացնի թարգմանությունը: Պաշտպանին դիմած քաղաքացիների մեծ մասը նշել է, որ չունի բավարար գումար թարգմանչի ծառայություններից օգտվելու համար:

Բողոքներից մեկով քաղաքացին, ի թիվս այլնի, նշել է, որ Ոստիկանության ծառայողը հորդորել է ներկայացնել դիմում առ այն, որ հաղորդումը կներկայացնի հայերեն այն ժամանակ, երբ կունենա թարգմանիչ: Բողոք ներկայացրած անձինք նաև նշել են, որ Ոստիկանության ծառայողները չեն հրավիրել թարգմանիչ և հորդորել են մոտենալ իրենց կողմից հրավիրված թարգմանչի հետ: Այնուամենայնիվ, նախապատրաստել են գրավոր հաղորդումներ, սակայն դրանք չեն ընդունվել:

Քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի վարույթի ընթացքում հանդես գալու այն լեզվով, որին տիրապետում է: Վարույթի լեզվին չտիրապետող համապատասխան անձին նույն օրենսգրքով նախատեսված՝ հանձնման ենթակա փաստաթղթերի պատճենները տրվում են նաև այն լեզվով, որին նա տիրապետում է: Վարույթն իրականացնող մարմնին այլ լեզվով ներկայացված փաստաթուղթը վարույթի նյութերին կցվում է թարգմանչի վավերացրած հայերեն թարգմանության հետ:

ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 1495-Ն որոշմամբ սահմանված է, որ հաղորդում ներկայացնողի կողմից հայերենին չտիրապետելու դեպքում հաղորդումն ընդունվում է հայերենին և այն օտար լեզվին տիրապետող, համապատասխան որակավորում ունեցող թարգմանչի մասնակցությամբ, որին տիրապետում է հաղորդում ներկայացնող անձը: *Հաղորդում ներկայացնող անձը հաղորդումը շարադրում է այն լեզվով, որին ինքը տիրապետում է*, ինչին հաջորդում է արձանագրությունում թարգմանչի կատարած թարգմանության շարադրումը, որը հաստատվում է թարգմանչի կողմից: Այս դեպքում հաղորդումն ամրագրվում է միայն իրավասու ստորաբաժանումում կամ ոստիկանության տարածքային մարմնում հանցագործության մասին բանավոր հաղորդում ընդունելու վերաբերյալ արձանագրության մեջ:

Մի շարք դեպքերում ստացված ահազանգների կապակցությամբ Պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացված արագ արձագանքման և ՀՀ ՆԳՆ

ոստիկանության ներկայացուցիչների հետ բանավոր քննարկումների արդյունքում խնդիրը լուծվել է, և անձի կողմից ներկայացված հաղորդումն ընդունվել է:

Հարկ է ընդգծել, որ դեռևս 2021 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և ՀՀ ոստիկանության միջև տեղի են ունեցած քննարկումների արդյունքում ՀՀ ոստիկանության պետը կարևոր հանձնարարականներ է իջեցրել հանցագործության մասին հաղորդումների ընդունման ոլորտի խնդիրները վերացնելու և պրակտիկան բարելավելու ուղղությամբ: Այնուամենայնիվ, նշված միջոցները բավարար չեն եղել քննարկող ոլորտում դրական և արդյունավետ պրակտիկա ձևավորելու համար:

ՀՀ ՆԳՆ ոստիկանությունից ստացված պարզաբանման համաձայն՝ հանցագործության վերաբերյալ հաղորդումն ընդունելը մերժելու վերաբերյալ ՀՀ ՆԳՆ ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչությունում հաշվառվել է 8 դեպք, որոնցով իրականացված ծառայողական քննության արդյունքներով 3-ը կասեցվել է՝ նախաքննական մարմիններում նախաձեռնված քրեական վարույթների կապակցությամբ, 1-ը հիմնավորվել է, և 1 ծառայողի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն, 1 ծառայողի նկատմամբ կիրառվել է «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը, և նա կարգապահական տույժի չի ենթարկվել, իսկ 4-ը թողնվել են անհետևանք:

Պաշտպանն արձանագրում է, որ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողները պետք է ցանկացած պարագայում պատշաճ կարգով ընդունեն և գրանցեն անձանց հանցագործության մասին հաղորդումները՝ չանդրադառնալով ներկայացված տեղեկության արժանահավատության և հավաստիության գնահատմանը կամ չիրականացնելով դրանց ստուգում: Յուրաքանչյուր հաղորդում պետք է սահմանված կարգով հասցեագրվի վարույթն իրականացնող համապատասխան մարմին և քննարկվի քննիչի կողմից:

Մարդու իրավունքների պաշտպանի բողոքների քննարկման արդյունքները թույլ են տալիս արձանագրել, որ քրեական վարույթ իրականացնող մարմինների կողմից հանցագործության մասին հաղորդման կապակցությամբ Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված վարութային գործողություններից մեկը չկայացնելու նախկինում ձևավորված պրակտիկան, ընդհանուր առմամբ, շտկվել է: Այնուամենայնիվ, առանձին դեպքերում ահազանգեր են ներկայացվել նաև այդ մասին: Մի շարք բողոքներում անձինք մատնանշել են, որ վարույթն իրականացնող մարմինն իրենց գրությամբ տեղեկացրել է քրեական վարույթ չնախաձեռնելու վերաբերյալ, սակայն պատշաճ չի ներկայացրել դրա հիմնավորումները և քննարկման առարկա չի դարձրել իրենց կողմից ներկայացված հանգամանքները:

Հարցի վերաբերյալ Դատախազությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ 2023 թվականի ընթացքում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ դատախազական հսկողության շրջանակներում 14 դեպք է արձանագրվել՝ հանցագործության մասին հաղորդումներով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով վարույթ չնախաձեռնելու վերաբերյալ: Համանման 2 դեպք արձանագրվել է բողոքների քննարկման շրջանակներում: Մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ դատախազական հսկողության շրջանակներում արձանագրված դեպքերով դատախազների կողմից տրվել է վարույթ նախաձեռնելու հանձնարարություն: Բողոքներից մեկը դատախազի կողմից բավարարվել է ու տրվել

վարույթ նախաձեռնելու հանձնարարություն, մյուս բողոքը մերժվել է դատախազի, բավարարվել՝ դատարանի կողմից:

Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է այն դիրքորոշումը, որ **հաղորդումների քննարկման և լուծման նախատեսված ընթացակարգերը չեն նախատեսում հանցագործության մասին ներկայացված տեղեկության արժանահավատության և հավաստիության գնահատման գործողություններ և պայմանավորված չեն դրանց արդյունքներով: Քննիչը պարտավոր է իր իրավասության սահմաններում նախաձեռնել քրեական վարույթ բոլոր այն դեպքերում, երբ ստացվել է առերևույթ հանցանքի մասին պատշաճ հաղորդում: Իսկ համապատասխան հաղորդումը համարվում է առերևույթ հանցանքի մասին, եթե դրանով փաստվում է այնպիսի դեպք կամ գործողություն կամ անգործություն, որին ողջամտորեն կարող է տրվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական:**

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությամբ կարելի է արձանագրել նաև, որ մարդիկ միշտ չէ, որ իրազեկված են Քրեական դատավարության օրենսգրքով հանցագործության մասին հաղորդման վերաբերյալ նախատեսված չափանիշներին: Անձինք հաճախ չունեն բավարար իրավական գիտելիքներ տարբերելու, թե որ արարքներն են նախատեսված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով: Շատ դեպքերում էլ նրանք վարչական իրավախախտումների կամ քաղաքացիաիրավական հարաբերությունների վերաբերյալ տվյալները ևս ներառում են հանցագործության մասին հաղորդումներում:

Այս առումով Պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է Ոստիկանություն դիմող անձանց տարբեր եղանակներով իրազեկել Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չափանիշների մասին (օրինակ՝ Ոստիկանության բաժիններում տեսանելի վայրերում փակցնել այդ մասին տեղեկատվական թերթիկներ):

Վերը նշվածի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է.

- ✓ ***հանցագործությունների վերաբերյալ քաղաքացիների հաղորդումները քննարկելիս գործնականում ապահովել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և դրանց ընթացք տալու կարգը սահմանելու մասին» թիվ 1495-Ն որոշման պահանջները,***
- ✓ ***տարբեր եղանակներով հաղորդում ներկայացնող անձին իրազեկել հանցագործության մասին հաղորդումներին ներկայացվող չափանիշների մասին,***
- ✓ ***կատարելագործել Ոստիկանության ծառայողների՝ ոլորտին առնչվող հարցերի վերաբերյալ գիտելիքներն ու հմտությունները:***

3. «Փաստացի քրեական հետապնդման» վտանգները և դրանից անձի պաշտպանության երաշխիքները

«Փաստացի քրեական հետապնդման» խնդրին Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում մշտապես կատարվել է համապատասխան անդրադարձ,թե սահմանադրաիրավական և միջազգային իրավական մոտեցումների, թե

քրեադատավարական կարգավորումների տեսանկյունից[301]:

Հարկ է արձանագրել, որ նշված ոլորտում գրանցվել է դրական միտում: Խնդրի կապակցությամբ հարցումներ են իրականացվել Գլխավոր դատախազություն և Քննչական կոմիտե: Ստացված տեղեկատվության համաձայն՝ 2023 թվականի ընթացքում վարույթն իրականացնող մարմնի «փաստացի քրեական հետապնդում» ենթադրող ոչ իրավաչափ գործողությունների վերաբերյալ դեպքեր չեն արձանագրվել:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում տվյալ խնդրի առնչությամբ 2023 թվականի ընթացքում բողոքներ չեն ստացվել: Այնուամենայնիվ, ահազանգներից մեկով քաղաքացին նշել է, որ իրեն հրավիրել են Քննչական կոմիտե և հայտնել են, որ իր հեռախոսի օգտագործմամբ իրականցվել է հանցագործություն: Ըստ պնդման՝ անձը հայտնել է, որ կորցրել է այդ հեռախոսը, սակայն վարույթն իրականացնող քննիչը մեղադրական բնույթի հարցեր է հնչեցրել և հայտնել, որ չի հավատում իր խոսքերին:

Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է, որ այն պահից սկսած, երբ վարույթն իրականացնող մարմինը ձեռք է բերել բավարար ապացույցներ, և առաջացել են անձին մեղադրանք ներկայացնելու համապատասխան հիմքեր, վերջինս պետք է ձեռք բերի համապատասխան կարգավիճակ: Խնդրահարույց կարող է լինել այն իրավիճակը, երբ անձը հարցաքննության է կանչվում վկայի դատավարական կարգավիճակով՝ դրանից բխող իրավունքների և պարտականությունների համապատասխան ծավալով, սակայն արդեն իսկ առկա է քրեորեն պատժելի արարքի կատարմանն անձի առնչության վերաբերյալ կասկած: Նման պարագայում ստացվում է, որ վկայի դատավարական կարգավիճակով այդ անձի մասնակցությամբ իրականացվում են վարութային գործողություններ, որոնք նպատակ ունեն ձեռք բերելու նրա կողմից հանցանքի կատարումը վկայող բավարար ապացույցներ: Այս դեպքում անձի իրավունքներն էականորեն սահմանափակվում են, քանի որ վկան օժտված չէ իրավունքների այն երաշխիքներով, որոնք ունի մեղադրյալը:

Հարկ է կրկին ընդգծել, որ քրեական վարույթի շրջանակներում անձի կարգավիճակի փոփոխությունն ինքնին խնդրահարույց չէ, եթե վարույթն իրականացնող մարմնի կողմից ապահովվել են վերջինիս՝ սահմանադրական իրավունքներն ու համարժեք երաշխիքները:

Պաշտպանը ողջունելի է համարում գործող Քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումները, այդ թվում՝ անձի դատավարական կարգավիճակի հստակեցման մասով: Ողջունելի է նաև այդ դրույթների գործնական կիրառման ոլորտում արդյունավետ ու դրական պրակտիկայի ձևավորման միտումը:

Այնուամենայնիվ, կարևոր է լրացուցիչ ընդգծել, որ վարույթն իրականացնող մարմինները պետք է բոլոր դեպքերում պահպանեն «փաստացի քրեական հետապնդումը» բացառող նորմերը և չափանիշները, իսկ այդ ոլորտում առկա պրակտիկան պետք է շարունակաբար կատարելագործվի:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ քրեական վարույթն իրականացնող մարմնի քննչական և վարութային այլ գործողությունները ողջամտորեն հիմք են տալիս ենթադրելու, որ առկա է անձի կողմից հանցանք կատարած լինելու վերաբերյալ կասկած, անկախ

[301] Տե՛ս Պաշտպանի 2021 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդումը, էջ 468-473, առավել մանրամասն տե՛ս 2016 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 122-125:

քրեադատավարական օրենքի իմաստով մեղադրյալի կարգավիճակ ձեռք բերելու հանգամանքից՝ վերջինս պետք է օգտվի քրեական հետապնդման ենթարկվող անձին վերաբերելի բոլոր իրավունքներից և երաշխիքներից:

4. Քրեական վարույթին ներգրավված անձանց պաշտպանությունը

Հանցագործությունների բացահայտման, լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննության ապահովման իրականացմանը նպաստող կարևորագույն հանգամանքներից է տուժողների և վկաների կողմից քրեական դատավարության գործընթացին նպաստելը: Միևնույն ժամանակ, իրավապահ մարմիններին համապատասխան տեղեկությունը ներկայացնելու և գործողություններին օժանդակելու մոտիվացիան կարող է ապահովվել միայն քրեական դատավարությանը մասնակցելու անվտանգության երաշխիքներով և դրանք արդյունավետ ապահովելու՝ պետության պարտականությունների կատարմամբ:

Քիչ չեն դեպքերը, երբ հանցագործությունից տուժած անձն ունենում է երկյուղ հանցագործության մասին հաղորդում ներկայացնելու կապակցությամբ, քանի որ հանցանք կատարած անձանց կողմից իրեն հասցեագրվում են սպառնալիքներ կամ առկա է իրեն կամ իր հարազատներին վնաս հասցնելու իրական վտանգ: Միևնույն ժամանակ, քրեական վարույթներով անցնող վկաների մի մասը ևս կարող է խուսափել հարցաքննության ընթացքում լիարժեք և ամբողջական տեղեկություններ ներկայացնելուց՝ ելնելով հետագայում վրեժխնդրության ենթարկվելու մտավախությունից:

Ընդ որում, խնդիրն արդիական է ոչ միայն նախաքննության ընթացքում: Քննության նպատակով քրեական վարույթը դատարան ուղարկվելու փուլում ևս տուժողները մտավախություն ունեն, որ թեև տվյալ պահին իրենց անձնական անվտանգությունն ապահովվում է, սակայն նույնիսկ կոնկրետ անձանց դատապարտվելուց հետո իրենք կարող են ունենալ անվտանգության խնդիրներ: Ուստիև պետությունը պետք է ապահովի անձի իրավունքների պաշտպանության ամբողջական և արդյունավետ համակարգ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված են քրեական վարույթին մասնակցող անձանց իրավունքներն ու օրինական շահերի պաշտպանության երաշխիքները: Բացի վարույթի մասնակիցների իրավունքները և դրանց ապահովման երաշխիքներն առանձին ամրագրելուց, Օրենսգիրքն առանձին գլխով անդրադառնում է վարույթին ներգրավված անձանց հատուկ պաշտպանությանը: Մասնավորապես՝ Քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական վարույթին ներգրավված անձի, ինչպես նաև նրա ընտանիքի անդամի կամ այլ մերձավոր անձի նկատմամբ հատուկ պաշտպանության միջոց է կիրառվում, եթե վարույթի իրականացման հետ կապված նրանց կյանքին, առողջությանը կամ իրավաչափ շահերին ողջամտորեն կարող է սպառնալ իրական վտանգ:

Բացի այդ, սահմանվում է նաև, որ հատուկ պաշտպանության միջոց կիրառելու մասին որոշումները պետք է կայացվեն ամենասեղմ ժամկետներում: Այսպես, նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հատուկ պաշտպանության միջոց կիրառելու մասին անձի դիմումը վարույթն իրականացնող մարմինը քննարկում է անհապաղ, սակայն ոչ ուշ, քան այն ստանալու պահից 24 ժամվա ընթացքում: Կայացված որոշման մասին անմիջապես հայտնվում է դիմողին, և նրան է ուղարկվում համապատասխան որոշման պատճենը:

Գործող օրենսդրությունը սահմանում է հատուկ պաշտպանության մի շարք միջոցներ: Մասնավորապես, Օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարույթի ընթացքում կիրառման ենթակա հատուկ պաշտպանության միջոցներն են՝

1) պաշտպանվող անձին մոտենալու կամ նրա հետ շփվելու սահմանափակումը.

2) պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների գաղտնիացումը.

3) պաշտպանվող անձի, նրա բնակարանի և գույքի նկատմամբ հսկողությունը.

4) պաշտպանվող անձին անհատական պաշտպանության միջոցի տրամադրումը.

5) պաշտպանվող անձին բնակության այլ վայր փոխադրումը.

6) պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերի փոխարինումը կամ պաշտպանվող անձի արտաքինի փոփոխումը.

7) պաշտպանվող անձի աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրի փոխումը.

8) դատական նիստերի դահլիճից հեռացումը կամ դռնփակ դատական նիստի անցկացումը.

9) դատարանում պաշտպանվող անձի հարցաքննությունը հատուկ կարգով:

Կիրառվող հատուկ պաշտպանության միջոցը պետք է համաչափ լինի պաշտպանվող անձին սպառնացող վտանգի բնույթին և հնարավոր հետևանքներին: Ընդ որում, Քրեադատավարական օրենսդրության համաձայն՝ անհրաժեշտության դեպքում կարող են իրականացվել մեկից ավելի պաշտպանության միջոցներ, իսկ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված կարգով և պայմաններով պաշտպանության ենթակա անձի հատուկ պաշտպանությունը կարող է իրականացվել նաև օտարերկրյա պետության տարածքում:

Հատուկ պաշտպանության միջոցների կիրառման հարցին Պաշտպանն իր գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդումներում անդրադարձել է՝ սկսած 2019 թվականից: Պաշտպանի աշխատակազմում ստացված բողոքների և ահազանգների վերլուծությունը վկայում է, որ խնդիրը չի կորցրել իր արդիականությունը:

ՀՀ դատախազությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ 2023 թվականի ընթացքում 5 քրեական վարույթի շրջանակում 9 անձի նկատմամբ կիրառվել է պաշտպանվող անձի, նրա բնակարանի և գույքի նկատմամբ հսկողություն պաշտպանության միջոցը, 5 վարույթով 6 անձի նկատմամբ կիրառվել է պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների գաղտնիացումը պաշտպանության միջոցը, 1 քրեական վարույթի շրջանակում 1 անձի նկատմամբ կիրառվել է պաշտպանվող անձին մոտենալու կամ նրա հետ շփվելու սահմանափակում պաշտպանության միջոցը: Այսինքն՝ 11 քրեական վարույթի շրջանակում 16 անձի նկատմամբ կիրառվել է հատուկ պաշտպանության միջոց:

ՀՀ քննչական կոմիտեի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2023 թվականի ընթացքում 20 քրեական վարույթով 24 անձի նկատմամբ որոշում է կայացվել հատուկ պաշտպանության միջոց կիրառելու մասին: Ըստ ստացված պարզաբանումների՝ պաշտպանության միջոցները հիմնականում կիրառվել են սպանության և սպանության փորձի, առողջությանը ծանր վնաս պատճառելու և դրա փորձի, հրազենի, դրա հիմնական բաղկացուցիչ մասերի, ռազմամթերքի և այլ նյութերի, սարքերի, առարկաների ապօրինի շրջանառության, ստորադասի նկատմամբ բռնության գործադրման կամ դրա սպառնալիքների, համակարգչային հափշտակության, փողերի լվացման և հանցավոր կազմակերպությանը մասնակցելու, հոգեկան ներգործության հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթների շրջանակներում:

ՀՀ դատախազությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ 2019 թվականին 17 քրեական գործով կիրառվել է պաշտպանության միջոց 23 անձի նկատմամբ, 2020 թվականին՝ 35 քրեական գործով 41 անձի նկատմամբ, 2021 թվականի ընթացքում՝ 26

քրեական գործով 30 անձանց նկատմամբ, 2022 թվականի ընթացքում՝ 27 քրեական վարույթի շրջանակում 32 անձի նկատմամբ:

ՀՀ քննչական կոմիտեի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2019 թվականին 14 քրեական գործով որոշում է կայացվել 21 անձի նկատմամբ պաշտպանության միջոց ձեռնարկելու մասին, 2020 թվականին՝ 18 քրեական գործերով 23 անձի նկատմամբ, 2021 թվականի ընթացքում՝ 39 քրեական գործով 45 անձի նկատմամբ, իսկ 2022 թվականի ընթացքում՝ 21 քրեական վարույթով 27 անձի նկատմամբ:

Վերլուծության ամբողջականության տեսանկյունից հարկ է ընդգծել, որ ըստ Դատախազությունից ստացված տեղեկությունների՝ Հայաստանի Հանրապետությունում 2019 թվականին նախաձեռնվել է 20 927, 2020 թվականին՝ 22 747, 2021 թվականին՝ 26 935, 2022 թվականին 43 643, իսկ 2023 թվականին՝ 51 760 քրեական վարույթ:

Ներկայացված վիճակագրությունը ցույց է տալիս, որ հատուկ պաշտպանության միջոցներ կիրառվում են քրեական վարույթների ընդհանուր թվի 1%-ից պակաս դեպքերում: 2023 թվականին, մասնավորապես, նախաձեռնված քրեական վարույթների միայն 0,03%-ով է կիրառվել հատուկ պաշտպանության միջոց: Ընդ որում, նախորդ երկու տարիների համեմատությամբ նվազել է անձանց թիվը, ում նկատմամբ կիրառվել է հատուկ պաշտպանության միջոց, ինչը, սակայն, չի կարող հանգեցնել այն միանշանակ եզրահանգման, որ անձանց անվտանգությունն ապահովելու անհրաժեշտությունը նվազել է:

Պաշտպանի աշխատակազմում քննարկվող հարցի վերաբերյալ քաղաքացիների ներկայացրած խնդիրները հիմնականում վերաբերել են քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից հատուկ պաշտպանության միջոցներ չկիրառելու, դրա կիրառման վերաբերյալ միջնորդությունները սահմանված ժամկետներում չքննարկելու, ինչպես նաև կիրառման ընթացքում առաջացած խնդիրներին: Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով քաղաքացին տեղեկացրել է, որ իր նախկին ամուսինն իրեն տարիներ շարունակ ենթարկել է հոգեբանական և ֆիզիկական բռնության, իսկ ներկայում շարունակում է հետապնդել, որի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ: Ըստ պնդման՝ քաղաքացու նկատմամբ կիրառվել է պաշտպանվող անձի, նրա բնակարանի և գույքի նկատմամբ հսկողություն հատուկ պաշտպանության միջոցը, սակայն Ոստիկանության ծառայողները պատշաճ չեն իրականացնում անհրաժեշտ գործողություններն, ինչի հետևանքով չի կարողանում հաճախել աշխատանքի: Քաղաքացու տեղեկացմամբ՝ Ոստիկանության ծառայողները նշվածը հիմնավորել են այն փաստով, որ իր աշխատավայրը գտնվում է այլ վարչական շրջանում, բացի այդ աշխատավայրի վարչական շենքն ունի մի քանի մուտք, որի պայմաններում հնարավոր չէ իրականացնել անձի պաշտպանությունը:

Քրեական դատավարության գործող օրենսգրքով ամրագրվել է, որ հատուկ պաշտպանության միջոցների կիրառման կարգն ու պայմանները սահմանում է Կառավարությունը: Հարկ է նկատել, որ մինչև 2020 թվականը հատուկ պաշտպանության միջոցների իրականացման կարգը և պայմանները որևէ իրավական ակտով չեն կանոնակարգվել: Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 3-ի «Պաշտպանության ենթակա անձանց նկատմամբ ոստիկանության կողմից պաշտպանության միջոցների իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 1474-Ն որոշմամբ սահմանվեցին քրեական դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ ոստիկանության կողմից պաշտպանության միջոցների իրականացման կարգը

և պայմանները: Ընդ որում, նշված որոշման նախագիծը դեռևս 2019 թվականին ներկայացվել էր Մարդու իրավունքների պաշտպանի կարծիքին: Որոշման վերջնական տարբերակում հաշվի էին առնվել Պաշտպանի կողմից ներկայացրած մի շարք դիտարկումներ: Միևնույն ժամանակ, նախագծի ուսումնասիրմամբ պարզ էր դառնում, որ դրանով կարգավորվում էին Քրեական դատավարության օրենսգրքով ամրագրված պաշտպանության ոչ բոլոր միջոցները: Օրինակ՝ նախագծի կարգավորումից դուրս էր մնացել պաշտպանվող անձի աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրը փոփոխելու միջոցը: Ուստի, առաջարկվել էր կարգավորումների լիարժեքության տեսանկյունից կարգավորման առարկա դարձնել պաշտպանության բոլոր միջոցները՝ անկախ նրանից, թե դրանք պետք է իրականացվեն Ոստիկանության, թե այլ մարմնի կողմից: Նշված առաջարկը, սակայն չէր ներառվել: Ավելին, որոշմամբ հատուկ ընդգծվել է, որ Քրեական դատավարության օրենսգրքի (ընդունված 1998 թվականի հուլիսի 1-ին) 98.1-ին հոդվածի 1-ին մասի 3-6-րդ և 8-9-րդ կետերով նախատեսված պաշտպանության միջոցների կատարումը քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա ապահովում է ոստիկանությունը՝ իրավասու ստորաբաժանումների միջոցով:

Վերոգրյալ որոշումն ուժը կորցրել է ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 22-ի՝ «Քրեական վարույթին ներգրավված և քրեական դատավարության մասնակից չհանդիսացող և այլ օրենքներով պաշտպանության ենթակա անձանց նկատմամբ ոստիկանության կողմից հատուկ պաշտպանության միջոցների կիրառման կարգը և պայմանները սահմանելու մասին» թիվ 560-Ն որոշմամբ: Նույն որոշմամբ սահմանվել են քրեական վարույթում և վարույթից դուրս պաշտպանության ենթակա անձանց նկատմամբ ոստիկանության կողմից հատուկ պաշտպանության միջոցների կիրառման կարգը և պայմանները: Ողջունելի է, որ նշված որոշմամբ առանձին ներկայացված է հատուկ պաշտպանության միջոցների կիրառման կարգը: Որոշմամբ սահմանված է, որ Քրեական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասի 3-6-րդ կետերով նախատեսված պաշտպանության միջոցների կիրառումը քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա իրականացնում է ոստիկանությունը՝ իրավասու ստորաբաժանումների միջոցով: Թեև կարգավորումները կրկին առավելապես վերաբերելի են Ոստիկանության գործողություններին, այնուամենայնիվ, որոշակիորեն ներառում են նաև վարույթ իրականացնող մարմնի գործառույթները, օրինակ՝ անհրաժեշտության դեպքում հնարավորություն ընձեռելով կնքել ծառայությունների մատուցման պայմանագիր:

Վկայակոչված որոշման մեջ, սակայն, ներկայացված չէ պաշտպանվող անձի աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրի փոփոխումը հատուկ պաշտպանության միջոցի իրականացման կարգը: Հարկ է ընդգծել, որ նշված պաշտպանության միջոցի (ինչպես նաև այլ հատուկ պաշտպանության միջոցների) կիրառման համար կարող է առաջանալ իրավասու նախարարությունների կամ այլ պետական մարմինների հետ համագործակցության անհրաժեշտություն, որի ընթացակարգերը ևս պետք է հստակ սահմանված լինեն: Օրինակ՝ բարձրագույն ուսումնական հաստատության ուսանողի ուսման վայրի փոփոխության պարագայում, կրթական գործընթացին չվնասելու նպատակով, անհրաժեշտ է ապահովել ուսումը նույն մասնագիտական ուղղվածությամբ և նմանատիպ կրթական ծրագրով (կրեդիտային համակարգ) իրականացնող հաստատությունում շարունակելու հնարավորություն, ինչը ենթադրում է միջգերատեսչական համագործակցության անհրաժեշտություն:

Այս տեսանկյունից կարևոր է շեշտադրել, որ նշված պաշտպանության միջոցը, իրավասու մարմիններից ստացված տեղեկատվության համաձայն, որևէ անգամ չի կիրառվել:

Կարգավորումներում հատուկ պաշտպանության միջոցի կիրառման անհրաժեշտության և դրանցից մեկի կամ մի քանիսի ընտրության չափանիշներ նախատեսված չեն, և դրա պիտանելիության գնահատումը թողնված է վարույթն իրականացնող մարմնի հայեցողությանը: Բողոքների և պետական մարմիններից ստացված տեղեկատվության ուսումնասիրությունը վկայում է, որ վարույթն իրականացնող մարմիններում հաճախ, չնայած անհրաժեշտության առկայությանը, պաշտպանության միջոցներ չեն կիրառվում կամ կիրառվում են առավելապես Քրեական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասի 1-3 կետերով նախատեսված միջոցները: Ստացված բողոքները վերաբերում են նաև գործընթացում հանդիպող տարատեսակ խնդիրների: Նշվածը կարող է վկայել այն մասին, որ վարույթն իրականացնող մարմինների կողմից լիարժեք չի օգտագործվում հարցին առնչվող՝ օրենսդրությամբ նախատեսված ամբողջ գործիքակազմը:

Նախորդ տարիների գործունեությունն ամփոփող հաղորդումներում Պաշտպանն անդրադարձել է նաև այն խնդրին, որ երբեմն պաշտպանության միջոցները չեն կիրառվում պաշտպանության համար դիմող անձի կողմից հայտնած տեղեկությունների արժանահավատությունը ստուգելու գործնական խնդիրների պատճառով:

Անձի իրավունքների երաշխավորման տեսանկյունից առավել խնդրահարույց է առանց ինքնության մասին տեղեկություններ հրապարակելու դատարանում պաշտպանվող անձին հարցաքննելը: Չնայած, որ այդ դեպքում պաշտպանության է առնվում ցուցմունք տվող անձը, սակայն մյուս կողմից դա կարող է վտանգել մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքը[302]: Քննարկվող հարցի վերաբերյալ ՄԻԵԴ-ի ընդհանուր հետևությունն այն է, որ եթե մեղադրյալին դատավարության որևէ փուլում հնարավորություն չի տրվել հարցեր ուղղելու իր դեմ ցուցմունք տված անձին, ապա ապահովված չէ նրա արդար դատաքննության իրավունքը[303]: ՄԻԵԴ-ն արձանագրել է նաև, որ անձի դատապարտումը չի կարող ամբողջապես կամ վճռական չափով հիմնվել այնպիսի անձի հայտնած տվյալների վրա, որին հարցեր ուղղելու համարժեք հնարավորություն պաշտպանության կողմը չի ունեցել[304]:

Պաշտպանության միջոցների հարցին անդրադարձել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանը: Մասնավորապես, Հ. Սահակյանի վերաբերյալ կայացրած որոշմամբ Վճռաբեկ դատարանը նշել է, որ հանցագործության բացահայտմանը նպաստող անձանց պաշտպանությունը՝ ընդհանրապես, և պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների պաշտպանությունը՝ մասնավորապես, հետապնդում են իրավաչափ նպատակներ և ինքնին անհամատեղելի չեն մեղադրյալի՝ արդար դատաքննությունն ապահովող իրավական արժեքների հետ, սակայն հանցագործության բացահայտմանը նպաստող անձանց պաշտպանությունը կանոնակարգող քրեադատավարական իրավանորմերը մեկնաբանելիս և դրանցով սահմանված իրավական կառուցակարգերը գործադրելիս հարկ է նկատի առնել, որ դրանք չեն կարող հանգեցնել մեղադրյալի՝ արդար

[302] Խնդրին առավել մանրամասն անդրադարձ է կատարվել «Մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման գործնական խնդիրները» վերտառության գլխում:

[303] Տե՛ս, օրինակ Ունտերպերտինգերն ընդդեմ Ավստրիայի (Unterperfinger v Austria) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1986 թվականի նոյեմբերի 24-ի վճիռը, գանգատ թիվ 9120/80, 31-33-րդ կետեր:

[304] Տե՛ս Սադակը և ուրիշներն ընդդեմ Թուրքիայի (թիվ 1) (Sadak and others v Turkey №1), գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2001 թվականի հուլիսի 17-ի վճիռը, գանգատներ թիվ 29900/96 և այլն, 65-րդ կետ:

դատաքննության իրավունքի չեզոքացմանը:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշմամբ՝ հանրային և մասնավոր իրավաչափ շահերը պետք է այնպես հավասարակշռվեն, որ մեղադրյալը չզրկվի «զենքերի հավասարության» իրավունքից և արդյունավետ պաշտպանության հնարավորությունից, ուստի առանց պաշտպանության կողմին ծանոթանալու հնարավորություն տալու, առանց դատաքննության ընթացքում հետազոտվելու՝ որևէ ապացույց չի կարող դրվել մեղադրական դատավճռի հիմքում: Այլ կերպ, ըստ Վճռաբեկ դատարանի, չբացահայտված բովանդակությամբ ապացույցի հիման վրա անձին դատապարտելու արգելքը բացարձակ բնույթ է կրում՝ անկախ ապացույցների ընդհանուր զանգվածում այդ ապացույցի դերից, իսկ այդ արգելքը խախտելն ինքնին կազմում է քրեադատավարական օրենքի էական խախտում:

Հղում կատարելով ՄԻԵԴ-ի հաստատուն նախադեպային իրավունքին՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ հակընդդեմ հարցման իրավունքով չապահովված ապացույցը մեղադրական դատավճռի հիմքում դնելը քրեադատավարական օրենքի էական խախտում չի կազմի, եթե այդ ապացույցը վճռական կշիռ չունի անձի մեղքը հաստատող ապացույցների զանգվածում: Այսինքն՝ առանց հակընդդեմ հարցման՝ ապացույցը մեղադրական դատավճռի հիմքում դնելու արգելքը բացարձակ բնույթ չի կրում, ուստի այս պարագայում հանրային և մասնավոր իրավաչափ շահերի հավասարակշռությունը հնարավոր է ապահովել հանրային շահերի առավել մեծ ընդգրկմամբ[305]:

Վերը նշված դիրքորոշումների հաշվառմամբ՝ Պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է.

- ***գործուն միջոցներ ձեռնարկել Կառավարության 2022 թվականի ապրիլի 22-ի թիվ 560-Ն որոշման պահանջները գործնականում արդյունավետ կիրառելու ուղղությամբ,***
- ***հաշվի առնելով հատուկ պաշտպանության միջոցների կիրառման անհրաժեշտությունն ու կարևորությունը՝ միջոցներ ձեռնարկել դրանց կիրառման ընթացակարգերին առնչվող կարգավորումների շարունակական բարելավման ուղղությամբ՝ հարկ եղած դեպքում դրանց կատարմանը ներգրավելով պետական այլ գերատեսչությունների,***
- ***գործնականում մանրամասն ուսումնասիրման առարկա դարձնել պաշտպանության միջոց կիրառելու մասին միջնորդությունները՝ հաշվի առնելով պաշտպանվող անձի և մեղադրյալի իրավունքների հավասարակշռությունն ապահովելու կարևորությունը:***

5. Մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման գործնական խնդիրներ

Պաշտպանի աշխատակազմում մշտապես ստացվում են բողոքներ և ահազանգներ նախաքննության ընթացքում վարույթն իրականացնող մարմնի կողմից լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննության ապահովման նպատակով պատշաճ միջոցներ չձեռնարկելու, այս կամ այն վարութային գործողությունը չիրականացնելու կամ վարույթի մասնակցի իրավունքների իրացման հնարավորություն չընձեռելու վերաբերյալ: Բողոքների

[305] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԼԴ/0212/01/10 քրեական գործով կայացրած որոշումը, 21-23-րդ կետեր:

քննարկման շրջանակում նշված հարցերի կապակցությամբ համապատասխան գրագրություն է իրականացվել ՀՀ գլխավոր դատախազության հետ՝ պահպանելով քրեական վարույթի քննությանը չմիջամտելու և չխոչընդոտելու պահանջը:

Արդար դատաքննության իրավունքը քրեական դատավարության հենասյունային սկզբունքներից է: Նշված սկզբունքի կարևորագույն բաղադրիչներից մեկն է մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքը: Այս իրավունքը, որպես մեղադրվող անձի նվազագույն իրավունքներից մեկը, ամրագրված է ինչպես ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 3-րդ մասում, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով:

Մարդու իրավունքների պաշտպանը մեղադրյալի այս իրավունքի արդյունավետ իրացման կարևորությանն անդրադարձ է կատարել իր գործունեությունն ամփոփող հաղորդումներում[306]: ՄԻԵԴ-ն իր նախադեպային որոշումներում բազմիցս հաստատել է այն դիրքորոշումը, որ մեղադրյալին իր դեմ ցուցմունք տված անձին հարցեր ուղղելու հնարավորություն չընձեռելը դատավարության որևէ փուլում խախտում է նրա արդար դատաքննության իրավունքը: Արդար դատաքննության իրավունքի իրացման տեսանկյունից անձի նկատմամբ մեղադրական դատավճիռ չի կարող կայացվել՝ ամբողջապես կամ մեծամասամբ հիմնվելով այն անձի ցուցմունքի վրա, որին հարցեր ուղղելու համարժեք հնարավորություն պաշտպանության կողմը չի ունեցել[307]:

Իհարկե, հակընդդեմ հարցման իրավունքը հիմնականում իրացվում է դատական վարույթի ընթացքում, սակայն մինչդատական վարույթի ընթացքում մեղադրյալի այս իրավունքի իրացումը առերեսման միջոցով ևս ունի կարևոր նշանակություն:

Վճռաբեկ դատարանը ևս անդրադարձել է հակընդդեմ հարցման իրավունքի ապահովմանը տարբեր դիտանկյուններից, այդ թվում՝ նշելով, որ նախաքննության փուլում իրավունքի իրացման եղանակներից է առերեսում քննչական գործողությունը: Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այս իրավունքի իրացմամբ չապահովված ապացույցը մեղադրական դատավճռի հիմքում դնելու իրավաչափությանը: Ավելին, ըստ Վճռաբեկ դատարանի դիրքորոշման՝ անգամ մեղադրյալի ցուցմունք տալուց հրաժարվելն ինքնին չի սահմանափակում նրա առերեսման (հակընդդեմ հարցման) հնարավորությունը[308]:

Միևնույն ժամանակ, առանձին դեպքերում առերեսման իրականացումը կարող է գործնականում բացասական հետևանքներ առաջացնել քրեական վարույթին ներգրավված այլ անձանց համար: Ասվածը վերաբերում է այն դեպքերին, երբ այս կամ այն հանգամանքներից ելնելով՝ անհրաժեշտ է ապահովել վկայի անձնական տվյալների գաղտնիությունը, վերջինիս նկատմամբ կիրառել հատուկ պաշտպանության միջոցներ կամ անձն ունի վարութային գործողությանը մասնակցելուն խոչընդոտող առողջական խնդիրներ, ինչպես օրինակ սեռական կամ ընտանեկան բռնության ենթարկված անձանց, անչափահասների վերաբերյալ կամ հանրային հնչեղություն ստացած վարույթների դեպքում:

---

[306] Տե՛ս օրինակ 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 473-479 հասանելի է https://ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 29.03.2024թ:

[307] Տե՛ս Ունտերպերտինգերն ընդդեմ Ավստրիայի (Unterpentinger v. Austria) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1986 թվականի նոյեմբերի 24-ի վճիռը, գանգատ թիվ 9120/80, 31-33-րդ կետեր, Հուլկի Գյունեշն ընդդեմ Թուրքիայի (Hulki Güneş v. Turkey) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2003 թվականի հունիսի 19-ի վճիռը, գանգատ թիվ 28490/95, 53-54-րդ կետեր, Գոսսան ընդդեմ Լեհաստանի (Gossa v. Poland) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2007 թվականի հունվարի 9-ի վճիռը, գանգատ թիվ 47986/99, 54-55-րդ կետեր, Սադակը և ուրիշներն ընդդեմ Թուրքիայի (Sadak and others v. Turkey) (թիվ 1) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2001 թվականի հուլիսի 17-ի վճիռը, գանգատներ թիվ 29900/96 և այլն, 65-րդ կետ և այլն:

[308] Տե՛ս օրինակ, ՀՀ Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԼԴ/0212/01/10 որոշումը, 22-24-րդ կետեր, ՀՀ Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԱՔԴ/0189/01/12 որոշումը, 27-28-րդ կետեր:

ՄԻԵԴ-ն ընդգծում է, որ պետք հաշվի առնել խոցելի համարվող վկայի կամ տուժողի շահերի պաշտպանությունը, սակայն նման պարագայում մեղադրյալին իր դեմ ցուցմունք տված անձին հարցեր ներկայացնելու հնարավորությունը բացառելը, առավել ևս վճռի համար դրանց վճռորոշ լինելու պարագայում, կարող է հանգեցնել մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի խախտման[309]: Այս տեսանկյունից ՄԻԵԴ-ը դիրքորոշումն այն է, որ արդար դատաքննության սկզբունքի ապահովումը ենթադրում է պաշտպանական կողմի շահերի համաչափություն ցուցմունք տվող վկաների և տուժողների շահերի հետ:

Դատարանը ընդունելի է համարում դատաքննության ժամանակ «անանուն վկայի»՝ անձ, որի նույնականացումը անհնար է վարույթի մասնակիցների համար, հարցաքննությունը, սակայն բացառապես համապատասխան չափանիշների պահպանմամբ: Նշված չափանիշներից մեկն այն է, որ ամբաստանյալը և նրա պաշտպանը, տեղեկացված չլինելով վկայի ինքնության մասին, կարող են նրան գրավոր հարցեր տալ, երբեմն պաշտպանը կարող է ներկա գտնվել վկայի հարցաքննությանը այնպիսի պայմաններում, որոնք թույլ են տալիս նրան դիտարկել հարցաքննվողի վարքագիծը և հարցեր տալ նրան (բացառությամբ նրա անձին վերաբերող հարցերի)[310]:

Պաշտպանը նախորդ տարիներին անդրադարձել է նաև միևնույն քրեական վարույթի շրջանակում մեղադրյալի դատավարական կարգավիճակ ունեցող անձանց առերեսումն իրականացնելու հարցին: Խոսքը վերաբերում է այն դեպքերին, երբ մեղադրյալներից մեկը հրաժարվում է մասնակցել նշված վարութային գործողությանը: Նախկինում նշված հարցի կապակցությամբ Դատախազությունից ստացվել էր պարզաբանում առ այն, որ գործնականում չկա միասնական մոտեցում այս խնդրի վերաբերյալ:

Տարեկան հաղորդման նախապատրաստական աշխատանքների ընթացքում Դատախազությունից ստացվել են տեղեկություններ առ այն, որ 2023 թվականի ընթացքում մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի իրացման չապահովման վերաբերյալ ստացվել է 7 բողոք, որոնք մերժվել են, քանի որ տրված ցուցմունքներում էական հակասություններ չեն եղել, կամ մյուս անձը նույնպես ունեցել է մեղադրյալի դատավարական կարգավիճակ և իրավաչափ հրաժարվել է մասնակցել քննչական գործողություններին:

Առերեսում քննչական գործողության իրականացման հետ կապված գործնականում արձանագրվել են նաև դեպքեր, երբ առերեսման ընթացքում փաստաբանը տարբեր պատճառներով հրաժարվել է շարունակել մասնակցել արդեն իսկ սկսված քննչական գործողությանը: Այս առումով Պաշտպանը վերահաստատում է դիրքորոշումն առ այն, որ առանց պաշտպանի տվյալ գործողությունը չի կարող շարունակվել: Այլ հարց է, որ փաստաբանի նման վարքագիծը պետք է ունենա հիմնավոր պատճառներ և չհանգեցնի իրավունքի չարաշահման:

Նախորդ տարիների ընթացքում Պաշտպանի աշխատակազմում արձանագրվել է մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման հետ կապված մեկ այլ խնդիր՝ կապված առերես հարցաքննությունների ընթացքում վարույթն իրականացնող մարմնի կողմից փաստաբանին՝ առերեսվող անձին հարցեր ուղղելու հնարավորություն չընձեռելուն: Նման դրսևորումները խնդիրներ էին առաջացնում թե՛ փաստաբանի

[309] Տե՛ս Պ. Ս.-ն ընդդեմ Գերմանայի (P. S. v. Germany) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 33900/96, 30-31-րդ կետեր:

[310] Տե՛ս «Վկաների անանուն ցուցմունքների օգտագործումը՝ առանց հակընդդեմ հարցման իրավունքի բացակայության պատճառով պաշտպանական կողմին պատճառված վնասների փոխհատուցման» Մարդու իրավունքների եվրոպական դատարանի քարտուղարության կողմից տրված մամուլի հաղորդագրությունը ՄԻԵԴ 213 (2015 թ.), 23.06.2015թ.:

մասնագիտական երաշխիքների իրացման, և թե՛ մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովման տեսանկյունից:

Հարկ է ընդգծել, որ 2023 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում նշված խնդրի կապակցությամբ բողոքներ չեն ստացվել: Պաշտպանն արձանագրում է, որ նման դրական պրակտիկայի ձևավորմանը կարող են նպաստած լինել Քրեական դատավարության նոր օրենսգրքով նախատեսված կարգավորումները, որոնցով ամրագրվել է առերեսման ընթացքում պաշտպանի կողմից հարցեր տալու իրավունքը: Այսպես, Օրենսգրքի 224-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քննիչի հարցերն ավարտվելուց հետո առերեսվողները, ինչպես նաև օրենսգրքով սահմանված դեպքերում հարցաքննության ժամանակ հարցեր տալու իրավունք ունեցող անձինք կարող են հարցեր տալ առերեսվողներին: Միևնույն ժամանակ, Օրենսգրքի 217-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե հարցաքննությանը մասնակցում է փաստաբանը, լիազոր ներկայացուցիչը, պաշտպանը, օրինական ներկայացուցիչը կամ հոգեբանը, ապա նրանք կարող են հարցաքննվողին հարցեր տալ միայն քննիչի հարցերն ավարտվելուց հետո:

2023 թվականի ընթացքում մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման և առերեսման իրականացման հետ կապված բողոքների մեծ մասը վերաբերել է առերեսում իրականացնելու միջնորդությունները վարույթն իրականացնող մարմնի կողմից չքննարկելու կամ անհիմն մերժելու հարցին: Որոշ դեպքերում բողոք ներկայացրած անձինք պնդել են, որ առերեսում քննչական գործողության հետաձգման պատճառով անձի նկատմամբ կիրառված կալանք խափանման միջոցը երկարաձգվել է:

Բարձրացված հարցերի մյուս մասը վերաբերել է առերեսում վարութային գործողության ոչ պատշաճ իրականացմանը, այդ թվում՝ տեսաձայնագրում չկատարելուն, ուղղորդող ձևակերպումներ հնչեցնելուն և այլն: Առանձնահատուկ են այն դեպքերը, երբ նույն կամ փոխկապակցված դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթներից մեկով անձն ունի մեղադրյալի դատավարական կարգավիճակ, իսկ մյուսով՝ տուժողի: Նման բողոքներում անձինք նշել են, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից ձեռնարկվում են միջոցներ բացառապես իր մեղադրանքը հաստատող ապացույցների ձեռքբերման ուղղությամբ, իսկ հակառակ կողմի հանցանք կատարած լինելու հանգամանքը չի հաստատվում անհրաժեշտ վարութային գործողություններ, այդ թվում՝ առերեսում չիրականացվելու պատճառով:

Հարկ է ընդգծել, որ առերեսման ընթացքի վերաբերյալ բողոքներ են ներկայացրել նաև տուժողները: Օրինակ՝ բողոքներից մեկով նշվել է, որ անչափահաս տուժողը առերես հարցաքննության ժամանակ ստացված վնասվածքների հետևանքով ի վիճակի չի եղել օգտվել իր իրավունքներից, այդ թվում՝ հարցեր տալու մասով, սակայն վարույթն իրականացնող մարմինը չի դադարեցրել գործողությունը կամ չի հետաձգել այն:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի իրացման և առերեսման պատշաճ իրականացման տեսանկյունից ձևավորել միասնական պրակտիկա՝ երաշխավորելով կողմերի իրավունքների և դրանց հավասարակշռության ապահովումը՝ գործող քրեադատավարական օրենսդրությանն ու միջազգային չափանիշներին համապատասխան:

6. Կալանավորված անձին մերձավոր ազգականների, այդ թվում՝ ընտանիքի անդամների և օրինական ներկայացուցչի հետ տեսակցություններն ու հեռախոսային խոսակցություններն արգելելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցագործություն կատարած անձանց ձերբակալման կամ ժամանակավոր կալանավորման հետ կապված խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանի 2019, 2020 2021 թվականների տարեկան հաղորդումներում մշտապես արձանագրվել և մանրամասն վերլուծության է ենթարկվել կալանավորված անձին մերձավոր ազգականների, այդ թվում՝ ընտանիքի անդամների և օրինական ներկայացուցչի հետ տեսակցություններն ու հեռախոսային խոսակցություններն արգելելու պրակտիկան, որը տվյալ ժամանակահատվածում գործող օրենսդրությամբ տեղի էր ունենում քրեական վարույթն իրականացնող քննիչի որոշմամբ: *Հաշվի առնելով քննիչի որոշմամբ անձի իրավունքների սահմանափակման ծավալը՝ Պաշտպանը մշտապես կարևորել է, որ ընտանիքի կամ մերձավոր ազգականների հետ ձերբակալված կամ կալանավորված անձի տեսակցության իրավունքը սահմանափակելու լիազորությամբ չպետք է օժտված լինի վարույթն իրականացնող մարմինը, և այս իրավունքը սահմանափակող որոշումը պետք է կայացվի դատարանի կողմից, լինի հիմնավորված և պատճառաբանված, և պարբերաբար վերանայվի՝ անկախ ազատությունից զրկված անձի ցանկությունից կամ վերաբերմունքից:*

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Պաշտպանի աշխատակազմը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հետ դեռևս 2018 թվականին մշակել էր օրենսդրական փոփոխությունների նախագիծ, որով առաջարկվել էր փոփոխություններ կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում և «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքում: Նշված նախագծով առաջարկվել են կարգավորումներ, որոնք հետագայում իրենց տեղն են գտել նաև Քրեական դատավարության նոր օրենսգրքում:

Ներկայում ողջունելի են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած կարգավորումները, որոնց արդյունքում կալանավորված անձի՝ մերձավոր ազգականների, այդ թվում՝ ընտանիքի անդամների և օրինական ներկայացուցչի հետ տեսակցություններն ու հեռախոսային խոսակցությունների սահմանափակման հարցը որոշում է դատարանը՝ որպես խափանման միջոց կալանքի կիրառման կամ դրա ժամկետը երկարացնելու հարցը քննարկելիս:

Մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ կալանք կիրառելու կամ կալանքի ժամկետը երկարաձգելու մասին դատարանի որոշմամբ կարող է սահմանափակվել մեղադրյալի՝ այլ անձանց հետ հաղորդակցվելու իրավունքը, եթե փաստական հանգամանքների բավարար ամբողջությամբ քննիչի կամ դատախազի կողմից հիմնավորվել և դատարանի կողմից պատճառաբանված հաստատվել է այդպիսի սահմանափակման անհրաժեշտությունը, ներառյալ ժամկետին և անձանց շրջանակին վերաբերող պայմանները:

Նշվածի համատեքստում հարկ է նշել, որ ընդունվել է նաև «ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի թիվ 543-Ն որոշումը, որի հավելվածի 156-րդ հոդվածի համաձայն՝ կալանավորված անձանց տեսակցությունն օրինական ներկայացուցչի, մերձավոր ազգականների, զանգվածային

լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, կարող է սահմանափակվել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով կայացված դատարանի որոշմամբ:

Վերոգրյալի հետ մեկտեղ, 2023 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմ բողոքներ են ստացվել կապված Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցագործություն կատարած և Հայաստանում ժամանակավոր կալանավորված անձանց տեսակցությունների ու հեռախոսային խոսակցությունների իրավունքի սահմանափակման հետ:

Նշվածը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ տարածքից դուրս հանցագործություն կատարած անձանց ձերբակալման կամ ժամանակավոր կալանավորման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են 1998 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, ինչը ներկայիս իրավական կարգավորումների հարաբերակցության պարագայում առաջացնում է որոշակի խնդիրներ:

Մասնավորապես՝ Պաշտպանի աշխատակազմ ստացված ահազանգերից մեկով փաստաբանը տեղեկացրել է, որ Հայաստանում ժամանակավոր կալանավորված իր վստահորդի ընտանիքի անդամները ցանկանում են տեսակցել նրան քրեակատարողական հիմնարկում, սակայն ՔԿՀ-ի վարչակազմը չի թույլատրում տեսակցությունը՝ պահանջելով այդ մասին համապատասխան փաստաթուղթ ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազությունից: Փաստաբանը նշել է, որ իր վստահորդի նկատմամբ ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին դատարանի որոշմամբ տեսակցությունների և հեռախոսային խոսակցությունների սահմանափակման մասին որևէ նշում առկա չէ, ուստի տվյալ պարագայում քրեակատարողական հիմնարկի ծառայողների պահանջն իրավաչափ չէ: Այդուհանդերձ, փաստաբանը համապատասխան միջնորդություն է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազության Միջազգային-իրավական համագործակցության վարչություն, սակայն տեսակցությունը տրամադրվել է կոնկրետ օրվա համար, և յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է եղել նոր թույլտվություն ստանալ Դատախազությունից՝ ժամանակավոր կալանավորված անձին տեսակցելու նպատակով:

Մեկ այլ բողոքով փաստաբանը տեղեկացրել է, որ իրեն է դիմել Իրանի Իսլամական Հանրապետության կողմից հետախուզվող և Հայաստանում ժամանակավոր կալանավորված անձի ընկերը՝ խնդրելով ստանձնել վերջինի շահերի պաշտպանությունը: Այդ նպատակով փաստաբանը դիմել է ՀՀ գլխավոր դատախազություն և ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայություն՝ խնդրելով իրեն ներգրավել որպես կալանավորված անձի պաշտպան և թույլատրել անարգել մուտք գործել քրեակատարողական հիմնարկ ու տեսակցել վերջինիս:

Ըստ փաստաբանի՝ ՀՀ արդարադատության նախարարության իրավական փոխօգնության վարչության կողմից տրվել է գրավոր համաձայնություն՝ կալանավորված անձին հանդիպելու համար, և քրեակատարողական հիմնարկում հանդիպել է կալանավորված անձին: Հանդիպման ընթացքում վերջինս տվել է իր գրավոր համաձայնությունը՝ փաստաբանի կողմից իր իրավունքների պաշտպանությունը ստանձնելու վերաբերյալ, որից հետո փաստաբանը դիմել է ՀՀ արդարադատության նախարարության իրավական փոխօգնության վարչություն՝ խնդրելով իրեն ներգրավվել

որպես կալանավորված անձի պաշտպան և անարգել տեսակցել վերջինիս՝ կցելով նաև կալանավորված անձի գրավոր համաձայնությունը:

Փաստաբանի տեղեկացմամբ՝ ՀՀ արդարադատության նախարարության իրավական փոխօգնության վարչությունից և քրեակատարողական ծառայությունից ստացվել է պատասխան, համաձայն որի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իմաստով իրենք չեն հանդիսանում վարույթն իրականացնող մարմին, հետևաբար, չեն կարող տրամադրել գրավոր որևէ փաստաթուղթ այն մասին, որ փաստաբանը վարույթով ներգրավված է որպես կալանավորված անձի պաշտպան:

Այսինքն, ստացվել է իրավիճակ, երբ առկա է ժամանակավոր կալանավորված անձի գրավոր համաձայնությունը՝ փաստաբանի կողմից իր շահերի պաշտպանությունը ստանձնելու նպատակով, սակայն գործող օրենսդրական կարգավորումների պայմաններում փաստաբանը յուրաքանչյուր դեպքում պետք է դիմի ՀՀ արդարադատության նախարարության իրավական փոխօգնության վարչություն և գրավոր թույլտվություն ստանալուց հետո միայն հնարավորություն ստանա մուտք գործել քրեակատարողական հիմնարկ և տեսակցել նրան:

Վերոգրյալի կապակցությամբ՝ Գլխավոր դատախազությունից Միջազգային-իրավական համագործակցության վարչությունից Պաշտպանի աշխատակազմ պարզաբանում է ներկայացվել այն մասին, որ ձևավորված աշխատանքային խմբի կողմից մշակվում է «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով առկա խնդիրները կստանան օրենսդրական լուծումներ: Հարկ է ընդգծել նաև, որ նշված օրենքի նախագիծը դեռևս 2022 թվականի օգոստոս ամսին կարծիքի համար ներկայացվել է Մարդու իրավունքների պաշտպանին, և դրա վերաբերյալ Պաշտպանը ներկայացրել է իր նկատառումները:

Պրակտիկայում առկա խնդիրների հաշվառմամբ՝ Պաշտպանը կարևորում է հնարավոր սեղմ ժամկետում հիշյալ օրենքի նախագիծն ընդունելու անհրաժեշտությունը և բարձրացված խնդիրների լուծումը՝ օրենսդրական կարգավորումների մակարդակում:

Կարևոր է նաև մինչ «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքի ընդունումը գործարկել նշված ոլորտին վերաբերելի այնպիսի կառուցակարգեր, որոնք կհամապատասխանեն մարդու իրավունքների պաշտպանության չափանիշներին, կապահովեն ժամանակավոր կալանավորված անձի տեսակցությունները փաստաբանի հետ՝ առանց քանակի և տևողության սահմանափակման, ինչպես նաև կապահովեն ազատությունից զրկված անձի կապն արտաքին աշխարհի հետ:

7. Խուզարկություն քննչական գործողությանն առնչվող գործնական խնդիրներ

Խուզարկությանը վերաբերող գործնական խնդիրների, այդ թվում՝ խուզարկություն և դեպքի վայրի զննություն քննչական գործողությունների տարբերության վերաբերյալ նախկինում առկա խնդիրները մանրամասն վերլուծության են ենթարկվել Պաշտպանի 2021 թվականի տարեկան հաղորդմամբ[311]:

[311] Տե՛ս Պաշտպանի 2021 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդումը, էջ՝ 488-494, հասանելի է https://ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 29.03.2024թ:

Հարկ է ընդգծել, որ 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 209-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է այն քննչական գործողությունները, որոնք կարող են կատարվել բացառապես դատարանի որոշման հիման վրա, որոնց թվին են դասվում նաև դեպքի վայր չհանդիսացող բնակարանում զննումը և դեպքի վայր հանդիսացող բնակարանում հետագա զննումը: Այստեղ կարևոր է ուշադրություն դարձնել «հետագա զննում» ձևակերպմանը, որը ենթադրում է, որ առաջին անգամ դեպքի վայրում զննություն իրականացնելուց հետո, եթե անհրաժեշտություն է առաջանում կրկին զննություն (հետագա զննություն) իրականացնել, ապա այն կարող է կատարվել միայն դատարանի որոշման առկայության դեպքում:

Նման կարգավորմամբ օրենսդիրը ցանկացել է որոշ չափով լուծել պրակտիկայում առաջացող այն խնդիրը, երբ դեպքի վայրի զննության ընթացքում իրականացվում էր բնակարանի քողարկված խուզարկություն, նկատի ունենալով, որ նշվածի համար անհրաժեշտ էր միայն վարույթն իրականացնող քննիչի որոշումը:

Միևնույն ժամանակ, Պաշտպանի աշխատակազմում 2023 թվականին շարունակվել են ստացվել բողոքներ խուզարկություն քննչական գործողության վերաբերյալ:

Մասնավորապես՝ Պաշտպանի աշխատակազմ կատարված ահազանգներից մեկով փաստաբանը տեղեկացրել է, որ վարույթն իրականացնող քննիչի կողմից իրեն արգելվում է մասնակցել խուզարկությանը, քանի որ խուզարկության կատարումն արդեն սկսվել է, դրա ընթացքը տեսաձայնագրվում է, և հնարավոր չէ ընդհատել այն՝ փաստաբանին վարույթին ներգրավելու նպատակով:

Նշված դեպքով վարույթն իրականացնող մարմնի կողմից փաստաբանի մուտքն արգելելը հիմնավորվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով, որի համաձայն՝ վարութային գործողությունները ամրագրվում են էլեկտրոնային եղանակով կազմված արձանագրությամբ (…), ինչպես նաև 235-րդ հոդվածի 5-րդ մասով, որի համաձայն՝ քննիչն իրավասու է խուզարկության վայրում գտնվող անձանց արգելելու հեռանալու այդ վայրից, հաղորդակցություն ունենալու միմյանց և այլ անձանց հետ, ինչպես նաև թույլ չտալու այլ անձանց մուտքը խուզարկության վայր մինչև խուզարկության ավարտը:

Նման պարագայում վարույթն իրականացնող մարմնի հիմնավորումը խնդրահարույց է մարդու իրավունքների տեսանկյունից, քանի որ խուզարկությունը ցանկացած պարագայում մարդու անձնական կյանքին միջամտող քննչական գործողություն է, ուստի, տվյալ դեպքում առաջանում է խնդիր անձի՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրացման հետ կապված:

Անձի՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը երաշխավորված է ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, այնպես էլ ՄԻԵԿ-ով: Այն կարևորվել և բացահայտվել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի մի շարք որոշումներով[312]:

ՄԻԵԴ իրավաբանության համաձայն՝ իրավաբանական օգնության հասանելիությունը կասկածյալին, որպես կանոն, պետք է երաշխավորել այն պահից, երբ նրան առաջադրվել է «քրեական մեղադրանք»՝ Կոնվենցիայով նախատեսված ինքնուրույն իմաստով[313]: Այս կապակցությամբ Դատարանն ընդգծել է, որ անձը 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքների կիրառության ենթակա՝ կասկածյալի կարգավիճակը ձեռք է

[312] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի մարտի 26-ի թիվ ՀՅՔՐԴ2/0153/01/08, 2015 թվականի հունիսի 5-ի թիվ ԼԴ/0051/01/14 որոշումները:

313 Տե՛ս Սիմեոնովին ընդդեմ Բուլղարիայի (SIMEONOVI v. BULGARIA) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2017 թվականի մայիսի 12-ի վճիռը, կետ 110:

բերում ոչ թե այն պահից, երբ նա պաշտոնապես ստանում է այդ կարգավիճակը, այլ՝ այն պահից, երբ ներպետական իրավասու մարմինները հնարավոր պատճառներ ունեն կասկածելու, որ անձը մասնակից է քրեական իրավախախտմանը[314]: Այսպես, օրինակ, փաստաբանի հասանելիության իրավունքը ծագում է ոչ միայն անձին արգելանքի վերցնելիս կամ հարցաքննելիս[315], այլ կարող է նշանակություն ունենալ նաև դատավարական գործողությունների, օրինակ՝ ճանաչման ընթացակարգերի, դեպքերի վերարտադրման կամ տեղանքների զննությունների ժամանակ[316]:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանն ընդգծում է, որ քրեական վարույթի շրջանակում պետք է խստագույնս երաշխավորվի անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի պատշաճ իրացումը:

Դրանից բացի, Պաշտպանի աշխատակազմում բողոքներ են ստացվել նաև խուզարկություն քննչական գործողության ավարտից հետո վարույթն իրականացնող մարմնի կողմից բնակարանը կապարակնքելու վերաբերյալ:

Մասնավորապես՝ Պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքով փաստաբանը հայտնել է, որ քրեական վարույթի շրջանակում խուզարկություններ են իրականացվել երկու բնակարանում, որից հետո բնակարաններից մեկի մուտքի դուռը կնքվել է: Արդյունքում, ըստ դիմողի, առաջացել են մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ 84-ամյա հաշմանդամության 2-րդ խումբ ունեցող անձի ամբուլատոր քարտը և անհրաժեշտ դեղորայքը մնացել են կնիքված բնակարանում, որի հետևանքով նա զրկվել է անվճար հիմունքներով բժշկական օգնություն ստանալու իրավունքից: Բացի այդ, կնիքված բնակարանում են մնացել նաև ընտանիքի անդամների հագուստները, անկողնային պարագաները անչափահաս երեխայի դասագրքերի մի մասը:

Փաստաբանը նաև հայտնել է, որ միջնորդություն է ներկայացրել վարույթն իրականացնող մարմնին՝ բնակարանի բանալին տրամադրելու և անձանց սեփականության իրավունքի խոչընդոտը, որը տևել է ավելի քան 1 ամիս, վերացնելու վերաբերյալ, սակայն որևէ պատասխան չի ստացվել:

Նշվածի կապակցությամբ Դատախազությունից պարզաբանում է ներկայացվել այն մասին, որ կայացվել է միջնորդության քննարկումը հետաձգելու մասին որոշում, քանի որ նախաքննության ընթացքում հիշյալ հասցեում անհրաժեշտ է կատարել ապացուցողական և վարութային այլ լրացուցիչ գործողություններ:

Հարկ է ընդգծել, որ անձի սեփականության իրավունքն ամրագրված է և պաշտպանվում է ինչպես Սահմանադրությամբ, այնպես էլ ՄԻԵԿ: Սեփականության իրավունքի կարևորությանն անդրադարձել է նաև Վճռաբեկ դատարանը՝ նշելով, որ գույքի տիրապետման, տնօրինման և օգտագործման՝ սեփականատիրոջ իրավազորությունները մեծ կարևորության իրավական արժեքներ են, որոնք ունեն սահմանադրական բնույթ: Դրանց սահմանափակման համար անհրաժեշտ է, որ հակակշիռ իրավական շահը ունենա բացառիկ նշանակություն[317]:

---

314 Տե՛ս Տրուտենն ընդդեմ Ուկրաինայի (TRUTEN v. UKRAINE) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2016 թվականի սեպտեմբերի 23-ի վճիռը, կետ 66:

315 Տե՛ս Սիմեոնովին ընդդեմ Բուլղարիայի (SIMEONOVI v. BULGARIA) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2017 թվականի մայիսի 12-ի վճիռը, կետ 111, Sîrghi v. Romania) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2016 թականի օգոստոսի 24-ի վճիռը, կետ 44:

316 Տե՛ս Իբրահիմ Օզթուրքն ընդդեմ Թուրքիայի(İbrahim Öztürk v. Turkey) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2009 թվականի մայիսի 17-ի վճիռը, կետեր 48-49, Թյուրքն ընդդեմ Թուրքիայի (Türk v. Turkey) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2017 թվականի դեկտեմբերի 5-ի վճիռը, կետ 47, Մեհմեդ Դուման ընդդեմ Թուրքիայի (Mehmet Duman v. Turkey) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2019 թվականի հունվարի 23-ի վճիռը, կետ 41:

317 Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԵՇԴ/0001/11/10 որոշումը:

Վերոգրյալի համատեքստում անհրաժեշտ է, որպեսզի Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքը տևական ժամանակ սահմանափակելը ենթադրի դրան հակակշիռ իրավական շահի բացառիկ նշանակություն: Այդ տեսանկյունից անձի սեփականության իրավունքը տևական ժամանակ սահմանափակելը՝ բնակարանում քննչական գործողություն կատարելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ առերևույթ խնդրահարույց է այն պայմաններում, երբ այդ ընթացքում նշված բնակարանում չի իրականացվում որևէ վարութային գործողություն:

Պաշտպանի աշխատակազմ ստացվել են նաև բողոքներ այն մասին, որ դատարանի որոշմամբ թույլատրվել է խուզարկություն կատարել որոշմամբ նշված հասցեում և փնտրել որոշմամբ նշված նյութեր, փաստաթղթեր և կրիչներ, սակայն խուզարկությունն իրականացվել է այլ հասցեում, որտեղից վերցվել են նաև դատարանի որոշմամբ չնշված առարկաներ:

Հարկ է ընդգծել, որ քննչական տվյալ գործողության պարագայում կարևորագույն նշանակություն ունի այն, թե որոշակիության ինչ աստիճան ունեն քննիչի միջնորդության ու դատարանի որոշման մեջ առկա ձևակերպումները: Սեպուհ Թադևոսյանի և Սիրուն Նաջարյանի գործով Վճռաբեկ դատարանը, հղում կատարելով ՄԻԵԴ դիրքորոշումներին, ի թիվս այլնի, նշել է, որ ինչպես խուզարկություն կատարելու համար նախաքննական մարմնի միջնորդությունը, այնպես էլ դատարանի թույլտվության որոշումը պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված: Մասնավորապես, ըստ հիշատակված որոշման, նախաքննական մարմնի որոշման պատճառաբանական մասում պետք է նշվեն տվյալներ այն հանցագործության մասին, որի առիթով մտադրություն կա կատարել խուզարկություն, ինչպիսի առարկաներ պետք է ստացվեն քաղաքացիների սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակման հետ կապված գործողության արդյունքում, դրա կատարման ժամկետը, այն բնակարանի նույնականացման տվյալները, որտեղ պետք է կատարվի խուզարկությունը, տվյալները, որոնք հիմք են տալիս ենթադրելու, որ փնտրվող առարկաները գտնվում են տվյալ բնակարանում, քննչական գործողության անմիջական կատարողները, արդյունքների ամրագրման ձևը, ինչպես նաև այլ տվյալներ, որոնք անհրաժեշտ են դատարանին օրինական և հիմնավորված որոշում ընդունելու համար[318]: Ընդ որում, Դատարանը սահմանել է, որ միջնորդության բավարարման դեպքում դատարանի որոշումը պետք է պարունակի նշում խուզարկության կատարման փաստական հիմքերի առկայության մասին, դրանց վերաբերելիության, արժանահավատության և բավարարության մասին հիմնավորումներ, փնտրվող առարկաների՝ գործի համար նշանակության վերաբերյալ հիմնավորումներ, ինչպես նաև հստակ նշում բնակարանի նույնականացման համար անհրաժեշտ տվյալների և փնտրվող առարկաների բնութագրի վերաբերյալ:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանն արձանագրում է, որ խուզարկությունը ցանկացած պարագայում մարդու անձնական կյանքին միջամտող քննչական գործողություն է, ուստի տվյալ քննչական գործողությանը փաստաբանի մասնակցությունն ունի առանցքային նշանակություն: Կարևոր է և այն, թե որոշակիության ինչ աստիճան ունեն քննիչի միջնորդության ու առավել ևս խուզարկությունը թույլատրող դատարանի որոշման մեջ առկա ձևակերպումները:

[318] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 18-ին թիվ ԵՇԴ/0073/07/15 որոշումը:

Վերը քննարկված խնդիրների հաշվառմամբ՝ Պաշտպանն արձանագրում է, որ դեռևս շարունակում են արդիական մնալ խուզարկություն քննչական գործողությանը վերաբերող խնդիրներ:

Ուստի, անհրաժեշտ է՝

✓ քրեական վարույթի շրջանակում խստագույնս երաշխավորել անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի պատշաճ իրացումը և բացառել դրա՝ ոչ իրավաչափ սահմանափակման դեպքերը,

✓ խուզարկություն քննչական գործողությունն իրականացնել բացառապես դատարանի որոշմամբ սահմանված ծավալի շրջանակում (դրանով սահմանված հասցեում, որոնել դրանով մատնանշված առարկաներ և այլն),

✓ խուզարկության ավարտից հետո բացառել սեփականության իրավունքի սահմանափակման այն դեպքերը, երբ հակակշիռ իրավական շահը չունի բացառիկ նշանակություն. և չեն պահպանվում սեփականության իրավունքի սահմանափակման չափանիշները:

8. Քրեական վարույթի ընթացքում սեփականության իրավունքի սահմանափակմանն առնչվող խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանի նախորդ տարիների տարեկան հաղորդումներով մանրամասն անդրադարձ է կատարվել քրեական վարույթի շրջանակում անձի սեփականության իրավունքի և հանրային շահի ողջամիտ հավասարակշռության ապահովմանը, սեփականության իրավունքին միջամտության համաչափությանը վերաբերող խնդիրներին:

Հաշվի առնելով Պաշտպանի աշխատակազմում ստացված բողոքները և ահազանգերը՝ կարող ենք նշել, որ քրեական վարույթին մասնակցող անձանց սեփականության իրավունքի սահմանափակմանն առնչվող խնդիրները շարունակել են արդիական մնալ նաև 2023 թվականի ընթացքում, ուստի դրանք նույնպես գտնվում են Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության ներքո:

Անձի սեփականության իրավունքը երաշխավորված է ՀՀ Սահմանադրությամբ, որի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդված

Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոք չի կարող զրկվել իր գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով: Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար:

ՄԻԵԴ-ը Բորժոնովն ընդդեմ Ռուսաստանի գործով կայացված վճռում[319], մեկնաբանելով Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի դրույթները, նշել է, որ պետք է լինի ողջամիտ հավասարակշռություն պետության կողմից կիրառվող, այդ թվում՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը վերահսկելու հետ կապված միջոցների և այդ միջոցների կիրառման արդյունքում ակնկալվող նպատակների միջև: Այս պահանջն արտահայտվում է «արդարացի հավասարակշռություն» ձևակերպմամբ, որը պետք է առկա լինի հասարակության ընդհանուր շահի պահանջների և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության միջև:

Եվրոպական դատարանն ընդգծել է, որ մեղադրյալի գույքի վրա կալանք դնելն ինքնին ենթակա չէ քննադատության՝ հաշվի առնելով, մասնավորապես, ՄԻԵԿ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի երկրորդ պարբերությունը, սակայն պետք է հաշվի առնել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքից օգտվելու սահմանափակմամբ անձի վրա չափազանց ծանր բեռ դնելու ռիսկը, **հետևաբար պետք է ապահովել համապատասխան դատավարական երաշխիքներ՝ համոզվելու համար, որ անձի սեփականության իրավունքի վրա առկա ազդեցությունը կամայական կամ ոչ կանխատեսելի չէ:**

Սեփականության իրավունքի սահմանափակման կապակցությամբ կայուն նախադեպային իրավունք է ձևավորել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը, արտահայտելով իրավական դիրքորոշումներ առ այն, որ. «(...) գույքի տիրապետման, տնօրինման և օգտագործման՝ սեփականատիրոջ իրավազորությունները մեծ կարևորության իրավական արժեքներ են, որոնք ունեն սահմանադրական բնույթ: Դրանց սահմանափակման համար անհրաժեշտ է, որ հակակշիռ իրավական շահը ունենա բացառիկ նշանակություն(...)[320], (...)անձի սեփականության իրավունքը դիտարկելով պետության՝ սեփականության իրավունքի պաշտպանության ոլորտում պոզիտիվ պարտականությունների համատեքստում՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ սեփականության իրավունքը ենթադրում է ոչ միայն յուրաքանչյուր անձի իրավունքը պահանջելու, որպեսզի այլոք չխախտեն իր սեփականության իրավունքը, այլ նաև պետության պարտականությունը՝ սեփականության իրավունքը պաշտպանելու ցանկացած անօրինական ոտնձգություններից(...)[321], (...) Համաչափության սկզբունքը պետք է ապահովվի ոչ միայն անձի իրավունքի նկատմամբ սահմանափակում կիրառելիս, այլ նաև դրա աստիճանը որոշելիս: Վերջինս արտահայտվում է իր գույքն անարգել տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու իրավազորություններից որևէ մեկը կամ բոլորը սահմանափակելու հարցի որոշմամբ (...)[322], (...) անձի սեփականության իրավունքի համաչափ սահմանափակման տեսանկյունից կարևոր օրենսդրական պահանջ է նաև գույքի վրա կալանք դնելու մասին որոշման մեջ արգելադրման ենթակա գույքի և դրա արժեքի հստակեցումը, ինչն իր հերթին պետք է հիմնավորված լինի այդ հարկադրանքի միջոցի կիրառմամբ հետապնդվող նպատակներով, լինի որոշակի և հստակ՝ ապահովելով հասարակության ընդհանուր շահի և անհատի սեփականության (կամ այլ գույքային) իրավունքի պաշտպանության միջև արդարացի հավասարակշռությունը (...)[323]»:

---

[319] Տե՛ս Բորժոնովն ընդդեմ Ռուսաստանի (Borzhonov v. Russia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2009 թվականի հունվարի 22-ի վճիռը, գանգատ թիվ 18274/04, կետեր 59-60:

[320] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԵՇԴ/0001/11/10 որոշումը:

[321] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵԿԴ/0326/01/09 որոշումը:

[322] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԵԿԴ/0255/11/15 որոշումը:

[323] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2019 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԵԿԴ/0587/11/18 որոշումը:

Քրեական վարույթի շրջանակում սեփականության իրավունքի սահմանափակմանն առնչվող խնդիրների կապակցությամբ 2023 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքների մեծ մասը վերաբերել է նրան, որ վարույթն իրականացնող մարմինը, առանց համապատասխան որոշում կայացնելու, վերցնում է սեփականության իրավունքով անձին պատկանող գույքը և, առանց որևէ իրավական հիմնավորման, հրաժարվում վերադարձնել՝ պատճառաբանելով, որ գույքը կվերադարձվի անհրաժեշտ քննչական և վարութային այլ գործողություններ իրականացնելուց հետո՝ չնշելով նույնիսկ որևէ հստակ ժամկետ:

Ստացված բողոքներից մեկով փաստաբանը տեղեկացրել է, որ իր վստահորդի բնակարանում իրականացվել է խուզարկություն, որի արդյունքում առգրավվել են նրա դրամական միջոցները և անձնական օգտագործման բջջային հեռախոսները: Նաև տեղեկացրել է, որ միջնորդություն է ներկայացրել վարույթն իրականացնող մարմնին՝ իր վստահորդի դրամական միջոցները և անձնական օգտագործման բջջային հեռախոսները վերադարձնելու վերաբերյալ, սակայն միջնորդությունը քննիչի որոշմամբ մերժվել է:

Նշվածի կապակցությամբ Պաշտպանի աշխատակազմից համապատասխան գրություն է ուղարկվել ՀՀ գլխավոր դատախազություն: Արդյունքում, ինչպես բջջային հեռախոսները և համակարգչային տեխնիկան, այնպես էլ բնակարանի խուզարկությամբ հայտնաբերված դրամական միջոցները, կազմված համապատասխան ստացականով, վերադարձվել են վստահորդին:

Պաշտպանի աշխատակազմ ներկայացված մեկ այլ բողոքով դիմումատուն հայտնել է, որ եղբայրը տեղափոխվել է Ոստիկանության բաժին: Նշել է, որ Ոստիկանությունում եղբորից վերցվել են ավտոմեքենայի և բնակարանի բանալիները և չեն վերադարձվում:

Նշվածի կապակցությամբ Ոստիկանությունից տեղեկություններ են ներկայացվել, որ նշված անձը հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածով ձերբակալվել և անձնական խուզարկությամբ վերցված իրերի հետ միասին փոխանցվել է ՀՀ քննչական կոմիտե: Դրանից հետո խնդիրը քննարկվել է ՀՀ քննչական կոմիտեի իրավասու ներկայացուցչի հետ, որի արդյունքում բնակարանի բանալին հետ է վերադարձվել օրինական տիրապետողին:

ՀՀ քրեական դատավարության օրենսդրության ուսումնասիրությամբ պարզ է դառնում, որ այն պարունակում է անձանց գույքային իրավունքների հնարավոր սահմանափակումներին վերաբերող նորմեր: Դրանց շարքին են դասվում իրեղեն ապացույց ճանաչված առարկաների, ինչպես նաև գույքի արգելադրման վերաբերյալ իրավահարաբերությունները կարգավորող նորմերը:

Այս առումով հարկ է ընդգծել, որ Մարդու իրավունքների պաշտպանն իր նախորդ տարիների տարեկան հաղորդումներում անդրադարձ է կատարել քրեական վարույթի շրջանակում անձի գույքի վրա կալանք դնելու վերաբերյալ խնդրին՝ ընդգծելով, որ հարկադրանքի տվյալ միջոցի իրավաչափ կիրառման համար վարույթն իրականացնող մարմինն ընդհանուր շահի և անհատի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի պաշտպանության պահանջների միջև պարտավոր է ապահովել արդարացի հավասարակշռություն՝ հղում կատարելով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմանը[324], և բոլոր հնարավոր միջոցների կիրառմամբ բացառել մեղադրյալին պատկանող ամբողջ գույքի վրա անհամաչափ կալանք դնելու դեպքերը:

[324] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԿԴ/0185/11/11 որոշումը:

Նշվածի համատեքստում ողջունելի են ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքում առկա կարգավորումները, որոնցով օրենսդիրը վարույթի ընթացքում անձի գույքի արգելադրման համար ավելի բարձր երաշխիքներ է սահմանել՝ տեղափոխելով այն դատական երաշխիքների վարույթ, այդպիսով ընդգծելով անձի սեփականության իրավունքի կարևորությունը:

Միևնույն ժամանակ, Պաշտպանը կարևորում է, որպեսզի յուրաքանչյուր դեպքում իրավասու մարմինները անձի սեփականության իրավունքը սահմանափակելիս առաջնորդվեն միջազգային չափանիշներով, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումներով՝ առաջնորդվելով պատշաճ ապացուցման ընդհանուր շահի և անհատի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի պաշտպանության պահանջների միջև արդարացի հավասարակշռություն ապահովելու անհրաժեշտությամբ:

Վերոգրյալի հետ մեկտեղ, ինչպես նախորդ տարիներին, 2023 թվականին ևս Պաշտպանի աշխատակազմում շարունակվել են ստացվել բողոքներ քրեական վարույթի շրջանակում անձին պատկանող գույքը տնօրինելու իրավունքն անհամաչափ կերպով սահմանափակելու մասին:

Բողոքների մեծ մասը վերաբերում է այն հանգամանքին, որ սեփականության իրավունքով անձին պատկանող գույքը վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ ճանաչվում է իրեղեն ապացույց և տևական ժամական չի վերադարձվում սեփականատիրոջը: Տվյալ պարագայում վարույթն իրականացնող մարմինը հղում է կատարում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածին, համաձայն որի՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, իրեղեն ապացույցները պահվում են վարույթի նյութերի հետ այնքան, քանի դեռ դրանց տնօրինման հարցը չի լուծվել օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատավարական ակտով: Տվյալ պարագայում, կարևոր է, որպեսզի վարույթն իրականացնող մարմինը ցուցաբերի անհրաժեշտ ջանասիրություն՝ վարույթը ողջամիտ ժամկետում իրականացնելու և գույքի տնօրինման հարցը լուծելու համար:

Պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքների վերլուծությամբ պարզ է դառնում, որ մեծամասնություն կազմող դեպքերում իրեղեն ապացույց է ճանաչվում և հատուկ պահպանվող տարածք է տեղափոխվում անձի և նրա ընտանիքի ապրուստի միակ միջոց հանդիսացող տրանսպորտային միջոցը:

Մեկ այլ բողոքով փաստաբանը տեղեկացրել է, որ իր վստահորդին պատկանող հյուրանոցը քրեական վարույթի շրջանակում կայացված որոշմամբ ճանաչվել է իրեղեն ապացույց, և հյուրանոցում գտնվող անձինք դուրս են բերվում այդտեղից:

Ստացված բողոքների ուսումնասիրությամբ կարելի է նաև ենթադրել, որ երբեմն վարույթն իրականացնող մարմնի կողմից գույքն իրեղեն ապացույց ճանաչելը և վարույթն իրականացնող մարմնի տնօրինությանը վերցնելը քողարկված նպատակ է հետապնդում «խուսափել» գույքի արգելադրումից՝ նկատի ունենալով, որ ինչպես արդեն նշվել է, գործող օրենսդրությամբ վարույթի ընթացքում անձի գույքի արգելադրումը ենթակա է պարտադիր դատական ստուգման:

Այս առումով հարկ է արձանագրել, որ գույքն իրեղեն ապացույց ճանաչելու և գույքի արգելադրման հիմքերը նախատեսված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով: Ըստ այդմ՝ գույքի արգելադրման ինստիտուտը կոչված է սեփականության կամ այլ գույքային իրավունքների սահմանափակման միջոցով ապահովելու քաղաքացիական

հայցը, գույքի հնարավոր բռնագրավումը, դատական ծախսերը, մինչդեռ, գույքն իրեղեն ապացույց ճանաչելով՝ իրացվում են քրեադատավարական այլ նպատակներ: Մասնավորապես, իրեղեն ապացույց է ճանաչվում ցանկացած առարկա, որը կարող է վարույթի համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքները պարզելու միջոց լինել, այդ թվում՝ գույքը, որն իր վրա կրում է հանցագործության հետքեր կամ ինքնին կարող է ծառայել ապացուցման գործընթացում որոշակի հանգամանքներ պարզելու համար:

Այդուհանդերձ, նույնիսկ գույքն իրեղեն ապացույց ճանաչելու պայմաններում ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է մի շարք դեպքերում իրեղեն ապացույց ճանաչված իրն օրինական տիրապետողի պահպանմանը վերադարձնելու հնարավորություն, եթե դա չի կարող վնասել պատշաճ ապացուցմանը: Մինչդեռ, ըստ Պաշտպանի աշխատակազմում ստացված բողոքների, նշվածն առհասարակ քննարկման առարկա չի դարձվում վարույթն իրականացնող մարմնի կողմից:

Վերոգրյալի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ (...) Իրեղեն ապացույց ճանաչված առարկայի մեծածավալության դեպքում այն համապատասխան անձանց պատասխանատու պահպանմանը հանձնելու հայեցողական լիազորությունն իրականացնելիս վարույթն իրականացնող մարմինը պետք է ելնի պատշաճ ապացուցման ընդհանուր շահի և անհատի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի պաշտպանության պահանջների միջև արդարացի հավասարակշռություն ապահովելու անհրաժեշտությունից: Յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնվի սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքից օգտվելու սահմանափակմամբ անձի վրա չափազանց ծանր բեռ դնելու ռիսկը և, հետևաբար, պետք է ապահովվեն համապատասխան դատավարական երաշխիքներ՝ համոզվելու համար, որ անձի սեփականության իրավունքի վրա առկա ազդեցությունը կամայական կամ ոչ կանխատեսելի չէ: (...) իրեղեն ապացույց ճանաչված մեծածավալ գույքի դեպքում, եթե ողջամտորեն բացառվում է դրա առանձնահատկությունները, հատկանիշները, պարունակող հետքերն էապես փոփոխելու հնարավորությունը, վարույթն իրականացնող մարմինը պետք է քննարկման առարկա դարձնի այդ գույքը սեփականատիրոջ կամ օրինական տիրապետողի պահպանմանը թողնելու հարցը: Վերջին պահանջից բխում է նաև սեփականատիրոջ պատասխանատու պահպանմանը վերոհիշյալ գույքը չթողնելու պարագայում պատշաճ հիմնավորում ներկայացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը, որպիսի դեպքում միայն կապահովվի սեփականության իրավունքի սահմանափակման համաչափությունն անձի կողմից վիճարկելու, ինչպես նաև իրավասու մարմնի կողմից այն գնահատելու հնարավորությունը: (...)[325]:

Վերոգրյալի համատեքստում Պաշտպանն արձանագրում է, որ յուրաքանչյուր դեպքում գույքն իրեղեն ապացույց ճանաչելուց հետո անհրաժեշտ է, որպեսզի վարույթն իրականացնող մարմնի կողմից դրա հետագա տնօրինման հարցը պատշաճ քննարկման առարկա դարձվի՝ հաշվի առնելով վերաբերելի չափանիշներով սահմանված մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ գույքը տիրապետողի անձը, ընտանեկան և ֆինանսական դրությունը, ինչպես նաև ընդհանուր շահի և անհատի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի պաշտպանության պահանջների միջև արդարացի հավասարակշռությունը և այլն:

[325] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի2018 թվականի մարտի 20-ի թիվ ԵԿԴ/0255/11/15 որոշումը:

Ուստի, մարդու իրավունքների տեսանկյունից պրակտիկայի կատարելագործման նպատակով անհրաժեշտ է.

✓ բացառել գույքի արգելադրման քողարկված նպատակով վարույթն իրականացնող մարմնի կողմից գույքն իրեղեն ապացույց ճանաչելու դեպքերը՝ զերծ մնալով անձի սեփականության իրավունքին՝ միջազգային և ներպետական չափանիշներին չհամապատասխանող ոչ իրավաչափ միջամտությունից,

✓ քրեական վարույթն իրականացնող մարմինները պետք է ցուցաբերեն բավարար ջանասիրություն և բարեխղճություն՝ անձի սեփականության հետ կապված քննչական և վարութային այլ գործողությունները ողջամիտ ժամկետում իրականացնելու և գույքը, այդ թվում՝ վերցված իրերն ու առարկաները սեփականատիրոջը վերադարձնելու պարտականության ապահովման ուղղությամբ,

✓ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված՝ իրեղեն ապացույցները վարույթի նյութերի հետ պահելու ընդհանուր կանոնից բացառության առկայության դեպքում քննարկման առարկա դարձնել այն սեփականատիրոջ կամ օրինական տիրապետողի պահպանմանը թողնելու հարցը՝ հակառակ պարագայում ներկայացնելով պատշաճ և միջազգային չափանիշներին համապատասխանող հիմնավորումներ:

9. Մասնավոր անձանց կողմից հեռախոսային խոսակցություններ ձայնագրելու և որպես ապացույց օգտագործելու պրակտիկան քրեական վարույթի շրջանակում՝ մարդու իրավունքների պաշտպանության համատեքստում

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն իր նախորդ տարեկան հաղորդումներում մշտապես անդրադարձել է մասնավոր սուբյեկտների կողմից կատարված ձայնագրությունները որպես ապացույց (արտավարութային փաստաթուղթ) ճանաչելու և քրեական վարույթի ընթացքում օգտագործելու հետ կապված խնդիրներին: Մասնավորապես, Եվրոպական դատարանի իրավաբանության, ներպետական օրենսդրության և Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների ուսումնասիրությամբ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է, որ պետական մարմիններն իրենց գործունեության ընթացքում պետք է հետևեն նշված իրավական դիրքորոշումներին և ձայնագրության՝ որպես ապացույց օգտագործելու հարցը քննարկելիս բացառեն հաղորդակցության մասնավոր սուբյեկտների կողմից կատարված ձայնագրառումներն ինքնին անթույլատրելի ճանաչելու պրակտիկան:

Հարկ է նշել, որ Պաշտպանի աշխատակազմում 2023 թվականի ընթացքում շարունակվել է մասնավոր սուբյեկտների կողմից կատարված ձայնագրությունները որպես արտավարութային փաստաթուղթ քրեական վարույթի ընթացքում օգտագործելու հետ կապված խնդիրների դինամիկայի ուսումնասիրությունը:

Այս կապակցությամբ Եվրոպական դատարանի իրավաբանության ուսումնասիրությամբ կարող ենք փաստել, որ մասնավոր (հեռախոսային) խոսակցության ձայնագրումը զրուցակցի կողմից և նման ձայնագրությունների անձնական օգտագործումն, ըստ էության (per se), չեն խախտում Կոնվենցիայի 8-րդ հոդվածը, եթե դա իրականացվել է մասնավոր միջոցներով[326]: Միևնույն ժամանակ մեկ այլ գործով

[326] Տե՛ս Վան Վոնդելն ընդդեմ Նիդերլանդների (V. Vondel v. the Netherlands) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2008 թվականի հունվարի 25-ի վճիռը, գանգատ թիվ 38258/03, կետ 49:

Եվրոպական դատարանն ընդգծել է, որ մասնավոր անձի գործողություններն իրավական կարգավորման ենթակա չեն և (a priori) չեն կարող որակվել որպես դատավարական գործողություններ, այդուհանդերձ դրանք էական դեր ունեն դատավորի համոզմունքի ձևավորման համար՝ նշելով, որ ներկայացվող ապացույցների թույլատրելիությունը կանոնակարգող իրավական կարգավորումների բացակայությունն ինքնին չի կարող դիտարկվել որպես Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում[327]:

Եվրոպական դատարանը նաև հայտնել է դիրքորոշում առ այն, որ մասնավոր անձի կողմից կատարված հեռախոսային խոսակցության ձայնագրության հիման վրա դիմումատուին դատապարտելը չի հանգեցրել Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման[328]:

Մասնավոր անձանց կողմից հեռախոսային խոսակցության ձայնագրությունը որպես արտավարութային փաստաթուղթ ճանաչելու խնդրին անդրադարձել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանը՝ եզրահանգում անելով այն մասին, որ մասնավոր անձանց կողմից կատարված հեռախոսային խոսակցության ձայնագրությունը չպետք է նույնացնել քրեական հետապնդման մարմինների կողմից քրեադատավարական ճանապարհով անձի հաղորդակցության վերահսկման, այդ թվում՝ նրանց իրազեկվածությամբ՝ քրեական կամ այլ պաշտոնական քննության համատեքստում համագործակցող անձանց կողմից իրականացված ձայնագրառման հետ: Վճռաբեկ դատարանը նշել է, որ դրանց համար սահմանված չափանիշները չպետք է մեխանիկորեն կիրառել մասնավոր անձանց կողմից կատարված հեռախոսային խոսակցությունների ձայնագրության նկատմամբ: Նշված չափանիշները ենթակա են վերագրման պետական իշխանության մարմիններին, ովքեր, ի տարբերություն մասնավոր անձանց, իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Արդյունքում, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է կատարել, որ մասնավոր անձի կողմից քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացված հեռախոսային խոսակցության ձայնագրառումը կարող է ճանաչվել որպես ապացույց և ենթարկվել իրավական գնահատման՝ ըստ անհրաժեշտության նաև հիմք հանդիսանալով քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարման համար[329]:

Ինչպես նախորդ տարեկան հաղորդումներում, այս տարի ևս Պաշտպանը վերահաստատում է իր դիրքորոշումը, որ մասնավոր սուբյեկտների կողմից կատարված ձայնագրությունները որպես արտավարութային փաստաթուղթ ճանաչելը դեռևս չի բացառում այն, որ տվյալ ձայնագրության կատարման փաստը կարող է առիթ հանդիսանալ ՀՀ քրեական օրենսգրքի 204-րդ հոդվածով (անձնական կամ ընտանեկան կյանքի գաղտնիությունը խախտելը) նախատեսված ընթացակարգ նախաձեռնելու համար:

Հաշվի առնելով նախորդ տարիներին Պաշտպանի արտահայտած դիրքորոշումներն ու առաջարկները, ինչպես նաև 2023 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքների նվազ քանակը՝ Պաշտպանն արձանագրում է մասնավոր սուբյեկտների կողմից հեռախոսային խոսակցությունները ձայնագրելու և դրանք քրեական վարույթի շրջանակում օգտագործելու վերաբերյալ խնդրի լուծման դրական դինամիկա:

---

[327] Տե՛ս Թուրքուին ընդդեմ Ֆրանսիայի (Turquin v. France) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2002 թվականի հունվարի 24-ի որոշումը, գանգատ թիվ 43467/98:

[328] Տե՛ս Սչենկն ընդդեմ Շվեյցարիայի (Schenk v. Switzerland) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1988 թվականի հուլիսի 12-ի վճիռը, գանգատ թիվ 10862/84, կետեր 47-49:

[329] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2019 թվականի ապրիլի 11-ի թիվ ԼԴ/0002/01/18 գործով կայացված որոշումը

Այս հարցի կապակցությամբ Դատախազությունից պարզաբանում է ներկայացվել առ այն, որ 2023 թվականի ընթացքում արձանագրվել է մասնավոր անձանց կողմից հեռախոսային խոսակցությունները ձայնագրելու և որպես ապացույց վարույթն իրականացնող մարմին ներկայացնելու 13 դեպք, և առաջնորդվելով ՀՀ վճռաբեկ դատարանի, ինչպես նաև Եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներով՝ մասնավոր անձի կողմից ներկայացված հեռախոսային խոսակցությունների ձայնագրառումը վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ ճանաչվել է որպես արտավարութային փաստաթուղթ և կցվել քրեական վարույթի նյութերին:

Վերոգրյալի համատեքստում Պաշտպանը ողջունելի է համարում խնդրի վերաբերյալ արձանագրված դրական դինամիկան և կարևորում, որպեսզի մասնավոր սուբյեկտների կողմից կատարված ձայնագրությունները որպես արտավարութային փաստաթուղթ օգտագործելիս իրավասու մարմինները շարունակեն առաջնորդվել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ իրավասու դատական ատյանների արտահայտած իրավական դիրքորոշումներով:

10. Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու պրակտիկան

2016 թվականից ի վեր Պաշտպանի տարեկան հաղորդումներում անդրադարձ է կատարվել նաև ամենախիստ խափանման միջոցի՝ կալանքի կիրառման պրակտիկային[330]:

Հաղորդումներում մանրամասն քննարկվել է կալանքը՝ որպես խափանման միջոց ընտրելու խնդրահարույց պրակտիկան: Նշված խնդիրները չեն կորցել իրենց արդիականությունը նաև 2023 թվականի ընթացքում: Կալանքը ինչպես ուժը կորցրած, այնպես էլ գործող Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված խափանման միջոցներից ամենախիստն է: Առանձին դեպքերում կալանքը կրում է շարունակական բնույթ և անձը կարող է մինչև վերջնական դատավճռի կայացումը գտնվել ընտրված խափանման միջոցի՝ կալանքի տակ:

Պաշտպանի աշխատակազմում 2022 և 2023 թվականներին ևս ստացվել են բողոքներ և ահազանգներ՝ կապված կալանք խափանման միջոցի կիրառման հետ: Ստացված բողոքները մեծամասամբ վերաբերել են ինչպես կալանքի հիմնավորվածությանը, այնպես էլ անհրաժեշտությանն ու համաչափությանը: Ըստ ստացված բողոքների՝ անձանց նկատմամբ ամենախիստ խափանման միջոցը կիրառվում է և դրա ժամկետը պարբերաբար երկարաձգվում է հիմնավոր կասկածի կամ հիմքերի անբավարարության կամ իսպառ բացակայության պայմաններում:

Ազատությունից զրկելու հետ կապված խափանման միջոցների վերաբերյալ Պաշտպանին հասցեագրվող բողոքների մի մասն առնչվել է կալանքի շարունակականությանը: Այս տեսանկյունից բարձրացվել է այն հարցը, որ տևական ժամկետով կալանքի կրման ընթացքում մեղադրյալի մասնակցությամբ չեն կատարվում վարութային գործողություններ, իսկ իր կողմից ներկայացված միջնորդությունները մերժվում են: Նշվածի համատեքստում բողոքներ են ստացվել այն մասին, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից վարույթի քննության ողջամիտ ժամկետները չեն

[330] Տե՛ս, օրինակ, Պաշտպանի 2021 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդումը, էջ 513-521, հասանելի է https://ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 29.03.2024թ:

պահպանվում, ինչն առավել ցայտուն ընդգծվում է հատկապես դատական քննության փուլում՝ դատական նիստերի հետաձգմամբ պայմանավորված:

Հաշվի առնելով «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով ամրագրված՝ դատական վարույթին միջամտելու արգելքը, դատարանի կողմից կալանքը որպես խափանման միջոց մեղադրյալի նկատմամբ կիրառելու վերաբերյալ դատարանի որոշումների վերաբերյալ անհատական բողոքները Պաշտպանի կողմից քննարկման առարկա չեն դարձվել: Այնուամենայնիվ, նկատի ունենալով ամենախիստ խափանման միջոցի կիրառելիության դինամիկան, ինչպես նաև այն, որ կալանքը ամենալուրջ միջամտությունն է ենթադրում անձի անձնական ազատության իրավունքին՝ կալանքի կիրառման հետ կապված համակարգային հարցերը մշտապես գտնվել են Պաշտպանի ուշադրության ներքո, այդ թվում՝ օրենսդրությամբ վերապահված լիազորությունների շրջանակում պրակտիկայի ամփոփման համար պատասխանատու մարմիններից կալանքի կիրառելիության վերաբերյալ տեղեկություններ ստանալու համատեքստում:

Ինչպես նախորդ տարիներին, 2023 թվականի ընթացքում ևս կալանքի կիրառելիության վերաբերյալ վիճակագրական տվյալներ են ստացվել ՀՀ դատախազությունից և ՀՀ քննչական կոմիտեից:

Այսպես, Դատախազությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ քրեական վարույթի շրջանակներում 2018 թվականի ընթացքում ներկայացվել է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ 1866 միջնորդություն, որից 1799-ը բավարարվել է (այսինքն՝ ներկայացված միջնորդությունների 96.4%-ը), 2019 թվականի ընթացքում՝ ներկայացվել է 1984 միջնորդություն, որից 1802-ը բավարարվել է (90.8%-ը), 2020 թվականին՝ 1905 միջնորդություն, որից 1607-ը բավարարվել է, (84.3 %-ը), 2021 թվականի ընթացքում՝ 1283 միջնորդություն, որից բավարարվել է 1030-ը, (80,28%-ը), իսկ 2022 թվականին՝ 2032 միջնորդություն, որից բավարարվել է 1633-ը (80.36%):

Դատախազությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ 2023 թվականի ընթացքում կալանքը՝ որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ դատարան է ներկայացվել 2802 միջնորդություն, որից բավարարվել է 2301-ը (82,12%):

Վիճակագրության վերլուծությունը վկայում է այն մասին, որ թեև 2021 թվականի համեմատությամբ միջնորդությունների բավարարման առումով տոկոսային աճը կազմում է ընդամենը գրեթե երկու տոկոս, սակայն ներկայացված միջնորդությունների քանակը 2021 թվականից աճել է 118.39%-ով:



Այս համատեքստում ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ տնային կալանք կիրառելու վերաբերյալ 2023 թվականի ընթացքում դատարան է ներկայացվել 114 միջնորդություն, որից բավարարվել է 87-ը, վարչական հսկողություն կիրառելու վերաբերյալ ներկայացվել է 17 միջնորդություն, որից բավարարվել է 15-ը: Նույն ժամանակահատվածում 67 անձի նկատմամբ կիրառվել է պաշտոնավարման կասեցում խափանման միջոցը, իսկ 224 անձի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել գրավը: Հաշվի առնելով, որ 2023 թվականի ընթացքում նախաձեռնվել է թվով 51 760 քրեական վարույթ, ստացվում է, որ վարույթների 4,44%-ում է կիրառվել կալանք խափանման միջոցը:



Կրկին անդրադառնալով նախորդ տարիների համեմատ արձանագրված դինամիկային՝ պետք է նշել, որ ըստ Դատախազությունից ստացված տեղեկատվության՝ Հայաստանի Հանրապետությունում 2018 թվականին նախաձեռնվել է 18 522, 2019 թվականին նախաձեռնվել է 20 927, 2020 թվականին՝ 22 747, 2021 թվականին՝ 26 935, 2022 թվականին՝ 43 643, իսկ 2023 թվականին՝ 51 760 քրեական վարույթ: Այսինքն, 2018 թվականին վարույթների 9,7%-ի դեպքում է կիրառվել կալանք խափանման միջոցը, 2019 թվականին՝ 8,6%-ի, 2020 թվականին՝ 7,6%-ի, 2021 թվականին՝ 3,8%-ի, իսկ 2022 թվականին՝ 4,6%-ի: Ստացվում է, որ 2018-ից 2021 թվականների ընթացքում քրեական վարույթների թվի նկատմամբ կալանքի կիրառման տոկոսը նվազել է, այնինչ 2022 և 2023 թվականներին գրանցվել է աճ: Պաշտպանն ընդգծում է, որ 2021 թվականի համեմատությամբ գրանցված աճը մտահոգիչ է գործող օրենսդրությամբ նախատեսված այլընտրանքային միջոցների լայն շրջանակի նախատեսման հաշվառմամբ:

Տարեկան հաղորդման նախապատրաստման շրջանակում Արդարադատության նախարարությունից ստացված տվյալների համաձայն՝ 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվում է 2471 ազատազրկված անձ, որից 1317-ը կալանավորված անձինք են: Այսինքն՝ ընդհանուր ազատությունից զրկված անձանց 53.29%-ը:



Հարկ է նշել, որ Համաշխարհային բանտային ամփոփագրում առկա տվյալների համաձայն՝ օրինակ, Վրաստանի Հանրապետությունում, 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ քրեակատարողական հիմնարկներում ընդհանուր պահվել են 9 688 ազատությունից զրկված անձ, որից ընդամենը 18.4%-ն են եղել կալանավորված անձինք[331]: Եթե համեմատական անցկացնենք բնակչության թվով ՀՀ-ին մոտ եվրոպական երկրների հետ, ապա պետք է փաստել, որ 2023 թվականի հունվար ամսվա դրությամբ Լիտվայում ազատությունից զրկված անձանց թիվը կազմել է 4 955, որից ընդամենը 11%-ն են եղել կալանավորված անձինք[332]: Նույն ժամանակահատվածի դրությամբ ավելի քան 4 միլիոն բնակչություն ունեցող Խորվաթիայի Հանրապետությունում քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատությունից զրկված անձանց ընդհանուր թիվը կազմել է 4 073 անձ, որի 32,3%-ը եղել են կալանավորված անձինք[333]:

Ֆրանսիայում կալանավորված անձինք կազմում են ազատությունից զրկված անձանց 30.8%-ը, Գերմանիայում՝ 20,6%, Մեծ Բրիտանիայում՝ 18.3%, Ռուսաստանի Դաշնությունում՝ 25.5%, Իտալիայում՝ 26.0%[334]:

Խափանման միջոց կալանքի մասին խոսելիս հարկ ենք համարում անդրադառնալ ինչպես ներպետական իրավակարգավորումներին, այնպես էլ միջազգային չափանիշներին և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշումներին:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝*

(…)

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով. (…)»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.*

(…) գ. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,

(…)

3. Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև

[331] Հասանելի է https://www.prisonstudies.org/country/georgia հղումով, 29.03.2024թ:
[332] Հասանելի է https://www.prisonstudies.org/country/lithuania հղումով, 29.03.2024թ:
[333] Հասանելի է https://www.prisonstudies.org/country/croatia հղումով, 29.03.2024թ:
[334] Հասանելի է https://www.prisonstudies.org/country/france, https://www.prisonstudies.org/country/germany, https://www.prisonstudies.org/country/united-kingdom-england-wales, https://www.prisonstudies.org/country/russian-federation, https://www.prisonstudies.org/country/italy հղումներով, 29.03.2024թ:

դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով (...)»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի Rec(2006)2 բանտային եվրոպական կանոնների վերաբերյալ հանձնարարականին, համաձայն որի՝ անձին ազատությունից զրկելը պետք է հանդիսանա վերջին՝ բացառիկ միջոց[335]:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ մինչդատական կալանքի վերաբերյալ հանձնարարականի 9-րդ կետի համաձայն՝ մինչդատական կալանքի կիրառման դեպքում դատարանը պետք է քննարկի, թե արդյո՞ք այլընտրանքային միջոցներով կարելի է խուսափել կալանքի կիրառումից[336]:

Այն, որ մինչդատական կալանքը պետք է կիրառվի բացառիկ դեպքերում, որպես վերջին միջոց, սահմանվում է նաև Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի անդամ պետություններում մինչդատական կալանքի չարաշահման մասին» բանաձևի 1-ին կետով[337] և «Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ» ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնների (Տոկիոյի կանոններ) 6.1-րդ կետով[338]: Նույն կանոնների 6.2-րդ կետի համաձայն՝ մինչդատական կալանքի այլընտրանքային միջոցները պետք է կիրառվեն հնարավորինս վաղ փուլում:

Դրանից բացի, 2022 թվականի դեկտեմբերի 8-ին Եվրոպական հանձնաժողովի կողմից ընդունվել է նոր հանձնարարական[339], որով կրկին ընդգծվել է, որ նախնական կալանքը չպետք է օգտագործվի որպես կանխարգելիչ խափանման միջոց, այլ որպես վերջին՝ բացառիկ միջոց: Հանձնարարականում նշվում է, որ անհրաժեշտ է պարբերաբար վերանայել կիրառված խափանման միջոցը, որպիսի դրա օգտագործումը լինի հիմնավորված[340]:

Հանձնարարականի մեջ, ի թիվս այլնի, կարևորվում է, որ կալանքի ոչ պատշաճ կիրառումից խուսափելու համար պետությունները պետք է հասանելի դարձնեն այլընտրանքային միջոցների հնարավորինս լայն շրջանակ: **Պետությունները պետք է ապահովեն, որ նախնական կալանք կիրառելու, դրա ժամկետը երկարաձգելու կամ այլընտրանքային խափանման միջոցներ կիրառելու վերաբերյալ դատարանի յուրաքանչյուր որոշում լինի պատշաճ կերպով պատճառաբանված և պարունակի այնպիսի հիմնավորումներ, որոնք կարդարացնեն մեղադրյալի նկատմամբ տվյալ խափանման միջոցի կիրառումը, ինչպես նաև պատճառները, թե ինչու այլընտրանքային խափանման միջոցները կոնկրետ դեպքում նպատակահարմար չեն համարվել:**

---

[335] Տե՛ս օրինակ, Ռամիրես Սանչեսն ընդեն Ֆրանսիայի (Ramirez Sanchez v. France) Բորժոնովն ընդդեմ Ռուսաստանի 2006 թվականի հուլիսի 4-ի վճիռը, գանգատ թիվ 59450/00, 85 կետ, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2006 թվականի Rec(2006)2 բանտային եվրոպական կանոնների վերաբերյալ հանձնարարականը:

[336] Տե՛ս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ մինչդատական կալանքի վերաբերյալ 1980 թվականի հունիսի 27-ի թիվ R(80)11 հանձնարարականը հասանելի է https://rm.coe.int/090000168091d5b6 հղումով 29.03.2024թ:

[337] Տե՛ս Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի՝ «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի անդամ պետություններում մինչդատական կալանքի չարաշահման մասին» 2015 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 2077 (2015) բանաձևը, հասանելի է https://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=22206&lang=en հղումով 29.03.2024թ:

[338] Տե՛ս «Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ» 1990 թվականի դեկտեմբերի 14-ի ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները (Տոկիոյի կանոններ):

[339] Հասանելի է https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32023H0681#:~:text=COMMISSION%20RECOMMENDATION%20%28EU%29%202023%2F681%20of%208%20December%202022,ial%20detention%20and%20on%20mater%20ial%20detention%20conditions հղումով, 29.03.2024թ:

[340] Հասանելի է https://www.penalreform.org/global-prison-trends-2023/imprisonment-and-prison-overcrowding/, հղումով, 29.03.2024թ:

Բացի այդ, հանձնարարականով նշվում է, որ անհրաժեշտ է նախատեսել նախնական կալանքի վերաբերյալ որոշումների պարբերական վերանայման հնարավորություն՝ մեղադրյալի կամ իրավասու մարմնի պահանջով: Անդամ պետությունները պետք է սահմանափակեն վերանայումների միջև ընկած ժամանակահատվածը մինչև առավելագույնը 1 ամիս կամ անձին հնարավորություն ընձեռեն ցանկացած պահի դիմում ներկայացնել կալանքից ազատ արձակվելու վերաբերյալ: Ընդ որում, դիմումների վերաբերյալ որոշումները պետք է կայացվեն առանց անհարկի ձգձգումների:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումները

- կալանքը պետք է կիրառվի որպես անձի ազատության իրավունքի սահմանափակման վերջին կամ ծայրահեղ միջոց, երբ այլ միջոցներով հնարավոր չէ լիարժեք երաշխավորել վարույթի պատշաճ ընթացքը[341],
- ներպետական իշխանությունները, անձին ազատ արձակելու կամ կալանավորելու մասին որոշում կայացնելիս, պետք է փնտրեն նաև այլընտրանքային միջոցներ, որոնք թույլ կտան ապահովել տվյալ անձի ներկայությունը դատաքննությանը[342],
- կալանքը պետք է կիրառվի որպես անձի ազատության իրավունքի սահմանափակման վերջին կամ ծայրահեղ միջոց, երբ այլ միջոցներով հնարավոր չէ լիարժեք երաշխավորել վարույթի պատշաճ ընթացքը[343],
- կալանքի՝ որպես խիստ միջոցի կիրառումը կարող է արդարացվել, երբ այլ՝ ներգործության ուժով նվազ միջոցների կիրառելիությունը քննարկվել է և որոշվել, որ դրանք բավարար չեն մասնավոր կամ հանրային շահերի պաշտպանությունն ապահովելու համար, ինչը կարող է պահանջել, որ անձը կալանավորվի[344],
- «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետն ամրագրում է ոչ միայն «ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքը կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունքը», այլ նաև նախատեսում է, որ «ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով»[345],
- գրավը կարող է պահանջվել այնքան ժամանակ, որքան առկա կլինեն կալանքը հիմնավորող պատճառները[346]:

Միևնույն ժամանակ, հարկ է նկատել, որ անգամ վերը թվարկված երկրների պարագայում, որտեղ կալանք խափանման միջոցի կիրառման պրակտիկան շատ ավելի փոքր է Հայաստանի համեմատությամբ, նշված խափանման միջոցի կիրառելիության վերջին տարիների դինամիկան դիտարկվում է որպես բացասական: Օրինակ, 2023 թվականի մարտ ամսին Ֆրանսիայի իրավասու մարմինների կողմից հրապարակված հաղորդագրության համաձայն՝ ընդհանուր քրեակատարողական հիմնարկների

[341] Տե՛ս Şahin Alpay v. Turkey գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2018 թվականի հունիսի 20-ի վճիռը, գանգատ թիվ 16538/17, 181-րդ կետ:
[342] Տե՛ս Idalov v. Russia գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատի՝ 2012 թվականի մայիսի 22-ի վճիռը, գանգատ թիվ 5826/03, 140-րդ կետ:
[343] Տե՛ս, mutatis mutandis, Sahin Alpay v. Turkey գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2018 թվականի մարտի 20-ի վճիռը, գանգատ թիվ 16538/17, 181-րդ կետ:
[344] Տե՛ս, mutatis mutandis, Djundiks v. Latvia գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2014 թվականի ապրիլի 15-ի վճիռը, գանգատ թիվ 14920/05, 89-րդ կետ:
[345] Տե՛ս Խուդոյորովն ընդդեմ Ռուսաստանի (Khudoyorov v. Russia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2005 թվականի նոյեմբերի 8-ի վճիռը, գանգատ թիվ 6847/02, 183-րդ կետ:
[346] Տե՛ս Մուսուկն ընդդեմ Մոլդովայի (Musuc v. Moldova) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2007 թվականի նոյեմբերի 6-ի վճիռը, գանհատ թիվ 42440/06, կետ 42, Ալեքսանդր Մակարովն ընդդեմ Ռուսաստանի (Aleksandr Makarov v. Russia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2009 թվականի մարտի 14-ի վճիռը, գանգատ թիվ 15217/07, 139-րդ կետ:

ծանրաբեռնվածությունը կազմել է 119%, սակայն նախնական կալանքի կրման վեց հիմնարկներում խտությունը եղել է ավելի քան 200%[347]: Նշված խնդիրը նկատվում է շատ երկրներում և ունի մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ:

Տարածաշրջանային և ազգային մակարդակներում ջանքեր են գործադրվում նախնական կալանքի, որպես ինքնաշխատ կիրառվող միջոցի կիրառման դեմ պայքարի նպատակով: Այսպես, 2023 թվականի ապրիլ ամսին Մարդու իրավունքների միջամերիկյան դատարանն իր վճիռներից մեկով արձանագրել է, որ պարտադիր կիրառվող նախնական կալանքը խախտում և հակասում է մարդու իրավունքների գաղափարին: Խախտումն արձանագրվել է այն կապակցությամբ, որ Մեքսիկայում երկու տղամարդ գրեթե 20 տարի անցկացրել են բանտում՝ առանց դատավճռով նշանակված պատժի[348]:

ՀՀ Սահմանադրական դատարանը 2019 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ ՍԴՈ-1480 որոշմամբ, ի թիվս այլնի, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. *«(...) Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրի կողմից հետապնդվող իրավաչափ նպատակին այլ, ավելի մեղմ միջոցներով հասնելու հնարավորությունը պետք է օրենսդրորեն երաշխավորված լինի: Մինչդեռ, վիճարկվող օրենսդրական կարգավորման պայմաններում կալանավորված անձը զրկվում է որոշակի երաշխիքի տրամադրման դիմաց ազատ արձակվելու հիմնական իրավունքի իրականացումից: Ավելին, անձին չի տրամադրվում նաև հնարավորություն՝ խափանման այլ, ավելի մեղմ միջոցի կիրառման շնորհիվ ի սկզբանե խուսափել ազատազրկումից, քանի որ կալանավորումը մեղադրյալի նկատմամբ կարող է ընտրվել միայն այն դեպքում, երբ խափանման մյուս միջոցները չեն կարող ապահովել կամ երաշխավորել մեղադրյալի պատշաճ վարքագիծը և հանրային շահերի համարժեք պաշտպանությունը:*

(...)

Ուստի կալանավորումը՝ որպես քրեադատավարական հարկադրանքի վերջին՝ բացառիկ միջոց (ultima ratio), միշտ և պարտադիր կերպով պետք է այլընտրանք ունենա: Քրեադատավարական օրենքում ամրագրվելիք այդ այլընտրանքը պետք է քրեական վարույթն իրականացնող մարմնին փաստացի հնարավորություն ընձեռի և իրավաբանական պարտականություն դնի նրա վրա՝ ի սկզբանե ընտրություն կատարել տարբեր խափանման միջոցների միջև՝ իրավաչափ նպատակին հասնելու համար ընտրելով առավել պիտանի միջոցը: Միևնույն ժամանակ այն պետք է նաև պարտադիր կարգով լինի անձի հիմնական իրավունքները և ազատություններն առավել նվազ սահմանափակողը, այսինքն՝ անհրաժեշտ միջոցը: Ուստի, Սահմանադրության տեսանկյունից անթույլատրելի է խափանման միջոցներից մեկի կիրառման հարցը քննարկել արդեն իսկ դրանցից մյուսին, ընդսմին՝ ամենախիստ միջոցին նախապատվություն տալուց հետո:

Այսպիսով, հաշվի առնելով անձի անձնական ազատության իրավունքին կալանավորման առավել ինտենսիվ միջամտող բնույթը, վարույթն իրականացնող մարմինը յուրաքանչյուր դեպքում այն ընտրելուց առաջ պարտավոր է պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում հիմնավորված կերպով բացառել մնացած բոլոր, ավելի մեղմ խափանման միջոցների ընտրության հնարավորությունը: Մինչդեռ, Օրենսգրքով նախատեսված «այլընտրանքի» պայմաններում դատարանը որոշակի հիմքերով սկզբում

[347] Հասանելի է https://www.penalreform.org/global-prison-trends-2023/imprisonment-and-prison-overcrowding/, https://www.justice.gouv.fr/documentation/etudes-et-statistiques/statistiques-mensuelles-population-detenue-ecrouee, հղումով, 29.03.2024թ:
[348] Հասանելի է https://www.penalreform.org/global-prison-trends-2023/imprisonment-and-prison-overcrowding/ հղումով, 29.03.2024թ:

կիրառում է առավել խիստ խափանման միջոցը, իսկ կարճ ժամանակ անց իր կողմից հաստատված փաստերի և ընդունված հիմնավորումների առկայությամբ այն իրավասու է փոխարինել ավելի մեղմով:

(…)[349]*:*

Հայաստանի Հանրապետությունում կալանքի կիրառման թվի աճն էլ ավելի մտահոգիչ է այն տեսանկյունից, որ վարույթն իրականացնող մարմիններն ու դատարանները հնարավորություն ունեն կիրառել գործող օրենսդրությամբ նախատեսված այլընտրանքային խափանման միջոցների ողջ համակարգը: Մինչ Քրեական դատավարության նոր օրենսգրքի կիրառությունն ամենախիստ խափանման միջոցի ընտրությունը, ի թիվս այլնի, հաճախ պայմանավորվում էր այլընտրանքային արդյունավետ խափանման միջոցների բացակայությամբ, այնինչ գործող օրենսդրությամբ արմատապես փոփոխվել է խափանման միջոցների համակարգի ողջ տրամաբանությունը թե՛ դրանց դասակարգման և թե՛ կազմի, կիրառման մեխանիզմի ու պայմանների տեսանկյունից: Ամենաէական փոփոխություններից մեկն այն է, որ խափանման միջոցները դասակարգվել են երկու մասի՝ կալանք և այլընտրանքային խափանման միջոցներ: Այլընտրանքային խափանման միջոցներն են տնային կալանքը, վարչական հսկողությունը, գրավը, պաշտոնավարման կասեցումը, բացակայելու արգելքը, երաշխավորությունը, դաստիարակչական հսկողությունը և զինվորական հսկողությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով տեղի է ունեցել նաև մեկ այլ հայեցակարգային փոփոխություն: Նախկին քրեադատավարական օրենսդրության համաձայն՝ անձի նկատմամբ միաժամանակ կարող էր ընտրվել միայն մեկ խափանման միջոց, բացառությամբ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի, որը կարող էր կիրառվել գրավի, անձնական երաշխավորության և կազմակերպության երաշխավորության հետ կապակցված: Այս սահմանափակումը զրկում էր վարույթն իրականացնող մարմնին և դատարանին ճկունությունից՝ կալանքին այլընտրանք կիրառելու հնարավորությունը քննարկելիս: Ի տարբերություն նախորդի՝ գործող Քրեական դատավարության օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվել է, որ այլընտրանքային խափանման միջոցները կարող են կիրառվել ինչպես առանձին, այնպես էլ համակցված, եթե հնարավոր է ապահովել դրանց պայմանների միաժամանակյա պահպանումը:

Փոփոխություն է կատարվել նաև խափանման միջոցների կիրառման իրավաչափության ընդհանուր պայմաններում: Մասնավորապես՝ վերագրվող հանցանքը կատարելու մասին հիմնավոր կասկածի առկայության պարտադիր պայմանը տարածվել է բոլոր խափանման միջոցների կիրառման հնարավորության վրա: Բացի այդ, ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի ձևակերպումներին համահունչ՝ խափանման միջոցների հիմքերը ձևակերպվել են որպես նպատակներ, քանի որ դրանք, ըստ էության, կանխատեսողական բնույթ ունեն: Գործող օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ խափանման միջոցը կարող է կիրառվել, եթե դա անհրաժեշտ է մեղադրյալի փախուստը կանխելու, մեղադրյալի կողմից հանցանք կատարելը կանխելու կամ մեղադրյալի կողմից իր վրա օրենսգրքով կամ դատարանի որոշմամբ դրված պարտականությունների կատարումն ապահովելու համար:

[349] Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ ՍԴՈ-1480 որոշումը, 7.2-7.4-րդ կետեր:

Հաշվի առնելով, որ կալանքը հանդիսանում է օրենսդրությամբ սահմանված խափանման միջոցներից ամենախիստը՝ դրա կիրառման համար նախատեսված են իրավաչափության լրացուցիչ պայմաններ*: Այսպես, Քրեական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածով սահմանված է, որ կալանքը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ այլընտրանքային խափանման միջոցների կիրառումն անբավարար է նույն օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների կատարումն ապահովելու համար:* Այսինքն, խափանման միջոցի ընտրության ժամանակ վարույթն իրականացնող մարմինը պետք է առաջնորդվի նվազագույնի սկզբունքով: Ուստի, բոլոր այն դեպքերում, երբ առավել մեղմ խափանման միջոցի ընտրությամբ հնարավոր կլինի ապահովել մեղադրյալի օրինական վարքագիծը քրեական վարույթի ընթացքում, նրա նկատմամբ չպետք է կիրառվի առավել խիստ խափանման միջոց:

Բացի այդ, նույն հոդվածով սահմանվել է, որ եթե մեղադրյալին վերագրվող հանցանքի համար ազատությունից զրկելու հետ կապված պատիժ նախատեսված չէ, ապա կալանքը կարող է կիրառվել միայն մեղադրյալի կողմից իր նկատմամբ կիրառված այլընտրանքային խափանման միջոցի պայմանները խախտելու դեպքում:

Վերոգրյալից բացի, հատկանշական է, որ գործող Քրեական դատավարության օրենսգրքում իր ուղղակի ամրագրումն է ստացել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի մի շարք նախադեպային որոշումներով արձանագրված այն դիրքորոշումը, որ կալանքի ժամկետը երկարաձգելիս դատարանի առջև անհրաժեշտ է հիմնավորել նաև վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով վարույթն իրականացնող մարմնի կողմից գործադրված պատշաճ ջանասիրությունը (due diligence), ինչպես նաև տվյալ մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդումը շարունակելու անհրաժեշտությունը:

Պաշտպանը ողջունելի առաջընթաց է համարում նաև այն, որ Քրեական դատավարության օրենսգիրքը մանրամասն կարգավորել է անձին կալանքի տակ պահելու ընդհանուր ժամկետները: Մասնավորապես, Քրեական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանվել են մինչդատական վարույթում անձին կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետները:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծությունը վկայում է, որ գործող օրենսդրությունը մի կողմից առավել ամրապնդել է մեղադրյալի իրավունքների ապահովման երաշխիքները, մյուս կողմից վարույթն իրականացնող մարմնին և դատարանին ընձեռել է խափանման միջոց կիրառելու մասին որոշումներ կայացնելիս ճկունություն ցուցաբերելու հնարավորություն: Միևնույն ժամանակ, խափանման միջոցի այս կամ այն տեսակը կիրառելու անհրաժեշտության/հիմքերի առկայությունը գնահատելիս մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները պետք է պայմանավորված լինեն վարույթի նյութերից բխող փաստական տվյալներով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայուն նախադեպային պրակտիկան սահմանում է հինգ հստակ հիմք նախնական կալանքի համար

1. փախուստի վտանգ,
2. քննությանը խոչընդոտելու ռիսկ,
3. հետագա իրավախախտում կատարելու ռիսկ,
4. ազատ արձակվելու դեպքում հանրային անկարգություններ առաջացնելու վտանգ,

5. կալանավորին պաշտպանելու անհրաժեշտություն[350]:

Եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն՝ փախուստի վտանգը գնահատելիս չի կարելի հիմնվել բացառապես մեղադրանքի ծանրության և հնարավոր պատժի չափի վրա, իրավասու դատարանը պետք է համակողմանի քննարկման առարկա դարձնի անձի բնավորությունը, նրա բարոյականությունը, բնակության և աշխատանքի պայմանները, ունեցվածքը, ընտանեկան կապերը և հետապնդման երկրի հետ ունեցած բոլոր տեսակի այլ կապերը[351]: Ընդ որում, Եվրոպական դատարանը հստակ արձանագրել է, որ, օրինակ, մշտական բնակության վայր չունենալն ինքնին չի կարող բավարար համարվել փախուստի վտանգի մասին հետևություն կատարելու համար[352]: Եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ անձին սպառնացող պատժի խստությունը կարևոր է փախուստի վտանգը գնահատելիս, սակայն այս հանգամանքը ևս չի կարող արդարացնել անձի երկարատև նախնական կալանքը[353]: Ավելին, երբ անձին կալանքի տակ պահելու միակ պատճառը մնացել է այն մտավախությունը, որ նա կփախչի և այդպիսով չի ներկայանա դատարան, նա պետք է մինչև դատավարությունը ազատ արձակվի, եթե հնարավոր է նրա ներկայությունը ապահովող երաշխիքներ ստանալ[354]:

Անդրադառնալով վարույթի քննությանը խոչընդոտելու հավանականությանը՝ Դատարանը նշել է, որ այդ վտանգը չի կարող վերացական լինել: Այն պետք է հիմնված լինի հստակ փաստական տվյալների վրա[355]: Հետագա քննչական գործողությունների իրականացման անհրաժեշտությունը կամ այն փաստը, որ վարույթը դեռ չի ավարտվել, չեն համարվում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասով դատավարությանը սպասող անձին կալանավորելու պատճառներ[356]: Անձին մեղսագրվող հանցագործության բնույթով պայմանավորված՝ քննությանը խոչընդոտելու ընդհանրական հիմքով անձին անազատության մեջ պահելը գործի քննության սկզբնական փուլում կարող է ընդունելի համարվել: Այնուամենայնիվ, որևէ այլ գործոնի բացակայության դեպքում, որը կարող է ցույց տալ, որ ռիսկը փաստացի գոյություն է ունեցել, Դատարանը չի կարող ընդունել այդ հիմքը՝ որպես հիմնավորում դիմումատուին կալանքի տակ պահելու ողջ

[350]Տե՛ս Բուզաջին ընդդեմ Մոլդովայի (Buzadji v. Moldova) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2016 թվականի հուլիսի 5-ի վճիռը գանգատ թիվ 23755/07 կետ 88:

[351] Տե՛ս Բեկիևն ընդդեմ Մոլդովայի (Becciev v. Moldova) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2005 թվականի հոկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 9190/03, կետ 58, Յագսին և Սարգինն ընդդեմ Թուրքիայի (Yagci and Sargin v. Turkey) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1995 թվականի հունիսի 8-ի վճիռը, 52-րդ կետ, Իդալովն ընդդեմ Ռուսաստանի (Idalov v. Russia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2012 թվականի մայիսի 22-ի վճիռը, 145-կետ, Գարիցկին ընդդեմ Լեհաստանի (Garycki v. Poland) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2007 թվականի փետրվարի 6-ի վճիռը, 47-կետ, Չրահիդին ընդդեմ Գերմանիայի (Chraidi v. Germany) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2007 թվականի հունվարի 26-ի վճիռը, 40-րդ կետ, Նեումեյսթերն ընդդեմ Ավստրիայի (Neumeister v. Austria) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1968 թվականի հունիսի 27-ի վճիռը, § 10, շարք «Ա», կետ 8:

[352] Տե՛ս Սուլաոջան ընդդեմ Էստոնիայի (Sulaoja v. Estonia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2005 թվականի փետրվարի 15-ի վճիռը, գանգատ թիվ 55939/00, կետ 64, Պշեվեչերսկին ընդդեմ Ռուսաստանի (Pshevecherskiy v. Russia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2007 թվականի մայիսի 24-ի թիվ 28957/02 գանգատի վերաբերյալ վճիռը, կետ 68:

[353] Տե՛ս Իդալովն ընդդեմ Ռուսաստանի (Idalov v. Russia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2012 թվականի մայիսի 22-ի վճիռը, գանգատ թիվ 5826/03, կետ 145, տե՛ս նաև Իլիժկովն ընդդեմ Բուլղարիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1997 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 33977/96, կետ 80-81:

[354] տես՝ Եվրոպական դատարանի՝ Մերաբիշվիլին ընդդեմ Վրաստանի (Merabishvili v. Georgia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2017 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 72508/13 գանգատի վերաբերյալ վճիռը, կետ 223:

[355] Տե՛ս Բեկիևն ընդդեմ Մոլդովայի (Becciev v. Moldova) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2005 թվականի հոկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 9190/03, կետ 59:

[356] Տե՛ս Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի (Piruzyan v. Armenia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2012 թվականի հունիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 33376/07, 98 կետ:

ժամանակահատվածի համար[357]: Գործի քննությանը խոչընդոտելու ռիսկը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև անձի վարքագիծը ազատությունից զրկվելուց առաջ և հետո, ինչպես նաև այլ հատուկ հանգամանքներ, որոնք արդարացնում են մտավախությունը, որ նա կարող է չարաշահել իր ազատության մեջ հայտնվելը՝ կատարելով ապացույցների կեղծմանը, ոչնչացմանը կամ վկաներին մոլորեցնելուն ուղղված գործողություններ[358]:

Հետագա հանցավոր գործունեություն իրականացնելու վտանգը, ըստ Եվրոպական դատարանի, պետք է գնահատվի յուրաքանչյուր կոնկրետ գործով՝ հաշվի առնելով մեղադրյալի անցյալը և նրա անձը[359]: Միաժամանակ, ընտանիք և աշխատանք չունենալն ինքնին չի կարող վկայել այն մասին, որ մեղադրյալը հակված է նոր հանցանք կատարելուն[360]: Ընդ որում՝ նախկինում դատապարտված լինելը կարող է ողջամիտ հիմնավորում լինել նոր հանցանք կատարելու մտավախության համար[361]: Միևնույն ժամանակ, միայն նախկինում կատարված հանցագործության պաշտոնական բացահայտումը, այն է՝ վերջնական դատվածությունը, կարող է հիմք հանդիսանալ նախկինում դատապարտված լինելու հիմքով անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու համար: Միայն այն փաստը, որ առկա են առանձին և դեռևս ընթացքի մեջ գտնվող քրեական վարույթներ, որոնցով անձը մեղադրվում է հանցավոր արարքներ կատարելու մեջ, դեռևս չի նշանակում, որ այդ արարքների կատարման մեջ անձի մեղավորությունը վերջնականորեն հաստատված է: Նման դիտարկումները կհանգեցնեն միաժամանակ քննվող քրեական վարույթներով անձի անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտման[362]:

Հանրային անկարգություններ առաջացնելու վտանգը վերաբերում է այն դեպքերին, երբ հանցագործության առանձնակի ծանրությունը և դրա նկատմամբ հանրային արձագանքը կարող են հանգեցնել հասարակական հուզումների: Ընդ որում, անհրաժեշտ է, որ ներկայացվեն փաստեր առ այն, որ մեղադրյալի ազատ արձակումն իսկապես խաթարելու է հանրային կարգը[363]: Այս հիմքը կիրառելի է ազգային օրենսդրությամբ համապատասխան հիմքերի առկայության պարագայում[364]:

Վճռաբեկ դատարանը ևս իր նախադեպային որոշումներում անդրադառնալով խափանման միջոցի հիմքերի առկայության հարցին՝ փաստել է, որ խափանման միջոց կիրառելու հիմքերի առկայությունը գնահատելիս մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները բոլոր դեպքերում պետք է պայմանավորված լինեն գործի նյութերից բխող որոշ փաստական տվյալներով: Ընդ որում, Վճռաբեկ

---

[357] Տե՛ս Եվրոպական դատարանի՝ Ջարժինսկին ընդդեմ Լեհաստանի (Jarzyński v. Poland) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2005 թվականի հոկտեմբերի 4-ի վճիռը, կետ 43:

[358] Տե՛ս Եվրոպական դատարանի՝ Ալեքսանդր Մակարովն ընդդեմ Ռուսաստանի (Aleksandr Makarov v. Russia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2009 թվականի մարտի 12-ի վճիռը, կետ 130:

[359] Տե՛ս Քլութն ընդդեմ Բելգիայի (Clooth v. Belgium) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1991 թվականի դեկտեմբերի 12-ի վճիռը, գանգատ թիվ 12718/87, կետ 40:

[360] Տե՛ս Եվրոպական դատարանի՝ Սուլաոջան ընդդեմ Էստոնիայի (Sulaoja v. Estonia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2005 թվականի փետրվարի 15-ի վճիռը, գանգատ թիվ 55939/00, կետ 64:

[361] Տե՛ս Եվրոպական դատարանի՝ Սելչուկն ընդդեմ Թուրքիայի (Selçuk v. Turkey) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2006 թվականի հունվարի 10-ի վճիռը, գանգատ թիվ 21768/02, կետ 34, Մաթզնեթերն ընդդեմ Ավստրիայի (Matznetter v. Austria) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1969 թվականի նոյեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 2178/64 կետ 9:

[362] Տե՛ս Եվրոպական դատարանի՝ Պերիցա Օրեբն ընդդեմ Խորվաթիայի (Perica Oreb v. Croatia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2014 թվականի հունվարի 31-ի թիվ 20824/09 վճիռը, կետ 147:

[363] Տե՛ս Եվրոպական դատարանի՝ Պրենսիպն ընդդեմ Մոնակոյի (Prencipe v. Monaco) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2009 թվականի հուլիսի 16-ի վճիռը, գանգատ թիվ 43376/06, կետ 79:

[364] Տե՛ս Եվրոպական դատարանի՝ Լեթելլիերն ընդդեմ Ֆրանսիայի (Letellier v. France) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1991 թվականի հունիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 12369/86, կետ 51:

դատարանն արձանագրել է, որ կալանավորման հիմք(եր)ի առկայության կամ բացակայության մասին դատարանի հետևությունները պետք է հիմնված լինեն ոչ թե այդ փաստական տվյալները մեկը մյուսից անջատ, ինքնավար հետազոտման ենթարկելու, այլ դրանք իրենց համակցության մեջ գնահատման ենթարկելու արդյունքում ձևավորվող փաստարկված դատողությունների վրա: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ համապատասխան փաստական տվյալներն իրենց ամբողջության մեջ չվերլուծելը, դրանք իրարից անջատ գնահատելը կարող է հանգեցնել կալանավորման հիմքի առկայության կամ բացակայության մասին չհիմնավորված եզրահանգման գալուն[365]:

Եվրոպական դատարանի կայուն իրավաբանության համաձայն՝ հանցագործության համար մեղադրվողը մինչդատական վարույթի ընթացքում միշտ պետք է ազատ արձակվի, քանի դեռ պետությունը չի կարողացել ցույց տալ, որ շարունակական կալանավորման համար գոյություն ունեն «հիմնավոր և բավարար» պատճառներ[366]: Հատկանշական է, որ նշված դիրքորոշումը արձանագրվել է նաև *Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի* գործով, որի շրջանակում Եվրոպական դատարանն արձանագրել է, որ ներպետական դատարանները պետք է քննության առնեն բոլոր փաստերը, որոնք կողմ կամ դեմ են այնպիսի հանրային շահի իրական պահանջի առկայությանը, որն արդարացնում է անձի ազատությունը հարգելու կանոնից կատարվող շեղումը:

Ներպետական դատարանները պետք է երաշխավորեն, որ մեղադրյալի նախնական կալանքը չգերազանցի ողջամիտ ժամկետը: Այդ նպատակով նրանք պետք է ուսումնասիրեն բոլոր այն փաստերը, որոնք հաստատում կամ հերքում են հանրային շահի առկայությունը, հիմնավորում անհատական ազատության հարգման կանոնից շեղումը՝ պատշաճ կերպով հաշվի առնելով անմեղության կանխավարկածի սկզբունքը, և ամրագրեն դրանք համապատասխան որոշումներում[367]: Ընդ որում, Դատարանն ընդգծել է, որ ազատ արձակելուն կողմ կամ դեմ արված փաստարկները պետք է չունենան ընդհանուր և վերացական բնույթ[368]:

Այսպես՝ Եվրոպական դատարանի հաստատված նախադեպային պրակտիկան վկայում է այն մասին, որ անձի կողմից հանցագործություն կատարելու ողջամիտ կասկածի պահպանումը կալանքի շարունակականության օրինականության պարտադիր պայման է, սակայն որոշ ժամանակ անց դա այլևս բավարար չէ: Նման դեպքերում անհրաժեշտ է պարզել, թե արդյո՞ք դատական իշխանությունների կողմից բերված մյուս հիմքերը շարունակել են արդարացնել ազատությունից զրկելը: Եթե նման հիմքերը եղել են «համապատասխան» և «բավարար», անհրաժեշտ է պարզել նաև, թե արդյո՞ք իրավասու ազգային մարմինները «հատուկ ջանասիրություն» են դրսևորել վարույթն իրականացնելիս[369]:

---

[365] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2020 թվականի դեկտեմբերի 25-ի ԵԴ/0548/06/19 որոշումը, կետ 15.1:

366 Տե՛ս Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի (Piruzyan v. Armenia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2012 թվականի հունիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 33376/07, 91-92 կետեր, տե՛ս նաև Սմիրնովան ընդդեմ Ռուսաստանի (Smirnova v. Russia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2003 թվականի հոկտեմբերի 24-ի վճիռը, գանգատներ թիվ 46133/99 և 48183/99, կետ 58:

[367] Տե՛ս Լեթելլիերն ընդդեմ Ֆրանսիայի (Letellier v. France) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1991 թվականի հունիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 12369/86, կետ 35:

[368] Տե՛ս Քլութն ընդդեմ Բելգիայի (Clooth v. Belgium) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1991 թվականի դեկտեմբերի 12-ի վճիռը, գանգատ թիվ 12718/87, կետ 44:

[369]Տե՛ս օրինակ Մամեդովան ընդդեմ Ռուսաստանի (Mamedova v. Russia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2006 թվականի փետրվարի 23-ի վճիռը, գանգատ թիվ 7064/05, 73-րդ կետ, Լաբիտան ընդեմ Իտալիայի (Labita v. Italy) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2000 թվականի ապրիլի 6-ի վճիռը, գանգատ թիվ 26772/95, 152-153-րդ կետեր, Աբդոելլան ընդդեմ Նիդերլանդների (Abdoella v. the Netherlands) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1992 թվականի նոյեմբերի 25-ի վճիռը, գանգատ թիվ 12728/87, կետ 24, Կալաշնիկովն ընդդեմ Ռուսաստանի (Kalashnikov v. Russia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2002 թվականի հուլիսի 15-ի վճիռը, գանգատ թիվ 47095/99, կետ 132:

Նույն դիրքորոշումն արտահայտել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանը, նշելով, որ կալանքի ժամկետը երկարացնելիս դատարանները պարտավոր են հաշվի առնել այն հանգամանքը, թե արդյո՞ք բավարար չափով հիմնավորված է տվյալ գործով մինչդատական վարույթն իրականացնող մարմինների «պատշաճ ջանասիրությունը» և դրա հիման վրա բավարար փաստերի ներքո նոր քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը[370]:

Վճռաբեկ դատարանը 2019 թվականի սեպտեմբերի 18-ին Լ. Վարդանյանի և Զ. Այվազյանի վերաբերյալ կայացված որոշմամբ արձանագրել է, որ ողջամիտ ժամկետների պահպանման տեսանկյունից հատուկ ջանասիրության պետք է արժանան այն գործերը, որոնք հնարավորին սեղմ ժամկետում քննության չառնելն էապես կվնասի արդարադատության շահին, մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանությանը: Վճռաբեկ դատարանի դասակարգմամբ՝ առաջնային կարող են ուշադրության արժանանալ այն գործերը, որոնցով «անձինք գտնվում են կալանքի տակ (հատուկ ուշադրության են արժանի ավելի երկար ժամանակահատված կալանքի տակ գտնվող անձանց վերաբերյալ գործերը)»: Նշենք, որ Վճռաբեկ դատարանի դիրքորոշմամբ դրանից հետո կարող են ուշադրության արժանանալ դատական կազմի փոփոխության կամ այլ հիմքով վերսկսված դատական քննությամբ գործերը, դատական վերանայման արդյունքում բեկանված և նոր քննության ուղարկված գործերը, օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման արդյունքում վերսկսված գործերը, խոցելի խմբեր համարվող՝ անչափահասների, հոգեկան հիվանդությամբ տառապող անձանց վերաբերյալ գործերը, պետության պոզիտիվ պարտականության ներքո գտնվող՝ կյանքի իրավունքի պաշտպանության, խոշտանգումների բացարձակ արգելքի ենթադրյալ խախտումներին վերաբերող գործերը[371]:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանը ողջունելի է համարում այն, որ Եվրոպական դատարանի, Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների նախադեպային իրավունքում ամրագրված դիրքորոշումները իրացվել են ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքում: Միևնույն ժամանակ, Պաշտպանը մտահոգիչ է համարում այլընտրանքային խափանման միջոցների համեմատությամբ նշված խափանման միջոցի կիրառման լայն տարածում ունեցող պրակտիկան և ընդգծում, որ անհրաժեշտ է համակարգային քայլեր ձեռնարկել օրենսդրական կառուցակարգերի լիարժեք կենսագործման, նվազագույնի սկզբունքով առաջնորդվելու և կալանք խափանման միջոցի՝ որպես բացառիկ միջոց կիրառելու, կալանքի շարունակականության պրակտիկան միջազգային և ներպետական դատական ատյանների չափանիշներին համահունչ դարձնելու, հիմնավոր և բավարար հիմքերի բացակայության պայմաններում կալանքի կիրառման դեպքերը բացառելու և կալանքի տակ գտնվող անձանց մասնակցությամբ քրեական վարույթներն առաջնահերթ քննելու ուղղությամբ պատշաճ ջանասիրություն դրսևորելու նպատակով:

[370] Տե՛ս Վճռաբեկ դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԴ/0022/06/08 որոշումը:
[371] Տե՛ս Վճռաբեկ դատարանի 2019 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ ԵԱՔԴ/0016/01/14 որոշումը, կետ 20:

11. Քրեական վարույթի նյութերին ծանոթանալու ժամկետներին և կարգին առնչվող գործնական խնդիրներ

Պաշտպանի նախորդ տարիների, այդ թվում՝ 2021 թվականի տարեկան հաղորդմամբ մանրամասն անդրադարձ է կատարվել քրեական վարույթի նյութերին ծանոթանալու ժամկետներին և կարգին առնչվող գործնական խնդիրներին:

Նախորդ տարիների ընթացքում ստացված բողոքներով ներկայացված խնդիրների մեծամասնությունը վերաբերել են վարույթի նյութերին ծանոթանալու նպատակով տրամադրված ժամկետներին:

Չնայած այն հանգամանքին, որ 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 200-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանվել է, որ վարույթի նյութերին ծանոթանալու համար վարույթի մասնակիցներին տրամադրվում է ողջամիտ ժամկետ, այնուամենայնիվ, պրակտիկայում առաջանում են խնդիրներ, քանի որ վարույթն իրականացնող մարմնի կողմից սահմանված ժամկետը ոչ միշտ է ընդունելի լինում պաշտպանական կողմի համար: Պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հատկապես մեծածավալ վարույթների դեպքում վարույթի մասնակիցները բողոքում են, որ տրամադրված ժամանակը բավարար չէ գործին պատշաճ ու ողջ ծավալով ծանոթանալու համար:

ՀՀ գլխավոր դատախազությունից ստացված տվյալների համաձայն՝ 2023 թվականի ընթացքում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ դատախազական հսկողության շրջանակներում ստացվել է 13 բողոք քրեական վարույթի նյութերին ծանոթանալու համար բավարար ժամանակ չտրամադրելու վերաբերյալ, որոնցից 1-ը բավարարվել է, 9-ը՝ մերժվել, 3-ը՝ թողնվել առանց քննության:

Պաշտպանը կարևոր է համարում ընդգծել, որ մրցակցային դատավարությունում իր պաշտպանությունը նախապատրաստելու համար բավարար ժամանակ և հնարավորություններ ունենալու իրավունքը հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անձի պաշտպանության իրավունքի կարևորագույն բաղադրիչներից մեկն է: Ուստի քրեական հետապնդման մարմինները իրենց գործունեության ընթացքում պետք է բավարար զգուշավորություն ցուցաբերեն՝ հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անձի պաշտպանության իրավունքը պատշաճ ապահովելու համար: Այդ համատեքստում կարևոր է, որպեսզի քրեական վարույթն իրականացնող քննիչի կողմից վարույթին ներգրավված անձանց տրամադրվի ողջամիտ ժամկետ՝ վարույթի նյութերին ծանոթանալու և ուսումնասիրելու համար՝ հաշվի առնելով, այդ թվում՝ վարույթի բարդությունը, նյութերի ծավալը, ներգրավված անձանց քանակը և այլն:

Հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անձի պաշտպանությունը նախապատրաստելու համար բավարար ժամանակ և հնարավորություններ ունենալու իրավունքին անդրադարձ կատարվել է նաև Եվրոպական դատարանի մի շարք վճիռներով[372]: Մասնավորապես, Եվրոպական դատարանն ընդգծել է, որ ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 3-րդ մասի (բ) ենթակետը երաշխավորում է մեղադրյալին «բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար», այդ իսկ պատճառով ենթադրում է, որ ի շահ նրա ինքնուրույն իրականացվող պաշտպանական

372 Տե՛ս օրինակ՝ Քոննոլլին ընդդեմ Միացյալ Թագավորության (Connolly v. the United Kingdom) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1996 թվականի հունիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 27245/95, Մայզիտն ընդդեմ Ռուսաստանի (Mayzit v. Russia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2005 թվականի հուլիսի 6-ի վճիռը, գանգատ թիվ 63378/00, կետ 78:
Տե՛ս C.G.P.-ն ընդդեմ Նիդերլանդների (C.G.P. v. the Netherlands) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1997 թվականի հունվարի 15-ի վճիռը, գանգատ թիվ 29835/96:

գործունեությունը կարող է ներառել այն ամենը, ինչն «անհրաժեշտ է» հիմնական դատավարությունը կազմակերպելու համար: Ավելին, յուրաքանչյուր ոք, ում ներկայացված է քրեական մեղադրանք, պետք է ունենա իր պաշտպանությունը նախապատրաստելու նպատակով ամբողջ վարույթի ընթացքում իրականացված քննության արդյունքներին անձամբ ծանոթանալու հնարավորություն:

2023 թվականի ընթացքում Պաշտպանին շարունակվել են հասցեագրվել նաև քրեական վարույթի նյութերին ծանոթանալու կարգին վերաբերող բողոքներ: Այսպես՝ Պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ բազմիցս դիմել է վարույթն իրականացնող մարմնին՝ տրամադրելու քրեական վարույթի շրջանակում քննչական գործողությունների արձանագրությունները, քրեական վարույթը կարճելու մասին որոշման օրինակը և այլ վերաբերելի նյութեր, սակայն վարույթն իրականացնող մարմինը հրաժարվել է տրամադրել տվյալ քրեական վարույթի նյութերը՝ ծանոթանալու և իր բողոքարկման իրավունքն իրացնելու համար:

Մեկ այլ բողոքով փաստաբանը տեղեկացրել է, որ համապատասխան տեղեկատվության պահանջով դիմում է ներկայացրել ՀՀ քննչական կոմիտե, սակայն քննիչը չի տրամադրել հայցվող տեղեկատվությունը՝ մեղադրյալի գրավոր համաձայնության բացակայության պատճառաբանությամբ: Ավելի ուշ, փաստաբանը հայտնել է նաև, որ վարույթն իրականացնող մարմին ներկայացրել է վստահորդի դիմումի լուսապատճենը, իսկ հետագայում նաև բնօրինակը, սակայն կրկին քրեական վարույթի վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրվել:

Նշվածի համատեքստում հատկանշական են գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի գործող կարգավորումները, որոնք վարույթի մասնավոր մասնակիցների համար սահմանում են իրենց հասանելի փաստաթղթերի պատճենները ստանալու հնարավորությունը[373]:

Կարևոր ենք համարում ընդգծել, որ քրեական վարույթի նյութերին ծանոթանալու իրավունքին մանրամասն անդրադարձ է կատարվել նաև Պաշտպանի նախորդ տարիների տարեկան հաղորդումներով: Ըստ այդմ, ի թիվս այլնի, ուսումնասիրվել են Եվրոպական դատարանի նախադեպային որոշումները:

Բացի վերը նշված դիրքորոշումներից, Եվրոպական դատարանն ընդգծել է, որ գործի նյութերին առանց սահմանափակումների հասանելիությունը և ցանկացած նշումների անսահմանափակ օգտագործումը, անհրաժեշտության դեպքում համապատասխան փաստաթղթերի պատճենները ստանալու միջոցով, արդար դատաքննության կարևոր երաշխիքներ են[374]:

Գործի նյութերին ծանոթանալու իրավունքը կարևոր է նաև վարույթով տուժող կողմի համար: Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2006թ. հունիսի 14-ի՝ «Հանցագործության զոհերի աջակցության վերաբերյալ» R(2006)8 հանձնարարականի 6.1 կետի համաձայն՝ անդամ պետությունները պետք է հանցագործության զոհի համար երաշխավորեն իրենց գործին առնչվող և իրենց շահերի պաշտպանության ու իրավունքների իրացման համար անհրաժեշտ տեղեկատվություն: Նույն հանձնարարականի 6.5-րդ կետում, որը վերաբերում է հանցագործության զոհի համար երաշխավորվող՝ քրեական վարույթին առնչվող տեղեկատվության ծավալին, ամրագրված

[373] Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 19-22-րդ կետերը, 49-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ, 14-րդ կետերը, 50-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 11-13-րդ կետերը:

[374] Տե՛ս Բերարուն ընդդեմ Ռումինիայի (Beraru v. Romania) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2014 թվականի մարտի 18-ի վճիռը, գանգատ թիվ 40107/04, կետ 70:

է. «Պետությունը պետք է համապատասխան միջոցներով երաշխավորի, որ հանցագործության զոհերը տեղեկացվեն իրենց բողոքների արդյունքների, վարույթի ընթացքի համապատասխան փուլերի և իրավասու դատարանի դատավճռի վերաբերյալ»:

Սահմանադրական դատարանը 2012 թվականի հունվարի 24-ի ՍԴՈ-1008 որոշմամբ, անդրադառնալով քննարկվող իրավահարաբերությանը, արձանագրել է, որ վարույթն իրականացնող մարմնի՝ շահագրգիռ անձին քրեական գործի նյութերից այս կամ այն փաստաթղթի տրամադրումը մերժելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված: Սահմանադրական դատարանի դիրքորոշմամբ՝ սկզբունքային մոտեցումը պետք է լինի այն, որ նախնական քննության տվյալների հրապարակման թույլտվություն տալու՝ վարույթն իրականացնող իրավասու մարմնի հայեցողությունը չպետք է լինի բացարձակ, այդ կապակցությամբ կայացված որոշումը պետք է հետապնդի նախաքննության շահերի իրական պաշտպանության նպատակ:

Սահմանադրական դատարանը մատնանշել է նաև եվրոպական երկրների փորձը, ըստ որի՝ այդ երկրների օրենսդրությամբ սահմանվում են այն հիմքերը, որոնց առկայության դեպքում չի թույլատրվում քրեական գործի նյութի հրապարակումը: Մասնավորապես, դրանք առնչվում են հասարակական կարգի պաշտպանությանը, հանցագործության բացահայտմանը խոչընդոտելուն, քրեական դատավարությանը վնասելուն և հանցանքի կատարմանը նպաստելուն, առևտրային գաղտնիքին և իրավաբանական անձի գործունեությանը վնաս պատճառելուն, ընտանեկան կամ անձնական կյանքի անձեռնմխելիությունը խախտելուն կամ անձի պատիվը ոտնահարելուն, անչափահասի շահերին վնաս պատճառելուն և այլն: Ըստ այդմ, Սահմանադրական դատարանը եզրահանգել է, որ այս ուղղությամբ Քրեական դատավարության օրենսդրության զարգացումը լրացուցիչ երաշխիքներ կստեղծի տուժողի շահերի պաշտպանության և նախաքննության նկատմամբ վստահության ամրապնդման գործում[375]:

Նշվածի համատեքստում հարկ է ընդգծել, որ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում էր, որ նախնական քննության տվյալները ենթակա են հրապարակման միայն գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ: Մինչդեռ, 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 186-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարույթի մասնավոր մասնակիցները, վկան և նրա փաստաբանն իրավունք ունեն հրապարակելու պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում իրենց հայտնի դարձած նախաքննության տվյալները, եթե քննիչը նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկով գրավոր չի արգելել դրանց հրապարակումը: Հիշյալ հոդվածի 2-րդ մասն իր հերթին սահմանում է, որ նախաքննության տվյալների հրապարակումն արգելվում է, եթե դա կարող է՝

1) խոչընդոտել մինչդատական վարույթի բնականոն ընթացքին.

2) դառնալ հանցանքի կատարման պատճառ.

3) վտանգել վարույթի մասնակիցների կամ այլ անձանց իրավունքները կամ իրավաչափ շահերը.

4) հանգեցնել օրենքով պահպանվող գաղտնիքի հրապարակման:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքով ամրագրվել է ոչ միայն այն հանգամանքը, որ նախաքննության ժամանակ հայտնի դարձած տվյալները կարող են

[375] Տե՛ս Սահմանադրական դատարանի 2012 թվականի հունվարի 24-ի թիվ ՍԴՈ-1008 որոշումը:

հրապարակվել, եթե քննիչը գրավոր չի արգելել դրանց հրապարակումն, այլ նաև այն, որ քննիչը հիշյալ տվյալների հրապարակումն արգելելիս պետք է նշի դրա հիմքերը: Պաշտպանը ողջունելի է համարում հիշյալ տրամաբանությամբ օրենսդրության կատարելագործումը:

Պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքների վերլուծությամբ կարող ենք եզրակացնել, որ նշված ոլորտում հիմնական խնդիրը վերաբերում է պրակտիկայում վարույթի մասնավոր մասնակիցներին վերջիններիս մասնակցությամբ կատարված ապացուցողական և վարութային այլ գործողությունների արձանագրությունները կամ այլ փաստաթղթերը չտրամադրելուն: Արդյունքում խնդիր է առաջանում նաև վարույթին ներգրավված անձանց կողմից վարութային ակտերը բողոքարկելու իրավունքի իրացման տեսանկյունից:

Վերը նշվածից բացի, 2023 թվականի ընթացքում Պաշտպանին բողոքներ են հասցեագրվել օտարերկրյա քաղաքացիներից այն մասին, որ չեն տիրապետում հայերեն լեզվին, մինչդեռ իրենց կողմից ներկայացված հանցագործության մասին հաղորդման կապակցությամբ կազմված փաստաթղթերը տրամադրվում են հայերեն լեզվով: Բողոքներից մեկով իրականացված հարցմանն ի պատասխան՝ Գլխավոր դատախազությունը ևս հաստատել է, որ ՌԴ քաղաքացուն իրեն հասանելի փաստաթղթերը տրամադրվել են հայերեն լեզվով:

Մեկ այլ բողոքով փաստաբանը հայտնել է, որ ՀՀ գլխավոր դատախազի կողմից կայացվել է իր վստահորդին այլ պետությանը հանձնելու միջնորդությունը բավարարելու մասին որոշում, սակայն վերջինս ցանկացել է ստանալ որոշումն իրեն հասկանալի լեզվով, որից հետո քննարկել այն բողոքարկելու հարցը: Նշված բողոքում բարձրացված հարցի կապակցությամբ Գլխավոր դատախազությունից տեղեկություն է ներկայացվել այն մասին, որ պահանջվող փաստաթուղթը տրամադրվել է հանձնման ենթակա անձին նաև իրեն հասկանալի լեզվով՝ ռուսերեն թարգմանությամբ:

Այս կապակցությամբ Պաշտպանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարույթի լեզվին չտիրապետող համապատասխան անձին նույն օրենսգրքով նախատեսված՝ հանձնման ենթակա փաստաթղթերի պատճենները տրվում են նաև այն լեզվով, որին նա տիրապետում է: Նշված օրենսդրական պահանջն ինքնանպատակ չէ, այն հատկապես կարևոր է վարույթին ներգրավված անձանց կողմից իրենց վերաբերող վարութային ակտերն իրենց հասկանալի լեզվով ստանալուց հետո բողոքարկելու իրավունքի արդյունավետ իրացման տեսանկյունից:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անձին և շահագրգիռ մյուս սուբյեկտներին, այդ թվում՝ տուժողին պետք է բավարար ժամանակ տրամադրվի քրեական վարույթի նյութերին ծանոթանալու և միջնորդություններ ներկայացնելու համար՝ հաշվի առնելով գործի առանձնահատկությունները և ծավալը: Ավելին, անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել գործնականում Եվրոպական դատարանի չափանիշների և ներպետական օրենսդրության խստագույնս պահպանման ուղղությամբ՝ բացառելով վարույթին ներգրավված անձանց հասանելի փաստաթղթերն (այդ թվում՝ հասկանալի լեզվով, այն պարագայում, երբ վարույթին

ներգրավված անձը չի տիրապետում հայերենին) առանց բավարար և պատշաճ հիմնավորման չտրամադրելու դեպքերը:

12. Քրեական վարույթներով քննության ողջամիտ ժամկետների պահպանմանն առնչվող խնդիրներ

Գործերը ողջամիտ ժամկետում քննելու դրույթն ունի ինչպես սահմանադրական, այնպես էլ միջազգային իրավական հիմքեր: Այն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածում, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը ներառում է նաև գործերի քննության ողջամիտ ժամկետները և կարևորում դրանց պահպանումը:

Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքն ամրագրող ինչպես սահմանադրական, այնպես էլ կոնվենցիոն դրույթները նպատակ ունեն ապահովելու արդարադատության իրականացումն առանց ձգձգումների, արդյունքում՝ երաշխավորելու մարդու հիմնական իրավունքներն ու գործի քննության արդյունավետությունը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումները քրեական վարույթի քննության ողջամիտ ժամկետի վերաբերյալ

Քրեաիրավական հարցերում 6-րդ հոդվածի 1-ին կետը, որով յուրաքանչյուր անձի համար սահմանվում է ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք, նպատակ ունի ապահովելու, որ մեղադրվող անձինք ստիպված չլինեն չափազանց երկար մնալ մեղադրյալի կարգավիճակում, և որ որոշվի մեղադրանքի հիմնավորվածությունը[376]: Երբ որոշվում է, թե արդյոք քրեական վարույթի տևողությունը ողջամիտ է եղել, թե ոչ, Դատարանը պետք է հաշվի առնի այնպիսի գործոններ, ինչպիսիք են գործի բարդությունը, գանգատաբերի վարքագիծը և համապատասխան վարչական և դատական մարմինների վարքագիծը[377]:

Քրեական արդարադատության պարզեցմանն ուղղված թիվ R(87)18 հանձնարարականում Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեն նշել է, որ հանցագործությունների բացահայտման հապաղումը վարկաբեկում է քրեական դատավարությունը և ընդհանուր առմամբ բացասաբար է անդրադառնում արդարադատության պատշաճ իրականացման վրա[378]:

Այս առումով Պաշտպանը ողջունելի է համարում, որ 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով (այս ենթագլխում այսուհետ նաև՝ Օրենսգիրք) քրեական դատավարության սկզբունքների շարքում, որպես ինքնուրույն սկզբունք, նախատեսվել է նաև վարույթը ողջամիտ ժամկետում իրականացնելու սկզբունքը: Մասնավորապես, Օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝

[376] Տե՛ս Կարթն ընդդեմ Թուրքիայի (Kart v. Turkey) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 3-ի վճիռը, կետ 68,

[377] Տե՛ս Լիբլիքն և այլք ընդդեմ Էստոնիայի (Liblik and Others v. Estonia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2019 թվականի մայիսի 28-ի վճիռը, կետ 91, Չիառելոն ընդդեմ Գերմանիայի (Chiarello v. Germany) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2019 թվականի հունիսի 20-ի վճիռը, կետ 45:

[378] Տե՛ս Рекомендация № R (87) 18 Комитета министров государствам-членам относительно упрощения уголовного правосудия, Принята Комитетом министров 17 сентября 1987 года, հասանելի է http://hrlibrary.umn.edu/russian/euro/RRec(87)18.html հղումով, 29.03.2024թ:

«1. Նախաքննությունը և դատաքննությունը պետք է ավարտվեն ողջամիտ ժամկետում: Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է իր իրավասության սահմաններում դրսևորել պատշաճ ջանասիրություն վարույթը ողջամիտ ժամկետում ավարտելու համար:

2. Մեղադրյալն ունի ողջամիտ ժամկետում դատարանի առջև կանգնելու իրավունք:

3. Անձին անազատության մեջ պահելու ժամկետը պետք է սահմանափակվի ամենակարճ անհրաժեշտ ժամանակահատվածով:

4. Իր վարույթում գտնվող քրեական գործերի քննության հաջորդականությունը որոշելիս դատավորը նախապատվությունը պետք է տա այն վարույթին, որով՝

1) մեղադրյալը գտնվում է կալանքի տակ.

2) մեղադրյալն ավելի երկար է գտնվում անազատության մեջ՝ այլ վարույթով ներգրավված մեղադրյալների համեմատ:

5. Նույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված տարբերակիչ հատկանիշների բացակայության դեպքում տվյալ դատավորի կողմից քրեական գործերի քննության հաջորդականությունը որոշվում է՝ հաշվի առնելով քրեական գործերը դատարանում ստանալու ժամկետները»:»

Վերոգրյալից բացի, քննարկվող խնդրի տեսանկյունից առաջընթաց կարելի է համարել նաև Օրենսգրքով որդեգրված այն մոտեցումը, որով մինչդատական վարույթում հանրային քրեական հետապնդման ժամկետները սահմանափակվել են հստակ տևողությամբ՝ բացառիկ դեպքերում դրանք առավելագույնը երկու ամսով երկարաձգելու հնարավորությամբ:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 192-րդ հոդվածի համաձայն՝

«1. Մինչդատական վարույթում հանրային քրեական հետապնդումն այն հարուցելու պահից չի կարող տևել ավելի, քան՝

1) երեք ամիս՝ ոչ մեծ ծանրության հանցանքի վերաբերյալ մեղադրանքով.

2) հինգ ամիս՝ միջին ծանրության հանցանքի վերաբերյալ մեղադրանքով.

3) ութ ամիս՝ ծանր հանցանքի վերաբերյալ մեղադրանքով.

4) տասն ամիս՝ առանձնապես ծանր հանցանքի վերաբերյալ մեղադրանքով:

2. Բացառիկ դեպքերում, երբ դա է պահանջում արդարադատության շահը, վերադաս դատախազը հսկող դատախազի միջնորդությամբ իրավասու է երկարաձգելու ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքի վերաբերյալ մեղադրանքով հանրային քրեական հետապնդման ժամկետները՝ առավելագույնը մեկ ամսով, իսկ ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի վերաբերյալ մեղադրանքով քրեական հետապնդման ժամկետները՝ առավելագույնը երկու ամսով»:»

Օրենսդրական նման կարգավորում նախատեսելը ողջունելի է, քանի որ անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու դեպքում վարույթն իրականացնող մարմինը պարտավորվում է պատշաճ ջանասիրություն գործադրել օրենքով նախատեսված ժամկետներում քննություն իրականացնելու և արդյունքում վերջնական որոշում կայացնելու ուղղությամբ:

Չնայած վերոգրյալին, Պաշտպանի աշխատակազմում 2023 թվականի ընթացքում շարունակվել են ստացվել բողոքներ, որոնք վերաբերել են այն քրեական վարույթների անհիմն ձգձգումներին, որոնցով քրեական հետապնդում հարուցված չէ որևէ անձի նկատմամբ: Բողոքների մեծամասնությամբ ներկայացվել են տեղեկություններ առ այն, որ

վարույթն իրականացնող մարմինը բավարար ջանասիրություն չի գործադրում քննություն կատարելու և դեպքի հանգամանքները պարզելու ուղղությամբ:

Այս առումով հարկ ենք համարում նշել, որ 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախաքննության հստակ ժամկետ սահմանված չէ: Գործող օրենսդրությունը նախատեսում է, որ նախաքննությունը պետք է ավարտվի ողջամիտ ժամկետում՝ ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության նախկին օրենսգրքի, որտեղ նախաքննության կատարման համար սահմանված էր երկամսյա ժամկետ՝ պարբերաբար երկարաձգելու հնարավորությամբ:

Տարեկան հաղորդման նախապատրաստական աշխատանքների ընթացքում Դատախազությունից ստացվել են տեղեկություններ առ այն, որ 2023 թվականի ընթացքում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ դատախազական հսկողության շրջանակներում ստացվել է 71 բողոք (միջնորդություն) քրեական վարույթի ողջամիտ ժամկետը չպահպանելու և քննությունն անհիմն ձգձգելու վերաբերյալ, որից 23-ը ներկայացվել է 1 քրեական վարույթի շրջանակներում նույն անձի կողմից: Ստացված բողոքների քննարկման արդյունքներով ձեռնարկվել են համապատասխան միջոցներ քննության անհարկի ձգձգումները վերացնելու ուղղությամբ, այդ թվում՝ իրավասու մարմնին ներկայացվել է քննիչի նկատմամբ ծառայողական քննություն իրականացնելու միջնորդություն:

Կարևոր է արձանագրել, որ ողջամիտ ժամկետների վերաբերյալ դրույթը վերաբերում է ոչ միայն նախաքննությանը, այլ նաև դատական քննությանը: Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2023 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում ստացվել են բողոքներ դատական քննության փուլում գտնվող գործերի ձգձգումների, մասնավորապես՝ դատական նիստերի պարբերաբար հետաձգման և ուշ նշանակվելու վերաբերյալ: Կոնկրետ դատական վարույթին և դատավորի լիազորությունների իրականացմանը չմիջամտելու օրենսդրական պահանջից ելնելով՝ կոնկրետ գործերով ողջամիտ ժամկետում դատական քննության իրավունքի ենթադրյալ խախտման հարցերը Պաշտպանի կողմից քննության առարկա չեն դարձել: Այդուհանդերձ, երկրում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակը ներկայացնելու համատեքստում կարևոր է նաև քրեական վարույթի քննության ողջամիտ ժամկետների պահպանման խնդրի ուսումնասիրությունը՝ միջազգային իրավական չափանիշների և օրենսդրական կանոնակարգումների դիտանկյունից:

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի՝ «Ողջամիտ ժամկետում արդար դատաքննության և դատաքննության ժամանակ դատավորի դերի մասին» կարծիքի համաձայն՝ «ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով, մասնավորապես, ներմուծվել են դատավարական իրավունքի լայնածավալ կանոններ, որոնք ընդհանուր են տարբեր եվրոպական երկրների համար, և սահմանվել են ընդհանուր սկզբունքներ, որոնք, անկախ ազգային համակարգերի տարբեր տնտեսական կարողություններից և բազմազանությունից, նպատակաուղղված են ապահովելու դատարանների մատչելիության իրավունքը, արդար և անաչառ դատաքննության արդյունքում ողջամիտ ժամկետում որոշում ստանալու իրավունքը և ընդունված յուրաքանչյուր որոշման կատարումն ապահովելու իրավունքը»[379]:

[379] Տե՛ս Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի՝ «Ողջամիտ ժամկետում արդար դատաքննության և դատաքննության ժամանակ դատավորի դերի մասին» թիվ 6 (2004) կարծիքը, Ստրասբուրգ, 2004 թվականի նոյեմբերի 22-24, կետ 3:

Վենետիկի հանձնաժողովը, անդրադառնալով ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքին, նշել է, որ դատական վարույթի տևողությունը, անշուշտ, ազդում է այդ վարույթի կողմերից առնվազն մեկի շահերի վրա. իրավամբ, Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի՝ ողջամիտ ժամկետի պահանջի գերազանցումը կարող է հանգեցնել Եվրոպական կոնվենցիայի այլ կարևոր դրույթների (ընթացակարգային) խախտումների[380]:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն իր հերթին նշել է, որ արդարադատության իրականացման չափազանց երկար ձգձգումները ներկայացնում են լուրջ վտանգ, մասնավորապես՝ իրավունքի գերակայության ապահովման տեսանկյունից[381]:

Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների կոմիտեն ևս իր դիրքորոշումներում կարևորել է ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը և նշել, որ դատական վարույթի բոլոր փուլերը պետք է տեղի ունենան առանց անհարկի ձգձգումների[382]:

Նշվածի կապակցությամբ Սահմանադրական դատարանն իր 2013 թվականի փետրվարի 5-ի՝ թիվ ՍԴՈ-1074 որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «ողջամիտ ժամկետ» եզրույթը չի բացառում տարբեր գործոններով պայմանավորված՝ գործի դատական քննության ընթացքը դանդաղեցնող օբյեկտիվ հանգամանքների հնարավոր առկայությունը և դրանով պայմանավորված՝ նախնական դատական նիստերի, գործի քննությունը վերսկսելու, գործի քննությունը հետաձգելու, գործի վարույթը կասեցնելու ինստիտուտների անհրաժեշտությունը: Դա միաժամանակ ենթադրում է դատարանի կողմից քննությունն անհարկի, կամայականորեն ձգձգելը բացառելու պատվիրան:

Հարցի առնչությամբ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային որոշումներից մեկում[383] արձանագրել է, որ *«(…) Դատավարական ժամկետների պահպանումը կարևոր նշանակություն ունի նաև դատավարության տևողության ողջամտության ապահովման համար, իսկ ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքը Մարդու իրավունքների միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից է: Այն ամրագրված է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայում (6-րդ հոդված) և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում (9-րդ հոդված): Դատավարական ժամկետների պահպանումը կարևորվում է նաև իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից: Մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կայուն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ իրավական որոշակիությունը ենթադրում է նաև, որ երբ համապատասխան ժամկետն անցնելուց հետո դատարանի կողմից որևէ հարցի տրված լուծումը դարձել է վերջնական, ապա այն այլևս չի կարող կասկածի տակ դրվել (տե՛ս, օրինակ՝ Բրումարեսկուն ընդդեմ Ռումինիայի գործով (Brumărescu v. Romania) Մեծ պալատի 1999թ. հոկտեմբերի 28-ի վճռի 61-րդ կետը, Ռյաբիխն ընդդեմ Ռուսաստանի*

[380] Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի դատավարությունների չափազանց երկարատևության առնչությամբ ազգային պաշտպանության միջոցների արդյունավետության մասին 2007 թվականի ապրիլի 3-ի զեկույցը (European Commission For Democracy Through Law (Venice Commission), report on the effectiveness of national remedies in respect of excessive length of proceedings, Study no. 316/ 2004, 3 April 2007, CDL-AD (2006) 036rev), կետ 19, հասանելի է https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2006)036rev-e հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[381] 11 Տե՛ս Council of Europe, Committee of Ministers, Interim Resolution ResDH (97) 336, 11 July 1997:

[382] Տե՛ս European Commission For Democracy Through Law, Can excessive length of proceedings be remedied, CDL-STD (2007) 044, Science and technique of democracy, No. 44, կետ 140:

[383] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԳԴ1/0012/13/09 որոշումը:

գործով (Ryabykh v. Russia) Պալատի 2003թ. հուլիսի 24-ի վճռի 51-րդ կետը, Զեհենտներն ընդդեմ Ավստրիայի գործով (Zehentner v. Austria) Պալատի 2009թ. հուլիսի 16-ի վճիռը):»:

Մեկ այլ գործով անդրադառնալով վարույթի քննության ողջամիտ ժամկետին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել հետևյալի մասին.

«(...) Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի քննության ողջամտությունը որոշելիս ենթակա են գնահատման.

- գործի բարդությունը,

- շահագրգիռ անձի վարքագիծը,

- գործի տևական քննության հետևանքները շահագրգիռ անձի համար,

- գործը հնարավորինս սեղմ ժամկետում քննության առնելու նպատակով իրավասու մարմինների կողմից ձեռնարկած միջոցառումները և դրանց արդյունավետությունը,

- գործի քննության ընդհանուր տևողությունը:

Ամփոփելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքն ամրագրող դրույթները և դրանց գնահատման վերաբերյալ մշակված չափանիշները նպատակ ունեն շահագրգիռ անձին պաշտպանելու երկարատև անորոշ իրավական վիճակից և ապահովելու արդարադատության իրականացումն առանց ձգձգումների՝ երաշխավորելով գործի քննության արդյունավետությունն ու վստահելիությունը՝ ինչպես դատավարության մասնակիցների, այնպես էլ հասարակության կողմից (...)[384]*:*

ԲԴԽ-ն ողջամիտ ժամկետի վերաբերյալ դիրքորոշում է արտահայտել առ այն, որ (...) գործի քննության ժամկետի ողջամտությունը պետք է գնահատվի յուրաքանչյուր գործի համար առանձին՝ հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 9-րդ հոդվածով նախանշված ուղենիշերը, մասնավորապես՝ գործի հանգամանքները, ներառյալ՝ իրավական և փաստական բարդությունը, վարույթի մասնակիցների վարքագիծը և վարույթի մասնակցի համար գործի տևական քննության հետևանքները, հնարավոր սեղմ ժամկետում գործի քննությունն ու լուծումն իրականացնելու նպատակով դատարանի կատարած գործողությունները և դրանց արդյունավետությունը և գործի քննության ընդհանուր տևողությունը:

ԲԴԽ-ն, նշելով, որ դատական պաշտպանության իրավունքը ներառում է նախևառաջ խախտված կամ վիճարկվող իրավունքների պաշտպանության և վերականգման պահանջով դատարան դիմելու անձի իրավունքը, իսկ մյուս կողմից ենթադրում է դատարանի պարտականությունը՝ ողջամիտ ժամկետում քննելու գործը և կայացնելու օրինական ու հիմնավորված որոշում, արձանագրել է, որ այս համատեքստում յուրաքանչյուր գործով դատարանները, ելնելով գործի հանգամանքներից, դրա իրավական և փաստական բարդությունից, գնահատելով վարույթի մասնակցի համար գործի տևական քննության հետևանքները, պետք է ձեռնարկեն արդյունավետ և օրինական բոլոր միջոցները՝ հնարավոր սեղմ ժամկետում գործի քննությունն ու լուծումն իրականացնելու համար (...)[385]:

[384] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2019 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ ԵԱՔԴ/0016/01/14 որոշումը:

[385] Տե՛ս ՀՀ բարձրագույն դատական խորհրդի 2021 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԲԴԽ-101-Ո-Կ-27 որոշումը:

Դրանից բացի, ըստ գործերի առանձին տեսակների և բարդության՝ գործերի քննության միջին տևողության ուղենիշային ժամկետներ են սահմանվել ԲԴԽ-ի թիվ 65-Ո-165 որոշմամբ[386]:

Պաշտպանի աշխատակազմում ազատությունից զրկված անձանցից, նրանց հարազատներից և փաստաբաններից ստացված բողոքների մի մասն էլ վերաբերել են նրան, որ դատական քննության ժամանակ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ուղեկցող ստորաբաժանումները կալանավորված անձանց չեն տեղափոխում դատարան: Նշվածի հետևանքով դատական նիստերը հետաձգվում են, ինչն էլ ուղղակիորեն փոխկապված է գործերի քննության ողջամիտ ժամկետի պահպանման հետ: Բողոքների քննարկման շրջանակում բանավոր և գրավոր ձևաչափով խնդիրը քննարկվել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության հետ: Մի շարք դեպքերում կոնկրետ գործի համատեքստում հարցը լուծում է ստացել Մարդու իրավունքների պաշտպանի միջամտության արդյունքում:

Նշվածի կապակցությամբ ՀՀ ներքին գործերի նախարարությունից ստացվել է պարզաբանում առ այն, որ ուղեկցումների մի մասը երբեմն հնարավոր չի լինում իրականացնել ուղեկցող ստորաբաժանումների ծանրաբեռնվածության, ինչպես նաև ուղեկցող ստորաբաժանումներին ամրակցված հատուկ տրանսպորտային միջոցների անսարքության պատճառով, ինչով պայմանավորված՝ նման դեպքերը բացառելու համար հանձնարարվել է ուղեկցման անհնարինության դեպքում այն կազմակերպել տարածքային ստորաբաժանումների միջոցով: Բացի այդ, Ներքին գործերի նախարարությունը տեղեկացրել է, որ ՀՀ ՆԳՆ-ի կողմից մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագրերի իրականացման ժամանակացույցի 2-րդ կետով նախատեսվում է 2024 թվականի 2-րդ կիսամյակում ձեռք բերել թվով 22 տրանսպորտային միջոց՝ նախատեսված ազատությունից զրկված անձանց (այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց) տեղափոխման համար:

Վերը նշվածի հաշվառմամբ՝ առանցքային է, որպեսզի վարույթն իրականացնող մարմինները ձեռնարկեն բոլոր հնարավոր միջոցները՝ ներկայացված միջազգային և ներպետական չափանիշների խստիվ պահպանմամբ վարույթի քննությունը ողջամիտ ժամկետում իրականացնելու ուղղությամբ: Ավելին, պետությունը պետք է երաշխավորի իրավական հետևանքների անխուսափելիությունը քննարկված չափանիշները չպահպանելու պարագայում:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է շարունակական աշխատանքներ իրականացնել ՀՀ ՆԳՆ ոստիկանության ուղեկցող ստորաբաժանումներում հաստիքների, տրանսպորտային միջոցների համալրման ուղղությամբ՝ բացառելով դատական նիստերի հետաձգումը ուղեկցող ստորաբաժանումների ծանրաբեռնվածության պատճառաբանությամբ:

13.Քրեական արդարադատության ոլորտում միջազգային համագործակցության շրջանակում իրականացվող գործընթացների հետ կապված խնդիրներ

Ինչպես նախորդ տարիներին, 2023 թվականին ևս քրեական արդարադատության ոլորտում միջազգային-իրավական համագործակցության շրջանակում իրականացվող

[386] Տե՛ս գործերի քննության միջին տևողության ուղենիշային ժամկետները՝ ըստ գործերի առանձին տեսակների և բարդության սահմանելու մասին ԲԴԽ-ի 2021 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԲԴԽ-65-Ո-165 որոշումը, հասանելի է հետևյալ հղումով https://www.irtek.am/views/act.aspx?aid=112378, 29.03.2024թ:

գործընթացները, դրանց իրականացման շրջանակում անձանց իրավունքների պաշտպանությունը գտնվել են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում:

Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների միջև իրականացվող կարևորագույն գործընթացներից մեկը դատապարտյալների փոխանցումն է, որն իրականացվում է «Դատապարտյալների փոխանցման մասին» 1983 թվականի եվրոպական կոնվենցիայի, «Պատժի հետագա կրման համար դատապարտյալների փոխանցման մասին» Մոսկվայի 1998 թվականի կոնվենցիայի, ինչպես նաև առանձին երկկողմ միջազգային պայմանագրերի դրույթներով:

Մարդու իրավունքների պաշտպանն իր՝ 2021թ. տարեկան հաղորդմամբ[387] մանրամասն անդրադարձ է կատարել «Դատապարտյալների փոխանցման մասին» 1983 թվականի մարտի 21-ի կոնվենցիայի նպատակներին, կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների իմպլեմենտացման գործնական խնդիրներին և Պաշտպանի աշխատակազմ ստացված՝ դատապարտյալների փոխանցմանն առնչվող այլ խնդիրներին:

2023 թվականին Պաշտպանի աշխատակազմում շարունակվել է հարցի վերաբերյալ ինչպես ավելի վաղ ներկայացված բողոքների քննությունը, այնպես էլ ստացվել են այլ պետություններում ազատազրկման դատապարտված ՀՀ քաղաքացիներին պատժի մնացած մասը Հայաստանում կրելու նպատակով փոխանցելու վերաբերյալ խնդիրներին առնչվող նոր բողոքներ: Հարկ է նկատել, որ նախորդ տարիների համեմատությամբ խնդրո առարկայի վերաբերյալ ստացվող բողոքների քանակն էականորեն նվազել է: Միևնույն ժամանակ, 2023 թվականին ևս խնդիրը չի կորցրել իր արդիականությունը:

Օրինակ՝ 2023 թվականին Պաշտպանի աշխատակազմում շարունակվել է դեռևս 2021 թվականին ներկայացված բողոքներից մեկի քննարկումը: Ըստ բողոքաբերի՝ իր միակ որդին դատապարտվել և ազատազրկման ձևով պատիժ է կրում Ռուսաստանի Դաշնությունում: Նրա պատժի մնացած մասը Հայաստանում կրելու նպատակով 2019 և 2020 թվականներին դիմել են ՀՀ արդարադատության նախարարություն, սակայն Ռուսաստանի Դաշնությունից Հայաստանի Հանրապետություն փոխանցման հարցին առնչվող անհրաժեշտ փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում իրենց խնդրանքը մերժվել է: 2021 թվականի ընթացքում բողոք ներկայացրած անձը կրկին դիմել է Արդարադատության նախարարություն՝ պատժի մնացած մասը կրելու նպատակով Ռուսաստանի Դաշնությունից իրենց որդուն Հայաստանի Հանրապետություն փոխանցման հարցը քննարկելու կապակցությամբ: Նախարարության պարզաբանման համաձայն՝ դատապարտյալի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու նպատակով անհրաժեշտություն է առաջացել կատարել լրացուցիչ հարցումներ: Հետագայում՝ 2023 թվականին քաղաքացիները Պաշտպանին հաստատագրել են լրացուցիչ բողոք այն մասին, որ վերոնշյալ հարցի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունից ըստ էության պատասխան չեն ստացել: Նշվածի կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարությունից, ի թիվս այլնի, ստացվել է տեղեկություն առ այն, որ ՀՀ արդարադատության նախարարի որոշմամբ դատապարտյալի փոխանցումը կրկին մերժվել է, ինչի մասին գրությամբ հայտնվել է դիմումատուներին:

[387] Տե՛ս 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 546-550 https://ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf 29.03.2024թ:

Պրակտիկայի ամփոփման նպատակով Արդարադատության նախարարությունից Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ տեղեկություններ են ներկայացվել այն մասին, որ 2023 թվականի ընթացքում պատժի մնացած մասը կրելու նպատակով օտարերկրյա պետությունից Հայաստանի Հանրապետություն, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունից օտարերկրյա պետություն փոխանցման խնդրանքով դիմել է 31 դատապարտյալ, որոնցից 18-ի փոխանցման վերաբերյալ դեռևս կայացված չէ վերջնական որոշում, իսկ Հայաստանի Հանրապետությունում պատժի մնացած մասը կրելու նպատակով հանձնվել է թվով 7 դատապարտյալ: Հարկ է ընդգծել, որ Արդարադատության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում պատժի մնացած մասը Հայաստանի Հանրապետությունում կրելու նպատակով օտարերկրյա պետություններից դիմել են թվով 68 դատապարտյալներ, որոնցից փոխանցվել է 1-ը, իսկ 2022 թվականի ընթացքում դիմում ներկայացրած թվով 72 քաղաքացիներից փոխանցվել է 7 դատապարտյալ: Նշվածի համատեքստում կարող ենք արձանագրել, որ նախորդ տարիների համեմատությամբ 2023 թվականի ընթացքում ՀՀ քաղաքացի հանդիսացող և օտարերկրյա դատարանների կողմից ազատազրկման դատապարտված անձանց Հայաստանի Հանրապետություն փոխանցելու մասին դիմումների բավարարման դեպքերն էականորեն աճել են, ինչը, Պաշտպանի գնահատմամբ, ողջունելի է:

Պաշտպանը վերահաստատում է դիրքորոշումն առ այն, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքով դատապարտյալի փոխանցման հարցը քննարկելիս առաջնահերթ ուշադրության պետք է արժանանա դատապարտյալի ընտանիքի՝ Հայաստանում բնակվելու հանգամանքը, քանի որ այն արտաքին աշխարհի հետ կապն ապահովելու կարևոր միջոց է, և ընտանիքի հետ կապի պահպանումն ունի առանցքային նշանակություն անձի վերասոցիալականացման, կրկնահանցագործության ռիսկի նվազեցման հարցում:

Վերը նշվածի համատեքստում Պաշտպանն իր նախորդ տարիների տարեկան հաղորդումներում կարևորել է, որ յուրաքանչյուր դեպքում դատապարտյալի փոխանցումը մերժելիս Արդարադատության նախարարության կողմից պետք է ներկայացվեն որոշակի, թեկուզև նվազագույն հիմնավորումներ: Նշվածի կապակցությամբ հարկ է արձանագրել, որ դատապարտյալի փոխանցման նպատակահարմարության վերաբերյալ որոշում կայացնելիս հաշվի առնվող չափանիշները սահմանված են ՀՀ արդարադատության նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 21-ի«ՀՀ միջազգային պայմանագրերի համաձայն ազատազրկման դատապարտված դատապարտյալների փոխանցման կարգը հաստատելու մասին» թիվ 536-Ն հրամանով:

Հաշվի առնելով նախորդ տարիներին Պաշտպանի արտահայտած դիրքորոշումներն ու առաջարկները, 2023 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքների նվազ քանակը, ինչպես նաև Արդարադատության նախարարությունից ստացված՝ Հայաստանի Հանրապետություն փոխանցված դատապարտյալների քանակի վերաբերյալ տեղեկությունները՝ Պաշտպանը ողջունելի է համարում միջազգային համագործակցության շրջանակում իրականացվող դատավարական գործընթացների դրական դինամիկան:

Այդուհանդերձ, Պաշտպանը կարևորում է պատժի մնացած մասը Հայաստանում կրելու նպատակով փոխանցելու վերաբերյալ ՀՀ քաղաքացիների դիմումների քննարկման ընթացքում Արդարադատության նախարարի 2021 թվականի

հոկտեմբերի 21-ին ընդունված թիվ N 536-Ն հրամանով սահմանված չափանիշների կենսագործման պրակտիկայի կատարելագործումը՝ առաջին հերթին դատապարտյալի՝ վերասոցիալականացման համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու տեսանկյունից:

ԳԼՈՒԽ 2. ԱՆՁՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ

1. Ազատությունից զրկելիս անձի իրավունքների ապահովման երաշխիքները

Մարդու իրավունքների պաշտպանը նախորդ տարիների տարեկան հաղորդումներում մանրամասն անդրադարձ է կատարել անձի անձնական ազատության իրավունքին՝ կարևորելով ազատությունից զրկելիս անձի նվազագույն իրավունքների ապահովման խնդիրը:

Հարկ է ընդգծել, որ 2023 թվականին ազատությունից զրկելիս անձի նվազագույն իրավունքների ապահովման առնչությամբ Պաշտպանի աշխատակազմում շարունակել են արձանագրվել խնդիրներ ինչպես ստացված բողոքներով և ահազանգերով, այնպես էլ Ոստիկանության բաժիններ իրականացված այցերի ընթացքում:

Անձի անձնական ազատության իրավունքի պաշտպանության միջազգային իրավական մոտեցումների հաշվառմամբ՝ Պաշտպանը կարևոր է համարում մատնանշել հետևյալ չափանիշները.

- անձի անձնական ազատության իրավունքին միջամտության՝ «ազատությունից զրկման» փաստը որոշելիս որոշիչ գործոններ են ազատությունից զրկելու բնույթը, ազատությունից զրկելու օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերը: Օբյեկտիվ կողմը ներառում է ազատությունից զրկման վայրը և պահման ժամանակը, սուբյեկտիվ կողմը՝ անձի համաձայնությունը[388].
- ազատությունից զրկված լինելու փաստի գիտակցումն այս հարցում որոշիչ չէ: Որոշիչ է միայն այն հանգամանքը, որ անձն այլևս չի կարող լքել իր գտնվելու վայրը[389], որը կարող է լինել ոչ միայն իր նպատակային նշանակությամբ որպես այդպիսին օգտագործվող տարածքը (օրինակ՝ խուցը), այլև ցանկացած վայր, այդ թվում՝ տրանսպորտային միջոց[390].
- ազատությունից զրկել է համարվում, երբ իրավապահ մարմինը, ուժի գործադրմամբ կամ առանց դրա, անձին արգելում է լքել իր գտնվելու վայրը կամ պահանջում է իր հետ գնալ մեկ այլ վայր կամ անձը ստիպված է հետևել ոստիկանի կամքին: «Ազատությունից զրկել» է համարվում նաև անձին փողոցում մի քանի ժամով կանգնեցնելը և հեռանալն արգելելը[391] կամ օրինակ, ոստիկանության բաժնից դուրս գալն արգելելը, նույնիսկ, եթե անձն այնտեղ է գնացել իր կամքով՝ առանց իրավապահ մարմինների կողմից ուժի գործադրման[392].

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածում սահմանվել են ինչպես ձերբակալվածի հինգ նվազագույն իրավունքները, դրանց ծագման պահը, այնպես էլ

---

[388] Տե՛ս Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի վերաբերյալ ուղեցույցը, էջեր 5-7, հասանելի է http://www.echr.coe.int/Documents/Guide_Art_5_ENG.pdf հղումով 29.03.2024թ:

[389] Տե՛ս Դե Ուալդը, Ումսը և Վերսիպն ընդդեմ Բելգիայի (De Wilde, Ooms and Versyp v. Belgium) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1971 թվականի հունիսի 18-ի վճիռը, գանգատներ թիվ 2832/66, 2835/66, 2899/66, կետ 65:

[390] Տե՛ս Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ ուղեցույցը, էջ 18, հասանելի է http://www.echr.coe.int/LibraryDocs/DG2/HRHAND/DG2-EN-HRHAND-05(2004).pdf հղումով, 29.03.2024թ:

[391] Տե՛ս Գիլլանն ու Քուինթոնն ընդդեմ Միացյալ Թագավորության (Gillan & Quinton v. the United Kingdom) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2010 թվականի հունվարի 12-ի վճիռը, գանգատ թիվ 4158/05, կետ 57:

[392] Տե՛ս Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ ուղեցույցի 17-ից 18-րդ էջերը, հասանելի է http://www.echr.coe.int/LibraryDocs/DG2/HRHAND/DG2-EN-HRHAND-05(2004).pdf հղումով, 29.03.2024թ., Շիմովոլոսն ընդդեմ Ռուսաստանի (Shimovolos v. Russia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 30194/09, կետ 49:

համապատասխան պաշտոնատար անձի պարտականությունները: Այսպես, անձին ազատությունից փաստացի զրկելու պահից առաջ է գալիս նաև իրավասու մարմնի պարտականությունը պարզաբանելու ազատությունից զրկելու պատճառը, ինչպես նաև նրա իրավունքները և պարտականությունները, ընդ որում՝ պարզաբանման այդ պարտականությունը դրված է հենց ձերբակալումն իրականացնող անձի վրա:

2023 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում արձանագրված խնդիրների զգալի մասը վերաբերել են անձին ազատությունից զրկելու հիմքերը չներկայացնելուն, նվազագույն իրավունքները, այդ թվում՝ իր նախընտրած անձին զանգահարելու, փաստաբան հրավիրելու իրավունքը չպարզաբանելուն և չապահովելուն: Նշվածի արդյունքում ծագող խնդիրներից է այն, որ ազատությունից զրկված անձի մերձավոր ազգականները չեն տեղեկացվում նրա գտնվելու վայրի մասին: Արդյունքում Պաշտպանի աշխատակազմ ահազանգեր են ստացվում փաստաբաններից այն մասին, որ ձերբակալված անձի մերձավոր ազգականների խնդրանքով ցանկանում են ստանձնել վերջինի շահերի պաշտպանությունը, սակայն տեղեկություն չունեն նրա գտնվելու վայրի մասին: Վերը նշված ահազանգերով բոլոր դեպքերում Պաշտպանի ներկայացուցիչների կողմից ձեռնարկվել են հրատապ միջոցներ, որոնց արդյունքում պարզվել են ձերբակալված անձանց գտնվելու վայրը:

Ազատությունից զրկված անձի նվազագույն իրավունքները չապահովելու դեպքերն առավել համատարած են եղել հատկապես վարչական իրավախախտման վարույթների շրջանակում անձին ազատությունից զրկելիս՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 260-րդ հոդվածով սահմանված կարգով անձին վարչական ձերբակալման ենթարկելիս, որի ընթացքում անձանց նվազագույն իրավունքների ապահովման խնդիրը համակարգային առումով մնում է չլուծված:

Մասնավորապես՝ 2023 թվականի ընթացքում տեղի ունեցած հավաքների ընթացքում Ոստիկանության բաժիններ իրականացված այցերի և ազատությունից զրկված անձանց հետ տեղի ունեցած առանձնազրույցների ընթացքում որոշակի խումբ անձինք նշել են, որ ոստիկանության ծառայողների կողմից չի ներկայացվել որևէ պահանջ, մինչդեռ նրանք վարչական ձերբակալման են ենթարկվել ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու հիմքով: Առավել մտահոգիչ են այն դեպքերը, երբ անձանց ազատությունից զրկելու պահին չի հստակեցվում՝ արդյոք վերջիններս ձերբակալվել են ենթադրյալ հանցանք, թե վարչական իրավախախտում կատարելու հիմքով:

Հարկ է նաև նշել, որ անձն ազատությունից զրկվածի կարգավիճակ է ձեռք բերում անգամ այն դեպքում, երբ կամովին ներկայանալով իրավապահ մարմին՝ հնարավորություն չի ունենում լքել այն, իսկ անձի անձնական ազատության իրավունքին ցանկացած միջամտություն, անկախ դրա իրականացման՝ օրենքով նախատեսված հիմքերից և ընթացակարգերից, պետք է ենթադրի իրավունքի սահմանափակման բնույթին ու աստիճանին համարժեք իրավական երաշխիքների տրամադրում:

Բազմաթիվ են նաև ազատությունից զրկված անձի՝ իր նախընտրած անձին տեղեկացնելու իրավունքի (զանգի իրավունք) չապահովելու կամ այդ իրավունքը պարզաբանված չլինելու դեպքերը: Արդյունքում՝ ծանուցված չլինելով իրենց նվազագույն իրավունքների մասին, անձանց համար հստակ չի եղել իրենց նախընտրած անձին տեղեկացնելու իրավունքի իրացման հնարավորությունը:

Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացվել են նաև բողոքներ առ այն, որ Ոստիկանության ծառայողների կողմից անձանց արգելանքի վերցնելիս մի շարք

դեպքերում կիրառված ֆիզիկական ուժը եղել է առերևույթ անհամաչափ և անձին արգելանքի վերցնելու անհրաժեշտությամբ չպայմանավորված, ավելին՝ արձանագրվել են նաև դեպքեր, երբ անձանց նկատմամբ կիրառվել է ֆիզիկական ուժ այն դեպքում, երբ անձն արդեն փաստացի գտնվել է Ոստիկանության ծառայողի հսկողության ներքո: Ընդ որում՝ արձանագրվել են դեպքեր, երբ արգելանքի վերցնելու ընթացքում անձինք ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանը բազմիցս է ընդգծել (այդ թվում՝ հրապարակային հայտարարությունների միջոցով[393]), որ անթույլատրելի և անընդունելի է որևէ պարագայում Ոստիկանության ծառայողի կողմից անհամաչափ ուժի կիրառումը:

Մարդու իրավունքների պաշտպանն ընդգծում է, որ Ոստիկանության ծառայողները պետք է զերծ մնան ուժ կիրառելուց հատկապես այն դեպքերում, երբ անձն արդեն իսկ գտնվում է Ոստիկանության հսկողության ներքո, և առկա չեն ուժի կիրառման՝ օրենքով սահմանված այլ հիմքեր: Անհամաչափ ֆիզիկական ուժի կիրառման յուրաքանչյուր դեպք պետք է անհապաղ ստանա պատշաճ իրավական գնահատական՝ նման դեպքերի շարունակականությունը բացառելու նպատակով:

2023 թվականի ընթացքում արձանագրվել է նաև դեպք, երբ Ոստիկանության ծառայողներն արգելանքի են վերցրել ՀՀ ԱԺ պատգամավորի, նրան տեղափոխել Ոստիկանության բաժին, այնուհետև ազատ արձակել: Հարկ է նկատի ունենալ, որ պատգամավորը չի կարող ազատությունից զրկվել առանց Ազգային ժողովի համաձայնության, բացառությամբ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Նշվածի կապակցությամբ Պաշտպանն արձանագրում է նման պրակտիկայի բացառումը երաշխավորելու ուղղությամբ լուրջ գործիքակազմ ներդնելու անհրաժեշտությունը:

Հարկ է նշել նաև, որ տարեկան հաղորդման նախապատրաստական աշխատանքների շրջանակում Ներքին գործերի նախարարությունից տեղեկություն է ստացվել այն մասին, որ 2023 թվականի ընթացքում նախարարության ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչությունում իրականացվել են 1.099 ծառայողական քննություններ, Ոստիկանության ծառայողների նկատմամբ կիրառվել են 222 կարգապահական տույժեր, որից 2-ը՝ ծեծի համար: Բացի այդ, նախաքննական մարմիններ ուղարկված նյութերով նախաձեռնվել են 70 քրեական վարույթներ, որոնց շրջանակներում Ոստիկանության 11 ծառայողների նկատմամբ հարուցվել են հանրային քրեական հետապնդումներ:

Դրանից բացի, Գլխավոր դատախազությունից տեղեկություններ են ստացվել այն մասին, որ 2023 թվականի ընթացքում 165 քրեական վարույթ է նախաձեռնվել ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների նկատմամբ բռնություն գործադրելու դեպքերի առթիվ: 2 քրեական վարույթի շրջանակներում ոստիկանության 4 ծառայողի նկատմամբ է հարուցվել քրեական հետապնդում: Դրանցից 29-ի վարույթը կարճվել է, իսկ 1-ը՝ հաստատված մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Պաշտպանն անթույլատրելի է համարում ազատությունից զրկված անձին նվազագույն իրավունքները չպարզաբանելու և դրանք չապահովելու անթույլատրելի

[393] Տե՛ս օրինակ՝ https://ombuds.am/am/site/ViewNews/2711, 29.03.2024թ, https://ombuds.am/am/site/ViewNews/2720, 29.03.2024թ:

պրակտիկայի շարունակականությունը և կարևորում, որպեսզի ցանկացած դեպքում անձին ազատությունից զրկելիս իրավասու մարմինների կողմից ապահովվեն նրա նվազագույն իրավունքները՝ միջազգային և ներպետական չափանիշների պահպանմամբ:

Պաշտպանն ընդգծում է, որ անհրաժեշտ է բացառել անհամաչափ ուժի կիրառման և անձանց իրավունքները ոչ իրավաչափ սահմանափակելու դեպքերը՝ կարևորելով Ոստիկանության ծառայողների համար պարբերաբար վերապատրաստման դասընթացների իրականացումը՝ անձանց իրավունքների սահմանափակման իրավաչափության և ֆիզիկական ուժի գործադրման չափանիշների առնչությամբ:

2. Հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով անձին ձերբակալելու պրակտիկայում մարդու իրավունքների խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանն իր նախորդ տարիների տարեկան հաղորդումներում անդրադարձել է հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով անձին ձերբակալելիս պրակտիկայում առաջացող խնդիրներին:

Նշվածի վերաբերյալ նախորդ տարիներին Պաշտպանի աշխատակազմում ստացված բողոքները մեծամասամբ վերաբերել են սույն հիմքով անձին ձերբակալելու վերաբերյալ արձանագրության թերի կազմմանը, որի հետևանքով արձանագրության ուսումնասիրությամբ պարզ չէր դառնում, թե ինչ փաստական տվյալների առկայության վրա և ինչ հիմքով ու նպատակով է անձը ձերբակալվում:

Հարկ է նշել, որ 2023 թվականի ընթացքում սույն հիմքով անձի ձերբակալման վերաբերյալ բողոքներն անհամեմատ նվազել են՝ նկատի ունենալով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում էապես փոխվել են ձերբակալման հայեցակարգը և դրա իրավական կարգավորումները:

Մասնավորապես, Քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի համաձայն՝

«1. Ձերբակալումը կարող է կիրառվել՝

1) հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում.

2) ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու համար.

3) խափանման միջոցի պայմանները խախտած մեղադրյալի նկատմամբ:

(…):»:

Քննարկման առարկա հանդիսացող ձերբակալման առաջին տեսակի կապակցությամբ Պաշտպանը կարևոր է համարում ընդգծել, որ անմիջականորեն ծագած կասկածի հիմքով ձերբակալումը լրացվել է նոր հատկանիշով, այն է՝ կասկածը պետք է լինի «հիմնավոր»:

Հիմնավոր կասկածի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները
• անձի ազատության իրավունքի երաշխավորման նպատակ է համարվում ազատությունից կամայականորեն զրկելուց անձի իրավական պաշտպանությունը[394],

[394] Տե՛ս Կլիֆտն ընդդեմ Միացյալ Թագավորության (Clift v United Kingdom) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2010 թվականի հուլիսի 13-ի վճիռը, կետ 62:

• ինչպիսի կասկածը կարող է համարվել հիմնավոր, կախված է գործի բոլոր հանգամանքներից: Կասկածը չի կարող հիմնված լինել սոսկ այն հավաստիացման վրա, որ առկա է ստույգ, բայց և գաղտնի տեղեկություն[395],

• ողջամիտ կասկածի չափանիշը հիմնվում է փաստերի կամ տեղեկությունների առկայության վրա, որոնք հնարավորություն կտային անաչառ դիտորդին եզրակացնելու, որ տվյալ անձը հնարավոր է, որ կատարած լիներ հանցանքը: Սակայն պարտադիր չէ, որ կասկածը հիմնավորող փաստերը բավարարեն այն նույն չափանիշին, որն անհրաժեշտ է անձի դատապարտումը կամ նրա նկատմամբ մեղադրանք առաջադրելը հիմնավորելու համար, քանի որ այդ փաստերը կարող են հայտնաբերվել ավելի ուշ՝ քրեական վարույթի քննության փուլում[396],

• ողջամիտ կասկածը պետք է հիմնված լինի ողջամիտ հիմքերի վրա, ինչը կամայական ձերբակալությունից և կալանավորումից պաշտպանվելու էական բաղադրիչն է: Այն փաստը, որ կասկածը բարեխիղճ է, բավարար չէ: «Ողջամիտ կասկած» բառերը նշանակում են փաստերի կամ տեղեկատվության առկայություն, որոնք օբյեկտիվ դիտորդին կհամոզեն, որ տվյալ անձը կարող էր կատարել հանցագործությունը[397]:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում արմատապես փոխվել է անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալման փաստաթղթավորման տրամաբանությունը: Օրենսգրքի 109-րդ հոդվածի ուսումնասիրությամբ պարզ է դառնում, որ սույն հիմքով անձին ձերբակալելիս արդեն կազմվում է ոչ թե մեկ (արձանագրություն), այլ երկու փաստաթուղթ՝ ձերբակալման վերաբերյալ արձանագրություն, ապա՝ ձերբակալման մասին որոշում: Ձերբակալման արձանագրության մեջ ներառվում են նկարագրողական բնույթի տվյալներ՝ անձի տվյալները, նրան ազատությունից փաստացի զրկելու վայրը, պայմանները, պատճառները և հիմքերը, ձերբակալում իրականացրած պաշտոնատար անձի տվյալները, անձնական խուզարկությամբ հայտնաբերված առարկաները, ձերբակալվածի մարմնի կամ հագուստի վրա տեսանելի վնասվածքները, ինչպես նաև նրա առերևույթ ֆիզիկական և հոգեկան վիճակը, ձերբակալվածի հայտարարությունները, նրան իրավասու մարմին բերելու և արձանագրություն կազմելու տարին, ամիսը, օրը, ժամը և րոպեն: Իսկ արդեն ձերբակալման որոշման մեջ նշվում են այն կազմելու տարին, ամիսը, օրը, ժամը, րոպեն և վայրը, ձերբակալվածի տվյալները, ձերբակալման հիմքը, ինչպես նաև որոշմամբ պետք է ներկայացվի ձերբակալվածին վերագրվող արարքի փաստական նկարագրությունը:

Վերը նշված պահանջները բխում են նաև Եվրոպական դատարանի նախադեպային որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումներից: Մասնավորապես՝ Եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ ձերբակալման հանգամանքների վերաբերյալ տվյալների բացակայությունը, ինչպիսիք են ձերբակալման ամսաթիվը, ժամը և վայրը, ձերբակալվածի անունը, ձերբակալման պատճառները, ձերբակալումն իրականացրած անձի տվյալները, հանգեցնում են Կոնվենցիայի 5-րդ հոդվածի

[395] Տե՛ս Ֆոկսը, Քեմբելն ու Հարթլին ընդդեմ Միացյալ Թագավորության (Fox, Campbell and Hartley v. The United Kingdom) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1990 թվականի օգոստոսի 30-ի վճիռը, գանգատներ թիվ 12244/86, 12245/86, 12383/86, կետ 32:

[396] Տե՛ս Կ.Ֆ.-ն ընդդեմ Գերմանիայի (K.-F. v. Germany) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1997 թվականի նոյեմբերի 27-ի վճիռը, կետ 57:

[397] Տե՛ս Եվրոպական դատարանի՝ Գուսինսկին ընդդեմ Ռուսաստանի (Gusinskiy v. Russia) գործով 2004 թվականի նոյեմբերի 10-ի վճիռը, կետ 53:

խախտման[398]: Այնուամենայնիվ, ձերբակալման ընթացքում թույլ տրված որոշակի բացթողումներն, ինքնին, չեն կարող անվերապահորեն վկայել, որ ձերբակալումն իրավաչափ չի եղել[399]: Այդպիսի բացթողումներից է, օրինակ, մեղադրյալին ձերբակալման պատճառների մասին պատշաճ եղանակով չտեղեկացնելը[400]: Միևնույն ժամանակ, մեղադրյալին ձերբակալման պատճառների մասին չափազանց ուշ տեղեկացնելը (օրինակ՝ 24 ժամվա փոխարեն 3 օր հետո), Եվրոպական դատարանի գնահատմամբ, վկայում է, որ ձերբակալումն իրավաչափ չի եղել[401]: Մինչդեռ, մի քանի ժամ ուշ ձերբակալման պատճառների մասին անձին հայտնելը Եվրոպական դատարանը խախտում չի համարել[402]: Այդպիսի բացթողումներից է նաև ձերբակալման արձանագրության կամ որոշման մեջ տեխնիկական վրիպակի առկայությունը[403]:

2023 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում բողոքներ են ստացվել այն մասին, որ տևական ժամանակ քննվող քրեական վարույթով անձը ձերբակալվում է հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածով: Ստացված բողոքներով ներկայացված խնդիրները հանգել են հետևյալին. ձերբակալված անձն անցնում է տվյալ քրեական վարույթով, վարույթի շրջանակում նախկինում հարցաքննվել է որպես վկա, սակայն որոշ ժամանակ անց նրա նկատմամբ քննարկվող հիմքով կիրառվել է ձերբակալում:

Նշված պրակտիկան Պաշտպանը խնդրահարույց է համարում՝ նկատի ունենալով, որ հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով անձին ձերբակալելու դեպքում նրա կողմից հանցանք կատարած լինելու կասկածը պետք է ժամանակագրական առումով ծագած լինի անմիջականորեն:

Այս համատեքստում Պաշտպանը կարևորում է այն, որ գործող օրենսդրական կարգավորումների համաձայն՝ դատարանի կողմից անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը քննելիս պարտադիր ստուգման է ենթակա նաև ձերբակալման իրավաչափությունը: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ եթե ձերբակալվածի նկատմամբ ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի ընտրվում կալանք, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման: Կալանավորման հարցը քննարկելիս դատարանը պետք է ստուգի նաև ձերբակալման իրավաչափությունը:

Նույն օրենսգրքի 288-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ խափանման միջոց կիրառելու կամ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարաձգելու միջնորդության քննության արդյունքով դատարանը կայացնում է միջնորդությունը մերժելու մասին որոշում, եթե հանգում է հետևության, որ սույն օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դեպքում անձին ձերբակալելիս հիմնավոր կասկածը ակնհայտ չի եղել անմիջականորեն ծագած:

---

[398] Տե՛ս Քուրտն ընդդեմ Թուրքիայի (Kurt v. Turkey) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1998 թվականի մայիսի 25-ի վճիռը, կետ 125:

[399] Տե՛ս Ջեսիուսն ընդդեմ Լիտվայի (Jecius v. Lithuania) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2000 թվականի հուլիսի 31-ի վճիռը, կետ 68:

[400] Տե՛ս Մարտուրանան ընդդեմ Իտալիայի (Marturana v. Italy) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2008 թվականի մարտի 4-ի վճիռը, 79-80 կետեր:

[401] Տե՛ս Վոսկուիլն ընդդեմ Նիդերլանդների (Voskuil v. the Netherlands) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2007 թվականի նոյեմբերի 22-ի վճիռը, կետ 83

[402] Տե՛ս Ֆոքսը, Քեմբլը և Հարթլին ընդդեմ միացյալ Թագավորության (Fox, Campbell and Hartley v. The United Kingdom) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1990 թվականի օգոստոսի 30-ի վճիռը, կետ 42:

[403] Տե՛ս Նիկոլովն ընդդեմ Բուլղարիայի (Nikolov v. Bulgaria) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2003 թվականի հունվարի 30-ի վճիռը, կետ 63:

Վկայակոչված օրենսդրական նորմերի վերլուծությունը վկայում է, որ հիմնավոր կասկածի անմիջականորեն ծագած լինելու հանգամանքը ենթակա է պարտադիր ստուգման դատարանի կողմից՝ խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը քննելիս: Ավելին, եթե դատարանը հանգում է հետևության, որ անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով անձին ձերբակալելիս հիմնավոր կասկածը չի եղել ակնհայտ անմիջականորեն ծագած, մերժում է խափանման միջոց կիրառելու մասին քննիչի միջնորդությունը:

Հարկ է ընդգծել, որ 2024 թվականի հունվարի 18-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում անձի ձերբակալման հիմքերի, առանձնահատկությունների, դատավարական կարգի, «հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի» ծագման անմիջականության ակնհայտությունը որոշելու չափանիշների, ինչպես նաև ապացուցողական գործողություն կատարելիս հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով ձերբակալման հնարավորության հարցերի վերաբերյալ[404]:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ **հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում ձերբակալումը կիրառվում է այն դեպքում, երբ ենթադրյալ հանցանքի փաստական հանգամանքները (օբյեկտիվ կողմի հատկանիշները) և այն կատարող անձն իրավասու մարմնին հայտնի են դառնում հենց այդ հոդվածում թվարկված իրավիճակներից որևէ մեկի ակնհայտ առկայության դեպքում, այսինքն՝ ակնհայտ անմիջականորեն:**

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը սահմանել է երկու փոխկապակցված գործոն ձերբակալման քննարկվող տեսակի հիմքում ընկած «հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի» ծագման անմիջականության ակնհայտությունը որոշելու համար:

Առաջինը ժամանակային գործոնն է, այսինքն՝ երբ հանցանքը կատարելու հիմնավոր կասկածը հաստատող փաստական իրավիճակի ի հայտ գալու և անձին ազատությունից զրկելու միջև ժամանակային խզում չկա (օրինակ, նա բռնվել է ենթադրյալ հանցանքը կատարելիս) կամ աննշան է (օրինակ, անձը բռնվել է ենթադրյալ հանցանքը կատարելուց անմիջապես հետո կամ ականատեսն ուղղակի մատնանշում է տվյալ անձին որպես քրեական օրենքով նախատեսված արարքը կատարողի կամ տվյալ անձի կամ նրա հագուստի կամ նրա կողմից օգտագործվող այլ իրերի վրա, նրա մոտ կամ նրա բնակարանում, ներառյալ տրանսպորտային միջոցում, հայտնաբերվել են քրեական օրենքով նախատեսված արարքի կատարմանը նրա առնչությունը վկայող բացահայտ հետքեր): Վերջին դեպքում, թեև ձերբակալում իրականացնող պաշտոնատար անձն անմիջականորեն չի հետևում ենթադրյալ հանցանքի կատարման փաստական հանգամանքներին, սակայն դրանից անմիջապես հետո («կարճ ժամանակի հայեցակարգ») հայտնաբերում է ենթադրյալ հանցանքը կատարողին կամ ենթադրյալ հանցանքին նրան առնչության մասին վկայող բացահայտ հետքեր:

Երկրորդը՝ հանցանքի արտաքին դրսևորման գործոնն է, երբ ձերբակալումն իրականացվում է ենթադրյալ հանցանքի արտաքին հանցանշանների (բացահայտ

[404] Հասանելի է https://cassationcourt.am/news/single/vchrhabek-datarani-hakakorhowpts-ion-palate-nakhadepayin-dirk-oroshowmner-e-dzevavorel-hants-ank-katarats-linelow-anmijakanoren-tsagats-himnavor-kaskatsi-arhkayowt-yan-depk-owm-andzi-dzerbak հղումով, 29.03.2024թ:

հետքերի) հիման վրա (indices apparents): Այս գործոնը կապված է կոնկրետ հանցանքի բնույթի և կատարման փաստական հանգամանքների հետ (օբյեկտիվ կողմի հատկանիշների), քանի որ միայն ակնհայտության պայմաններում կատարված հանցագործությունների դեպքում է, որ ոստիկանության աշխատակիցները քրեական օրենքով նախատեսված արարքի կատարմանն արձագանքում են անմիջապես:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ քննարկվող երկու գործոնների միաժամանակյա առկայության դեպքում է, որ հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով իրականացված ձերբակալումը կարող է համարվել իրավաչափ: Դրանցից մեկի բացակայությունը ձերբակալումը դարձնում է ոչ իրավաչափ դրանից բխող հետևանքներով:

Վճռաբեկ դատարանն, անդրադառնալով հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում անձին ձերբակալելու ինստիտուտի կիրառման դատավարական կարգի առանձնահատկություններին, արձանագրել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համակարգային վերլուծությունից հետևում է, որ ձերբակալման քննարկվող տեսակը կիրառվում է հետաքննության մարմնի աշխատակցի կողմից առանց նախապես կայացված դատավարական որոշման, քանի որ այն հանդիսանում է օրենքով նախատեսված փաստական իրավիճակներից որևէ մեկին հակազդելու դատավարական հիմնական ձևը, որի դատավարական ամրագրումը (հետաքննության մարմնի աշխատակցի կողմից արձանագրություն կազմելը, այնուհետև՝ քննիչի կողմից որոշում կայացնելը) միշտ իրականացվում է հետո (post factum), երբ ձերբակալվածը բերվում է հետաքննության մարմին կամ վարույթ իրականացնելու իրավասություն ունեցող մարմին:

Ձերբակալման տվյալ տեսակի առանձնահատկությունը նաև նրանում է, որ այն, որպես կանոն, կիրառվում է մինչև քրեական վարույթ նախաձեռնելը և հենց ձերբակալման փաստն էլ դառնում է քրեական վարույթ նախաձեռնելու առիթը: Այսինքն՝ ձերբակալման քննարկվող տեսակը (դրան ուղեկցող անձնական խուզարկության հետ միասին) այն բացառիկ դատավարական միջոցն է, որը կիրառվում է մինչև քրեական վարույթ նախաձեռնելը և բացառապես ոստիկանության կամ այլ իրավասու մարմնի աշխատակցի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ (առանց քննիչի որոշման կամ հանձնարարության), և կարող է տևել առավելագույնը 6 ժամ՝ մինչև քննիչի կողմից ձերբակալելու կամ ազատ արձակելու մասին որոշում կայացնելը:

Ըստ Վճռաբեկ դատարանի՝ վերջին հետևությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ քրեական վարույթ նախաձեռնելուց հետո հետաքննության մարմինն իրականացնում է քննիչին օժանդակող գործառույթ և օպերատիվ-հետախուզական գործունեություն: Հետևաբար, նախաձեռնված քրեական վարույթի դեպքում, երբ իրականացվում է կոնկրետ դեպքի հանգամանքների վերաբերյալ նախաքննություն, հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած կասկածի առկայության հիմքով ձերբակալման կիրառում հնարավոր չէ, անկախ նրանից, թե քննության արդյունքում հայտնի է դառնում ենթադրյալ հանցանք կատարած անձը, որը մինչ այդ անհայտ էր կամ քննիչի կողմից ձեռք են բերվում քննության առարկա դեպքին կոնկրետ անձի առնչությունը հաստատող ապացույցներ: Այս կանոնից միակ բացառությունը վերաբերում է գաղտնի քննչական գործողություններ կատարելու ընթացքում ենթադրյալ հանցանքը կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալելու հնարավորությանը, քանի որ հետաքննության մարմնի աշխատակիցը տվյալ դեպքում գործում է սեփական

նախաձեռնությամբ և անմիջականորեն կարող է բախվել ենթադրյալ հանցանքի փաստին և այն կատարողին: Մասնավորապես՝ այն դեպքում, երբ վարույթն իրականացնող մարմինը հետաքննության մարմնի աշխատակիցների օժանդակությամբ իրականացնում է որևէ ապացուցողական գործողություն և հայտնաբերում է տվյալ վարույթի առարկան կազմող ենթադրյալ հանցանքին վերաբերող իրեղեն կամ այլ ապացույց, ապա հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած կասկածի հիմքով ձերբակալում չի կարող իրականացնել, քանի որ ինքնին ապացույց ձեռք բերելը չի համապատասխանում ձերբակալման՝ օրենքով նախատեսված հիմքերին՝ նկատի ունենալով, որ առերևույթ հանցանքի փաստն արդեն իսկ անցյալում է և հանդիսանում է քննության առարկան:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պաշտպանն արձանագրում է, որ հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով անձին ձերբակալելիս անհրաժեշտ է խստագույնս պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգավորումներն ու նշված ինստիտուտի հիմքում ընկած տրամաբանությունը՝ առաջնորդվել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ ներպետական դատական ատյանների համապատասխան իրավական դիրքորոշումներով՝ բացառելով հիմքերի բացակայության դեպքում անձի նկատմամբ ձերբակալման տվյալ տեսակը կիրառելու պրակտիկան:

3. Քրեական վարույթի շրջանակում անձի՝ ոչ պատշաճ ծանուցված լինելու և դրանով պայմանավորված՝ վարույթն իրականացնող մարմին հարկադրաբար ներկայացնելու ոչ իրավաչափ պրակտիկան

Ինչպես նախկին, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգիրքը սահմանում է վարույթի մասնավոր անձանց իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում՝ պատշաճ ծանուցման պայմաններում այդ անձանց՝ քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայանալու պարտականությունը:

2023 թվականի ընթացքում ևս Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ահազանգեր են ստացվել վարութային գործողությանը մասնակցելու նպատակով անձին պատշաճ չծանուցելու, ծանուցման ձևի և բովանդակության՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված պահանջները չպահպանելու վերաբերյալ: Պաշտպանի աշխատակազմ ներկայացված բողոքներով անձինք, մասնավորապես, նշել են, որ իրենք կանչվել են վարույթն իրականացնող մարմին բացառապես հեռախոսազանգի միջոցով: Ընդ որում՝ հեռախոսազանգը կատարող պաշտոնատար անձինք չեն տեղեկացրել, թե որ վարույթի շրջանակում, ինչ կարգավիճակով է հրավիրվում՝ չներկայացնելով դրանից բխող իրավունքներն ու պարտականությունները: Թեժ գծին ստացված բանավոր բողոքներով անձինք ցանկացել են տեղեկանալ, թե այդ եղանակով հարցաքննություն վարութային գործողության կանչելն արդյո՞ք իրավաչափ է, և նման կերպով ծանուցվելու պայմաններում չներկայանալն ի՞նչ իրավական հետևանքներ կարող է առաջացնել:

Պաշտպանն իր նախորդ տարիների տարեկան հաղորդումներում, այդ թվում՝ 2021 թվականի տարեկան հաղորդմամբ[405] մանրամասն անդրադարձ է կատարել քրեական վարույթի շրջանակում անձին պատշաճ չծանուցելու, այդ թվում՝ հեռախոսազանգի

[405] Տե՛ս 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 550-553 https://ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf, 29.03.2024թ:

միջոցով, և դրա արդյունքում անձին հարկադրաբար վարույթն իրականացնող մարմին ներկայացնելու գործնական խնդիրներին: Մասնավորապես, Պաշտպանը կարևորել է, որ անձի պատշաճ ծանուցման և վերջինիս բերման ենթարկելու որոշման իրավաչափության ապահովման նպատակով քրեական վարույթի շրջանակներում ծանուցման հետ կապված հարաբերությունները պետք է հստակ կանոնակարգման ենթարկվեն:

Նշվածի համատեքստում հարկ է ընդգծել, որ 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքում հստակ սահմանվել է քրեական վարույթն իրականացնող մարմնի՝ վարութային գործողության կամ դատական նիստի մասին պատշաճ ծանուցելու պարտականությունը, ծանուցման եղանակները և կարգը: Մասնավորապես՝ Օրենսդիրն արտահայտել է իր կամքը խնդրո առարկայի վերաբերյալ՝ սահմանելով, որ պատշաճ ծանուցմամբ հրավիրված անձը պարտավոր է վարութային գործողության կատարման վայր կամ դատական նիստի ներկայանալ նշանակված ժամին կամ վարույթն իրականացնող մարմնին նախապես իրազեկել չներկայանալու պատճառների մասին: Անհարգելի պատճառով չներկայացած անձի նկատմամբ կարող են կիրառվել նույն օրենսգրքով նախատեսված հարկադրանքի միջոցներ:

Անդրադառնալով անձի պատշաճ ծանուցված լինելու հանգամանքին՝ Օրենսդիրը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրել է այն սպառիչ եղանակները, որոնց դեպքում անձին ծանուցումը կհամարվի պատշաճ:

Պաշտոնատար անձանց կողմից քրեական վարույթի շրջանակում անձանց հեռախոսազանգի միջոցով վարութային գործողության մասնակցելու նպատակով վարույթն իրականացնող մարմին կանչելու ոչ իրավաչափ պրակտիկայի համատեքստում կարևոր է արձանագրել այն, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է, որ վարույթի ընթացքում անձի ծանուցումը կատարվում է՝

1) թղթային կամ էլեկտրոնային ծանուցագրով.

2) ծանուցվող անձի մասնակցությամբ կատարվող վարութային գործողության կամ ընթացող դատական նիստի ժամանակ ծանուցման մասին հայտարարելով և միաժամանակ համապատասխան արձանագրության մեջ այդ մասին նշում կատարելով.

3) **ծանուցվողի համաձայնությամբ՝ ցանկացած այլ եղանակով:**

Վերոգրյալ կարգավորումը իրավական առումով մեկնաբանման ենթարկելու արդյունքում պարզ է դառնում, որ հեռախոսազանգը ևս հնարավոր է դիտարկել որպես ծանուցման այլ եղանակ, ուստի, պաշտոնատար անձն իրավասու է հեռախոսազանգի միջոցով անձին հրավիրել քննչական գործողության միայն ծանուցվողի կողմից տվյալ կերպով ծանուցվելու վերաբերյալ համաձայնություն ստացված լինելու պարագայում:

Վերոգրյալի համատեքստում հարկ ենք համարում արձանագրել, որ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրքը սահմանում է, որ վարույթի մասնավոր մասնակցի (բացառությամբ փաստաբանի), ինչպես նաև վկայի, փորձագետի կամ թարգմանչի կողմից նույն օրենսգրքով նախատեսված պարտականությունների կատարումից **չարամտորեն խուսափելու դեպքում** վարույթն իրականացնող մարմինը դրանց կատարումն ապահովելու նպատակով իրավասու է որոշում կայացնելու անձին հարկադրաբար ներկայացնելու մասին:

Նշված կարգավորման պայմաններում հատկապես կարևոր է, որ վարույթն իրականացնող մարմինը յուրաքանչյուր դեպքում սպառի անձին պատշաճ ծանուցելու բոլոր հնարավորությունները, որից հետո միայն փաստի օրենքով նախատեսված

պարտականությունների կատարումից չարամտորեն խուսափելու մասին և անձի նկատմամբ հարկադրանքի միջոց կիրառելու վերաբերյալ որոշում կայացնի:

Պաշտպանը կարևորում է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքով ամրագրված փոփոխությունները՝ նկատի ունենալով այն, որ նախկինում Պաշտպանի հայտնած մտահոգություններն ու նկատառումներն այլևս ստացել են օրենսդրական ամրագրում:

Այնուամենայնիվ, Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքների ուսումնասիրության արդյունքում կարելի է փաստել, որ գործնականում խնդիրը դեռևս շարունակում է որոշ չափով արդիական մնալ, վարույթի մասնավոր մասնակիցներին հեռախոսազանգի միջոցով վարույթն իրականացնող մարմին կանչելիս գործնականում հաճախ չեն պահպանվում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված ընթացակարգերը, անձինք հեռախոսազանգի միջոցով կանչվում են վարութային գործողության մասնակցելու՝ ծանուցվողի համաձայնության բացակայության պայմաններում: Արդյունքում՝ անձը շատ դեպքերում հարկադրաբար ներկայացվում է վարույթն իրականացնող մարմին՝ առանց օրենքով սահմանված կարգով նախապես պատշաճ ծանուցված լինելու:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***շարունակել պրակտիկայի կատարելագործումը՝ հետևողականորեն ապահովելով անձանց պատշաճ ծանուցումը բացառապես Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով,***
- ✓ ***գործնականում բացառել դեպքերը, երբ անձը հարկադրաբար ներկայացվում է վարույթն իրականացնող մարմին առանց օրենքով սահմանված կարգով նախապես պատշաճ ծանուցված չլինելու:***

4. Վարչական իրավախախտման վարույթով ազատությունից զրկելու կարգավորումները և անձի համար ծագող գործնական խնդիրները

Ինչպես նախորդ տարիներին, 2023 թվականին ևս Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում շարունակվել են ստացվել բողոքներ՝ կապված վարչական իրավախախտման վարույթով անձին ազատությունից զրկելու ընթացքում մարդու իրավունքների ապահովման հարցերի հետ:

Նման խնդիրներ հիմնականում արձանագրվել են հավաքների ընթացքում, երբ անձինք, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածով նախատեսված՝ Ոստիկանության զորքերի զինծառայողի կամ ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու հիմքով, նույն օրենսգրքի 260-րդ հոդվածով սահմանված կարգով ենթարկվում են վարչական ձերբակալման:

Տարեկան հաղորդման նախապատրաստման շրջանակում Ոստիկանությունից տեղեկություն է ստացվել այն մասին, որ 2023 թվականին անցկացված հավաքների ընթացքում ոստիկանության բաժիններ են բերվել 790 անձինք, որից 24-ի նկատմամբ նախաձեռնվել է քրեական վարույթ, իսկ 766-ի նկատմամբ՝ վարչական վարույթ՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածով նախատեսված՝ Ոստիկանության զորքերի զինծառայողի կամ ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու հիմքով: Ըստ ստացված տեղեկության՝ նշված 766

վարույթներով դատարան է ներկայացվել 564 հայցադիմում, որոնք դատարանի կողմից ընդունվել են վարույթ և գտնվում են դատական քննության փուլում:

Վերոգրյալի հետ մեկտեղ, Պաշտպանը հարկ է համարում ընդգծել, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործով վարույթի շրջանակներում անձին ազատությունից զրկելու՝ օրենքով ամրագրված հստակ կառուցակարգեր և ընթացակարգեր առկա չեն, դրանք նախատեսված են դեռևս ՀԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից 1985 թվականի դեկտեմբերի 6-ին ընդունված և 1986 թվականի հունիսի 6-ին կիրառության մեջ դրված վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով: Միաժամանակ, տվյալ վարույթի շրջանակում Ոստիկանության կողմից անձի իրավունքների ցանկն ու դրանց ծանուցման կարգն իրենց ամրագրումն են ստացել ենթաօրենսդրական ակտով՝ ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 14-ի «Մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող՝ ծանուցման ենթակա իրավունքների ցանկը և ծանուցման կարգը հաստատելու մասին» թիվ 818-Ն որոշմամբ:

Մտահոգիչ է, որ գործնականում ոչ միշտ են ապահովվում Կառավարության վերը նշված որոշման պահանջները: Մասնավորապես, 2023 թվականին իրականացված հավաքների ընթացքում Ոստիկանական բաժիններ իրականացված այցերի և ազատությունից զրկված անձանց հետ առանձնազրույցների ընթացքում արձանագրված խնդիրների զգալի մասը վերաբերել են անձին ազատությունից զրկելու հիմքերը ու պատճառները չներկայացնելուն, նվազագույն իրավունքները, այդ թվում՝ իր նախընտրած անձին զանգահարելու, փաստաբան հրավիրելու իրավունքը չպարզաբանելուն և չապահովելուն: Միաժամանակ, ազատությունից զրկված անձանց պնդմամբ՝ նախքան վարչական ձերբակալման ենթարկվելը Ոստիկանության ծառայողների կողմից որևէ պահանջ չի հնչեցվում:

Ազատությունից զրկված անձինք Պաշտպանի ներկայացուցիչներին նաև բողոքներ են ներկայացրել այն մասին, որ Ոստիկանության ծառայողների կողմից հնչեցված օրինական պահանջն իրենց լսելի չի եղել, կամ բավարար ժամանակ չի տրամադրվել այն իրականացնելու համար, կամ չսպասելով տրված ժամանակի ավարտին, Ոստիկանության ծառայողներն իրենց արգելանքի են վերցրել:

Պաշտպանն ընդգծում է, որ Ոստիկանության ծառայողի հնչեցրած օրինական պահանջի և այն չկատարելու չափանիշների վերաբերյալ գլխավոր նախապայմանները հետևյալն են.

- Նախքան վարչական ձերբակալում իրականացնելը Ոստիկանության ծառայողների կողմից պետք է հնչեցվի օրինական պահանջ,
- Չի կարող ներկայացվել ցանկացած բնույթի պահանջ: Վերջինս պետք է բխի օրենքից (նորմատիվ իրավական ակտից)՝ հասարակական կարգի պահպանության, հասարակական անվտանգության ապահովման կամ օբյեկտների պահպանության պարտականությունները կատարելու ընթացքում,
- Օրինական պահանջը պետք է լսելի և ընկալելի լինի անձի համար,
- Օրինական պահանջը հնչեցնելուց հետո պետք է տրամադրվի ողջամիտ ժամանակ այն կատարելու համար, որից հետո միայն դրան չենթարկվելու հիմքով անձը կարող է զրկվել ազատությունից,

Միայն այս պահանջների պահպանման արդյունքում է, որ Ոստիկանության ծառայողների գործողությունները կարող են հիմնավորված լինել:

Վարչական իրավախախտման վարույթներով հաճախ արձանագրված խնդիրներից է նաև այն, որ վարչական ձերբակալման ենթարկված անձի մասնակցությամբ իրականացվում են վարչական իրավախախտման վարույթով համապատասխան գործողությունները, սակայն անձն ազատ չի արձակվում Ոստիկանության բաժնից՝ մինչև առավելագույն երեք ժամը լրանալը: Չնայած արձանագրված յուրաքանչյուր դեպքում նշված խնդիրները լուծվել են Պաշտպանի ներկայացուցիչների միջամտությամբ, սակայն Պաշտպանը մտահոգիչ է համարում նախորդ տարիներին արձանագրված նույն խնդրի շարունակական առկայությունը:

Մտահոգիչ է նաև վարչական ձերբակալման ենթարկելիս անձանց նկատմամբ ոչ համաչափ ֆիզիկական ուժ կիրառելու պրակտիկան: Նշվածի կապակցությամբ Ոստիկանությունից տեղեկություն է ստացվել այն մասին, որ 2023 թվականի ընթացքում վերոնշյալ հարցի առթիվ ՀՀ ՆԳՆ ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչությունում իրականացվել է 33 ծառայողական քննություն, որոնցից 24-ը կասեցվել է՝ նախաքննական մարմիններում նախաձեռնված քրեական վարույթների կապակցությամբ, իսկ 9-ը՝ թողնվել անհետևանք:

Ոստիկանությունից տեղեկություններ են ստացվել նաև այն մասին, որ 2023 թվականի ընթացքում խաղաղ, առանց զենքի հավաք անցկացնելու իրավունքի ապահովման, ինչպես նաև խոշտանգման և վատ վերաբերմունքի դեպքերի կանխարգելման նպատակով վերապատրաստումներ են անցել թվով 67 ծառայողներ: Միևնույն ժամանակ, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, 2023 թվականին ևս հավաքների ընթացքում Ոստիկանության ծառայողների գործողությունները հաճախ չեն համապատասխանել մարդու իրավունքների սահմանափակման իրավաչափության չափանիշներին: Հարկ է ընդգծել նաև, որ նշվածի կապակցությամբ 2023 թվականի նոյեմբերի 28-ին Պաշտպանի կողմից կայացվել է անձանց՝ հավաքի ազատության հիմնական իրավունքի խախտման առկայության մասին որոշում:

Կրկին անդրադառնալով վարչական իրավախախտման վարույթով անձին ազատությունից զրկելու կարգավորումներին, հարկ է նշել, որ չնայած Ոստիկանության կողմից ստացված պարզաբանմանն առ այն, որ առկա չեն վարչական ձերբակալման ընթացակարգին առնչվող այնպիսի օրենսդրական բացեր, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ նշված գործընթացի վրա, այնուամենայնիվ, գտնում ենք, որ գործող իրավակարգավորումները լիարժեք և այլևս արդիական չեն:

Այս առումով Պաշտպանը ողջունելի է համարում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծով (այս ենթագլխում այսուհետ՝ Նախագիծ) նախատեսված մոտեցումները: Մասնավորապես՝ Նախագծով նախատեսվում են վարչական ձերբակալման վերաբերյալ մանրամասն կարգավորումներ՝ որպես վարչական հարկադրանքի օժանդակ միջոց:

Ուշադրության է արժանի Նախագծով վարչական ձերբակալման վերաբերյալ տեղ գտած այն կարգավորումը, որի համաձայն՝ անձը չի կարող անազատության մեջ պահվել ավելին, քան այն նպատակի կատարումը, որի իրագործման ապահովման նպատակով անձը ձերբակալվել է (...): Նշված դրույթի լիակատար կենսագործման պայմաններում լուծում կստանա պրակտիկայում հանդիպող այն ոչ իրավաչափ երևույթը, երբ վարչական ձերբակալման ենթարկված անձի մասնակցությամբ անհրաժեշտ գործողություններն իրականացված լինելու պայմաններում նրան թույլ չի տրվում լքել Ոստիկանության բաժինը՝ մինչև առավելագույն ժամկետը լրանալը:

Բացի այդ, Նախագծով ամրագրվել է, թե վարչական ձերբակալման արձանագրության մեջ ինչ հանգամանքներ պետք է նշվեն: Առանձին հոդվածով նախատեսված են ինչպես ձերբակալված անձի իրավունքները և պարտականությունները, այնպես էլ ձերբակալում իրականացնող պաշտոնատար անձի պարտականությունները: Նախագծի առանձին հոդվածով ներկայացված են նաև անձին ձերբակալումից ազատելու հիմքերը:

Ամփոփելով, կարող ենք արձանագրել, որ Նախագծով վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական վարույթի հետ կապված հարցերը ենթարկվել են առավել մանրամասն կարգավորման՝ միաժամանակ հաշվի առնելով հատուկ վարույթների առանձնահատկությունները:

Պաշտպանը ողջունելի է համարում Նախագծում տեղ գտած մոտեցումները, սակայն կարևորում է նաև դրա հնարավոր սեղմ ժամկետում ընդունման անհրաժեշտությունը: Պրակտիկայում առկա խնդիրները պետք է ստանան շուտափույթ լուծում, այդ թվում՝ օրենսդրական մակարդակում: Մասնավորապես, անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել վարչական ձերբակալման ենթարկված անձի նվազագույն իրավունքներն ու պարտականությունները, դրանց ծագման պահը, ինչպես նաև սահմանել իրավասու մարմնի ուղղակի պարտականությունը դրանց ապահովման վերաբերյալ:

Բացի այդ, անհրաժեշտ է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածով սահմանված հիմքով անձին վարչական ձերբակալման ենթարկելիս երաշխավորել, որպեսզի նախքան անձին ազատությունից զրկելը Ոստիկանության ծառայողների կողմից ներկայացվող օրինական պահանջը բավարարի միջազգային պրակտիկայում առկա չափանիշներին: Նշվածն ապահովելու նպատակով հարկ է լուրջ ուշադրություն դարձնել Ոստիկանության ծառայողների մասնակցությամբ իրականացվող վերապատրաստումներին՝ ինչպես բովանդակության, այնպես էլ մեթոդաբանության տեսանկյունից՝ դրանցում ընդգրկելով ավելի շատ թվով Ոստիկանության ծառայողների:

ԳԼՈՒԽ 3. ԱԶԱՏ ՏԵՂԱՇԱՐԺՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1. Մեղադրյալի ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման ոչ իրավաչափ պրակտիկան

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն իր նախորդ տարիների տարեկան հաղորդումներում մշտապես անդրադարձել է քրեական վարույթի շրջանակում մեղադրյալի ազատ տեղաշարժվելու իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման վերաբերյալ խնդիրներին: Մասնավորապես, Պաշտպանն իր տարեկան հաղորդմամբ ներկայացրել է խնդրո առարկայի նախադրյալները և հիմնական պատճառները՝ հայտնելով դիրքորոշում առ այն, որ անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման վերաբերյալ իրավասու մարմնին տեղեկություններ տրամադրելու պարտականությանը զուգահեռ պետք է ապահովվի նաև սահմանափակման հիմքերի վերացման վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու պարտականությունը[406]:

Հարկ է արձանագրել, որ 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում շարունակվել են ստացվել մեղադրյալի ազատ տեղաշարժվելու սահմանափակման ոչ իրավաչափ դեպքերի վերաբերյալ բողոքներ: Բողոքների զգալի մեծամասնությունը վերաբերել է անձի նկատմամբ կիրառված խափանման միջոցի վերացման դեպքում սահմանային էլեկտրոնային կառավարման (ՍԷԿՏ) համակարգում տվյալ անձի անհատական տվյալների վերաբերյալ համապատասխան գրառում չկատարելուն:

Մասնավորապես, ստացվել են ահազանգեր այն մասին, որ անձի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է, իսկ քրեական վարույթը՝ կարճվել, սակայն նրա՝ ՀՀ-ից ելքի իրավունքի սահմանափակումը շարունակել է գործել՝ ՍԷԿՏ համակարգում համապատասխան գրառում չկատարելու հետևանքով:

Այս համատեքստում հարկ է նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանը 2017 թվականի ապրիլի 4-ի ՍԴՈ-1360[407] որոշմամբ ներկայացրել է իրավակիրառ պրակտիկայի իրավաչափությունը կանխորոշող պայմաններ՝ նշելով, որ «նման կանոնակարգման առկայության պայմաններում և նման կառուցակարգի միջոցով անձի տեղաշարժման ազատությունը սահմանափակելու պարագայում այն պետք է իրացվի բացառապես խափանման միջոցի վերացման մասին որոշում ընդունելու վերաբերյալ տեղեկատվությունը ևս նույն համակարգում տեղադրելու՝ իրավասու մարմնի հստակ պարտականության իրացման և անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի խոչընդոտները վերացնելու պայմանով»՝ միաժամանակ արձանագրելով օրենսդրության մեջ այս պահանջի՝ վարույթն իրականացնող մարմնի վրա դրված հստակ պարտականության տեսքով ուղղակի ամրագրման բացակայությունը: Սահմանադրական դատարանը եզրահանգել է նաև, որ ՀՀ կառավարության համապատասխան որոշման[408] մեջ խափանման միջոցի վերացման որոշման վերաբերյալ տեղեկատվությունը ՍԷԿՏ համակարգ ուղարկելու ուղղակի պարտականության բացակայությունը հարցականի տակ

---

[406] Տե՛ս 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջ 576 https://ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf, 29.03.2024թ:

[407] Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2017 թվականի ապրիլի 4-ի ՍԴՈ-1360 որոշումը, կետ 8:

[408] Տե՛ս ՀՀ կառավարության 2006 թվականի 22 հունիսի «Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ ստեղծելու, դրա շահագործման կարգը և համակարգից օգտվողների ցանկը սահմանելու մասին» N 884-Ն որոշումը:

է դնում այդ ընթացակարգի որոշակիությունը, քանի որ նշված որոշմամբ կոնկրետ իրավասու մարմնի վրա դրված այդպիսի պարտականություն առկա չէ:

Այս համատեքստում Պաշտպանը ողջունելի է համարում 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 117-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դրույթն առ այն, որ խափանման միջոցը փոխելու կամ վերացնելու մասին որոշումն անհապաղ հանձնվում է խափանման միջոցի կիրառումն ապահովող մարմնին կամ պաշտոնատար անձին, իսկ դրա պատճենը՝ այն անձին, որի նկատմամբ կիրառվում է խափանման միջոցը: Խափանման միջոցը փոխելու կամ վերացնելու մասին քննիչի որոշման պատճենը հանձնվում է նաև հսկող դատախազին:

Չնայած խափանման միջոցը վերացնելու մասին որոշումը դրա կիրառումն ապահովող մարմնին հանձնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը սահմանված է օրենսդրական մակարդակով՝ 2023 թվականի ընթացքում Պաշտպանին ներկայացված ազատ տեղաշարժվելու իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման բողոքների առկայությունը վկայում է այն մասին, որ տվյալ օրենսդրական դրույթի գործնական կիրառման համատեքստում դեռևս առկա են խնդիրներ, և իրավակիրառ պրակտիկան միշտ չէ, որ համապատասխանում է հարցի առնչությամբ առկա չափանիշներին և երաշխիքներին:

Հարկ է փաստել, որ ստացվող բոլոր բողոքների վերաբերյալ սեղմ ժամկետում նախաձեռնվել է քննարկում ՀՀ ՆԳՆ ոստիկանության, ինչպես նաև քննչական մարմինների ներկայացուցիչների հետ և արդյունավետ համագործակցության շնորհիվ ներկայացված բողոքները ստացել են դրական լուծում:

Նշված հարցի կապակցությամբ Դատախազությունից պարզաբանում է ներկայացվել առ այն, որ 2023 թվականի ընթացքում ստացված բողոքների քննարկման շրջանակներում արձանագրվել է 5 դեպք, երբ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգի կիրառմամբ անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումը վերացված չի եղել վերջինիս նկատմամբ ավարտված քրեական վարույթի պայմաններում:

Հաշվի առնելով վերոգրյալը և նախորդ տարիներին Պաշտպանի արտահայտած դիրքորոշումներն ու առաջարկները, ինչպես նաև իրավասու պետական մարմիններից ստացված վիճակագրական տվյալները՝ Պաշտպանն արձանագրում է, որ մեղադրյալի ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման ոչ իրավաչափ պրակտիկայի վերացման ուղղությամբ ձեռնարկվել են քայլեր, և այդ առումով առկա է դրական դինամիկա:

Այդուհանդերձ, շարունակում է խնդրահարույց մնալ Ոստիկանությանը ՍԷԿՏ համակարգ մուտքագրվող համապատասխան տեղեկատվությունը առաքման միջոցով փոխանցելը, ինչն ինքնին բարդացնում է ընթացակարգը՝ հանգեցնելով իրավունքների տեսանկյունից խնդրահարույց իրավիճակների: 2023 թվականի ընթացքում ևս արձանագրվել են դեպքեր, երբ կիրառված սահմանափակումը վերացնելուց երկու-երեք օր անց անձը փորձել է հատել պետական սահմանը, սակայն դա նրան չի թույլատրվել, քանի որ վարույթն իրականացնող մարմինն (հիմնականում դատարանի վարույթում գտնվող գործերով) անհրաժեշտ գրությունը Ոստիկանություն ուղարկել է փոստային ծառայության միջոցով, և այն դեռևս ստացված չի եղել:

Նման դեպքերում ևս բարձրացված խնդիրները հնարավոր սեղմ ժամկետներում լուծում են ստանում Ոստիկանության հետ ձևավորված համագործակցության արդյունքում՝

համապատասխան գրությունը ֆաքսիմիլային կամ էլեկտրոնային տարբերակով Ոստիկանության իրավասու ստորաբաժանում ուղարկելու միջոցով:

Չնայած 2023 թվականի ընթացքում խնդրի վերաբերյալ արձանագրված դրական դինամիկային՝ Պաշտպանը կարևորում է, որպեսզի գործնականում քրեական վարույթն իրականացնող մարմինները բոլոր դեպքերում խափանման միջոցը փոխելու կամ վերացնելու մասին որոշում կայացնելիս (հատկապես բացակայելու արգելք խափանման միջոցի դեպքում) պատշաճ ջանասիրություն ցուցաբերեն այդ որոշումը կիրառումն ապահովող մարմնին կամ պաշտոնատար անձին անհապաղ հանձնելու ուղղությամբ՝ բացառելով անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման դեպքերը:

Միևնույն ժամանակ, Պաշտպանն արձանագրում է, որ վերը նշված խնդիրների բացառման նպատակով անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել նաև ոլորտը կարգավորող օրենսդրական կարգավորումների կատարելագործման ուղղությամբ՝ ՍԷԿՏ համակարգ մուտքագրվող համապատասխան տեղեկատվությունը էլեկտրոնային եղանակով ուղարկելու ընթացակարգեր իրավասու բոլոր պետական մարմինների համար ներդնելու եղանակով:

2. Քրեական վարույթով վկայի և տուժողի, ինչպես նաև վարույթի մասնակից չհանդիսացող անձանց նկատմամբ Հայաստանից դուրս գալու արգելք սահմանելու ոչ իրավաչափ պրակտիկան

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն իր գործունեության ընթացքում բազմիցս է բարձրաձայնել քրեական վարույթով մասնակից չհանդիսացող անձանց նկատմամբ Հայաստանի Հանրապետությունից ելքի արգելք սահմանելու ոչ իրավաչափ պրակտիկային առնչվող խնդիրները: Մասնավորապես, Պաշտպանն իր տարեկան հաղորդումներում մշտապես ընդգծել է, որ անգամ եթե անձի՝ Հայաստանի Հանրապետությունից ելքի սահմանափակումը վարույթի մասնակցի (մասնավոր կամ օժանդակող) պարտականությունների ապահովման իրավաչափ նպատակ է հետապնդում, դրա կիրառման համար օրենսդրությամբ պետք է սահմանված լինեն քրեադատավարական հիմքեր:

Խնդրո առարկայի վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանը, անդրադառնալով Մարդու իրավունքների պաշտպանի դիմումով բարձրացված՝ վկայից, տուժողից անձնագիր վերցնելու, ինչպես նաև ՍԷԿՏ համակարգի միջոցով վկայի և տուժողի տեղաշարժման ազատությունը սահմանափակելու հիմնահարցին, 2017 թվականի ապրիլի 4-ի ՍԴՈ-1360 որոշմամբ արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետության որևէ իրավական ակտով նման պահանջ չի նախատեսվում: Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի թիվ 884-Ն որոշմամբ էլ չի նախատեսվում նման դատավարական կարգավիճակ ունեցող անձի վերաբերյալ տեղեկությունները ՍԷԿՏ համակարգ տեղադրելու՝ իրավասու մարմնի պարտականություն[409]:

Հարկ է նշել, որ 2023 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում շարունակել են ստացվել քրեական վարույթի շրջանակում համապատասխան դատավարական կարգավիճակ չունեցող անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի

[409] Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2017 թվականի ապրիլի 4-ի ՍԴՈ-1360 որոշումը, կետ 9-րդ:

սահմանափակման վերաբերյալ ահազանգեր: Դրանով պայմանավորված՝ շարունակվել է քրեական վարույթով վկայի և տուժողի, ինչպես նաև վարույթի մասնակից չհանդիսացող անձանց նկատմամբ Հայաստանի Հանրապետությունից ելքի արգելք սահմանելու ոչ իրավաչափ պրակտիկայի դինամիկայի ուսումնասիրությունը:

Մասնավորապես՝ Պաշտպանի աշխատակազմ կատարված ահազանգերից մեկով փաստաբանը տեղեկացրել է, որ իր վստահորդը տվյալ պահին գտնվում է «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում, սակայն ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի ծառայողները, առանց հիմնավոր պատճառ ներկայացնելու, չեն թույլատրում նրան հատել Հայաստանի Հանրապետության պետական սահմանը և մեկնել արտերկիր: Փաստաբանը հայտնել է նաև, որ տվյալ անձը քրեական վարույթի շրջանակում որևէ դատավարական կարգավիճակ չունի, ուստի՝ անհասկանալի է, թե ինչ իրավական հիմնավորմամբ են նրա տվյալները մուտքագրվել սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգ: Պաշտպանի աշխատակազմի կողմից արագ արձագանքման շրջանակում ձեռնարկված անհրաժեշտ միջոցների, ինչպես նաև հետագայում ՀՀ ներքին գործերի նախարարությունից ստացված գրավոր պարզաբանման արդյունքում պարզվել է, որ տարածքային ոստիկանության բաժնի ծառայողը, ստանալով տվյալ անձի վերաբերյալ օպերատիվ տեղեկատվություն, առանց վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեական հետապնդում իրականացնելու և բացակայելու արգելք խափանման միջոց կիրառելու որոշումների առկայության, գրություն է ուղարկել սահմանային վերահսկողություն իրականացնող լիազոր մարմնին՝ տվյալ անձի անհատական տվյալները սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգ մուտքագրելու և վերջինիս՝ ՀՀ-ից ելքի իրավունքը սահմանափակելու համար, իսկ սահմանային վերահսկողություն իրականացնող լիազոր մարմնի ծառայողը, ստացված գրության հիման վրա, առանց վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեական հետապնդում իրականացնելու և բացակայելու արգելք խափանման միջոցը կիրառելու որոշումների առկայության, տվյալ անձի ազատ տեղաշարժի իրավունքը սահմանափակելու նպատակով վերջինիս անհատական տվյալները զետեղել է սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգում, ինչի արդյունքում քաղաքացու՝ ՀՀ-ից ելքը սահմանափակվել է: Նշվածի կապակցությամբ ՀՀ ՆԳՆ ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչությունում իրականացված ծառայողական քննությամբ հաստատվել է Ոստիկանության երկու ծառայողների կողմից կարգապահական խախտումներ թույլ տալու հանգամանքը, իսկ ծառայողական քննության եզրակացության պատճենն ուղարկվել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության համապատասխան ստորաբաժանումներ՝ քննարկելու և հետագայում նմանատիպ դեպքերը բացառելու ուղղությամբ համապատասխան միջոցներ ձեռնարկելու նպատակով:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով նախորդ տարեկան հաղորդումներով Պաշտպանի հայտնած դիրքորոշումներն ու կատարված առաջարկները, ինչպես նաև 2023 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքների նվազ քանակը՝ հարկ է փաստել, որ քրեական վարույթի մասնակից չհանդիսացող անձանց նկատմամբ Հայաստանի Հանրապետությունից ելքի արգելք սահմանելու պրակտիկայի բարելավման հարցում առկա է դրական դինամիկա:

Խնդրո առարկա հարցի կապակցությամբ ՀՀ դատախազությունից պարզաբանում է ներկայացվել առ այն, որ 2023 թվականի ընթացքում քրեական վարույթով մասնակից

չհանդիսացող անձանց նկատմամբ Հայաստանի Հանրապետությունից ելքի արգելք սահմանելու դեպքեր չեն արձանագրվել:

Նշված հարցի կապակցությամբ ՀՀ քննչական կոմիտեից ստացվել է պարզաբանում առ այն, որ խնդրո առարկայի վերաբերյալ 2023 թվականի ընթացքում արձանագրվել է մեկ դեպք, երբ ձերբակալումից ազատ արձակված և որպես մեղադրյալ չներգրավված անձի վերաբերյալ տվյալներն ուղարկվել են ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն և քրեական ոստիկանության գլխավոր վարչություն՝ սահմանափակելով նրա անձնագիր ստանալու և ՀՀ սահմանը հատելու իրավունքը: Նշված դեպքով ուսումնասիրությունը գտնվում է ընթացքի մեջ:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանը, ողջունելի համարելով խնդրի լուծման ուղղությամբ արձանագրված դրական դինամիկան, ընդգծում է, որ գործնականում պետք է բացառել քրեական վարույթի մասնակից չհանդիսացող անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման՝ օրենքով չնախատեսված և խնդրին առնչվող չափանիշներին հակասող ցանկացած դեպք (այդ թվում՝ ՍԷԿՏ համակարգում հանրապետությունից դուրս գալու արգելքի մասին տվյալ մուտքագրելու եղանակով):

3. ՀՀ տարածքում գտնվող օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ այլ երկրների իրավապահ մարմինների կողմից հետախուզում հայտարարված լինելու պարագայում նրանց նկատմամբ Հայաստանից դուրս գալու արգելքը տևական ժամանակ պահպանելու հետ կապված խնդիրներ

2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացվել են մի շարք բողոքներ, որ անձի նկատմամբ այլ պետությունների իրավապահ մարմինների կողմից հայտարարված հետախուզման հիմքով (խափանման միջոցը ստորագրություն չհեռանալու մասին) ՀՀ տարածքում հայտնաբերելուց հետո անձինք զրկվում են ազատ տեղաշարժի կոնվենցիոն իրավունքի իրացման հնարավորությունից: Մասնավորապես, ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգում հետախուզման մեջ գտնվելու վերաբերյալ տեղեկությունների ներմուծված լինելու հանգամանքով պայմանավորված՝ չեն կարողանում հատել ՀՀ պետական սահմանը, ինչի արդյունքում առանց իրավական պատշաճ հիմնավորման, իրենց կամքին հակառակ, շարունակում են մնալ ՀՀ տարածքում՝ զրկված լինելով նաև բնակության վայրի, գումարի և այլ նվազագույն կենսապահովման միջոցներից: Ավելին, գործերի մի մասի շրջանակներում բացակայել են հետախուզում հայտարարած պետության կողմից հանձնման մասին միջնորդությունը, և անձի նկատմամբ կալանքն ընտրված չի եղել որպես խափանման միջոց:

Պաշտպանն ընդգծում է, որ այլ պետության կողմից անձի նկատմամբ հայտարարված հետախուզումն ինքնին չի կարող հանդիսանալ անձի ազատ տեղաշարժվելու իրավունքը սահմանափակելու միակ իրավաչափ հիմք: Այդ իրավունքի իրավաչափ սահմանափակումը հնարավոր է մի շարք այլ պայմանների բավարարման իրավիճակում միայն:

Պաշտպանի աշխատակազմ ստացված բոլոր բողոքներն ու կից փաստաթղթերը պատշաճ կերպով ուսումնասիրվել են, խնդրի լուծման կապակցությամբ համապատասխան պարզաբանումների պահանջով գրություններ են ուղարկվել Հայաստանի Հանրապետության իրավասու պետական մարմիններին, իսկ որոշ

դեպքերում՝ բարձրացված հարցերը լուծում են ստացել ՀՀ գլխավոր դատախազության և ՀՀ ՆԳՆ ոստիկանության Քրեական ոստիկանության գլխավոր վարչության ներկայացուցիչների հետ քննարկումների և համագործակցության արդյունքում:

Ավելին, հաշվի առնելով Պաշտպանին ներկայացված նույնաբովանդակ բողոքների զգալի քանակը, դրանց բնույթը, ինչպես նաև այն, որ բարձրացված խնդիրը կրում է համակարգային բնույթ՝ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից նախաձեռնվել է համատեղ մասնագիտական քննարկում ՀՀ պետական իրավասու մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ: Հարկ է նշել, որ իրականացված քննարկումների շրջանակում Պաշտպանի և շահագրգիռ գերատեսչությունների ներկայացուցիչների կողմից խնդիրը համակողմանի ուսումնասիրվել է, ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքի նմանատիպ սահմանափակման դեպքերը բացառելու ուղղությամբ: Արդյունքում՝ ՀՀ պետական իրավասու մարմնի համապատասխան ստորաբաժանման կողմից մշակվել է համապատասխան նշված անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքն ապահովելու նպատակով աշխատանքային գործիքակազմ:

Հարկ է ընդգծել, որ նշված միջոցառումների իրականացումից հետո Պաշտպանի աշխատակազմ ստացվող համանման բողոքների թիվը զգալիորեն նվազել է և նկատվել է խնդրի լուծման առնչությամբ դրական դինամիկա:

Վերոգրյալը նկատի ունենալով՝ Պաշտպանն ընդգծում է, որ անհրաժեշտ է բացառել այլ պետության կողմից անձի նկատմամբ հայտարարված հետախուզման պարագայում նրա ազատ տեղաշարժվելու իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակումները, ինչպես նաև կատարելագործել խնդրի հաղթահարմանն ուղղված կառուցակարգերը:

ԳԼՈՒԽ 4. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

1. Փաստաբանի մասնագիտական գործունեությունն ու նրա դերի պատշաճ հանրային ընկալումը

Մարդու իրավունքների պաշտպանն իր գործունեության շրջանակում առանձնահատուկ ուշադրություն է դարձնում փաստաբանական համայնքի հետ արդյունավետ համագործակցությանը, ինչպես նաև հասարակությունում փաստաբանի կարգավիճակի ու նրա դերի ճիշտ ընկալումը երաշխավորելուն:

Փաստաբանի մասնագիտական ու պատասխանատու աշխատանքը պետության իրավական անվտանգության կարևորագույն երաշխիքներից է: Ուստի, հասարակության շրջանում առավել քան կարևոր է փաստաբանության դերի և փաստաբանի գործառույթների ճիշտ ընկալումը: Պետական մարմինների, հատկապես իրավապահ համակարգի ներկայացուցիչների կողմից փաստաբանի անձի նկատմամբ համապատասխան վերաբերմունքը փաստաբանների մասնագիտական գործունեության երաշխիքների տեսանկյունից ունի առանցքային նշանակություն:

Պաշտպանի գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդումներում մանրամասն անդրադարձ է կատարվել փաստաբանի դերի ընկալման հարցերին, այդ թվում՝ փաստաբաններին իրենց վստահորդների հետ նույնացնելու, վիրավորելու և սպառնալիքներ հնչեցնելու հարցին (մասնավորապես, հանրային հնչեղություն ունեցող քրեական վարույթների հետ կապված):

Մարդու իրավունքների պաշտպանը հատուկ ընդգծում է, որ փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը: Այն ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով: Փաստաբաններն իրականացնում են պետական և տեղական ինքնակառավարման, դատական իշխանության մարմինների հետ անձի փոխհարաբերությունների համատեքստում նրա իրավունքների պաշտպանությունը, ինչպես նաև ներկայացնում ու պաշտպանում են անձին, ում պետությունը մեղադրում է ենթադրյալ հանցանքի կատարման մեջ: Ուստի, փաստաբանի առաքելությունն է, ի թիվս այլնի, անձանց համար ապահովել որակյալ իրավաբանական օգնություն, ինչպես նաև իրավական պատշաճ պաշտպանություն մեղադրանքից, հնարավոր ապօրինի հետապնդումից կամ ապօրինի ազատազրկումից:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է երաշխավորել փաստաբանների և նրանց դերի առնչությամբ հանրային պատշաճ ընկալման ձևավորումը, զերծ մնալ իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնելիս փաստաբաններին ուղղված վիրավորանքի, ծաղրանքի կամ ատելության խոսքի դրսևորումներից:

2. Իրավաբանական օգնության իրավունքը և փաստաբանի մատչելիությունը՝ որպես քրեական հետապնդման ենթարկվող անձի այլ իրավունքների ապահովման երաշխիք

Սահմանադրության 64-րդ հոդվածով սահմանվում է, որ յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը:

Այսպիսով, փաստաբանության ինստիտուտն ունի առանձնահատուկ նշանակություն իրավաբանական օգնություն ստանալու անձի սահմանադրական իրավունքի իրացման գործում: Փաստաբանի պաշտպանված մասնագիտական գործունեությունը երկրում մարդու իրավունքների պաշտպանության համակարգը պայմանավորող գործոններից է, և իրավունքի գերակայության ապահովման գործում այն ունի առանցքային դերակատարություն:

Փաստաբանների դերին և փաստաբանների գործունեության երաշխիքների ապահովմանն անդրադարձ է կատարվել մի շարք միջազգային փաստաթղթերով: Այսպես, 1990 թվականին ընդունվել են «Փաստաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքները», որտեղ հանգամանալից անդրադարձ է կատարվում փաստաբանի անխոչընդոտ մասնագիտական գործունեության կարևորությանը և այդ առնչությամբ պետությունների պարտավորություններին[410]: Ավելին, խոշտանգումների կանխարգելման կոմիտեի չափանիշների համաձայն՝ փաստաբանի մատչելիությունը հանդիսանում է նաև ազատությունից զրկված անձանց վատ վերաբերմունքի դեմ հիմնարար երաշխիք[411]:

Փաստաբանի մատչելիության իրավունքի ապահովման հարցը քննարկման առարկա է դարձրել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը: Մասնավորապես, Գ. Միքայելյանի վերաբերյալ գործով 2009 թվականի դեկտեմբերի 18-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է ձերբակալման սկզբնական փուլում գտնվող անձի կոնկրետ իրավունքների ծավալը, որն այլ իրավունքների թվում ներառում է նաև իր փաստաբանին հրավիրելու իրավունքը[412]:

Քրեական հետապնդման ենթարկվող անձանց իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրացման հարցերին մանրամասն անդրադարձ է կատարվել նաև Պաշտպանի նախորդ տարիների տարեկան հաղորդումների շրջանակներում: Հաղորդումներով, ի թիվս այլնի, ընդգծվել է փաստաբանական գործունեության անխոչընդոտ ապահովման նպատակով փաստաբանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտող վարքագծի քրեականացման հարցը (նկատի ունենալով, որ տվյալ ժամանակահատվածում գործող քրեական օրենսգիրքը միայն պատասխանատվություն էր սահմանում պաշտոնատար անձանց կողմից փաստաբանի գործունեությանը խոչընդոտելու դեպքերի համար)[413]:

---

[410] Տե՛ս «Փաստաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքներ», Հավանա, Հանցագործությունների կանխմանը և իրավախախտների հետ վարվելաձևին նվիրված ՄԱԿ-ի ութերորդ կոնգրես, 1990թ., հասանելի է https://www.ohchr.org/en/professionalinterest/pages/roleoflawyers.aspx հղումով, 29.03.2024թ:

[411] Տե՛ս ԽԿԿ-ի չափանիշների վերաբերյալ զեկույցը, փաստաթուղթ թիվ CPT/Inf/E (2002) 1, կետ 18-25: Զեկույցի ամբողջական տեքստը հասանելի է http://e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=10725e4cd1102c333112&size_mode=1 հղումով, 29.03.2024թ:

[412] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԴԴ/0085/06/09 որոշումը:

[413] Առավել մանրամասն տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 608-616, հասանելի է https://ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 29.03.2024թ:

Հարկ է նկատել, որ գործող ՀՀ քրեական օրենսգրքով ևս սահմանվել են փաստաբանի գործունեության, ինչպես նաև ազատությունից զրկված անձի՝ փաստաբանի մատչելիության իրավունքի ապահովման քրեաիրավական երաշխիքները: Մասնավորապես, գործող Քրեական օրենսգրքի 486-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում նաև փաստաբանի գործունեությանը ցանկացած ձևով միջամտելու համար, իսկ 490-րդ հոդվածը, ի թիվս այլնի, պատասխանատվություն է նախատեսում նաև փաստաբանի նկատմամբ սպառնալիքի և բռնություն գործադրելու համար: Բացի այդ, Օրենսգրքի 491-րդ հոդվածով քրեական պատասխանատվություն է սահմանվել փաստաբանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու համար, եթե դա դրսևորվել է իր վստահորդին տեսակցելու նպատակով ազատությունից զրկման ցանկացած վայր փաստաբանի մուտքն ապօրինի չթույլատրելով: Ընդ որում, հարկ է ընդգծել, որ նշված օրենսդրական կարգավորումները համընկնում են Մարդու իրավունքների պաշտպանի կողմից նախապես առաջարկված փոփոխությունների տրամաբանությանը:

Փաստաբանի մատչելիության իրավունքի տեսանկյունից կարևոր են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածով սահմանված կարգավորումները, համաձայն որոնց՝ ձերբակալված անձը, մեղադրյալը, նրա օրինական ներկայացուցիչը, տուժողը, նրա օրինական ներկայացուցիչը, գույքային պատասխանողը, նրա օրինական ներկայացուցիչը, ինչպես նաև վկան վարույթի ընթացքում իրավունք ունեն ստանալու իրենց հրավիրած, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև պետական միջոցների հաշվին տրամադրված փաստաբանի իրավաբանական օգնությունը: Ընդ որում՝ նույն հոդվածով սահմանվում է, որ վարույթն իրականացնող մարմինն իրավասու չէ արգելելու փաստաբանի ներկայությունն իր վստահորդի մասնակցությամբ կատարվող վարութային գործողությանը:

Միևնույն ժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանվել են լրացուցիչ երաշխիքներ: Մասնավորապես, Օրենսգրքի 45-րդ հոդվածով սահմանված է, որ փաստաբանը մեղադրյալի պաշտպանությունը ստանձնում է մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցչի, մերձավոր ազգականի, ինչպես նաև այլ անձանց հրավերով՝ մեղադրյալի հետագա գրավոր համաձայնությամբ կամ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից նշանակվելով՝ վարույթն իրականացնող մարմնի գրավոր պահանջի հիման վրա:

Քրեական դատավարության օրենսգրքի 46-րդ հոդվածը նախատեսում է պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքերը: Այսպես, վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է ձերբակալված անձին ձերբակալման որոշումը հանձնելու պահից, իսկ եթե նույն օրենսգրքով սահմանված ժամկետում այն չի հանձնվել, ապա նրան ազատությունից փաստացի զրկելուց հետո 6 ժամը լրանալու պահից կամ անձին մեղադրանք ներկայացնելու պահից, քանի դեռ վարույթն իրականացնող մարմինը օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով չի ընդունել մեղադրյալի հրաժարվելը պաշտպանից:

Ընդ որում, 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարույթն իրականացնող մարմինը չի ընդունում պաշտպանից մեղադրյալի հրաժարվելը կամ անհապաղ միջոցներ է ձեռնարկում վարույթին պաշտպանի մասնակցությունն ապահովելու համար, եթե՝

1) մեղադրյալի համար դժվար է ինքնուրույն պաշտպանվել հոգեկան, մտավոր կամ ֆիզիկական առողջության խնդիր ունենալու պատճառով.

2) մեղադրյալը չի տիրապետում կամ ոչ բավարար չափով է տիրապետում հայերենին.

3) մեղսագրվող արարքը կատարելու պահին մեղադրյալն անչափահաս է.

4) մեղադրյալը ժամկետային զինծառայող է.

5) մեղադրյալը դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ճանաչվել է անգործունակ.

6) տվյալ անձի նկատմամբ իրականացվում է բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթ.

7) տվյալ մեղադրյալի նկատմամբ իրականացվում է հեռակա վարույթ.

8) մեղադրյալների շահերի միջև կան հակասություններ, և նրանցից մեկը պաշտպան ունի.

9) դատարանը կայացրել է տվյալ մեղադրյալին առնչվող ցուցմունքի դեպոնացում կատարելու մասին որոշում.

10) մեղադրյալը միջնորդել է կիրառել համաձայնեցման կամ համագործակցության կամ արագացված կամ համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթ.

11) մեղադրյալի նկատմամբ կիրառվել է սույն օրենսգրքի 141-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված դատավարական սանկցիա.

12) մեղադրյալը միջնորդել է դատական նիստն անցկացնել իր բացակայությամբ.

13) վարույթն իրականացնող մարմինը պաշտպանին ազատել է հետագա վարույթին մասնակցելուց.

14) վարույթն իրականացնող մարմինը պաշտպանին հեռացրել է վարույթից.

15) դա է պահանջում արդարադատության շահը:

Վերոգրյալ դեպքերում, երբ մեղադրյալը պաշտպան չունի, վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ապահովել պաշտպանի մասնակցությունը վարույթին՝ այն պարտադիր դարձնող համապատասխան հիմքն ի հայտ գալուց անմիջապես հետո:

Բացի դրանից, Օրենսգրքի 47-րդ հոդվածով նախատեսված է, որ պաշտպանից հրաժարվելը վարույթն իրականացնող մարմինն ընդունում է միայն այն դեպքում, երբ մեղադրյալն այդ մասին հայտարարել է սեփական նախաձեռնությամբ, կամավոր, գիտակցված, *վարույթին մասնակցող պաշտպանի ներկայությամբ*, և ողջամտորեն ենթադրելի է, որ մեղադրյալն ի վիճակի է ինքնուրույն իրականացնելու իր պաշտպանությունը:

Պաշտպանի աշխատակազմում ստացված բողոքների և ահազանգների կապակցությամբ վերը նշված դրույթը քննարկման առարկա է դարձել պետական մարմինների ներկայացուցիչների հետ: Հատկապես 2023 թվականի ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ փաստաբանին են դիմել ազատությունից զրկված անձանց մերձավոր ազգականները՝ նրա շահերի պաշտպանությունը ստանձնելու նպատակով, նա ներկայացել է վարույթն իրականացնող մարմին, սակայն փաստաբանի մուտքը չի թույլատրվել այն պատճառաբանությամբ, որ ազատությունից զրկված անձը հրաժարվել է պաշտպանից: Ավելին, արձանագրվել են դեպքեր, երբ Պաշտպանի ներկայացուցիչների միջամտության արդյունքում փաստաբանի մուտքը վարույթն իրականացնող մարմին ապահովվել է, որից հետո ազատությունից զրկված անձը հայտնել է, որ չի հրաժարվում պաշտպանից և ցանկություն է հայտնել, որ իր պաշտպանությունն իրականացնի ներկայացած փաստաբանը:

Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի տեսանկյունից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված երաշխիքներից է նաև այն, որ մեղադրյալի

իրավունքներն ու պարտականությունները սահմանող օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ մեղադրյալն իրավունք ունի խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցելու իր պաշտպանի հետ՝ առանց տեսակցությունների սահմանափակման: Իսկ Օրենսգրքի 222-րդ հոդվածով սահմանվում է, որ հարցաքննությունից առաջ ձերբակալվածին իր ցանկությամբ հնարավորություն է տրվում առանձին, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցելու իր պաշտպանի հետ:

Բացի այդ, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 543-ն որոշման Հավելվածի 303-րդ կետի համաձայն՝ կալանավորված անձի պաշտպանը, քրեական վարույթով պաշտպան չհանդիսացող փաստաբանը կամ դատապարտյալի փաստաբանն ունի խորհրդապահական կարգով անարգել տեսակցելու իրավունք՝ առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման, անկախ աշխատանքային օրերից կամ ժամերից, որը տեղի է ունենում պահակախմբի տեսողական հսկողության ներքո:

Մարդու իրավունքների պաշտպանի 2023 թվականի տարեկան հաղորդման նախապատրաստման ընթացքում Դատախազությունից ստացվել է տեղեկատվություն առ այն, որ 2023 թվականի ընթացքում արձանագրվել է փաստաբանի մուտքը խոչընդոտելու մեկ դեպք: Մասնավորապես, ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության հսկողության ներքո գտնվող քրեական վարույթներից մեկով մեղադրյալի պաշտպանը հսկող դատախազին ներկայացրել է դիմում՝ քրեակատարողական հիմնարկ իր մուտքը չթույլատրելու և մեղադրյալին պաշտպանի մատչելիության իրավունքի հետ կապված: Դիմումն ուղարկվել է նախաքննական մարմին՝ քրեական վարույթ նախաձեռնելու հարցը քննարկելու համար, որի առթիվ քրեական վարույթ չի նախաձեռնվել:

Դատախազությունից ստացված պարզաբանումների համաձայն՝ 2023 թվականի ընթացքում 2 դիմում է ստացվել ձերբակալումից հետո պաշտպան չներգրավելու մասին, որոնց վերաբերյալ նախաքննություն իրականացնող քննիչին տրվել են հանձնարարություններ անմիջապես պաշտպան չներգրավելու պատճառները վերհանելու և անձի պաշտպանության իրավունքի խախտումները վերացնելու ուղղությամբ, և ապահովվել է պաշտպանի մասնակցությունը: Հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի պաշտպանության իրավունքն իրացնելու նպատակով որպես պաշտպան ներգրավվելուն խոչընդոտելու վերաբերյալ Դատախազությունում ստացվել է 1 բողոք, որը հսկող դատախազի որոշմամբ բավարարվել է:

2023 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին փաստաբանների կողմից հասցեագրվել են բողոքներ՝ իրենց վստահորդներին տեսակցելու նպատակով ազատությունից զրկման վայր կամ վարույթն իրականացնող մարմին մուտքն արգելելու և իրենց վստահորդներին տեսակցել չթույլատրելու դեպքերի վերաբերյալ:

Փաստաբանի մուտքը խոչընդոտելու վերաբերյալ Պաշտպանին ներկայացված յուրաքանչյուր բողոքի կամ ահազանգի դեպքում, նկատի ունենալով մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից դրա կարևորությունը, Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրականացվել է անհապաղ միջամտություն:

Բարձրացված հարցն անհապաղ բանավոր ընթացակարգով քննարկվել է իրավասու պետական մարմնի ներկայացուցչի հետ, իսկ նման անհրաժեշտության դեպքում՝ նաև արագ արձագանքման ձևով այց է իրականացվել տվյալ հաստատություն: Ընդ որում՝ դեպքերի մեծամասնության պարագայում խնդիրը բանավոր ընթացակարգով ստացել է լուծում: Այդ առումով Պաշտպանը կարևորում է ՀՀ ներքին գործերի նախարարության, ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի, ՀՀ ազգային անվտանգության ծառայության և ՀՀ քրեակատարողական ծառայության հետ համագործակցությունը: Այդուհանդերձ, Պաշտպանին հասցեագրվող բողոքները վկայում են, որ այս առումով իրավակիրառ պրակտիկան դեռևս ունի էական կատարելագործման կարիք և այդ ուղղությամբ անհրաժեշտ է իրականացնել հետևողական և համակարգային աշխատանքներ:

Այսպես, Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքներից մի քանիսի պարագայում փաստաբանները տեղեկացրել են, որ թեև վարույթն իրականացնող մարմինը չի հրաժարվում վստահորդի հետ տեսակցելու հնարավորություն ընձեռելուց, սակայն այն տևական ժամանակ ձգձգվում է՝ ընթացակարգային գործողություններ (անցաթղթերի կազմում, տվյալների գրանցում և այլն) իրականացնելու պատճառաբանությամբ: Նման պարագայում փաստաբանները մտավախություն են ներկայացնում առ այն, որ այդ ժամանակահատվածում վստահորդի մասնակցությամբ կարող են իրականացվել որոշակի վարութային գործողություններ, նրան կարող են ուղղորդել որոշակի հանգամանքներ ներկայացնելու կամ կարող են ճնշում գործադրել նրա նկատմամբ:

Բողոքների մի մասը վերաբերել է դեպքերի, երբ փաստաբանի վարույթին ներգրավման գործընթացը ձգձգվել է այնքան ժամանակ, մինչ ազատությունից զրկված անձն ազատ է արձակվել ձերբակալումից կամ նրա հետ կապված վարութային գործողություններն ավարտվել են, և նա դուրս է եկել վարույթն իրականացնող մարմնի վարչական շենքից: Արձանագրվել են նաև դեպքեր, երբ փաստաբանի մուտքը վարույթն իրականացնող մարմին ձգձգվել է, քանի որ համապատասխան մարմնում հերթապահ ծառայություն իրականացնող անձինք, ըստ պնդման, չեն կարողացել կապ հաստատել իրենց վերադասի հետ: Ընդ որում, երբեմն փաստաբանի մուտքը հիշյալ պատճառաբանությամբ չի թույլատրվել մինչև նրանց վստահորդների մասնակցությամբ իրականացվող վարութային գործողության ավարտը:

Հարկ է ընդգծել, որ Պաշտպանի աշխատակազմում ստացվել են բողոքներ նաև փաստաբանի մուտքը քրեակատարողական հիմնարկ թույլ չտալու վերաբերյալ: Թեև մեծամասամբ նշված խնդիրները ևս բանավոր ընթացակարգով ստացել են լուծում, սակայն արձանագրվել են դեպքեր, երբ փաստաբանի մուտքը ապահովվել է տևական ժամանակ անց: Նման դեպքերից մեկով, ի թիվս այլ պարզաբանումների, քրեակատարողական հիմնարկի ներկայացուցիչը փաստաբանի մուտքը չթույլատրելը հիմնավորել է այն հանգամանքով, որ քրեակատարողական հիմնարկում պահվող ազատությունից զրկված անձինք դժգոհություններ են հայտնում ժամը 23:00-ից հետո հիմնարկ փաստաբանների մուտք գործելու կապակցությամբ:

Բացի այդ, մի շարք դեպքերում փաստաբանները նշել են, որ այն պարագայում, երբ ձերբակալված անձը գտնվում է վարույթն իրականացնող մարմնում, և նրա հետ պետք է իրականացվեն համապատասխան վարութային գործողություններ, փաստաբանին թույլ

չեն տվել տեսակցել վստահորդին՝ պնդելով, որ վերջինս կարող է ներկայացնել որպես պաշտպան ներգրավվելու մասին գրավոր դիմում:

2023 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում բողոք է ստացվել նաև այն մասին, որ մինչ փաստաբանի մուտքը վարույթն իրականացնող մարմին ապահովելը քննիչն ազատությունից զրկված անձի մասնակցությամբ սկսել է կատարել տեսաձայնագրմամբ զուգորդված վարութային գործողություն և դիրքորոշում է հայտնել առ այն, որ պաշտպանի ներգրավման հարցը կարող է քննարկվել բացառապես գործողության ավարտից հետո, քանի որ տեսաձայնագրառումը հնարավոր չէ ընդհատել:

Պաշտպանն ընդգծում է, որ փաստաբանի մուտքն ու վստահորդին տեսակցելն ինքնանպատակ չեն, այլ ուղղված են իրավաբանական օգնության կարիք ունեցող անձի իրավունքների լիարժեք իրացման երաշխավորմանը: Ուստի, վստահորդների իրավունքների պաշտպանությունը ստանձնելու նպատակով ներկայացած փաստաբանների մուտքն արգելելու պրակտիկան խիստ մտահոգիչ է և վտանգում է վարույթն իրականացնող մարմնի վարչական շենքում գտնվող՝ հատկապես քրեական հետապնդման ենթարկվող անձանց իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի պատշաճ իրացումը:

2023 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են նաև փաստաբանի մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու վերաբերյալ այլ բնույթի բողոքներ:

Այսպես, դեպքերից մեկով ազատությունից զրկված անձը, ներկայացվել է դատարան և գտնվելով դատարանի տարածքում գտնվող խցերից մեկում, զրկված է եղել մինչ դատական նիստի սկիզբն իր փաստաբանին տեսակցելու հնարավորությունից:

Պաշտպանի աշխատակազմում 2022 և 2023 թվականների ընթացքում ստացված բողոքներով և ահազանգերով արձանագրված մեկ այլ կարևոր խնդիր վերաբերում է այն իրավիճակներին, երբ օտարերկրյա պետությունների կողմից հետախուզվող անձանց հայտնաբերելու, անձանց փաստաթղթերի ստուգման, ՀՀ մուտքի արգելքի առկայության (այդ թվում՝ անցանկալի անձանց), ինչպես նաև քրեաիրավական կամ վարչաիրավական ընթացակարգերի իրականացման պարագայում անձի՝ Երևանի «Զվարթնոց» օդանավակայանի վերահսկելի և հատուկ վերահսկելի գոտիներում գտնվելու պարագայում հնարավոր չի լինում ապահովել իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը:

Օդանավակայանի վերահսկելի և հատուկ վերահսկելի գոտիներում անձանց, այդ թվում՝ փաստաբանների մուտքը սահմանափակված է, օդանավակայանի տարածքը պատկանում է փակ բաժնետիրական ընկերության, իսկ 3-րդ անձանց մուտքը օդանավակայանի նշված գոտիներ հնարավոր է բացառապես ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտեի թույլտվությամբ: Միևնույն ժամանակ, նշված թույլատվությունը ստանալու համար անհրաժեշտ է սահմանված կարգով մուտքագրել դիմում, որի քննարկումը կարող է տևել բավականին երկար: Արդյունքում՝ նման պայմաններում փաստաբանի մուտքի հետագա ապահովումը կարող է դառնալ իմաստազուրկ:

Անձի՝ Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելն արգելելու պարագայում սահմանափակումները գործում են մինչ իր քաղաքացիության երկիր կամ մեկնման երկիր նրան վերադարձնելը, իսկ ձերբակալված անձանց պարագայում՝ մինչ Ոստիկանություն կամ վարույթն իրականացնող մարմին հանձնելը: Ընդ որում, վերջին դեպքում անձին ազատությունից զրկելու ժամանակահատվածի մեջ չի հաշվարկվում օդանավակայանում գտնվելու ժամանակահատվածը, իսկ փաստաբանի հետ

տեսակցության հարցը քննարկվում է արդեն համապատասխան մարմնում: Մինչդեռ, Պաշտպանն ընդգծում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն՝ անձին օդանավակայանի տարանցիկ գոտում պահելը նույնպես համարվում է ազատությունից զրկում[414]:

Քննարկվող հարցի վերաբերյալ ներկայացված բողոքների մի մասով նշվել է, որ Երևանի «Զվարթնոց» օդանավակայան ժամանելուց հետո Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի կողմից արգելվել է անձանց մուտքը Հայաստանի Հանրապետություն, քանի որ իրենց վերաբերյալ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական ՍԷԿՏ համակարգում առկա է սահմանափակում: Ընդ որում՝ անձանց չեն ներկայացվել կիրառված սահմանափակման էությունն ու հիմքերը:

Անձինք պնդել են նաև, որ նախապես տեղեկացված չեն եղել իրենց նկատմամբ սահմանափակման առկայության վերաբերյալ՝ հավելելով, որ իրենց իրավունքների պաշտպանության նպատակով օդանավակայան ներկայացած փաստաբաններին չի թույլատրվում մուտք գործել և տեսակցել իրենց հետ: Բողոքներից մեկով անձը նշել է, որ ցանկանում է լիազորագիր տրամադրել փաստաբանին նշված հարցի կապակցությամբ համապատասխան բողոքարկման ընթացակարգեր նախաձեռնելու նպատակով, ինչը ևս չի ապահովվել:

Ստացված բոլոր ահազանգերն անմիջապես քննարկվել են իրավասու պետական մարմինների ներկայացուցիչների հետ, որոշ դեպքերում իրականացվել են արագ արձագանքման այցեր: Դեպքերից մեկով Պաշտպանի աշխատակազմի կողմից ձեռնարկված միջոցների արդյունքում հնարավոր է եղել փոխանցել անձի կողմից տրված լիազորագիրը փաստաբանին:

Նշված բողոքների կապակցությամբ իրավասու մարմինների հետ Պաշտպանը վարել է նաև համապատասխան գրագրություն: Մարդու իրավունքների պաշտպանին պարզաբանում է ներկայացվել այն մասին, որ բողոք ներկայացրած անձանց տվյալները Հայաստանի Հանրապետության տարածքում անցանկալի համարվող օտարերկրացիների տվյալների բանկում ներառվել, և նրանց մուտքը Հայաստանի Հանրապետություն արգելվել է՝ հիմք ընդունելով «Օտարերկրացիների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի «գ» և «զ» կետերի պահանջները: Այն է, օտարերկրացուն մուտքի վիզայի տրամադրումը (ժամկետի երկարաձգումը) մերժվում է, տրամադրված մուտքի վիզան ուժը կորցրած է ճանաչվում կամ մուտքը Հայաստանի Հանրապետություն արգելվում է, եթե գոյություն ունեն հավաստի տվյալներ, որ նա իրականացնում է այնպիսի գործունեություն, մասնակցում, կազմակերպում կամ հանդիսանում է այնպիսի կազմակերպության անդամ, որի նպատակն է վնաս պատճառել Հայաստանի Հանրապետության պետական անվտանգությանը, տապալել սահմանադրական կարգը, թուլացնել պաշտպանունակությունը, իրականացնել ահաբեկչական գործունեություն, սահմանով ապօրինաբար (առանց համապատասխան թույլտվության) տեղափոխել զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր, ռադիոակտիվ նյութեր, թմրանյութեր, հոգեներգործուն նյութեր կամ իրականացնել մարդու թրաֆիքինգ կամ շահագործում, պետական սահմանի

[414] Տե՛ս, ի թիվս այլ վճիռների, Ամուրն ընդդեմ Ֆրանսիայի (Amuur v. France) 1996 թվական հունիսի 25-ի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը, 44-49-րդ կետեր, Շամսան ընդդեմ Լեհաստանի (Shamsa v. Poland) 2003 թվականի նոյեմբերի 27-ի վճիռը, 44-47-րդ կետեր, Ռիադն ու Իդիաբն ընդդեմ Բելգիայի (Riad and Idiab v. Belgium) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2008 թվականի ապրիլի 24-ի վճիռը, կետ 68, Նոլանը և Կ.-ն ընդդեմ Ռուսաստանի (Nolan and K. v. Russia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2009 թվականի փետրվարի 12-ի վճիռը, 94 և 95 կետեր:

ապօրինի հատում կամ անօրինական միգրացիայի կազմակերպում, նա տառապում է վարակիչ հիվանդությամբ, որը սպառնում է բնակչության առողջությանը, բացառությամբ այն դեպքերի, երբ նա մուտք է գործում Հայաստանի Հանրապետություն՝ նման հիվանդությունը բուժելու նպատակով, ինչպես նաև գոյություն ունեն նրա կողմից Հայաստանի Հանրապետության պետական անվտանգությանը կամ հասարակական կարգին այլ լուրջ և հիմնավոր սպառնալիքներ:

Միևնույն ժամանակ, նշվել է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում անցանկալի համարվող օտարերկրացիների տվյալների բանկում քաղաքացու վերաբերյալ տվյալները ներառելու համար հիմք հանդիսացած տեղեկություններն ունեն գաղտնիության համապատասխան դրոշմագիր, հետևաբար դրանք չեն կարող տրամադրվել:

Հարկ է նկատել, որ նշված խնդրի կապակցությամբ իր դիրքորոշումն է հայտնել Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Այսպես, օրինակ՝ Դալեան ընդդեմ Ֆրանսիայի գործով դիմումատուի վերաբերյալ Շենգենյան տեղեկատվական համակարգում առկա է եղել մուտքի արգելք: Ըստ դիմումատուի՝ իրեն չի տրամադրվում հասանելիություն իր վերաբերյալ համակարգում առկա անձնական տվյալներին և չի ընձեռնվում հնարավորություն իրականացնելու շտկումներ: Նշված տվյալները համակարգ մուտքագրվել էին Ֆրանսիայի Անվտանգության հետախուզական գործակալության կողմից կազմված համապատասխան զեկույցի հիման վրա, որի հետևանքով անձին արգելվել էր մուտք գործել Շենգենյան համաձայնագիրը կիրառող երկրներ: Գործի շրջանակներում Դատարանն արձանագրել է, որ այն պարագայում, երբ անձի նկատմամբ կիրառվել է որևէ միջոց՝ ելնելով ազգային անվտանգության նկատառումներից, պետությունը պետք է երաշխավորի նրա պաշտպանվածությունը կամայականությունից: Այնուամենայնիվ, համաձայնագրի անդամ պետություններում նախատեսված են Շենգենյան գոտի մուտքի վերաբերյալ որոշումների մասով պետական մարմինների կողմից դրսևորած կամայականություններից քաղաքացիներին պաշտպանելու մի շարք միջոցներ: Դիմումատուն կարողացել էր խնդրո առարկա միջոցի վերանայման համար բողոք ներկայացնել Ֆրանսիայի իրավասու մարմիններին: Ընդ որում, թեև դիմումատուին հնարավորություն չի ընձեռվել վիճարկելու Շենգենյան տեղեկատվական համակարգում իր տվյալների ներառման հստակ հիմքերը, սակայն իրեն տրամադրվել էին մնացած բոլոր փաստաթղթերը: Ավելին, նա տեղեկացվել էր, որ Ֆրանսիայի Անվտանգության հետախուզական գործակալության կողմից կազմված համապատասխան զեկույցի հիմքում դրված են եղել պետական անվտանգությանը, պաշտպանությանը և հասարակական անվտանգությանը վերաբերող նկատառումներ: Դատարանն արձանագրել է նաև, որ դիմումատուին ամբողջ ծավալով տեղեկությունները կամ փաստաթղթերը չտրամադրելը չի կարող ինքնին վկայել, որ կիրառված միջամտությունը հիմնավորված չի եղել ազգային անվտանգության շահերով[415]:

Մեկ այլ գործով Դատարանը նշել է, որ ցանկացած կոնկրետ գործով, որոնք վերաբերում են ազգային անվտանգության նկատառումներին, ազգային իշխանությունների որոշումները չունեն վիճարկման բավարար եղանակներ: Այնուամենայնիվ, նույնիսկ այն դեպքում, երբ վտանգված է ազգային անվտանգությունը, օրինականության և օրենքի գերակայության հայեցակարգերը ժողովրդավարական

[415] Տե՛ս Դալեան ընդդեմ Ֆրանսիայի (Dalea v. France) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ 2010 թվականի փետրվարի 2-ի որոշումը, գանգատ թիվ 964/07, ինչպես նաև Եվրոպայի խորհուրդի և ՄԻԵԴ-ի կողմից պատրաստված Ազգային անվտանգության հարցերի վերաբերյալ եվրոպական նախադեպային իրավունքի վերաբերյալ 2013 թվականի զեկույցը https://rm.coe.int/168067d214 , 29.03.2024թ:

հասարակության մեջ պահանջում են, որ մարդու հիմնարար իրավունքների վրա ազդեցություն ունեցող միջոցները պետք է որևէ կերպ ենթարկվեն մրցակցային քննության՝ անկախ մարմնի կողմից, որն իրավասու է վերանայելու որոշումը, դրա պատճառները և համապատասխան ապացույցները[416]:

Վերոգրյալը նկատի ունենալով՝ Պաշտպանը կարևորում է պետության կողմից իրավունքի պաշտպանության անհրաժեշտ և բավարար միջոցների երաշխավորումը, այդ թվում՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի ապահովման նպատակով համապատասխան կառուցակարգերի մշակումն ու պատշաճ իրացումը:

Պաշտպանի աշխատակազմ ստացված մեկ այլ բողոքով փաստաբանը հայտնել է, որ հետախուզման մեջ գտնվող քաղաքացին էլեկտրոնային եղանակով միջնորդություն է հասցեագրել վարույթն իրականացնող մարմնին՝ խնդրելով ապահովել իր՝ որպես պաշտպանի մասնակցությունը քննչական մարմնում իրականացվող քրեական վարույթին: Փաստաբանը ներկայացրել է նաև վարույթն իրականացնող քննիչի որոշումը, որով քաղաքացու միջնորդությունը մերժվել է: Նշված որոշմամբ քննիչը, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 20-րդ, 43-րդ, 154-րդ և 190-րդ հոդվածներով նախատեսված իրավակարգավորումները՝ հանգել է եզրակացության, որ թեև այդ անձի նկատմամբ կայացվել է հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշում, սակայն դեռևս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով մեղադրանքը նրան չի ներկայացվել, իսկ նրա՝ մեղադրանք ներկայացնելու պահից իր ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունքի իրացման կապակցությամբ այլ օրենսդրական կարգ առկա չէ: Նշվել է, որ քրեական վարույթի շրջանակում հետախուզման մեջ գտնվող անձի (ում դեռևս մեղադրանքը չի ներկայացվել) պաշտպան ներգրավելու հիմքերն ու պայմանները բացակայում են:

Անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը սահմանված է ՀՀ Սահմանադրությամբ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետ

Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումը

«Քրեական մեղադրանք» հասկացությունը պետք է ընկալվի ոչ թե ձևական (փաստաթղթային), այլ բովանդակային (գործնական) իմաստով: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով «մեղադրանք» հասկացությունը կարող է ընդհանուր ձևով բնորոշվել որպես իրավասու մարմնի կողմից անձին տրված պաշտոնական ծանուցում վերջինիս կողմից հանցանք կատարած լինելու կասկածի առկայության մասին: Դա կարող է տեղի ունենալ նախքան գործը դատարան ուղարկելը, օրինակ՝ անձին ձերբակալելու, վերջինիս պաշտոնապես մեղադրանք առաջադրելու կամ մինչդատական

[416] Տե՛ս Յանովեցը և մյուսներն ընդդեմ Ռուսաստանի (Janowiec and Others v. Russia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարան Մեծ պալատի՝ 2013 թվականի հոկտեմբերի 21-ի վճիռը, գանգատներ թիվ 55508/07 և 29520/09, 213-214 կետեր:

վարույթը սկսելու ժամանակ: Առանձին դեպքերում անձի նկատմամբ «մեղադրանքի» առկայության մասին կարող է վկայել նաև այնպիսի միջոցներ ձեռնարկելը, որոնք ենթադրում են հանցագործության մեջ կասկածանքի առկայություն, ինչպես նաև էականորեն ներգործում են կասկածվող անձի դրության վրա[417]:

Սիմեոնովին ընդդեմ Բուլղարիայի գործով Եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ իրավաբանական օգնության հասանելիությունը կասկածյալին, որպես կանոն, պետք է երաշխավորել այն պահից, երբ նրան առաջադրվել է «քրեական մեղադրանք»՝ Կոնվենցիայով նախատեսված ինքնուրույն իմաստով[418]: Այս կապակցությամբ Դատարանն ընդգծել է, որ անձը 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքների կիրառության ենթակա՝ կասկածյալի կարգավիճակը ձեռք է բերում ոչ թե այն պահից, երբ նա պաշտոնապես ստանում է այդ կարգավիճակը, այլ՝ այն պահից, երբ ներպետական իրավասու մարմինները հնարավոր պատճառներ ունեն կասկածելու, որ անձը մասնակից է քրեական իրավախախտմանը[419]:

Եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ պաշտպանի կամ այլ օրինական ներկայացուցչի միջոցով ներկայացված լինելու իրավունքը կախված չէ մեղադրյալի ներկայությունից[420]: Չնայած որ օրենսդիրը պետք է անհարգելի բացակայությունն ապախրախուսելու հնարավորություն ունենա, այն չի կարող դրանց համար պատիժ սահմանել՝ ամրագրելով իրավաբանական օգնություն ստանալու իրավունքից բացառություններ: Ամբաստանյալների կողմից դատական նիստերին մասնակցելու իրավաչափ պահանջը կարող է բավարարվել այլ միջոցներով, որոնք չեն ենթադրում անձին պաշտպանության իրավունքից զրկում[421]: Որպեսզի իրավաբանական օգնության իրավունքը գործնական և արդյունավետ, այլ ոչ՝ զուտ տեսական լինի, դրա իրականացումը պետք է կախվածության մեջ չդրվի անհարկի ձևական պայմանների բավարարումից. դատարանները պետք է ապահովեն դատաքննության արդար լինելը և ըստ այդմ՝ ապահովեն, որ մեղադրյալի բացակայության պայմաններում նրան պաշտպանելու ակնհայտ նպատակի համար դատաքննությանը մասնակցող պաշտպանը դա անելու հնարավորություն ստանա[422]:

Վճռաբեկ դատարանը 2015 թվականի մարտի 27-ի թիվ ԵԿԴ/0121/11/14 որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«(…) Վերոգրյալը Վճռաբեկ դատարանին հիմք է տալիս փաստելու, որ բոլոր այն դեպքերում, երբ քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշում կայացնելիս հայտնի է ենթադրյալ հանցանք կատարած

[417] Տե՛ս Գ.Կ.-ն ընդդեմ Լեհաստանի (G.K. v. Poland) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռ, 2004թ., հունվարի 20, կետ 98, Սալովն ընդդեմ Ուկրաինիայի (Salov v. Ukraine) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռ, 2005թ., սեպտեմբերի 6, կետ 65, Շուբինսկին ընդդեմ Սլովենիայի (Šubinski v. Slovenia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռ, 2007թ., հունվարի 18, կետ 62

[418] Տե՛ս Սիմեոնովին ընդդեմ Բուլղարիայի (SIMEONOVI v. BULGARIA) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռ, 2017թ., մայիսի 12, կետ 110:

[419] Տե՛ս Տրուտենն ընդդեմ Ուկրաինայի (TRUTEN v. UKRAINE) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռ, 2016թ., սեպտեմբերի 23, կետ 66:

[420] Տե՛ս Գեյսեղեմն ընդդեմ Բելգիայի (GEYSEGHEM v. BELGIUM) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1999 թվականի հունվարի 21-ի վճիռը, կետ 34, Քամբփբելլն ու Ֆելը ընդդեմ Միացյալ Թագավորության (CAMPBELL AND FELL v. THE UNITED KINGDOM) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1984 թվականի հունիսի 28-ի վճիռ, կետ 99, Քրոմբախն ընդդեմ Ֆրանսիայի (KROMBACH v. FRANCE) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2001 թվականի մայիսի 13 վճիռը, կետ 89,

[421] Տե՛ս Տոլմաչովն ընդդեմ Էստոնիայի (TOLMACHEV v. ESTONIA) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2015 թվականի հոկտեմբերի 9-ի վճիռ, կետ 48:

[422] Տե՛ս Վան Գեյսեղեմն ընդդեմ Բելգիայի (VAN GEYSEGHEM v. BELGIUM) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1999 թվականի հունվարի 21-ի վճիռը, կետ 33, Փելադոան ընդդեմ Նիդերլանդների (PELLADOAH v. THE NETHERLANDS) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1994 թվականի սեպտեմբերի 22-ի վճիռը, կետ 41:

անձը և վերջինիս անունը հիշատակվում է վերոհիշյալ դատավարական փաստաթղթերում, այլ կերպ՝ փաստվում է համապատասխան անձի կողմից հանրորեն վտանգավոր արարքի կատարումը, ապա կարելի է արձանագրել մեղադրանքի՝ փաստացի քրեական հետապնդման առկայության մասին: ***Հետևաբար՝ փաստացի քրեական հետապնդման ենթարկված անձի դատավարական իրավունքների, մասնավորապես՝ պաշտպանության իրավունքի անհամաչափ սահմանափակում թույլ չտալու համար վերջինս պետք է օգտվի օրենքով չարգելված բոլոր միջոցներով իր իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանության հնարավորությունից:***

Վճռաբեկ դատարանի այս հետևությունը հիմնված է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ պարբերության այն պահանջի վրա, որ պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով ու ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Իսկ անմիջականորեն գործող իրավունքը չի կարող լինել վերացական:

Այս հարցում Եվրոպական դատարանը ևս արտահայտել է համանման դիրքորոշում: Մասնավորապես, Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիան կոչված է երաշխավորելու ոչ թե տեսական և պատրանքային, այլ գործնականում և արդյունավետ իրականացվող իրավունքներ: Դա հատկապես վերաբերում է պաշտպանության իրավունքին (տե՛ս Արտիկոն ընդդեմ Իտալիայի (Artico v. Italy) գործով վճիռ, 1980թ., մայիսի 13, կետ 33, Հերմին ընդդեմ Իտալիայի (Hermi v. Italy) գործով վճիռ, 2006թ., հոկտեմբեր 18, կետ 95): (…)»:»

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 45-րդ հոդվածի համաձայն՝

«1. Փաստաբանը մեղադրյալի պաշտպանությունն ստանձնում է՝

1) մեղադրյալի, նրա օրինական ներկայացուցչի, մերձավոր ազգականի, ինչպես նաև այլ անձանց հրավերով՝ մեղադրյալի հետագա գրավոր համաձայնությամբ.

(…)

5. Պաշտպանությունն ստանձնելուց անմիջապես հետո պաշտպանը վարույթն իրականացնող մարմին ներկայացնում է՝

1) անձը հաստատող փաստաթուղթ.

2) փաստաբան լինելու հանգամանքը հավաստող փաստաթուղթը.

3) իր լիազորությունները հաստատող և սույն օրենսգրքով պաշտպան հրավիրելու իրավունք ունեցող անձի ստորագրությամբ վավերացված փաստաթուղթը կամ պաշտպան նշանակելու մասին իրավասու մարմնի որոշումը:

(…):

Նույն օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն՝

4. Պաշտպանը պարտավոր է՝

(…)

1) պաշտպանությունն ստանձնելուց անմիջապես հետո այդ մասին տեղյակ պահելու վարույթն իրականացնող մարմնին.

(…):»

Վկայակոչված իրավակարգավորումներից և նախադեպային որոշումներից բխում է, որ անձի պաշտպանության իրավունքը չպետք է կրի պատրանքային բնույթ: Միևնույն ժամանակ, չնայած ներկայացված կոնկրետ խնդրի առկայությանը նախորդող տարվա ընթացքում՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ուսումնասիրությունները վկայում են, որ բազմաթիվ դեպքերում հետախուզման մեջ

գտնվող մեղադրյալին, ում ևս մեղադրանք ներկայացված չի եղել, պատշաճ կերպով հնարավորություն է ընձեռվել իրացնելու իր պաշտպանության իրավունքը փաստաբանի միջոցով:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է վկայակոչված ներպետական և միջազգային չափանիշների խստիվ պահպանմամբ գործնականում բացառել փաստաբանի մուտքի և վստահորդին տեսակցելու արգելքի, ինչպես նաև փաստաբանի օրինական գործունեությանը այլ կերպ խոչընդոտելու ցանկացած դրսևորում:

3. Փաստաբանների նկատմամբ բռնության անթույլատրելիությունը

2023 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում արձանագրվել է մասնագիտական գործունեություն իրականացնող փաստաբանների նկատմամբ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողների կողմից ենթադրյալ բռնության գործադրման երկու դեպք:

Մարդու իրավունքների պաշտպանն ընդգծում է, որ բռնությունն առհասարակ անընդունելի է: Հատկապես մտահոգիչ են իրավապահ մարմինների ներկայացուցիչների, այդ թվում՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողների կողմից բռնության դեպքերը մասնագիտական գործունեություն իրականացնող փաստաբանների նկատմամբ:

Փաստաբանի մասնագիտական աշխատանքն արդարադատության գործընթացի անբաժան մասն է: Առանց այդ աշխատանքի հնարավոր չէ ունենալ իրավունքի գերակայության վրա հիմնված արդարադատություն: Որքան պաշտպանված ու անկախ է փաստաբանը, այնքան բարձր է որակյալ արդարադատության երաշխիքը:

Այս առումով Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է պետության կողմից ինչպես կանխարգելիչ համապատասխան միջոցառումների իրականացումն, այնպես էլ դեպքերի առկայության պարագայում դրանց արդյունավետ քննությունը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը վերոգրյալ դեպքերից յուրաքանչյուրի կապակցությամբ կայացրել է սեփական նախաձեռնությամբ հարցի քննարկում սկսելու մասին որոշումներ, որոնց շրջանակում անհրաժեշտ պարզաբանումների պահանջով գրություններ են հասցեագրվել ՀՀ ոստիկանություն և ՀՀ գլխավոր դատախազություն: Դեպքերի առթիվ Պաշտպանը հանդես է եկել նաև հրապարակային հայտարարություններով[423], պարբերաբար հարցը քննարկել է իրավասու պետական մարմինների ներկայացուցիչների հետ:

Այսպես, 2023 թվականի փետրվարի 10-ին զանգվածային լրատվամիջոցներով տեղեկություն է տարածվել այն մասին, որ 2023 թվականի փետրվարի 8-ին ՀՀ ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Էրեբունու բաժնի օպերատիվ հետախուզական բաժնի ծառայողները բիրտ ուժի կիրառմամբ Ոստիկանության բաժին բերման են ենթարկել անչափահաս ուսանողների, վերջիններիս ծեծի ենթարկել և խոշտանգել:

Ըստ տարածված տեղեկատվության՝ հաջորդ օրը՝ փետրվարի 9-ին, անչափահասներին իրավաբանական օգնություն տրամադրելու նպատակով՝ Ոստիկանության Էրեբունու բաժին ներկայացած փաստաբանների՝ Մարզպետ Ավագյանի և Էմանուել Անանյանի նկատմամբ Ոստիկանության ծառայողները շուրջ 4 րոպե անընդմեջ

[423] Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2474 հղումով, 29.03.2024թ:

բռնություն են գործադրել, նրանց ծեծի ենթարկել՝ հնչեցնելով սպառնալիքի խոսքեր և սեռական բնույթի հայհոյանքների խոսքեր՝ իրենց մասնագիտական գործունեության կապակցությամբ:

Բացի դրանից, 2023 թվականի փետրվարի 8-ին Մարդու իրավունքների պաշտպանի թեժ գծի հեռախոսահամարին են զանգահարել նաև անչափահասների փաստաբանները: Փաստաբաններից մեկը տեղեկացրել է, որ իր պաշտպանյալին բերման են ենթարկել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Էրեբունու բաժին, սակայն արդեն տևական ժամանակ բաժնի աշխատակիցները իրեն թույլ չեն տալիս տեսակցել վստահորդին: Այնուամենայնիվ Պաշտպանի աշխատակազմի միջամտության արդյունքում փաստաբանը կարողացել է տեսակցել իր պաշտպանյալի հետ: Բաժին մուտքը ապահովվելուց հետո փաստաբաններից մեկը Պաշտպանի աշխատակազմ լրացուցիչ տեղեկություն է ներկայացրել այն մասին, որ անչափահասը ծեծի է ենթարկվել ոստիկանության բաժնում, վերջինիս դեմքին և մարմնի այլ մասերին առկա են եղել վնասվածքներ, հագուստը եղել է պատռված:

Սեփական նախաձեռնությամբ հարցի քննարկման ընթացքում Պաշտպանի ներկայացուցիչը կապի մեջ է գտնվել նաև փաստաբաներ Էմանուել Անանյանի և Մարզպետ Ավագյանի հետ: Պարզվել է, որ Ոստիկանության ծառայողների կողմից բռնություն գործադրելու դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակում երկու փաստաբանները ճանաչվել են տուժող, նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն:

Հետագայում Գլխավոր դատախազության հետ իրականացված գրագրությամբ, ի թիվս այլնի, պարզաբանումներ են պահանջվել քրեական վարույթով իրականացվող նախաքննության և վարութային գործողությունների վերաբերյալ փաստաբանների կողմից ներկայացված մտահոգությունների և խնդիրների առնչությամբ: ՀՀ դատախազությունից և ՀՀ ՆԳՆ ոստիկանությունից ստացվել են համապատասխան պարզաբանումներ:

Մասնավորապես, Ոստիկանությունից ստացվել է պարզաբանում առ այն, որ վերոնշյալ դեպքի առթիվ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում իրականացվող ծառայողական քննությունը կասեցվել է՝ նկատի ունենալով, որ ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ: Միևնույն ժամանակ, տեղեկություն է ստացվել առ այն, որ Ոստիկանության Էրեբունու բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի օպերլիազորները ազատվել են զբաղեցրած պաշտոններից՝ գրանցվելով Ոստիկանության կադրերի ռեզերվում:

Դատախազության ներկայացրած տեղեկատվության համաձայն՝ 2023 թվականի հոկտեմբերի 9-ին հաստատվել է Ոստիկանության Էրեբունու բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալի, օպերլիազորի, ինչպես նաև մեկ այլ անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությունն ու վարույթի նյութերի հետ հանձնվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

2023 թվականի հունիսի 12-ին զանգվածային լրատվության միջոցներով տարածվել է տեղեկություն այն մասին, որ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Կենտրոնական բաժնում մասնագիտական պարտականությունները կատարելու համար ներկայացած փաստաբանը ոստիկանության ծառայողների կողմից ենթարկվել է բռնության:

Մարդու իրավունքների պաշտպանի հանձնարարությամբ Պաշտպանի ներկայացուցիչը կապ է հաստատել փաստաբան Կարեն Ալավերդյանի հետ, ով

մանրամասներ է ներկայացրել իր և իր պաշտպանյալի նկատմամբ գործադրված բռնության վերաբերյալ: Ի թիվս այլնի՝ փաստաբանը տեղեկացրել է, որ ինչպես իրեն, այնպես էլ իր վստահորդին բռնության ենթարկելու պահին համապատասխան աշխատասենյակներում գտնվել են Ոստիկանության Պարեկային ծառայության 5-6 աշխատակիցներ, որոնց մոտ բացակայել են իրենց համազգեստի պարտադիր մաս կազմող տեսախցիկները: Հավելել է նաև, որ նույն օրը ներկայացրել է խոշտանգման վերաբերյալ հանցագործության մասին հաղորդում:

Փաստաբանի տեղեկացմամբ՝ միջադեպի առթիվ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակում իրեն և իր վստահորդին մեղադրանք է առաջադրվել: Ավելին, վարույթն իրականացնող մարմնի կողմից իր պաշտպանյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդություն է ներկայացվել դատարան:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանը կայացրել է սեփական նախաձեռնությամբ քննարկում սկսելու մասին որոշում, որի շրջանակում անհրաժեշտ պարզաբանումների պահանջով համապատասխան գրություններ են ուղարկվել ՀՀ ՆԳՆ և ՀՀ գլխավոր դատախազություն: Բացի այդ, Պաշտպանն ընդունել է փաստաբան Կարեն Ալավերդյանին, լսել դեպքի հանգամանքների վերաբերյալ վերջինիս կողմից ներկայացված մանրամասները և վարույթի քննության առնչությամբ մտահոգությունները:

ՀՀ ՆԳՆ ոստիկանությունից ստացված պարզաբանման համաձայն՝ Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժնում 2023 թվականի հունիսի 7-ին Ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացուն և ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Կարեն Ալավերդյանին ծեծի ենթարկելու ենթադրյալ դեպքի առթիվ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում իրականացվում է ծառայողական քննություն:

Դատախազությունից ստացվել են պարզաբանումներ առ այն, որ ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Կարեն Ալավերդյանի կողմից ներկայացված հանցանքի մասին հաղորդման հիման վրա պաշտոնատար անձ հանդիսացող ՀՀ ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնի ծառայողների կողմից խոշտանգում կատարելու առերևույթ դեպքի առթիվ 2023 թվականի հունիսի 8-ին ՀՀ քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել է քրեական վարույթ: Հիշյալ վարույթով իրականացվում են ապացուցողական և այլ վարութային գործողություններ, այդ թվում՝ Կարեն Ալավերդյանը ճանաչվել է տուժող, որոշում է կայացվել նրա վերաբերյալ դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին, միջոցներ են ձեռնարկվել դեպքի վայրում տեսագրող սարքերի տեսագրությունների առկայությունը պարզելու և դրանք առգրավելու ուղղությամբ:

Բացի այդ, Կարեն Ալավերդյանի վստահորդի և նրա եղբոր նկատմամբ պաշտոնատար անձանց կողմից բռնություն գործադրելով, իրենց պաշտոնեական լիազորություններն անցնելու առերևույթ դեպքի առթիվ վստահորդի մոր հաղորդման հիման վրա 2023 թվականի հունիսի 13-ին ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով նախաձեռնվել է քրեական վարույթ, որը 2023 թվականի հունիսի 20-ին միացվել է փաստաբանի հաղորդման կապակցությամբ նախաձեռնված քրեական վարույթին:

Դրա հետ մեկտեղ, ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Կարեն Ալավերդյանի մասնագիտական գործունեության հետ կապված՝ վերջինիս նկատմամբ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ իրենց իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով բռնություն գործադրելու առերևույթ դեպքի առթիվ 2023 թվականի հունիսի 21-ին ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 490-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախաձեռնվել է քրեական վարույթ, որը նույն օրը միացվել է վերոնշյալ վարույթին:

Կ. Ալավերդյանի վստահորդը ճանաչվել է տուժող և հարցաքննվել է, իսկ դեպքի վայրում առկա տեսախցիկների, այդ թվում՝ պարեկային ծառայության աշխատակիցներին կցված տեսախցիկների ձայնագրությունները ձեռք բերելու ուղղությամբ ձեռնարկվել են անհրաժեշտ գործողություններ:

2023 թվականի հուլիսի 10-ին հսկող դատախազի կողմից որոշումներ են կայացվել ՀՀ ոստիկանության Կենտրոնականի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետի և նրա տեղակալի, իսկ 2023 թվականի հուլիսի 17-ին՝ նույն բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին, իսկ նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել պաշտոնավարման կասեցումը և ՀՀ-ից բացակայելու արգելքը:

Դատախազությունից ստացված տեղեկատվություն համաձայն՝ նախաքննության ներկա փուլում հիշյալ քրեական վարույթի նկատմամբ իրականացվում է պատշաճ դատախազական հսկողություն, իրականացվում է արդյունավետ և անկախ նախաքննություն, բացի այդ՝ հսկող դատախազի կողմից վարույթն իրականացնող մարմնին տրվել է համապատասխան վարույթային գործողությունների միջոցով քրեական վարույթի համար նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ պարզելու վերաբերյալ հանձնարարություն:

Պաշտպանի աշխատակազմում շարունակվում է սեփական նախաձեռնությամբ սկսված քննարկման ընթացակարգը, և փաստաբանների նկատմամբ ենթադրյալ բռնության դեպքի առթիվ նախաձեռնված վարույթների քննությունը գտնվում է Պաշտպանի ուշադրության կենտրոնում:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանը կրկին ընդգծում է, որ իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից մասնագիտական գործունեություն իրականացնող փաստաբանի նկատմամբ բռնության ցանկացած դրսևորում անթույլատրելի է ու խիստ մտահոգիչ: Այդ առումով Պաշտպանը կարևորում է ինչպես նշված երևույթների կանխարգելմանն ուղղված քայլերի ձեռնարկումն, այնպես էլ դեպքերի առնչությամբ հնարավոր սեղմ ժամկետներում արդյունավետ քննության իրականացումն ու հանրային հաշվետվողականության ապահովումը:

ԳԼՈՒԽ 5. ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՅԼ ԽՆԴԻՐՆԵՐ

1. ՀՀ ՆԳՆ ոստիկանության Ճանապարհային ոստիկանության և Պարեկային ծառայության գործունեությանն առնչվող բողոքներով բարձրացված խնդիրներ

2023 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում ստացվել են բողոքներ ՀՀ ՆԳՆ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության, ինչպես նաև Պարեկային ծառայության գործունեության առնչությամբ:

Ճանապարհային ոստիկանությանն առնչվող բողոքների հիմնական մասը վերաբերել է վարորդական վկայական ստանալու նպատակով էլեկտրոնային համակարգով քննություններին մասնակցելու հայտ լրացնելու հետ կապված խնդիրներին: Նշվածը վկայում է, որ դեռևս արդիական է Ճանապարհային ոստիկանության հաշվառման-քննական ստորաբաժանումների ծանրաբեռնվածության խնդիրը, ինչին մանրամասն անդրադարձ է կատարվել նաև Մարդու իրավունքների պաշտպանի 2020 և 2021 թվականների տարեկան հաղորդումներում [424]:

2023 թվականի ընթացքում ստացված բողոքներից մեկով քաղաքացին տեղեկացրել է, որ էլեկտրոնային համակարգով գրանցվել է վարորդական վկայական ստանալու համար քննություն հանձնելու նպատակով, սակայն մի քանի ամիս իր հետ հետադարձ կապ չի հաստատվել և որևէ տեղեկություն չունի քննության օրվա նշանակման վերաբերյալ: Մեկ այլ բողոքով քաղաքացին հայտնել է, որ չի կարողանում էլեկտրոնային համակարգով գրանցվել վարորդական վկայականի քննությանը մասնակցելու համար:

Պաշտպանի աշխատակազմում ստացված մեկ այլ բողոքով քաղաքացին հայտնել է, որ վարորդական իրավունքի վկայական ստանալու համար դրական հանձնել է տեսական քննությունը, որից հետո առցանց գրանցվել է գործնական քննություն հանձնելու համար: Դրանից հետո ստացել է հաղորդագրություն այն մասին, որ գործնական քննություն հանձնելու նպատակով անհրաժեշտ է ներկայանալ հաշվառման-քննական բաժին, սակայն հաշվառման բաժնում իրեն չեն թույլատրել մասնակցել գործնական քննությանն այն պատճառաբանությամբ, որ տեսական քննությունը հանձնելուց հետո գործնական քննությունը հանձնելու համար սահմանված մեկ տարի ժամկետը լրացել է: Մինչդեռ, քաղաքացին նշել է, որ ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 26-ի թիվ 385-Ն որոշման 1-ին հավելվածով սահմանված՝ տեսական քննությունը դրական հանձնելուց հետո մինչև մեկ տարին լրանալն է ինքը դիմել գործնական քննությանը մասնակցելու համար և մեղավորություն չունի, որ հրավիրվել է գործնական քննություն հանձնելու մեկ տարվա ժամկետը լրանալուց հետո:

Նշվածի կապակցությամբ Պաշտպանի ներկայացուցիչների կողմից Ճանապարհային ոստիկանության հետ գրագրության արդյունքում բողոքով բարձրացված խնդիրը լուծվել է, քաղաքացին հրավիրվել է հաշվառման-քննական ստորաբաժանում, մասնակցել է վարորդական վկայական ստանալու գործնական քննության, որի արդյունքը գնահատվել է դրական և վերջինիս տրամադրվել է վարորդական վկայականը:

Վերոգրյալից բացի, դեռևս արդիական է մնում ճանապարհային երթևեկության կանոնների խախտման կապակցությամբ անձին պատշաճ չծանուցելու խնդիրը:

[424] Տե՛ս 2020 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդումը՝ 628-630 էջեր, 2021 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդումը՝ 596-601 էջեր https://ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf, 29.03.2024թ :

Մասնավորապես՝ 2023 թվականի ընթացքում ևս բողոքներ են ստացվել այն մասին, որ ճանապարհային երթևեկության խախտման կապակցությամբ վարչական տույժ նշանակելու մասին որոշման մասին անձինք տեղեկանում են միայն ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից կատարողական վարույթի շրջանակում բանկային հաշիվների վրա արգելանք կիրառելու արդյունքում:

2023 թվականի ընթացքում ավարտվել է Պարեկային ծառայության գործարկումը բոլոր մարզերում: Տարեկան հաղորդման աշխատանքների նախապատրաստման շրջանակում ՀՀ ներքին գործերի նախարարությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ Պարեկային ծառայության հաստիքները 2023 թվականի դեկտեմբերի դրությամբ համալրված են 90.3%-ով: Ըստ Ոստիկանության կողմից տրամադրված տեղեկատվության՝ 2023 թվականի ընթացքում Պարեկային ծառայության կողմից բացահայտվել է 3.865 հանցագործության դեպք, ինչպես նաև քրեական վարույթի շրջանակում իրականացվել է դեպքի վայրի պահպանություն:

Բացի այդ, Պարեկային ծառայության կողմից կազմվել են 676.276 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություններ և որոշումներ: Պարեկային ծառայության վարչական բողոքների քննության բաժանմունք ստացվել են 14.001 դիմում-բողոքներ, որոնց արդյունքում 3.373 վարչական ակտեր բեկանվել են: Հասարակական կարգի և ճանապարհային երթևեկության անվտանգությունն ապահովելիս Պարեկային ծառայողների կողմից վարչական իրավախախտման վերաբերյալ ստացվել է 2.500 հայցադիմում, որից բավարարվել է 469-ը:

Պաշտպանը դրական է համարում Ոստիկանության համակարգում մասնագիտացված նոր ծառայության ձևավորումը, ինչպես նաև Պարեկային ծառայությունում համալրվող և համալրված կադրերի հետ տարվող աշխատանքը: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ 2023 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում մի շարք բողոքներ են ստացվել Պարեկային ծառայության աշխատակիցների գործողությունների վերաբերյալ:

Բողոքների հիմնական մասը վերաբերել է սեփականության իրավունքով անձանց պատկանող տրանսպորտային միջոցներն առանց անհրաժեշտ և բավարար հիմնավորման Ոստիկանության հատուկ պահպանվող տարածք տեղափոխելուն և տևական ժամանակ չվերադարձնելուն:

Բողոքներից մեկով անձը տեղեկացրել է, որ իր տրանսպորտային միջոցով երթևեկելիս իրեն կանգնեցրել են Պարեկային ծառայության աշխատակիցները, որի արդյունքում պարզվել է, որ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից տրանսպորտային միջոցը գտնվում է հետախուզման մեջ: Արդյունքում՝ ավտոմեքենան տեղափոխվել է հատուկ պահպանվող տարածք: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում համապատասխան գումարը վճարելուց հետո Պարեկային ծառայողները հրաժարվել են թույլատրել տրանսպորտային միջոցը դուրս բերել հատուկ պահպանվող տարածքից, քանի որ, ըստ Պարեկային ծառայության աշխատակիցների՝ տրանսպորտային միջոցի կողային ապակիների թաղանթը եղել է լուսաթափանցելիության չափի խախտմամբ, և տրանսպորտային միջոցը դուրս բերել հնարավոր է միայն նշված խախտումը վերացնելուց հետո:

Փաստաբանի կողմից Պաշտպանի աշխատակազմ բողոք է ստացվել նաև այն մասին, որ Պարեկային ծառայության աշխատակիցները կանգնեցրել են իր վստահորդի

տրանսպորտային միջոցը և կայացրել վարչական տույժ նշանակելու մասին որոշում՝ տրանսպորտային միջոցի ապակիների թաղանթը լուսաթափանցելիության չափի խախտմամբ երթևեկելու հիմքով: Ըստ տեղեկացման՝ դրանից հետո տրանսպորտային միջոցը Պարեկային ծառայողների կողմից առանց որևէ պատճառաբանության տեղափոխվել է հատուկ պահպանվող տարածք:

Հարկ է նշել, որ Պաշտպանի աշխատակազմի և Պարեկային ծառայության համագործակցության արդյունքում, արագ արձագանքման շրջանակներում, անձանց կողմից բարձրացված խնդիրների գերակշիռ մասը ստացել է լուծում:

Այնուամենայնիվ, Պաշտպանն արձանագրում է, որ տրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխելու և այնտեղ պահելու հիմքերը հստակ նախատեսված են «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 181 հոդվածով (որը սահմանում է տրանսպորտային միջոցները հատուկ տարածք բերման ենթարկելու և արգելանքի տակ դնելու կարգը), և մտահոգիչ է համարում օրենքով սահմանված հիմքերի և կարգի խախտմամբ տրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխելը և այնտեղ պահելը:

Այս համատեքստում Պաշտպանը հատուկ ընդգծում և իրավասու մարմինների ուշադրությունն է հրավիրում այն հանգամանքին, որ տրանսպորտային միջոցը հատուկ տարածք կարող է տեղափոխվել և արգելանքի տակ դրվել բացառապես օրենքով սահմանված հիմքերի առկայության պարագայում և օրենքով սահմանված կարգով: Ուստի, անհրաժեշտ է բացառել անձանց սեփականության սահմանադրական և կոնվենցիոն իրավունքի միջամտության այնպիսի դեպքերը, որոնք չեն բավարարում միջազգային և ներպետական չափանիշներին:

Պաշտպանի աշխատակազմում բողոքներ են ստացվել նաև այն մասին, որ Պարեկային ծառայողների կողմից անձանց նկատմամբ կայացվում են վարչական տույժ նշանակելու մասին առերևույթ անհիմն որոշումներ, և այդ ընթացքում բացարձակապես հաշվի չեն առնվում վերջիններիս կողմից ներկայացված հիմնավորումներն ու պատճառաբանությունները: Օրինակ՝ ստացված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ իրեն են մոտեցել Պարեկային ծառայության աշխատակիցները և տեղեկացրել, որ իր կողմից վարած տրանսպորտային միջոցի գույնը և հաշվառման համարանիշները տարբեր են: Արդյունքում՝ կայացված որոշմամբ անձը զրկվել է վարորդական իրավունքից: Բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ Պարեկային ծառայողների կողմից հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ տվյալ տրանսպորտային միջոցը սեփականության իրավունքով պատկանում է կազմակերպությանը, որում նա աշխատում է, իսկ հաշվառման համարանիշները սխալմամբ տեղադրվել են այլ մեքենայի վրա:

Նշվածի հաշվառմամբ Պարեկային ծառայությունից ստացվել է պարզաբանում առ այն, որ Պարեկային ծառայության վարչական բողոքների քննության բաժանմունքում իրականացված վարչական բողոքարկման արդյունքում վարչական ակտը բեկանվել է, և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճվել:

Պաշտպանը ողջունելի է համարում Ներքին գործերի նախարարությունից ներկայացված տեղեկատվությունն առ այն, որ Ոստիկանության և Պարեկային ծառայության կողմից պարբերաբար հրահանգավորումներ են անցկացվում քաղաքացիների նկատմամբ բարեվարք վերաբերմունք ցուցաբերելու ուղղությամբ, իրականացվում են այլ կազմակերպական միջոցառումներ, ինչպես նաև ծառայողների մասնագիտական գիտելիքները և հմտությունները կատարելագործելու ուղղությամբ

անցկացվում են վերապատրաստման դասընթացներ: Միևնույն ժամանակ, Պաշտպանը կարևորում է ոլորտում առկա խնդիրների լուծման համակարգային կառուցակարգերի մշակումն ու գործարկումը:

Վերը նշվածից բացի, 2023 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում բողոքներ են ստացվել նաև Պարեկային ծառայության աշխատակիցների կողմից իրականացված վարչարարության, այդ թվում՝ օրենքով սահմանված ծխախոտային արտադրատեսակի օգտագործման արգելքը խախտելու համար նախաձեռնված վարույթների վերաբերյալ: Մասնավորապես, անձինք նշել են, որ իրենց նկատմամբ կայացվում են վարչական տույժ նշանակելու մասին որոշումներ այն դեպքում, երբ կոնկրետ վայրերում ծխախոտ օգտագործելն արգելված չէ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 173.2-րդ հոդվածի 1-ին մասով պատասխանատվություն է նախատեսվում օրենքով սահմանված ծխախոտային արտադրատեսակի կամ ծխախոտային արտադրատեսակի փոխարինիչների օգտագործման կամ օգտագործման սահմանափակման արգելքը խախտելու համար: Ծխախոտային արտադրատեսակների և ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործմանը ներկայացվող արգելքներն ու սահմանափակումները հստակ նախատեսված են «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով: Ուստի, յուրաքանչյուր դեպքով ծխախոտ օգտագործելու համար անձի նկատմամբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելիս և վարչական տույժ նշանակելու մասին որոշում կայացնելիս անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել **օրենքով ամրագրված արգելված վայրերից որևէ մեկում ծխախոտ ծխելու հանգամանքը:**

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ ծխախոտ օգտագործելու համար իր նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 50 000 ՀՀ դրամի չափով, սակայն որևէ իրավախախտում չի կատարել, քանի որ օրենքով ծխախոտային արտադրատեսակների օգտագործումը տվյալ վայրում արգելված չի եղել: Բացի այդ, նշել է, որ վարչական լսմանը մասնակցելու վերաբերյալ ծանուցագիրը ստացել է վարչական լսում նշանակված լինելու օրը, սակայն ավելի ուշ ժամի: Ծանուցագիրը ստանալուց հետո դիմել է Ոստիկանության բաժին, սակայն իր լսված լինելու իրավունքը կրկին չի ապահովվել:

Մեկ այլ բողոքով անձը հայտնել է, որ իր նկատմամբ տուգանք է նշանակվել կանգառի ծածկի տակ ծխախոտ օգտագործելու համար: Մինչդեռ, կանգառի ծածկի տակ չի ծխել, այլ ծխել է կանգառի ծածկից դուրս գտնվող աղբամանի մոտ, իսկ արձանագրությունում կանգառի ծածկի տակ ծխելու մասին գրել է Ոստիկանության ծառայողի հորդորով՝ միաժամանակ նշելով, որ ծխել է աղբամանի մոտ: Բացի այդ, նշել է, որ վարչական լսմանը մասնակցելու վերաբերյալ ծանուցագիրը ստացել է վարչական լսման նախատեսված օրվանից ավելի ուշ, ինչի արդյունքում իր լսված լինելու իրավունքը չի ապահովվել:

Ծխախոտ ծխելու համար պատասխանատվության ենթարկվելու վերաբերյալ Պաշտպանին հասցեագրված այլ բողոքներով ևս բարձրացվել են վարչական լսման իրավունքը չապահովելու, վարչական ակտին ներկայացվող պահանջները չպահպանելու հարցեր: Դրանից բացի, ներկայացված բողոքներով բարձրացվել են վարչական լսմանը մասնակցելու վերաբերյալ ծանուցագիր չուղարկելու, իր նկատմամբ կայացված վարչական

ակտն այլ անձի անունով ուղարկելու վերաբերյալ հարցեր, ինչի արդյունքում անձը զրկվել է կայացված վարչական ակտի իրավաչափության վերաբերյալ իր դիրքորոշումը հայտնելու (լսված լինելու), ինչպես նաև սահմանված ժամկետում վարչական ակտը բողոքարկելու իրավունքից:

Նշված դեպքերի մեծ մասի պարագայում Պաշտպանի միջամտությամբ և Ոստիկանության հետ համագործակցության արդյունքում վիճարկվող վարչական ակտերը ճանաչվել են անվավեր: Այնուամենայնիվ, Պաշտպանը մտահոգիչ է համարում նշված պրակտիկայի շարունակականությունը: Պաշտպանն ընդգծում է, որ Ոստիկանության կողմից անձանց նկատմամբ վարչական տույժ նշանակելու մասին որոշումները պետք է կայացվեն օրենսդրության պահանջների պահպանմամբ՝ ապահովելով պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի իրացումը:

Վերոգրյալ հաշվառմամբ՝ Պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է.

- ✓ ***մշակել և գործարկել կառուցակարգեր՝ վարորդական վկայական ստանալու համար անձանց հնարավորինս սեղմ ժամկետում քննությանը մասնակցելու հնարավորություն ընձեռելու նպատակով,***
- ✓ ***վարչական տույժ նշանակելու բոլոր դեպքերում միջոցներ ձեռնարկել անձին դրա վերաբերյալ պատշաճ ծանուցելու ուղղությամբ,***
- ✓ ***բացառել տրանսպորտային միջոցն՝ առանց անհրաժեշտ և բավարար հիմնավորումների և օրենսդրությամբ չնախատեսված դեպքերում ու կարգով, հատուկ տարածք տեղափոխելու և արգելանքի տակ դնելու պրակտիկան,***
- ✓ ***բացառել օրենքով չարգելված վայրում ծխախոտ օգտագործելու համար անձին վարչական պատասխանատվության ենթարկելու պրակտիկան, ինչպես նաև տվյալ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելիս և վարչական տույժ նշանակելու մասին որոշում կայացնելիս խստագույնս պահպանել օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ անձի լսված լինելու իրավունքը:***

2. Ներխուժումը կանխելիս կամ վերացնելիս ՀՀ ՆԳՆ ոստիկանության լիազորությունների իրացման ընթացքում վեր հանված գործնական խնդիրներ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն իր նախորդ տարիների տարեկան հաղորդումներում մշտապես անդրադարձել է ներխուժումը կանխելիս կամ վերացնելիս ՀՀ ոստիկանության լիազորությունների կատարման ընթացքում արձանագրված գործնական խնդիրներին: Մասնավորապես, Պաշտպանն իր 2021 թվականի տարեկան հաղորդմամբ մանրամասն ներկայացրել է խնդրո առարկա հարաբերությունները կարգավորող՝ ՀՀ կառավարության 2021 թվականի հունվարի 21-ի խմբագրությամբ «Ներխուժումը կանխելու կամ վերացնելու նպատակով անշարժ գույքի օրինական տիրապետողի կողմից ոստիկանությանը լիազորելու, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում, շենքում կամ շինությունում կամ այլ անշարժ գույքի տարածքում ապօրինաբար գտնվող ուրիշի շարժական գույքը հեռացնելու, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ֆիզիկական անձի կամ ֆիզիկական անձի և շարժական գույքի ներխուժումը վերացնելու, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ազատելու վերաբերյալ պահանջ ներկայացնելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» թիվ 797-Ն որոշմամբ

սահմանված ընթացակարգերին, այդ թվում՝ օրենսդրական մակարդակում առկա որոշակի բացերի արդյունքում առաջացած խնդիրներին՝ վերահաստատելով դիրքորոշումն առ այն, որ օրենսդրական համապատասխան կարգավորումների բացակայությունը չպետք է հանգեցնի իրավունքների սահմանափակման[425]:

Հարկ է արձանագրել, որ 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին շարունակվել են հասցեագրվել ներխուժումը կանխելիս կամ վերացնելիս ՀՀ ՆԳՆ ոստիկանության գործողությունների վերաբերյալ տարաբնույթ բողոքներ:

Ստացվող բողոքների մի մասը վերաբերել է այն հանգամանքին, որ Ոստիկանության կողմից անձին տրվել է ողջամիտ ժամկետ անշարժ գույքի տարածքը լքելու համար, անձն այդ ընթացքում Ոստիկանության ծառայողների գործողությունների իրավաչափության դեմ ՀՀ վարչական դատարան է ներկայացրել հայցադիմում՝ վտարելուն ուղղված գործողություններ կատարելուց ձեռնպահ մնալուն պարտավորեցնելու պահանջի մասին, և զուգահեռաբար ներկայացրել է հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդություն, սակայն Ոստիկանությունն իրականացնում է ներխուժումը կանխելուն կամ վերացնելուն ուղղված գործողություններ՝ չսպասելով դատարանի կողմից համապատասխան որոշում կայացնելուն:

Չնայած այն հանգամանքին, որ նշված դեպքերի մեծ մասի պարագայում Մարդու իրավունքների պաշտպանի միջամտությամբ և Ոստիկանության հետ համագործակցության արդյունքում դիմողներին տրամադրվել է լրացուցիչ ժամկետ՝ մինչև վարույթներով որոշումների կայացումը՝ Պաշտպանն ընդգծում է, որ մինչև դատարանի համապատասխան որոշման կայացումը Ոստիկանության կողմից ներխուժումը կանխելուն կամ վերացնելուն ուղղված գործողությունների կատարումը կարող է հանգեցնել հիմնական իրավունքներին առնչվող խնդրահարույց իրավիճակների: Մասնավորապես, եթե ներխուժումը կանխելուն կամ վերացնելուն ուղղված գործողությունների կատարումից հետո դատարանի կողմից կայացվի հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ որոշում, և Ոստիկանությանն արգելվի անձին բնակարանից վտարմանն ուղղված հնարավոր գործողությունների կատարումը, այս պարագայում դատարանի որոշումը կմնա անկատար, քանի որ ՀՀ կառավարության թիվ 797-Ն որոշմամբ սահմանված չէ իրավական համապատասխան գործիքակազմ՝ մինչև Ոստիկանության գործողությունների կատարումը եղած դրությունը վերականգնելու համար: Այլ կերպ, նման պայմաններում ստեղծվում է մի իրավիճակ, երբ երկու տարբեր պետական մարմինների կողմից միևնույն հարցի համաժամանակյա ուսումնասիրության արդյունքում կայացվում են իրարամերժ որոշումներ, ինչի արդյունքում իմաստազրկվում է անձի՝ դատարան դիմելու իրավունքը: Ընդ որում՝ կարևոր է ընդգծել այն հանգամանքը, որ օրենսդրությունը հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը քննելու սեղմ ժամկետներ է նախատեսել:

ՀՀ վճռաբեկ դատարանը հայցի ապահովման միջոց կիրառելու նպատակի և անհրաժեշտության մասին հայտնել է դիրքորոշում առ այն, որ հայցի ապահովման ինստիտուտը նպատակ է հետապնդում երաշխավորելու հետագայում ընդունվող դատական ակտի կատարումը: Վճռաբեկ դատարանը փաստել է նաև, որ հայցի ապահովումն օրենսդրությամբ նախատեսված՝ անձանց իրավունքների պաշտպանության կարևոր երաշխիքներից մեկն է: Այն ուղղված է անձանց խախտված գույքային իրավունքների իրական ու ամբողջ ծավալով վերականգնելուն: Հայցի ապահովման

[425] Տե՛ս 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջ 615 https://ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf , 29.03.2024թ:

ինստիտուտի նշանակությունն այն է, որ դրանով պաշտպանվում են հայցվորի օրինական շահերն այն դեպքերից, երբ պատասխանողը կարող է գործել անբարեխիղճ, կամ երբ այդպիսի միջոցները չկիրառելն անհնարին կարող է դարձնել դատական ակտի կատարումը[426]:

Անդրադառնալով ներխուժումը կանխելուն կամ վերացնելուն ուղղված գործողություններ կատարելու պատշաճ իրականացման հարցին՝ Պաշտպանն արձանագրում է, որ նախաձեռնած վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրության իրականացման տեսանկյունից Ոստիկանությունը՝ որպես վարչական մարմին, պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ և բավարար միջոցներ՝ իր գործողությունների համար արգելք հանդիսացող հանգամանքների առկայությունը պարզելու ուղղությամբ:

Խնդրո առարկայի վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմ ստացված ահազանգերի զգալի մասը վերաբերել է նաև այն հարցին, որ չնայած դատական կարգով գույքի սեփականության իրավունքի վիճարկմանը, երբ դեռևս առկա չէ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, ՀՀ ՆԳՆ ոստիկանության կողմից իրականացվում են ներխուժումը վերացնելուն ուղղված գործողություններ: ՀՀ կառավարության քննարկվող որոշման նախորդ խմբագրության համատեքստում՝ Ոստիկանության կողմից ներխուժումը կանխելուն կամ վերացնելուն ուղղված գործողությունները բացառող հանգամանքների շարքում թվարկված էր նաև անշարժ գույքի օրինական տիրապետողի պահանջն օրենքով սահմանված կարգով կողմերի միջև կնքված և տվյալ պահին գործող քաղաքացիաիրավական կամ այլ պայմանագրից կամ ամուսնաընտանեական հարաբերություններից ծագող վեճի, այդ թվում՝ դատական վարույթի առկայությունը: 2021 թվականի հունվարի 21-ին ՀՀ կառավարության վերը հիշատակված որոշման մեջ կատարված փոփոխությունների արդյունքում նման հիմք այլևս նախատեսված չէ: Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ անձինք հաճախ տեղեկացված չեն օրենսդրական կարգավորումների և փոփոխությունների մասին, և նրանց մոտ առկա է համոզմունք, որ դատարանում վեճի առկայությունը ներխուժումը վերացնելուն ուղղված գործողություններ կատարելը բացառող հանգամանք է: Պաշտպանի աշխատակազմ ստացված նմանատիպ բոլոր բողոքների ուսումնասիրության շրջանակում քաղաքացիներին պարզաբանվել են տվյալ պահին գործող իրավակարգավորումները:

Քննարկվող հարցի կապակցությամբ ՀՀ ներքին գործերի նախարարությունից տեղեկատվություն է ներկայացվել առ այն, որ 2023 թվականի ընթացքում խնդրո առարկայի վերաբերյալ իրավաբանական վարչությունում ստացվել է 110 բողոք, որոնցից 7-ի վերաբերյալ կայացվել է բողոքը բավարարելու վերաբերյալ որոշում, 3-ի վերաբերյալ կայացվել է բողոքն առանց քննության թողնելու մասին որոշում, 12 գործով գործի վարույթը կարճվել է, 80 բողոքների վերաբերյալ կայացվել է մերժման որոշում, իսկ 8-ը ներկայում գտնվում են քննարկման փուլում:

Ըստ ներկայացված տեղեկատվության՝ 2023 թվականի ընթացքում չեն արձանագրվել դեպքեր, երբ դատարանում ոստիկանության բանավոր վարչական ակտի վիճարկման կամ հայցի ապահովման առկայության պայմաններում իրականացված լինեն ներխուժումը վերացնելուն ուղղված գործողություններ:

[426] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի հունիսի 29-ի թիվ ՎԴ/6921/05/21 որոշումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանն արձանագրում է, որ անձի կողմից Ոստիկանության գործողությունների իրավաչափության դեմ բողոք, ինչպես նաև հայցի ապահովման միջոց կիրառելու միջնորդություն դատարան ներկայացրած լինելու և վերջնական դատական ակտի բացակայության պայմաններում ՀՀ ՆԳՆ ոստիկանության կողմից ներխուժումը վերացնելուն ուղղված գործողությունների կատարումը կարող է հանգեցնել անձանց իրավունքների ոչ իրավաչափ սահմանափակման:

Վերոգրյալ հաշվառմամբ՝ անհրաժեշտ է.

✓ ***պրակտիկան զարգացնել այն ուղղությամբ, որպեսզի անձի կողմից դատարան դիմած լինելու մասին հայտարարության պարագայում ստուգվի ներկայացված տեղեկատվության հավաստիությունը, ինչպես նաև մինչև համապատասխան դատական ակտի կայացումը զերծ մնալ ներխուժումը կանխելուն կամ վերացնելուն ուղղված գործողությունների կատարումից:***

✓ ***ՀՀ ՆԳՆ ոստիկանությունը, որպես վարչական վարույթ իրականացնող մարմին, մինչև վտարելուն ուղղված գործողությունների կատարումը քաղաքացիներին պատշաճ կարգով ներկայացնի վարույթի հիմքերը, այդ թվում՝ վերը հիշատակված կառավարության որոշմամբ սահմանված իրավակարգավորումները, անձանց իրավունքներն ու պարտականությունները, իրականացվող գործողությունների բողոքարկման կարգը:***

3. ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության գործունեության ոլորտին առնչվող խնդիրներ

Անձը հաստատող փաստաթղթերն ու ոլորտին առնչվող հարաբերությունները բացառիկ կարևորություն ունեն իրավունքների պատշաճ իրացման տեսանկյունից:

Նախկինում քաղաքացիության և միգրացիայի ոլորտների պատասխանատու մարմիններն էին Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը և Միգրացիոն ծառայությունը: ՆԳՆ ստեղծմամբ նշված մարմինները միավորվեցին նախարարության կազմում գործող Միգրացիայի և քաղաքացիության ծառայության մեջ: Կառուցվածքային փոփոխության նպատակներից էր աշխատանքն առավել համակարգված և միասնական դարձնելը:

Այնուամենայնիվ, ինչպես նախկինում, այնպես էլ 2022 և 2023 թվականներին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացվել են այս ոլորտին վերաբերող մի շարք բողոքներ:

Հիմնականում արձանագրված խնդիրը վերաբերել է անձնագրային և համապատասխան այլ գործարքների իրականացման համար գրանցման դժվարություններին, ինչպես նաև անձնագրային բաժանմունքներում հերթերին և կուտակումներին:

Այսպես, ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության անձնագրային և վիզաների վարչության ստորաբաժանումներում գործարքների իրականացման համար անհրաժեշտ է նախապես հերթագրվել http://migration.e-gov.am հարթակի միջոցով՝ ամրագրելով այց: Ընդ որում, Երևան քաղաքի տարածքում գործում է բացառապես էլեկտրոնային հերթագրման համակարգը:

Համակարգի ներդրման առաջնային փուլում առաջացած խնդիրներից մեկն այն էր, որ շատ քաղաքացիներ տեղեկացված չէին համակարգի միջոցով հերթագրվելու

պահանջից կամ չէին կարողանում ճիշտ օգտվել հարթակից, մասնավորապես, քաղաքացիները տեղեկացված չէին, որ հնարավոր չէ հերթագրում իրականացնել մեկ անձի տվյալներով այլ անձի համար: Նշված խնդիրը, այնուամենայնիվ, ստացել է լուծում հարթակում համապատասխան ծանուցումների տեղադրմամբ:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների մի մասը վերաբերել է համակարգի ծանրաբեռնվածությանը: Մասնավորապես, շատ դեպքերում անձինք, նախապես տեղեկացված չլինելով էլեկտրոնային հերթագրման պարտադիր պահանջի մասին, փորձում էին ամրագրել այց, սակայն համակարգը այցը թույլ էր տալիս միայն մեկ կամ մի քանի ամիս անց ժամանակահատվածում: Բողոք ներկայացրած անձինք հայտնել են, որ իրենց անհրաժեշտ է մոտ օրերին մեկնել արտերկիր, իրականացնել բժշկական միջամտություն, մասնակցել տեղական ինքնակառավարման մարմնի ընտրությանը կամ իրականացնել այլ գործարքներ, որոնց համար պարտադիր է անձնագրի կամ համապատասխան փաստաթղթի ներկայացումը: Հարկ է ընդգծել, որ նման դեպքերի զգալի մասի պարագայում Անձնագրային և վիզաների վարչության իրավասու ներկայացուցիչների հետ Պաշտպանի ներկայացուցիչների բանավոր քննարկումների արդյունքում հնարավոր է եղել խնդիրը լուծել:

Քաղաքացիների բողոքների մի մասը վերաբերում է այն հանգամանքին, որ անձը մի շարք հանգամանքներից ելնելով (տարիք, առողջական խնդիրներ) չի կարողանում անձամբ հերթագրվել էլեկտրոնային համակարգում: Նման խնդիրները ևս հիմնականում լուծում են ստացել Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կամ ԱՎ վարչության աշխատակիցների աջակցությամբ՝ անձանց առցանց հերթագրում իրականացնելու միջոցով:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն, որ հասարակության որոշակի հատված (հատկապես տարեցները), օբյեկտիվ հիմքերից ելնելով, չի կարող ինքնուրույն օգտվել էլեկտրոնային հարթակից, հարկ է քննարկել նրանց համար ավելի պարզեցված կառուցակարգով հերթագրման հնարավորություն ընձեռելու հարցը:

Որոշ դեպքերում Երևանի բնակիչները առավել սեղմ ժամկետում համապատասխան գործարքն իրականացնելու նպատակով ներկայացել են ԱՎ վարչության մարզային ստորաբաժանումներ, որն իր հերթին առաջացրել է տվյալ ստորաբաժանումներում կուտակումներ: Նշվածի հետևանքով քաղաքացիները, երբեմն, ստիպված են եղել տևական ժամանակ սպասել անձնագրային բաժանմունքում կամ մի քանի օր շարունակ այցելել համապատասխան ստորաբաժանում:

2023 թվականի սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց համար նախատեսված համապատասխան կարգավորումների համաձայն՝ անձնագրավորման կամ ժամանակավոր պաշտպանության (փախստականի) վկայականը տրամադրելու կապակցությամբ ստորաբաժանումներում ևս առաջացել են կուտակումներ:

Հարկ է արձանագրել, որ Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձինք անձնագրային ծառայություններում տեղահանության առաջին իսկ օրվանից սպասարկվել են արտահերթ ռեժիմով՝ առանց էլեկտրոնային հերթագրման պահանջի: Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և ժամանակավոր պաշտպանության տակ վերցված անձանց Հայաստանի Հանրապետությունում հաշվառելու և փաստաթղթավորման գործընթացը պատշաճ կազմակերպելու, եղած պահանջարկը սեղմ ժամկետներում սպասարկելու նպատակով ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության տարածքային անձնագրային ստորաբաժանումներն աշխատել են նաև շաբաթ օրերին:

Այդուհանդերձ, տեղերում առաջացել են կուտակումներ և հերթերը վերահսկելու դժվարություններ: Պաշտպանի աշխատակազմում ստացվել են բողոքներ առ այն, որ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված որոշ քաղաքացիներ ավելի քան 15 օր սպասել են իրենց հերթին, սակայն այդպես էլ չեն կարողացել ստանալ իրենց համար անհրաժեշտ ծառայությունները:

Նշվածի հաշվառմամբ՝ անհրաժեշտ գրագրություն և քննարկումներ են իրականացվել ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության հետ:

Հարկ է նկատել, որ հերթագրման հետ կապված խնդիրները չեն վերաբերել միայն անձնագրային գործարքներին: Պաշտպանի աշխատակազմում ստացվել են նաև մի շարք բողոքներ առ այն, որ անձինք ցանկացել են հերթագրվել ՀՀ քաղաքացիություն ստանալու կամ ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ դիմում ներկայացնելու նպատակով, սակայն համակարգում ինքնաշխատ եղանակով առաջարկվող այցի հնարավոր օրը եղել է մեկ տարի անց կամ առավել ուշ ժամկետներում:

Միևնույն ժամանակ, հարկ է ընդգծել, որ ելնելով հրատապությունից և դիմումներում բարձրացված խնդիրների առանձնահատկություններից՝ կոնկրետ դեպքերում, այդ թվում՝ Պաշտպանի աշխատակազմի հետ համագործակցության արդյունքում, ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության ներկայացուցիչները ձեռնարկել են հնարավոր միջոցները համապատասխան գործարքի իրականացումը հնարավոր սեղմ ժամկետում իրականացնելու նպատակով:

Հերթագրման հետ կապված խնդիրները նույնքան արդիական են եղել նաև կացության կարգավիճակի տրամադրման վերաբերյալ դիմումների ներկայացման համատեքստում: Այսպես, Պաշտպանին հասցեագրած դիմումներից մեկով օտարերկրյա քաղաքացին տեղեկացրել է, որ ամուսնացել է ՀՀ քաղաքացու հետ, ինչը հիմք է սահմանված կարգով ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակ տրամադրելու համար: Ավելին, քաղաքացին ձեռք է բերել պայմանավորվածություն Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային պայմանագիր կնքելու վերաբերյալ: Ըստ պնդման՝ նպատակ ունենալով ստանալ ժամանակավոր կացության կարգավիճակ՝ հերթագրվել է ՀՀ ՆԳՆ ՄՔԾ անձնագրային և վիզաների վարչությունում, սակայն ինքնաշխատ համակարգի կողմից նրա այցի օրը նշանակվել է շուրջ 8 ամիս անց: Արդյունքում, ըստ պնդման, անձը զրկվում է ամուսնու հետ ՀՀ-ում բնակվելու, ինչպես նաև աշխատելու հնարավորություններից: Բողոքի քննարկման շրջանակում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության հետ իրականացված գրագրության արդյունքում հնարավոր է եղել սեղմ ժամկետներում ապահովել անձի կողմից համապատասխան դիմումի ներկայացման գործընթացը:

Անձնագրի տրամադրման գործընթացի ձգձգումների վերաբերյալ մեկ այլ խնդիր կապված է եղել քրեակատարողական հիմնարկում պահվող ազատությունից զրկված անձանց անձնագրավորման հետ: Այսպես, կալանավորված անձանցից մեկը նշել է, որ արդեն տևական ժամանակ դիմել է քրեակատարողական հիմնարկի վարչակազմին՝ ՀՀ քաղաքացու նոր անձնագիր ստանալու համար, սակայն գործընթացի տևականության պատճառով դեռևս չի ստացել անձը հաստատող փաստաթուղթը: Քաղաքացին տեղեկացրել է, որ այդ պատճառով չի կարողանում դիմել Արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմին՝ ամուսնության գրանցման նպատակով, ինչի պարագայում զրկվում է կնոջ հետ երկարատև տեսակցություն ունենալու հնարավորությունից: Ուսումնասիրության ընթացքում պարզվել

է, որ քաղաքացու հերթագրումը քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից իրականացվել է, սակայն նշանակված այցի օրը մի քանի շաբաթ անց է: Պաշտպանի ներկայացուցիչների կողմից քրեակատարողական հիմնարկի վարչակազմի, Միգրացիայի և քաղաքացիության ծառայության ներկայացուցիչների հետ իրականացված քննարկումների արդյունքում հնարավոր է եղել խնդիրը կարգավորել անձին անձնագրի փոխարեն ժամանակավոր փաստաթղթի տրամադրմամբ:

Պաշտպանի աշխատակազմում ստացվել են նաև բողոքներ առ այն, որ քրեական վարույթի շրջանակում մեղադրյալի անձնագրային գործարքների նկատմամբ սահմանվել է հսկողություն՝ նոր անձնագիր չտրամադրելու կապակցությամբ, սակայն քրեական հետապնդումը դադարեցված լինելու, ինչպես նաև վարույթն իրականացնող մարմնի կամ դատարանի կողմից սահմանափակումը վերացված լինելու պարագայում սահմանված հսկողությունը չի վերացվել:

Ընդ որում, որոշ դեպքերում սահմանված հսկողությունը վերացնելու վերաբերյալ համապատասխան գրությունը վարույթն իրականացնող մարմնի կողմից ՀՀ ՆԳՆ ՄՔԾ անձնագրային և վիզաների վարչություն ուղարկված չի լինում: Լինում են նաև դեպքեր, երբ մեղադրյալի նկատմամբ կիրառված են լինում այլ սահմանափակումներ, օրինակ՝ բացակայելու արգելք խափանման միջոցի կիրառման պարագայում սահմանված է լինում նաև ՀՀ-ից ելքի սահմանափակում: Գործնականում հաճախ քրեական հետապնդումը դադարեցնելուց հետո վարույթն իրականացնող մարմինը սահմանափակումները վերացնելու իրավասություն ունեցող մարմիններից միայն մեկին է հասցեագրում համապատասխան գրությունը, որի պարագայում անձի իրավունքները շարունակում են առանց բավարար և պատշաճ հիմքերի սահմանափակված մնալ: Որոշ դեպքերում էլ գրությունը ստանալու պարագայում սահմանափակումը սեղմ ժամկետում չի վերացվում ՀՀ ՆԳՆ ՄՔԾ անձնագրային և վիզաների վարչության կողմից: Կարևոր է արձանագրել, որ նմանատիպ խնդիրների հիմնական մասը լուծում է ստացել Պաշտպանի և իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ համագործակցության արդյունքում:

Այնուամենայնիվ, Պաշտպանը հատուկ արձանագրում է, որ անընդունելի է համապատասխան արգելքի բացակայության պարագայում՝ պետական մարմինների կողմից գործընթացին հետևողական չլինելու հանգամանքով պայմանավորված՝ անձի անձնագրային գործարքների սահմանափակումը, քանի որ դրա արդյունքում առանց անհրաժեշտ և բավարար հիմքերի անձինք զրկվում են իրենց մի շարք հիմնական իրավունքներն իրացնելու հնարավորությունից: Որպես նշված խնդրի լուծում կարող է հանդես գալ տեղեկատվական միասնական համակարգի ստեղծումն ու գործարկումը՝ անձի նկատմամբ կիրառված սահմանափակումների վերաբերյալ տվյալները դրանք սահմանող և վերացնող մարմինների կողմից մուտքագրելու հնարավորությամբ:

Պաշտպանի աշխատակազմում շարունակում են ստացվել բողոքներ նաև բնակչության պետական ռեգիստրում հաշվառված չլինելու հիմքով անձնագիր չտրամադրելու վերաբերյալ: «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 15-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ անձնագիր տրամադրելը (փոխանակելը) մերժվում է, եթե դիմումատուն հաշվառված չէ բնակչության պետական ռեգիստրում: Ստացված բողոքները վերաբերում են այն դեպքերին, երբ քաղաքացին անձնագրավորման պահին մշտական բնակության վայր չունի կամ բնակարանի սեփականատերը չի տվել համաձայնություն՝ անձին տվյալ վայրում հաշվառելու վերաբերյալ:

Նշված դեպքերում խնդիրը հիմնականում կապված է հաշվառման գործընթացի մասին քաղաքացիների՝ պատշաճ իրազեկված չլինելու հետ: Այդ իրավիճակներում Պաշտպանի ներկայացուցիչները քաղաքացիներին պարզաբանել են «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի «Բնակչության պետական ռեգիստրի համակարգի ներդրման մասին» թիվ 1231-Ն որոշման կարգավորումները՝ ժամանակավոր կամ փաստացի բնակության վայրում հաշվառվելու հնարավորության վերաբերյալ:

Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է ՀՀ ՆԳՆ ՄՔԾ անձնագրային և վիզաների վարչության հետ հաստատված համագործակցությունը, համատեղ քննարկումների արդյունքում այս ոլորտում առկա խնդիրների լուծմանն ուղղված ջանքերը:

Միևնույն ժամանակ, վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանն ընդգծում է, որ.

✓ անհրաժեշտ է մշակել առկա համակարգային խնդիրները հաղթահարելու, ոլորտում մատուցվող ծառայությունները հնարավոր սեղմ ժամկետներում ապահովելու համար անհրաժեշտ կառուցակարգեր՝ նկատի ունենալով, որ քաղաքացիության, անձնագրավորման, այլ կարգավիճակների և անձը հաստատող փաստաթղթերի տրամադրման և նմանատիպ գործարքների ոչ պատշաճ իրականացումը գործնականում կարող է հանգեցնել անձանց սահմանադրական իրավունքների՝ առանց անհրաժեշտ և բավարար հիմքերի սահմանափակման,

✓ բացառել համապատասխան արգելքի բացակայության պարագայում՝ պետական մարմինների կողմից գործընթացին հետևողական չլինելու հանգամանքով պայմանավորված՝ անձի անձնագրային գործարքների սահմանափակումը, մշակել և գործարկել խնդրի լուծմանն ուղղված համապատասխան կառուցակարգեր:

ԳԼՈՒԽ 6. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԵՎ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

1. Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և իրավապաշտպանների գործունեության երաշխավորումը՝ որպես պետության պարտավորություն

Մարդու իրավունքների պաշտպանը մշտապես է ընդգծել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և իրավապաշտպանների գործունեության կարևորությունը ժողովրդավարական և մարդու իրավունքների արժեքների վրա հիմնված պետության համար: Իրավապաշտպանների և հասարակական կազմակերպությունների հետ Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի համագործակցության բարձր մակարդակը շարունակական է մարդու իրավունքների պաշտպանության մի շարք ոլորտներում:

Նախորդ տարեկան հաղորդումներում[427] Պաշտպանը մանրամասն անդրադարձել է իրավապաշտպանների և հասարակական կազմակերպությունների գործունեության երաշխիքներին: Այս առումով Պաշտպանը հարկ է համարում ընդգծել, որ պետությունը պարտավորություն ունի ինչպես իրավապաշտպանների և ՀԿ-ների իրավաչափ գործունեությանը չխոչընդոտելու, այնպես էլ նման խոչընդոտները կանխարգելելու, դրանց առկայության պարագայում՝ վերացնելու և դեպքերի առնչությամբ արդյունավետ քննություն իրականացնելու տեսանկյունից:

Իրավապաշտպանների գործունեության պաշտպանված լինելու անհրաժեշտության, ինչպես նաև նրանց նկատմամբ անհանդուրժող և խտրական վերաբերմունքի, ատելության խոսքի, վերջիններիս թիրախավորելու և այլ բացասական երևույթների անթույլատրելիության մասին Մարդու իրավունքների պաշտպանը խոսել է նաև իրավապաշտպանների միջազգային օրվան ընդառաջ կազմակերպված քննարկման ընթացքում[428]:

Բացի այդ, Պաշտպանը հանդիպում է ունեցել «Մարդու իրավունքների տուն Երևան» իրավապաշտպան հասարակական կազմակերպության ներկայացուցչի հետ, որի ընթացքում քննարկվել են անհանդուրժողականության, խտրականության, ատելության խոսքի դեմ պայքարին առնչվող հարցեր: Անդրադարձ է կատարվել հատկապես իրավապաշտպանների իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերին, այդ թվում՝ նրանց նկատմամբ բռնության և թիրախավորման դեպքերին, ինչպես նաև իրավապաշտպան համայնքում միմյանց նկատմամբ հանդուրժող վերաբերմունքի և սոլիդարության մշակույթի ձևավորման կարևորությանը:

Աշխատանքային այցով Լոռու մարզում գտնվելու ընթացքում Պաշտպանը Վանաձոր քաղաքում հանդիպում է անցկացրել հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, քննարկել մարդու իրավունքներին առնչվող մի շարք հարցեր: Հանդիպման ընթացքում հատուկ անդրադարձ է կատարվել նաև քաղաքացիական

[427] Տե՛ս օրինակ՝ 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 631-649, հասանելի է https://ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 29.03.2024թ:

[428] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2799 հղումով, 29.03.2024թ:

հասարակության կազմակերպությունների և իրավապաշտպանների պաշտպանված և անվտանգ գործունեությանը վերաբերելի հարցերին[429]:

2022-2023 թվականների ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում արձանագրվել են քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և իրավապաշտպանների գործունեությանն առերևույթ միջամտության դեպքեր, այդ թվում՝ որոշ դեպքերում զուգորդված վերջիններիս նկատմամբ բռնության կիրառմամբ:

Օրինակ՝ Մարդու իրավունքների պաշտպանին է դիմել «Ուղղակի ժողովրդավարություն» հասարակական կազմակերպության նախագահը, ով հայտնել է, որ 2023 թվականի նոյեմբերի 29-ին Լոռու մարզի Վանաձոր համայնքում տեղի ունեցած համայնքի ավագանու նիստի ընթացքում համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարը բարձրաձայն և հրապարակային հայհոյանք է հասցրել «Ուղղակի ժողովրդավարություն» ՀԿ նախագահին և «Հայաստանի խուլերի միավորման վարչություն» ՀԿ անդամներին, որը տեսանկարահանվել է և հրապարակվել զանգվածային լրատվության միջոցներով[430]:

Նշված հարցի կապակցությամբ սկսված քննարկման ընթացակարգի շրջանակում Պաշտպանը համապատասխան գրություն է ուղարկել ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովից պարզաբանում է ներկայացվել այն մասին, որ պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, ԲԴԽ-ի անդամի, դատախազի, քննիչի), **համայնքների ղեկավարների,** նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները, համաձայն «Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի՝ սահմանվում են Հանձնաժողովի ընդունած վարքագծի կանոնագրքով (այսուհետ՝ Կանոնագիրք): 2024 թվականի փետրվարի 6-ի N 02-Ն որոշմամբ Հանձնաժողովը հաստատել է Կանոնագիրքը, որի ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանվել է 2024 թվականի ապրիլի 1-ը: Կանոնագրքով, ի թիվս այլնի, նախատեսվել են «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված՝ բարեկրթության և հարգալիրության սկզբունքից բխող վարքագծային նորմեր, որոնք միտված են կարգավորելու հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագիծը հանրային ծառայողների և հանրության բոլոր անդամների հետ հարաբերություններում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը Մարդու իրավունքների պաշտպանի գրության հիման վրա դիմել է Վանաձորի համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարին՝ նշելով, որ թեև Կանոնագրքի ուժի մեջ մտած չլինելու պատճառով Հանձնաժողովը ստացված դիմումը քննության առարկա չի դարձրել, այնուամենայնիվ, Վանաձոր համայնքի ավագանու նիստի ժամանակ տեղի ունեցած՝ դիմումով ներկայացված դրվագը Հանձնաժողովի գնահատմամբ խիստ մտահոգիչ է և հանրային իշխանության հեղինակության նսեմացման, հանրային իշխանության մարմնի նկատմամբ հանրային վստահության նվազեցման ռիսկեր է պարունակում:

Վերոգրյալի համատեքստում Հանձնաժողովն առաջարկել է ձեռնարկել համապատասխան միջոցներ Վանաձոր համայնքի ավագանու նիստերի, ինչպես նաև այլ

[429] Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://news.am/arm/news/798455.html, 29.03.2024թ:
[430] Տեսանյութը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://mamul.am/am/news/280499, 29.03.2024թ:

հրապարակային ելույթների ընթացքում թե՛ ավագանու անդամների, թե՛ համայնքապետարանի պաշտոնատար անձանց կողմից վարքագծի սկզբունքների և մասնավորապես, Կանոնագրքով սահմանված վարքագծի կանոնների պահպանման անհրաժեշտության վերաբերյալ իրազեկվածության բարձրացման և 2024 թվականի ապրիլի 1-ից ծագող պարտականությունների վերաբերյալ իրազեկելու համար:

2023 թվականի հուլիսի 9-ին զանգվածային լրատվության միջոցներով տարածվել է տեղեկություն այն մասին, որ Գյումրի քաղաքում գտնվող «Բասեն» սուպերմարկետում Ոստիկանության Գյումրի քաղաքի Մուշի բաժնի ծառայողի կողմից հարձակման է ենթարկվել իրավապաշտպան[431]:

Նշվածի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը սեփական նախաձեռնությամբ սկսել է քննարկման ընթացակարգ և համապատասխան գրություններ հասցեագրել իրավասու մարմիններին[432]: 2023 թվականի հուլիսին իրավապաշտպանը հրապարակային հայտարարությամբ դիմել է Մարդու իրավունքների պաշտպանին և իրավապահ մարմինների ներկայացուցիչներին[433]:

ՀՀ ՆԳՆ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունից Պաշտպանի աշխատակազմ պարզաբանում է ներկայացվել այն մասին, որ միջադեպի կապակցությամբ նույն վարչությունում նախաձեռնվել է ծառայողական քննություն, որի ընթացքը կասեցվել է, և որոշվել է դրան անդրադառնալ նույն դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթով եզրափակիչ ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո:

Դեպքի առթիվ Գլխավոր դատախազությունից տեղեկատվություն է ներկայացվել այն մասին, որ Գյումրի քաղաքի Անի թաղամասի Պարույր Սևակ փողոցում գտնվող «Բասեն» սուպերմարկետում Ոստիկանության ծառայողի և իրավապաշտպանի միջև տեղի ունեցած միջադեպի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ, և իրականացվում է նախաքննություն դեպքի բոլոր հանգամանքները բացահայտելու ուղղությամբ:

Կարևորելով քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և իրավապաշտպանների դերը ժողովրդավարական հասարակության կայացման տեսանկյունից, առանցքային համարելով նրանց անխոչընդոտ գործունեության ապահովման անհրաժեշտությունը՝ Մարդու իրավունքների պաշտպանը անթույլատրելի է համարում իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների և նրանց անդամների նկատմամբ բռնություն գործադրելու, նրանց թիրախավորելու, վիրավորելու, ինչպես նաև նրանց գործունեությանը ոչ իրավաչափ միջամտելու ցանկացած դեպք: Պաշտպանն ընդգծում է, որ պետությունը պետք է մշակի և գործարկի ինչպես իրավապաշտպանների և հասարակական կազմակերպությունների իրավաչափ գործունեությանը չխոչընդոտելու, այնպես էլ նման խոչընդոտները կանխարգելելու, դրանց առկայության պարագայում՝ վերացնելու, դեպքերի առնչությամբ արդյունավետ քննություն իրականացնելու, այդ թվում՝ վարքագծի կանոնների խախտում թույլ տված անձանց պատասխանատվության անխուսափելիությունը երաշխավորելու պատշաճ կառուցակարգեր:

---

[431] Հասանելի է https://news.am/arm/news/769559.html, https://mamul.am/am/news/270438 հղումներով, 29.03.2024թ :

[432] Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2609 հղումներով, 29.03.2024թ:

[433] Հասանելի է https://mamul.am/am/news/270649, 29.03.2024թ https://www.facebook.com/karapet.poghosyan/posts/pfbid02ubK46VP6PNwb7MtxQiBZuUona4vdqn7GvDQvgJCgBgoqv7Smig6tS5ZqLz2hdcZtl հղումներով, 29.03.2024թ:

2. Զանգվածային լրատվության միջոցների գործունեության երաշխիքների ապահովումը

Զանգվածային լրատվության միջոցներն առանցքային դերակատարություն ունեն իրավունքի գերակայության արժեքներով առաջնորդվող ժողովրդավարական պետության կայացման տեսանկյունից:

Մարդու իրավունքների պաշտպանն իր տարեկան հաղորդումներում մշտապես ընդգծել է զանգվածային լրատվության միջոցների անխոչընդոտ գործունեության կարևորությունը: Դրա մասին է վկայում զանգվածային լրատվության միջոցների և լրագրողների հետ Մարդու իրավունքների պաշտպանի ակտիվ համագործակցությունը:

Մամուլի ազատության համաշխարհային օրվա, ինչպես նաև Հայ մամուլի օրվա առթիվ շնորհավորական ուղերձներում ևս Պաշտպանն ընդգծել է մամուլի և լրագրողների աշխատանքի ազատ ու պաշտպանված լինելու անհրաժեշտությունը[434]:

2023 թվականի ընթացքում Պաշտպանը հանդիպում է ունեցել Factor TV-ում եռամսյա փորձաշրջան անցնող ուսանող-լրագրողների հետ, ներկայացրել է կառույցի հիմնական առաքելությունը, գործունեության ոլորտները, լիազորությունների շրջանակը՝ հորդորելով ապագա լրագրողներին իրենց աշխատանքում լինել ծայրահեղ պրոֆեսիոնալ, առաջնորդվել «մի՛ վնասիր» սկզբունքով և մշտապես պահպանել պատասխանատու լրագրության կանոնները[435]:

Զանգվածային լրատվության միջոցների անխոչընդոտ գործունեության կարևորությունը նկատի ունենալով՝ Պաշտպանը հրապարակել է արտահերթ զեկույց՝ ԲԴԽ-ի՝ 2023 թվականի հուլիսի 3-ի նիստին լրագրողների մասնագիտական գործունեության առերևույթ սահմանափակման դեպքի առնչությամբ[436]: Զեկույցով արձանագրվել է, որ դատական իշխանություն–լրագրող փոխգործակցության պատշաճ մշակույթի առկայության պայմաններում է միայն հնարավոր լիարժեքորեն երաշխավորել դատական իշխանության գործունեության թափանցիկությունն ու հանրային հաշվետվողականությունը, լրագրողական գործունեության անխոչընդոտ իրականացումն ու պետական մարմինների բնականոն գործունեությունը: Զեկույցում վեր հանված խնդիրների հաղթահարման նպատակով Պաշտպանի կողմից ներկայացվել են մի շարք առաջարկություններ: Մասնավորապես, արտահերթ զեկույցով, միջազգային և ներպետական իրավական չափորոշիչների ուսումնասիրությամբ, ի թիվս այլնի, առաջարկվել է դատական նիստերի դահլիճում նախատեսել լրագրողների համար առանձնացված հատուկ տեղեր՝ նրանց աշխատանքային անհրաժեշտ պայմանները ապահովելու նպատակով: Լրատվական գործունեության անխոչընդոտ իրականացումն ապահովելու համար առաջարկվել է պահպանել զանգվածային լրատվության միջոցների ներկա լինելու մասին հաղորդագրության հրապարակման, նիստին ներկա գտնվելու նպատակով զանգվածային լրատվության միջոցների գրանցման ընթացակարգերը, նախապես կանխորոշել դատական նիստի մասնակիցների հնարավոր թիվն ու նախապես իրականացնել նիստի հրապարակայնության երաշխավորմանն ուղղված միջոցառումները:

---

[434] Հասանելի են հետևյալ հղումներով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/2513, https://ombuds.am/am/site/ViewNews/2735, 29.03.2024թ:

[435] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/2647, 29.03.2024թ :

[436] Տե՛ս Բարձրագույն դատական խորհրդի՝ 2023 թվականի հուլիսի 3-ի նիստին լրագրողների մասնագիտական գործունեության առերևույթ սահմանափակումների առնչությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցը՝ https://ombuds.am/images/files/d9937ce0e903b33e2c4a6df32ff9f2c3.pdf հղմամբ, 29.03.2024թ :

2023 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում մշտադիտարկման առարկա են դարձվել նաև մամուլում տարածված հրապարակումներն առ այն, որ Ազգային ժողովում «Ժողովուրդ» օրաթերթի լրագրող Քնար Մանուկյանի հավատարմագրումը դադարեցվել է[437]:

Վերոգրյալի կապակցությամբ նախաձեռնված ուսումնասիրության շրջանակում ՄԻՊ աշխատակազմում քննարկման առարկա են դարձել լրագրողի նկատմամբ նման որոշում կայացնելու իրավական հիմքերն ու հիմնավորումները՝ լրագրողների հավատարմագրումը դադարեցնելու ձևավորված պրակտիկայի դիտարկման անհրաժեշտությամբ պայմանավորված:

Ուսումնասիրության շրջանակում ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմից պարզաբանումներ են ներկայացվել առ այն, որ ավելի վաղ նույն լրագրողը գրավոր նախազգուշացվել է Ազգային ժողովի նախագահի՝ 2019 թվականի փետրվարի 12-ի «Ազգային ժողովի նստավայրի տարածքում և շենքում գործող անվտանգության կանոնները հաստատելու մասին» թիվ ՆՈ-01-Լ որոշման 1-ին կետով հաստատված 1-ին հավելվածի կանոնների և կարգի պահանջները խախտելու համար, և դրանից հետո մեկ տարվա ընթացքում կրկին խախտել է նշված նորմերի պահանջները, ինչի պատճառով նրա հավատարմագրումը դադարեցվել է:

2022 թվականի հուլիսի 12-ին լրագրող Թեհմինե Ենոքյանն իր ֆեյսբուքյան էջում կատարել էր «Հայտարարություն հանցագործության մասին» վերտառությամբ հրապարակում[438], որտեղ մատնանշված էին իր բնակարանի ուղղությամբ կրակոցներ արձակելու վերաբերյալ հանգամանքներ: Վերոնշյալի կապակցությամբ Պաշտպանի ներկայացուցիչը 2022 թվականի հուլիսի 13-ին կապ է հաստատել Թեհմինե Ենոքյանի հետ, ով, ի թիվս այլնի, նշել է, որ Պաշտպանի աշխատակազմ կուղարկի 2022 թվականի հուլիսի 12-ին ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրած դիմումը՝ խնդրելով այն դիտարկել նաև որպես Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոք: 2022 թվականի հուլիսի 14-ին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ է մուտքագրվել «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա» հասարակական կազմակերպությունների միության դիմումը՝ նույն դեպքի վերաբերյալ:

Թ. Ենոքյանի բողոքում, ինչպես նաև հրապարակային հայտարարության և «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա» հասարակական կազմակերպությունների միության դիմումում նշված հանգամանքների հաշվառմամբ՝ համապատասխան պարզաբանումների հարցմամբ գրություն է ուղարկվել ՀՀ գլխավոր դատախազություն:

Դատախազությունից ստացվել են պարզաբանումներ առ այն, որ Թեհմինե Ենոքյանի կողմից Ոստիկանություն կատարած ահազանգերի վերաբերյալ պատշաճ դատավարական ընթացակարգով նախաձեռնվել են երեք քրեական վարույթներ, որոնք, նախաքննության արդյունավետության նկատառումներից ելնելով, միացվել են մեկ վարույթում: Քրեական վարույթի շրջանակներում որոշում է կայացվել մեկ անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին, և նրան մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 194-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 194-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 7-րդ կետերով:

Բողոքի պատշաճ ընթացքն ապահովելու նպատակով Դատախազություն ուղարկվել է լրացուցիչ գրություն: Պարզվել է, որ քրեական վարույթն ըստ մեղադրանքի ՀՀ քրեական

[437] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://oragir.news/hy/material/2023/12/19/101152, 29.03.2024թ:
[438] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.facebook.com/tehmine.yenoqyan/posts/5295714810475030?ref=embed_post, 29.03.2024թ:

օրենսգրքի 194-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 194-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 7-րդ կետերով և ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին մասով՝ հսկող դատախազի կողմից մեղադրական եզրակացությունը հաստատված վիճակում, ըստ էության քննելու համար, 2023 թվականի մարտի 30-ին ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան:

Մեկ այլ դեպքի շրջանակներում 2023 թվականի օգոստոսի 24-ին զանգվածային լրատվության միջոցներով լրագրողներ Անի Գևորգյանի և Հռիփսիմե Ջեբեջյանի մասնակցությամբ տարածվել է տեսանյութ, որի միջոցով վերջիններս ներկայացրել են հանցագործության մասին հաղորդում այն մասին, որ ՀՀ վարչապետի մամլո ասուլիսի ընթացքում նրան հարցեր ուղղելուց հետո սոցիալական տարբեր հարթակներով իրենց նկատմամբ հնչում են կյանքից զրկելու, այրելու սպառնալիքներ, վիրավորանքներ, տարածվում են նրանցից մեկի անչափահաս որդու լուսանկարները և այլն[439]:

Նշվածի կապակցությամբ Դատախազությունից պարզաբանում է ներկայացվել առ այն, որ լրագրողներ Անի Գևորգյանի և Հռիփսիմե Ջեբեջյանի կողմից ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված հանցագործության մասին հաղորդումների հիման վրա ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների երկրորդ քննչական բաժնում 2023 թվականի սեպտեմբերի 7-ին ՀՀ քրեական օրենսգրքի 237-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով նախաձեռնվել են քրեական վարույթներ, որոնցով նախաքննություն է կատարվում:

Բացի այդ, Երևանի ավագանու ընտրությունների քարոզարշավի վերջին օրը զանգվածային լրատվության միջոցներով տեսանյութ է տարածվել այն մասին, որ նախընտրական քարոզարշավի ժամանակ քայլերթի մասնակիցներից մեկը հայհոյանք է հնչեցնում և դրոշով հարվածում է մասնագիտական գործունեությունն իրականացնող լրագրող Անի Գևորգյանին[440]: Նշվածի կապակցությամբ Պաշտպանը գրություն է հասցեագրել ՀՀ գլխավոր դատախազություն, որտեղից պարզաբանում է ստացվել այն մասին, որ լրագրող Անի Գևորգյանի մասնագիտական օրինական գործունեությանն առերևույթ խոչընդոտելու դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 237-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով 2023 թվականի սեպտեմբերի 18-ին նախաձեռնվել է քրեական վարույթ:

Հարկ է նշել, որ դեպքից հետո Մարդու իրավունքների պաշտպանն իր նախաձեռնությամբ ընդունել է «NewDay.am» լրատվական կայքի լրագրող-խմբագիր Անի Գևորգյանին և առավել մանրամասն քննարկել վերը նշված հարցերը[441]:

Տարեկան հաղորդման նախապատրաստման աշխատանքների շրջանակում Գլխավոր դատախազությունից տեղեկություն է ստացվել առ այն, որ 2023 թվականի ընթացքում լրագրողների մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու դեպքերի առթիվ նախաձեռնվել է 5 քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 237-րդ հոդվածի հատկանիշներով, որոնք դեռևս գտնվում են նախաքննության փուլում:

---

[439] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://oragir.news/hy/material/2023/08/24/88449?fbclid=IwAR17WqgV1PM1FttABCeKAIdXAUfAZOdUmvbOk_Ii5jBohVMEjIzT0txa32c, 29.03.2024թ:

[440] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://armday.am/post/244714?fbclid=IwAR1EjQu_BaEPy7UnXIGTOCYohdyxUt5mQNeKdqqN_HuaP2zHDzk3TZ1LodU, 29.03.2024թ :

[441] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/2691, 29.03.2024թ :

«Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լրատվական գործունեություն իրականացնողները և լրագրողները գործում են ազատորեն՝ իրավահավասարության, օրինականության, խոսքի (արտահայտվելու) ազատության և բազմակարծության սկզբունքների հիման վրա: Լրագրողն իր մասնագիտական օրինական գործունեության ընթացքում, որպես հասարակական պարտք կատարող անձ, պաշտպանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Հարկ է նկատել, որ լրագրողների իրավաչափ անխոչընդոտ գործունեության պահանջն ուղղակիորեն բխում է ներպետական օրենսդրությամբ ու միջազգային պարտավորություններով ամրագրված խոսքի ազատության հիմնարար իրավունքից, նպաստում է պետության նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ապահովմանը, և նշված գործունեությունը պետք է ենթակա լինի հատուկ պաշտպանության:

Մարդու իրավունքների պաշտպանն իր՝ Մամուլի ազատության համաշխարհային օրվա առթիվ հրապարակած ուղերձում հատուկ ընդգծել է, որ ազատ լրատվական գործունեությունը կայուն ժողովրդավարության կառուցման հիմնասյունն է, այլակարծության և առողջ բանավեճի ապահովման գրավականը: Անգնահատելի է բարեխիղճ և արհեստավարժ լրագրողների աշխատանքը՝ ուղղված հանրությանը հուզող խնդիրների բարձրաձայնմանը, ինչպես նաև պետական կառավարման մարմինների և պաշտոնատար անձանց հաշվետվողականության երաշխավորմանը: Միաժամանակ, պրոֆեսիոնալ լրատվական գործունեությունը կարող է ապահովվել միայն էթիկայի կանոնների պահպանման և լրագրողների գործունեության արդյունքում ատելության խոսքի բացառման պարագայում:

Չնայած գրանցված առաջընթացին՝ մամուլի ազատության ապահովման ոլորտում շարունակում են արդիական մնալ որոշ մարտահրավերներ: Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն 2022 թվականի ընթացքում արձանագրել է լրագրողների նկատմամբ ֆիզիկական բռնության կիրառման 14 դեպք: Խնդրահարույց է նաև լրագրողների թիրախավորման դեպքերի առկայությունը: Այս առումով կարևոր է մամուլի ազատության երաշխավորման ուղղությամբ այնպիսի քայլերի ձեռնարկումը, որոնք կապահովեն բնականոն լրատվական գործունեության համար լիովին բարենպաստ միջավայրի առկայությունը և լրագրողների անվտանգությունը[442]:

Մարդու իրավունքների պաշտպանն ընդգծում է, որ լրագրողների մասնագիտական իրավաչափ գործունեությանը խոչընդոտելու ցանկացած դեպք անթույլատրելի է և խիստ մտահոգիչ: Պաշտպանը կարևորում է, որ պետությունը մշակի և գործարկի այնպիսի կառուցակարգեր, որոնք կերաշխավորեն բնականոն լրատվական գործունեության համար լիովին բարենպաստ միջավայրի առկայությունը և լրագրողների անվտանգությունը: Ընդ որում՝ նշված կառուցակարգերը պետք է ուղղված լինեն ինչպես լրագրողների իրավաչափ գործունեությանը չխոչընդոտելուն, այնպես էլ նման խոչընդոտները կանխարգելելուն, դրանց առկայության պարագայում՝ վերացնելուն, դեպքերի առնչությամբ արդյունավետ քննություն իրականացնելուն, այդ թվում՝ պատասխանատվության անխուսափելիությունը երաշխավորելուն: Պակաս կարևոր չէ մասնագիտական լրատվական գործունեության իրականացումը բացառապես էթիկայի կանոնների, «պատասխանատու լրագրության» սկզբունքների

[442] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/2513, 29.03.2024թ:

պահպանման և լրագրողների գործունեության արդյունքում ապելության խոսքի բացառման համապեքսպում:

ԲԱԺԻՆ 9. ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Հավաքների ազատությունը մարդու հիմնական իրավունքներից է: Այն ժողովրդավարական պետության կայացման անհրաժեշտ նախապայման է:

Հավաքների ազատությունը ճանաչվում և պաշտպանվում է բազմաթիվ միջազգային փաստաթղթերով (օրինակ՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 21-րդ հոդվածով, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածով): Հավաքների ազատության իրավունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածով:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2023 թվականի ընթացքում հավաքների ազատությունը, դրա արդյունավետ իրացման երաշխիքների ապահովման հարցերն ու նշված իրավունքի իրացման առնչությամբ առաջացած խնդիրները գտնվել են Մարդու իրավունքների պաշտպանի անմիջական ուշադրության ներքո. Պաշտպանն ընդգծում է, որ քննարկվող իրավունքն ընդգրկում է **խաղաղ հավաքների ազատությունը**:

ՄԻՊ աշխատակազմի ու իրավասու գերատեսչությունների ներկայացուցիչների կարողությունների զարգացման, իրավական բարձր մշակույթի և խնդիրների հասցեագրման մեթոդաբանության ձևավորման նպատակով 2023 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությամբ անցկացվել է «ՄԻԵԴ նախադեպային իրավունքը հավաքների ազատության իրավունքի երաշխավորման համատեքստում. միջազգային իրավական չափանիշների և ներպետական հիմնախնդիրների ներկայացումը» խորագրով հանդիպում-քննարկում ՄԻԵԴ դատավոր Արմեն Հարությունյանի հետ[443]:

Մարդու իրավունքների պաշտպանի՝ հավաքների ազատության իրավունքի պաշտպանությանը և խթանմանը վերաբերելի լիազորությունների իրացման համար հիմք են հանդիսացել ինչպես ստացված դիմում-բողոքները, այնպես էլ զանգվածային լրատվության միջոցների և սոցիալական ցանցերի հրապարակումների մշտադիտարկումը:

Հավաքների ընթացքում ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանությունն առավելագույնս երաշխավորելու նպատակով Պաշտպանի ներկայացուցիչներն արագ արձագանքման այցեր են իրականացրել Ներքին գործերի նախարարության ոստիկանության տարբեր ստորաբաժանումներ, ձերբակալվածների պահման վայրեր, քննչական մարմիններ, քրեակատարողական հիմնարկներ, բուժհաստատություններ, հավաքների անցկացման վայրեր, առանձնազրույցներ ունեցել ազատությունից զրկված անձանց հետ, ուսումնասիրել ազատությունից զրկելու հիմքերը, նրանց իրավունքների ապահովման վիճակը, պարզաբանել ազատությունից զրկված անձի համապատասխան կարգավիճակից բխող իրավունքներն ու պարտականությունները: Այցերի ընթացքում տեղում ուսումնասիրվել են բարձրացված խնդիրները, դրանք քննարկվել են իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ, ուսումնասիրվել են

[443] Առավել մանրամասն տե՛ս https://ombuds.am/am/site/ViewNews/2620 հղումով:

արգելանքի վերցված անձանց վերաբերյալ կազմված փաստաթղթերը: Պաշտպանն անձամբ խնդիրները քննարկել է իրավասու մարմինների պաշտոնատար անձանց հետ, հանդես եկել մի շարք հրապարակային հայտարարություններով, խնդիրները բարձրացրել է տարբեր քննարկումների ընթացքում:

2023 թվականի ընթացքում Պաշտպանի աջակցությամբ մի շարք դեպքերում իրավասու մարմինների հետ համագործակցության արդյունքում ապահովվել է փաստաբանների մուտքը ոստիկանության տարբեր բաժիններ և քննչական մարմիններ՝ անձանց պաշտպանությունը ստանձնելու նպատակով, ինչպես նաև անհրաժեշտ իրավիճակներում երաշխավորվել է անձանց բժշկական օգնության իրավունքի, զանգի իրավունքի իրացումը և այլն:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն իրականացրել է հանրային հավաքների մշտադիտարկում, ՀԼՄ հրապարակումների ուսումնասիրություն:

Այսպես, օրինակ՝ 2023 թվականի սեպտեմբերի 19-ից 26-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում, ինչպես նաև մարզերում իրականացված հավաքների շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի արագ արձագանքման խմբերն այցեր են իրականացրել Ոստիկանության տարբեր ստորաբաժանումներ, քննչական մարմիններ, քրեակատարողական հիմնարկներ, բուժհաստատություններ, առանձնազրույցներ ունեցել ազատությունից զրկված ավելի քան 350 անձի հետ, այդ թվում՝ հավաքների անցկացման վայրերից արգելանքի վերցվելու և նրանց իրավունքների ապահովման հարցերի առնչությամբ:

2023 թվականի ընթացքում նշված իրավունքի պաշտպանության գործառույթի իրացման համատեքստում Մարդու իրավունքների պաշտպանը **սեփական նախաձեռնությամբ սկսել է հարցի քննարկման ընթացակարգ, ինչի արդյունքում** կայացրել է **քաղաքացիների՝ հավաքների ազատության իրավունքի խախտման վերաբերյալ որոշում**[444]:

2023 թվականի ընթացքում տեղի ունեցած հավաքների մշտադիտարկման արդյունքների ուսումնասիրությամբ կրկին արձանագրվել և վերահաստատվել են Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդումներով տարիներ շարունակ բարձրացվող համակարգային և շարունակական բնույթ կրող խնդիրներ: *Ողջունելով ոլորտում կատարվող բարեփոխումները՝ Պաշտպանն ընդգծում է, որ դեռևս առկա են բազմաթիվ խնդրահարույց հարցեր և իրավասու մարմինների ոչ իրավաչափ պրակտիկային առնչվող խնդիրներ, որոնք ունեն շուտափույթ հաղթահարման կարիք:*

2023 թվականի ընթացքում հավաքների մշտադիտարկման, իրականացված արագ արձագանքման այցերի արդյունքներով արձանագրվել են համակարգային և շարունակական բնույթ կրող այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ հավաքների մասնակիցների զանգվածաբար իրականացվող վարչական ձերբակալումները (բերման ենթարկելը)՝ ներպետական կարգավորումների ու միջազգային չափանիշների խախտմամբ, ազատությունից զրկելու ընթացակարգային խախտումները (օրինակ՝ նախքան ազատությունից զրկելն օրինական պահանջ չներկայացնելը), վարչական ձերբակալման ենթարկելիս անհամաչափ ուժի գործադրումը, անձին ազատությունից զրկելու պատճառների մասին անհապաղ տեղեկացնելու և կարգավիճակից բխող իրավունքները ծանուցելու պահանջի չպահպանումը, Ոստիկանության ծառայողների

[444] Առավել մանրամասն տե՛ս ստորև նույն բաժնում:

կողմից անհարգալից վերաբերմունք և այլն: Վերը նշված խնդիրները հատկապես մտահոգիչ են այն համատեքստում, որ շարունակական են տարիների կտրվածքով: Ուստի, դրանք ունեն համակարգային բնույթ, և դրանց հաղթահարումը ենթադրում է լրջագույն համակարգային փոփոխությունների անհրաժեշտություն:

1. Հավաքի մասնակիցներին ազատությունից զրկելու հիմքերի և պատճառների չներկայացումը

Ազատությունից զրկված անձանց պնդմամբ՝ բազմաթիվ դեպքերում ինչպես վարչական ձերբակալման ենթարկելիս, այնպես էլ Ոստիկանության բաժնում, ձերբակալված անձանց չեն պարզաբանվում վարչական ձերբակալման ենթարկելու հիմքերն ու պատճառները, ինչպես նաև իրենց իրավունքներն ու պարտականությունները:

Դիտարկված որոշ դեպքերում, երբ անձանց վարչական ձերբակալման ենթարկելու հիմքերը ներկայացվել են, դրանք կրել են ընդհանրական բնույթ, անհատականացված չեն եղել, ինչը հնարավորություն չի տվել հասկանալու, թե կոնկրետ ինչ հիմքով և պատճառաբանությամբ են հենց իրենց վարչական ձերբակալման ենթարկում: Չնայած որոշ դրական փոփոխություններին՝ 2023 թվականի ընթացքում իրականացված հավաքների մշտադիտարկումը վկայում է խնդրի շարունակականության մասին:

Այսպես, 2023 թվականի օգոստոսի 8-ին Ոստիկանության բաժիններ վարչական ձերբակալման է ենթարկվել 13 քաղաքացի, իսկ 1 քաղաքացի ձերբակալվել է սառը զենք կրելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածով: Այցի ընթացքում Պաշտպանի ներկայացուցիչների հետ առանձնազրույցների ընթացքում, ազատությունից զրկված 10 անձանց պնդմամբ, ինչպես վարչական ձերբակալման ենթարկելիս, այնպես էլ Ոստիկանության բաժնում վերջիններիս չեն պարզաբանվել ինչպես իրենց նվազագույն իրավունքներն ու պարտականությունները, այնպես էլ վարչական ձերբակալման իրավական հիմքերը:

Ընդհանուր պրակտիկան այն է, որ այդ մասին վարչական ձերբակալման ենթարկված անձինք տեղեկացվում են վարչական ձերբակալման ենթարկվելուց հետո՝ կա՛մ Ոստիկանության ծառայողական մեքենաներում, կա՛մ էլ Ոստիկանության բաժիններում: Այս մասին են վկայում նաև Ոստիկանությունից ստացված պարզաբանումները: Ավելին, եղել են դեպքեր, երբ վարչական ձերբակալման ենթարկելու հիմքերն ու պատճառներն անձանց այդպես էլ չեն ներկայացվել:

Անձին արգելանքի վերցնելու պահին նրան վարչական ձերբակալման ենթարկելու իրավական հիմքերն ու պատճառները, ինչպես նաև կարգավիճակից բխող իրավունքներն ու պարտականությունները չներկայացնելու մեծաթիվ խնդիրներ են արձանագրվել նաև 2023 թվականի սեպտեմբերի 19-26-ն ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած հավաքների ընթացքում՝ անձանց վարչական ձերբակալման ենթարկելու կապակցությամբ Պաշտպանի ներկայացուցիչների Ոստիկանության բաժիններ կատարած այցերի արդյունքներով: Հարկ է նկատել, որ իրենց նվազագույն իրավունքների մասին վարչական ձերբակալման ենթարկված անձինք տեղեկացել են նաև Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչներից:

Դեպքերի ընդհանուր ուսումնասիրությունը վկայում է, որ անձինք վարչական ձերբակալման են ենթարկվում Ոստիկանության օրինական պահանջը չկատարելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182-րդ հոդվածի ուժով: Ընդ որում՝ շատ դեպքերում անձանց համար պարզ չի լինում, թե որն է իրենց ներկայացված

կոնկրետ «օրինական պահանջը»: Վարչական ձերբակալման ենթարկելու որոշ դեպքերում, ըստ Պաշտպանին դիմած կամ առանձնազրույցներին մասնակցած անձանց պնդումների, անձանց առհասարակ որևէ պահանջ չի ներկայացվել, որևէ հակաօրինական արարք չեն կատարել, և իրենց վարչական ձերբակալման են ենթարկել զուտ հավաքի անցկացման վայրում գտնվելու փաստի ուժով:

2023 թվականի ընթացքում Ոստիկանության կողմից վարչական ձերբակալման ենթարկված անձանցից մեկի պնդմամբ՝ բերման ենթարկելիս Ոստիկանության ծառայողները միայն հայտնել են, որ բերման է ենթարկվում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածով նախատեսված արարքի կատարման համար: Օրենսգրքի այդ հոդվածը վկայակոչվել է ձևականորեն, քանի որ հոդվածի բովանդակությունը և դրանով նախատեսված արարքի էությունն այդպես էլ անձին չեն պարզաբանվել:

Որոշ դեպքերում անձինք պնդել են, որ իրենք վարչական ձերբակալման են ենթարկվել Ոստիկանության օրինական պահանջը չկատարելու համար՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182-րդ հոդվածի ուժով, սակայն Ոստիկանության օրինական պահանջն արդեն իսկ կատարված է եղել:

Վարչական ձերբակալման ենթարկելու պահին վարչական ձերբակալման ենթարկելու իրավական հիմքերն ու պատճառները, ինչպես նաև կարգավիճակից բխող իրավունքներն ու պարտականությունները չներկայացնելու խնդրի առնչությամբ Ոստիկանությունից պահանջվել են պարզաբանումներ, որոնց ի պատասխան՝ նշվել է, որ Ոստիկանության ծառայողները պարզաբանել են վարչական ձերբակալման ենթարկելու հիմքերը և ազատությունից զրկելու հետ կապված իրավունքները:

Մարդու իրավունքների պաշտպանն ընդգծում է, որ թեև առկա է հարցի առնչությամբ որոշակի առաջընթաց, այնուամենայնիվ, աշխատակազմի մշտադիտարկումները վկայում են, որ խնդիրը շարունակում է մնալ չհաղթահարված, իսկ պրակտիկան՝ խնդրահարույց:

Անձն ազատությունից զրկվելուց հետո անհապաղ պետք է իրեն հասկանալի լեզվով տեղեկացվի իրեն ազատությունից զրկելու պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա
Հոդված 5[1]. Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք 2. Յուրաքանչյուր ձերբակալված իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է իր ձերբակալման պատճառների և ներկայացվող ցանկացած մեղադրանքի մասին:

Նշվածն իր հերթին տեղ է գտել նաև Սահմանադրության 27-րդ հոդվածում, որի 2-րդ մասի համաձայն՝ անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է ազատությունից զրկվելու պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին: *Ընդ որում՝ կարևոր է, որպեսզի սահմանադրական հիմք ունեցող այս երաշխիքն ապահովվի այն փրամաբանությամբ, որ անձին ազատությունից զրկելու հիմքերը ներկայացնելը չկրի*

ձևական և մեխանիկական բնույթ, իսկ ազատությունից զրկելու յուրաքանչյուր դեպք ունենա փաստական և իրավական բավարար հիմնավորում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումը[445]

«Անհապաղությունը» պետք է գնահատվի կոնկրետ գործի առանձնահատուկ հանգամանքների հաշվառմամբ: Այս տեղեկատվությունը պետք է հաղորդվի «անհապաղ», սակայն պարտադիր չէ, որ այն ամբողջությամբ բացահայտվի ձերբակալությունն իրականացնող ոստիկանի կողմից անմիջապես ձերբակալման պահին: Անձը պետք է պարզ, ոչ տեխնիկական՝ իրեն հասկանալի լեզվով տեղեկացվի իր ձերբակալության հիմնական իրավական և փաստական հիմքերի մասին:

Պաշտպանն ընդգծում է նաև, որ յուրաքանչյուր պահանջ չէ, որ կարող է դիտարկվել որպես օրինական: Պահանջը պետք է համապատասխանի ոլորտին վերաբերելի ներպետական և միջազգային չափանիշներին, անձի համար լինի որոշակի և հասկանալի և նախորդի վարչական ձերբակալման ենթարկելուն:

Խնդրահարույց է նաև որպես վարչական ձերբակալման ենթարկելու հիմք Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի որևէ հոդվածի վկայակոչումը՝ առանց բացահայտելու այդ հոդվածով ամրագրված վարչական իրավախախտման բուն բովանդակությունը:

Անդրադառնալով ոստիկանության ծառայողի հնչեցրած օրինական պահանջի և այն չկատարելու չափանիշներին՝ դեռևս 2021 թվականին Ոստիկանությունից ստացված գրությամբ նշվել է, որ՝

- ոստիկանության ծառայողի պահանջը պետք է բխի օրենքից (նորմատիվ իրավական ակտից),

- ոստիկանության ծառայողի կողմից օրինական պահանջը պետք է հնչեցվի հասարակական կարգի պահպանության, հասարակական անվտանգության ապահովման կամ օբյեկտների պահպանության պարտականությունները կատարելու ընթացքում,

- օրինական պահանջը պետք լսելի լինի անձի համար և վերջինս լսելու պայմաններում պետք է հրաժարվի այն կատարելուց:

Մինչդեռ, շատ հաճախ ներկայացված պահանջներն անգամ լսելի կերպով ներկայացնելու դեպքերում Ոստիկանության ծառայողներն անմիջապես վարչական ձերբակալման են ենթարկում անձանց՝ ողջամիտ ժամկետ չտրամադրելով ներկայացված օրինական պահանջը կատարելու համար:

Սահմանադրական դատարանը, քննարկելով անձին ազատությունից զրկելիս հիմքերը չներկայացնելու և իր իրավունքներն ու պարտականությունները չպարզաբանելու խնդիրները, Պաշտպանի դիմումի հիման վրա իր՝ 2017 թվականի հունվարի 24-ի ՍԴՈ-1339 որոշմամբ արձանագրել է, որ ազատությունից զրկվելու պատճառների մասին անձին «անհապաղ տեղեկացնելը» հանրային իշխանության ուղղակի պարտականությունն է, և այդ հարցում հայեցողական մոտեցումն անթույլատրելի է:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է

[445] Տե՛ս Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության (Murray v. the United Kingdom) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1994 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, Շարք Ա թիվ 300-Ա, էջ 31, կետ 72: Ֆոքսը, Քեմփբելը և Հարթլին ընդդեմ Միացյալ Թագավորության (Fox, Campbell and Hartley v. the United Kingdom) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1990 թվականի օգոստոսի 30-ի վճիռը, Շարք Ա թիվ 182, էջ 19, կետ 40:

✓ վերանայել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ իրավունքներին միջամտություն ենթադրող վարչական ձերբակալման հարցերը կանոնակարգող կարգավորումները ու համապատասխանեցնել դրանք Սահմանադրության 27-րդ հոդվածով ամրագրված կարգավորմանը՝ ուղղակիորեն ամրագրելով անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի՝ ազատությունից զրկվելու պատճառների ու հիմքերի, իրավունքների ու պարտականությունների մասին իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվելու պահանջը,

✓ ազատությունից զրկելու յուրաքանչյուր դեպքում միջազգային չափանիշներին համապատասխան՝ անձին ներկայացնել ազատությունից զրկելու կոնկրետ հիմքերն ու պատճառները, անձի իրավունքներն ու պարտականությունները, այդ հարցին չցուցաբերել ձևական և մեխանիկական մոտեցում,

✓ պահպանել «օրինական պահանջին» առնչվող միջազգային և ներպետական չափանիշները:

2. Սահմանված ժամկետից ավելի անձին անազատության մեջ պահելը և ազատությունից զրկելու սկզբնական պահի որոշակիացումը

2023 թվականի ընթացքում իրականացված հավաքների մշտադիտարկումը վկայում է անձանց ազատությունից զրկելու սկզբնական պահի հստակեցման ու սահմանված ժամկետները պահպանելու բնագավառում առկա խնդիրների շարունակականության մասին:

Խնդրահարույց է ձևավորված այն պրակտիկան, երբ վարչական ձերբակալման ենթարկված անձանց անազատության մեջ պահելու ժամկետի հաշվարկի սկիզբ է դիտարկվում անձին ազատությունից զրկելու առնչությամբ համապատասխան արձանագրություն կազմելու կամ նրան Ոստիկանության համապատասխան բաժին բերելու և ոչ թե անձին ազատությունից փաստացի զրկելու պահը: Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումների ընթացքում ևս վեր են հանվել դեպքեր, երբ անձը փաստացի ազատությունից զրկվել է մի պահի, սակայն որպես վարչական ձերբակալման սկզբնական պահ արձանագրության մեջ նշվել է մեկ այլ ժամ: Այսպիսի խնդիր է արձանագրվել, օրինակ, 2023 թվականի օգոստոսի 8-ին Ոստիկանության Երևան քաղաքի վարչության բաժիններ իրականացված այցերի շրջանակներում: Մասնավորապես, վարչական ձերբակալման ենթարկված անձանցից մեկը նշել է, որ փաստացի արգելանքի է վերցվել ժամը 18:40-ի սահմաններում, սակայն վարչական ձերբակալման մասին կազմված արձանագրությունում, որպես ազատությունից զրկելու պահ, նշվել է ժամը 19:15-ը:

Անձին վարչական ձերբակալման ենթարկելու ժամկետների առնչությամբ կարգավորումները սահմանված են Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում, որի 262-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում կատարած անձի վարչական ձերբակալումը կարող է տևել ոչ ավելի, քան երեք ժամ (…):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշում
• «Ազատությունից զրկել» է համարվում նաև անձին փողոցում մի քանի ժամով կանգնեցնելը և հեռանալն արգելելը կամ, օրինակ, ոստիկանության բաժնից դուրս գալն

արգելելը, նույնիսկ, եթե անձն այնտեղ է գնացել իր կամքով՝ առանց իրավապահ մարմինների կողմից ուժի գործադրման[446]:

- «Ազատությունից զրկել» է որակվում նույնիսկ դիմումատուին ոստիկանության բաժին տեղափոխելը և այնտեղ շուրջ 45 րոպե պահելը[447]:
- Անձին կանգնեցնելու և անձնական զննություն կատարելու՝ ոստիկանության լիազորության իրականացման ընթացքում հարկադրանքի տարրի օգտագործումն անձին ազատությունից զրկելու նշան է, անկախ նրանից, թե որքան է այդ միջոցառումը տևում[448]:

Հատկանշական է Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումը, որով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի իմաստով խնդրահարույց է համարվել դիմումատուի ձերբակալման արձանագրությունը կազմելիս այլ ժամի արձանագրումը որպես նրան ձերբակալելու պահ՝ ի տարբերություն այն ժամի, երբ դիմումատուն փաստացի զրկվել է ազատությունից[449]:

Ուստի, անձին ազատությունից զրկելու սկզբնական պահի հաշվարկումը կարևոր է ինչպես օրենսդրությամբ ամրագրված առավելագույն ժամկետների պահպանման, այնպես էլ անձի՝ ազատությունից զրկվածի կարգավիճակից բխող բոլոր երաշխիքների ապահովման տեսանկյունից:

Պաշտպանն ընդգծում է, որ անհրաժեշտ է սկզբունքային համարել միջազգային իրավաբանությամբ ընդունված այն մոտեցումը, որ անձը համարվում է ազատությունից զրկված այն պահից սկսած, երբ նա ստիպված է հետևել ոստիկանի կամքին և չի կարող ինքնակամ լքել իր գտնվելու վայրը: Հետևաբար, անկախ կոնկրետ վարույթի տեսակից (քրեական, վարչական)՝անձին անազատության մեջ պահելու ժամկետի հաշվարկը պետք է սկսել ազատությունից փաստացի զրկելու պահից:

Ավելին, պետք է նկատի ունենալ, որ ՀՀ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 260-րդ և 262-րդ հոդվածների, ինչպես նաև 258-րդ և 267-րդ հոդվածների իմաստով «խախտողի բերում», «վարչական ձերբակալում», «բերման ենթարկում» միջոցառումների դեպքում անձնական ազատությունից փաստացի զրկելու պահից սկսած՝ ազատությունից զրկված անձի համար պետք է ապահովվեն ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով և 64-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավունքները՝ որպես անմիջականորեն գործող իրավունքներ:

Պաշտպանի մշտադիտարկման արդյունքները վկայում են նաև այնպիսի դեպքերի առկայության մասին, երբ Ոստիկանության իրավասու ծառայողների կողմից վարչական ձերբակալման ենթարկված անձի (այդ թվում՝ անչափահաս) առնչությամբ իրականացվող բոլոր գործողությունները կատարվել են, մինչդեռ վերջինիս շարունակել են պահել Ոստիկանության բաժնում մինչև օրենքով նախատեսված 3 ժամը լրանալը:

Պաշտպանն ընդգծում է, որ օրենսդրությամբ ամրագրված 3 ժամը վարչական ձերբակալման ենթարկված անձին անազատության մեջ պահելու առավելագույն ժամկետն

[446] Տե՛ս Շիմովոլոսն ընդդեմ Ռուսաստանի (Shimovolos v. Russia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 11-ի վճիռը, գանգատ թիվ 30194/09, կետ 48:

[447] Տե՛ս նույն տեղում:

[448] Տե՛ս Կրուկպոն և այլք ընդդեմ Ռուսաստանի (Krupko and others v. Russia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2014 թվականի հունիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 26587/07, Ֆոկան ընդդեմ Թուրքիայի գործով (Foka v. Turkey) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2008 թվականի հունիսի 24-ի վճիռը, գանգատ թիվ 28940/95, Բրեգան և այլք ընդդեմ Մոլդովայի (Brega and others v. Moldova) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2012 թվականի ապրիլի 24-ի վճիռը, գանգատ թիվ 61485/08 և այլն):

[449] Տե՛ս Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 23086/08, կետ 173:

է, և համապատասխան գործողությունների ավարտից հետո անձին անազատության մեջ պահելն՝ առանց իրավաչափ նպատակի առկայության, հանգեցնում է մի շարք հիմնական իրավունքների խախտման:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրության 27-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված նորմի պատշաճ երաշխավորման նպատակով անհրաժեշտ է անձին անազատության մեջ պահելու ժամկետը հաշվարկել նրան փաստացի ազատությունից զրկելու, այլ ոչ Ոստիկանության բաժին մուտք գործելու կամ վարչական ձերբակալման ենթարկելու կապակցությամբ արձանագրություն կազմելու պահից: Իսկ համապատասխան գործողություններն ավարտելուց հետո անհրաժեշտ է անձին ազատ արձակել՝ անկախ օրենսդրությամբ ամրագրված 3 ժամը լրանալու հանգամանքից:

3. Ազատությունից զրկված անձի ընտրած անձին տեղյակ պահելու իրավունքն անհապաղ չապահովելը

Մարդու իրավունքների պաշտպանի՝ 2023 թվականի ընթացքում տեղի ունեցած հավաքների մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ շատ հաճախ վարչական ձերբակալման ենթարկված անձը ոչ միայն պատշաճ չի տեղեկացվում վարչական ձերբակալման մասին իր ընտրած անձին անհապաղ տեղեկացնելու սահմանադրական իրավունքի մասին, այլև իրավունքի մասին իրազեկվելուց հետո այդ իրավունքի պատշաճ իրացումը չի ապահովվում:

Ոստիկանության բաժիններում մի շարք դեպքերում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներն են տեղեկացրել վարչական ձերբակալման ենթարկված անձանց՝ Սահմանադրության 27-րդ հոդվածի 3-րդ մասով երաշխավորված իրենց իրավունքի մասին: ՄԻՊ ներկայացուցիչների միջամտությամբ նշված սահմանադրական իրավունքի իրացումն ապահովվել է, և վարչական ձերբակալման ենթարկված անձինք հնարավորություն են ունեցել վարչական ձերբակալման մասին տեղյակ պահելու իրենց նախընտրած անձին: Նման խնդիր է արձանագրվել նաև 2023 թվականի սեպտեմբերի 19-26-ն ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած հավաքների ընթացքում վարչական ձերբակալման ենթարկելու գործընթացի շրջանակներում:

Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի՝ այդ մասին անհապաղ իր ընտրած անձին տեղեկացնելու իրավունքը երաշխավորված է Սահմանադրության 27-րդ հոդվածի 3-րդ մասով: Ընդ որում՝ այդ իրավունքի իրականացումը կարող է հետաձգվել միայն օրենքով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետով՝ հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակով:

Ազատությունից զրկված անձի՝ 27-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավունքի իրականացման հետաձգման հնարավորություն սահմանադիրը նախատեսել է միայն հետևյալ պայմանների միաժամանակյա պահպանմամբ՝ հետաձգումը միայն օրենքով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետով և հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակով:

ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1339 որոշմամբ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասը՝ այն մասով, որով չեն ապահովվում ազատությունից փաստացի զրկված անձանց համար այդ իսկ պահից իրավունքների

պաշտպանության՝ սահմանադրորեն նախատեսված շրջանակներում, անհրաժեշտ իրավական երաշխիքներ, ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի պահանջներին հակասող և անվավեր:

2022 թվականին օրենքի կարգավորումը փոփոխվել է՝ նպատակ ունենալով այն համապատասխանեցնել ՍԴ իրավական դիրքորոշումներին: Դրույթը ձևակերպվել է հետևյալ բովանդակությամբ. «Ոստիկանությունը պարտավոր է ոստիկանության վարչական շենք մուտք գործելու պահից, սակայն ոչ ուշ, քան անձին ազատությունից փաստացի զրկելուց հետո՝ 3 ժամը լրանալու պահից, ձերբակալված անձին իրական հնարավորություն ընձեռել օգտվելու իրավաբանական օգնություն ստանալու իրավունքից, ինչպես նաև իր ընտրած անձին տեղեկացնել իր գտնվելու վայրի մասին, բացառությամբ Քրեական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերի, հաղորդակցվել և տեսակցել փաստաբանի հետ և իր ցանկության դեպքում ենթարկվել բժշկական զննման»:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է գործնականում ապահովել ազատությունից զրկված անձին իր ընտրած անձին իր անազատության մեջ գտնվելու մասին անհապաղ տեղյակ պահելու սահմանադրական իրավունքի մասին իրազեկումը և այդ իրավունքի պատշաճ իրացումը:

4. Ոչ համաչափ ուժի գործադրում և վերաբերմունքն ազատությունից զրկված անձանց նկատմամբ

2023 թվականի ընթացքում կազմակերպված հավաքների մշտադիտարկումը ցույց է տալիս, որ ամենատարածված խնդիրներից մեկն ազատությունից զրկելիս անձանց նկատմամբ առերևույթ անհամաչափ ուժի գործադրումն է ու որոշ դեպքերում՝ անհարգալից վերաբերմունքը: Ասվածը բխում է ինչպես Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների՝ ազատությունից զրկված անձանց հետ վարած առանձնազրույցների արդյունքներից, այնպես էլ զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների մշտադիտարկումից:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումը[450]
Համաչափության սկզբունքը պահանջում է, որ հավասարակշռություն պահպանվի, մի կողմից Կոնվենցիայի ամրագրող 11-րդ հոդվածի 2-րդ մասում[451] թվարկված պահանջների և մյուս անձանց՝ կարծիքի (խոսքի, ժեստերի կամ նույնիսկ լռության միջոցով) ազատ արտահայտման պահանջների միջև:

2023 թվականի ընթացքում կազմակերպված հավաքների ընթացքում Պաշտպանի ներկայացուցիչների՝ Ոստիկանության տարբեր բաժիններ կատարած այցերի ընթացքում վարչական ձերբակալման ենթարկված անձինք մի շարք դեպքերում պնդել են, որ

[450] Տե՛ս Կուդրեվիչուսը և մյուսներն ընդդեմ Լիտվանիայի (Kudrevic˘ius and Others v. Lithuania) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2015 թվականի հոկտեմբերի 15-ի վճիռը, գանգատ թիվ 37553/05, կետ 144:

[451] Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հավաքների ու միավորման ազատության իրավունքների իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի նրանցից, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը կամ այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով: Սույն հոդվածը չի խոչընդոտում օրինական սահմանափակումներ նախատեսել զինված ուժերի, ոստիկանության և պետական վարչակազմի մեջ մտնող անձանց կողմից այդ իրավունքների իրականացման նկատմամբ:

վարչական ձերբակալման ենթարկելու ընթացքում իրենց նկատմամբ անհամաչափ ֆիզիկական ուժ է գործադրվել: Այս խնդրի մասին ազատությունից զրկված անձինք բարձրացրել են, մասնավորապես, 2023 թվականի օգոստոսի 8-ին Երևան քաղաքում՝ Հանրապետության հրապարակի տարածքում՝ կառավարության վարչական շենքի դիմաց, 2023 թվականի սեպտեմբերի 19-ին 26-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում և տարբեր մարզերում, ինչպես նաև 2023թ. նոյեմբերի 25-ից մինչև նոյեմբերի 28-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքի Միսաք Մանուշյանի անվան պուրակում իրականացված հանրային հավաքների ընթացքում:

Ընդ որում՝ ազատությունից զրկված անձինք հայտնել են Ոստիկանության ներկայացուցչի կողմից ոչ միայն վարչական ձերբակալման ենթարկելիս անհամաչափ ֆիզիկական ուժ գործադրելու, այլև Ոստիկանության բաժնում բռնություն գործադրելու վերաբերյալ տեղեկություններ:

Օրինակ՝ 2023 թվականի օգոստոսի 8-ին Երևան քաղաքում՝ Հանրապետության հրապարակի տարածքում՝ կառավարության վարչական շենքի դիմաց տեղի ունեցած հավաքների ընթացքում վարչական ձերբակալման ենթարկված անձանց հետ տեղի ունեցած առանձնազրույցների ընթացքում անձինք հայտնել են վարչական ձերբակալման ենթարկելիս իրենց նկատմամբ անհամաչափ ֆիզիկական ուժի գործադրման դեպքերի մասին, ընդ որում՝ նկարագրվել են ֆիզիկական ուժի գործադրման տարբեր դեպքեր Ոստիկանության 10, 8 ու 6 ծառայողների անմիջական մասնակցությամբ: Ըստ ազատությունից զրկված անձանցից մեկի՝ իր նկատմամբ կիրառվել է ձեռնաշղթա, որը հանել են Ոստիկանության համապատասխան բաժնում միայն այնտեղ գտնվելուց 1 ժամ անց, իսկ մինչ այդ կանգնել է՝ ձեռքերը մեջքի հետևում պահած:

2023 թվականի սեպտեմբերի 19-ից 26-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում և տարբեր մարզերում իրականացված հավաքների ընթացքում ազատությունից զրկված անձինք Պաշտպանի ներկայացուցիչներին ներկայացրել են բռնության գործադրման դեպքերի (այդ թվում՝ անչափահասների նկատմամբ) առնչությամբ տեղեկություններ: Ըստ ազատությունից զրկված անձանցից մեկի՝ բազմաթիվ հարվածներ են հասցրել իր մարմնի տարբեր հատվածներին՝ այդ ընթացքում հայհոյանքներ հնչեցնելով իր հասցեին:

Սեպտեմբերի 21-ին Ոստիկանության բաժիններ իրականացված այցերի ընթացքում ազատությունից զրկված որոշ անձինք հայտնել են, որ Ոստիկանության հատուկ նշանակության ծառայողները հարձակվել են իրենց վրա՝ քարշ տալով տեղափոխել ՀՀ կառավարության վարչական շենքի պատի տակ՝ Ոստիկանության ծառայողների կողմից կազմված շարքի հակառակ կողմը, պառկեցրել գետնին, որից հետո մի խումբ ոստիկանության ծառայողներ սկսել են ոտքերով և ձեռքերով հարվածներ հասցնել մարմնի տարբեր հատվածներին՝ առաջացնելով տարբեր մարմնական վնասվածքներ:

Սեպտեմբերի 22-ին վարչական ձերբակալման ենթարկված անձանցից մեկը հայտնել է, որ իրեն մոտեցել են Ոստիկանության 7-8 ներկայացուցիչ, գցել են գետնին և սկսել ոտքերով հարվածել գլխին: Այնուհետև, ձեռքերը ոլորած՝ իրեն հրելով մտցրել են ավտոմեքենան, ինչի արդյունքում էլ գլուխը հարվածել է ավտոմեքենայի դռանը: Արդյունքում, գլխի հատվածում ստացել է վնասվածք, վայր է ընկել ավտոմեքենայի հատակին և սկսել է արնահոսել: Այդ մասին տեղեկացրել է Ոստիկանության ծառայողներին և պահանջել հրավիրել շտապ բժշկական օգնության խումբ: Ի պատասխան՝ Ոստիկանության ծառայողներն արձագանքել են, որ անձը նստած մնա

մեքենայում, իսկ բժշկական օգնության հարցն ավելի ուշ կլուծվի: Վերջինիս հավաստմամբ՝շտապ օգնության բժշկական ծառայությունը ժամանել է իրեն Ոստիկանության բաժին տեղափոխելուց հետո՝ շուրջ 10 րոպե անց: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների այցի պահին բժշկական անձնակազմն արդեն տեղում է եղել և պատրաստվել է տվյալ անձին տեղափոխել քաղաքացիական հիվանդանոց՝ պատռված վերքի վիրաբուժական միջամտության անհրաժեշտությամբ պայմանավորված:

Նույն օրը Պաշտպանի ներկայացուցիչները տեսակցել են նաև բժշկական կենտրոններից մեկում գտնվող ձերբակալված անձի, ով հայտնել է, որ իր նկատմամբ ֆիզիկական ուժ է գործադրվել՝ հարվածներ են հասցրել, այդ թվում՝ ավտոմեքենայի մեջ: Ըստ բուժող բժշկի՝ վերջինիս մոտ ախտորոշվել է ուղեղի ցնցում, ուստի և բժշկական հետազոտություններ կատարելու անհրաժեշտություն է եղել:

Սեպտեմբերի 25-ին ևս վարչական ձերբակալման ենթարկված անձինք բարձրացրել են Ոստիկանության ծառայողների ոչ իրավաչափ գործողությունների խնդիրը: Ըստ նրանց՝ Ոստիկանության բաժին բերման ենթարկվելիս մեքենայում Ոստիկանության ծառայողները թիրախավորել են վերջիններիս ու թվով 8 ծառայողներ հարձակվել են իրենց վրա և սկսել հարվածներ հասցնել, ինչի հետևանքով բազմաթիվ վնասվածքներ են ստացել, այդ թվում՝ գլխի շրջանում: Այս մասին Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներին հայտնել են նաև վարչական ձերբակալման ենթարկված այլ անձինք:

Պաշտպանի իրականացրած մշտադիտարկմամբ հայտնի է դարձել, որ հավաքի ընթացքում Ոստիկանության ծառայողները հատուկ միջոցներ են կիրառել հավաքի մասնակիցների նկատմամբ, ինչի հետևանքով մի խումբ քաղաքացիներ ստացել են մարմնական վնասվածքներ և տեղափոխվել բժշկական հաստատություն: Պարզվել է, որ հավաքի մասնակիցների կողմից իրականացված գործողությունների արդյունքում վնասվածքներ են ստացել նաև Ոստիկանության մի շարք ծառայողներ:

Ըստ ազատությունից զրկված անձանց՝ հավաքի ընթացքում Ոստիկանության ծառայողները նռնակներ (հատուկ միջոցներ) են կիրառել ցուցարարների ուղղությամբ, ինչի արդյունքում որոշ մասնակիցներ ստացել են բեկորային վնասվածքներ ոտքերի, թիկունքի շրջանում, 1-ին և 2-րդ կարգի այրվածքներ ոտքերի շրջանում, քերծվածքներ մեջքի շրջանում, լսողության խնդիրներ: Պաշտպանի ներկայացուցիչները բժշկական կենտրոնում այցելել են նշված անձանց: Հատուկ միջոցների կիրառումից հետո անձինք բժշկական հաստատություն են տեղափոխվել նաև պարեկային ծառայության ավտոմեքենայով:

Այս առնչությամբ, ըստ Դատախազության տրամադրած տեղեկությունների՝ 2023 թվականի սեպտեմբերի 19-ին՝ ժամը 21:00-ի սահմաններում Երևան քաղաքի Կառավարական տուն 1 հասցեի հարակից տարածքում կատարվող զանգվածային անկարգությունների ժամանակ Ոստիկանության ծառայողների կողմից կիրառվել են հատուկ միջոցներ, ինչի հետևանքով մի շարք անձինք ստացած մարմնական վնասվածքներով դիմել են բուժօգնության:

Վերոգրյալի պայմաններում, ըստ Դատախազությունից ստացված տեղեկատվության, հայտնաբերվել է պաշտոնատար անձ հանդիսացող ոստիկանության ծառայողների կողմից իրենց լիազորություններից չբխող կամ իրենց լիազորությունների շրջանակից դուրս, հատուկ միջոցների օգտագործմամբ կատարված արարք, որին ողջամտորեն կարող է տրվել ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված

իրավական գնահատական, ուստի 2023 թվականի նոյեմբերի 20-ին նախաձեռնվել է վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, ինչի առթիվ կատարվում է նախաքննություն:

Պաշտպանն ընդգծում է, որ նշված և այլ դեպքերը վկայում են ինչպես առերևույթ անհամաչափ ուժի գործադրման, այնպես էլ Ոստիկանության ծառայողների կողմից անհանդուրժող և արժանապատվությունը նվաստացնող մոտեցումների առկայության մասին: Ընդ որում՝ առանձին դեպքերում բողոքներ են ստացվել նաև անչափահասների նկատմամբ նման վերաբերմունքի առնչությամբ:

Ըստ Ներքին գործերի նախարարության պարզաբանումների՝ ֆիզիկական ուժի գործադրման հետևանքով որոշ անձանց վրա առկա են եղել մարմնական վնասվածքներ, որոնց կապակցությամբ վերջիններս տեղափոխվել են համապատասխան բժշկական կենտրոններ, իսկ Ոստիկանության ծառայողների գործողությունների վերաբերյալ նշանակվել են ծառայողական քննություններ: Ինչ վերաբերում է հատուկ միջոցների կիրառմանը, ապա, ըստ ներկայացված պարզաբանման, զանգվածային անկարգությունները զսպելու, ինչպես նաև քաղաքացիների և ոստիկանության զինծառայողների կյանքի և առողջության համար ծանր հետևանքներից խուսափելու նպատակով կիրառվել են հատուկ միջոցներ: Ոստիկանության զորքերի հատուկ նշանակության ջոկատի հատուկ միջոցների խմբի զինծառայողների կողմից կիրառվել է «Զարյա-3» տեսակի ձեռքի լուսաձայնային նռնակ, ինչի կապակցությամբ Ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում նշանակվել է ծառայողական քննություն:

Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների ու հրազենի գործադրումը օրենքով նախատեսված է որպես բացառիկ միջոց՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով, այնքանով, որքանով դա անհրաժեշտ է իր պարտականությունները կատարելու համար, եթե այլ միջոցներով այդ պարտականությունների կատարումը հնարավոր չէ ապահովել[452]: Իրավախախտումները կանխելու կամ խափանելու, իրավախախտներին բռնելու և ոստիկանություն ներկայացնելու, ոստիկանության ծառայողի օրինական պահանջներին չենթարկվելու կամ դիմադրություն ցույց տալու դեպքերում, ինչպես նաև ինքնապաշտպանության նպատակով ոստիկանության ծառայողն իրավունք ունի իրավախախտների նկատմամբ գործադրել ֆիզիկական ուժ (այդ թվում՝ ձեռնամարտի հնարքներ), ինչպես նաև ձեռքի տակ գտնվող անհրաժեշտ առարկաներ, եթե ոչ ուժային միջոցները չեն ապահովում ոստիկանության վրա դրված պարտականությունների կատարումը[453]:

«Իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից ուժի և հրազենի կիրառման» ՄԱԿ-ի հիմնական սկզբունքներ

Ուժի կիրառումը պետք է միշտ լինի ծայրահեղ միջոց՝ ոչ թե նորմ, և այն պետք է լինի համաչափ՝ միտված մարդու կյանքը պաշտպանելուն:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումը

[452] «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդված:
[453] Նույն օրենքի 30-րդ հոդված:

• Անկախ նրանից, թե Ոստիկանության՝ հավաքներին միջամտությունը պայմանավորված է բնականոն կյանքի խաթարումը, թե հավաքի մասնակիցների բռնի գործողությունները կանխելու նպատակով, Ոստիկանության կողմից ուժի գործադրումը պետք է համաչափ լինի անկարգությունների կանխմանն ու այլ անձանց իրավունքների պաշտպանությանը[454]:

• Հավաքը ցրելու հատուկ միջոցների կիրառումը պահանջում է հատուկ ու բավարար հիմնավորում[455]:

• Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածը ֆիզիկական ուժի կիրառումը չի արգելում որոշակի հստակ սահմանված դեպքերում ու հանգամանքներում: Սակայն, այդպիսի ուժ կարող է կիրառվել, երբ այն խիստ հարկավոր է ու անխուսափելի: Միևնույն ժամանակ, դրա կիրառումը պետք է լինի անհրաժեշտ՝ չգերազանցելով դրա սահմանները[456]:

• Ֆիզիկական ուժի գործադրումը, որի խիստ անհրաժեշտությունը պայմանավորված չէ անձի սեփական գործողություններով կամ վարքագծով, նվաստացնում է անձի արժանապատվությունը ու ՄԻԵԿ 3-րդ հոդվածի իմաստով խախտում է[457]:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի 2016 թվականի «Մարդու իրավունքների ձեռնարկ. ոստիկանության գործունեությունը հավաքների ժամանակ» ուղեցույց[458]

Ոստիկանության կողմից ուժի կիրառումը պետք է մշտապես լինի բացառություն, այլ ոչ թե կանոն: Նախապատվությունը պետք է միշտ տրվի խաղաղ ճանապարհով լարվածության թուլացմանը՝ որպես ուժի կիրառման այլընտրանք օգտագործելով երկխոսությունը, համոզելը և բանակցելը:

Հարկ է նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտում է արձանագրել Հայաստանի դեմ կայացված վճիռներում՝ արձանագրելով, որ անցկացվող հավաքը ցրելը կատարվել է առանց բավարար հիմնավորման, առանց ցրելու մասին նախազգուշացումների և ուժի չհիմնավորված և անհամաչափ գործադրմամբ: Նշվածը, ըստ դատարանի, որպես անհամաչափ միջոց, անցել է ողջամտության այն սահմանները, որը հավաքների ազատությունը սահմանափակելիս կարելի էր ակնկալել իշխանություններից[459]:

[454]Տե՛ս Օյա Ատամանն ընդդեմ Թուրքիայի (Oya Ataman v. Turkey) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 5-ի վճիռը, գանգատ թիվ 74552/01, կետ 41-43, Լագունա Գուզմանն ընդդեմ Իսպանիայի (Laguna Guzman v. Spain) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2020 թվականի հոկտեմբերի 6-ի վճիռը, գանգատ թիվ 41462/17, կետ 54:

[455] Տե՛ս Կրթության և գիտության աշխատողների միությունն ընդդեմ Թուրքիայի (Eğitim ve Bilim Emekçileri Sendikasi and Others v. Turkey) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2016 թվականի հուլիսի 5-ի վճիռը, գանգատ թիվ 20347/07, կետ 108:

[456] Տե՛ս Քուրնազը և մյուրներն ընդդեմ թուրքիայի (Kurnaz and others v. Turkey) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2007 թվականի հուլիսի 24-ի վճիռը, գանգատ թիվ 36672/97, կետ 52, Իվան Վասիլևը ընդդեմ Բուլղարիայի (Ivan Vasilev v. Bulgaria) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2007 թվականի ապրիլի 12-ի վճիռը, գանգատ թիվ 48130/99, կետ 63:

[457] Տե՛ս Մուրադովան ընդդեմ Ադրբեջանի (Muradova v. Azerbaijan) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2009 թվականի ապրիլի 2-ի վճիռը, գանգատ թիվ 22684/05, կետ 109:

[458] Տե՛ս Մարդու իրավունքների ձեռնարկ. ոստիկանության գործունեությունը հավաքների ընթացքում, հասանելի է https://www.osce.org/files/f/documents/c/6/425663.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[459]Տե՛ս Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 23086/08, կետ 248: Տեր-Պետրոսյանն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2019 թվականի ապրիլի 25-ի վճիռը, գանգատ թիվ 36469/08, կետ 64:

Հարկ է ընդգծել, որ Պաշտպանը կարևորում է նաև հավաքի մասնակիցների կողմից հավաքի խաղաղ բնույթի և օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանումը:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Պաշտպանն ընդգծում է, որ անհրաժեշտ է.

✓ շարունակական քայլեր ձեռնարկել, այդ թվում՝ պարբերական վերապատրաստումների միջոցով, Ոստիկանության կողմից անհամաչափ ուժի գործադրումը և վատ վերաբերմունքի դեպքերը բացառելու նպատակով,

✓ իրականացնել անհամաչափ ուժի գործադրման և վատ վերաբերմունքի առերևույթ դեպքերի առնչությամբ պատշաճ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն՝ երաշխավորելով պատասխանատվության անխուսափելիությունը:

5. Փաստաբանների կողմից Ոստիկանության բաժիններ և քննչական մարմինների վարչական շենք մուտք գործելու առնչությամբ առկա խնդիրներ

2023 թվականի սեպտեմբերի 19-ից 26-ն ընկած ժամանակահատվածում Պաշտպանի աշխատակազմում տեղեկություններ են ստացվել այն մասին, որ առանձին դեպքերում փաստաբանների մուտքը Ոստիկանության բաժիններ և քննչական մարմնի վարչական շենք չի թույլատրվել, ինչը խնդիրներ է հարուցում ազատությունից զրկված անձանց իրավաբանական օգնություն տրամադրելու հետ կապված: Ընդ որում՝ բարձրացվել են նաև անչափահասներին իրավաբանական օգնություն ցույց տալու նպատակով ներկայացած փաստաբանների մուտքին առնչվող խնդիրներ:

2023 թվականի նոյեմբերի 25-29-ն ընկած ժամանակահատվածում «Զանգ» շարժման շրջանակներում իրականացված հավաքների համատեքստում արձանագրվել է դեպք, երբ վարչական ձերբակալման ենթարկված անձին թույլ չի տրվել կապ հաստատել փաստաբանի հետ: Նշվածը Ոստիկանության ծառայողների կողմից պատճառաբանվել է այն հանգամանքով, որ վարչական ձերբակալման ենթարկված անձն արդեն իսկ կապ է հաստատել իր նախընտրած անձի հետ՝ վարչական ձերբակալման մասին տեղյակ պահելու նպատակով:

Ներկայացված բոլոր դեպքերում Պաշտպանի ներկայացուցիչների միջամտության և իրավասու մարմինների հետ համագործակցության արդյունքում փաստաբանի մուտքը համապատասխան մարմիններ ապահովվել է:

Անձի արդար դատաքննության իրավունքը՝ ամրագրված Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով, ի թիվս այլնի, ներառում է նաև յուրաքանչյուրի իրավունքը՝ պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումը փաստաբանի մասնագիտական գործունեության անխոչընդոտ իրականացման առնչությամբ[460]

[460] Տե՛ս Էլսին և ուրիշները ընդդեմ Թուրքիայի (Elçi and others v. Turkey) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2003 թվականի նոյեմբերի 13-ի վճիռը, գանգատ թիվ 23145/93 25091/94, կետ 669:

- Փաստաբանը կենտրոնական դեր ունի արդարադատության իրականացման և իրավունքի գերակայության պահպանման համատեքստում:
- Փաստաբանների՝ առանց անհարկի խոչընդոտների իրենց մասնագիտությունն իրականացնելու ազատությունը ժողովրդավարական հասարակության էական բաղադրիչն է և անհրաժեշտ նախապայման Կոնվենցիայի դրույթների արդյունավետ իրագործման համար, մասնավորապես՝ արդար դատաքննության երաշխիքների և անձնական անձեռնմխելիության իրավունքի:

Կարևորելով փաստաբանի դերն ու վերջինիս պաշտպանված մասնագիտական գործունեությունը՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության պատշաճ համակարգի կարևորագույն նախապայման՝ փաստաբանի՝ վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալու, այդ թվում՝ անարգել տեսակցելու իրավունքի պատշաճ իրացումը երաշխավորելու նպատակով ՀՀ քրեական օրենսգրքի 491-րդ հոդվածով քրեական պատասխանատվություն է նախատեսվում փաստաբանի լիազորությունների իրականացումը խոչընդոտելու համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է բացառել անձին իրավաբանական օգնություն ցույց տալու նպատակով իրավասու մարմիններ ներկայացած փաստաբանի մուտքի խոչընդոտի ցանկացած դրսևորում՝ ելնելով անձի պաշտպանության իրավունքի և փաստաբանի լիազորությունների անխոչընդոտ ապահովման սկզբունքից:

6. Հավաքի մասնակից անձանց կողմից վրանի տեղադրման արգելքի առնչությամբ խնդիրներ

2023 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ և ահազանգներ՝ անձանց հավաքների ազատության իրավունքի համատեքստում վերջիններիս իրավունքների անհամաչափ սահմանափակումների, մասնավորապես՝ հավաքի անցկացման վայրում հավաքի մասնակից անձանց կողմից վրան տեղադրելը թույլ չտալուն ուղղված Ոստիկանության ծառայողների գործողությունների վերաբերյալ: Նման բողոքներ հավաքի մասնակիցները ներկայացրել են Պաշտպանի ներկայացուցիչներին ինչպես հավաքի անցկացման վայր, այնպես էլ Ոստիկանության տարբեր ստորաբաժանումներ իրականացրած արագ արձագանքման այցերի շրջանակում:

Խնդրի առնչությամբ մշտադիտարկումների շրջանակն ընդգրկել է ինչպես 2023 թվականի օգոստոսի 16-ին և հաջորդող օրերին, այնպես էլ նոյեմբերի 25-ից մինչև նոյեմբերի 29-ն ընկած ժամանակահատվածում Երևանի Մ. Մանուշյանի անվան պուրակում հավաքները: Նշված հավաքների ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ Ոստիկանության ծառայողները թույլ չեն տվել հանրային քննարկում ու հավաք իրականացնելու նպատակով նախատեսված վրանի տեղադրումը: Հավաքի մասնակից անձանց նկատմամբ նախաձեռնվել են վարչական վարույթներ, անձինք ենթարկվել են վարչական ձերբակալման և տվյալ վարույթի շրջանակում վրանները վերցվել ու պահվել են վարույթն իրականացնող մարմնում: Ընդ որում՝ արձանագրվել է դեպք, երբ հավաքի մասնակիցներին վրանի տեղադրման այլընտրանքային վայր Ոստիկանության ներկայացուցիչների կողմից չի առաջարկվել:

Ներկայացվածի կապակցությամբ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա Մարդու իրավունքների պաշտպանը կայացրել է սեփական նախաձեռնությամբ հարցի քննարկում սկսելու վերաբերյալ որոշում: Խնդրի համապարփակ դիտարկման, այդ թվում՝ իրավասու մարմնի պարզաբանումների, ներպետական օրենսդրության ու միջազգային իրավական մոտեցումների ու չափանիշների ուսումնասիրությունների հիման վրա, Մարդու իրավունքների պաշտպանը կայացրել է անձանց՝ հավաքի ազատության հիմնական իրավունքի խախտման առկայության մասին որոշում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումները
• Հավաքների ազատության ցանկացած սահմանափակում պետք է ստուգվի համաչափության տեսանկյունից[461]: Համաչափության սկզբունքը շահերի հավասարակշռությունն ապահովելու միջոց է: Այս սկզբունքը հավասարակշռություն է սահմանում մի կողմից միջամտության բնույթի և չափի, մյուս կողմից՝ միջամտության պատճառի միջև: Միջամտության աստիճանը պետք է որոշվի միայն այն արդարացնող նպատակով[462]: Իշխանությունները պետք է գիտակցեն, որ իրենց լիազորությունները չեն սահմանափակվում բացառապես հավաքը արգելելու կամ դրան չմիջամտելու գործառույթներով: Ավելին, հաշվի առնելով, որ հավաքների պարագայում կարող է կիրառվել տարբեր տեսակի միջամտությունների լայն շրջանակ՝ անհրաժեշտ է ապահովել, որ իրավաչափ նպատակներին հասնելու համար կիրառվեն միջամտության նվազագույն միջոցները: • Պետական իշխանությունների կողմից իրենց գործողությունների համաչափությունը հաստատելու համար ներկայացվող հիմքերը պետք է լինեն «վերաբերելի և բավարար», «համոզիչ և ծանրակշիռ» և հիմնված լինեն «համապատասխան փաստերի ընդունելի գնահատման վրա»[463]: Կասկածները կամ ենթադրությունները չեն կարող համարվել բավարար: Սա հատկապես կարևոր է, երբ հավաքը վերաբերում է հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցի, կամ առկա են քաղաքական թեմայով ելույթներ[464]: • Պետական մարմինները պետք է որոշակի հանդուրժողականություն ցուցաբերեն «անօրինական» խաղաղ հավաքների նկատմամբ: Սա պետք է տարածվի այն դեպքերի վրա, երբ ցույցն անցկացվել է հասարակական վայրում՝ առանց անվտանգությանը սպառնացող ռիսկերի կամ անկարգությունների վտանգի և, եթե ցուցարարների

[461] Տե՛ս Rassemblement Jurassien Unité Jurassienne v. Switzerland գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1979 թվականի հոկտեմբերի 10-ի որոշումը:

[462] Տե՛ս Feldman, D. Civil Liberties & Human Rights in England and Wales, 2nd ed., Oxford: Oxford University Press, 2002, p.57:

[463] Տե՛ս Մախմուդովը ընդդեմ Ռուսաստանի (Makhmudov v. Russia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35082/04, կետ 63-65, Մախմուդովը ընդդեմ Ռուսաստանի (Makhmudov v. Russia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35082/04, կետ 63-65, Թուրքիայի միացյալ կոմունիստական կուսակցությունը և մյուսներն ընդդեմ Թուրքիայի (United Communist Party of Turkey and Others v. Turkey) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1998 թվականի հունվարի 30-ի վճիռը, գանգատ թիվ 133/1996/752/951, կետ 47:

[464] Տե՛ս Խաղաղ հավաքների ազատության իրավունքի վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից մշակված ուղեցույցը, 2011թ., հասանելի է https://www.osce.org/files/f/documents/d/6/83237.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ, Քրիստոնեական ժողովրդական մարդկանց կուսակցությունն ընդդեմ Մոլդովայի (Christian Democratic Peoples' Party v. Moldova) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2006 թվականի փետրվարի 14-ի վճիռը, գանգատ թիվ 28793/02, կետ 71, Ռոսկան, Սեկարեանուն և ուրիշներն ընդդեմ Մոլդովայի (Rosca, Secareanu and Others v. Moldova) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2008 թվականի մարտի 27-ի վճիռը, գանգատ թիվ 25230/02, 25203/02, 27642/02, 25234/02, 25235/02, կետ 40:

պատճառած անհարմարությունները չեն գերազանցել աննշան անկարգությունների մակարդակը, որը բխում է հասարակական վայրում խաղաղ հավաքների իրավունքի բնականոն իրականացումից[465]:

• Հանդուրժողականության սկզբունքը պետք է տարածվի նաև այն հավաքների վրա, որոնք հանգեցրել են «առօրյա կյանքի, ներառյալ՝ երթևեկության, որոշակի խաթարման», ինչը, սակայն, դեռևս բավարար չէ խաղաղ հավաքների ազատության իրավունքը սահմանափակելու համար[466]:

• Հավաքների ժամանակ հանրային տարածքի օգտագործումը նույնքան իրավաչափ է, որքան նման տարածքն առևտրային գործունեության կամ տրանսպորտի կամ հետիոտնի երթևեկության համար օգտագործելը: Հանրային վայրում իրականացվող ցանկացած հավաք կարող է որոշակի անհարմարություն պատճառել, այդ թվում՝ հանգեցնել երթևեկության համար որոշ խոչընդոտների, սակայն եթե ցուցարարները բռնի գործողություններ չեն կատարում, ապա շատ կարևոր է, որ պետությունը խաղաղ հավաքների անցկացման նկատմամբ ցուցաբերի որոշակի

[465] Տե՛ս Ֆաբերն ընդդեմ Հունգարիայի (Faber v. Hungary) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2012 թվականի հուլիսի 24-ի վճիռը, գանգատ թիվ 40721/08, կետ 47, Նավալնին ընդդեմ Ռուսաստանի (Navalnyy v. Russia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2018 թվականի նոյեմբերի 15-ի վճիռը, գանգատ թիվ 29580/12 և այլն, կետ 131-132:

[466] Տե՛ս Բալչիկը և մյուրներն ընդդեմ Թուրքիայի (Balcik and Others v. Turkey) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2007 թվականի նոյեմբերի 29-ի վճիռը, գանգատ թիվ 25/02, Կուդրեվիչյուսը և այլները ընդդեմ Լիտվայի (Kudrevičius and Others v. Lithuania) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2015 թվականի հոկտեմբերի 15-ի վճիռը, գանգատ թիվ 37553/05, կետ 155, Մալոֆեևան ընդդեմ Ռուսաստանի (Malofeeva v. Russia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2013 թվականի մայիսի 30-ի վճիռը, գանգատ թիվ 36673/04, 136-137:

աստիճանի հանդուրժողականություն, որպեսզի չիմաստազրկվի Կոնվենցիայի 11-րդ հոդվածով սահմանված հավաքների ազատության իրավունքը[467]:

• Պետությունը պետք է ոչ միայն ապահովի խաղաղ հավաքների ազատության իրավունքը, այլև ձեռնպահ մնա նշված իրավունքի անուղղակի և անհիմն սահմանափակումներից[468]: Խաղաղ հավաքների ազատության իրավունքը ենթակա չէ սահմանափակման, քանի դեռ հավաքի մասնակիցները հավաքի ընթացքում չեն կատարել դատապարտելի արարքներ[469]:

• Եթե նույնիսկ պետական մարմինները ողջամիտ հիմքեր ունեն եզրակացնելու, որ անհրաժեշտ է սահմանափակումներ կիրառել հավաքի անցկացման ժամանակի կամ վայրի վերաբերյալ, ապա անհրաժեշտ է **հավաքի մասնակիցներին առաջարկել հավաք իրականացնելու այլ վայր կամ ժամանակ:**[470]

• ***Թեև Կոնվենցիայի 11-րդ հոդվածը չի երաշխավորում իր ընտրած ցանկացած վայրում ճամբար ստեղծելու իրավունքը, սակայն նման ժամանակավոր կառույցները, որոշակի հանգամանքներում, կարող են քաղաքական արտահայտման ձև լինել, որի սահմանափակումները պետք է համապատասխանեն Կոնվենցիայի 10-րդ հոդվածի պահանջներին[471]:***

Վենետիկի հանձնաժողովի կողմից հրապարակված խաղաղ հավաքների վերաբերյալ ուղեցույց

• Հավաքի անցկացման/դրսևորման եղանակի սահմանափակումները, օրինակ, կարող են վերաբերել բարձրախոսների, հատուկ սարքավորումների, լուսային և տեսողական էֆեկտների օգտագործմանը **կամ բողոքի ճամբարների կամ այլ ոչ մշտական շինությունների կառուցմանը: Այս դեպքում ներգործությունը կարող է տեղին լինել՝ պայմանավորված հավաքի անցկացման վայրով կամ օրվա ժամով: Նման սահմանափակումները նույնպես պետք է լինեն համաչափ**[472]:

• Միևնույն ժամանակ, Վենետիկի հանձնաժողովի կողմից հրապարակված խաղաղ հավաքների վերաբերյալ ուղեցույցում նշվում է, որ իրականացվող ակցիայի վերաբերյալ կիրառվող **«ժամանակավոր» տերմինը չպետք է բացառի բողոքի ճամբարների կամ այլ ոչ մշտական շինությունների կառուցումը**[473]:

---

[467] Տե՛ս Խաղաղ հավաքների ազատության իրավունքի վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից մշակված ուղեցույց (2011թ.) https://www.osce.org/files/f/documents/d/6/83237.pdf , Բալչիկը և մյուրներն ընդդեմ Թուրքիայի (Balcik and Others v. Turkey) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2007 թվականի նոյեմբերի 29-ի վճիռը, գանգատ թիվ 25/02, Աշուղյանն ընդդեմ Հայաստանի (Ashughyan v. Armenia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2008 թվականի հուլիսի 17-ի վճիռը, գանգատ թիվ 33268/03:

[468] Տե՛ս Ջավիթ Անն ընդդեմ Թուրքիայի (Djavit An v. Turkey) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2003 թվականի փետրվարի 20-ի վճիռը, գանգատ թիվ 20652/92, տե՛ս նաև՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին տարեկան հաղորդումը, հասանելի է https://www.ombuds.am/images/files/afe1e423a8f465a4fba32ccc27ef913a.pdf հղումով, էջեր՝ 62-63, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[469] Տե՛ս Էզելինն ընդդեմ Ֆրանսիայի (Ezelin v. France) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1991 թվականի ապրիլի 26-ի վճիռը, գանգատ թիվ 11800/85:

[470] Տե՛ս Խաղաղ հավաքների ազատության իրավունքի վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից մշակված ուղեցույց(2011թ.) https://www.osce.org/files/f/documents/d/6/83237.pdf :

[471] Տե՛ս case of Frumkin v. Russia, (Application no. 74568/12) judgment 2016, § 107:

[472] Տե՛ս https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2019)017rev-e:

[473] Տե՛ս https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2010)020-e:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանն արձանագրել է, որ հավաքների ազատությունն իր մեջ ներառում է նաև բացօթյա տարածքներում ժամանակավոր շինություններ կամ վրաններ տեղադրելու հնարավորությունը:

Ինչպես ՀՀ օրենսդրության, այնպես էլ միջազգային իրավաբանության համաձայն՝ հավաքների ազատության իրավունքը (այդ թվում՝ հավաքի ընթացքում ժամանակավոր շինություններ կամ վրան տեղադրելու հնարավորությունը) կարող է սահմանափակվել, սակայն դա կարող է տեղի ունենալ բացառապես կոնկրետ իրավական չափանիշների պահպանմամբ: Մասնավորապես, նման սահմանափակումները պետք է նախատեսված լինեն օրենքով, հետապնդեն իրավաչափ նպատակ և անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակությունում: Ընդ որում՝ այս համատեքստում առանցքային նշանակություն ունի համաչափության սկզբունքի պահպանումը, համաձայն որի՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Հարկ է նկատի ունենալ, որ ինչպես ներպետական, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ հավաքների ազատության իրավունքի սահմանափակման իրավաչափությունը գնահատման է ենթակա յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում՝ հավաքի անցկացման վրա ազդող հանգամանքների օբյեկտիվ և մանրամասն վերլուծության արդյունքում:

Այսպիսով, պետությունն է կրում հավաքների ազատության իրավունքի սահմանափակման իրավաչափությունը երաշխավորելու պարտականությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանն արձանագրել է, որ խնդրահարույց է իրավասու մարմինների գործողություններով այնպիսի հանրային ընկալման ձևավորումը, որ հավաքի ընթացքում ժամանակավոր շինությունների կամ վրանների տեղադրումն անթույլատրելի է ու հակաօրինական: Միևնույն ժամանակ, Պաշտպանն ընդգծել է, որ քննարկվող իրավունքը կարող է սահմանափակվել, սակայն այդ ընթացքում պետք է պահպանվեն իրավունքի սահմանափակման իրավաչափության չափանիշները, իսկ այդ սահմանափակումը պետության կողմից պետք է հիմնավորվի ծանրակշիռ և համոզիչ փաստարկներով:

Ասվածի հետ մեկտեղ իրավունքի խախտման առկայության մասին որոշմամբ՝ Պաշտպանը հատուկ նշել է, որ հավաքի ընթացքում վրան տեղադրելը խոչընդոտելուն ուղղված Ոստիկանության ծառայողների գործողությունները կոնկրետ իրավիճակում չեն համապատասխանել մարդու իրավունքների սահմանափակման իրավաչափության չափանիշներին, ներկայացված պատճառաբանությունների համատեքստում դրանք չեն կարող դիտարկվել անհրաժեշտ և համաչափ, իսկ Ոստիկանության կողմից ներկայացված հիմնավորումները հիմնական իրավունքի սահմանափակման համար ծանրակշիռ և համոզիչ չեն եղել[474]:Նույն որոշմամբ Մարդու իրավունքների պաշտպանն առաջարկել է ՀՀ ներքին գործերին նախարարին՝

ա) ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ հավաքների ազատության իրավունքի երաշխավորման և իրավունքի սահմանափակման իրավաչափության վերաբերյալ ՀՀ

[474] Առավել մանրամասն տե՛ս https://www.ombuds.am/am/site/ViewNews/2781 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

ՆԳՆ ոստիկանության ծառայողների գիտելիքների և կարողությունների զարգացման ուղղությամբ՝ ներպետական և միջազգային իրավական չափանիշների հաշվառմամբ,

բ) ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ հավաքների ազատության իրավունքի սահմանափակման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում սահմանափակման իրավաչափության չափանիշները պահպանելու ուղղությամբ՝ իրավունքի սահմանափակումը հիմնավորելով ծանրակշիռ և համոզիչ փաստարկներով:

Վերոնշյալ խախտման որոշման կապակցությամբ Ներքին գործերի նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ որոշման քննարկման արդյունքներով ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության իրավասու ստորաբաժանումներին տրվել են համապատասխան հանձնարարականներ՝ առավելագույն հետևողականություն ցուցաբերելու հավաքների ընթացքում հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման շրջանակներում վարչական միջամտության համաչափության պահպանման կապակցությամբ, ինչպես նաև՝ պարբերական ուսումնասիրության առարկա դարձնելու հավաքների ազատության իրավունքի սահմանափակման իրավաչափության վերաբերյալ ներպետական և միջազգային չափանիշներին:

ՀՀ ներքին գործերի նախարարությունից ստացված պարզաբանումների համաձայն՝ 2023 թվականի ընթացքում Ոստիկանության ծառայողների համար խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքի ապահովման, ինչպես նաև խոշտանգման և վատ վերաբերմունքի դեպքերի կանխարգելման նպատակով վերապատրաստումներ են անցկացվել, ի թիվս այլնի, ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության միջին խմբերի պաշտոններում նշանակված ծառայողների համար ««Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքը, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտման կապակցությամբ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռների ուսումնասիրում» և «Ոստիկանության լիազորությունները «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքը պահպանելիս» վերտառությամբ թեմաներով:

ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների և 2023-2025 թվականների գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» N 1978-Լ որոշման N 3 հավելվածի 6-րդ նպատակն է մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությունը հավաքների իրականացման ընթացքում ապահովելը: Նույն նպատակի համատեքստում նույն հավելվածի 6.2-րդ կետով որպես գործողություն է նախատեսվում Ներքին գործերի նախարարության մասնագիտացված ստորաբաժանումների (հասարակական կարգի պահպանությանն առնչվող) ղեկավարների և ծառայողների՝ հավաքների ազատության վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելը, ինչպես նաև հավաքների ընթացքում մարդու իրավունքների պաշտպանության, հույզերի և զանգվածի կառավարման վրա հիմնված պրակտիկա ձևավորելը:

Նշվածից բացի, ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1978-Լ որոշման N 3 հավելվածի 6.1-րդ կետով նախատեսվում է հավաքների և այլ զանգվածային միջոցառումների ընթացքում ոստիկանության գործողությունները կանոնակարգող «Ոստիկանության մասին» և «Ոստիկանության զորքերի մասին» օրենքների՝ միջազգային չափորոշիչների և մարդու իրավունքների համապատասխանելիության առնչությամբ վերանայումը՝ որպես գործողություն:

2023 թվականի ընթացքում ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից մշակվել է «Ոստիկանության գվարդիայի մասին» և հարակից օրենքների նախագծերի փաթեթ, որով նախատեսվում է սահմանել ոստիկանության գվարդիայի նոր կարգավիճակը, կառուցվածքը, ոստիկանության ընդհանուր գործառույթներից բխող նրա անմիջական գործառույթները, դրանց իրականացման կապակցությամբ ոստիկանության գվարդիայի ծառայողների իրավունքներն ու պարտականությունները, ներառյալ՝ նրանց կողմից ուժային միջոցներ կիրառելու դեպքերը, հիմքերը և համաչափության պայմանները, ինչպես նաև ոստիկանության գվարդիայի ծառայողների պատրաստման և վերապատրաստման առանձնահատկությունները: Օրենքի մակարդակով նախատեսվում է նաև սահմանել այն հատուկ միջոցները, որոնք լիազորված են լինելու կիրառել ոստիկանության գվարդիայի ծառայողները օրենքով վերապահված խնդիրների և գործառույթների ապահովման շրջանակներում:

Նախագծային լուծումների համաձայն՝ Ոստիկանության գվարդիայի ծառայողների հատուկ պատրաստության և պարբերական վերապատրաստման նպատակը օրենքով նախատեսված լիազորությունների իրականացման ընթացքում հարկադրանքի կիրառումը, այդ թվում՝ ուժային միջոցների գործադրումը նվազագույնի հասցնելու հմտությունների ուսուցումը և զարգացումն է: Հատուկ պատրաստության և պարբերական վերապատրաստման արդյունքում ոստիկանության գվարդիայի ծառայողը պետք է ունակ լինի հարկադրանքի կիրառման, այդ թվում՝ ուժային միջոցների գործադրման անհրաժեշտություն առաջացնող իրավիճակներում գործել օրենքով սահմանված սկզբունքներին և իրավաչափության պայմաններին համապատասխան:

Միևնույն ժամանակ, 2023 թվականի ընթացքում շրջանառության մեջ է դրվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծը: Վարչական իրավախախտումների ու դրանց վարույթների վերաբերյալ օրենսդրության արդիականության խնդրի մասին արձանագրվել է դեռևս Սահմանադրական դատարանի՝ Պաշտպանի դիմումի հիման վրա 2017 թվականի հունվարի 24-ի թիվ ՍԴՈ-1339 որոշմամբ, ըստ որի՝ երկրում սահմանադրական օրինականության հաստատման տեսանկյունից անհետաձգելի անհրաժեշտություն է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգրքի ընդունումը:

Սահմանադրական դատարանի 2017 թվականի հունվարի 24-ի թիվ ՍԴՈ-1339 որոշումը[475]
ՀՀ սահմանադրական դատարանը դեռևս 2012 թվականին ՍԴՈ-1048, ՍԴՈ-1059 որոշումներում նշել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգրքի ընդունման, առկա իրավակարգավորման շրջանակների հստակեցման անհրաժեշտությունը՝ ելնելով միջազգային ժամանակակից փորձի ուսումնասիրման արդյունքներից, և խորհրդային իրավակարգավորումների հատվածական փոփոխությունների ոչ նպատակահարմարությունը: Մինչև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգրքի ընդունումը դատական պրակտիկան պետք է հնարավորինս առաջնորդվի ՀՀ Սահմանադրության 3-րդ և 27-րդ հոդվածների այն դրույթների պահանջներով, որոնց համաձայն՝ «Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու

[475] Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2017 թվականի հունվարի 24-ի թիվ ՍԴՈ-1339 որոշումը:

հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք» և «Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է ազատությունից զրկվելու պատճառների ...մասին», «Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ այդ մասին անհապաղ տեղեկացվի իր ընտրած անձը: Այս իրավունքի իրականացումը կարող է հետաձգվել միայն օրենքով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետով՝ հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակով»:

Վերոնշյալ նախագծերը Մարդու իրավունքների պաշտպանի կողմից դիտարկվել են հավաքների ազատության երաշխավորման տեսանկյունից:

Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում տարիներ շարունակ բարձրացվում են հավաքների ազատությանն առնչվող օրենսդրական կարգավորումների հետ կապված խնդիրներ, որոնք 2023 թվականի ընթացքում ևս պահպանել են իրենց արդիականությունը, թեև որոշ խնդիրների լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկվել են տարբեր նախագծային փաթեթներով:

Հիմք ընդունելով վերոգրյալն՝ անհրաժեշտ է.

✓ ***ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ հավաքների ազատության իրավունքի երաշխավորման և իրավունքի սահմանափակման իրավաչափության վերաբերյալ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողների գիտելիքների և կարողությունների զարգացման ուղղությամբ՝ ներպետական և միջազգային իրավական չափանիշների հաշվառմամբ,***

✓ ***ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ հավաքների ազատության իրավունքի սահմանափակման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում սահմանափակման իրավաչափության չափանիշները պահպանելու ուղղությամբ՝ իրավունքի սահմանափակումը հիմնավորելով ծանրակշիռ և համոզիչ փաստարկներով:***

ԲԱԺԻՆ 10. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության առաջնահերթ ուղղություններից է գործարարության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանությունը: Մարդու իրավունքների պաշտպանի մանդատն այս ոլորտում ընդգրկում է ինչպես գործարարների շահերի պաշտպանության, այնպես էլ՝ տնտեսական գործունեության իրավունքի երաշխավորմանը վերաբերող հարցերը:

Հաշվետու տարում Պաշտպանին հասցեագրվող բողոքների ուսումնասիրության արդյունքում վեր են հանվել անհատական և համակարգային բնույթ կրող խնդիրներ, որոնց լուծման ուղղությամբ Պաշտպանը հանդես է եկել կոնկրետ առաջարկներով:

Պաշտպանը քննարկում է նաև հանրային ծառայության ոլորտում գործող կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների կամ ազատությունների զանգվածային խախտումների վերաբերյալ բողոքները: Այս առումով, էական է այն, որ 2023 թվականի ընթացքում ՊԵԿ, ԷՆ, ՀԾԿՀ և մի շարք այլ մարմինների հետ համագործակցության արդյունքում քաղաքացիների կողմից բարձրացված մի շարք հարցեր ստացել են լուծում:

2023 թվականին Պաշտպանը շարունակել է ինչպես գրագրությամբ, այնպես էլ՝ պետական մարմինների հետ հաղորդակցության տարբեր ձևաչափերով ներկայացնել գործարարության և հանրային ծառայության ոլորտներում առկա խնդիրները: Միևնույն ժամանակ, Պաշտպանի աշխատակազմը մասնակցություն է ունեցել գործարարության ոլորտում շահագրգիռ գերատեսչությունների, այդ թվում՝ միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպված քննարկումներին:

ԳԼՈՒԽ 1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

1. Վճարային քարտերով անկանխիկ վճարումներ ընդունելու հնարավորություն չապահովելու համար սահմանված տուգանքների անհամաչափության և անհատական մոտեցման բացակայության խնդիր

2023 թվականին Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ գյուղական համայնքներում փոքր ձեռնարկատիրությամբ զբաղվող անձանցից, որոնք բարձրացնում են վճարային քարտերով անկանխիկ վճարումներ ընդունելու հնարավորություն չապահովելու համար սահմանված տուգանքների միասնական չափերի խնդրահարույց լինելու հարցը: Մասնավորապես, բողոքների հիմնական մասը վերաբերում է նրան, որ տուգանելիս հաշվի չեն առնվում կոնկրետ իրավախախտման հանգամանքները, ինչպես նաև իրավախախտման համար սահմանված տուգանքի չափերը: Այդպիսով, տուգանքներ նշանակելիս անհատական մոտեցում չի ցուցաբերվում, ինչի արդյունքում փոքր շրջանառություն ունեցող տնտեսվարող սուբյեկտները հայտնվում են ծանր իրավիճակում, ընդհուպ մինչև գործունեությունը դադարեցնելու վտանգի առջև:

Այսպես, հաշվետու տարվա ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքներով տնտեսական գործունեություն ծավալող անձինք հայտնել են, որ գյուղական համայնքներում ունեն փոքր խանութներ՝ զբաղվում են ձեռնարկատիրական գործունեությամբ: Ըստ տնտեսվարողների՝ վճարային քարտերով անկանխիկ վճարումներ ընդունելու հնարավորություն չապահովելու համար նշանակվել է 300 հազար դրամի չափով տուգանք, ինչը տնտեսվարողների համար ծանր տնտեսական հետևանքներ է առաջացրել: Բողոքների համաձայն՝ գյուղական համայնքներում գործող փոքր խանութների պարագայում 300 հազար դրամի չափով տուգանք նշանակելն իրատեսական չէ, քանի որ սահմանված շեմը բավականին բարձր է: Տվյալ պարագայում բողոք ներկայացրած անձանց հիմնական մտահոգությունը հարկային տուգանքների անհատականացման կառուցակարգերի բացակայությունն է: Բողոքներից մեկով անձը դիմում-բողոք է ներկայացրել նաև ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողով: Դիմում-բողոքը քննության է առնվել հանձնաժողովում, որի արդյունքում կայացվել է այն մերժելու մասին որոշում:

Արդյունքում՝ հաճախ տուգանք նշանակելիս հաշվի չի առնվում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող տնտեսվարողի շրջանառության ծավալը, բոլորի համար գործում է տուգանքի միևնույն չափը, իսկ հարկային տեսուչը չունի օրենսդրական այնպիսի գործիքակազմ, որի կիրառմամբ կարողանա յուրաքանչյուր խախտման պարագայում ցուցաբերել անհատական մոտեցում:

Հարկ է նշել, որ մեծ ձեռնարկատիրության համար քննարկվող տուգանքի չափը կարող է լինել աննշան՝ հաշվի առնելով սուբյեկտի ֆինանսական դրությունը, մինչդեռ փոքր ձեռնարկատիրության համար այն կարող է պատճառ դառնալ գործունեությունը շարունակելու անհնարինության համար: Դրա հետ մեկտեղ, նշվածը խիստ բացասաբար կարող է ազդել նաև նորաբաց ձեռնարկատիրությունների վրա:

ՀՀ հարկային օրենսգրքի 419-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերի վերլուծությունը վկայում է, որ վճարային քարտերով անկանխիկ վճարումներ չընդունելու, այդ թվում՝ վճարային քարտերով անկանխիկ վճարումներ ընդունելու հնարավորություն չապահովելու համար ամրագրված են տուգանքների կոնկրետ չափեր *(300 հազար դրամ, իսկ*

խախտման արձանագրմանը հաջորդող մեկ տարվա ընթացքում կրկին կատարելու դեպքում՝ 400 հազար դրամ):

Այսպիսով, առկա չեն տարատեսակ հանգամանքներ (օրինակ՝ գյուղական համայնքում աշխատելու, նորաբաց լինելու, իրավախախտումն առաջին անգամ կատարած լինելու և այլն) հաշվի առնելու հստակ կառուցակարգեր:

Այսպիսով, Պաշտպանն ընդգծում է, որ նշված խնդրի կարգավորման համար անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել առաջին անգամ վճարային քարտերով անկանխիկ վճարումներ ընդունելու հնարավորություն չապահովելու համար նախազգուշացում կիրառելու օրենսդրական հնարավորություն նախատեսելու[476] կամ սահմանված տուգանքների չափերը համաչափության սկզբունքի տեսանկյունից դիտարկելու և տուգանքների նվազագույն ու առավելագույն չափեր սահմանելու հնարավորության հարցերը: Ընդ որում, անհրաժեշտ է ցուցաբերել անհատական մոտեցում՝ հաշվի առնելով կոնկրետ իրավիճակում իրավախախտման կոնկրետ հանգամանքները:

2. Առանց մաքսատուրքի անձնական օգտագործման ապրանքները ՀՀ ներմուծելու խնդիր

2023 թվականին Պաշտպանին շարունակվել են բողոքներ հասցեագրվել անձնական օգտագործման ապրանքները ՀՀ ներմուծելիս մաքսային ծառայողների կողմից մաքսատուրք վճարելու պահանջ ներկայացնելու վերաբերյալ:

Ոլորտը կարգավորող օրենսդրությամբ սահմանված չեն անձնական օգտագործման ապրանքների ներմուծման հստակ չափորոշիչներ, ինչի հետևանքով ֆիզիկական անձանց համար պարզ չէ, թե ի՞նչ հաճախականությամբ ՀՀ ապրանք ներմուծելիս նրանք պարտավորված կլինեն վճարել մաքսատուրք:

Պաշտպանը 2023 թվականի տարեկան հաղորդման պատրաստման շրջանակում նշված խնդրի կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով գրություն է հասցեագրել ՊԵԿ:

Կոմիտեի պարզաբանումների համաձայն՝ 2023 թվականի ընթացքում ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքներ ներմուծելիս մաքսատուրք վճարելու պահանջի վերաբերյալ ներկայացվել է թվով 19 դիմում-բողոք: Այսպիսով, թվով 19 դիմում-բողոքների մասով հարուցվել են վարչական վարույթներ, որոնց քննության արդյունքում ընդունվել են հետևյալ որոշումները.

- թվով 6 դեպքով դիմում-բողոքը բավարարվել է,
- թվով 10 դեպքով դիմում-բողոքը մերժվել է,
- թվով 3 դեպքով դիմում-բողոքի հիման վրա հարուցված վարույթը կարճվել է:

Ըստ ՊԵԿ-ի՝ «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրի 1-ին հավելվածով հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 256-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքներն անձնական օգտագործման ապրանքների շարքին դասելն իրականացվում է մաքսային մարմնի կողմից՝ ելնելով նույն կետով սահմանված չափանիշներից: Օրենսգրքի 457-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝

[476] Այս առումով որպես դրական առաջընթաց պետք է արձանագրել 2022 թվականին Հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածում կատարված փոփոխությունները: Ըստ այդմ, հսկիչ դրամարկղային մեքենային ներկայացվող տեխնիկական պահանջները չբավարարող հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության հայտնաբերման առաջին դեպքում կիրառվում է նախազգուշացում:

օրենսգրքի 256-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերի դրույթները չեն կիրառվում՝ մինչև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի այն որոշումն ուժի մեջ մտնելը, որն ընդունվել է նշված հոդվածի 5-րդ կետին համապատասխան, և որով սահմանվում են Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքներն անձնական օգտագործման ապրանքների շարքին դասելու չափանիշների քանակական բնութագրերը:

Ըստ պարզաբանման՝ մինչև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նշված որոշումն ուժի մեջ մտնելը համապատասխան իրավահարաբերությունների կարգավորումն իրականացվում է՝ «Մաքսային միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքների տեղափոխման և դրանց բացթողման հետ կապված մաքսային գործառնությունների իրականացման կարգի մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներին համապատասխան, համաձայն որի՝ ֆիզիկական անձանց կողմից մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքներն անձնական օգտագործման ապրանքների շարքին դասելն իրականացվում է մաքսային մարմնի կողմից ռիսկերի կառավարման համակարգի կիրառմամբ, ելնելով՝

1) տեղափոխվող ապրանքների մասին ֆիզիկական անձի դիմումից (բանավոր կամ գրավոր՝ ուղևորային մաքսային հայտարարագրի օգտագործմամբ)՝ սույն Համաձայնագրով սահմանված դեպքերում,

2) ապրանքների բնույթից և քանակից,

3) ֆիզիկական անձանց կողմից մաքսային սահմանը անցնելու և (կամ) նրանց կողմից մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման հաճախականությունից:

Ֆիզիկական անձանց կողմից Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքներն անձնական օգտագործման ապրանքների շարքին դասելու համար օգտագործվող ռիսկի ցուցիչները հաստատված են Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 28.09.2017 թվականի թիվ 24/13 որոշման հավելվածով:

Այսպիսով, Միության մաքսային օրենսդրությունը թեև նախատեսում է մաքսային մարմինների կողմից ռիսկերի կառավարման համակարգի միջոցով ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքների տեղափոխման հաճախականության հսկողություն, սակայն անորոշ է, թե ի՞նչ հաճախականությամբ ՀՀ ապրանք ներմուծելիս ֆիզիկական անձինք պարտավորված կլինեն վճարել մաքսատուրք:

Հարկ է նշել, որ այս խնդրին Պաշտպանը մանրամասն անդրադարձ է կատարել նաև իր 2020 և 2021 թվականների տարեկան հաղորդումներում[477]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանն ընդգծում է, որ անհրաժեշտ է մշակել և իրացնել ֆիզիկական անձանց կողմից ապրանքներն առանց մաքսատուրքի ՀՀ ներմուծելու հաճախականության որոշման հստակ չափորոշիչներ և դրանց վերաբերյալ իրականացնել պատշաճ իրազեկման աշխատանքներ:

[477] Առավել մանրամասն տե՛ս 2020 և 2021 թվականների ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումները, համապատասխանաբար՝ էջեր 750-752 և 728-730:

3. ՀՀ մշտական բնակության տեղափոխվող անձանց կողմից մաքսային վճարների արտոնություններից չօգտվելու խնդիր

Հաշվետու տարվա ընթացքում Պաշտպանը ստացել է բանավոր բողոքներ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության տեղափոխվող անձանց համար օրենսդրությամբ նախատեսված մաքսային վճարների արտոնություններից չօգտվելու խնդրի վերաբերյալ:

Հարկ է նշել, որ 2023 թվականի ընթացքում նշված խնդրի վերաբերյալ դիմում-բողոքներ ստացել է նաև ՊԵԿ-ը: Ըստ կոմիտեի՝ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության տեղափոխվող անձանց մաքսային վճարների արտոնություններից չօգտվելու վերաբերյալ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողով ստացվել է թվով 3 դիմում-բողոք: Դրանց հիման վրա հարուցվել են վարչական վարույթներ: Հանձնաժողովի կողմից քննության արդյունքում 1 դեպքով դիմում-բողոքը բավարարվել է, 1 դեպքով՝ բավարարվել մասնակի և 1 դեպքով՝ մերժվել:

Պաշտպանին ներկայացված բողոքների ընդհանուր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պրակտիկայում շատ են դեպքերը, երբ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության տեղափոխված անձինք ծանոթ չեն լինում մաքսային վճարների արտոնություններից օգտվելու իրենց իրավունքներին և ընթացակարգին: Նշվածի հետևանքով հաճախ խնդիրներ են ունենում այդ իրավունքներն իրացնելիս:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ դեռևս 2021 թվականին Պաշտպանի աշխատակազմում մշակվել է «Անձնական օգտագործման ապրանքներ Հայաստանի Հանրապետություն արտոնություններով ներմուծելու կանոնների վերաբերյալ» ուղեցույց[478], որի նպատակն է բարձրացնել Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության տեղափոխվող անձանց իրազեկվածությունը մաքսային վճարների արտոնություններից օգտվելիս:

Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող (վերադարձող) ֆիզիկական անձանց համար 2020 թվականին ՊԵԿ-ը հրապարակել է բացատրական տեսաուղեցույց[479]:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն, որ Պաշտպանին խնդրի վերաբերյալ շարունակվում են հասցեագրվել դիմում-բողոքներ՝ անհրաժեշտ է շարունակել մաքսային վճարների արտոնություններից օգտվելու մասին իրազեկվածության բարձրացման ուղղությամբ աշխատանքները:

4. Ստուգումներ իրականացնող պետական մարմինների ծառայողների գործունեության թափանցիկության ապահովման խնդիր

Տարիներ շարունակ Պաշտպանը տարեկան հաղորդումներում բարձրաձայնել է ստուգումների ընթացքում պետական մարմինների ծառայողների գործունեության թափանցիկության ապահովման խնդրի մասին[480]: 2023 թվականի ընթացքում Պաշտպանը կրկին բողոքներ է ստացել ստուգումներ իրականացնող անձանց,

[478] Էլեկտրոնային տարբերակը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.ombuds.am/images/files/35f41cdc46cac94e2e3f429df8b749ab.pdf, 2024 թվականի մարտի 28-ի դրությամբ:
[479] Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.youtube.com/watch?v=2GDfqyvTHuY, 2024 թվականի մարտի 28-ի դրությամբ:
[480] Առավել մանրամասն տե՛ս 2020 և 2021 թվականների ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումները, համապատասխանաբար՝ էջեր 762-764 և 735-736:

մասնավորապես՝ հարկային և մաքսային ծառայողների անհարգալից վարքագծի վերաբերյալ:

Պաշտպանի տարեկան հաղորդման կազմման նպատակով ներկայացված համապատասխան հարցադրմանն ի պատասխան՝ ՊԵԿ-ից պարզաբանել են, որ 2023 թվականի ընթացքում ՊԵԿ ներքին անվտանգության վարչության ծառայողական քննությունների և վարքագծի /էթիկայի/ կանոնների բաժին ստացվել են այդպիսի թվով 4 դիմում-բողոքներ: Ըստ ՊԵԿ-ի՝ նշված բոլոր դեպքերում իրականացվել են ծառայողական քննություններ, որոնց արդյունքում 3 դեպքով ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից կայացվել են որոշումներ՝ ծառայողների գործողությունները չեն պարունակում իրավական ակտերի պահանջների խախտումներ և ծառայողները ենթակա չեն պատասխանատվության, իսկ 1 դեպքով որոշվել է ծառայողական քննության ընթացքում հավաքագրված նյութերը տրամադրել ՀՀ գլխավոր դատախազությանը՝ հետագա ընթացքն որոշելու համար և հարցին անդրադառնալ վերջինիս կողմից կայացված որոշման արդյունքներով:

Վերոգրյալի հետ մեկտեղ, տեղեկատվություն է ներկայացվել այն մասին, որ ՊԵԿ նախագահի 2023 թվականի հունվարի 16-ի թիվ 23-Լ հրամանով հաստատվել է հարկային ծառայողի վարքագծի կանոնագիրքը (մաքսային ծառայողի վարքագծի (էթիկայի) կանոնագիրքը հաստատվել էր 2022 թվականի հունվարի 31-ի թիվ 92-Լ հրամանով): ՊԵԿ հարկային և մաքսային ծառայողներն իրազեկման թերթիկի ստորագրմամբ հավաստել են վարքագծի համապատասխան կանոնագրքին ծանոթանալու փաստը: ՊԵԿ Ուսումնական կենտրոնի կայքում մաքսային ծառայողների համար տեղադրված է Մաքսային ծառայողի վարքագծի կանոնների բացատրական ուղեցույցը: Բացի այդ, անձնակազմի հետ տարվող աշխատանքներում ծառայողներին հանձնարարվել է խստագույնս պահպանել հարկային և մաքսային ծառայողների վարքագծի կանոնները, պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման ժամանակ քաղաքացիների և (կամ) կազմակերպությունների ներկայացուցիչների հետ շփման ընթացքում դրսևորել խիստ բարեկիրթ, հարգալից և անաչառ վերաբերմունք:

Պաշտպանը ողջունում է հարկային և մաքսային ծառայողների անհարգալից և անօրինական վարքագծի դրսևորումները կանխելու ուղղությամբ ՊԵԿ ձեռնարկած քայլերը: Միևնույն ժամանակ, Պաշտպանը վերահաստատում է տարիներ շարունակ ներկայացվող այն առաջարկը, ըստ որի՝ ստուգումների գործընթացի թափանցիկությունն ապահովելու նպատակով հարկային և մաքսային ծառայողների հանդերձանքին անհրաժեշտ է ամրացնել դյուրակիր տեսախցիկներ: Օրինակ՝ Ոստիկանության դեպքում նշված պրակտիկան ցույց է տվել կիրառության արդյունավետություն: Ներկայացվել են նաև միջազգային փորձի օրինակներ: Նշվել է նաև, որ քաղաքացիների հետ անմիջական շփում ունեցող ստուգումներ իրականացնող անձանց հանդերձանքին դյուրակիր տեսախցիկների ամրացումը կբարձրացնի նրանց գործունեության թափանցիկությունը, կնպաստի կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը, ինչպես նաև բողոքներում բարձրացված հարցերի արդյունավետ լուծմանը[481]:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների հետ

[481] Տե՛ս նույն տեղում:

ստուգումների ընթացքում անմիջական շփում ունեցող ծառայողներին դյուրակիր տեսախցիկներով ապահովելու հարցը:

5. Մաքսակետերում գոյացող հերթերի և Պետական եկամուտների կոմիտեի հեռախոսազանգերի կենտրոնի մշտական հիմունքներով չգործելու խնդիր

2023 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ՝ մաքսային գործառնությունների իրականացման վայրերում (Արևելյան և Հյուսիսային մաքսատուն-վարչություններում) գոյացող հերթերի վերաբերյալ: Ընդ որում, Պաշտպանին բողոքներ են ներկայացրել ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձինք:

Ըստ բողոքների՝ մաքսակետերում առաջացած հերթերի պատճառով մարդիկ չեն կարողանում մաքսազերծման գործընթացն օրենքով սահմանված ժամկետում ավարտին հասցնել և ստիպված են ավտոմեքենաները կամ ապրանքները հանձնել մաքսային պահպանության տարածք: Բողոքների համաձայն՝ շարունակական բնույթ կրող հերթերը բացասական են ազդում տնտեսվարողների բնականոն գործունեության վրա:

Բարձրացված հարցի վերաբերյալ ՊԵԿ-ը ներկայացրել է պարզաբանումներ այն մասին, որ Հյուսիսային մաքսատուն-վարչությունը նախագծվել, կառուցվել և գործում է որպես ավտոտրանսպորտային միջոցների հայտարարագրման և բացթողնման գործառնությունների իրականացման մասնագիտացված մաքսային մարմին, թեև այստեղ իրականացվում են նաև այլ ապրանքների մաքսազերծման գործառնություններ ևս: Ըստ էության, այդպիսի մարմնի հիմնադրման նպատակը, ի վերջո, բոլոր ավտոտրանսպորտային միջոցների որոշակի մաքսային ընթացակարգերով մաքսային գործառնությունների իրականացման կենտրոնացումն էր դրա համար առավել համապատասխան կառուցված և կահավորված մեկ մարմնում, ինչին համապատասխան էլ վերջին տարիներին կազմակերպվել և համակարգվել են մաքսային գործառնությունների իրականացման վայրերի և տրամաբանության կարգավորումները:

Ըստ ՊԵԿ-ի՝ այն հանգամանքը, որ 2022 թվականի հունիսի 30-ից սկսած ՊԵԿ կողմից սահմանվել են որոշակի շեղումներ նշված գործելաոճից, հետևանք է ներմուծվող և արտահանվող ավտոտրանսպորտային միջոցների ծավալների անընդհատ, կայուն և զգալի աճի պայմաններում հոսքերի առավել արդյունավետ կառավարման վարչարարության, այլ ոչ թե հիշատակված տրամաբանության կամ նպատակի փոփոխության: Այսպես՝ առկա տվյալների ուսումնասիրությունից հետևում է, որ ներմուծվող ավտոտրանսպորտային միջոցների քանակների աճը մեկնարկել է դեռևս 2022 թվականի սկզբից և պայմանավորված չի եղել Հյուսիսային մաքսատուն-վարչությունից բացի այլ մաքսային մարմիններում մաքսային գործառնությունների իրականացման փաստով, մասնավորապես 2022 թվականի փետրվար-հունիս ժամանակահատվածում ՀՀ բոլոր մաքսային մարմիններում հայտարարագրված, ձևակերպված և բացթողնված ներմուծվող ավտոտրանսպորտային միջոցների թիվը կազմել է համապատասխանաբար փետրվար՝ 1179, մարտ՝ 1835, ապրիլ՝ 1825, մայիս՝ 2150, հունիս՝ 3368, որոնցից Հյուսիսային մաքսատուն-վարչությունում համապատասխանաբար ըստ ամիսների՝ 1133-ը, 1802-ը, 1767-ը, 2081-ը և 3238-ը:

Ըստ ՊԵԿ-ի տրամադրած տեղեկատվության՝ հաշվի առնելով խնդրո առարկա ավտոմեքենաների թվերի տեսանելի աճը՝ 2022 թվականի հունիսի 30-ից ՊԵԿ կողմից թույլատրվել է հիշատակված ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների հետ կապված գործառնությունների իրականացումը նաև ՊԵԿ Արևելյան

մաքսատուն-վարչությունում: Աճը շարունակվել է նաև այս ընթացքում, այսպես՝ հուլիս-հոկտեմբեր ժամանակահատվածում ՀՀ բոլոր մաքսային մարմիններում հայտարարագրված, ձևակերպված և բացթողնված ներմուծվող ավտոտրանսպորտային միջոցների թիվը կազմել է համապատասխանաբար հուլիս՝ 3510, օգոստոս՝ 4814, սեպտեմբեր՝ 4667 և հոկտեմբեր՝ 5157, որոնցից Հյուսիսային մաքսատուն-վարչությունում համապատասխանաբար ըստ ամիսների՝ 2290-ը, 2618-ը, 2785-ը և 3146-ը: 2022 թվականի նոյեմբեր ամսից, դարձյալ հաշվի առնելով շարունակական աճը, թույլատրվել է ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների հետ կապված գործառնությունների իրականացումն ինչպես Արևելյան մաքսատուն-վարչությունում, այնպես էլ Երեւանի մաքսային սպասարկման կենտրոն-մաքսատուն, վարչությունում:

Ըստ ՊԵԿ-ի՝ վիճակագրությունը ցույց է տալիս, որ ներմուծվող ավտոմեքենաների թիվը շարունակել է աճել: Այսպես՝ 2022 թվականի նոյեմբեր – 2023 թվականի փետրվար ժամանակահատվածում ՀՀ բոլոր մաքսային մարմիններում հայտարարագրված, ձևակերպված և բացթողնված ներմուծվող ավտոտրանսպորտային միջոցների թիվը կազմել է համապատասխանաբար նոյեմբեր՝ 7222, դեկտեմբեր՝ 8551, հունվար՝ 6376 և փետրվար՝ 8020, որոնցից Հյուսիսային մաքսատուն-վարչությունում համապատասխանաբար ըստ ամիսների՝ 3921-ը, 4715-ը, 3451-ը և 3718-ը:

Տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 2023 թվականի փետրվարի 14-ին ՊԵԿ նախագահի կողմից ընդունվել է 134-Լ հրամանը, որով պետական սահմանի Գոգավանի անցումային կետով բեռնարկղով ներմուծվող ԱՏԳ ԱԱ 8702, 8703, 8704 ապրանքային դիրքերին դասվող տրանսպորտային միջոցների «Բացթողում՝ ներքին սպառման համար», «Հրաժարում՝ հօգուտ պետության» մաքսային ընթացակարգերով մաքսային գործառնությունները ՀՀ ՊԵԿ Երևանի մաքսային սպասարկման կենտրոն-մաքսատուն, վարչությունում հայտարարատուի ցանկությամբ իրականացնելու համար նախապես վերջնաժամկետը սահմանափակվել է 2023 թվականի փետրվարի 20-ով, մասնավորապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիշատակված բացառությունը, Հյուսիսային մաքսատուն-վարչությունում ձևավորված կուտակումները նվազեցնելուն զուգահեռ, 2023 թվականի փետրվար ամսին նմանօրինակ, ոչ պակաս հերթերի և կուտակումների է հանգեցրել արդեն Երևանի մաքսային սպասարկման կենտրոն-մաքսատուն, վարչությունում: Ըստ ՊԵԿ-ի նման իրավակարգավորման նախատեսման պատճառներից մեկն էլ այն հանգամանքն է, որ եթե Հյուսիսային մաքսատուն-վարչությունում հիմնականում իրականացվում են ավտոմեքենաների մաքսային ձևակերպումներ, ապա Երևանի մաքսային սպասարկման կենտրոն-մաքսատուն, վարչությունում առավելապես ձևակերպվում են առաջին անհրաժեշտության, այդ թվում՝ շուտ փչացող ապրանքներ (սնունդ դեղորայք, լայն սպառման ապրանքներ), որոնց մաքսային ձևակերպումների համար անհրաժեշտ ժամանակահատվածի, հերթերի պատճառով, զգալի մեծացումը պարունակում է էականորեն ավելի մեծ ռիսկեր, քան ավտոմեքենաների դեպքում է:

Հարկ է հաշվի առնել նաև, որ վարչարարության արդյունավետության բարձրացմանն ու հերթերի հաջող կառավարմանն ուղղված ձեռնարկված համապարփակ մի շարք այլ միջոցառումների արդյունքում 2023 թվականի փետրվար ամսի դրությամբ, այնուամենայնիվ, որոշակիորեն կարգավորվել են նաև Հյուսիսային մաքսատուն-վարչությունում ձևավորված հերթերը, ինչի պարագայում, ունենալով հատուկ այդ նպատակով կառուցված մասնագիտացված մաքսային մարմին, թերևս պետք է աննպատակահարմար գնահատել ավտոտրանսպորտային միջոցների

հայտարարագրման և բացթողնման գործառնությունների իրականացման շարունակումը Երևանի մաքսային սպասարկման կենտրոն-մաքսատուն, վարչությունում: Ըստ ՊԵԿ-ի՝ ներկայում կազմակերպվում են լրացուցիչ միջոցներ՝ առկա և դեռևս ի հայտ եկող վերը հիշատակված խնդիրները կարգավորելու նպատակով:

Չնայած ձեռնարկվող քայլերին, այնուամենայնիվ, պետք է փաստել, որ մարդիկ շարունակում են բախվել մաքսակետերում գոյացող հերթերի խնդրին:

Հաշվետու տարում Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը ցույց է տալիս նաև, որ շարունակվում է չլուծված մնալ ՊԵԿ-ի հեռախոսազանգերի կենտրոնի մշտական հիմունքներով չգործելու խնդիրը: Այսպես, մարդիկ նշում են, որ սահմանային անցակետում տարբեր հարցեր ունենալով՝ փորձել են ՊԵԿ-ից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն, սակայն չեն կարողացել, քանի որ հեռախոսազանգերի կենտրոնը գիշերային ժամերին չի գործում:

Ըստ ՊԵԿ-ի պաշտոնական կայքում զետեղված տեղեկատվության՝ հեռախոսազանգերի կենտրոն-բաժինը կազմակերպություններին և ֆիզիկական անձանց տրամադրում է տեղեկատվություն հարկային և մաքսային հարաբերությունները կարգավորող օրենսդրության պահանջների պարզաբանման վերաբերյալ՝ ՀՀ ՊԵԿ իրավասությունների շրջանակներում, հարկային և մաքսային վարչարարության, հարկային և մաքսային մարմինների և դրանց պաշտոնատար անձանց գործառութային իրավասությունների և պարտականությունների վերաբերյալ: Հեռախոսազանգերի կենտրոն-բաժինն աշխատում է յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 09:00-ից 18:00-ն[482]: Ըստ ՊԵԿ-ի հեռախոսազանգերի կենտրոնի տրամադրած տեղեկատվության, ինչպես նաև «Սփյուռ» տեղեկատվական համակարգում առկա տվյալների՝ նաև շաբաթ օրը 10:00-ից 16:00-ն[483]:

Այս առումով խնդրահարույց է, որ հեռախոսազանգերի կենտրոնի աշխատանքը չի իրականացվում շաբաթվա բոլոր օրերին և շուրջօրյա: Օրվա տարբեր ժամերին Հայաստանի Հանրապետություն են ներկրվում և արտահանվում ապրանքներ: Շատ հաճախ անհրաժեշտություն է առաջանում մարդկանց բարձրացրած հարցերի վերաբերյալ իրականացնել արագ արձագանքում: Հեռախոսազանգերի կենտրոնի շուրջօրյա չգործելու պատճառով հնարավոր չի լինում ապահովել բողոքներին արագ արձագանքը:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ եվրոպական երկրներում մաքսային ծառայության թեժ գծի հեռախոսահամարը գործում է շուրջօրյա (Գերմանիա և Իտալիա)[484]:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Պաշտպանն ընդգծում է, որ անհրաժեշտ է՝

- ✓ ***մաքսակետերում գոյացող հերթերի նվազեցման նպատակով բարձրացնել մաքսային վարչարարության արդյունավետությունը:***
- ✓ ***ՊԵԿ-ի հեռախոսազանգերի կենտրոնի աշխատանքը դարձնել շուրջօրյա:***

[482] Տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.src.am/am/getMenusContents/238, 2024 թվականի մարտի 25-ի դրությամբ:
[483] Տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.spyur.am/am/companies/hotline-on-tax-and-customs-issues/85819/, 2024 թվականի մարտի 28-ի դրությամբ:
[484] Տե՛ս https://www.zoll.de/EN/Contact/Other_contacts/other_contacts_node.html և https://www.gdf.gov.it/en 2024 թվականի մարտի 25-ի դրությամբ:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մատակարարված ծառայությունների համար չվճարելու դեպքում բաժանորդին ջրի նվազագույն քանակով չապահովելը

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ՝ 2023 թվականին շարունակել է խնդրահարույց մնալ մատուցված ծառայությունների համար սահմանված գումարը չվճարելու պատճառով բաժանորդների ջրամատակարարման դադարեցման դեպքերում ջրի նվազագույն քանակով ապահովելու խնդիրը: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է երեխաներին, տարեցներին, հաշմանդամություն ունեցող անձանց ջրի հասանելիությունն ապահովելուն:

Այս առումով խիստ մտահոգիչ է այն, որ Մարդու իրավունքների պաշտպանն իր գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդումներում տարիներ շարունակ բարձրացրել է խնդիրը, սակայն դրան օրենսդրական լուծումներ չեն տրվել[485]:

Այսպես, նախորդ տարեկան հաղորդումների շրջանակներում Պաշտպանն անդրադառնալով ՀԾԿՀ 2016 թվականի նոյեմբերի 30-ի «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնները սահմանելու մասին» թիվ 378-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 74-րդ կետով նախատեսված իրավակարգավորմանը *(ըստ այդմ, մատակարարին որպես հայեցողական լիազորություն է տրված մատուցված ծառայությունների կամ մատուցված ծառայության վերահաշվարկված քանակի դիմաց վճարման ենթակա գումարի կամ հաշվարկված տուժանքի չվճարման դեպքում բաժանորդի ջրամատակարարման դադարեցումը)*՝ հատուկ շեշտադրել է, որ բաժանորդի ջրամատակարարման դադարեցումը չպիտի հանգեցնի վերջինիս ջրի իրավունքից[486] զրկելուն, հետևաբար, նշված որոշմամբ պետք է սահմանվի նաև բաժանորդին նվազագույն ջրի քանակով ապահովելու մատակարարի պարտականությունը:

Բաժանորդին նվազագույն ջրի քանակով ապահովելու հարցի վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ օրինակ՝ Ֆրանսիայում արգելվում է ցանկացած ջրաբաշխողի կողմից դադարեցնել ջրամատակարարումը նույնիսկ ամբողջ տարվա ընթացքում չվճարելու դեպքում[487]:

Կոլումբիայի Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ թեև, որպես ընդհանուր կանոն, ջրի և սանիտարական ծառայությունների մատուցումը կարող է դադարեցվել վճարումների չիրականացման արդյունքում, այդ հնարավորության ամրագրումը Սահմանադրությամբ անթույլատրելի է և ջրամատակարարման ծառայությունը դադարեցնելիս պետք է հաշվի առնել վճարումների չիրականացման

[485] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2019, 2020 և 2021 թվականների տարեկան հաղորդումները (համապատասխանաբար՝ էջեր 439-442, 769-773, 744-746):

[486] ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 2010 թվականի հուլիսի 28-ի թիվ 64/292 բանաձևով ջրի և սանիտացիայի իրավունքը ճանաչվեց որպես մարդու իրավունք և ընդունվեց այն փաստը, որ ջրի և սանիտացիայի հասանելիությունը հիմնարար է մարդու իրավունքների իրացման համար (տե՛ս ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 2010 թվականի (64/292) բանաձևը հասանելի է http://www.un.org/waterforlifedecade/human_right_to_water.shtml հղումով, 2024 թվականի մարտի 28-ի դրությամբ): Ջրի նկատմամբ մարդու իրավունքը ենթադրում է յուրաքանչյուրի համար բավարար քանակությամբ անվտանգ, տնտեսապես և ֆիզիկապես հասանելի խմելու ջրի իրավունքը՝ նրա ամենօրյա պահանջմունքների բավարարման համար (տե՛ս ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային համաձայնագրի 11-րդ և 12-րդ հոդվածները):

[487] Տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.service-public.fr/particuliers/vosdroits/F20055, 2024 թվականի մարտի 28-ի դրությամբ:

պատճառները և այն հիմնարար իրավունքները, որոնք կխախտվեն ջրամատակարարումը դադարեցնելու պարագայում[488]:

Մեկ այլ գործով Կոլումբիայի Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ջրի իրավունքն ինքնուրույն սոցիալական իրավունք է և պետական մարմինները պարտավոր են առանց որևէ խտրականության ապահովել այդ իրավունքի իրականացումը: Իսկ խոցելի խմբում գտնվող անվճարունակ անձի կողմից վճարում չիրականացնելու հետևանքով ջրի և էլեկտրաէներգիայի մատակարարման դադարեցումը հակասում է Կոլումբիայի Սահմանադրությանը և Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրին[489]:

Արգենտինայի Սահմանադրական դատարանը գործերից մեկով պարզել է, որ ջրամատակարարում իրականացնող մասնավոր ընկերությունը դադարեցրել էր ցածր եկամուտ ունեցող ընտանիքների ջրամատակարարումը վճարումները չիրականացնելու հիմքով: Այս ընտանիքներն իրենց երեխաների հետ ապրում էին խոցելի սոցիալ-տնտեսական պայմաններում, մի մասն ընդհանրապես աշխատանք չուներ կամ ուներ ցածր եկամուտ, ընտանիքների մյուս մասում էլ ապրում էին միայնակ ծնողներն իրենց երեխաների հետ: Նշված ընտանիքներն օգնություն ստանալու խնդրով դիմել էին տեղական իշխանություններին, սակայն մերժում էին ստացել: Բացի այդ, ընկերությունը չէր ապահովել նշված ընտանիքներին ամենօրյա 50 լիտր ջրով ապահովելու սեփական կանոնակարգի պահանջը: Նշված գործով դատարանն արձանագրել է, որ ջրամատակարարման դադարեցմամբ վտանգի տակ են դրվում ազգային Սահմանադրությամբ և միջազգային համաձայնագրերով ամրագրված՝ մարդու առողջության և ֆիզիկական անվտանգության իրավունքները: Բացի այդ, դատարանը նշել է, որ խմելու ջրի բացակայությունն առաջացնում է աղքատության մեջ ապրող անձանց համար առողջական բազմաթիվ խնդիրներ: Դատարանն արձանագրել է նաև, որ թեև ջրամատակարարումն իրականացնում են մասնավոր ընկերությունները, այնուամենայնիվ, պետությունը պահպանում է հանրային ծառայությունների մատուցման ոլորտում վերահսկողության և կարգավորման գործառույթը: Բացի այդ, դատարանը սահմանել է, որ ջրամատակարարում իրականացնող ընկերության կանոնակարգով նախատեսված՝ ընտանիքներին ամենօրյա 50 լիտր ջրով ապահովելու պայմանը չի կարող բավարարել մարդուն անհրաժեշտ ջրի օրական պահանջմունքները՝ նշելով, որ հանրային ծառայություններ մատուցող մասնավոր ընկերությունները պարտավոր են յուրաքանչյուր տնտեսությանը մատակարարել առնվազն 200 լիտր ջուր այն դեպքում, երբ սպառած ջրի դիմաց վճարումը չի իրականացվում անվճարունակության պատճառով[490]:

Ինչպես մարդու մյուս իրավունքները, ջրի իրավունքը ևս ենթադրում է պետության ինչպես պոզիտիվ, այնպես էլ նեգատիվ պարտավորություններ: Հայաստանի Հանրապետությունում ջրամատակարարման ծառայությունների մատուցումն իրականացնում է մասնավոր՝ «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերությունը: Այնուհանդերձ,

---

[488] Տե՛ս Կարոլինա Մուրսիա Օտալորան ընդդեմ Էմպրեսաս Պուբլիկաս դե Նեյվա ընկերության գործով (Carolina Murcia Otálora c/ Empresas Públicas de Neiva ESP) 2009 թվականի Կոլումբիայի Սահմանադրական դատարանի որոշումը, գործ թիվ T-546/09, 29.03.2009թ., հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.corteconstitucional.gov.co/relatoria/2009/T-546-09.htm, 2024 թվականի մարտի 28-ի դրությամբ:

[489] Տե՛ս Ֆլոր Էնիդ Խիմենես դե Կորեան ընդդեմ Էմպռեսաս Պուբլիկաս դե Մեդելինի գործով, (Flor Enid Jiménez de Correa c/ Empresas Públicas de Medellín) 2007 թվականի Կոլումբիայի Սահմանադրական դատարանի որոշումը, գործ թիվ T-270/07, հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.corteconstitucional.gov.co/relatoria/2007/T-270-07.htm, 2024 թվականի մարտի 28-ի դրությամբ:

[490] Տե՛ս Quevedo, Miguel Ángel y Otros c/ Aguas Cordobesas SA [2002] Juez Sustituta de Primera Instancia Civil y Comercial (Ciudad de Córdoba), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.diariojudicial.com/news-42752-que-no-falte-el-agua, 2024 թվականի մարտի 28-ի դրությամբ:

ջրամատակարարման իրականացումը մասնավոր ընկերությանը փոխանցելու դեպքում էլ պետության պոզիտիվ պարտավորությունն է պահպանել ջրի հասանելիության ապահովումը հասարակության բոլոր շերտերի համար: Հետևաբար, մատուցված ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարի չվճարման դեպքում, եթե առկա են միջազգային չափանիշներին համապատասխան հիմքերը, անձն ամբողջովին չի կարող զրկվել ջրի հասանելիությունից և նշված իրավունքից, և պետք է ունենա նվազագույն չափաքանակով ջրին հասանելիություն: Ավելին, կարևոր է, որպեսզի ջրանջատումը չհանդիսանա սանիտացիայից զրկվելու պատճառ[491]:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է մեկ անգամ ևս արձանագրել, որ պետության պոզիտիվ պարտավորությունն է ջրի հասանելիության ապահովումը հասարակության բոլոր շերտերի համար, ներառյալ՝ հատուկ կարիքներ ունեցող անձանց, ինչպես օրինակ՝ երեխաները, տարեցները, հաշմանդամություն ունեցող անձինք և այլն:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ պետությունը պետք է ապահովի ջրի հասանելիությունը, ջրի իրավունքին վերաբերելի միջազգային չափորոշիչները և սահմանի գործուն կառուցակարգեր հասարակության բոլոր շերտերի համար ջրին հասանելիությունն ապահովելու նպատակով: Ընդ որում՝ այդ համատեքստում անհրաժեշտ է նկատի ունենալ նաև անվճարունակության դեպքում նշված կառուցակարգերի մշակման կարևորությունն ու պատշաճ իրացման անհրաժեշտությունը:

2. Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցումը ներդրումային ծրագրերում ներառելը

Հաշվետու տարում շարունակել են արդիական մնալ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի բացակայության վերաբերյալ խնդիրները: Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2023 թվականին՝ Պաշտպանին շարունակել են հասցեագրվել դիմում-բողոքներ՝ կապված ջրամատակարարման համակարգերի վնասման հետևանքով բնակիչներին մատակարարվող անորակ ջրի հետ:

Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի բացակայության խնդիրները Պաշտպանը վերհանել է ոչ միայն անհատական դիմում-բողոքների ուսումնասիրության, այլ նաև տարբեր բնակավայրեր իրականացրած այցերի արդյունքում:

Այսպես, Մարդու իրավունքների պաշտպանի գլխավորած աշխատանքային խումբը 2023 թվականին այց է իրականացրել Տավուշի մարզի Ոսկեպար, Ոսկեվան և Բաղանիս բնակավայրեր[492]: Նշված բնակավայրերի բնակիչները, ի թիվս այլնի, բարձրացրել են ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման, խմելու ջրի որակի, ամենօրյա ռեժիմով և առանց ընդհատումների խմելու ջրի մատակարարման հետ կապված հարցեր:

[491] Տե՛ս ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի անկախ փորձագիտական զեկույցը խմելու ջրի և սանիտացիայի հասանելիության վերաբերյալ, հասանելի է հետևյալ հղումով՝ https://digitallibrary.un.org/record/685823?v=pdf, 2024 թվականի մարտի 28-ի դրությամբ:

[492] Տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.ombuds.am/am/site/ViewNews/2629, 2024 թվականի մարտի 28-ի դրությամբ:

Տավուշի մարզի վերը նշված բնակավայրերում արձանագրված խնդիրները, այդ թվում՝ խմելու ջրի մատակարարման հետ կապված, Պաշտպանը ներկայացրել է Կառավարություն: Պաշտպանի կողմից արձանագրած խնդիրներին լուծում տալու նպատակով՝ իրավասու պետական մարմիններին կառավարության կողմից հանձնարարվել է դրանք պահել շարունակական հսկողության տակ և ապահովել համապատասխան քայլերի ձեռնարկումը:

Իրավասու պետական մարմինները Պաշտպանի աշխատակազմ ներկայացրել են նշված բնակավայրերը պատշաճ ջրամատակարարմամբ ապահովելու, այդ թվում՝ նոր ջրատար և ներքին ցանց կառուցելու վերաբերյալ իրենց տեսլականը և այդ ուղղությամբ նախատեսվող աշխատանքների վերաբերյալ տեղեկություններ:

Հարկ է նշել, որ ջուրը մարդու կյանքի և առողջության համար հիմնային նշանակություն ունեցող հանրային բարիք է, ջրի հասանելիությունը հիմնարար է մարդու իրավունքների տեսանկյունից[493]: Ուստի, այս հարցերին իրավասու մարմինները պետք է լինեն հետևողական և հնարավորին սեղմ ժամկետում գտնեն համակարգային լուծումներ:

2023 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի գլխավորած աշխատանքային խումբը այցելել է նաև Գեղարքունիքի մարզի սահմանամերձ բնակավայրեր՝ Վերին Շորժա (այդ թվում՝ Սարատեղի) Կութ, Նորաբակ, Սոթք և Կուտական: Իրականացրած այցի ընթացքում, ի թիվս այլնի, վերհանվել են ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բացակայության հետ կապված խնդիրներ:

Այսպես, Նորաբակ բնակավայրի բնակիչները, ի թիվս այլնի, բարձրացրել են խմելու և ոռոգման ջրի խնդիր: Նշված և այլ խնդիրների կապակցությամբ դեռևս 2022 թվականին գրություններ են հասցեագրվել իրավասու պետական մարմիններին: Բարձրացված հարցերի վերաբերյալ Գեղարքունիքի մարզպետարանից ներկայացվել է պարզաբանում այն մասին, որ Նորաբակ և Սոթք բնակավայրերի բնակիչներին խմելու ջրով ապահովելու նպատակով 2020 թվականին սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում գյուղը սնող ջրաղբյուրների և ջրագծերի շինարարական աշխատանքներն ավարտին չեն հասցվել անվտանգության նկատառումներից ելնելով *(ջրաղբյուրները և ջրագծերի սկզբնամասերը գտնվում են Ադրբեջանի զինված ուժերի դիտարկման ներքո)*: Նշել են, որ առաջիկայում աշխատանքներ կտարվեն առկա այլ ջրաղբյուրներից ջուրը բնակչությանը հասցնելու համար:

Չնայած վերոգրյալին՝ 2023 թվականին բարձրացված հարցը շարունակել է մնալ չլուծված: Գեղարքունիքի մարզպետարանից ներկայացվել է պարզաբանում այն մասին, որ սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում 2023-2024 թվականներին Նորաբակ բնակավայրում նախատեսվում է կառուցել խմելու և ոռոգման ջրագծեր, իսկ Սոթք բնակավայրում՝ խմելու ջրագիծ:

[493]Տե՛ս ՄԱԿ-ի սոցիալ-տնտեսական հարցերի խորհրդի դիքորոշումը, հասանելի է հետևյալ հղումով՝ http://surl.li/gvdsd, 2024 թվականի մարտի 28-ի դրությամբ:

Հաշվի առնելով այն, որ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի բացակայության խնդիրները ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում շարունակում են չլուծված մնալ՝ Պաշտպանը 2023 թվականի տարեկան հաղորդման պատրաստման շրջանակում գրություն է հասցեագրել ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեին: Ըստ ներկայացված պարզաբանման՝ 2023 թվականի ընթացքում խմելու ջրի հետ կապված խնդիրների *(խմելու ջրի հասանելիություն, ջրամատակարարման գրաֆիկի խախտում, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բացակայություն, դիտահորի խցանում և այլն)* վերաբերյալ Կոմիտեն ստացել է շուրջ 200 գրություն: ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի ներկայացմամբ՝ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման ներդրումային ծրագրերում հիմնականում առաջնահերթ ներառվում են այն համայնքները, որտեղ առկա են խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի հետևյալ խնդիրները.

– ջրաղբյուրներում, ինչպես նաև բաշխիչ ցանցում առկա են ջրի զգալի կորուստներ, բացակայում են սանիտարական գոտիները,

– բաշխիչ ցանցի չգոտիավորման պատճառով ցանցերում առաջանում են նորմաներից բարձր և ցածր ճնշումներ, որոնք իրենց բացասական ազդեցությունն են թողնում ցանցի աշխատանքի վրա,

– կոյուղու համակարգը բացակայում է կամ գտնվում է քայքայված վիճակում, ուր հաճախ են գրանցվում խցանման և վնասման դեպքեր՝ առաջացնելով հակահամաճարակային խնդիրներ:

Ըստ Ջրային կոմիտեի տրամադրած տեղեկատվության՝ «Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հիմնանորոգում» ծրագրի շրջանակներում 2023 թվականին իրականացվել են 10 բնակավայրերի ջրամատակարարման համակարգերի վերակառուցման շինարարական աշխատանքներ՝ Արարատի մարզի Դվին, Նոր Կյանք, Շահումյան, Արտաշատ, Ղուկասավան, Ոստան, Սիսավան, Բուրաստան, Արբաթ և Խաչփար բնակավայրերը: Ընթացքի մեջ են խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման և կառուցման երկու ծրագրեր, որոնք իրականացվում են Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից՝ «Համայնքային Ենթակառուցվածքների Ծրագիր (ՀԵԾ) II Փուլ 3» ծրագիր՝ Գերմանիայի KfW Բանկի, Եվրոպական Ներդրումային Բանկի, Եվրամիություն (ՀՆԾ ֆինանսավորմամբ, և «Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիր»՝ Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի, Եվրոպական Ներդրումային Բանկի, Եվրամիություն) ՀՆԾ ֆինանսավորմամբ:

Տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Ջրային կոմիտեի և Համաշխարհային Բանկի ներկայացուցիչների հետ կազմակերպվել են հանդիպումներ և քննարկումներ՝ ոռոգման և խմելու ջրի մատակարարման համակարգերի բարելավման ուղղությամբ: Ներկայում «Ջրային և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագրի շրջանակներում» քննարկման փուլում են գտնվում նաև չսպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման համակարգերի բարելավման հարցերը (Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ):

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ չնայած խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցմանն ուղղված քայլերին, այնուամենայնիվ խնդիրը համակարգային բնույթ է կրում և տարիներ շարունակ լուծում չի ստանում: Մարդու

իրավունքների պաշտպանը հետագայում նույնպես հետևողական է լինելու տվյալ հարցի հետագա ընթացքի նկատմամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանն ընդգծում է, որ անհրաժեշտ է՝ առաջնահերթության կարգով միջոցներ ձեռնարկել բնակավայրերում խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման ուղղությամբ:

3. Խմելու ջրի մատակարարման խափանումներ

2023 թվականի ընթացքում Պաշտպանին բազմաթիվ բանավոր և գրավոր բողոքներ են հասցեագրվել խմելու ջրի մատակարարման խափանումների վերաբերյալ: Դիմում-բողոքներով բարձրացված խնդիրների ուսումնասիրությունը վկայում է, որ ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2023 թվականին դրանք հիմնականում վերաբերել են խմելու ջրի որակին և ճնշմանը, ըստ սահմանված ժամանակացույցի ջրամատակարարում չիրականացնելուն, ջրամատակարարման ընդհատումներին, ինչպես նաև ջրանջատումների վերաբերյալ պատշաճ չծանուցելուն:

Նկատի ունենալով, որ նշված խնդիրները շարունակել են արդիական մնալ Պաշտպանը 2023 թվականի տարեկան հաղորդման պատրաստման շրջանակում դրանց կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով գրություն է հասցեագրել «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերությանը:

Այսպես, խմելու ջրի որակի վերաբերյալ ընկերության ներկայացրած տվյալների համաձայն՝ ընկերությունը նշված հարցի կապակցությամբ ստացել է 16 գրավոր բողոք և 4073 զանգ: Ըստ տրամադրված տեղեկատվության՝ խմելու ջրի որակի մասով ստացված յուրաքանչյուր զանգի դեպքում ընկերությունը կատարել է նմուշառում, այն ենթարկվել է լաբորատոր հետազոտության՝ ստուգելով դրա համապատասխանությունը սահմանված սանիտարական նորմերին և կանոններին:

Ըստ ընկերության՝ մատակարարվող խմելու ջրի որակն ընկերության առաջնային խնդիրներից է, գտնվում է մշտական հսկողության ներքո և հնարավոր ամեն քայլ ձեռնարկվում է այն ՀՀ-ում գործող սանիտարական նորմերի և կանոնների պահանջներին համապատասխան պահելու համար:

Խմելու ջրի ճնշման վերաբերյալ ընկերության ներկայացրած տվյալների համաձայն՝ ընկերությունը նշված հարցի կապակցությամբ ստացել է 91 բողոք և 24 309 զանգ: Ըստ տրամադրված տեղեկատվության՝ խմելու ջրի ճնշմանը ներկայացվող պահանջների պահպանման ուղղությամբ ևս ընկերությունը շարունակում է վարձակալության պայմանագրով, ՀԾԿՀ 09.11.2016 թվականի թիվ 397-Ա որոշմամբ ընկերությանը տրված լիցենզիայով ստանձնած պարտավորությունների և տվյալ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի շրջանակում բաժանորդներին ապահովել բավարար ճնշմամբ խմելու ջրով:

2023 թվականի ընթացքում շարունակել է խնդրահարույց մնալ նաև ջրամատակարարման գրաֆիկի խախտումների վերաբերյալ հարցը: Ասվածի մասին են վկայում նաև ընկերության ներկայացրած տվյալները: Ըստ այդմ, ընկերությունը գրավոր և էլեկտրոնային եղանակով ստացել է 110 գրավոր բողոք և 191 739 զանգ (ըստ ընկերության՝ առանձին դասակարգում չի իրականացվում դրանց՝ որպես բողոք հանդիսանալու բնույթի վերաբերյալ):

Ըստ «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության ներկայացրած պարզաբանումների՝ ջրամատակարարման գրաֆիկի խախտումները պայմանավորված են եղել պլանային, վթարային ջրանջատումներով, շինարարական աշխատանքներով, պոմպակայանների և մաքրման կայանների խափանման հետևանքով առաջացած խնդիրների, ինչպես նաև բաժանորդների ներքին ցանցում առկա վթարային հարցերով: Ջրամատակարարման գրաֆիկի խափանումները նվազագույնի հասցնելու համար ընկերությունում շարունակվում են կատարվել բարելավման աշխատանքներ: Ընկերության միջոցներով, ինչպես նաև պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրերի շրջանակներում իրականացվող ներդրումներով կատարվել են խնդրահարույց ջրագծերի, փականային հանգույցների կառուցման և վերակառուցման աշխատանքներ, ջրամատակարարման ցանցում շարունակվում են իրականացվել բարելավման աշխատանքներ:

2023 թվականի ընթացքում ջրանջատումների մասին բաժանորդներին չծանուցելու հարցի վերաբերյալ ընկերությունը ներկայացրել է պարզաբանումներ այն մասին, որ 2023 թվականի ընթացքում ջրանջատումների վերաբերյալ բողոքների դասակարգում չի իրականացվել, ուստի այս մասով համապատասխան տեղեկատվություն տրամադրել հնարավոր չէ:

Տրամադրված տեղեկատվության համաձայն՝ ջրանջատումների վերաբերյալ ծանուցումներն իրականացվում են ՀԾԿՀ 30.11.2016 թվականի թիվ 378-Ն որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան: Ըստ ընկերության՝ 2023 թվականի ընթացքում վթարային և պլանային աշխատանքների արդյունքում կատարվող ջրանջատումների վերաբերյալ տեղեկատվությունը պատշաճ կերպով փոխանցվել է բաժանորդներին՝ համապատասխան հայտարարություններ տարածելով զանգվածային լրատվության միջոցներով: Պարզաբանման համաձայն՝ համապատասխան տեղեկատվությունը տեղադրվել է նաև «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության պաշտոնական կայքում, ֆեյսբուքյան և տելեգրամյան հարթակներում: Ջրի որակի հարցի հետ կապված «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերությունն ահազանգերի հիման վրա իրականացրել է խմելու ջրի նմուշառումներ և խմելու ջրի որակի հետ կապված շեղում և անհամապատասխանություն չի հայտնաբերվել:

Այսպիսով, մատակարար ընկերության մատուցած ծառայությունների որակի և սահմանված պահանջների նկատմամբ պատշաճ վերահսկողությունը և հետևողականությունը հնարավորություն կտան խուսափել հաճախակի ջրանջատումներից և կնպաստեն նաև սպառողների պատշաճ իրազեկման ապահովմանը:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***ուսումնասիրել վթարային ընդհատումների պատճառները և աշխատանքներ իրականացնել դրանք նվազագույնի հասցնելու ուղղությամբ,***
- ✓ ***առավել հետևողական լինել խմելու ջրի մատակարարման ծառայությունների կանոնների, ինչպես նաև ջրամատակարարման ընդհատումների վերաբերյալ պատշաճ ծանուցումների իրականացման նկատմամբ:***

4. Առևտրային հաշվառքի սարքի խափանման կամ վնասման դեպքում առանց մեղքի ապացուցման բաժանորդին պատասխանատվության ենթարկելը

2023 թվականի ընթացքում Պաշտպանին ներկայացված բանավոր և գրավոր բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ շարունակում է խնդրահարույց մնալ

առևտրային հաշվառքի սարքերի խափանման կամ վնասման դեպքում ջրամատակարարում և գազամատակարարում իրականացնող ընկերությունների կողմից բաժանորդներին պատասխանատվության ենթարկելու հարցը:

Բողոքներն ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2023 թվականին նույնաբովանդակ են: Օրինակ՝ ջրամատակարարում իրականացնող ընկերությունը փոխարինել է բաժանորդների ներքին ցանցում տեղադրված առևտրային հաշվառքի սարքերը, որից հետո դրանք ստուգաչափվել են չափագիտական մարմնի կողմից: Փորձագիտական եզրակացությամբ պարզվել է, որ օրինակ՝ բացակայում է, վնասվել կամ կեղծվել է առևտրային հաշվառքի սարքի կապարակնիքը: Նշված բոլոր իրավիճակներում կապարակնիքի հետ կապված խախտումների համար պատասխանատվություն է կրում բաժանորդը[494]: Մինչդեռ, հնարավոր է, որ առևտրային հաշվառքի սարքը վնասված լինի, օրինակ, ջրամատակարարում իրականացնող ընկերության աշխատակցի կողմից այն ապահավաքակցելու ընթացքում: Հետևաբար, խնդրահարույց է իրականացված վերահաշվարկի արդյունքում գումարը վճարելու պահանջը բաժանորդին ներկայացնելը՝ առանց համապատասխան հիմնավորումների:

Նմանօրինակ է իրավիճակը գազահաշվիչի փոխարինման դեպքերում: Գործող կարգավորումների համաձայն՝ եթե չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացությամբ փաստվել է առևտրային հաշվառքի սարքի խախտում, որն ըստ մատակարարի՝ պայմանավորված է բաժանորդի միտումնավոր գործողություններով և դա վերջին երկու տարիներին առևտրային հաշվառքի սարքի խախտման առաջին դեպքն է, մատակարարն իրավունք ունի բաժանորդից պահանջել վճարել տույժ՝ վերահաշվարկված գազի արժեքի չափով:

Բարձրացված հարցի կապակցությամբ ՀԾԿՀ պարզաբանումների համաձայն՝ 2023 թվականին «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից առևտրային հաշվառքի սարքի խախտման հիմքով իրականացված վերահաշվարկին չհամաձայնելու վերաբերյալ ՀԾԿՀ է ներկայացվել 159 դիմում-բողոք: Դիմում-բողոքների քննարկման ընթացքի վերաբերյալ տրամադրվել է տեղեկատվություն առ այն, որ 3 դիմում-բողոքի դեպքում՝ բաժանորդին ներկայացված վերահաշվարկը նվազեցվել է, 1 դիմում-բողոքի դեպքում՝ բաժանորդին ներկայացված վերահաշվարկը չեղարկվել է, 2 դիմում-բողոքի դեպքում՝ առևտրային հաշվառքի սարքի արձանագրած խախտումները կատարված վերահաշվարկի հիմք չեն կարող հանդիսանալ, 7 դիմում-բողոքի դեպքում՝ ՀԾԿՀ-ն փաստել է, որ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն իրավունք չունի ծախսերի հիման վրա հաշվարկված հաշիվներից բացի, այլ հաշիվներ, մասնավորապես՝ նախորդ բաժանորդին ներկայացված հաշիվները, տույժերը նոր բաժանորդին ներկայացնելու, 57 դիմում-բողոքի դեպքում ընկերությունն իրավունք ունի վերահաշվարկված գումարը բաժանորդից պահանջել միայն դատական կարգով՝ մինչև վեճի վերջնական լուծումը չդադարեցնելով ծառայությունների մատուցումը: Միաժամանակ, ընկերության կողմից բաժանորդներին վճարվել է տույժ, 65 դիմում-բողոքի դեպքում ներկայացված վերահաշվարկի գումարը բաժանորդների կողմից ենթակա է վճարման, քանի որ փաստվել է առևտրային հաշվառքի սարքի խախտումը, 2 դիմում-բողոքի դեպքում հարցը դատական քննության փուլում է (կամ առկա է դատական ակտ), հետևաբար, հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետը՝ ՀԾԿՀ-ն իրավասու չէ քննարկելու

[494] ՀԾԿՀ 2016 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 378-Ն որոշման հավելվածի 55-րդ կետով սահմանված է, որ բաժանորդը պատասխանատվություն է կրում այնպիսի գործողությունների համար, որոնք ուղղված են իր սեփականություն հանդիսացող կամ այլ իրավական հիմքով տիրապետվող տարածքում տեղակայված առևտրային հաշվառքի սարքի խախտմանը:

առևտրային հաշվառքի սարքի խախտման հիմքով կատարված վերահաշվարկի հարցը, 19 դիմում-բողոքի դեպքում՝ հասցեի բաժանորդ է հանդիսանում այլ անձ (դիմումատուն բաժանորդը չէ): Դիմումատուները տեղեկացվել են, որ համաձայն «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 7-րդ մասի 8-րդ կետի, բարձրացված հարցը ՀԾԿՀ-ն կարող է քննարկել բաժանորդի (սպառողի կամ նրա ներկայացուցչի) պահանջով՝ վերջինիս կողմից դիմում (ներկայացուցչի դեպքում նաև լիազորագիր) ներկայացնելու դեպքում, 1 դիմում-բողոքի քննարկումը դադարեցվել է բաժանորդի՝ բողոք չունենալու մասին մեկ այլ դիմումի հիման վրա, 2 դիմում-բողոքի քննարկումն ընթացքի մեջ է:

Ըստ տրամադրված պարզաբանումների՝ 2023 թվականին «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից առևտրային հաշվառքի սարքի խափանման կամ վնասման դեպքում բաժանորդին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ստացվել է 24 դիմում-բողոք: Դիմում-բողոքների քննարկման ընթացքի վերաբերյալ տրամադրվել է տեղեկատվություն առ այն, որ երկու դիմում-բողոքի դեպքում՝ բաժանորդներն ազատվել են ներկայացված վերահաշվարկված գումարի վճարման պարտավորությունից, մեկ դիմում-բողոքի դեպքում՝ բաժանորդին ներկայացված վերահաշվարկված գումարը նվազեցվել է, մեկ դիմում-բողոքի քննարկումը դադարեցվել է բաժանորդի՝ բողոք չունենալու մասին դիմումի հիման վրա. դիմումով բարձրացված հարցը կարգավորվել է, մեկ դիմում-բողոքի դեպքում՝ բաժանորդը այլ անձ է (դիմումատուն բաժանորդը չէ): Դիմումատուն տեղեկացվել է, որ համաձայն «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 7-րդ մասի 8-րդ կետի, բարձրացված հարցը ՀԾԿՀ-ն կարող է քննարկել բաժանորդի (սպառողի կամ նրա ներկայացուցչի) պահանջով՝ վերջինիս կողմից դիմում (ներկայացուցչի դեպքում՝ նաև լիազորագիր) ներկայացնելու դեպքում, 19 դիմում-բողոքի դեպքում հաստատվել է առևտրային հաշվառքի սարքի խախտման փաստը, և վերահաշվարկված գումարը բաժանորդների կողմից ենթակա է վճարման:

Այսպիսով, Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ առևտրային հաշվառքի սարքի խախտման հիմքով վերահաշվարկած գումարը բաժանորդին ներկայացնելու հարցը շարունակում է մնալ խնդրահարույց: ՀԾԿՀ որոշումների կատարման նկատմամբ բացակայում են վերահսկողության պատշաճ կառուցակարգեր, ինչը գործնականում կարող է հանգեցնել մատակարարի կողմից չարաշահումների:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է՝

- ✓ ***խիստ վերահսկողություն սահմանել մատակարար ընկերությունների կողմից ՀԾԿՀ որոշումների կատարման նկատմամբ:***
- ✓ ***ոլորտը կարգավորող իրավական ակտում կատարել համապատասխան փոփոխություններ՝ իրականացված վերահաշվարկի արդյունքում գումարը վճարելու պահանջը, առանց մեղքի ապացուցման, բաժանորդին ներկայացնելու մոտեցումը վերանայելու համար:***

5. Ոռոգման ջրի մատակարարման խափանումներ

2023 թվականի ընթացքում Պաշտպանին բողոքներ են հասցեագրվել նաև ոռոգման ջրի մատակարարման խափանումների վերաբերյալ: Այսպես, օրինակ՝ Պաշտպանին

ներկայացրած բողոքներից մեկով անձը հայտնել է, որ Արագածոտնի մարզի Ոսկեվազ համայնքում գտնվող իր պտղատու այգու հարևանությամբ անցնող ջրատարի վնասման հետևանքով ոռոգման ջրի մատակարարում չի իրականացվել, ինչի արդյունքում իր բերքը չորացել է և իրեն պատճառվել է նյութական վնաս: Հավելել է, որ գտնվում է սոցիալապես անապահով վիճակում, ուստի չի կարող սեփական միջոցներով կարգավորել խնդիրը:

Բարձրացված հարցի կապակցությամբ Արագածոտնի մարզպետի աշխատակազմից ներկայացվել է պարզաբանում այն մասին, որ նշված խնդիրը քննարկվել է «Արագածոտն» ՋՕԸ-ի տնօրինության հետ: Քննարկման արդյունքում պարզվել է, որ ջրատարը վնասվել է Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի շինարարության ժամանակ և «Արագածոտն» ՋՕԸ-ն, վնասված ջրագծի վերականգնումից հետո, պատրաստ է ջրօգտագործողին ապահովել ոռոգման ջրով: Նշվել է նաև, որ Արագածոտնի մարզպետի աշխատակազմը խնդրին լուծում տալու նպատակով դիմել է ՏԿԵՆ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամին՝ միջոցներ ձեռնարկելու նշված ջրատարը վերականգնելու համար:

Չնայած վերոգրյալին՝ 2023 թվականին բարձրացված հարցը շարունակել է մնալ չլուծված: Ըստ Պաշտպանի աշխատակազմ ներկայացված լրացուցիչ տեղեկատվության՝ Արագածոտնի մարզպետի աշխատակազմը միջոցներ է ձեռնարկում մինչև ոռոգման շրջանի սկիզբը խնդրին լուծում տալու ուղղությամբ:

Պաշտպանին ներկայացրած մեկ այլ բողոքով անձը հայտնել է, որ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Պռոշյան բնակավայրում ունի գյուղատնտեսական նշանակության հողատարածք, որտեղ իրականացնում է այգեգործական աշխատանքներ: Հավելել է, որ ոռոգման ջրի մատակարարումը պարբերաբար դադարեցվում է, ինչի հետևանքով բերքը չորանում է:

Նշվածի կապակցությամբ Նաիրի համայնքի ղեկավարը ներկայացրել է պարզաբանումներ այն մասին, որ ջրօգտագործողը ՋՕԸ-ի հետ ջրի մատակարարման պայմանագիր չի ունեցել և այն կնքել է միայն դիմում-բողոքը ներկայացնելուց հետո: Նշվել է նաև, որ խնդիրը բնակավայրի վարչական ղեկավարի և ՋՕԸ-ի կողմից լուծվել է և ներկայում ջրամատակարարումը կատարվում է ըստ գրաֆիկի:

2023 թվականին ոռոգման ջրի հասանելիության հետ կապված խնդիրներ արձանագրվել են ոչ միայն Պաշտպանին ներկայացված անհատական դիմում-բողոքների ուսումնասիրությամբ, այլ նաև Մարդու իրավունքների պաշտպանի գլխավորած աշխատանքային խմբերի իրականացրած այցերի արդյունքում: Այսպես, օրինակ՝ Տավուշի մարզի Ոսկեպար, Ոսկեվան և Բաղանիս բնակավայրեր իրականացրած այցի ընթացքում բնակիչները, ի թիվս այլնի, բարձրացրել են նաև ոռոգման ջրի մատակարարումների հետ կապված խնդիրներ: Նշվածի կապակցությամբ իրավասու պետական մարմիններից Պաշտպանին ներկայացվել են պարզաբանումներ, մասնավորապես, այն մասին, որ Ոսկեպար, Ոսկեվան և Բաղանիս բնակավայրերի ոռոգման ջրամատակարարումը «Տավուշ» ՋՕԸ-ն իրականացնում է «Ոսկեպար-Բաղանիս-Ոսկեվան-Կոթի» ջրատարով, որը սկիզբ է առնում Ոսկեպար գետից: Նշել են նաև, որ ջրի սակավությունը պայմանավորված է Ոսկեպար գետի ջրասակավությամբ, իսկ երբեմն այն ամբողջությամբ ցամաքում է: Որպես խնդրի հնարավոր կարգավորում՝ կարող է դիտվել Ոսկեպարի պոմպակայանի վերականգնումը:

Պարզաբանումներ են տրամադրվել նաև այն մասին, որ Ոսկեպար, Ոսկեվան և Բաղանիս բնակավայրերի հողատարածքները գտնվում են Ոսկեպար-Կոթի ինքնահոս

ջրագծի իշխման տարածքում և «Տավուշ» ՋՕԸ կողմից ամենօրյա հետևողական աշխատանքներ են տարվում ոռոգման խնդիրները նվազագույնի հասցնելու համար:

2023 թվականին ոռոգման ջրի հասանելիության հետ կապված խնդիրներ արձանագրվել են նաև Գեղարքունիքի մարզի սահմանամերձ բնակավայրեր իրականացրած այցի ընթացքում: Այսպես, Վարդենիս համայնքի Վերին և Ներքին Շորժա, Կութ, Նորաբակ, Սոթք և Ազատ բնակավայրերի ոռոգման ջրամատակարարման խնդիրների հետ կապված իրավասու պետական մարմիններից Պաշտպանին ներկայացվել են պարզաբանումներ, մասնավորապես, այն մասին, որ հաշվի առնելով մարզում ստեղծված սակավաջրության իրավիճակը՝ տեղումների սակավությունը *(ինքնահոս համակարգի ջրերը ձյան ծածկույթի բացակայության պատճառով ամառվա կեսից վերջանում են)*, մակերևութային ջրերի նվազումը, ջերմաստիճանի աստիճանաբար բարձրացումը և ընդերքի ջրային պաշարների սակավությունն՝ անհրաժեշտ է ըստ վարելահողերի օգտագործման չափերի նշված բնակավայրերում հորատել խորքային հորեր, որոնք կնպաստեն անխափան ոռոգման ջրի մատակարարմանը և սոցիալ-տնտեսական հարցերի հնարավորինս լուծմանը: Պարզաբանումներ են տրամադրվել նաև այն մասին, որ սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում 2023-2024 թվականներին Նորաբակ բնակավայրում նախատեսվում է կառուցել ոռոգման ջրագծեր:

Վերոգրյալի հետ մեկտեղ, պարզաբանումներ են տրամադրվել նաև այն մասին, որ Էկոնոմիկայի նախարարությունը ոռոգման հիմնախնդրի կարգավորմանն ուղղված, շահագրգիռ մարմիններից ստացված առաջարկների հիման վրա, ամփոփել և 2023 թվականի մայիսի 19-ին Վարչապետի աշխատակազմ է ներկայացրել ՀՀ կառավարության 2021 թվականի հունիսի 3-ի թիվ 927-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2023 թվականների ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագիծը, *որում ոռոգման արդիական համակարգերի ներդրումն ավելի ընդգրկուն, զանգվածային և տարածված դարձնելու համար, առաջարկվում է չսահմանափակել տնտեսավարողների կողմից ոռոգման արդիական համակարգերի ձեռքբերման և ներդրման համար տարածքների հանրագումարը, իսկ ջրավազանների կառուցման կամ ընդլայնման համար պետական աջակցությունը տրամադրել մինչև 100 հազար խորանարդ մետր ծավալով ջրավազանների համար:* Բացի այդ, նախագծով թույլատրվում է առանց այգեհիմնման ջրավազանների կառուցման կամ ընդլայնման համար ծախսերի մասնակի փոխհատուցում, ընդ որում՝ գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում ոռոգման արդիական համակարգերի ձեռքբերման և ներդրման համար յուրաքանչյուր շահառուի կփոխհատուցվի փաստացի կատարված ծախսերի 60%–ը՝ գործող 50%-ի փոխարեն: Տեղեկատվություն է տրամադրվել նաև այն մասին, որ Վարչապետի աշխատակազմից ստացված առաջարկությունների հիման վրա նախագիծը լրամշակվում է և սահմանված կարգով կներկայացվի Վարչապետի աշխատակազմ:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ ոռոգման ջրի հասանելիության խնդիրը հատկապես մտահոգիչ է այն պատճառով, որ այն ուղղակիորեն բացասական է ազդում բնակիչների սոցիալական վիճակի վրա, քանի որ որոշ բնակավայրերում վերջիններիս եկամտի հիմնական, որոշ դեպքերում էլ՝ միակ աղբյուրն այգեգործությունն ու բանջարաբոստանային գործունեության արտադրությունն է:

Հարկ է նշել, որ ոռոգման ջրի մատակարարման պատշաճ ապահովումն ունի առաջնային նշանակություն, քանի որ Կառավարության կողմից հաստատված պետական տարբեր աջակցության ծրագրերն արտոնություններն ուղղված են գյուղատնտեսության խթանմանը, իսկ առանց ոռոգման ջրի հասանելիության, նման ծրագրերի արդյունավետությունը ցանկալի մակարդակի չի կարող լինել: Հետևաբար, ոռոգման ջրի մատակարարման ոլորտը կանոնակարգելու ուղղությամբ պետք է իրականացվեն շարունակական գործողություններ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել ոռոգման ջրի անխափան մատակարարումն ապահովելու ուղղությամբ:

6. Անձին սեփականության իրավունքով պատկանող հողամասում էլեկտրահաղորդման գծերի հենասյուներ տեղադրելու խնդիր

2023 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներով մարդիկ իրենց դժգոհությունն են հայտնել առ այն, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերությունը՝ առանց իրենց հետ նախապես համաձայնեցնելու՝ էլեկտրահաղորդման գծերի հենասյուներ է տեղադրել իրենց սեփականության իրավունքով պատկանող հողամասերում:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին ներկայացրած դիմում-բողոքներից մեկով անձը խնդրել է Պաշտպանի աջակցությունն իրեն սեփականության իրավունքով պատկանող հողատարածքում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության կողմից տեղադրված երկու հենասյունների տեղափոխման հարցում:

Բարձրացված հարցի առնչությամբ Պաշտպանին ներկայացվել են պարզաբանումներ այն մասին, որ հենասյուներից մեկը, ընկերության կողմից կտեղափոխվի հողամասի տարածքից դուրս՝ մինչև 2023 թվականի նոյեմբերի 30-ը, իսկ մյուս հենասյան տեղափոխումը (տեղ չլինելու պատճառով) հնարավոր կլինի իրականացնել նախագծա-նախահաշվային փաստաթղթերի առկայության դեպքում: Ըստ տրամադրված տեղեկատվության՝ հարցի կարգավորման նպատակով՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերությունը կկազմի նախագծա-նախահաշվային փաստաթղթեր և երկրորդ հենասյան տեղափոխման աշխատանքները կիրականացվեն մինչև 2023 թվականի նոյեմբերի 30-ը:

Բողոքի ընթացքի նկատմամբ իրականացվել է հետագա հետևողական աշխատանք: Ավելի ուշ՝ Պաշտպանի աշխատակազմ լրացուցիչ տեղեկատվություն է ներկայացվել այն մասին, որ հենասյուներից մեկը տեղափոխվել է հողամասի տարածքից դուրս, իսկ մյուս հենասյան տեղափոխման հարցն ընթացքում է:

Նմանատիպ մեկ այլ բողոքով անձը հայտնել է, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության կողմից հենասյուն է տեղադրվել իրեն սեփականության իրավունքով պատկանող հողամասում: Բողոք ներկայացրած անձը նշել է, որ հենասյունը խոչընդոտում է իր հողամասն ըստ նպատակային նշանակության օգտագործելուն:

Բարձրացված հարցի առնչությամբ Պաշտպանին ներկայացվել են պարզաբանումներ այն մասին, որ բարձրացված հարցը ստացել է լուծում և հենասյունը տեղափոխվել է հողամասի տարածքից դուրս:

Հաշվի առնելով այն, որ նշված խնդիրը համակարգային առումով շարունակում է արդիական մնալ՝ Պաշտպանը 2023 թվականի տարեկան հաղորդման պատրաստման

շրջանակում հարցի կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով գրություն է հասցեագրել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերությանը:

Ըստ ընկերության տրամադրած տեղեկությունների՝ 2023 թվականի ընթացքում բարձրացված հարցի վերաբերյալ ստացել է թվով 59 դիմում: Ընդ որում, հենասյուների մի մասը տեղափոխվել է ընկերության ֆինանսական միջոցների հաշվին, մի մասի վերաբերյալ կատարված չափագրման (գեոդեզիա) արդյունքում պարզվել է, որ հենասյուները տեղադրված են դիմողներին պատկանող տարածքներից դուրս, իսկ որոշ դեպքերում էլ նշված հենասյուները տեղադրվել են համաձայն՝ նախագծերի, որոնք նախապես հաստատված են եղել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից և պարզաբանման նպատակով ներկայացվել են համայնքապետարաններին: Որոշ դեպքերում էլ նշված հենասյուները տեղադրվել են ընկերության կողմից՝ համաձայն նախագծերի, ավելի վաղ, քան տարածքի նկատմամբ գրանցվել է բնակիչների սեփականության իրավունքը, ուստի նշված դեպքերում ևս դիմողներին առաջարկվել է տեղափոխման աշխատանքներն իրականացնել դիմող անձանց միջոցների հաշվին՝ ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի թիվ 523-Ն որոշմամբ սահմանված կարգով:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է առավել հետևողական լինել անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերում էլեկտրահաղորդման գծերի հենասյուների տեղադրման հարցում՝ պահպանելով այդ առումով առկա իրավակարգավորումներն ու չափանիշները:

7. Էլեկտրաէներգիայի մատակարարման հաճախակի ընդհատումների խնդիր

2023 թվականին Պաշտպանին բողոքներ են հասցեագրվել էլեկտրամատակարարող ընկերության կողմից առանց նախապես ծանուցելու էլեկտրաէներգիայի ընդհատումների վերաբերյալ: Այսպես, Պաշտպանին ներկայացված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ պետական ծրագրի շրջանակներում հաղթող է ճանաչվել և իրեն տրամադրվել է մեկ միլիոն դրամ գումար՝ բիզնես գործունեություն սկսելու համար: Հավելել է, որ այդ նպատակով ձեռք է բերել ինկուբատորային սարքավորումներ: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ օրվա տարբեր ժամերի ընդհատվում է էլեկտրաէներգիայի մատակարարումը, ինչի հետևանքով իրեն պատճառվում է նյութական վնաս:

Մեկ այլ բողոքով ազատությունից զրկված անձը հայտնել է, որ քրեակատարողական հիմնարկում էլեկտրաէներգիայի մատակարարումը պարբերաբար ընդհատվում է, ինչի հետևանքով էլեկտրակենցաղային իրերը խափանվում են:

Պաշտպանին ներկայացված մեկ այլ բողոքով անձը հայտնել է, որ բնակվում է Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի փողոցներից մեկում: Հավելել է, որ առանց նախապես ծանուցելու՝ էլեկտրամատակարարող ընկերությունը պարբերաբար և տևական ժամանակով ընդհատում է էլեկտրամատակարարումը՝ պատճառելով անհարմարություններ:

Հարկ է նշել, որ էլեկտրաէներգիայի ընդհատումների խնդիրը բացասական է ազդում ոչ միայն ֆիզիկական և իրավաբանական անձանց վրա, այլ նաև խաթարում է մի շարք պետական մարմինների բնականոն գործունեությունը: Այսպես, օրինակ՝ վերջին տարիներին Պաշտպանի աշխատակազմի վարչական շենքի էլեկտրաէներգիայի հաճախակի անջատումների պատճառով խաթարվում է Պաշտպանի աշխատակազմի

բնականոն գործունեությունը: Մասնավորապես, հնարավոր չի լինում ապահովել Պաշտպանի հաստատության էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության արդյունավետ կազմակերպումը, ինչպես նաև թեժ գծի կամ այլ ֆիքսված քաղաքային և ներքին հեռախոսահամարների միջոցով անձանց իրավաբանական խորհրդատվությունների տրամադրումը, ըստ անհրաժեշտության՝ արագ արձագանքման այցերի կազմակերպումը և այլն:

Ավելին, վերոնշյալ խնդիրը շարունակական և հաճախակի բնույթ է ստացել՝ ընդհուպ մինչև շաբաթվա ընթացքում մի քանի անգամ տևական ժամանակով էներգամատակարարման ընդհատմամբ: Հարկ է նկատել, որ պարբերական բնույթ կրող էներգամատակարարման տատանումները կարող են նաև էական վնաս հասցնել համակարգչային սարքերին ու այլ սարքավորումներին:

Նյութական հնարավոր վնասներից զատ, արձանագրվել են դեպքեր, երբ էներգամատակարարման ընդհատումները խաթարել են հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների և միջազգային կառույցների ներկայացուցիչների հետ իրականացվող հանդիպումների պատշաճ կազմակերպումը:

Նշված հարցի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով Պաշտպանը գրություն է հասցեագրել ՀԾԿՀ: Ըստ տրամադրած տեղեկատվության՝ 2023 թվականի հունվարի 1-ից մինչև սեպտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում Պաշտպանի աշխատակազմի վարչական շենքում արձանագրվել են մատակարարվող էլեկտրական էներգիայի 6 վթարային ընդհատումներ: Դրանց պատճառ են հանդիսացել վնասված բարձր լարման մալուխագծերը և կարճաժամկետ փոխանջատումները: Վերականգնման աշխատանքներն իրականացվել են ՀԾԿՀ 2019 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 523-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոնների (այսուհետ՝ ԷԲՑ կանոններ) 135-րդ կետով սահմանված ժամկետներում[495]:

Սպառման համակարգի հուսալիությունը բարձրացնելու նպատակով առաջարկվել է դիտարկել պահուստային սնուցման հարցը, որը, համաձայն ՀԷՑ տեղեկատվության, հնարավոր է իրականացնել 1*1600 կՎԱ + 1*2500 կՎԱ հզորության ՏԵ 1764-ի g/լ վահանից՝ կառուցելով մոտ 180մ էլեկտրահաղորդման մալուխային գիծ, որի միացման վճարը կկազմի 1.899.800 դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

Հաշվի առնելով այն, որ մատակարարվող էլեկտրաէներգիայի հաճախակի ընդհատումների խնդիրը համակարգային առումով շարունակում է արդիական մնալ՝ Պաշտպանը 2023 թվականի տարեկան հաղորդման պատրաստման շրջանակում հարցի կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով գրություն է հասցեագրել ՀԾԿՀ:

---

[495] Ըստ այդմ, սպառողի էլեկտրամատակարարման վթարային ընդհատման դեպքում Բաշխողն այն պարտավոր է վերականգնել ընդհատման պահից ոչ ուշ, քան՝

1) 2 ժամում՝ եթե սպառողի էլեկտրամատակարարումը նախատեսված է իրականացնել 6 կՎ և բարձր լարման երկու և ավելի անկախ սնուցում ունեցող օդային (մալուխային) գծերով կամ էլեկտրակայանի (ենթակայանի) երկու հոծանային համակարգերից կամ սեկցիաներից,

2) քաղաքային համայնքների վարչական տարածքի բնակավայրի սահմանում՝ 4 ժամում, բացառությամբ սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքի,

3) գյուղական համայնքների վարչական տարածքի բնակավայրի սահմանում՝ 8 ժամում, բացառությամբ սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքի,

4) քաղաքային և գյուղական համայնքների վարչական տարածքի բնակավայրի սահմաններից դուրս՝ 12 ժամում, բացառությամբ սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքի:

Հանձնաժողովի ներկայացրած տեղեկատվության համաձայն՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից ծառայությունների մատակարարման ընդհատումների վերաբերյալ ՀԾԿՀ է ներկայացվել 54 դիմում-բողոք: Նշված դիմում-բողոքների քննարկման ընթացքի վերաբերյալ տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ դրանցից՝ 25-ի դեպքում՝ ՀԷՑ-ի կողմից էլեկտրամատակարարման վերականգնման աշխատանքներն իրականացվել են ԷԲՑ սահմանված պահանջների խախտմամբ: Ուստի, նշված խախտումների համար, համաձայն ԷԲՑ կանոնների 273-րդ կետի 1-ին ենթակետի, մատակարարը սպառողներին վճարել է տույժ, 3-ի դեպքում՝ ՀԷՑ-ի կողմից էլեկտրամատակարարման վերականգնման աշխատանքներն իրականացվել են ԷԲՑ կանոնների սահմանված պահանջների խախտմամբ: Այնուհանդերձ, հաշվի առնելով, որ տվյալ ընդհատումները դիտարկվել են ֆորսմաժորային, համաձայն ԷԲՑ կանոնների 276-րդ կետի՝ բաշխողը նշված խախտման համար տույժ չի վճարել: Տեղեկատվություն է տրամադրվել նաև այն մասին, որ 24 դիմում-բողոքի դեպքում՝ էլեկտրամատակարարման վերականգնման աշխատանքներն իրականացվել են ԷԲՑ կանոններով սահմանված ժամկետներին համապատասխան, 1-ի դեպքում՝ սպառողին ներկայացվել է էլեկտրամատակարարման վերականգնման ժամկետների վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը, 1 դիմում-բողոքի քննարկումն ընթացքի մեջ է:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանն ընդգծում է, որ սպառողներին մատակարարվող էլեկտրաէներգիայի հաճախակի ընդհատումների հարցը կարգավորելու նպատակով անհրաժեշտ է՝ ուսումնասիրել վթարային արտապլանային ընդհատումների պատճառները, աշխատանքներ իրականացնել (այդ թվում՝ պահուստային (երկրորդային) սնուցում ապահովելու միջոցով) դրանք նվազագույնի հասցնելու համար, ինչպես նաև քայլեր ձեռնարկել էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ցուցանիշները բարելավելու ուղղությամբ:

ԲԱԺԻՆ 11. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

Ժողովրդավարական ցանկացած երկիր իր անվտանգությունն ապահովելու հիմնարար գործոններից պետք է համարի մարդու իրավունքների և ազատությունների հուսալի պաշտպանությունը՝ մշտապես կատարելագործելով պաշտպանական ներպետական մեխանիզմները:

Սահմանադրության 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ-ի ԶՈՒ-ն ապահովում են ՀՀ-ի պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ-ի ԶՈՒ-ը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և քաղաքացիական վերահսկողության ներքո են:

Ժողովրդավարական վերահսկողության և իրավունքի գերակայության մեխանիզմների անհրաժեշտությունն ընդգծված է ոչ միայն սահմանադրական մակարդակում, այլ նաև օրենսդրական հարթությունում: Այսպես, «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է, որ ՀՀ-ի պաշտպանությունը ենթակա է կազմակերպման և իրականացման, ի թիվս այլնի, օրինականության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգման, ԶՈՒ գործունեության նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության սկզբունքների հիման վրա:

ԶՈՒ-ում մարդու իրավունքների ապահովման խնդրի լուծման տեսանկյունից ՀՀ ՄԻՊ-ը մշտապես առանցքային է համարել այն, որ *անվտանգությունը չի հակադրվում մարդու իրավունքներին: Ավելին՝ դրանք համարժեք երևույթներ ու միմյանց փոխլրացնող արժեքներ են, որոնք կարող են ու պետք է զուգահեռ զարգանան՝ մշտապես լինելով պետության հոգածության ներքո:* Այս հարաբերակցությունն առավել արդյունավետ է դարձնում թե՛ մեկի, թե՛ մյուսի ապահովումը:

Սույն բաժնի շրջանակներում ոլորտում առկա խնդիրները վեր են հանվել երեք հարթություններում՝ նախքան զինվորական ծառայությունը, զինվորական ծառայության ընթացքում և ծառայությունից հետո: Ավելին, վերլուծությունները չեն սահմանափակվում միայն զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության հարցերով, այլ ընդգրկում են ավելի լայն շրջանակ՝ ներառելով նաև համակարգային խնդիրները: Սույն բաժնում հիմնական խնդիրների ներկայացումը կատարվել է բացառապես մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից և պետական գաղտնիքին առնչվող իրավակարգավորումները նկատի ունենալով՝ հաշվի առնելով սույն հաղորդման հրապարակային բնույթը:

Միևնույն ժամանակ, Պաշտպանը տարվա ընթացքում շարունակել է ինչպես գրագրությամբ, այնպես էլ պետական մարմինների ու քաղաքացիական հասարակության հետ հաղորդակցության տարբեր ձևաչափերով ներկայացնել ոլորտային խնդիրներն ու դրանց լուծման եղանակները:

Այս բաժնում ուսումնասիրություններն արվել են և խնդիրները վեր են հանվել Պաշտպանին հասցեագրված գրավոր ու բանավոր բողոքների և ահազանգերի, զինվորական հաստատություններ չհայտարարված այցերի, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների և հասարակական կազմակերպությունների՝ զինապարտների իրավունքների պաշտպանությանն առնչվող հրապարակումների հիման վրա:

Նկատի ունենալով անվտանգության ոլորտի կարևորությունը և դրանում առկա խնդիրներին պատշաճ ու հրատապ արձագանքելու անհրաժեշտությունը՝ Պաշտպանը չի

սահմանափակվել հիմնական խնդիրների մատնանշմամբ, այլ ներկայացրել է նաև լուծմանն ուղղված կոնկրետ առաջարկներ:

Տարեկան հաղորդման սույն բաժնի շրջանակներում հատուկ ուշադրություն է դարձվել կոնֆլիկտային և հետկոնֆլիկտային իրավիճակներում Պաշտպանի՝ որպես մարդու իրավունքների ազգային հաստատության դերի ընդգծմանը:

ԳԼՈՒԽ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության անկախ մեխանիզմ

Զինված ուժերի անձնակազմի համար կարևոր է, որ նրանք ծառայության ընթացքում իրենց խախտված իրավունքները վերականգնելու նպատակով ունենան անկախ մարմիններին բողոք ներկայացնելու հնարավորություն: Ավելին՝ յուրաքանչյուր զինծառայող ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք: Ընդ որում՝ այդ մարմինը կարող է դատական չլինել, սակայն պետությունն, ըստ էության, պետք է ապահովի այն նույն երաշխիքները, որով օժտված են դատական մարմինները՝ իրավական պաշտպանության միջոցների արդյունավետությունն ապահովելու համար[496]:

Չնայած ԶՈՒ-ում գանգատարկման ընթացակարգերի գոյությանը՝ զինվորական աստիճանակարգության վերահսկողության ներքո չգտնվող անկախ օմբուդսմանի ինստիտուտների նպատակն է քննության առնել ԶՈՒ-ում ոչ պատշաճ վարքագծի դրսևորումների վերաբերյալ գանգատները, ինչպես նաև զինվորական քաղաքականության բացերը և ԶՈՒ համակարգային հիմնախնդիրները: Այս առումով, օմբուդսմանի դերը կարևորվում է մի քանի առումներով՝

1) նրա անկախ վերահսկողությունը բարձրացնում է վստահությունը ԶՈՒ նկատմամբ՝ վարչարարության գործընթացում ավելի մեծ թափանցիկություն ստեղծելով և չվնասելով ենթակայության աստիճանակարգը.

2) որպես վերահսկող անկախ մարմին՝ խթանում է ԶՈՒ նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողությունը.

3) ԶՈՒ-ում ուժեղացնում է պատշաճ կառավարման, քաղաքացիական վերահսկողության, իրավունքի գերակայության և մարդու իրավունքների սկզբունքները.

4) զինծառայողներին պաշտպանում է նրանց իրավունքների խախտումներից, չարաշահումներից և անարդարացի որոշումներից.

5) զինվորական հրամանատարներին օգնում է հասնել ներքին բարեփոխումների և կատարելագործել ԶՈՒ ներքին ծառայությունը:

Արդյունքում, օմբուդսմանը դրական ներգործություն է ունենում զինծառայողների կյանքի որակի, նրանց մարտական ոգու և զորքերի մարտական համախմբվածության վրա[497]:

ՀՀ ՄԻՊ-ի՝ որպես ինքնուրույն գործառույթներ իրականացնող և սահմանադրական անկախ պաշտոնատար անձի գործունեության առաջնահերթություններից է ԶՈՒ-ում մարդու իրավունքների պաշտպանությունը, ներառյալ՝ զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների ապահովումը: Այս նպատակի իրագործման համար Պաշտպանը շարունակաբար կատարելագործել է աշխատակազմի կարողությունները:

---

[496] Տե՛ս ԶՈՒ անդամների իրավունքների մասին ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի Բացատրական հուշագիր, բաժին «ԻԲ»:

[497] Տե՛ս ԵԱՀԿ ԺՀՄԻԳ Ձեռնարկ «ԶՈՒ անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին», 2008 թվական, էջ 321, հասանելի է https://www.osce.org/hy/odihr/88572 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Այսպես, դեռևս 2017 թվականի հունիսին ստեղծվել է **Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության բաժինը**, որը մասնագիտական ստորաբաժանում է և գործում է նույն թվականի մայիսին ստեղծված՝ Քրեական արդարադատության ոլորտում և ԶՈՒ-ում մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտի կազմում: Բաժնի գործունեությունը համակարգում է Դեպարտամենտի ղեկավարը:

Առանձին բաժնի ստեղծումը պայմանավորված էր ինչպես Պաշտպանին հասցեագրվող բողոքների շարունակական աճով, այնպես էլ համակարգային ուսումնասիրությունների և ոլորտում առկա օրենսդրական խնդիրները լուծելու համար առաջարկություններ ներկայացնելու պահանջով: Բաժինը զբաղվում է քաղաքացիների զինապարտությանն առնչվող իրավունքների պաշտպանությամբ բոլոր փուլերում (զինվորական հաշվառում և զորակոչ, զինվորական ծառայության բուն ընթացք, պահեստազոր): Բացի այդ, բաժինը զբաղվում է զինծառայողների ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության հետ կապված հարցերով: Հատկապես 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին և դրանից հետո տեղի ունեցած ռազմական գործողությունների հետևանքով Պաշտպանի աշխատակազմի մասնագիտական ստորաբաժանման աշխատանքի ծավալը է՛լ ավելի ընդլայնվեց՝ ներառելով նաև պատերազմական իրավիճակներում ԶՈՒ անդամների իրավունքների պաշտպանության, պետության աջակցության, ինչպես նաև ռազմական ակտիվ գործողությունների ավարտից հետո առաջացող խնդիրների հետ կապված հարցերը: Պաշտպանին ԶՈՒ-ում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում աջակցող մյուս մարմինը **Պաշտպանին առընթեր գործող ԶՈՒ-ում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով փորձագիտական խորհուրդն է:** Խորհրդում ընդգրկված են ոլորտային հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, հոգեբանության, սոցիոլոգիայի ոլորտի անկախ մասնագետներ, փաստաբաններ: Խորհրդի աշխատանքների արդյունավետությունն ապահովող կարևոր գործոն է նաև այն, որ վերջինիս շրջանակներում քննարկումներին մասնակցում են քաղաքացիական հասարակության և պետական իրավասու մարմինների ներկայացուցիչներ: Խորհուրդը լայն հնարավորություն է տալիս քաղաքացիական հասարակության և պետական կառույցների ներգրավմամբ կազմակերպելու մասնագիտական քննարկումներ՝ ԶՈՒ-ում մարդու իրավունքներին առնչվող բազմաթիվ կարևորագույն հարցերի շուրջ: Օրինակ, 2023 թվականի հոկտեմբերի 13-ին տեղի է ունեցել Խորհրդի հերթական ընդլայնված նիստը, որտեղ քննարկման առարկա են դարձվել «Մարդու իրավունքների և հումանիտար իրավիճակը՝ վերջին ռազմական զարգացումների համատեքստում», «Ոչ մարտական մահվան դեպքերը բանակում և կարգապահության ամրապնդման հետ կապված խնդիրները» և «Վարժական հավաքների գործընթացում անձանց իրավունքների վիճակը» թեմաները[498]: Մասնակիցները հարց ու պատասխանի

[498] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2733 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

ժամանակ բարձրաձայնել են ոլորտին վերաբերող համակարգային հարցեր և դրանց լուծման ուղղությամբ իրենց տեսլականը: Խորհրդի նիստերի ընթացքում արձանագրված խնդիրները Պաշտպանի աշխատակազմում ամփոփվում և ըստ անհրաժեշտության՝ ներկայացվում են իրավասու գերատեսչություններին:

Պաշտպանը ՀՈՒ-ում մարդու իրավունքների պաշտպանությունն իրականացնում է 3 գլխավոր ուղղություններով՝ 1) մինչև զինվորական ծառայության անցնելը զինապարտների իրավունքների պաշտպանություն, 2) զինվորական ծառայության ընթացքում զինծառայողների իրավունքների պաշտպանություն, 3) զինվորական ծառայության ավարտից հետո նախկին զինծառայողների իրավունքների պաշտպանություն: Այս ամենով հանդերձ՝ Պաշտպանի ուշադրության կենտրոնում են ոչ միայն զինապարտների, այլ նաև նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության հետ կապված հարցերն ու ոլորտին առնչվող համակարգային խնդիրները:

2023 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում, ի թիվս այլնի, շարունակվել են աշխատանքները 2020 թվականին և դրանից հետո տեղի ունեցած ռազմական գործողությունների հետևանքով ՀՈՒ առջև ծառացած մարդու իրավունքներին վերաբերելի խնդիրների ու մարտահրավերների լուծման ուղղությամբ:

2. Հանրային իշխանության մարմինների և քաղաքացիական հասարակության հետ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով համագործակցությունը

Պաշտպանի կարևոր առաքելություններից է լինել կամուրջ պետության և քաղաքացիական հասարակության միջև[499]: Այս առումով 2023 թվականի ընթացքում ակտիվացել է համագործակցությունը պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվամիջոցների, զինված ուժերում մարդու իրավունքների հարցերով զբաղվող այլ հանրային կառույցների հետ: Մասնավորապես, Պաշտպանը զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերում ակտիվ համագործակցել է Ազգային ժողովի, Պաշտպանության նախարարության, Գլխավոր դատախազության, Քննչական կոմիտեի, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և մի շարք այլ մարմինների հետ: Ընդ որում, որպես պետական մարմինների հետ համագործակցության լավագույն և հաջողված օրինակ, առանձնացման ենթակա է Պաշտպանության նախարարության առանձին ստորաբաժանումների հետ ձևավորված արդյունավետ համագործակցությունը, որը, իհարկե, դրականորեն է անդրադարձել զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության և խթանման վրա: Այդ համատեքստում կարևորվում է նաև ՊՆ մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի, զինկոմիսարիատների, ռազմաբժշկական վարչության, ռազմաբժշկական հանձնաժողովների, հոսպիտալների պատրաստակամությունը Պաշտպանի աշխատակազմի հետ գործուն համագործակցության առումով: ՀՈՒ-ում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում պետք է ողջունելի համարել ՊՆ մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի գործունեությունը, որը ներառում է նաև ՊՆ թեժ գծի աշխատանքի համակարգումը: Այս առումով կարևոր է նաև նշված

[499] ԵԱՀԿ հստակ դիրքորոշմամբ՝ մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունները գործում են որպես կամուրջ քաղաքացիական հասարակության և պետության միջև՝ կապելով պետությունների պարտականությունները քաղաքացիների իրավունքների հետ: Հասանելի է https://www.osce.org/odihr/national-human-rights-institutions հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

ստորաբաժանման հրապարակային գործունեությունը (կատարած աշխատանքի վերաբերյալ հաշվետվության ներկայացումը նաև հրապարակային), որը տեսանելի է դարձնում կատարված աշխատանքը և հավելյալ երաշխիք ստեղծում ՀՈՒ-ում մարդու իրավունքների պաշտպանության համար[500]:

2023 թվականի ընթացքում Պաշտպանը և Պաշտպանի ներկայացուցիչները շարունակել են այցեր իրականացնել զորամասեր, զինվորական հոսպիտալներ, զինկոմիսարիատներ, ՊՆ կենտրոնական հավաքակայան, Ռազմական ոստիկանության բաժիններ և այլն:

Զինվորական հոսպիտալներում, օրինակ, Պաշտպանին հասցեագրված բողոքների շրջանակներում ուսումնասիրվել են զինծառայողների բուժման ընթացքը, արդյունքները և զինծառայողների բժշկական փաստաթղթերը, տեղի են ունեցել քննարկումներ հոսպիտալների բուժանձնակազմի կազմի հետ: Պաշտպանի ներկայացուցիչները մշտապես համագործակցել են Կենտրոնական բժշկական և Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովների հետ, ստացված բողոքների շրջանակներում համատեղ քննարկվել են զինապարտ քաղաքացիների առողջական վիճակին առնչվող հարցեր: ՊՆ-ի հետ համատեղ քննարկումների արդյունքում նշանակվել են առողջական վիճակի կրկնակի փորձաքննություններ, զորակոչիկները ստացել են տարկետումներ, զինծառայողներն ուղեգրվել են զինվորական հոսպիտալներ և ստացել համապատասխան բուժումներ և այլն: Մի շարք դեպքերում այցերի մասին Պաշտպանը հանդես է եկել նաև հրապարակային հայտարարություններով[501]: 2023 թվականի ընթացքում պետական տարբեր մարմինների, հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների հրավերներով Պաշտպանը և ներկայացուցիչները մասնակցել են ոլորտային տարբեր հարցերով քննարկումների: Բացի այդ, Պաշտպանի աշխատակազմի և Պաշտպանության նախարարության մի շարք ստորաբաժանումների միջև տեղի են ունեցել զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների արդյունավետ պաշտպանությանը

[500] 2023 թվականի ընթացքում ՊՆ թեժ գծով ստացված զանգերի վերաբերյալ տարեկան հաշվետվությունը հրապարակված է Նախարարության պաշտոնական կայքում: Հասանելի է հետևյալ http://surl.li/rhzxf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[501] Տե՛ս, օրինակ, Պաշտպանի այցը զորամասեր և ռազմական ոստիկանության բաժիններ՝ հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2629 հղումով, զինվորական հոսպիտալ՝ հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2672 հղումով, զինկոմիսարիատ՝ հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2837 հղումով և այլն, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

միտված մի շարք քննարկումներ, որոնք նպաստել են տարբեր խնդիրների կապակցությամբ արագ լուծումներ գտնելուն:

Մարդու իրավունքների միջազգային օրվան նվիրված միջոցառումների շրջանակում Պաշտպանը 2023 թվականի դեկտեմբերի 12-ին բացման խոսքով է հանդես եկել ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայում կազմակերպված՝ Զինված ուժերում վատ վերաբերմունքի դեմ պայքարի և կանանց ներգրավումը զինված ուժերում



թեմաներով քննարկմանը, որտեղ Պաշտպանը նշել է.

«Մարդու իրավունքների պաշտպանությունն ու իրավունքահեն գաղափարները զինված ուժերի տեսանկյունից ունեն բացառիկ կարևորություն: Ինչպես ցանկացած համակարգ, այնպես էլ զինված ուժերը կարող են պատշաճ և արդյունավետ գործել՝ հիմնվելով բացառապես իրավունքահեն արժեքների վրա: Հակառակ պարագայում անհնար է ունենալ համերաշխ և հանդուրժող միջավայր, իսկ այդպիսի միջավայրի բացակայությունը հանգեցնում է բազմաթիվ հակահիրավական և բացասական երևույթների: Այս համատեքստում կարևորում եմ Պաշտպանության նախարարության հետ մեր համագործակցությունը: Այդ համագործակցության շնորհիվ մի շարք խնդիրներ ստանում են արագ լուծումներ»: Միևնույն ժամանակ, Պաշտպանը խոսել է զինված ուժերում առկա խնդիրների մասին, նշել, որ դրանք պետք է ստանան համակարգային լուծումներ՝ ընդգծելով այդ գործընթացում մարդու իրավունքների գերակայության երաշխավորման կարևորությունը»[502]:

Դրական արդյունքներ է տվել նաև պետական մյուս կառույցների հետ համագործակցությունը: Օրինակ՝ վարժական հավաքների ներգրավված ուսանողների կրթության իրավունքի ապահովման հարցերի առնչությամբ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ համագործակցության արդյունքում բարձրացված առանձին խնդիրներ ստացել են լուծում:

2023 թվականի ընթացքում ակտիվ համագործակցություն է եղել ԱԺ-ի իրավասու մշտական հանձնաժողովների հետ: Ոլորտային մի շարք հարցերի շուրջ կարևոր քննարկումներ են եղել ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական

[502]Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2805 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

հանձնաժողովի հետ, ընդգծվել է Պաշտպանի հաստատության և մշտական հանձնաժողովի միջև առավել ակտիվ համագործակցելու կարևորությունը՝ որպես ՀՈՒ նկատմամբ արտաքին վերահսկողություն իրականացնող մարմիններ: Պաշտպանը և ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահը համատեղ այց են իրականացրել ՊՆ կենտրոնական հավաքակայան[503]: Այցի նպատակն է եղել տեղում դիտարկել 2023 թվականի ամառային զորակոչի ընթացքը, վեր հանել հնարավոր խնդիրները, զրուցել անձնակազմի և զորակոչիկների հետ: Այցի ընթացքում արձանագրված խնդիրները և դրանց լուծման ուղիները Պաշտպանը գրությամբ ներկայացրել է Վարչապետի աշխատակազմ:

Հաշվետու ժամանակահատվածում Պաշտպանն ակտիվ համագործակցել է «Զինվորի տուն» վերականգնողական կենտրոնի հետ, այցելությունների ու ընթացիկ համագործակցության միջոցով փորձել աջակցել կենտրոնի կողմից զինծառայողներին տրամադրվող վերականգնողական ծառայությունների մատուցման ընթացքում առաջացող խնդիրների լուծմանը:

Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների արդյունավետ պաշտպանության տեսանկյունից հատուկ կարևորություն ունի համագործակցությունը փաստաբանների հետ: Փաստաբանների հետ համագործակցությունը իրենց վստահորդներ հանդիսացող զինծառայողների իրավունքների պաշտպանության բնագավառում կրում է շարունակական բնույթ:

Լինելով կամուրջ հանրային մարմինների և քաղաքացիական հասարակության միջև՝ Պաշտպանի համար կարևոր է միասնական հարթակ ստեղծել բանակում առկա խնդիրները վեր հանելու, դրանք քննարկելու և անհրաժեշտ լուծումներ գտնելու ուղղությամբ: 2023 թվականի ընթացքում հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի են ունեցել զինված ուժերում մարդու իրավունքների գործնական և համակարգային խնդիրներին նվիրված մի շարք քննարկումներ[504]: Այդ համագործակցությունն ապահովվել է նաև ԵԱՀԿ աջակցությամբ և ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովին կից գործող՝ Անվտանգության ոլորտի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության ազգային հարթակի աշխատանքների շրջանակներում կազմակերպված քննարկումների միջոցով[505]:

Պաշտպանության և անվտանգության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության և խթանման ժամանակակից մարտահրավերների հաղթահարման նպատակով Պաշտպանը կարևորում է բոլոր դերակատարների հետ ակտիվ փոխգործակցությունը և միասնական ու հետևողական աշխատանքը:

[503] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2614 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[504] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2678 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[505] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2754 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

3. Միջազգային համագործակցությունը զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում

Պաշտպանի առաջնահերթություններից է միջազգային, այդ թվում՝ եվրոպական իրավական չափանիշների կիրարկումը զինված ուժերին առնչվող օրենսդրությունում: Այս համատեքստում մեծապես կարևորվում է ԶՈՒ-ում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում միջազգային մասնագիտացված կառույցների հետ համագործակցության կատարելագործումը: Այդպիսի համագործակցության լավագույն օրինակ են ԵԽ աջակցությամբ Հայաստանի ԶՈՒ-ում մարդու իրավունքների պաշտպանությանն ու խթանմանը միտված թիրախային ծրագրերը:

Կարևոր է արձանագրել, որ Հայաստանն առաջին պետությունն է, որտեղ 2016 թվականին մեկնարկեց ԵԽ **«Մարդու իրավունքների եվրոպական չափանիշների կիրառման ամրապնդումը Հայաստանի ԶՈՒ-ում»** ծրագիրը: Այս ծրագրի շրջանակում աշխատանքներն իրականացվել են մինչև 2019 թվականը: Ծրագրի շրջանակում ԵԽ-ի, ՊՆ-ի և Պաշտպանի աշխատակազմի ակտիվ համագործակցությամբ արձանագրվել են կոնկրետ արդյունքներ: Մասնավորապես՝

- վերանայվել և կատարելագործվել է զինվորական ոլորտը կարգավորող օրենսդրությունը՝ համապատասխանեցնելով միջազգային չափորոշիչներին,
- բարձրացվել է իրազեկվածությունը ԶՈՒ-ում մարդու իրավունքների վերաբերյալ,
- կատարելագործվել են ԶՈՒ-ում մարդու իրավունքների խախտումների կանխմանն և ճիշտ ուղղորդմանը վերաբերող իրավակարգավորումները:
- ծրագրի շրջանակներում կազմակերպվել են հանդիպումներ, կլոր սեղան քննարկումներ, աշխատաժողովներ, որոնք ուղղված են եղել ՄԻՊ աշխատակազմի կարողությունների զարգացմանը: Միաժամանակ, այդ միջոցառումներին ներգրավված են եղել նաև հասարակական կազմակերպությունների և պետական այլ կառույցների ներկայացուցիչներ: Մի շարք աշխատաժողովների և ճանաչողական այցերի միջոցով Պաշտպանի ներկայացուցիչները միջազգային համագործակցության շրջանակներում ուսումնասիրել են առանձին օտարերկրյա օմբուդսմանների, օրինակ, Նորվեգիայի ռազմական օմբուդսմանի փորձը, որն առաջինն է աշխարհում: Ծրագրի շրջանակում կազմակերպվել են նաև վերապատրաստման հատուկ դասընթացներ՝ նվիրված կոնֆլիկտային, հետկոնֆլիկտային և ռազմական իրավիճակներում ՄԻՊ գործունեության, այդ թվում՝ ճգնաժամային իրավիճակներում փաստահավաք աշխատանքներին և այլն:

ԵԽ «Մարդու իրավունքների եվրոպական չափանիշների կիրառման ամրապնդումը Հայաստանի ԶՈՒ-ում» ծրագրին հաջորդել է **«Մարդու իրավունքները և կանայք Հայաստանի Հանրապետության զինված ուժերում»** ծրագիրը: Նշված ծրագրի առանցքային գործընկերներից է եղել ՄԻՊ-ը:

Ծրագրի շրջանակում կատարվել են բազմաթիվ աշխատանքներ, որոնք նպաստել են ինչպես ԶՈՒ-ում մարդու իրավունքների պաշտպանությանն ու խթանմանը, այնպես էլ Պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացմանը: Այս ծրագրի աջակցությամբ՝

- ՊՆ-ի ու Պաշտպանի աշխատակազմի անմիջական մասնակցությամբ պատրաստվել և հրապարակվել են տեղեկատվական անիմացիոն տեսահոլովակներ՝ զինվորական ծառայության գրավչության, զինվորական կրթության հավասար

հնարավորությունների ապահովման, ՀՈՒ-ում կանանց ծառայության հարցերի, զինծառայողների սոցիալական երաշխիքների և այլնի վերաբերյալ[506],

- Ծրագրի աջակցությամբ Պաշտպանի աշխատակազմում մշակվել է «Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանություն. Պաշտպանի մշտադիտարկման իրավական շրջանակ» ձեռնարկը[507], որը վերաբերում է ՀՈՒ-ում մարդու իրավունքների պաշտպանությանը և կարևոր ու պրակտիկ գործիք է Պաշտպանի կողմից զինծառայողների իրավունքների և ազատությունների, ՀՈՒ-ում կանանց իրավունքների մշտադիտարկման համար,

- Պաշտպանի աշխատակազմի համար իրականացվել է կոնֆլիկտային և հետկոնֆլիկտային իրավիճակներում միջազգային մարդասիրական իրավունքի, մարդու իրավունքների, ինչպես նաև ՄԻԵԴ նախադեպերի վերաբերյալ դասընթաց-քննարկում:

- Ծրագրի շրջանակում իրականացվել է նաև վերապատրաստման դասընթաց լրատվամիջոցների ներկայացուցիչների համար, որի նպատակն էր օգնել նրանց հասկանալ, թե երբ և ինչպես պետք է լուսաբանվեն անվտանգությանը վերաբերող թեմաները, որոնք են «պատասխանատու լրագրության» առումով լրատվամիջոցների լուսաբանման սահմանները,

- իրականացվել է ճանաչողական այց Շվեդիայի Թագավորություն: Այցը նպաստել է շվեդական լավագույն փորձի ուսումնասիրմանը, մասնավորապես հետևյալ ուղղություններով՝ Արդյունավետ կարգապահական համակարգեր, Ազդարարի համակարգի պաշտպանություն, գենդերային հավասարության խթանում և այլն:

2023 թվականի հուլիսի 24-ին Պաշտպանի ներկայացուցիչը Ստրասբուրգում մասնակցել է ԵԽ Մարդու իրավունքների հարցերով միջկառավարական հանձնաժողովի (CDDH) կողմից կազմակերպված միջազգային աշխատաժողովին, որի նպատակն էր ընդգծել ՀՈՒ-ում մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմները կատարելագործելու անհրաժեշտությունը ԵԽ անդամ երկրներում: Միջոցառման շրջանակներում Պաշտպանի ներկայացուցիչը միջազգային գործընկերներին է ներկայացրել նաև Հայաստանի ՄԻՊ-ի և ԵԽ-ի միջև ձևավորված բարձր մակարդակի համագործակցությանը և վերը նշված ծրագրերի շրջանակում արձանագրված կոնկրետ արդյունքները[508]:

Այս առումով շատ կարևոր է այն, որ ԵԽ-ի հետ սկսված աշխատանքը շարունակվել է նոր թափով՝ 2023 թվականին մեկնարկած ԵԽ **«Մարդու իրավունքների խթանումը Հայաստանի զինված ուժերում»** ծրագրի շրջանակում[509]: 2023 թվականի ապրիլի 22-ին Պաշտպանը մասնակցել և ողջույնի խոսքով է հանդես եկել նշված ծրագրի բացման միջոցառմանը՝ կարևորելով զինծառայողների իրավունքների պաշտպանության գործող մեխանիզմների կատարելագործումը և նոր մեթոդների ներդնումը[510]: Պաշտպանը մի շարք առանձին հանդիպում-քննարկումներ է ունեցել ԵԽ գործընկերների հետ՝ ներկայացնելով նշված ծրագրի շրջանակում մի շարք առաջարկներ, որոնք միտված են ինչպես

---

[506] Հասանելի են https://www.facebook.com/britishembassyyerevan/videos/animation-film-on-service-of-female-military-personnel-in-armenia/766951134099244/, https://www.youtube.com/watch?v=5ElYc8r-gF0, https://www.youtube.com/watch?v=XzbVWgNV6MU&t=1519s, https://vimeo.com/637863329 , https://vimeo.com/637865467 , https://vimeo.com/656465951 հղումներով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[507] Ձեռնարկը հասանելի է https://ombuds.am/images/files/f6f074cf2679345795db7e978f8710ae.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[508] Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2624 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[509] «Մարդու իրավունքների խթանումը Հայաստանի ՀՈՒ-ում» ծրագիրն իրականացվում է Հայաստանի համար ԵԽ 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի շրջանակներում:

[510] Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2498 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Պաշտպանի հաստատության կարողությունների զարգացմանը, այնպես էլ ՀՈՒ-ում մարդու իրավունքների պաշտպանության առավել արդյունավետ կառուցակարգերի մշակմանն ու գործարկմանը[511]:

Պաշտպանը 2023 թվականի հունիսի 18-20-ին մասնակցել է Վիեննայում անցկացվող ՀՈՒ օմբուդսմանական հաստատությունների՝ «Կլիմայի փոփոխության ազդեցությունների կառավարում, օմբուդսմանական հաստատություններ և ՀՈՒ» խորագրով 15-րդ միջազգային համաժողովին: Միջոցառումը կազմակերպել է Անվտանգության ոլորտի կառավարման ժնևյան կենտրոնն (DCAF) Ավստրիայի դաշնային ՀՈՒ հարցերով խորհրդարանական հանձնաժողովի հետ համատեղ: Մասնակցել են մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ավելի քան 50 երկրների հաստատություններ: Համաժողովի նպատակն է եղել նպաստել ՀՈՒ-ում մարդու իրավունքների պաշտպանության երաշխավորմանը, խթանել լավագույն փորձի փոխանակմանը անվտանգային ոլորտում, ինչպես նաև բարձրացնել իրազեկվածության մակարդակը[512]: 2023 թվականի ընթացքում Պաշտպանը միջազգային գործընկերների հետ բազմաթիվ հանդիպում-քննարկումներ է ունեցել՝ նրանց ներկայացնելով Պաշտպանի գործունեության ուղղությունները նաև ՀՈՒ-ում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում:

ՀՈՒ-ում մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում Պաշտպանի աշխատանքները կրում են շարունակական բնույթ և նպատակ ունեն միջազգային կառուցակարգերի հավելյալ հնարավորություններն օգտագործելով՝ նպաստել/աջակցել ՀՈՒ-ում մարդու իրավունքների պաշտպանության կառուցակարգերի զարգացմանը[513]:

[511] Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2497 , https://www.ombuds.am/am/site/ViewNews/2616 հղումով, 2023 թվականի հուլիսի 18-ի դրությամբ:

[512] Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2584 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[513] Տես, օրինակ, Պաշտպանի հանդիպումը ՀՀ-ում Չեխիայի դեսպանի հետ՝ հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2680, ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի հետ՝ https://www.ombuds.am/am/site/ViewNews/2767 , Միջխորհրդարանական միության գլխավոր քարտուղարի հետ՝ https://www.ombuds.am/am/site/ViewNews/2848, ԱՄՆ ՄԶԳ/Հայաստանի առաքելության Արդարադատության ոլորտի աջակցության ծրագրի տնօրենի հետ՝ https://www.ombuds.am/am/site/ViewNews/2854 , Շվեդական միջազգային համագործակցության զարգացման գործակալության (SIDA) ներկայացուցչի հետ՝ https://www.ombuds.am/am/site/ViewNews/2857 հղումներով և այլն, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

ԳԼՈՒԽ 2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1. Զինվորական հաշվառման և զորակոչի կազմակերպման գործընթացը

Զինվորական հաշվառման և զորակոչի կազմակերպման գործընթացում մարդու իրավունքների վիճակը Պաշտպանի մշտական ուշադրության ներքո է: 2023 թվականի ընթացքում նշված գործընթացի հետ կապված Պաշտպանին հասցեագրվել են մի շարք բողոքներ, որոնք հիմնականում վերաբերել են ծանուցումների ոչ պատշաճ լինելուն, զինվորական հաշվառմանը, ինչպես նաև զորակոչի ընթացքում բժշկական հետազոտություններին, զինկոմիսարիատներում թափուր հաստիքներին և դրանից բխող զինվորական հաշվառման և զորակոչի կազմակերպման գործընթացում առաջացող բարդություններին, զինապարտների իրավունքների ու պարտականությունների մասին տեղեկություններ չտրամադրելուն կամ ոչ լիարժեք տրամադրելուն, Պաշտպանության նախարարության կողմից գործարկված ծրագրերի («Պատիվ ունեմ», «Պաշտպան հայրենյաց» և այլն) մասին ոչ պատշաճ իրազեկումներին և այլն:

2023 թվականի ամառային և ձմեռային զորակոչերի ընթացքում Պաշտպանն ակտիվ աշխատանքներ է իրականացրել: Մասնավորապես, Պաշտպանն այցելել է ՊՆ կենտրոնական հավաքակայան, զինկոմիսարիատ, Կենտրոնական բժշկական հանձնաժողովի նիստին, հանդիպել է զորակոչիկների հետ, անդրադարձել նրանց իրավունքներին առնչվող հարցերին և այլն: Զորակոչերի ընթացքում արձանագրված համակարգային խնդիրների, ինչպես նաև Պաշտպանին հասցեագրված անհատական բողոքների շրջանակներում ակտիվ համագործակցություն է եղել պաշտպանական գերատեսչության հետ, արդյունքում լուծվել կամ խնդիրների լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու պայմանավորվածություններ են ձեռք բերվել:

Տարիներ շարունակ Պաշտպանը խոսել է զինվորական հաշվառման և զորակոչի կազմակերպման գործընթացում առաջացող ամենատարածված խնդիրներից մեկի մասին, որը վերաբերում է քաղաքացիներին զինկոմիսարիատ ներկայանալու (պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ներգրավվելու, վարժական հավաքի մեկնելու և այլն) նպատակով ծանուցումների ոչ պատշաճ լինելուն: Ընդ որում, վարժական հավաքներ կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչ հայտարարելուց հետո հենց այս հարցի վերաբերյալ են Պաշտպանի աշխատակազմում ստացվում բազմաթիվ բողոքներ: Քաղաքացիների պնդումներով՝ իրենք զինկոմիսարիատ ներկայանալու մասին սահմանված կարգով չեն ծանուցվում, այլ կանչվում են հեռախոսազանգի միջոցով, կամ ծանուցագիր չի ուղարկվում, և դրա փոխարեն Ոստիկանության ծառայողն է այցելում իրենց բնակության վայր և պահանջում ներկայանալ զինկոմիսարիատ և այլն: Այս կապակցությամբ պետք է նշել, որ ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 1132-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված կարգի 8-րդ կետի համաձայն՝ շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչը հայտարարվելուց հետո զինվորական կոմիսարիատը շարքային կազմի պարտադիր զինվորական զորակոչի ենթակա քաղաքացուն փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով ծանուցում է զինվորական կոմիսարիատ ներկայանալու պարտավորության մասին՝ ծանուցման մեջ նշելով ներկայանալու ժամկետը: Փաստաթղթային եղանակով ծանուցումն իրականացվում է քաղաքացուն ծանուցագիրն առձեռն հանձնելու, իսկ էլեկտրոնային եղանակով ծանուցումը՝ զինվորական

կոմիսարիատին քաղաքացու կողմից էլեկտրոնային հասցե տրամադրված լինելու դեպքում՝ այդ էլեկտրոնային հասցեին ծանուցագիր ուղարկելու միջոցով:

Արձանագրված խնդիրների հաշվառմամբ՝ Պաշտպանն իրավասու գերատեսչություններին առաջարկել էր մշակել քաղաքացիներին իրապես պատշաճ ծանուցելու ընթացակարգ: Այս առումով, կարևոր է արձանագրել, որ 2023 թվականին շրջանառության մեջ է դրվել «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագիծը, որով նախատեսվում են ծանուցումների գործընթացում մի շարք փոփոխություններ: Ըստ նախագծի՝ քաղաքացուն պատշաճ ծանուցման մասին փաստը հաստատող փաստաթուղթ կամ հանգամանք են համարվում՝ 1) ծանուցագիրն առձեռն հանձնելու դեպքում՝ ծանուցագիրը ստանալու մասին քաղաքացու ստորագրությամբ հաստատված ստացականը 2) փոստային պատվիրված նամակով ծանուցման դեպքում՝ պատվիրված նամակը քաղաքացուն հանձնված լինելը հաստատող փաստաթուղթը 3) անհատական ծանուցման դեպքում՝ «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված քաղաքացու պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկված ծանուցագիրը քաղաքացու կողմից կարդալու մասին էլեկտրոնային հավաստումը 4) հրապարակային ծանուցման դեպքում՝ օրենքով սահմանված ՀՀ-ի հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում քաղաքացուն ուղղված ծանուցումը տեղադրելու քաղվածքը, որի դեպքում քաղաքացին 5-րդ օրը համարվում է ծանուցված:

Պաշտպանը նախագծի վերաբերյալ ներկայացրել է իր դիրքորոշումները, որոնցում, ի թիվս այլնի, առաջարկել է հստակ կանոնակարգել քաղաքացիներին ծանուցելու հերթականությունը (օրինակ, նախ կիրառվում է ծանուցագիրն առձեռն հանձնելու տարբերակը, հետո միայն, ըստ հերթականության, հաջորդ ձևերը), մտահոգություն է հայտնել հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում ծանուցում տեղադրելու և դրանով անձին իրապես պատշաճ ծանուցված համարելու նախագծային կարգավորման վերաբերյալ[514] (այս ծանուցման ձևը խնդրահարույց համարելով նաև անվտանգային տեսանկյունից, անձանց նկատմամբ քրեական հետապնդումների հնարավոր աճի առումով և այլն), անդրադարձել է այն խնդիրներին, որոնց պատճառով զինկոմիսարիատները խոչընդոտներ են ունենալու էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցման գործընթացը կազմակերպելիս և այլն: Պաշտպանի ներկայացրած դիրքորոշումները կոնկրետ առաջարկներով ուղարկվել են Պաշտպանության նախարարություն:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ առաջարկվում է՝

✓ ***բացառել զորավարժություններին և վարժական հավաքներին կանչելու նպատակով օրենքով սահմանված կարգի խախտմամբ քաղաքացիներին ծանուցելու պրակտիկան,***

[514] ՍԴՈ-1189 որոշմամբ Սահմանադրական դատարանը արձանագրել է. «(…) շահագրգիռ սուբյեկտների կողմից … պատշաճ ծանուցված լինելը՝ վերջիններիս իրավունքների պաշտպանության conditio sine qua non (պայման, առանց որի հնարավոր չէ) կարևոր պայման է, առանց որի հնարավոր չէ երաշխավորել նրանց իրավունքների արդյունավետ պաշտպանությունը: Ուստիև ծանուցման ինստիտուտի իրավական կանոնակարգումները պետք է կրեն ոչ թե ձևական բնույթ, այլ պետք է ուղղված լինեն (…) սուբյեկտի (…)՝ Սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված իրավունքների պաշտպանությանը: Նշված նպատակն իրագործելու համար օրենսդիրը պետք է նախատեսի … արդյունավետ ծանուցման (…) ընթացակարգ, որը գործնականում կբացառի (…) շահագրգիռ անձանց օբյեկտիվորեն ոչ իրազեկված լինելու իրավիճակները»:

- ✓ ***Պաշտպանի ներկայացրած դիրքորոշումների հաշվառմամբ՝ սահմանել ծանուցագիրն ուղարկելու հստակ հերթականություն՝ յուրաքանչյուր ծանուցման ձևը կիրառելուց հետո իրավասու մարմինների կողմից դրսևորելով պատշաճ ջանասիրություն՝ քաղաքացուն ծանուցագրի մասին իրապես իրազեկելու ուղղությամբ,***
- ✓ ***մշակել կառուցակարգեր էլեկտրոնային եղանակով ծանուցման գործընթացն անխոչընդոտ իրականացնելու նպատակով՝ ապահովելով Կառավարության որոշման գործնական կիրառությունը:***

2. Զինվորական ծառայության անցնելու ծրագրերի հետ կապված խնդիրներ («Պատիվ ունեմ», «Պաշտպան հայրենյաց» ծրագրեր)

Տարբեր ծրագրերով զինվորական ծառայության անցնելու գործընթացում քաղաքացիների իրավունքների հետ կապված հարցերը Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության ներքո են: Միանշանակ է, որ զինվորական ծառայության գրավչության բարձրացմանը միտված ծրագրերը պետք է իրացվեն մարդու իրավունքների պատշաճ երաշխավորմամբ: Պետության պաշտպանությունը, մարդու իրավունքներն ու ժողովրդավարությունը զուգահեռ զարգացող երևույթներ են, մեկն առանց մյուսի հնարավոր չէ պատկերացնել: Ըստ այդմ էլ, ժողովրդավարական երկրում ցանկացած կառուցակարգ ներդնելիս որպես ուղենիշ պետք է ունենալ մարդու իրավունքների պաշտպանությունն ու խթանումը:

2023 թվականի ընթացքում քաղաքացիներից ստացվող բողոքները, տարբեր զորամասեր այցերը ցույց են տալիս, որ զինվորական ծառայության անցնելու ծրագրերի հետ կապված առկա են լուծում պահանջող որոշակի խնդիրներ: Այսպես, առկա է «Պատիվ ունեմ» ծրագրով[515] ծառայություն անցնողների մասնագիտական որակների, այդ թվում՝ ղեկավարման հմտությունների կատարելագործման, ինչպես նաև այնպիսի կառուցակարգերի (խրախուսական) ներդրման անհրաժեշտություն, որ ծառայության ժամկետը ավարտելուց հետո վերջիններս ցանկանան շարունակել ծառայությունը: Իհարկե, շատ կարևոր է նշված ծրագրի շահառուների կրթության որակի բարելավումը, քանի որ զորամաս մուտք գործելուց հետո նաև հենց իրենք են (որպես սպաներ) անմիջական «շփում» ունենում պարտադիր ժամկետային զինծառայողների հետ և պատասխանատվություն ստանձնում զորամասում, ի թիվս այլնի, բարձր մակարդակի կարգապահության, զինծառայողների իրավունքների պաշտպանության ու երաշխավորման հարցերում: Այս առումով, կարևոր է ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայում նշված ծրագրի շահառուների գիտելիքների կատարելագործմանը միտված առավել արդյունավետ կառուցակարգերի ներդնումը, ինչպես նաև զինվորական պատրաստություն անցնելու դասընթացների հաճախականության ավելացումը՝ նկատի ունենալով դրանց փոխկապվածությունը զինված ուժերում մարդու իրավունքներին առնչվող հարցերի հետ: Նշված ծրագրի հետ կապված մտահոգող հարցերը Պաշտպանը ներկայացրել է Պաշտպանության նախարարություն:

Սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում Պաշտպանը հարցադրում է կատարել ՊՆ այն մասին, թե 2023 թվականի ընթացքում ինչ միջոցներ են ձեռնարկվել ռազմաուսումնական հաստատություններում կրթության իրավունքի

[515] «Պատիվ ունեմ» ծրագիրը կարգավորվում է ՀՀ կառավարության 2018թ. ապրիլի 12-ի N430-Ն և N455-Ն որոշումներով:

իրացման, կրթական գործընթացի կազմակերպման և որակի բարձրացման ուղղությամբ: ՊՆ-ի տեղեկացմամբ՝ կրթության գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով յուրաքանչյուր տարի ներդրվում են վերապատրաստման նոր դասընթացներ, որոնց ներգրավվում են ինչպես ՊՆ-ի, այնպես էլ այլ գերատեսչությունների աշխատակիցներ: Միաժամանակ կրթության որակի բարձրացման ուղղությամբ աշխատանքներ են իրականացվում ՆԱՏՕ-ի DEEP ծրագրի շրջանակներում, որի ընթացքում տեղի է ունենում ռազմաուսումնական հաստատությունների ներկայացուցիչների փորձի փոխանակում, կազմակերպվում են տարաբնույթ դասընթացներ և դասախոսություններ՝ որակյալ կրթություն ապահովելու նպատակով:

Զինվորական ծառայության գրավչության բարձրացման նպատակով ԶՈՒ-ում ներդրվել է շարքային և սպայական կազմերի պայմանագրային զինվորական ծառայության անցման նոր համակարգ՝ «Պաշտպան հայրենյաց» ծրագիրը[516]: Նշված ծրագիրը հաջորդել է «Ես եմ» ծրագրին, որը դադարել է 2022 թվականին: «Պաշտպան հայրենյաց» ծրագիրը հնարավորություն է տալիս շարքային և սպայական կազմերի պարտադիր զինվորական ծառայության առաջին 6 ամիսը լրանալուց հետո զինծառայողին 5 տարի ժամկետով անցնել պայմանագրային զինվորական ծառայության, որից հետո զինծառայողներին վճարվում է 5 միլիոն դրամ պատվովճար: Նշված ծրագրի գործարկումից հետո Պաշտպանը ստացել է հիմնականում երկու խումբ բողոքներ: Առաջինը վերաբերում է ծրագրի վերաբերյալ իրազեկվածության ոչ բավարար լինելուն (զինծառայողները և նրանց ընտանիքների անդամները նշել են, որ ոչ զինկոմիսարիատում, ոչ զորամասում ծրագրի մասին պատշաճ չեն իրազեկել):

ՊՆ-ի տեղեկացմամբ՝ 2023 թվականի ընթացքում զինկոմիսարիատները զորակոչերի նախապատրաստական փուլում զորակոչիկների և նրանց ծնողների շրջանում իրականացրել են ՀՀ ԶՈՒ համալրման առաջարկվող ծրագրերի և ՊՆ-ի 2018 թվականի հունիսի 25-ի N 8-Ն հրամանով սահմանված մրցույթների լուսաբանման աշխատանքներ, իսկ զորակոչի ենթակա բոլոր զորակոչիկները գրավոր իրազեկվել են վերը նշված ծրագրերով և մրցույթներով զինվորական ծառայության զորակոչվելու պայմանների վերաբերյալ:

Բնականաբար, շատ կարևոր է այս ծրագրի վերաբերյալ լայն իրազեկվածության շարունակական ապահովումը: Իրազեկվածության բարձրացմանն ուղղված այդպիսի աշխատանքները կարելի է կազմակերպել ինչպես զինվորական կոմիսարիատների միջոցով, այնպես էլ հանրային իրազեկման այլ աղբյուրներով[517]:

Երկրորդ խումբ խնդիրները վերաբերում են «Պաշտպան հայրենյաց» ծրագրով ծառայության անցնելու ցանկություն հայտնած զինծառայողների զեկուցագրերի ձգձգումներին: Նշված խնդրի հետ կապված Պաշտպանը ստացել է ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր բողոքներ: ՊՆ-ի տեղեկացմամբ՝ ՊՆ թեժ գծով ևս ստացվել են բողոքներ, որոնք վերաբերել են «Պաշտպան հայրենյաց» ծրագրով պայմանագրային ծառայության անցնելու վերաբերյալ զինծառայողների ներկայացված զեկուցագրերի ընթացքավորման երկարաձգմանը: Ըստ նախարարության՝ յուրաքանչյուր բողոքի դեպքում խնդիրը կարգավորվել է սեղմ ժամանակահատվածում:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ առաջարկվում է՝

[516] «Պաշտպան հայրենյաց» ծրագիրը կարգավորվում է ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի թիվ 160-Ն որոշմամբ:
[517] Ճիշտ է, օրինակ, Հանրային հեռուստաընկերությամբ ծրագրի մասին իրազեկող տեսանյութեր հրապարակվում են, սակայն կարևոր է, որ իրազեկումն իրականացվի նաև այլ աղբյուրներով՝ ընդգրկելով, օրինակ, մարզային հեռուստաընկերությունները, ռադիոն և այլն:

✓ մշակել և իրականացնել զինվորական ծառայության տարբեր ծրագրերով անցնելու հնարավորությունների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ուղղված աշխատանքներ՝ ներգրավելով ինչպես զինվորական կոմիսարիատները, այնպես էլ այլ վերաբերելի հաստատությունները,

✓ մշակել «Պատիվ ունեմ» ծրագրում ընդգրկվողների ընտրության առավել արդյունավետ կառուցակարգեր, ինչպես նաև նշված ծրագրով ծառայության անցնողների համար կատարելագործել ՀՈՒ-ում մարդու իրավունքներին առնչվող դասընթացները,

✓ «Պաշտպան հայրենյաց» ծրագրով ծառայություն անցնելու ցանկություն հայտնած զինծառայողների զեկուցագրերը սեղմ ժամկետում ընթացքավորելու և ձգձգումները բացառելու նպատակով մշակել առավել գործուն կառուցակարգեր:

3. Ընտանեկան պայմաններից ելնելով՝ զորակոչից տարկետում ստանալու իրավունքը

Պաշտպանին հասցեագրվել են ընտանեկան պայմաններից ելնելով զորակոչից տարկետում տրամադրելու վերաբերյալ բողոքներ: Բողոքներով վեր են հանվել մի շարք խնդիրներ: Այսպես, նախկինում գործող «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի (հոդվածն ուժը կորցրել է 2017 թվականի նոյեմբերի 15-ին) 1-ին մասի «դ» կետի համաձայն՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ընտանեկան դրության բերումով տարկետում էր տրամադրվում զորակոչիկին, ով ուներ **1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող կին:** «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2017 թվականի դեկտեմբերի 16-ին) ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տրամադրելու նշված հիմքը չի նախատեսվել:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ընտանեկան պայմաններից ելնելով տարկետումն ուղղված է առաջին հերթին ոչ թե զորակոչիկների, այլ խնամքի կարիք ունեցող ընտանիքի անդամների իրավունքների ապահովմանը: Ուստի, տվյալ պարագայում տարկետում տրամադրելը կարող է հետապնդել զորակոչիկի 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն[518] ունեցող կնոջն առանց խնամքի չթողնելու իրավաչափ նպատակ:

Դեռևս 2020 թվականին պատգամավորական նախաձեռնությամբ ներկայացվել էր օրենքում լրացումներ կատարելու վերաբերյալ նախագիծ, որում առաջարկվում էր ընտանեկան պայմաններից ելնելով 6 ամիս ժամկետով տարկետում տրամադրել զորակոչի ենթակա այն քաղաքացուն, ում ընտանիքի անդամը մահացել է տվյալ զորակոչի ընթացքում[519]: Մինչդեռ, նախագիծը չի ընդունվել:

Ընտանիքի անդամի մահվան դեպքում զորակոչիկին ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տրամադրելու օրենսդրական հիմք սահմանելը կարևոր է նախևառաջ այն առումով, որ ընտանիքի անդամի մահվան դեպքում անձը դառնում է հոգեպես ճնշված: Տվյալ հոգեվիճակում քաղաքացիական կյանքից զինվորական միջավայրի անցմամբ խնդիրներ կարող են առաջանալ ոչ միայն հարմարվողականության, այլև զինվորական ծառայության մեջ ներգրավվելու հարցերում:

---

[518] Օրենսդրական նոր փոփոխությունների համատեքստում՝ ֆունկցիոնալության խորը և ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձինք:

[519] Հասանելի է http://www.parliament.am/draft_docs7/P-461_teghekanq.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Այս առումով դրական քայլ է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունը, համաձայն որի՝ շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատվում է այն քաղաքացին, ով ունի ՀՀ-ի պաշտպանության մարտական գործողությունների ժամանակ զոհված (մահացած) ծնող կամ եղբայր կամ քույր:

Պաշտպանության նախարարության տեղեկացմամբ՝ 2023 թվականի ընթացքում «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հիմքերով[520] տարկետում ստանալու վերաբերյալ ստացվել է 37 դիմում, որից ՀՀ պաշտպանության նախարարի համապատասխան հրամաններով պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում է տրվել 31 քաղաքացու, 6 դիմում մերժվել է: Տարկետումների տրամադրման համար հաշվի են առնվել զորակոչիկների ընտանեկան պայմանները:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ առաջարկվում է՝

- ✓ ***օրենսդրական փոփոխությամբ սահմանել, որ հայտարարված զորակոչի ընթացքում ընտանիքի անդամի (հայր, մայր, եղբայր, քույր, պապ, տատ) մահվան դեպքում զորակոչի ենթակա քաղաքացուն տրամադրվում է տարկետում մինչև հաջորդ զորակոչ,***
- ✓ ***քննարկել 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն (ֆունկցիոնալության խորը և ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն) ունեցող կին ունեցող զորակոչիկների (եթե համատեղ են բնակվում) տարկետում տրամադրելու հնարավորության հարցը:***

[520] Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից նշված հոդվածի 1-ին և 2-րդ մասերով չնախատեսված դեպքերում քաղաքացուն ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում կարող է տրվել քաղաքացու դիմումի հիման վրա և ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 3. ԶԻՆԱՊԱՐՏ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՊԱՏՇԱՃ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Բժշկական հետազոտությունների ու փորձաքննությունների հետ կապված խնդիրները

Պաշտպանը ստանում է բազմաթիվ բողոքներ զինապարտներին պատշաճ բժշկական հետազոտության ենթարկելու, բժշկական և ռազմաբժշկական փորձաքննություն իրականացնող հանձնաժողովների որոշումների, դրանց բողոքարկման և տարկետման իրավունքների վերաբերյալ: Շարունակում են արդիական մնալ խնդիրներ, որոնց լուծումը ենթադրում է ինչպես պրակտիկայի վերանայում, այնպես էլ օրենսդրության փոփոխություն:

Այսպես.

1) Օրենսդրությամբ սահմանված չէ մեկ օրվա ընթացքում Կենտրոնական բժշկական հանձնաժողովի փորձաքննությանը ներկայացվողների առավելագույն քանակ: Օրվա ընթացքում մեծ թվով փորձաքննությունների իրականացումը ռիսկ է պարունակում՝ դրանց որակի նվազեցման և ժամեր շարունակ իրենց հերթին սպասող զորակոչիկների համար բարդություններ առաջացնելու առումով: Օրինակ, 2023 թվականի ձմեռային զորակոչին ստացվել են ահազանգեր այն մասին, որ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի փորձաքննությանը սպասելիս՝ հերթում, վատացել է զորակոչիկներից մեկի առողջական վիճակը: Ընդ որում, կոնկրետ դեպքում զորակոչիկն ուներ գլխի հետ կապված առողջական խնդիր: Պաշտպանի աշխատակազմ ահազանգ ներկայացնող անձը՝ զորակոչիկի ծնողը, խնդրել է աջակցել, որ որդին սեղմ ժամկետում փորձաքննության ներկայացվի: Պաշտպանի աշխատակազմի արագ արձագանքման և ԿԲՀ-ի հետ համագործակցության արդյունքում զորակոչիկն անմիջապես ներկայացվել է փորձաքննության:

2) Գործող կարգավորումները զինապարտ քաղաքացու համար չեն նախատեսում իր նախընտրած մասնագետին՝ որպես խորհրդատու, փորձաքննությանը ներգրավելու հնարավորություն: Այս հնարավորության ընձեռումը կարող է ապահովել զորակոչիկի պատշաճ իրազեկվածությունը փորձաքննության ընթացքի ու դրա արդյունքների վերաբերյալ, ինչպես նաև ապահովել առավել բարձր վստահություն հանձնաժողովի որոշման օբյեկտիվության նկատմամբ, քանի որ իրենց նախընտրած մասնագետի միջոցով զորակոչիկներն առավել արդյունավետ կկարողանան բարձրացնել փորձաքննության հետ կապված խնդրահարույց թվացող հարցերը կամ մտահոգությունները:

3) Շարունակում է պահպանվել առանց տարկետում տալու՝ զորակոչիկի պիտանիության որոշումը հաջորդ զորակոչին թողնելու խնդիրը: Արձանագրվում են դեպքեր, երբ բժշկական հետազոտությունը զորակոչի ընթացքում ավարտված չլինելու դեպքում անձի վերաբերյալ եզրակացություն չի ներկայացվում, և նրա պիտանիության աստիճանի որոշումն իրականացվում է հաջորդ զորակոչի ժամանակ: Թեև այս կարգը նախատեսված է Կառավարության վերաբերելի որոշմամբ[521], այնուամենայնիվ օրենքի պահանջը հստակ է, և նախատեսում է մինչև զորակոչի ավարտը զորակոչիկի կարգավիճակը հստակ որոշելու կարգավորում[522]:

4) Զորակոչային և ռազմաբժշկական հանձնաժողովները (ԶԿԲՀ, ԿԲՀ, ՀՀՌԲՀ) զորակոչիկների առողջական խնդիրները հետազոտում կամ փորձաքննում են բոլորի

521 Տե՛ս ՀՀ կառավարության 2018թ. ապրիլի 12-ի թիվ 405-ն որոշումը, կետ 53:
522 Տե՛ս «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքը, 17-րդ հոդված 3-րդ մաս:

ներկայությամբ, այսինքն՝ այլ զորակոչիկների կամ այլ անձանց ներկայությամբ, ինչը բժշկական գաղտնիքի տեսանկյունից խնդրահարույց է: Դա վերաբերում է, օրինակ, արտաքին մարմնազննմանը, ֆլյուորոգրաֆիկ հետազոտությանը, հոգեբանի կոնսուլտացիային և այլն: Այս տեսանկյունից կարևոր է, որ բժշկական հետազոտություններն իրականացվեն այլ անձանց տեսալսողական տիրույթից դուրս: Հատկապես հոգեբանի խորհրդատվությունն անհրաժեշտ է իրականացնել առանձին սենյակում: Դա կարևոր է բանակ ներգրավվող անձի հոգեբանական վիճակը հնարավորին պարզելու, անհատական-հոգեբանական առանձնահատկություններն ուսումնասիրելու, հոգեբանական պատշաճ խորհրդատվություն տրամադրելու առումով: Պաշտպանն այս խնդիրը ևս մեկ անգամ արձանագրել է 2023 թվականի զորակոչերի ընթացքում ՊՆ կենտրոնական հավաքակայան և Կենտրոնական բժշկական հանձնաժողովների նիստին այցերի ընթացքում:

5) Գործող կարգավորումներով զորակոչից խուսափելու համար քրեական հետապնդման մեջ գտնվող անձանց՝ քրեական վարույթի շրջանակներում իրականացված դատաբժշկական փորձաքննության արդյունքները (եզրակացությունները) զորակոչիկների փորձաքննությունն իրականացնելիս (օրինակ, ԿԲՀ-ի կողմից) հաշվի չեն առնվում, և զորակոչիկների փորձաքննություններն իրականացվում են ընդհանուր հիմունքներով: Այսինքն, կրկին ուղեգրեր են տրամադրվում, ռեսուրսներ են ծախսվում և այլն: Ստացվում է, որ քրեական վարույթի շրջանակներում անձի նկատմամբ իրականացվում է դատաբժշկական փորձաքննություն, քաղաքացին անցնում է բժշկական հետազոտություններ, ծախսվում են որոշակի ռեսուրսներ, և ներկայացվում է մասնագիտական եզրակացություն, սակայն այն որևէ կերպ զորակոչի գործընթացում չի դիտարկվում և հաշվի չի առնվում: Սա խնդրահարույց է նաև անձի իրավունքների տեսանկյունից այն առումով, որ քաղաքացին ստիպված է լինում պարբերաբար անցնել նույն հետազոտությունը (օրինակ, ռենտգեն), որը կարող է բացասաբար անդրադառնալ նրա առողջության վրա: Արձանագրվել են դեպքեր, երբ զորակոչերի ընթացքում ԿԲՀ եզրակացությամբ անձը ենթակա է եղել զորակոչման ՀՀ ԶՈՒ, սակայն հետագայում (երբ անձը համաձայն չլինելով ԿԲՀ եզրակացության հետ չի զորակոչվել և նախաձեռնվել է քրեական վարույթ) քրեական վարույթի շրջանակում իրականացված դատաբժշկական փորձաքննությամբ ներկայացվել է ԿԲՀ եզրակացությունից տարբերվող եզրակացություն: Սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում Պաշտպանը հարցադրում է կատարել ՀՀ քննչական կոմիտե այն մասին, թե պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից խուսափելու հանցակազմի հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթների շրջանակներում իրականացված դատաբժշկական-ռազմաբժշկական փորձաքննությունների եզրակացությամբ 2023 թվականի ընթացքում քանի՞ մեղադրյալ է զինվորական ծառայության համար ճանաչվել ոչ պիտանի (այդ թվում՝ ժամանակավորապես ոչ պիտանի և բուժման կարիք ունեցող): Ըստ Քննչական կոմիտեի՝ 2023 թվականի ընթացքում 236 մեղադրյալ զինվորական ծառայության համար ճանաչվել է ոչ պիտանի, 124-ը՝ ժամանակավորապես ոչ պիտանի, 9-ը՝ բուժման կարիք ունեցող:

6) Փորձը ցույց է տալիս, որ որպես կանոն զորակոչերի ընթացքում հաշվի չեն առնվում առաջնային փորձաքննությունից էականորեն տարբերվող և զորակոչիկների սեփական միջոցներով իրականացված հետազոտությունների արդյունքները:

7) Արձանագրվել են դեպքեր, երբ զորակոչիկները լրացուցիչ հետազոտության են ուղեգրվում այն բժշկական հաստատություն, որի հետ կապված բողոք են ներկայացրել: Նման դեպքերում նույն բժշկական հաստատությունը կարող է կաշկանդված լինել նախկինում իր կողմից տրված ախտորոշմամբ, իսկ զորակոչիկը՝ կասկածներ ունենալ՝ հետազոտության օբյեկտիվության հետ կապված:

8) Մեկ այլ խնդիր է այն, որ զինկոմիսարիատի ուղեգրով զորակոչիկն անցնում է կոնկրետ հետազոտություն (օրինակ՝ պարբերական հիվանդության հաստատման կամ հերքման հետ կապված), զորակոչիկի մոտ հետազոտությամբ հաստատվում է հիվանդության առկայությունը, արդյունքում, Կենտրոնական բժշկական հանձնաժողովը հետազոտության հիման վրա կարող է կայացնել պիտանիության վերաբերյալ կոնկրետ եզրակացություն: Մինչդեռ, բազմաթիվ են դեպքերը, երբ Կենտրոնական բժշկական հանձնաժողովը զորակոչիկին ուղեգրում է նույն հիվանդության կապակցությամբ կրկնակի կամ եռակի հետազոտությունների: Արդյունքում, ոչ միայն ծախսվում են հավելյալ միջոցներ, այլև զորակոչիկը ստիպված է լինում անընդհատ անցնել նույնաբնույթ հետազոտություններ:

Պաշտպանը ոլորտային խնդիրները բարձրաձայնելու հետ մեկտեղ ներկայացնում է նաև դրանց լուծմանն ուղղված կոնկրետ առաջարկներ:

Մասնավորապես, վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է.

✓ մշակել նոր կառուցակարգեր՝ մեկ օրվա ընթացքում առողջական վիճակի փորձաքննություն իրականացնելու զինապարտ քաղաքացիների առավելագույն թվաքանակի հաշվառմամբ,

✓ Կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշմամբ սահմանել, որ փորձաքննվողը բժշկական և ռազմաբժշկական հանձնաժողովների նիստերին որպես խորհրդատու կարող է ներգրավել իր նախընտրած մասնագետին,

✓ սահմանել, որ լրացուցիչ, ստուգիչ կամ հսկողական հետազոտությունը հայտարարված զորակոչի ընթացքում ավարտված չլինելու դեպքում զորակոչիկները ճանաչվում են բուժման կարիք ունեցող, և նրանց տրվում է տարկետում մինչև հաջորդ զորակոչ՝ ապահովելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի պահանջը,

✓ զորակոչիկների բժշկական հետազոտություններն ու փորձաքննություններն իրականացնել այլ անձանց տեսալսողական տիրույթից դուրս,

✓ քննարկման առարկա դարձնել ՀՀ զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովի և ԿԲՀ-ի կողմից զորակոչիկների վերաբերյալ փորձաքննական եզրակացություններ ներկայացնելիս դրանց հիմքում զորակոչից խուսափելու համար քրեական վարույթների շրջանակներում իրականացված դատաբժշկական փորձաքննության արդյունքները դնելու հնարավորության հարցը (ըստ անհրաժեշտության՝ սահմանելով որոշակի բացառություններ): Դրանով կարող են խնայվել որոշակի ռեսուրսներ, ինչպես նաև զորակոչիկները ստիպված չեն լինի պարբերաբար անցնել տարբեր հետազոտություններ,

✓ զորակոչիկներին ուղեգրել լրացուցիչ հետազոտությունների, երբ զորակոչիկների սեփական նախաձեռնությամբ և միջոցներով իրականացված հետազոտությունների ախտորոշումներում առկա են ուղեգրով կատարված հետազոտությունների արդյունքներից էապես տարբերվող և պիտանիության աստիճանի հնարավոր փոփոխության հանգեցնող տվյալներ,

✓ ***զինկոմիսարիատի ուղեգրով անցած հետազոտությունները բողոքարկող զորակոչիկին հնարավորության դեպքում ուղեգրել այլընտրանքային բուժհաստատություն, այլ ոչ թե այն հաստատություն, որի եզրակացությունը տվյալ զորակոչիկը բողոքարկում է (հիարկե հաշվի առնելով այն հանգամանքը, թե տվյալ հիվանդությունն ախտորոշող այլ բուժհաստատություն առկա է, թե ոչ),***

✓ ***մշակել կառուցակարգեր բավարար տվյալների առկայության դեպքում զորակոչիկի պիտանիության վերաբերյալ եզրակացություն ներկայացնելու առնչությամբ՝ նույն ախտորոշումը ճշգրտելու նպատակով զորակոչիկին անընդհատ նույնաբովանդակ հետազոտությունների ուղեգրելու փոխարեն:***

2. Մի շարք հիվանդություններով զինվորական ծառայությանը սահմանափակումով պիտանի ճանաչված զինապարտների տարկետման իրավունքը

ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշման 57-րդ կետի համաձայն՝ այն զորակոչիկները, որոնք հայտարարված զորակոչի ընթացքում հետազոտությունների արդյունքում ճանաչվում են պիտանի զինվորական ծառայությանը սահմանափակումով **սահմանափակումներ նախատեսող հինգ և ավելի հոդվածներով**, ճանաչվում են բուժման կարիք ունեցող, և նրանց տրվում է տարկետում մեկ անգամ մինչև մեկ տարի ժամկետով՝ բուժման և/կամ դիտարկման նպատակով: Տարկետման ավարտից հետո առողջական նույն վիճակի պահպանման պարագայում, **զորակոչիկները ճանաչվում են պիտանի զինվորական ծառայությանը սահմանափակումով՝** ծառայության հեշտացված օրվա կարգացուցակով:

Ստացվում է, որ գործող կարգավորումների հետևանքով բժշկական հանձնաժողովները զորակոչիկների մի քանի առողջական խնդիրները դիտարկում են առանձին-առանձին, չեն գնահատում հիվանդությունների համակցված ազդեցությունը զորակոչիկների առողջության վրա: Արդյունքում, զորակոչիկները ճանաչվում են զինվորական ծառայության համար սահմանափակումով պիտանի: Այսպես, եթե զորակոչիկն ունի 5 և ավելի հիվանդություն՝ ծառայության համար սահմանափակում նախատեսող (այսուհետ՝ «քանակական փունջ»), ապա զինծառայությունից ստանում է տարկետում: Այսինքն, գործող կարգավորումները նախատեսում են հիվանդությունների «քանակական փունջ» կամ քանական նվազագույն պահանջ՝ առանց դիտարկելու դրանց համակցված ազդեցությունն անձի առողջության վրա: Մինչդեռ կարևոր է, որ լինի նաև հիվանդությունների «որակական փունջ»: Գործնականում առկա դեպքերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ թվով 5-ից պակաս սահմանափակումներ նախատեսող հոդվածների առկայությունը կարող է առավել խնդրահարույց լինել մարդու առողջության տեսանկյունից:

Հիվանդությունների «որակական փունջ» (այլ ոչ թե որոշակի քանակի հիվանդություններ) սահմանված չլինելը բերում է մի վիճակի, որ բժշկական հանձնաժողովն այդ հիվանդությունները գնահատում է առանձին-առանձին, այլ ոչ թե ընդհանուր վերցրած, և արդյունքում անձը զորակոչվում է զինվորական ծառայության: Սակայն զորակոչվելու դեպքում հնարավոր է զինապարտի փաստացի առողջական վիճակը թույլ չտա լիարժեք կերպով կատարել զինվորական պարտականությունները, և առողջական վիճակն ավելի վատթարանա:

Նմանատիպ բողոքներ են ստացվել նաև 2023 թվականի զորակոչերի ընթացքում: Ուսումնասիրությունները փաստում են, որ հիվանդությունների «քանակական փնջի» հետ

միասին անհրաժեշտ է սահմանել «հիվանդությունների որակական փունջ», ինչպես նաև անձին զինվորական ծառայության զորակոչելիս նրա առողջական վիճակի համակարգված գնահատման կառուցակարգ: Ճիշտ է, պետությունն է որոշում զորակոչիկների առողջության և ծառայությանը պիտանիության չափանիշները, սակայն զորակոչիկները պետք է ֆիզիկապես և հոգեպես պատրաստ լինեն զինվորական ծառայության առանձնահատկություններով պայմանավորված փոփոխությունների բարդություններին: Կարևոր է ի սկզբանե ծառայության զորակոչել առողջ քաղաքացիների, իսկ որոշակի առողջական խնդիրների առկայության դեպքում հատուկ ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ դրանք լինեն համատեղելի ծառայության հետ և զինծառայողների համար չդառնան անհամաչափ բեռ:

Խնդիրը տարիներ շարունակ բարձրաձայնվել է ՄԻՊ-ի կողմից ինչպես տարեկան հաղորդումներում, այնպես էլ ՊՆ-ի և ԶՈՒ գլխավոր շտաբի իրավասու ստորաբաժանումների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ քննարկումների ընթացքում: Այս խնդրին անդրադարձ է կատարվել նաև ԵԱՀԿ աջակցությամբ ՀՀ ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովին կից ստեղծված «Անվտանգության ոլորտի ժողովրդավարական վերահսկողության ազգային հարթակի» 2023 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին տեղի ունեցած աշխատանքային քննարկումների ժամանակ[523], որտեղ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները ևս ընդգծել են հիվանդությունների «որակական փունջ» սահմանելու կարևորությունը:

Հասկանալի է, որ նշված առաջարկության իրացումը ենթադրում է որոշակի բարդություններ և առողջական վիճակի գնահատման որակական չափանիշների որոշման հատուկ կառուցակարգերի կանխատեսում: Սակայն հաշվի առնելով, որ հարցը վերաբերում է զորակոչիկների պատշաճ փորձաքննության և զինվորական ծառայության ընթացքում զինծառայողների առողջական վիճակի պահպանման պետության պոզիտիվ պարտականությանը՝ պետական մարմինները պարտավոր են առողջական վիճակի գնահատման այնպիսի կառուցակարգեր սահմանել, որոնց շնորհիվ հնարավոր կլինի պարզել, թե զորակոչիկի կամ զինծառայողների մոտ առկա առողջական խնդիրների որակական համակցությունը արդյոք թույլ կտա պատշաճ իրականացնել զինվորական պարտականությունները և չի հանգեցնի առողջական խնդիրների վատթարացման:

Պետք է ընդգծել, որ վերը նշված առաջարկները Պաշտպանը ներկայացրել էր դեռևս 2020 թվականի սեպտեմբերին ՊՆ-ի կողմից շրջանառության մեջ դրված ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն և 405-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու նախագծերի շրջանակում: ՊՆ-ից ստացվել էր տեղեկություն, որ Արդարադատության և Պաշտպանության նախարարության համապատասխան աշխատակիցների ներգրավմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ և Պաշտպանի կողմից ներկայացված դիտարկումները տրամադրվել են աշխատանքային խմբին՝ աշխատանքային քննարկումների ընթացքում հաշվի առնելու համար: Դրանից հետո, 2022 թվականին ներկայացվել է ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագիծը, որի շրջանակներում Պաշտպանը կրկին ներկայացրել է վերը նշված առաջարկները: Մինչդեռ, պետք է արձանագրել, որ Պաշտպանի առաջարկները դեռևս չեն իրացվել, և

[523] Հասանելի է http://surl.li/qlvuy հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

նշված խնդրի կապակցությամբ Պաշտպանի աշխատակազմում շարունակում են ստացվել բողոքներ:

ՄԻՊ-ին հասցեագրված բողոքներով արձանագրվել է մեկ այլ խնդիր նույնպես: Այսպես, ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 8-ի թիվ 405-ն որոշման համաձայն՝ այն զորակոչիկները, որոնք հայտարարված զորակոչի ընթացքում հետազոտությունների արդյունքում ճանաչվում են պիտանի զինվորական ծառայությանը սահմանափակումով՝ 5 և ավելի տարբեր հիվանդություններով («քանակական փունջ»), ճանաչվում են բուժման կարիք ունեցող և նրանց տրվում է տարկետում մինչև 1 տարի ժամկետով՝ բուժման նպատակով: Մինչդեռ, որոշմամբ սահմանված չէ զինվորական ծառայությունից ազատելու հնարավորություն այն դեպքերի համար, երբ, օրինակ, 5-րդ հիվանդությունն անձը ձեռք է բերում ծառայության ընթացքում: Արդյունքում ստացվում է, որ նույն առողջական վիճակն ունեցող զորակոչիկներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է, իսկ այն պարտադիր ժամկետային զինծառայողները, որոնց առողջական վիճակը վատթարանում է ծառայության ընթացքում, շարունակում են ծառայել:

Հետևաբար, անհրաժեշտ է նախատեսել, որ զինվորական ծառայության ընթացքում 5-րդ հիվանդության ձեռքբերումն առնվազն հիմք է զինծառայողի պիտանիության վերանայման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ առաջարկվում է հիվանդությունների «քանակական փնջի» հետ միասին քննարկել «հիվանդությունների որակական փունջ» նախատեսելու, ինչպես նաև այդ համատեքստում անձին զինվորական ծառայության զորակոչելիս կամ զինվորական ծառայության ընթացքում նրա առողջական վիճակի համակարգված գնահատման կառուցակարգ սահմանելու հարցերը:

3. Զինվորական ծառայության համար քաղաքացիների պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկի վերանայման անհրաժեշտությունը

Քաղաքացիների առողջությունը զինվորական ծառայության ընթացքում վտանգի չենթարկելը պետության պարտականությունն է[524] և այդ նպատակով, ի թիվս այլնի, պետք է կատարելագործվեն նաև օրենսդրական կառուցակարգերը, այդ թվում՝ քաղաքացիների առողջական վիճակը բժշկական փորձաքննությամբ ստուգելու չափանիշները:

Այս առումով, առանցքային նշանակություն ունի զինվորական ծառայության պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունները սահմանող ցանկի կատարելագործման շարունակականությունը: Նշվածի կապակցությամբ դրական քայլ էր 2022 և 2023 թվականների ընթացքում ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն և 405-Ն որոշումներում կատարված փոփոխությունների ու լրացումների իրականացումը, որոնցով սահմանվել են քաղաքացիների՝ զինվորական ծառայության պիտանիության որոշման համար համակարգային սկզբունքներ ու նոր մոտեցումներ[525]: Նախագծով, ի թիվս այլնի, իրացվել է ՄԻՊ-ի առաջարկը վարժական հավաքների

[524] Տե՛ս, օրինակ, Կայանկինն ընդդեմ Ռուսաստանի (KAYANKIN v. RUSSIA) գործով ՄԻԵԴ 2010 թվականի մայիսի 11-Ի վճիռը, գանգատ թիվ 24427/02, կետ 87, https://hudoc.echr.coe.int/eng#{"itemid":["001-97214"]}, Բեքերն ընդդեմ Թուրքիայի (BEKER v. TURKEY) գործով ՄԻԵԴ 2009 թվականի հունիսի 24-ի վճիռը, գանգատ թիվ 27866/03, կետ 41:

[525] Կառավարության 2018թ. ապրիլի 12-ի թիվ 404-Ն և 405-Ն որոշումների՝ քննարկվող ժամանակահատվածի փոփոխություններն ու լրացումները հասանելի են https://www.arlis.am/documentview.aspx?docid=172242, https://www.arlis.am/documentview.aspx?docid=178739, https://www.arlis.am/documentview.aspx?docid=172077, https://www.arlis.am/documentview.aspx?docid=182480 հղումներով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

ներգրավվողների և զորահավաքային զորակոչի ենթակա քաղաքացիների փորձաքննության կարգ սահմանելու վերաբերյալ: Արդյունքում, նշված քաղաքացիները փորձաքննվում են Կառավարության վերը նշված որոշմամբ նախատեսված առանձին սյունակով: Կատարված փոփոխություններն ու լրացումները կարևոր են, սակայն դրա հետ մեկտեղ առկա են մի շարք լուծում պահանջող հարցեր, որոնց ՄԻՊ-ը անդրադարձել է դեռևս նշված որոշումների նախագծերի շրջանառության փուլում՝ ներկայացնելով խնդիրների լուծմանը միտված կոնկրետ առաջարկներ:

Այսպես, Պաշտպանը բարձրացրել է «գիշերամիզություն» հիվանդություն ունեցող քաղաքացիներին զորակոչելու նպատակահարմարության հարցը՝ նկատի ունենալով մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից դրա խնդրահարույց լինելը, տարիներ շարունակ զինծառայողներից ու նրանց ընտանիքների անդամներից ստացվող բողոքները, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների մտահոգությունները:

Պետք է նկատել, որ արդեն իսկ ընդունված որոշմամբ սահմանվել է նշված հիվանդության դեպքում *զորակոչիկների՝ զինվորական ծառայության համար սահմանափակումով պիտանի ճանաչելու կարգավորում*: Դրա հետ մեկտեղ, նույն հիվանդության առկայությունը զինվորական ծառայության ընթացքում *զինծառայողներին ԶՈՒ-ից արձակելու հիմք է հանդիսանում*: Այսինքն, զինծառայողի կարգավիճակով «գիշերամիզություն» հիվանդություն ունեցող անձը ենթակա է արձակման ԶՈՒ-ից: Արդյունքում, գործող կարգավորումներով ստացվում է, որ զորակոչվելուց առաջ ունենալով այդ հիվանդությունը՝ քաղաքացին ներգրավվում է ԶՈՒ, իսկ դրանից հետո հենց նույն հիվանդությամբ ճանաչվում ոչ պիտանի զինվորական ծառայության համար: Այդ մասին Պաշտպանը դիրքորոշում է ներկայացրել իրավասու գերատեսչություն՝ առաջարկելով վերանայել կարգավորումը:

ՊՆ-ի տեղեկացմամբ՝ «գիշերամիզություն» ախտորոշմամբ 2023 թվականին պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվել է 30 զինծառայող: Նշված ախտորոշմամբ որոշ զորակոչիկներ ներկայացրել են զինվորական ծառայությունից առողջական վիճակի պատճառով տարկետում ստանալու խնդրանքով դիմումներ[526]: Նախարարությունը հավելել է, որ շահագրգիռ կառույցները նախաձեռնել են վերը նշված որոշման փոփոխման նախագիծ, որով «գիշերամիզություն» ունեցող զինծառայողները սահմանափակումով պիտանի են ճանաչվելու զինվորական ծառայության համար՝ ծառայություն հեշտացված օրվա կարգացուցակով:

Տարբեր զորամասեր այցերի և «գիշերամիզություն» հիվանդություն ունեցող զինծառայողների հետ առանձնազրույցների ընթացքում վերջիններս նշում են, որ առավել նպատակահարմար կլիներ, իրենց հիվանդությունը հաշվի առնելով, չզորակոչվեին, քանի որ ծառայությունն իրենց համար բարդ է անցնում, և մյուս զինծառայողների նման ԶՈՒ-ում չեն կարողանում ծառայություն տանել:

Դրականի հետ մեկտեղ, որոշ հիվանդությունների համար նախատեսվել են նաև խստացումներ: Օրինակ, անգիոտրոֆոնևրոզ հիվանդության դեպքում տրվում էր տարկետում, սակայն նոր կարգավորումներով նշված հիվանդության տեսակը բացակայում է:

[526] ՊՆ-ի պարզաբանմամբ՝ «գիշերամիզություն» ախտորոշմամբ զորակոչվող զինծառայողները զորակոչվելուց հետո՝ 6 ամիս անց պարտադիր փորձաքննվում են և խնդրի պահպանման դեպքում արձակվում են ԶՈՒ-ից, իսկ վերջիններիս զորակոչելու նպատակը մեկն է՝ բացառել վիրաբուժական կամ նյարդաբանական առողջական խնդիր չունեցող, օրգանական փոփոխության հետևանքով չպայմանավորված անմիզապահություն ունեցող, ընդամենը հետադարձ հայացքով թաց անկողին արձանագրված դեպքերով քաղաքացիներին չզորակոչելը կամ նրանց չզորակոչվելու հնարավորություն տալը:

Որպես հիմնավորում, իրավասու գերատեսչությունը մշտապես ներկայացրել է պարզաբանում այն մասին, որ անգիոտրոֆոնևրոզը այլ հիվանդությունների հետևանքով առաջ եկող հիվանդություն է, ուստի առավել նպատակահարմար է վեր հանել այն հիվանդությունները, որոնց պատճառով անձի մոտ առաջացել է անգիոտրոֆոնևրոզ:

Պաշտպանն առաջարկել էր նման փոփոխություն նախատեսելու հետ մեկտեղ հստակ պարզաբանել, թե արդյոք նախկինում նման տիպի հիվանդություն ունեցող զորակոչիկների և զինծառայողների մոտ բացահայտվել են նշված հիվանդության ի հայտ գալու պատճառ հանդիսացած հիվանդություն(ներ)ը: Հակառակ պայմաններում գործնականում կառաջանան իրավիճակներ, երբ անգիոտրոֆոնևրոզ հիվանդություն ունեցող անձինք զորակոչվեն՝ այդպես էլ չիմանալով այն հիմնական հիվանդության մասին, որը դարձել է վերը նշված հիվանդության առաջացման պատճառ: Նշվածի հաշվառմամբ՝ Պաշտպանն առաջարկել է հստակ նշել անգիոտրոֆոնևրոզ տեսակի հիվանդության պատճառ հանդիսացող հիվանդությունները, հակառակ պարագայում՝ պահպանել անգիոտրոֆոնևրոզ հիվանդության դեպքում տարկետման հնարավորությունը:

Դրա հետ մեկտեղ, անհրաժեշտ է ընդգծել իրավասու գերատեսչությունների հետ համագործակցության արդյունքում Պաշտպանի առաջարկի իրացումը, որ որոշ հիվանդությունների դեպքում առհասարակ քաղաքացիներին չպետք է փորձաքննել (օրինակ, վերջույթի բացակայություն և ամպուտացիա, շիզոֆրենիա և այլն): Նախկինում գործող «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասով պահանջ էր ներկայացվում անկախ հիվանդությունից երեք տարին մեկ քաղաքացիներին փորձաքննելու մասին: Մինչդեռ, կան հիվանդություններ, որոնցով փորձաքննվող անձի առողջական վիճակը հետագայում բարելավվել չի կարող: Նշվածից ելնելով՝ Պաշտպանն առաջարկել էր վերանայել օրենքի կարգավորումը: Արդյունքում, օրենքում կատարվել են փոփոխություններ, և այդպիսի լուրջ առողջական խնդիրներ ունեցող անձինք այլևս չեն փորձաքննվում, որը կարևոր է ինչպես նրանց ավելորդ քաշքշուկներից զերծ պահելու, այնպես էլ պետական ռեսուրսներն արդյունավետ օգտագործելու տեսանկյունից:

Վերոգրյալի հաշվառմամբ և նկատի ունենալով առանձին հիվանդությունների հետ կապված խնդրահարույց դեպքերի առկայությունը՝ անհրաժեշտ է վերանայել ու անընդհատ կատարելագործել ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն որոշման կարգավորումները՝ հատուկ ուշադրություն դարձնելով այն հանգամանքին, որ դրանցով նախատեսվող այն հիվանդությունները, որոնք չեն ենթադրում զինվորական ծառայությունից ազատում, ոչ միայն համատեղելի լինեն ծառայության ընդհանուր պայմաններին, այլև զինծառայողների առողջական վիճակի տեսանկյունից վերջիններիս համար չդառնան անհամաչափ բեռ:

4. Բժշկական փաստաթղթերը ստանալու իրավունքը

Պաշտպանը 2023 թվականի ընթացքում շարունակել է ստանալ բժշկական փաստաթղթերը քաղաքացիներին չտրամադրելու հետ կապված բողոքներ: Հարկ է նկատի ունենալ, որ միջազգային և ներպետական իրավական փաստաթղթերով ամրագրված է

բժշկական փաստաթղթերին ծանոթանալու և դրանք ստանալու անձի իրավունքը[527]: Կարևոր է հատուկ ընդգծել, որ ի տարբերություն նախորդ տարիների՝ 2023 թվականին զինկոմիսարիատների կողմից բժշկական փաստաթղթերն անձին չտրամադրելու վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմ ստացվող բողոքները զգալի նվազել են, ինչը վկայում է պաշտպանական գերատեսչության կատարած աշխատանքի մասին: Դրա հետ մեկտեղ, ավելացել են բողոքները՝ բժշկական կենտրոնների կողմից անձին վերաբերելի բժշկական փաստաթղթերը չտրամադրելու առնչությամբ:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է քաղաքացու իրավունքը՝ ծանոթանալու իր առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության ընթացքին, դրանց արդյունքներով տրված եզրակացություններին ու այլ փաստաթղթերին: Ավելին, ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշման համաձայն՝ բժշկական կազմակերպությունը պարտավոր է քաղաքացուն կամ նրա օրինական ներկայացուցչին կամ նրա կողմից լիազորված անձին տրամադրել տեղեկություններ առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին:

Ճիշտ է, Պաշտպանի աշխատակազմի արագ արձագանքման շրջանակներում քաղաքացիների բարձրացրած առանձին հարցեր ստանում են լուծումներ, սակայն այդպիսի բողոքները մտահոգիչ են՝ հատկապես հաշվի առնելով վերը նշված օրենսդրական հստակ կառուցակարգերի առկայությունը: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ զորակոչիկի առողջական վիճակի վերաբերյալ բժշկական փաստաթղթերի տրամադրման պարտադիր կարգ բուժհաստատությունների և զինկոմիսարիատների համար սահմանելն ինքնանպատակ չէ. դա կարևոր է ինչպես անձի՝ իր առողջական վիճակի վերաբերյալ ամբողջական տեղեկություններ ստանալու և դրանով պայմանավորված՝ առողջության պահպանման, այնպես էլ տրված եզրակացությունների բողոքարկման իրավունքի իրացման տեսանկյունից:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է երաշխավորել բժշկական փաստաթղթեր ստանալու քաղաքացիների իրավունքի պատշաճ իրացումը, ինչը պետք է ապահովվի ինչպես բժշկական հաստատությունների, այնպես էլ զինկոմիսարիատների կողմից:

[527] Տե՛ս օրինակ, ԶՈՒ անդամների իրավունքների մասին ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 50-րդ կետը, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասը, ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշման 1-ին հավելվածի 36-րդ կետի 4-րդ ենթակետը և այլն:

ԳԼՈՒԽ 4. ՊԱՏՇԱՃ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Առողջության պահպանումը զինվորական ծառայության ընթացքում

2023 թվականին Պաշտպանին հասցեագրված բողոքների զգալի մասն առնչվել է պատշաճ բժշկական հետազոտություն անցնելու և բուժում ստանալու հետ կապված խնդիրներին: Միջազգային իրավական կարգավորումների և ներպետական օրենսդրության ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ զինծառայողների պատշաճ բժշկական օգնություն ստանալու իրավունքի իրականացման համար պետությունը պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք ուղղված են զինծառայողների առողջության պահպանմանը:

Պաշտպանին հասցեագրած բողոքներով հիմնականում բարձրացվում են հետևյալ բնույթի հարցեր. պլանային վիրահատությունների չիրականացման կամ վիրահատությունների ձգձգման, զորամասերի բուժկետերում զինծառայողների առողջական խնդիրներին պատշաճ չարձագանքելու և բուժօգնություն չտրամադրելու կամ այնպիսի հոսպիտալներ ուղեգրելու, որոնք չունեն մասնագիտական ու գործիքային բավարար հագեցվածություն, Կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշմամբ սահմանված հոսպիտալում բուժում ստանալու նպատակով 120 օրից ավելի չպահելու և զորամաս ուղարկելու հետ կապված հարցեր և այլն:

Կարևոր է արձանագրել, որ բազմաթիվ հարցեր ՊՆ-ի հետ համագործակցությամբ արագ լուծումներ են ստացել, իսկ որոշ խնդիրներին լուծում տալու նպատակով գրություններ են հասցեագրվել իրավասու գերատեսչություններ:

Զորամասեր իրականացված այցերի ընթացքում առաջնային ուշադրություն է դարձվել զինծառայողների առողջական վիճակի հետ կապված հարցերին, առանձնազրույցներ են տեղի ունեցել զինծառայողների հետ, արձանագրվել նրանց կողմից բարձրացվող առողջական վիճակի հետ կապված խնդիրները, և դրանք հասցեագրվել են՝ ըստ իրավասության: Հատուկ ուշադրություն է դարձվել համապատասխան հոդվածներով նախատեսված սահմանափակումների պահպանմանը: Օրինակ, 2023 թվականին զորամասեր իրականացված այցերի ընթացքում մի շարք զինծառայողներ նշել են, որ չնայած այն հանգամանքին, որ ունեն առողջական վիճակին հակացուցված ծառայության պայմաններ սահմանող հոդվածներ (օրինակ, ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն որոշման 26-րդ հոդվածի «դ», 36-րդ հոդվածի «գ» կետերով), սահմանափակումները փաստացի չեն պահպանվում:

Խնդիրները տեղում քննարկվել են հրամանատարության հետ, և առաջարկվել է խստորեն պահպանել հոդվածներով նախատեսված սահմանափակումների պահանջները:

Զինծառայողների առողջության պահպանման տեսանկյունից կարևոր է զորամասերի բուժկետների, ինչպես նաև հոսպիտալների կադրային ու գործիքային բավարար համալրվածությունը, և այս կապակցությամբ արձանագրված խնդիրները պարբերաբար հասցեագրվում են ՊՆ[528]: Սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում Պաշտպանը հարցադրում է ուղարկել ՊՆ այն մասին, թե 2023 թվականի

[528] Պաշտպանը հարցադրում է կատարել ՊՆ այն մասին, թե 2023 թվականին արձանագրվե՞լ են դեպքեր, երբ հնարավոր չի եղել զորամասի բուժծառայությանն ապահովել համապատասխան քանակի դեղորայքով, և ի՞նչ դեղորայք չի տրամադրվել: ՊՆ-ի տեղեկացմամբ՝ եղել են դեպքեր, երբ հնարավոր չի եղել զորամասերի բուժծառայությանն ապահովել պահանջված դեղորայքով, քանի որ 2023 թվականի գնումների գործընթացի ժամանակ տարբեր օբյեկտիվ պատճառներով հնարավոր չի եղել ձեռք բերել դրանք՝ փոխարենը զորամասերին հատկացվել է համարժեք փոխարինող դեղորայք:

ընթացքում զինվորական հոսպիտալների տեխնիկական հագեցվածության աստիճանի բարձրացման (բժշկական սարքավորումների ավելացում, նոր կամ ավելի արդիական սարքերի տրամադրում և այլն) ուղղությամբ ի՞նչ միջոցներ են ձեռնարկվել, հետագայում այս ուղղությամբ ի՞նչ աշխատանքներ են պլանավորվել: ՊՆ-ի տեղեկացմամբ՝ 2023 թվականի ընթացքում զինվորական հոսպիտալների տեխնիկական հագեցվածության աստիճանի բարձրացման նպատակով ծախսային ծրագրով պլանավորվել և ձեռք են բերվել 29 անվանում՝ 71 միավոր բժշկական սարքավորումներ, որից 1 միավոր «Մագնիսական ռեզոնանսային տոմոգրաֆ» համակարգի մատակարարումը և տեղադրումը նախատեսված է 2024 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում:

Զինծառայողների առողջության պահպանման տեսանկյունից կարևոր է պլանային վիրահատությունների պատշաճ կազմակերպումն ու իրականացումը՝ առանց անհարկի ձգձգումների: Մինչդեռ, մի շարք բողոքներով զինծառայողները նշել են, որ չնայած վիրահատություն իրականացնելու համար առկա է բժշկական ցուցում, սակայն վիրահատությունը չի իրականացվում և պարբերաբար ձգձգվում է (հիմնականում քթի միջնապատի վիրահատություն): Ավելին, արձանագրվել են դեպքեր, երբ նշանակված պլանային վիրահատությունը ծառայության ընթացքում չի իրականացվել, զինծառայողը արձակվելուց հետո դիմել է Պաշտպանին: Եվ միայն Պաշտպանի աշխատակազմում բողոքի քննարկման և ՊՆ-ի հետ համագործակցության արդյունքում է խնդիրը կարգավորվել:

Մեկ այլ խնդիր. ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշմամբ հաստատված կարգի «Հավելված 1»-ի 95-րդ կետի համաձայն՝ «... ընդհանուր առմամբ, հիվանդության պատճառով բուժման և հիվանդության պատճառով բուժական (վերականգնողական) արձակուրդում անընդմեջ գտնվելու ժամանակահատվածը չի կարող գերազանցել 120 օրը՝ զորամասից ուղեգրվելու օրվանից հաշված»: Նույն կետի համաձայն՝ «... բացառիկ դեպքերում, զինծառայողի բուժման ու շարք վերադարձման նպատակով, ԿՌԲՓԿ հիմնավորմամբ և Պաշտպանության նախարարի որոշմամբ բուժման ժամկետը կարող է երկարացվել ևս մինչև 30 օր»:

Այս պարագայում բաց է մնում այն հարցը, թե վերը նշված ժամկետը լրանալու և զինծառայողի բուժումն ավարտված չլինելու պարագայում ինչպես է կազմակերպվելու դրա հետագա իրականացումը: Մասնավորապես, Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ այն մասին, որ սահմանված առավելագույն ժամկետի լրանալուն պես զինծառայողն ուղարկվել է մշտական տեղակայման զորամաս՝ չնայած այն հանգամանքին, որ դեռ ամբողջովին վերականգնված կամ բուժված չի եղել: Պաշտպանի դիտարկմամբ՝ պարտադիր ժամկետային զինծառայողները զինվորական ծառայության ընթացքում պետք է ստանան պատշաճ բժշկական օգնություն և սպասարկում:

Հետևաբար, անհրաժեշտ է՝

- ✓ ***առողջական վիճակի վերաբերյալ գանգատների բոլոր դեպքերում անհապաղ իրականացնել զինծառայողի պատշաճ հետազոտություն և բուժում,***
- ✓ ***բոլոր զորամասերն ու զինվորական հոսպիտալներն ապահովել մասնագիտական ու գործիքային անհրաժեշտ հագեցվածությամբ,***
- ✓ ***պլանային վիրահատության ցուցման առկայության դեպքում հնարավորին սեղմ ժամկետում միջոցներ ձեռնարկել վիրահատությունն իրականացնելու ուղղությամբ,***

✓ ***միջոցներ ձեռնարկել, որպեսզի զինվորական ծառայության ընթացքում զինծառայողի նկատմամբ նշանակված բուժումը լրիվ ծավալով փաստացի իրականացվի,***

✓ ***ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ վերանայելով նշված որոշման 95-րդ կետի պարտադիր պահանջը՝ բուժման առավելագույն ժամկետի վերաբերյալ:***

2. Զինծառայողների առաջնահերթ հետազոտման և բուժման իրավունքը

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիներին **զինվորական հաշվառման վերցնելու, պարտադիր զինվորական ծառայության զորակոչի, ներառյալ՝ զորահավաքային զորակոչի, պայմանագրային զինվորական ծառայության և վարժական հավաքի ներգրավելու դեպքերում,** նրանց հետազոտումը, փորձաքննությունը և բուժումը կատարվում են **առաջնահերթ** ու անվճար՝ պետության երաշխավորած բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում:

Առաջնահերթ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու այսպիսի արտոնություն նախատեսված չէ զինծառայողների պարագայում, և զինծառայողների հետազոտությունն իրականացվում է ընդհանուր հիմունքներով: Արդյունքում, զինծառայողների հետազոտությունները ձգձգվում են, որի հետևանքով զինվորական հոսպիտալներում նրանց մնալը երկարացվում է:

Գործող իրավակարգավորումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խնդրի համակարգային լուծման համար զինծառայողների առաջնահերթ բժշկական օգնության և սպասարկման իրավունքն անհրաժեշտ է ամրագրել օրենքի մակարդակով:

Այս խնդիրը հատուկ քննարկվել է նաև զինվորական հոսպիտալների ղեկավար կազմի հետ, և կրկին հաստատվել է, որ զինծառայողների հետազոտությունները փաստացի շարունակվում են իրականացվել ընդհանուր հիմունքներով, ավելին՝ ընդգծվել է, որ խնդիրը համակարգային է. հաճախ հետազոտությունները ձգձգվում են, և միայն քիչ դեպքերում է, որ դրանք իրականացվում են հրատապ և սեղմ ժամկետում (օրինակ՝ եթե ՄՌՏ հետազոտության համար զինծառայողից առաջ նույն հիվանդանոց դիմել է մի քանի այլ քաղաքացի, զինծառայողը սպասում է նրանց հետազոտություններն ավարտվելուն, հետո նոր անցնում է հետազոտություն):

Պաշտպանին հասցեագրված բողոքները, ինչպես նաև զորամասեր ու հոսպիտալներ իրականացված այցերը ցույց են տալիս, որ շատ դեպքերում քաղաքացիական բժշկական հաստատություններում հետազոտության նպատակով հերթագրվելու խնդիրների պատճառով զինծառայողները տևական ժամանակ կարող են մնալ զինվորական հոսպիտալներում: Մինչդեռ, նրանց խնդիրների շուտափույթ լուծումը կարևոր է, որպեսզի պաշտպանությանն ու անվտանգությանն առնչվող իրենց գործառույթներն իրականացվեն արդյունավետ: Խնդիրը հատկապես ակնառու է այն դեպքերում, երբ տասնյակ օրեր շարունակ հնարավոր չի լինում կազմակերպել մարտական հերթապահություն իրականացնող զինծառայողների հետազոտությունը, ինչն էլ, իր հերթին, հանգեցնում է զորամասում մնացած անձնակազմի ծանրաբեռնվածության մեծացմանը:

ՊՆ-ին ուղղված այն հարցին, թե 2023 թվականին քանի բողոք է ստացվել քաղաքացիական բժշկական կենտրոններում բուժօգնություն կամ հետազոտություն անցնելու նպատակով հերթագրված զինծառայողների հետազոտությունը կամ

բուժօգնությունը հերթի պատճառով ձգձգվելու վերաբերյալ՝ ստացվել է պատասխան այն մասին, որ նման բովանդակությամբ ՊՆ թեժ գծով ստացվել է 97 զանգ, և հարցերի պարզաբանման նպատակով քաղաքացիներին ուղղորդվել է դիմել Առողջապահության նախարարություն[529]: Այս կապակցությամբ ուշագրավ է, որ Առողջապահության նախարարությունն ի պատասխան Պաշտպանի հարցմանը՝ նշել է, որ 2023 թվականին քաղաքացիական բժշկական կազմակերպություններ դիմած կամ ուղեգրված զինծառայողների բժշկական օգնության և սպասարկման ձգձգումների հետ կապված բողոքներ չեն ստացվել:

Հարկ է նկատի ունենալ, որ զինվորական ծառայության մեջ գտնվող քաղաքացին պետության անմիջական հոգածության ներքո է, ինչը ոչ միայն զինծառայողի կյանքի ու առողջության իրավունքի ապահովման և դրան համարժեք՝ պետության պարտավորության մասին է վկայում, այլ պարտավորությունների չկատարման պարագայում կարող է հանգեցնել պատասխանատվության:

Հետևաբար, առաջարկվում է.

✓ ***«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում նախատեսել կարգավորում, որ զինծառայողների հետազոտումը, փորձաքննությունը և բուժումը կատարվում են առաջնահերթ՝ պետության երաշխավորած բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում,***

✓ ***մինչև վերը նշված օրենսդրական փոփոխության կատարումը միջոցներ ձեռնարկել զինծառայողների անհրաժեշտ հետազոտությունները հնարավորին սեղմ ժամկետներում իրականացնելու ուղղությամբ:***

3. Զինծառայողների հոգեբուժական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը

Պաշտպանի ուշադրության կենտրոնում շարունակում են մնալ զինծառայողների հոգեբուժական օգնության և սպասարկման ոլորտի հետ կապված հարցերը, այդ թվում՝ ՊՆ-ի Երևանի կայազորային հոսպիտալի հոգեբուժական բաժանմունքում զինծառայողների իրավունքների ապահովման վիճակը: Այս հարցերին Պաշտպանը շարունակաբար է անդրադարձել՝ ներկայացնելով ոլորտում առկա խնդիրները և բացերը[530]:

Պաշտպանի աշխատակազմի ուսումնասիրությունները ցույց են տալիս, ՊՆ-ի Երևանի կայազորային հոսպիտալում նախկինում ևս արձանագրված մի շարք խնդիրներ, շարունակել են պահպանվել նաև 2023 թվականի ընթացքում, մասնավորապես՝

1) Հոգեբուժական բաժանմունքի ոչ բարվոք շենքային պայմանները. շինությունն ակնհայտ փոքր է և տիպային չէ:

Սույն տարեկան հաղորդման պատրաստման աշխատանքների շրջանակում Պաշտպանը հարցադրում է կատարել ՊՆ-ին այն մասին, թե նախատեսվում է արդյոք Երևանի կայազորային հոսպիտալի հոգեբուժական բաժանմունքի կապիտալ վերանորոգում կամ այլ շինության տրամադրում: Ըստ ստացված պատասխանի՝ Երևանի

[529] Առողջապահության նախարարության տեղեկացմամբ՝ զինծառայողների բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացվում է հրապարակային օֆերտայի հիման վրա կնքած պայմանագրի դրույթներին համապատասխան, առանց հերթագրումների: Դժվարամատչելի հետազոտությունների իրականացման համար հերթագրումներ հնարավոր են միայն կոնկրետ հետազոտության գործիքի անբավարար թողունակությունից, ծանրաբեռնվածությունից ելնելով:

[530] Տե՛ս ՄԻՊ 2020 թվականի հաղորդումը՝ հասանելի է https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf հղումով, էջ 933, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

կայազորային հոսպիտալի հոգեբուժական բաժանմունքի կապիտալ վերանորոգում կամ այլ շինության տրամադրում նախատեսված չէ, սակայն պլանավորված է հոգեբուժական ծանր խնդիրներ, փսիխոտիկ վիճակներ ունեցող զինծառայողների բուժումը կազմակերպել «Նուբարաշեն» հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոնում՝ վերջինիս վերանորոգման աշխատանքների ավարտից հետո, իսկ հոգեբանական խնդիրներ, նևրոտիկ, հետսթրեսային և այլ ֆունկցիոնալ խանգարումներ ունեցող հիվանդ զինծառայողների բուժումը պլանավորվում է կազմակերպել հոգեվերականգնողական ծառայության միջոցով:

2) Ինչպես նախկինում, ներկայում էլ հոգեբուժական բաժանմունքում ստացիոնար բուժման ընդունելիս ոչ միշտ է հաշվի առնվում զինծառայողների ցանկությունը: Երբեմն տրամադրվում է բուժում ստանալու համաձայնության մասին դիմում, որը զինծառայողը ստորագրում է: Հոսպիտալի անձնակազմը տեղեկացրել է, որ զինծառայողին հարկադիր բուժման ենթարկելու նպատակով դատարան դիմելու դեպք չի արձանագրվել:

3) Բաժանմունքի տարածքում առկա չէ բանկոմատ, ինչի պատճառով զինծառայողներն ու բուժանձնակազմը չեն կարողանում ձեռք բերել առաջին անհրաժեշտության իրեր և պարագաներ,

4) Զինծառայողները զբոսանքի են դուրս գալիս կարճ ժամանակով, լինում են օրեր, երբ բաժանմունքից դուրս չեն գալիս: Ըստ պարզաբանման՝ բուժում ստացող զինծառայողների զբոսանքի կազմակերպման դժվարությունների պատճառը շենքային պայմանների անբավարարությունն է. զինծառայողների համար նախատեսված բացօթյա միակ տարածքը շենքի ներսում առանձնացված ծխարանն է, որն ակնհայտ փոքր է:

5) Զինծառայողները հնարավորություն չունեն սեփական միջոցների հաշվին զննության ենթարկվել իրենց նախընտրած բժշկի կողմից:

6) Հոգեբուժական բաժանմունքում առկա են որոշ թափուր հաստիքներ, ինչի պատճառով բաժանմունքի բժիշկների ծանրաբեռնվածությունն ավելանում է: Ուստի, հաստիքները համալրելու անհրաժեշտություն կա,

7) Բժիշկների տեղեկացմամբ՝ հավելավճար հաշվարկելու նպատակով իրականացվող ատեստավորման գործընթացին իրենք ևս մասնակցում են: Այս առումով, վերջիններս մտահոգություն են հայտնել, որ ատեստավորման համար սահմանված նորմատիվները բժիշկների և զինծառայողների համար նույնն են և բավական խիստ (ֆիզիկական, կրակային և շարային պատրաստության աստիճանի գնահատման գործնական վարժություններ և վարժաձևեր): Այնինչ, բժիշկների կարծիքով՝ իրենց պարագայում նորմատիվները պետք է այլ լինեն՝ իրենց ծառայողական և մասնագիտական պարտականություններին համահունչ:

Հոգեբուժական օգնության և սպասարկման վերաբերյալ միջազգային փաստաթղթերում, ներպետական իրավական ակտերում սահմանված են հստակ երաշխիքներ (չափանիշներ), որոնք առնչվում են հոգեբուժական հաստատություններում հետազոտություն և բուժում ստացող անձանց:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1991 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 46/119 բանաձև, 9-րդ սկզբունքի 2-րդ կետ, «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կարգավիճակի մասին» ԵԽԽՎ 1977 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 818(1977) հանձնարարական, 17-րդ կետ, ԵԽ Նախարարների կոմիտեի «Հարկադիր հոսպիտալացված հոգեկան խանգարմամբ տառապող անձանց իրավական

պաշտպանության մասին» 1983 թվականի փետրվարի 22-ի թիվ R(83)2 հանձնարարական, 4-րդ հոդվածի 2-րդ կետ:

ՄԻԵԴ-ը, անձին հոգեբուժական հաստատությունում տեղավորելը համարելով անձի ազատության սահմանափակում,՝ նշել է, որ Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետում հիշատակվող դատական քննությունները պարտադիր չէ, որ միշտ ուղեկցվեն այն նույն երաշխիքներով, որոնք պահանջվում են 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն քաղաքացիական կամ քրեական դատավարությունների համար: Այնուամենայնիվ, էական է, որ շահագրգիռ անձի համար մատչելի լինի դատարանը, և նա հնարավորություն ունենա լսված լինելու կամ անմիջականորեն կամ, անհրաժեշտության դեպքում, ներկայացուցչության որևէ ձևով (Stanev v. Bulgaria 2012 թվականի հունվարի 17-ի վճիռ, գանգատ թիվ 36760/06, կետ 171):

Սակայն, նշված ոլորտի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միջազգային և ներպետական որոշ չափանիշներ, որոնք սահմանված են հոգեբուժական հաստատությունների համար, ՊՆ-ի ենթակայության հոգեբուժական բաժանմունքում մասամբ են պահպանվում կամ հաճախ չեն պահպանվում, ինչը խիստ մտահոգիչ է, և խնդիրը հրատապ լուծման կարիք ունի:

Չափազանց կարևոր է անձին հոգեբուժական բաժանմունքում տեղավորելիս հաշվի առնել նրա համաձայնությունը, հակառակ դեպքում՝ այն կարող է իրականացվել միայն դատարանի որոշման հիման վրա: Բացի դրանից, անհրաժեշտ է, որ Պաշտպանության նախարարությունը կոնկրետ միջոցներ ձեռնարկի հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունեցող անձանց համար նախատեսված նվազագույն երաշխիքները Երևանի կայազորային հոսպիտալի հոգեբուժական բաժանմունքում ապահովելու ուղղությամբ՝ սկսած շենքային պայմաններից և բուժանձնակազմի համալրումից մինչև պատշաճ բուժօգնության տրամադրում:

Հետևաբար, անհրաժեշտ է՝

- ✓ ***հնարավորին սեղմ ժամկետում բարելավել Երևանի կայազորային հոսպիտալի հոգեբուժական բաժանմունքի շենքային պայմանները, այդ թվում՝ նոր շենքային պայմաններ ապահովելու միջոցով,***
- ✓ ***բացառել հոգեբուժական օգնության ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ գործող պրակտիկան, այն է՝ առանց զինծառայողների գրավոր համաձայնության կամ դատարանի որոշման զինծառայողներին հոգեբուժական բաժանմունք ընդունելու, ինչպես նաև նրանց հոգեբուժական օգնություն և սպասարկում տրամադրելու դեպքերը,***
- ✓ ***ապահովել հոգեբուժական բաժանմունքում գտնվող զինծառայողների ամենօրյա առնվազն մեկ ժամ զբոսանքի իրավունքը,***
- ✓ ***զինծառայողներին հնարավորություն ընձեռել սեփական միջոցների հաշվին ենթարկվել իրենց նախընտրած բժշկի կողմից զննության,***
- ✓ ***քննարկման առարկա դարձնել բժիշկների ատեստավորման գործընթացում նորմատիվները (կրակային, ֆիզիկական և այլն) նրանց ծառայողական և մասնագիտական պարտականություններին համահունչ դարձնելու և զինծառայողների համեմատ այլ չափորոշիչներով գնահատելու հնարավորության հարցը:***

4. Զինվորական ծառայության ավարտից հետո բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 64-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանվում է, որ երկարամյա ծառայության կամ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացող նախկին զինծառայողները, զինվորական ծառայության ընթացքում ձեռք բերած հիվանդության կամ ստացած խեղման կամ վնասվածքի պատճառով զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամները բժշկական օգնությամբ ապահովվում են օրենքով սահմանված կարգով:

Այս առնչությամբ, Պաշտպանին հասցեագրած բողոքների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ որոշակի դեպքերում ծառայության ընթացքում հիվանդություն ձեռք բերած նախկին զինծառայողները չեն օգտվում անվճար բժշկական օգնության և սպասարկման իրավունքից: Մասնավորապես՝

1) պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած այն քաղաքացիները, ովքեր զինվորական ծառայության ընթացքում ձեռք են բերել հիվանդություն, որը հիմք չի հանդիսացել նրանց ոչ պիտանի ճանաչելու համար, սակայն զորացրվել են ժամկետը լրանալու կապակցությամբ, չեն օգտվում անվճար բժշկական օգնություն ստանալու իրավունքից.

2) պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած այն քաղաքացիները, ում զինվորական ծառայության ընթացքում ցուցվել է բժշկական օգնություն, սակայն զինվորական ծառայության ընթացքում չի իրականացվել, չեն օգտվում անվճար բժշկական օգնություն ստանալու իրավունքից.

3) զինծառայության ընթացքում ստացած վնասվածքի, հիվանդության պատճառով զորացրված անձինք, ովքեր ֆունկցիոնալության գնահատման արդյունքում (ինչպես նաև բժշկասոցիալական փորձաքննության արդյունքում) հաշմանդամություն ունեցող անձ չեն ճանաչվել, օգտվում են հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման իրավունքից՝ միայն անձի ֆունկցիոնալությունը գնահատող հանձնաժողովի կողմից կազմված ծառայությունների անհատական ծրագրի շրջանակներում և վերականգնողական անհատական ծրագրերի գործողության ժամկետում.

4) այն պայմանագրային զինծառայողները, ովքեր զինվորական ծառայությունից արձակվել են պահեստազոր ոչ թե երկարամյա ծառայության կամ ստացած խեղման, վնասվածքի, հիվանդության պատճառով, այլ կադրերի տրամադրության տակ գտնվելու ժամկետը լրանալու կապակցությամբ, չեն օգտվում անվճար բժշկական օգնությունից նույնիսկ այն դեպքում, երբ հիվանդությունը ձեռք են բերել ծառայության ընթացքում:

Պաշտպանը շարունակում է ստանալ բողոքներ զինվորական ծառայության ընթացքում պլանային վիրահատությունները չիրականացնելու վերաբերյալ[531]: Որոշ նախկին զինծառայողներ նշել են, որ ծառայության ընթացքում ցուցված է եղել կատարել քթի միջնապատի վիրահատություն, սակայն նշված վիրահատությունը չի կատարվել, և իրենք արձակվել են ԶՈՒ-ից:

Թեև Պաշտպանի միջամտությամբ և Պաշտպանության նախարարության հետ համագործակցության արդյունքում կոնկրետ բողոքների կապակցությամբ զորացրված նախկին զինծառայողները ստացել են անվճար բժշկական օգնություն և սպասարկում,

[531] ՊՆ-ի տեղեկացմամբ՝ պլանային վիրահատությունների ձգձգվելու վերաբերյալ ստացվել են եզակի բողոքներ՝ սեպտոպլաստիկայի (քթի միջնապատի ծռվածության վիրահատություն) իրականացման հետ կապված: Դրանք հիմնականում պայմանավորված են եղել զինծառայողների՝ մարտական հերթապահությունում ներգրավվածությամբ պայմանավորված տեղափոխումների հետաձգումով:

սակայն խնդիրը համակարգային առումով շարունակում է արդիական մնալ, և պահանջում է հստակ և միասնական լուծումներ[532]:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ առաջարկվում է.

✓ սահմանել կառուցակարգեր՝ ժամկետը լրանալու կապակցությամբ զինվորական ծառայությունից արձակվելիս պարտադիր ժամկետային զինծառայողների մոտ բուժման կարիք պահանջող հիվանդության հայտնաբերման դեպքում նրանց անվճար բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելու նպատակով,

✓ սահմանել, որ այն դեպքում, երբ զինվորական ծառայության ժամկետում չեն լուծվում պլանային բուժման կամ վիրահատության կարիք ունեցող զինծառայողների առողջական խնդիրները, ցուցված բուժումը կամ վիրահատությունն անվճար հիմունքներով պետք է իրականացվի զինվորական ծառայությունից արձակվելուց հետո,

✓ օրենսդրական փոփոխությամբ ամրագրել, որ զինվորական ծառայության ընթացքում ստացած խեղման, վնասվածքի, հիվանդության պատճառով զորացրված անձինք օգտվում են հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքից՝ անկախ հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվելու հանգամանքից,

✓ օրենսդրական փոփոխությամբ ամրագրել, որ նախկին պայմանագրային զինծառայողներն օգտվում են զինվորական ծառայության ընթացքում ստացած խեղման, վնասվածքի, հիվանդության կապակցությամբ անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքից՝ անկախ զինվորական ծառայությունից արձակվելու հիմքից:

5. Առողջական վիճակին հակացուցված ծառայության պայմանները պահպանելու իրավունքը

2023 թվականին Պաշտպանը զինծառայողներից ու նրանց ընտանիքների անդամներից ստացել է բողոքներ՝ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում առողջական վիճակին հակացուցված պայմանները չպահպանելու վերաբերյալ:

Պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում առողջական վիճակին հակացուցված պայմանները չպահպանելու խնդիրն արձանագրվել է ինչպես 2023 թվականին, այնպես էլ նախորդ տարիներին զորամասեր կատարված այցերի և զինծառայողների հետ առանձնազրույցների ժամանակ: Օրինակ, զորամասերից մեկում առանձնազրույցների ընթացքում որոշ զինծառայողներ տեղեկացրել են, որ չնայած սահմանափակումով պիտանի են ճանաչվել զինվորական ծառայության համար, սակայն որևէ ֆիզիկական վարժությունից ազատված չեն:

Չնայած այն հանգամանքին, որ Պաշտպանը 2023 թվականի ընթացքում ինչպես բանավոր ու գրավոր եղանակներով, այնպես էլ զորամասեր իրականացրած այցերի

[532] ՊՆ-ից ստացված տեղեկատվության համաձայն՝ զինվորական ծառայության ընթացքում և մինչ զորակոչվելը հիվանդություն ձեռք բերած, սակայն ոչ թե առողջական վիճակի պատճառով, այլ ժամկետը լրանալու կապակցությամբ կամ այլ հիմքով զորացրված նախկին զինծառայողներին անվճար բժշկական օգնություն տրամադրելու խնդրանքով 2023 թվականին ստացված դիմումների կապակցությամբ բոլոր 15 դեպքերում տրամադրվել է անվճար բժշկական օգնություն՝ Կենտրոնական կլինիկական զինվորական և Երևանի կայազորային հոսպիտալներում:

ընթացքում ստացել է բողոքներ առողջական վիճակին հակացուցված ծառայության պայմանները պահպանելու վերաբերյալ, Պաշտպանության նախարարությունը տեղեկացրել է, որ նման բովանդակությամբ ՊՆ թեժ գծով ստացվել է 2 բողոք, որոնք չեն հաստատվել:

Պաշտպանն առանձին հարցում է ուղարկել Պաշտպանության նախարարություն այն մասին, թե արդյոք արձանագրվել են դեպքեր, երբ ծառայության ընթացքում սահմանափակումները չպահպանելու հետևանքով զինծառայողների առողջական վիճակը վատթարացել է, եթե այո, ապա ինչ միջոցներ են ձեռնարկվել այդ ուղղությամբ: Այս կապակցությամբ Նախարարությունը տեղեկացրել է, որ ծառայության ընթացքում սահմանափակումները չպահպանելու և դրա հետևանքով զինծառայողների առողջական վիճակի վատթարացման կապակցությամբ դիմում-բողոքներ չեն ստացվել: Նշել է նաև, որ զինծառայողների ծառայության իրականացումը, օրենսդրությամբ ամրագրված սահմանափակումների նկատառմամբ, գտնվում է հրամանատարական կազմի և բժշկական անձնակազմի մշտական հսկողության ներքո:

Առողջական վիճակին հակացուցված ծառայության պայմանները պահպանելու իրավունքը բոլոր դեպքերում և անխտիր բոլոր զորամասերում պետք է լինի երաշխավորված, և պետությունը պետք է բացառի ծառայողական պայմանների հետ կապված՝ զինծառայողների առողջությանը սպառնացող ռիսկը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է խստորեն պահպանել պարտադիր ժամկետային զինծառայողների առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները և զինծառայողներին ծառայության նշանակել իրենց առողջական վիճակին համապատասխան զորամասեր:

ԳԼՈՒԽ 5. ԶԻՆԱՊԱՐՏ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՐՁԱԿՎԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1. Պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու իրավունքը և զինծառայողների ատեստավորման գործընթացը

Հանրային ծառայության անցնելու իրավունքը ժողովրդավարական և իրավական պետությունում հանդիսանում է քաղաքացու կարևոր քաղաքական իրավունքներից մեկը, որը ամրագրում է ստացել միջազգային և ներպետական իրավական ակտերում և ՀՀ-ում ենթակա է լիարժեք պաշտպանության:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրվել է աշխատանքի ընտրության ազատության իրավունքը, իսկ 49-րդ հոդվածով՝ քաղաքացիների հանրային ծառայության անցնելու իրավունքը:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝
Յուրաքանչյուր ոք ունի իր երկրում պետական ծառայության անցնելու հավասար հնարավորության իրավունք:
Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 25-րդ հոդվածի համաձայն՝
Յուրաքանչյուր քաղաքացի առանց խտրականության և անհիմն սահմանափակումների պետք է իրավունք և հնարավորություն ունենա իր երկրում հավասարության ընդհանուր պայմաններով մտնել պետական ծառայություն:

«Զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի ձեռնարկի՝ պայմանագրային հիմունքներով զինվորական ծառայության անցնող քաղաքացին՝ որպես հանրային ծառայության ընդունվող անձ, պետք է հնարավորություն ունենա օգտվելու հանրային ծառայության անցնող քաղաքացիների իրավունքներից[533]: Նույն չափորոշիչն է սահմանվել նաև ԵԽ խորհրդարանական վեհաժողովի թիվ 1742 (2006) հանձնարարականով:

Զինվորական ծառայությունը հանդիսանում է հանրային ծառայության տեսակ, և պայմանագրային հիմունքներով զինվորական ծառայության անցնելու իրավունքը պաշտպանվում է ինչպես ազգային, այնպես էլ միջազգային իրավական ակտերով:

Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ 2023 թվականի ընթացքում շուրջ 955 պարտադիր ժամկետային զինծառայողներ ծառայության ընթացքում ՊՆ-ի հետ կնքել են պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր և անցել են պայմանագրային զինվորական ծառայության: Ըստ ՊՆ-ի՝ 2023 թվականի ընթացքում զինվորական ծառայություն անցնող քաղաքացիների նկատմամբ խտրական վերաբերմունքի դրսևորման դեպքեր չեն արձանագրվել: Նախարարությունը հավելել է, որ հաշվետու ժամանակահատվածում 4 բողոք է ստացվել կին զինծառայողներից, որից 2-ը՝ առողջական սահամանափակում

[533] Ձեռնարկ ԶՈՒ անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին, հասանելի է http://www.osce.org/hy/odihr/88572 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

ունենալու հանգամանքով պայմանավորված՝ հրամանատարների կողմից ծառայությունը շարունակելու միջնորդություն չտրամադրելու, մյուս երկուսը՝ ոչ կանոնադրային հարաբերությունների վերաբերյալ:

Պաշտպանը ևս պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու վերաբերյալ քաղաքացիներից ստացել է բողոքներ, որոնք հիմնականում վերաբերել են պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու ցանկություն հայտնած քաղաքացիների անվճար բժշկական հետազոտությունների իրականացման կառուցակարգերի հստակեցման հարցին, զինվորական ծառայություն անցնելու վերաբերյալ տարբեր ծրագրերի մասին իրազեկվածության պակասին, կազմակերպչական-հաստիքային միջոցառումների արդյունքում հաստիքը կրճատվելու և նոր հաստիքի նշանակվելու համար վերադաս հրամանատարության կողմից միջնորդություն չներկայացնելուն, պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու համար դիմելուց հետո տևական ժամանակ անց որևէ պատասխան չստանալուն, պայմանագրային զինվորական ծառայության չընդունելուն և այլն:

Ճիշտ է, զինկոմիսարիատների, զորամասերի հրամանատարության հետ համագործակցությամբ անհատական բողոքներով բարձրացված հարցերը ստացել են լուծումներ, սակայն պայմանագրային զինվորական ծառայության ընդունելու գործընթացում առկա խնդիրների հաղթահարման նպատակով անհրաժեշտ է գտնել համակարգային լուծումներ:

Զինվորական ծառայություն անցնելու գործընթացում անձանց իրավունքների երաշխավորման տեսանկյունից կարևոր է ՀՀ պաշտպանության նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 1550-Ն հրամանը, որով հաստատվել է «Հայաստանի Հանրապետության զինված ուժերում պայմանագրային զինվորական ծառայության ընդունելու կարգը»:

Պայմանագրային զինվորական ծառայության ներգրավելու, ծառայությունն ավելի գրավիչ դարձնելու, այդ գործընթացում անձանց իրավունքների ապահովման հարցերին անդրադարձ է կատարվել Պաշտպանին առընթեր զինծառայողների իրավունքների հարցերով փորձագիտական խորհրդի նիստերի ընթացքում: Պարբերաբար անդրադարձ է կատարվել նաև ՊՆ-ի կողմից ներդրված ծրագրերով («Պատիվ ունեմ», «Հայրենյաց պաշտպան») ԶՈՒ ներգրավման հետ կապված հարցերին, այդ ծրագրերի արդյունավետության բարձրացմանը:

Զինվորական հաստատություններ այցերի ընթացքում զինծառայողները նշել են, որ անհրաժեշտ է ծառայությունը դարձնել ավելի գրավիչ, հետևողականորեն բարձրացնել զինծառայողի կարգավիճակը, այդ թվում՝ աշխատավարձերի բարձրացման, զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին սոցիալական տարբեր ծրագրերում ներառելու, արտոնություններ տրամադրելու միջոցով: Զինծառայողները մտահոգություն են հայտնել, որ ներկայում քաղաքացիական ծառայողն ու զինծառայողը գրեթե հավասարաչափ են վարձատրվում և հաշվի չեն առնվում զինվորական ծառայության առանձնահատկությունները: Ըստ զինծառայողների՝ սա ևս խոչընդոտ է ԶՈՒ ներգրավման համար և նվազեցնում է զինվորական ծառայության գրավչությունը:

Այս համատեքստում բազմաթիվ զինծառայողներ դրական են գնահատել ատեստավորման գործընթացը[534], որը հնարավորություն է տալիս զինծառայողներին

[534] Նշված գործընթացի մեկնարկը տրվել է ՀՀ կառավարության 2023թ. փետրվարի 9-ի թիվ 162-Ն և 166-Ն որոշումներով:

հավելավճարներ ստանալ: Դրա հետ մեկտեղ, որոշ զինծառայողներ (նաև սպայակազմի) ատեստավորման գործընթացի վերաբերյալ ներկայացրել են նաև մտահոգություններ:

Սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում Պաշտպանը հարցադրում է կատարել Պաշտպանության նախարարություն առ այն, թե ինչ փուլում է գտնվում զինծառայողների ատեստավորման գործընթացը (զինծառայողների քանի տոկոսն են արդեն իսկ անցել ատեստավորում), ինչ բնույթի բողոքներ են ստացվել նշված գործընթացի վերաբերյալ, քանի զինծառայող է ատեստավորումը չանցնելու պատճառով արձակվել ծառայությունից:

Պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ ատեստավորմանը դիմած զինծառայողների 48 տոկոսը ատեստավորման արդյունքներով ստացել են դրական գնահատականներ (գերազանց, լավ, բավարար): Ատեստավորման գործընթացում բողոքները հիմնականում լինում են մեկ ուղղությունից (առարկայից) անբավարար (ցածր) գնահատվելու հիմքերով: Գործընթացը կանոնակարգող իրավակարգավորումներում իրականացվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ և հարցը կարգավորվել է: Ատեստավորման գործընթացի վերաբերյալ ՊՆ թեժ գծով 2023 թվականի ընթացքում ստացվել է 14 զանգ, որոնք հիմնականում վերաբերել են քննությունների անցկացման միավորների հաշվարկման, վճարման հարցերին: Նախարարությունը հավելել է, որ ատեստավորում չանցնելու պատճառներով ծառայությունից արձակվելու դեպք չի եղել:

Պաշտպանին ևս հասցեագրվել են բազմաթիվ բողոքներ ատեստավորման գործընթացի վերաբերյալ: Տարբեր զորամասեր այցերի ընթացքում արձանագրվել է, որ մի շարք զինծառայողներ տեղեկացված չեն ատեստավորման գործընթացի մանրամասներից և վերաբերելի իրավակարգավորումներից:

Պայմանագրային զինծառայողները ատեստավորման գործընթացի հետ կապված ներկայացրել են մի շարք մտահոգություններ: Օրինակ, նշել են, որ ատեստավորման գործընթացը կարող է ավելի բարդացնել կադրերի հետ կապված խնդիրները (ատեստավորում չանցածները կարող են այլևս չցանկանալ ծառայություն անցնել և արձակվել ծառայությունից), վարձատրության տեսանկյունից անհավասար պայմաններ ստեղծել սպաների միջև (օրինակ, զորամասի հրամանատարը կամ նրա տեղակալները կարող են ավելի պակաս վարձատրվել, քան նրանց ենթակաները), արդյունքում զինծառայողների շրջանում կարող են առաջանալ տարբեր խնդիրներ, ընդհուպ մինչև կարգապահության հետ կապված, ծառայողական պարտականությունները միմյանց մեջ բաշխելու հետ կապված և այլն: Բացի այդ, զինծառայողները նշել են, որ ատեստավորման գործընթացում արտոնություններ չեն տրամադրվում, օրինակ, մարտական գործողությունների մասնակիցներին, վիրավորում ստացածներին, երկար տարիներ ծառայություն անցածներին և այլն:

Պաշտպանը, բացի զորամասեր այցերի ընթացքում ատեստավորման գործընթացի հետ կապված սպաների մտահոգություններն արձանագրելուց, ստացել է այդ գործընթացի վերաբերյալ գրավոր ու բանավոր բազմաթիվ այլ բողոքներ: Օրինակ՝ ռազմական բժիշկները մտահոգություն են հայտնել, որ ատեստավորման համար սահմանված նորմատիվները բժիշկների և մյուս զինծառայողների համար նույնն են և բավական խիստ (ֆիզիկական, կրակային և շարային պատրաստության աստիճանի գնահատման գործնական վարժություններ և վարժաձևեր): Այնինչ, բժիշկների կարծիքով՝ իրենց

նորմատիվները պետք է այլ լինեն՝ իրենց ծառայողական և մասնագիտական պարտականություններին համահունչ:

Մեկ այլ դեպքում, խնդիրը վերաբերել է ատեստավորման գործընթացում կանանց և տղամարդկանց միջև անհավասար/տարբերակված մոտեցում ցուցաբերելուն: Ըստ ստացված բողոքների՝ ատեստավորման ժամանակ ֆիզիկական պատրաստության քննությունները հանձնելու նպատակով զինծառայողների համար ստեղծվել են համապատասխան տարիքային խմբեր՝ *տղամարդկանց համար թվով 7 խումբ, իսկ կին զինծառայողների համար թվով 4 խումբ*: Կին զինծառայողների համար 4-րդ խմբի տարիքային շեմը սահմանվել է 35-40 տարիքը: Հետևաբար, օրինակ, 50 տարեկան կին զինծառայողը պետք է հանձնի 35-40 տարեկան կին զինծառայողներին համապատասխան նորմատիվներ: Այնինչ, նույն 50 տարեկան տղամարդ զինծառայողների համար առկա է 7-րդ տարիքային խումբը՝ 50-54 տարեկանների համար՝ այդ տարիքին համապատասխան նորմատիվներով, որում նվազեցված են հանձնվող նորմատիվ վարժությունների քանակները և վարժությունների կատարման համար սահմանված է ավելի բարենպաստ բալային համակարգ: Ստացվում է, որ քննությունների արդյունքում նույն տարիքի կին զինծառայողները, ունենալով ավելի բարդ նորմատիվների պահանջ, ստանում են ավելի քիչ միավորներ, քան նույն տարիքի համար նախատեսված ավելի բարենպաստ նորմատիվներ ունեցող տղամարդ զինծառայողները: Արդյունքում, այդ տարիքային շեմ ունեցող կին զինծառայողները չեն կարողանում անցնել ատեստավորում՝ ի տարբերություն տղամարդ զինծառայողների:

Մեկ այլ մտահոգություն վերաբերել է այն դեպքերին, երբ ՀՀ-ում կամ արտերկրում ռազմաուսումնական հաստատություն նոր ավարտած սպաները հավելավճարներ ստանալու համար անցնում են ատեստավորման գործընթացը: Այդ անձանց կարծիքով՝ իրենք տևական ժամանակ սովորել են, պարբերաբար հանձնել քննություններ, պատրաստված կադրեր, չնայած դրան՝ հավելավճար տրամադրելու համար կրկին առաջարկվում է հանձնել քննություններ: Ուստի, զինծառայողներն առաջարկում են նոր ավարտած սպաներին, առանց լրացուցիչ քննություններ հանձնելու, առնվազն 2-3 տարի տրամադրել հավելավճարներ:

Ատեստավորման գործընթացի հետ կապված վերը նշված հարցերը Պաշտպանը ներկայացրել է իրավասու գերատեսչություն, հարցը գտնվում է Պաշտպանի ուշադրության ներքո:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ առաջարկվում է՝

- ✓ ***ամրապնդել ԶՈՒ մուտք գործող անձանց իրավունքների երաշխավորման, հավասար հնարավորությունների ապահովման կառուցակարգերը՝ բացառելով զինվորական ծառայության ընդունելն անհիմն մերժելու դեպքերը,***
- ✓ ***պայմանագրային զինվորական ծառայություն անցնելուն միտված տարբեր ծրագրերի (նաև դրանց դիմելու ընթացակարգերի) վերաբերյալ բարձրացնել հանրության տեղեկացվածության աստիճանը՝ տարբեր եղանակներով պարբերաբար իրականացնելով իրազեկման արշավներ, դրանց շրջանակում հատուկ ընդգծելով զինծառայողներին և նրանց ընտանիքներին տրվող տարբեր արտոնությունների, իրավունքների մասին,***
- ✓ ***ԶՈՒ-ը պետք է արդյունավետորեն մրցակցեն աշխատանքի շուկայում բարձր մակարդակի մասնագետներին ներգրավելու համար՝ առավելապես շեշտը***

դնելով որակական ցուցանիշների վրա: Այս հարցում կարևոր է ատեստավորման գործընթացի շարունակական կատարելագործումը,

- ***ատեստավորման գործընթացի վերաբերյալ վերը նշված մտահոգությունների հաշվառմամբ՝ միջոցներ ձեռնարկել նոր կառուցակարգեր ու մոտեցումներ ներդնելու, տարբեր օբյեկտիվ հանգամանքներ հաշվի առնելու և այդ գործընթացի մասնակիցների իրավունքների պատշաճ երաշխավորումն ապահովելու ուղղությամբ:***

2. Զինծառայողների իրավունքների պաշտպանությունը ծառայությունից արձակվելու գործընթացում

Պայմանագրային զինվորական ծառայությունից չարձակելու կամ արձակումը ձգձգելու հարցերով Պաշտպանը 2023 թվականի ընթացքում շարունակել է ստանալ բողոքներ: Ըստ ՊՆ-ի՝ նմանատիպ բողոքներ ստացվել են նաև նախարարությունում:

Այս կապակցությամբ կարևոր է նկատի ունենալ, որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ պայմանագրային զինծառայողը զինվորական ծառայությունից արձակվում է մինչև պայմանագրի ժամկետը լրանալը զինվորական ծառայությունից արձակվելու զեկուցագիր ներկայացնելիս, եթե չունի սույն օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության չծառայած ժամկետ: Նույն օրենքի 55-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պայմանագրային զինծառայողը զինվորական ծառայությունից արձակվում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող հրամանատարի (պետի) հրամանով՝ արձակման հիմքեր ծագելուց **ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում**:

Պաշտպանության նախարարության տեղեկացմամբ՝ ծառայությունից արձակելու զեկուցագիր ներկայացվելուց հետո օրենքով սահմանված ժամկետի չպահպանման և ծառայությունից չարձակելու հարցով 2023 թվականի ընթացքում դատավարական ներկայացուցչություն է իրականացվել ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության թվով 4 դատական (վարչական) գործերով, որոնց վարույթները կարճվել են, այդ թվում՝ 2-ը՝ հայցվորի կողմից՝ հայցից հրաժարվելու և 2-ը՝ վեճն ըստ էության սպառված լինելու հիմքերով: Նախարարությունը հավելել է, որ 2023 թվականի ընթացքում պարտադիր ժամկետային զինծառայողների արձակման ժամկետի ձգձգման հետ կապված ՊՆ թեժ գծով ստացվել է 18 զանգ, որն աշխատանքային կարգով լուծվել է:

Ըստ նախարարության՝ արձակման համար դիմած զինծառայողների զեկուցագրերին սահմանված ժամկետներում տրվում է ընթացք: Սակայն որոշ դեպքերում արձակման համար սահմանված ժամկետը ձգձգվել է՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն զինծառայողների կողմից պահանջվող փաստաթղթերի ներկայացման ժամկետի խախտման և ԶՈՒ մարտական պատրաստականության բարձր աստիճանի բերելու (բացառությամբ առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելիս) պատճառով:

Ճիշտ է, անհատական բողոքների շրջանակում Պաշտպանի աջակցությամբ և ՊՆ-ի հետ համագործակցությամբ քաղաքացիների բարձրացրած հարցերը լուծվել են, սակայն օրենսդրական հստակ կարգավորումների պարագայում նմանատիպ դեպքերի առկայությունը խնդրահարույց է:

Պաշտպանը մշտապես առաջարկում է կատարել ուսումնասիրություններ ու վերլուծություններ և վեր հանել պայմանագրային զինծառայողների՝ պայմանագրից

հրաժարվելու և զինվորական ծառայությունից արձակվելու պատճառները: Միայն այդ պատճառների վերհանման և դրանց լուծման միջոցով հնարավոր կլինի ՀՀ ԶՈՒ-ում ծառայությունը դարձնել գրավիչ, ինչն իր հերթին կավելացնի ծառայություն անցնելու ցանկություն հայտնող անձանց քանակը և կնվազեցնի զինված ուժերից արձակվող զինծառայողների թիվը:

Սույն տարեկան հաղորդման շրջանակներում Պաշտպանը հարցադրում է կատարել ՊՆ-ին այն մասին, թե ինչ միջոցներ են ձեռնարկվել պայմանագրային զինծառայողների ծառայությունից արձակման պատճառները պարզելու ուղղությամբ և արդյոք իրականացվել կամ նախատեսվում է իրականացնել խնդրի վերաբերյալ հետազոտություն և վերլուծություն:

Այս կապակցությամբ Պաշտպանության նախարարությունը տեղեկացրել է, որ արձակման զեկուցագիր ներկայացնող զինծառայողների հետ հրամանատարները մշտապես տանում են բացատրական աշխատանքներ՝ զորացրման պատճառները պարզելու համար և հորդորում են շարունակել զինվորական ծառայությունը: Հնարավորությունների սահմաններում ղեկավար կազմի կողմից լուծումներ են տրվում արձակման պատճառ հանդիսացող խնդիրներին:

Պայմանագրային զինծառայողներին ծառայությունից արձակելու գործընթացում նրանց իրավունքների հետ կապված մեկ այլ խումբ խնդիր արձանագրվել էր դեռևս 2019 թվականին: Խոսքը վերաբերում է պայմանագրային զինվորական ծառայության ընթացքում ամենամյա արձակուրդ չտրամադրելուն կամ մասամբ տրամադրելուն, չօգտագործված արձակուրդի դիմաց դրամական հատուցում չվճարելուն, ինչպես նաև ոչ աշխատանքային օրերին (շաբաթ-կիրակի, նաև տոնական օրերին) ծառայության ներգրավելուն, լրացուցիչ հանգստյան օր չտրամադրելուն և չվարձատրելուն: Վերը նշված խնդիրների կապակցությամբ ՄԻՊ-ը կայացրել է խախտման որոշումներ, հարցերին մանրամասն անդրադարձ է կատարել տարեկան հաղորդումներում՝ պետական իրավասու մարմիններին առաջարկելով միջոցներ ձեռնարկել անձանց իրավունքների վերականգնման ու պաշտպանության ուղղությամբ և այլն[535]: Պաշտպանը 2023 թվականի ընթացքում նախկին զինծառայողներից շարունակել է ստանալ վերը նշված հարցերի վերաբերյալ գրավոր ու բանավոր բողոքներ, որոշ բողոքների քննարկումը Պաշտպանի աշխատակազմում շարունակվում է:

Այս կապակցությամբ կարևոր է վկայակոչել վերը նշված խնդրի լուծմանը միտված ՀՀ պաշտպանության նախարարի «Պայմանագրային զինվորական ծառայությունից արձակված և չօգտագործած արձակուրդի օրերի համար հատուցում չստացած կամ մասնակի ստացած նախկին զինծառայողների կողմից հասանելիք հատուցումը հաշվարկելու նպատակով ներկայացված դիմումներով վարչարարության իրականացման կարգը սահմանելու մասին» 2023 թվականի հուլիսի 17-ի թիվ 983-Լ հրամանը, որով կարգավորվում են նշված հարցերը:

Պաշտպանը հարցադրում է ուղարկել ՊՆ այն մասին, թե քանի դիմում կամ բողոք է ներկայացվել նախկին զինծառայողների կողմից չօգտագործված բոլոր արձակուրդների դիմաց դրամական փոխհատուցում ստանալու վերաբերյալ և ինչ ընթացք է տրվել բողոքներին: Ի պատասխան Պաշտպանի հարցադրմանը՝ Պաշտպանության նախարարությունը տեղեկացրել է, որ ՊՆ կադրային և ռազմակրթական քաղաքականության գլխավոր վարչությունում նախկին զինծառայողների կողմից

[535] Խնդիրը մանրամասն նկարագրված է Պաշտպանի 2019-2021թթ. տարեկան հաղորդումներում:

չօգտագործված բոլոր արձակուրդների դիմաց դրամական փոխհատուցում ստանալու համար դիմել են մեծ թվով պահեստազորայիններ, 72 պահեստազորայինի վերաբերյալ արձակվել է համապատասխան վերահաշվարկի հրաման, 10 պահեստազորայինի հրաման գտնվում է համաձայնեցման փուլում, իսկ մնացած պահեստազորայինների մասով կատարվել են համապատասխան հարցումներ, որոնք ստանալուց և ուսումնասիրվելուց հետո նույնպես կարձակվեն համապատասխան հրամանները:

Պաշտպանը ևս մեկ անգամ ընդգծում է, որ պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու և ծառայությունից արձակվելու գործընթացում կարևոր է զինծառայողների իրավունքների պատշաճ երաշխավորումը:

Հետևաբար առաջարկվում է՝

- ✓ ***ներդնել կառուցակարգեր պայմանագրային զինծառայողների կողմից ծառայությունից արձակվելու գործընթացն առանց ձգձգումների կազմակերպելու նպատակով,***
- ✓ ***միջոցներ ձեռնարկել պայմանագրային զինծառայողների ծառայությունից արձակման պատճառները պարզելու, անհրաժեշտ հետազոտություն և վերլուծություն իրականացնելու և դրանց արդյունքների ամփոփմամբ՝ ծառայության գրավչությունը բարձրացնելուն միտված լրացուցիչ կառուցակարգեր ներդնելու (օրինակ՝ սոցիալական) ուղղությամբ,***
- ✓ ***միջոցներ ձեռնարկել ծառայությունից արձակվելիս նախկին զինծառայողների կողմից չօգտագործված բոլոր արձակուրդների դիմաց հատուցում տրամադրելու ուղղությամբ,***
- ✓ ***զինվորական ծառայությունից արձակվելիս կատարվող վերջնահաշվարկի ժամանակ զինվորական ծառայության ընթացքում հանգստյան օրերին կատարած արտաժամյա աշխատանքի դիմաց զինծառայողներին տրամադրել փոխհատուցում այն դեպքերում, երբ զինվորական ծառայության ընթացքում այդ աշխատանքի դիմաց այլ հանգստյան օր չի տրամադրվել կամ այն չի ավելացվել ամենամյա արձակուրդին, ինչպես նաև դրամական հավելում չի տրամադրվել:***

3. Զինվորական արհմիություններ կամ ընկերակցություններ կազմելու և դրանց անդամակցելու իրավունքը

Պաշտպանը բազմիցս առաջարկել է օրենսդրական փոփոխություններով զինծառայողների համար վերացնել արհեստակցական կազմակերպությանը մասնակցելու արգելքը, ինչպես նաև ստեղծել զինծառայողների արհեստակցական միություններ[536]:

Այս հարցի շուրջ կարևոր արձանագրում է այն, որ ՄԻՊ դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանը 2023 թվականի ապրիլի 11-ին *հակասահմանադրական է ճանաչել ՀՈ, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողների, ինչպես նաև դատավորների և Սահմանադրական դատարանի դատավորների համար սահմանված՝ արհեստակցական կազմակերպության մասնակից լինելու բացարձակ արգելքը*: Սահմանադրական դատարանը Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների ուժը կորցնելու վերջնաժամկետ է սահմանել 2023

[536] Տե՛ս, օրինակ, ՄԻՊ 2021 թվականի տարեկան հաղորդումը, էջ 899:

թվականի նոյեմբերի 11-ը՝ հնարավորություն տալով ԱԺ-ին մի շարք օրենքների իրավակարգավորումները համապատասխանեցնելու ՍԴ որոշմանը[537]:

Չնայած Սահմանադրական դատարանի վերը նշված որոշմանը՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում դեռևս չեն կատարվել անհրաժեշտ փոփոխություններն ու լրացումները. ներկայում գործող կարգավորմամբ նշված օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է, որ *զինծառայողն իրավունք չունի անդամակցելու որևէ արհեստակցական միության*:

Պաշտպանը ևս մեկ անգամ հատուկ ընդգծում է, որ այլոց հետ միավորվելու ազատությունը հիմնարար իրավունք է, որն անվերապահորեն ճանաչված է մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային կարևորագույն փաստաթղթերով[538]:

Պաշտպանի գնահատմամբ՝ կոլեկտիվ մարմինները կարող են ստեղծել լավ հնարավորություն իրենց անդամների շահերը պատշաճ ներկայացնելու, ներառյալ՝ նրանց իրավունքներն արդյունավետ պաշտպանելու գործում: Զինվորական միավորումները կամ միությունները կարող են նպաստել զինծառայողների բարեկեցությանը, ներկայացնել նրանց շահերը տարբեր մակարդակներում, տրամադրել խորհրդատվություն կամ բանակցել ԶՈՒ-ում ծառայության պայմանների վերաբերյալ: Միջազգային փորձը ևս ցույց է տալիս, որ նման միավորումները կարող են լինել կամուրջ ՊՆ-ի և զինծառայողների միջև:

Հետևաբար առաջարկվում է՝

- ✓ ***օրենսդրական փոփոխություններով վերացնել զինծառայողների համար արհեստակցական կազմակերպությանը մասնակցելու (անդամակցելու) արգելքը,***
- ✓ ***նախատեսել և ամրապնդել զինծառայողների արհեստակցական միություններ ստեղծելու կառուցակարգերը:***

537 Տե՛ս Սահմանադրական դատարանի 2023 թվականի ապրիլի 11-ի ՍԴՈ-1683 որոշումը:

538 Օրինակ, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի միավորումներ կազմելու իրավունք: Եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի այլոց հետ միավորվելու ազատության իրավունք՝ ներառյալ իր շահերի պաշտպանության համար արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը:

ԳԼՈՒԽ 6. ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

1. Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես կարգապահական վարույթի մասնակիցների բողոքներ քննող անկախ մեխանիզմ

ՀՀ Սահմանադրության համաձայն՝ զինված ուժերը քաղաքացիական վերահսկողության ներքո են: Սա ենթադրում է, որ երկրում, ի թիվս այլնի, պետք է ձևավորված լինեն և անընդհատ կատարելագործվեն այն կառուցակարգերը, որոնք արդյունավետ են դարձնում զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունն ու խթանումը (protection and promotion):

ՀՀ պաշտպանությունը ենթակա է կազմակերպման և իրականացման, ի թիվս այլնի, օրինականության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգման, զինված ուժերի գործունեության նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության սկզբունքների հիման վրա: Դրանով է պայմանավորված այն մոտեցումը, որ ժողովրդավարական ցանկացած երկիր իր անվտանգությունն ապահովելու հիմնարար գործոններից պետք է համարի մարդու իրավունքների և ազատությունների հուսալի պաշտպանությունը՝ մշտապես կատարելագործելով պաշտպանական ներպետական մեխանիզմները: Եվ դա ունի սկզբունքային նշանակություն, քանի որ անվտանգությունը չի հակադրվում մարդու իրավունքներին և ժողովրդավարությանը: **Ավելին, անվտանգությունը և մարդու իրավունքներն ու ժողովրդավարությունը համարժեք երևույթներ ու միմյանց լրացնող արժեքներ են:**

ԵԱՀԿ շրջանակներում 1994 թվականի դեկտեմբերի 3-ին ընդունված «Անվտանգության ռազմաքաղաքական ասպեկտների վերաբերյալ վարքագծի կանոններով» ամրագրվել է, որ ԶՈՒ նկատմամբ ժողովրդավարական (քաղաքացիական) վերահսկողությունը կայունության և անվտանգության անբաժանելի մասն է: Նաև ընդգծվել է, որ քաղաքացիական հասարակությանը ԶՈՒ ինտեգրումը ոչ այլ ինչ է, քան ժողովրդավարության կարևորագույն դրսևորում[539]:

Վարքագծի այդ կանոններն ամրագրում են հիմնական սկզբունքներ[540], որոնցում ընդգծված է *«համազգեստով քաղաքացի»* գաղափարը: Այս գաղափարի կամ հայեցակարգի էությունն այն է, որ յուրաքանչյուր պետությունում միջազգային իրավական նորմերի լույսի ներքո պետք է ապահովվի զինծառայողների՝ մյուս քաղաքացիների հետ հավասար և նույն իրավունքներն ունենալու հնարավորությունը: Այն մշտապես զուգակցվում է ԶՈՒ նկատմամբ *քաղաքացիական վերահսկողության* սկզբունքի հետ, իսկ վերջինիս ամրապնդման և երաշխավորման գործում իր յուրահատուկ դերն ունեն Մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունները:

ԶՈՒ անդամների իրավունքների մասին ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի համաձայն՝
Զինծառայողներն իրենց իրավունքները պաշտպանելու համար պետք է ունենան անկախ մարմիններին բողոք ներկայացնելու հնարավորություն:

Չնայած զինված ուժերում գանգատարկման ընթացակարգերի գոյությանը՝ աշխարհի տարբեր երկրներ ունեն օմբուդսմանի ինստիտուտ, որի նպատակն է քննության առնել

[539] Տե՛ս Անվտանգության ռազմաքաղաքական ասպեկտների վերաբերյալ վարքագծի կանոններ, կետ 20, հասանելի է http://www.osce.org/fsc/41355 հղումով:

[540] Այս մասին նաև՝ 2017 թվականի ընթացքում ՀՀ ՄԻՊ գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջ 266:

գանգատները՝ զինված ուժերում իրավունքներ խախտող վարքագծի դրսևորումների, զինվորական քաղաքականության բացերի, ինչպես նաև զինված ուժերի համակարգային հիմնախնդիրների մասին: Այս գանգատները և բացերը քննության առնելուց հետո օմբուդսմանը մշակում է իրավիճակը շտկող գործողությունների վերաբերյալ հանձնարարականներ[541]:

Որպես զինված ուժերի նկատմամբ արտաքին վերահսկողություն իրականացնող մարմին՝ առանցքային է օմբուդսմանի ինստիտուտի դերը, որն, ի թիվս այլ գործառույթների, օժանդակում է զինված ուժերում իրավունքի գերակայության պահպանմանը, նպաստում զինված ուժերի կառույցների թափանցիկությանն ու պատասխանատվությանը, ուշադրություն է հրավիրում զինվորական պրակտիկայում առկա մարդու իրավունքներին առնչվող այն հիմնախնդիրների վրա, որոնք ենթակա են կարգավորող միջամտության:

Պաշտպանին հասցեագրված՝ զինված ուժերում կարգապահությանն առնչվող քաղաքացիների բողոքների, ստացված ահազանգերի, զինվորական հաստատություններ կատարված մշտադիտարկման այցերի, Պաշտպանին առընթեր փորձագիտական խորհրդի վերլուծությունների, ինչպես նաև ՀԼՄ հրապարակումների (այդ թվում՝ մահացության և ինքնավնասման դեպքերի, զորամասը ինքնակամ թողնելու, բռնություն գործադրելու և այլն), իրավապաշտպան կազմակերպություններից ստացված տեղեկությունների, պետական մարմիններից ստացված պարզաբանումների համակարգային վերլուծությունը, կատարված մասնագիտական բազմակողմանի ուսումնասիրությունները ևս մեկ անգամ փաստում են, որ բանակում կարգապահության ամրապնդման անհրաժեշտությունն առաջնային խնդիր է, ինչն ուղղակի ազդեցություն ունի նաև մարդու իրավունքների պաշտպանության համակարգի վրա:

Պաշտպանի աշխատանքի հիմնական ուղղություններն են զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության վիճակի, ոլորտում առկա խնդիրների, այդ թվում՝ գործնական և օրենսդրական թերությունների հետ կապված հարցերը: Դրանք վեր են հանվում ստացված բողոքների, զինվորական հաստատություններ այցերի, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա:

Ոլորտի օրենսդրության կատարելագործման նպատակով Պաշտպանը զինված ուժերումմ մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ներկայացնում է առաջարկներ: Դրա հետ մեկտեղ, զինծառայողների (նրանց ընտանիքների) իրավունքներին վերաբերելի հարցերով իրավակարգավորումներ ընդունելու և փոփոխելու առնչությամբ Պաշտպանը համապատասխան առաջարկություններ է ներկայացնում իրավական ակտն ընդունող մարմին: 2023 թվականի ընթացքում Պաշտպանը զորակոչիկների, զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանությանն ու պատշաճ իրացմանը միտված բազմաթիվ կարծիքներ ու առաջարկություններ է ներկայացրել. օրինակ, առողջական խնդիրների հետազոտությունների ու փորձաքննությունների, զինծառայողներին ամսական դրամական հատուցում վճարելու և վարձավճարների փոխհատուցում ստանալու, զորակոչի շրջանակում անձանց իրավունքների, գտնվելու վայրն անհայտ զինծառայողի ծնողներին տուժող ճանաչելու հարցերի վերաբերյալ և այլն:

[541] ԵԱՀԿ ձեռնարկ՝ ՀՈ անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին, 2008 թվական, էջ 321: Հասանելի է https://www.osce.org/files/f/documents/6/7/88572.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Այս առումով կարևոր է արձանագրել, որ Պաշտպանի ինչպես վերը նշված, այնպես էլ բազմաթիվ այլ առաջարկներ արդեն իսկ իրացվել են: Միաժամանակ, ընդունվել են զինված ուժերում կարգապահության ամրապնդմանը միտված՝ Պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 991-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Պաշտպանի առաջարկները: Հրամանով նախատեսվել է, որ զինծառայողների կողմից իրավախախտում կատարելու մասին Մարդու իրավունքների պաշտպանի գրավոր հաղորդումը ծառայողական քննության առիթ է, միաժամանակ սահմանվել են ծառայողական քննությունը դադարեցնելու, ծառայողական քննությունը կասեցնելու և վերսկսելու հիմքերը և ընթացակարգը:

Պաշտպանն անհրաժեշտության դեպքում Սահմանադրական դատարան է ներկայացնում դիմումներ և հատուկ դիրքորոշումներ, մշակում է Հայաստանի դեմ ՄԻԵԴ ներկայացված գանգատներով որպես երրորդ կողմ ներգրավման, ՄԻԵԴ վճիռների կատարման փուլում ԵԽ Նախարարների կոմիտե ներկայացման համար հատուկ դիրքորոշումներ և այլն: Այս կապակցությամբ պետք է նշել, որ «Մուրադյանն ընդդեմ Հայաստանի» ՄԻԵԴ վճռի կատարման հետ կապված Պաշտպանը ԵԽ Նախարարների կոմիտե է ներկայացրել զինվորական կարգապահության բարձրացմանը և ԶՈՒ նկատմամբ քաղաքացիական վերահսկողության բարձրացմանը միտված հատուկ դիրքորոշում: 2023 թվականի հուլիսին Ստրասբուրգում կայացած ԵԽ Մարդու իրավունքների հարցերով միջկառավարական հանձնաժողովի կազմակերպած միջազգային աշխատաժողովի շրջանակներում ևս մեկ անգամ ընդգծվել է Հայաստանի ՄԻՊ-ի և ԵԽ-ի միջև ձևավորված բարձր մակարդակի համագործակցությունը և արձանագրված կոնկրետ արդյունքները, այդ թվում՝ վերը նշված վճռի կատարման փուլի շրջանակներում հետագա դիրքորոշումներ ներկայացնելու կարևորությունը[542]:

2023 թվականի ընթացքում ՊՆ տարբեր զորամասեր, Ռազմական ոստիկանություն, Կենտրոնական հավաքակայան կատարած մշտադիտարկման այցերի ընթացքում Պաշտպանը մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերի համատեքստում հատուկ ուշադրություն է դարձրել կարգապահության հետ կապված հարցերին: Զորամասերի հրամանատարությունը Պաշտպանին ներկայացրել է զինծառայողների և սպայական անձնակազմի ծառայության պայմանները, առկա խնդիրները, առանձնազրույցներ են տեղի ունեցել ժամկետային ու պայմանագրային զինծառայողների, այդ թվում՝ զորամասերի տարբեր մասնագետների հետ (սպա-հոգեբան, սպա-իրավաբան և այլն)[543]: Զորամասեր այցերի ընթացքում ուշադրության կենտրոնում են գտնվել նաև զինծառայողների նկատմամբ նշանակված ծառայողական քննությունների հետ կապված հարցերը: Ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել է, որ ընդհանուր առմամբ, ծառայողական քննություններն անցկացվում են Պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 991-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Նյութերի ուսումնասիրությամբ պարզվել է, սակայն, որ որոշ դեպքերում ծառայողական քննությունների եզրակացություններում, ինչպես նաև տույժ տալու մասին հրամաններում նկարագրվել են կատարված իրավախախտումները, սակայն հստակ չի նշվել, թե ԶՈՒ կարգապահական կանոնագրքի ո՞ր հոդվածով է նախատեսված այդ խախտումը: Տույժ տալու հրամաններում չեն նշվել, թե հրամանատարը Կարգապահական կանոնագրքի ո՞ր հոդվածով է ղեկավարվում տույժը նշանակելիս:

[542] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2624 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[543] Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2629 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Այսպիսի պրակտիկան խնդրահարույց է ինչպես որոշակիության, այնպես էլ զինծառայողի նկատմամբ կիրառված տույժը հետագայում բողոքարկելու հնարավորությունն ապահովելու տեսանկյունից:

Բանակում կարգապահության ամրապնդման կարևորությունը՝ որպես առանձին թեմա, քննարկման առարկա է դարձել Պաշտպանին առընթեր ԶՈՒ-ում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով փորձագիտական խորհրդի 2023 թվականի հոկտեմբերի 13-ի նիստում, որին մասնակցել են ինչպես պետական իրավասու մարմինների, այնպես էլ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, փաստաբաններ[544]: ԶՈՒ-ում իրավունքի գերակայությամբ երաշխավորված կարգապահության ապահովման հարցերը շարունակում են գտնվել Պաշտպանի հատուկ ուշադրության ներքո:

2. Իրավունքի գերակայության վրա հիմնված կարգապահությունը՝ որպես զինված ուժերում մարդու իրավունքների երաշխիք

Զինված ուժերում մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը և իրավունքի գերակայությամբ երաշխավորված կարգապահությունն է զարգացնում ու առավել ամուր դարձնում անվտանգությունը: Հենց այս ուղենիշն ունենալով է 2023 թվականի ընթացքում Պաշտպանը դիտարկել բանակում մարդու իրավունքներին վերաբերելի հարցերը: Անհերքելի է, որ բանակում կարգապահության անընդհատ ամրապնդման և իրավախախտումների կանխարգելման համար անհրաժեշտ պայման է զինծառայողի մոտ իրավունքի նկատմամբ հարգանքի, իրավունքի գերակայության արժևորման, նշված արժեքներով հավասարապես պաշտպանված և կաշկանդված լինելու, սեփական իրավունքների նկատմամբ հարգանք պահանջելու և միևնույն ժամանակ այլ անձանց իրավունքների նկատմամբ անվերապահ հարգանք դրսևորելու հատկանիշների ձևավորումը:

Այս ոլորտում Պաշտպանի աշխատանքի հիմնական նպատակն է վեր հանել բանակում կարգապահության հետ կապված խնդիրները, տալ կոնկրետ գնահատականներ և դրանց լուծմանն ուղղված թիրախային առաջարկներով հասնել Հայաստանի զինված ուժերում իրավունքի գերակայության վրա հիմնված կարգապահության ամրապնդմանը:

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 17-րդ կետը սահմանում է, որ պետությունն իրավասու է կազմակերպել զինվորական կարգապահության սեփական համակարգը և այդ հարցում ունի հայեցողության որոշակի շրջանակ: ՄԻԵԴ-ը նույնպես նշել է, որ յուրաքանչյուր պետություն իրավասու է կազմակերպելու զինվորական կարգապահության սեփական համակարգը և այս հարցում որոշակի հայեցողության շրջանակ ունի, քանի որ տարբեր պետությունների համակարգեր տարբեր են[545]:

ՀՀ ԶՈՒ կարգապահական կանոնագրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ զինվորական կարգապահությունը յուրաքանչյուր զինծառայողի կողմից ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով ու ԶՈՒ-ում գործող այլ կանոնագրքերով, ինչպես նաև հրամանատարների (պետերի)՝ իրենց լիազորությունների շրջանակներում տված

[544] Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2733 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[545] Տե՛ս Էնգելը և այլոք ընդդեմ Նիդերլանդների (ENGEL AND OTHERS v. NETHERLANDS) գործով ՄԻԵԴ 1976 թվականի հունիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 5100/71, կետ 57-59:

հրամաններով սահմանված պարտականությունների և կարգուկանոնի խստիվ ու ճշգրիտ պահպանումն է: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ զինվորական կարգապահությունը հիմնվում է օրինականության, մարդու իրավունքների և ազատությունների հարգման, հրապարակայնության, խրախուսման ու կարգապահական պատասխանատվության անխուսափելիության և անհատականացման, զինծառայողների զինվորական, իրավական ու բարոյական դաստիարակության սկզբունքների վրա:

2023 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքները, հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների հրապարակումները, զորամասեր մշտադիտարկման այցերը ցույց են տալիս, որ ԶՈՒ-ում կարգապահության ամրապնդման անհրաժեշտությունը շարունակում է մնալ կարևորագույն խնդիր: Այս հարցը՝ որպես առանձին թեմա, քննարկման առարկա է դարձել Պաշտպանին առընթեր Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով փորձագիտական խորհրդի 2023 թվականի հոկտեմբերի 13-ի նիստում[546]:

Պաշտպանին հասցեագրված զինվորական կարգապահությանը վերաբերող բազմաթիվ բողոքներով (այդ թվում՝ մահացության և ինքնավնասման դեպքերի, բռնություն գործադրելու և այլն) պաշտոնական պարզաբանումներ են պահանջվել իրավասու պետական մարմիններից՝ Պաշտպանության նախարարությունից, Դատախազությունից, Քննչական կոմիտեից: Զինված ուժերում կարգապահական խախտումները, որոնք կարող են հանգեցնել նաև բռնության ու մահացության դեպքերի, անթույլատրելի են և խիստ մտահոգիչ: Այս առումով **Պաշտպանն ընդգծել է, որ չափազանց կարևոր է իրավասու պետական մարմինների կողմից նման գործերով արդյունավետ քննության իրականացումը, ինչպես նաև համանման դեպքերի կանխարգելմանն ուղղված անհետաձգելի միջոցառումների ձեռնարկումն ու այդ նպատակով ամբողջական և պատշաճ կառուցակարգերի գործարկումը**[547]:

Պաշտպանի հարցադրումներին ի պատասխան՝ Քննչական կոմիտեն տեղեկացրել է, որ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների կատարմանը նպաստող պատճառների վերհանման արդյունքում իրավասու մարմիններին ներկայացվել է 123 միջնորդագիր՝ թույլ տրված մի շարք խախտումներ վերացնելու և հետագայում նմանատիպ դեպքերը բացառելու համար:

Հարկ է նկատել, որ տարբեր պետական մարմինների հետ համատեղ քննարկումների ընթացքում Քննչական կոմիտեի ներկայացուցիչները մտահոգություն են հայտնել առ այն, որ քննչական մարմնի կողմից զորամասերի հրամանատարներին ներկայացված միջնորդագրերի կապակցությամբ պատասխաններ չեն ստանում, միջնորդագրերի քննարկման մասին քննչական մարմինները չեն տեղեկացվում, ուստի ներկայացված միջնորդագրերի արդյունավետության մասին դժվար է խոսել:

Պաշտպանը կարևոր է համարում, որպեսզի ԶՈՒ-ում իրավախախտումների կատարմանը նպաստող պատճառների վերհանման արդյունքում ներկայացված միջնորդագրերը, որոնք, ի թիվս այլնի, նպատակ ունեն բացառելու ԶՈՒ-ում ոչ իրավաչափ երևույթները և պաշտպանելու զինծառայողների իրավունքները, պետք է անխտիր բոլոր դեպքերում դարձվեն մանրամասն քննարկման առարկա, ընդ որում՝ բոլոր իրավասու գերատեսչությունների ներգրավմամբ:

[546] Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2733 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[547] Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2836 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Պաշտպանի մեկ այլ հարցադրմանը, թե ինչ հետազոտություններ և ուսումնասիրություններ են կատարվել զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների կատարմանը նպաստող պատճառների և պայմանների պարզման ուղղությամբ, ի՞նչ արդյունք են տվել և ի՞նչ միջոցներ են ձեռնարկվել բանակում հանցավորության վիճակը բարելավելու ուղղությամբ՝ Քննչական կոմիտեն տեղեկացրել է, որ կայազորային քննչական բաժինների քննիչների կողմից սպասարկվող զորամասերում հանցավորության վիճակի առանձնահատկությունների և վարույթում քննված քրեական վարույթներով հանցագործությունը ծնող պատճառների և պայմանների, ինչպես նաև զորամասի զինվորական կարգապահության և իրավակարգի ամրապնդման, իրավիճակի գնահատման, արատավոր երևույթների, իրավախախտումների ու պատահարների կանխարգելմանն ուղղված անցկացվում են դասախոսություններ:

Դատախազության տեղեկացմամբ՝ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների կատարմանը նպաստող պատճառների վերհանման արդյունքում իրավասու մարմիններին ներկայացվել է 87 միջնորդագիր, որոնցով, ի թիվս այլնի, միջնորդվել են բացառել զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ կամ շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերի կամ առարկաների հետ վարվելու կանոնների ձևական, ոչ պատշաճ հրահանգավորումների դեպքերը, ուշադրություն դարձնել մարտական հերթապահության ժամանակ զենքի կրման և օգտագործման և ծառայության ընթացքում հատուկ պահպանման կանոններին, զինծառայողներին պարզաբանել թմրամիջոցների գործածման վատ հետևանքների և քրեական պատասխանատվության ենթարկվելու մասին, գործուն միջոցներ ձեռնարկել զինծառայողների փոխհարաբերություններն ամրապնդելու համար, վեր հանել «կեղծ հեղինակություն» ունեցող զինծառայողներին և նրանց պահել մշտական հսկողության տակ: Բացի այդ, զինծառայողների իրավական գիտակցությունը բարձրացնելու և բանակում հանցավորության վիճակը բարելավելու ուղղությամբ կայազորների զինվորական դատախազությունների դատախազների կողմից պարբերաբար զորամասերում զինծառայողների հետ անցկացվել են զրույց-զեկույցներ և դասընթացներ:

Պաշտպանության նախարարությունը ևս ներկայացրել է պարզաբանումներ բանակում կարգապահության ամրապնդման ուղղությամբ կատարված աշխատանքների մասին: Նախարարության տեղեկացմամբ՝ 2023 թվականի ընթացքում զինված ուժերում արձանագրված կարգապահական խախտումների կապակցությամբ իրականացվել են ծառայողական քննություններ, վեր են հանվել դեպքերի առաջացման պատճառահետևանքային կապերը, ձեռնարկվել են գործնական քայլեր դրանց կրկնությունը բացառելու համար, մեղավոր անձինք ենթարկվել են պատասխանատվություն: Դեպքերը կանխարգելելու նպատակով զինծառայողների շրջանում իրականացվել են իրավադաստիարակչական աշխատանքներ, իրականացվել են անհատական և խմբային աշխատանքներ՝ զինծառայողների միջև հանդուրժողականություն ու ընկերասիրություն սերմանելու համար:

Ռազմական ոստիկանության կողմից զորամասերի հրամանատարության հետ համատեղ իրականացվում են մի շարք միջոցառումներ, անակնկալ ստուգայցեր, որի ընթացքում ստուգվել են օրվա կարգացուցակով նախատեսված միջոցառումների ընթացքը, վեր են հանվել զորամասերում հակահիրավական և բացասական վարքագիծ դրսևորելու հակում ունեցող զինծառայողները, որոնց հետ անհատական անցկացվել են պրոֆիլակտիկ դաստիարակչական բնույթի աշխատանքներ: Բացի այդ, խաղաղ

պայմաններում մահացության դեպքերի կրճատման նպատակով ժամկետային պարտադիր զինծառայողները տարին երկու անգամ, իսկ պայմանագրային զինծառայողները՝ տարին մեկ անգամ, ենթարկվել են պլանային բուժզննման, առողջական խնդիրներ ունեցող զինծառայողները վերցվել են բժշկական հսկողության:

Պաշտպանը ողջունելի է համարում իրավասու մարմինների կողմից խնդիրների հաղթահարման ուղղությամբ քայլերի ձեռնարկումը: Միևնույն ժամանակ, ինչպես ցույց են տալիս մի շարք զորամասերում մարդու իրավունքներին առնչվող խնդրահարույց իրավիճակները, որոնք հաճախ արդյունք են կարգապահության հետ կապված տարաբնույթ խնդիրների, Պաշտպանին հասցեագրվող բողոքները, և այդ ամենի հաշվառմամբ՝ Պաշտպանի աշխատակազմի ուսումնասիրությունները՝ կատարված աշխատանքները դեռևս բավարար չեն զինված ուժերում այնպիսի կարգապահություն ունենալու համար, որը կերաշխավորի մարդու իրավունքների պաշտաճ պաշտպանությունն ու խթանումը: Հարցի կապակցությամբ անհրաժեշտ է մշակել և գործադրել նոր կառուցակարգեր:

Պաշտպանի աշխատակազմի ուսումնասիրությունների արդյունքում առանձնացվել են զինված ուժերում կարգապահությանը վնասող կամ կարգապահական խախտումների նախադրյալներ հանդիսացող մի քանի խումբ խնդիրներ. զինծառայողների շրջանում իրավագիտակցության ոչ բավարար մակարդակ, կադրային թերի համալրվածություն, մինչև զինված ուժեր ներգրավելն անձի մոտ արմատացած և տարածում գտած վարքագծային դրսևորումներ, միմյանց նկատմամբ անհանդուրժողականություն, զորամաս-ռազմական ոստիկանություն ոչ բավարար համագործակցություն, իրավունքահեն գաղափարների վրա կառուցված զինված ուժերի առնչությամբ պատկերացումների բացակայություն և այլն:

Այսպես, կարգապահությանը վնասող գործոն է առաջին հերթին **զինծառայողների շրջանում իրավագիտակցության ոչ բավարար մակարդակը:** Անհերքելի է, որ զինծառայողների շրջանում ցածր իրավագիտակցությունը կամ իրավական իրազեկվածության պակասն իր հերթին կարող է լինել ոչ կանոնադրային հարաբերությունների հաստատման պատճառներից մեկը: Բազմիցս է նշվել, որ բանակում իրավագիտակցության բարձրացման գործում առանցքային դեր ունի հրամանատարի սոցիալ-իրավական աշխատանքների գծով օգնական-սպան (սպա-իրավաբանը)[548]: Սպա-իրավաբանը պետք է առավել նախաձեռնող (պրոակտիվ) լինի զորամասում իրավական ուսուցման ու դաստիարակության, իրավական մշակույթի ձևավորման, օրինականության պահպանման հարցերում: Զորամասերում միայն «Իրավական անկյունների» ֆորմալ առկայությունը չեն կարող լուծել իրավագիտակցության բարձրացման խնդիրը: Այս առումով անհրաժեշտ է համակարգային մոտեցում, այդ թվում՝ սպա-իրավաբանի ինստիտուտի ուժեղացման տեսքով:

Զորամասեր կատարված այցերը, զինծառայողների հետ առանձնազրույցները ցույց են տալիս, որ զինծառայողների մեծ մասը (խոսքը գնում է պարտադիր ժամկետային

[548] ՀՀ ԶՈՒ Ներքին ծառայության կանոնագրքի 103-րդ և 104-րդ հոդվածները սահմանում են, որ գնդի հրամանատարի՝ սոցիալ-իրավական աշխատանքի գծով օգնական-սպան պատասխանատու է գնդում իրավական աշխատանքի կազմակերպման համար: Նա պարտավոր է զորամասի մյուս ծառայությունների հետ համատեղ մշակել և իրականացնել զորամասում օրինականության պահպանման ապահովմանը ուղղված միջոցառումներ, անձնակազմին տեղեկատվություն տալ գործող օրենսդրության մասին, զինծառայողներին ուսուցանել ծառայության իրավական հիմունքները, միջոցառումներ անցկացնել անձնակազմի մեջ իրավական կուլտուրայի ձևավորման, նրանց կողմից օրենքների, զինվորական երդման, զինվորական կանոնադրությունների և ծառայությունը կարգավորող նորմատիվ-իրավական ակտերի պահպանման ուղղությամբ, մասնակցել զորամասի անձնակազմի իրավական դաստիարակման կազմակերպմանը, զորամասի հրամանատարի ցուցումով անցկացնել ծառայողական քննություն և այլն:

զինծառայողների մասին) տեղյակ չէ, որ կարգապահական տույժերը տրվում են գրավոր հրամանով, և իրենք ունեն դրանց հետ ծանոթանալու ու բողոքարկելու իրավունք: Ավելին, կարգապահական տույժերի բողոքարկման պրակտիկան կայացած չէ և գրեթե չի գործում[549]: ՊՆ-ի տրամադրած տեղեկությունների համաձայն՝ ամբողջ 2023 թվականի ընթացքում ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբում ստացվել է կարգապահական տույժի բողոքարկման վերաբերյալ 3 բողոք, որոնց ուսումնասիրման արդյունքում 1-ը բավարարվել է, իսկ 2-ը՝ մերժվել են (կիրառված տույժերը մնացել են անփոփոխ): Գրեթե նույն պատկերն է եղել նաև 2021 և 2022 թվականին՝ համապատասխանաբար 3 բողոք և 2 բողոք:

Զորամասեր այցերի ընթացքում ծառայողական քննություններն անցկացնող սպա-իրավաբաններին մշտապես առաջարկվում է զինծառայողին նրա իրավունքները գրավոր իրազեկելու հետ մեկտեղ, բանավոր ևս պարզաբանել իրավունքները, այդ թվում՝ տեղեկացնել տույժը բողոքարկելու իրավունքի մասին:

Զորամասերում շարունակում է արձանագրվել այն մտահոգիչ պրակտիկան, երբ զինծառայողների կողմից զինվորական գրքույկը կորցնելու դեպքերի հանգամանքները պարզելու նպատակով իրականացվում են ծառայողական քննություններ, որոնց արդյունքում զինծառայողներին տրվում են կարգապահական տույժեր: ՊՆ-ից ստացված տեղեկությունների համաձայն՝ 2023 թվականի ընթացքում զինվորական գրքույկը կորցնելու կամ վնասելու հանգամանքները պարզելու նպատակով անցկացվել է 256 ծառայողական քննություն: Հատկանշական է, որ բոլոր քննությունների արդյունքում զինծառայողների նկատմամբ կիրառվել է «նկատողություն» և «խիստ նկատողություն» կարգապահական տույժերը: Նման պրակտիկան խնդրահարույց է՝ հատկապես, որ Կարգապահական կանոնագրքով զինվորական փաստաթղթերը կորցնելու կամ վնասելու համար տույժ կիրառելու հնարավորություն նախատեսված չէ[550]: Այս համատեքստում մտահոգիչ է այն, որ որոշ զինծառայողներ հայտնել են Կարգապահական կանոնագրքով չնախատեսված նաև այլ պատասխանատվության միջոցներ կիրառելու մասին տեղեկություններ (օրինակ՝ մեկ զինծառայողի կատարած իրավախախտման համար բազմաթիվ զինծառայողներին պատժելու նպատակով՝ վազք, կքանիստ, ձգում և այլն): *Պաշտպանն արձանագրում է, որ նշված պրակտիկան հակասում է հարցին առնչվող իրավական չափանիշներին և անհրաժեշտ է բացառել օրենքով չնախատեսված հիմքով և կարգով տույժ կիրառելու ցանկացած դեպք:*

Մարդու իրավունքներին առնչվող խնդիրների հիմքում ընկած է նաև զինված ուժերում **կադրային թերի համալրվածությունը**: Ընդ որում, այս մասին մտահոգություններ են ներկայացվել 2023 թվականին Պաշտպանի կողմից զորամասեր կատարած այցերի ընթացքում: Որոշ դեպքերում արձանագրվել է, որ մի շարք հաստիքներ՝ հատկապես միջին սպայական, թափուր են, ինչը բացասաբար է անդրադառնում ծառայության պատշաճ կազմակերպման ու կարգապահության պահպանման վրա: Թափուր հաստիքների պատճառով սպաների ծանրաբեռնվածությունը մեծանում է, կոնկրետ պաշտոն զբաղեցնողը ստիպված է լինում կատարել նաև մյուսի՝ թափուր պաշտոնի համար

[549] ՊՆ-ի տրամադրած տեղեկությունների համաձայն՝ ամբողջ 2023թ. ընթացքում ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբում ստացվել է կարգապահական տույժի բողոքարկման վերաբերյալ 3 բողոք, որոնց ուսումնասիրման արդյունքում 1-ը բավարարվել է, իսկ 2-ը՝ մերժվել են (կիրառված տույժերը մնացել են անփոփոխ):

[550] Ճիշտ է, Պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 991-Ն հրամանով որպես ծառայողական քննության նշանակման առիթ նախատեսված է զինծառայողի ծառայողական վկայականի (զինվորական գրքույկի), ինչպես նաև հատուկ պահպանության ենթակա այլ փաստաթղթի(երի) կորցնելը կամ փչացնելը, սակայն հարկ է նկատի ունենալ, որ ծառայողական քննություն անցկացնելու այդպիսի առիթը որևէ պարագայում չպետք է կարգապահական կանոնագրքով չնախատեսված տույժ կիրառելու հիմք հանդիսանա (դա չի ունենա լեգիտիմ նպատակին (legitimate aim) բավարարող հիմնավորվածություն):

նախատեսված պարտականությունները, ինչն էլ իր հերթին հանգեցնում է պարտականությունների պատշաճ կատարման օբյեկտիվ անհնարինության, որն էլ իր հերթին հանգեցնում է կարգապահական և մարդու իրավունքներին վերաբերելի տարբեր խնդիրների:

Զինված ուժերում մարդու իրավունքների երաշխավորման տեսանկյունից մեծ է սպա-հոգեբանի[551] *դերը*: Վերջին տարիների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մի շարք զորամասերում թափուր է սպա-հոգեբանի հաստիքը, իսկ որոշ զորամասերում էլ ընդհանրապես բացակայել է նման հաստիք:

Այս կապակցությամբ կարևոր է արձանագրել, որ Պաշտպանության նախարարության տեղեկացմամբ՝ զինծառայողներին հոգեբանական աջակցության տրամադրման պայմանները բարելավելու ուղղությամբ ՀՈՒ ընտրված զորամասերում 2023 թվականի ընթացքում ավելացվել են սպա-հոգեբանների հաստիքներ, ինչպես նաև մասնագիտական գույքով կահավորվել են ընտրված զորամասերի հոգեբանական օգնության կետերը:

Պաշտպանը ողջունելի է համարում այս ուղղությամբ իրականացված աշխատանքները՝ միևնույն ժամանակ արձանագրելով, որ դրանք պետք է կրեն շարունակական բնույթ և ունենան պատշաճ գործնական իրացում: Բացառիկ կարևորություն ունի ոչ թե հաստիքի ֆորմալ համալրումը, այլ այն, որ ընտրված կադրերը լինեն պրոֆեսիոնալ և բարեվարք: Որակյալ կադրերով համալրվածությունը կարող է էական նշանակություն ունենալ ինքնասպանություն և ինքնավնասում կատարելու հակում ունեցող զինծառայողներին բացահայտելու և վերջիններիս հետ թիրախային աշխատանքի արդյունքում հնարավոր դեպքերը կանխելու տեսանկյունից:

Սպա-հոգեբանի դերը մեծ է նաև իրավախախտումներից տուժած անձանց հոգեբանական աջակցություն ցուցաբերելու հարցում:

ԵԱՀԿ մասնակից մի շարք պետություններում, օրինակ՝ Վրաստանում, Ավստրիայում, Ուկրաինայում, Նորվեգիայում և Ֆրանսիայում, սպայական անձնակազմին սովորեցնում են, թե ինչպես վարվել կարգապահական խախտումների դրսևորումների դեպքում, ինչպես հայտնաբերել և կանխել կարգուկանոնը խախտող երևույթները: Իռլանդիայի պաշտպանության ուժերում հավաքագրված բոլոր նորակոչիկները ուսուցում են ստանում այն մասին, թե ինչ է ոչ պատշաճ վարքագծի դրսևորումը, և որ ավելի կարևոր է՝ ինչպես կարելի է փորձել վերականգնել խախտված իրավունքը և գանգատ ներկայացնել որևէ մեկի դեմ, ով ոչ պատշաճ վարքագիծ է դրսևորում իրենց նկատմամբ[552]:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ մարդու իրավունքների պաշտպանության համակարգի վրա բացասաբար են անդրադառնում նաև **մինչև զինված ուժեր ներգրավելն անձի մոտ արմատացած և տարածում գտած վարքագծի դրսևորումները**:

Այս կապակցությամբ Պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ Քննչական կոմիտեն ևս նշել է, որ կարգապահության ամրապնդման համար անհրաժեշտ է բանակում բարձրացնել բարոյահոգեբանական, հանդուրժողականության մթնոլորտները, բացառել քաղաքացիական կյանքում առկա արատավոր բարքերի ներթափանցումը բանակ:

[551] Ներքին ծառայության կանոնագրքի 126.1-րդ հոդվածի համաձայն՝ գնդի սպա-հոգեբանը խաղաղ և պատերազմական ժամանակ պատասխանատու է գնդում հոգեբանական աշխատանքի կազմակերպման, անձնակազմի հոգեբանական վիճակի, զինծառայողների հոգեկան կայունության պահպանմանն ուղղված աշխատանքների համար:

[552] Տե՛ս «ՀՈՒ անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ձեռնարկ», էջ 229:

Պաշտպանի դիտարկմամբ՝ իրավախախտումների կանխարգելման տեսանկյունից կարևոր է անձի վարքի ռիսկերի գնահատումն ու բացահայտված խնդիրների հիման վրա անհատական աշխատանքների պլանավորումն ու իրականացումը: Ընդ որում՝ այս հարցում բացառիկ դերակատարություն ունի միջգերատեսչական պատշաճ համագործակցությունը բոլոր վերաբերելի դերակատարների միջև՝ կրթության, պաշտպանության ոլորտում իրավասու գերատեսչությունների, ոստիկանության և այլն:

Հատկանշական է, որ տվյալ հարցի կապակցությամբ ՊՆը վկայակոչել է «Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի անցկացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 1132-Ն որոշումը և նշել, որ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումները հայտարարված զորակոչի նախապատրաստական փուլում իրավասու պետական մարմիններից և կազմակերպություններից պահանջում են զորակոչիկների վերաբերյալ տվյալներ: Զորակոչվող քաղաքացիների վարքագծի, բնավորության, հակվածության, սոցիալական և հոգեբանական այլ գործոնների վերաբերյալ ուսումնական հաստատություններից և այլ պետական մարմիններից ու կազմակերպություններից ստացված տեղեկատվությունը լրացվում է զորակոչիկի «Հայրենիքի պաշտպանի անհատական գրքույկում» և այդ կարգով փոխանցվում զորամաս:

Չնայած հարցի առնչությամբ նման կարգավորումների առկայությանը՝ գործնական կիրառման տեսանկյունից այն անարդյունավետ է:

2023 թվականի ընթացքում Պաշտպանի կատարած ուսումնասիրությունները, այդ թվում՝ ՊՆ իրավասու ներկայացուցիչներից, մի շարք զորամասերից, զինկոմիսարիատների իրավասու ներկայացուցիչներից, ՊՆ կենտրոնական հավաքակայանից ստացված տեղեկությունները վկայում են, որ դպրոցները, որպես կանոն, զորակոչի ենթակա քաղաքացիների վերաբերյալ տրամադրում են նախապես մշակված տիպային ձևի դրական բնութագրեր: Ճիշտ է, որոշ զորամասերում սպայակազմը նշել է, որ վերջին տարում բնութագրերը որոշակիորեն փոխվել են և երբեմն չեն լինում տիպային ձևաչափի, սակայն բնութագրերն ամբողջական տեղեկատվություն չեն բովանդակում զորակոչիկի վերաբերյալ, իսկ անձի հոգեբանական բնութագրի մասով դրանք միանշանակ թերի են: Արդյունքում, զորակոչվելուց հետո զորամաս փոխանցվող տեղեկատվությունը սպայակազմին հնարավորություն չի տալիս զինծառայողի հետ տանել թիրախային աշխատանք և կանխել նրա հակահիրավական վարքագիծը: 2023 թվականին զորամասեր այցերի ընթացքում այս մտահոգության մասին հայտնել է նաև զորամասերի հրամանատարությունը՝ միաժամանակ նշելով, որ ծառայության ներգրավելուց որոշ ժամանակ հետո է միայն հնարավոր լինում իրական պատկերացում ունենալ անձի բնութագրի մասին, քանի որ մինչ այդ զինկոմիսարիատից ներկայացված տեղեկատվությունն ամբողջությամբ չի արտացոլում իրական պատկերը:

Վերը նշված հարցի կապակցությամբ Պաշտպանը գրություն է հասցեագրել ՀՀ կառավարություն՝ առաջարկելով իրավասու գերատեսչությունների ներգրավմամբ ուսումնասիրել հարցը և մշակել լուծման համակարգային մեխանիզմներ: Արդյունքում, իրավասու պետական մարմիններին հանձնարարվել է խնդիրների ուսումնասիրմամբ ձեռնարկել համապատասխան միջոցներ:

Իրավախախտումների կանխարգելման գործում կարևոր է նաև **թիրախային խմբերի հետ (քրեական ենթամշակույթով հետաքրքրվող, ինքնավնասման հակում ունեցող և**

այլն) հնարավոր հակահիրավական վարքագիծը բացառելու նպատակով կոնկրետ աշխատանքների իրականացումը:

Զինծառայողների շրջանում իրավունքահեն գաղափարների տարածման և դրական վարքագծի խրախուսման տեսանկյունից կարևոր է նաև բանակում խրախուսանքի կիրառման գործուն և արդյունավետ քաղաքականության իրականացումը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ առաջարկվում է՝

- ✓ ***կատարելագործել և զարգացնել զինծառայողների շրջանում իրավագիտակցության բարձրացմանը միտված կառուցակարգերը (այդ թվում՝ ձեռնարկների, ուղեցույցների, տեղեկատվական թերթիկների տրամադրման, ինչպես նաև պարբերական դասընթացների միջոցով),***
- ✓ ***զորամասերում իրականացնել համապատասխան աշխատանքներ ոչ իրավաչափ վարքագծի, բռնության կանխարգելման ուղղությամբ, կատարելագործել նշված ոլորտում իրավասու մարմինների և նրանց ներկայացուցիչների հմտությունները,***
- ✓ ***բոլոր զորամասերն ապահովել պրոֆեսիոնալ սպա-հոգեբաններով, ամենօրյա ռեժիմով ուշադրություն դարձնել զինծառայողների հոգեբանական վիճակին, սպա-հոգեբանների կարողությունները զարգացնելու նպատակով պարբերաբար իրականացնել վերապատրաստման դասընթացներ,***
- ✓ ***մշակել առավել արդյունավետ կառուցակարգեր ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների և ոստիկանության ծառայողների կողմից զորակոչիկների վերաբերյալ օբյեկտիվ ու ամբողջական տեղեկությունների (բնավորություն, վարքագիծ, հակվածություն, սոցիալական և հոգեբանական մի շարք գործոններ, գիտելիքների աստիճան և այլն) հավաքագրման, դրանք զինկոմիսարիատներին տրամադրելու և հետագայում զորամասեր փոխանցելու ուղղությամբ,***
- ✓ ***թիրախային խմբերի (քրեական ենթամշակույթով հետաքրքրվող, ինքնավնասման հակում ունեցող և այլն) հնարավոր հակահիրավական վարքագիծը կանխելու նպատակով նրանց հետ իրականացնել համապատասխան աշխատանքներ,***
- ✓ ***բացառել համապատասխան իրավակարգավորումներով չնախատեսված պատասխանատվության միջոցներ կիրառելու դեպքերը,***
- ✓ ***հետևողականություն դրսևորել դատախազների և քննիչների կողմից զորամասերի հրամանատարներին ներկայացվող միջնորդագրերի կատարման նկատմամբ,***
- ✓ ***երաշխավորել ՀՈ-ում խրախուսանքի կիրառման գործուն և արդյունավետ քաղաքականության իրականացումը:***

ԳԼՈՒԽ 7. ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԲՈԼՈՐ ՁԵՎԵՐԻ ԱՐԳԵԼՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

1. Զինված ուժերում մահվան և ինքնավնասման դեպքերը և դրանց վերաբերյալ հանրային հաղորդակցությունը

Զինված ուժերում մարդու իրավունքների ապահովման մարտահրավեր են մահվան և ինքնավնասումների դեպքերը: 2023 թվականի ընթացքում Պաշտպանի հատուկ ուշադրության ներքո շարունակել են գտնվել բանակում զինծառայողների կյանքի իրավունքի երաշխավորման ու վատ վերաբերմունքի բոլոր ձևերի բացառման հետ կապված հարցերը: Պաշտպանի աշխատակազմում ակտիվ վարույթներում են գտնվում խաղաղ պայմաններում զինծառայողների մահացության դեպքերով մի շարք դիմում-բողոքներ ու սեփական նախաձեռնությամբ քննարկման որոշումներ: Դեպքերը հիմնականում վերաբերել են ծառայակցի արձակած կրակոցից, դժբախտ պատահարից, զենքի օգտագործման կանոնների խախտումից, հիվանդության, հրդեհի հետևանքով զինծառայողների մահվանը և այլն:

Զինծառայողների մահվան և ինքնավնասումների յուրաքանչյուր դեպքի կապակցությամբ Պաշտպանը պաշտոնական պարզաբանումներ է պահանջում իրավասու պետական մարմիններից: Միաժամանակ, մշտապես պահանջվում է ներկայացնել պարզաբանումներ այն մասին, թե իրավասու մարմիններն ինչ գործուն քայլեր են ձեռնարկում զինծառայողների մահվան և ինքնավնասումների դեպքերի կանխարգելման ուղղությամբ: 2023 թվականի ընթացքում այս հարցի կապակցությամբ Պաշտպանը պարբերաբար հանդես է եկել հրապարակային հայտարարություններով[553], կազմակերպվել են մի շարք կլոր-սեղան քննարկումներ և աշխատաժողովներ, որոնց մասնակցել են նաև պետական մարմինների, քաղհասարակության, փաստաբանների պալատի ներկայացուցիչներ, միջազգային գործընկերներ: Ոչ մարտական պայմաններում մահվան դեպքերը բանակում և դրանց հետ կապված մարդու իրավունքներին առնչվող խնդիրները որպես առանձին թեմա քննարկման առարկա են դարձել Պաշտպանին առընթեր զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով փորձագիտական խորհրդի նիստում[554]: Նշված խնդիրը քննարկվել է ԱԺ Պաշտպանության և անվտանգության հանձնաժողովին կից ստեղծված «Անվտանգության ոլորտի ժողովրդավարական վերահսկողության ազգային հարթակի» ընդհանուր ժողովի շրջանակներում, որտեղ Պաշտպանն, ի թիվս այլնի, կարևորել է նաև զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերելի լուրջ խնդիրների պատշաճ հասցեավորումն ու դրանց հաղթահարման ուղղությամբ հետևողական քայլերի ձեռնարկումը[555]: Զինված ուժերում մարդու իրավունքների, ներառյալ՝ կյանքի իրավունքի պաշտպանությանը վերաբերելի հարցերը առանձին քննարկման առարկա են դարձել Պաշտպանի և քաղաքացիական հասարակության մի շարք կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ[556]: Պաշտպանի ներկայացուցիչները մի շարք այցեր են իրականացրել զինվորական հոսպիտալներ և տեսակցել առողջական խնդիրներ

[553] Հասանելի է https://lratvakan.am/details/64936/am/, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ, http://surl.li/rfqrk հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[554] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2733 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[555] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2754 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[556] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2678 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

ունեցող, վիրավորում ստացած զինծառայողներին[557]: Միաժամանակ, Պաշտպանը բազմիցս է նշել, որ մեկ այլ խնդիր են սահմանային բնակավայրերի անմիջական հարևանությամբ ադրբեջանական զինված ուժերի ագրեսիվ գործողությունները, որոնց պատճառով խախտվում են նաև ՀՀ սահմանային բնակչության անվտանգությունն ապահովող հայ զինծառայողների կյանքի և առողջության պահպանման իրավունքը (2023 թվականի ընթացքում ադրբեջանական կրակոցների հետևանքով զոհվել ու վիրավորումներ են ստացել բազմաթիվ հայ զինծառայողներ)[558]: Պաշտպանը մի շարք այցեր է իրականացրել սահմանային բնակավայրեր՝ Սյունիքի, Գեղարքունիքի, Արարատի մարզեր, տեղում իրականացրել փաստահավաք աշխատանքներ և արդյունքներն ամփոփել արտահերթ զեկույցներում, որոնք ներկայացվել են ինչպես պետական մարմիններին, այնպես էլ միջազգային գործընկերներին[559]: Այս համատեքստում Պաշտպանն իր մանդատի շրջանակներում Ադրբեջանի իրավազորության ներքո հայտնված հայ զինծառայողների իրավունքների պաշտպանության ու երաշխավորման հարցերի առնչությամբ հանդես է եկել հրապարակային հայտարարություններով, խնդիրը բազմիցս ներկայացրել է միջազգային կազմակերպություններին ու դերակատարներին[560]: Նկատի ունենալով խնդրի կարևորությունն ու զգայունությունը մարդու իրավունքների համընդհանուր արժեքների երաշխավորման, ինչպես նաև նշված անձանց և նրանց ընտանիքների իրավունքների ապահովման տեսանկյունից՝ այդ ուղղությամբ աշխատանքները կրում են շարունակական բնույթ:

Սույն գլխի շրջանակներում, իրավասու պետական մարմինների ներկայացրած տեղեկությունների հաշվառմամբ, ուսումնասիրվել է զինված ուժերում խաղաղ պայմաններում զինծառայողների կյանքի իրավունքի պաշտպանության վիճակը:

Այսպես, Պաշտպանության նախարարության տվյալների համաձայն՝ 2023 թվականին արձանագրվել է մահվան ելքով 59 դեպք, որի արդյունքում զոհվել (մահացել) է 83 զինծառայող:

31 զինծառայող զոհվել (մահացել) է մարտական պայմաններում՝ մարտական հերթապահություն իրականացնելիս, որից 19-ը՝ ադրբեջանական զինված ուժերի գործողությունների հետևանքով:

52 զինծառայողի մահվան դեպքերն արձանագրվել են ոչ մարտական պայմաններում:

Ընդհանուր պատկերը հետևյալն է. սպանություն՝ 4, ինքնասպանություն՝ 7, զենքի օգտագործման կանոնների խախտում՝ 2, հիվանդություն՝ 13, ավտովթար՝ 12, դժբախտ պատահար՝ 9, շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերի կանոնների խախտում՝ 15, ինքնասպանության հասցնել՝ 2, ադրբեջանական զինված ուժերի գործողություններ՝ 19:

Ըստ Պաշտպանության նախարարության՝ 2023 թվականի ընթացքում արձանագրվել է ինքնավնասումների 66 դեպք, ինչի հետևանքով 63 զինծառայող ստացել է մարմնական

---

[557] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2772 , https://ombuds.am/am/site/ViewNews/2672 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[558] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2669 , https://ombuds.am/am/site/ViewNews/2521 հղումներով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[559] Տե՛ս «ՀՀ-ի Երասխ բնակավայրի ուղղությամբ 2023 թվականի հունիսից ադրբեջանական ԶՈՒ գնդակոծությունների հետեվանքով մարդու իրավունքների շարունակական խախտումների վերաբերյալ» արտահերթ զեկույցը, հասանելի է https://ombuds.am/images/files/4e73af39ae6617df7437605f57eb01cd.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
Տե՛ս, «Սյունիքի մարզի Տեղ համայնքում և Գեղարքունիքի սահմանամերձ բնակավայրերում փաստահավաք աշխատանքների արդյունքների վերաբերյալ» արտահերթ զեկույցը, հասանելի է https://ombuds.am/images/files/76adf8c4ef52d036fab368d87e0bea55.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[560] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2608 , https://ombuds.am/am/site/ViewNews/2551 , https://ombuds.am/am/site/ViewNews/2569 հղումներով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

վնասվածք: Արձանագրված ինքնավնասումների 66 դեպքերն էլ կապված են եղել զինվորական ծառայության հետ:

Ամփոփելով վերջին տարիներին խաղաղ պայմաններում զինծառայողների մահացության դեպքերի վերաբերյալ իրավասու պետական մարմինների ներկայացրած տվյալները՝ արձանագրում ենք հետևյալ վիճակագրությունը.

2020թ.՝ 54, 2021թ.՝ 58, 2022թ.՝ 64, 2023թ.՝ 83:

Ինքնավնասումների մասով ստացվել է հետևյալ վիճակագրությունը.

2020թ.՝ 65, 2021թ.՝ 77, 2022թ.՝ 108, 2023թ.՝ 66:

Վերջին չորս տարիներին առկա է մահացության դեպքերի քանակական ցուցանիշների աճ: Ինքնավնասումների քանակը 2022 թվականի համեմատությամբ 2023 թվականին նվազել է: Միևնույն ժամանակ, դեպքերի առկայությունն ինքնին Պաշտպանը մտահոգիչ է համարում:

Պաշտպանն ընդգծում է, որ Պաշտպանության նախարարության, Դատախազության և Քննչական կոմիտեի կողմից ներկայացվել են զինծառայողների մահացության և ինքնավնասման դեպքերի պատճառների վերհանման և դրանց վերացման ուղղությամբ կատարված քայլերի առնչությամբ մանրամասն պարզաբանումներ: Պաշտպանը ողջունում է խնդրի հաղթահարման ուղղությամբ իրավասու պետական մարմինների կողմից իրականացվող քայլերը: Միևնույն ժամանակ, ինչպես ցույց է տալիս թվային վիճակագրությունը, կատարված աշխատանքները բավարար չեն եղել զինված ուժերում մահվան և ինքնավնասման դեպքերը կանխելու համար:

Պաշտպանն ընդգծում է, որ հարցի լուծմանն անհրաժեշտ է ցուցաբերել համակարգային մոտեցում՝ այդ առումով կարևորելով բանակում մահվան և ինքնավնասման դեպքերը կանխարգելելու միասնական հայեցակարգի (ծրագիր, քայլերի հերթականություն և այլն) մշակման և իրացման անհրաժեշտությունը:

Զինված ուժերում կյանքի իրավունքի պաշտպանության նպատակով պետությունը պարտավոր է ձեռնարկել զինծառայողների կյանքի իրավունքի պաշտպանությանն ուղղված անհրաժեշտ և բավարար քայլեր, իսկ զինծառայողների մահվան պարագայում իրականացնել դրանց հանգեցրած հանգամանքները պարզելու նպատակով արդյունավետ քննություն (effective investigation):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումները.
• *Ինչպես ազատությունից զրկված անձինք, պարտադիր ժամկետային զինծառայողները նույնպես գտնվում են անմիջականորեն «պետության ձեռքերում», և բանակի հետ կապված ցանկացած իրադարձություն ամբողջությամբ կամ մեծ մասամբ ընկնում է իշխանությունների բացառիկ իրավասության ներքո: Հետևաբար, պետությունը պարտավոր է նաև պատասխանատվություն կրել բանակում տեղի ունեցած ցանկացած վնասվածքի կամ մահվան դեպքի համար*[561]*:*
• *Բոլոր այն դեպքերում, երբ պետական մարմիններն օբյեկտիվ պատճառներով գործի ճշգրիտ հանգամանքները չեն կարող պարզել, պետք է բավարար և համոզիչ կերպով բացատրեն իրադարձությունների հաջորդականությունը և ներկայացնեն դիմումատուի պնդումները հերքող հիմնավոր ապացույցներ*[562]*:*

[561] Տե՛ս Բեքերն ընդդեմ Թուրքիայի (BEKER v. TURKEY) գործով ՄԻԵԴ 2009 թվականի հունիսի 24-ի վճիռը, գանգատ թիվ 27866/03, կետ 41:

[562] Տե՛ս Մարինա Ալեքսեևան ընդդեմ Ռուսաստանի (MARINA ALEKSEYEVA v. RUSSIA) գործով 2014 թվականի մարտի 13-ի վճիռը, գանգատ թիվ 22490/05, 121 և 122 կետեր:

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 7-րդ կետի համաձայն՝ անդամ պետությունները պետք է ստեղծեն անկախ և արդյունավետ կառուցակարգեր զինծառայողների մահվան կամ նրանց կյանքի իրավունքի դեմ կատարված ոտնձգությունների պատշաճ քննության համար: Ավելին՝ զինված ուժերի յուրաքանչյուր անդամի համար պետք է երաշխավորվի արդար դատաքննության իրավունքը:

Կարևոր է ընդգծել, որ միջազգային իրավաբանության ներքո քննությունն արդյունավետ համարելու համար անհրաժեշտ է, որ այն բավարարի հետևյալ չորս միաժամանակյա պահանջները՝ 1) *անկախություն* (independence), 2) *պատշաճություն* (adequacy), 3) *անհապաղ և ողջամիտ ժամկետ* (promptness and reasonable expedition) և 4) *հանրային վերահսկողություն, ներառյալ՝ տուժողի իրավահաջորդի ներգրավվածություն* (public scrutiny and the participation of the next-of-kin):

Պաշտպանն ընդգծում է նաև, որ ՀՈՒ-ում մահվան յուրաքանչյուր դեպքի, դրան առնչվող վարույթի ընթացքի վերաբերյալ իրավասու պետական մարմինները հանրությանը պետք է տրամադրեն պատշաճ տեղեկատվություն, ինչը բացառիկ կարևորություն ունի ՀՈՒ-ում մարդու իրավունքներին վերաբերելի հարցերի առնչությամբ քաղաքացիական վերահսկողության տեսանկյունից:

Հետևաբար, անհրաժեշտ է՝

- ✓ ***մշակել և հետևողականորեն իրացնել խաղաղ պայմաններում մահվան և ինքնավնասման դեպքերը կանխարգելելու միասնական հայեցակարգ,***
- ✓ ***անհրաժեշտ և բավարար քայլեր ձեռնարկել ՀՈՒ-ում մահվան և ինքնավնասման դեպքերը կանխարգելելու, իսկ զինծառայողների մահվան պարագայում դրանց հանգեցրած հանգամանքները պարզելու նպատակով արդյունավետ քննություն իրականացնելու ուղղությամբ:***

2. Զինված ուժերում վատ վերաբերմունքի բոլոր ձևերի արգելքը

Պաշտպանը մտահոգիչ է համարում զինված ուժերում բռնության դեպքերի առկայությունը:

Պետությունը պոզիտիվ պարտականություն ունի կանխելու զինված ուժերում բռնության և վատ վերաբերմունքի ցանկացած դրսևորում, իսկ դրանց առկայության դեպքում՝ իրականացնելու գործերի արդյունավետ քննություն:

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 10-րդ կետի համաձայն՝
Անդամ պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն զինծառայողներին բռնություններից և ոչ պատշաճ վերաբերմունքից կամ պատժից պաշտպանելու համար: Հատուկ ուշադրություն պետք է դարձվի առավել խոցելի կատեգորիաներին, ինչպիսիք են, օրինակ, նորակոչիկները (պարտադիր զինծառայողները):

ՄԻԵԴ իրավաբանության համաձայն՝ պետությունը պարտավոր է ապահովել, որպեսզի անձը զինվորական ծառայությունն անցնի այնպիսի պայմաններում, որոնք համատեղելի են նրա մարդկային արժանապատվությունը հարգելու հետ, իսկ զինվորական վարժանքների ընթացակարգը և մեթոդները չպատճառեն նրան ֆիզիկական տառապանք կամ չանցնեն զինվորական կարգուկանոնի հետ կապված անխուսափելի դժվարությունների չափն ու սահմանը, և որ նման ծառայության պրակտիկ պահանջների

հետ մեկտեղ զինծառայողի առողջությունը և ինքնազգացողությունը համարժեքորեն պաշտպանված լինեն: Պետության առաջնային պարտականությունն է անձին զինվորական ծառայության զորակոչելու դեպքում նվազագույնի հասցնել նրա առողջությանը սպառնացող ռիսկը, որը կարող է առաջանալ ոչ միայն զինվորական գործողությունների և օպերացիաների բնույթից, այլ նաև մարդկային գործոնի պատճառով[563]:

2023 թվականին Պաշտպանը ստացել է բողոքներ զինծառայողների նկատմամբ ենթադրյալ բռնության և վատ վերաբերմունքի այլ դրսևորումների առնչությամբ: Ստացված բողոքների կապակցությամբ Պաշտպանի աշխատակազմում անմիջապես նախաձեռնվել են քննարկման ընթացակարգեր, կոնկրետ հարցադրումներով պարզաբանումներ են պահանջվել իրավասու պետական մարմիններից: Միևնույն ժամանակ, մշտական կապ է պահպանվել զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների հետ:

Սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում Պաշտպանը հարցադրումներ է ուղարկել իրավասու պետական մարմիններին առ այն, թե արդյոք 2023 թվականի ընթացքում արձանագրվել են զինծառայողների նկատմամբ վատ վերաբերմունքի դեպքեր և ինչ միջոցներ են ձեռնարկվել դրանց պատճառները պարզելու և կանխելու նպատակով:

Դատախազության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2023 թվականին ստացվել է ռազմական ոստիկանության ծառայողների կողմից ենթակաների կամ այլ զինծառայողների նկատմամբ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք դրսևորելու վերաբերյալ 5 հաղորդում, որոնց կապակցությամբ նախաձեռնվել է 5 քրեական վարույթ: 2023 թվականին ստացվել է զինծառայողների կողմից ենթակաների նկատմամբ բռնություն գործադրելու վերաբերյալ 151 հաղորդում, որոնց կապակցությամբ նախաձեռնվել է 151 քրեական վարույթ:

Զինված ուժերում բռնության, վատ վերաբերմունքի վերաբերյալ Պաշտպանին հասցեագրված բողոքների առկայությունը վկայում է, որ նշված խնդիրը շարունակում է մտահոգիչ լինել:

Հետևաբար, անհրաժեշտ է՝

- ✓ ***զինծառայողներին բռնությունից, վատ վերաբերմունքի ցանկացած դրսևորումից պաշտպանելու նպատակով մշակել և իրացնել առավել արդյունավետ կանխարգելիչ կառուցակարգեր, բոլոր զորամասերում զարգացնել սպա-հոգեբանի, սպա-իրավաբանի ինստիտուտը,***
- ✓ ***ՀՈՒ-ում բռնության, վատ վերաբերմունքի վերաբերյալ ցանկացած տեղեկություն դարձնել օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի քննության առարկա,***
- ✓ ***բարձրացնել զինծառայողների իրազեկվածությունը բռնության, վատ վերաբերմունքի, ինչպես նաև դրանց կանխարգելման կառուցակարգերի առնչությամբ:***

[563] Տե՛ս Չեմբերն ընդդեմ Ռուսաստանի (CHEMBER v. RUSSIA) գործով ՄԻԵԴ 2008 թվականի դեկտեմբերի 1-ի վճիռը, գանգատ թիվ 7188/03, 50-րդ և 52-րդ կետեր:

ԳԼՈՒԽ 8. ԿԱՆԱՅՔ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

1. Զինված ուժերի գործունեությանը կանանց ներգրավվածության և առաջխաղացման խնդիրները

Կանանց և տղամարդկանց միջև անհավասարության վերացման, կանանց իրավունքների ճանաչման, դրանց պաշտպանության և հավելյալ երաշխիքների սահմանման համար Հայաստանը 1993 թվականին վավերացրել է «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան և կանանց իրավունքներն ամրագրող մի շարք միջազգային պայմանագրեր և կոնվենցիաներ: Պետության քաղաքականության կարևոր նպատակներից է կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը (ՀՀ Սահմանադրություն, հոդված 86):

Կանանց և տղամարդկանց համար հավասար պայմանների ապահովումը զինված ուժերում հատկապես կարևոր է այն պայմաններում, երբ ձևավորված և խոր արմատներ ունեցող հանրային կարծրատիպային ընկալման համաձայն՝ բանակը միայն տղամարդկանց միջավայր է, իսկ զինվորական ծառայությունը տղամարդկանց ծառայություն է ենթադրում:

Պաշտպանն ընդգծում է, որ անհնար է թերագնահատել կանանց դերը և կարևորությունը զինված ուժերի զարգացման և բնականոն գործունեության գործում: **Զինված ուժերում կանանց մասնակցությունը կարևոր ազդեցություն կարող է ունենալ հակամարտությունների կարգավորմանն ու լուծմանը նրանց մասնակցության տեսանկյունից:**

Այս առումով կարևոր է վկայակոչել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 2000 թվականի թիվ 1325 բանաձևը, որը կարևորում է կանանց դերը հակամարտությունների կանխարգելման և կարգավորման, ինչպես նաև խաղաղաշինության գործում: Այն պետություններին կոչ է անում ապահովել կանանց առավել գործուն մասնակցությունը հակամարտությունների կանխարգելման, կարգավորման և հանգուցալուծման ազգային, տարածաշրջանային և միջազգային ինստիտուտների և մեխանիզմների շրջանակներում որոշումների ընդունմանը բոլոր մակարդակներում: Բանաձևը հաստատում է, որ որոշումների կայացման գործընթացում կանանց մասնակցության բացակայությունը և նրանց նկատմամբ թիրախավորված բռնության տարածվածությունը երկարաձգում են հակամարտությունները, ապակայունացնում ամբողջական տարածաշրջաններ և խոչընդոտում հակամարտությունների խաղաղ կարգավորմանը[564]:

ԵԽԽՎ-ի՝ «Կանայք զինված ուժերում. հավասարության խթանում, գենդերային հիմքով բռնության վերացում» 2016 թվականի թիվ 2120 բանաձևի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝

Ավելի մեծ թվով կանանց անձնակազմում ներգրավելն ու պահելը դարձել է զինված ուժերի կարևորագույն խնդիրներից մեկը: Սակայն, չնայած այն փաստին, որ վերջին տասնամյակների ընթացքում Եվրոպայի բանակներն աստիճանաբար ավելի դրական են վերաբերվում զինված ուժերը կանանցով համալրելու հարցին՝ կանայք զինված ուժերում և հատկապես՝ հրամանատարական բարձր կոչումներ ունեցող անձանց շարքերում, դեռևս շարունակում են փոքրամասնություն կազմել:

[564] Կարևոր քայլ է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 1325 բանաձևի դրույթների իրականացման գործողությունների 2022-2024 թվականների ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 2-ի թիվ 803-Լ որոշումը:

Զինված ուժերին միացող կանայք հայտնվում են տղամարդկանց կողմից և հենց նրանց համար մշակված միջավայրում: Նրանք ենթարկվում են տարատեսակ խտրականությունների, բախվում են կոշտ աշխատանքային ռեժիմով աշխատելու և կարծր մտածելակերպի խնդիրներին, որոնք դեռևս արմատացած են զինված ուժերին բնորոշ «տղամարդկային մոտեցումներում:

Հետևաբար պետության կարևորագույն խնդիրն է ձեռնարկել բոլոր հնարավոր քայլերը, որպեսզի զինված ուժերը առավել բարենպաստ միջավայր դառնա կանանց համար, նրանց իրավունքների խախտումները բացառվեն, և ապահովվեն կանանց արժանապատիվ ծառայության համար անհրաժեշտ պայմաններ: Ըստ այդմ էլ, Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի գործունեության առաջնահերթություններից է զինված ուժերում խտրականության արգելքի երաշխավորումը, կին զինծառայողների իրավունքների ապահովումն ու խթանումը, նրանց կարգավիճակի ու դերի բարձրացումը:

Հայաստանում քննարկման առարկա հանդիսացող օրենսդրությունը սեռով պայմանավորված չեզոք է, ինչն էլ հստակ երաշխիքների բացակայության պայմաններում հաճախ ստեղծում է մի իրավիճակ, երբ սեռային առանձնահատկությունները հաշվի չեն առնվում: Բացի այդ, թեպետ Հայաստանում կանայք իրենց կրթությամբ չեն զիջում տղամարդկանց, սակայն դեռևս առկա է զինվորական ծառայության պաշտոններում կանանց ցածր ներգրավվածության խնդիր: Չնայած միջազգային և ներպետական իրավական չափորոշիչներին՝ ՀՀ ԶՈՒ-ում փաստացի շարունակվում է նկատվել կանանց նկատմամբ ուղղահայաց (կարիերայի աստիճանների ոչ հավասար մատչելիություն) և հորիզոնական (ըստ մասնագիտությունների և ոլորտների) խտրականություն[565], որն ավելի ակնհայտ է դառնում զինվորական ծառայության անցնելիս (այդ թվում՝ զինվորական մասնագիտություն ընտրելիս), աշխատանքը երեխայի ծննդյան պարագայում պահպանելիս, զինվորական ծառայությունում առաջխաղացում ունենալիս, բարձր զինվորական պաշտոններում նշանակելիս և այլն[566]:

Կին զինծառայողները խոչընդոտների են հանդիպում հիմնականում առաջխաղացում ունենալու հարցերում: Կանայք առավել մեծ թիվ են կազմում միայն շարքային և ենթասպայական կազմերի պաշտոններում, մինչդեռ սպայական կազմում կին զինծառայողների հարաբերակցությունը բավական ցածր է: Կին զինծառայողները բախվում են խոչընդոտների նաև սպայական կոչում ստանալիս: Պաշտպանի և ներկայացուցիչների՝ զորամասեր այցերի ընթացքում ևս արձանագրվել են նման մտահոգություններ:

Պաշտպանության նախարարության տեղեկացմամբ՝ 2023 թվականի դրությամբ ՀՀ ԶՈՒ պայմանագրային զինծառայողների ընդհանուր թվաքանակում, ըստ պաշտոնային խմբերի դասակարգման, կին զինծառայողների քանակական բաշխվածությունը հետևյալն է. սպայական կազմում՝ 6,4%, ավագ սպայական կազմում՝ 1%, կրտսեր սպայական կազմում՝ 5%, ավագ ենթասպայական կազմում՝ 32%, կրտսեր ենթասպայական կազմում՝ 6,8%, շարքային կազմում՝ 5%: Կին զինծառայողների թվաքանակը Երևանում տեղաբաշխված զորամասերում կազմում է 14,2%, իսկ մարզերում՝ 3,5%:

[565] Սեռով պայմանավորված տարբերակված վերաբերմունքը՝ խտրականությունը, չի կարելի հիմնավորել երկրի ավանդույթներով, հասարակության մեջ ընդունված կարծիքներով կամ գերիշխող վարքագծերով (Տե՛ս, Կոնստանտին Մարկինն ընդդեմ Ռուսաստանի (KONSTANTIN MARKIN v RUSSIA) գործով ՄԻԵԴ 2012 թվականի մարտի 12-ի վճիռը, կետ 127):

[566] Կանանց աշխատանքային իրավունքների խնդիրներին առավել մանրամասն կարելի է ծանոթանալ սույն հաղորդման՝ «Կանանց իրավունքներ» բաժնում:

Վիճակագրությունը ևս վկայում է, որ զինված ուժերում կին զինծառայողների տոկոսային հարաբերակցությունը՝ տղամարդ զինծառայողների համեմատությամբ, շարունակում է մնալ բավական ցածր:

Խնդրի վերաբերյալ պետք է ընդգծել, մասնավորապես, ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակ 5.5-ը, ըստ որի՝ պետք է ապահովել կանանց լիարժեք և արդյունավետ մասնակցությունը և առաջնորդության համար հավասար հնարավորությունների ապահովումը քաղաքական, տնտեսական և հասարակական կյանքում որոշումների կայացման բոլոր մակարդակներում:

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի բացատրական հուշագրի «ԺԹ» կետի համաձայն՝

Կին զինծառայողները տղամարդ զինծառայողների նման պետք է պաշտոնեական առաջխաղացման հարցերում ունենան հավասար հնարավորություններ և ԶՈՒ-ում աշխատելիս արժանանան հավասար վերաբերմունքի: Սեռի հիմքով նրանք չպետք է դուրս թողնվեն մասնագիտությունից, բացառությամբ այն դեպքերի, երբ հատուկ տեսակի մասնագիտական գործունեության բնույթով կամ համատեքստով պայմանավորված, սեռը հանդիսանում է իրական վճռորոշ հանգամանք:

Զինված ուժերում հավասար հնարավորությունների ապահովումը նշանակում է, որ կանանց նկատմամբ պետության վերաբերմունքը (սկսած ծառայության ընդունումից, առաջխաղացումից, խրախուսումից, մինչև ծառայությունից արձակում) պետք է հիմնված լինի բացառապես նրանց մասնագիտական ունակությունների, ծառայության կամ ուսման ընթացքում դրսևորած վարքագծի վրա: Միևնույն ժամանակ, կանանց համար պետք է ապահովվեն ծառայության համար պատշաճ պայմաններ:

Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ 2023 թվականի ընթացքում կին զինծառայողների կողմից ստացվել է 4 բողոք, որից 2-ը վերաբերել են ոչ կանոնադրային հարաբերություններին, մյուս 2-ը՝ առողջական սահմանափակում ունենալու հանգամանքով պայմանավորված հրամանատարների կողմից ծառայությունը շարունակելու միջնորդություն չտրամադրելուն: Միաժամանակ, նախարարությունը հայտնել է, որ շարունակում է կանանց լիարժեք և բովանդակային ներգրավման խթանմանն ուղղված աշխատանքները: **Դրականորեն պետք է արձանագրել զորամասերում կանանց խորհուրդների գործունեությունը, որն էական նշանակություն ունի զինված ուժերում կանանց ներգրավվածության և կին զինծառայողների իրավունքների պաշտպանության հարցում:** Խորհուրդների ձևավորումը հնարավորություն է տալիս կին զինծառայողներին բարձրաձայնել ծառայության ընթացքում առաջացող խնդիրները և գտնել դրանց լուծման ուղիներ:

Զորամասեր Պաշտպանի այցերը ցույց են տվել, որ որոշ զորամասերում խորհուրդները գործում են բավականին ակտիվ, մինչդեռ կան զորամասեր, որտեղ խորհուրդները պասիվ են և կրում են ֆորմալ բնույթ: 2023 թվականի ընթացքում Պաշտպանը և ներկայացուցիչները տարբեր զորամասեր այցերի ընթացքում առանձին հանդիպումներ են ունեցել կին զինծառայողների և կանանց խորհուրդների ներկայացուցիչների հետ[567], լսել նրանց մտահոգող խնդիրները և դրանց լուծմանը միտված կին զինծառայողների տեսլականը:

Հարցերը հիմնականում վերաբերել են օրենքով սահմանված աշխատաժամանակի պահպանմանը, խրախուսանքի տրամադրմանը, զինվորական կոշիկների՝ կանանց համար հարմարեցված չլինելուն, զորամասում և մարտական դիրքերում նվազագույն կենցաղային պայմանների ապահովմանը (օրինակ, առանձնացված զուգարան, բաղնիք, քնելու վայր և այլն): Կին զինծառայողներից Պաշտպանը ստացել է նաև բազմաթիվ գրավոր ու բանավոր բողոքներ (ծառայության անցնելու, զորամասում կին զինծառայողի նկատմամբ վերաբերմունքի և այլնի վերաբերյալ): Բողոքները Պաշտպանի աշխատակազմում դարձել են մանրամասն ուսումնասիրության առարկա, անհրաժեշտ պարզաբանումների պահանջներով գրություններ են հասցեագրվել իրավասու գերատեսչություններ:

Այս համատեքստում Պաշտպանը կարևոր է համարում հատուկ ընդգծել կին զինծառայողների մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի պատշաճ երաշխավորումը: Սա ունի ինչպես ներպետական[568], այնպես էլ միջազգային իրավական չափորոշիչներով պաշտպանվող հենք: Ճիշտ է, զինվորական ծառայությունը սահմանափակում է անձանց որոշ իրավունքներ, այդ թվում՝ անձնական կյանքը, այնուամենայնիվ պետությունը պետք է ապահովի զինծառայողների՝ անձնական կյանքով ապրելու համար անհրաժեշտ պայմանները (օրինակ, հեռախոսային կապ ամուսնու/կնոջ հետ, նամակագրություն և այլն): Դրա հետ մեկտեղ, հեռախոսի օգտագործումը կարող է սահմանափակվել (եթե ունի իրավաչափ նպատակ, ողջամիտ բացատրություն), օրինակ, մարտական հերթապահության ժամանակ[569]:

[567] Հասանելի է https://ombuds.am/am/site/VideoGalleryView/895 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[568] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հոդված 31:
[569] Տե՛ս «Կանայք ԶՈՒ-ում. եղիր իրազեկված: Հայաստանի կին զինծառայողների իրավունքների և ազատությունների մասին» ԵԽ ձեռնարկը, էջ 15:

Անձնական կյանքի նկատմամբ հարգանքը և արժանապատիվ զինծառայությունը ներառում են նաև պատշաճ կացարանի իրավունքը: Կին զինծառայողները պետք է բնակվեն այնպիսի կացարաններում և պայմաններում, որ կարողանան բավարարել իրենց նվազագույն կարիքները: Ընդ որում, կին զինծառայողների համար կահավորվում են առանձին հանրակացարաններ (ննջարաններ), պարապմունքներին նախապատրաստվելու, խորհրդակցությունների և ժամանցի սենյակներ, ցնցուղարան և զուգարաններ, ինչպես նաև կենցաղսպասարկման և լվացվելու առանձին սենյակներ: Նույնիսկ զորանոցում զինծառայողին հատկացված տարածքը նրա անձնական և մասնավոր միջավայրն է: Կին զինծառայողների ննջարաններում մահճակալները դասավորվում են մեկ հարկաշարքով[570]:

Կին զինծառայողների ներգրավման, նրանց իրավունքների ապահովման ուղղությամբ Պաշտպանության նախարարությունն իրականացրել է համապատասխան աշխատանքներ, այդ թվում՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 1325, ինչպես նաև «Կանայք, խաղաղությունը և անվտանգությունը» բանաձևերի տեղայնացման մասով, սակայն կարևոր է, որ այդ աշխատանքներն ունենան համակարգային և շարունակական բնույթ և կին զինծառայողների ներգրավածությունը, իրավունքների երաշխավորմանն առնչվող բոլոր անհրաժեշտ պայմանները բավարարելով, ապահովվի ՊՆ և ՋՈՒ ԳՇ բոլոր ստորաբաժանումներում:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 1325, ինչպես նաև «Կանայք, խաղաղությունը և անվտանգությունը» բանաձևերի տեղայնացումը Հայաստանում լիակատար ապահովելու համար կարևոր է նաև միջազգային լավագույն փորձի դիտարկումը: Օրինակ, վկայակոչման է արժանի Միացյալ Թագավորությունում նշված բանաձևերի տեղայնացման նպատակով ընդունված՝ «Մարդու անվտանգությունը զինվորական գործողությունների ընթացքում» միասնական ղեկավարման փաստաթուղթը (JSP 1325)[571]:

JSP 1325-ն ընդգծում է, որ կանանց պետք է հնարավորություն ընձեռվի իրենց ներդրումն ունենալ հասարակության համար անվտանգության միջոցառումներ իրականացնելիս, քանի որ նրանք բոլորից լավ գիտեն բոլոր վտանգները և սպառնալիքները, որոնց կարող են բախվել: Առանց կանանց մասնակցության՝ չի կարող լավ կազմակերպվել նրանց պաշտպանությունը: Բացի այդ, անհրաժեշտ է իրականացնել խաղաղ պայմաններում և հակամարտությունների ժամանակ գենդերային դինամիկայի վերլուծություն, որը հնարավորություն կտա զինվորական ծրագրեր կազմողներին ավելի լավ հասկանալ հակամարտության մեջ գտնվող հասարակություններին՝ նկատի ունենալով, որ պետությունները, որտեղ կանայք և տղամարդիկ ունեն հավասար հնարավորություններ, ավելի ապահով են և առավել քիչ են ներգրավվում հակամարտությունների մեջ: Զինվորական ծրագրեր կազմողները կարող են ավելի լավ պատկերացում ունենալ բնակչության կարիքների վերաբերյալ, եթե օգտագործեն տվյալ հասարակությունում սեռային և տարիքային տարբերակվածության վերաբերյալ տվյալներ: Այդ տվյալների պատշաճ հավաքագրումը, օգտագործումը և վերլուծությունը ծրագրեր կազմողներին հնարավորություն է տալիս առավել լավ կազմակերպել քաղաքացիական բնակչության պաշտպանությունը:

---

[570] Տե՛ս նույն տեղը, էջ 16:

[571] Հասանելի է https://www.gov.uk/government/publications/human-security-in-military-operations-jsp-1325 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

JSP 1325-ը նշում է, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերի տեղայնացման առաջին քայլը իրավիճակի վերլուծությունն է, որի նպատակով անհրաժեշտ է իրականացնել՝

1) տվյալների հավաքագրում և վերլուծություն՝ ըստ խմբերի (սեռ, տարիք, էթնիկ խումբ և այլն)՝ հասկանալու համար օրենսդրական բացերը և խնդիրները,

2) գենդերային զգայունության ցուցիչների սահմանում (չափեր, թվեր, փաստեր, կարծիքներ և այլն),

3) գործնական կարիքների գնահատում (հասարակության մեջ կանանց և աղջիկների դերով պայմանավորված),

4) մասնակցության տվյալների հավաքագրում (հասարակության քարտեզագրում, ինտերակտիվ ներկայացումներ, գործողությունների պլանավորում, նպատակաուղղված խմբային քննարկումներ և այլն):

Այս առումով հատուկ կարևորություն ունեն կին զինծառայողների իրավունքների խախտումների վերաբերյալ **վաղ նախազգուշացման ցուցիչները** (քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային, ենթակառուցվածքների, տեղեկատվական, զինվորական կամ անվտանգության, առողջության, կրթական, իրավական)՝ առանց որոնց չափազանց բարդ կլինի բացահայտել գենդերային անհավասարությանը նպաստող պայմանները և պայքարել դրանց վերացման դեմ:

Վերը նշվածից բացի, զինված ուժերում կանանց իրավունքների պաշտպանության ու պատշաճ իրացման հստակ չափորոշիչներ են սահմանված «Կանայք զինված ուժերում. հավասարության խթանում, գենդերային հիմքով բռնության վերացում» ԵԽԽՎ-ի 2016 թվականի թիվ 2120 բանաձևում, որտեղ ԵԽ անդամ պետություններին ներկայացվում են հստակ առաջարկություններ (կադրերի համալրման, իրավահավասարության, խտրականության վերացման և այլնի վերաբերյալ):

Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև նշված հարցի վերաբերյալ ներպետական և միջազգային չափորոշիչները, անհրաժեշտ է՝

- ✓ ***ՀՈՒ-ում կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը խթանելու նպատակով կանանց համար հասանելի դարձնել ՀՀ ՀՈՒ բոլոր պաշտոնները՝ երաշխավորելով ինչպես կանանց բավարար մասնագիտական պատրաստվածությունը, այնպես էլ վերջիններիս ծառայության համար անհրաժեշտ պայմանների առկայությունը,***
- ✓ ***միջոցներ ձեռնարկել կին զինծառայողներին այն դերերում ներգրավելու ուղղությամբ, որոնցից նրանք նախկինում դուրս են թողնվել, դիտարկել այդ մասնագիտությունների համալրման ժամանակ կիրառված ֆիզիկական չափանիշները և փորձնական ծրագրերի նպատակահարմարությունը՝ կանանց համալրումն այդ մասնագիտություններում խթանելու նպատակով,***
- ✓ ***աջակցել զորամասերի կին զինծառայողների խորհուրդների գործունեությանն ու կարողությունների զարգացմանը,***
- ✓ ***հասկանալու համար օրենսդրական բացերը և խնդիրները՝ իրականացնել գենդերային տվյալների հավաքագրում ու վերլուծություն՝ ըստ խմբերի, սահմանել գենդերային զգայունության ցուցիչներ, կատարել գործնական կարիքների գնահատում և մասնակցության տվյալների հավաքագրում, մշակել կին զինծառայողների իրավունքների խախտումների վերաբերյալ վաղ նախազգուշացման ցուցիչներ,***

- ✓ ***կատարել ուսումնասիրություններ (այդ թվում՝ հարցումների միջոցով)՝ ՀՀ ԶՈՒ-ում ընդգրկված իգական սեռի ներկայացուցիչների՝ ծառայության անցնելու, այն շարունակելու կամ դադարեցնելու պատճառները պարզելու նպատակով,***
- ✓ ***հանրային իրազեկումներով ընդգծել կնոջ դերն ու կարևորությունը ԶՈՒ-ում (ներառյալ՝ զանգվածային լրատվության միջոցներով)՝ կնոջ դերի և ԶՈՒ առնչությամբ կարծրատիպային մտածողությունը փոխելու նպատակով:***

2. Զինված ուժերում կանանց իրավունքների օրենսդրական երաշխիքները

Կանանց իրավունքների պաշտպանությունը զինված ուժերում երաշխավորելու ամենակարևոր քայլերից մեկը զինվորական օրենսդրությամբ համապատասխան երաշխիքների ամրագրումն է:

Չնայած ՊՆ և ԳՇ իրավասու ստորաբաժանումները կին զինծառայողների իրավունքների ապահովման ուղղությամբ կատարել են համապատասխան աշխատանք՝ այդուհանդերձ կան օրենսդրական խոչընդոտներ, որոնք զինված ուժերում հաճախ հանգեցնում են կանանց իրավունքների՝ ոչ ամբողջությամբ իրացմանը:

Ընդհանուր առմամբ, ՀՀ զինվորական օրենսդրությունը գենդերային առումով չեզոք է (gender-neutral), և հաճախ խնդիրներ առաջանում են հենց գենդերային առանձնահատկությունները հաշվի չառնելու պատճառով, ինչը կին զինծառայողների համար ստեղծում է անհավասար պայմաններ: Պաշտպանն ընդգծում է, որ օրենսդրությամբ պետք է լրացուցիչ երաշխիքներ նախատեսվեն զինվորական ծառայություն անցնող կանանց համար:

Կանանց զինվորական ծառայության խրախուսման տեսանկյունից Պաշտպանը կարևոր է համարում նաև օրենսդրության վերանայումը՝ անձնական կամ ընտանեկան հանգամանքների հաշվառմամբ:

Մասնավորապես՝ համատեղ ծառայության բավարար օրենսդրական երաշխիքներ առկա չեն *զինծառայող և քաղաքացիական ծառայող, ինչպես նաև տարբեր համակարգերում ծառայող ամուսինների համար*: Միևնույն ժամանակ, առկա չեն օրենսդրական երաշխիքներ *պայմանագրային զինծառայողին ծառայության նոր վայր տեղափոխելու դեպքում նույն զորամասում քաղաքացիական հասպիք զբաղեցնող նրա ամուսնուն նրա հետ ծառայության նոր վայր տեղափոխելու, ինչպես նաև տարբեր համակարգերում ծառայող ամուսիններից մեկին ծառայության նոր վայր տեղափոխելու դեպքում մյուս ամուսնուն հնարավորին մոտ զորամասում ծառայության տեղափոխելու վերաբերյալ (վերջիններիս ցանկությամբ)*:

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին ԵՄ Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի բացատրական հուշագրի «Է» կետի համաձայն՝
Զինծառայողների բարոյահոգեբանական վիճակի համար կարևոր է, որպեսզի նրանք հնարավորության սահմաններում կարողանան կապ պահպանել իրենց մտերիմների, այդ թվում՝ հարազատների և զուգընկերոջ հետ: Անդամ պետությունները պետք է համապատասխան պայմաններ ստեղծեն, որպեսզի զինծառայողներն օգտվեն այս հատուկ իրավունքից:

«Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիան (հոդված 11) և «Կանայք զինված ուժերում. հավասարության խթանում, գենդերային հիմքով բռնության վերացում» ԵԽԽՎ-ի 2016 թվականի թիվ 2120 բանաձևը (կետեր 6.1.3, 6.1.6 և 6.1.7) պետություններին պարտավորեցնում են ստեղծել այնպիսի

պայմաններ, որ կանանց անձնական ու ընտանեկան կյանքի հանգամանքները չխոչընդոտեն ծառայության մեջ առաջխաղացմանը, հնարավորինս փորձեն ստեղծել այնպիսի սոցիալական ծառայություններ (օրինակ՝ երեխաների խնամքով զբաղվող հաստատություններ), որոնք հնարավորություն կտան ընտանեկան իրավունքների իրականացումը համատեղել զինծառայության հետ:

Պաշտպանը կարևորում է այս ուղղությամբ պետության կողմից համապատասխան միջոցառումների իրականացումը:

Աշխատանքային իրավունքների իրացման տեսանկյունից առկա է խնդիր մեկ այլ իրավակարգավորման շրջանակներում:

ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1269-Ն որոշման հավելվածի 6-րդ կետի համաձայն՝ զինվորական հաշվառման վերցվում են նաև 18 տարին լրացած և զինվորական մասնագիտություն ստացած կամ կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական կամ պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու համար դիմած, ինչպես նաև *զինվորական հաշվառման ենթակա մասնագիտություններ ունեցող իգական սեռի քաղաքացիները*:

Մինչդեռ, **կանայք բավարար չափով իրազեկված չեն զինվորական հաշվառման ենթակա մասնագիտությունների մասին**, ինչը կարող է խոչընդոտ հանդիսանալ զինվորական հաշվառման նպատակով կանանց դիմելու և հետագայում զինվորական ծառայություն անցնելու համար:

ՀՀ զինված ուժերում հղի կին ծառայողների համար հատուկ հանդերձանք նախատեսված չէ: Մինչդեռ, հղի կանանց համազգեստի հարմարավետության անհրաժեշտության տեսանկյունից, հաշվի առնելով նաև այլ երկրների փորձը (օրինակ՝ Միացյալ Թագավորության), Պաշտպանը կարևորում է նրանց համար հատուկ համազգեստ նախատեսելու անհրաժեշտությունը: Այս առումով հարկ է նկատի ունենալ, որ պետությունն ունի պարտականություն՝ ապահովելու, որ ռազմական հանդերձանքը, համազգեստները լինեն կանանց հարմարեցված և անհարմարություն չպատճառեն[572]:

Քննարկվող թեմայի շրջանակներում **Պաշտպանը կարևոր է համարում անդրադառնալ կանանց կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայություն անցնելու հարցին:**

2023 թվականին փոփոխություններ ու լրացումներ են կատարվել «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» և «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքներում: Ըստ այդմ, նախատեսվել է իգական սեռի քաղաքացիների համար պարտադիր զինվորական ծառայության ժամկետը 6 ամիս, հստակեցվել են նրանց կողմից կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայություն անցնելու դիմումների ներկայացման ժամկետները՝ այն տրամաբանությամբ, որպեսզի հնարավոր լինի պատշաճ կարգով և ժամկետներում իրականացնել նրանց զինվորական հաշվառման, ներառյալ՝ անհրաժեշտ բժշկական հետազոտությունների և փորձաքննության գործընթացը: Օրենքով սահմանվել են նաև իգական սեռի քաղաքացիների զորակոչի կազմակերպման առանձնահատկությունները, ինչպես նաև մինչև պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելը նրանց կողմից պարտադիր զինվորական ծառայություն անցնելուց հրաժարվելու հնարավորությունը: Նշվել է, որ իգական սեռի քաղաքացիները ծառայության

[572] Տե՛ս «Կանայք ԶՈՒ-ում. հավասարության խթանում, գենդերային հիմքով բռնության վերացում» ԵԽԽՎ-ի 2016 թվականի թիվ 2120 բանաձևը, կետ 6.2.5:

են նշանակվում ուսումնական զորամասերում և ծառայությունն ավարտելուց հետո ստանում են 1 միլիոն դրամի չափով պատվովճար:

Կանանց պարտադիր զինվորական ծառայության ներգրավելու մասին վերը նշված օրենսդրական փոփոխությունները քննարկման առարկա են դարձել Պաշտպանին առընթեր կանանց իրավունքների հարցերով հասարակական խորհրդի երկրորդ նիստում, որտեղ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից բազմաթիվ մտահոգություններ են հնչել, ի թիվս այնի, այն մասին, որ օրենսդրական կարգավորումների շուրջ լայն հանրային քննարկումներ չեն կազմակերպվել և վերջիններս կարգավորումների վերաբերյալ մասնագիտական դիրքորոշումներ հայտնելու հնարավորություն չեն ունեցել: Պաշտպանն այս հարցով առանձին գրություն և համապատասխան առաջարկ է ներկայացրել Ազգային ժողով:

Պաշտպանը ևս ունի մտահոգություններ կանանց զինվորական ծառայության ներգրավելու բնագավառում մարդու իրավունքներին վերաբերելի հարցերի առնչությամբ: Թեև այս համակարգն աշխարհում նոր չէ և տարբեր երկրներում արդյունավետորեն գործում է (օրինակ, Նորվեգիա, Շվեդիա և այլն), սակայն իգական սեռի քաղաքացիներին ԶՈՒ ներգրավելիս անհրաժեշտ է հաշվի առնել բազմաթիվ հանգամանքներ՝ սկսած վերաբերելի օրենսդրությունից[573] մինչև զորամասային պայմաններ: Հարկ է նկատի ունենալ, որ պետությունը միջազգային մի շարք փաստաթղթերով ստանձնել է կոնկրետ պարտավորություններ, այդ թվում՝ կանանց զինվորական ծառայության մասով, որոնք վերաբերում են ԶՈՒ անդամների հավաքագրման և կարիերայի կառավարման, գենդերային հավասարության համար առավել բարենպաստ միջավայրի ստեղծման, գենդերային բռնության դեմ պայքարի հետ կապված և այլ հարցերի[574]: Դրանք ենթադրում են կանանց զինվորական ծառայության նախապատրաստման նպատակով լուրջ և համակարգային քայլերի իրականացում:

Նման քայլերի ամբողջականությունն ապահովված չլինելու վերաբերյալ մտահոգություններ են հայտնել նաև հասարակական կազմակերպությունները[575]:

Սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում Պաշտպանը հարցադրում է կատարել ՊՆ այն մասին, թե հաշվի առնելով օրենսդրական կարգավորումներն առ այն, որ ժամկետային ծառայության կարող են ներգրավվել նաև իգական սեռի քաղաքացիները՝ 2023 թվականի ընթացքում ինչ աշխատանքներ են տարվել այդ ուղղությամբ (շենք-շինություններ, զորանոցային պայմաններ, ծառայության ներգրավելուն միտված իրազեկման արշավներ և այլն):

Պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝

2023 թվականին ՊՆ N զորամասում հիմնանորոգվել և կահավորվել է առանձին մասնաշենք՝ կանանց վաշտի և կամավոր հիմունքներով պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվող իգական սեռի ներկայացուցիչների համար:

Բացի այդ, իրականացվել են ծառայության ներգրավմանը միտված մի շարք իրազեկման արշավներ՝ հանրակրթական դպրոցներում, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում: Հանրության իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով ԶԼՄ-ներով ցուցադրվում են

[573] Նույնիսկ արդեն իսկ ընդունված օրենքում առկա են խնդրահարույց կարգավորումներ, օրինակ, կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայություն անցնող իգական սեռի զինծառայողները ընտանեկան պայմաններից ելնելով չեն կարող արձակվել ԶՈՒ-ից:

[574] Առավել մանրամասն, տե՛ս, «Կանայք ԶՈՒ-ում. հավասարության խթանում, գենդերային հիմքով բռնության վերացում» 2016 թվականի թիվ 2120 ԵԽԽՎ բանաձևը, ԵԱՀԿ ԺՀՄԻԳ 2008 թվականին տպագրված «ԶՈՒ անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» ձեռնարկը:

[575] Հասանելի է https://hcav.am/womeninarmy-05-05-2023/ հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

գովազդներ և կարճատև տեսահոլովակներ՝ կանանց ծառայության վերաբերյալ: «Դեմոկրատիան այսօր» ՀԿ-ի հետ համագործակցության շրջանակներում մշակվում է իգական սեռի զորակոչի, կին զինծառայողների իրավական և սոցիալական իրավունքների, ինչպես նաև զինվորական ծառայության գրավչության վերաբերյալ իրազեկման պաստառի նախագիծ՝ դպրոցներում տարածելու նպատակով:

Ուստի, հաշվի առնելով վերագրյալը և նկատի ունենալով միջազգային իրավական չափորոշիչները՝ առաջարկվում է՝

- ✓ ***ապահովել այն մասնագիտությունների վերաբերյալ իրազեկումը, որոնք ունեցող իգական սեռի ներկայացուցիչները կարող են դիմել զինվորական հաշվառման համար,***
- ✓ ***«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում սահմանել, որ զինծառայողին ծառայության նոր վայր տեղափոխելու դեպքում նրա հետ ծառայության նոր վայր է տեղափոխվում նաև նույն զորամասում քաղաքացիական հաստիք զբաղեցնող նրա ամուսինը (այդ թվում՝ փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձը)՝ ըստ վերջիններիս ցանկության: Նախատեսել նաև տարբեր համակարգերում ծառայող ամուսինների, ըստ վերջիններիս ցանկության, միմյանց հնարավորին մոտ զորամասերում բնակվելու հնարավորությունը,***
- ✓ ***զինվորական օրենսդրությամբ խրախուսական նորմեր նախատեսել մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդից օգտվելու հնարավորություն ունեցող, սակայն ծառայելու նպատակով այդ արձակուրդից իրենց ցանկությամբ չօգտված կին զինծառայողների համար, որպեսզի նրանք ունենան բավարար հնարավորություններ ծառայությունը երեխայի խնամքի հետ համատեղելու համար,***
- ✓ ***ստեղծել այնպիսի պայմաններ, որ կանանց անձնական ու ընտանեկան կյանքի հանգամանքները չխոչընդոտեն ծառայության մեջ առաջխաղացմանը (օրինակ՝ երեխաների խնամքով զբաղվող հաստատություններ),***
- ✓ ***հղի կին ծառայողների համար նախատեսել հատուկ հանդերձանք,***
- ✓ ***իգական սեռի քաղաքացիների պարտադիր զինվորական ծառայության նոր մոդելի համատեքստում միջազգային փորձի ու չափորոշիչների հաշվառմամբ՝ կատարել անհրաժեշտ իրավական, նյութատեխնիկական ու կենցաղային հարմարեցումներ, փոփոխություններ, ներդնել համապատասխան կրթական ծրագրեր՝ ապահովելու համար ԶՈՒ-ում կանանց արժանապատիվ ծառայության համար անհրաժեշտ պայմանները:***

ԳԼՈՒԽ 9. ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների բնակարանային ապահովումը

2023 թվականին Պաշտպանը շարունակել է ստանալ զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների բնակարանային ապահովման հետ կապված մեծ թվով բողոքներ:

Բողոքները հիմնականում վերաբերել են 1) ծառայողական բնակարանների կամ բնակելի տարածության վարձակալության դիմաց դրամական փոխհատուցման հետ կապված խնդիրներին, 2) նախկին զինծառայողներին բնակելի տարածությունից հանելուն, 3) որպես բնակարանային պայմանների կարիքավոր հաշվառված նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային գործերի «համապատասխանեցման» արդյունքում հերթացուցակից դուրս մնալուն, 4) հիփոթեքային վարկավորման հետ կապված խնդիրներին, 5) բնակարանային պայմանների բարելավման հերթացուցակում հաշվառված անձանց գործերը քննարկելիս բնակարանի տրամադրումը մերժելուն, 6) այլ զորքերի և ծառայությունների (օրինակ՝ Քրեակատարողական, ԱԱԾ) անդամների բնակարանային ապահովման խնդիրներին և այլն: Այսպես.

Զինծառայողների կողմից շարունակվել են բարձրացվել բնակարանի վարձակալության դիմաց տրամադրվող փոխհատուցման չափերի հետ կապված խնդիրներ: Նշված հարցը մշտապես եղել է Պաշտպանի ուշադրության կենտրոնում: Դրական է այն, որ նախկինում մեկ անգամ վարձակալության դիմաց տրամադրվող փոխհատուցման չափերը, հաշվի առնելով նաև Պաշտպանի աշխատակազմում կատարված ուսումնասիրություններն ու ներկայացված առաջարկները, վերանայվել և բարձրացվել են: Միևնույն ժամանակ, խնդիրը ներկայում կրկին արդիական է դարձել:

2023 թվականի ընթացքում Պաշտպանը և ներկայացուցիչները մի շարք այցեր են իրականացրել տարբեր զորամասեր: Զորամասերի մեծ մասում պայմանագրային զինծառայողները բարձրացրել են նշված խնդիրը: **Ուսումնասիրությունները փաստում են, որ վարձակալության դիմաց տրամադրվող հատուցման գումարի չափի հետ կապված խնդիրն առաջնային կարևորություն ունեցող է, դրա լուծման ուղղությամբ անհրաժեշտ է անհապաղ միջոցներ ձեռնարկել:**

Այս հարցի կապակցությամբ Պաշտպանը 2023 թվականին ևս գրություն է հասցեագրել ՀՀ կառավարություն՝ նշելով, որ վարձակալության դիմաց տրամադրվող հատուցման գումարի չափը վերանայելու անհրաժեշտություն կա՝ շուկայական գների բարձրացման համատեքստում: Ստացվել է պատասխան այն մասին, որ պայմանավորված ՀՀ-ում օտարերկրյա քաղաքացիների ներհոսքի ավելացմամբ՝ բնակարանների վարձակալության գները բարձրացել են, իսկ փոխհատուցման չափերը ցածր են ձևավորված շուկայական գներից:

Պաշտպանն անհրաժեշտ է համարում նշել, որ դրամական հատուցման չափերը չբարձրացնելը հանգեցրել է նրան, որ զինծառայողներն իրենք են ստիպված լինում սեփական միջոցներից (ստացած աշխատավարձից) գումար ավելացնել և վարձավճարն ամբողջությամբ վճարել:

Զինվորական ծառայությունից արձակվելուց հետո վարձակալության գումարի փոխհատուցման խնդիր: ՀՀ կառավարության 2023 թվականի հուլիսի 20-ի թիվ 1219-Ն որոշման համաձայն՝ ամսական դրամական հատուցում ստանալու իրավունքը դադարեցվում է շահառուին ծառայությունից արձակելու (ազատելու) դեպքում: Մինչդեռ, **անհատույց օգտագործման իրավունքով** տրամադրված բնակարանների պարագայում իրավիճակն այլ է. ՀՀ տարածքում բնակելի տարածությամբ չապահովված և առողջության, տարիքի, երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու պատճառով զորացրված զինծառայողները չեն ազատում ծառայողական բնակարանները: Ստացվում է, որ եթե զինծառայողին տրամադրվել է ծառայողական բնակարան, նշված հիմքերով ծառայությունից արձակվելիս նա շարունակում է բնակվել ծառայողական բնակարանում, իսկ նույն կարգավիճակում գտնվող զինծառայողը, ում վարձակալության դիմաց տրամադրվում է դրամական փոխհատուցում, դադարում է այն ստանալ: Հետևաբար, տարբերակված մոտեցում է դրսևորվում միևնույն կարգավիճակում գտնվող անձանց նկատմամբ:

Պաշտպանը դեռևս նախորդ տարեկան հաղորդմամբ առաջարկել էր վերոնշյալ հիմքերով ծառայությունից արձակված զինծառայողներին վարձակալության գումարի փոխհատուցում տրամադրելը չդադարեցնել, սակայն նշված առաջարկը դեռևս չի իրացվել, իսկ ՊՆ-ն այս առաջարկի կապակցությամբ միայն նշել է, որ գործող կարգը չի նախատեսում զորացրված զինծառայողների կողմից վարձակալված բնակելի տարածությունների դիմաց դրամական փոխհատուցման տրամադրում:

Նախկին զինծառայողներին բնակելի տարածությունից հանելու խնդիր:

Պաշտպանն արձանագրել է առողջության, տարիքի, երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու պատճառով զորացրված զինծառայողներին, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) կամ հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների ընտանիքներին՝ ՀՀ-ում այլ բնակելի տարածությամբ ապահովված չլինելու դեպքում ծառայողական բնակարաններն ազատելու պահանջ ներկայացնելուն առնչվող խնդիր[576]: Այս հարցի վերաբերյալ Պաշտպանին հասցեագրվել են նաև բողոքներ: Մինչդեռ, գործող իրավակարգավորումներով նշված խումբ անձանց ՊՆ-ի հաստատած ցանկում ընդգրկված **բնակելի տարածություններն ազատելու պահանջ չի կարող ներկայացվել (անկախ բնակարանային հաշվառման հանգամանքից), եթե ՀՀ-ի տարածքում ապահովված չեն այլ բնակելի տարածությամբ**[577]:

Հիփոթեքային վարկավորման հետ կապված խնդիրներ:

Գործող կարգավորումներով հիփոթեքային վարկավորման պետական նպատակային ծրագրերից կարող են օգտվել *միայն սպայական և ավագ ենթասպայական կազմի պայմանագրային զինծառայողները*: Այսինքն, **շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի պայմանագրային զինծառայողները ներկայում զրկված են վերոնշյալ ծրագրից օգտվելու հնարավորությունից:** 2023 թվականին տարբեր զորամասեր այցերի ընթացքում այս խնդիրը բարձրաձայնել են նաև զինծառայողները:

---

[576] Այսպես, ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 7-ի թիվ 384-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ առողջության, տարիքի, երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու պատճառով զորացրված զինծառայողները, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) կամ հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների ընտանիքներն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված բնակարաններն ազատում են, **եթե ՀՀ-ի տարածքում ապահովված են այլ բնակելի տարածությամբ:**

[577] Նշված հարցն առավել մանրամասն ուսումնասիրված և վերլուծված է Պաշտպանի 2021 թվականի զեկույցում, էջ 969:

Պաշտպանը մշտապես առաջարկել է հիփոթեքային վարկավորման ծրագրերից օգտվելու հնարավորություն նախատեսել նաև կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի պայմանագրային զինծառայողների համար, սակայն առաջարկը դեռևս չի իրացվել:

Հիփոթեքային վարկավորման ծրագրերի հետ կապված մեկ այլ խնդիր էր այն, որ այդ ծրագրերից չէին կարողանում օգտվել Ազգային անվտանգության ծառայության, Քրեակատարողական ծառայության և Ոստիկանության ծառայողները: Պաշտպանն առաջարկել էր նշված համակարգերի զինծառայողներին ևս հնարավորություն տալ օգտվելու օրենքով սահմանված արտոնությունից: Այս առումով Պաշտպանը դրական է գնահատում այն, որ 2023 թվականին փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի թիվ 1091-Ն որոշման մեջ՝ նախատեսելով, որ հիփոթեքային վարկավորման ծրագրերից կարող են օգտվել նաև Ազգային անվտանգության մարմինների և Պետական պահպանության մարմնի ծառայողները՝ տարեկան յուրաքանչյուր մարմնից համապատասխանաբար 40 և 10 ծառայող: Մինչդեռ, Ոստիկանության և Քրեակատարողական համակարգի ծառայողների համար խնդիրը մնում է չլուծված:

Կարևոր է նշել, որ հիփոթեքային վարկավորման ծրագիրը, ըստ էության, դրական է գնահատվում: Դրա հետ մեկտեղ, զինծառայողները մտահոգություն են հայտնել, որ ծրագիրն ունի լուրջ թերություններ, քանի որ տևական ժամանակ ծառայող սպաները, ովքեր երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու մտադրություն ունեն, ծրագրից օգտվելու խնդիրների առաջ են կանգնում: Նրանց համար ֆինանսական տեսանկյունից շահավետ չէ այդ ծրագրից օգտվելը: Սպաները նաև հայտնել են, որ հիփոթեքային վարկավորման ծրագիրն ունի կատարելագործման անհրաժեշտություն, քանի որ շահառուների համար նախատեսված տեղերը սահմանափակ են, իսկ այն կարող է շահավետ լինել միայն ԶՈՒ նոր ներգրավվող սպաների համար: Ուստի, զինծառայողների կարծիքով, այս ծրագրի հետ մեկտեղ անհրաժեշտ է մշակել այլ կառուցակարգեր, որպեսզի երկար տարիներ (օրինակ, 20 և ավելի) ծառայած սպաները կարողանան բնակարան ձեռք բերել, ինչպես նաև անհրաժեշտ է ներդնել նոր լուծումներ: Այս առումով, զինծառայողների բնակարանային ապահովության ուղղությամբ կարևոր քայլ է այն, որ նախատեսվել է կարգավորում, ըստ որի՝ ռազմաուսումնական հաստատությունում ուսումնառություն անցնելու համար օրենքով սահմանված ժամկետով պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր կնքած, ռազմաուսումնական հաստատությունն ավարտած և ՊՆ-ի համակարգում կամ Ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերում սպայական պաշտոնի նշանակված զինծառայողին անհատույց օգտագործման իրավունքով հատկացվում է բնակարան[578]:

Բնակարանային գործերի «համապատասխանեցման» արդյունքում հերթացուցակից դուրս մնալու հետ կապված խնդիրներ:

Հաշվետու տարում կրկին արձանագրվել են ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի թիվ 1016-Ն որոշմամբ իրականացված համապատասխանեցման արդյունքում բնակարանային հաշվառման հերթացուցակից հանվելու հետ կապված խնդիրներ[579]: Նշված որոշման կարգավորումներով նոր պահանջներ են սահմանվում

[578] Ավելի մանրամասն տե՛ս «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1 կետը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 27-ի թիվ 1665-Ն որոշումը:

[579] ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի թիվ 1016-Ն որոշման 2-րդ կետով սահմանվել էր դրույթ, որով ՀՀ-ի մարզպետներին հանձնարարվում, իսկ համայնքների ղեկավարներին (Երևանի քաղաքապետին) առաջարկվում էր բնակարանային

(օրինակ, լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու և այլն) և ծառայության ընթացքում որպես բնակարանային պայմանների բարելավման հաշվառված և երկար տարիներ իրենց հերթին սպասող նախկին զինծառայողների և նրանց ընտանիքների բնակարանային բարելավման ժամանակ բնակարանային գործերի համապատասխանեցում է տեղի ունենում, ինչի հետևանքով նշված զինծառայողները և նրանց ընտանիքները դուրս են մնում բնակարանային բարելավման կարիք ունեցողների հերթացուցակից: Ավելին, Պաշտպանի աշխատակազմ այս հարցի վերաբերյալ ստացված բողոքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նշված անձինք հերթացուցակից դուրս մնալու մասին տեղեկանում են գործընթացի ավարտից հետո, այն էլ միայն այն դեպքում, երբ դիմում են իրենց բնակարանային հերթի վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար: Արդյունքում, նշված անձինք չեն կարողանում արդյունավետ կերպով իրականացնել իրենց իրավունքների պաշտպանությունը (օրինակ, վարչական վարույթի ընթացքում լսված լինելու իրավունքը):

ՊՆ-ի տեղեկացմամբ՝ համապատասխանեցման արդյունքում բնակարանային հաշվառումից հանվելու վերաբերյալ դիմում-բողոքներ չեն ներկայացվել: Բացի այդ, տվյալ գործընթացի շրջանակներում բնակարանային հաշվառումից հանելու վերաբերյալ գործառույթներն իրականացվել են ՏԻՄ-երի կողմից:

Ինչ վերաբերում է համապատասխանեցման արդյունքում բնակարանային հաշվառումից հանելու ՏԻՄ-երի կատարած աշխատանքներին, ապա Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տեղեկացմամբ՝ միայն 2019 թվականի դրությամբ Շիրակի մարզում բնակարանային գործերի համապատասխանեցման գործընթացի շրջանակներում թվով 32 շահառու ընտանիքներ դուրս են մնացել ՀՀ ՊՆ համակարգի՝ հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության հերթացուցակներից: Նշված 32 ընտանիքներից 26-ը համայնքների ղեկավարներին չեն ներկայացրել ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի թիվ 1016-Ն որոշմամբ պահանջվող լրացուցիչ փաստաթղթերը, որի պատճառով դեռևս չեն վերահաշվառվել բնակարանի կարիքավոր զինծառայողների հերթացուցակում: Նշված խնդիրն առկա է նաև այլ մարզերում (Արմավիրում հաշվառումից դուրս է մնացել 25 ընտանիք, Սյունիքում՝ 12, Վայոց ձորում՝ 2, Տավուշում՝ 8 և այլն):

Բնակարանային պայմանների բարելավման հերթացուցակում հաշվառված զինծառայողների (նախկին զինծառայողների) բնակարանային ապահովության խնդիր:

Պաշտպանին հասցեագրած բողոքներով զինծառայողները (նաև նախկին զինծառայողները) դժգոհություն են ներկայացրել առ այն, որ երկար տարիներ հաշվառված են բնակարանային ապահովության շահառուների հերթացուցակում, սակայն բնակարանով չեն ապահովվել: Արձանագրվել են նաև դեպքեր, երբ նախկին զինծառայողները 15-20 տարի շարունակում են հաշվառված մնալ հերթացուցակում:

հարցերի հանձնաժողովների միջոցով, մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը, ապահովել մինչև որոշումն ուժի մեջ մտնելը որպես բնակարանային պայմանների կարիքավոր հաշվառված՝ ՀՀ ՊՆ համակարգի՝ հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային գործերի համապատասխանեցումը «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ-ի օրենքի 34-րդ հոդվածի ու ՀՀ-ի կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի թիվ 947-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներին:

Պաշտպանն ի գիտություն է ընդունում գործող իրավակարգավորումները (այդ թվում՝ ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 7-ի թիվ 384-Ն, 2018 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1419-Ն, 2021 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 1930-Ն որոշումները): Միևնույն ժամանակ, կարևոր է հնարավորին արագ լուծում տալ զինծառայողների (նաև նախկին զինծառայողների) բնակարանային ապահովության խնդրին:

Ըստ ՊՆ տվյալների՝ 2023 թվականի ընթացքում ֆունկցիոնալության խորը, ծանր և միջին աստիճանի սահմանափակումով հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման արդյունքում թվով 37 ընտանիքների տրամադրվել են բնակարանի գնման վկայագրեր, որոնցից 34-ը ձեռք է բերել բնակարան: Նախարարությունը հավելել է, որ զինծառայողների բնակարանային ապահովումը իրականացվում է ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 7-ի թիվ 384-Ն որոշմամբ սահմանված կարգով: Ներկայումս բնակարան է ձեռք բերել 40 զինծառայող[580]:

Այս համատեքստում մեկ այլ խնդիր է **Երևան քաղաքում բնակարանային հաշվառման մեջ գտնվող անձանց բնակարանի գնման վկայագրերով տրամադրվող գումարի չափի ոչ բավարար լինելը**: Այսպես, ՀՀ կառավարության 2007թ. մարտի 7-ի թիվ 384-Ն որոշմամբ անհատույց պետական ֆինանսական աջակցությունը հաշվարկվում է բնակարանի գնման վկայագիր տրամադրելու վերաբերյալ եզրակացության ընդունման օրվան նախորդող եռամսյակի դրությամբ Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված՝ ՀՀ-ի տարածքում բնակարանների ձևավորված շուկայական միջին գների մասին տեղեկատվության հիման վրա՝ Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին գների թվաբանական միջինի *50 տոկոսի չափով*: Ըստ Պաշտպանին հասցեագրված բողոքների՝ նման իրավակարգավորման պատճառով բնակարանի գնման վկայագրեր ստացած անձինք չեն կարողանում Երևանում տուն գնել, քանի որ շուկայական միջին գների 50 տոկոսի չափով տրամադրված գումարը չի բավարարում[581]: Մարդիկ նշում են, որ ստիպված են լինում մյուս 50 տոկոսը սեփական միջոցներով վճարել կամ դիմել դատարան և դատական կարգով վերականգնել իրենց իրավունքները: Այս առումով, կարևոր է արձանագրել, որ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներով 14 նախկին զինծառայողների ՀՀ ՊՆ հրամանով անհատույց պետական ֆինանսական աջակցություն է տրամադրվել 100%-ի հաշվարկով:

Տվյալ հարցի կապակցությամբ Պաշտպանը համապատասխան դիտարկումներով ու առաջարկներով գրություն է հասցեագրել իրավասու գերատեսչություն: Արդյունքում, ստացվել է պատասխան այն մասին, որ առկա խնդիրների լուծման նպատակով մշակվել և ՀՀ փոխվարչապետին են ներկայացվել առաջարկություններ[582]:

---

[580] ՊՆ-ն, բնակարանային ապահովության հարցի հետ կապված, ի թիվս այլնի, տրամադրել է նաև հետևյալ տեղեկությունները. 2003-2023թթ. առ 31.12.2023թ. անհատույց պետական ֆինանսական աջակցություն է ստացել 2.860 ընտանիք: 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հերթացուցակներում ընդգրկված է թվով 1421 շահառու, որից 320-ը՝ ք. Երևանից, 1101-ը՝ ՀՀ մարզերից:

[581] ՊՆ-ի տեղեկացմամբ՝ Երևան քաղաքի մշտական բնակմակերեսի կարիքավոր թվով 154 շահառուների վերաբերյալ 2023 թվականին տրվել է դրական եզրակացություն: Բնակարան են ձեռք բերել թվով 56 շահառու: Բնակարանի գնման վկայագրերից հրաժարվել են Երևան քաղաքի 98 շահառու՝ չհամաձայնելով ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 7-ի N 384-Ն որոշմամբ սահմանված Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին գների թվաբանական միջինի 50 տոկոս տրամադրվող գումարի չափի հետ:

[582] Մշակվել և հետագա ընթացքավորման է ներկայացվել ՀՀ կառավարության 2007թ. մարտի 7-ի թիվ 384-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ՝ Երևան քաղաքի շահառուներին բնակարանի գնման վկայագրով անհատույց պետական ֆինանսական աջակցության գումարը հաշվարկելիս բնակարանների արժեքը բնակարանների շուկայական միջինացված արժեքի 100 տոկոսով հաշվարկելու վերաբերյալ:

Ծառայողական բնակարանները կոմունալ ենթակառուցվածքներով չապահովելու խնդիր: Պաշտպանի աշխատակազմի մասնագիտացված ստորաբաժանման՝ Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության բաժնի ուսումնասիրությունները վկայում են, որ ներկայում ևս ծառայողական բնակարանների կոմունալ ենթակառուցվածքներով ապահովումը շարունակում է մնալ արդիական[583]: Ասվածը հատկապես ընդգծվում է նրանով, որ բնակարանային ապահովման հարցը ԶՈՒ-ում ամենախոցելի և զինծառայողներին հուզող ամենակարևոր խնդիրներից է:

Զինծառայողների համար պատշաճ բնակելի պայմաններ ունենալու իրավունքը սահմանված է նաև միջազգային իրավական չափորոշիչներով: Այսպես, համապատասխան ստանդարտի բնակարանի իրավունքը պաշտպանվում է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 11-րդ հոդվածով և Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 31-րդ հոդվածի 1-ին մասով: Այդ հոդվածները կիրառելի են ԶՈՒ ներկայացուցիչներին հատկացվող բնակելի տարածության նկատմամբ: Անկախ զինծառայողի կոչումից՝ նա իրավունք ունի օգտվելու այնպիսի կացարանից, որն ունի բավարար լուսավորություն և օդափոխություն (ներառյալ՝ բավարար ջեռուցում), մաքուր է, լավ վիճակում է, բավարար չափով կահավորված է և ունի բավարար բնակելի տարածք՝ դրանում ապրող անձանց թվին համապատասխան: Ծառայողական կացարանները պետք է պատշաճ կերպով պահպանվեն: Հիգիենայի և առողջության հարցերը նույնպես կարևոր են բնակարանային պայմանների տեսանկյունից: Զուգարանները պետք է լինեն քնելու տարածքներից առանձնացված, միաժամանակ բոլոր տարածքները պետք է պարբերաբար մաքրվեն: Վարակիչ հիվանդություններ ունեցող անձինք պետք է գտնվեն բժշկական մասնաշենքերում: Զորանոցային տիպի կացարաններում կանանց և տղամարդկանց հատվածները պետք է լինեն առանձնացված[584]:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ առաջարկվում է՝

- ✓ ***կատարել ուսումնասիրություններ և միջոցներ ձեռնարկել բնակարանի վարձակալության դիմաց տրամադրվող փոխհատուցման գումարների չափերը վերանայելու ուղղությամբ,***
- ✓ ***շարունակական աշխատանքներ իրականացնել ՊՆ-ի հաշվեկշռում առկա բնակարանները բարեկարգելու, նոր շենքեր կառուցելու և դրանք կոմունալ ենթակառուցվածքներով ապահովելու ուղղությամբ,***
- ✓ ***նախատեսել պայմանագրային զինծառայողներին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տարածություններում կամ հաշվառման վայրի բնակարաններում բնակվելու իրական հնարավորությունը պարզելու և դրանով պայմանավորված՝ վարձակալության գումարի փոխհատուցում տրամադրելու կառուցակարգ՝ անհրաժեշտության դեպքում կատարելով նաև օրենսդրական փոփոխություններ,***
- ✓ ***զինծառայողներին անհատույց օգտագործման իրավունքով բնակարան կամ բնակարանի վարձակալության դիմաց փոխհատուցում տրամադրելու աջակցության***

---

[583] Օրինակ՝ ՊՆ թիվ 8115 զորամասի հաշվեկշռում գտնվող շենքը վթարային և անմխիթար վիճակում է, ինչի կապակցությամբ Պաշտպանը գրություն է ուղարկել Պաշտպանության նախարարին, սակայն խնդիրը դեռևս լուծում չի ստացել:

[584] Տե՛ս ԶՈՒ անդամների իրավունքների մասին ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի բացատրական հուշագրի «ԺԵ» կետը:

շահառու լինելու հարցը քննարկելիս և ծառայության վայրի վարչական տարածքից առնվազն 30 կիլոմետր հեռավորությամբ սեփականության իրավունքով բնակելի տարածություն կամ նույն հեռավորությամբ մշտական (փաստացի) հաշվառման վայր չունենալու հանգամանքը որոշելիս հիմք ընդունել ոչ թե փոստային կենտրոնների, այլ զինծառայողի բնակության վայրի և զորամասի միջև առկա փաստացի հեռավորությունը,

✓ բացառել առողջության, տարիքի, երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու պատճառով զորացրված զինծառայողներին, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) կամ հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների ընտանիքներին այլ բնակելի տարածությամբ ապահովված չլինելու դեպքում ծառայողական բնակարաններն ազատելու պահանջ ներկայացնելու պրակտիկան,

✓ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություն և երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման պետական նպատակային ծրագրերից օգտվելու հնարավորություն նախատեսել նաև կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի պայմանագրային զինծառայողների համար,

✓ երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման պետական նպատակային ծրագրերից օգտվելու հնարավորություն նախատեսել նաև Քրեակատարողական ծառայության և Ոստիկանության ծառայողների համար՝ ապահովելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով նրանց տրված արտոնությունից օգտվելու հնարավորությունը,

✓ քննարկման առարկա դարձնել երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունք ձեռք բերած սպաների մտահոգությունը հիփոթեքային ծրագրի նպատակահարմարության հետ կապված՝ անհրաժեշտության դեպքում նրանց համար մշակելով հատուկ կարգավորումներ,

✓ Կառավարության 2007 թվականի մարտի 7-ի թիվ 384-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ նախատեսելով, որ ֆինանսական աջակցություն տրամադրելու համար հասանելիք սենյակների թիվը որոշելիս բնակարանային պայմանների բարելավման հաշվառման ցուցակում ընդգրկված անձինք հաշվի են առնվում՝ անկախ հաշվառումից հետո նրանց մահվան կամ կարգավիճակի փոփոխություններից,

✓ Երևան քաղաքում բնակարանային հաշվառման մեջ գտնվող շահառուներին բնակարանի գնման վկայագրով անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրել շուկայական միջինացված արժեքի 100 տոկոսի չափով,

✓ միջոցներ ձեռնարկել ծառայության ընթացքում հաշվառված Ոստիկանության և Քրեակատարողական ծառայության համակարգերի զինծառայողների բնակարանային ապահովման ուղղությամբ:

2. Զինծառայողների կենսաթոշակային իրավունքի ապահովումը

Պաշտպանը 2023 թվականի ընթացքում ևս շարունակել է ստանալ կենսաթոշակի իրավունքի իրացման հետ կապված բողոքներ: Բողոքները հիմնականում վերաբերել են զինվորական կենսաթոշակի չափը սխալ հաշվարկելուն, երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելիս զինվորական ծառայություն չհամարվող աշխատանքային ստաժը հաշվի չառնելուն և այլն: Պետք է դրականորեն նշել, որ ի

տարբերություն նախորդ տարիների՝ 2023 թվականին զինվորական կենսաթոշակների հետ կապված բողոքների թիվը Պաշտպանի աշխատակազմում նվազել է, ինչը վկայում է նաև իրավասու մարմինների կողմից ոլորտում կատարած աշխատանքների մասին: Քննարկվող ժամանակահատվածում քաղաքացիներից ստացվող բողոքներն ավելի շատ վերաբերել են կենսաթոշակների նշանակման գործընթացի ձգձգումներին, ինչի պատճառով մարդիկ կանգնել են տարբեր սոցիալական խնդիրների առաջ: Ճիշտ է, Պաշտպանության նախարարության հետ քննարկումների արդյունքում բարձրացվող հարցերը կարգավորվել են, սակայն այս առումով ևս անհրաժեշտ է աշխատանքներ իրականացնել՝ բացառելու համար կենսաթոշակների նշանակման ձգձգումները և համակարգային առումով լուծելու առկա խնդիրները:

2023 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմ ստացված կենսաթոշակային իրավունքին վերաբերելի հարցերից մեկով վեր է հանվել մտահոգիչ խնդիր, որը վերաբերում է զինծառայողի (մայոր) համաձայնության բացակայության պայմաններում նրան ավելի ցածր դասակարգումով (ավագ լեյտենանտ) զինվորական պաշտոնի նշանակելուն, այնուհետև հենց այդ պաշտոնից էլ զինված ուժերից արձակվելուն և երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ նշանակելուն: Հարկ է նկատել, որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ցածր պաշտոնի նշանակելիս զինծառայողի համաձայնությունը պարտադիր պահանջ է: Քննարկվող դեպքում, նախկին զինծառայողին նշանակվել է ավելի պակաս կենսաթոշակ, քան կարող էր ստանալ «մայոր» դասակարգումով պաշտոնից զինված ուժերից արձակվելու դեպքում: Բարձրացված խնդրի լուծմանը միտված առաջարկներով ու դիտարկումներով Պաշտպանը գրություն է հասցեագրել Պաշտպանության նախարարություն, բողոքի քննարկումը Պաշտպանի աշխատակազմում շարունակվում է:

Կենսաթոշակային իրավունքի իրացման հետ կապված մեկ այլ խնդիր է զինվորական ծառայություն չհամարվող աշխատանքային ստաժը երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակը հաշվարկելիս որևէ կերպ հաշվի չառնելը: Ներկա իրավակարգավորումների պարագայում հավասարաչափ կենսաթոշակ են ստանում ինչպես միայն երկարամյա զինվորական ծառայություն անցած անձինք, այնպես էլ նույն ժամկետով երկարամյա զինվորական ծառայություն անցած անձինք, ովքեր, բացի զինվորական ծառայությունը, կատարել են նաև զինվորական ծառայություն չհամարվող այլ աշխատանք: Հետևաբար, անհրաժեշտ է հաշվի առնել, որ հավասար պայմաններում զինվորական ծառայություն անցած անձանց չի կարող հավասար չափի կենսաթոշակ նշանակվել, եթե նրանցից մեկը կատարել է նաև զինվորական ծառայություն չհամարվող այլ աշխատանք: Այս խնդիրն ունի օրենսդրական մակարդակում կարգավորման անհրաժեշտություն, ինչի մասին Պաշտպանը շարունակաբար բարձրաձայնում է:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***մշակել կառուցակարգեր, որոնց շնորհիվ հնարավոր կլինի երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելիս հաշվի առնել նաև անձանց՝ զինվորական ծառայության ժամանակահատված չհամարվող աշխատանքային ստաժը,***
- ✓ ***զինվորական կենսաթոշակ նշանակելու գործընթացում հնարավոր ձգձգումները կամ հասանելիք չափերով հաշվարկներից շեղումները բացառելու***

նպատակով կատարելագործել գործող կառուցակարգերը՝ ապահովելու համար ոլորտային օրենսդրության պահանջների պատշաճ կատարումը:

3. Զինծառայողների իրավունքների ապահովումը մարտական գործողությունների մասնակցության համատեքստում

Պաշտպանը շարունակում է արձանագրել, որ մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ ստանալու հարցում նախկին զինծառայողները բախվում են խնդիրների[585]: Գործող օրենսդրությամբ մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ հնարավոր է տրամադրել բացառապես 1989-1994 թվականների ընթացքում և ոչ պակաս, քան 3 ամիս ընդհանուր տևողությամբ մարտական գործողություններին մասնակցածներին[586]: Քանի որ 3 ամսից ոչ պակաս մասնակցության կանոնն ընդհանուր է, ստացվում է, որ 1989-1994 թվականներից հետո տեղի ունեցած մարտական գործողություններին մասնակցած զինծառայողներին չի կարող տրամադրվել մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ:

ՊՆ-ից դեռևս 2021 թվականին ստացվել էր պարզաբանում այն մասին, որ հարցի առնչությամբ տեղի են ունեցել մի շարք քննարկումներ, ներկայացվել են խնդրի լուծմանն ուղղված տարբեր ուղիներ, մշակվել և շրջանառվել է նաև «Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցած անձանց մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տալու» հայեցակարգային փաստաթղթի նախագիծ, սակայն վերջնական որոշում դեռևս չի կայացվել: Պաշտպանը ևս մեկ անգամ արձանագրում է, որ խնդիրն առ այսօր լուծում չի ստացել և շարունակում է լինել արդիական: Խնդրի խորքային լուծման, սոցիալական արդարության ապահովման, մարտական գործողություններին մասնակցած զինծառայողների իրավունքների երաշխավորման տեսանկյունից անհրաժեշտ է գտնել արագ ու կոնկրետ լուծումներ, քանի որ մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տրամադրելն ինքնանպատակ չէ: Այն ունի որոշակի սոցիալական ուղղվածություն և, ըստ էության, նշված կարգավիճակը նախկին զինծառայողի համար հիմք է որոշակի արտոնություններից և սոցիալական ապահովության միջոցառումներից օգտվելու համար: Նրանք պետական բյուջեի միջոցների հաշվին ապահովվում են բժշկական օգնությամբ, ունեն բնակարանային ապահովության, քաղաքային ուղևորատար տրանսպորտի բոլոր տեսակներից՝ անկախ սեփականության ձևից (բացի տաքսիից), անվճար երթևեկելու, դրամական աջակցության, զինվորական կենսաթոշակի իրավունք:

Հենց այս նկատառումներով էլ Պաշտպանը 2023 թվականին խնդրին առնչվող լրացուցիչ պարզաբանումներ է պահանջել ՊՆ-ից: Պաշտպանի այն հարցադրումներին, թե ինչ փուլում է գտնվում մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ ստանալու իրավունք ունեցող անձանց (նախկին զինծառայողների) շրջանակի ընդլայնման հարցի քննարկումը, ներկայում ինչ կոնկրետ կառուցակարգեր ու չափորոշիչներ են մշակվել, Պաշտպանության նախարարությունը տեղեկացրել է, որ քննարկումների արդյունքում դեռևս վերջնական որոշում չի ընդունվել: Սակայն, 30.12.2020թ. ՀՀ ԶՈՒ ԳՇ

[585] Մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ ստանալու վերաբերյալ բողոքներ ստացել է նաև ՊՆ-ն: Ըստ նախարարության՝ 2023թ. ընթացքում ստացվել են մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ ստանալու կարգի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու վերաբերյալ քաղաքացիների 28 (18-ը՝ ՊՆ «Թեժ գծի» միջոցով) դիմում: Դիմումատուներին տրվել են կարգավիճակը ստանալու համար օրենսդրությամբ գործող կարգի և ներկայացման համար անհրաժեշտ փաստաթղթերի վերաբերյալ գրավոր կամ բանավոր պարզաբանումներ:

[586] Մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տրամադրելու կարգը սահմանվել է ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 1664-ն որոշմամբ:

պետի՝ «2020թ. սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 10-ը տեղի ունեցած մարտական գործողություններին մասնակցած և գործողությունների ավարտից հետո մարտական հերթապահության ընդգրկված անձնակազմի զինգրքույկներում գրառումներ կատարելու մասին» N 28 ԳՇ կարգադրության համաձայն՝ համապատասխան գրառումներ են կատարվում զինծառայողների զինգրքույկներում, անձնական վկայականներում և անձնական գործերում, ինչպես նաև պարտադիր ժամկետային զինծառայողների հաշվեծառայողական քարտերում և Հայրենիքի պաշտպանի անհատական գրքույկներում:

Պաշտպանը ևս մեկ անգամ ընդգծում է, որ մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տրամադրելու հետ կապված հարցը արդիական է և հնարավոր սեղմ ժամկետում լուծում պահանջող:

Այս համատեքստում անհրաժեշտ է նշել, որ դեռևս առկա է խնդիր այն իրավիճակում, երբ անձը նոր է ցանկանում ստանալ մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ: «Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցած անձանց մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տալու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 1664-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 10-րդ կետով սահմանվում է փաստաթղթերի ցանկ, որոնք անձը պետք է ներկայացնի միջգերատեսչական հանձնաժողով, այդ թվում՝ *մարտական գործողություններին մասնակցած հրամանատարի կողմից տրված մարտական ուղի, մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի պատճառական կապը հաստատող փաստաթուղթ:*

Մինչդեռ, բազմաթիվ դեպքերում նախկին զինծառայողները մարտական գործողություններին մասնակցած լինելու փաստը հավաստող փաստաթղթերը (օրինակ՝ ստաժն արտոնյալ պայմաններով հաշվարկելու համար) նախկինում արդեն իսկ ներկայացրած են լինում, և օբյեկտիվ պատճառներով այլևս անհնար է լինում դրանք կրկին ներկայացնել: Մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ ստանալու համար ներկայացված փաստաթղթերի հիման վրա անհրաժեշտ տեղեկանքը տրամադրելու խնդրի լուծման համար հարկավոր է առաջնորդվել վարչարարության հիմնարար սկզբունքներով: Այսպես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 9- րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմիններն իրավունք չունեն անձանցից պահանջել կատարելու այնպիսի գործողություններ, որոնք արդեն իսկ կատարվել են այդ անձանց կողմից այլ գործողությունների շրջանակներում կամ էլ իրենց բովանդակությամբ ներառվում են կամ կարող են ներառվել այդ շրջանակներում: Նույն օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

Վերը նշվածի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է՝

✓ ***օրենսդրական փոփոխությունների միջոցով սահմանել, որ եթե զինծառայողը նախկինում արդեն իսկ ներկայացրել է հրամանատարի կողմից տրված մարտական ուղի, մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի պատճառական կապը հաստատող փաստաթուղթ, և դրանք իրավական հետևանք են առաջացրել, ապա մարտական***

գործողությունների մասնակցի կարգավիճակ ստանալու համար այլևս անհրաժեշտ չէ ներկայացնել նույն փաստաթղթերը,

✓ 1994 թվականից հետո տեղի ունեցած մարտական գործողություններին մասնակցած զինծառայողներին համապատասխան կարգավիճակ տրամադրելու նպատակով մշակել ու ներդնել կոնկրետ կառուցակարգեր ու չափորոշիչներ՝ երաշխավորելով որոշակի արտոնություններից և սոցիալական միջոցառումներից օգտվելու հնարավորությունը՝ գոյություն ունեցող միջազգային չափանիշներին համապատասխան:

4. Զինվորական հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովումը

Զինվորական հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների անխոչընդոտ իրացումը Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքի կարևոր ուղղություններից է: Դա նաև ընդգծվում է Պաշտպանի՝ որպես «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում իրականացնող հաստատության կարգավիճակով:

Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությամբ վեր հանված խնդիրները ևս մեկ անգամ փաստում են, որ զինվորական հաշմանդամություն ունեցող անձինք իրենց իրավունքների իրացման դժվարությունների առաջ են կանգնում: Արձանագրված հիմնական խնդիրները վերաբերում են՝ 1) զինվորական ծառայության հետ հաշմանդամության պատճառական կապը չհաստատելուն, 2) բնակարանային պայմանների բարելավման հերթացուցակում հաշվառված՝ հաշմանդամություն ունեցող նախկին զինծառայողներին բնակարան չտրամադրելուն, 3) զորամասային պայմանները հաշմանդամություն ունեցող անձանց հարմարեցված չլինելուն, 4) զինվորական հաշմանդամություն ունեցող անձանց միջև տարբերակված մոտեցում դրսևորելուն և այլն[587]:

2023 թվականի ընթացքում Պաշտպանը մի շարք բողոքներ է ստացել 44-օրյա մարտական գործողություններին մասնակցած անձանց հոգեկան առողջության խնդիրների կապակցությամբ ՊՆ կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից պատճառական կապ չտրամադրելու վերաբերյալ: Քաղաքացիները նշում են, որ հոգեկան առողջության հետ կապված խնդիրներն իրենց մոտ ի հայտ են եկել պատերազմից մի քանի ամիս, երբեմն՝ մեկ տարի անց և ավելի ուշ: Մինչդեռ, ՊՆ կենտրոնական ռազմաբժշկական փորձաքննական կենտրոնը պատճառական կապի մասին եզրակացություն չի ներկայացնում: Այդ իսկ պատճառով քաղաքացիները չեն կարողանում ստանալ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ կամ օգտվել սոցիալական այլ արտոնություններից: Բարձրացված խնդիրների կապակցությամբ գրություններ են հասցեագրվել Պաշտպանության նախարարություն, նշված խնդիրը շարունակում է մնալ Պաշտպանի ուշադրության ներքո:

Տարբեր զորամասեր այցերը ևս մեկ անգամ փաստում են, որ զորամասային պայմանները հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված չեն: Զորամասերում հաշմանդամություն ունեցող անձինք բախվում են մի շարք խնդիրների, օրինակ, տեղաշարժի, սանհանգույցից օգտվելու, լրացուցիչ ֆիզիկական ծանրաբեռնվածություն պահանջող ծառայության ներգրավելու և այլն: Հարկ է նկատի

[587] Առավել մանրամասն տե՛ս Պաշտպանի 2021 թվականի տարեկան հաղորդումը, էջ 1004:

ունենալ, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար ֆիզիկական մատչելի միջավայրի ապահովումն առաջնային է նրանց կողմից իրենց իրավունքներից օգտվելու տեսանկյունից:

Հաշմանդամություն ունեցող զինծառայողի համար պետք է ապահովել ծառայողական այնպիսի պայմաններ, այդ թվում՝ կենցաղային, որոնք ֆիզիկական միջավայրը նրա համար կդարձնեն մատչելի:

Պաշտպանը դեռևս նախորդ տարեկան հաղորդմամբ բարձրացրել էր մի խնդիր, որը վերաբերում է ԽՍՀՄ զինված ուժերի և ՀՀ զինված ուժերի կազմում զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամություն ձեռք բերած անձանց միջև տարբերակված մոտեցման դրսևորմանը:

Այսպես, Կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի թիվ 141-Ն որոշման ենթակետի համաձայն՝ ԽՍՀՄ զինված ուժերի կազմում զինվորական ծառայության ընթացքում միայն 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք են ստանում 5000 և 3000 ՀՀ դրամ չափերով պարգևավճար, իսկ 3-րդ խմբի համար՝ պարգևավճար սահմանված չէ:

Մինչդեռ, նույն կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ պարգևավճար ստանում են համապատասխան պետական մարմիններում զինվորական ծառայության ընթացքում 1-ին, 2-րդ և 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք՝ համապատասխանաբար՝ 19000, 17000, 15000 ՀՀ դրամ չափերով:

Արդյունքում՝ Կառավարության նշված որոշումը տարբերակված մոտեցում է ցուցաբերում ԽՍՀՄ զինված ուժերի և ՀՀ զինված ուժերի կազմում զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամություն ձեռք բերած անձանց միջև՝ ԽՍՀՄ զինված ուժերի կազմում 3-րդ խմբի հաշմանդամություն ձեռք բերած անձանց դեպքում չսահմանելով պարգևավճար[588]:

Այս կապակցությամբ պետք է նշել, որ «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների միջև զինծառայողների, զինվորական ծառայությունից զորացրված անձանց և նրանց ընտանիքների անդամների սոցիալական և իրավական երաշխիքների մասին» 1992 թվականի փետրվարի 14-ի համաձայնագրի համաձայն՝ զինծառայողները, զինվորական ծառայությունից զորացրված և Համագործակցության մասնակից պետությունների տարածքներում բնակվող անձինք, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամներն օգտվում են նախկին ԽՍՀՄ օրենքներով սահմանված իրավունքների և արտոնությունների մակարդակից: Իրավունքների և արտոնությունների միակողմանի սահմանափակումներ չեն թույլատրվում: Համագործակցության մասնակից պետություններն իրավունք ունեն միջոցներ ձեռնարկել սոցիալական պաշտպանության ուժեղացման համար:

Շարունակում է արդիական մնալ հաշմանդամություն ունեցող նախկին զինծառայողների բնակարանային պայմանների բարելավման հարցը: Զինվորական հաշմանդամություն ունեցող նախկին զինծառայողները Պաշտպանին հայտնել են, որ տարիներ շարունակ հաշվառված լինելով որպես բնակարանային պայմանների բարելավման կարիքավոր՝ դեռևս բնակարան չեն ստացել:

Պաշտպանության նախարարության տեղեկացմամբ՝ ՀՀ կառավարության 2018թ. դեկտեմբերի 6-ի N 1419-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն՝ ՀՀ ՊՆ համակարգի՝

ֆունկցիոնալության խորը, ծանր և միջին աստիճանի սահմանափակումով հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման արդյունքում թվով 37 ընտանիքների տրամադրվել է բնակարանի գնման վկայագրեր: Բնակարան են ձեռք բերել թվով 34 ընտանիք:

Պաշտպանի կողմից մշակվել են զինծառայողներին ու նրանց ընտանիքների անդամներին ոչ ֆինանսական բնույթի արտոնություններ տրամադրելու առաջարկներ, որոնց իրական շահառուներ կարող են լինել նաև հաշմանդամություն ունեցող զինծառայողները: Այս հարցով Պաշտպանի աշխատակազմում մշակվել և հրապարակվել է նաև արտահերթ զեկույց[589]:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է՝

✓ հաշմանդամություն ունեցող զինծառայողների համար ծառայության բոլոր վայրերում ապահովել մատչելի ֆիզիկական միջավայր, այդ թվում՝ վերջիններիս կարիքներին հարմարեցնել սանհանգույցը, թեքահարթակները և այլն,

✓ ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի թիվ 141-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու միջոցով պարգևավճար սահմանել նաև ԽՍՀՄ զինված ուժերի կազմում զինվորական ծառայության ընթացքում 3-րդ խմբի հաշմանդամություն ձեռք բերած անձանց համար,

✓ ապահովել ծառայության բոլոր վայրերի ենթակառուցվածքների մատչելիությունը հաշմանդամություն ունեցող զինծառայողների համար:

[589] Արտահերթ զեկույցը հասանելի է https://shorturl.at/wKLQT հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

ԳԼՈՒԽ 10.ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ

1. Վարժական հավաքների ներգրավված անձանց իրավունքների ապահովման օրենսդրական և գործնական խնդիրները

2023 թվականի ընթացքում Պաշտպանը տարբեր եղանակներով, այդ թվում՝ գրավոր բողոքների կամ թեժ գծին ահազանգերի միջոցով ստացել է բազմաթիվ բողոքներ, որոնք առնչվում են վարժական հավաքների ներգրավելու գործընթացում քաղաքացիների իրավունքների ապահովման հարցերին: Ստացվող բողոքների հաշվառմամբ՝ առանձնացվել են մի քանի խումբ խնդիրներ: Մասնավորապես, քաղաքացիները Պաշտպանին դիմել են **վարժական հավաքների ծանուցումների հետ կապված հարցերով**: Ըստ քաղաքացիների՝ վերջիններս վարժական հավաքի են կանչվում հեռախոսազանգով, այլ ոչ թե օրենքով սահմանված կարգով՝ ծանուցագրի միջոցով[590]: Մեկ այլ խումբ խնդիրներ վերաբերում են **վարժական հավաքի ներգրավելուց առաջ պատշաճ բժշկական հետազոտություն ու փորձաքննություն անցկացնելուն**: Քաղաքացիները հաճախ բարձրացնում են զինկոմիսարիատների կողմից իրենց առողջական խնդիրները պատշաճ չհետազոտելու հարցեր: Ավելին, նշում են, որ գանգատների և նույնիսկ այդ գանգատները հիմնավորող բժշկական փաստաթղթերի առկայության պարագայում էլ զինկոմիսարիատները պատշաճ չեն հետազոտում և ուղեգրեր չեն տրամադրում: Ըստ քաղաքացիների՝ ուղեգրերը տրամադրվում են միայն երկարատև քաշքշուկներից հետո: Նշված խնդրի կապակցությամբ Պաշտպանության նախարարությունը ևս նշել է, որ 2023 թվականին ՊՆ թեժ գծով ստացվել է 9 զանգ, յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ տեղեկացվել է համապատասխան զինկոմիսարիատի ղեկավարությունը, և խնդիրը կարգավորվել է:

Ճիշտ է, վարժական հավաքի ներգրավվող անձանց պատշաճ բժշկական հետազոտություն ու փորձաքննություն իրականացնելու հարցերով Պաշտպանի աշխատակազմ ստացվող անհատական բողոքների շրջանակում Պաշտպանության նախարարության հետ (հաճախ հենց տարածքային զինկոմիսարիատների հետ) արդյունավետ համագործակցությամբ խնդիրները լուծվել են, սակայն կարևոր է, որ նշված հարցը համակարգային լուծում ստանա, և գործող պրակտիկան համապատասխանեցվի օրենքի պահանջին, այն է՝ վարժական հավաքի ներգրավման դեպքում անձի առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության պարտադիրության պահանջին: Գործող իրավակարգավորումներով նախատեսված է նաև, որ ծանուցման հիման վրա զինվորական կոմիսարիատ ներկայացած քաղաքացին անցնում է բուժհետազոտում, որի արդյունքներով վարժական հավաքի կանչվելու ենթակա ճանաչվելու դեպքում ուղարկվում է վարժական հավաքի անցկացման վայր: Հետևաբար, օրենքով նախատեսված և պարտադիր բժշկական հետազոտություններ չիրականացնելու պրակտիկան ինքնին խնդրահարույց է:

Հաջորդ խումբ հարցերը, որոնք վեր են հանվել ստացվող բողոքներով, վերաբերում են վարժական հավաքի ներգրավվող քաղաքացիներին **ընտանեկան դրությամբ պայմանավորված չզորակոչելուն կամ զորակոչը հետաձգելուն:**

[590] Ծանուցումների հետ կապված խնդիրներին առավել մանրամասն անդրադարձ է կատարվել սույն բաժնի՝ «Մարդու իրավունքների պաշտպանությունը զինվորական հաշվառման և զորակոչի կազմակերպման գործընթացը» գլխում:

Նշված հարցի կապակցությամբ Պաշտպանը կարևոր է համարում արձանագրել, որ 2023 ապրիլի 13-ին «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» և «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքներում կատարվել են փոփոխություններ և լրացումներ, որոնցով, հաշվի առնելով նաև Պաշտպանի առաջարկները[591], սահմանվել են զորահավաքային նախապատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին ընտանեկան պայմաններից ելնելով՝ քաղաքացիներին վարժական հավաքների չներգրավելու պայմանները: Արդյունքում, նախորդ տարիների համեմատ, նշված հարցով Պաշտպանի աշխատակազմ ստացվող բողոքների քանակը նվազել է: Այնուամենայնիվ, առանձին դեպքերում, ընտանեկան դրությամբ պայմանավորված վարժական հավաքի չներգրավելու առավել ճկուն մեխանիզմներ մշակելու անհրաժեշտություն կա: Որպես ասվածի հիմնավորում՝ կարևոր է նշել մի քանի օրինակ: Այսպես, դեպքերից մեկով քաղաքացին նշել է, որ եղբայրը մասնակցել է 44-օրյա մարտական գործողություններին, և այժմ նրա գտնվելու վայրն անհայտ է: Չնայած դրան, քաղաքացու տեղեկացմամբ, ինքը ստացել է վարժական հավաքի մեկնելու ծանուցագիր: Կոնկրետ դեպքում քաղաքացին խնդրել է իրեն չզորակոչել՝ մինչև եղբոր ճակատագրի մասին լուր ստանալը: Մեկ այլ խումբ բողոքներով դիմումատուները նշել են, որ կատարում են գյուղատնտեսական սեզոնային աշխատանքներ, ուստի այդ ժամանակահատվածում վարժական հավաքի ներգրավելու դեպքում աշխատանքները կմնան կիսատ (այս հարցով առավել շատ բողոքներ ստացվում են գարնանը և աշնանը): Քաղաքացիները խնդրել են իրենց զորակոչը հետաձգել (զորակոչել, օրինակ, ամռանը կամ ձմռանը): Մեկ այլ դեպքի շրջանակներում քաղաքացին տեղեկացրել է, որ որդին գերազանցությամբ սովորում է համալսարանում և վարժական հավաքի ներգրավվելու պատճառով չի կարողանա յուրացնել ստացած գիտելիքները և հանձնել քննությունները, ինչի պատճառով էլ կզրկվի վարձավճարի զեղչի արտոնությունից: Իհարկե, կոնկրետ դեպքում, ԿԳՄՍՆ-ի հետ համագործակցությամբ խնդիրը կարգավորվել է, սակայն կրթության իրավունքի անխոչընդոտ իրացման, ինչպես նաև վարժական հավաքի գործընթացը պատշաճ կազմակերպելու նպատակով անհրաժեշտ է համակարգային մոտեցում:

Հաջորդ խնդիրը վերաբերում է վարժական հավաքի ներգրավվող քաղաքացիների **վարկային պարտավորություններին**: Հարցն այն է, որ վարժական հավաքի ներգրավվողների վարկային պարտավորությունները պահպանվում են, իսկ վարժական հավաքի մասնակցության համար տրամադրվող վարձատրությունը երբեմն չի բավարարում վարկը մարելու համար: Քաղաքացիները մտահոգություն են ներկայացրել առ այն, որ ներգրավվելով վարժական հավաքի՝ չեն կարողանում պատշաճ կատարել իրենց պարտավորությունները բանկի առաջ, ուստի որոշակի բացասական իրավական հետևանքներ են առաջանում: Մարդիկ որպես խնդրի լուծման տարբերակ (կամ տարբերակներից մեկը) տեսնում են վարժական հավաքի մասնակցության օրերի քանակով (ներկայում 25 օր) վարկային պարտավորությունների սառեցումը:

Դրա հետ մեկտեղ, վարժական հավաքների ներգրավվողներից ստացվել են բողոքներ **մարտական հերթապահության ընդգրկվելու** վերաբերյալ: Խնդիրն այն է, որ ըստ քաղաքացիների՝ սահմանված ժամանակահատվածը բավարար չէ, որպեսզի անցնեն անհրաժեշտ պատրաստություն, տիրապետեն զինվորական կոնկրետ մասնագիտությունից բխող գործառույթներին ու պարտականություններին և դրանից հետո

[591] Առաջարկներն առավել մանրամասն հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/1883 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

միայն պատշաճ իրականացնեն առաջնագծում մարտական հերթապահություն[592]: Պետք է նկատի ունենալ, որ մարտական հերթապահությունից առաջ պատշաճ պատրաստվածությունը կարևոր է նաև զինծառայողների կյանքի և առողջության պահպանման իրավունքի տեսանկյունից:

Պաշտպանի ուշադրության ներքո են գտնվել նաև վարժական հավաքի ներգրավվածների սննդի, հիգիենայի ապահովման, կեցության պայմանների և բազմաթիվ այլ հարցեր: Ընդ որում, զորամասեր այցերի ընթացքում ուշադրության կենտրոնում են գտնվել նաև նշված հարցերը: Սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում Պաշտպանի հարցադրմանն ի պատասխան՝ Պաշտպանության նախարարությունը տեղեկացրել է, որ վարժական հավաքների վերաբերյալ 2023 թվականի ընթացքում ՊՆ թեժ գծով ստացված զանգերի մեծամասնությունը վերաբերել է վարժական հավաքների կազմակերպման ընթացակարգերին, դրամական ապահովման գումարների տրամադրման չափերին և ժամկետներին: Նախարարությունը հավելել է, որ վարժական հավաքներին ընդգրկված անձնակազմին սննդով ապահովման գործընթացը վերահսկվել է ԶՈՒ թիկունքի վարչության կողմից: Բոլոր զինծառայողները կրում են Պաշտպանության նախարարության կողմից հատկացված ճտքավոր կոշիկները և՛ մարտական, և՛ ֆիզիկական պատրաստության պարապմունքների ընթացքում: Հարմարավետության մասով դժգոհություններ առկա չեն, իսկ որակական ցուցանիշները համապատասխանում են տեխնիկական բնութագրի պահանջներին, քանի որ ապրանքները մուտք անելուց առաջ պարտադիր ենթարկվում են լաբորատոր փորձաքննության: Համապատասխանության դեպքում մուտքագրվում են ԶՈՒ իրային կենտրոնական բազա և հատկացվում զինծառայողներին:

Պաշտպանի հարցմանն այն մասին, թե արձանագրվել են արդյոք նախկինում այլընտրանքային ծառայություն անցած քաղաքացիներին վարժական հավաքների կանչելու դեպքեր, եթե այո՝ ինչպես են կարգավորվել նշված հարցերը, ինչ բնույթի ծառայությունների են ներգրավել նշված անձինք՝ Պաշտպանության նախարարությունը տեղեկացրել է, որ 2023 թվականի ընթացքում նախկինում այլընտրանքային ծառայություն անցած քաղաքացիներին վարժական հավաքներին կանչելու դեպքեր չեն արձանագրվել:

Անհրաժեշտ է նշել, որ վարժական հավաքների գործընթացում մարդու իրավունքների հետ կապված հարցերն առանձին քննարկման առարկա են դարձվել 2023 թվականի հոկտեմբերի 10-ին կայացած՝ Պաշտպանին առընթեր Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով փորձագիտական խորհրդի նիստում[593]: Քննարկմանը մասնակցել են Եվրոպայի խորհրդի, Ազգային ժողովի, Պաշտպանության նախարարության, Գլխավոր դատախազության, Քննչական կոմիտեի, Ազգային անվտանգության ծառայության, Անվտանգության խորհրդի գրասենյակի, Փաստաբանների պալատի և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Պաշտպանի կազմակերպած նշված միջոցառումը նպատակ է ունեցել նաև միավորել ջանքերը՝ զինված ուժերում մարդու իրավունքներին առնչվող խնդիրները հաղթահարելու ուղղությամբ:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ առաջարկվում է՝

---

[592] Այս համատեքստում, մարդիկ բողոքում են, որ օրինակ, 10-15 և ավելի տարիներ առաջ արձակվել են ԶՈՒ-ից, ներկայում ընդգրկվել են վարժական հավաքի, ստիպված են լինում 1 շաբաթում վերապատրաստվել, ինչը չի բավականացնում զենքի և ծառայության հետ կապված այլ հարցերը պատշաճ յուրացնելու և առաջնագծում մարտական հերթապահություն իրականացնելու համար:

[593] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2733 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

- ✓ ***բացառել քաղաքացիներին պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին (վարժական հավաք, զորավարժություններ և այլն) օրենքով սահմանված կարգի խախտմամբ ծանուցելու պրակտիկան,***
- ✓ ***վարժական հավաքի ներգրավելուց առաջ բոլոր դեպքերում իրականացնել բժշկական հետազոտություններ և փորձաքննություններ՝ երաշխավորելով ինչպես օրենքի պահանջի կատարումը, այնպես էլ քաղաքացիների իրավունքների պատշաճ իրացումը,***
- ✓ ***կատարելագործել գործող կառուցակարգերը և վարժական հավաքների ներգրավելիս յուրաքանչյուր դեպքում ցուցաբերել անհատական մոտեցում՝ ուշադրություն դարձնելով անձի առողջական, ընտանեկան կամ այլ օբյեկտիվ հանգամանքներին, և իրավաչափ խոչընդոտ հանդիսացող խնդիրների վերացումից հետո միայն քննարկել քաղաքացուն վարժական հավաքի ներգրավելու հնարավորության հարցը:***

2. Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների հետ կապված խնդիրները ռազմական գործողությունների ավարտից հետո

Պաշտպանը 2023 թվականի ընթացքում շարունակել է մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերելի հետպատերազմյան խնդիրների բացահայտման, ուսումնասիրման ու լուծման եղանակներ ներկայացնելու ուղղությամբ աշխատանքների իրականացումը: Պաշտպանը հրապարակել է արտահերթ զեկույցներ[594], հանդես եկել բազմաթիվ հրապարակային հայտարարություններով (դրանք ուղղված են եղել, օրինակ, բանակում կարգապահության ամրապնդման ու զինծառայողի դերի բարձրացման միջոցով զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության համակարգի կատարելագործմանը, Պաշտպանի մանդատի շրջանակներում գերության մեջ գտնվող մեր հայրենակիցների իրավունքների պաշտպանությանը, գտնվելու վայրն անհայտ զինծառայողների ծնողներին քրեական վարույթի շրջանակում տուժող ճանաչելուն, սահմանային բնակավայրերում մարդկանց իրավունքն ապահովելուն և այլն)[595], կոնկրետ առաջարկություններով գրություններ է հասցեագրել իրավասու գերատեսչություններ, առանձին հանդիպում-քննարկումներ ունեցել ներպետական և միջազգային դերակատարների հետ, պարբերաբար ընդունել զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին (այդ թվում՝ գտնվելու վայրն անհայտ, զոհված, վիրավորում ստացած և այլն), բազմաթիվ այցեր իրականացրել սահմանային բնակավայրեր (օրինակ, Երասխ, Տեղ, Կութ, Նորաբակ, Սոթք և այլն), զորամասեր և այլն:

Պաշտպանի ամենօրյա ուշադրության ներքո են գտնվել մարտական գործողությունների ազդեցությունը կրած զինծառայողների ու նրանց ընտանիքների անդամների իրավունքների հետ կապված հարցերը: Պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքների ուսումնասիրությամբ վեր են հանվել հիմնականում հետևյալ

---

594 Հասանելի է հետևյալ https://ombuds.am/images/files/e12940a4c1afee3703896176aa538251.pdf, https://ombuds.am/images/files/4e73af39ae6617df7437605f57eb01cd.pdf, https://ombuds.am/images/files/e76a3b67b4a56fadb3271705e33eeec5.pdf հղումներով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

595 Դրանք ուղղված են եղել, օրինակ, սահմանային բնակավայրերում մարդկանց իրավունքն ապահովելուն, բանակում կարգապահության ամրապնդմանն ու զինծառայողի դերի բարձրացմանը, գերության մեջ գտնվող մեր հայրենակիցների իրավունքների պաշտպանությանը, ադրբեջանական հանցագործությունների մասին միջազգային կառույցներին ներկայացնելուն, գտնվելու վայրն անհայտ զինծառայողների ծնողներին քրական վարույթի շրջանակում տուժող ճանաչելուն (https://www.ombuds.am/images/files/00921e1bd79ec76336266b5f9c9f2c95.pdf) և այլն, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

խնդիրները՝ 1) զինգրքույկում մարտերին մասնակցության վերաբերյալ գրառման չկատարում, 2) գտնվելու վայրն անհայտ կամ գերության մեջ գտնվող զինծառայողների ճակատագրի վերաբերյալ տեղեկություններ ստանալու հետ կապված խնդիրներ, 3) մարտական գործողությունների մասնակիցներին, վիրավորում ստացածներին, գտնվելու վայրն անհայտ և զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին հոգեբանական աջակցության չտրամադրում, 4) «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով սահմանված գումարի չտրամադրում կամ ձգձգումներ, 5) հիվանդությունների, վնասվածքների, խեղումների՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապի վերաբերյալ եզրակացության չներկայացում, 6) գտնվելու վայրն անհայտ զինծառայողների ծնողներին քրեական վարույթի շրջանակում տուժող չճանաչելու հետ կապված հարցեր և այլն:

Վերոնշյալ խնդիրների կապակցությամբ Պաշտպանին հասցեագրված բողոքների շրջանակում մշտապես ակտիվ քննարկումներ են տեղի ունեցել պետական իրավասու մարմինների հետ, բազմաթիվ խնդիրներ Պաշտպանի աջակցությամբ արագ լուծումներ են ստացել: Մի շարք բողոքների քննարկումը Պաշտպանի աշխատակազմում դեռևս շարունակվում է:

Մանրամասն չանդրադառնալով յուրաքանչյուր խնդրին[596]՝ հարկ ենք համարում վերահաստատել միջազգային իրավական մոտեցումներն առ այն, որ որպես գործատու՝ ՀՈՒն իրենց ներկա և նախկին աշխատակիցների մասին հոգ տանելու պարտականություն ունեն: Ծառայության ընթացքում, հատկապես պատերազմական կամ պատերազմականին մոտ իրավիճակներում զինծառայողները հաճախ լինում են վտանգավոր և կյանքին սպառնացող հանգամանքներում: Շատ վետերաններ հաճախ ծառայության հետևանքներից տառապում են անգամ ծառայությունը թողնելուց հետո, օրինակ՝ հետտրավմատիկ սթրեսային խանգարումից, ֆիզիկական առողջության հետ կապված խնդիրներից և անդամալուծությունից: Պետություններն ունեն վետերանների մասին հոգ տանելու եթե ոչ իրավական, ապա բարոյական պարտականություն[597]:

2020 թվականի 44-օրյա մարտական գործողություններից տևական ժամանակ է անցել, սակայն բազմաթիվ զինծառայողների ճակատագրեր շարունակում են մնալ անհայտ: Տվյալ խնդրի վերաբերյալ Պաշտպանը գրավոր ու բանավոր եղանակներով ստացել է բազմաթիվ բողոքներ, պարբերաբար ընդունել է զինծառայողների հարազատներին, տեղում լսել նրանց մտահոգող խնդիրները[598]: Օրինակ, ծնողների մի մասը տարբեր պատճառներով համաձայն չէ ԴՆԹ փորձաքննությունների արդյունքների հետ, մյուս մասը մտահոգություն է ներկայացրել քրեական վարույթների ընթացքի հետ կապված, ծնողների մեկ այլ խումբ բարձրացրել է սոցիալական, հոգեբանական աջակցության և այլ բնույթի խնդիրներ: Բոլոր հարցերին Պաշտպանի աշխատակազմում ցուցաբերվել է անհատական մոտեցում: Մի շարք դեպքերում խնդիրներին լուծումներ տալու նպատակով Պաշտպանը պարզաբանումների պահանջով ու առաջարկություններով գրություններ է հասցեագրել տարբեր պետական մարմիններ: Արդյունքում՝ որոշ խնդիրներ (սոցիալական, հոգեբանական աջակցության տրամադրման, քրեական վարույթների հետ

[596] Դրանց առանձին-առանձին անդրադարձ է կատարվել, խորքային պատճառները վերհանվել և վերլուծվել են Պաշտպանի 2020 և 2021 թվականների տարեկան հաղորդումներում էջեր՝ 1041-1055:

[597] Տես, ԵԱՀԿ ձեռնարկ՝ ՀՈՒ անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին, 2008 թվական, էջ 261: Հասանելի է https://www.osce.org/files/f/documents/6/7/88572.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[598] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2494 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

կապված) ստացել են դրական լուծումներ, մնացած խնդիրների մասով Պաշտպանի աշխատակազմը մշտապես կապի մեջ է զինծառայողների հարազատների հետ, և Պաշտպանի մանդատին վերաբերելի հարցերով իրավասու գերատեսչությունների հետ տարվում են աշխատանքներ՝ նպատակ ունենալով ջանքերի համատեղմամբ (զինծառայողների ծնողներ – Մարդու իրավունքների պաշտպան - պետական մարմիններ) հաղթահարել խնդիրները և երաշխավորել մարդու իրավունքները:

Այս առումով Պաշտպանը անհրաժեշտ է համարում ընդգծել 2022 թվականի հոկտեմբերին ստեղծված՝ Գերիների, պատանդների և անհայտ կորած (գտնվելու վայրն անհայտ) անձանց հարցերով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողովի դերը, որտեղ քննարկման առարկա են դարձվում ինչպես վերը նշված, այնպես էլ խնդրին վերաբերելի այլ համակարգային հարցեր[599]: Մեկ միասնական մարմնի ստեղծումը կարևոր է առավել համակարգված և փոխհամաձայնեցված եղանակով անձանց որոնողական աշխատանքներն իրականացնելու և ընտանիքների անդամների իրավունքները երաշխավորելու տեսանկյունից: Այս համատեքստում Պաշտպանը հատուկ կարևորում է բոլոր իրավասու պետական մարմինների կողմից գերության մեջ գտնվող, գտնվելու վայրն անհայտ, զոհված զինծառայողների հարազատների հետ պատշաճ հաղորդակցության վարումը, նրանց բարձրացրած խնդիրներին արձագանքող լինելը:

Գտնվելու վայրն անհայտ զինծառայողների և քաղաքացիական անձանց, ինչպես նաև վերջիններիս ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության հետ կապված հարցերը, բացի ներպետական իրավասու մարմիններին հասցեագրելուց, Պաշտպանն առանձին հանդիպումների ընթացքում ներկայացրել է նաև մարդու իրավունքների հարցերով միջազգային կարևոր դերակատարներին[600]: 2023 թվականի մայիսի 10-ին Պաշտպանը ԵԽ մարդու իրավունքների հանձնակատար Դունյա Միյատովիչի հետ Ստրասբուրգում քննարկել է Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերելի, այդ թվում՝ Ադրբեջանում պահվող հայ ռազմագերիների իրավունքների երաշխավորման, վերջիններիս վերադարձի ապահովման հրատապության և գտնվելու վայրն անհայտ զինծառայողներին վերաբերելի մի շարք հարցեր: «Մեզ համար՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության առաքելությունն իրականացնող անձանց, իրավունքների պաշտպանության տեսանկյունից չպետք է լինեն փակ դռներ: Եթե նույնիսկ, որոշակի իրավիճակով պայմանավորված, դրանք առկա են, ապա պետք է փնտրել այդ փակ դռները բացելու հնարավորություններ: Հակառակ պարագայում մարդու իրավունքների պաշտպանության մեր առաքելությունը հաջողված համարել հնարավոր չի լինի»,- շեշտել է Պաշտպանը[601]:

Գտնվելու վայրն անհայտ զինծառայողների ծնողների իրավունքների պաշտպանության և պատշաճ իրացման հարցերում առանցքային կարևորություն ունի 2023 թվականի մայիսի 8-ին Պաշտպանի ներկայացրած իրավական դիրքորոշումը, որով Պաշտպանը միջազգային իրավական չափորոշիչների և ներպետական օրենսդրության պահանջների հաշվառմամբ՝ հատուկ ընդգծել է, որ անհայտ կորած զինծառայողների ծնողները պետք է հնարավորություն ունենան իրենց զավակների վերաբերյալ քննվող քրեական վարույթներով ներգրավվելու որպես տուժող[602]: Պաշտպանի դիրքորոշումից

[599] Հասանելի է https://www.sns.am/hy/news/view/870 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[600] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2506, https://ombuds.am/am/site/ViewNews/2564, https://ombuds.am/am/site/ViewNews/2802, https://ombuds.am/am/site/ViewNews/2767, https://ombuds.am/am/site/ViewNews/2516, https://ombuds.am/am/site/ViewNews/2607 հղումներով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[601] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2520 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[602] Նշված հարցին մանրամասն անդրադարձ է կատարվել հաջորդ ենթավերնագրում:

հետո իրավասու մարմինները գտնվելու վայրն անհայտ զինծառայողների ծնողներին քրեական վարույթներով սկսել են ներգրավել որպես տուժող:

Ոչ պակաս կարևոր հարց է մարտական գործողությունների մասնակիցներին, վիրավորում ստացածներին, գտնվելու վայրն անհայտ և զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին հոգեբանական աջակցության տրամադրումը: Հոգեբանական աջակցության տրամադրումը կարող է հետագայում կանխել հոգեկան առողջության հետ կապված հիվանդությունների ձեռքբերումը, դրականորեն ազդել ինչպես զինված ուժերի անձնակազմի, այնպես էլ քաղաքացիների բարոյահոգեբանական վիճակի վրա: Սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում Պաշտպանն առանձին հարցադրում է կատարել Պաշտպանության նախարարություն այն մասին, թե ինչ հոգեբանական աջակցություն է տրամադրվում մարտական գործողությունների մասնակիցներին, վիրավորում ստացածներին, գտնվելու վայրն անհայտ և զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին (այդ թվում՝ 2023 թվականի սեպտեմբերին ադրբեջանական ագրեսիայի հետևանքով տուժածներին): Ըստ ՊՆ-ի՝ նշված անձանց հոգեբանական աջակցություն տրամադրվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության համակարգմամբ՝ կայացած մրցույթի արդյունքներով ընտրված՝ Սեդա Ղազարյանի անվան հոգեկան առողջության հիմնադրամի (կոնսորցիումի) կողմից[603]:

2023 թվականի ընթացքում հոգեբանական աջակցության ստանալու հարցով Պաշտպանին են դիմել նաև գտնվելու վայրն անհայտ զինծառայողների հարազատները: Արդյունքում Պաշտպանի աջակցությամբ նրանց հետ աշխատել և շարունակում են աշխատել հոգեբաններ: Զորամասեր այցերի ընթացքում ուշադրության կենտրոնում են գտնվել զինծառայողների (և՛ զինվորների, և՛ սպաների) պատշաճ հոգեբանական աջակցություն տրամադրելու հետ կապված հարցերը, այս համատեքստում մշտապես կարևորվել է սպա-հոգեբանների դերը: ՊՆ-ի տեղեկացմամբ՝ զինծառայողներին հոգեբանական աջակցության տրամադրման պայմանները բարելավելու ուղղությամբ զինված ուժերի ընտրված զորամասերում 2023 թվականի ընթացքում ավելացվել են սպա-հոգեբանների հաստիքներ, ինչպես նաև մասնագիտական գույքով կահավորվել են ընտրված զորամասերի հոգեբանական օգնության կետերը: Պաշտպանը դրական է գնահատում Պաշտպանության նախարարության իրականացրած աշխատանքները: Միևնույն ժամանակ, կարևոր է, որպեսզի համակարգային քայլեր ձեռնարկվեն պրոֆեսիոնալ սպա-հոգեբանների ինստիտուտի կայացման ուղղությամբ: Այս հարցը ևս շարունակելու է գտնվել Պաշտպանի ուշադրության ներքո:

Հաջորդ խնդիրը, որի վերաբերյալ 2023 թվականի ընթացքում Պաշտպանը շարունակել է ստանալ բողոքներ, վերաբերում է մարտական գործողությունների մասնակիցների զինգրքույկներում մարտական գործողությունների մասնակցության մասին գրառումներ կատարելու հարցերին: Խոսքը վերաբերում է, օրինակ, 2020 թվականի 44-օրյա, 2022 թվականի սեպտեմբերի 13-14-ի և մյուս

[603] Կոնսորցիումը ձևավորվել է ներքոհիշյալ կազմակերպությունների կողմից՝
ա) «Սեդա Ղազարյանի անվան հոգեկան առողջության հիմնադրամ»,
բ) «Հայկական հոգեբուժական ասոցիացիա» ՀԿ,
գ) «Հոգեբանների հայկական գիտական միավորում» ՀԿ,
դ) «Ամբրա» հոգեկան բարեկեցության կենտրոն» ՀԿ,
ե) «Զրո» ՍՊԸ,
զ) «ԷԼ-ՊԻ հոգեբանական ուսումնախորհրդատվական կենտրոն» ՍՊԸ,
է) «Ապագա» ՍՊԸ,
թ) «Մարիամ Մեհրաբյան Վաչագանի» ԱՁ:

ժամանակահատվածներում մարտական գործողությունների մասնակիցների զինգրքույկներում նշված հանգամանքը հաստատող գրառումներ կատարելուն: Բողոքների ուսումնասիրմամբ վեր են հանվել հիմնականում հետևյալ խնդիրները. ա) մարտական գործողություններին մասնակցության վերաբերյալ առհասարակ գրառման չկատարում, բ) մարտական գործողությունների ժամկետի վերաբերյալ գրառումների սխալ կատարում, գ) գրառում կատարելու նպատակով համապատասխան ստորաբաժանումներից (զորամասերից) տեղեկատվություն ստացված չլինելու կամ կատարված գրառումներում անճշտություններ լինելու վերաբերյալ խնդիրներ և այլն: Պաշտպանության նախարարությունը ևս հայտնել է, որ ՊՆ թեժ գծով զինվորական գրքույկներում մարտական գործողություններին մասնակցելու վերաբերյալ գրառումներ չկատարելու վերաբերյալ ստացվել են բողոքներ, որոնք աշխատանքային կարգով լուծվել են:

Կարևոր է արձանագրել, որ անհատական բողոքների շրջանակում Պաշտպանի աջակցությամբ բազմաթիվ հարցեր ստացել են լուծումներ և քաղաքացիների զինգրքույկներում կատարվել են անհրաժեշտ գրառումները:

Մեկ այլ խումբ բողոքներ վերաբերել են մարտական գործողություններին մասնակցած անձանց ստացած հիվանդությունների, վնասվածքների, խեղումների՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապ չտրամադրելուն:

Ադրբեջանական ագրեսիայի և ռազմական գործողությունների հետևանքով բազմաթիվ զինծառայողներ ստացել են հիվանդություններ, վնասվածքներ, խեղումներ: Պաշտպանը շարունակել է ստանալ բողոքներ, որոնցով քաղաքացիները դժգոհություններ են ներկայացրել այն մասին, որ մարտական գործողություններին մասնակցած անձանց ստացած հիվանդությունների, վնասվածքների, խեղումների՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապը հաստատելու հարցում հանդիպում են խոչընդոտների, մասնավորապես, գործընթացն անընդհատ ձգձգվում է:

Հիվանդության, խեղման, վնասվածքի պատճառական կապը զինվորական ծառայության հետ հաստատված չլինելու պարագայում անձը չի կարողանում ձեռք բերել մի շարք իրավունքներ և արտոնություններ: Օրինակ, Պաշտպանին դիմած քաղաքացիներից մեկը չէր կարողանում ստանալ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ, քանի որ վնասվածքի պատճառական կապի մասին վերջնական եզրակացություն Կենտրոնական ռազմաբժշկական փորձաքննական կենտրոնը չէր ներկայացրել: Հարկ է նկատի ունենալ, որ պետությունը ՀՀ սահմանների պաշտպանության մարտական գործողություններին մասնակցած անձանց ստացած հիվանդությունների, վնասվածքների, խեղումների՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապը հաստատելով՝ հստակեցնում է ստանձնած պարտավորությունների շրջանակն իր քաղաքացու հանդեպ՝ նրան տրամադրելով սոցիալական ու իրավական լրացուցիչ պաշտպանության երաշխիքներ:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ առաջարկվում է՝

- ✓ ***գտնվելու վայրն անհայտ զինծառայողների հարազատների (ծնողների) հետ իրավասու մարմինների կողմից մշտապես վարել պատշաճ հաղորդակցություն, միջազգային չափորոշիչներին համապատասխան՝ երաշխավորել նրանց իրավունքները և դրանց վերաբերելի հարցերին լինել առավել արձագանքող,***
- ✓ ***մարտական գործողությունների մասնակիցներին, վիրավորում ստացածներին, գտնվելու վայրն անհայտ և զոհված զինծառայողների ընտանիքների***

անդամներին մշտապես պահել պետության հոգածության ներքո, այդ թվում՝ պարբերաբար հոգեբանական աջակցություն տրամադրելու և համապատասխան ծրագրեր իրականացնելու միջոցով,

- ✓ ***ապահովել մարտական գործողություններին մասնակցած անձանց ստացած հիվանդությունների, վնասվածքների, խեղումների կապակցությամբ պատճառական կապ տրամադրելու գործընթացի հնարավորին սեղմ ժամկետում իրականացումը՝ երաշխավորելով այդ հանգամանքի հաստատումից բխող իրավունքների (սոցիալական, առողջապահական և այլն) իրացումը,***
- ✓ ***ապահովել զինծառայողների զինվորական գրքույկներում գրառումների պատշաճությունն ու ճշգրտությունը:***

3.Գտնվելու վայրն անհայտ զինծառայողների ծնողներին քրեական վարույթի շրջանակում տուժող ճանաչելը

Պաշտպանը պարբերաբար բողոքներ է ստացել գտնվելու վայրն անհայտ զինծառայողների ծնողներից առ այն, որ իրենց զավակների ճակատագրերի, այդ թվում՝ պատերազմի ընթացքում նրանց տեղաշարժի, գտնվելու վայրի, քրեական վարույթի շրջանակներում կատարվող վարութային գործողությունների ընթացքի, արդյունքների և այլնի վերաբերյալ տեղեկություններ ստանալու հարցով դիմել են քրեական վարույթն իրականացնող մարմին, սակայն իրենց տեղեկություններ չեն տրամադրվել, և վկայակոչվել է նախաքննության տվյալների հրապարակման անթույլատրելիությունը: Ըստ ծնողների՝ խնդիրն այն է, որ չնայած բազմաթիվ միջնորդություններին՝ քրեական վարույթով տուժող չեն ճանաչվել, այդ իսկ պատճառով իրենց տեղեկություններ չեն տրամադրվում:

Հաշվի առնելով քրեական վարույթով տուժով ճանաչելու հարցի վերաբերյալ զինծառայողների ծնողներից շարունակ ստացվող բողոքները, նկատի ունենալով հարցի զգայունությունը և կարևորությունը մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից՝ Պաշտպանը 2023 թվականի մայիսի 8-ին հրապարակել է իրավական դիրքորոշում՝ նպատակ ունենալով իրավասու մարմինների հետ համագործակցությամբ (Քննչական կոմիտե, Դատախազություն) վերջնականապես լուծում տալ նշված խնդրին[604]: Պաշտպանի ներկայացրած իրավական դիրքորոշումն ընդհանուր առմամբ հանգում է հետևյալին.

1. ՄԻԵԴ-ն իր բազմաթիվ վճիռներում անդրադարձել է անհայտացումների դեպքերին: **ՄԻԵԴ-ն անհայտացումները դիտարկում է Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված կյանքի, անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքների, ինչպես նաև խոշտանգման և այլ վատ վերաբերմունքի արգելքի համատեքստում**[605]:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումները.
• *Անհայտացումները հատուկ բեռ են անձանց հարազատների վրա, ովքեր ապրում են իրենց հարազատների ճակատագրի վերաբերյալ անտեղյակ և այդ անորոշության արդյունքում տառապանք են զգում, որը, կախված պետության կողմից անհետացման*

[604] Պաշտպանի իրավական դիրքորոշումն ամբողջությամբ հասանելի է https://ombuds.am/images/files/00921e1bd79ec76336266b5f9c9f2c95.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[605] Տե՛ս Թիմուրթասն ընդդեմ Թուրքիայի (TİMURTAŞ v. TURKEY) գործով ՄԻԵԴ 2000 թվականի հունիսի 13-ի վճիռը, գանգատ թիվ 23531/94, կետ 82:

դեպքի արդյունավետ քննության ուղղությամբ ոչ բավարար միջոցների ձեռնարկումից և այլ հանգամանքներից, կարող է հանգեցնել ՄԻԵԿ 3-րդ հոդվածի խախտման[606]:

• Անհետացումների դեպքում, հաշվի առնելով դրանց հատուկ բնույթը, որը դրսևորվում է անորոշության շարունակվող իրավիճակով, երբ պատահածի վերաբերյալ տեղեկությունները չեն ներկայացվում կամ դիտավորյալ թաքցվում կամ խեղաթյուրվում են՝ դրանով իսկ երկարացնելով տուժողի հարազատների տառապանքը՝ պայմանավորված անհետացած անձի և նրա գտնվելու վայրի վերաբերյալ տեղեկությունների բացակայությամբ, առաջացնում է շարունակական իրավիճակ: Հետևաբար, նման դեպքերում պետության ընթացակարգային պարտավորությունը տեսականորեն պահպանվում է այնքան ժամանակ, քանի դեռ անձի ճակատագիրը պարզ չէ: Տևական ժամանակով անհրաժեշտ քննություն չիրականացնելը դիտվում է որպես շարունակական խախտում: Սա կիրառելի է նույնիսկ այն դեպքում, երբ ի վերջո գործում է անձի մահացած լինելու կանխավարկածը[607]:

2. Մեկ այլ գործով ՄԻԵԴ-ը նշել է. «... Արդյոք ընտանիքի անդամը 3-րդ հոդվածին հակասող վերաբերմունքի զոհ է, կախված կլինի հատուկ գործոնների առկայությունից, որոնք դիմումատուի տառապանքներին տալիս են էմոցիոնալ անհանգստությունից տարբերվող հարթություն և բնույթ, որը կարող է համարվել որպես անխուսափելիորեն պատճառված մարդու իրավունքների լուրջ խախտում: Համապատասխան տարրերը կներառեն ընտանեկան կապի մերձությունը, այդ համատեքստում, որոշակի կշիռ կվերցվի ծնող-երեխա կապին, հարաբերությունների առանձնահատուկ հանգամանքները, ընտանիքի անդամի ականատես լինելը խնդրո առարկա իրադարձություններին, ներգրավվածությունը, ընտանիքի անդամի կողմից անհետացած անձի մասին տեղեկություններ ստանալու և այդ հարցումներին իշխանությունների կողմից արձագանքելուն: **Դատարանը նաև շեշտում է, որ նման խախտման էությունը ոչ այնքան ընտանիքի անդամի «անհետանալու» փաստն է, որքան առնչվում է իշխանությունների արձագանքներին և վերաբերմունքին այդ իրավիճակի առնչությամբ, երբ այն հայտնվում է նրանց ուշադրության կենտրոնում: Հատկապես վերջինիս մասով ազգականը կարող է ուղղակիորեն պնդել, որ իշխանությունների վարքագծի զոհն է[608]:** »:

3. Հիշյալ համատեքստում կարևոր է անդրադառնալ նաև Օսմանօղլին ընդդեմ Թուրքիայի գործով ՄԻԵԴ-ի դիրքորոշմանը, ըստ որի՝ կյանքին սպառնացող հանգամանքներում անձի անհետացման դեպքում պետությունը **Կոնվենցիայի 2-րդ հոդվածին բնորոշ դրական պարտավորության համաձայն՝ պետք է ձեռնարկի գործառնական միջոցներ՝ պաշտպանելու անհետացած անձի կյանքի իրավունքը**[609]: Իսկ Մարինա Ալեքսեևան ընդդեմ Ռուսաստանի գործով ՄԻԵԴ-ի արտահայտած իրավական դիրքորոշման համաձայն՝ պետությունը պետք է պատշաճ քայլեր ձեռնարկի պաշտպանելու իր հոգածության ներքո գտնվող անձանց կյանքը:

---

[606] Տե՛ս Վառնավան և այլք ընդդեմ Թուրքիայի (VARNAVA AND OTHERS v. TURKEY) գործով 2009 թվականի սեպտեմբերի 18-ի վճիռը, գանգատ թիվ 16064/90, կետ 200:

[607] Տե՛ս Վառնավան և այլք ընդդեմ Թուրքիայի (VARNAVA AND OTHERS v. TURKEY) գործով 2009 թվականի սեպտեմբերի 18-ի վճիռը, գանգատ թիվ 16064/90, կետ 148:

[608] Տե՛ս Չաքըջին ընդդեմ Թուրքիայի (ÇAKICI v. TURKEY) գործով 1998 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 23657/94, կետ 98:

[609] Տե՛ս Օսմանօղլին ընդդեմ Թուրքիայի (OSMANOĞLU v. TURKEY) գործով 2008 թվականի հունվարի 24-ի վճիռը, գանգատ թիվ 48804/99, կետ 75:

4. Զինծառայողների կյանքի իրավունքի պաշտպանության առումով պետությունն ունի **նյութական և ընթացակարգային** պարտավորություններ: Նյութական պարտավորություններն իրենց հերթին լինում են նեգատիվ և պոզիտիվ:

Զինված ուժերում կյանքի իրավունքի պաշտպանության պետության **նեգատիվ** պարտավորությունը էությունը զինված ուժերի պաշտոնատար անձանց կողմից այլ անձանց կյանքից զրկելուց զերծ մնալն է, իսկ **պոզիտիվ** պարտավորությունը պահանջում է զինծառայողների կյանքի իրավունքի պաշտպանությանը միտված քայլեր ձեռնարկելու պարտականություն: Եթե, այդուհանդերձ, անձը զրկվել է կյանքից, ապա առաջ է գալիս պետության ընթացակարգային պարտավորությունը՝ իրականացնել արդյունավետ քննություն, հայտնաբերել մարդու մահվան մեջ մեղավոր անձանց և օրենքով սահմանված կարգով պատժել մեղավորին[610]:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումները.
• *Զինծառայողները նույնպես գտնվում են անմիջականորեն «պետության ձեռքերում», և բանակի հետ կապված ցանկացած իրադարձություն ամբողջությամբ կամ մեծ մասամբ ընկնում է իշխանությունների բացառիկ իրավասության ներքո: Հետևաբար, պետությունը պարտավոր է նաև պատասխանատվություն կրել բանակում տեղի ունեցած ցանկացած վնասվածքի կամ մահվան դեպքի համար[611]: Բոլոր այն դեպքերում, երբ պետական մարմիններն օբյեկտիվ պատճառներով գործի ճշգրիտ հանգամանքները չեն կարող պարզել, պետք է բավարար և համոզիչ կերպով բացատրեն իրադարձությունների հաջորդականությունը և ներկայացնեն դիմումատուի պնդումները հերքող հիմնավոր ապացույցներ[612]:*

5. Կարևոր է ընդգծել, որ միջազգային իրավաբանության ներքո **քննությունն արդյունավետ համարելու համար անհրաժեշտ է, որ այն բավարարի հետևյալ չորս միաժամանակյա պահանջները**՝ 1) անկախություն (independence), 2) պատշաճություն (adequacy), 3) անհապաղ և ողջամիտ ժամկետ (promptness and reasonable expedition) և 4) հանրային վերահսկողություն, ներառյալ՝ **տուժողի իրավահաջորդի ներգրավվածություն (public scrutiny and the participation of the next-of-kin):**

6. Նշված պահանջների պահպանման անհրաժեշտությունը հստակ ընդգծված է նաև ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի բացատրական հուշագրով[613]: Մասնավորապես.

ա) Գործի քննությունը պետք է լինի անկախ, մասնավորապես, երբ կան կասկածներ առ այն, թե ինչպես է զինծառայողը մահացել: ՄԻԵԴ-ն այս կապակցությամբ նշել է, որ կյանքի իրավունքի դատավարական պաշտպանությունը պետք է ներառի անկախ քննություն իրականացնելու որոշակի հնարավորություն, որի նպատակն է պարզել, թե ինչ հանգամանքներում է մահը վրա հասել, և հաստատել, թե ով պետք է

[610] Տե՛ս օրինակ, ԵԱՀԿ ձեռնարկը ԶՈՒ-ում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ, էջ 43: Հասանելի է https://www.osce.org/files/f/documents/5/9/100924.pdf հղումով:

[611] Տե՛ս Բեքերն ընդդեմ Թուրքիայի (BEKER v. TURKEY) գործով ՄԻԵԴ 2009 թվականի հունիսի 24-ի վճիռը, գանգատ թիվ 27866/03, կետ 41:

[612] Տե՛ս Մարինա Ալեքսեևան ընդդեմ Ռուսաստանի (MARINA ALEKSEYEVA v. RUSSIA) գործով ՄԻԵԴ 2014 թվականի մարտի 13-ի վճիռը, գանգատ թիվ 22490/05, 121 և 122 կետեր:

[613] Մանրամասն հասանելի է https://rm.coe.int/16805cf943 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

պատասխանատվություն կրի[614]: Քննություն իրականացնելու համար պատասխանատու անձինք պետք է լինեն իրադարձություններում ներգրավված անձանցից անկախ[615]:

բ) Պետության պարտավորության մասն է արդյունավետ պաշտպանության համար **օրենսդրական և վարչական կառուցակարգի ապահովումը**, **որը ներառում է ապացույցներ հավաքելու համար պատշաճ ընթացակարգերը**[616]:

գ) Քննությունը պետք է կատարվի անհապաղ և ողջամիտ ժամկետում[617]:

դ) Պետք է առկա լինի քննության կամ դրա արդյունքների նկատմամբ բավարար հանրային վերահսկողություն՝ ապահովելու համար քննության հաշվետվողականությունն ինչպես գործնականում, այնպես էլ տեսականորեն: Հանրային վերահսկողության նվազագույն պահանջն այն է, որ **տուժողի իրավահաջորդը դատավարության գործընթացում պետք է լինի բավարար չափով ներգրավված, որպեսզի կարողանա երաշխավորել իր օրինական շահերի պաշտպանությունը**[618]**:** Գործի քննությունը պետք է լինի նաև **ամբողջական** (thorough): Իշխանությունները մշտապես պետք է լուրջ ջանքեր գործադրեն՝ պարզելու համար, թե ինչ է տեղի ունեցել, նրանք **չպետք է ապավինեն հապճեպ կամ վատ հիմնավորված հետևությունների՝ գործի քննությունը դադարեցնելու կամ այլ որոշումներ կայացնելու համար**[619]:

Միջազգային չափորոշիչների և դատական նախադեպերի համատեքստում՝ անհրաժեշտ է վկայակոչել ՀՀ Սահմանադրության «Հիմնական իրավունքներն ու ազատությունները և միջազգային իրավական պրակտիկան» վերտառությամբ 81-րդ հոդվածը, համաձայն որի՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում ՀՀ-ի վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան: Այսպիսով, միջազգային իրավական չափորոշիչների լույսի ներքո՝ պետության ուղիղ պարտավորությունն է արդյունավետ պաշտպանության համար օրենսդրական և վարչական կառուցակարգերի ապահովումը, դատավարության գործընթացում կամ վարույթներում տուժողի իրավահաջորդի բավարար ներգրավվածությունը և այլն:

Վերոնշյալի համատեքստում, նկատի ունենալով նաև ՄԻԵԴ-ի իրավական դիրքորոշումները՝ Պաշտպանն ընդգծում է, որ օրենսդրական որևէ կարգավորում չի կարող կիրառվել և մեկնաբանվել այն եղանակով, որը կհանգեցնի անձի հիմնարար իրավունքների խախտման: Այդ սկզբունքը վերաբերելի է նաև այն իրավիճակներին, երբ գործ ունենք օրենսդրական թերի կարգավորումների կամ համապատասխան կարգավորումների բացակայության հետ:

Հարցին վերաբերելի միջազգային չափանիշները վկայում են, որ համապատասխան օրենսդրությունը պետք է մեկնաբանվի այն տրամաբանությամբ, որ անհայտ կորած զինծառայողների ծնողները հնարավորություն ունենան իրենց զավակների վերաբերյալ

[614] Տե՛ս Սալգինն ընդդեմ Թուրքիայի (SALGIN v. TURKEY) գործով ՄԻԵԴ 2007 թվականի մայիսի 20-ի վճիռը, գանգատ թիվ 46748/99, կետ 86:

[615] Տե՛ս Մըքքերն ընդդեմ Մեծ Բրիտանիայի (MCKERR v. THE UNITED KINGDOM) գործով ՄԻԵԴ 2001 թվականի օգոստոսի 4-ի վճիռը, գանգատ թիվ 28883/95, կետ 112:

[616] Տե՛ս Քիլինչը և այլք ընդդեմ Թուրքիայի (KILINÇ AND OTHERS v. TURKEY) գործով ՄԻԵԴ 2005 թվականի սեպտեմբերի 7-ի վճիռը, գանգատ թիվ 40145/98, կետ 41:

[617] Տե՛ս Քելլին և այլք ընդդեմ Մեծ Բրիտանիայի (KELLY AND OTHERS v. THE UNITED KINGDOM) գործով ՄԻԵԴ 2001 թվականի օգոստոսի 4-ի վճիռը, գանգատ թիվ 30054/96, կետ 97:

[618] Տե՛ս Մըքքերն ընդդեմ Մեծ Բրիտանիայի (MCKERR v. THE UNITED KINGDOM) գործով ՄԻԵԴ 2001 թվականի օգոստոսի 4-ի վճիռը, գանգատ թիվ 28883/95, կետ 115:

[619] Տե՛ս Զելիլոֆն ընդդեմ Հունաստանի (ZELILOF v. GREECE) գործով ՄԻԵԴ 2007 թվականի օգոստոսի 24-ի վճիռը, գանգատ թիվ 17060/03, կետ 56:

քննվող քրեական վարույթներով ներգրավվելու որպես տուժող, այդ կարգավիճակով մասնակցելու վարույթին և օգտվելու Քրեական դատավարության օրենսգրքով տուժողի համար նախատեսված իրավունքներից: Հակառակ պարագայում, պետության համար կարող է առաջանալ իրական ռիսկ ՄԻԵԿ առնվազն 2-րդ և 3-րդ հոդվածների պահանջները կատարելու տեսանկյունից (գտնվելու վայրն անհայտ զինծառայողի ընտանիքի անդամը կարող է ճանաչվել 2-րդ, 3-րդ հոդվածին հակասող վերաբերմունքի զոհ):

Պաշտպանի վերը նշված դիրքորոշումը համապատասխան գրություններով ուղարկվել է Դատախազություն և Քննչական կոմիտե: Կարևոր է արձանագրել, որ նշված դիրքորոշումից հետո իրավասու մարմինները գտնվելու վայրն անհայտ զինծառայողների ծնողներին քրեական վարույթներով ներգրավել են որպես տուժող:

ԲԱԺԻՆ 12. ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

1. Կանանց նկատմամբ բռնություն և ընտանիքում բռնություն

Կանանց իրավունքների պաշտպանությունը և կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի բացառումը, ընտանիքում բռնության ենթարկված անձանց իրավունքների պաշտպանությունը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքի կարևոր ուղղություններից է:

Այս նպատակով Պաշտպանի աշխատակազմի հետազոտական, փորձագիտական և կրթական կենտրոնին է վերապահված կանանց և տղամարդկանց իրավահավասարության, կանանց կարողությունների զարգացման ու խթանման, ինչպես նաև ընտանիքում բռնության ենթարկված անձանց իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերի ուսումնասիրության ու վերլուծության աշխատանքների ապահովման գործառույթը: Այս գործառույթի շրջանակներում Հետազոտական, փորձագիտական և կրթական կենտրոնը, ի թիվս այլնի, իրականացնում է կանանց և տղամարդկանց իրավահավասարության ու ընտանիքում բռնության ենթարկված անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ հանրային իրազեկման, ոլորտի օրենսդրության կատարելագործման աշխատանքներ, համակարգում է Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր կանանց իրավունքների հարցերով հասարակական խորհրդի աշխատանքները:

Հետազոտական, փորձագիտական և կրթական կենտրոնի ներկայացուցիչները ընդգրկված են նաև Հայաստանի Հանրապետությունում կանանց հարցերով խորհրդում և նույն խորհրդի ընթացիկ աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբում: Նշվածի համատեքստում Հետազոտական, փորձագիտական և կրթական կենտրոնի ներկայացուցիչը 2023 թվականի ընթացքում մշտապես մասնակցել է ՀՀ-ում կանանց հարցերով խորհրդի ընթացիկ աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի աշխատանքներին՝ ուղղված, ի թիվս այլնի, ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2024-2028թթ. ռազմավարության և միջոցառումների ծրագրի նախագծի մշակմանը:

Պաշտպանին առընթեր կանանց իրավունքների հարցերով հասարակական խորհուրդը կազմված է ոլորտի հասարակական կազմակերպության ներկայացուցիչներից: Խորհրդի նպատակը կանանց իրավունքների պաշտպանության ոլորտում Պաշտպանի գործունեությանն աջակցելն է՝ որպես խորհրդատվական մարմին: Խորհուրդը թիրախավորում է այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ կանանց իրավազորման, տնտեսական հզորացման, իրավահավասարության ապահովման, քաղաքական մասնակցության ակտիվացման, կանանց նկատմամբ բռնության և գենդերային բռնության կանխարգելման, դրանց արձանագրման և աջակցության տրամադրման հարցերը, իրավապահ համակարգում և զինված ուժերում կանանց ակտիվ ներգրավման ու առաջընթացի հարցերը, ռազմավարությունների ու ծրագրերի իրականացման մշտադիտարկման և կատարողականի գնահատման հարցերը, կանանց ու աղջիկների իրավունքների մասին իրազեկման արշավները, կրթական ու մասնագիտական վերապատրաստման ծրագրերը և այլն:

Կանանց նկատմամբ բռնության ու ընտանիքում բռնության դեմ պայքարը 2023 թվականի ընթացքում ևս եղել է Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության ներքո:

2023 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը ընտանիքում բռնության դեմ պայքարում աշխատանքներ է տարել օրենսդրության կատարելագործման ուղղությամբ: Մարդու իրավունքների պաշտպանը գրավոր կարծիք է ներկայացրել ««Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների փոփոխությունների նախագծերի փաթեթների առնչությամբ՝ անդրադառնալով ընտանիքում բռնության դեմ պայքարում զուգընկերային հարաբերությունների իրավական կարգավորման, հետամտման քրեականացման և մի շարք այլ հարցերին: Այս և այլ հարցերը Պաշտպանի աշխատակազմը բարձրացրել է նաև աշխատանքային քննարկումներում:

2023 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը գրավոր կարծիք է ներկայացրել «Էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառման և ֆինանսավորման, ինչպես նաև էլեկտրոնային հսկողության համակարգի տվյալների շտեմարանը վարելու, տվյալներից օգտվելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի առնչությամբ: 2023 թվականի նոյեմբերի 17-ին ընդունվել է ՀՀ կառավարության «Էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառման և ֆինանսավորման, ինչպես նաև էլեկտրոնային հսկողության համակարգի տվյալների շտեմարանը վարելու, տվյալներից օգտվելու կարգը սահմանելու մասին» N 1986-Ն որոշումը, որում արտացոլվել են Մարդու իրավունքների պաշտպանի կարծիքով ներկայացված նկատառումների ճնշող մեծամասնությունը:

Ընտանիքում բռնության կանխարգելման նպատակով իրականացվել են հանրության իրազեկման միջոցառումներ: Օրինակ, Մարդու իրավունքների պաշտպանը 2023 թվականի ընթացքում միացել է «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակի» ամենամյա միջազգային քարոզարշավին, որն անցկացվում է յուրաքանչյուր տարի նոյեմբերի 25-ից մինչև դեկտեմբերի 10-ը: Ընտանիքում բռնության դեմ պայքարում Հայաստանի Հանրապետությունում առկա վիճակը, այդ թվում՝ գործնական ու օրենսդրական խնդիրները, ոլորտի մարտահրավերները վեր հանելու նպատակով նույն քարոզարշավի շրջանակներում 2023 թվականի դեկտեմբերի 5-ին Մարդու իրավունքների պաշտպանը նախաձեռնել է Մարդու իրավունքների պաշտպանին առնընթեր կանանց իրավունքների հարցերով հասարակական խորհրդի 3-րդ նիստը, որի շրջանակներում ներկայացվել են Մարդու իրավունքների պաշտպանի կողմից տարիներ շարունակ արձանագրված խնդիրներն ու դրանց լուծման ուղղությամբ իրականացված աշխատանքները, ինչպես նաև Խորհրդի անդամ և Խորհրդի նիստին ներկա հասարակական կազմակերպությունների կողմից վեր են հանվել այնպիսի հարցեր, ինչպիսիք են ընտանիքում բռնության վերաբերյալ գործերով դատական գործընթացի ձգձգումներն ու երկարատևությունը, մարզերում ընտանիքում բռնության ոլորտում գործունեություն իրականացնող որակավորված մասնագետների, այդ թվում՝ հոգեբանների պակասը, պետական մարմինների կարծրատիպային մոտեցումները և այլն: Խորհրդի նիստի ընթացքում

արձանագրված խնդիրները հավաքագրվել են, նախանշվել են Խորհրդի հետագա գործունեության ուղղությունները՝ արձանագրված խնդիրների լուծման նպատակով:

Նույն քարոզարշավի շրջանակներում Պաշտպանի նախաձեռնությամբ պատրաստվել է հրապարակումների շարք՝ ուղղված գենդերային հիմքով բռնության և սեռական ոտնձգության անթույլատրելիության վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացմանը[620]:

Իրազեկվածությունը բարձրացնող նյութերը պատրաստվել են «Եվրամիությունը հանուն գենդերային հավասարության՝ բարեփոխումների օգնության պատուհան» ծրագրի շրջանակում, որը ֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից:

Մարդու իրավունքների պաշտպանին առնընթեր կանանց իրավունքների հարցերով հասարակական խորհրդի նիստը անցկացվել է «Հաշվետու հաստատություններ և մարդու իրավունքների պաշտպանությունը Հայաստանում» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և իրականացվում է ՄԱԶԾ-ի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և ԵԱՀԿ-ի աջակցությամբ:

Կանանց նկատմամբ բռնության և ընտանիքում բռնության դեմ պայքարում Մարդու իրավունքների պաշտպանը համագործակցում է նաև Եվրոպայի խորհրդի հետ «Կանանց նկատմամբ բռնության հաղթահարումը և գենդերային հավասարության ամրապնդումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Եվրոպայի խորհրդի գենդերային հավասարության բաժնի կարողությունների զարգացման և համագործակցության ծրագրերի բաժնի և Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի կողմից:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված՝ ընտանեկան բռնությանն առնչվող դիմում-բողոքների ընդհանուր նկարագիրը. քանակական և որակական ուսումնասիրություն

2023 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին է հասցեագրվել 96 գրավոր և բանավոր դիմում-բողոք, որոնցով բարձրացվել են ընտանեկան բռնությանն առնչվող հարցեր: 2016 թվականից սկսած՝ Մարդու իրավունքների պաշտպանին ուղղված՝ ընտանեկան բռնության խնդիրներով պայմանավորված բողոքների թիվը հետևյալն է. ընտանեկան բռնության հարցերով 2016 թվականի ընթացքում (26.02.2016թ.-31.12.2016թ. ժամանակահատված) Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ է ներկայացվել 6 բողոք, 2017 թվականին՝ 24 բողոք, 2018 թվականին՝ 50 բողոք, 2019 թվականին՝ 91 բողոք, 2020 թվականին՝ 127 բողոք, 2021 թվականին՝ 105 բողոք, իսկ 2022 թվականին՝ 95:

[620] Առավել մանրամասն տե՛ս https://www.facebook.com/story.php?story_fbid=681328627519406&id=100069268237249&mibextid=WC7FNe&rdid=AUaGwvQy0uJyOiSL, https://www.facebook.com/story.php?story_fbid=680610070924595&id=100069268237249&mibextid=WC7FNe&rdid=XcYOy8kcKyauMlxO, https://www.facebook.com/story.php?story_fbid=pfbid02fEJ5o7uiujUPTqNXTQSwQjJse49CKtmNdTCcfaDJX9APYwriT3TD4pC6QsZLqgDCl&id=100069268237249&mibextid=WC7FNe&_rdr, https://www.facebook.com/story.php?story_fbid=675319784786957&id=100069268237249&mibextid=WC7FNe&rdid=DMTibWQrPMbQqxo5 հղումներով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:



2023 թվականի ընթացքում ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանին է հասցեագրվել ընտանեկան բռնության դեպքերի մասին վկայող 96 դիմում-բողոք, այդ թվում՝ 20 գրավոր դիմում-բողոք, Պաշտպանի աշխատակազմի այլ հեռախոսահամարներով ստացված հեռախոսազանգերով տրամադրված խորհրդատվություններ՝ 34, թեժ գիծ հեռախոսազանգերի արդյունքում տրամադրված խորհրդատվություններ՝ 41, իրականացվել է 1 արագ արձագանքման այց: Հարկ է նկատել, որ նշված դիմում-բողոքների մեծամասնության (84%) առարկան եղել է հենց ընտանիքում բռնության դեպքը:

Ստորև ներկայացվում են Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքներում ներկայացված տվյալները.

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ 2023 թվականի ընթացքում ներկայացված ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ դիմում-բողոքների բովանդակային վերլուծությունը վկայում է, որ ըստ դիմում-բողոք ներկայացրած անձանց պնդումների՝ ստացված 96 դիմում-բողոքներից 76-ի դեպքում ընտանեկան բռնության են ենթարկվել իգական սեռի ներկայացուցիչներ, 18-ի դեպքում՝ արական, 8-ի դեպքում բռնության ենթարկված անձանցից որևէ մեկի տվյալները չեն ներկայացվել, իսկ 10-ի դեպքում բռնության ենթարկված անձանց մի մասի սեռի վերաբերյալ տվյալներ չեն ներկայացվել[621]: Ընդ որում՝ 21 դիմում-բողոքների դեպքերով ընտանեկան բռնության են ենթարկվել երեխաներ, 22 դիմում-բողոքների դեպքերով՝ ընտանիքում բռնության

[621] Հարկ է նշել, որ ըստ սեռի վեր հանված դեպքերի հանրագումարն ու դիմում-բողոքների թիվը քանակապես չեն նույնանում, քանի որ Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված մի շարք բողոքներով մի բողոքի շրջանակներում ներկայացվել են բռնության տարբեր դրևորումներ ու դրվագներ, հետևաբար՝ որպես դեպք հաշվվել է այդ բողոքներում ներառված յուրաքանչյուր բռնության դրսևորում:
Ինչ վերաբերում է այն դիմում-բողոքների առանձնացմանը, որոնց պարագայում վերաբերյալ բռնության ենթարկված անձանց մի մասի սեռի վերաբերյալ տվյալներ չկան, պետք է նշել, որ դրանք ևս վերաբերում են բազմադրվագ բողոքներին, որոնցում նկարագրված բռնության դեպքերի մասին տեղեկությունները մասնակի են:

ենթարկված անձի չափահաս կամ անչափահաս լինելու վերաբերյալ տվյալներ չեն ներկայացվել:



Ըստ դիմում-բողոք ներկայացրած անձանց՝ 96 դիմում-բողոքներից 72-ի դեպքում բռնություն է գործադրել արական սեռի ներկայացուցիչ, 16-ի դեպքում՝ իգական սեռի, 12-ի դեպքում բռնարարի սեռի մասին տվյալներ չեն ներկայացվել, իսկ 4-ի դեպքում տվյալներ չեն ներկայացվել բռնություն գործադրած անձանց մի մասի սեռի վերաբերյալ[622]:



Ստացված 96 դիմում-բողոքներից 21-ի դեպքում ընտանեկան բռնության տեսակի վերաբերյալ ուղղակի մատնանշում չի արվել: Մնացած 75 դիմում-բողոքներից 63-ի դեպքում արձանագրվել է ֆիզիկական բռնություն, որից 45-ը զուգորդվել է հոգեբանական բռնությամբ, 57-ի դեպքում արձանագրվել է հոգեբանական բռնություն, որն իր մեջ ներառում է ֆիզիկական բռնության հետ զուգորդվածների թիվը (45): Դիմում-բողոքներից 4-ի դեպքում արձանագրվել է տնտեսական բռնություն (զուգորդված է բռնության այլ տեսակների հետ), 1-ի դեպքում նշվել է ֆիզիկական բռնության հետ զուգորդված այլ բռնություն՝ առանց տեսակի մատնանշման:

[622] Ինչ վերաբերում է այն դիմում-բողոքների առանձնացմանը, որոնց պարագայում վերաբերյալ բռնություն գործադրած անձանց մի մասի սեռի վերաբերյալ վերաբերյալ տվյալներ չկան, հարկ է նշել, որ դրանք վերաբերում են բազմադրվագ բողոքներին, որոնցում նկարագրված բռնության դեպքերի մասին տեղեկությունները մասնակի են:



Պաշտպանի կողմից դիտարկված ընտանեկան բռնության վերաբերյալ դիմում-բողոքներից 1-ով արձանագրվել է պարբերական հետապնդման (հետամտման) դեպքեր:

Դիմում-բողոքների ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ 96 դիմում-բողոքներից 6-ի դեպքում արձանագրվել է բռնության գործադրումը բռնարարի կողմից ալկոհոլի ազդեցությամբ պայմանավորված տակ, իսկ 1-ի դեպքում՝ թմրամիջոցների:

Անհրաժեշտ է նաև նշել, որ ըստ դիմումատուների հայտնած տվյալների՝ ստացված 96 դիմում-բողոքներից 51-ի դեպքում ընտանեկան բռնությունը եղել է շարունակական, իսկ մնացած դեպքերում այդ մասին տվյալներ չեն ներկայացվել:

Ներկայացված դիմում-բողոքներից 9-ի դեպքում արձանագրվել է ընտանեկան բռնության գործադրում երեխաների ներկայությամբ, այսինքն՝ երեխաները ենթարկվել են անուղղակի բռնության: Երեխայի ներկայությամբ ընտանեկան բռնության գործադրման մասին տվյալներ մնացած դեպքերում չեն արձանագրվել: Միևնույն ժամանակ, նշվածը բավարար չէ այն պնդման համար, որ այդ դեպքերում ընտանեկան բռնության գործադրմանը երեխաներ ներկա չեն գտնվել:

Ընտանեկան բռնության ենթարկված անձինք դիմել են ՆԳՆ ոստիկանություն ստացված 96 դիմում-բողոքներից 29-ի դեպքում[623]: Ընտանեկան բռնության վերաբերյալ բարձրացված հարցերով 96 դիմում-բողոքներից 68-ով ահազանգել է անձամբ ընտանեկան բռնության ենթարկված անձը: Մնացած դիմում-բողոքներով դիմել են բռնության ենթարկված անձի ազգականներ, ընկերներ, փաստաբան, հասարակական կազմակերպություն, ականատես անձինք և այլն:

[623] Հարկ է նկատել, որ ներկայացված դիմում-բողոքների մեծամասնությամբ ՆԳՆ ոստիկանություն դիմած լինելու տեղեկատվությունը չի նշվել: Այս ցուցանիշը ներառում է նաև այն դեպքերը, երբ անձն արդեն իսկ դիմած է լինում Ոստիկանություն, ընտանեկան բռնության դեպքի հիման վրա բռնարարի նկատմամբ կայացված է լինում նախազգուշացում կամ անհետաձգելի միջամտության որոշում, սակայն քաղաքացին բարձրաձայնում է ընտանեկան բռնության խնդրով պայմանավորված այլ՝ իրավական, սոցիալական և հոգեբանական աջակցության հարցեր:

Հարաբերությունների բնույթ	Դեպքերի քանակ[624]
Տղամարդու կողմից ամուսնու (կնոջ) նկատմամբ	40
Կնոջ կողմից ամուսնու (տղամարդու) նկատմամբ	1
Նախկին ամուսնու կողմից կնոջ նկատմամբ	8
Նախկին ամուսնու (կնոջ) կողմից տղամարդու նկատմամբ	1
Նախկինում փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող տղամարդու (զուգընկերոջ) կողմից ամուսնու (կնոջ) նկատմամբ	1
Ծնողի կողմից զավակի նկատմամբ	29
Խորթ մոր կողմից զավակի նկատմամբ	1
Զավակի կողմից ծնողի նկատմամբ	7
Եղբոր կողմից քրոջ նկատմամբ	4
Եղբոր կողմից եղբոր նկատմամբ	4
Քրոջ կողմից քրոջ նկատմամբ	1
Թոռան կողմից տատի նկատմամբ	2
Տատի կողմից թոռան նկատմամբ	2
Տղամարդու (փեսայի) կողմից ամուսնու ծնողի (մոր) նկատմամբ	1
Կնոջ (հարսի) կողմից ամուսնու քրոջ նկատմամբ	2
Կնոջ (հարսի) կողմից ամուսնու ծնողի նկատմամբ	3
Ամուսնու ծնողի (սկեսուրի) կողմից կնոջ (հարսի) նկատմամբ	1
Ամուսնու քրոջ կողմից կնոջ (հարսի) նկատմամբ	1
Ամուսնու եղբոր կողմից կնոջ (հարսի) նկատմամբ	3
Հարաբերությունների բնույթի մասին դիմումատուն տվյալ չի ներկայացրել	22

Պաշտպանին հասցեագրված 96 դիմում-բողոքների աշխարհագրական տեղակայվածության առումով հարկ է նշել, որ 30 դիմում-բողոքներով բողոք ներկայացրած

[624] Հարկ է նշել, որ դիմում-բողոքների ընդհանուր քանակի (96) և դեպքերի քանակի (134) տարբերությունը պայմանավորված է նրանով, որ բողոքների մի մասը բազմադրվագ է եղել՝ թե՛ բռնության գործադրման, թե՛ սուբյեկտային կազմի առումով: Սույն աղյուսակը կազմվել է ըստ հարաբերության բնույթի՝ դրվագների առանձին-առանձին մատնանշմամբ:

անձինք հասցե չեն նշել: Մնացած 66 դիմում-բողոքներից 38-ի դեպքում ընտանեկան բռնությունը տեղի է ունեցել Երևանում, իսկ 28-ի դեպքում՝ մարզերում:



Ընտանեկան բռնության վերաբերյալ դիմում-բողոքներով բարձրացվել են այնպիսի հարցեր, ինչպիսիք են ընտանեկան բռնության ենթարկված անձի իրավունքներն ու դրանց պաշտպանության եղանակներն ու միջոցները, ՆԳՆ ոստիկանության գործողությունների կամ անգործության հետ կապված բողոքները, ընտանեկան բռնության ենթարկվելու հետևանքով ապաստարանում տեղավորվելու հնարավորությունը և այլ հարցեր:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները ընտանեկան բռնության վերաբերյալ ստացված դիմում-բողոքներով պայմանավորված դիմումատուներին ներկայացրել են «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի կարգավորումները: Դիմում-բողոք ներկայացնող անձանց պարզաբանվել են ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցները, Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունները, ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված հաղորդումների քննարկման և դրանց արդյունքում կայացվող որոշումների բողոքարկման ընթացակարգերը և այլն: Ավելին, դիմում-բողոք ներկայացրած անձանց տրամադրվել են Պաշտպանի աշխատակազմի «թեժ գիծ»՝ 116 և աշխատանքային հեռախոսահամարները, «Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպության հեռախոսահամարը: Դիմում-բողոքներով բարձրացված խնդիրների լուծման նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները համագործակցել են ՆԳՆ-ի, Դատախազության, Քննչական կոմիտեի, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, տեղական ինքնակառավարման մարմինների և ոլորտի հասարակական կազմակերպությունների հետ:

Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան 2018 թվականի հունվարի 18-ին: Կոնվենցիայի նպատակն է վերջ

դնել կանանց նկատմամբ բռնությանը և ընտանեկան բռնությանը և երաշխավորել բռնությունից զերծ կյանքով ապրելու՝ կանանց հիմնարար իրավունքը:

Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության կողմից մինչ օրս չի վավերացվել: Կոնվենցիայի վավերացման առաջարկել է նաև Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն[625] իր՝ Հայաստանի 7-րդ պարբերական զեկույցի վերաբերյալ 2022 թվականի նոյեմբերի 1-ի եզրափակիչ դիտարկումներում:

Ընտանեկան բռնության դեմ պայքարի շրջանակներում շարունակում են առկա լինել համակարգային մի շարք խնդիրներ՝ օրենսդրական, իրավակիրառման, ինչպես նաև կազմակերպական, իրազեկումների ու իրավագիտակցության բարձրացմանն ուղղված աշխատանքների առումով:

1) Ընտանիքում բռնության դեմ պայքարի և կանխարգելման հարցում օրենսդրական կարգավորումների թերություններ

Ա. «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի[626] 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անչափահաս կամ անգործունակ անձի նկատմամբ անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշումներ չեն կայացվում:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարը հաշմանդամություն հիմքով անձանց քրեական պատասխանատվությունից ինքնաբերաբար ազատելը համարել է խտրական և անօրինական: Փոխարենը, հանցակազմի սուբյեկտիվ կողմին վերաբերող դրույթները պետք է հաշմանդամության առումով չեզոք լինեն և հաշվի առնեն կոնկրետ անձի դրությունը: Քրեական իրավունքի ոլորտում հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության ճանաչումը պահանջում է վերացնել նրանց պաշտպանությունը՝ հիմնված հոգեկան և մտավոր հաշմանդամության հիմքով քրեական պատասխանատվությունը մերժելու վրա[627]:

Մինչդեռ, ընտանիքում բռնության գործերով ընտանիքում բռնություն գործադրած անձի իրավունքների պաշտպանությանը նախապատվություն տալու մոտեցումը հակասում է միջազգային չափանիշներին: ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի դիրքորոշմամբ կանանց կյանքի և ֆիզիկական ու հոգեկան անձեռնմխելիության իրավունքները չեն կարող ստորադասվել բռնություն գործադրողի իրավունքներից[628]:

Բ. «Կանանց նկատմամբ բռնության և ընտանիքում բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայով (սույն հաղորդման սույն բաժնում այսուհետ՝ Կոնվենցիա) նախատեսվում է անհետաձգելի արգելող որոշման միակողմանի կարգով կայացում՝ անմիջապես ուժի մեջ մտնելով:

Ի հակադրություն կոնվենցիոն պահանջի՝ Հայաստանում նշված որոշումը, Օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մաս համաձայն, ուժի մեջ է մտնում բռնություն գործադրած անձին ծանուցման պահից:

Գ. Ընտանիքում բռնության դեմ պայքարի ոլորտում օրենսդրական կառուցակարգերի ոչ լիարժեքության դրսևորումներից մեկը պատասխանատվության ինստիտուտի անկատարությունն է: Մասնավորապես, ներպետական օրենսդրությամբ ընտանիքում

[625] Տե՛ս Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե, 2022 թվականի նոյեմբերի 1, CEDAW/C/ARM/CO/7, 26 կետ:
[626] Սույն բաժնում այսուհետ՝ Օրենք:
[627] Հասանելի է https://www2.ohchr.org/english/bodies/hrcouncil/docs/10session/A.HRC.10.48.pdf հղումով, կետ 47, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[628] Տե՛ս Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե CEDAW/C/39/D/6/2005*, կետ 12.1.5, հասանելի է https://opcedaw.files.wordpress.com/2012/01/yildirim-v-austria.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

բռնության ոչ բոլոր տեսակների համար է նախատեսված պատասխանատվության մեխանիզմ: Նշվածի արդյունքում, այդ դեպքերին իրավասու մարմինները չեն կարողանում համապատասխան արձագանք տալ:

Ներպետական օրենսդրությամբ որպես ընտանիքում բռնություն նախատեսված չէ հետամտումը («պարբերաբար մեկ այլ անձի հետապնդելը, մեկ այլ անձի հետ անցանկալի հաղորդակցության մեջ ներգրավվելը կամ անձին հետևելու մասին իմաց տալը». խոսքը տուժողին ֆիզիկապես հետևելու, նրա աշխատանքի վայր, սպորտային կամ կրթական հաստատություն այցելելու, ինչպես նաև տուժողին վիրտուալ աշխարհում հետևելու, (...) մեկ այլ անձի գույքը վնասելու, անձի անձնական իրերի վրա աննշան հետքեր թողնելու, անձի տվյալներով առցանց կեղծ անուններով հաշիվներ բացելու կամ սուտ տեղեկություններ տարածելու մասին է), որի քրեականացման պահանջը նախատեսված է «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 34-րդ հոդվածով:

Հարկ է նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանին ուղղված ընտանեկան բռնության վերաբերյալ դիմում-բողոքներից 1-ով նկարագրվել են նաև հետամտման (հետապնդման) դեպքեր: Այս առումով կարևոր է արձանագրել, որ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից տարիներ շարունակ բարձրացվում է ընտանեկան բռնության որոշ տեսակների համար պատասխանատվության բացակայության հարցը: Այդ տեսակներից մեկը հետամտումն (հետապնդում) է: Օրենսդրությամբ հետամտման (հետապնդման) համար քրեական պատասխանատվության բացակայությամբ պայմանավորված՝ իրավասու մարմինները չեն կարողանում համապատասխան արձագանք տալ այդ դեպքերին:

Դ. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընտանիքի անդամներ են անկախ համատեղ բնակության հանգամանքից՝ ամուսինը (այդ թվում՝ փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձը), նախկին ամուսինը, ծնողը, այդ թվում՝ խորթ ծնողը, որդեգրող ծնողը, խնամատար ծնողը, երեխան (նաև որդեգրված, խորթ, հոգեզավակ), որդեգրող ծնողի ամուսինը, ամուսնու ծնողները, նախկին ամուսնու ծնողները:

ՀՀ օրենսդրական գործող կարգավորումներով ներկա և նախկին զուգընկերները չեն համարվում Օրենքի իմաստով ընտանիքում բռնության սուբյեկտներ, ինչը հակասում է միջազգային ընդունված մոտեցումներին:

Կոնվենցիոն իմաստով ընտանեկան բռնություն են համարվում ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բնույթի բոլոր բռնարարքները, որոնք կատարվում են ընտանիքի կամ ընտանեկան միավորի ներսում կամ նախկին կամ ներկա ամուսինների կամ զուգընկերների միջև՝ անկախ նրանից՝ կատարողը բնակվում է կամ բնակվել է զոհի հետ նույն բնակարանում, թե ոչ[629]:

Ավելին, Կոնվենցիայի բացատրական զեկույցի[630] համաձայն՝ ընտանեկան բռնությունը ներառում է ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնությունները նաև ներկա կամ նախկին զուգընկերների միջև: «Կանանց նկատմամբ բռնության վերացման վերաբերյալ օրենսդրության» ՄԱԿ-ի 2012 թվականի ձեռնարկում

[629] «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, հոդված 3:

[630] «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույցի 42-րդ պարբերություն, հասանելի է https://rm.coe.int/1680a48903 հղումով, 2024 թվականի մարտի 24-ի դրությամբ:

նշվում է, որ ընտանեկան բռնությունից օրենքով պաշտպանված անձանց շրջանակը պետք է ընդգրկի առնվազն անհատների, որոնք զուգընկերային հարաբերություններ ունեն կամ ունեցել են՝ ներառելով ամուսնական, ոչ ամուսնական հարաբերությունները: Սույն ձեռնարկում նշվում է նաև, որ մի շարք երկրների օրենքներում ընտանեկան բռնության դեպքերը ներառել են միայն ամուսնացած զույգերին, սակայն ժամանակի ընթացքում օրենսդրական շրջանակն ավելի ընդլայնվել է՝ որպես ընտանեկան բռնության տուժող ճանաչելով նաև այն զուգընկերներին, ովքեր ամուսնացած չեն կամ համատեղ չեն բնակվում[631]:

Ավելին, ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (այսուհետ՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) կողմից ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին օրենքների նախագծերի վերաբերյալ տրված կարծիքներում ընդգծվել է, որ ընտանեկան բռնության բնորոշումը օրենքում ամրագրելիս անձանց միջև հարաբերությունների սահմանումը պետք է ընդգրկի դրանց ամենալայն շրջանակը: Մասնավորապես, «Ընտանեկան բռնության դեմ պայքարի վերաբերյալ իրավական դաշտում փոփոխություններ կատարելու մասին» Մոլդովայի Հանրապետության նախագծի վերաբերյալ 2015 թվականի հուլիսի 9-ին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ներկայացրած կարծիքում[632] բացասական է գնահատվել այն, որ կարծիքի ներկայացված կարգավորումների ձևակերպումները չեն ներառում որոշ հարաբերություններ, ինչպիսիք են օրինակ՝ զուգընկերների հարաբերությունները, ռոմանտիկ և սեռական հարաբերությունները այն անձանց միջև, ովքեր չեն բնակվում կամ երբևէ չեն բնակվել միասին:

Ե. 2023 թվականի ընթացքում ևս առկա չի եղել ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության ազգային ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագիր: Չնայած ոլորտի բարելավմանն ուղղված քայլերին՝ ընտանիքում բռնության ոլորտում անհրաժեշտ է առավել համապարփակ քաղաքականության ամրագրումը, որի արդյունքում լիարժեք կիրագործվի բազմամասնագիտական աջակցություն տրամադրելու ինստիտուտը:

2) Կարծրատիպեր, իրավագիտակցության ցածր մակարդակ և իրազեկման պակաս, անվստահություն պետական մարմինների նկատմամբ, ոչ բավարար մասնագիտական պատրաստվածություն.

Կանանց նկատմամբ և ընտանիքում բռնության վերաբերյալ առկա թյուր պատկերացումներն ու կարծրատիպերը ընտանեկան բռնության դեմ պայքարի և կանխարգելման հարցում մեծագույն մարտահրավերներից են: Դեռևս շարունակում են արմատավորված մնալ հասարակությունում կանանց նկատմամբ ու ընտանիքում բռնության վերաբերյալ թյուր ընկալումները, պատկերացումներն ու կարծրատիպերը:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը ևս ցույց է տալիս, որ խնդիրը շարունակում է արդիական մնալ. ներկայացված բողոքներից մեկով բացահայտվել է իրավասու մարմինների կարծրատիպային մոտեցումն ու մասնագիտական ոչ պատշաճ վարքագիծը ընտանիքում բռնության ենթարկված անձի նկատմամբ՝ պայմանավորված վերջինիս վարքագծի առնչությամբ հասարակությունում տարածված ընկալումներով:

---

[631] Հասանելի է https://www.unwomen.org/sites/default/files/Headquarters/Attachments/Sections/Library/Publications/2012/12/UNW_Legislation-Handbook%20pdf.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[632] Տե՛ս «Ընտանեկան բռնության դեմ պայքարի վերաբերյալ իրավական դաշտում փոփոխություններ կատարելու մասին» Մոլդովայի Հանրապետության նախագծի վերաբերյալ 2015 թվականի հուլիսի 9-ին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ներկայացրած կարծիքը, 2.1-րդ մասի 22-րդ պարբերություն:

Միևնույն ժամանակ, ընտանիքում բռնության դեմ պայքարում հասարակությունում առկա կարծրատիպային մոտեցումների մասին է վկայում նաև Պաշտպանին հասցեագրված մեկ այլ բողոք, որի շրջանակներում ընտանիքում բռնության ենթարկված անձի նկատմամբ բռնության ու վերջինիս թիրախավորման հիմքում ընկած են եղել կնոջ ինչպես ամուսնու ընտանիքի այնպես էլ իր ազգականների՝ վերջինիս նկատմամբ քննադատական դիրքորոշումները՝ պայմանավորված կնոջ վարքագծի առնչությամբ տարընկալումներով:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն ընդգծել է հանրության իրազեկվածության բարձրացման աշխատանքների իրականացման անհրաժեշտությունը՝ ուղղված սեռով պայմանավորված բռնության, այդ թվում՝ ընտանիքում բռնության քրեական բնույթի վերաբերյալ: Կոմիտեն արձանագրել է նաև, որ կարևոր է, որ կանայք հնարավորություն ունենան դիմելու պաշտպանության միջոցների առանց ճնշման, խարանի կամ կրկնակի զոհականացման ենթարկվելու վախի[633]:

3) Պետության կողմից տրամադրվող համալիր ծառայությունների, ինչպես նաև պետական մարմինների միջև համագործակցության խնդիրներ

Պետության կողմից բռնության ենթարկված անձանց և նրանց ընտանիքի անդամներին տրամադրվող լիարժեք աջակցության հարցը շարունակում է արդիական մնալ՝ պայմանավորված ապաստարանների ծառայության մատչելիության և հասանելիության ոչ բավարար մակարդակով: Խնդրի լուծման նպատակով անհրաժեշտ է ստեղծել նոր ապաստարաններ՝ ընդլայնելով ապաստարանների քանակն ու ապահովելով ապաստարանների ծառայության առկայությունը հանրապետության ողջ տարածքում:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն այս առնչությամբ ևս բարձրացրել է պետության ողջ տարածքում բավարար ու հասանելի ապաստարանների առկայության, տրամադրվող ծառայությունների, այդ թվում՝ հոգեբանական, տնտեսական աջակցության հասանելիության հարցերը[634]:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների համաձայն՝ 2020 թվականից սկսած ՀՀ-ում գործում է 2 ապաստարան, որոնք գործունեություն են ծավալում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից պատվիրակված ծառայության տեսքով՝ դրամաշնորհի տրամադրման հիմունքներով: Պետական բյուջեի համաֆինանսավորմամբ գործող վերոգրյալ ապաստարանները ղեկավարվում են «Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից: 2023 թվականի ընթացքում ապաստարաններում կացություն են հաստատել 265 կանայք և երեխաներ (95 կին, 86 աղջիկ երեխա, 84 տղա երեխա):

4) Ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ ճշգրիտ վիճակագրական տվյալների բացակայություն.

Ընտանեկան բռնության վերաբերյալ առկա տեղեկությունները և վիճակագրական ցուցանիշները բռնության իրավիճակի իրական պատկերը ամբողջությամբ չեն արտացոլում, քանի որ Հայաստանում դեռևս չի վարվում ընտանիքում բռնության դեպքերի միասնական և կենտրոնացված վիճակագրություն: Ասվածի մասին են վկայում նաև Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստացված տեղեկությունները:

Ըստ Ներքին գործերի նախարարությունից ստացված տեղեկությունների՝ 2023 թվականի ընթացքում քննվել է ընտանիքում բռնության 508 դեպք, որից՝ կենակցի կողմից-

[633] Տե՛ս Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե, 2022 թվականի նոյեմբերի 1, CEDAW/C/ARM/CO/7, 26 կետ:
[634] Տե՛ս նույն տեղում:

2, ամուսնու կողմից կնոջ նկատմամբ-267, նախկին ամուսնու կողմից կնոջ նկատմամբ-45, կնոջ կողմից ամուսնու նկատմամբ-3, ծնողի կողմից զավակի նկատմամբ-45, զավակի կողմից ծնողի նկատմամբ-44, ընտանիքի այլ անդամների կողմից-102 դեպք: Արձանագրված 508 դեպքից 441-ը՝ ֆիզիկական, 63-ը՝ հոգեբանական, 4-ը՝ սեռական բռնության դեպքեր են:

ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնում ընտանիքում բռնության ենթարկված անձանց հաշվառում ըստ տարիքի չի տարվում:

2023 թվականի ընթացքում ՀՀ ՆԳՆ ոստիկանությունում ստացված ընտանիքում բռնության վերաբերյալ ահազանգերով ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանման ծառայողները ահազանգով կայացրել են թվով 551 նախազգուշացման, իսկ թվով 832-ով՝ անհետաձգելի միջամտության որոշումներ: Բռնություն գործադրած անձի նկատմամբ կայացված թվով 551 նախազգուշացման որոշումներից 26-ի դեպքում բռնությունը կրել է շարունակական բնույթ: Նշված բոլոր դեպքերով բռնություն գործադրած անձանց նկատմամբ հաշվառումները շարունակվել են: Կայացված թվով 1383 պաշտպանության միջոցներից խախտվել են 132-ը, որոնցից՝ 45-ի խախտման մասին ոստիկանությանը հայտնել է ընտանիքում բռնության ենթարկված անձը, իսկ 87-ը՝ հայտնաբերվել է ոստիկանության ծառայողի կողմից: Կայացված թվով 1383 պաշտպանության միջոցներից /նախազգուշացում, անհետաձգելի միջամտության որոշում/ վերադասության կարգով բողոքարկվել են 38-ը, որոնցից 21-ը թողնվել են անփոփոխ, 5-ը բավարարվել են, մասնակի բավարարվել է 1-ը, 10-ով վարչական վարույթ չի հարուցվել /օրենքով սահմանված բողոքարկման ժամկետը բաց է թողնվել/ և 1-ը գտնվում է ընթացքի մեջ: 2023 թվականի ընթացքում գրանցված ընտանիքում բռնության թվով 508 դեպքով նախաձեռնվել է քրեական վարույթ:

ՀՀ քննչական կոմիտեից ստացված պարզաբանումների համաձայն՝ 2023 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախաձեռնվել է 1 քրեական վարույթ, որով նախաքննությունը շարունակվում է:2023 թվականի ընթացքում արձանագրվել է ընտանիքում բռնության 1490 դեպք, որոնցով նախաձեռնվել են քրեական վարույթներ (ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ, 44-155-րդ, 166-167-րդ, 171-րդ, 192-րդ, 194-րդ, 195-րդ, 196-րդ, 198-201-րդ, 239-րդ, 241-րդ, 243-րդ, 247-248-րդ, 251-րդ, 253-րդ, 254-րդ, 264-րդ, 300-րդ և 507-508-րդ հոդվածների հատկանիշերով): Նշված քրեական վարույթներից 307-ը՝ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 505-ը՝ կարճվել է, որից 432-ը՝ կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 13 հոդ. 1 մասի 1 կետի հիմքով, 73-ը՝ կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 13 հոդ. 1 մասի 3 կետի հիմքով, 2-ով կասեցվել է քրեական հետապնդման ժամկետը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ն կետով:

ՀՀ քննչական կոմիտեից ստացված տեղեկությունների համաձայն՝ 2023 թվականի ընթացքում <<Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելումը ու դրա դեմ պայքարը>> և <<Երեխայի նկատմամբ բռնության բնութագիրը և քննության առանձնահատկությունները>> ծրագրերի շրջանակներում իրականացվել են վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել է 82 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ:

2023 թվականի ընթացքում պետության կողմից քայլեր են ձեռնարկվել ուղղված ընտանիքում բռնության ենթարկված անձանց իրավունքների պաշտպանության առնչությամբ օրենսդրական կարգավորումների բարելավմանը: Մշակվել են ««Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների փոփոխությունների նախագծերի փաթեթներ, որոնցով փորձ է արվել կարգավորել մի շարք հարցեր, այդ թվում՝ ընտանիքում բռնության դեմ պայքարում զուգընկերային հարաբերությունները, հետամտումը և այլն: Մասնավորապես, նախագծային լուծումներով նախատեսվում է, որ ընտանիքում և կենցաղային բռնություն է համարվում ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնի արարքը, անտեսումը կամ *հետամտումը*, որոնք կատարվել են ընտանիքի անդամների կամ *զուգընկերների կամ նախկին զուգընկերների միջև*:

Հարկ է նկատել, որ նույն նախագծերի փաթեթը սույն թվական փետրվարի 7-ին ընդունվել է առաջին ընթերցմամբ:

2023 թվականի նոյեմբերի 17-ին ընդունվել է ՀՀ կառավարության «Էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառման և ֆինանսավորման, ինչպես նաև էլեկտրոնային հսկողության համակարգի տվյալների շտեմարանը վարելու, տվյալներից օգտվելու կարգը սահմանելու մասին» N 1986-Ն որոշումը, ինչի արդյունքում հնարավոր կլինի էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառմամբ ապահովել ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցների կիրառման արդյունավետությունը:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստացված տեղեկությունների՝ 2023 թվականին մշակվել է ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2024-2028թթ. ռազմավարության և միջոցառումների ծրագրի նախագծային տարբերակը: Նոր մշակվող ռազմավարական փաստաթղթում, բացի նախորդում առկա նոր գերակայություններից, ավելացվել է նոր գերակայություն՝ «Գենդերային բռնության և խտրականության հաղթահարում, կանանց և աղջիկների նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելում, հաղթահարում և բռնության ենթարկված կանանց և աղջիկների պաշտպանություն և աջակցություն», որտեղ առանձնացված են ոլորտային մի շարք խնդիրներ և դրանց լուծման ուղղված միջոցառումների ծրագրեր:

Մշակվել է «Հայաստանի Հանրապետության Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1381-Ն» որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ՝ ուղղված ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման արդյունավետ իրականացման էլեկտրոնային համակարգի ներդրմանը:

Ընտանիքում բռնության դեմ պայքարում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպություններն իրենց հերթին արձանագրել են ոլորտային մի շարք խնդիրներ, որոնց մի մասը ներկայացվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր կանանց իրավունքների հարցերով հասարակական խորհրդի 2023 թվականի դեկտեմբերի 5-ի նիստի ընթացքում: Խնդիրներից առանձնացվել են, այդ թվում՝ մարզերում որակավորված մասնագետների, հոգեբանների և սոցիալական աշխատողների պակասը, դատական պրոցեսների երկարատևությունը՝ ինչպես օրենսդրական, այնպես էլ գործնական մակարդակում, հատկապես՝ երեխաների՝ հարկադիր մարմինների կողմից

տեսակցություն սահմանելու, ամուսնալուծության, ալիմենտի բռնագանձման գործերով, պետական մարմինների խտրական և կարծրատիպային մոտեցումները, ապաստարանների հասանելիության և հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության հետ կապված հարցերը: Ընդգծվել է նաև յուրաքանչյուր դատարանում ընտանիքում բռնության հարցերով մասնագիտացված դատավորների և դատական նիստերի մշտադիտարկման անհրաժեշտությունը:

Ոլորտի հասարակական կազմակերպությունների կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքները ներկայացվել են նաև Պաշտպանին: Պաշտպանին է ներկայացվել Կանանց աջակցման կենտրոնի կողմից մշակված «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից կայացված նախազգուշացման և անհետաձգելի միջամտության որոշումներն անվավեր ճանաչելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում քննված գործեր» վերտառությամբ ուսումնասիրությունը, որը, ի թիվս այլնի, պարունակում է առաջարկներ քաղաքականություն մշակողներին՝ ուղղված դատաիրավական համակարգի առավել արդյունավետ և զգայուն մոտեցմանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***վավերացնել «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան,***
- ✓ ***փոփոխություններ կատարել ՀՀ քրեական օրենսգրքում՝ այն համապատասխանեցնելով կանանց նկատմամբ բռնության և ընտանիքում բռնության վերաբերյալ միջազգային չափանիշներին՝ մասնավորապես նախատեսելով պատասխանատվության միջոցներ կանանց նկատմամբ և ընտանիքում բռնություն համարվող բոլոր արարքների համար,***
- ✓ ***փոփոխություններ կատարել «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքում՝ վերացնելով բացերը և խնդրահարույց դրույթները և այն ամբողջությամբ համապատասխանեցնելով գործող միջազգային չափանիշներին,***
- ✓ ***կազմակերպել համապատասխան մասնագետների (քննիչներ, դատախազներ, դատավորներ և այլն) պարտադիր և շարունակական դասընթացներ բռնության վերացման և դրա դեմ պայքարի ու կանխարգելման ՀՀ օրենսդրական կարգավորումների, ինչպես նաև միջազգային չափանիշների վերաբերյալ, որոնք նաև ուղղված կլինեն կանանց նկատմամբ բռնության մասին կարծրատիպերի վերացմանը,***
- ✓ ***բարձրացնել կանանց իրազեկվածությունն իրենց իրավունքների և դրանց պաշտպանության առկա մեխանիզմների վերաբերյալ,***
- ✓ ***մշակել և իրականացնել իրազեկման բարձրացման ծրագրեր, որոնք ուղղված կլինեն ընտանիքում բռնության կանխարգելմանը,***
- ✓ ***վարել ընտանիքում բռնության դեպքերի միասնական, կենտրոնացված ու համակարգված վիճակագրություն՝ ապահովելով ընտանիքում բռնության դեպքերին առնչվող տվյալների ճշգրիտ ու ամբողջական հաշվառումը,***
- ✓ ***ընդլայնել ապաստարանների քանակն ու ապահովել ապաստարանների ծառայության առկայությունը հանրապետության ողջ տարածքում,***

✓ ***ընդունել պետական ռազմավարություն և դրան կից գործողությունների ծրագիր ընտանիքում բռնության կանխարգելման, դրա դեմ պայքարի և բռնությունից տուժած անձանց պաշտպանության համար:***

2. Կանանց մասնակցությունը քաղաքական և հասարակական կյանքին

2023 թվականի ընթացքում շարունակում է մտահոգիչ մնալ կանանց՝ քաղաքական և հասարակական կյանքում մասնակցության նվազ մակարդակը:

Քաղաքական և հասարակական կյանքում կանանց մասնակցության խնդրի բարձրաձայնման և դրա լուծման նպատակով 2020 և 2021 թվականների ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը նախաձեռնել և իրականացրել է «Դարձիր օրինակ» կոչով իրազեկման արշավը՝ նպատակ հետապնդելով հասարակությունում կոտրել կանանց դերի վերաբերյալ կարծրատիպերը և հաջողված պատմություններով ոգեշնչել հասարակությանը:

2022 թվականի օգոստոսի 25-ին ստեղծվել է Պաշտպանին առընթեր Կանանց իրավունքների հարցերով հասարակական խորհուրդը, որի խնդիրներն են, թիվս այլնի, աջակցել Պաշտպանին՝ կանանց իրավահավասարության ապահովման, քաղաքական մասնակցության ակտիվացման հարցում, վեր հանել կանանց՝ հասարակական և քաղաքական կյանքին մասնակցության բացերն ու գործնական խոչընդոտները:

Պաշտպանին առընթեր Կանանց իրավունքների հարցերով հասարակական խորհրդի շրջանակում Պաշտպանի աշխատակազմը մշակել է «Ամփոփ հայացք՝ Հայաստանի Հանրապետության իրավապահ համակարգում կանանց ներգրավումը խթանելու ուղղությամբ» հայեցակարգի նախագիծը, որը լրամշակվել է 2022 թվականի դեկտեմբերի 13-ին Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կառավարության հետ՝ ի դեմս Արտաքին գործերի, համագործակցության և զարգացման նախարարության կնքված համագործակցության հուշագրի հիման վրա:

Համագործակցության հուշագրի շրջանակում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն իրականացնում է «Գենդերային հավասարության խթանում Հայաստանի իրավապահ համակարգում» վերտառությամբ ծրագիրը: Ծրագրի նպատակն է խթանել կանանց ներգրավվածությունն իրավապահ համակարգում՝ ոստիկանության ծառայողների ընդունելության գործընթացում գենդերազգայուն մոտեցումների ներդրման և ծառայության ընթացքում կին աշխատակիցներին աջակցության տրամադրման կառուցակարգերի մշակման միջոցով:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել ոլորտային օրենսդրության վերլուծություն, միջազգային փորձի ուսումնասիրություն, ներառյալ՝ իրավապահ համակարգում գենդերային հավասարության ապահովման խնդիրների և իրավական համակարգում կին ծառայողների նյութական աջակցության տրամադրման կառուցակարգերի ներդրման հնարավորությունների վերաբերյալ, ինչպես նաև հանրային իրազեկման բարձրացմանն ուղղված միջոցառումներ, այդ թվում՝ իրազեկող նյութերի մշակում ու տարածում, համապատասխան հաստատությունների աշխատակիցների կարողությունների զարգացման դասընթացներ:

Հաշվետու տարվա ընթացքում իրականացվել է նաև պարեկային ծառայությունում ընդունելության կանանց համար ոչ բարենպաստ օրենսդրության՝ ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 23-ի թիվ 175-Ն որոշման վերանայում և օրենսդրական

փոփոխությունների նախագծի մշակում, ինչպես նաև քննարկումներ Ներքին գործերի նախարարության ոստիկանության ներկայացուցիչների հետ: Արդյունքում, հաշվի առնելով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի՝ մշակած առաջարկությունները՝ «2023 թվականի ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 23-ի N 175-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» որոշմամբ վերանայվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 27-ի «Ոստիկանության ծառայողին ներկայացվող ֆիզիկական պատրաստակամության, առողջական վիճակի հետ կապված պահանջները սահմանելու մասին» N 175-Ն ՀՀ կառավարության որոշումը, որով սահմանվել են ՆԳՆ Ոստիկանությունում ծառայության ընդունվող կին թեկնածուի հասակին և քաշին ներկայացվող նոր պահանջներ Ոստիկանության համակարգը կին ծառայողներով համալրելու նպատակով: Մասնավորապես՝ նվազեցնել են թեկնածուի հասակին և քաշին ներկայացվող սահմանային շեմերը. ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 23-ի N 175-Ն որոշման 17-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված հասակի 157սմ-ը փոխարինվել է 154սմ-ով, 2-րդ ենթակետով սահմանված հասակը՝ 160սմ-ից 155սմ, իսկ քաշը 50կգ-ից 47կգ:

Հարկ է նշել նաև, որ հաշվետու տարում Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչը ներգրավվել է ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի «Կանանց քաղաքական մասնակցություն» թեմատիկ ենթախմբում:

Ի հավելումն՝ Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչները 2023 թվականի ընթացքում մասնակցել են ԿԱՏԱՐԻՆԵ կանանց քաղաքական առաջնորդության ծրագրի շրջանակում անցկացվող միջոցառումներին, որն իրականացվում է Ազգային ժողովրդավարության ինստիտուտի (ԱԺԻ/NDI) կողմից «Ընտրական գործընթացների և քաղաքական հաշվետվողականության ամրապնդումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ:

Հասարակական-քաղաքական կյանքում կանանց լիարժեք մասնակցությանն ու ներգրավվածությանը խոչընդոտող գործոնները տարբեր են, ինչպես օրինակ՝ կանանց դերի, կարողությունների և հասարակական կյանքում նրանց ներգրավվածության շուրջ առկա կարծրատիպերը և խտրական ընկալումները, ինչի հետևանքով կանայք հաճախ չեն դիտարկվում որպես որոշում կայացնողներ, քաղաքականություն մշակողներ ու իրականացնողներ:

2023 թվականի Համաշխարհային տնտեսական ֆորումի Գենդերային խզվածքի համաշխարհային զեկույցում գենդերային խզվածքի քաղաքական հզորացման ենթացուցանիշում Հայաստանը 71-րդ տեղում է 146 երկրների շարքում[635]:

Հայաստանում կանանց ներկայացվածության և որոշումների կայացման գործընթացում ներգրավվածության անբավարար լինելու մասին են վկայում պետական բոլոր մարմիններում աշխատողների սեռային հարաբերակցության պաշտոնական տվյալները:

Այսպես, ըստ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալների՝ 2024 թվականի հունվարի դրությամբ Ազգային Ժողովի ընտրված 107 պատգամավորից ընդամենը 39-ն է կին պատգամավոր:

[635] Տե՛ս Համաշխարհային տնտեսական ֆորումի Գենդերային խզվածքի համաշխարհային զեկույցը, 2023թ., հասանելի է https://www3.weforum.org/docs/WEF_GGGR_2023.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

ՀՀ կառավարության բարձր պաշտոններում ևս կանանց մասնակցության թիվը շարունակել է փոքր մնալ 2023 թվականի ընթացքում:

Այսպես, Կառավարության կազմում երկու փոխվարչապետներից և տասներկու նախարարներից միայն երկուսն են կին: Քաղաքացիական ծառայողների թվաքանակի



տվյալների վերաբերյալ հարցմանն ի պատասխան՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակից հայտնել են, որ 2023 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնի 1-ին ենթախմբի 44 ծառայողներից 12-ը, 2-րդ ենթախմբի 80 ծառայողներից 21-ը, 3-րդ ենթախմբի 374 ծառայողներից 144-ը, 4-րդ ենթախմբի 945 ծառայողից 468-ն են կին, մինչդեռ 5-րդ ենթախմբում գերակշռում են կանայք՝ 205 ծառայողից 166-ը կին են:

Ըստ ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի՝ 2023 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ տվյալների՝ քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների բոլոր ենթախմբերում գերակշռում են կանայք:

Քաղաքացիական ծառայության գրասենյակից տեղեկացրել են նաև, որ 2022 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համեմատությամբ 2023 թվականի միևնույն ժամանակահատվածում տեղի է ունեցել քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող կանանց թվի աճ, մասնավորապես՝ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող կանանց թիվը 2023 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ 2022 թվականի միևնույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելացել է 9.7%-ով, իսկ տղամարդկանց դեպքում միևնույն ցուցանիշը նվազել է շուրջ 4.12%-ով: Միևնույն ժամանակահատվածում տեղի է ունեցել նաև Կառավարության կազմում քաղաքական պաշտոն զբաղեցնող կանանց թվի աճ, մասնավորապես՝ քաղաքական պաշտոն զբաղեցնող կանանց թիվը 2023 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ 2022 թվականի միևնույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելացել է 20%-ով, իսկ տղամարդկանց դեպքում միևնույն ցուցանիշը ավելացել է 8%-ով:

Նշված տվյալների համալիր վերլուծությունը վկայում է, որ կանանց թիվը գերակայում է տղամարդկանց թվին միայն ցածր աստիճանի պաշտոններում: Ինչ վերաբերում է արդեն

բարձրագույն ղեկավար պաշտոններին՝ այստեղ ակնհայտ գերակայում է տղամարդկանց թիվը:

Կանանց պատշաճ ներգրավվածության խնդիրներ առկա են նաև դատական իշխանության շրջանակներում: Գործընկերություն հանուն լավ կառավարման 2019-2021 թվականների «Աջակցություն դատական բարեփոխումների իրականացմանը՝ Հայաստանում դատական իշխանության անկախության և արհեստավարժության ամրապնդումը» ծրագրի շրջանակներում ներկայացված զեկույցում ընդգծվել է ՀՀ դատական համակարգում կանանց ցածր ներկայացվածությունը, որը զգալիորեն զիջում է Եվրոպայի խորհրդի կողմից նախատեսվող նվազագույն կրիտիկական զանգվածին: Այդ հանգամանքը վկայում է այն մասին, որ ոլորտում կան կանանց մասնակցությունը խոչընդոտող մի շարք գործոններ: Առկա անհավասարակշռությունը կարող է բացատրվել սոցիալական դիմադրությամբ և գենդերային մտահոգություններին արձագանքելու համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ կարողությունների սահմանափակությամբ[636]:

ԲԴԽ-ից ստացված տեղեկատվության համաձայն՝ 2023 թվականի 29-ի դրությամբ Դատական համակարգում պաշտոնավարում են թվով 304 դատավոր, որոնցից 101-ը՝ կին, իսկ 203-ը տղամարդ: Այս հաշվառմամբ կին դատավորների ներգրավվածությունը դատական համակարգում կազմել է դատավորների ընդհանուր թվի 33,22 տոկոսը: Միաժամանակ, տեղեկացրել են, որ 2023 թվականի հունվարի 3-ից մինչև նույն թվականի դեկտեմբերի 23-ն ընկած ժամանակահատվածում դատական համակարգը համալրվել է թվով 44 դատավորով, որոնցից 16-ը՝ կին, իսկ 28-ը՝ տղամարդ:



Հայաստանի Հանրապետության դատական համակարգում կանանց ցածր ներկայացվածությունը չի ապահովում Եվրոպայի խորհրդի 2003 թվականի հանձնարարականում նախատեսվող 40%-ի կրիտիկական զանգվածը, որի համաձայն՝ կանանց կամ տղամարդկանց ներկայացվածությունը քաղաքական և հանրային կյանքում որոշումներ կայացնող մարմիններում չպետք է 40%-ից պակաս լինի[637]: Առկա անհավասարակշռությունը կարող է բացատրվել սոցիալական դիմադրությամբ և գենդերային մտահոգություններին արձագանքելու համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ կարողությունների սահմանափակությամբ:

[636] Տե՛ս Եվրոպայի խորհրդի «Գենդերային հավասարությունը Հայաստանի դատական համակարգում. մարտահրավերներ և հնարավորություններ» զեկույցը, 2021թ., հասանելի է https://rm.coe.int/arm-prems-080621-arm-2651-gender-equality-in-the-judiciary-of-armenia-/1680a3ef53 հղումով, էջ 36, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[637] Տե՛ս Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի հանձնարարականը քաղաքական և հանրային որոշումների կայացման մեջ կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության մասին զեկույցը, 2003թ., հասանելի է https://rm.coe.int/1680519084 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

ՀՀ քննչական կոմիտեից ստացված տեղեկատվության համաձայն՝ իգական սեռի ներկայացուցիչները 131-ն են, որը կազմում է Կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց 16.82%-ը, այդ թվում 80-ը՝ Երևան քաղաքում (քննիչների 17.58%-ը), իսկ 51-ը՝ մարզային ստորաբաժանումներում (քննիչների 15.74%-ը): 2023 թվականին Կոմիտեում ծառայության նշանակվել է 147 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ, որից 25-ը իգական սեռի ներկայացուցիչ: Վերոնշյալ ժամանակահատվածում Կոմիտեի Երևան քաղաքի ստորաբաժանումներում ծառայության նշանակվել է 13 իգական սեռի ներկայացուցիչ (նշանակվածների 13.54 %-ը), 83 արական, իսկ մարզային ստորաբաժանումներում՝ 12 իգական (նշանակվածների 23.52 %-ը) և 39 արական սեռի ներկայացուցիչ:

Կանանց ներգրավվածությունը ղեկավար պաշտոններում առանցքային նշանակություն ունի վերջիններիս հասարակական և քաղաքական կյանքին լիարժեք մասնակցության ապահովման տեսանկյունից: Պեկինի Գործողությունների ծրագիրը բնորոշում է կառավարման մարմիններում կանանց առնվազն 30%-անոց ներկայացվածությունը որպես որոշումների ընդունման ընթացակարգերի և բովանդակության վրա ազդեցություն ունեցող «կրիտիկական զանգված» :

ՄԱԿ-ի կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողովի կողմից Հայաստանի վերաբերյալ 7-րդ պարբերական զեկույց.

Կանայք շարունակում են չներկայացված լինել որոշումներ կայացնող պաշտոններում, բացառությամբ խորհրդարանի, որտեղ նրանք կազմում էին անդամների ավելի քան 33 տոկոսը՝ գենդերային քվոտայի կայուն աճի պատճառով: Հանձնաժողովն առաջարկում է կոնկրետ միջոցներ ձեռնարկել կանանց քաղաքական և տնտեսական մասնակցությունը խթանելու համար՝ գենդերային զգայուն բյուջետավորում և իրավապահ մարմիններում բարելավված քվոտաների համադրմամբ: Ի հավելումն, Հանձնաժողովն առաջարկել է աշխատանքային օրենսդրությամբ կարգավորել աշխատավայրում սեռական ոտնձգությունը, բարելավել կանանց հասանելիությունը բժշկական ծառայություններին և պայքարել այդ հասանելիությամբ պայմանավորված խտրականության դեմ և տեղահանված կանանց և աղջիկներին տրամադրել պետական նպատակային աջակցություն, ներառյալ՝ հոգեկան առողջության խնամքը[638]:

ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հանձնաժողովը

ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հանձնաժողովը նույնպես շարունակում է մտահոգված լինել հասարակության մեջ տղամարդկանց և կանանց դերերի վերաբերյալ կարծրատիպերի պահպանմամբ և կանանց նկատմամբ խտրականությամբ, ինչը հանգեցնում է նրան, որ կանայք անհամաչափ բեռ են կրում տնային և խնամակալական աշխատանքներում՝ դրանով իսկ խոչընդոտելով իրենց լիարժեք մասնակցությունը աշխատաշուկայում և սահմանափակելով նրանց ներկայացուցչությունը որոշումներ կայացնող պաշտոններում: Կոմիտեն մտահոգություն է հայտնել կանանց կենտրոնացվածության վերաբերյալ այն մասնագիտություններում,

[638] Տե՛ս ԿՆԽՎԿ-ի հանձնաժողովի, Հայաստանի վերաբերյալ 7-րդ պարբերական պարբերական զեկույցի եզրափակիչ դիտարկումներ, 2022թ., պարբ. 14,: Հասանելի է https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CEDAW%2FC%2FSR.1913&Lang=en հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

որոնցում ավանդաբար գերակշռել են կանայք, ինչը նպաստում է գենդերի հիմքով աշխատավարձերի տարբերությանը:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հանձնաժողովը առաջարկել է շարունակել խթանել կանանց ներկայացվածությունը պետական կառավարման բոլոր մակարդակներում, մասնավորապես՝ որոշումներ կայացնող պաշտոններում, և նրանց նշանակումը մասնավոր հատվածի կառավարչական պաշտոններում, այդ թվում՝ մասնավոր ընկերությունների համար խթանների մշակման միջոցով[639]:

2019 թվականին ընդունվել է «Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը»[15], որով սահմանվում են պետական գենդերային քաղաքականության հինգ գերակայությունները: Դրանք են կանանց առաջխաղացման ազգային մեխանիզմի կատարելագործումը, կանանց և տղամարդկանց հավասար մասնակցությունը կառավարման ոլորտում և որոշումների ընդունման մակարդակում, սոցիալ-տնտեսական ոլորտում գենդերային խտրականության հաղթահարումը, կանանց տնտեսական հնարավորությունների ընդլայնումը, կանանց և տղամարդկանց լիարժեք ու արդյունավետ մասնակցության և հավասար հնարավորությունների ընդլայնումը կրթության ու գիտության ոլորտում, առողջապահության ոլորտում կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների ընդլայնումը, գենդերային խտրականության կանխարգելումը:

2019 թվականին ստեղծվել և մինչ օրս գործում է ՀՀ վարչապետին կից կանանց հարցերով խորհուրդը: Խորհուրդը ստեղծվել է կանանց խնդիրներին վերաբերող աշխատանքները համակարգելու և կանանց ու տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման ազգային մեխանիզմ ձևավորելու նպատակով: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետազոտական, փորձագիտական և կրթական կենտրոնի ներկայացուցիչները նույնպես ներգրավված են ՀՀ-ում կանանց հարցերով խորհրդում և աշխատանքային խմբում:

Ոլորտի հասարակական կազմակերպություններն ակնկալում են, որ խորհուրդն է հանդիսանալու Հայաստանում գենդերային հավասարության ապահովման ազգային մեխանիզմ, թեև, փորձագետների գնահատմամբ, այն չի համապատասխանում Պեկինի Գործողությունների ծրագրով առաջադրվող լիարժեք և արդյունավետ ազգային մեխանիզմի պահանջներին[640]:

Մասնավորապես, Պեկինի Գործողությունների ծրագրում Ազգային մեխանիզմը սահմանվում է որպես «Կառավարության կազմում քաղաքականության կենտրոնական համակարգման մարմին», որը պետք է գտնվի կառավարության ամենաբարձր մակարդակում և ղեկավարվի կառավարության անդամ նախարարի կողմից: Ազգային մեխանիզմի բարձր կարգավիճակը պետք է ապահովվի համապատասխան ռեսուրսներով, իրավասություններով և ղեկավարման հնարավորությամբ: Ազգային մեխանիզմի

[639] Տե՛ս ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հանձնաժողովի եզրափակիչ դիտարկումներ Հայաստանի չորրորդ պարբերական զեկույցի վերաբերյալ, 2023թ., հասանելի է https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=E%2FC.12%2FARM%2FCO%2F4&Lang=en հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[640] Տե՛ս ՕքսԵՋեն հիմնադրամի «Կանանց քաղաքական կյանքի մասնակցությունը Հայաստանի Հանրապետությունում» զեկույցը, 2020թ., հասանելի է https://oxygen.org.am/wp-content/uploads/2021/03/Women-PP_Arm.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

մանդատն է՝ աջակցել բոլոր պետական կառույցների ջանքերին՝ բոլոր քաղաքականության ոլորտներում գենդերային հավասարության մոտեցումը ինտեգրելու նպատակով[641]:

Վարչապետի աշխատակազմից տեղեկացրել են, որ ՄԱԶԾ-ի հետ համագործակցությամբ իրականացվող «Գենդերային հավասարությունը Հայաստանի պետական կառավարման համակարգում» ծրագրի շրջանակում մշակվել է «Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կառուցվածքային ստորաբաժանումներում գենդերային հավասարության ապահովման» գնահատման գործողությունների ծրագրի սահմանման վերաբերյալ նախագիծը, որի նպատակն է գենդերային հավասարության և կանանց հզորացման ոլորտում իրականացվող աշխատանքների արդյունավետությունը գնահատելը և ինստիտուցիոնալ բարեփոխումներ իրականացնելը:

Այսպիսով, կարող ենք եզրահանգել, որ հասարակության շրջանում առկա կարծրատիպերի, կանանց դերի և կարողությունների վերաբերյալ կարծրատիպային ընկալումների, խտրականության տարբեր դրսևորումների առկայության, ինչպես նաև կանանց մասնակցությունը խթանող լիարժեք կառուցակարգերի բացակայության հետևանքով չի ապահովվում հասարակական և քաղաքական կյանքում կանանց մասնակցության պատշաճ մակարդակ: Ուստի՝ կանանց ներուժի լիարժեք, արդյունավետ և թիրախային օգտագործման համար պետք է ձևավորվեն պատշաճ կառուցակարգեր: Խնդրի լուծման նպատակով սկզբնական քայլեր կարող են հանդիսանալ հատուկ թիրախային ծրագրերի իրականացումը, օրինակ՝ խթանող միջոցառումների և քվոտաների նախատեսումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***հասարակությանն իրազեկել կանանց դերի, կանանց քաղաքական ներգրավվածության և հասարակական կյանքին կանանց մասնակցության կարևորության մասին,***
- ✓ ***բարձրացնել կանանց քաղաքական և իրավական գիտակցության մակարդակը, նպաստել երիտասարդ կանանց մոտ քաղաքական համակարգի, գործընթացների և արդյունավետ որոշումների ընդունման մեթոդաբանության վերաբերյալ մասնագիտական գիտելիքների և հմտությունների զարգացմանը, երաշխավորել քաղաքական մրցակցության հավասար պայմաններ,***
- ✓ ***զանգվածային լրատվության, տարբեր քննարկումների և սեմինարների պարբերական իրականացման միջոցով կանանց իրազեկել իրենց իրավունքների վերաբերյալ,***
- ✓ ***ապահովել հանրության իրազեկվածությունը կանանց քաղաքական մասնակցության ապահովմանն ուղղված միջազգային փաստաթղթերի և գործընթացների մասին, այդ թվում՝ Պեկինի հռչակագրի և Գործողությունների ծրագրի, Կայուն զարգացման նպատակների մասին,***
- ✓ ***ապահովել ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողովի՝ Հայաստանի վերաբերյալ 7-րդ պարբերական զեկույցի եզրափակիչ դիտարկումների կատարումը՝ կանանց լիարժեք և հավասար մասնակցությունն***

[641] Տե՛ս ՄԱԿ-ի Պեկինի հռչակագիրը և գործողությունների ծրագիրը, 1995թ., հասանելի է https://archive.unescwa.org/sites/www.unescwa.org/files/u1281/bdpfa_e.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

ընտրված և նշանակված մարմիններում խթանելու նպատակով միջոցներ ձեռնարկելու առնչությամբ:

3. Առողջության պահպանման իրավունքի սահմանափակման խնդիրներ

Առողջության պահպանման իրավունքի սահմանափակման խնդիրները և կանանց համար առողջապահական ծառայությունների մատչելիության խնդիրը Պաշտպանը արձանագրել է դեռ 2015 թվականից, որը համակարգային առումով շարունակել է լուծված չմնալ նաև 2023 թվականի ընթացքում:

Պաշտպանին նախորդ տարիներին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը, հիմնականում մարզային և համայնքային բնակավայրերից, ցույց է տալիս, որ խնդրահարույց է առանձին բժշկական ծառայությունների հասանելիությունը, քանի որ կանայք հաճախ հնարավորություն չեն ունենում լիարժեք կերպով հետազոտվելու և ստանալու համապատասխան բուժօգնություն: Խնդիրներ, հատկապես առաջացել են հաշմանդամություն ունեցող կանանց դեպքում, որոնք բժշկական օգնություն ստանալու սահմանափակումներ են ունեցել՝ խտրականության ենթարկվելով տարբեր պատճառներով, այդ թվում՝ բժշկական ծառայությունների անմատչելիության, բժշկական անձնակազմերի ոչ լիարժեք պատրաստվածության և կարծրատիպային կամ ոչ պատշաճ վերաբերմունքի արդյունքում:

Հատկապես խնդրահարույց է առողջական տեղեկատվության, առողջապահական օժանդակ նյութերի անմատչելիությունը տեսողական խնդիրներ ունեցող կանանց համար՝ հանդիսանալով մեծ խոչընդոտ հաշմանդամություն ունեցող անձանց առողջության պահպանման իրավունքի իրականացման համար: Նման տեղեկատվությունը ստանալու համար անհրաժեշտ է լինում ընտանիքի անդամների կամ այլ անձանց աջակցությունը, ինչը հանգեցնում է մի շարք հիմնական իրավունքների խախտմանը, այդ թվում՝ բժշկական գաղտնիքի բացահայտմանը:

Վերոգրյալի առնչությամբ պետք է նկատել, որ Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան, որը ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 2010 թվականի հոկտեմբերի 22-ին:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի 25-րդ հոդված.
մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները, որպեսզի հաշմանդամություն ունեցող անձինք մատչելի կերպով օգտվեն առողջապահական այնպիսի ծառայություններից, նաև՝ առողջության վերականգնողական միջոցներից, որոնք հաշվի են առնում գենդերային առանձնահատկությունները: Մասնավորապես, մասնակից պետությունները պարտավորվում են հաշմանդամություն ունեցող անձանց ապահովել նույն կարգի, որակի ու չափանիշների անվճար կամ մատչելի առողջապահական ծառայություններով ու ծրագրերով, որոնք տրամադրվում են այլ անձանց, ներառյալ սեռական ու վերարտադրողական առողջության ոլորտը և բնակչությանն առաջարկվող հանրային առողջապահական ծրագրերը:

Հայաստանի Հանրապետությունում բժշկական հաստատությունների հասանելիությունն ու մատչելիությունը հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների

համար ուսումնասիրվել է Ներառական առողջապահական ծառայություններ հաշմանդամություն ունեցող կանանց համար հետազոտության[642] շրջանակներում:

Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ ՀՀ-ում առողջապահության ոլորտում առկա խտրականությունը հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների նկատմամբ պայմանավորված է բժշկական հաստատությունների զգայական, ֆիզիկական և վերաբերմունքային խոչընդոտներով, բուժհաստատությունների աշխատակիցների ոչ լիարժեք պատրաստվածությամբ, ինչպես նաև օրենքը կարգավորող մեխանիզմներում առկա բացերով:

Նույն հետազոտության համաձայն՝ գիտելիքների առումով առկա են բացեր հաշմանդամություն ունեցող անձանց հատուկ կարիքները չիմանալու հետ կապված: Դիտարկումների արդյունքները ցույց են տվել, որ բուժաշխատողը կարող է լինել շատ բարյացակամ և առանց վերապահումների իրականացնել իր բոլոր անմիջական պարտականությունները, սակայն հիվանդի հաշմանդամություն ունենալու յուրահակությունը չիմանալու և նախկինում ֆունկցիոնալության սահմանափակման տարբեր աստիճաններ ունեցող մարդկանց հետ հաղորդակցվելու թերի փորձառության պատճառով կարող է խաթարվել լիարժեք բժշկական ծառայության մատուցումը:

Նույն հետազոտության համաձայն՝ դիտարկումներին մասնակցած կանայք և աղջիկները, որպես կանոն, հայտնել են, որ առկա են համընդհանուր դիզայնի բացեր, և որ հիվանդանոց այցելելիս ունեն օգնող անձի անհրաժեշտություն:

Մինչդեռ՝ պետք է նկատել, որ «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով հստակ ամրագրված է, որ յուրաքանչյուր ոք ունի բժշկական խորհրդատվություն և ծառայություններ սեռական և վերարտադրողական առողջության հարցերի շուրջ՝ մեկուսի ու գաղտնի պայմաններում ստանալու իրավունք:

Այսպիսով, հաշմանդամություն ունեցող կանայք իրավունք ունեն ստանալու մեկուսի ու գաղտնի պայմաններում բժշկական խորհրդատվություն և ծառայություններ սեռական և վերարտադրողական առողջության հարցերի շուրջ ստանալու, սակայն համընդհանուր դիզայնի բացակայության պայմաններում ստիպված են հիվանդանոց այցելել օգնող անձի ուղեկցությամբ:

Դիտարկումներին մասնակցած հաշմանդամություն ունեցող կանանց մի մասը հայտնել է նաև, որ հանդիպել են ոչ դրական վերաբերմունքի բժշկական հաստատության աշխատակիցների շրջանում: Խնդիրը հատկապես ընդգծվել է ոչ երևանյան բժշկական հաստատություններում:

Անհրաժեշտ է նշել, որ Պաշտպանին բողոքներ են հասցեագրվել նաև այն մասին, որ «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքով մարդու վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունք ունեցող անձանց համար սահմանված տարիքայի շեմի պատճառով կանայք զրկվում են փոխնակ մոր միջոցով մայրանալու հնարավորությունից:

2023 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին կարծիքի է ներկայացվել ««Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ

[642] Տե՛ս Ներառական առողջապահական ծառայություններ հաշմանդամություն ունեցող կանանց համար հետազոտությունը, հասանելի է http://www.old.ysu.am/files/Research%20report%20_Inclusive%20Medical%20Services%20for%20Women%20with%20Disabilities%20(Armenian).pdf հղումով:

կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի 8-րդ հոդվածով նախատեսվում է, որ մարդու վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունք ունեն՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ գտնվող ամուսինը (մինչև 53 տարեկան կինը)՝ միայն կնոջ (ամուսնու) հետ փոխադարձ համաձայնության առկայության դեպքում.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ չգտնվող մինչև 53 տարեկան տղամարդը կամ կինը՝ իր ցանկությամբ:

Նախագծով նախատեսված փոփոխությունը կայանում է նրանում, որ ի տարբերություն «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքում գործող կարգավորման, որի համաձայն՝ մարդու վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունք ունեն, ի թիվս այլնի, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ չգտնվող տղամարդը առանց որևէ տարիքային սահմանափակման, ապա Նախագծով նախատեսվող կարգավորման դեպքում՝ մարդու վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունք ունեն գրանցված ամուսնության մեջ չգտնվող մինչև 53 տարեկան տղամարդիկ: Կանանց պարագայում ինչպես ««Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի գործող կարգավորման, այնպես էլ նախագծային կարգավորման դեպքում մարդու վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքը վերապահվում է մինչև 53 տարեկանը:

Պաշտպանն իր կարծիքում ուշադրության է արժանացրել այն հանգամանքը, որ քիչ չեն այն դեպքերը (հատկապես պատերազմից հետո), երբ ընտանիքներում երեխաներ ծնվում են անգամ կնոջ կամ տղամարդու 53 և ավել տարեկան լինելու պարագայում, ինչը վկայում է այն մասին, որ տարիքը ինքնին հիմք չէ երեխայի ծնունդը բացառելու համար: Պաշտպանը նպատակահարմար չի գտել վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու հնարավորությունը անձի տարիքով պայմանավորելը, քանի որ 53 տարեկան դառնալը հիմք չէ բացառելու երեխա ունենալու ցանկությունը կամ ֆիզիոլոգիական, բժշկական կամ այլ բավարար գործոնների առկայությունը՝ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու համար:

Հայաստանի վերաբերյալ մարդու իրավունքների 2022 թվականի զեկույցի[643] համաձայն՝ պետությունը չի ապահովել առողջապահական ծառայությունների հասանելիությունը հեռավոր գյուղական բնակավայրերում, այդ թվում՝ անհետաձգելի գինեկոլոգիական ծառայությունները և չի երաշխավորել բուժաշխատողների համարժեք ու շարունակական վերապատրաստումը՝ հատկապես մարգինալացված խմբերի կանանց, այդ թվում՝ ԼԳԲՏՔԻ+ կանանց/աղջիկների, ՄԻԱՎ ունեցող կանանց/աղջիկների և հաշմանդամություն ունեցող կանանց/աղջիկների վերարտադրողական ու սեռական առողջության հարցերի շուրջ: Ֆիզիկական խոչընդոտները, հասանելի տեղեկատվության ու հաղորդակցության բացակայությունը, ուսումնական ու բուժման սարքավորումների անհասանելիությունը և համապատասխան գիտելիքներ չունեցող բուժանձնակազմը սահմանափակել են առողջապահական ծառայությունների, այդ թվում՝ վերարտադրողական և սեռական առողջության ծառայությունների հասանելիությունը

[643] Տե՛ս Ժողովրդավարության, մարդու իրավունքների ու աշխատանքի բյուրո, Մարդու իրավունքների զեկույց 2022թ., Հայաստան, հասանելի է https://am.usembassy.gov/wp-content/uploads/sites/92/hrr2023_arm.pdf հղումով:

հաշմանդամություն ունեցող կանանց համար, հատկապես՝ գյուղական բնակավայրերում: Բուժհաստատություններում չեն եղել ժեստերի լեզվի թարգմանիչներ և դրա կարիքն ունեցող կանայք իրենք պետք է գտնեին համապատասխան մասնագետի, որը թանկարժեք ծառայություն է: Լսողության ու տեսողության կամ մտավոր խնդիրներ ունեցողների համար առկա չեն եղել առողջապահական տեղեկություններ այլընտրանքային ձևաչափերով:

Առողջապահության նախարարության տրամադրած տվյալների համաձայն՝ 2023 թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող կանանց կողմից սեռական և վերարտադրողական առողջության իրականացման ընթացքում առկա խոչընդոտների վերաբերյալ 3 բողոք է ստացվել:

Այն հարցին, թե արդյոք 2023 թվականի ընթացքում իրականացվել են առողջապահական ծառայությունների մատուցում իրականացնող բուժաշխատողների վերապատրաստումներ՝ բարձրացնելու ծառայությունների մատուցում իրականացնող բուժաշխատողների մասնագիտական գիտելիքները և հմտությունները՝ կանանց առողջապահական ծառայությունների վերաբերյալ, Առողջապահության նախարարությունը պատասխանել է, որ Կանանց ռեսուրսային կենտրոն հասարակական կազմակերպության կողմից ընտանեկան բժիշկների և մանկաբարձ-գինեկոլոգների համար կազմակերպվել է վերապատրաստման 2-օրյա դասընթաց «Կանանց տարբեր խմբերի վերարտադրողական առողջության և իրավունքի ոչ խտրական մոտեցման սկզբունքների կիրարկումը բուժաշխատողների մոտ» թեմայով, որտեղ ներառվել է նաև հաշմանդամություն ունեցող կանանց խումբը: Վերապատրաստմանը մասնակցած 210 բուժաշխատողի շնորհվել է ՀՀ առողջապահության նախարարի հաստատված շարունակական մասնագիտական զարգացման **(ՇՄԶ)** կրեդիտներ: Առողջապահության ազգային ինստիտուտի Ընտանեկան բժշկության ամբիոնի կողմից 2023 թվականի ընթացքում իրականացվել են «Ընտանեկան բժշկության արդի հարցեր», «Թերապիայի ժամանակակից հարցեր» և «Ընտանեկան բուժքույրության արդի հարցեր» ՇՄԶ կրեդիտավորված դասընթացները, որոնց մասնակցել են 48 բժիշկ և 23 բուժքույր:

Առողջապահական տեղեկությունների, առողջապահական օժանդակ նյութերի մատչելիությունը տեսողական խնդիրներ ունեցող կանանց համար ապահովելու Առողջապահության նախարարի 2021 թվականի հուլիսի 19-ի թիվ 2751-Լ հրամանով հաստատվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնության և սպասարկման ուղեցույցը», որը համապատասխանեցվել է տեսողության և լսողության խնդիրներ ունեցող անձանց իրազեկման համար: Առողջապահության նախարարության պաշտոնական կայքում ուղեցույցի տեսանյութը ներկայացվում է աուդիո և ՀԺԼ տարբերակով, որի նպատակն է հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացումը:

Գործարկվել է ծնողների համար նախատեսված BarevBalik.am հարթակն ու բջջային հավելվածը, որն ունի մի շարք գործիքներ (User friendly), որոնք ավելի հարմարավետ և մատչելի են դարձնում հարթակի օգտագործումը սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց համար:

Առողջապահության նախարարության տրամադրած տվյալների համաձայն՝ 2023 թվականի ընթացքում կազմակերպվել է նաև 1 ասուլիս, պատրաստվել է 1 հոլովակ, 2 տեսանյութ, 7 մամուլի հաղորդագրություն և հարցազրույցներ: Իրականացվել է

ծննդօգնության ոլորտում ներգրավված 59 բժշկի երկշաբաթյա վերապատրաստում՝ ՌԴ առաջատար կլինիկաներում՝ մայրական և նորածնային մահացության նվազման ճանապարհները թեմայով: 50 մանկաբարձ-գինեկոլոգի, նեոնատոլոգի և անեսթեզիոլոգի համար Երևանում կազմակերպվել է երկշաբաթյա դասընթաց՝ ՌԴ Կուլակովի անվան մանկաբարձության, գինեկոլոգիայի և պերինատոլոգիայի ազգային բժշկական հետազոտական կենտրոնի մասնագետների կողմից:

Այսպիսով, առողջապահական ծառայությունների՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի դարձնելու ուղղությամբ կատարվել են որոշ քայլեր, սակայն դրանք բավարար չեն խնդիրների համակարգային լուծումն ապահովելու տեսանկյունից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***կանանց համար առողջապահական ծառայությունների մատչելիության ապահովման նպատակով զարգացնել բժշկական տարբեր ծառայությունների մատուցման հասանելիությունը՝ ապահովելով կանանց լիարժեք կերպով հետազոտվելու և առանց որևէ խտրականության համապատասխան բուժօգնություն ստանալու հնարավորությունը,***
- ✓ ***բարձրացնել կանանց առողջապահական ծառայությունների վերաբերյալ ծառայությունների մատուցում իրականացնող բուժաշխատողների մասնագիտական գիտելիքները և հմտությունները՝ շարունակական վերապատրաստումներ, դասընթացներ իրականացնելով և երաշխավորելով բժշկական ծառայությունների պատշաճ իրականացումը՝ առանց որևէ խտրականության,***
- ✓ ***զանգվածային լրատվության միջոցներով, տարբեր քննարկումների, սեմինարների և այլ հնարավոր միջոցներով շարունակաբար իրականացնել կանանց առողջապահական իրավունքների վերաբերյալ իրազեկումներ,***
- ✓ ***մարդու վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու հնարավորություն ընձեռելու համար հիմք ընդունել ոչ թե անձի տարիքը, այլ յուրաքանչյուր դեպքում քննարկման առարկա դարձնել կնոջ և տղամարդու բժշկական, հոգեբանական և այլ վիճակներն ու գործոնները, որոնք բավարար կլինեն վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու համար:***

4. Աշխատանքային իրավունքների սահմանափակման խնդիրներ

Աշխատաշուկայում կանանց և տղամարդկանց հավասարությանն առնչվող խնդիրները, որոնց մասին Պաշտպանը բարձրաձայնում է տարիներ շարունակ, շարունակել են համակարգային առումով չլուծված մնալ նաև 2023 թվականի ընթացքում:

Աշխատանքային իրավունքների սահմանափակման դեպքերի ուսումնասիրությունը վկայում է, որ դրանք հիմնականում կանանց աշխատանքային իրավունքների իրացման հարցում հավելյալ երաշխիքների բացակայության, կանանց զբաղվածության, որոշակի աշխատանքներում ներգրավվածության և առհասարակ կնոջ դերի շուրջ առկա կարծրատիպերի հետևանք են:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս նաև, որ դեռևս փաստացի շարունակում է կանանց նկատմամբ ուղղահայաց (ծառայողական առաջխաղացման կամ բարձր պաշտոններ զբաղեցնելու ոչ հավասար հնարավորություն) և հորիզոնական (ըստ մասնագիտությունների և ոլորտների) խտրականությունը:

Աշխատանքային հարաբերությունների տարբեր փուլերում կանայք շարունակում են հանդիպել լրացուցիչ դժվարությունների՝ ինչպես աշխատանքի ընդունվելիս, այնպես էլ աշխատանքը երեխայի ծննդյան պարագայում պահպանելիս և աշխատավայրում առաջխաղացում ունենալիս, որը հանգեցնում է նաև մարդկային կապիտալի ոչ լիարժեք օգտագործման ու տնտեսական կորուստների ոչ միայն կանանց և նրանց ընտանիքների, այլև ամբողջ հասարակության համար: Կանայք շատ հաճախ բախվում են խնդիրների աշխատանքի ընտրության հարցում: Աշխատանքի թափուր տեղերի համար տրվող հայտարարությունները երբեմն պարունակում են խտրական դրսևորումներ: Դեռևս շարունակվում են աշխատանքի այնպիսի հայտարարությունների շրջանառումը, որտեղ աշխատանքի ընդունման հիմնական նախապայմանն է, օրինակ՝ կնոջ տարիքը կամ բարետես արտաքինը, որոնք պայմանավորված չեն օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով:

«Աշխատանքային իրավունքների պաշտպանության մեխանիզմները Հայաստանում» հետազոտության[644] շրջանակներում էլ ընդգծվել է, որ կանանց շրջանում գրանցվում է զբաղվածության ավելի ցածր մակարդակ, և գործատուները խուսափում են կանանց աշխատանքի ընդունելու հարցում՝ ամուսնության, հղիության հետևանքով հնարավոր բացակայությունների և աշխատանքից ազատման ռիսկերի պատճառով:

Աշխատանքային իրավունքների սահմանափակման խնդիրներն առավել մանրամասն քննարկվել են Պաշտպանի՝ «Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» 2021 թվականի տարեկան հաղորդման[645] շրջանակներում:

Այն հարցին, թե 2023 թվականի ընթացքում տղամարդկանց և կանանց միջև զբաղվածության տոկոսի հարաբերակցության կրճատման հավասարեցման նպատակով արդյոք առանձին ծրագրեր իրականացվել են, թե՝ ոչ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պատասխանել է, որ այդպիսի առանձին ծրագրեր 2023 թվականին չեն իրականացվել: 2023 թվականի ընթացքում նաև երեխա ունեցող կանանց զբաղվածության ապահովմանն ուղղված ծրագրեր չեն իրականացվել, սակայն ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 21-ի N 2297-Լ որոշմամբ հաստատվել է «Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնություն ստացած՝ անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողների ծնողներին մինչև երեք տարեկան երեխայի խնամքի կազմակերպման համար պետական աջակցության տրամադրման միջոցառումը հաստատելու մասին» միջոցառումը, որով առաջարկվում է պետական աջակցություն տրամադրել վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնություն ստացած՝ անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողի ծնողին մինչև երեք տարեկան երեխայի խնամքն իրականացնող անձի՝ դայակի կամ վճարովի հիմունքներով գործող նախադպրոցական հաստատության միջոցով կազմակերպելու հարցում: Մասնավորապես, նախատեսվում է շահառուի մինչև երեք տարեկան երեխայի խնամքը կազմակերպելու համար զոհված զինծառայողի ծնողի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության տարածքային

[644] Տե՛ս «Աշխատանքային իրավունքների պաշտպանության մեխանիզմները Հայաստանում» հետազոտությունը, հասանելի է https://www.osf.am/wp-content/uploads/2013/12/Avetik-paper.pdf հղումով:

[645] Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի «Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» 2021 թվականի տարեկան հաղորդումը, հասանելի է https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով:

կենտրոնի միջև կնքել աջակցության տրամադրման պայմանագիր: Պայմանագիրը կնքելուց հետո շահառուն երեխայի խնամքը կազմակերպելու նպատակով պետք է կնքի ծառայությունների մատուցման պայմանագիր շահառուի երեխայի խնամքն իրականացնող անձի՝ դայակի կամ վճարովի հիմունքներով գործող նախադպրոցական հաստատության հետ: Պայմանագրի հիման վրա յուրաքանչյուր երեխայի խնամքը դայակի կամ հաստատության միջոցով օրական առնվազն 6 ժամով կազմակերպելու համար շահառուին ամսական կտրվածքով նախատեսվում է վճարել գումար՝ ծառայությունների մատուցման պայմանագրով սահմանված ամսական վարձատրության չափով, բայց ոչ ավելի, քան 104000 դրամը: Պետական աջակցությունն առաջարկվում է տրամադրել մինչև երեխայի 3 տարին լրանալը:

Հայաստանում կանանց տնտեսական հզորացմանը նպաստելու, ինչպես նաև հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում վերջիններիս ակտիվ ներգրավվածությունն ապահովելու նպատակով՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Էկոնոմիկայի նախարարության և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) համատեղ ջանքերով 2022 թվականի տարեվերջին մեկնարկել և 2023 թվականին իրականացվել է «Platform #5» կանանց մասնագիտական ուսուցման ծրագիրը, ինչպես նաև Միասնական սոցիալական ծառայության համագործակցության շրջանակներում իրականացվել են ընդհանուր 766 անձանց տարբեր մասնագիտություններով զբաղվածության ծրագրեր, որոնցում ընդգրկվել է 491 կին:

2023 թվականի մայիսի 3-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-160-Ն օրենքը, որով, ի թիվս այլ փոփոխությունների, ընդլայնվել են երեխա ունեցող աշխատողների իրավունքները: Մասնավորապես, հնարավորություն է տրվել ոչ թե մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատողին իրավունք տալ նվազեցնելու իր աշխատաժամանակը, այլ նաև մինչև երկու: Երեխային կրծքով կերակրող կնոջը մինչև երեխայի մեկուկես տարին լրանալը, երեխային կերակրելու համար յուրաքանչյուր երեք ժամը մեկ տրամադրվող լրացուցիչ ընդմիջման մասով կարգավորումը վերանայվել է, հանվել է երեխային կրծքով կերակրելու պայմանը և նախատեսվել, որ բացի հանգստի և սնվելու համար տրամադրվող ընդմիջման ժամերից, յուրաքանչյուր երեք ժամը մեկ, կես ժամից ոչ պակաս տևողությամբ լրացուցիչ ընդմիջում է տրամադրվում մինչև երկու տարեկան երեխա ունեցող կնոջը՝ մինչև երեխայի երկու տարին լրանալը: Նշված կարգավորումը նախատեսող դրույթում մեծացվել է նաև երեխայի տարիքային շեմը՝ մեկուկես տարեկանի փոխարեն՝ երկու տարեկան:

2023 թվականի ընթացքում զբաղվածության ապահովման, մասնավորապես, աշխատաշուկայում սեռային համամասնության ապահովման նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության փոխանցած տվյալների համաձայն՝ իրականացվել են հետևյալ ծրագրերը.

➢ *«Ադրբեջանի կողմից 2016, 2020 և 2022 թվականներին սանձազերծված ռազմական գործողություններին մասնակցած, ինչպես նաև 2020 թվականից հետո ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված գործազուրկ անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում և զբաղվածության ապահովում»* ծրագիրը, որը նպատակն ունի աջակցել 2016, 2020 և 2022 թվականներին Ադրբեջանի զինված ուժերի ռազմական գործողություններին մասնակցած, ինչպես նաև 2020 թվականից հետո ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված գործազուրկ

անձանց՝ ձեռք բերելու գործատուի կողմից ներկայացված պահանջներին համապատասխան մասնագիտական հմտություններ և կարողություններ՝ գործատուի մոտ առկա թափուր աշխատատեղը համալրելու համար:

2023 թ. ծրագրում ընդգրկվել է 526 շահառու, որից 3-ը՝ կին:

➢ *«Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում»* ծրագիրը:

Ծրագրի նպատակը բնակչության սոցիալական ծանր վիճակի մեղմումն է՝ աշխատաշուկայում անմրցունակ, գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր կամ վարձակալ կամ անհատույց օգտագործող հանդիսացող անձանց ֆինանսական աջակցության տրամադրման և սեզոնային զբաղվածության ապահովման միջոցով:

Ծրագրի արդյունքում՝ հողագործության ոլորտում 2023 թվականին ժամանակավոր զբաղվածություն է ձեռք բերել 3155 շահառու, որից 916-ը՝ կին:

➢ *«Գործազուրկների զբաղվածության ապահովում»* ծրագիրը:

Ծրագրի նպատակն է մեծացնել գործազուրկի աշխատանքի տեղավորման հնարավորությունները և նպաստել նրա ընտանիքի աղքատության հաղթահարմանը:

2023 թվականին ծրագրում ընդգրկվել է 191 շահառու, որից 151-ը՝ կին:

➢ *Զբաղվածության խթանման միջոցառում*

Միջոցառման շրջանակներում գործատուին տրվում է եկամտային հարկի փոխհատուցում, որի չափը և աջակցության տևողությունը տարբերակվում է՝ աշխատանքի ընդունվող անձի տարիքով, ինչպես նաև հաշմանդամություն ունենալու հանգամանքով պայմանավորված: Բացի այդ, մինչև 5 տարեկան երեխա ունեցող, 30-45 տարեկան մայր լինելու դեպքում՝ աջակցության տրամադրման տևողությունը ավելանում է ևս 3 ամսով: Միաժամանակ, միջոցառման շրջանակներում՝ հաշմանդամության 1-ին կամ 2-րդ խումբ ունեցող կամ ֆունկցիոնալության խոր կամ ծանր աստիճանի սահմանափակում ունեցող անձանց աշխատանքի ընդունելու պարագայում՝ խելամիտ հարմարեցման համար տրվում է նաև միանվագ փոխհատուցում՝ առավելագույնը 500 000 դրամի չափով:

2023 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ ծրագրում ընդգրկվել է 14 շահառու, որից 10-ը՝ կին:

➢ ՀՀ կառավարության 2024 թվականի հունվարի 11-ի N 57-Լ որոշմամբ հաստատվել է *«2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց համար կարճաժամկետ ուսուցման դասընթացի կազմակերպման և աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցության տրամադրման ծրագիրը հաստատելու մասին»* ծրագիրը:

Ծրագրով նախատեսվում է աջակցել գործազուրկներին, այդ թվում՝ 2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց, ձեռք բերելու գործատուի կողմից ներկայացված պահանջներին համապատասխան մասնագիտական հմտություններ, կարողություններ և աշխատանքային փորձ՝ գործատուի մոտ առկա թափուր աշխատատեղը համալրելու նպատակով: Այդ նպատակով նախատեսվում է աջակցության 3 ուղղություն:

Աջակցության 1-ին ուղղության դեպքում առաջարկվում է՝

1) մինչև 6 ամիս տևողությամբ ուսուցման կազմակերպում, որի նպատակով ուսուցման ամբողջ ժամանակահատվածում շահառուին ասական կտրվածքով վճարել՝

● ուսման վարձի փոխհատուցում՝ յուրաքանչյուր ամսվա համար առավելագույնը 50000 դրամի չափով,

● կրթաթոշակ՝ 50000 դրամի չափով.

2) ուսուցումն ավարտելուց հետո գործատուի և շահառուի միջև առնվազն 3 ամիս ժամկետով կնքվում է աշխատանքային պայմանագիր, որի պարագայում գործատուին աջակցության տրամադրում՝ առավելագույնը ամսական 50000 դրամ, բայց ոչ ավելի, քան 3 ամիս ժամկետով՝ շահառուի աշխատավարձից հաշվարկվող եկամտային հարկը, դրոշմանիշային վճարը և օրենքով սահմանված դեպքերում սոցիալական վճարը փոխհատուցելու համար:

Աջակցության 2-րդ ուղղության դեպքում առաջարկվում է՝

1) գործատուի և աշխատողի միջև առնվազն 6 ամիս ժամկետով աշխատանքային պայմանագրի կնքում և

ա. առաջին 3 ամսվա ընթացքում աշխատանքային փորձառության կազմակերպում, որի շրջանակներում գործատուին 3 ամիս ժամկետով փոխհատուցման տրամադրում շահառուի աշխատավարձի վճարման համար՝ ամսական 165000 դրամ՝ ներառյալ շահառուի աշխատավարձից հաշվարկվող եկամտային հարկը, դրոշմանիշային վճարը և օրենքով սահմանված դեպքերում՝ սոցիալական վճարը,

բ. գործատուի մոտ աշխատանքային փորձառություն անցնելուց հետո գործատուին աջակցության տրամադրում՝ առավելագույնը ամսական 50000 դրամի չափով, բայց ոչ ավելի, քան 3 ամիս ժամկետով՝ շահառուի աշխատավարձից հաշվարկվող եկամտային հարկը, դրոշմանիշային վճարը և օրենքով սահմանված դեպքերում սոցիալական վճարը փոխհատուցելու համար:

Աջակցության 3-րդ ուղղության դեպքում առաջարկվում է՝

1) մինչև 6 ամիս տևողությամբ ուսուցման կազմակերպում, որի նպատակով ուսուցման ամբողջ ժամանակահատվածում շահառուին ամսական կտրվածքով վճարել՝

● ուսման վարձի փոխհատուցում՝ յուրաքանչյուր ամսվա համար առավելագույնը 50000 դրամ,

● կրթաթոշակ՝ ամսական 50000 դրամ.

2) ուսուցումն ավարտելուց հետո գործատուի և շահառուի միջև առնվազն 6 ամիս ժամկետով աշխատանքային պայմանագրի կնքում և

ա. առաջին 3 ամսվա ընթացքում աշխատանքային փորձառության կազմակերպում, որի շրջանակներում գործատուին 3 ամիս ժամկետով փոխհատուցման տրամադրում շահառուի աշխատավարձի վճարման համար՝ ամսական 165000 դրամ՝ ներառյալ շահառուի աշխատավարձից հաշվարկվող եկամտային հարկը, դրոշմանիշային վճարը և օրենքով սահմանված դեպքերում՝ սոցիալական վճարը,

բ. գործատուի մոտ աշխատանքային փորձառություն անցնելուց հետո գործատուին աջակցության տրամադրում՝ առավելագույնը ամսական 50000 դրամի չափով, բայց ոչ ավելի, քան 3 ամիս ժամկետով՝ շահառուի աշխատավարձից հաշվարկվող եկամտային հարկը, դրոշմանիշային վճարը և օրենքով սահմանված դեպքերում սոցիալական վճարը փոխհատուցելու համար:

➢ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել *«2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ինքնազբաղվածության խթանման միջոցառումը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը*, որով առաջարկվում է

2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ինքնազբաղվածության ապահովման նպատակով տրամադրել աջակցություն:

➢ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի (ՄԱԶԾ) ImpactAim աքսելերատորի համագործակցությամբ իրականացվում է Զբաղվածության մշակվող ռազմավարությունից բխող «Ըստ արդյունքի վճարման ակտիվ զբաղվածության» փորձնական ծրագիրը, որի շրջանակներում մասնավոր կազմակերպությունները կվերապատրաստեն և աշխատանքի կտեղավորեն հետևյալ թիրախային խմբերին՝

● 18-29 տարեկան երիտասարդներ (չաշխատող, չսովորող), որոնք չեն եղել գրանցված աշխատող վերջին 6 ամիսների ընթացքում,

● 30-40 տարեկան չաշխատող կանայք, որոնք չեն եղել գրանցված աշխատող վերջին 6 ամիսների ընթացքում,

● նպաստառու շահառուներ,

● Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձինք:

Վերոգրյալի հաշվառմամբ կարելի է արձանագրել, որ թեև որոշակի քայլեր ձեռնարկվել են աշխատաշուկայում կանանց և տղամարդկանց հավասարությանն առնչվող խնդիրները լուծելու ուղղությամբ, սակայն դրանք բավարար չեն կանանց աշխատանքային իրավունքների սահմանափակման խնդիրների համակարգային լուծման տեսանկյունից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ ***խթանել կանանց հնարավորությունները՝ հաշվի առնելով վերջիններիս կրթական, տնտեսական, սոցիալական ներուժը աշխատաշուկայի համապատասխան հատվածներում,***

✓ ***մշակել և ներդնել աշխատաշուկայում տղամարդկանց և կանանց միջև մրցակցության ապահովման բաց և արդյունավետ կառուցակարգեր,***

✓ ***նախատեսել ծրագրեր երեխա ունեցող կանանց զբաղվածության ապահովման, ինչպես նաև մայրության արձակուրդից վերադարձող կանանց՝ աշխատավայրում վերաինտեգրման ուղղությամբ,***

✓ ***տղամարդկանց և կանանց միջև զբաղվածության տոկոսի հարաբերակցության կրճատման նպատակով շարունակաբար իրականացել համապատասխան ծրագրեր,***

✓ ***զանգվածային լրատվության միջոցներով և այլ հնարավոր եղանակներով միջոցներ ձեռնարկել՝ նպաստելու աշխատաշուկայում կանանց դերի վերաբերյալ գոյություն ունեցող կարծրատիպերի վերացմանը:***

ԲԱԺԻՆ 13. ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության հիմնական ուղղություններից է երեխաների իրավունքների պաշտպանությունը, ինչը հիմք է առավել ամուր և իրավունքահեն հասարակության ձևավորման համար:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի ուժով Պաշտպանն իրականացնում է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում, ինչպես նաև երեխաների իրավունքների խախտումների կանխարգելում և պաշտպանություն:

Մարդու իրավունքների պաշտպանը Երեխաների օմբուդսմենների եվրոպական ցանցի լիիրավ անդամ է, և Պաշտպանի աշխատակազմը մասնակցում է Երեխաների օմբուդսմենների եվրոպական ցանցի աշխատանքներին, ինչը նպատակ ունի խրախուսելու «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի լիարժեք իրականացումը, տեղեկատվության և լավագույն փորձի փոխանակումը[646]: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը մասնակցել է նաև Եվրոպայի խորհրդի երեխաների իրավունքների կոմիտեի աշխատանքներին[647]:

2023 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը մասնակցել է նաև ԱՊՀ անդամ երկրների Երեխաների իրավունքների հանձնակատարների (օմբուդսմանների) հանդիպումներին:

2023 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը ակտիվ մասնակցություն է ունեցել նաև Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի և Անչափահասների արդարադատության խորհրդի նիստերին՝ նիստերի ընթացքում ներկայացնելով երեխայի իրավունքների պաշտպանությանը վերաբերող խնդիրները և դրանց լուծման ուղղությամբ առաջարկությունները:

Պաշտպանի աշխատակազմի և անձամբ Պաշտպանի կողմից 2023 թվականի ընթացքում իրականացվել են հանդիպումներ հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների, խնամքի և պահպանության հաստատությունների սաների հետ, քննարկվել են վերջիններիս իրավունքները «Երեխաների իրավունքների մասին» կոնվենցիայի և ներպետական օրենսդրության համատեքստում, ինչպես նաև ներկայացվել են Պաշտպանի գործունեության հիմնական ուղղություններն ու Պաշտպանին ինքնուրույն դիմելու իրենց հնարավորությունը:

2023 թվականի ընթացքում աճել է երեխաների իրազեկվածությունը Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի առնչությամբ, և երեխաները իրենց իրավունքների պաշտպանության հարցով ինքնուրույն են դիմել Պաշտպանի աշխատակազմ՝ բարձրացնելով ինչպես բուլինգի և վատ վերաբերմունքի, այնպես էլ՝ իրենց իրավունքներին առնչվող մի շարք այլ հարցեր:

Իրականացվել են մշտադիտարկման չհայտարարված այցեր երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ, արձանագրված խնդիրները և դրանց լուծմանն ուղղված առաջարկները հասցեագրվել են համապատասխան իրավասու մարմիններին: Արագ արձագանքման այցեր են իրականացվել նաև հանրակրթական

[646] Տե՛ս Երեխաների օմբուդսմենների եվրոպական ցանցի կայքէջը, հասանելի է http://enoc.eu/ հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[647] Տե՛ս Եվրոպայի Խորհրդի կայքէջը, հասանելի է https://www.coe.int/en/web/children/cdenf հղումով:

ուսումնական հաստատություններ՝ երեխաների իրավունքների խախտման ահազանգերի հիման վրա:

2023 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի կողմից հրապարակվել են արտահերթ զեկույցներ «Հայաստանի հանրապետության կողմից երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման 2013-2022 թվականների վիճակի վերաբերյալ»[648] և «Բուլինգի հիմնախնդիրը ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում»[649] վերտառությամբ:

2023 թվականի ընթացքում աշխատանքներ են տարվել նաև ՀՀ մարդու իրավունքների Պաշտպանին առընթեր երեխաների և երիտասարդների իրավունքների հարցերով հասարակական խորհրդի գործունեության ակտիվությունը և շարունակականությունն ապահովելու ուղղությամբ, ինչի վերաբերյալ տեղեկատվությունն առավել մանրամասն ներկայացված է «Երեխայի կարծիք արտահայտելու և մասնակցության իրավունք» գլխում:

2023 թվականին Մարդու իրավունքների պաշտպանը ներկայացրել է անկախ այլընտանքային զեկույց ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեին՝ պետության կողմից «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվեցիայի ապահովման վերաբերյալ:

2023 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը ստացել է 952 գրավոր և բանավոր բողոք՝ կապված երեխայի նկատմամբ բռնության, անձնական տվյալների պաշտպանության, երեխայի տեսակցության կարգի ապահովման, նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների հասանելիության և մի շարք այլ հարցերով:

[648] «Հայաստանի Հանրապետության կողմից երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման 2013-2022 թվականների վիճակի վերաբերյալ» արտահերթ զեկույցը հասանելի է https://www.ombuds.am/images/files/2c1f6e50692f92df376290b6a4ec5121.pdf հղումով:

[649] «Բուլինգի հիմնախնդիրը ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում» արտահերթ զեկույցը հասանելի է https://www.ombuds.am/images/files/34b7bedf65b11eccc9be20dd5ee9d22a.pdf հղումով:

ԳԼՈՒԽ 1. ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Երեխաների իրավունքների պաշտպանության համակարգը

Երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության միասնական պետական քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է երեխաների պաշտպանության եռաստիճան համակարգի միջոցով: Եռաստիճան համակարգում ներառված են.

- Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովը,
- մարզպետների աշխատակազմերի համապատասխան ստորաբաժանումներն ու Երևանի քաղաքապետարանի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչությունը,
- խնամակալության և հոգաբարձության մարմինները:

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները, գրավոր և բանավոր ստացված դիմում-բողոքները, թեժ գծի հեռախոսահամարին ստացված զանգերը վկայում են, որ եռաստիճան համակարգի յուրաքանչյուր օղակում առկա են համակարգային բնույթ կրող խնդիրներ, որոնք իրենց ազդեցությունն են ունենում երեխայի իրավունքների պաշտպանության համակարգի արդյունավետ գործունեության վրա: Արձանագրված որոշ խնդիրներին Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է նաև իր տարեկան հաղորդումներում[650] և արտահերթ հրապարակային զեկույցով[651] :

ՀՀ Վարչապետի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 1295-Ն որոշման համաձայն. «Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովը խորհրդակցական մարմին է, որի գործունեության հիմնական նպատակը երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության միասնական պետական քաղաքականության ապահովմանը նպաստելն է»:

Այս կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է, որ Երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության միասնական պետական քաղաքականության ապահովմանը նպաստելու նպատակի իրագործման համար, սակայն, Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովն ունի առավել արդյունավետ մեխանիզմների գործադրմամբ աշխատանքներն իրականացնելու անհրաժեշտություն: Առկա են եռաստիճան համակարգում ուղղահայաց և հորիզոնական համագործակցության, միջգերատեսչական և ոլորտում գործունեություն ծավալող մասնավոր հատվածի հետ արդյունավետ, անվտանգ և համակարգված համագործակցության գործուն կառուցակարգերի ներդրման և դրանց նկատմամբ մշտադիտարկման ապահովման անհրաժեշտություն: Գործնականում բացակայում է այնպիսի մեխանիզմի կիրառումը, որով հնարավոր կլինի վեր հանել համակարգային բոլոր խնդիրներն ու տալ դրանց լուծմանն ուղղված երեխայակենտրոն և երեխայի լավագույն շահից բխող լուծումներ:

---

[650] Տե՛ս 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, հասանելի է https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 2024 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

[651] Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը Հայաստանի Հանրապետության կողմից «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ, Երևան, 2023թ., հասանելի է https://www.ombuds.am/images/files/2c1f6e50692f92df376290b6a4ec5121.pdf հղումով, 2024 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

Խնդրահարույց է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 2023 թվականի ընթացքում Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի նիստ գումարվել է ընդամենը 2 անգամ:

Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի առջև դրված նպատակի իրագործման հարցում կարևոր է նաև վերջինիս օժտել անհրաժեշտ մարդկային, ֆինանսական և տեխնիկական ռեսուրսներով: Ընդ որում՝ նման դիրքորոշում է հայտնել է նաև Երեխայի իրավունքների կոմիտեն իր՝ 2013 թվականին Հայաստանի Հանրապետության վերաբերյալ ներկայացրած ամփոփիչ դիտարկումներում[652]:

2023 թվականի ընթացքում շարունակում են արդիական մնալ Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեությանն առնչվող խնդիրները: Մասնավորապես՝ Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովները դեռ շարունակում են գործել կամավորության սկզբունքով՝ հնարավորություն չտալով կազմում ներառել անհրաժեշտ և բավարար գիտելիքներ ու հմտություններ ունեցող մասնագետներ:

Գործնական խնդիրներ են արձանագրվել նաև մարզպետների աշխատակազմերի և Երևանի քաղաքապետարանի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության հետ Խնամակալության և հոգաբարձության մարմինների աշխատանքի իրականացման գործընթացում բավարար գիտելիքներ չունենալու առնչությամբ: Այսպես, օրինակ, բազմաթիվ անգամներ խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցիչները կոնկրետ դեպքերում որոշում կայացնելու առնչությամբ զանգահարել են ՄԻՊ աշխատակազմ՝ խնդրելով տրամադրել մասնագիտական աջակցություն և բարձրացնելով նման դեպքերում մասնագիտական լուծումներ գտնելու ԽՀՀ անդամների ոչ բավարար գիտելիքների հարցը: Ողջունելի է ԽՀՀ անդամների կողմից խնդրի վերաբերյալ որոշումների կայացման մասնագիտական լուծումների գործընթացում լրացուցիչ քննարկումներ իրականացնելու և մասնագիտական կարծիքներ լսելու պատրաստակամությունը, սակայն նշվածը վկայում է ԽՀՀ անդամների խորքային և մասնագիտական վերապատրաստումների անհրաժեշտության մասին:

Մեկ այլ խնդիր է այն, որ ոչ բոլոր համայնքներում է ապահովված հոգեբանի ներգրավվածության ԽՀՀ կազմում, այսպես. Երևանի քաղաքապետարանն, օրինակ, հոգեբանի պաշտոնի անձնագրում, ամրագրվել է, որ վերջինս ընդգրկվում է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմում՝ ապահովելով հոգեբանի մասնագիտությունից բխող գործառույթների իրականացումը: Մինչդեռ՝ մի շարք այլ համայնքներում Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովները շարունակում են կազմում չունենալ անհրաժեշտ մասնագետներ: Այսպես, օրինակ, Արարատի մարզպետի աշխատակազմի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների վարձատրությունը և հանձնաժողովների կազմում համապատասխան մասնագետների ներգրավումը կարող է նպաստել աշխատանքների ավելի արդյունավետ իրականացմանը: Շիրակի մարզպետի աշխատակազմի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ հոգեբան ունեն ոչ բոլոր համայնքները, սակայն դեպքերի առանձնահատկություններից ելնելով, նիստերին կարող է հրավիրվել հոգեբան:

652 Տե՛ս Երեխայի իրավունքների կոմիտեի ամփոփիչ դիտարկումները, հասանելի են https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2FC%2FARM%2FCO%2F3-4&Lang=en հղումով:

2023 թվականին շարունակում են արդիական մնալ Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անդամների պատշաճ մասնագիտական որակավորման և պարտադիր վերապատրաստման, միջգերատեսչական համագործակցության ապահովման, վերջիններիս լիազորությունների ոչ պատշաճ իրականացման դեպքում՝ պատասխանատվության հստակ միջոցների սահմանման, աշխատանքային ժամերից հետո աշխատանքի կազմակերպման հնարավորության նախատեսման հետ կապված, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի կողմից այս ինստիտուտի կայացման հարցում բազմիցս հիշատակված խնդիրները:

Հատկանշական է, որ 2023 թվականին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից վարվող իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում հանրային քննարկում է իրականացվել «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և այլ հարակից օրենքների նախագծերի առնչությամբ, որի հիմնավորումներում ևս արտացոլում են գտել նշված խնդիրներն ու դրանց լուծման կարևորության վերաբերյալ եզրահանգումները[653]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***մշակել և ներդնել Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի գործունեության առավել արդյունավետ կառուցակարգեր՝ ապահովելով վերջինիս անհրաժեշտ լիազորություններով, մարդկային, ֆինանսական և տեխնիկական ռեսուրսներով:***
- ✓ ***մշակել և իրացնել կառուցակարգեր բարելավելու մարզպետների աշխատակազմերի համապատասխան ստորաբաժանումների ու Երևանի քաղաքապետարանի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության և Խնամակալության և հոգաբարձության մարմինների միջև համագործակցությունը:***
- ✓ ***մշակել և իրացնել կառուցակարգեր բարելավելու Խնամակալության և հոգաբարձության մարմինների աշխատանքը: Մասնավորապես, անհրաժեշտ է սահմանել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անդամների ընտրության մասնագիտական և որակավորման չափանիշներ, ապահովել, որպեսզի անդամները վճարվեն իրենց կատարած աշխատանքի դիմաց, նախատեսել պարտադիր վերապատրաստումներ վերջիններիս համար, ինչպես նաև քայլեր ձեռնարկել՝ ապահովելու Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացված վերոնշյալ խնդիրների լուծումը:***

2. Երեխայի իրավունքների պաշտպանության համալիր ծրագիրը

Երեխայի իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջոցառումներ նախատեսված են ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» 650-Լ որոշմամբ, ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 2-ի «Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանն ու ներդաշնակ զարգացմանն ուղղված 2020-2023 թվականների համալիր ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» 432-Լ որոշմամբ, ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 29-ի «Երեխայի

[653] Հասանելի է https://www.e-draft.am/projects/5592 հղումով, 2024 թվականի փետրվարի 24-ի դրությամբ:

իրավունքների պաշտպանության 2023 թվականի տարեկան ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1526-Լ որոշմամբ և այլն:

Մինչդեռ՝ նշված ծրագրերից ոչ մեկը չի պարունակում երեխայի իրավունքների պաշտպանության բոլոր հիմնախնդիրները, ռազմավարական ուղղությունները, նպատակներն ու խնդիրները, երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում իրավիճակի վերլուծությունը, առաջնահերթությունները, ֆինանսական աղբյուրներն ու անհրաժեշտ ֆինանսական միջոցները, առաջընթացի ցուցանիշները, ելակետային և թիրախային արդյունքները, իրականացվելիք աշխատանքների մշտադիտարկման ընթացակարգն արտացոլող միջոցների համալիրը, ինչը հիմք կհանդիսանա երեխայի իրավունքների ապահովման, երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում պետական քաղաքականության համակարգված, նպատակային, շարունակական և արդյունավետ իրականացման համար:

Հատկանշական է, որ այդպիսի համալիր ծրագրի մշակման նպատակով 2023 թվականի սեպտեմբերի 13-ին ընդունվել է «Երեխայի իրավունքների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքը, որով նախատեսվել է նշված պայմանների բավարարմամբ համալիր ծրագիր ունենալու պահանջը: Ընդ որում, նշված փոփոխությամբ նախատեսվել է նաև, որ համալիր ծրագիր ընդունելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումը պետք է ընդունվի օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային ծրագրի և երեխաների իրավունքների բնագավառում ընդունված այլ ռազմավարությունների և ծրագրերի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ բոլոր մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսներ տրամադրելու, ինչպես նաև ազգային ծրագրի և դրա կատարման արդյունավետության, հնարավոր կրկնողություններից խուսափելու նպատակով այլ ռազմավարությունների և ծրագրերի կատարման արդյունավետության պարբերական գնահատում ապահովելու առաջարկությամբ հանդես է եկել նաև **Երեխայի իրավունքների կոմիտեն իր 2013 թվականին Հայաստանի Հանրապետության վերաբերյալ ներկայացրած ամփոփիչ դիտարկումներում**[654]**:**

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է հնարավորինս շուտ ընդունել օրենսդրական փոփոխություններով նախատեսված պայմաններին համապատասխանող երեխայի իրավունքների պաշտպանության համալիր ծրագիրը:

[654] Երեխայի իրավունքների կոմիտեի ամփոփիչ դիտարկումներն հասանելի են https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2FC%2FARM%2FCO%2F3-4&Lang=en հղումով:

ԳԼՈՒԽ 2. ԵՐԵԽԱՅԻ՝ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԱՊՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄՆ ՈՒ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԽՆԱՄՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Պետությունը, որդեգրելով ապաինստիտուցիոնալացման քաղաքականություն, պարտավորվել է ապահովել երեխայի՝ իր կենսաբանական ընտանիքում և իր կենսաբանական ծնողների հետ պատշաճ խնամք ստանալու իրավունքի իրացումը, և միայն դրա անհնարինության դեպքում՝ դիտարկել խնամքի այլընտրանքային ձևերը՝ նախապատվությունը տալով ընտանեկան կապերին փոխարինող այլ ընտանեկան միջավայրում երեխայի խնամքի կազմակերպմանը:

Մարդու իրավունքների պաշտպանն ընտանիքում ապրելու երեխայի իրավունքի կարևորությանը և այդ իրավունքը երաշխավորելու պետության պարտավորությանն անդրադարձ է կատարել նաև նախորդ տարիների տարեկան հաղորդումներում[655] և արտահերթ հրապարակային զեկույցներում[656]:

Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքը սահմանվել է միջազգային մի շարք փաստաթղթերում և ներպետական օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 9-րդ, 18-րդ, 21-րդ հոդվածներում, «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրումների բնագավառում համագործակցության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 1-ին, 4-րդ հոդվածներում, դրանց վերաբերող մեկնաբանություններում և ուղեցույցներում, Ընտանեկան օրենսգրքում, «Երեխայի իրավունքների մասին» օրենքում, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում և այլն:

Երեխայի խնամքը կենսաբանական ընտանիքում կազմակերպելու առաջնահերթությունը սահմանող, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ընտանեկան կապերին փոխարինող այլ ընտանեկան միջավայրում երեխայի խնամքի կազմակերպման նախապատվությունն ընդգծող նպատակը նախանշվել է նաև պետության ընդունած ռազմավարական փաստաթղթերում, այդ թվում՝ ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» 650-Լ որոշմամբ, ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 2-ի «Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանն ու ներդաշնակ զարգացմանն ուղղված 2020-2023 թվականների համալիր ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» 432-Լ որոշմամբ և այլն:

Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները, գրավոր և բանավոր դիմում-բողոքները, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ստացված զանգերը վկայում են, որ երեխայի խնամքը կենսաբանական ընտանիքում և ընտանեկան

[655] Տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 1265-1271, հասանելի է https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf հղումով, 2024 թվականի փետրվարի 23-ի դրությամբ: Տե՛ս նաև 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 1236-1250, հասանելի է https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[656] Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը Հայաստանի Հանրապետության կողմից «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ, Երևան, 2018թ., էջ 63-78, հասանելի է https://ombuds.am/images/files/0b44c6d762045fbcd7edd99b443608b0.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ: Տե՛ս նաև Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը Հայաստանի Հանրապետության կողմից «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ, Երևան, 2023թ., էջ 64-85, հասանելի է https://www.ombuds.am/images/files/2c1f6e50692f92df376290b6a4ec5121.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

կապերին փոխարինող այլ ընտանեկան միջավայրում կազմակերպելու հարցում առկա են ինչպես օրենսդրական, այնպես էլ գործնական արդյունավետ լուծումներ պահանջող մի շարք համակարգային խնդիրներ:

Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է.

1. Երեխայի խնամքը կենսաբանական ընտանիքում կազմակերպելու հետ կապված խնդիրներ.
2. Որդեգրման հետ կապված խնդիրներ.
3. Խնամակալության կամ հոգաբարձության հետ կապված խնդիրներ.
4. Խնամատար ընտանիքում երեխայի խնամքի կազմակերպման հետ կապված խնդիրներ.
5. Հաստատություններում երեխայի խնամքի և պաշտպանության կազմակերպման հետ կապված խնդիրներ.
6. Հետխնամքի ապահովման հետ կապված խնդիրներ.
7. Մանկալքության կանխարգելման հետ կապված խնդիրներ:

1. Երեխայի խնամքը կենսաբանական ընտանիքում կազմակերպելու հետ կապված խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները, գրավոր և բանավոր դիմում-բողոքները, թեժ գծի հեռախոսահամարին ստացված զանգերը վկայում են, որ գործնականում երեխայի խնամքը կենսաբանական ընտանիքում կազմակերպելու հարցում առկա են բազմաթիվ համակարգային խնդիրներ, ինչի մասին, ի թիվս այլնի, վկայում է նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվությունն առ այն, որ 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող շուրջօրյա խնամքի պետական հաստատություններում խնամվում է 376 երեխա, որից՝ 293-ը ունի հաշմանդամություն:

Արձանագրվել է, որ երեխայի խնամքը կենսաբանական ընտանիքում կազմակերպելու համար հաճախ խոչընդոտ է լինում ընտանիքի ոչ բավարար կենսապայմաններ ունենալը և այդ ուղղությամբ համապատասխան համայնքահեն ծառայությունների բացակայությունը: Դա, երբեմն պատճառ է դառնում նաև երեխաներին շուրջօրյա խնամքի ռեժիմով դպրոցներ տեղափոխելու համար:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Երևանի երաժշտական թիվ 13 հատուկ դպրոց» ՊՈԱԿ իրականացված մշտադիտարկման չհայտարարված այցի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների և աշակերտների ունեցած առանձնազրույցի արդյունքում պարզ է դարձել, որ երեխաների մեծամասնությունը հաճախում է տվյալ դպրոց՝ շուրջօրյա խնամքի ծառայությունից օգտվելու նպատակով, ինչն էլ իր հերթին պայմանավորված է երեխաների՝ բավարար կենսագործունեության և կենցաղային պատշաճ պայմաններով ապահովված չլինելով:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպություն իրականացված մշտադիտարկման չհայտարարված այցի արդյունքները վերահաստատում են այն, որ հաշմանդամություն ունեցող երեխաների դեպքում բավարար կենսագործունեության և կենցաղային պատշաճ պայմաններով ապահովված չլինելուն ավելանում են նաև հաշմանդամության հետևանքով առաջացող հավելյալ ծախսերը, որոնց հաշվարկման և

համապատասխան աջակցությունների տրամադրման մեխանիզմների բացակայության պայմաններում առաջանում է երեխայի խնամքը հաստատությունում կազմակերպելու անհրաժեշտություն:

Արձանագրվել են նաև դեպքեր, երբ ծնողները գերադասել են հաշմանդամություն ունեցող երեխայի խնամքը հաստատության միջոցով իրականացնելու տարբերակը՝ համապատասխան հմտությունների չտիրապետելու և իրենց բնակության վայրում երեխայի համար անհրաժեշտ սոցիալ-բժշկական աջակցություն ստանալու հնարավորություն չունենալու պատճառով:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացրած տեղեկատվության համաձայն՝ 2023 թվականի ընթացքում ընտանիք վերադարձած 10 երեխա կրկին վերադարձել է հաստատություն, որի պատճառներից է եղել նաև մշտական բնակության կենսապայմանների բացակայությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ պետությունը պետք է գործուն միջոցներ ձեռնարկի բացառելու՝ երեխային միայն սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմաններով պայմանավորված՝ իր կենսաբանական ընտանիքից բաժանելու գործելակերպը: Պետությունը պարտավոր է ապահովել երեխայի համար սոցիալ-հոգեբանական և սոցիալ-բժշկական աջակցության, համայնքներում ինքնուրույն կյանքով ապրելուն ուղղված ծառայությունների հասանելիությունը, ծնողների համար ծնողավարման հմտությունների ու երեխայի ընտանիքի անդամների համար անհրաժեշտ հոգեբանական և սոցիալական աջակցություն ստանալու իրական հնարավորությունը:

Այդպիսի պահանջը բխում է ինչպես «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով նախատեսված կարգավորումներից, Երեխայի իրավունքների կոմիտեի 9-րդ ընդհանուր մեկնաբանության, ինչպես նաև միջազգային իրավական այլ փաստաթղթերի վերլուծությունից[657]:

Համակարգային խնդիր է արձանագրվել նաև՝ կապված կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխային կենսաբանական ընտանիք վերադարձնելուց հետո մշտադիտարկում իրականացնելու անհրաժեշտության գնահատման ու դրա առկայության դեպքում՝ համապատասխան քայլերի ձեռնարկման առնչությամբ:

Այսպես, օրինակ, արձանագրվել է դեպք, երբ երեխայի նկատմամբ հայրը սեռական բռնություն է գործադրել, վերջինիս նկատմամբ դեպքի առթիվ հարուցվել է քրեական հետապնդում: Երեխան, որոշ ժամանակ մնալով երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունում, վերադարձվել է ընտանիք, երկար ժամանակ շարունակել է ապրել մոր հետ: Այնուհետև համացանցում տարածվել է տեսանյութ և պարզ է դարձել, որ երեխայի մայրը, նույնպես, պարբերաբար բռնության է ենթարկել երեխային:

Հարկ է փաստել, որ չնայած պետության կողմից ձեռնարկած քայլերին, ինչպիսիք են, օրինակ, սոցիալական աջակցության շրջանակներում ընտանեկան նպաստի տրամադրումը, ծնողավարման դասընթացների իրականացումը, հաշմանդամություն ունեցող անձանց հավելյալ ծախսերի հաշվարկմանն ուղղված աշխատանքները և այլն, երեխայի խնամքն առաջին հերթին կենսաբանական ընտանիքում կազմակերպելու հետ կապված վերը նշված խնդիրները շարունակում են մնալ արդիական:

[657] Տե՛ս Երեխայի իրավունքների կոմիտեի 9-րդ ընդհանուր մեկնաբանությունը, հասանելի է https://www.refworld.org/legal/general/crc/2007/en/48507 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ գործուն միջոցներ ձեռնարկել բացառելու՝ երեխային միայն սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմաններով պայմանավորված՝ իր կենսաբանական ընտանիքից բաժանելու գործելակերպը:

✓ ապահովել երեխայի համար սոցիալ-հոգեբանական և սոցիալ-բժշկական աջակցության, համայնքներում ինքնուրույն կյանքով ապրելուն ուղղված ծառայությունների իրական հասանելիությունը, ծնողների համար ծնողավարման հմտությունների ու երեխայի ընտանիքի անդամների համար անհրաժեշտ հոգեբանական և սոցիալական աջակցություն ստանալու իրական հնարավորությունը:

✓ ներդնել կառուցակարգեր, որոնցով հնարավոր կլինի իրականացնել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխային կենսաբանական ընտանիք վերադարձնելուց հետո մշտադիտարկում իրականացնելու անհրաժեշտության գնահատում ու գնահատման արդյունքներով պայմանավորված համապատասխան քայլերի ձեռնարկում:

2. Որդեգրման հետ կապված խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանի իրականացրած մշտադիտարկումները վկայում են, որ 2023 թվականի ընթացքում շարունակում են արդիական մնալ որդեգրման գործընթացի համակարգման, որդեգրման ենթակա երեխաների տվյալների տրամադրման հստակ ընթացակարգի սահմանման, այդ գործընթացում անձնական տվյալների պաշտպանության, որդեգրման ենթակա երեխայի և որդեգրել ցանկացող անձանց համադրման, որդեգրել ցանկացող անձանց ընտրության գործընթացում երեխայի լավագույն շահից բխող չափանիշների հաշվառման, որդեգրված երեխաների հետագա խնամքի վերահսկողության հետ կապված հստակ, գործուն և երեխայակենտրոն իրավակարգավորումների բացակայությունը:

Ընտանեկան օրենսգրքով սահմանվել է, որ երեխայի որդեգրման համար անհրաժեշտ եզրակացությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության մարզպետների (Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմերի կողմից: Որդեգրողի ընտանիքում որդեգրված երեխայի խնամքի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի և մարզպետի աշխատակազմի (Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետարանի) կողմից՝ համատեղ:

Նշվածից հետևում է, որ որդեգրման հարցում կարևոր նշանակություն ունեցող գործընթացներ իրականացվում են տեղական մակարդակում, որի վերաբերյալ իր մտահոգությունն է հայտնել նաև ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն, և առաջարկել՝ ստեղծել որդեգրման գործընթացի վերանայման կենտրոնացված և որդեգրման գործընթացի բոլոր քայլերի՝ անկախ մարմնի կողմից մշտադիտարկման համակարգ[658]:

Կարևոր է նաև օրենսդրությամբ որդեգրողի ընտանիքում նման մշտադիտարկման իրականացման և տրամադրվող ծառայությունների առանձնահատկությունների նախատեսումը, ինչպիսիք են, օրինակ, այս գործընթացներում որդեգրման գաղտնիության երաշխավորմանն ուղղված կարգավորումները: Ընդ որում, որդեգրումից հետո պետության տրամադրած ծառայությունների նպատակը պետք է լինի նոր միջավայրում երեխայի ինտեգրումն ապահովելը[659]:

---

[658] Հասանելի է https://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[659] Հասանելի է https://assets.hcch.net/docs/bb168262-1696-4e7f-acf3-fbbd85504af6.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Ընտանեկան օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ (...) որդեգրումն իրականացվում է՝ ելնելով երեխայի լավագույն շահերից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ որդեգրողի և որդեգրվողի համադրելիության չափանիշների գնահատման հիման վրա: Նման չափանիշների սահմանումն ու համադրման գործընթացի հստակ կարգավորումը կարևոր են երեխայի որդեգրման և որդեգրման գործընթացի գաղտնիության արդյունավետ պաշտպանության, որդեգրող ծնողների ընտրության չափորոշիչների ֆորմալ բնույթը բացառելու, միայն նյութական վիճակի գնահատման վրա չհիմնվելը երաշխավորելու և երեխային՝ առողջ և ապահով միջավայրում մեծանալու հնարավորություն նախատեսելու համար:

Մինչդեռ՝ ներպետական օրենսդրությամբ դեռևս նշված հարցերի առնչությամբ հստակ կարգավորումներ նախատեսված չեն, ինչի վերաբերյալ իր մտահոգությունն է հայտնել նաև ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն՝ նշելով, որ որդեգրող ծնողների ընտրության չափորոշիչները չափազանց ֆորմալ են և հիմնված են պոտենցիալ ծնողների նյութական վիճակի, այլ ոչ՝ ծնողավարման հմտությունների վրա[660]:

Այս համատեքստում հատկապես մեծ ջանքեր պետք է գործադրվեն օտարերկրյա որդեգրումների գործընթացում: Պետությունը պետք է ձեռնարկի միջոցներ՝ ուղղված օտարերկրյա որդեգրման գործընթացում երեխայի լավագույն շահի ապահովումն երաշխավորելուն, երեխաների առևանգումը, վաճառքը կամ նրանց առևտուրը կանխելուն, և նշված հարցերում այլ պետությունների հետ արդյունավետ համագործակցության ձևավորմանը: Ընդ որում, այդպիսի միջոցները պետք է ուղղված լինեն ոչ միայն որդեգրել ցանկացող անձի պատշաճ գնահատմանը, այլև օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից որդեգրումներից հետո որդեգրված երեխայի խնամքի նկատմամբ ՀՀ-ի կողմից վերահսկողության գործուն և արդյունավետ կառուցակարգերի ներդրմանը:

Նշված պահանջը բխում է «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրումների բնագավառում համագործակցության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով նախատեսված կարգավորումներից:

2023 թվականին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից վարվող իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում հանրային քննարկում է իրականացվել «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և այլ հարակից օրենքների նախագծերի առնչությամբ, որով ի թիվս այնի՝ նախատեսվում են որդեգրման գործընթացների լավարկմանն ու դրանց՝ միջազգային փաստաթղթերով նախատեսված պահանջների համապատասխանությանն ուղղված օրենսդրական փոփոխություններ[661]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է որդեգրման, այդ թվում՝ օտարերկրյա որդեգրման գործընթացի լավարկմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների և գործուն կառուցակարգերի ներդրման հարցում անհետաձգելի միջոցառումների իրականացումը:

---

[660] Հասանելի է https://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[661] Հասանելի է https://www.e-draft.am/projects/5592 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

3. Խնամակալության կամ հոգաբարձության հետ կապված խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանը՝ խնամակալության և հոգաբարձության սահմանման առնչությամբ նույնպես արձանագրել է մի շարք համակարգային խնդիրներ:

Պաշտպանի աշխատակազմի իրականացրած մշտադիտարկումները, ստացված դիմում-բողոքները վկայում են, որ խնամակալության և հոգաբարձության սահմանման գործընթացում ներդրված չեն գնահատման հստակ գործիքակազմեր և կառուցակարգեր, հաճախ որոշումները կայացվում են սուբյեկտիվ դիրքորոշումների հիման վրա: Երկու ծնողների բացակայության պայմաններում խնամակալ նշանակելու պարագայում չեն նախատեսվում մյուս մերձավոր ազգականների հետ տեսակցությունը և շփումը կարգավորող կառուցակարգեր:

Օրինակ, ՄԻՊ աշխատակազմում արձանագրվել է դեպք, երբ երեխաների խնամակալ է նշանակվել երեխաների հորաքրոջ ամուսինը և երեխաների մորական կողմի բարեկամների հետ շփման որևէ կարգ չի նախատեսվել, ինչը հանգեցրել է կողմերի միջև լարվածության առաջացմանը, ընդհուպ՝ երեխաներին միմյանց դեմ տրամադրելուն:

Նման լարված հարաբերությունների առաջացման դեպքեր են արձանագրվել նաև, երբ երկու ծնողների բացակայության պայմաններում առանց մասնագիտական վերլուծության իրականացման խնամակալ են նշանակվել մի կողմի տատիկն ու պապիկը, իսկ մյուս կողմի տատիկի և պապիկի հետ շփման կարգ չի սահմանվել:

Մեկ այլ դեպքում, մշտադիտարկման այցերից մեկի ժամանակ պարզ է դարձել, որ ընդհանուր օգտագործման համար նախատեսված շենքային վատ պայմաններում, որտեղ ապրում են նաև հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունեցող այլ անձինք, բնակվում են 2 անչափահասներ իրենց տարեց տատիկի հետ: Ըստ ստացված տեղեկատվության՝ շենքում է ապրել նաև երեխաների մայրը, ով փորձել է ինքնասպանություն գործել, որից հետո տեղափոխվել է հոգեկան առողջության կենտրոն: Մորը հոգեկան առողջության կենտրոն տեղափոխելուց հետո երեխան տեղափոխվել է սոցիալական պաշտպանության հաստատություն, այնուհետև՝ վերադարձվել շենք:

Համայնքի ղեկավարը ՄԻՊ աշխատակազմի ներկայացուցիչներին հայտնել է, որ տեղեկացված է դեպքի մասին, սակայն երեխաների խնամքի վերաբերյալ որևէ որոշում չի կայացվել:

Մարդու իրավունքների պաշտպանը գրություններ է հասցեագրել և քննարկումներ է կազմակերպել պետական իրավասու մարմինների հետ, որի արդյունքում պետական և տեղական ինքնակառավարման իրավասու մարմինները երեխաների խնամակալության սահմանման և բավարար ու անվտանգ կենսապայմաններում ապրելու իրավունքի ապահովման ուղղությամբ ձեռնարկել են անհրաժեշտ միջոցառումներ:

Արձանագրվել են նաև դեպքեր, երբ, թեև խնամակալության և հոգաբարձության մարմինն է որոշել սահմանել խնամակալություն, սակայն այդպիսի որոշումը հիմնված չի եղել խնամակալի կամ հոգաբարձուի թեկնածու անձի պատշաճ ուսումնասիրության, երեխայի և խնամակալի կամ հոգաբարձուի համադրելիության գնահատման, երեխայի լավագույն շահերի գնահատման և ապահովման վրա:

Նշված հարցի առնչությամբ, թեև ՀՀ կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 551-Ն որոշմամբ նախատեսված են այլընտրանքային խնամքի որևէ տեսակի միջոցով երեխայի խնամքի տրամադրման նպատակով ուղղորդման իրականացման սկզբունքները, սակայն օրենսդրությամբ նախատեսված չէ խնամակալի և հոգաբարձուի ընտրության հարցում անձի և երեխայի համադրելիության գնահատման պարտադիր պայման:

Ընդ որում, ինչպես որդեգրման, այնպես էլ խնամակալություն և հոգաբարձություն սահմանելու դեպքերում կարևոր է, որ այդ գործընթացն իրականացվի բազմամասնագիտական թիմի ներգրավմամբ: Բազմամասնագիտական թիմի ներգրավումը ներկայումս իրականացվում է խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների ստեղծմամբ: Սակայն, հարկ է փաստել, որ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ խնամակալության և հոգաբարձության մարմինների կողմից հարցի քննարկման շրջանակում անհրաժեշտ մասնագետի ներգրավումն եղել է անհնարին խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովում նման մասնագետ ընդգրկված չլինելու պատճառով: Ըստ տրամադրած տեղեկությունների՝ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներում նման մասնագետի ներգրավումը հնարավոր չի եղել ապահովել՝ պայմանավորված հանձնաժողովների՝ հասարակական հիմունքներով գործելու հանգամանքով:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում արձանագրվել են նաև դեպքեր, երբ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի մասին տեղեկատվությունը հայտնի է դարձել ոչ աշխատանքային օրերին, որպիսի պայմաններում դժվարություն է առաջացել կապ հաստատել խնամակալության և հոգաբարձության մարմնի հետ: Տվյալ դեպքում, հետագայում հնարավոր է եղել կապ հաստատել և կազմակերպել խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից այլընտրանքային խնամքի տրամադրման գործընթացը, սակայն կարևոր է նման գործառույթ իրականացնող մարմինների համար ոչ աշխատանքային օրերին և ժամերին նույնպես աշխատանքի շարունակականության ապահովումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***օրենսդրությամբ նախատեսել խնամակալի և հոգաբարձուի ընտրության հարցում անձի և երեխայի համադրելիության գնահատման պարտադիր պայման,***
- ✓ ***ներդնել խնամակալության և հոգաբարձության սահմանման գործընթացում գնահատման հստակ գործիքակազմեր և կառուցակարգեր՝ բացառելով սուբյեկտիվ դիրքորոշումների հիման վրա որոշումների կայացումը,***
- ✓ ***ներդնել կառուցակարգեր, որոնցով հնարավոր կլինի խնամակալության և հոգաբարձության սահմանման դեպքերում՝ դիտարկման և գնահատման առարկա դարձնել նաև երեխայի մյուս հարազատների հետ շփման հարցը,***
- ✓ ***բացառել խնամակալության և հոգաբարձության մարմինների կողմից անգործության դրսևորումը և յուրաքանչյուր երեխայի պարագայում պատշաճ գնահատել խնամակալության և հոգաբարձության հանձնելու հետ կապված հարցերը,***
- ✓ ***խնամակալության և հոգաբարձության սահմանման յուրաքանչյուր դեպքում ապահովել անհրաժեշտ մասնագետների ներգրավվածությունը,***
- ✓ ***նախատեսել խնամակալության և հոգաբարձության մարմինների՝ ոչ աշխատանքային օրերին և ժամերին աշխատանքի իրականացման օրենսդրական հիմք:***

4. Խնամատար ընտանիքում երեխայի խնամքի կազմակերպման հետ կապված խնդիրներ

Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի ապահովումն երաշխավորելու նպատակով վերջին տարիներին պետության կողմից աշխատանքներ են իրականացվել խնամատար ընտանիքների ձևավորման հարցում, ձեռնարկվել են միջոցներ օրենսդրական դաշտի կատարելագործման ուղղությամբ:

Այնուամենայնիվ, Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրականացված մշտադիտարկումների արդյունքները ցույց են տալիս, որ խնամատար ընտանիքների ձևավորման և ինստիտուտի կայացման հարցում առկա են մի շարք համակարգային խնդիրներ: Այդ մասին է վկայում նաև այն, որ ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 2-ի թիվ 470-Ն որոշմամբ նախատեսվել էր, որ 2023 թվականի հունվարի 1-ից կենսաբանական ընտանիքից դուրս բերելու անհրաժեշտության դեպքում 0-3 տարեկան երեխաների խնամքի կազմակերպումը բացառապես պետք է կազմակերպվեր խնամատար ընտանիքում կամ ճգնաժամային աջակցության կենտրոնում: Մինչդեռ՝ ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 1486-Ն որոշմամբ ժամկետը երկարաձգվել է մինչև 2026 թվականը:

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման այցերից մեկի ժամանակ պարզ է դարձել, որ երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունում գրանցվել է դեպք, երբ նույն երեխայի խնամքը երկու անգամ տարբեր խնամատար ընտանիքներում է կազմակերպվել, սակայն որոշ ժամանակ անց այդ ընտանիքները հրաժարվել են երեխայի խնամքը իրականացնելուց, ինչը, ըստ մասնագետների, հոգեբանական բացասական ազդեցություն է ունեցել երեխայի վրա:

Մեկ այլ մասնագիտացված մանկատուն իրականացված մշտադիտարկման այցի ընթացքում պարզ է դարձել, որ մանկատանը գրանցվել են մի քանի դեպքեր, երբ խնամատար ծնող դառնալ ցանկացող անձը տարբեր պատճառաբանություններով հրաժարվել է խնամատարությունից:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը նույնպես իր տրամադրած տեղեկատվության շրջանակներում հաստատել է, որ ընտանեկանին մոտ միջավայրում երեխաների խնամքի կազմակերպման նպատակով առկա է նոր գործիքակազմ ներդնելու անհրաժեշտություն:

«Երեխաների իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 20-րդ հոդված.
ժամանակավորապես կամ մշտապես իր ընտանեկան միջավայրից զրկված կամ իր լավագույն շահերի տեսակետից այդպիսի միջավայրում մնալ չկարողացող երեխան պետության կողմից տրամադրվող հատուկ պաշտպանության և օգնության իրավունք ունի: Մասնակից պետություններն իրենց ներպետական օրենքներին համապատասխան պարտավորվում են ապահովել այլընտրանքային խնամք նման երեխայի համար:

Երեխաների իրավունքների կոմիտեն կոչ է արել պետություններին ապաինստիտուցիոնալացման քաղաքականության շրջանակներում ներդնել ծրագրեր, որոնք կաջակցեն հաշմանդամություն ունեցող երեխաներին ապրել իրենց՝ ընդլայնված կամ խնամատար ընտանիքներում: Երեխաներին ընտանեկան միջավայրում ներառելու

նպատակով ծնողներին և խնամակալներին պետք է տրամադրվեն անհրաժեշտ և համակարգված աջակցություն և վերապատրաստումներ[662]:

Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաստատություններում խնամք ստացող երեխաների թիվն անգամ վկայում է այն մասին, որ խնամատարության ինստիտուտը դեռևս ամբողջությամբ չի ծառայում իր նպատակին՝ երեխայի՝ ընտանեկան միջավայրում ապրելու հնարավորության ապահովմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է վեր հանել խնամատարության ինստիտուտի ոչ լիարժեք կայացման հիմքում ընկած խնդիրները և տալ դրանց առարկայական լուծումներ՝ ապահովելով երեխայի՝ ընտանեկան միջավայրում ապրելու իրավունքի իրացումը և բացառելով երեխաների խնամքը հաստատություններում կազմակերպելու շարունակական պրակտիկան:

5. Հաստատություններում երեխայի խնամքի և պաշտպանության կազմակերպման հետ կապված խնդիրներ

2023 թվականի ընթացքում նույնպես հաստատություններում երեխայի խնամքի և պաշտպանության կազմակերպման հետ կապված խնդիրները Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության ներքո են եղել: Այդ նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները 2023 թվականի ընթացքում մշտադիտարկման չհայտարարված այց են իրականացրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն» և «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպություններ, ինչպես նաև ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Երևանի երաժշտական թիվ 13 հատուկ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն (այսուհետ՝ միասին Հաստատություններ):

Արձանագրվել են մի շարք խնդիրներ, որոնց մի մասը համակարգային են:

Այսպիսով՝ Հաստատություններում, որպես երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող կառույց, արձանագրվել են.

1. Անհրաժեշտ կենսապայմանների ապահովման հետ կապված խնդիրներ.
2. Կրթության, բազմակողմանի և ներդաշնակ զարգացման իրավունքի ապահովման հետ կապված խնդիրներ.
3. Երեխաների անձնական գործերի վարմանը ներկայացվող պահանջների խախտումներ.
4. Վատ վերաբերմունքից զերծ մնալու և կարծիք արտահայտելու իրավունքի ապահովման հետ կապված խնդիրներ.
5. Երեխաների և ծնողների տեսակցությունների կազմակերպման հետ կապված խնդիրներ.
6. Հաստատություններում երեխայի խնամքի և պաշտպանության կազմակերպման գործընթացին առնչվող թերի օրենսդրական կարգավորումներ:

[662] Տես՝ Երեխայի իրավունքների կոմիտեի 9-րդ մեկնաբանությանը հասանելի է https://www.refworld.org/legal/general/crc/2007/en/48507 հղումով, էջ 14, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

5.1 Անհրաժեշտ կենսապայմանների ապահովման հետ կապված խնդիրներ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում (այսուհետ՝ նաև Կենտրոն) պահպանված չէր անձնական տարածքի համար անհրաժեշտ բնակելի մակերեսը, սենյակներում առկա էին իրար միացված կամ շատ մոտ տեղադրված մահճակալներ: Ննջասենյակների տարանջատումը չէր իրականացվել երեխաների տարիքին համապատասխան և չէր պահպանվել մեկ ննջասենյակում երեխաների համար սահմանված տեղերի առավելագույն թիվը, մասնավորապես՝ տարբեր տարիքի տղա երեխաների համար հատկացվել է 8 տեղանոց ննջասենյակ: Արձանագրվել են դեպքեր, երբ տղաների համար նախատեսված մասնաշենքում բավարար տարածք չլինելու պատճառով արական սեռի երեխաները ժամանակավոր տեղափոխվել են աղջիկների մասնաշենք:

Սենյակներում բացակայում էին փոքր պահարաններն ու աթոռները, սենյակներում 3 կամ 4 անձի համար եղել է հագուստի միայն 1 հանդերձապահարան, ընդ որում՝ կոտրված, օգտագործման համար ոչ պիտանի և առանց փականների: Սենյակներից մեկում դրված հեռուստացույցի հեռակառավարման վահանակը անսարք վիճակում էր՝ հնարավորություն չտալով երեխաներին օգտագործել հեռուստացույցը:

Կենտրոնի բժշկական ծառայությունների համար նախատեսված տարածքում միակ գործող սենյակը միաժամանակ ծառայում էր որպես ընդունարան, բժշկի աշխատասենյակ և հերթապահ բուժքրոջ հանգստի սենյակ: Առանձնացված տարածքը, որպես մեկուսարանային բաժանմունքի սենյակ, չէր համապատասխանում սահմանված չափանիշներին, մասնավորապես՝ կահույքը կեղտոտ էր, իսկ մահճակալները՝ չհարդարված և իրար շատ մոտ, սանհանգույցը բացակայում էր:

Կենտրոնում հատկացված չէր հանգստի և դասերը պատրաստելու առանձին սենյակ՝ ապահովված երեխաների տարիքային խմբերի առանձնահատկություններին համապատասխանող անվտանգ, կարիքահեն և զարգացման համար անհրաժեշտ պայմաններով: Հագուստի և կոշիկի չորապահարանները բավարար չէին: Երեխաները հագուստը և կոշիկները չորացնում էին՝ պատերին փռելով կամ այլ ոչ սանիտարահիգիենիկ միջոցներով:

Կենտրոնն ապահովված չէր առանձնացված պայմաններում երեխաների նեղ անձնական պահանջմունքները, կարիքները (անձնական

հիգիենա) ինքնուրույն բավարարելու հնարավորությամբ: Մասնավորապես՝ սանհանգույցների դռների մեծ մասը չէր փակվում ներսից, լոգարանները սանհանգույցից առանձնացված էին միայն միջնապատով, իսկ որոշ դեպքերում բացակայում էր նաև միջնապատը:

Հագուստի, այդ թվում՝ ներքնազգեստի լվացքն իրականացվում էր առանց անհատականացման և անհրաժեշտ տեսակավորման՝ հանգեցնելով տարբեր երեխաների կողմից նույն հագուստը կամ ներքնազգեստը կրելու դեպքերի, ինչպես նաև, ըստ երեխաների, պատճառ հանդիսանալով առօրյա հագուստի վրա տհաճ հոտի առաջացման:

Անկողնային պարագաների, սրբիչների, սանրերի, ատամի խոզանակների անհատականացումն իրականացվում էր առանց համապատասխան նշումների:

Առանձնազրույցների ընթացքում երեխաները Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներին հայտնել են, որ խոզանակների համար պաշտպանիչ տուփեր չեն տրամադրվում և դրանց միանմանության հետևանքով իրենք չեն կարողանում տարբերակել, թե խոզանակն ում է պատկանում, ինչը, երբեմն, հանգեցնում է նույն խոզանակը տարբեր երեխաների կողմից օգտագործելու դեպքերի: Նույն կերպ, երեխաները հայտնել են նաև, որ հակաքրտինքային միջոցը/դեզոդորը տրամադրվում է ոչ թե անհատականացմամբ, այլ՝ ամբողջ խմբին:

Երեխաների համար առանձնացված խոհանոցում առկա բաժակները չէին համապատասխանում երեխաների թվաքանակին. թվով 14 երեխային հատկացված էր 6 բաժակ:

Կենտրոնը չի ընձեռում հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժի և կենսագործունեության համար պատշաճ հնարավորություն, սանհանգույցներն ու լոգարանները մատչելի չէին հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Այցի պահին նշված նպատակով օգտագործվող տրանսպորտային միջոցը ոչ միայն հարմարեցված չէր հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին, այլև, ըստ անձնակազմի տրամադրած տեղեկատվության, հունվար ամսից անսարք վիճակում էր, ինչի արդյունքում անգամ բժշկական կենտրոններ երեխաների տեղափոխումը աշխատակիցներն իրականացնում էին սեփական միջոցներով:

Կենտրոնում առաջնային հրդեհաշիջման միջոցները ոչ բարվոք վիճակում էին, իսկ որոշ տեղերում ուղղակի բացակայում էին: Հակահրդեհային ազդարարման սեղմակոճակները և տարհանման պլանները տեսանելի վայրերում չէին տեղադրված:

Սենյակում առկա մետաղային տարայում լցված էին ժամկետանց դեղեր և օգտագործված ներարկիչներ: Ըստ բժշկական անձնակազմի տրամադրած տեղեկությունների՝ բժշկական թափոնների տեսակավորում, ժամկետանց դեղերի՝ գործող ընթացակարգին համապատասխան խոտանում չէր իրականացվում: Բժշական թափոնները թափվում էին կենցաղային աղբի հետ միասին: Միևնույն ժամանակ, օգտագործված ներարկիչները լցվում էին մետաղյա տարայի մեջ, որը չուներ կենսաբանական վտանգի նշանը և «Զգույշ սրածայրեր» մակնշումը:

Հարկ է արձանագրել, որ բուժանձնակազմը և տնօրինությունը անգամ տեղեկացված չէր բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջների վերաբերյալ իրավական կարգավորումների մասին:

Կենտրոնում սանիտարահիգիենիկ նորմերի և անվտանգության կանոնների ակնհայտ խախտումներ են հայտնաբերվել նաև.

1. Սննդի պահման վայրերում. Մասնավորապես՝ կարտոֆիլն ու այլ բանջարեղենները պահվում էին լոգարանում՝ հատակին դրված վիճակում: Հացը պահվում էր երկաթե մեծ տարայի մեջ, որն ամբողջությամբ փակ էր՝ առանց անցքերի: Հացամանի մաքրությունը, ըստ խոհարարի, իրականացվել է միայն չոր շորով սրբելու եղանակով: Սննդի պահման վայրը փոշոտ էր:

2. Ճաշարանում. Մասնավորապես՝ ճաշարանի լվացարանի կողքին չկար օճառ, իսկ այցի պահին երեխաների մի մասը առանց լվացվելու նստեց ճաշելու, ինչին աշխատակիցներից ոչ մեկը ուշադրություն չդարձրեց:

3. Երեխաների հագուստների դիտարկման արդյունքում. Մասնավորապես՝ երեխաներից շատերի հագուստը հնամաշ էր և կեղտոտ, ինչը վերաբերում է նաև նոր լվացած և չորացնելու նպատակով փռված հագուստին: Աշխատակիցներից մեկի պնդմամբ՝ երեք տարեկան երեխաների համար բացակայում էր որոշակի տեսակի նոր հագուստների տրամադրման հնարավորությունը:

4. Պահեստի դիտարկման արդյունքում. Մասնավորապես՝ պահեստում հայտնաբերվել են ժամկետանց հիգիենայի և մաքրման միջոցներ: Պահեստի սենյակներից մեկը լցված էր տարբեր հնամաշ և խոտանված իրերով, այդ թվում՝ սուր կտրող գործիքներով: Այցի պահին տվյալ սենյակի պատուհանը փակված էր այնպես, որ դրսից սենյակ մուտքը կանխվեր: Աշխատակիցներից մեկի պնդմամբ՝ պատուհանը նման եղանակով փակելու միտքը առաջացել է՝ հաշվի առնելով այն, որ երեխաները, պատուհանից մտնելով՝ հաճախ էին թաքնվում այդտեղ:

5. Կավագործության դասընթացների անցկացման համար նախատեսված սենյակում. Մասնավորապես՝ սենյակում երեխաների համար հասանելի դարակներից մեկում առկա էին բժշկական ասեղ, կոնյակի և օղու դատարկ շշեր, որոնք, ըստ աշխատակցի, օգտագործվում են միայն կավագործության դասընթացների ընթացքում կավի հետ աշխատելու և անհրաժեշտ նյութերը պահելու համար:

6. Կենտրոնի ամբողջ տարածքում. Մասնավորապես, ամբողջ տարածքը, ներառյալ՝ ննջասենյակները, խմբակների անցկացման սեյակները, խոհանոցը, պահեստը, խաղահրապարակը և շենքի հարակից տարածքը, կեղտոտ էին: Գրեթե բոլոր սենյակների վարդակները վատ վիճակում էին և անվտանգ չէին երեխաների համար:

Սննդի կազմակերպման գործընթացում արձանագրվել է, որ Կենտրոնում կազմված ճաշացուցակը միատարր էր, չէր պարունակում տարվա եղանակի, երեխաների տարիքային խմբի, կերակրատեսակի չափաբաժնին համապատասխան սննդային նյութերի, էներգետիկ արժեքի, վիտամինների, միկրոտարրերի վերաբերյալ տեղեկատվություն: 14 օրվա համար կազմված ճաշացուցակի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ 14 օրերից 6-ի համար կաթ նախատեսված չէ, 1-ի համար կարտոֆիլ նախատեսված չէ, իսկ ձուկը նախատեսված է միայն 3 օրվա համար:

Կենտրոնում երեխաների տարիքային առանձնահատկություններով պայմանավորված՝ սննդի քանակի տարբերակում նախատեսված չէր: Ճաշացուցակի ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ պահպանված չէին նաև սննդի քանակին ներկայացվող պահանջները: Այցի ընթացքում պարզվել է, որ ճաշասրահի տեսանելի տեղերում փակցված է ոչ թե նախորդ օրը ղեկավարի կողմից հաստատված ճաշացուցակ-բաշխումը, այլ օրենսդրությամբ սահմանված պահանջներին չհամապատասխանող օրինակելի ճաշացուցակի մեկ օրվա տվյալներ պարունակող հատվածը:

Այցի ընթացքում խոհանոցում հայտնաբերվել են ժամկետանց ալյուր և կարմիր պղպեղ, խոհանոցի սառցարանում առկա մսամթերքի վրա բացակայել է ժամկետների նշումը, մածունի և թթվասերի փոխարեն Կենտրոնում երեխաներին տրամադրվում էր կաթնային փոխարինիչով և կաթնային յուղի փոխարինիչով կաթ պարունակող մթերք, խոհարարական արտադրանքի պատրաստումն իրականացվում էր առանց արտադրական գործընթացի (տեխնոլոգիական) քարտի:

Այցի ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ երեխան չի մասնակցել սննդի ընդունման փուլին՝ զրկվելով հետագայում բաց թողնված սնունդը ստանալու հնարավորությունից: Կենտրոնի ղեկավարը, ընդունելով նման փաստը, հայտնել է, որ քայլեր կձեռնարկի սննդի կազմակերպման գործընթացում երեխաների լիարժեք ընդգրկումն ապահովելու ուղղությամբ՝ բացառելով երեխայի՝ սննդից զրկվելու դեպքերը:

Այցի ընթացքում ճաշացուցակ-բաշխման ձևաչափը չի լրացվել, պարզվել է, որ նմուշառումն իրականացվել է օրենսդրական պահանջների խախտմամբ: Մասնավորապես՝ ըստ խոհանոցի աշխատակցի հայտնած տվյալների՝ նմուշառումն իրականացվել է խոտանորոշման հանձնաժողովի բացակայությամբ, իսկ դրա արդյունքները չեն լրացվել որևէ մատյանում:



Խոհանոցի միակ աշխատակցի հետ առանձնազրույցի արդյունքում պարզ է դարձել, որ Կենտրոնում բուժաշխատողն իրեն չի զննում և դրա արդյունքների մասին որևէ մատյանում գրառում չի կատարում:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Երևանի երաժշտական թիվ 13 հատուկ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում (այսուհետ՝ նաև Դպրոց) արձանագրվել է, որ դպրոցը, այցի պահին ունենալով շուրջօրյա ռեժիմով սովորող 127 աշակերտներ, ապահովված չէ տաք ջրով, բացակայում են լոգախցիկներն ու ցնցուղները, հանդերձարանները, անձնական հիգիենիայի ապահովման համար առանձնացված սենյակները, երեխաները չունեն լոգանք ընդունելու հնարավորություն, դպրոցը ապահովված չէ տաք ջրով անգամ լվացվելու համար, առկա է միայն սառը ջուր: Երեխաները տաք ջրով լոգանք ընդունելու փոխարեն ստիպված են լինում օգտագործել թաց անձեռոցիկներ, իսկ լվացվում և ատամները լվանում են սառը ջրով: Նշվածը լրջագույն խնդիր է երեխաների կենսապայմանների և դրանից բխող երեխաների առողջության ապահովման ու հիվանդությունների տարածման կանխարգելման տեսանկյունից:

Դպրոցի դասապրոցեսների անցկացման համար նախատեսված մասնաշենքում տղաների և աղջիկների սանհանգույցները, ինչպես նաև աշխատակիցների համար նախատեսված սանհանգույցները տարբերանշաններով առանձնացված չէին, ինչը առերևույթ կարող էր հանգեցնել տղաների և աղջիկների կողմից նույն սանհանգույցից

օգտվելու դեպքերի: Որոշ սանհանգույցներ վատթար վիճակում էին, մեծ մասի դռները չէին փակվում ներսից:

Լրջագույն խնդիրներից է նաև լվացքատների, հագուստի մաքրման սենյակների, հագուստի և կոշիկի չորապահարանների բացակայությունը: Երեխաները, 4 գիշեր մնալով դպրոցում, հնարավորություն չունեն ապահովված լինել մաքուր հագուստով:



Դպրոցում խնամքի պարագաներից երեխաներին հիմնականում տրամադրվում են սրբիչներ և անկողնային սպիտակեղեններ, որոնք անհատականացված չեն այն պատճառաբանությամբ, որ երեխաները ճանաչում են իրենց սրբիչները, իսկ անկողնային սպիտակեղենը լվացվում է այլ կազմակերպության կողմից:

Պահպանված չէր անձնական տարածքի համար անհրաժեշտ բնակելի մակերեսը, սենյակներում առկա էին իրար միացված կամ շատ մոտ տեղադրված մահճակալներ: Պահպանված չէր մեկ ննջասենյակում երեխաների համար սահմանված տեղերի առավելագույն թիվը, մասնավորապես՝ առկա էին ննջասենյակներ, որտեղ մնացող 1-4-րդ դասարանի աշակերտների թիվը 6-ից ավելի էր, իսկ 5-րդից բարձր դասարանների աշակերտների թիվը՝ 4-ից: Մահճակալների մեծ մասը և փոքրաթիվ պահարանները, որոնք դրված էին մահճակալների կողքին, հին էին, իսկ որոշները՝ կոտրված: Ընդհանուր օգտագործման տարածքում դրված պահարանների բանալիները երեխաներին չէին տրամադրվում՝ դրանք չկորցնելու պատճառաբանությամբ: Աթոռները, հիմնականում, բացակայում էին: Հարկ է փաստել, որ նշվածից բացառություն էին կազմում նոր ձեռք բերված մահճակալները և պահարանները, որոնք ծառայում են նաև որպես աթոռ:

Դպրոցում աշակերտներին, այդ թվում՝ շուրջօրյա ռեժիմով սովորող աշակերտներին, բժշկական օգնությունը օրվա ընթացքում տրամադրվում էր բուժքույրերի կողմից, իսկ գիշերային ժամերին բուժաշխատողի պարտականությունները փաստացի կատարում էր դպրոցի աշխատակիցներից մեկը, ով ուներ նաև համապատասխան մասնագիտացում, սակայն գրանցված չէր որպես բուժաշխատող:

ՄԻՊ ներկայացուցիչներին տրամադրած տեղեկատվության համաձայն՝ այն դեպքում, երբ երեխաների մոտ նկատվում են առողջական խնդիրներ՝ դպրոցից անմիջապես կապ է հաստատվում երեխայի ծնողի հետ, ով կազմակերպում է հետագա գործընթացը:

Բուժկետից բացի բժշկական այլ ծառայությունների համար նախատեսված համապատասխան տարածքներ չկային:

Պաշտպանի ներկայացուցիչներին ներկայացված տեղեկությունների համաձայն՝ Դպրոցում օգտագործված ներարկիչները ուղղակի նետվում են աղբամանի մեջ և դիտարկվում որպես կենցաղային թափոն:

Հարկ է արձանագրել, որ աշխատակիցները տեղեկացված չէին բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջների վերաբերյալ իրավական կարգավորումների մասին:

Անդրադառնալով դպրոցի շենքային պայմաններին՝ հարկ է փաստել, որ այցի ընթացքում արձանագրվել է, որ դպրոցին ամրակցված շենքերը վատթար վիճակում են,

սանհանգույցները հին են, որոշները՝ կոտրված, կահույքի հիմնական մասը հնամաշ է, որոշ մահճակալներ ևս կոտրված են, դասասենյակները՝ չվերանորոգված: Որոշ դասասենյակների պատուհաններ ճաղապատված են: Սանհանգույցներից մեկի պատուհանը կոտրված էր:

Երեխաների անվտանգության ապահովման տեսանկյունից կարևոր է նաև գիշերային ժամերին հերթափոխող աշխատակիցների՝ երեխաների թվի համեմատ համաչափության հարցը:

ՄԻՊ ներկայացուցիչներին տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Դպրոցում 127 աշակերտի համար գիշերային ժամերին հերթափոխում են 5 աշխատակից, որը՝ երեխաների թվի և նրանց սեռատարիքային բաշխվածության համեմատությամբ շատ փոքր ռեսուրս է երեխաների գիշերային խնամքն ու պաշտպանությունը պատշաճ իրականացնելու համար: Ավելին, շուրջօրյա հերթափոխի համար բուժաշխատող չկար: Ինչպես արդեն նշվեց, ըստ Պաշտպանի ներկայացուցիչներին ներկայացված տեղեկատվության՝ գիշերային ժամերին բուժաշխատողի պարտականությունները փաստացի կատարում էր Դպրոցի աշխատակիցներից մեկը, ով ուներ նաև համապատասխան մասնագիտացում, սակայն գրանցված չէր որպես բուժաշխատող:

Դպրոցի շենքային պայմանները հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի չեն: Մասնավորապես, բացակայում են թեքահարթակները, բազրիքները, հատուկ շոշափելի և ազդանշանային գծանշումները, հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի սանհանգույցները, լոգարանները, զուգարանակոնքերը, լվացարաններն ու ցնցուղները:

Սննդի կազմակերպման գործընթացում արձանագրվել է, որ ՄԻՊ ներկայացուցիչներին տրամադրած ճաշացուցակը չէր պարունակում կերակրատեսակի չափաբաժնին համապատասխան սննդային նյութերի, էներգետիկ արժեքի, վիտամինների, միկրոտարրերի վերաբերյալ տեղեկատվություն: Դպրոցում մեկ ամսվա համար կազմված ճաշացուցակի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ամեն օր չէ, որ երեխաներին տրամադրվել են կարտոֆիլ և հյութեր, իսկ ձուկ, կաթ և կաթնաշոռ ընդհանրապես չի տրամադրվել: Այցի ընթացքում կերակրատեսակների արտադրական գործընթացի նկարագիրը և բաղադրատոմսը ներառող արտադրական գործընթացի (տեխնոլոգիական) քարտը լրացված չէր:

Արձանագրվել է, որ խոհանոցի տարածքը, ինչպես նաև խոհանոցի աշխատակիցների հագուստը կեղտոտ էին: Խոհանոցի աշխատակիցները սննդամթերքին դիպչում էին ձեռքերով: Ընդ որում՝ խոհանոցի, սպասքի, աշխատակիցների հագուստի և լվացարանների կեղտոտ լինելու, ինչպես նաև սննդի պատրաստման պայմանների վերաբերյալ համապատասխան արձանագրումներ կատարվել են նաև Դպրոցի կողմից «Արձանագրությունների համար» վերտառությամբ մատյանում:

Այցի ընթացքում ճաշացուցակ-բաշխման ձևաչափը չի լրացվել: Խոհանոցի աշխատակիցների հետ առանձնազրույցի արդյունքում պարզ է դարձել, որ դպրոցում բուժաշխատողն իրենց չի զննում և դրա արդյունքների մասին որևէ մատյանում գրառում չի կատարում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում (այսուհետ՝ նաև Մանկատուն) պահպանված չէր անձնական տարածքի համար անհրաժեշտ բնակելի մակերեսը, սենյակներում առկա էին իրար միացված կամ շատ մոտ տեղադրված

մահճակալներ: Պահպանված չէր մեկ ննջասենյակում երեխաների համար սահմանված տեղերի առավելագույն թիվը, իսկ որոշ դեպքերում տարածքի ոչ բավարար լինելու պատճառով մահճակալները տեղադրված էին ընդհանուր օգտագործման համար նախատեսված սենյակներում, որով պայմանավորված՝ որոշ սաներ առանձին ննջարաններ ունենալու հնարավորությունից զրկված էին: Արձանագրվել է, որ որոշ սենյակներ հասնելու համար սաները ստիպված են լինում անցնել այլ խմբի համար հատկացված ննջասենյակների միջով:

Առանձնացված պայմաններում երեխաների նեղ անձնական պահանջմունքները, կարիքները (անձնական հիգիենա) ինքնուրույն բավարարելու հնարավորության ապահովման տեսանկյունից, հատկապես, խնդրահարույց էր այն, որ լոգախցիկները, սանհանգույցները իրարից առանձնացված էին միայն միջնապատով, իսկ որոշ դեպքերում բացակայում էր նաև միջնապատը: Սանհանգույցների պատուհանների ապակիները թափանցիկ էին և, հիմնականում, չունեին վարագույրներ, ինչը կարող է սանհանգույցների հատվածը դրսից տեսանելի դարձնել: Սանհանգույցներից մեկի պատուհանը կոտրված էր: Ննջասենյակներից մեկում ևս արձանագրվել է շերտավարագույրի անսարքության դեպք: Անձնական հիգիենայի սենյակ առանձնացված չէր: Այցի պահին շենքային պայմանները մասամբ էին հարմարեցված հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին: Օրինակ՝ սանհանգույցները մատչելի չէին:

Երեխաների մի մասը, ճաշասենյակների համար հատկացված տարածքների փոքր լինելու պատճառով, սնվում էին ննջասենյակներում կամ ընդհանուր օգտագործման համար առանձնացված սենյակներում: Սենյակներում օդափոխման համակարգ չկար:

Այցի պահին Մանկատանը իրականացվում էին շինարարական աշխատանքներ և որպես մեկուսարանային բաժանմունք առանձնացված սենյակը, որն էլ իր հերթին չէր համապատասխանում օրենսդրությամբ նախատեսված չափանիշներին, ծառայում էր այլ նպատակներով:

Մանկատանը կազմված ճաշացուցակը չէր պարունակում կերակրատեսակի չափաբաժնին համապատասխան սննդային նյութերի, էներգետիկ արժեքի, վիտամինների, միկրոտարրերի վերաբերյալ տեղեկատվություն: 14 օրվա համար կազմված ճաշացուցակի ուսումնասիրությունը ցույց էր տալիս, որ 14 օրերից 3-ի համար հյութ նախատեսված չէ, իսկ ձուկը նախատեսված է միայն 1 օրվա համար: Ճաշացուցակի ուսումնասիրությունը ցույց է տվել նաև, որ առկա են կրկնվող ճաշատեսակի ներառման դեպքեր: Օրինակ՝ 14 օրերից 12-ի նախաճաշում նախատեսված է կաթով շիլա: Ճաշացուցակի ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ որոշ դեպքերում պահպանված չէին սննդի քանակին ներկայացվող պահանջները:

Սննդի պահեստում իրականացված դիտարկման արդյունքում ժամկետանց ապրանք չի հայտնաբերվել:

Միաժամանակ, Պաշտպանն ընդգծում է, որ 2023 թվականի ընթացքում երեխայի խնամք և պաշտպանության իրականացնող հաստատություններ իրականացված մշտադիտարկման այցերի համեմատական վերլուծությունը վկայում է, որ ի տարբերության մյուս հաստատությունների՝ նշված մանկատանը գործուն միջոցներ են ձեռնարկվել երեխայի իրավունքների պաշտպանության կառուցակարգերի լավարկման ուղղությամբ:

Մինչդեռ՝ *«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետություններն ապահովում են երեխաների մասին հոգալու կամ նրանց պաշտպանության համար պատասխանատու հիմնարկների, ծառայությունների և*

մարմինների համապատասխանությունն իրավասու մարմինների կողմից սահմանված չափանիշներին, մասնավորապես, անվտանգության և առողջապահության բնագավառներում դրանց թվաքանակի և անձնակազմի պիտանիության, ինչպես նաև իրավասու հսկողություն սահմանելու իմաստով:

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 16-րդ հոդված.
Ոչ մի երեխա չպետք է ենթարկվի իր անձնական կյանքի, ընտանիքի կյանքի, բնակարանի կամ նամակագրության անձեռնմխելիության կամայական կամ ապօրինի միջամտության, կամ իր պատվի և հեղինակության նկատմամբ ապօրինի ոտնձգության:

Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի «Երեխաների իրավունքների կոնվենցիայի կիրառման ձեռնարկի» համաձայն՝ երեխայի անձնական կյանքի գաղտնիության իրավունքի ապահովման նպատակով Հաստատությունները պետք է բավարարեն տարածքի, այդ թվում՝ անձնական տարածքի, սանհանգույցների, լոգախցիկների համար սահմանված նվազագույն չափանիշներին[663]*:*

Խնամք իրականացնող հաստատությունները պետք է երաշխավորեն, որ երեխաները ստանան համապատասխան քանակությամբ առողջարար նյութեր և սահմանված չափանիշներին համապատասխան սննդարար սնունդ՝ տեղական սովորություններին, սննդակարգին և կրոնական համոզմունքներին համապատասխան: Անհրաժեշտության դեպքում պետք է տրամադրվի նաև հավելյալ սնունդ[664]*:*

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մաս.
Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար հաշմանդամություն ունեցող երեխաների՝ մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից մյուս երեխաների հետ հավասար հիմունքներով օգտվելը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ հաստատություններում յուրաքանչյուր երեխայի համար միջազգային և ներպետական օրենսդրությամբ սահմանված չափորոշիչների հաշվառմամբ ապահովել կյանքի համար անվտանգ, երեխայի սեռին, տարիքին, առողջական վիճակին և սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան պայմաններ,ներառյալ՝ տաք և սառը ջուր, տարածություն, այդ թվում՝ անձնական տարածք, ննջասենյակներ, լոգախցիկներ և սանհանգույցներ, բժշկական օգնության և սպասարկման համար անհրաժեշտ կաբինետներ, սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան առողջարար նյութեր և սահմանված չափանիշներին համապատասխան սննդարար սնունդ և անհրաժեշտ պարագաներ՝ ապահովելով դրանց անհատականացումը:

✓ հաստատությունների շենքային պայմանները հարմարեցնել հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին:

[663] Տե՛ս Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի «Երեխաների իրավունքների կոնվենցիայի կիրառման ձեռնարկ», հասանելի է https://www.unicef.org/lac/media/22071/file/Implementation%20Handbook%20for%20the%20CRC.pdf հղումով, էջ 206, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[664] Տե՛ս Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 2009թ. նոյեմբերի 20-ին ընդունած՝ «Երեխաների այլընտրանքային խնամքի ուղեցույցներն», հասանելի են https://digitallibrary.un.org/record/673583?ln=en հղումով:

5.2 Կրթության, բազմակողմանի և ներդաշնակ զարգացման իրավունքի ապահովման հետ կապված խնդիրներ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում իրականացված մշտադիտարկման այցի ընթացքում պարզ է դարձել, որ խնամք ստացող երեխաներից մեկը խնամք ստանալու ժամանակահատվածում ներառված չէ պարտադիր կրթության ծրագրում: Ըստ տնօրենի՝ երեխայի կրթության շարունակականությունը չի ապահովվել, քանի որ վերջինս նախապատրաստվում է քոլեջի ընդունելության քննություններին և հաճախում է մասնավոր նախապատրաստական պարապմունքների:

Ուշադրության է արժանի նաև այն, որ աշխատակիցների պնդմամբ՝ այցի օրը երեխաները, դպրոցում ջուր չունենալու պատճառով, չեն հաճախել դպրոց, իսկ դասերը նախատեսվել է անցկացնել առցանց, մինչդեռ այդ օրը ՄԻՊ աշխատակիցների՝ Կենտրոնում գտնվելու ողջ ընթացքում երեխաներից ոչ մեկը չի մասնակցել առցանց դասընթացներին:

Արձանագրվել է, որ կրթության իրավունքի լիարժեք իրացումն ապահովող կողմերի՝ մի կողմից Կենտրոնի, մյուս կողմից՝ դպրոցի և կրթամշակութային, սպորտային խմբակների միջև բացակայում էր ընդհանուր նպատակների, խնդիրների և ծրագրերի քննարկման միասնական հարթակը և արդյունավետ համագործակցության փորձը:

Կենտրոնն ապահովված չէր երեխաների տարիքային խմբերի առանձնահատկություններին համապատասխանող անվտանգ, կարիքահեն և զարգացման համար անհրաժեշտ պայմաններով: Ինչպես արդեն նշվել է, դասապատրաստման գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ տարածք և համապատասխան կահույք հատկացված չէր, երեխաների առօրյան կազմակերպելու համար նախատեսված չէին տարիքային առանձնահատկություններին և հետաքրքրություններին համապատասխան ծրագրեր: Արդյունքում, դպրոցահասակ երեխաները ստիպված էին դասապատրաստում իրականացնել փոքրահասակ երեխաների քնելուց հետո, քանի որ համակարգված չէր երեխաների դասապատրաստման գործընթացը: Երեխաների կողմից ներկայացվել է նաև այն հարցը, որ չունեն բավարար գրենական պիտույքներ, ինչպես նաև առարկայական ցանկով նախատեսված գրքերից ոչ բոլորն են դպրոցի կողմից տրամադրվել իրենց:

Հաստատության մասնագիտական թիմը տարբեր տարիքային խմբերի երեխաների համար չուներ անձի զարգացման արդյունավետ, բովանդակային խմբային և անհատական ծրագրեր: Բացակայում էին Կենտրոնից դուրս սպորտային և մշակութային միջոցառումներին, խմբակներին հաճախելու հնարավորություն ապահովող ծրագրերը:

Կենտրոնի ներսում՝ որպես հիմնական զբաղմունքի միջոց օգտագործվում էր հեռուստացույցը, որը այցի ողջ ընթացքում աղջիկների խմբում միացված է եղել բարձր ձայնով և երեխաների տարիքին և զարգացման հնարավորություններին ոչ համապատասխան բովանդակությամբ, իսկ տղաների խմբում՝ չի միացվել շուրջ 2 ամիս՝ վահանակի անսարքության պատճառով:

Խնդրահարույց է նաև այն, որ Կենտրոնում երեխաների յուրաքանչյուր խմբի հետ աշխատում էին մեկական դայակ և դաստիարակ, իսկ ժամը 18:00-ից հետո երեխաների յուրաքանչյուր խմբի հետ հերթափոխով աշխատում էր մեկական դայակ՝ որպիսի պայմաններում դժվարանում կամ գրեթե անհնարին էր դառնում երեխաների պատշաճ խնամքի և զբաղվածության ապահովումը: Ըստ դայակներից մեկի՝ երեխաների առօրյայի

կազմակերպման և այլ լիազորություններով պայմանավորված, հաճախ չեն կարողանում պատշաճ կազմակերպել խմբի բոլոր երեխաների հետ համապատասխան աշխատանքները, քանի որ խումբը մեծ է և երեխաները՝ տարբեր տարիքի:

Հատկանշական է նաև, որ ՄԻՊ աշխատակազմի այցի օրը երեխաներն ուղղորդվել են նկարչության խմբակ, սակայն երեխաների մի մասը զրույցի ընթացքում նշել է, որ տվյալ խմբակի դասերին այդ օրն առաջին անգամ էին մասնակցում:

Կենտրոնում չէր կիրառվում երեխաների առօրյա զբաղվածության, արդյունավետ ժամանցի, հագեցած առօրյայի ծրագրային փաստաթղթային պլանավորում, որը կարտացոլեր և կապահովեր դաստիարակների աշխատանքների նպատակային շարունակականությունը:

Բազմամասնագիտական թիմի ներսում, ինչպես նաև Կենտրոն - դպրոց փոխհարաբերություններում բացակայում էր արդյունավետ համագործակցությունը, ինչի հետևանքով չէր ապահովվում երեխայակենտրոն մասնագիտական միասնական մոտեցում՝ ելնելով երեխայի լավագույն շահից:

Դպրոցի հետ կապը դրսևորվում է հիմնականում սոցիալական աշխատողներին՝ երեխաների վերաբերյալ անհատական ուսուցման պլանների քննարկումներին ներգրավմամբ, սակայն դպրոցում երեխաների ինտեգրման և սոցիալականացման հետ կապված այլ հարցերը չէին ապահովվում: Կենտրոնի երեխաները հնարավորություն չունեին ներգրավվելու դպրոցական միջոցառումներին: Ըստ Կենտրոնի աշխատակիցների՝ գրանցվել է դեպք, երբ միջոցառմանը մասնակցելու հնարավորությունն ապահովվել է աշխատակիցների հավաքած գումարով:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Երևանի երաժշտական թիվ 13 հատուկ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում իրականացված այցի ընթացքում պարզ է դարձել, որ սովորողներից երկուսը տարբեր հանգամանքներով պայմանավորված՝ չեն հաճախում դպրոց, որի կապակցությամբ տնօրենը գրություններ է հասցեագրել պետական իրավասու մարմիններին:

Մշտադիտարկման այցի ընթացքում պարզ է դարձել, որ Դպրոցում առկա երաժշտական գործիքների տեսակների՝ երեխաների թվի համեմատությամբ պակաս լինելու պատճառով, որոշ երեխաներ երբեմն հնարավորություն չեն ունենում կատարել իրենց նախընտրած գործիքի ընտրություն:

Ավելին, երեխաների հետ ունեցած առանձնազրույցներից կարելի է եզրակացնել, որ նրանց մեծամասնությունը հետաքրքրված չէ նաև երաժշտական կրթությամբ և Դպրոցում սովորում է՝ շուրջօրյա խնամքի ծառայություններից օգտվելու համար:

Դպրոցում առկա չեն երեխաների հանգստի, ժամանցի դասապրոցեսներից հետո դասերին պատրաստվելու համար հատկացված առանձին տարածքներ և համապատասխան հնարավորություններ: Ավելին, դասապրոցեսի ավարտից հետո երեխաները մինչև երեկոյան ուշ ժամը ննջասենյակներ գնալու հնարավորություն ևս չունեն և ստիպված են սպասել դպրոցի տարբեր հատվածներում՝ մինչև ննջասենյակներ տեղափոխվելու ժամը:

Ըստ Պաշտպանի ներկայացուցիչներին ներկայացված տեղեկատվության՝ օտարվել է Դպրոցին պատկանող խաղահրապարակի տարածքը, որը նախկինում ծառայել է երեխաների ժամանցի և խաղերին մասնակցելու իրավունքի իրացման նպատակով:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում (այսուհետ՝ նաև

Մանկատուն) իրականացված այցի ընթացքում անձնակազմի և սաների հետ տեղի ունեցած առանձնազրույցների, զրույցների, ինչպես նաև Մանկատան տրամադրած տեղեկությունների ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ տնային ուսուցմամբ սովորողների կրթության կազմակերպման ընթացքում ոչ միշտ է ապահովվում դրա արդյունավետության բաղադրիչը, ինչի պատճառով լինում են դեպքեր, երբ երեխայի կրթության իրավունքի երաշխավորումը ձևական բնույթ է կրում: Օրինակ, Պաշտպանի աշխատակազմին ներկայացվել է, որ երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման արդյունքում սահմանված նպատակները, երբեմն, իրատեսական չեն, դրանց իրականացումը կրում է ձևական բնույթ և վերանայման անհրաժեշտություն է առաջանում:

Այցի ընթացքում ստացված տեղեկությունների համաձայն՝ հաճախ, տնային ուսուցման կազմակերպման ժամանակ մատուցվող նյութը չի համապատասխանում սանի իրական կրթական կարիքներին և զարգացման հնարավորություններին: Մեկ այլ դեպքում՝ նյութը մատուցելիս չի ապահովվում մատչելիության սկզբունքը, ինչի արդյունքում երեխան չի յուրացնում այն:

Այցի ընթացքում առանձնազրույցներ են իրականացվել Մանկատան աշխատակազմի հետ, քննարկվել՝ աշխատանքային մեթոդները, գործիքները, ինչպես նաև սաների լավագույն շահն ապահովելու նպատակով ներքին և արտաքին համագործակցությունը և աշխատանքի ծանրաբեռնվածության ծավալները:

Մանկատան աշխատակիցների համար պարբերաբար իրականացվում են վերապատրաստումներ, հիմնականում, «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի» ՊՈԱԿ-ի կողմից՝ նախապես հաստատված թեմաներով և բովանդակությամբ:

Մինչդեռ՝ աշխատակիցներից որոշները նշել են, որ բացի պետության կողմից տրամադրվող վերապատրաստումներից, իրենք կարիք ունեն նաև ոլորտային նեղ մասնագիտական վերապատրաստումների, սակայն դրանք, հիմնականում վճարովի են և, չնայած այդ վերապատրաստումների անհրաժեշտությանն ու կարևորության, իրենք հնարավորություն չեն ունենում մասնակցել դրանց:

Այցի ընթացքում արձանագրվել են մասնագիտական ռեսուրսի և աշխատանքային բաշխվածության առերևույթ խնդիրներ, ինչը կարող է էական ազդեցություն ունենալ աշխատակիցների որակյալ և արդյունավետ մասնագիտական գործունեության վրա: Այսպես, օրինակ՝ մանկատանը կա 7 խումբ, որից հինգ յուրաքանչյուր խմբում հերթապահում են ընդամենը 1 դաստիարակ և 1 դայակ, մյուս երկու «պալեատիվ» խմբերում հերթապահում են երկուական խնամողներ: Այդ պատճառով, ըստ աշխատակիցների հայտնած տեղեկատվության՝ Մանկատանը գտնվող սաներին սննդի տրամադրման գործընթացին, օրինակ, օգնության նպատակով, երբեմն, մասնակից են դառնում նաև հոգեբանը, լոգոպեդը և այլ մասնագետները:

Մինչդեռ՝ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով սահմանված է պետության պարտավորությունը՝ ապահովել երեխաների մասին հոգալու կամ նրանց պաշտպանության համար պատասխանատու հիմնարկների, ծառայությունների և մարմինների համապատասխանությունն իրավասու մարմինների կողմից սահմանված չափանիշներին, ինչը ներառում է նաև երեխաների հետ աշխատող մասնագետների որակավորմանն առնչվող հարցերը:

Երեխայի իրավունքների կոմիտեն բազմիցս անդրադարձել է երեխաների հետ անմիջականորեն աշխատող անձանց կրթության և վերապատրաստման կարևորությանը[665]:

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 3-րդ հոդված, 1-ին մաս.

Երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին:

Երեխայի լավագույն շահի գնահատումը ներառում է երեխայի տեսակետն ազատ արտահայտելու իրավունքի նկատմամբ հարգանքն ու իրեն վերաբերող հարցերում դրանք հաշվի առնելը[666]:

Խնամքի հաստատություններում երեխայի հանգստի և ժամանցի, իր տարիքին համապատասխան խաղերին ու զվարճալի միջոցառումներին և մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու և արվեստով զբաղվելու իրավունքի ապահովման նպատակով պետությունը պետք է քայլեր ձեռնարկի հաստատություններում համապատասխան հնարավորությունների և տարածքների ապահովման ուղղությամբ: Կարևոր է աղջիկների և տղաների տարիքին համապատասխան անվտանգ բացօթյա և փակ տարածքների հատկացումը, որոնք հնարավորություն կտան երեխային ազատորեն իրացնել իր հանգստի և խաղերին մասնակցելու իրավունքը[667]:

«Երեխայի իրավունքների մասին» և «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիաների համաձայն՝ պետությունը, ի թիվս այլնի ստանձնել է պարտավորություն ճանաչելու յուրաքանչյուր հաշմանդամություն ունեցող երեխայի կրթության իրավունքն առանց խտրականության և հավասար հնարավորության հիման վրա, որի համար անդամ պետությունները պետք է երաշխավորեն ներառական կրթության համակարգը բոլոր մակարդակներում:

Միավորված ազգերի կազմակերպության Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեի ներառական կրթության մասին 4-րդ ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ ուսումնական ծրագրերը պետք է մշակվեն և իրականացվեն այնպես, որպեսզի համապատասխանեն և հարմարեցվեն յուրաքանչյուր սովորողի պահանջներին և ապահովեն համապատասխան կրթական արձագանք:[668]

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***անհատական մոտեցման ցուցաբերմամբ ապահովել Հաստատություններում գտնվող յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի պատշաճ իրացումը:***

---

[665] Տե՛ս Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի «Երեխաների իրավունքների կոնվենցիայի կիրառման ձեռնարկ», հասանելի է https://www.unicef.org/lac/media/22071/file/Implementation%20Handbook%20for%20the%20CRC.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ, էջ 206:

[666] Տե՛ս Երեխայի իրավունքների կոմիտեի 14-րդ ընդհանուր մեկնաբանությունը հասանելի է https://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/gc/crc_c_gc_14_eng.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[667] Տե՛ս Երեխայի իրավունքների կոմիտեի 17-րդ ընդհանուր մեկնաբանությունը:

[668] ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց կոմիտեի թիվ 4-րդ ընդհանուր մեկնաբանությունը հասանելի է հետևյալ հղումով՝ https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD%2FC%2FGC%2F4&Lang=en, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

- ✓ ***աշխատակիցների համար ապահովել կարիքահեն վերապատրաստումների մասնակցության հնարավորություն, ավելացնել Հաստատությունների ռեսուրսները և կարգավորել աշխատանքային բաշխվածության խնդիրները:***
- ✓ ***ապահովել Հաստատություններում յուրաքանչյուր երեխայի դասապատրաստման և անձի զարգացման հատուկ ծրագրի ապահովման համար անհրաժեշտ պայմաններ և միջավայր՝ այդ նպատակով երեխաներին հատկացնելով ինչպես բացօթյա, այնպես էլ՝ Հաստատությունների ներսում առանձնացված տարածքներ:***

5.3 Երեխաների անձնական գործերի վարմանը ներկայացվող պահանջների խախտումներ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում երեխաներից մեկի անձնական գործի ուսումնասիրությամբ պարզվել է, որ երեխան կենտրոն է տեղափոխվել խնամատարության պայմանագրի լուծման արդյունքում: Նշված պարագայում, սակայն, երեխայի՝ Կենտրոն ընդունելության վերաբերյալ որևէ եզրակացություն, որոշում կամ հրաման անձնական գործում առկա չի եղել: Ուսումնասիրված գործերից որևէ մեկում առկա չի եղել երեխային բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն ընդունելու մասին հրամանը կամ դրա պատճենը: Ուսումնասիրված անձնական գործերի մեծ մասում առկա չեն եղել երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական ծրագրերը:

Կենտրոնում բժշկական քարտերի լրացման միասնական մոտեցում չկար: Բժշկական ոչ բոլոր քարտերն էին պարունակում տվյալներ իրականացված հետազոտությունների, դրանց արդյունքների, կանխարգելիչ պատվաստումների և այլնի վերաբերյալ: Բժշկական քարտերը չէին պարունակում լրիվ ախտորոշումները, ուղեկցող հիվանդությունները, տարեկան էպիկրիզները, դիետան, ռեժիմը, բուժվերականգնողական միջոցառումների տարեկան պլանը, արտացոլված չէր բազմամյա խնամքի ընթացքում առողջական վիճակի փոփոխությունների դինամիկան:

Ընդ որում, ըստ բուժաշխատողի՝ հաճախ Կենտրոնը երեխայի առողջական վիճակի և կատարված միջամտությունների վերաբերյալ բավարար տեղեկություններ չի ունենում: Երբեմն, դրանք հնարավոր չի լինում ստանալ, ինչի արդյունքում երեխային անհրաժեշտ ծավալով բժշկական օգնություն չի տրամադրվում:

Կենտրոնում երեխաների հանդեպ կամ երեխաների միջև բռնության դեպքերի գրանցման, ինքնավնասումների, փախուստի և վնասվածքների գրանցումները չէր իրականացվում հստակ տրամաբանությամբ ու մեթոդաբանությամբ:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Երևանի երաժշտական թիվ 13 հատուկ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում իրականացված այցի ընթացքում պարզ է դարձել, որ Դպրոցի երեխաների առողջական վիճակի վերաբերյալ վարվում են արձանագրման տարբեր ձևաչափի բժշկական քարտեր և մատյաններ: Որոշ մատյաններ չէին համապատասխանում օրենսդրությամբ սահմանված ձևին: Օրինակ՝ պեդիկուլոզի պարբերական զննումների վարման մատյանը չէր համապատասխանում ՀՀ առողջապահության նախարարի հաստատված ձևին: Բժշկական քարտերի վարման համար միասնական մեթոդաբանություն մշակված չէր:

Դպրոցում երեխաների հանդեպ և նրանց միջև բռնության կասկածելի կամ հաստատված դեպքերի գրանցման և իրավասու մարմիններին նման դեպքերի մասին հաղորդումների որևէ գրանցամատյան չէր վարվում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցներ կամ հանդարտեցման մեթոդներ կիրառելու վերաբերյալ հաշվառման մատյան չէր վարվում:

Հաստատությունում սաների առողջական վիճակի վերաբերյալ բժշկի կողմից վարվում են արձանագրման տարբեր ձևաչափի բժշկական քարտեր և մատյաններ, սակայն դրանց վարման համար միասնական մեթոդաբանություն մշակված չէր:

Մինչդեռ՝ Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 2009թ. նոյեմբերի 20-ին ընդունած՝ «Երեխաների այլընտրանքային խնամքի ուղեցույցի» համաձայն՝ խնամակալության տակ գտնվող երեխաների վերաբերյալ տվյալները պետք է լինեն ամբողջական, թարմացված, գաղտնի և ապահով: Դրանք պետք է ներառեն տեղեկություններ նրանց ընդունելության և դուրսգրման վերաբերյալ, ինչպես նաև յուրաքանչյուր երեխայի խնամքի ձևի և բովանդակության մանրամասները, անձը հաստատող բոլոր փաստաթղթերը և այլ անձնական տվյալներ: Երեխայի ընտանիքի մասին տեղեկությունները պետք է ներառվեն երեխայի անձնական գործում, ինչպես նաև շարունակական գնահատումների հիման վրա կազմված հաշվետվություններում: Այս տվյալները պետք է մշակվեն երեխայի այլընտրանքային խնամքի ողջ ժամանակահատվածում և պետք է ապահովեն բոլոր մասնագետների ներգրավվածությունը, ովքեր պատասխանատու են նրա ընթացիկ խնամքի համար[669]*:*

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է Հաստատություններում ապահովել միջազգային և ներպետական օրենսդրությամբ սահմանված չափանիշներին համապատասխան անհրաժեշտ մատյանների և հաշվետվությունների վարումը:

5.4 Վատ վերաբերմունքից զերծ մնալու և կարծիք արտահայտելու իրավունքի ապահովման հետ կապված խնդիրներ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում երեխաների և աշխատակիցների հետ առանձնազրույցների ընթացքում վերջիններս հայտնել են աշխատակիցների կողմից երեխաների նկատմամբ, երեխաների կողմից աշխատակիցների նկատմամբ և երեխաների միջև ֆիզիկական ու հոգեբանական բռնության դրսևորումների մասին: Կենտրոնում ներդրված չէ երեխաներին վերաբերելի հարցերում վերջիններիս մասնակցության, լսված լինելու իրավունքի ապահովման, ինչպես նաև բողոքարկելու իրավունքի իրացման իրական հնարավորություն, մասնավորապես՝ բողոքների և առաջարկությունների համար նախատեսված արկղը դրված էր Կենտրոնի վարչական աշխատանքների համար նախատեսված հատվածում, որի մասին երեխաները տեղյակ չէին:

Կենտրոնում կոնֆլիկտային իրավիճակների ժամանակ արձագանքումը իրականացվում է Կենտրոնի մասնագետների կողմից, իսկ կոնֆլիկտային իրավիճակները

[669] Տե՛ս Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 2009թ. նոյեմբերի 20-ին ընդունած՝ «Երեխաների այլընտրանքային խնամքի ուղեցույց»-ը, հասանելի է https://digitallibrary.un.org/record/673583?ln=en հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

կամ բռնության դեպքերը հիմնականում լինում են երեկոյան ժամերին՝ մասնագիտական թիմի աշխատանքային ժամի ավարտից հետո: Ըստ ներկայացված տեղեկատվության՝ այդպիսի դեպքերում աջակցություն ցուցաբերում էին հիմնականում դայակները, երբեմն էլ անվտանգության աշխատակիցը՝ կախված իրավիճակից: Կենտրոնում ներդրված չէր աշխատակիցների կողմից երեխաների նկատմամբ բռնության դեպքերի ահազանգման մեխանիզմ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում թեև առկա էր բողոքների և առաջարկությունների համար հատուկ արկղ, սակայն, այն տեղադրված էր բավականին բարձր և առերևույթ ոչ մատչելի էր Հաստատությունում գտնվող որոշ սաների համար:

Երեխաների և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող իրավասու մարմինների, այդ թվում՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի թեժ գծերի հեռախոսահամարները փակցված էին բավականին բարձր, ինչը նույնպես առերևույթ մատչելի չէր Հաստատությունում գտնվող որոշ սաների համար:

Մինչդեռ՝ *«Երեխաների իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 19-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր օրենսդրական, վարչական, սոցիալական և կրթական միջոցները պաշտպանելու երեխային ծնողների, օրինական խնամակալների կամ երեխայի մասին հոգ տանող ցանկացած այլ անձի կողմից ֆիզիկական կամ հոգեբանական բռնության բոլոր ձևերից, վիրավորանքից կամ չարաշահումից, հոգատարության բացակայությունից կամ անուշադրությունից, կոպիտ վերաբերմունքից կամ շահագործումից, ներառյալ՝ սեռական չարաշահումը:*

Միավորված ազգերի կազմակերպության Երեխաների իրավունքների կոմիտեի 4-րդ ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ դեռահասները, ովքեր խտրականության սուբյեկտ են, ավելի խոցելի են բռնության, շահագործման այլ տեսակների նկատմամբ և նրանց առողջությունն ու զարգացումն ավելի մեծ ռիսկի տակ է: Ուստի, նրանք հասարակության բոլոր շերտերից ավելի հատուկ ուշադրության և պաշտպանվածության իրավունք ունեն:[670]

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***հաստատություններում ապահովել բռնությունից պաշտպանության ոչ միայն իրավիճակային միջամտություններ, այլև ձևավորել երեխայի համար անվտանգ միջավայր ապահովող իրավասու մարմինների և կառույցների լայն շրջանակ՝ մատչելի մեխանիզմներով և շուրջօրյա հասանելիությամբ:***
- ✓ ***կազմակերպել երեխայի իրավունքներն ու շահերը պաշտպանող տարբեր կառույցների հասանելիության և գործունեության մասին մատչելի դասընթացներ՝ ըստ տարիքային խմբերի, ինչպես նաև ապահովել երեխաների տեխնիկական հասանելիությունն այդ կառույցներին ցանկացած ժամանակ:***

[670] Տե՛ս ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոմիտեի թիվ 4-րդ մեկնաբանությունը հասանելի է https://www.refworld.org/docid/4538834f0.html հղումով՝ , էջ 8, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

5.5 Երեխաների և ծնողների տեսակցությունների կազմակերպման հետ կապված խնդիրներ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում մշտադիտարկման այցի ընթացքում պարզ է դարձել, որ Կենտրոնում տեսակցության բովանդակային մասը իրավասու մասնագետների կողմից չեն վերլուծվում, չեն դիտարկվում հանդիպման ազդեցությունը երեխայի տրամադրության, հոգեվիճակի վրա, հուզական կապի զարգացումը, ընտանիքի հետ վերամիավորվելու հետ կապված խոչընդոտները:

Ըստ երեխաների, ինչը հաստատվել է նաև աշխատակիցների կողմից, ծնողների հետ հեռախոսազանգի համար նախատեսված հեռախոսը գտնվում է սոցիալական աշխատողների սենյակում, որտեղ մի քանի աշխատակից միաժամանակ աշխատում են, և հաճախ երեխաները հնարավորություն չեն ունենում առանձին զրուցելու իրենց ընտանիքի անդամների հետ:

Զրույցների ընթացքում երեխաները հայտնեցին, որ հեռախոսով խոսում են հիմնականում աշխատակցի ներկայությամբ, իսկ երեկոյան ժամերին (ժամը 18:00-ից հետո) հեռախոսազանգի հնարավորություն չեն ունենում, քանի որ հեռախոսազանգեր ապահովող աշխատակցի աշխատանքային ժամը ավարտված է լինում:

Երեխաների անձնական գործերի ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ հիմնականում անհատական ծրագրերը բացակայում են, իսկ առկայություն դեպքում՝ անհատական ծրագրերում բացակայում է երեխաների հետ աշխատանքի և տեսակցությունների կազմակերպման բաղադրիչը: Ավելին, ծնողների, այդ թվում՝ նրանց հետ շփումների վերաբերյալ տեղեկատվությունը հիմնականում ներառված չէ երեխաների անձնական գործերում:

Կենտրոնում երեխաների և համապատասխան մասնագետների թվի համեմատական վերլուծության արդյունքում արձանագրվել է, որ առկա է աշխատակիցների գործառույթների գնահատման, վերանայման, աշխատանքի արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև վերահսկման մեխանիզմների ներդրման անհրաժեշտություն:

Մինչդեռ՝ *Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 2009թ. նոյեմբերի 20-ին ընդունած՝ «Երեխաների այլընտրանքային խնամքի ուղեցույցի» համաձայն՝ երեխայի՝ ընտանիք վերադառնալուն նախապատրաստելու և աջակցելու համար պետք է իրականացվի նրա վիճակի պատշաճ գնահատում պատասխանատու մասնագետի կամ թիմի կողմից, որին հասանելի է բազմամասնագիտական խորհրդատվության հնարավորությունը: Այդ գործընթացում պետք է ներգրավվեն բոլոր դերակատարները (երեխան, ընտանիքը, այլընտրանքային խնամակալը)՝ որոշելու համար, թե արդյոք երեխայի վերաինտեգրումն ընտանիքում հնարավոր է, թե ոչ և բխում է արդյոք երեխայի լավագույն շահերից, թե ոչ, ինչ քայլեր է անհրաժեշտ իրականացնել և ում հսկողության ներքո:*

Վերաինտեգրման նպատակներն ու ընտանիքի և այլընտրանքային խնամք իրականացնողի հիմնական խնդիրները այս առումով պետք է գրավոր ձևակերպվեն և համաձայնեցվեն բոլոր շահագրգիռ կողմերի հետ: Երեխայի և նրա ընտանիքի միջև կանոնավոր և պատշաճ շփման կազմակերպման գործընթացը պետք է մշակվի, աջակցվի և վերահսկվի իրավասու մարմնի կողմից: Երեխայի վերաինտեգրումն իր ընտանիքում

պետք է նախագծվի որպես աստիճանական և վերահսկվող գործընթաց, որն ուղեկցվում է հետևողական և օժանդակ միջոցառումներով, որոնք հաշվի են առնում երեխայի տարիքը, կարիքները և զարգացող կարողությունները, բաժանման պատճառները[671]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***երեխայի՝ ընտանիք վերադառնալուն նախապատրաստելու և աջակցելու համար իրականացնել նրա վիճակի պատշաճ գնահատում պատասխանատու մասնագետի կամ թիմի կողմից, որին հասանելի է բազմամասնագիտական խորհրդատվության հնարավորությունը: Գործընթացում պետք է ներգրավվեն բոլոր դերակատարները,***
- ✓ ***մշակել և ներդնել երեխայի և նրա ընտանիքի միջև կանոնավոր և պատշաճ շփման կազմակերպման գործընթացը, որը պետք է վերահսկվի Հաստատության կողմից: Երեխայի վերաինտեգրումն իր ընտանիքում պետք է նախագծվի որպես աստիճանական և վերահսկվող գործընթաց, որն ուղեկցվում է հետևողական և օժանդակ միջոցառումներով, որոնք հաշվի են առնում երեխայի տարիքը, կարիքները և զարգացող կարողությունները, բաժանման պատճառները:***

5.6 Հաստատություններում երեխայի խնամքի և պաշտպանության կազմակերպման գործընթացին առնչվող թերի օրենսդրական կարգավորումներ

Ներպետական օրենսդրությամբ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների խնամքի և պաշտպանության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները, հաստիքային միավորների չափորոշիչները, երեխայի խնամքի տրամադրման կարգն ու պայմանները, սննդի կազմակերպմանը ներկայացվող պահանջները, հիմնականում, սահմանված են ՀՀ կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի թիվ 1324-Ն, ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 1292-Ն, ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1112-Ն, ՀՀ կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 1490-Ն, ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի թիվ 815-Ն որոշումներով:

Որոշումներով նախատեսված պայմաններն ու չափորոշիչները, սակայն չեն բովանդակում համապարփակ և միջազգային փաստաթղթերի տրամաբանության վրա հիմնված կարգավորումներ, որոնք կերաշխավորեն երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխայի կյանքի, զարգացման, առողջության պահպանման, բռնությունից պաշտպանության, ֆիզիկական, մտավոր և հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու իրավունքները: Օրինակ՝ մի դեպքում օրենսդրությամբ սննդային գործոնով պայմանավորված զանգվածային վարակիչ հիվանդությունների և սննդային թունավորումների առաջացման ու տարածման, ինչպես նաև զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման նպատակով արգելված է երեխաներին տրամադրվող սննդի տեսականում ներառել երշիկ և սուրճ, իսկ մյուս դեպքում՝ երեխաներին տրամադրվող սննդի տեսականու մեջ նախատեսում են դրանք: Մեկ այլ դեպքում, օրինակ, հատուկ մասնագիտացված տիպի մանկատանը շուրջօրյա հերթափոխի համար յուրաքանչյուր 14 խնամվողի հաշվարկով նախատեսված է ընդամենը մեկ դայակի հաստիք, յուրաքանչյուր 50 խնամվողի հաշվարկով ընդամենը մեկ

[671] Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 2009թ. նոյեմբերի 20-ին ընդունած՝ «Երեխաների այլընտրանքային խնամքի ուղեցույցն» հասանելի է https://digitallibrary.un.org/record/673583?ln=en հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

հոգեբանի հաստիք և այլն, որպիսի կարգավորումները գործնականում առաջացնում են աշխատողների պարտականությունների ոչ ճիշտ բաշխման և չեն բխում խնամք ստացող երեխաների լավագույն շահից: Օրենսդրությամբ նախատեսված չեն երեխայի ֆիզիկական կամ հոգեկան բռնության բոլոր ձևերից, վիրավորանքից կամ չարաշահումից պաշտպանված լինելն ապահովելու նպատակով հաստատություններում կիրառելի գործուն և երեխայակենտրոն չափորոշիչներ:

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 3-րդ հոդված.
Մասնակից պետություններն ապահովում են երեխաների մասին հոգալու կամ նրանց պաշտպանության համար պատասխանատու հիմնարկների, ծառայությունների և մարմինների համապատասխանությունն իրավասու մարմինների կողմից սահմանված չափանիշներին, մասնավորապես, անվտանգության և առողջապահության բնագավառներում դրանց թվաքանակի և անձնակազմի պիտանիության, ինչպես նաև իրավասու հսկողություն սահմանելու իմաստով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է մշակել և ընդունել համապարփակ և միջազգային փաստաթղթերի տրամաբանության վրա հիմնված կարգավորումներ, որոնք կերաշխավորեն երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխայի կյանքի, զարգացման, առողջության պահպանման, բռնությունից պաշտպանության, ֆիզիկական, մտավոր և հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու իրավունքները:

Մշտադիտարկման չհայտարարված այցերի արդյունքները ամփոփվել և դրանք արտացոլող փաստաթուղթն ու առաջարկությունները ներկայացվել են ոլորտի իրավասու մարմիններին:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն իրականացրած մշտադիտարկման այցի արդյունքում արձանագրված անհետաձգելի լուծումներ պահանջող խնդիրների առնչությամբ ստեղծվել է աշխատանքային խումբ:

Աշխատանքային խմբի քննարկումներին մասնակցել են նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները: Մշտադիտարկման այցի ընթացքում արձանագրված որոշ հարցերի լուծման ուղղությամբ իրավասու գերատեսչությունների կողմից իրականացվել են աշխատանքներ: Արձանագրված խնդիրների մեծ մասը շարունակում է մնալ արդիական:

6. Հետխնամքի ապահովման հետ կապված խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները վկայում են, որ երեխաների հետխնամքի ապահովման գործուն մեխանիզմների ներդրման և կիրառման հարցում առկա են խնդիրներ:

Մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում ապրող երեխաների համար չկան մշակված հստակ ռազմավարություններ և դրանցից բխող միջոցառումներ, որոնք նպատակաուղղված կլինեն անհատական մոտեցման ցուցաբերմամբ երեխաներին մասնագիտական և ինքնուրույն կյանք վարելուն ուղղված հմտությունների ձեռքբերմանն աջակցելուն, այդ թվում՝ մասնագիտության, գործունեության բնագավառի ընտրություն

կատարելուն, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի տեղավորելուն աջակցելուն:

Այս նպատակով իրականացվող աշխատանքը, հիմնականում, դասընթացների և խմբային պարապմունքների կազմակերպումն է, որը սակայն, երբեմն չի ընդգրկում հաստատությունում գտնվող բոլոր անձանց: Օրինակ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում 2023թ. ընթացքում մանկավարժահոգեբանական աջակցության թիմը երեխաների առնվազն 50% հետ է իրականացրել երեխաների ինքնուրույն կյանք վարելու վերաբերյալ դասընթաց-պարապմունքներ:

Խնամք ստացող երեխաներին մասնագիտական և ինքնուրույն կյանք վարելու հմտությունների ձեռքբերմանն աջակցելուն ուղղված պետության կողմից ձեռնարկվող միջոցների կատարելագործման անհրաժեշտության մասին է վկայում նաև այն, որ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում շարունակում են դեռ շուրջօրյա խնամք ստանալ 18 տարին լրացած անձինք, ինչպես նաև այն, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ում, օրինակ, 2023 ընթացքում ընդամենը երեք շահառու է եղել ապահովված աշխատանքով: «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ում 2023 թվականի ընթացքում 18 տարին լրացած 10 շրջանավարտներից 5-ն են ապահովված աշխատանքով, իսկ «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ում 2023թ. ընթացքում աշխատանքով ապահովված շրջանավարտ առկա չէ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացված մշտադիտարկումները, ինչպես նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկությունները վկայում են, որ հետխնամքի ժամանակահատվածում անկախ կյանքի ապահովման նպատակով պետության տրամադրած սոցիալական աջակցության միջոցները նույնպես ունեն կատարելագործման անհրաժեշտություն:

ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 22-ի որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում գործող՝ երեխաներին շուրջօրյա խնամք տրամադրող բնակչության սոցիալական պաշտպանության պետական հաստատությունների (մանկատների) 18 տարին լրացած և հաստատությունից դուրս գրված շրջանավարտների դրամական աջակցության տրամադրման և բնակելի տարածության վարձավճարի հատուցման տրամադրման կարգը:

Նշված ակտի վերլուծությունից հետևում է, որ հետխնաքմի ժամանակահատվածում դրամական աջակցություն տրամադրվելու է միայն այն անձանց, ովքեր մինչև 18 տարին լրանալը, իսկ 18 տարին լրանալու օրվա դրությամբ պարտադիր կրթությունն ավարտած չլինելու պարագայում՝ պարտադիր կրթությունն ավարտելուց հետո դուրս գրվելու օրը նախորդող վերջին 24 ամիսների ընթացքում անընդմեջ խնամվել են Հայաստանի Հանրապետությունում գործող՝ երեխաներին շուրջօրյա խնամք տրամադրող բնակչության սոցիալական պաշտպանության պետական հաստատությունում:

Այսպիսի պայմաններում խնդրահարույց է միայն տարիքը լրանալու հիմքով և 24 ամիսների ընթացքում հաստատությունում անընդմեջ խնամք ստացած լինելու պայմանով բնակելի տարածություն և անհրաժեշտ սոցիալական աջակցություն տրամադրելը, ինչպես

նաև այլ տեսակի այլընտրանքային խնամք կամ ոչ պետական հաստատություններում խնամք ստացող երեխաներին բնակելի տարածություն և անհրաժեշտ սոցիալական աջակցություն չտրամադրելը, որպիսի մոտեցումը հակասում է ոչ միայն միջազգային փաստաթղթերով ստանձնած պարտավորություններին, այլև ներպետական օրենսդրությանը, այնպիսի պայմաններում, երբ «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ « (…) 18 տարին լրացած՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները, որոնք չունեն սեփականության կամ օգտագործման իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածություն և վերջին 5 տարիների ընթացքում չեն օտարել սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածությունը, իրավունք ունեն ստանալու նվազագույն սոցիալական չափորոշիչներին համապատասխան բնակելի տարածություն»:

ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 7-ի N 1555-Ն որոշմամբ տրամադրվող սոցիալական աջակցության խնդիրներին Մարդու իրավունքների պաշտպանը բազմիցս անդրադարձել է իր տարեկան հաղորդումներում[672]:

Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 2009թ. նոյեմբերի 20-ին ընդունած՝ «Երեխաների այլընտրանքային խնամքի ուղեցույցի» համաձայն՝ գործակալությունները և հաստատությունները պետք է ունենան հստակ քաղաքականություն և համաձայնեցված ընթացակարգեր՝ կապված՝ երեխաների խնամքի պլանավորված և չպլանավորված ավարտի հետ՝ ապահովելու երեխայի հետխնամքը և/կամ դրա մշտադիտարկումը: Խնամքի ողջ ժամանակահատվածում նրանք պետք է նպատակ ունենան երեխաներին նախապատրաստելու անկախ կյանքին և համայնքում ներառվելուն սոցիալական և կյանքի հմտությունների ձեռքբերման միջոցով, որոնք խթանվում են համայնքի կյանքին մասնակցությամբ:

Խնամքից հետխնամք անցնելու գործընթացը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով երեխաների սեռը, տարիքը, հասունությունը և առանձնահատուկ հանգամանքները և ներառի խորհրդատվություն և աջակցություն՝ հատկապես շահագործումից խուսափելու համար: Խնամք ստացող երեխաները պետք է խրախուսվեն մասնակցել հետխնամքի պլանավորմանը: Հատուկ կարիքներ ունեցող երեխաները, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաները, պետք է օգտվեն համապատասխան աջակցության համակարգից, որը ի թիվս այլնի՝ կբացառի անհարկի ինստիտուցիոնալացումը: Պետք է խրախուսել և՛ պետական, և՛ մասնավոր հատվածներին աշխատանքի տեղավորել խնամք ստացող երեխաներին, հատկապես խնամքի հատուկ կարիք ունեցող երեխաներին:

Հատուկ ջանքեր պետք է գործադրվեն՝ ապահովելու, հնարավորության դեպքում, յուրաքանչյուր երեխայի մասնագիտական հմտությունների ձեռքբերումը, որը կարող է նպաստել նրա անկախ կյանքի ապահովմանը խնամքից հետո:

Հետխնամքին պետք է նախապատրաստվել հնարավորինս շուտ, մինչև երեխայի խնամքի տրամադրման ավարտը:

Ընթացիկ կրթական և մասնագիտական վերապատրաստումները խնամք ստացող երիտասարդներին պետք է տրամադրվեն որպես անկախ կյանքի հմտությունների ձեռքբերմանն ուղղված կրթական ծրագրերի մաս, օգնելու նրանց դառնալ ֆինանսապես անկախ և ստեղծել սեփական եկամուտը:

---

[672] Տե՛ս նաև 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 1267-1280, հասանելի է https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Սոցիալական, իրավական և առողջապահական ծառայությունների հասանելիությունը, համապատասխան ֆինանսական աջակցության հետ մեկտեղ, պետք է տրամադրվի երիտասարդներին, ովքեր թողել են խնամքը և հետխնամքի ընթացքում[673]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում ապրող երեխաների համար մշակել և ներդնել հստակ ռազմավարություններ և դրանցից բխող միջոցառումներ, որոնք նպատակաուղղված կլինեն անհատական մոտեցման ցուցաբերմամբ երեխաներին մասնագիտական և ինքնուրույն կյանք վարելուն ուղղված հմտությունների ձեռքբերմանն աջակցելուն, այդ թվում՝ մասնագիտության, գործունեության բնագավառի ընտրություն կատարելուն, աշխատանքի տեղավորելուն աջակցելուն,

✓ բնակելի տարածություն և սոցիալական աջակցություն տրամադրել նաև այլ տեսակի այլընտրանքային, այդ թվում՝ ոչ պետական հաստատություններում խնամք ստացած անձանց համար՝ անկախ վերջիններիս խնամք ստանալու ժամանակահատվածից: Բնակելի տարածության և սոցիալական աջակցության տրամադրման հիմքում անհրաժեշտ է դնել ոչ թե ֆորմալ հիմքեր, օրինակ՝ 18 տարեկանը լրանալու հիմքով հաստատությունից դուրս գրվելը, այլ նշված անձանց իրական կարիքները:

7. Մանկալքության կանխարգելման հետ կապված խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները, գրավոր և բանավոր դիմում-բողոքները, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ստացված զանգերը վկայում են, որ 2023 թվականի ընթացքում շարունակում են արդիական մնալ մանկալքության կանխարգելման հետ կապված խնդիրները:

ՀՀ առողջապահության նախարարության տրամադրած տվյալների համաձայն՝ 2023 թվականի ընթացքում արձանագրվել է 15 մանկալքության դեպք, որից 10-ը՝ առողջական խնդիրներով պայմանավորված նորածինների մանկալքության դեպք, 2-ը՝ առողջական խնդիրներով պայմանավորված ոչ նորածնային տարիքի երեխայի մանկալքության դեպք: *2022 թվականին* գրանցվել է մանկալքության ընդհանուր 18 դեպք, որից 11-ը՝ պայմանավորված առողջական խնդիրներով: *Նշված ցուցանիշները ցույց են տալիս, որ վերջին 2 տարվա ընթացքում ՀՀ-ում արձանագրվել է 33 մանկալքության դեպք, որից 24-ը, այսինքն՝ դեպքերի մեծամասնությունը, պայմանավորված է երեխաների առողջական խնդիրներով:*

Հարցի առնչությամբ հատկանշական է, որ ՀՀ առողջապահության նախարարի 21.04.2020թ. N13-Ն հրամանի 3-րդ հավելվածով հաստատվել է երեխայի հիվանդությամբ պայմանավորված մանկալքության դեպքում բժշկական կազմակերպության կողմից մասնագիտական երկրորդ կարծիքի ստացման գործելակարգը: Բացի այդ, ՀՀ առողջապահության նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ նախարարության տարածքում փակցված են պաստառներ, որոնք իրազեկում են երեխայի առողջական խնդիրների հետ կապված մանկալքության խնդրի կանխարգելման

[673] Տես՝ Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 2009թ. նոյեմբերի 20-ին ընդունած՝ «Երեխաների այլընտրանքային խնամքի ուղեցույց»,հասանելի է https://digitallibrary.un.org/record/673583?ln=en հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

վերաբերյալ և աջակցության թեժ գծի հեռախոսահամարները: Ըստ տրամադրած տեղեկատվության՝ ՀՀ առողջապահության նախարարությունը օպերատիվ կարգով համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ, որի արդյունքում հնարավորության սահմաններում լուծում են ստանում մի շարք բարձրացված հարցեր: Շարունակում է գործել 2019թ. նոյեմբերի 6-ի թիվ 3257-Լ հրամանով ստեղծված պրենատալ կոնսիլիումը՝ երեխայի հիվանդության բնույթին համապատասխան նեղ մասնագիտական խմբերով, որը մինչև երեխայի ծնունդը տալիս է եզրակացություն, նշելով ապագա երեխայի ախտորոշումը, երեխային սպասվող բժշկական միջամտությունները և կիրառվելիք բուժման արդյունքում ակնկալվող ելքերի հավանականությունը:

Կարևորելով պետության կողմից ձեռնարկված միջոցները՝ Մարդու իրավունքների պաշտպանը արձանագրում է, որ մանկալքության դեպքերի վերաբերյալ տվյալները վկայում են նշված կառուցակարգերի կատարելագործման անհրաժեշտության մասին: Այսպես, օրինակ, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ մուտքագրված բողոքներից մեկով տեղեկատվություն է ստացվել դեռահասության տարիքի աղջիկների նկատմամբ հասարակության, այդ թվում՝ բժշկական հաստատությունների աշխատակիցների կողմից հղիության պատճառով վատ վերաբերմունք ցուցաբերելու վերաբերյալ: Տեղեկություններ են նաև ստացվել այն մասին, որ դեռահասն իրականացրել է հղիության արհեստական ընդհատում՝ առանց բժշկի վերահսկողության՝ վախենալով երեխայի ծննդով պայմանավորված դժվարություններից և հասարակության վերաբերմունքից:

Ուստի, մանկալքության կանխարգելման հարցում Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է մանկալքության իրական պատճառների բացահայտմանը, առկա կարծրատիպերի վերացմանը, անկախ երեխայի առողջական վիճակից՝ սոցիալական և հոգեբանական երաշխիքներով ապահովված լինելուն, դեռահասների շրջանում իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցների ձեռնարկումը:

Նշվածի առնչությամբ հարկ է փաստել, որ թեև դպրոցի դասընթացներում ներառված են դեռահասների սեռական դաստիարակության վերաբերյալ որոշ թեմաներ, սակայն Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի զրույցները երեխաների հետ վկայում են, որ հիմնականում դպրոցում դրանք կրում են ֆորմալ բնույթ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ ***իրականացնել մանկալքության դեպքերի համապարփակ ուսումնասիրություն՝ վեր հանելով իրական պատճառները:***

✓ ***ուսումնասիրության արդյունքների հիման վրա ներդնել մանկալքության դեմ պայքարի ծրագիր, որը կներառի կարծրատիպերի վերացմանը, սոցիալական և հոգեբանական երաշխիքներով ապահովելուն, իրազեկվածության բարձրացմանը:***

ԳԼՈՒԽ 3. ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՇՓՎԵԼՈՒ ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

1. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործողությունների իրավաչափությունը երեխայի իրավունքների ապահովման տեսանկյունից

Հարկադիր կատարողի կողմից իրականացվող՝ երեխայի տեսակցության հետ առնչվող, երեխային կողմերից մեկին հանձնելու հետ կապված կատարողական գործողությունների պատշաճ իրականացումը առանձնահատուկ կարևորություն ունի երեխայի իրավունքների ապահովման տեսանկյունից: Այս կատարողական վարույթների շրջանակներում երեխայի լավագույն շահի ապահովումը առաջնահերթություն է:

Մինչդեռ՝ 2023 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից նշված ոլորտում արձանագրվել են մի շարք խնդիրներ: Մասնավորապես արձանագրվել են.

1. երեխային կողմերից մեկին հանձնելու հետ կապված կատարողական գործողությունների իրականացման և հարկադիր կատարողների երեխայակենտրոն մոտեցումների և հմտությունների հետ կապված խնդիրներ,
2. կատարողական գործողությունների ընթացքում փորձագետների ներգրավման հետ կապված խնդիրներ,
3. կատարողական վարույթի ընթացքում պարտապանի թույլ տված խախտումների առնչությամբ հարկադիր կատարողի գործողությունների հետ կապված խնդիրներ,
4. օրենսդրական կարգավորումների հետ կապված խնդիրներ:

1.1 Երեխային կողմերից մեկին հանձնելու հետ կապված կատարողական գործողությունների իրականացման և հարկադիր կատարողների երեխայակենտրոն մոտեցումների և հմտությունների հետ կապված խնդիրներ

Դատարանի կողմից՝ որպես հայցի ապահովման միջոց կամ որպես եզրափակիչ դատական ակտ երեխայի բնակության վայրի սահմանման պարագայում Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը ապահովում է երեխայի հանձնումը կողմերից մեկին: Այս առումով հիմնարար նշանակություն ունի կատարողական գործողությունների իրականացման ընթացքում երեխայի լավագույն շահի հաշվառումը և դրանով առաջնորդվելը, հատկապես, երեխայի ցանկության բացակայության պայմաններում:

2023 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը ստացել է բողոքներ հարկադիր կատարողների գործողությունների վերաբերյալ՝ նրանց կողմից երեխայի բնակության վայրի փոփոխությունն ապահովելիս: Դրանք, հիմնականում վերաբերել են վարույթների ընթացքում երեխայի նկատմամբ ոչ իրավաչափ եղանակով ուժ կիրառելուն: Օրինակ՝ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով քաղաքացին բարձրացրել է իր երեխաների իրավունքների պաշտպանության հարցը այն պարագայում, երբ երեխաների բնակության վայրի փոփոխությունն ապահովելիս՝ հարկադիր կատարողները ակնհայտ ոչ իրավաչափ ուժ են կիրառել երեխաների նկատմամբ՝ վերջիններիս հոգեբանական և ֆիզիկական ճնշման ենթարկելով: Նշված դեպքով տրամադրվել է նաև տեսագրություն, ինչը վկայում է հարկադիր կատարողների կողմից ոչ երեխայակենտրոն մոտեցումների և երեխաների հետ աշխատելու հմտությունների բացակայության մասին, ինչը պարտադիր է երեխայի հետ առնչվող յուրաքանչյուր մասնագետի համար: Միաժամանակ, բողոքներ են ստացվել առ այն, որ

հարկադիր կատարողները չեն առաջնորդվում երեխայի լավագույն շահով և ոչ զգայուն մոտեցում են ցուցաբերում երեխաների նկատմամբ կամ վերջիններիս ներկայությամբ:

Նշվածը և Պաշտպանի աշխատակազմում խնդրի առնչությամբ կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հարկադիր կատարողները, հատկապես, երեխային մեկ ծնողից մյուսին հանձնելու կատարողական վարույթի շրջանակներում դրսևորում են ոչ երեխայակենտրոն մոտեցումներ՝ հաճախ իրականացնելով նաև գործողություններ, որոնք կարող են երեխային վնասել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ երեխաների հետ առնչվող հարկադիր կատարողների կողմից երեխայակենտրոն մոտեցումներով առաջնորդվելու ուղղությամբ անհրաժեշտ է իրականացնել պարտադիր և շարունակական վերապատրաստումներ, գործելաոճի և մոտեցումների համակարգային փոփոխություններ:

ՀՀ արդարադատության նախարարությունը հայտնել է, որ 2023 թվականի ընթացքում ընտանեկան բռնության և երեխայի տեսակցության թեմաներով հարկադիր կատարողների համար կազմակերպվել է մեկ վերապատրաստման դասընթաց, որին մասնակցել է ծառայության Երևան քաղաքի ոչ գույքային բնույթի կատարողական վարույթների և հատուկ բաժնի թվով 20 հարկադիր կատարող: Վերապատրաստման դասընթացն ուղղված է եղել երեխայի մասնակցությամբ կատարողական վարույթներով հաճախ հանդիպող խնդիրների լուծման առնչությամբ հարկադիր կատարողների կարողությունների զարգացմանը: Ըստ նախարարության՝ վերապատրաստման դասընթացը նպաստել է երեխայի լավագույն շահի հաշվառմամբ նման կատարողական գործողությունների կատարման արդյունավետության բարձրացմանը և երեխայի տեսակցության վարույթով միատեսակ պրակտիկայի ձևավորմանը:

Պաշտպանը ողջունում է վերապատրաստման դասընթացի կազմակերպումը: Միևնույն ժամանակ հարկ է արձանագրել, որ ողջ տարվա ընթացքում ընտանեկան բռնության և երեխայի տեսակցության վերաբերյալ 20 հարկադիր կատարողի մասնակցությամբ ընդամենը մեկ վերապատրաստման դասընթացի իրականացումը ակնհայտորեն բավարար չէ երեխաների մասնակցությամբ կատարողական գործողությունների իրականացման համար հարկադիր կատարողների հմտությունների լավարկման համար, հատկապես այն պարագայում, երբ դասընթացն ամբողջապես վերաբերելի չի եղել երեխային մեկ ծնողից մյուսին հանձնմանը, ինչը երեխայի համար հոգեբանորեն առավել բարդ է:

Այս առումով հարկ է անդրադառնալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշմանը: Մասնավորապես՝ ՄԻԵԴ-ը թիվ 43229/18 գործի շրջանակներում[674] մատնանշել է, որ իշխանությունները ակնհայտորեն աստիճանական և ճկուն մոտեցում չեն ցուցաբերել դատարանի որոշումը կատարելիս (երկարատև ժամանակահատվածում մոր հետ կապ չունեցած երեխային մորը հանձնելու ընթացքում հարկադիր կատարողները չեն ցուցաբերել պատշաճ ճկունություն՝ երեխային փորձելով հանձնել մորն առանց վերջինիս հետ կապը վերականգնելու փորձերի՝ հաշվի չառնելով այն հանգամանքը, որ ժամանակը ազդեցություն է ունեցել մոր և երեխայի հարաբերությունների վրա):

Հաշվի առնելով վերը նշվածը՝ ՄԻԵԴ-ը եզրակացրել է, որ իշխանությունները անհապաղ չեն ձեռնարկել այն բոլոր գործողությունները, որոնք ողջամիտ կլիներ նրանցից

[674] Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումը հասանելի է http://surl.li/ryqck հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

ակնկալել դատական ակտի պահանջների կատարումն ապահովելու նպատակով: Դրանով նրանք խախտել են դիմումատուի՝ իր ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը, որը երաշխավորված է ՄԻԵԿ 8-րդ հոդվածով:

Խնդրահարույց է նաև երեխաների մասնակցությամբ կատարողական գործողություններին հարկադիր կատարողների համազգեստի կրման հարցը, այնպիսի պայմաններում, երբ ՄԻՊ աշխատակազմում կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ համազգեստի կրումը բացասական հոգեբանական ազդեցություն է ունենում երեխայի վրա: Հետևաբար, երեխայի մասնակցությամբ կատարողական գործողությունների շրջանակներում կարող է դիտարկվել նաև քաղաքացիական հագուստով կատարողական գործողությունների իրականացման հնարավորությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***մշակել կողմերից մեկին երեխայի հանձնումը իրականացնելիս երեխայի հետ տարվող աշխատանքի հստակ մեթոդաբանություն՝ առաջնորդվելով երեխային չվնասելու և լավագույն շահը ապահովելու սկզբունքով,***
- ✓ ***կազմակերպել երեխայի մասնակցությամբ կատարողական վարույթների իրականացման առնչությամբ պարտադիր վերապատրաստման դասընթացներ, որոնք կկրեն շարունակական բնույթ:***
- ✓ ***ներդնել երեխաների մասնակցությամբ կատարողական վարույթների իրականացման գործողություններում երեխայակենտրոն մոտեցումներ, այդ թվում՝ դիտարկելով հարկադիր կատարողների՝ երեխաների մասնակցությամբ գործողությունների ընթացքում քաղաքացիական հագուստով ներկայանալու հնարավորության հարցը:***

1.2 Կատարողական գործողությունների ընթացքում փորձագետների ներգրավման հետ կապված խնդիրներ

Երեխայի մասնակցությամբ կատարողական գործողություններում հաճախ հոգեբան փորձագետի ներգրավման անհրաժեշտություն է առաջանում, քանի որ երեխաների մասնակցությամբ կատարողական գործողությունները պահանջում են նեղ մասնագիտական գիտելիքներ: Երեխային չվնասելու և կատարողական գործողությունների պատշաճ ընթացքն ապահովելու համար անհրաժեշտ է երեխային մեկ ծնողից մյուսին հանձնելու կատարողական գործողությունների իրականացման ժամանակ պարտադիր ներգրավել հոգեբանի, իսկ տեսակցությունների իրականացման վարույթների ընթացքում հոգեբանի ներգրավել ոչ միայն փորձաքննությունների իրականացման, այլ նաև երեխայի հետ պարբերական աշխատանքի իրականացման համար, հատկապես, այն դեպքերում, երբ երեխան հրաժարվում է տեսակցել մյուս ծնողի հետ կամ տեսակցությունները չեն կայանում տարբեր պատճառներով, և անհրաժեշտություն է առաջանում պարզելու դրանց հոգեբանական պատճառները:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ Խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցիչները մասնակցում են կատարողական գործողությունների իրականացմանը՝ ա) երեխային կողմերից մեկին հանձնելու հետ կապված կատարողական գործողություններն իրականացնելիս, բ) երեխայի տեսակցության հետ առնչվող կատարողական գործողություններ իրականացնելիս՝ անհրաժեշտություն առաջանալու դեպքում:

Այս առնչությամբ հարկ է ընդգծել, որ հոգեբանի ներգրավվածությունը Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կազմում չի կրում պարտադիր բնույթ, ուստի, հատկապես ՀՀ մարզերում կատարողական գործողություններում Խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցիչներին ընդգրկելու պարագայում կատարողական գործողություններին մասնակցում են սոցիալական աշխատողները, ինչի առնչությամբ ևս Մարդու իրավունքների պաշտպանը ստացել է բողոքներ: Մինչդեռ՝ երեխաների հետ հոգեբանական աշխատանքը և երեխայի լավագույն շահի տեսանկյունից հարկադիր կատարողների մասնագիտական պատշաճ մոտեցումները կարող են ապահովվել միայն հոգեբանների կողմից: Նշվածը թույլ կտա բարելավել երեխաների մասնակցությամբ կատարողական վարույթների իրականացման ամբողջ համակարգը: Մասնավորապես՝ միայն փորձաքննությունների իրականացման համար հոգեբանների ներգրավումը և հոգեբանական եզրակացության տրամադրումը արձանագրում է միայն արդեն իսկ գործող իրավիճակը, երեխայի տրամադրվածությունն ու հոգեբանական վիճակը, մինչդեռ՝ պարբերական աշխատանքների միջոցով հնարավոր է ամբողջությամբ փոխել կատարողական վարույթի ընթացքը դրական առումով՝ չառաջնորդվելով միայն երեխայի ծնողի կողմից հոգեբանական ազդեցության դեպքում ծնողին քրեական պատասխանատվության ենթարկելու գաղափարով: Երեխայի մասնակցությամբ կատարողական վարույթների ընթացքը պետք է միտված լինի դատական ակտի պահանջների կատարման ապահովմանը՝ երեխայի լավագույն շահի հաշվառմամբ, որին հնարավոր է հասնել միայն երեխայի հետ իրականացվող աշխատանքների միջոցով: Բացի այդ, ի տարբերություն ֆիզիկական խոչընդոտների, որոնք հնարավոր է հարթել պատժի սպառնալիքով, երեխայի վրա հոգեբանական ազդեցության պարագայում դրա հաղթահարումը գրեթե անհնարին է: Հետևաբար, պետք է ներդնել այնպիսի կառուցակարգեր, որոնք թույլ կտան ապահովել դատական ակտի պատշաճ կատարումը երեխայի կողմից տեսակցություններից հրաժարվելու դեպքում, ինչի հնարավոր տարբերակներից մեկը հոգեբանի ներգրավումն է՝ վերջինիս գործողությունների հստակ սահմանմամբ:

ՄԻՊ աշխատակազմում ստացվել են նաև բողոքներ հոգեբանական փորձաքննությունների գործընթացում հոգեբան փորձագետի կողմից երեխայի նկատմամբ քննադատական և ոչ զգայուն մոտեցում ցուցաբերելու վերաբերյալ: *Այդ առնչությամբ Պաշտպանը կարևորում է վարույթի գործողություններին միայն համապատասխան որակավորում և մասնագիտական հմտություններ ունեցող հոգեբանների ներգրավումը:*

Ինչ վերաբերում է երեխային մեկ ծնողից մյուսին հանձնելու կատարողական վարույթներին և դրանցում հոգեբանի պարտադիր ներգրավմանը, ապա հարկ է նշել, որ ի տարբերություն տեսակցությունների ապահովման կատարողական գործողությունների, որոնք պարբերական բնույթ կրող կատարողական գործողություններ են, երեխային մեկ ծնողից մյուսին հանձնելու կատարողական վարույթը հնարավոր է ավարտել մեկ կամ մի քանի կատարողական գործողությունների ընթացքում, որով պայմանավորված՝ հոգեբանի մասնակցությունը գործնականում ևս իրականացվում է միայն տվյալ գործողությունների ընթացքում: Մինչդեռ՝ կարևոր է երեխային կողմերից մեկին հանձնելու դեպքում հոգեբանական աշխատանքներ իրականացնել մինչև կատարողական գործողությունների իրականացումը, ինչն իրական նախադրյալներ կստեղծի դատական ակտով նախատեսված՝ երեխայի լավագույն շահից բխող պահանջի կատարումն ապահովելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալ՝ անհրաժեշտ է՝

✓ մշակել և ներդնել երեխայի մասնակցությամբ կատարողական գործողություններում հոգեբանի, այդ թվում՝ հոգեբան փորձագետների ներգրավման հստակ չափորոշիչներ՝ նախատեսելով պահանջներ վերջիններիս որակավորման և մասնագիտական պատրաստվածության վերաբերյալ:

✓ երեխային կողմերից մեկին հանձնելու հետ կապված կատարողական գործողություններն իրականացնելիս պարտադիր ներգրավել հոգեբանի և հստակ սահմանել վերջինիս գործառույթների շրջանակը՝ նախատեսելով նաև մինչև կատարողական գործողությունների իրականացումը հոգեբանի մասնակցության հնարավորությունը,

✓ երեխայի տեսակցության հետ առնչվող կատարողական գործողություններ իրականացնելիս հոգեբանի ներգրավել ոչ միայն փորձաքննությունների իրականացման, այլ նաև երեխայի հետ պարբերական աշխատանքի իրականացման նպատակով:

1.3 Կատարողական վարույթի ընթացքում պարտապանի թույլ տված խախտումների առնչությամբ հարկադիր կատարողի գործողությունների հետ կապված խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում արձանագրվել է, որ երեխայի տեսակցության հետ առնչվող կատարողական վարույթների ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված **ծնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև տեսակցության իրականացումը խոչընդոտելու** հանցակազմի հատկանիշների առկայության դեպքում քրեական վարույթ նախաձեռնելու նպատակով Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից հաղորդում ներկայացնելու պայմաններում բաց է մնում հետագայում երեխայի հետ տեսակցությունների կազմակերպման հետ կապված հարցը:

Այսպես, Գլխավոր հարկադիր կատարողի 2021 թվականի հունիսի 9-ի թիվ 33-Լ հանձնարարականով հաստատված ուղեցույցի 45-րդ կետի համաձայն՝ եթե սույն ուղեցույցի VIII գլխով սահմանված կարգով նշանակված փորձագետի եզրակացությամբ հաստատվել է պարտապանի կողմից երեխայի նկատմամբ հոգեբանական ճնշում կամ ազդեցություն գործելու հանգամանքը, և կատարողական վարույթի հանգամանքներից ակնհայտ է, որ նման ճնշման կամ ազդեցության առկայության դեպքում տեսակցություն իրականացնելն անհնարին է, հարկադիր կատարողը սույն ուղեցույցի 36-րդ կետով սահմանված գործողությունները կատարելուց հետո կատարողական վարույթը պետք է կասեցնի՝ անհաղթահարելի ուժի առկայության հիմքով:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ այն դեպքում, երբ արձանագրվում է, որ տեսակցությունները հնարավոր չի եղել ապահովել երեխայի վրա հոգեբանական ճնշման կամ ազդեցության հետևանքով՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը կատարողական վարույթը կասեցնում է անհաղթահարելի ուժի առկայության հիմքով, ինչը երեխայի իրավունքների ապահովման տեսանկյունից անընդունելի է: Այն հանգամանքը, որ տեսակցությունները չեն կայացել ճնշման կամ ազդեցության հետևանքով չի բացառում երեխայի հետ շարունակական հոգեբանական աշխատանքների իրականացման և դատական ակտով սահմանված պահանջների կատարման անհրաժեշտությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է երեխայի տեսակցության հետ առնչվող կատարողական վարույթների շրջանակում ներդնել երեխայի հետ աշխատանքի գործուն գործիքակազմ, որը հնարավորություն կտա հոգեբանական ազդեցության կամ ճնշման փաստը հաստատվելուց հետո ձեռնարկել նաև այլ քայլեր տեսակցությունների ապահովման համար՝ չդիտարկելով կատարողական վարույթի կասեցումը՝ որպես միակ հնարավոր տարբերակ:

1.4 Օրենսդրական կարգավորումների հետ կապված խնդիրներ

Երեխաների մասնակցությամբ կատարողական վարույթները, չնայած այլ ոչ գույքային բնույթի կատարողական վարույթներից երեխայի մասնակցությամբ կատարողական վարույթների առերևույթ տարբերությանը, ներառվում են ոչ գույքային բնույթի կատարողական վարույթների շրջանակում:

Երեխային կողմերից մեկին հանձնելու և երեխայի տեսակցության հետ առնչվող կատարողական վարույթների համար օրենսդրությամբ նախատեսված միակ բացառությունը վարույթներին խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցիչների մասնակցության ու տեսակցությունները պարբերական կատարման միջոցով իրականացնելու հնարավորությունը նախատեսող դրույթի սահմանումն է:

Մինչդեռ՝ հարկ է փաստել, որ երեխայի մասնակցությամբ կատարողական վարույթները ունեն մի շարք առանձնահատկություններ, որոնց մի մասին արդեն իսկ անդրադարձ է կատարվել սույն գլխի շրջանակներում: Այդպիսի պայմաններում երեխաների մասնակցությամբ կատարողական գործողությունների իրականացումը հնարավոր չէ կարգավորել՝ առաջնորդվելով ընդհանուր կարգավորումներով: Հատուկ կարգավորումները, ելնելով երեխայի մասնակցությամբ կատարողական վարույթի առանձնահատկություններից, պետք է վերաբերեն կատարողական վարույթների ավարտի, կարճման, կասեցման և մի շարք այլ հարցերի:

Հարկ է ընդգծել, որ երեխայի տեսակցության վերաբերյալ կատարողական վարույթի իրականացման առնչությամբ Գլխավոր հարկադիր կատարողի 2021 թվականի հունիսի 9-ի թիվ 33-Լ հանձնարարականով հաստատվել է ուղեցույց (այսուհետ նաև՝ ուղեցույց), որը սակայն չի կարգավորում երեխայի մասնակցությամբ կատարողական գործողությունների շրջանակում առաջացող և երեխայի լավագույն շահից ելնելով՝ պարտադիր կարգավորման անհրաժեշտություն ունեցող բոլոր հարաբերությունները, իսկ որոշ դեպքերում պարունակում է կարգավորումներ, որոնք չեն բխում երեխայի լավագույն շահից: Հարկ է փաստել նաև, որ նշված ուղեցույցը ոչ թե նորմատիվ, այլ ներքին (լոկալ) իրավական ակտ է: Ավելին, որևէ նորմատիվ իրավական ակտով տրված չէ դրա ընդունման իրավական հիմքն ու սահմանված չէ կարգավորման առարկան:

Մարդու իրավունքների պաշտպանը կարևոր քայլ է համարում նաև նշված հարցերին որոշակիորեն անդրադարձող «Կատարողական վարույթի մասին» օրենքի նախագծի մշակումը՝ միևնույն ժամանակ արձանագրելով, որ նախագիծը ևս ունի լավարկման անհրաժեշտություն՝ վերը նշված խնդիրների հաշվառմամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է երեխաների մասնակցությամբ վարույթների վերաբերյալ ուղենշային կարգավորումներ նախատեսել նորմատիվ իրավական ակտում՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ

օրենքում՝ հարաբերությունները ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով առավել մանրամասն կարգավորելու համար սահմանելով նաև իրավական հիմք:

2. Երեխայի հետ շփման իրավունքի ապահովումը երեխային օտարերկրյա պետություն անօրինական տեղափոխելու և ՀՀ տարածքում փաստացի բնակության վայրը փոփոխելու դեպքում

Երեխայի հետ շփման իրավունքի ապահովման կարևորագույն տարրերից են երեխայի բնակության վայրի իմացությունն ու դրա հասանելիությունը: Այս առնչությամբ հաճախ անհրաժեշտություն է առաջանում քննարկման առարկա դարձնել երեխային այլ պետություն տեղափոխելու և պահելու, ինչպես նաև ՀՀ տարածքում երեխայի բնակության վայրը փոփոխելու դեպքերում երեխայի հետ շփման իրավունքի ապահովման հետ կապված հարցերը:

Նշվածի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումների, ստացված գրավոր և բանավոր դիմում-բողոքների քննարկման արդյունքում արձանագրվել են.

- երեխային ՀՀ տարածքից անօրինական տեղափոխելու դեպքերի կանխման առնչությամբ ձեռնարկվող միջոցառումների հետ կապված խնդիրներ,
- ՀՀ տարածքում երեխայի բնակության վայրի փոփոխության դեպքում երեխայի հայտնաբերման կառուցակարգերի բացակայության հետ կապված խնդիրներ:

Երեխային ՀՀ տարածքից անօրինական տեղափոխելու դեպքերի կանխման առնչությամբ ձեռնարկվող միջոցառումների հետ կապված խնդիրներ

«Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» կոնվենցիայի վերլուծությունից հետևում է, որ առանց մեկ ծնողի համաձայնության մյուս ծնողի կողմից երեխային տեղափոխելը և պահելը այլ պետությունում համարվում է անօրինական:

ՀՀ արդարադատության նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2023 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարությունը ստացել է 13 դիմում, որից 7-ը վերաբերել է ՀՀ-ից տեղափոխված կամ օտարերկրյա պետության տարածքում պահվող, իսկ 5-ը՝ ՀՀ տեղափոխված կամ ՀՀ-ում պահվող երեխաների վերադարձին:

Նշված տեղեկատվության, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ առկա է միջազգային առևանգման կանխման հստակ և գործուն կառուցակարգեր ներդնելու անհրաժեշտություն:

Միջազգային առևանգումը կանխելու տեսանկյունից կարևոր է օրենսդրությամբ երեխայի տեղափոխման գործընթացի առնչությամբ հստակ կարգավորումների ամրագրումը:

Երեխայի անօրինական տեղափոխումը կանխելու որոշակի կարգավորումներ նախատեսված են «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն որի՝ մինչև 16 տարեկան երեխային մյուս ծնողի դիմումի հիման վրա անձնագիր չի տրամադրվում, եթե ծնողը, որի մոտ օրինական հիմքերով բնակվում է երեխան, լիազոր մարմին նախապես ներկայացնում է անձնագիր տրամադրելու անհամաձայնության վերաբերյալ գրավոր հայտարարություն:

Հայտարարությանը կցվում է երեխայի բնակության վայրը որոշելու՝ նոտարական կարգով վավերացված համաձայնության պատճենը կամ դատական ակտի պատճենը:

Նշվածը խնդրահարույց է, մասնավորապես, այն տեսանկյունից, որ անձնագիր չի տրամադրվում միայն այն ծնողի գրավոր հայտարարության հիման վրա, ում մոտ օրինական հիմքերով բնակվում է երեխան: Մինչդեռ՝ մի շարք դեպքերում երեխայի անօրինական տեղափոխումը այլ պետություն իրականացվում է այն ծնողի կողմից, ում մոտ օրինական հիմքով բնակվում է երեխան: Նշված կարգավորումը՝ որպես կանխարգելիչ դրույթ, չի կարող կիրառվել նաև այն դեպքերում, երբ երեխան արդեն իսկ ունի անձնագիր:

Ուստի, պետությունը պետք է իրականացնի այնպիսի օրենսդրական փոփոխություններ, որոնք ուղղված կլինեն երեխաների անօրինական տեղափոխումը կանխելուն՝ երաշխավորելով վերջիններիս լավագույն շահի ապահովումը:

Անդրադառնալով «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» կոնվենցիային՝ հարկ է փաստել, որ ներկայում այն միակ գործիքն է, որով հնարավոր է ապահովել անօրինական տեղափոխված երեխայի վերադարձը Հայաստանի Հանրապետություն: Մինչդեռ՝ գործնականում բազմաթիվ դժվարություններ են առաջանում նաև կոնվենցիայի կիրառման տեսանկյունից: Այդպիսիք են, օրինակ, այն, որ բոլոր երկրները չէ, որ միացել են կոնվենցիային; կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն՝ կոնվենցիայի կիրառումը դադարեցվում է, երբ երեխան դառնում է 16 տարեկան և այլն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է նախատեսել հստակ և գործուն կառուցակարգեր, այդ թվում՝ իրականացնել օրենսդրական փոփոխություններ՝ ուղղված երեխայի անօրինական տեղափոխման դեպքերի կանխմանը:

3. ՀՀ-ի տարածքում երեխայի բնակության վայրի փոփոխության դեպքում երեխայի հայտնաբերման և հետագայում երեխայի հետ շփման կառուցակարգերի հետ կապված խնդիրներ

Երեխայի հետ շփվելու իրավունքը խախտվում է նաև այն դեպքերում, երբ ծնողներից մեկը ՀՀ տարածքում փոխում է երեխայի բնակության վայրը՝ առանց մյուս ծնողին այդ մասին տեղեկացնելու: Եթե նշված իրավիճակը հնարավոր է հաղթահարել դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության պայմաններում, ապա խնդրի հաղթահարումը բարդանում է նաև ծնողների միջև երեխայի բնակության վայրի վերաբերյալ փոխադարձ համաձայնության առկայության դեպքում, քանի որ նման դեպքերում սահմանված չեն ծնողի հետ երեխայի շփման իրավունքի ապահովման հստակ կառուցակարգեր: Մասնավորապես՝ մեկ ծնողը կարող է փոխել երեխայի բնակության վայրը՝ այդ մասին չտեղեկացնելով մյուս ծնողին: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացված ահազանգերը վկայում են այն մասին, որ ծնողները խնդրի լուծման առնչությամբ պատասխանատու մարմինների իրավասությունների վերաբերյալ ունեն ոչ բավարար իրազեկվածություն:

«Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ (…) Մշտական բնակության վայրը (կացարանը) փոխելիս անձը պարտավոր է *յոթնօրյա ժամկետում* գրավոր տեղեկացնել այն համայնքի տեղական ռեգիստրին, որտեղ գտնվում է նրա նոր կացարանը(…):

ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 195.1 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բնակչության պետական ռեգիստրում ընդգրկվելու համար Հայաստանի Հանրապետության բնակչի, ինչպես նաև 16 տարին չլրացած կամ դատարանի վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձի օրինական ներկայացուցչի կողմից օրենքով սահմանված կարգով և ժամկետներում համապատասխան տեղական ռեգիստրին մշտական բնակության վայրի (կացարանի) հասցեն, ինչպես նաև օրենքով պահանջվող այլ անհատական հաշվառման տվյալները չտրամադրելը կամ կեղծ տվյալներ տրամադրելը կամ մշտական բնակության վայրը (կացարանը) փոխելիս նոր բնակության վայրի (կացարանի) հասցեն օրենքով սահմանված ժամկետում չհայտնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի եռապատիկի չափով:

Նշված դրույթների վերլուծությունից հետևում է, որ մշտական բնակության վայրը (կացարանը) փոխելիս նոր բնակության վայրի (կացարանի) հասցեն օրենքով սահմանված ժամկետում չհայտնելը առաջացնում է վարչական պատասխանատվություն: Հարկ է փաստել, սակայն, որ առկա չեն հստակ կառուցակարգեր նշված իրավախախտումները բացահայտելու համար, ինչի հետևանքով խախտվում է ծնողի հետ շփվելու երեխայի իրավունքը:

Ավելին, առավել խնդրահարույց են այն դեպքերը, երբ մեկ ծնողի կողմից երեխայի բնակության վայրը փոխելը կատարվում է պարբերաբար և անգամ երեխայի բնակության վայրի հայտնաբերման պարագայում ծնողի հետ երեխայի շփման իրավունքի իրացումը չի ապահովվում: Մասնավորապես՝ ՀՀ Կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությամբ ամրագրված չէ երեխայի հետ ծնողի տեսակցության կազմակերպման հստակ պարտականություն և յուրաքանչյուր դեպքում հարցի լուծումը թողնվում է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի հայեցողությանը: Նման պարագայում խնդրի լուծումը կարող է ապահովվել միայն դատական կարգով, ինչից մի շարք քաղաքացիներ խուսափում են՝ ֆինանսական միջոցների սղության և այլ պատճառներով: Հետևաբար, համայնքային մակարդակում խնդրի կանխարգելումը և լուծումը կարող է դիտվել որպես առավել նպատակային մոտեցում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ***մշակել և իրացնել առանց համայնքի տեղական ռեգիստրին տեղեկացնելու երեխայի մշտական բնակության վայրը (կացարանը) փոխելու կանխարգելման և վարչական իրավախախտման հայտնաբերման հստակ կառուցակարգեր,***
- ***Գործուն քայլեր ձեռնարկել մեկ ծնողի կողմից ՀՀ-ի տարածքում երեխայի բնակության վայրը փոխելու դեպքում երեխայի և ծնողի շփման իրավունքի ապահովման համար***

4. Երեխայի հետ շփվելու իրավունքի ապահովումը անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշման կիրառման դեպքերում

Երեխայի հետ շփվելու իրավունքի իրացումը անհրաժեշտ է քննարկել նաև «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ օրենք) համատեքստում: Մասնավորապես՝ քննարկման են ենթակա

առանձին հարցեր, որոնք դուրս են մնացել օրենքի կարգավորման շրջանակից, օրինակ՝ երեխայի հետ տեսակցությունների ապահովման կամ դրանց ապահովման անհրաժեշտության և նպատակահարմարության հարցն անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշումների կիրառման դեպքերում:

Օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ անհետաձգելի միջամտության որոշման գործողության ժամկետը չի կարող գերազանցել քսան օրը:

Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պաշտպանական որոշումը կայացվում է մինչև 6 ամիս ժամկետով և կարող է դրա անհրաժեշտությունը հիմնավորող համապատասխան դիմումի հիման վրա դատարանի պատճառաբանված որոշմամբ 2 անգամ երկարաձգվել՝ յուրաքանչյուր անգամ առավելագույնը մինչև 3 ամիս ժամկետով:

Հետևաբար՝ անհետաձգելի և պաշտպանական որոշումներով սահմանվող սահմանափակումները կարող են տևել մինչև 12 ամիս, որի ընթացքում կարող են կիրառվել տարատեսակ սահմանափակումներ:

Մասնավորապես՝ Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *անհետաձգելի միջամտության* որոշմամբ կարող են կիրառվել հետևյալ սահմանափակումները. 2) արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին այցելել իր հետ համատեղ բնակելի տարածքում չբնակվող՝ ընտանիքում բռնության ենթարկվածին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ եղող անձանց՝ նրանց աշխատանքի, ուսման, հանգստի, բնակվելու կամ այլ վայրեր (...) 5) արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին հեռախոսային, նամակագրական կամ կապի այլ միջոցներով հաղորդակցվել ընտանիքում բռնության ենթարկվածի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ եղող անձանց հետ: Միաժամանակ՝ Օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ 2) արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին այցելել իր հետ համատեղ բնակելի տարածքում չբնակվող՝ ընտանիքում բռնության ենթարկվածի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ եղող անձանց՝ նրանց աշխատանքի, ուսման, հանգստի, բնակվելու կամ այլ վայրեր, 3) արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին այնպիսի հեռավորությունից ավելի մոտենալ ընտանիքում բռնության ենթարկվածին (անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ եղող անձանց), որն ընտանիքում բռնության ենթարկված անձի մեջ ողջամտորեն հիմնավոր վախ կհարուցի իր անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի մասին: Այս սահմանափակումը կիրառելիս որոշմամբ սահմանվում է հեռավորության կոնկրետ չափը (...), 6) անհրաժեշտության դեպքում արգելել երեխաների հետ տեսակցությունները, 7) արգելել ընտանիքում բռնություն գործադրած անձին հեռախոսային, նամակագրական կամ կապի այլ միջոցներով հաղորդակցվել ընտանիքում բռնության ենթարկվածի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ եղող անձանց հետ:

Վերը նշված սահմանափակումները անմիջականորեն վերաբերում են երեխայի հետ շփման՝ ծնողի իրավունքի սահմանափակմանը: Մինչդեռ բաց են մնում այն հարցերը, թե ինչպես է ապահովվում ծնողի և երեխայի շփման իրավունքը այն պարագայում, երբ չեն կիրառվում նշված սահմանափակումները, սակայն երեխաները, օրինակ՝ գտնվում են ապաստարանում, ինչն ինքնին հանգեցնում է վերը նշված սահմանափակումներին:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ ապաստարանը (ընտանիքում բռնության ենթարկված անձի հոգածության կենտրոն)՝ ընտանիքում բռնության ենթարկվածներին և նրանց խնամքի տակ եղող անձանց՝ նույն օրենքով սահմանված դեպքերում տրամադրվող անվտանգ ժամանակավոր կացարան է, որտեղ

նրանք օգտվում են «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված սոցիալական ծառայություններից:

Օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ շահառուներն ապաստարանում տեղավորվում են ոչ ավելի, քան 12 ամսով: Ապաստարանում գտնվելու ժամկետը որոշում է ապաստարանը՝ շահառուներին համապատասխան օգնություն ցույց տվող մասնագետների առաջարկությամբ՝ հաշվի առնելով նրանց անվտանգության համար սպառնալիքների առկայությունը կամ բացակայությունը, նրանց՝ ինքնուրույն կամ այլ անձի հետ համատեղ բնակվելու հնարավորությունը և այլ վերաբերելի հանգամանքներ՝ որպես պարտադիր պայման դիտելով ապաստարանում մնալու՝ շահառուների համաձայնությունը:

Ընդ որում, բաց է մնում նաև այն հարցը, թե ինչպես է հետագայում ապահովվելու ծնողի՝ երեխայի հետ շփման իրավունքի իրացումը և տեսակցությունների կազմակերպումը անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշմամբ սահմանված ժամկետը լրանալուց հետո, երբ բռնության ենթարկված անձը և երեխաները շարունակում են մնալ ապաստարանում: Հարկ է ընդգծել, որ այս առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանը ստացել է բանավոր բողոքներ, որոնք վկայում են, որ դեպքերի մեծամասնությունում սահմանված ժամկետը լրանալուց հետո բռնության ենթարկված անձը և երեխաները շարունակում են մնալ ապաստարանում, և փաստացի շարունակվում է նշված որոշումներով կիրառված (կամ չկիրառված) սահմանափակումների գործողությունը, ինչպես նաև ապաստարանում գտնվել շարունակելը որոշ դեպքերում հանգեցնում է նաև անհետաձգելի միջամտության որոշմամբ չկիրառված սահմանափակումների, օրինակ՝ երեխաների հետ հեռախոսային, նամակագրական կամ կապի այլ միջոցներով հաղորդակցվելու կամ երեխայի հետ տեսակցության արգելքի: Օրինակ՝ Պաշտպանը ստացել է գրավոր և բանավոր բողոքներ այն առնչությամբ, որ անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշումներով սահմանված ժամկետը լրանալուց հետո երեխաների ծնողներից մեկը հնարավորություն չի ունեցել կապ հաստատել երեխայի հետ կամ տեսակցել վերջինիս:

Վերոգրյալը նկատի ունենալով՝ Պաշտպանն ընդգծում է, որ անհրաժեշտ է օրենսդրական մակարդակով նախատեսել բռնության ենթարկված անձի անվտանգային երաշխիքների և ծնողի հետ երեխայի շփման իրավունքի հարաբերակցության արդյունավետ կառուցակարգեր՝ միաժամանակ պահպանելով նաև որոշակիություն որոշումներով նախատեսված սահմանափակումների և գործնականում առկա իրավիճակի միջև:

Այն դեպքերում, երբ երեխաները չեն բռնության ենթարկվել և առկա չէ երեխաների նկատմամբ բռնության վտանգ, կարևոր է քննարկման առարկա դարձնել խնդիրների խորքային ուսումնասիրության և դրանց արդյունքների հիման վրա, ըստ նպատակահարմարության, տեսակցությունների իրականացման կարգ սահմանելու հարցը՝ երեխայի լավագույն շահի հաշվառմամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***լավարկել «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի կարգավորումները և մոտեցումները երեխաների հետ տեսակցությունների կազմակերպման համատեքստում,***

- ✓ ***ներդնել հստակ կառուցակարգեր՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անհատականացված մոտեցում ցուցաբերելու և գործունեությունների կազմակերպման նպատակահարմարությունը որոշելու համար:***

ԳԼՈՒԽ 4. ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Երեխաների զարգացման վրա նախադպրոցական ուսումնական հաստատություններն ունեն բացառիկ նշանակություն, ինչը հաստատված է բազմաթիվ միջազգային փաստաթղթերով: Միավորված ազգերի կազմակերպության կայուն զարգացման 4-րդ նպատակի 4.2 կետի համաձայն՝ անհրաժեշտ է մինչև 2030 թ. ապահովել, որ բոլոր աղջիկների և տղաների համար հասանելի լինեն որակյալ վաղ մանկության զարգացման հնարավորությունները, խնամքը և նախադպրոցական կրթությունը, որպեսզի նրանք պատրաստ լինեն տարրական կրթության:[675] Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպությունը (ՅՈՒՆԵՍԿՕ) Կայուն զարգացման 4-րդ նպատակի կիրառմանն ուղղված «Կրթություն 2030» վերտառությամբ փաստաթղթում նշել է, որ պետք է խրախուսվի առնվազն մեկ տարվա անվճար և պարտադիր որակյալ նախադպրոցական կրթության ապահովումը:[676]

Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՕ) «Կրթությունը սկսվում է վաղ» վերտառությամբ զեկույցի համաձայն՝ նախադպրոցական կրթության հասանելիությունը հնարավորություն է հիմնարար ուսուցում ձեռք բերելու համար՝ ներառյալ գրագիտությունը, թվաբանությունը և սոցիալ-հուզական ուսուցումը:[677]

Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) «Կառուցել շարունակականությունն ապահովելու համար. համընդհանուր որակյալ նախադպրոցական կրթությանն աջակցող շրջանակ»-ի համաձայն՝ երեխաները, որոնք ստանում են որակյալ նախադպրոցական կրթություն՝

- սկսում են դպրոցը ճիշտ տարիքից՝ ունենալով ուժեղ հիմնարար հմտություններ,
- առավել հավանական է, որ կմնան դպրոցում և կավարտեն տարրական կրթությունը,
- ցույց են տալիս ավելի լավ ուսումնական և ակադեմիական առաջադիմություն ինչպես գրագիտության, այնպես էլ մաթեմատիկայի բնագավառներում,
- ունեն մեծանալուն պես առավել շատ վաստակելու ներուժ:[678]

Նշվածների վերլուծությունից հետևում է, որ նախադպրոցական կրթությունը բացառիկ դեր և նշանակություն ունի ինչպես երեխայի վաղ մանկության, այնպես էլ հետագայում ակադեմիական հաջողությունների և ողջ կյանքի ընթացքի վրա, ինչն ապահովելը պետության պարտավորությունն է:

Այնուամենայնիվ, ՀՀ-ում նախադպրոցական կրթության իրավունքի ապահովման հարցում առկա են մի շարք համակարգային խնդիրներ: Մասնավորապես, արձանագրվել են.

1. Նախադպրոցական ուսումնական հաստատությունների հասանելիության հետ կապված խնդիրներ (թվաքանակ, բաշխվածություն),

---

[675] Հասանելի է https://armenia.un.org/hy/sdgs/4 հղումով:

[676] ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Կրթություն 2030»-ը հասանելի է հետևյալ հղումով՝ chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/https://apa.sdg4education2030.org/sites/apa.sdg4education2030.org/files/2020-12/Education2030%20Incheon%20Declaration%20and%20Framework%20for%20Action.pdf , էջ 27:

[677](ՅՈՒՆԵՍԿՕ)-ի «Կրթությունը սկսվում է վաղ» զեկույցը հասանելի է հետևյալ հղումով՝ https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000383668 , էջ 5:

[678] ՅՈՒՆԻՍԵՖ-ի «Կառուցել շարունակականությունն ապահովելու համար. համընդհանուր որակյալ նախադպրոցական կրթությանն աջակցող շրջանակ»-ը հասանելի է հետևյալ հղումով՝ www.unicef.org/media/67191/file/Build-to-last-framework-universal-quality-pre-primary-education.pdf , էջ 8:

2. Նախադպրոցական ուսումնական հաստատությունների ընդունելությունը կազմակերպելիս առաջնահերթություն ունեցող երեխաների շրջանակի հետ կապված խնդիրներ,

4. ՀՀ մարզերում համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների վճարովիության հետ կապված խնդիրներ,

4 Նախադպրոցական ուսումնական հաստատությունից սանի ազատմանը վերաբերելի կարգավորումների հետ կապված խնդիրներ:

1. Նախադպրոցական ուսումնական հաստատությունների հասանելիության հետ կապված խնդիրներ (թվաքանակ, բաշխվածություն)

Նախադպրոցական ուսումնական հաստատությունների հետ կապված խնդիրները արդիական են ինչպես Երևան քաղաքում, այնպես էլ ՀՀ մարզերում:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տվյալների համաձայն՝ Երևան քաղաքում գործում է 162 նախադպրոցական ուսումնական հաստատություն, որից 2023 թվականի դեկտեմբերի դրությամբ չեն գործում 15-ը՝ հիմնանորոգման պատճառով: Ըստ նշված տվյալների՝ Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում գործում են նախադպրոցական ուսումնական հաստատություններ: Նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ ՀՀ մարզերի մի շարք բնակավայրերում, առհասարակ չեն գործում նախադպրոցական ուսումնական հաստատություններ:

ՀՀ բնակչության մեծ մասի Երևան քաղաքում բնակվելու, նախադպրոցական ուսումնական հաստատությունների ծանրաբեռնվածության, դրանցից յուրաքանչյուրում սահմանված սաների առավելագույն քանակի, մարզերի մի շարք բնակավայրերում նախադպրոցական ուսումնական հաստատությունների բացակայության կամ ոչ բավարար քանակի պատճառով արձանագրվել է, որ երեխաների նախադպրոցական կրթության իրացումը անգամ սահմանված կարգով հերթագրման պարագայում այդպես էլ որոշ դեպքերում մնում է չիրացված, քանի որ երեխաները նշված խնդիրներով պայմանավորված՝ այդպես էլ մինչև դպրոցահասակ դառնալը չեն կարողանում հաճախել նախադպրոցական ուսումնական հաստատություն:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը ստացել է բազմաթիվ ահազանգեր շատ վաղ հերթագրվելու պարագայում անգամ նախադպրոցական ուսումնական հաստատություն չընդունվելու, իսկ այդպիսի պայմաններում ֆինանսական դրությամբ պայմանավորված՝ մասնավոր նախադպրոցական ուսումնական հաստատություն ընդունվելու անհնարինության վերաբերյալ:

Ընդ որում՝ 2024 թվականի մարտի 15-ի դրությամբ «Մանկապարտեզ կառավարման համակարգում» առկա տվյալների համաձայն՝ հերթագրված են 14568 երեխա, որից 12591-ը նախադպրոցական ուսումնական հաստատության ընդունելության տարիքային խմբերին համապատասխան են:

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից արձանագրվել են մի շարք դեպքեր, երբ նախադպրոցական ուսումնական հաստատությունների ոչ բավարար քանակի պատճառով ծնողները կա՛մ չեն կարողացել աշխատել՝ երեխայի խնամքը և դաստիարակությունն ինքնուրույն կազմակերպելու համար, կա՛մ աշխատելու պարագայում ստացված աշխատավարձի մեծ մասը կամ ամբողջը տրամադրել են որպես նախադպրոցական ուսումնական հաստատության վճար: Այս առումով հարկ է փաստել, որ մասնավոր նախադպրոցական ուսումնական հաստատություններ ընտրելը երեխայի խնամքն իրականացնող անձանց համար վերջինիս կարիքների ամբողջական բավարարման հետ համատեղելու տեսանկյունից ֆինանսական առումով մարտահրավերային է:

Արձանագրվել են նաև նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների հետ կապված խնդիրներ: Այսպես, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հոկտեմբերի 3-ի N 25-Ն հրամանով հաստատված հավելվածի 54-րդ կետի համաձայն՝ նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքերը, որպես կանոն, պետք է նախագծվեն առանձին կառուցված՝ առանձնացված հողամասի տարածքում: Նախադպրոցական ուսումնական հաստատությունների կառուցման և վերակառուցման համար պահանջվող տարածքների սակավության պայմաններում, ինչպես նաև կառուցապատման բարձր խտության դեպքերում թույլատրվում է բնակելի շենքերի ճակատներին ներկառուցված, ներկառուցված-կցակառուցված և կցակառուցված նախադպրոցական ուսումնական հաստատությունների նախագծումը՝ ոչ ավելի, քան 100 տեղ հզորությամբ:

Մինչդեռ՝ «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» ՊՈԱԿ և «Երևանի N 34 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրականացված մշտադիտարկման այցի արդյունքում պարզվել է, որ մանկապարտեզը տեղակայված է կենտրոնի մասնաշենքերից մեկի առաջին հարկում, ինչը անթույլատրելի է նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների համար նախատեսված նորմերի ապահովման և դրանով պայմանավորված՝ երեխայի ամբողջական զարգացման համար բարենպաստ միջավայրի ապահովման տեսանկյունից:

Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՕ) տվյալների համաձայն՝ 2000 թվականին ամբողջ աշխարհում նախադպրոցական տարիքի երեխաների 28 տոկոսն ընդգրկված է եղել մասնավոր հաստատություններում, իսկ 2020 թվականին այս ցուցանիշը բարձրացել է մինչև 38 տոկոս, ինչը ավելի բարձր է, քան տարրական (19 տոկոս) կամ միջնակարգ (28 տոկոս) կրթության պարագայում:[679]

Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՕ) «Վաղ մանկության խնամքի և կրթության նորարարական ֆինանսավորման տարածաշրջանային ուղեցույցների» համաձայն՝ վաղ մանկության խնամքը և կրթությունը ոչ միայն երեխաներին կրթելու, այլ նաև նրանց առողջ և պաշտպանված պահելու մասին է՝ ստեղծելով երեխայի ամբողջական զարգացման համար բարենպաստ միջավայր[680]*:*

---

[679]Հասանելի է հղումով՝ https://unesdoc.unesco.org/in/documentViewer.xhtml?v=2.1.196&id=p::usmarcdef_0000383668&file=/in/rest/annotationSVC/DownloadWatermarkedAttachment/attach_import_8215860c-1814-407a-b7ac-becdeb8daae0%3F_%3D383668eng.pdf&updateUrl=updateUrl5227&ark=/ark:/48223/pf0000383668/PDF/383668eng.pdf.multi&fullScreen=true&locale=en#Education%20starts%20early%20%28UNESCO%29%20V10.indd%3A.89814%3A308 էջ 6:

[680]Հասանելի է www.gcedclearinghouse.org/sites/default/files/resources/190414eng_0.pdf հղումով, էջ 42:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ պետության պարտավորությունն է ստեղծել երեխայի վաղ մանկության կրթության համար անհրաժեշտ բոլոր պայմանները՝ որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման, զարգացման ու դաստիարակության, անվտանգ միջավայրի ստեղծման, կյանքի, առողջության պահպանման և ամրապնդման կարևոր երաշխիք:

Ուստի, պետությունը պետք է ձեռնամուխ լինի նախադպրոցական ուսումնական հաստատությունների թվաքանակի ավելացմանը և արդեն իսկ գործող հաստատությունների շենքային պայմանների բարելավմանն ուղղված անհետաձգելի միջոցների ձեռնարկմանը: Այս առումով կարևոր է, որ վճարովի մասնավոր նախադպրոցական ուսումնական հաստատություն ընտրելը յուրաքանչյուր ծնողի համար լինի այլընտրանք և ոչ պետական նախադպրոցական ուսումնական հաստատությունների անբավարարության պատճառով ստեղծված միակ հնարավոր ելք:

2. Նախադպրոցական ուսումնական հաստատությունների ընդունելությունը կազմակերպելիս առաջնահերթություն ունեցող երեխաների շրջանակի հետ կապված խնդիրներ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 76-Ն հրամանով հաստատված հավելվածի 10-րդ կետի համաձայն՝ ընդունելությունը կազմակերպելիս առաջնահերթությունը տրվում է, առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող կամ ֆունկցիոնալության ծանր կամ խորը աստիճանի սահմանափակումով ծնողի երեխաներին, երեք և ավելի երեխա ունեցող ծնողի երեխաներին, զոհված զինծառայողի երեխային, քրոջը, եղբորը, երկկողմանի ծնողազուրկ երեխաներին, Հայաստանի Հանրապետության զինված ուժերում զինվորական ծառայություն անցնող զինծառայողի երեխաներին, կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին, տվյալ ուսումնական հաստատությունում (կազմակերպությունում) ընդգրկված քույր, եղբայր ունեցող երեխաներին, տվյալ ուսումնական հաստատության (կազմակերպության) աշխատակիցների երեխաներին:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի նշված հրամանով նախադպրոցական ուսումնական հաստատություններ ընդունելության համար սահմանված առաջնահերթություն ունեցող երեխաների շրջանակը աստիճանաբար ընդլայնվել է՝ դրանում ընդգրկելով երեխաների առավել լայն շրջանակ:

Այնուամենայնիվ, Մարդու իրավունքները պաշտպանի աշխատակազմը շարունակել է ստանալ գրավոր և բանավոր բողոքներ՝ կապված առաջնահերթություն ունեցող երեխաների շրջանակի հետ: Մասնավորապես՝ մի շարք դեպքերում երեխայի միայնակ ծնողը կամ միակ խնամակալը հայտնել են, որ իրենք, հնարավորություն չունենալով օգտվել նախադպրոցական ուսումնական հաստատությունների ընդունելության համար

սահմանված առաջնահերթություններից, չեն կարողանում միաժամանակ ապահովել երեխայի պատշաճ խնամքն ու զարգացումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է նախադպրոցական ուսումնական հաստատություններ ընդունելության համար սահմանված առաջնահերթություն ունեցող անձանց շրջանակում, ի թիվս այլնի, դիտարկել նաև այն երեխաներին, որոնց խնամքը իրականացվում է միայնակ ծնողի կամ միայնակ խնամակալի կողմից և ընտանիքի գնահատումը ցույց է տալիս, որ երեխայի նախադպրոցական կրթության մեջ չներառելն ուղղակիորեն ազդում է ընտանիքի սոցիալական պայմանների վրա՝ սահմանափակելով վեջիններիս աշխատելու հնարավորությունը:

3. ՀՀ մարզերում համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների վճարովիության հետ կապված խնդիրներ

Նախադպրոցական ուսումնական հաստատություններում կրթության ստացման հնարավորությունը երեխաների կրթության իրավունքի բաղկացուցիչ մասն է, պետք է պատշաճ կերպով ապահովվի պետության կողմից: Հարկ է նշել, որ Երևանի քաղաքապետի 04.03.2016 թվականի 706-Ա որոշմամբ նախատեսվել է Երևանի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխայի նախադպրոցական կրթության անվճար իրականացումը երեխայի ծնողների, կամ ծնողներից մեկի կամ նրա օրինական ներկայացուցիչների կամ օրինական ներկայացուցիչներից մեկի մշտապես կամ փաստացի Երևան քաղաքում հաշվառված լինելու պարագայում: Մինչդեռ ՀՀ մարզերում համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունները վճարովի են, որպիսի պայմաններում երեխայի սոցիալական կարգավիճակով պայմանավորված՝ կարող է սահմանափակվել երեխայի նախադպրոցական կրթություն ստանալու հնարավորությունը:

2023 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը բողոքներ է ստացել ՀՀ մարզերում համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների վճարովիության հետ կապված: Մասնավորապես՝ որոշ համայնքներում նախադպրոցական ուսումնական հաստատությունների վճարը անհամաչափ բեռ է հանդիսանում երեխաների ծնողների համար:

Մինչդեռ՝ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մասնակից պետությունները պարտավորվում են երեխային ապահովել նրա բարեկեցության համար անհրաժեշտ պաշտպանությամբ և հոգատարությամբ՝ ուշադրության առնելով նրա ծնողների, խնամակալների կամ օրենքով նրա համար պատասխանատվություն կրող այլ անձանց իրավունքներն ու պարտականությունները, և այդ նպատակով ձեռնարկում են օրենսդրական ու վարչական բոլոր համապատասխան միջոցները:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի թիվ 14 ընդհանուր մեկնաբանություն.
Երեխայի լավագույն շահից է բխում որակյալ կրթություն ստանալուն հասանելիություն ունենալը, ներառյալ վաղ մանկության կրթությանը, ոչ ֆորմալ կրթությանը և հարակից միջոցառումներին՝ անվճար:[681]

[681] ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի թիվ 14 ընդհանուր մեկնաբանությունը հասանելի է հետևյալ հղումով՝ file:///D:/Data/Downloads/G1344189.pdf , էջ 9:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն թիվ 7 ընդհանուր մեկնաբանություն.

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն թիվ 7 ընդհանուր մեկնաբանությամբ սահմանել է, որ վաղ մանկության շրջանը ենթադրում է ծննդյան պահից մինչև մանկության ողջ ընթացքը՝ ինչպես նախադպրոցական տարիների, այնպես էլ դեպի դպրոց անցման ընթացքում:[682]

Հետևաբար, երեխայի վաղ մանկության խնամքի և կրթության բաղկացուցիչ մասն է կազմում նաև անվճար և հասանելի նախադպրոցական կրթությունը, ինչը բխում է երեխայի լավագույն շահից:

Ընդ որում՝ հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում մեկ շնչի հաշվարկով նախադպրոցական կրթության վրա կատարվող ծախսերն ամենացածրն են համանման և ուղենիշային երկրների շարքում:[683]

Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպությունը (ՅՈՒՆԵՍԿՕ) «Վաղ մանկության խնամքի և կրթության նորարարական ֆինանսավորման տարածաշրջանային ուղեցույցների» համաձայն՝ երեխաների վաղ փորձառությունները և միջավայրը տևական ազդեցություն են ունենում նրանց ապագա բարեկեցության վրա, իսկ վաղ մանկության խնամքի և կրթության որակյալ ծրագրերի պատշաճ ֆինանսավորումը լավագույն և ամենաարդյունավետ ներդրումներից մեկն է, որը երկիրը կարող է անել անհավասարության դեմ պայքարելու, աղքատության միջսերնդային փոխանցումը վերացնելու և հետագա կյանքի ընթացքում բարելավելու ինչպես անհատական, այնպես էլ սոցիալական արդյունքների լայն շրջանակ:[684]

Նշված վերլուծությունից հետևում է, որ անվճար նախադպրոցական կրթության ապահովումը պետության պարտավորությունն է: Ուստի պետությունը պետք է ձեռնարկի բոլոր հնարավոր և գործուն միջոցները՝ ապահովելու անվճար հիմունքներով գործող համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների հասանելիությունը:

4. Նախադպրոցական ուսումնական հաստատությունից սանի ազատմանը վերաբերելի կարգավորումների հետ կապված խնդիրներ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 76-Ն հրամանով հաստատված հավելվածի 22-րդ կետի համաձայն՝ սանի ազատումը հաստատությունից կատարվում է՝ ծնողի դիմումի հիման վրա, դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա, հաստատության և ծնողի միջև կնքված պայմանագրի դրույթները ծնողի կողմից չպահպանելու դեպքում, ուսումնական տարվա ընթացքում սանի, անկախ պատճառից, 75 աշխատանքային օր բացակայելու դեպքում:

Նշվածից հետևում է, որ սանը կարող է ազատվել նախադպրոցական ուսումնական հաստատությունից նաև ծնողի կողմից հաստատության և ծնողի միջև կնքված պայմանագրի դրույթները ծնողի կողմից չպահպանելու դեպքում, ինչն ակնհայտորեն հանգեցնում է երեխայի նախադպրոցական կրթության շարունակականության ընդհատման: Այսպիսի պայմաններում անհասկանալի է երեխայի նախադպրոցական

[682] ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն թիվ 7 ընդհանուր մեկնաբանությունը հասանելի է հետևյալ հղումով՝ file:///D:/Data/Downloads/G1344189%20(1).pdf , էջ 9:
[683] Հասանելի է https://www.unicef.org/armenia/media/15496/file/Education%20Sector%20Analysis%20for%20Armenia.pdf հղումով, էջ 15:
[684] Հասանելի է https://www.gcedclearinghouse.org/sites/default/files/resources/190414eng_0.pdf հղումով, էջ 8:

կրթության իրացումը ծնողի կողմից պայմանագրով սահմանված դրույթները պահպանելու հետ կապելը:

Յուրաքանչյուր պարագայում պետությունը պարտավոր է առաջնորդվել երեխայի լավագույն շահով՝ անկախ ծնողի դրսևորած վարքագծից: Մինչդեռ նախադպրոցական կրթության ստացումը, տվյալ պարագայում, դիտարկվում է սովորական պայմանագրային հարաբերությունների համատեքստում, ինչն անթույլատրելի է: Երեխայի կրթության ստացումը որևէ պարագայում չպետք է պայմանավորված լինի այլ գործոններով, քան երեխայի լավագույն շահի ապահովումն է:

Միաժամանակ, երեխայի նախադպրոցական ուսումնական հաստատությունից ազատելու հիմք է ուսումնական տարվա ընթացքում սանի, անկախ պատճառից, 75 աշխատանքային օր բացակայելը:

Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թ. ապրիլի 10-ի թիվ 47-Ն որոշմամբ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 11-ի՝ «Նախադպրոցական հաստատություններ սաների ընդունելության կարգը սահմանելու մասին» N 76-Ն հրամանի հավելվածը լրացվել է նոր՝ 22.1-ին կետով, համաձայն որի՝ սույն կարգի 22-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված ժամկետում չեն ներառվում երեխայի նկատմամբ հսկողությունն իրականացնող առողջության առաջնային պահպանման բժշկական կազմակերպության կողմից տրված՝ Առողջապահության նախարարի՝ 2021 թվականի դեկտեմբերի 6-ի N 88-Ն հրամանով սահմանված ձևի փաստաթղթի հիման վրա հիվանդության պատճառով չհաճախած օրերը, բայց ոչ ավելի, քան տվյալ ուսումնական տարվա ընթացքում 21 օր, այնուամենայնիվ, որոշ հարցեր շարունակում են մնալ խնդրահարույց:

Մասնավորապես՝ երեխայի՝ նախադպրոցական ուսումնական հաստատություն հաճախելը կարող է ընդհատվել ամենատարբեր պատճառներով, որոնց համար երեխային նախադպրոցական կրթությունը շարունակել չթույլատրելը որևէ պարագայում չի կարող երեխայակենտրոն համարվել: Պետության քաղաքականությունը պետք է միտված լինի երեխաներին նախադպրոցական կրթության մեջ ընդգրկելուն, դրա ապահովմանը և ոչ, որոշակի հանգամանքներով պայմանավորված, նախադպրոցական ուսումնական հաստատություն չհաճախելու դեպքում՝ երեխայի կրթություն ստանալու իրավունքը սահմանափակելուն:

Ըստ ՄԱԿ-ի երեխաների մանկական հիմնադրամի՝ «Գենդերային փոխակերպող նախադպրոցական կրթության համաձայն՝ ամուր նախադպրոցական կրթության համակարգի ստեղծումը պետք է լինի ազգային շահ»:[685]

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ ներդնել ամուր նախադպրոցական համակարգ՝ ձեռնարկելով բոլոր հնարավոր միջոցները նախադպրոցական կրթությունը պարտադիր դարձնելու համար,

✓ գործուն միջոցներ ձեռնարկել նախադպրոցական ուսումնական հաստատությունների հասանելիությունն ապահովելու համար,

✓ ապահովել երեխաների նախադպրոցական կրթության իրավունքի իրացման համար անվտանգ, ապահով, ինչպես նաև ֆիզիկական, հոգեկան և սոցիալական զարգացմանը նպաստող պայմաններով միջավայր,

[685] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.unicef-irc.org/publications/pdf/Gender_Transformative_Pre_Primary_Education_A_System_Wide_Approach_To_Tackling_Inequalities_From_The_Early_Years.pdf , էջ 3:

- ✓ ***ընդլայնել նախադպրոցական ուսումնական հաստատություններում ընդունելության համար առաջնահերթություն ունեցող երեխաների շրջանակը՝ դրանում ներառելով նաև երեխաներին, որոնց խնամքն իրականացվում է մեկ անձի կողմից, և ընտանիքի գնահատումը ցույց է տալիս, որ երեխայի նախադպրոցական կրթության մեջ չներառելն ուղղակիորեն ազդում է ընտանիքի սոցիալական պայմանների վրա,***
- ✓ ***ձեռնարկել գործուն միջոցներ համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատություններում անվճար հիմունքներով կրթության իրավունքի իրացումն ապահովելու նպատակով,***
- ✓ ***վարել երեխաներին նախադպրոցական կրթության մեջ ընդգրկելու քաղաքականություն, իսկ նախադպրոցական ուսումնական հաստատություններից ազատումն իրականացնել՝ ելնելով բացառապես երեխայի լավագույն շահի ապահովումից:***

ԳԼՈՒԽ 5. ԵՐԵԽԱՅԻ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Երեխայի անվճար պարտադիր միջնակարգ կրթության իրավունքն ամրագրված է ինչպես ներպետական, այնպես բազմաթիվ միջազգային-իրավական փաստաթղթերով և կոնվենցիաներով:

Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակից պետությունները ճանաչում են երեխայի կրթության իրավունքը և հավասար հնարավորությունների հիման վրա այդ իրավունքի իրականացմանն աստիճանաբար հասնելու համար նրանք, մասնավորապես.

(ա) մտցնում են պարտադիր և անվճար տարրական կրթություն,

(բ) խրախուսում են միջնակարգ կրթության տարբեր ձևերի, ներառյալ՝ ընդհանուր և մասնագիտական կրթության զարգացումը, ապահովում են դրանց մատչելիությունը բոլոր երեխաների համար և ձեռնարկում են այնպիսի անհրաժեշտ միջոցներ, ինչպիսիք են անվճար կրթություն տրամադրելը և կարիքի դեպքում ֆինանսական օգնություն ցույց տալը(...)

ՄԱԿ-ի Կայուն զարգացման «Որակյալ կրթություն» վերտառությամբ 4-րդ նպատակի 4.1 կետի համաձայն՝ անհրաժեշտ է մինչև 2030 թ. ապահովել, որ բոլոր աղջիկները և տղաները ստանան անվճար, համապատասխան և որակյալ տարրական և միջնակարգ կրթություն, որը հանգեցնում է պատշաճ և արդյունավետ ուսումնառության նպատակների:[686]

Հետևաբար՝ կրթության իրավունքի պատշաճ իրացումը երեխայի հիմնարար իրավունքն է, որի իրացման ապահովման առաջնային և կարևորագույն օղակներից են հանրակրթական ուսումնական հաստատությունները: Նշված ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից նախկինում արձանագրվել են մի շարք խնդիրներ: Դրանցից որոշները շարունակում են մնալ արդիական:

2023 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից արձանագրվել են մի շարք խնդիրներ, մասնավորապես՝

1. Հանրակրթական ուսումնական հաստատությունների հասանելիության հետ կապված խնդիրներ,
2. Հանրակրթական ուսումնական հաստատությունների ներքին կարգապահական կանոնների, սովորողի վարքագծի կանոնների և դրանց հասանելիության հետ կապված խնդիրներ,
3. Երեխաների պարտադիր կրթությունից դուրս մնալու հետ կապված խնդիրներ:

1. Հանրակրթական ուսումնական հաստատությունների հասանելիության հետ կապված խնդիրներ

Կրթության իրավունքի իրացման համատեքստում, նախ և առաջ, ուշադրության է արժանի հանրակրթական ուսումնական հաստատությունների հասանելիության հարցը:

ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոնվենցիայի թիվ 26-րդ ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ պետությունները պետք է ստեղծեն անվտանգ, առողջ և ճկուն ենթակառուցվածք՝ արդյունավետ ուսուցման համար: Սա ներառում է հետիոտնային

[686] Տե՛ս ՄԱԿ-ի «Կայուն զարգացման նպատակները» հասանելի է հղումով՝ https://armenia.un.org/hy/sdgs/4 հղումով:

և հեծանվային երթուղիների և դպրոց հասնող հասարակական տրանսպորտի հասանելիության ապահովումը[687]:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի թիվ 04-Ն հրամանի հավելվածի 107-րդ կետի համաձայն՝ տրանսպորտային հասանելիության առավելագույն ժամանակի հաշվարկով հանրակրթական դպրոցների տեղաբաշխումը բնակավայրերում թույլատրվում է՝ տարրական դասարանների (տարրական դպրոց) համար՝ 10-15 րոպե, միջին դասարանների (միջին դպրոց) համար՝ 30 րոպե, ավագ դասարանների (ավագ դպրոց) համար՝ 45 րոպե: Մինչև տրասնպորտային միջոցների կանգառ աշակերտների հետիոտնային հասանելիության հեռավորությունը (բնակելի թաղամասում, վարչական շրջանի սահմաններում) պետք է կազմի առավելագույնը 500 մ:

Մինդեռ՝ այս առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից արձանագրվել են մի շարք խնդիրներ: Մասնավորապես, արձանագրվել է, որ համայնքների ոչ բոլոր բնակավայրերում են առկա դպրոցներ: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն, օրինակ, Լոռու մարզի 17 բնակավայրերում առկա չեն դպրոցներ: Մեկ այլ խնդիր է, երբ թեև բնակավայրերին մոտ դպրոցներ առկա են, սակայն, լիցենզիայով տրված սահմանային տեղերը լրացած են լինում: Խնդիրն առավել արդիական է տարրական դպրոցի աշակերտների պարագայում և, հատկապես, ՀՀ մարզերում:

Մարդու իրավունքների պաշտպանը 2023 թվական ընթացքում ստացել է նաև բողոքներ առ այն, որ մի շարք դեպքերում երեխաների բնակության վայրը հեռու է գտնվում հանրակրթական ուսումնական հաստատություններից, իսկ դեպի դպրոց տանող ճանապարհը վտանգավոր է երեխաների համար թափառող շների առկայության, համապատասխան երթուղու բացակայության և այլ պատճառներով:

«Հանրակրթության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1.1 մասի 1.1 կետի համաձայն՝ սովորողների ընդունելությունը կազմակերպելիս առաջնահերթություն տրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ տվյալ դպրոցից մինչև տուն սպասարկման հետիոտնային հասանելիության շառավղով բնակվող՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում ընդգրկված ընտանիքների, խնամակալության տակ գտնվող, հաշմանդամություն ունեցող կամ հաշմանդամություն ունեցող ծնողների երեխաներին:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ տվյալ դպրոցից մինչև տուն սպասարկման հետիոտնային հասանելիության շառավղով բնակվելու հանգամանքը դեռևս բավարար չէ հանրակրթական ուսումնական հաստատություն ընդունելության առաջնահերթություն ստանալու համար: Տվյալ պարագայում առաջանում են խնդիրներ՝ կապված դպրոցների հասանելիության հետ, հատկապես այն դեպքերում, երբ երեխայի ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները չեն կարող ապահովել երեխայի տեղափոխումը դպրոց: Նշված դեպքում մի կողմից սահմանվում է ծնողի պարտականությունը ապահովել երեխայի՝ պատշաճ դպրոց հաճախումը, մյուս կողմից պետության կողմից չեն ստեղծվում համապատասխան պայմաններ այդ պարտականության կատարման համար:

Օրինակ՝ Մարդու իրավունքների պաշտպանին դիմած քաղաքացիներից մեկը հայտնել է, որ ինքն աշխատում է, երեխաների մայրը ունի առողջական խնդիրներ և չի

[687] Տե՛ս ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոնվենցիայի թիվ 26-րդ ընդհանուր մեկնաբանությունը, հասանելի է հետևյալ https://www.ohchr.org/en/documents/general-comments-and-recommendations/crccgc26-general-comment-no-26-2023-childrens-rights հղումով, էջ 9:

կարող ապահովել երեխաների՝ դպրոց տեղափոխումը: Վերջինս հայտնել է, որ իրենց բնակության վայրին մոտ դպրոցում լիցենզիայով տրված սահմանային տեղերը լրացած են, իսկ առաջարկվող դպրոց տանող ճանապարհը վտանգավոր է տարրական դպրոց հաճախող երեխայի համար: Մեկ այլ դեպքում երեխայի խնամքն ու դաստիարակությունն իրականացվում էր միայն մոր կողմից, որը աշխատանքային պայմաններից ելնելով՝ չէր կարող ապահովել երեխայի տեղափոխումը դպրոց, իսկ դպրոց տանող ճանապարհը անցնում էր ամայի տարածքով, որտեղ կան նաև թափառող շներ: Ընդ որում, խնդիրն ավելի է բարդանում ՀՀ մարզերի և գյուղական բնակավայրերի պարագայում, երբ առկա չէ նաև պատշաճ գործող երթուղային ցանց:

Նշվածից հետևում է, որ 2023 թվականի ընթացքում շարունակում են արդիական մնալ դպրոցների հասանելիության հետ կապված վերը նշված խնդիրները[688]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է

- ***ՀՀ համայնքների բոլոր բնակավայրերն ապահովել երեխաների թվին համապատասխան լիցենզիայով սահմանված տեղ ունեցող դպրոցներով,***
- ***Դպրոցի և երեխայի բնակության վայրի միջև մեծ հեռավորության պարագայում ապահովել երեխաների տեղափոխումը:***

2. Հանրակրթական ուսումնական հաստատությունների ներքին կարգապահական կանոնների, սովորողի վարքագծի կանոնների և դրանց հասանելիության հետ կապված խնդիրներ

Յուրաքանչյուր հանրակրթական ուսումնական հաստատություն ունի իր ներքին կարգապահական, այդ թվում՝ սովորողի վարքագծի կանոնները, որոնք «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հաստատում է պետական ուսումնական հաստատության խորհուրդը:

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ ոչ միշտ են ներքին կարգապահական կանոնները և, հատկապես, սովորողների վարքագծի կանոնները հասանելի լինում սովորողներին և վերջիններս անգամ տեղեկացված և իրազեկ չեն լինում դրանցով սահմանված իրենց իրավունքների և պարտականությունների մասին: Միաժամանակ, անհրաժեշտ է քննարկել նաև հանրակրթական ուսումնական հաստատությունների ներքին կարգապահական կանոնների, այդ թվում՝ սովորողի վարքագծի կանոնների համապատասխանությունը երեխայի իրավունքներին և լավագույն շահին: Մասնավորապես՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ որոշ դեպքերում սովորողի վարքագծի կանոններում նախատեսվում են ոչ որոշակի և հայեցողական մեկնաբանություն ենթադրող եզրույթներ, օրինակ՝ «աշակերտին վայել տեսք», «աշակերտին վայել վարքագիծ» և այլն, որոնք էլ իրենց հերթին ոչ պատշաճ մեկնաբանման արդյունքում սահմանափակում են երեխայի իրավունքները՝ անհամաչափ պարտավորություններ ստեղծելով երեխաների համար: Օրինակ՝ հանրակրթական ուսումնական հաստատություններից մեկում հաստատության տնօրենն արգելել էր երեխային հաճախել ուսումնական հաստատություն՝ մազերն ավելի բաց երանգով ներկված լինելու պատճառով՝ մեկնաբանելով, որ սովորողը չի ներկայացել «աշակերտին

[688] Հաշմանդամություն ունեցող երեխաների՝ կրթության իրավունքի հասանելիության առնչությամբ արձանագրված խնդիրները նկարագրված են սույն հաղորդման «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ» բաժնում:

վայել տեսքով»: Այս և մի շարք այլ դեպքերում հանրակրթական ուսումնական հաստատությունների ներքին կարգապահական կանոնները և սովորողների վարքագծի կանոնները չեն համապատասխանում Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի դրույթներին և երեխայի լավագույն շահին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ իրականացնել վերահսկողություն հանրակրթական ուսումնական հաստատությունների ներքին կարգապահական կանոնների և սովորողների վարքագծի կանոնների՝ երեխաների իրավունքներին և լավագույն շահին համապատասխանության նկատմամբ,

✓ ներքին կարգապահական կանոնների և սովորողների վարքագծի կանոնների մշակումն իրականացնել համապատասխան մասնագետների միջոցով՝ ապահովելով դրանց որոշակիությունը,

✓ վարքագծի կանոնների մասին իրազեկել սովորողներին և դրանք փակցնել տեսանելի վայրերում կամ հասանելի դարձնել այլ ձևով,

✓ հանրակրթական ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների համար իրականացնել վերապատրաստումներ ներքին կարգապահական կանոնների և սովորողների վարքագծի կանոնների, ինչպես նաև դրանց՝ երեխայի իրավունքներին և լավագույն շահին համապատասխան մեկնաբանության առնչությամբ:

3. Երեխաների պարտադիր կրթությունից դուրս մնալու հետ կապված խնդիրներ

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 28-րդ հոդվածի 1-ին մաս.
Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակից պետությունները ճանաչում են երեխայի կրթության իրավունքը և հավասար հնարավորությունների հիման վրա այդ իրավունքի իրականացմանն աստիճանաբար հասնելու համար նրանք, մասնավորապես. (ե) միջոցներ են ձեռնարկում նպաստելու կանոնավոր դպրոց հաճախելուն և դպրոցը թողած սովորողների թվաքանակի նվազմանը:

ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Պարտադիր կրթության ծրագրերը և տևողությունը սահմանվում են օրենքով: Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում տասներկուամյա միջնակարգ կամ նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթությունը պարտադիր է մինչև սովորողի 19 տարին լրանալը, եթե այդ իրավունքը չի իրացվել ավելի վաղ:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ միջնակարգ կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Միավորված ազգերի կազմակերպության երեխաների իրավունքների կոմիտեի թիվ 20-րդ ընդհանուր մեկնաբանության համաձայն ՝ Կոնվենցիայի 28-րդ հոդվածի և Կայուն զարգացման 4-րդ նպատակի համաձայն՝ պետությունները պետք է ձեռնարկեն համապարփակ և նախաձեռնող միջոցառումներ՝ երեխաների՝ դպրոցում շարունակական

ներգրավվածությանը խոչընդոտող բոլոր գործոնների հասցեագրման համար և պետք է բարելավեն դպրոցում հաշվառումն ու հաճախումը, նվազեցնեն դպրոցը վաղաժամ թողնելը և ապահովեն հնարավորություն կրթությունն ավարտելու այն բաց թողածների համար:[689]

Միավորված ազգերի կազմակերպության Կայուն զարգացման 4-րդ նպատակի թիրախներից առաջինն է մինչև 2030 թ. ապահովել, որ բոլոր աղջիկները և տղաները ստանան անվճար, համապատասխան և որակյալ տարրական և միջնակարգ կրթություն, որը հանգեցնում է պատշաճ և արդյունավետ ուսումնառության նպատակների:[690]

Վերոնշյալի վերլուծությունից հետևում է, որ պետության պոզիտիվ պարտականությունն է անվճար, հասանելի և որակյալ միջնակարգ կրթության ապահովումը՝ ձեռնարկելով անհրաժեշտ բոլոր միջոցները երեխայի հանրակրթության մեջ ընդգրկման համար և բացառելով երեխաների պարտադիր կրթությունից դուրս մնալը: Հաշվի առնելով դպրոցի և կրթության բացառիկ դերը և նշանակությունը երեխայի՝ որպես անհատի ձևավորման և զարգացման գործում և առաջնորդվելով Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 29-րդ հոդվածով նախատեսված երեխայի կրթության նպատակներով՝ նշյալ ոլորտում պետության քաղաքականությունը պետք է միտված լինի երեխայի կրթության իրավունքի իրացման ապահովմանը:

ՀՀ Կառավարության կողմից 2021 թվականի փետրվարի 11-ի N 154-Ն սահմանվել է պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգը, որում ՀՀ Կառավարություն 2023 թվականի նոյեմբերի 2-ի N 1886-Ն որոշմամբ կատարվել են փոփոխություններ: Վերջինիս առնչությամբ Պաշտպանի կողմից ներկայացվել են մի շարք դիտարկումներ, որոնց մի մասն ընդունվել է, սակայն մի շարք հարցեր, այնուամենայնիվ, շարունակում են մնալ խնդրահարույց:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ուսումնական հաստատության առաջին դասարան ընդունվում են այն երեխաները, որոնց վեց տարին լրացել կամ լրանում է տվյալ օրացուցային տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ: Ավելի փոքր տարիքի երեխաների ընդունելությունը ուսումնական հաստատություն արգելվում է:

ՀՀ Կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 154-Ն որոշման Հավելվածի 2-րդ կետի համաձայն՝ պարտադիր կրթությունից դուրս մնացած են համարվում 6-ից մինչև 19 տարին չլրացած՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող հանրակրթական ուսումնական հաստատությունում (այսուհետ՝ հաստատություն), հանրակրթական հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում (այսուհետ՝ ՆՄՄԿ) չհաշվառված կամ հաշվառված, բայց մեկ ամսվա ընթացքում ամսվա համար գումարային հաշվարկով 10 աշխատանքային օրից ավելի չհաճախած անձինք:

ՀՀ Կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 154-Ն որոշման Հավելվածի 5-րդ կետի համաձայն՝ հաստատություն, ՆՄՄԿ չհաճախած կամ հաստատությունում, ՆՄՄԿ-ում հաշվառված չլինելու դեպքում պարտադիր կրթությունից դուրս մնացած անձանց բացահայտելու համար Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության,

[689] Տե՛ս Միավորված ազգերի կազմակերպության երեխաների իրավունքների կոմիտեի թիվ 20-րդ ընդհանուր մեկնաբանությունը հասանելի է https://documents.un.org/doc/undoc/gen/g16/404/44/pdf/g1640444.pdf?token=JSwbUoKsJwLgwujNgU&fe=true հղումով, էջ 18-19:

[690] Տե՛ս ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 4-րդ նպատակը» հասանելի է https://armenia.un.org/hy/sdgs/4 հղումով:

մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ ԿՏԱԿ) յուրաքանչյուր ուսումնական տարվա սեպտեմբեր և հունվար ամիսներին, համեմատելով բնակչության պետական ռեգիստրի և կրթության կառավարման տեղեկատվական համակարգի տվյալները, նախարարությանը ներկայացնում է 6-ից մինչև 19 տարին չլրացած այն անձանց տվյալները, որոնք որևէ հաստատությունում, ՆՄՄԿ-ում հաշվառված չեն:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ ԿՏԱԿ-ը յուրաքանչյուր ուսումնական տարվա սեպտեմբեր և հունվար ամիսներին, համեմատելով բնակչության պետական ռեգիստրի և կրթության կառավարման տեղեկատվական համակարգի տվյալները, նախարարությանը ներկայացնում է միայն 6-ից մինչև 19 տարին չլրացած այն անձանց տվյալները, որոնք որևէ հաստատությունում, ՆՄՄԿ-ում հաշվառված չեն: Մինչդեռ պարտադիր կրթությունից դուրս մնալու դեպքերի զգալի մասը կապված է երեխաների ծնողների կողմից երեխաներին 1-ին դասարան հաճախելու համար որևէ հանրակրթական ուսումնական հաստատությունում չհաշվառելու հետ: Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների տարիքային նվազագույն շեմը 6 տարեկանը նախատեսելը հնարավորություն չի տալիս սեպտեմբեր ամսին իրականացվող տվյալների համեմատության արդյունքում բացահայտել մինչև տվյալ ուսումնական տարվա դեկտեմբերի 31-ը 6 տարեկանը լրացող երեխաներին: Հետևաբար՝ ՀՀ Կառավարություն 2023 թվականի նոյեմբերի 2-ի N 1886-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների արդյունքում տվյալ տարիքային խմբին պատկանող երեխաները հայտնաբերվելու են հունվար ամսին և սովորողը սահմանված ժամկետից ուշ է ընդգրկվելու հանրակրթության մեջ՝ ըստ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի նոյեմբերի 24-ի N 1640-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 29-րդ կետով նախատեսված տարիքային խմբին: Մասնավորապես վերոնշյալ որոշմամբ հաստատված հավելվածի 29-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ «Հանրակրթության մասին» օրենքով սահմանված ժամկետից ուշ սովորողը հանրակրթության մեջ ընդգրկվում է մինչև տվյալ օրացուցային տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ 8 տարին լրանալու դեպքում՝ տարիքային խմբին համապատասխան դասարան՝ ընդհանուր հիմունքներով:

Պետության կողմից կանխարգելիչ միջոցառումների ներդրման և կիրառման փոխարեն հանրային իրազեկմամբ՝ սահմանված տարիքում հանրակրթական ուսումնական հաստատություն չհաճախած երեխաների համար հանրակրթության մեջ ուշ ընդգրկումը՝ որպես հնարավոր լուծում առաջարկելը կարող է առաջացնել մի շարք բացասական հետևանքներ: Մասնավորապես, Կանխարգելիչ միջոցառումների ներդրման փոխարեն երեխայի կրթության իրավունքի իրացման պատասխանատվությունը թողնվում է ծնողի հայեցողությանը: Բացի այդ, տվյալ մոտեցումը չի ապահովում ներառականության արդյունավետ մակարդակը, քանի որ նախորդ ուսումնական տարվա ընթացքում տվյալ դասարանի սովորողների, ինչպես նաև ուսումնական հաստատության մանկավարժական անձնակազմի միջև ձևավորվում են ներդաշնակ զարգացող հարաբերություններ և ուշ ընդգրկված սովորողի համար կարող են առաջանալ հարմարվելու ու ներառվելու, կրթական ծրագրի մատուցման և յուրացման դժվարություններ և լրացուցիչ ծանրաբեռնվածություն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է մշակել կառուցակարգ, որով հնարավորություն կտրվի բացահայտել մինչև տվյալ ուսումնական տարվա դեկտեմբերի

31-ը 6 տարեկանը լրացող երեխաներին՝ բացառելով հանրակրթության մեջ երեխայի ուշ ընդգրկման հետևանքով առաջացող հնարավոր ռիսկերը:

ՀՀ Կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 154-Ն որոշմամբ մինչև ՀՀ Կառավարության 2023 թվականի նոյեմբերի 2-ի N 1886-Ն որոշմամբ կատարված փոփոխությունները պարտադիր կրթությունից դուրս մնացած էին համարվում նաև 6-18 տարեկան այն երեխաները, որոնք հաշվառված են տնային ուսուցման համակարգում, սակայն ՀՀ կրթության տեսչական մարմնի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ տնային ուսուցում չի իրականացվում: Ներկայումս ՀՀ Կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 154-Ն որոշմամբ տնային ուսուցման համակարգում հաշվառված և տնային ուսուցում չստացող երեխաների՝ պարտադիր կրթությունից դուրս մնալու բացահայտման և ուղղորդման հարցերը չունեն հստակ կարգավորում: ՀՀ Կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 154-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու նախագծի հիմնավորումներում ևս բացակայում է տեղեկատվություն առ այն, թե ինչով է պայմանավորված տնային ուսուցման համակարգում հաշվառված երեխաների՝ պարտադիր կրթությունից դուրս մնալու հարցերը չկարգավորելը:

Ընդ որում, Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրականացված մշտադիտարկման այցերի արդյունքները վկայում են, որ առավել խնդրահարույց են հենց տնային ուսուցման չիրականացման հետևանքով պարտադիր կրթությունից դուրս մնալու դեպքերը, քանի որ շատ հաճախ կատարվում են միայն տնային ուսուցման ձևական պահանջները՝ առանց բովանդակային ուսուցման: ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 729-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կրթության տեսչական մարմնի կանոնադրությամբ ևս տնային ուսուցման վերահսկման ոլորտում ՀՀ կրթության տեսչական մարմնին լիազորություններ վերապահված չեն:

Ուստի անհրաժեշտ է հստակ կարգավորել նաև տնային ուսուցում ստացող երեխաների պարտադիր կրթությունից դուրս մնալու հետ կապված հարաբերությունները՝ բացառելով երեխայի պարտադիր կրթությունից դուրս մնալու դեպքերը:

Միևնույն ժամանակ, հարկ է ընդգծել, որ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունից բխում է, որ առկա է խնդիր՝ կապված պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման գործընթացների վերահսկման հետ: Կարգավորումների ուսումնասիրությունը ևս վկայում է, որ անհրաժեշտ է վերահսկողական կառուցակարգերի ներդնում: Մասնավորապես, խնդիրն այն է, որ երեխայի՝ դպրոց հաճախումն ապահովելու պարտականության կատարման համար հստակ ժամկետներ սահմանված չեն: Նախագծում բացակայում են նաև ողջ գործընթացի նկատմամբ հստակ վերահսկողության կառուցակարգերը:

Ելնելով վերոգրյալից՝ Մարդու իրավունքների պաշտպանն անհրաժեշտ է համարում պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման առավել հստակ գործընթացների և դրանց նկատմամբ շարունակական վերահսկողության գործուն կառուցակարգերի ներդնումը:

2023 թվականի ընթացքում ՄԻՊ աշխատակազմի կողմից հանրակրթական ուսումնական հաստատություններ, երեխայի խնամքի և պաշտպանություն իրականացնող հաստատություններ, այդ թվում՝ հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն իրականացված չհայտարարված այցերի ընթացքում բացահայտվել են երեխաների պարտադիր կրթությունից դուրս մնալու դեպքեր, և դպրոցի տնօրենները պարբերաբար ներկայացրել են, որ հաճախ նման դեպքերում բացակայությունները չեն արձանագրում,

քանի որ չեն ցանկանում երեխայի և ընտանիքի հետ լարված հարաբերություններ ձևավորել, և կարծում են, որ խնդիրը դպրոցի անձնակազմի միջամտությամբ կլուծվի:

Բացի այդ, ՄԻՊ աշխատակազմում արձանագրվել են դեպքեր, երբ երեխայի այլ իրավունքների ապահովման հարցով քաղաքացիների կողմից ստացված գրավոր և բանավոր բողոքների ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են նաև երեխաների պարտադիր կրթությունից դուրս մնալու դեպքեր:

Երեխաների պարտադիր կրթությունից դուրս մնալը պայմանավորված է տարբեր պատճառներով՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունենալու, այդ թվում՝ երեխայի հաշմանդամություն ունենալու, ծնողների ոչ բավարար իրազեկվածության, առկա ոչ հետևողական կառուցակարգերի, սոցիալական անապահովության և դրանով պայմանավորված՝ աշխատանքի մեջ ներգրավվելու, այլ երկրից տեղափոխված երեխաների կրթությունը հավաստող փաստաթղթերի ճանաչելիության, երեխայի կողմից կրթություն ստանալու ցանկության բացակայության և ցածր մոտիվացիայի, և մի շարք այլ պատճառներով: Նշված հանգամանքների հաշվառմամբ ևս պետությունը պետք է ձեռնարկի բոլոր հնարավոր միջոցները երեխային հանրակրթության մեջ ընդգրկելու համար՝ առաջնորդվելով երեխաների պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի կանխարգելման քաղաքականությամբ:

Օրինակ, ՄԻՊ աշխատակազմում արձանագրվել է դեպք, երբ Ռուսաստանի Դաշնությունից Հայաստանի Հանրապետություն տեղափոխված երեխայի կրթության իրավունքի իրացումը չի ապահովվել, քանի որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ներդրված չեն եղել այլ պետության պատասխանատու մարմնի հետ համագործակցության և հարցումների իրականացման անհրաժեշտ կառուցակարգեր՝ երեխայի կրթության վերաբերյալ տեղեկատվության փոխանակման և ստացած կրթությունը հավաստող փաստաթղթերի տրամադրման համար: Փոխարենը՝ ծնողին առաջարկվել է երեխայի կրթությունը շարունակել ցածր դասարանում՝ չնայած հիմնական կրթությունը ավարտելու հանգամանքին: ՄԻՊ աշխատակազմի միջամտությամբ նախարարության կողմից իրականացվել է հարցում և խնդիրը կարգավորվել է:

Արձանագրվել են նաև դեպքեր, երբ երեխան հրաժարվել է հաճախել դպրոց՝ ընտանիքի միակ աշխատողը լինելու պատճառով:

Երեխաների պարտադիր կրթությունից դուրս մնալու խնդրի առնչությամբ Պաշտպանի կողմից արձանագրված մի շարք խնդիրներ շարունակում են արդիական մնալ:

Պաշտպանն ընդգծում է, որ անհրաժեշտ է աշխատանքներ իրականացնել նաև երեխաների ծնողների հետ՝ վերջիններիս իրազեկվածության բարձրացման նպատակով: Երեխայի՝ կրթության իրավունքի իրացման ապահովման գործում պետությունը պետք է օժանդակի ծնողին, նույնիսկ այն դեպքերում, երբ վերջիններս ցածր իրազեկվածության կամ այլ պատճառներով հրաժարվում են երեխային դպրոց ուղարկել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների տարիքային շեմն իջեցնել՝ հնարավորություն տալով բացահայտել նաև մինչև տվյալ ուսումնական տարվա դեկտեմբերի 31-ը 6 տարեկանը լրացող երեխաներին, ինչը կբացառի***

հանրակրթության մեջ երեխայի ուշ ընդգրկման հետևանքով առաջացող հնարավոր ռիսկերը,

- ✓ ***կարգավորել տնային ուսուցում ստացող երեխաների՝ պարտադիր կրթությունից փաստացի դուրս մնալու դեպքերը, ներդնել փաստացի տնային ուսուցում չստացող երեխաների հայտնաբերման կառուցակարգեր,***
- ✓ ***օրենսդրական մակարդակում հայտնաբերման և ուղղորդման կառուցակարգեր նախատեսել նաև պարտադիր կրթությունից դուրս մնացած այն անձանց համար, ովքեր մեկ ամսվա ընթացքում ամսվա համար գումարային հաշվարկով 10 աշխատանքային օրից ավելի չեն հաճախել հաստատություն կամ ՆՄՄԿ,***
- ✓ ***մշակել գործուն մեխանիզմներ երեխայի պարտադիր կրթությունից դուրս գտնվելու ռիսկի մշտական առկայությունը բացառելու և կրթության իրավունքի իրացման շարունակականությունն ապահովելու համար,***
- ✓ ***սահմանել ողջ գործընթացի նկատմամբ վերահսկողական կառուցակարգեր, այդ թվում՝ հստակ ժամկետներ երեխայի դպրոց հաճախումը վերականգնելու համար,***
- ✓ ***իրազեկման և շարունակական սոցիալ-վերականգնողական աշխատանքներ իրականացնել ծնողների և երեխաների հետ, մասնավորապես՝ այն ընտանիքներում, որտեղ երեխան դուրս է մնում կրթությունից՝ ծնողի որոշմամբ,***
- ✓ ***մշակել աջակցության այնպիսի ծրագրեր, որոնց հիմքում ընկած կլինեն երեխաների՝ կրթությունից դուրս մնալու պատճառների վերացմանն ուղղված գործողությունները:***

ԳԼՈՒԽ 6. ԵՐԵԽԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ, ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ԱՐԾԱԳԱՆՔՈՒՄ

Պետությունը ստանձնել է պարտավորություն ձեռնարկել անհրաժեշտ բոլոր օրենսդրական, վարչական, սոցիալական և կրթական միջոցները՝ պաշտպանելու երեխային ծնողների, օրինական խնամակալների կամ երեխայի մասին հոգ տանող ցանկացած այլ անձի կողմից ֆիզիկական կամ հոգեկան բռնության բոլոր ձևերից, վիրավորանքից կամ չարաշահումից, հոգատարության բացակայությունից կամ անուշադրությունից, կոպիտ վերաբերմունքից կամ շահագործումից, ներառյալ՝ սեռական չարաշահումը:

Երեխայի՝ ցանկացած տեսակի բռնությունից պաշտպանված լինելու իրավունքը իր ամրագրումն է գտել միջազգային մի շարք փաստաթղթերում և ներպետական օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայում, «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում, դրանց վերաբերող մեկնաբանություններում, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում, «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքում և այլն:

Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները, գրավոր և բանավոր ստացված դիմում-բողոքները, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ստացված զանգերը վկայում են, որ երեխայի նկատմամբ բռնության բացահայտման, կանխարգելման և արձագանքման գործընթացում առկա են մի շարք համակարգային խնդիրներ, որոնց անդրադարձ է կատարվել նաև նախորդ տարիների տարեկան հաղորդումներում[691] և արտահերթ հրապարակային զեկույցներում:

2023 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից հատուկ ուշադրություն է դարձվել բուլինգի հիմնախնդրին և այդ համատեքստում կատարվել է ուսումնասիրություն: Բուլինգի հիմնախնդրի ուսումնասիրությունը պայմանավորված է Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումների արդյունքում վեր հանված խնդիրների և բուլինգի դեպքերի մասին ՄԻՊ աշխատակազմ՝ ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր ստացված բողոքների թվի աճով, ինչպես նաև պետության կողմից գործնականում բուլինգի հիմնախնդրի կանխարգելման, բացահայտման և արձագանքման կառուցակարգերի ներդրման և կատարելագործման անհրաժեշտությամբ:

Բուլինգի հիմնախնդիրի վերաբերյալ ուսումնասիրությունն իրականացվել է Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի գրասենյակի հետ համատեղ իրականացված «Երեխաների և երիտասարդների պաշտպանության բարելավում և մասնակցության խթանում» ծրագրի շրջանակում: Ուսումնասիրության արդյունքների հիման վրա մշակվել և հրապարակվել է

[691] Տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 1232-1240, հասանելի է https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf հղումով, 2024 թվականի փետրվարի 23-ի դրությամբ: Տե՛ս նաև 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 1209-1215, հասանելի է https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 2024 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանի՝ «Բուլինգի հիմնախնդիրը ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում» արտահերթ հրապարակային զեկույցը:[692]

Երեխաների նկատմամբ բռնության առնչությամբ ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն, վկայակոչելով Միավորված ազգերի կազմակերպության 2006 թվականի ուսումնասիրության (A/61/299) առաջարկությունները և ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի թիվ 13-րդ ընդհանուր մեկնաբանությունը, առաջարկել է[693]՝

- մշակել համապարփակ ազգային ռազմավարություն երեխաների նկատմամբ բռնության բոլոր ձևերը կանխելու և վերացնելու նպատակով,
- ընդունել համակարգման ազգային ծրագիր երեխաների նկատմամբ բռնության բոլոր ձևերի դեմ պայքարելու նպատակով,
- ընդունել օրենսդրություն, որով ուղղակիորեն կարգելվեն երեխաների նկատմամբ բռնության բոլոր ձևերը ցանկացած իրավիճակներում՝ առանձնակի ուշադրություն դարձնելով բռնության գենդերային բաղադրիչին:

Երեխաների նկատմամբ բռնության հարցի և ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոմիտեի ամփոփիչ դիտարկումների համատեքստում «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման մասին 2023 թվականին Մարդու իրավունքների Պաշտպանի կողմից հրապարակվել է արտահերթ հրապարակային զեկույց, որում մանրամասն ներկայացված են, թե որքանով է Հայաստանի Հանրապետությունը կատարել և շարունակում կատարել Կոմիտեի՝ 2013 թվականի ամփոփիչ դիտարկումներում տեղ գտած առաջարկությունները: Զեկույցն ընդգրկում է 2013 թվականից մինչև 2022 թվականի դեկտեմբերն ընկած ժամանակահատվածը, որի շրջանակներում ուսումնասիրվել են կոմիտեի երեք ամփոփիչ դիտարկումները, ներկայացված առաջարկությունները և դրանցից յուրաքանչյուրի կատարման վերաբերյալ ներկայացվել են դիտարկումներ և առաջարկություններ[694]:

Երեխայի նկատմամբ բռնության բացահայտման, կանխարգելման և արձագանքման կառուցակարգերի կատարելագործման անհրաժեշտությանը Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է նաև օրենսդրության կատարելագործմանն ուղղված աշխատանքների շրջանակում: Մասնավորապես՝ 2023 թվականի ընթացքում Պաշտպանը կարծիք է ներկայացրել երեխաների իրավունքների պաշտպանությանն առնչվող մի շարք իրավական ակտերի նախագծերի, այդ թվում՝ «Երեխայի իրավունքների պաշտպանության 2023 թվականի տարեկան ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ

[692] Տե՛ս «Բուլինգի հիմնախնդիրը ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում» արտահերթ հրապարակային զեկույցը հասանելի է https://www.ombuds.am/images/files/34b7bedf65b11eccc9be20dd5ee9d22a.pdf հղումով, 2024 թվականի մարտի 10-ի դրությամբ:

[693] Տե՛ս ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի 2013թ. մայիսի 27-ից հունիսի 14-ը անցկացված 63-րդ նիստում հաստատված Կոնվենցիայի դրույթների և կից երկու արձանագրությունների վերաբերյալ ամփոփիչ դիտարկումները (թիվ CRC/C/ARM/CO/3-4), հասանելի է https://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf հղումով:

[694] Տե՛ս «ՀՀ-ն կողմից երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման 2013-2022 թվականների վիճակի վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկույց, հասանելի է https://www.ombuds.am/images/files/2c1f6e50692f92df376290b6a4ec5121.pdf հղումով:

կառավարության որոշման նախագծի, «Բռնության ենթարկված երեխայի՝ պաշտպանության կամ աջակցության տրամադրման նպատակով համապատասխան մարմիններ ուղղորդման կարգը, բռնության ենթարկված երեխային տրամադրվող աջակցության ձևերը և տրամադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ:

Ներկայացված առաջարկությունները, ի թիվս այլնի, վերաբերել են նախագծերում նախատեսված սահմանումների, եզրույթների և ձևակերպումների ամբողջականության և որոշակիության ապահովմանը, երեխաների իրավունքների պաշտպանության ընթացակարգերի, բռնության ենթարկված երեխայի ուղղորդման գործընթացում ներգրավված մարմինների դերերի հստակեցմանը, երեխայի նկատմամբ բռնության դեպքերի կանխարգելման, բացահայտման, տեղեկատվության փոխանակման, արձագանքման կառուցակարգերի բարելավմանը:

Երեխայի նկատմամբ բռնության կանխարգելման, բացահայտման և արձագանքման հետ կապված հարցերը բազմիցս բարձրաձայնվել են պետական իրավասու մարմիններին հասցեագրված գրությունների, աշխատանքային քննարկումների, հրապարակումների շրջանակներում: Հանրության իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրականացվել են իրազեկման արշավներ երեխաների, մասնագետների շրջանում, կազմակերպվել են երեխաների ընդունելություններ Պաշտպանի աշխատակազմում, այցեր են իրականացվել դպրոցներ ու երեխայի խնամքի և պաշտպանություն իրականացնող հաստատություններ:

2023 թվականի ընթացքում արձանագրվել և շարունակում են արդիական մնալ.

1. երեխաների նկատմամբ բռնության բացահայտման, կանխարգելման և արձագանքման հարցում համապարփակ մոտեցումներ ապահովող ռազմավարության բացակայության և թերի օրենսդրական կարգավորումների հետ կապված խնդիրները,

2. երեխաների նկատմամբ բռնության դեպքերի բացահայտման, կանխարգելման և արձագանքման հարցում մասնագիտական պատրաստվածության հետ կապված խնդիրները,

3. իրավագիտակցության և իրազեկվածության մակարդակի բարձրացման, կարծրատիպերի վերացման հետ կապված խնդիրները,

4. երեխաների նկատմամբ բռնության վերաբերյալ ճշգրիտ վիճակագրական միասնական տվյալների բացակայության հետ կապված խնդիրները:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված՝ երեխայի նկատմամբ բռնությանն առնչվող դիմում-բողոքների, մշտադիտարկման արդյունքների ընդհանուր նկարագիրը

2023 թվականին Պաշտպանը ստացել է բազմաթիվ դիմում-բողոքներ երեխաների նկատմամբ բռնության և վատ վերաբերմունքի վերաբերյալ: Երեխաների նկատմամբ բռնության դեպքերի մասին Պաշտպանի աշխատակազմ տեղեկություններ են ստացվել նաև մամուլի, զանգվածային լրատվության մյուս միջոցների, համաշխարհային համակարգչային ցանցի ուսումնասիրությունների և մշտադիտարկման այցերի արդյունքում:

Նախորդ տարիների համեմատությամբ գրանցվել է երեխաների նկատմամբ բռնության վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված գրավոր և բանավոր դիմում-բողոքների թվի աճ:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված գրավոր և բանավոր դիմում-բողոքներով հայտնած, ինչպես նաև մշտադիտարկման արդյունքում վեր հանված դեպքերը տեղի են ունեցել հաստատություններում, այդ թվում՝ մանկապարտեզներում, դպրոցներում, երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում, ընտանիքում, ինչպես նաև թվային միջավայրում: Արձանագրվել են ֆիզիկական, սեռական և հոգեբանական, ինչպես նաև անտեսման և այլ ձևերով դրսևորված բռնություններ: Բռնությունները տեղի են ունեցել ինչպես երեխաների միջև, այնպես էլ՝ երեխաների ծնողների, երեխաների հետ աշխատող մասնագետների կողմից երեխաների նկատմամբ և այլն:

Հատկանշական է, որ երեխաների նկատմամբ բռնության վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ահազանգեր են ստացվել նաև հենց բռնության ենթարկված երեխաներից և նրանց ընկերներից, որոնք հիմնականում վերաբերել են հանրակրթական ուսումնական հաստատությունում, երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխայի նկատմամբ ֆիզիկական և հոգեբանական բռնությանը:

1. Երեխաների նկատմամբ բռնության բացահայտման, կանխարգելման և արձագանքման հարցում համապարփակ մոտեցումներ ապահովող ռազմավարության բացակայության և թերի օրենսդրական կարգավորումների հետ կապված խնդիրներ

Երեխայի՝ ցանկացած տեսակի բռնությունից պաշտպանված լինելու իրավունքն ամրագրված է միջազգային մի շարք փաստաթղթերում և ներպետական օրենսդրությամբ, մինչդեռ Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները վկայում են, որ բռնության բացահայտման կանխարգելման և արձագանքման, այդ թվում՝ բռնության դեպքի առնչությամբ տեղեկատվության փոխանակման հստակ կառուցակարգեր օրենսդրությամբ նախատեսված չեն: Բացակայում են բռնության ենթարկված երեխայի գնահատման, ուղղորդման, աջակցության տրամադրման գործընթացների կանոնակարգմանն ուղղված համապարփակ օրենսդրական կարգավորումները:

2023 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում արձանագրված բռնության դեպքերի վերլուծությունը վկայում է, որ դրանք շարունակություն են ստացել, երբեմն նաև օրենսդրական հստակ կարգավորումների բացակայությամբ պայմանավորված՝ իրավասու մարմինների կողմից գործուն միջոցներ չձեռնարկելու հետևանքով: Շատ հաճախ են ստացվում պարզաբանումներ ուսումնական հաստատություններից և համայնքներից առ այն, որ իրենք բռնության ենթարկված երեխայի ուղղորդման առնչությամբ գործողություններ չեն իրականացրել այս կամ այն պարտավորությունը չունենալու հիմնավորմամբ:

ՄԱԿ-ի երեխայի իրավունքների կոմիտեի 2011 թվականի 13-րդ ընդհանուր մեկնաբանություն.

Պետությունը պետք է նախագծի օրենսդրական, դատական, վարչական, սոցիալական և կրթական միջոցառումներ, ինչպես նաև սահմանի հստակ պարտավորություններ համակարգման մեխանիզմների վերաբերյալ[695]:

Այս կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է 2023 թվականի հունիսի 26-ին «Երեխայի իրավունքների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքով կատարված օրենսդրական փոփոխությունը, որով իրավական հիմք նախատեսվեց բռնության ենթարկված երեխայի՝ պաշտպանության կամ աջակցության տրամադրման նպատակով համապատասխան մարմիններ ուղղորդման կարգը, բռնության ենթարկված երեխային տրամադրվող աջակցության ձևերը և տրամադրման կարգը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանելու համար:

2023 թվականի ընթացքում շրջանառվել է նաև «Բռնության ենթարկված երեխայի՝ պաշտպանության կամ աջակցության տրամադրման նպատակով համապատասխան մարմիններ ուղղորդման կարգը, բռնության ենթարկված երեխային տրամադրվող աջակցության ձևերը և տրամադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նախագծով նախատեսված կարգավորումների առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանը ներկայացրել է դիտողություններ և առաջարկություններ:

Համապատասխան օրենսդրական կարգավորումների նախատեսումը, սակայն, բավարար չէ երեխայի նկատմամբ բռնության բացահայտման, կանխարգելման և արձագանքման գործընթացների պատշաճ իրականացումն ապահովելու համար: Կարևոր է նաև ռազմավարական փաստաթղթերում այդ ուղղությամբ իրականացվելիք գործողությունների նախատեսումը: Ընդ որում, նման գործողությունները ռազմավարության մեջ ներառելու անհրաժեշտությանը Մարդու իրավունքների պաշտպանը բազմիցս անդրադարձել է նաև ռազմավարական փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ ներկայացված կարծիքներում:

Հատկանշական է, որ ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 29-ի «Երեխայի իրավունքների պաշտպանության 2023 թվականի տարեկան ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1526-Լ որոշմամբ անգամ բռնության բացահայտման, կանխարգելման և արձագանքման վերաբերյալ միջոցառումներ նախատեսված չեն:

Մինչդեռ՝ ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն նույնպես, անդրադառնալով նշված հարցին, առաջարկել է մշակել համապարփակ ազգային ռազմավարություն երեխաների նկատմամբ բռնության բոլոր ձևերը կանխելու և վերացնելու նպատակով, ընդունել համակարգման ազգային ծրագիր երեխաների նկատմամբ բռնության բոլոր ձևերի դեմ պայքարելու նպատակով[696]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ ***օրենսդրությամբ նախատեսել երեխայի նկատմամբ բռնության բացահայտման, կանխարգելման և արձագանքման, այդ թվում՝ բռնության դեպքի առնչությամբ տեղեկատվության փոխանակման հստակ կառուցակարգեր,***

[695] Տե՛ս ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի թիվ 13 (2011) ընդհանուր մեկնաբանությունը: Հասանելի է https://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/crc.c.gc.13_en.pdf հղումով, 2024 թվականի մարտի 13-ի դրությամբ:

[696] Տե՛ս ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի 2013թ. մայիսի 27-ից հունիսի 14-ը անցկացված 63-րդ նիստում հաստատված Կոնվենցիայի դրույթների և կից երկու արձանագրությունների վերաբերյալ ամփոփիչ դիտարկումները (թիվ CRC/C/ARM/CO/3-4), հասանելի է https://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf հղումով:

✓ ***մշակել ռազմավարություն և միջոցառումների ծրագիր, որն ուղղված կլինի երեխայի նկատմամբ բռնության բացահայտմանը, կանխարգելմանն ու արձագանքմանը, կներառի ֆինանսական աղբյուրներն ու անհրաժեշտ ֆինանսական միջոցները, առաջընթացի ցուցանիշները, ելակետային և թիրախային արդյունքները, իրականացվելիք աշխատանքների մշտադիտարկման ընթացակարգը***:

2. Երեխաների նկատմամբ բռնության դեպքերի բացահայտման, կանխարգելման և արձագանքման հարցում մասնագիտական պատրաստվածության հետ կապված խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է որ երեխաների նկատմամբ բռնության բացահայտման, կանխարգելման և արձագանքման հետ կապված հարցերին առնչվող իրավասու մասնագետների շրջանում առկա է ոչ բավարար պատրաստվածություն և մասնագիտական հմտություններ: Խնդրահարույց է ՀՀ–ում երեխաների նկատմամբ բռնության դեպքերի հայտնաբերման, դրանց կանխարգելման և արձագանքման ուղղությամբ տարվող աշխատանքներում հստակ մեթոդաբանության և գործիքակազմերի, հաստատված ուղեցույցների բացակայությունը:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն թիվ 13-րդ ընդհանուր մեկնաբանություն.
Երեխաների նկատմամբ բռնությունը բացահայտելու, կանխելու և արձագանքելու հարցում պետությունների բացթողում է դիտարկվում մարդկային ռեսուրսների կարարողությունների ոչ բավարար ապահովումը[697]:

Պետական մարմինների տրամադրած տեղեկությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ երեխայի նկատմամբ բռնության դեպքերի հետ առնչվող անձանց աշխատանքները, հիմնականում հիմնված են սուբյեկտիվ մոտեցումների վրա: Ներդրված չեն մասնագետների շարունակական վերապատրաստման հստակ ծրագրեր: Երեխաների նկատմամբ բռնության թեմայի վերաբերյալ մասնագետների շրջանում իրականացվող վերապատրաստումները հիմնականում միջազգային և տեղական կազմակերպությունների նախաձեռնությունների և ծրագրերի արդյունք են: Իսկ պետական իրավասու մարմինների կողմից կազմակերպվող վերապատրաստումներին բոլոր մասնագետները չէ, որ ընդգրկվում են, դրանք, հիմնականում կարճատև են՝ առավելագույնը 2 կամ 3 ժամ տևողությամբ:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկատվության վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ երեխայի նկատմամբ բռնության թեմայով մարզպետի աշխատակազմերի կողմից իրականացվել են որոշակի վերապատրաստումներ, սակայն պարտադիր և միասնական ծրագիր ներդրված չէ:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի 13–րդ ընդհանուր մեկնաբանությամբ անդրադարձ է կատարվում նաև երեխաների միջև բռնության դեպքերում նրանց համար պատասխանատու մեծահասակների դերի կարևորությանը՝ բռնության յուրաքանչյուր դեպքին պատշաճ կերպով արձագանքելու, բռնությունը կանխարգելելու, բռնության

[697]Տե՛ս ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի թիվ 13 (2011) ընդհանուր մեկանաբանությունը: Հասանելի է https://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/crc.c.gc.13_en.pdf հղումով:

դեպքերի կրկնությունները բացառելու, դրանց պատժիչ բնույթ չկրելը և բռնությունը բռնության դեմ չկիրառելը ապահովելու հարցում[698]:

Երեխայի նկատմամբ բռնության նշանները ճանաչելու և արձագանքելու, բռնությունը կանխարգելելու և վաղ փուլում հայտնաբերելու հարցում առանցքային դեր ունի կրթական միջավայրը: Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման արդյունքները ցույց են տվել, որ հանրակրթական ուսումնական հաստատությունների մասնագետները կամ չեն ճանաչում բռնությունը, կամ բռնության մասին կասկածելու դեպքում չեն տիրապետում արձագանքելու համար համապատասխան մասնագիտական գիտելիքների և հմտությունների:

Հատկանշական է, որ 2023 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում արձանագրվել է միայն մեկ դեպք, երբ երեխայի նկատմամբ բռնության մասին ահազանգել է ուսուցիչը: Երեխայի հետ աշխատանքի ընթացքում պարզվել է, որ երեխան հոր կողմից ենթարկվում է բռնության:

Խնդրահարույց է նաև այն, որ «Բուլինգի հիմնախնդիրը ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում» ուսումնասիրության ընթացքում ուսուցիչների շրջանում կատարված հարցումները վկայում են, որ վերջիններս բուլինգի արձագանքման հարցում, օրինակ, ունեն կարծրատիպային մոտեցումներ, որոնք, ըստ էության, երեխայակենտրոն չեն և չեն ապահովում կարեկից միջավայր: Արձանագրվել է, որ դպրոցներում երեխաների հետ զրույցները կրում են ֆորմալ խրատական բնույթ, երեխաների միջև կոնֆլիկտների դեպքում հրավիրում են ծնողի՝ բողոքելով երեխայի վարքագծի վերաբերյալ: Հատկանշական է այն փաստը, որ որոշ ուսուցիչների պնդմամբ կան մանկավարժներ, որոնք աշակերտների հետ հաղորդակցվում են վիրավորանքների միջոցով:

Մեկ այլ խնդիր է նաև մասնագետների կողմից երեխաների նկատմամբ բռնություն կիրառելու հարցը՝ ինչպես հանրակրթական ուսումնական, այնպես էլ նախադպրոցական ուսումնական հաստատություններում:

ՀՀ կրթության տեսչական մարմնի հայտնած տեղեկատվության համաձայն՝ «Երևանի Տ. Շևչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոց» և «Երևանի թիվ 50 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ների տնօրենները նշված հաստատություններում չեն ապահովել բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտ: «Երևանի թիվ 50 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում նաև դասղեկը չի ապահովել բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորումը, պատշաճ չի կատարել պաշտոնային պարտականությունները և չի պահպանել բարեվարքության կանոնները:

Պաշտպանին ուղղված բողոքների և բանավոր հարցումների, ինչպես նաև Պաշտպանի աշխատակազմ ճանաչողական այց իրականացրած երեխաների հայտնած տեղեկությունների վերլուծության արդյունքում պարզ է դարձել, որ դպրոցներում և մանկապարտեզներում բազմաթիվ են մասնագետների կողմից երեխաների նկատմամբ բռնության դրսևորումները: Այսպես, օրինակ, 2023 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ այցելած երեխաները, որպես հիմնական խնդիր նշել են նաև ուսուցիչների կողմից աշակերտների նկատմամբ թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեբանական բռնության կիրառումը, դրանից պաշտպանվելու մեխանիզմների բացակայությունը և իրազեկման պակասը:

---

[698] Տե՛ս ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի թիվ 13 (2011) ընդհանուր մեկնաբանությունը: Հասանելի է https://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/crc.c.gc.13_en.pdf հղումով:

Պաշտպանի աշխատակազմում երեխայի նկատմամբ վատ վերաբերմունքի և բռնության դեպքեր են արձանագրվել նաև ոստիկանության ծառայողների կողմից, այդ թվում՝ հավաքին մասնակցության իրավունքի իրացման ընթացքում:

Խնդրահարույց է նաև Երևանի քաղաքապետարանի պատասխանն առ այն, որ Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատություններում հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ խտրականության, ծաղրի և խարանի, ինչպես նաև բռնության վերաբերյալ բողոքներ չեն գրանցվել, այնպիսի պայմաններում, երբ 2023 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացվել են բռնության վերաբերյալ բողոքներ հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողներից, ովքեր հայտնել են, որ հարցի առնչությամբ դիմել են նաև Երևանի քաղաքապետարան, սակայն խնդիրը լուծում չի ստացել:

Վերոնշյալը վկայում է, որ թեև պետության կողմից իրականացվող միջոցներին, ինչպիսիք են Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի և Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից 1,924 հաստատություններում իրականացված մասնագիտական կարողությունների կատարելագործմանն ու արդիականացմանն ուղղված 35,906 անձանց համար 2,793 վերապատրաստման դասընթացները, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի «Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների ներառող դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագրի շրջանակներում «Բուլինգի դրսևորումները ուսումնական հաստատություններում և դրանց կանխարգելման ուղիները» թեմայով ՀՀ թվով 132 հանրակրթական ուսումնական հաստատությունների 2,266 ուսուցիչների և ուսուցչի օգնականների համար դասընթացների իրականացումը, Երևանի ենթակայությամբ գործող հանրակրթական (այդ թվում՝ նախադպրոցական) ուսումնական հաստատություններում բռնության մասին հաղորդում պարունակող բողոքների շրջանակում իրավապահ մարմինների հետ համագործակցությունը և այլն, այնուամենայնիվ 2023 թվականի ընթացքում երեխաների նկատմամբ բռնության դեպքերի բացահայտման, կանխարգելման և արձագանքման հարցում մասնագիտական պատրաստվածության հետ կապված վերը նշված խնդիրները շարունակում են մնալ արդիական:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ***երեխաների հետ աշխատող և երեխայի նկատմամբ բռնության կանխարգելման, բացահայտման և արձագանքման պարտավորություն ունեցող բոլոր մասնագետների համար պարտադիր դասընթացների և պարբերական վերապատրաստումների անցկացում:***
- ***երեխայի հետ աշխատող մասնագետների համար ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերում երեխայի նկատմամբ բռնության վերաբերյալ թեմաների ներառում:***
- ***երեխաների նկատմամբ բռնության դեպքերի հայտնաբերման, դրանց կանխարգելման և արձագանքման ուղղությամբ տարվող աշխատանքների հստակ մեթոդաբանության, գործիքակազմերի և ուղեցույցների մշակում և պարտադիր կիրառության ապահովում:***

✓ ուսումնական հաստատությունների և պետական մարմինների աշխատողների կողմից երեխայի նկատմամբ որևէ տեսակի բռնություն կիրառելու դեպքերի հաղորդման և արձագանքման համար հստակ կառուցակարգերի ներդնում՝ ապահովելով գաղտնիությունն ու բացառելով երեխայի թիրախավորումը:

3. Իրավագիտակցության և իրազեկվածության մակարդակի բարձրացման, կարծրատիպերի վերացման հետ կապված խնդիրներ

Բռնության հիմնախնդրի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները, ինչպես նաև ստացված գրավոր և բանավոր ահազանգերը վկայում են, որ ծնողները և երեխաները հաճախ չգիտեն երեխայի նկատմամբ բռնության դրսևորումների և դրանց անթույլատրելիության մասին: Ծնողները բռնության մասին ահազանգում են հիմնականում անելանելի վիճակում, երբ բռնությունը տեղի է ունենում պարբերաբար և հանգեցնում է բացասական հետևանքների:

Օրինակ, ծնողը, դիմելով Մարդու իրավունքների պաշտպանին, հայտնել է, որ իր երեխայի նկատմամբ դպրոցում շարունակաբար կիրառվում է բռնություն և ինքը, այլ ելք չունենալով, որոշել է երեխային տեղափոխել այլ դպրոց: Մարդու իրավունքների պաշտպանի միջամտության արդյունքում խնդիրը կարգավորվել է և երեխան շարունակում է հաճախել նույն դպրոցը:

Արձանագրվել է, որ շատ հաճախ երեխաները բռնություն համարում են միայն ֆիզիկական բռնությունը, իսկ բուլինգի դրսևորումները, առցանց բռնությունը, սոցիալական հարթակներում իրար թիրախավորելը և այլն, առհասարակ բռնություն չեն համարում: Արձանագրվել են նաև դեպքեր, երբ երեխաները թեև գիտակցել են, որ իրենց նկատմամբ բռնություն է կիրառվում, սակայն չեն բարձրաձայնել այդ մասին՝ վախենալով հասարակության կողմից թիրախավորվելու վտանգից:

Ստացված տեղեկությունները վկայում են նաև այն մասին, որ շատ հաճախ երեխայի նկատմամբ բռնությունը հասարակության մեջ ձևավորված կարծրատիպային մտածողության հետևանք է: Բռնությունը հաճախ դիտարկվում է որպես դաստիարակության միջոց և, երբեմն, նաև խրախուսվող արարք:

Շատ հաճախ, հասարակությունում ձևավորված մտածողության հետևանքով հոգեբանական բռնության են ենթարկվում հաշմանդամություն ունեցող երեխաները, երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում բնակվող երեխաները և այլն:

Հասարակության նորմերի և արժեհամակարգի փոփոխության ուղղությամբ գործողությունների իրականացման անհրաժեշտությունը արձանագրված է նաև «Երեխաների նկատմամբ բռնության վերացման յոթ ռազմավարությունների իրականացման գործողությունների պլանում»: Այն համապարփակ ռազմավարություն է,

որը մշակվել է երեխաների պաշտպանության համաշխարհային կառույցների կողմից և բխում է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայից[699]:

Այդ նպատակով Մարդու իրավունքների պաշտպանը պարբերաբար իրականացնում է իրազեկման միջոցառումներ, այցեր, կազմակերպում է երեխաների ընդունելություն աշխատակազմում և այլն:

Հարկ է փաստել, որ 2023 թվականի ընթացքում արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ երեխաները իրենք են դիմել Մարդու իրավունքների պաշտպանին՝ բարձրաձայնելով իրենց նկատմամբ կիրառվող բռնության մասին: Երեխաները բարձրաձայնել են հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների կողմից կիրառված հոգեբանական բռնության դեպքերի, խտրական մոտեցումների, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում տեղի ունեցած բռնության դեպքերի մասին:

Հատկանշական է, որ բռնության մասին բարձրաձայնած երեխաների մեծ մասը մասնակցել են Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրականացված իրազեկման հանդիպումներին և արշավներին:

Վերոնշյալը վկայում է, որ թեև պետության կողմից իրականացվող միջոցառումներին, ինչպիսիք են երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում, կրթական հաստատություններում երեխայի իրավունքների վերաբերյալ պաստառներ փակցնելը, այդ գործընթացում երեխաներին ներգրավելը, իրազեկման հանդիպումներ կազմակերպելը, տեսանյութեր հրապարակելը, «Ուսումնական հաստատությունների մանկավարժների և հոգեբանների համար՝ ընտանիքում բռնության դեպքերին արձագանքելու և ուղղորդելու վերաբերյալ» ձեռնարկի հիման վրա «Սեռական բռնության դեպքերի վարման առանձնահատկությունները» Հանրապետական մանկավարժահոգեբանական և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների 20 վերապատրաստող-հոգեբանների համար վերապատրաստման դասընթացներ կազմակերպելը, հանրակրթական դպրոցների 8-11-րդ դասարաններում դասավանդվող «Առողջ ապրելակերպ» դասընթացի 10-րդ և 11-րդ դասարանների նյութերում սեռական բռնության և սեռական ոտնձգությունների վերաբերյալ թեմաներ ներառելը, «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» միջոցառման շրջանակներում երեխաների ծնողների համար՝ «Ոչ բռնությանը» թեմայով իրազեկող և կանխարգելիչ հանդիպումներ կազմակերպելը և այլն, այնուամենայնիվ 2023 թվականի ընթացքում Իրավագիտակցության և իրազեկվածության մակարդակի բարձրացման, կարծրատիպերի վերացման հետ կապված վերը նշված խնդիրները շարունակում են մնալ արդիական:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ ներդնել հստակ ծրագրեր հասարակությունում, հաստատություններում առկա բռնությունը խրախուսող արժեհամակարգի և երեխայի լավագույն շահից չբխող կարծրատիպերի փոփոխության ուղղությամբ,

✓ երեխաներին մշտապես իրազեկել իրենց իրավունքների վերաբերյալ մանկապարտեզներում և դպրոցներում՝ հասարակագիտության դասընթացների շրջանակներում, ինչպես նաև այլ միջոցառումների ընթացքում:

[699] Տե՛ս «Երեխաների նկատմամբ բռնության վերացման 7 ռազմավարությունների իրականացման գործողությունների պլան» ձեռնարկ: Հասանելի է https://www.end-violence.org/sites/default/files/paragraphs/download/9789241514095-eng.pdf հղումով:

4. Երեխաների նկատմամբ բռնության վերաբերյալ ճշգրիտ վիճակագրական միասնական տվյալների բացակայության հետ կապված խնդիրներ

Պաշտպանի աշխատակազմում ուսումնասիրված դեպքերը վկայում են, որ բռնության պատշաճ արձագանքման և կանխարգելման հարցում կարևոր նշանակություն ունի դրանց մասին տեղեկատվության փոխանցման միջգերատեսչական կառուցակարգերի ձևավորումը և ճշգրիտ, համապարփակ վիճակագրության վարումը:

Մինչդեռ, ՀՀ-ում երեխաների նկատմամբ բռնության վիճակագրություն առանձին չի վարվում, չեն հավաքագրվում վիճակագրական տվյալներ բռնության տեսակների, բռնության ենթարկված երեխաների սեռի, տարիքի, բռնության ենթարկողի կարգավիճակի և այլ կարևոր տվյալների վերաբերյալ: Այդ մասին է վկայում նաև ՀՀ վիճակագրական կոմիտեի (Արմստատ) տրամադրած տեղեկությունն առ այն, որ Արմստատի կողմից տնօրինվող տեղեկատվական շտեմարաններում երեխաների նկատմամբ բռնության վերաբերյալ տվյալներ առկա չեն, սակայն առկա է տեղեկություն գրանցված ընտանեկան բռնության դեպքերի քանակի վերաբերյալ (մասնավորապես՝ ծնողի կողմից զավակի նկատմամբ գրանցված ընտանեկան բռնության դեպքերը)[700]:

Երեխայի նկատմամբ բռնության վերաբերյալ որոշ տվյալներ հավաքագրվում են երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններից:

ՀՀ կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի թիվ 1324-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ չափորոշիչի 7-րդ կետի համաձայն՝ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունը պետք է ունենա երեխաների հանդեպ և նրանց միջև բռնության կասկածելի կամ հաստատված դեպքերի գրանցման և իրավասու մարմիններին նման դեպքերի մասին հաղորդումների գրանցամատյան:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2017 թվականի հունվարի 27-ի թիվ 7-Ա/1 և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017 թվականի ապրիլի 28-ի թիվ 464Ա/2 համատող հրամանով հաստատվել է երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող և (կամ) սովորող երեխաների հանդեպ կամ նրանց միջև բռնության կասկածելի դեպքերի հայտնաբերման ընթացակարգը և բռնության կասկածելի և հաստատված դեպքերի գրանցման մատյանի ձևը:

Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները, ինչպես նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների կողմից, հիմնականում, արձանագրվում են միայն ֆիզիկական բռնությունները, այն էլ դրանց ոչ բոլոր դրսևորումները: Արձանագրվել են նաև դեպքեր, երբ հաստատությունները, ընդհանրապես բռնության կասկածելի և հաստատված դեպքերի գրանցման մատյան չեն վարել: Օրինակ՝ «Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրականացված չհայտարարված այցի օրվա դրությամբ հաստատությունում նման մատյան չէր վարվում:

Հարկ է նշել նաև, որ անգամ նման ոչ պատշաճ արձանագրումների պայմաններում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տվյալների համաձայն՝ երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում արձանագրվել են 16 բռնության դեպքեր:

[700] Հասանելի է Արմստատի պաշտոնական կայքէջում https://armstat.am/file/article/sv_09_23a_540.pdf հղումով, էջ 193:

Երեխայի նկատմամբ բռնության վերաբերյալ տեղեկատվություն հավաքագրվում է նաև ՀՀ առողջապահության նախարարի 2022 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 74-Ն հրամանով հաստատված երեխայի նկատմամբ բռնության կասկածի դեպքում հիվանդության պատմագրի ձևի լրացման միջոցով, որը ՀՀ առողջապահության նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ այժմ թվայնացման փուլում է:

Առողջապահություն նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ նշված հրամանով հաստատված պատմագրի ներդիրը լրացվում է ավագ բուժաշխատողի կողմից: ՄԻնչդեռ, երեխայի բռնության կասկածի դեպքում վերջիններիս կողմից լրացված տեղեկատվության, ինչպես նաև իրավապահ մարմիններին դեպքը ներկայացնելու վերաբերյալ Առողջապահության նախարարությանը տեղեկատվություն տրամադրելու ընթացակարգ նախատեսված չէ:

Երեխաների նկատմամբ բռնության վերաբերյալ տեղեկատվություն այժմ հավաքագրվում և հրապարակվում է ՀՀ քննչական կոմիտեի կողմից, կիսամյակի և տարվա կտրվածքով: Տեղեկատվությունը հավաքվում է նաև ՀՀ դատախազության և ՀՀ ոստիկանության կողմից:

Ըստ ՀՀ դատախազության և ՀՀ քննչական կոմիտեի տրամադրած տեղեկատվության՝ 2023 թվականին քննված 1159 քրեական վարույթով որպես տուժող ներգրավվել է 686 երեխա (ՀՀ քրեական օրենսգրքի 133-րդ, 162-րդ, 166-րդ, 167-րդ, 171-րդ, 189-րդ, 191-րդ, 194-րդ, 195-րդ, 196-րդ, 198-րդ, 199-րդ, 200-րդ, 201-րդ, 238-րդ, 239-րդ, 241-րդ, 247-րդ, 251-րդ, 300-րդ և 342-րդ հոդվածների հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթներով):

1159 քրեական վարույթից 78-ն ուղարկվել է դատարան, 517-ը կարճվել է, 151-ով կատարվել են վարույթային և ապացուցողական բոլոր գործողությունները, 9-ն ուղարկվել է այլ մարմին, 36-ը՝ միացվել է, 363-ի նախաքննությունը շարունակվում է:

Դատարան ուղարկված 78 վարույթներից 1-ը քննվել է սպանության, 5-ը՝ առողջությանը ծանր վնաս պատճառելու, 2-ը՝ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու, 4-ը՝ մարդուն առևանգելու, 1-ը՝ ազատությունից ապօրինի զրկելու, 10-ը՝ ֆիզիկական ներգործության, 14-ը՝ սեքսուալ բնույթի գործողությունների, 1-ը՝ խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքի կամ ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով երեխայի վաճառքի, 40-ը՝ այլ հանցագործությունների դեպքերի առթիվ:

517 կարճված վարույթներից 1-ը քննվել է սպանության, 8-ը՝ ինքնասպանության հասցնելու, 7-ը՝ առողջությանը ծանր վնաս պատճառելու, 16-ը՝ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու, 12-ը՝ մարդուն առևանգելու, 1-ը՝ ազատությունից ապօրինի զրկելու, 52-ը՝ ֆիզիկական ներգործության, 4-ը՝ սեքսուալ բնույթի գործողությունների, 1-ը՝ անչափահասին հանցանքի կատարմանը հակելու, 1-ը՝ երեխային հակահասարակական գործողություններ կատարելուն ներգրավելու, 1-ը՝ ծնողներից կամ այն անձանցից, որոնց վրա դրված է երեխայի դաստիարակության և խնամքի պարտականությունը, երեխային ապօրինի բաժանելու կամ երեխային փոխելու, 13-ը՝ երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու, 2-ը՝ ալիմենտ վճարելուց խուսափելու, 398-ը՝ այլ հանցագործությունների դեպքերի առթիվ:

ՀՀ ներքին գործերի նախարարությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ ըստ ինֆորմացիոն կենտրոնի հաշվետվության՝ արձանագրվել է երեխաների նկատմամբ բռնության 538 դեպք: Նախարարությունը հայտնել է նաև, որ 2023 թվականի ընթացքում

գրանցվել է ընտանիքում անչափահասների նկատմամբ բռնության 16 դեպք, որից 1-ը ազատությունից ապօրինի զրկել, 2-ը՝ հոգեկան ներգործություն, 9-ը՝ ֆիզիկական ներգործություն, 1-ը՝ սեքսուալ բնույթի բռնի գործողություններ, 1-ը՝ պոռնկագրական նյութեր կամ առարկաներ պատրաստել, տարածելը և պահպանելը, 1-ը՝ առողջությանը թեթև վնաս պատճառելը, 1-ը՝ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը: Նախարարությունը հայտնել է նաև, որ նշված դեպքերի վերաբերյալ այլ տեղեկություններով կենտրոնացված հաշվառում չի իրականացվում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը տրամադրել է տեղեկատվություն առ այն, որ 2023 թվականի ընթացքում 6 երեխա ենթարկվել է մարդկանց թրաֆիքինգի և շահագործման, որից 3-ը՝ արական սեռի, իսկ մյուս 3-ը՝ իգական: Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված երեխաներն իրենց ծնողների հետ տեղավորվել են մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց համար գործող ապաստարանում (եթե շահագործվել են իրենց ծնողների հետ միասին), ինչպես նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը ենթակա երեխաների խնամքի կենտրոններում: Երեխաներին խնամքի կենտրոններ տեղափոխելու բոլոր դեպքերում որոշումը կայացվել է՝ երեխայի լավագույն շահից ելնելով:

Վերոգրյալի վերլուծությունից հետևում է, որ տարբեր գերատեսչությունների կողմից հավաքագրված տեղեկատվությունը չունի միասնական մոտեցում և հնարավորություն չի տալիս բացահայտելու երեխայի նկատմամբ բռնության իրական պատկերը:

Հատկանշական է, որ ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից մշակվել և 2023 թվականին հրապարակվել է «Երեխաների նկատմամբ բռնության միջազգային դասակարգումը» վերտառությամբ փաստաթուղթը, որով նախանշվում են բռնության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման նվազագույն տվյալներ: Սոցիալական արդարության ավելի արդյունավետ ապահովման համար փոխակերպվող մոնիթորինգի տարածքային տվյալների բանկի (TransMonEE) ցուցիչները պետք է լինեն ավելի լայն ու համապարփակ, դետալացված[701]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է ապահովել երեխայի նկատմամբ բռնության առանձին վիճակագրության վարումը՝ հավաքագրելով բռնության տեսակների, բռնության ենթարկված երեխաների սեռի, տարիքի, բռնության ենթարկողի կարգավիճակի և այլ կարևոր տվյալների վերաբերյալ առանձնացված տեղեկատվություն:

[701] Տե՛ս «Երեխաների նկատմամբ բռնության միջազգային դասակարգում», ՅՈՒՆԻՍԵՖ, 2023, հասանելի է https://www.transmonee.org/media/1236/file/International%20Classification%20of%20Violence%20against%20Children.pdf հղումով:

ԳԼՈՒԽ 7. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Պետությունը, վավերացնելով «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, պարտավորվել է ճանաչել մեղադրվող կամ քրեական օրենսդրությունը խախտած համարվող յուրաքանչյուր երեխայի իրավունքը՝ արժանանալու այնպիսի վերաբերմունքի, որը նպաստում է նրա արժանապատվության և նշանակալիության զգացումի զարգացմանը, երեխայի մեջ ամրապնդում է հարգանքը մարդու իրավունքների և այլոց հիմնարար ազատությունների նկատմամբ, և որի դեպքում հաշվի է առնվում երեխայի տարիքը և հասարակության մեջ նրա վերաինտեգրման ու հետագա դրական դեր խաղալուն նպաստելու ցանկալիությունը:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի՝ թիվ 24 ընդհանուր մեկնաբանություն.

Երեխաները մեծահասակներից տարբերվում են իրենց ֆիզիկական և հոգեբանական զարգացմամբ: Նման տարբերությունները հիմք են տարբերակված և անհատականացված մոտեցմամբ առանձին համակարգ ունենալու համար:[702]

Ուստի, երեխայի մասնակցությամբ արդարադատության իրականացումը պետք է կրի վերականգնողական բնույթ, ապահովի երեխայի սոցիալական ներառումը և բխի «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով սահմանված բոլոր երաշխիքներից:

Հարկ է ընդգծել, որ անչափահասների արդարադատության համակարգին առնչվում են ոչ միայն իրավախախտ անչափահասները, այլ նաև անչափահաս տուժողները և վկաները: Մասնավորապես՝ ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակի՝ հանցագործության երեխա տուժողների և վկաների նկատմամբ վերաբերմունքի վերաբերյալ դատախազների և դատավորների վերապատրաստման ծրագրի համաձայն՝ արդար և արդյունավետ քրեական արդարադատության համակարգն այն համակարգն է, որը հարգում է հանցագործության տուժողների և վկաների, ինչպես նաև կասկածյալների և իրավախախտների իրավունքները: Նման համակարգը կենտրոնանում է տուժողներին և վկաներին օգնելու և պաշտպանելու անհրաժեշտության վրա:[703] Երեխա տուժողների և վկաների՝ անչափահասների արդարադատության համակարգի մաս հանդիսանալու հանգամանքն արձանագրվել է նաև ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոմիտեի թիվ 24 ընդհանուր մեկնաբանությամբ:

Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից անչափահասների արդարադատության ոլորտում արձանագրվել են մի շարք խնդիրներ, մասնավորապես՝

1. կանխարգելիչ համայնքային ծառայությունների հետ կապված խնդիրներ,
2. օպերատիվ տեղեկատու քարտադարանում հաշվառման վերցվող անձանց շրջանակի հետ կապված խնդիրներ,
3. որպես խափանման միջոց տնային կալանք կիրառելու դեպքում երեխայի կրթության իրավունքի իրացման հետ կապված խնդիրներ,

[702] Տե՛ս ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոմիտեի թիվ 24 ընդհանուր մեկնաբանությունը, որը հասանելի է https://docstore.ohchr.org/SelfServices/FilesHandler.ashx?enc=6QkG1d%2FPPRiCAqhKb7yhsqIkirKQZLK2M58RF%2F5F0vEnG3QGKUxFivhToQfjGxYjV05tUAIgpOwHQJsFPdJXCiixFSrDRwow8HeKLLh8cgOw1SN6vJ%2Bf0RPR9UMtGkA4 հղումով:

[703] Տե՛ս ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակի՝ հանցագործության երեխա տուժողների և վկաների նկատմամբ վերաբերմունքի վերաբերյալ դատախազների և դատավորների վերապատրաստման ծրագիրը, հասանելի է https://www.unodc.org/documents/justice-and-prison-reform/Training_Programme_on_the_Treatment_of_Child_Victims_and_Child_Witnesses_of_Crime_-_Prosecutors_anf_Judges.pdf հղումով, էջ 16:

4. իրավախախտում կատարած անչափահասների վերասոցիալականացման ծրագրերի իրականացման հետ կապված խնդիրներ,

5. Տուժող և վկա երեխաների հետ վերականգնողական աշխատանքի իրականացման և անչափահասների մասնակցությամբ քննչական գործողությունների իրականացման հետ կապված խնդիրներ:

1. Կանխարգելիչ համայնքային ծառայությունների հետ կապված խնդիրներ

Հայաստանի Հանրապետությունում անչափահասների հանցավորության կանխարգելմանն ուղղված աշխատանքներ և միջոցառումներ իրականացվում են ՀՀ ոստիկանության կողմից, որոնք իրականացվում են հիմնականում, իրազեկման միջոցառումների, արշավների և անչափահասների հետ զրույցների ձևաչափով:

Մինչդեռ՝ ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոմիտեի 24-րդ ընդհանուր մեկնաբանությամբ անդրադարձ է կատարվել երեխաների շրջանում իրավախախտումների կանխարգելման, ներառյալ վաղ միջամտության ուղղությամբ ծրագրերին: Մասնավորապես, նշված է, որ անդամ պետությունները պետք է մշակեն ապացույցների վրա հիմնված միջամտության ծրագրեր, որոնք արտացոլում են ոչ միայն նման վարքագծի բազմաթիվ հոգեսոցիալական պատճառները, այլև պաշտպանությանն ուղղված գործոնները, որոնք կարող են բարձրացնել այդպիսի միջամտության ճկունությունը:

Քրեական պատասխանատվության նվազագույն տարիքից ցածր երեխաների համար վաղ միջամտությունը պահանջում է երեխայակենտրոն և բազմամասնագիտական արձագանք վարքի առաջին նշաններին, որը, եթե երեխան գերազանցեր քրեական պատասխանատվության նվազագույն տարիքը, կդիտարկվեր որպես հանցագործություն[704]:

Պաշտպանի աշխատակազմում անչափահասների շրջանում հանցավորության կանխարգելման ուղղությամբ կատարված մշտադիտարկումները վկայում են, որ Հայաստանի Հանրապետությունում դեռևս ներդրված չեն հստակ ծրագրեր, այդ թվում՝ համայնքահեն, որոնք կապահովեն բազմամասնագիտական աշխատանքի իրականացումը իրավախախտ կամ հանցավոր վարքագիծ դրսևորած երեխաների հետ, ինչպես նաև հետևողական միջոցառումների իրականացումը երեխաների շրջանում հանցավորության կանխարգելման ուղղությամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝ մշակել և ներդնել անչափահասների շրջանում հանցավորության կանխարգելմանն ուղղված ծրագրեր:

2. Օպերատիվ տեղեկատու քարտադարանում հաշվառման վերցվող անձանց շրջանակի հետ կապված խնդիրներ

ՀՀ Կառավարության 2023 թվականի հունիսի 1-ի թիվ 893-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 18-րդ կետի համաձայն՝ անչափահասների և անչափահասի վրա բացասական ազդեցություն ունեցող ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի նկատմամբ վարվում է հաշվառում՝ կանխարգելիչ աշխատանքներ իրականացնելու և անձի հետագա վարքագծի հակահիրավական դրսևորումները կանխելու նպատակով:

[704] Տե՛ս ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոմիտեի թիվ 24 ընդհանուր մեկնաբանությունը, հասանելի է https://docstore.ohchr.org/SelfServices/FilesHandler.ashx?enc=6QkG1d%2FPPRiCAqhKb7yhsqIkirKQZLK2M58RF%2F5F0vEnG3QGKUxFivhToQfjGxYjV05tUAIgpOwHQJsFPdJXCiixFSrDRwow8HeKLLh8cgOw1SN6vJ%2Bf0RPR9UMtGkA4 հղումով:

Նույն որոշման հավելվածով հաստատված կարգի 24-րդ կետի համաձայն՝ հաշվառման քարտ կազմվում է 12-ից մինչև 18 տարեկան անչափահասների կամ անչափահասների վրա բացասական ազդեցություն ունեցող ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի նկատմամբ:

Նշվածի վերլուծությունից հետևում է, որ անչափահասի նկատմամբ հաշվառման քարտ բացելու նվազագույն տարիքը 12 տարեկանն է:

Մինչդեռ ՀՀ կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի թիվ 933-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 4-րդ կետի համաձայն՝ օպերատիվ տեղեկատու քարտադարանում հաշվառման վերցվող անձինք են՝ այն անձինք, որոնց նկատմամբ քրեական հետապնդում չի հարուցվել կամ քրեական հետապնդումը դադարեցվել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 10-14-րդ կետերով (այսուհետ՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքերով):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական հետապնդում չպետք է հարուցվի, իսկ հարուցված քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, եթե՝ (...) 11) անձն արարքի կատարման պահին չի հասել քրեական պատասխանատվության ենթարկելու՝ օրենքով նախատեսված տարիքին: Միաժամանակ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի 1-9-րդ կետերով նախատեսված հանգամանքները ռեաբիլիտացնող են:

Նշվածից հետևում է, որ արարքի կատարման պահին քրեական պատասխանատվության ենթարկելու՝ օրենքով նախատեսված տարիքին հասած չլինելը ոչ ռեաբիլիտացնող հանգամանք է:

Հետևաբար՝ ՀՀ կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի թիվ 933-Ն որոշման համաձայն՝ օպերատիվ տեղեկատու քարտադարանում հաշվառման վերցվում են նաև այն անչափահասները, ովքեր արարքի կատարման պահին քրեական պատասխանատվության ենթարկելու՝ օրենքով նախատեսված տարիքին չեն հասել, որը ներառում է նաև 12 տարեկանը չլրացած երեխաներին:

Ընդ որում, նման դեպքեր կարող են գրանցվել նաև դեռևս վաղ մանկության շրջանում գտնվող երեխաների դեպքում, ում հաշվառման վերցնելը ոչ միայն չի բխում երեխայի լավագույն շահից, այլ նաև չի ապահովում իրավական որոշակիությունը, մի դեպքում՝ նախատեսելով 12 տարեկանից բարձր տարիքային շեմ, մյուս պարագայում՝ ցանկացած տարիքի անչափահասի:

ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության տրամադրած տվյալների համաձայն՝ օպերատիվ տեղեկատու քարտադարանում 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հաշվառված է մինչև 12 տարեկան 4 երեխա, որից 3-ը արական, 1-ը իգական սեռի ներկայացուցիչ:

Մինչդեռ՝ բազմաթիվ միջազգային փաստաթղթերի համաձայն՝ որպես նման տարիքային շեմ «խորհուրդ է տրվում» դիտարկել 14, 15 կամ 16 տարեկանը[705]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է անչափահասների հաշվառման հարցում որդեգրել միասնական մոտեցում՝ առաջնորդվելով երեխայի լավագույն շահով և միջազգային փաստաթղթերով սահմանված չափորոշիչներով:

[705] Տե՛ս, Երեխայի իրավունքների կոմիտեի «Երեխաների իրավունքները անչափահասների գործերով արդարադատությունում» 10-րդ ընդհանուր մեկնաբանությունը, ՄԱԿ, փաստաթուղթ թիվ CRC/C/GC/10, 2007, պարբերություն 30: Եվրոպայի խորհուրդի թիվ CM(2008) 128 փաստաթղթի, հավելված 1:

3. Որպես խափանման միջոց տնային կալանք կիրառելու դեպքում երեխայի կրթության իրավունքի իրացման հետ կապված խնդիրներ

ՀՀ արդարադատության նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ որպես այլընտրանքային խափանման միջոց 6 անչափահասի նկատմամբ կիրառվել է տնային կալանք:

Այս համատեքստում հարկ է քննարկել տնային կալանքի ներքո գտնվող անչափահասների կրթության իրավունքի իրացման առանձնահատկությունները, ինչն օրենսդրական մակարդակում կարգավորված չէ:

Ընդ որում, օրենսդրական կարգավորումներով առաջնորդվելու պարագայում հնարավոր չէ նաև տնային կալանքի ներքո գտնվող անչափահասի կրթության իրավունքն ապահովել տնային ուսուցման կարգին համապատասխան, քանի որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի, սպորտի նախարարի 2022 թվականի օգոստոսի 29- ի թիվ 31-Ն հրամանով հաստատված հավելվածի 1-ին կետի համաձայն՝ սույն կարգով կարգավորում են հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ Հաստատություն) հաշվառված, առողջական վիճակի, ինչպես նաև բուժման պատճառով Հաստատություն հաճախել չկարողացող սովորողների (այսուհետ՝ սովորող) ուսումնառությունը տնային, հիվանդանոցային (այդ թվում՝ արտերկրում) (այսուհետ՝ տնային պայմաններ) իրականացնելու վերաբերյալ իրավահարաբերությունները: Հետևաբար՝ տնային ուսուցում, ըստ օրենսդրական կարգավորումների, կարող են անցնել միայն առողջական վիճակի կամ բուժման պատճառով Հաստատություն հաճախել չկարողացող սովորողները, ինչն ակնհայտորեն խախտում է երեխայի սահմանադրորեն երաշխավորված կրթության իրավունքը՝ որպես խափանման միջոց տնային կալանք կիրառելու դեպքում:

Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեի կողմից ընդունված «Եվրոպական կանոններ սանկցիաների կամ միջոցների ենթարկված իրավախախտների անչափահասների վերաբերյալ» թիվ CM/Rec(2008)11 հանձնարարականում նշված է, որ նշված կանոնների նպատակն է պահպանել այն անչափահաս իրավախախտների իրավունքները և անվտանգությունը, որոնց նկատմամբ կիրառվել են սանկցիաներ կամ միջոցներ, ինչպես նաև նպաստել նրանց ֆիզիկական, մտավոր և սոցիալական բարեկեցությանը, երբ ենթարկվում են համայնքային սանկցիաների կամ միջոցների կամ ազատությունից զրկման ցանկացած ձևի[706]:

Հաշվի առնելով վերոգրյալը, անհրաժեշտ է՝

- ✓ ***գործուն քայլեր ձեռնարկել տնային կալանքի տակ գտնվող անչափահասների իրավունքների ապահովման ուղղությամբ:***
- ✓ ***մշակել և ներդնել տնային կալանքի ներքո գտնվող երեխաների կրթության իրավունքի ապահովման հստակ կառուցակարգեր:***

4. Իրավախախտում կատարած անչափահասների վերասոցիալականացման արդյունավետ ծրագրերի իրականացման հետ կապված խնդիրներ

Անչափահասների վերասոցիալականացման և նրանց կողմից կրկին հանցագործություն կատարելու ռիսկի նվազեցման համատեքստում կարևոր է պատժի կրման ժամանակահատվածում անչափահասի հետ հստակ ծրագրերի իրականացումը:

[706] Հասանելի է https://www.refworld.org/legal/resolution/coeministers/2008/en/69134 հղումով:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի թիվ 14 ընդհանուր մեկնաբանություն.

Երեխայի լավագույն շահերի պաշտպանությունը նշանակում է, որ քրեական արդարադատության ավանդական նպատակները, ինչպիսիք են ռեպրեսիան կամ հատուցումը, պետք է իրավախախտում կատարած անչափահասների հետ առնչվելիս իրենց տեղը զիջեն վերականգնողական արդարադատության նպատակներին[707]:

Արդի միտումները ցույց են տալիս, որ այլընտրանքային խափանման միջոցների, ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կիրառումը կարևոր նշանակություն ունեն երեխայի լավագույն շահի ապահովման և վերասոցիալականացման տեսանկյունից:

Այլընտրանքային խափանման միջոցների, ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կիրառումն ապահովող պրոբացիայի ծառայության ստեղծմամբ պետությունը ստանձնել է վերականգնողական արդարադատության մոտեցումները: «Պրոբացիա» տերմինի իրավական բացատրությունը սահմանված է Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի կողմից ԵՄ անդամ-պետություններին ուղղված թիվ 2010/1 հանձնարարականով: Համաձայն այդ հանձնարարականի՝ «Պրոբացիան վերաբերում է օրենքով սահմանված և հանցագործություն կատարած անձի նկատմամբ նշանակված պատիժների ու միջոցների կատարմանը հասարակությունում: Այն ներառում է մի շարք գործողություններ և միջամտություններ, որոնց թվում են վերահսկողությունը, ուղղորդումն ու աջակցությունը՝ ուղղված հանցագործություն կատարած անձի սոցիալական ներգրավմանը, ինչպես նաև հանրային անվտանգությանը նպաստելուն...»[708]:

Արդարադատության նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2023 թվականի ընթացքում ԱՆ պրոբացիայի ծառայությունում հաշվառված է եղել 34 անչափահաս շահառու: 23 անչափահաս շահառուի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, սահմանվել է փորձաշրջան, 2-ի նկատմամբ կիրառվել է պատիժ՝ հանրային աշխատանքներ, 3-ի նկատմամբ՝ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց և 6-ի նկատմամբ՝ այլընտրանքային խափանման միջոց: Բոլոր անչափահաս շահառուները եղել են արական սեռի ներկայացուցիչներ:

Պրոբացիայի ծառայության կողմից անչափահաս շահառուների վերասոցիալականացմանն ուղղված ծրագրերի վերաբերյալ ՀՀ Արդարադատության նախարարության տրամադրած տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ 2023 թվականի ընթացքում պրոբացիայի ծառայության անչափահաս շահառուների վերասոցիալականացումն ապահովելու նպատակով իրականացված աշխատանքները, հիմնականում, ուղղված են եղել որևէ մշակութային վայր այցելություններ կազմակերպելուն և սպորտային միջոցառումների մասնակցությունը ապահովելուն, օրինակ՝ թատրոն, թանգարան և այլն, ինչպես նաև տարվել են իրավագիտակցության բարձրացմանը, ընտանեկան հարաբերությունների, կրթությունն արժևորելուն ուղղված խորհրդատվական զրույցներ: Կատարվել են նաև կրթական հաստատություններ և բնակության վայրեր այցելություններ:

Մինչդեռ՝ «Պրոբացիայի ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ պրոբացիայի ծառայությունը տարբերակում է պրոբացիայի յուրաքանչյուր շահառուի անձը, մշակում է նրա վերասոցիալականացման և օրինապահ վարքագիծը խթանելու

[707] Երեխայի իրավունքների կոմիտեի 14-րդ ընդհանուր մեկնաբանությունը, հասանելի է https://www.refworld.org/legal/general/crc/2013/en/95780 հղումով:

[708] Հասանելի է Recommendation CM/Rec(2010)1of the Committee of Ministers to member states on the Council of Europe Probation Rules հղումով:

անհատական ծրագիր՝ հաշվի առնելով կատարած հանցանքը և անձի սոցիալ-հոգեբանական վիճակը, ինչպես նաև պրոբացիայի ծառայության անչափահաս շահառուների լավագույն շահը(...):

Վերոնշյալի վերլուծությունը ցույց է տալիս, որ պրոբացիայի ծառայությունում ներդրված չեն անչափահասների վերասոցիալականացման և շահառուի անձի և կարիքների գնահատման հիման վրա անհատական ծրագրերի իրականացման կառուցակարգեր, քանի որ տրամադրված տեղեկատվությունը վկայում է, որ վերասոցիալականացման նպատակով հիմնականում կազմակերպվել են ընդհանուր միջոցառումներ (մշակութային վայրեր այցելություն, սպորտային միջոցառումների մասնակցություն) և խորհրդատվական զրույցներ:

Անչափահասների վերասոցիալականացմանն ուղղված հստակ ծրագրերի կիրառումը հատկապես կարևոր է ազատազրկման ձևով պատիժը կրող անչափահասների համար:

ՀՀ արդարադատության նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում պահվող ազատությունից զրկված անչափահասների վերասոցիալականացումն ապահովելու նպատակով ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել է հանրակրթություն:

2023 թվականին Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրում (այսուհետ՝ Ծրագիր) ընդգրկված է եղել 21 անչափահաս:

2023 թվականին Ծրագրում ներառված կալանավորված, ինչպես նաև դատապարտված 2 անչափահաս չեն ավարտել և կրկնել են 12-րդ դասարանի դասընթացը՝ 120 և ավելի բացակայությունով ներառվելու պատճառով:

2023 թվականին կրթության կազմակերպման գործընթացի բարելավման նպատակով վերանայվել և հաստատվել է ուսումնական պլանը, ներդրվել են խմբակներ, ինչպես նաև «Հոգեբանություն» առարկան:

Անձի ձևավորման սոցիալ-հոգեբանական հմտությունների և մասնագիտական կողմնորոշման նպատակով ձևավորվել է «Խեցեգործություն» խմբակը: Անչափահաս և մինչև 19 տարեկան կալանավորված անձանց հետ կազմակերպվել են կինոդիտում և քննարկում, մարզական և կրոնական միջոցառումներ, իրականացվել են բաց դասեր, թեմատիկ ներկայացումներ, ֆիլմերի և աջակցող տեսանյութերի ցուցադրություններ:

ՀՀ արդարադատության նախարարության տրամադրած տեղեկատվության վերլուծությունից պարզ է դառնում, որ քրեակատարողական հիմնարկներում վերսոցիալականացման ծրագրերը, հիմնականում, նույնականացվում են կրթության իրավունքի ապահովման հետ: Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ երեխայի կրթության իրավունքը Սահմանադրությամբ երաշխավորված իրավունք է, և թեև ողջունելի է հանրակրթության ոլորտում նման ծրագրերի իրականացումը, սակայն դրանք չեն կարող փոխարինել անձի անհատական վերասոցիալականացման ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:

Բացի այդ, 2023 թվականին Մարդու իրավունքների պաշտպանը արձանագրել է նաև քրեակատարողական հիմնարկում անչափահասների պահման պայմանների հետ կապված խնդիր, ինչն ուղղակիորեն ազդում են վերջիններիս վերասոցիալականցման և վերականգնողական աշխատանքների պատշաճ կազմակերպման վրա:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ Եվրոպական բանտային կանոնների համաձայն՝ անչափահասները պետք է պահվեն իրենց համար հատուկ նախատեսված

հաստատություններում և չպետք է պահվեն չափահասների համար նախատեսված քրեակատարողական հիմնարկներում: Մասնավորապես, 2006 թվականի հունվարի 11-ի Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեի կողմից ընդունված «Եվրոպական բանտային կանոնների մասին» թիվ R(2006) 2 հանձնարարականում[709] ևս ընդգծվում է ուղղիչ հիմնարկներում պահվող անչափահասների՝ իրենց տարիքին, սեռին, անձին և լիարժեք զարգացման շահերին համապատասխան խնամքով, պաշտպանությամբ և սոցիալական, հոգեբանական, բժշկական, ֆիզիկական, կրթության և արհեստավարժության բնագավառների ողջ անհրաժեշտ օգնությամբ ապահովվելու անհրաժեշտությունը: ԽԿԿ չափորոշիչների[710] համաձայն՝ անչափահասների համար լավ նախագծված կալանքի կենտրոնը պետք է դրական և անհատականացված պայմաններ ապահովի երիտասարդ անձանց անազատության մեջ պահելու համար՝ հարգելով նրանց արժանապատվությունն ու անձնական կյանքը: Մինչդեռ, ազատությունից զրկված անչափահաս անձանց պահման միջազգային չափորոշիչներին համապատասխան պայմանների բացակայությունը, այդ թվում՝ ազատությունից զրկված անձանց՝ իրենց կամքին հակառակ երկարատև միայնակ պահելու հարցը, շարունակել է արդիական մնալ նաև 2023 թվականին: Առավել մանրամասն տեղեկատվություն ներկայացված է «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության վերաբերյալ» 2023 թվականի տարեկան զեկույցում:

Պաշտպանը հատուկ ընդգծում է նաև քրեակատարողական հիմնարկից դուրս գալուց հետո անչափահասների վերասոցիալականացման ծրագրերի, ինչպես նաև կրթության շարունակականության ապահովման կարևորությունը:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում 2023 թվականին ստացվել է բողոք անչափահասից, ով պատժի կրման ընթացքում ներառված է եղել հանրակրթական ընդհանուր պետական ծրագրում, սակայն պատժից ազատվելուց հետո հնարավորություն չի ունեցել շարունակելու իր կրթությունը նախկին ուսումնական հաստատությունում, քանի որ այդ հաստատությունը հրաժարվել է իրեն ընդունել: Հարցը կարգավորվել է Պաշտպանի աշխատակազմի միջամտության արդյունքում:

Հարցի առնչությամբ Պաշտպանը հատուկ կարևորում է միջգերատեսչական համագործակցության միջոցով այնպիսի ծրագրերի ներդնումն ու իրականացումը, որոնք ուղղված կլինեն քրեակատարողական հիմնարկից դուրս գալուց հետո անձի վերասոցիալականացմանն ու կրթության իրավունքի անխոչընդոտ իրացմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***մշակել և ներդնել այլընտրանքային խափանման միջոցների, ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կիրառման ընթացքում անչափահասների վերասոցիալականացման անհատական արդյունավետ ծրագրերի իրականացման կառուցակարգեր,***
- ✓ ***մշակել և ներդնել քրեակատարողական հիմնարկներում պահվող անչափահասների վերասոցիալականացման անհատական արդյունավետ ծրագրերի իրականացման կառուցակարգեր,***

[709] Հասանելի է https://rm.coe.int/european-prison-rules-978-92-871-5982-3/16806ab9ae հղումով:
[710] Հասանելի է https://rm.coe.int/16806ccb96 հղումով:

- ✓ ***զարգացնել միջգերատեսչական համագործակցությունը իրավախախտում կատարած անչափահասների վերասոցիալականացման և կրթության ապահովման հարցերում,***
- ✓ ***գործուն քայլեր ձեռնարկել անչափահասների պահման պայմանների բարելավման ուղղությամբ:***

5. Տուժող և վկա երեխաների հետ վերականգնողական աշխատանքի իրականացման և անչափահասների մասնակցությամբ քննչական գործողությունների իրականացման հետ կապված խնդիրներ

2023 թվականի Պաշտպանի աշխատակազմում ստացված բողոքների և իրականացված մշտադիտարկման այցերի արդյունքում արձանագրվել են խնդիրներ տուժող և վկա երեխաների հետ աշխատանքի իրականացման համատեքստում: Մասնավորապես, համայնքային մակարդակում ներդրված չեն տուժող և վկա երեխաների հետ սոցիալ-վերականգնողական աշխատանքն ապահովող ծառայություններ:

Տնտեսական և սոցիալական խորհրդի թիվ 2005/20 բանաձևը, ի թիվս այլ ուղենիշների, սահմանում է, որ «(…) երեխայի նկատմամբ ճնշումներից խուսափելու նպատակով, նրա հարցաքննությունները/հարցազրույցները պետք է իրականացվեն հատուկ վերապատրաստված մասնագետների կողմից (…) բոլոր գործողությունները պետք է իրականացվեն հնարավորինս երեխայակենտրոն միջավայրում՝ կահավորված այնպես, որ հնարավորինս հարգվեն երեխայի ունակությունները, տարիքը, մտավոր կարողությունները (…)»:

Վերը նշվածի համատեքստում անհրաժեշտ է նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ամրագրված են անչափահասի մասնակցությամբ կատարվող քննչական գործողության առանձնահատկությունները: Այսպես, անչափահասի մասնակցությամբ քննչական գործողության կատարմանը ներգրավվում է ՀՀ կառավարության սահմանած կարգով որակավորված հոգեբան:

Տուժող և վկա երեխաների իրավունքների պաշտպանության հարցերին մանրամասն անդրադարձ է կատարվել Մարդու իրավունքների պաշտպանի «ՀՀ-ի կողմից երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման 2013-2022 թվականների վիճակի վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկույցում[711]:

Պաշտպանի աշխատակազմում տուժող երեխաների վերաբերյալ ստացված տեղեկությունների և բողոքների ուսումնասիրությունների շրջանակում նաև գրություններ են հասցեագրվել իրավասու պետական մարմիններին: Ստացված տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ համայնքային մակարդակում տուժող և վկա երեխաների հետ աշխատանքների իրականացման կառուցակարգեր և մեթոդաբանություն ներդրված չէ:

Մեկ այլ խնդիր է երեխայի լավագույն շահի հաշվառմամբ քննչական գործողությունների կատարումն ապահովելը: Թեև պիլոտային ծրագրի շրջանակում ստեղծվել են երեխաների հարցաքննությունների համար Բառնահուսի 2 սենյակներ (ք. Երևան և ք.Կապան), սակայն դրանք չեն ապահովում Հայաստանի Հանրապետության

[711] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության կողմից երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման 2013-2022 թվականների վիճակի վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկույց, հասանելի է https://www.ombuds.am/images/files/2c1f6e50692f92df376290b6a4ec5121.pdf հղումով:

բոլոր մարզերում իրականացվող քննչական գործողությունների՝ երեխայակենտրոն մոտեցմամբ իրականացումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***գործուն քայլեր ձեռնարկել համայնքային մակարդակում տուժող և վկա երեխաների հետ սոցիալ-վերականգնողական ծրագրերի ներդրման և իրականացման ուղղությամբ,***
- ✓ ***ձեռնարկել միջոցներ յուրաքանչյուր տուժող և վկա երեխայի հարցաքննության կազմակերպման գործընթացում երեխայակենտրոն մոտեցումների և պայմանների ապահովման ուղղությամբ՝ վերաբերելի չափանիշների հաշվառմամբ ստեղծելով համապատասխան սենյակներ նաև այլ մարզերում:***

ԳԼՈՒԽ 8. ԵՐԵԽԱՅԻ ԿԱՐԾԻՔ ԱՐՏԱՀԱՅՏԵԼՈՒ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

2023 թվականի ընթացքում ևս Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության ներքո է եղել երեխաների շրջանում իրենց իրավունքների իրազեկվածության և որոշումների կայացման գործընթացում մասնակցության իրավունքի խթանմանը հարցը:

Այդ նպատակով աշխատանքներ են իրականացվել երեխաների՝ իրենց իրավունքների վերաբերյալ իրազեկման բարձրացման ուղղությամբ, կազմակերպվել են իրազեկվածության բարձրացմանն ուղղված հանդիպումներ և արշավներ ինչպես Երևանում, այնպես էլ ՀՀ մարզերում՝ երեխաների և մասնագետների շրջանում:

2023 թվականի ընթացքում իրազեկման միջոցառումներին մասնակցել է շուրջ 1100 երեխա, որից շուրջ 200-ը այցելել են Պաշտպանի աշխատակազմ: Երեխաներին ներկայացվել են իրենց իրավունքները, ինչպես նաև Պաշտպանի լիազորությունների շրջանակը, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ երեխաների ինքնուրույն դիմելու, չմիջնորդավորված հաղորդակցության հնարավորությունների հարցերը: Երեխաներին ներկայացվել է նաև երեխաներին նվիրված Պաշտպանի էլեկտրոնային կայքէջը, որի միջոցով նրանք կարող են նաև առցանց դիմում ուղարկել Պաշտպանին կամ ստանալ խորհրդատվություն:

Բացի այցերից և առանձին խմբերի հետ հանդիպումներից, կազմակերպվել են համընդգրկուն միջոցառումներ՝ ներառելով երեխաներ ՀՀ բոլոր մարզերից և Երևանից: Օրինակ՝ 2023 թվականի հունիսի 1-ին՝ Երեխաների պաշտպանության միջազգային օրը, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի գրասենյակի համագործակցությամբ Գեղարքունիքի մարզի Վարդենիս խոշորացված համայնքի Սոթք բնակավայրում անց է կացվել «Երեխաների

հետ՝ երեխաների համար» թեմայով հանդիպում-քննարկում:

Միջոցառմանը մասնակցել է մարզի սահմանամերձ բնակավայրերից ավելի քան 170 երեխա՝ ընդհանուր մոտ 230 մարդ, այդ թվում՝ պետական և տեղական

ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ: Միջոցառման ընթացքում բանախոս երեխաները հանդես են եկել անհատական և խմբային ելույթներով, որտեղ ներկայացրել են իրենց իրավունքների իրացման հետ կապված խնդիրներ: Երեխաների ելույթները վերաբերում էին 3 հիմնական թեմաների՝ կրթությանը և սոցիալական ներառմանը, հասարակությունում և ընտանիքում երեխաների պաշտպանվածությանը և անվտանգությանը, ինչպես նաև բուլինգին և խտրական վերաբերմունքին:

2023 թվականի ընթացքում շարունակվել է Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր երեխաների և երիտասարդների իրավունքների հարցերով խորհրդի գործունեությունը[712]: 2023 թվականին Խորհուրդը պարբերաբար ներկայացրել է երեխայի իրավունքների պաշտպանությանն առնչվող իր կողմից վեր հանված խնդիրները: Դրանց առնչությամբ քննարկումներ են կազմակերպվել նաև պետական մարմինների ներկայացուցիչների ներգրավմամբ: Խորհուրդը կարծիք է ներկայացրել նաև երեխաներին վերաբերող փաստաթղթերի վերաբերյալ, այդ թվում՝ «Բուլինգի հիմնախնդիրը ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում» արտահերթ հրապարակային զեկույցի, որում տեղ են գտել Խորհրդի առաջարկությունները:

Խորհուրդը 2023 թվականին մասնակցել է ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային մի շարք միջոցառումների: Միջազգային միջոցառումներից են՝ Երեխաների հարցերով օմբուդսմանների եվրոպական ցանցին (ENOC) առընթեր Երիտասարդ խորհրդատուների եվրոպական ցանցի (ENYA)[713] տարեկան համաժողովը, որտեղ 18 երեիտասարդներ ներկայացրել են իրեն դիտարակումները և առաջարակները երեխայի իրավուքների պաշտպանության վերաբերյալ: 2023 թվականին Խորհուրդը մասնակցել է

[712] ՀՀ մարդու իրավունքների Պաշտպանին առընթեր երեխաների և երիտասարդների իրավունքների հարցերով հասարակական խորհուրդ ստեղծվել է 2022 թվականի նոյեմբերի 20-ին Խորհրդի անդամները ընտրվել են հայտարարությամբ ներկացված հայտերի ուսումնասիրության արդյունքում: Ընտրված թեկնածուները ներկայացնում են տարբեր համայնքներ, տարիքային ու սոցիալական տարբեր խմբեր: Խորհրդի նպատակն է երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության ոլորտում աջակցել Պաշտպանի գործունեությանը որպես խորհրդատվական մարմին: Խորհուրդի գործունեությունը միտված է աջակցելու Պաշտպանին երեխաների և երիտասարդների հետ համագործակցության զարգացման հարցերում, խթանելու երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության ոլորտին առնչվող խնդիրների վերհանմանը, աջակցելու Պաշտպանին երեխաների և երիտասարդների իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը:

[713] Հասանելի է https://enoc.eu/enya-2023-lets-talk-young-lets-talk-about-promoting-and-protecting-childrens-rights/ հղումով:

նաև Հունաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից NEW York Times–ի հետ համատեղ կազմակերպված Athens Democracy forum-ին:

Խորհրդի մասնակիցները մասնակցել են նաև 3 ամիս տևողությամբ ժեստերի լեզվի դասընթացին, որը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը կազմակերպել է Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի գրասենյակի աջակցությամբ:

Բացի այդ, Խորհուրդը մշակել և ներկայացրել է անկախ այլընտանքային զեկույց ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեին՝ պետության կողմից «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվեցիայի ապահովման վերաբերյալ: 2023 թվականին իրականացվել են նաև Խորհրդի 5 անդամների՝ Ժնևում Երեխայի իրավունքների կոմիտեի՝ նախնական նիստին /pre-session/ մասնակցության նախապատրաստական աշխատանքները: ՀՀ-ի վերաբերյալ նախնական նիստին Խորհրդի անդամների, առհասարակ Հայաստանը ներկայացնող երեխաների կողմից, ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոմիտեին առաջին անգամ է այլընտրանքային զեկույց ներկայացվել և ապահովվել վերջիներիս մասնակցությունը Ժնևում նշված նիստին: Երեխաների մասնակցության հարցում աջակցել են Հայաստում ՅՈՒՆԻՍԵՖ-ի գրասենյակը և «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը:

Խորհրդի անդամներից 13-ը Մարդու իրավունքների պաշտպանի հետ մասնակցել են նաև Կառավարության նիստին ՄԱԿ-ի կոնվենցիայի ընդունման օրվա կապակցությամբ: Երիտասարդներն ու երեխաներն իրենց հետաքրքրող հարցերն ուղղել են գործադիրի ղեկավարին և անդամներին:

Պաշտպանի աշխատակազմի կողմից մշտադիտարկվել են նաև պետության՝ երեխայի մասնակցության իրավունքի ապահովմանն ուղղված գործողությունները:

ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 12-րդ հոդված.
Իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համար մասնակից պետություններն ապահովում են դրանք ազատորեն արտահայտելու իրավունք այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային: Երեխայի հայացքների նկատմամբ ցուցաբերվում է նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրություն: Այդ նպատակով երեխային, մասնավորապես, հնարավորություն է տրվում իրեն վերաբերող ցանկացած դատական կամ վարչական քննության ժամանակ, ներպետական օրենսդրության դատավարական նորմերով նախատեսված կարգով, լսվել թե՛ անմիջականորեն, թե՛ իր ներկայացուցչի կամ համապատասխան մարմնի միջոցով:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների թիվ 12 Ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ բոլոր այն գործընթացներում, որտեղ ներգրավված են երեխաները, պետք է հարգվեն հետևյալ սկզբունքները. թափանցիկություն և տեղեկացվածություն; կամավորություն;

հարգանք; վերաբերելիություն; երեխայակենտրոն միջավայր և աշխատելու մեթոդներ, քանի որ երեխաներն ունեն տարբեր կարիքներ և նրանք պետք է պատրաստ լինեն, որպեսզի կարողանան արտահայտել իրենց կարծիքը; ներառականություն՝ երեխայի մասնակցությունը պետք է լինի ներառական, այսինքն՝ պետք է բացառվի ցանկացած տեսակի խտրականություն; երեխաների հետ աշխատող անձանց վերապատրաստում՝ երեխաների հետ աշխատող անձինք պետք է վերապատրաստվեն, որպեսզի կարողանան ճիշտ շփվել երեխաների հետ; անվտանգության ապահովում՝ երեխան իր կարծիքը արտահայտելիս պետք է համոզված լինի, որ իրեն վտանգ չի սպառնա, եթե խոսի իրեն հուզող հարցերից; հետևողականություն՝ ցանկացած խորհրդատվական գործընթաց պետք է լինի հետևողական, և երեխաները պետք է տեղեկացված լինեն, թե ինչպես է իրենց կարծիքը լսվել և հաշվի առնվել:

Հարկ է արձանագրել, որ իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համար դրանք ազատորեն արտահայտելու իրավունքի իրացման համար համապատասխան օրենսդրական կարգավորումներ և երաշխիքներ նախատեսված չեն նաև ներպետական օրենսդրությամբ:

Մասնավորապես, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 44-րդ հոդվածից հետևում է, որ միայն տասը տարին լրացած երեխայի կարծիքը հաշվի առնելն է պարտադիր՝ խղճի ազատության, որոշակի միջոցառումներին մասնակցելու, արտադպրոցական կրթություն ստանալուց հրաժարվելու, ծնողներից որևէ մեկի հետ ապրելու, հարազատների հետ շփվելու և օրենքով նախատեսված այլ դեպքերի հետ կապված: Օրենսգրքով նախատեսված դեպքերում տասը տարին լրացած երեխայի վերաբերյալ խնամակալության և հոգաբարձության մարմինը կամ դատարանը կարող են որոշում ընդունել միայն նրա համաձայնությամբ:

Նշվածի առնչությամբ հարկ է փաստել, որ Պաշտպանի աշխատակազմում ստացվել են տեղեկություններ, որ, երբեմն, խնամակալության և հոգաբարձության մարմինների կողմից չի ապահովվել երեխայի՝ իր հայացքները ազատորեն արտահայտելու հնարավորությունը: Օրինակ, հաճախ հանդիպող խնդիրներից է, երբ խնամակալության և հոգեբարձության մարմինների՝ երեխաների վերաբերյալ որոշումները կայացվում են առանց երեխաների կարծիքը հաշվի առնելու:

Նշված հարցին Մարդու իրավունքների պաշտպանը մանրամասն անդրադարձել է 2023 թվականին հրապարակված «Հայաստանի Հանրապետության կողմից երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման 2013-2022 թվականների վիճակի վերաբերյալ» արտահերթ Հրապարակային զեկույցում[714]:

Եվրոպայի խորհրդի անդամ երկրներին ուղղված «18 տարեկանից ցածր երեխաների և երիտասարդների մասնակցության վերաբերյալ» CM/Rec (2012)2 հանձնարարական.

Երեխայի մասնակցությունը պետք է լինի արդյունավետ, բովանդակալից և կայուն: Այն պետք է հասկանալ որպես գործընթաց և ոչ մեկանգամյա իրադարձություն, ինչը պահանջում է շարունակական պարտավորություն՝ ժամանակի և ռեսուրսների տրամադրմամբ[715]:

[714] Հասանելի է https://www.ombuds.am/images/files/2c1f6e50692f92df376290b6a4ec5121.pdf հղումով:

[715] Տ՛ե՛ս Եվրոպայի Խորհրդի 18 տարեկանից ցածր երեխաների և երիտասարդների մասնակցության վերաբերյալ CM/Rec (2012)2 հանձնարարական, հասանելի է https://rm.coe.int/168046c478 հղումով:

Վերոնշյալ հանձնարարականով ամրագրված է, որ պետության պարտականությունն է ստեղծել խորհրդատվական մարմիններ երեխաների և երիտասարդների համար տեղական, մարզային կամ ազգային մակարդակներում, ինչպիսիք են երեխաների և երիտասարդների խորհուրդները, խորհրդարանները կամ ֆորումները:

Եվրոպայի խորհրդի մեկ այլ՝ «Երեխաների մասնակցության գնահատման գործիք»[716] փաստաթղթով սահմանված են երեխաների՝ իրենց հուզող հարցերին մասնակցության իրավունքի խթանման առաջընթացը չափելու ցուցիչները, որով պետությունը պետք է առաջնորդվի:

Պաշտպանի մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ հանրակրթական ուսումնական հաստատություններում հիմնականում առկա են ձևավորված աշակերտական խորհուրդներ: Խորհուրդների ներկայացուցիչների հետ զրույցները ցույց են տալիս, որ վերջիններս զբաղվում են դպրոցում միջոցառումների կազմակերպչական հարցերով, և հաճախ ստեղծված հարթակը չի ծառայում իրենց տեսակետների և կարիքների ներկայացման նպատակին:

Արձանագրվել է նաև, որ աշակերտական խորհուրդների գործունեությունը կանոնակարգված չէ, և վերջիններս, հիմնականում, իրենց գործունեությունը ծավալում են՝ ըստ դպրոցի կողմից տրված հանձնարարականների: Մեկ այլ խնդիր է աշակերտական խորհրդի անդամների ընտրության հարցը: Այն հիմնականում կատարվում է ուսուցիչների կողմից, չի ապահովվում մյուս աշակերտների՝ ընտրություն իրականացնելու և ներգրավվելու հնարավորությունը, իսկ գործընթացն ինքնին հաճախ թափանցիկ չէ:

Մարդու իրավունքների պաշտպանի այն հարցին, թե ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը 2023 թվականի ընթացքում ի՞նչ աշխատանքներ է իրականացրել՝ ուղղված երեխաների՝ իրենց վերաբերող հարցերում ակտիվ մասնակցությունը խթանելուն, ինչպես նաև երեխաների մասնակցության և սեփական կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունքների վերաբերյալ ուսուցիչների և երեխաների իրազեկմանը, նախարարությունը ներկայացրել է, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում տեղի է ունեցել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին կից աշակերտական խորհրդի 1 նիստ: Նախարարությունը հայտնել է նաև, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության համաձայնությամբ, «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» /Փրոջեքթ Հարմոնի/ կազմակերպության կողմից կազմակերպվել է նախարարին կից աշակերտական խորհրդի կարողունակությունների զարգացման եռօրյա դասընթաց, որի ավարտին աշակերտական խորհրդի անդամներին տրամադրվել է հավաստագիր:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ երեխաների մասնակցությամբ կազմակերպվել են միջոցառումներ, օրինակ՝ 2023 թվականի ընթացքում իրականացվել է «Երեխաները՝ հանուն երեխաների պաշտպանության» հանրային իրազեկման արշավը՝ խնամքի հաստատությունների երեխաների մասնակցությամբ, ինչպես նաև կազմակերպվել է «Շուրջօրյա խնամքի հաստատություններում խնամք ստացող երեխաների կրթական իրավունքի իրացման» աշխատանքային խմբի հանդիպումը, որին մասնակցել են նաև երեխաներ:

Վերոնշյալի վերլուծությունից պարզ է դառնում, որ չնայած կատարված քայլերին՝ պետության կողմից ներդրված չեն երեխայի՝ իրեն վերաբերող հարցերի վերաբերյալ

716 Հասանելի է https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806482d9 հղումով:

որոշումների կայացման գործընթացում երեխայի մասնակցությունն ապահովող կայուն և բավարար կառուցակարգեր: Այդ ուղղությամբ իրականացվող միջոցառումները ամբողջական չեն և կրում են հատվածային բնույթ:

Հաշվի առնելով վերագրյալ՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***լավարկել օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկան՝ առաջնորդվելով երեխայի լսված լինելու իրավունքի ապահովման սկզբունքով՝ առանց տարիքային սահմանափակումների,***
- ✓ ***ներդնել գործուն կառուցակարգեր, որոնք կապահովեն երեխայի լսված լինելու իրավունքի երաշխավորումը ընտանիքում, համայնքում, դպրոցում, խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում,***
- ✓ ***իրազեկել և իրականացնել վերապատրաստումներ երեխայի լսված լինելու իրավունքի վերաբերյալ երեխաների հետ առնչվող մասնագետների, այդ թվում՝ խնամակալության և հոգաբարձության մարմինների և հանձնաժողովների աշխատակիցների, մանկավարժների, հոգեբանների, ոստիկանների շրջանում,***
- ✓ ***երեխայի լսված լինելու վերաբերյալ իրականացնել իրազեկման միջոցառումներ հանրության լայն շերտերի, այդ թվում՝ երեխաների շրջանում,***
- ✓ ***վերանայել աշակերտական խորհուրդների գործունեության և անդամների ընտրության ձևաչափը՝ այն դարձնելով գործող հարթակ կրթական միջավայրում երեխայի լսված լինելու իրավունքն ապահովելու համար,***
- ✓ ***ստեղծել որոշումների կայացման գործընթացներում երեխաների մասնակցությունն ապահովող հարթակներ՝ խորհուրդներ, խորհրդարաններ, ֆորումներ և այլն՝ ապահովելով դրանց կայուն գործունեությունը,***
- ✓ ***ներդնել երեխաների մասնակցության գնահատման գործիք՝ սահմանելով հստակ ցուցիչներ:***

ԳԼՈՒԽ 9. ԵՐԵԽԱՅԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Անձնական տվյալների պաշտպանության իրավունքն ամրագրվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային իրավական փաստաթղթերով, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով:

Մինչդեռ՝ 2023 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից արձանագրվել են երեխաների անձնական տվյալների պաշտպանության և մշակման հետ կապված խնդիրներ: Պաշտպանի աշխատակազմում ստացված գրավոր և բանավոր բողոքները վերաբերել են լրագրողների պատրաստած տեսանյութերում երեխաներին, այդ թվում՝ բռնության ենթարկված երեխաներին նույնականացնող տվյալների հրապարակումներին, «Դատալեքս» էլեկտրոնային կառավարման և տեղեկությունների տրամադրման հանրային տեղեկատվական համակարգի տվյալների (այսուհետ՝ նաև «Դատալեքս» համակարգ) հրապարակումներին և այլն:

«Անձնական տվյալների պաշտպանության» մասին օրենքով կարգավորում են պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների կամ կազմակերպությունների, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից անձնական տվյալները մշակելու, դրանց նկատմամբ պետական հսկողություն իրականացնելու կարգն ու պայմանները:

Երեխաների անձնական տվյալների պաշտպանությունն ունի իր առանձնահատկությունները: Յուրաքանչյուր դեպքում երեխայի անձնական տվյալների հետ առնչվելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ տվյալները կրողը հենց երեխան է, և ոչ թե ծնողը կամ օրինական ներկայացուցիչը՝ անկախ նրա տարիքից, ֆիզիկական, մտավոր զարգացվածությունից, սեռից և իրավագիտակցության մակարդակից:

Երեխաների անձնական տվյալները հրապարակելիս, տեղեկատվական հաղորդակցման ցանցերում տեղադրելիս կամ այլ եղանակով անձնական տվյալներն այլ անձի մատչելի դարձնելիս պետք է խստորեն պահպանել անձնական տվյալները երրորդ անձանց հասանելի դարձնելու՝ միջազգային և ներպետական օրենսդրությամբ նախատեսված պահանջները, ինչպես նաև ներկայացնել ճշգրիտ փաստեր՝ խուսափելով չհիմնավորված ընդհանրացումներից և խտրական ձևակերպումներից: Հրապարակումներում երեխայի ռասան, ազգային պատկանելությունը, կրոնը կամ հաշմանդամություն ունենալու փաստը նշելիս պետք է առաջնորդվել երեխային չվնասելու սկզբունքով:

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումների, գրավոր և բանավոր դիմում-բողոքների, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ստացված զանգերի արդյունքում արձանագրվել են.

1. «Դատալեքս» համակարգում երեխայի անձնական տվյալների մշակման և հրապարակման հետ կապված խնդիրներ,
2. զանգվածային լրատվության միջոցներով երեխաների անձնական տվյալների մշակման և հրապարակման հետ կապված խնդիրներ:

1. «Դատալեքս» համակարգում երեխայի անձնական տվյալների մշակման և հրապարակման հետ կապված խնդիրներ

2023 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում արձանագրվել են «Դատալեքս» համակարգում առկա քրեական վարույթներով, այդ թվում՝ սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերով տուժող ճանաչված երեխաների տվյալների հրապարակման դեպքեր:

Պաշտպանի աշխատակազմում ստացված բողոքներից մեկի համաձայն՝ սեռական բռնության ենթարկված երեխայի ծնողը հայտնել է, որ «Դատալեքս» համակարգում հրապարակվել են իր երեխայի տվյալները, ով սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործության դեպքով ճանաչված է տուժող: Նշված դեպքի առնչությամբ Պաշտպանի կողմից ձեռնարկված քայլերի արդյունքում հրապարակված տվյալները փակվել են, սակայն նմանատիպ գործերով երեխաների անձնական տվյալների հրապարակման հետ կապված հարցերը շարունակում են մնալ արդիական:

Խնդրի առնչությամբ, ի պատասխան Մարդու իրավունքների պաշտպանի գրության՝ ՀՀ արդարադատության նախարարությունը հայտնել է, որ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թթ. գործողությունների ծրագրի 3.10 գործողությամբ նախատեսված է ի կատարումն Դատական օրենսգրքի 11-րդ հոդվածի 10-րդ կետի՝ 2025 թվականին ներդնել դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվող դատական ակտերում անձնական տվյալների ապանձնավորման ծրագիր և վերահսկողություն սահմանել իրագործման նկատմամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է «Դատալեքս» համակարգում հրապարակվող անձնական տվյալների ապանձնավորումն իրականացնելու ուղղությամբ ձեռնարկել անհետաձգելի միջոցառումներ՝ չսպասելով մինչև ապանձնավորման ծրագրի ներդրմանը, և դրանով իսկ երաշխավորելով յուրաքանչյուր երեխայի անձնական տվյալների պաշտպանության իրավունքը:

2. Զանգվածային լրատվության միջոցներով երեխաների անձնական տվյալների մշակման և հրապարակման հետ կապված խնդիրներ

ԶԼՄ-ները երեխայի իրավունքների խախտումների կամ դրանց հավանականության մասին բարձրաձայնելու հնարավորություն են, սակայն կարևոր է այդ գործընթացում հետևել երեխային չվնասելու սկզբունքին:

Լրագրողների ու մամուլի ներկայացուցիչների գործունեությունն այնպիսին է, որ վերջիններս լավագույնս կարող են երեխայի իրավունքների պաշտպանության հարցը պահել լրատվական օրակարգում՝ ներկայացնելով ինչպես երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում ձեռնարկված քայլերը, այնպես էլ առկա մարտահրավերներն ու խնդիրները: Այս թեմայով 2018 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից մշակվել և հրապարակվել է «Ինչպես լուսաբանել երեխաներին վերաբերող հարցերը» ձեռնարկը, որում մանրամասն ներկայացված են այն հիմնական սկզբունքները և կանոնները, որով պետք է առաջնորդվեն լրագրողները երեխաների առնչվող խնդիրը հրապարակելիս[717]:

[717] Հասանելի է https://www.ombuds.am/images/files/53988c684fec6a6dd0af986eff694827.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Մինչդեռ՝ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացվել են ահազանգեր և մշտադիտարկումների արդյունքում արձանագրվել են դեպքեր, երբ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի պաշտպանությանն ուղղված և/կամ խնդիրների բարձրաձայնման նպատակով հրապարակված նյութերում չի պահպանվել երեխային չվնասելու սկզբունքը:

Երեխաների խնդիրները լուսաբանելիս լրատվամիջոցները հաճախ կենտրոնանում են հանրային հնչեղություն ապահովելու վրա՝ անտեսելով երեխայի լավագույն շահի պահպանման սկզբունքը: Տարածված սխալներից է, երբ ԶԼՄ-ները հաճախ ուղղակի վերապատմում են պատահածը՝ անտեսելով դրանցից բխող հետևությունները: Օրինակ՝ բազմաթիվ են դեպքերը, երբ սեռական բռնության ենթարկված երեխայի վերաբերյալ հրապարակվում է նյութ, որը մանրամասն և առանց երեխային նույնականացնող տվյալների ապանձնավորման նկարագրում է իրադարձությունը, որի հետևանքով երեխայի՝ դպրոցում, համայնքում թիրախավորման հավանականությունն էապես մեծանում է: Արձանագրվել են նաև սոցիալական ցանցերում երեխայի նկատմամբ սեռական բռնություն պարունակող տեսանյութերի հրապարակման և տարածման դեպքեր՝ առանց հաշվի առնելու տեսանյութը տեղադրելուց հետո դրա տարածման նկատմամբ հսկողության անհնարինությունն ու բացասական հետևանքները:

Մեկ այլ խնդիր է սոցիալապես անապահով վիճակում հայտնված ընտանիքներին աջակցության տրամադրման նպատակով կամ այդ ընթացքում նկարահանելը՝ խղճահարություն առաջացնելու ակնկալիքով, որպես զոհ ներկայացնելու ձևաչափով: Մինչդեռ՝ երեխային առնչվող սոցիալական հիմնախնդիրների լուսաբանումը պետք է հիմնվի ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրից բխող չափորոշիչների վրա:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս նաև, որ երեխաների վերաբերյալ և/կամ մասնակցությամբ նկարահանումների և նյութերի պատրաստման գործընթացում անհատների, քաղաքական գործիչների, լրագրողների, հեռուստաընկերությունների կողմից չի կիրառվում նաև իրազեկ համաձայնություն ստանալու ձևաչափը: Պաշտպանի աշխատակազմում, օրինակ, ստացվել է տեղեկություն, որ անձին նկարահանելիս չեն զգուշացրել, որ դա հրապարակվելու է, և վերջինս, սոցիալական աջակցություն ստանալու ընթացքում նկարահանվելիս, ենթադրել է, որ տեսանյութը աջակցություն տրամադրած բարերարին փոխանցելու համար է:

Այս առումով արձանագրված խնդիրները ուղղակիորեն պայմանավորված են նաև հասարակության շրջանում անձնական տվյալների պաշտպանության մասին իրազեկվածության ցածր մակարդակով, այդ թվում՝ ՀՀ արդարադատության նախարարության Անձնական տվյալների պաշտպանության գործակալության լիազորությունների և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը խախտելու համար նախատեսված պատասխանատվության վերաբերյալ տեղեկացվածության առումով:

Պաշտպանի աշխատակազմում ստացված ահազանգերի մեծ մասով անհրաժեշտություն է եղել քաղաքացիներին պարզաբանել Անձնական տվյալների պաշտպանության գործակալության լիազորությունների մասին:

Պաշտպանի աշխատակազմում իրականացված մշտադիտարկումների արդյունքում արձանագրվել են նաև հեռուստատեսությամբ հեռարձակվող հաղորդումներ (Օրինակ՝ ATV

հեռուստատեսությամբ հեռարձակվող «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդումը), որոնք անդրադառնում են ընտանեկան կոնֆլիկտների, վեճերի, ամուսնալուծության թեմաների, և, նկարահանելով ընտանիքին, այդ թվում՝ երեխաներին, չեն պահպանում երեխայի չվնասելու սկզբունքը:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը (UNICEF) մշակել է երեխաների հիմնախնդիրների լուսաբանման էթիկական սկզբունքներ, որոնք անհրաժեշտ է պահպանել՝ երեխաների վերաբերյալ նյութեր պատրաստելիս[718]:

Այսպիսով՝ անհրաժեշտ է փաստել, որ երեխաների վերաբերյալ և/կամ մասնակցությամբ հրապարակումների պատրաստումը ավելի մեծ ուշադրություն և զգուշություն է պահանջում, քանի որ լուսաբանումների հետևանքների տեսանկյունից երեխաներն առավել զգայուն և խոցելի են: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է հրապարակումներ իրականացնելիս խստորեն պահպանել երեխային չվնասելու սկզբունքը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***գործուն քայլեր ձեռնարկել ԶԼՄ-ների կողմից երեխաների իրավունքների խախտման դեպքերը նվազեցնելու ուղղությամբ,***
- ✓ ***իրականացել հանրային իրազեկման արշավներ երեխաների անձնական տվյալների պաշտպանության առնչությամբ,***
- ✓ ***իրականացնել լրագրողների կայուն և շարունակական վերապատրաստումներ երեխաների առնչությամբ հրապարակումների պատրաստման վերաբերյալ,***
- ✓ ***գործուն միջոցներ ձեռնարկել հեռուստատեսությամբ երեխայի լավագույն շահից չբխող նյութերի հեռարձակումը բացառելու ուղղությամբ,***
- ✓ ***բարձրացնել իրազեկվածությունը Անձնական տվյալների պաշտպանության գործակալության լիազորությունների և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը խախտելու համար նախատեսված պատասխանատվության վերաբերյալ:***

[718] «Մեդիան և երեխաների իրավունքները» ուղեցույց երեխաների մասին ԶԼՄ-ների հաղորդումների պատրաստման համար: Հասանալի է https://www.unicef.org/laos/media/6496/file/Media%20and%20Children%E2%80%99s%20Rights%20(2021).pdf հղումով:

ԳԼՈՒԽ 10. ՄԱՆԿԱԿԱՆ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ

Տնտեսագետները, սոցիոլոգները, հոգեբանները և նյարդաբանները ընդգծում են, որ աղքատությունը կարող է տարբեր ուղիներով ազդել երեխաների զարգացման վրա[719]: Աղքատության մեջ մեծացող երեխաները հաճախ բախվում են առողջ սննդով, հիգիենայի պարագաներով, բնակելի տարածությամբ ապահովված լինելու, առողջության պահպանման, կրթության, մշակութային արժեքներին հաղորդակցվելու և այլ իրավունքների խախտման: Աղքատությունը նաև երեխաներին թափառաշրջիկության և մուրացկանության մեջ ներգրավելու հիմնական պատճառներից է:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ պետությունը ստանձնել է պարտավորություն՝ ապահովելու յուրաքանչյուր երեխայի կենսամակարդակի իրավունքը:

ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 2030 նպատակներ»-ի 1-ին նպատակի համաձայն՝ մինչև 2030 թվականը ամենուրեք և բոլոր մարդկանց համար պետք է իսպառ վերացնել ծայրահեղ աղքատությունը, առնվազն կիսով չափ նվազեցնել ըստ ազգային սահմանումների աղքատության բոլոր ձևերի մեջ ապրող բոլոր տարիքների տղամարդկանց, կանանց և երեխաների համամասնությունը, ներդնել տվյալ երկրում համապատասխան սոցիալական պաշտպանության համակարգեր և միջոցառումներ բոլորի համար, այդ թվում՝ սոցիալական պաշտպանության երաշխիքների խմբեր:

Բացի այդ, վերոնշյալ նպատակով սահմանված է նաև՝ ապահովել ռեսուրսների զգալի մոբիլիզացում տարբեր աղբյուրներից, այդ թվում՝ զարգացմանը միտված խորացված գործակցության միջոցով՝ զարգացող երկրներին, մասնավորապես առավել թույլ զարգացած երկրներին համարժեք և կանխատեսելի միջոցներ տրամադրելու համար, որպեսզի իրականացնեն ծրագրեր և ռազմավարություն՝ վերացնելու աղքատությունն իր բոլոր դրսևորումներով:

ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 27-րդ հոդված.
Մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուր երեխայի՝ իր ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական և սոցիալական զարգացման համար անհրաժեշտ կենսամակարդակի իրավունքը:

Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները, գրավոր և բանավոր ստացված դիմում-բողոքները, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ստացված զանգերը վկայում են, որ Հայաստանի Հանրապետությունում շարունակում է բարձր մնալ աղքատության, այդ թվում՝ մանկական աղքատության մակարդակը:

Երեխաների աղքատության վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացված են Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի 2022 թվականին հրապարակած «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական վերլուծական զեկույցի «Աղքատության պատկերը Հայաստանում 2019-2022 թվականներին» մասում:

2022 թվականին աղքատության մակարդակը, հաշվարկված ըստ աղքատության միջին գծի, ՀՀ-ում կազմել է 24, 8%, նախորդ տարվա 26,5 %-ի փոխարեն և նվազել է 1,7 տոկոսային կետով, իսկ ծայրահեղ աղքատության մակարդակը կազմել է 1,2%՝ 2021 թվականի 1,5%-ի համեմատ՝ արձանագրելով նվազում 0,3 տոկոսով[720]:

[719] Տե՛ս «Մանկական աղքատության կրճատման ճանապարհային քարտեզը» զեկույցը, հասանելի է https://www.ncbi.nlm.nih.gov/books/NBK547361/pdf/Bookshelf_NBK547361.pdf հողումով:
[720] Հասանելի է https://armstat.am/file/article/poverty_2023_a_2.pdf հղումով:

Մանկական աղքատության ամենաբարձր մակարդակը 2022 թվականին եղել է Շիրակի մարզում (53,2,6%): Բարձր մակարդակ է դիտվել նաև Արմավիրում (50,4%), Գեղարքունիքում (43,7%), Տավուշում (42,1%) և Կոտայքում (31,7%): Ծայրահեղ աղքատության ամենաբարձր ցուցանիշը եղել է Շիրակի և Գեղարքունիքի մարզերում՝ համապատասխանաբար՝ 5,7 և 4,7%:

Հարկ է արձանագրել, որ 3 և ավելի երեխաներ ունեցող ընտանիքների 50,4 % աղքատ է և 2 երեխա ունեցող ընտանիքների՝ 37,3 %-ը:

Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի 2020 թվականին հրապարակած «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական վերլուծական զեկույցով արձանագրվել էր, որ 2019 թվականին Հայաստանում աղքատ է 0-18 տարեկան ազգաբնակչության 33.6 տոկոսը, (որից՝ աղջիկներ՝ 34.3 տոկոս, տղաներ՝ 33.6 տոկոս), իսկ ծայրահեղ աղքատ՝ 0.7 տոկոսը (որից՝ աղջիկներ՝ 1.3, տղաներ՝ 0.8 տոկոս): Այսինքն, ՀՀ-ում 2020 թվականին ընդհանուր բնակչության համեմատ մանկական աղքատության պարագայում առավել բարձր ցուցանիշներ են գրանցվել[721]:

2021 թվականին Հայաստանում աղքատ է 0-18 տարեկան ազգաբնակչության 35.3 տոկոսը (որից՝ աղջիկներ-34.9 տոկոս, տղաներ-35.6 տոկոս, իսկ ծայրահեղ աղքատ՝ 2.5 տոկոսը (որից՝ աղջիկներ՝ 2.9, տղաներ՝ 1.9 տոկոս), ծայրահեղ աղքատ՝ 2.5 տոկոսը (որից՝ աղջիկներ՝ 2.8, տղաներ՝ 2.3 տոկոս): Աղքատության բարձր ցուցանիշ է գրանցվել 6 անդամ ունեցող տնային տնտեսություններում՝ 34,9 տոկոսը, 5 անդամի դեպքում՝ 30,7 % աղքատ բնակչության մեջ:

2022 թվականին Հայաստանում աղքատ է 0-18 տարեկան ազգաբնակչության 32.3 տոկոսը (որից՝ աղջիկներ՝ 32.7 տոկոս, տղաներ՝ 31.9 տոկոս, իսկ ծայրահեղ աղքատ՝ 1.9 տոկոսը (որից՝ աղջիկներ՝ 1.9, տղաներ՝ 1.9 տոկոս)[722]:

Այսպիսով, Վիճակագրական կոմիտեում առկա տվյալների՝ 2020, 2021, 2022 թվականների ցուցանիշները վկայում են, որ 3 տարիների ընթացքում մանկական աղքատության ցուցանիշը 30%-ից բարձր է, իսկ ազգաբնակչության 0-18 տարեկանների շուրջ 2 %-ը ծայրահեղ աղքատ է վերջին 2 տարիների ընթացքում:

Հարկ է փաստել, սակայն, որ 2023 թվականի համար դեռևս վիճակագրական տվյալներ առկա չեն: Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է յուրաքանչյուր տարվա համար նման տվյալների հավաքագրումն ու դրանց պատճառների վերաբերյալ վերլուծության իրականացումը:

Մանկական աղքատության նվազեցման նպատակով Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է մանկական աղքատության նվազեցմանն ուղղված հստակ ռազմավարության, ինչպես նաև համապատասխան սոցիալական աջակցության ծրագրերի մշակումն ու իրականացումը: Մինչդեռ՝ այդ նպատակի իրականացմանն ուղղված հստակ ռազմավարություն, որը, ի թիվս այլնի՝ կներառի նաև ֆինանսական աղբյուրներն ու անհրաժեշտ ֆինանսական միջոցները, առաջընթացի ցուցանիշները, ելակետային և թիրախային արդյունքները, իրականացվելիք աշխատանքների մշտադիտարկման ընթացակարգը, մշակված չէ:

[721] Հասանելի է https://www.armstat.am/file/article/poverty_2021_a_2..pdf հղումով:
[722] Հասանելի է https://armstat.am/file/article/poverty_2023_a_2.pdf հղումով:

Բացի այդ, մանկական աղքատության նվազեցման հարցում Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է նաև թիրախային սոցիալական աջակցության ծրագրերի իրականացումը:

ՀՀ կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի **«Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին»** N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6 ենթաբաժնի առաջին պարբերությամբ սահմանված է, որ սոցիալական աջակցության քաղաքականությունը հիմնվելու է սոցիալական կարիքի գնահատման և դրան համաչափ սոցիալական ծառայություններ տրամադրելու սկզբունքի վրա՝ խրախուսելով անձի սոցիալ-տնտեսական ակտիվացումը: Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և աղքատ ընտանիքների կարողությունների և հմտությունների զարգացման միջոցով, զբաղվածության և ինքնազբաղվածության միջոցների ապահովմամբ և աղքատության փուլային հաղթահարման մոդելների կիրառմամբ ընտանիքները դուրս են գալու աղքատությունից: Նախատեսվում է ավելի շատ ընտանիքների տրամադրել սոցիալական ծառայություններ՝ ավելացնելով ինքնաբավ, արժանապատիվ և սեփական վաստակն ունեցող ընտանիքների թիվը՝ հետզհետե վերացնելով նրանց կախվածությունը պետական աջակցությունից: Աշխատունակ յուրաքանչյուր քաղաքացու աշխատանքի քաջալերումը, խրախուսումը և այս նպատակով անձի հմտությունների ու հնարավորությունների զարգացումը պետության սոցիալական քաղաքականության առանցքն են:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2023 թվականին շարունակվել են «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագրի իրականացման աշխատանքները: Ծրագրի համաձայն՝ ընտանեկան նպաստ ստանալու իրավունք ունի ընտանիքի սոցիալական գնահատման համակարգում հաշվառված՝ մինչև 18 տարեկան անդամ ունեցող այն ընտանիքը, որի անապահովության միավորը բարձր է ՀՀ կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված ընտանեկան նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային միավորից: Ընտանեկան նպաստի չափը որոշվում է՝ ընտանեկան նպաստի բազային մասին ավելացնելով ընտանիքի կազմում գտնվող և ընտանիքի բնակության վայրում փաստացի բնակվող 18 տարին չլրացած յուրաքանչյուր անդամի համար տրվող հավելումը: Հավելման չափերը տարբերակվում են՝ կախված երեխաների թվից, բնակավայրից և անապահովության միավորից:

Տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 2023 թվականին ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառվել են 85857 ընտանիքներ, որոնցից նպաստառու են (ընտանեկան կամ սոցիալական) 68023-ը: 68023 նպաստառու ընտանիքներից ընտանեկան նպաստ ստացող, այսինքն՝ երեխա ունեցող ընտանիքներն են 44830-ը:

Նշվածի կապակցությամբ հարկ է փաստել, որ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում 2023 թվականի ընթացքում ստացվել են ընտանեկան նպաստ ստանալու ընթացակարգերի և պայմանների վերաբերյալ բողոքներ:

Բողոքները մեծամասնությամբ վերաբերել են նպաստ ստանալու ընթացակարգի հասկանալիությանն ու թափանցիկությանը, ինչպես նաև ոչ բավարար տեղեկատվության տրամադրմանը:

Արձանագրվել են դեպքեր, երբ բողոք ներկայացրած անձինք պարզապես տեղեկացված չեն եղել պետության կողմից տրամադրվող սոցիալական աջակցության

ծրագրերի և ընտանեկան նպաստ ստանալու հնարավորության վերաբերյալ: Մեկ այլ դեպքում, բողոք ներկայացրած անձանցից մեկն, օրինակ, հայտնել է, որ թեև ստանում է ընտանեկան նպաստ, սակայն այն հնարավորություն չի տալիս բարելավել կենսապայմանները, քանի որ տրամադրված գումարը օգտագործվում է միայն բնակարանի վարձավճարի համար, իսկ երեխայի խնամքով զբաղվելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ ինքը չի աշխատում և հայտնվել է ծայրահեղ վատ կենսապայմանում: Արձանագրվել են նաև դեպքեր, երբ երեխայի խնամքով զբաղվող միակ անձը հնարավորություն չի ունեցել աշխատելու՝ պայմանավորված երեխայի՝ նախադպրոցական կրթությունն ապահովելու անհնարինությամբ:

Նշվածի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը ողջունելի է համարում այն, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ նախատեսվում է 2024 թ. մարտ 1-ից ներդնել անապահովության գնահատման նոր համակարգ, որի շնորհիվ սոցիալական աջակցության ծրագրերը կլինեն ավելի հասցեական, այդ թվում՝ նաև երեխաների համար: Համակարգով առաջարկվող ոչ ֆինանսական ծառայությունների փաթեթներն ուղղված կլինեն մարդկանց առաջնային կարիքների բավարարմանը կրթական, առողջապահական և սոցիալական ոլորտներում: Կներդրվի սոցիալական խնդիրների լուծման հստակ ձևաչափ՝ խնդրի արձանագրումից մինչև դրա լուծումը:

Մարդու իրավունքների պաշտպանը խիստ անհրաժեշտ է համարում նման նոր համակարգի ներդնումը, որը հնարավորություն կտա բացահայտել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված բոլոր երեխաներին, բացահայտել իրական պատճառներն ու տրամադրել իրական կարիքներից բխող համապարփակ սոցիալական աջակցություն՝ նվազեցնելով մանկական աղքատության մակարդակը Հայաստանի Հանրապետությունում:

Պետության տրամադրած դրամական աջակցությունն ու ծառայությունները պետք է լինեն փոխկապակցված երեխաներին տրամադրվող այլ ծառայությունների հետ, որոնք դրական ազդեցություն կունենան երեխաների կյանքի որակի բարելավման վրա:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***յուրաքանչյուր տարվա համար հավաքագրել մանկական աղքատության վերաբերյալ տվյալները և վերլուծություն իրականացնել դրանց իրական պատճառների բացահայտման ուղղությամբ,***
- ✓ ***անհրաժեշտ է մշակել ռազմավարություն՝ ուղղված մանկական աղքատության մակարդակի նվազեցմանը,***
- ✓ ***ապահովել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված բոլոր երեխաների բացահայտումն ու թիրախային, իրական կարիքներին համապատասխան սոցիալական ծրագրերի և աջակցության իրականացումը,***
- ✓ ***բարձրացնել բնակչության իրազեկվածությունը գործող սոցիալական աջակցության ծրագրերի վերաբերյալ,***
- ✓ ***ապահովել սոցիալական աջակցության ծրագրերի և նպաստների տրամադրման հիմքում ընկած պայմանների վերաբերյալ հասանելի տեղեկատվության տրամադրումը:***

ԳԼՈՒԽ 11. ՄՈՒՐԱՑԿԱՆՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԹԱՓԱՌԱՇՐՋԻԿՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Մուրացկանության և թափառաշրջիկության երևույթները էապես խոչընդոտում են երեխայի առողջ զարգացմանը և հանգեցնում այնպիսի բացասական հետևանքների, ինչպիսիք են, օրինակ, բավարար կենսապայմաններ ունենալու, առողջության պահպանման, կրթության իրավունքների խախտումների:

Պետությունը, վավերացնելով «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, պարտավորվել է հնարավոր առավելագույն չափով ապահովել երեխայի առողջ զարգացումը:

Ներպետական օրենսդրությամբ նախատեսվել են պատասխանատվության միջոցներ երեխային թափառաշրջիկության կամ մուրացկանության դրդելու կամ պարբերաբար ներգրավելու համար:

Մասնավորապես՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 117-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ 18 տարին լրացած անձի կողմից (...) երեխային թափառաշրջիկության կամ մուրացկանության դրդելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

Քրեական օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ 18 տարին լրացած անձի կողմից երեխային ոգելից խմիչքների օգտագործմանը կամ ուժեղ ներգործող կամ այլ թմրեցնող նյութերի ոչ բժշկական օգտագործմանը կամ թափառաշրջիկության կամ մուրացկանության պարբերաբար ներգրավելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 189-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշները պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները, գրավոր և բանավոր ստացված դիմում-բողոքները, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ստացված զանգերը վկայում են, որ Հայաստանի Հանրապետությունում շարունակում է արդիական մնալ մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների հիմնախնդիրները:

Մասնավորապես, արձանագրվել է մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների հիմնախնդիրների առնչությամբ միասնական քաղաքականության մշակման, բացահայտման և կանխարգելման, հանրային իրազեկման, անհրաժեշտ աջակցության ցուցաբերման հետ կապված խնդիրներ:

Մուրացկանության և թափառաշրջիկության երևույթների կանխարգելման հարցում, ի թիվս այլնի, առանցքային նշանակություն ունի երեխաների աղքատության մակարդակի նվազեցմանն ուղղված միջոցների ձեռնարկումը, որին ավելի մանրամասն անդրադարձ է կատարվել սույն բաժնի «Մանկական աղքատությունը» վերտառությամբ գլխի շրջանակներում:

Ընդ որում, այդ մասին է վկայում նաև այն, որ ՀՀ ներքին գործերի նախարարության ներկայացրած տվյալների համաձայն՝ 2023 թվականի ընթացքում մուրացկանության և թափառաշրջիկության մեջ ներգրավված 17 անչափահասները եղել են սոցիալապես անապահով ընտանիքներից:

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ առկա են նաև մուրացկանության և թափառաշրջիկության դեպքերի բացահայտման հետ կապված առերևույթ խնդիրներ:

Մասնավորապես, ՀՀ ոստիկանության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ վերջին 3 տարիների ընթացքում մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների վերաբերյալ թվային ցուցանիշները հետևյալն են՝ 2021 թ՝. 11, 2022թ.՝ 14, 2023թ.՝ 17 անչափահաս:

ՀՀ ներքին գործերի նախարարության տրամադրած տվյալների համաձայն՝ 2023 թվականի ընթացքում մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների ընդհանուր թիվը կազմում է թվով 17, որից՝ Վայոց ձորի մարզում՝ 5 անչափահաս, Արարատի մարզում՝ 1, Արագածոտնի մարզում՝ 1, Արմավիրի մարզում՝ 2, Տավուշի մարզում՝ 1, ք. Երևանում՝ 7, 3-ը գտնվել են հաշվառման մեջ, 4-ը հանձնվել են ծնողին: Նրանցից 11-ը՝ արական, 6-ը՝ իգական սեռի ներկայացուցիչներ:

Նշված թվային ցուցանիշները խնդրահարույց են հատկապես այն տեսանկյունից, որ 2023 թվականին Պաշտպանի աշխատակազմում միայն ստացվել են մի շարք ահազանգեր երեխաների մուրացկանության կամ թափառաշրջիկության վերաբերյալ: Երեխաների մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվելու դեպքեր արձանագրվել են նաև ՄԻՊ աշխատակազմի մշտադիտարկումների արդյունքում: Արձանագրվել է դեպք, երբ մուրացկանությամբ զբաղվող երեխան եղել է ուսումնական հաստատության սան, դասի ժամին գտնվել է հաստատությունից դուրս և զբաղվել մուրացկանությամբ՝ չափահասի ուղեկցությամբ:

Արձանագրված դեպքում երեխաները փողոցներում շրջել և վաճառել են տարբեր իրեր՝ ծաղիկներ, անձեռոցիկներ և այլն, կամ անծանոթներին մոտեցել և գումար են խնդրել: Նշված դեպքերի վերաբերյալ տեղեկատվությունը փոխանցվել է ՀՀ ոստիկանության իրավասու ներկայացուցիչներին, ինչպես նաև քննարկվել է իրավասու այլ կառույցների հետ:

Այսպիսով, ՀՀ ոստիկանություն արձանագրած դեպքերի մի մասի վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտվել և փոխանցվել է ՄԻՊ աշխատակազմի կողմից՝ քաղաքացիների ահազանգերի և իրականացված մշտադիտարկումների արդյունքում:

Նշվածի համատեքստում խնդրահարույց է այն, որ Երևանի քաղաքապետարանի տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2023 թվականի ընթացքում անչափահասների կողմից մուրացկանության և թափառաշրջիկության դեպքեր չեն արձանագրվել և մուրացկանության կանխարգելման, հայտնաբերված մուրացիկ և/կամ թափառաշրջիկ երեխաների և նրանց ընտանիքների աջակցության նպատակով Երևանի քաղաքապետարանի կողմից երկարաժամկետ միջոցառումներ կամ ծրագրեր նախատեսված չեն:

Երևանի քաղաքապետարանը հավելել է, որ քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության և Երևան քաղաքի 12 վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի երեխաների և սոցիալական պաշտպանության բաժինների կողմից հայտնաբերված կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և սոցիալական աջակցության կարիք ունեցող /այդ թվում՝ մուրացիկ և թափառաշրջիկ/ երեխաների ընտանիքներին, ըստ գնահատված կարիքների, համայնքի կողմից իրականացվող ծրագրերին համապատասխանության դեպքում տրամադրվում է աջակցություն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է այնպիսի կառուցակարգերի ներդնումը, որոնք հնարավորություն կտան առավել արդյունավետ կերպով բացահայտել և դրա արդյունքում նաև կանխարգելել երեխաների՝ մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվելու դեպքերը: Նշվածի առնչությամբ կարևոր է դժվարին իրավիճակում հայտնված երեխաների վաղ հայտնաբերումը համայնքում, որտեղ առաջնային է խնամակալության և հոգաբարձության մարմնի արդյունավետ աշխատանքը և վերջիններիս կողմից ՀՀ ոստիկանության և ՀՀ միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների հետ կայուն համագործակցությունը, յուրաքանչյուր ընտանիքի և երեխայի պարագայում սոցիալ-վերականգնողական ծառայությունների ապահովումը:

Կարևոր է նաև իրականացնել երեխաների մուրացկանության և թափառաշրջիկության հիմնախնդիրների և իրավասու պետական մարմինների լիազորությունների մասին իրազեկման միջոցառումներ՝ հաշվի առնելով այն, որ հաճախ հարցի առնչությամբ քաղաքացիները նախընտրում են դիմել Մարդու իրավունքների պաշտպանին, քանի որ իրազեկված չեն իրավասու մարմինների գործունեության վերաբերյալ:

Բացի այդ, երեխային հայտնաբերելուց հետո պետք է նախատեսվեն և իրականցվեն հստակ աշխատանքներ ընտանիքի և երեխայի հետ՝ երեխայի՝ կրկին մուրացկանությամբ կամ թափառաշրջիկությամբ զբաղվելու ռիսկը նվազեցնելու և երեխայի բոլոր իրավունքների իրացումը երաշխավորելու համար՝ իրավասու բոլոր մարմինների միջև կայուն և արդյունավետ համագործակցության ձևավորմամբ:

Մուրացկանության և թափառաշրջիկության որոշ դեպքերի առնչությամբ Պաշտպանի աշխատակազմը արձանագրել է նաև, որ խնդիրն ուղղակիորեն կապված է նաև ծնողների ցածր ծնողավարության հմտությունների և ցածր իրավագիտակցության հետ: Հաճախ են դեպքերը, երբ երեխաները զբաղվում են մուրացկանությամբ ծնողների իմացությամբ և, երբեմն նաև՝ դրդմամբ: Ուստի, կարևոր է նաև պետության կողմից նշվածի առնչությամբ ծնողների հետ աշխատանքի և հստակ միջոցառումների պլանավորումը:

Առավել խնդրահարույց է այն, որ մուրացկանության և թափառաշրջիկության դեպքերին ոչ պատշաճ արձագանքումը երբեմն կարող է հանգեցնել նաև երեխայի թրաֆիքինգի կամ շահագործման:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության՝ 2023 թվականի ընթացքում 6 երեխա ենթարկվել է մարդկանց թրաֆիքինգի և շահագործման, որից 3-ը՝ արական սեռի, իսկ մյուս 3-ը՝ իգական: Նշված 6 դեպքից 4-ը՝ երեխաների սեռական շահագործում (1 տղա, 3 աղջիկ) և 2-ը երեխաների աշխատանքային շահագործում (2 տղա):

Հարկ է փաստել, որ ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոմիտեն նույնպես իր դիտարկումներում անդրադարձել է խնդրին՝ նշելով, որ մտահոգիչ է մուրացկանության մեջ ներգրավված երեխաների աճող թիվը[723]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

[723] Հասանելի է https://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

- ✓ ***ներդնել հստակ ծրագրեր մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների հայտնաբերման և պատշաճ ծառայությունների տրամադրման ուղղությամբ,***
- ✓ ***իրականացնել մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների ծնողների հետ աշխատանքներ և հստակ պլանավորված միջոցառումներ,***
- ✓ ***ապահովել ՀՀ ոստիկանության, տեղական ինքնակառավարման մարմինների և ՀՀ միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների շարունակական և արդյունավետ համագործակցությունը՝ երաշխավորելու համար մուրացկանությամբ ու թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների բացահայտումը և աջակցության տրամադրումը,***
- ✓ ***զանգվածային լրատվության միջոցների, այդ թվում՝ հեռուստատեսության միջոցով շարունակաբար իրազեկել հասարակությանը մուրացկանությամբ զբաղվող երեխաներ հանդիպելու դեպքում իրավասու պետական մարմինների պարտականությունների, դիմելու հնարավորությունների և գործող կառուցակարգերի մասին:***

ԲԱԺԻՆ 14. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

2023 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության հիմնական ուղղություններից է եղել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը և խթանումը:

2023 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) դրույթների կիրառության մշտադիտարկում իրականացնող պաշտոնատար անձ, շարունակել է աշխատանքներ իրականացնել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ուղղությամբ՝ մշտադիտարկման այցերի, սեփական նախաձեռնությամբ և անհատական դիմումների քննարկման և այլ ձևաչափերով:

Ընթացիկ տարում մշտադիտարկման չհայտարարված այցեր են իրականացվել բնակչության պաշտպանության հաստատություններ, դպրոցներ, ընտրական տեղամասեր և այլն: Օրինակ՝ մշտադիտարկման այց է իրականացվել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ և այլն:

2023 թվականին մշտադիտարկման և արագ արձագանքման այցեր են իրականացվել ՀՀ մի շարք բնակավայրեր Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության նպատակով:

Մշտադիտարկումների արդյունքում վեր հանված խնդիրներն ու դրանց հաղթահարմանն ուղղված առաջարկները հասցեագրվել են իրավասու պետական մարմիններին:

2023 թվականին հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ու խթանման հարցերով Պաշտպանը համագործակցել է իրավասու պետական մարմինների, մասնավորապես, Աշխատանքի և սոցիալական հարցերի, Առողջապահության, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների, Միասնական սոցիալական ծառայության, Երևանի քաղաքապետարանի, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ:

Հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքների երաշխավորման հարցում Պաշտպանը համագործակցել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) հետ ընտրությունների ողջ գործընթացում: Այսպես, ընտրությունների նախօրեին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի՝ Երևանի ավագանու ընտրությունների անկախ մշտադիտարկում իրականացնող աշխատանքային խմբի անդամները աշխատակազմում հանդիպել են ԿԸՀ-ի ներկայացուցիչներին, որի ընթացքում, ի թիվս այլնի, քննարկվել են ընտրական գործընթացների ժամանակ հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի իրացման հարցերը:

Ի թիվս այլնի՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցերը քննարկելու նպատակով Պաշտպանը հանդիպել է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախագահի հետ: Քննարկման ընթացքում հատուկ անդրադարձ է կատարվել հաշմանդամություն ունեցող անձանց համար տեսալսողական մեդիայով տրամադրվող տեղեկատվության հասանելիության և մատչելիության ապահովման խնդիրներին: Պաշտպանն ընդգծել է միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա քննարկված խնդիրները հասցեագրելուն ուղղված կառուցակարգերի և մեթոդաբանության մշակման անհրաժեշտությունը:

Ընթացիկ տարում Պաշտպանը կարևորել է նաև տարբեր ձևաչափերով համագործակցությունը քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

2023 թվականին կազմակերպվել է Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի երկու նիստ:

Հուլիսի 21-ին կազմակերպված նիստին ներկայացվել են Հայաստանում անձնական օգնականի ծառայության տրամադրման հետ կապված Պաշտպանի արձանագրած խնդիրները, իսկ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի անդամները խոսել են այն մասին, թե ինչ խոչընդոտներ կան Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Քննարկման շրջանակներում ընդգծվել է հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու, իրենց համայնքում ներառվելու, այդ թվում՝ հանրությանը հասանելի ծառայություններից օգտվելու իրավունքների իրականացման, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական միջավայրի, տեղեկատվության և հաղորդակցության մատչելիության խթանման կարևորությունը:

Քննարկմանն առցանց մասնակցել են նաև Կանադայի ներկայացուցիչները՝ ներկայացնելով հաշմանդամություն ունեցող անձանց համար անձնական օգնականի ծառայության տրամադրման, հաշմանդամություն ունեցող անձանց աջակցության ծառայությունների վերաբերյալ իրենց երկրի փորձը:

Հաջորդ նիստը հրավիրվել է նոյեմբերի 20-ին, որի ընթացքում քննարկվել են «Հայաստանի Հանրապետության կառավարության «Անձնական օգնականի ծառայություն տրամադրելու կարգը և պայմանները հաստատելու մասին» որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծով նախատեսված կարգավորումները: Ներկայացվել են նախագծի առնչությամբ **Մարդու իրավունքների պաշտպանի** աշխատակազմի և Խորհրդի անդամների մտահոգություններն ու դիտարկումները:

Մասնավորապես, անդրադարձ է կատարվել անձնական օգնականի ինստիտուտի ֆինանսավորմանը, անձնական օգնականին ներկայացվող չափանիշներին, անձնական օգնականի ծառայություններից օգտվելու հնարավորություն ունեցող հաշմանդամություն

ունեցող անձանց շրջանակին, անձնական օգնականի կողմից տրամադրվող ծառայությունների նկատմամբ մշտադիտարկում իրականացնելու խնդիրներին և այլն:

Պաշտպանը, կարևորելով պետության աջակցությունը հաշմանդամություն ունեցող անձանց ստեղծագործական ներուժի խթանման գործում, 2023 թվականի օգոստոսի 12-ին մասնակցել է հատուկ կարիքներ ունեցող մարդկանց ազգային երաժշտության «Ճախրուկ» միջազգային 3-րդ փառատոնին, տարվա ընթացքում պարբերաբար հանդիպումներ ունեցել հաշմանդամություն ունեցող անձանց հետ:

Հաշվետու տարում Պաշտպանը կարևորել է նաև միջազգային գործընկերների հետ համագործակցության ամրապնդումը հանդիպումների ու ծրագրային գործողությունների իրականացման միջոցով: Նշված ոլորտում առանձին միջոցառումներ իրականացվել են Կանադայի Խորհրդարանական Կենտրոնի՝ «Աջակցություն Հայաստանի խորհրդարանին» ծրագրի հետ համագործակցությամբ:

2023 թվականին Մարդու իրավունքների պաշտպանը մեկնարկել է հաշմանդամություն ունեցող անձանց մասին հաջողության պատմությունների իրազեկման արշավ՝ նկարահանելով և ներկայացնելով հաշմանդամություն ունեցող տարբեր անձանց հաջողության պատմությունների առնչությամբ տեսահոլովակներ:

Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է ոլորտի բոլոր պատասխանատուների՝ իրավասու պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և ոլորտում գործող միջազգային կազմակերպությունների ջանքերի համատեղումը՝ ուղղված հանրային կյանքի բոլոր ոլորտներում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական լիարժեք ինտեգրումն ապահովելուն:

ԳԼՈՒԽ 1. ԱՆԿԱԽ ԱՊՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆԵՐԱՌՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման, խթանման և պաշտպանության պետական քաղաքականության հիմնական ուղղություններից են համայնքներում մատչելի ծառայությունների ստեղծումն ու զարգացումը, հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքի, համայնքում ներառվելու, ընտանեկան կամ դրան մոտ միջավայր ապահովելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը և դրանց բարելավումը, հաշմանդամություն ունեցող անձանց համար սոցիալական ներառմանը միտված միջոցառումների, մատուցվող ծառայությունների և տրամադրվող աջակցող միջոցների մատչելիության, հասանելիության և հասցեականության ապահովումը, հաշմանդամություն ունեցող անձանց համար աջակցող միջոցների ստեղծման և զարգացման խթանումը, աջակցող միջոցների, այդ թվում՝ ծառայությունների ստեղծմանը և կիրառմանը միտված ծրագրերի (միջոցառումների) իրականացումը, աջակցող միջոցների վերաբերյալ տեղեկությունների մատչելիության և հասանելիության ապահովումը, շուրջօրյա խնամքի հաստատությունների ապաինստիտուցիոնալացումը, խնամքի ծառայությունների համայնքահենք ծառայություններով փոխակերպումը և այլն:

Հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և համայնքում ներառվելու իրավունքն ամրագրվել է միջազգային մի շարք փաստաթղթերում և ներպետական օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայում, դրան վերաբերող մեկնաբանություններում, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքում, ենթաօրենսդրական իրավական ակտերում և այլն:

Հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայությունների բարելավումը, խնամքի ծառայությունների փոխակերպումը և անկախ կյանքի ապահովումը որպես առաջնահերթություն է նախանշվել նաև ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 8-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2023-2027 թվականների համալիր ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 943-Լ որոշմամբ:

Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները, ստացված գրավոր և բանավոր դիմում-բողոքները, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ստացված ահազանգերը վկայում են, որ հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և համայնքում ներառվելու իրավունքի ապահովման տեսանկյունից առկա են մի շարք համակարգային խնդիրներ, որոնց անդրադարձ է կատարվել նաև նախորդ տարիների տարեկան հաղորդումներում[724] և արտահերթ հրապարակային զեկույցում[725]:

Մարդու իրավունքների պաշտպանն, ի թիվս այլնի, արձանագրել է.

[724] Տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 1373-1376, հասանելի է https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf հղումով, 2024 թվականի փետրվարի 23-ի դրությամբ: Տե՛ս նաև 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 1370-1380, հասանելի է https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 2024 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

[725] Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ, Երևան, 2022թ., էջեր 101-182 հասանելի է https://www.ombuds.am/images/files/66d55894cd4c933cef65a7d6d7d7b35a.pdf հղումով, 2024 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

- ապաինստիտուցիոնալացման ապահովման, հաշմանդամություն ունեցող անձի անկախ կյանքի հմտությունների զարգացմանն ուղղված, համայնքահենք ծառայությունների տրամադրման հետ կապված խնդիրներ,
- անձին հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելու գործընթացի, գնահատման արդյունքում յուրաքանչյուր անձի կարիքից բխող հասցեական ծառայությունների և աջակցող միջոցների տրամադրման հետ կապված խնդիրներ,
- հաշմանդամություն ունեցող անձանց՝ իրենց վերաբերելի հարցերում անձամբ որոշումներ կայացնելու իրավունքն ապահովելու հետ կապված խնդիրներ:

Անկախ ապրելու և համայնքում ներառվելու իրավունքի ապահովման նպատակով Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է կյանքի բոլոր ոլորտներում, այդ թվում՝ կրթության, մշակույթի, սպորտի, առևտրի, ժամանցի ոլորտներում մատչելիության, համընդհանուր դիզայնի սկզբունքների պահպանման և խելամիտ հարմարեցումների տրամադրման ապահովումը, որոնց հետ կապված խնդիրներին ավելի մանրամասն անդրադարձ է կատարվել տարեկան հաղորդման սույն բաժնի այլ գլուխների շրջանակում:

1. Ապաինստիտուցիոնալացման ապահովման, հաշմանդամություն ունեցող անձի անկախ կյանքի հմտությունների զարգացմանն ուղղված, համայնքահենք ծառայությունների տրամադրման հետ կապված խնդիրներ

Անկախ ապրել և համայնքում ներառվել նշանակում է ապրել ցանկացած տեսակի հաստատություններից դուրս:

Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող բազմաթիվ անձինք շարունակում են խնամք ստանալ բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա խնամք տրամադրող հաստատություններում: Այդպիսի հաստատություններ են «Ձորակ» շուրջօրյա մասնագիտացված խնամքի կենտրոն», «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն», «Խարբերդի մասնագիտացված մանկատուն», «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպությունները, համայնքային հինգ փոքր տները և այլն:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն, օրինակ, «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում խնամվում է 18 տարին լրացած 21 շահառու, որոնցից 12-ը արական, 9-ը իգական սեռի ներկայացուցիչներ: Բոլորն ունեն հաշմանդամություն: Չափահաս անձանց համար նախատեսված հաստատությունների ծանրաբեռնված լինելու պատճառով, մինչ այժմ շահառուները խնամվում են մանկատանը: «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում խնամվում են 18 տարին լրացած 192 շահառու՝ 108 արական, 84 իգական սեռի ներկայացուցիչներ, բոլոր շահառուները շարունակում են խնամվել մանկատանը առողջական խնդիրների, ինչպես նաև չափահաս անձանց համար նախատեսված խնամքի կենտրոնների գերծանրաբեռնվածության պատճառով:

Հաշվի առնելով երեխաների, հատկապես, հաշմանդամություն ունեցող երեխաների ֆիզիկական ու հոգեկան առողջ զարգացումն ապահովելու հարցում ընտանեկան միջավայրում ապրելու կարևորությունը՝ առավել մտահոգիչ է հաստատություններում հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ նախարարության

ենթակայությամբ գործող երեխաների շուրջօրյա խնամք իրականացնող բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) 5 հաստատությունում իրականացվում է առանց ծնողական խնամքի մնացած 589 շահառուի շուրջօրյա խնամքի, դաստիարակության ապահովումը, նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Մանկատներից երեքը հատուկ է՝ մասնագիտացված, որտեղ խնամվում է հաշմանդամություն ունեցող՝ կենտրոնական նյարդային համակարգի օրգանական և ֆունկցիոնալ ծանր ախտահարումներ, բնածին և ձեռքբերովի մտավոր և ֆիզիկական խնդիրներ ունեցող 472 շահառու: Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի ապահովման հետ կապված խնդիրներն ու Մարդու իրավունքների պաշտպանի արձանագրումները ներկայացված են սույն տարեկան հաղորդման համապատասխան գլխում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ պետական բյուջեի միջոցներով դրամաշնորհի պայմանագրերի հիման վրա 2023 թվականին իրականացվել են «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական ծառայություններ ցերեկային կենտրոնում» և «Հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ համայնքահենք փոքր խմբային տներում» միջոցառումները: Նշված միջոցառումների շրջանակներում ծառայություններ են ստանում նաև աուտիզմ ունեցող հաշմանդամություն ունեցող անձինք: 2023 թվականի դրամաշնորհի տրամադրման մրցույթներում հաղթել է նաև «Աուտիզմ» ազգային հիմնադրամի «Իմ ուղին» սոցիալ-վերականգնողական կենտրոնը, որտեղ ծառայություն են ստանում ամսվա կտրվածքով հաշմանդամություն ունեցող 100 անձինք:

Մինչդեռ՝ 2023 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացվել են տեղեկություններ անկախ կյանքի ծառայությունների բացակայության պատճառով 18 տարին լրացած աուտիզմ ունեցող անձին պետության կողմից հատուկ (մասնագիտացված) հաստատություններում տեղավորելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ: Նշվածի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է աուտիզմ ունեցող անձանց համար անկախ կյանքի ծառայությունների տրամադրման հարցում հստակ կառուցակարգերի մշակումն ու ներդնումը, որը կբացառի աուտիզմ ունեցող անձանց որևէ հատուկ (մասնագիտացված) հաստատություններ ուղղորդելու գործելակերպը:

Խնդրահարույց է այն, որ բացի խնամվողներից, բնակչության պաշտպանության հաստատություններ ընդունվելու համար առկա են նաև հերթագրված անձինք, ինչը վկայում է, որ հաշմանդամություն ունեցող անձանց խնամքը հաստատություններ տեղափոխելու միջոցով իրականացնելու գործընթացը շարունակվում է:

Հաստատություններում ևս արձանագրվել են խնամքի և ծառայությունների տրամադրման հետ կապված մի շարք խնդիրներ, որոնք առավել մանրամասն արտացոլված են սույն տարեկան հաղորդման համապատասխան գլուխներում: Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է հաստատությունների աշխատակիցների մասնագիտական պատրաստվածությունն ու շարունակական վերապատրաստումների իրականացումը, ինչպես նաև հաստատություններում պետության կողմից մշտադիտարկումներ իրականացնելու հստակ կառուցակարգերի ձևավորումն ու ապահովումը, ինչը վեր կհանի առկա խնդիրներն ու կմշակի դրանց լուծման հստակ ուղիները:

Որպես նշված հաստատություններին այլընտրանք՝ պետությունը ՀՀ կառավարության 2022 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 1744-Ն որոշմամբ իրավական հիմք է ստեղծել համայնքային փոքր տների ստեղծման և գործունեության համար: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2023 թվականին շուրջօրյա խնամքի հինգ փոքր տներում կազմակերպվել է ամսական 62 հաշմանդամություն ունեցող անձի շուրջօրյա խնամքը:

Հարկ է փաստել, սակայն, որ թեև փոքր խնամքի տները նախատեսված են որպես ընտանեկան միջավայրին առավելագույնս մոտեցված, 8-16 անձի համար նախատեսված կենտրոններ, սակայն, դրանք ևս ունեն ինստիտուցիոնալացմանը բնորոշ հատկանիշներ: Օրինակ՝ ՀՀ կառավարության 2022 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 1744-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 64-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ փոքր տանը խնամքի տրամադրումը կարող է դադարեցվել խնամքի կենտրոնի կամ փոքր տան ներքին կարգապահական կանոնները մեկ տարվա ընթացքում երեք անգամ խախտելու դեպքում:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների 5-րդ ընդհանուր մեկնաբանություն

Որևէ բան չի կարող համարվել անկախ կենսապայման, եթե դա ունի ինստիտուցիոնալ տարրեր: Սա վերաբերում է բազմաթիվ բնակիչներով մեծ հաստատություններին, մի քանի անհատներով փոքր խմբային տներին կամ նույնիսկ առանձին տներին, եթե դրանք ունեն հաստատությունների կամ ինստիտուցիոնալացման բնորոշիչ հատկանիշներ: Մեկնաբանության համաձայն՝ պետությունները պետք է աստիճանաբար դադարեցնեն ինստիտուցիոնալացումը, ձեռնպահ մնան նոր ինստիտուտներ կառուցելուց և չընդլայնեն գոյություն ունեցողները[726]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է ապաինստիտուցիոնալացման քաղաքականության իրականացման գործընթացում այնպիսի միջոցառումների ձեռնարկումը, որոնք կբացառեն հաշմանդամություն ունեցող անձանց առանձնացումը հասարակությունից և ինստիտուցիոնալացմանը բնորոշ հատկանիշներ պարունակող պայմաններում ապրելը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2023 թվականի ընթացքում հանրապետության մարզերում և Երևան քաղաքում գործող 10 ցերեկային կենտրոններում ծառայություն է մատուցվում ամսական 410 հաշմանդամություն ունեցող անձի: Ցերեկային կենտրոններում հաշմանդամություն ունեցող անձինք կենտրոնի տարբեր մասնագետների կողմից իրականացված կարիքների գնահատման արդյունքում ստանում են իրենց կարիքներին և կարողություններին համապատասխան ծառայություններ՝ խմբային և անհատական պարապմունքների միջոցով: Նախարարությունը հայտնել է նաև, որ դրամաշնորհային պայմանագրերի հիման վրա իրականացվում է նաև «Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում» ծրագիրը, որի հիմնական նպատակն է ապահովել տեսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող (չտեսնող) անձանց ինքնուրույն կենցաղավարման, տեղաշարժվելու, տրանսպորտից օգտվելու իրավունքը, ուսուցանել և զարգացնել անկախ կյանք վարելու հմտություններ, նպաստել նրանց սոցիալ-հոգեբանական խոչընդոտների հաղթահարմանը, սոցիալական ներառմանը հասարակությունում:

[726] Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեի թիվ 5 ընդհանուր մեկնաբանությունն հասանելի է https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD%2FC%2FGC%2F5&Lang=en հղումով:

Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ նման միջոցառումների իրականացումը բավարար չէ, անհրաժեշտ է ներդնել կառուցակարգ, որով հնարավոր կլինի ՀՀ ամբողջ տարածքում և հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց անհրաժեշտության դեպքում տրամադրել անձի անկախ կյանքի հմտությունների զարգացմանն ուղղված, համայնքահենք ծառայություններ: Նշված ծառայությունները ներդնելիս և իրականացնելիս պետք է առաջնորդվել այնպիսի մոտեցմամբ, որ դրանք հասանելի լինեն հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց և համապատասխանեն նրանց իրական կարիքներին: Այդ առումով անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված են 18-ից բարձր տարիքի 184433 հաշմանդամություն ունեցող անձ և 9303 հաշմանդամություն ունեցող երեխա:

Անձի անկախ կյանքի հմտությունների զարգացմանն ուղղված ծառայությունների մատուցումը համակարգված և արդյունավետ իրականացնելու տեսանկյունից անհրաժեշտ է արագացնել անկախ կյանքի կենտրոնների ստեղծման գործընթացը: Հարկ է փաստել, սակայն, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2023 թվականին նախարարության համակարգմամբ որևէ անկախ կյանքի կենտրոն չի ստեղծվել: Անկախ կյանքի ծառայություն ներդնելու նպատակով Արմավիրի մարզում ձեռք բերված հողատարածքի վրա ՄԱԿ-ի աջակցությամբ աշխատանքներ են իրականացվում անկախ կյանքի ծառայությունների կենտրոն կառուցելու ուղղությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումների արդյունքում արձանագրվել են նաև դեպքեր, երբ ընտանիքի անդամները ֆինանսական դրությամբ, հաշմանդամություն ունեցող երեխայի խնամքը կազմակերպելու հմտությունների բացակայությամբ պայմանավորված՝ նախընտրել են երեխաների խնամքը վստահել հաստատություններին: Նշվածը անընդունելի է, ինչի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը հատուկ կարևորում է նաև հաշմանդամություն ունեցող անձանց ընտանիքի անդամներին մատուցվող հասցեական ծառայությունների, այդ թվում՝ բավարար ֆինանսական աջակցության տրամադրման հստակ կառուցակարգերի ներդնումն ու իրականացումը:

Մարդու իրավունքների պաշտպանը խնդրահարույց է համարում նաև այն, որ ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 8-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2023-2027 թվականների համալիր ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 943-Լ որոշմամբ թեև նախատեսված են վերը նշված խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներ և ակնկալվող արդյունքներ, սակայն դրանք չեն բովանդակում ապաինստիտուցիոնալացումն ապահովելու թիրախային արդյունքն ու պետական բյուջեով նախատեսված բավարար հատկացումներ: «Անկախ կյանքի ծառայությունների ներդնում» կարևորագույն միջոցառման համար, օրինակ, որպես ֆինանսավորման աղբյուր մատնանշված է միայն օրենքով չարգելված այլ աղբյուրներ: Սա ուշադրության արժանի հանգամանք է առնվազն այն բանի հաշվառմամբ, որ այդ միջոցառումներով ակնկալվող արդյունքների իրագործումը չի ենթադրում միայն օրենսդրական փոփոխությունների

գործընթաց: Իսկ պետական բյուջեով նախատեսված ֆինանսավորում չհատկացնելու արդյունքում չի երաշխավորվում նշված միջոցառումների իրականացումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ ապաինստիտուցիոնալացման քաղաքականության իրականացման գործընթացում բացառել այնպիսի նոր հաստատությունների ստեղծումը, որոնք կպարունակեն ինստիտուցիոնալացման տարրեր և հաշմանդամություն ունեցող անձանց հասարակությունից առանձնացնելու հիմքեր:

✓ նախաձեռնել և իրականացնել այնպիսի կանխարգելիչ միջոցառումներ, որոնք կբացառեն հաշմանդամություն ունեցող անձանց մուտքը բնակչության պաշտպանության հաստատություններ:

✓ ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց ընտանիքի անդամներին մատուցվող հասցեական ծառայությունների տրամադրման հստակ կառուցակարգերի ներդնումն ու իրականացումը:

✓ ներդնել կառուցակարգ, որով հնարավոր կլինի ՀՀ ամբողջ տարածքում և հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց տրամադրել անձի անկախ կյանքի հմտությունների զարգացմանն ուղղված, համայնքահենք ծառայություններ: Նշված ծառայությունները ներդնելիս և իրականացնելիս պետք է առաջնորդվել այնպիսի մոտեցմամբ, որ դրանք հասանելի լինեն հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց և համապատասխանեն նրանց անձնական կարիքներին:

✓ մշակել և իրականացնել այնպիսի ռազմավարություն, որով ապաինստիտուցիոնալացումը կնախանշվի որպես արդյունք և պետական հատկացումները կուղղվեն հենց այդ նպատակով նախատեսված հստակ միջոցառումների իրականացմանը:

2. Անձին հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելու գործընթացի, գնահատման արդյունքում յուրաքանչյուր անձի կարիքից բխող հասցեական ծառայությունների և աջակցող միջոցների տրամադրման հետ կապված խնդիրներ

Պետությունը որդեգրել է հաշմանդամության բժշկասոցիալական փորձաքննության մոդելից ֆունկցիոնալության գնահատման մոդելի անցման քաղաքականություն, որի նպատակը՝ հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելու հետ կապված որոշումները անձի առողջական խնդիրների, գործունեության, մասնակցության և միջավայրային արգելքների գնահատման հիման վրա կայացնելն ու անհատական կարիքներին համարժեք սոցիալական ծառայություններ տրամադրելն է:

Մարդու իրավունքների պաշտպանը, կարևորելով հաշմանդամություն ունեցող անձի անկախ ապրելու և համայնքում ներառվելու իրավունքի իրացման հարցում հասցեական ծառայությունների տրամադրման անհրաժեշտությունը, բազմիցս բարձրացրել է անձին հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելու գործընթացում այնպիսի մոդելի ներդրման անհրաժեշտությունը, որը հնարավորություն կտա լիարժեքորեն իրականացնել անձի բազմակողմանի գնահատումն ու յուրաքանչյուր անձի կարիքից բխող հասցեական ծառայությունների տրամադրումը:

Այդ կապակցությամբ հատկանշական է, որ 2023 թվականի փետրվարի 1-ից, բացառությամբ բժշկասոցիալական վերափորձաքննության և մինչև 2023 թվականի փետրվարի 1-ը դիմած անձանց համար բժշկասոցիալական փորձաքննության,

Հայաստանի Հանրապետությունում իրականացվել է անձի ֆունկցիոնալության գնահատում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ անձի ֆունկցիոնալության առաջնակի գնահատման նպատակով 2023 թվականին դիմել է 14137 անձ, անձի ֆունկցիոնալության գնահատման արդյունքում նրանցից 7064 անձի՝ սահմանվել է միջին աստիճանի ֆունկցիոնալության սահմանափակում, 2304 անձի՝ ծանր աստիճանի ֆունկցիոնալության սահմանափակում, 243 անձի՝ խորը աստիճանի ֆունկցիոնալության սահմանափակում, իսկ 1598 անձի՝ թեթև աստիճանի ֆունկցիոնալության սահմանափակում: Միաժամանակ՝ նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2023 թվականի ընթացքում 32306 անձ դիմել է բժշկասոցիալական փորձաքննություն (վերափորձաքննություն) իրականացնելու նպատակով, (որից՝ (2023 թվականի հունվար ամսվա ընթացքում) առաջին անգամ բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնելու նպատակով՝ 1877 անձ), որոնցից՝ 28287 անձ ճանաչվել են հաշմանդամություն ունեցող անձ (առաջին անգամ՝ 1466 անձ):

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները, ստացված գրավոր և բանավոր դիմում-բողոքները, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ստացված ահազանգերը վկայում են, որ ինչպես ֆունկցիոնալության գնահատման, այնպես էլ բժշկասոցիալական փորձաքննության գործընթացներում առկա են մի շարք համակարգային խնդիրներ:

Բժշկասոցիալական փորձաքննության գործընթացում արձանագրված մի շարք խնդիրների Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է նաև նախորդ տարիների տարեկան հաղորդումներում[727] և արտահերթ հրապարակային զեկույցում[728]: 2023 թվականի ընթացքում ևս Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացվել են բժշկասոցիալական փորձաքննության գործընթացների ընթացակարգային նորմերի խախտումների վերաբերյալ տեղեկություններ: Դրանք հիմնականում վերաբերում են բժշկասոցիալական փորձաքննության իրականացման ժամկետներին, բժշկասոցիալական վերափորձաքննության իրականացման օրվա վերաբերյալ ծանուցմանը և այլն: Բողոքների շրջանակում բարձրացվել են նաև հարցեր՝ կապված անժամկետ հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելու փոխարեն ևս մեկ տարի ժամկետով հաշմանդամություն սահմանելու հետ: Նշված և այլ բողոքների առնչությամբ Մարդու իրավունքների աշխատակազմում իրականացվում է քննարկման ընթացակարգ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացվել են նաև բողոքներ առ այն, որ նույն առողջական վիճակում գտվող անձը մի դեպքում ճանաչվել է հաշմանդամություն ունեցող անձ, իսկ մյուս տարի, անգամ ավելի վատ առողջական վիճակում գտնվելով, չի ճանաչվել, կամ վերջինիս նկատմամբ սահմանվել է հաշմանդամության ավելի ցածր խումբ: Բողոք ներկայացրած անձինք հայտնել են, որ իրենց համար որոշակի չեն եղել նման որոշումների կայացման հանգամանքները:

---

[727] Տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 1339-1350, հասանելի է https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf հղումով, 2024 թվականի փետրվարի 23-ի դրությամբ: Տե՛ս նաև 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 1330-1335, հասանելի է https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 2024 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

[728] Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ, Երևան, 2022թ., էջեր 101-182 հասանելի է https://www.ombuds.am/images/files/66d55894cd4c933cef65a7d6d7d7b35a.pdf հղումով, 2024 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

Նշվածի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է վարչարարության իրականացման գործընթացում այնպիսի սկզբունքով առաջնորդվելը, որը կբացառի միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ անհավասար մոտեցում ցուցաբերելը, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք: Պաշտպանը կարևորում է և այն, որ ընդունված որոշումը պարունակի բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքները, որոնք իրավասու մարմնին հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշում:

Ընդ որում, նշված մոտեցմամբ անհրաժեշտ է առաջնորդվել նաև ֆունկցիոնալության գնահատում իրականացնելիս: 2023 թվականին Պաշտպանը ստացել է ԱՆ քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձանց ֆունկցիոնալության գնահատման ուղեգրման գործընթացների ընթացակարգային նորմերի խախտումների վերաբերյալ տեղեկություններ, որոնք հիմնականում վերաբերել են ուղեգրման ժամկետներին, գործընթացների վերաբերյալ իրավասու մարմինների ներկայացուցիչների և քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց ոչ պատշաճ իրազեկմանը և այլն:

Ֆունկցիոնալության գնահատման գործընթացները կարգավորող իրավական ակտերի ուսումնասիրության արդյունքում Մարդու իրավունքների պաշտպանն իր մտահոգությունն է հայտնում նաև այնպիսի կարգավորումների առնչությամբ, որոնք հնարավորություն են տալիս որոշել անձի ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանը՝ առանց էական փաստական հանգամանքների վերաբերյալ շահառուին տեղեկացնելու:

Այսպես, օրինակ, ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի թիվ 1180-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 42-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային համակարգն ինքնաշխատ ձևավորում է ֆունկցիոնալության գնահատման որոշումը (վարչական ակտը), որը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով գրավոր վարչական ակտին ներկայացվող պահանջներից բացի, առնվազն ներառում է տեղեկություններ անձի ֆունկցիոնալության սահմանափակման առկայության կամ բացակայության, ֆունկցիոնալության սահմանափակման տեսակի և աստիճանի, հաշմանդամության պատճառական կապի, հաշմանդամության սահմանման ժամկետների և օրենքով սահմանված այլ դեպքերի մասին: Ֆունկցիոնալության գնահատման որոշումը (վարչական ակտը) պարունակում է Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի (այսուհետ՝ «e-verify») տասնվեց նիշանոց ծածկագիրը և ինտեգրվում է «e-verify» համակարգին:

Նշված կարգավորումից պարզ չէ՝ ինքնաշխատ կերպով գեներացվող որոշումը պարունակում է արդյո՞ք ամփոփագրի, ֆունկցիոնալության գնահատման չափորոշիչների, դրանց կիրառման մեթոդաբանության և ֆունկցիոնալության գնահատման ողջ գործընթացի վերաբերյալ համապարփակ տեղեկատվությունը, թե ոչ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է շահառուին նման համապարփակ տեղեկատվության փոխանցման անհրաժեշտությունը, որով հնարավորություն կտրվի գնահատվող անձին ծանոթանալու իր նկատմամբ ընդունված որոշման բոլոր էական հանգամանքներին:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում արձանագրվել են նաև խնդիրներ՝ կապված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության կողմից անձին ֆունկցիոնալության գնահատման ուղեգրելու գործընթացում: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ մուտքագրված

բողոքներից մեկի համաձայն՝ անձի բուժող բժիշկը «Արմեդ» էլեկտրոնային առողջապահության համակարգ է մուտքագրել պացիենտի հին բժշկական տվյալները: Արդյունքում՝ անձի՝ ֆունկցիոնալության գնահատման ուղեգրելու գործընթացը երկարաձգվել է:

Նշվածի համատեքստում Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է բժիշկների՝ «Արմեդ» էլեկտրոնային առողջապահության համակարգից օգտվելու հմտությունների զարգացմանն ուղղված գործուն միջոցների ձեռնարկման անհրաժեշտությունը: Կարևոր է նաև օրենսդրությամբ ֆունկցիոնալության գնահատման ուղեգրելու գործընթացի համար հստակ ժամկետների սահմանումը և ուղեգրմանը ներկայացվող պահանջների պահպանման նկատմամբ արդյունավետ վերահսկողական կառուցակարգերի ներդնումը:

Ֆունկցիոնալության գնահատումն իրականացվում է հատուկ այդ նպատակով ներդրված «e-disability» էլեկտրոնային համակարգի միջոցով: Անձի ֆունկցիոնալության գնահատման համար դիմումը կարող է ներկայացվել առցանց, փոստով, էլեկտրոնային փոստով կամ առձեռն ծառայություն կամ ծառայության ցանկացած տարածքային կենտրոն: Առցանց դիմելու դեպքում դիմումը և ինքնագնահատման հարցաշարը գնահատվողը կամ ներկայացուցիչը մուտքագրում են էլեկտրոնային համակարգ:

Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ նման կարևոր նշանակություն ունեցող էլեկտրոնային համակարգը մատչելի չէ հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Այդ կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը հարցադրումներ է ուղղել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն՝ պարզելու համար թե ի՞նչ քայլեր են ձեռնարկվել «e-disability» համակարգը մատչելի դարձնելու ուղղությամբ: Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ «e-disability» էլեկտրոնային համակարգը հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի դարձնելու ուղղությամբ աշխատանքները մեկնարկել են: Գործընթացում ներգրավված են տեղական և միջազգային փորձագետներ: ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ «Հայաստանի տեղեկատվական համակարգեր» գործակալության և «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի միջև կա պայմանավորվածություն՝ համատեղ մատչելիության «աուդիտ» իրականացնելու հարցում՝ ընդգրկելով նաև միջազգային փորձագետների (օր.՝ https://e-disability.am): Նշվածի նպատակն է բավարար կարողությունների զարգացումը, որպեսզի, անհրաժեշտության դեպքում, համապատասխան մասնագետները կարողանան անկախ կերպով «աուդիտ» իրականացնել, ինչը արժեքավոր ներդրում կլինի պաշտոնական կայքերի մատչելիության ապահովման գործում:

Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է նշված էլեկտրոնային համակարգի մատչելիության ապահովման ուղղությամբ գործուն և անհետաձգելի միջոցների ձեռնարկման անհրաժեշտությունը:

2022 թվականի հուլիսի 28-ի թիվ 1161-Ն որոշմամբ հաստատվել է ծառայությունների անհատական ծրագրերը կազմելու և իրականացնելու կարգը, որն ուժի մեջ է մտել 2023 թվականի փետրվարի 1-ից, և 2023 թվականի ընթացքում չի տարածվել միայն մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը բժշկասոցիալական վերափորձաքննության, մինչև 2023

թվականի փետրվարի 1-ը բժշկասոցիալական փորձաքննության համար դիմած և արդյունքում հաշմանդամություն ձեռք բերած, ինչպես նաև մինչև 2023 թվականի փետրվարի 1-ը 1-ին, 2-րդ, 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող կամ «հաշմանդամ երեխա» կարգավիճակ ունեցող անձանց վրա, ովքեր դիմել են վերականգնողական անհատական ծրագիր ստանալու կամ դրանում փոփոխություններ կատարելու համար: Վերջիններիս նկատմամբ 2023 թվականի ընթացքում շարունակել են գործել ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի N 1535-Ն որոշմամբ սահմանված կարգավորումները:

Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է պետության կողմից իրականացված ջանքերը՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձի կարիքների բազմակողմանի գնահատման արդյունքում յուրաքանչյուր անձի կարիքից բխող հասցեական ծառայությունների տրամադրմանը: Միևնույն ժամանակ, մշտադիտարկումների արդյունքում այդպիսի ծառայությունների տրամադրման հարցում արձանագրվել են մի շարք համակարգային խնդիրներ:

Օրինակ՝ 2022 թվականի հուլիսի 28-ի թիվ 1161-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 10-րդ կետի համաձայն՝ բժշկական, վերականգնողական, կրթական, սոցիալական համապատասխան ծառայություններ մատուցող և աջակցող միջոցներ տրամադրող կազմակերպություններն իրականացնում են ծառայությունների անհատական ծրագրերով իրենց վերապահված միջոցառումները և ծառայությունները՝ սույն կարգով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով: Այն միջոցառումները կամ ծառայությունները, որոնց իրականացումը նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին, կարող են իրականացվել օրենքով չարգելված այլ աղբյուրներից ֆինանսավորման միջոցով: Այս դեպքում կազմակերպությունը կլինի ոչ թե պատասխանատու տվյալ միջոցառման/ծառայության համար, այլ կնշվի որպես նախընտրելի կազմակերպություն տվյալ բնագավառում:

Նշված կարգավորման վերլուծությունից հետևում է, որ ծառայությունների անհատական ծրագրերով կարող են նախատեսվել հասարակական կյանքի բոլոր ոլորտներում անձի լիարժեք և արդյունավետ մասնակցությունը խթանելու, անկախ կյանքի իրավունքն իրացնելու նպատակով անհրաժեշտ բժշկական, վերականգնողական, կրթական, մասնագիտական, սոցիալական ծառայություններ և միջոցառումներ, որոնց իրականացումը նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

Մարդու իրավունքների պաշտպանը խնդրահարույց է համարում պետության կողմից անհրաժեշտ ռեսուրսների տրամադրումից ձեռնպահ մնալն այն պարագայում, երբ դրանք պետության կողմից գնահատված չափորոշիչներին համապատասխան՝ անհրաժեշտ են հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքի իրավունքն իրացնելու նպատակով:

Աջակցող միջոցների տրամադրման գործընթացում ևս արձանագրվել են մի շարք խնդիրներ: Խնդիրները հիմնականում վերաբերել են աջակցող միջոցների որակին, վերանորոգմանը, նախարարության հետ պայմանագիր կնքած իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի միջոցով հաշմանդամություն ունեցող անձին անհրաժեշտ աջակցող միջոցներ չունենալուն, աջակցող միջոցների որակի և օգտագործման առանձնահատկությունների վերաբերյալ ոչ պատշաճ իրազեկմանը, աջակցող միջոցներ տրամադրող կազմակերպությունների հասանելիությանը, նրանց որակին, ձեռք բերելու ընթացակարգի մատչելիությանը, և այլն:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով, օրինակ, բարձրացվել էր այն հարցը, որ անձը չի կարողանում ձեռք բերել հավաստագրով նախատեսված աջակցող միջոցները, քանի որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ պայմանագիր կնքած կազմակերպությունների աջակցող միջոցների ցանկում առկա չեն անձին անհրաժեշտ պարագաները: Անձը նշել էր նաև, որ կան խանութներ, որտեղ առկա են իրեն անհրաժեշտ աջակցող միջոցները, սակայն վերջինս չի կարող իրեն տրամադրված հավաստագրով գնել դրանք, քանի որ աջակցող միջոցները պետք է ձեռք բերվեն միայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ պայմանագիր կնքած կազմակերպություններից:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 20-րդ հոդված

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 20-րդ հոդվածի համաձայն՝ հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորինս ինքնուրույն շարժունակությունը ապահովելու համար մասնակից պետությունները պարտավոր են ձեռնարկել արդյունավետ միջոցներ, այդ թվում՝ նպաստելով հաշմանդամություն ունեցող անձանց անհատական շարժունակությանը նրանց նախընտրած միջոցներով ու պահին և մատչելի գներով: Պետությունը պետք է նաև պահանջի շարժունակություն ապահովող օժանդակ սարքավորումներ, պարագաներ և օժանդակող տեխնոլոգիաներ արտադրող ձեռնարկություններից հաշվի առնել հաշմանդամություն ունեցող անձանց շարժունակության բոլոր ասպեկտները:

Այսպիսով, Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ պետությունը պետք է քայլեր ձեռնարկի հաշմանդամություն ունեցող անձանց ինքնուրույն շարժունակությունը ապահովելու նպատակով՝ ցանկացած պահի և վերջիններիս նախընտրած աջակցող միջոցներով: Այն դեպքում, երբ պետության հետ պայմանագիր կնքած կազմակերպությունները այդ պահին չունեն հաշմանդամություն ունեցող անձանց անհրաժեշտ աջակցող միջոցները՝ պետության պարտավորությունն է իրականացնել այլընտրանքային միջոցառումներ այս խնդրի լուծման ուղղությամբ:

Միաժամանակ, միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կան պետություններ, որտեղ հաշմանդամություն ունեցող անձինք սահմանափակված չեն պետության կողմից առաջարկված կազմակերպությունների ցանկով, և անգամ այն դեպքերում, երբ հաշմանդամություն ունեցող անձինք ցանկանում են ձեռք բերել իրենց անհրաժեշտ աջակցող միջոցը այլ կազմակերպություններից, նրանք ստանում են ծախսերի փոխհատուցում պետության կողմից[729]:

Մեկ այլ դեպքում՝ բողոք ներկայացրած անձը տեղեկացրել էր, որ իր բնակավայրում համապատասխան աջակցության միջոցը ունեցող կազմակերպության բացակայության և տրանսպորտային ծախսերը հոգալու անհնարինությամբ պայմանավորված՝ երկար ժամանակ հնարավորություն չի ունեցել ձեռք բերել իրեն անհրաժեշտ աջակցող միջոցը: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ հետագայում Երևանից ձեռքբերված աջակցության միջոցը անորակ է եղել:

Նշվածի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է պետության կողմից ՀՀ բոլոր մարզերում և համայնքներում որակյալ և անձի կարիքներին

[729] Վերականգնողական տեխնոլոգիաների սկանդինավյան կենտրոնի «Օժանդակող տեխնոլիաների տրամադրումը սկանդինավյան երկրներում» զեկույցը հասանելի է https://sid-inico.usal.es/idocs/F8/FDO20694/provisionassistivetechnology.pdf հղումով, էջ 19:

համապատասխան աջակցող միջոցներ ձեռք բերելու հնարավորության նախատեսումը՝ բացառելով ֆինանսական դրությամբ պայմանավորված անկախ կյանքի իրացումը անհնարին դարձնող որևէ դեպք:

Ընդ որում, ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2022 թվականի դեկտեմբերի 27-ի «Աջակցող միջոցների տրամադրման ոլորտում ուսումնասիրության արդյունքները հաստատելու մասին» թիվ 481-Ա որոշմամբ ևս անդրադարձ է կատարվել աջակցող միջոցների ձեռքբերման նոր մեխանիզմների ներդրման անհրաժեշտությանը, որի շրջանակներում առաջարկություն է կատարվել ներդնել շահառուի կողմից աջակցող միջոցի ձեռքբերման էլեկտրոնային հարթակի գործարկման տարբերակը՝ կարևորելով այն, որ հարթակը տրամադրի հնարավորինս շատ տեղեկատվություն կոնկրետ աջակցող միջոցի արտադրական գործընթացի և որակական հատկանիշների վերաբերյալ, ինչի մեջ կարող են մտնել աջակցող միջոցի դետալների ծագման երկիրը, առկայության դեպքում բժշկական հակացուցումները կամ օգտագործման մասին խորհուրդները: Բացի այդ, ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողովն առաջարկել է նաև հասանելիության ապահովման նպատակով փոխհատուցել շահառուի՝ կազմակերպություն այցի տրանսպորտային ծախսերը, օրինակ, պրոթեզավորման չափագրման, պրոթեզի հարմարեցման և ուսուցման, ինչպես նաև ամենամյա ստուգողական այցի դեպքերում:

ՀՀ կառավարության 2022 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1264-Ն որոշմամբ հաստատվել են անձնական օգնականի ծառայություն տրամադրելու կարգը և պայմանները: ՀՀ կառավարության 2024 թվականի հունվարի 4-ի թիվ 30-Ն որոշմամբ անձնական օգնականի ծառայություն տրամադրելու կարգը և պայմանները շարադրվել են նոր խմբագրությամբ:

Կարևորելով անձնական օգնականի ծառայությունների տրամադրման ինստիտուտի կայացման անհրաժեշտությունը՝ մինչև անձնական օգնականի ծառայությունների տրամադրման հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրական փոփոխությունների իրականացումը՝ 2023 թվականի ընթացքում հրավիրվել է Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի երկու նիստ: Առաջին նիստի ընթացքում ապահովվել է նաև Կանադայի արտաքին գործերի նախարարության «Պրո Դեմ» հիմնադրամի կողմից ֆինանսավորվող, Խորհրդարանական կենտրոնի (Կանադա) «Աջակցություն Հայաստանի խորհրդարանին» ծրագրի շրջանակներում կանադական կողմի մասնագետների առցանց մասնակցությունը միջոցառմանը: Կանադացի փորձագետները ներկայացրել են հաշմանդամություն ունեցող անձանց համար անձնական օգնականի ծառայության տրամադրման, հաշմանդամություն ունեցող անձանց աջակցության ծառայությունների վերաբերյալ իրենց երկրի փորձը, ինչպես նաև համատեղ պարտականությունները Կանադայի դաշնային և նահանգային մակարդակների միջև՝ հաշմանդամություն ունեցող անձանց աջակցության վերաբերյալ: Երկրորդ նիստի ընթացքում քննարկվել են «Հայաստանի Հանրապետության կառավարության «Անձնական օգնականի ծառայություն տրամադրելու կարգը և պայմանները հաստատելու մասին» որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծով նախատեսված կարգավորումները:

Ներկայացվել են նախագծի առնչությամբ **Մարդու իրավունքների պաշտպանի** աշխատակազմի և Խորհրդի անդամների մտահոգություններն ու դիտարկումները: Մասնավորապես, անդրադարձ է կատարվել անձնական օգնականի ինստիտուտի

ֆինանսավորմանը, անձնական օգնականին ներկայացվող չափանիշներին, անձնական օգնականի ծառայություններից օգտվելու հնարավորություն ունեցող հաշմանդամություն ունեցող անձանց շրջանակին, անձնական օգնականի կողմից տրամադրվող ծառայությունների նկատմամբ մշտադիտարկում իրականացնելու խնդիրներին և այլն:

Քննարկումների ընթացքում ներկայացված դիտարկումների հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանը ներկայացրել է իր առաջարկությունները «Անձնական օգնականի ծառայություն տրամադրելու կարգը և պայմանները հաստատելու մասին» որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի առնչությամբ:

Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացրած ոչ բոլոր առաջարկություններն են ընդունվել, որպիսի պայմաններում անձնական օգնականի ծառայությունների տրամադրման գործընթացում առկա մի շարք մոտեցումներ շարունակում են խնդրահարույց մնալ: Այդպիսի մոտեցումներից է, օրինակ, անձնական օգնականի ծառայություններից օգտվելու հնարավորությունը՝ տարիքով, ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանով, աշխատելու կամ սովորելու հանգամանքներով պայմանավորելը, այնպիսի պայմաններում, երբ ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի 5-րդ ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ «ապրել անկախ» նշանակում է ունենալ անհրաժեշտ բոլոր միջոցները՝ կայացնելու իրենց կյանքին վերաբերող բոլոր որոշումները, ունենալ ընտրություն և վերահսկողություն սեփական կյանքի նկատմամբ: Անձի ինքնուրույնությունը և ինքնորոշումը հիմնարար կարևորություն ունեն անկախ կյանքի համար, այդ թվում՝ (…) անձնական օգնության մատչելիության (…) տեսանկյունից[730]: Նշվածի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանն առաջարկել է հաշմանդամություն ունեցող անձի անձնական օգնականի ծառայություններից օգտվելու հնարավորությունը պայմանավորել վերջինիս կարիքների գնահատմամբ և չսահմանափակել տարիքով, ֆունկցիոնալության աստիճանով, զբաղվածությամբ կամ որևէ այլ կարգավիճակով, ինչը, սակայն, չի ընդունվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանը՝ հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և համայնքում ներառվելու իրավունքի իրացումն երաշխավորելու տեսանկյունից կարևորում է պետության կողմից գործուն միջոցների ձեռնարկումը՝ ուղղված միջազգային չափորոշիչներին համապատասխան անձնական օգնականի ինստիտուտի կայացմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ***ֆունկցիոնալության գնահատման գործընթացներում բացառել բժշկասոցիալական փորձաքննությունների ընթացքում պարբերաբար կրկնվող ընթացակարգային նորմերի խախտումներին համանման խախտումները,***
- ***իրականացնել իրազեկման աշխատանքներ ֆունկցիոնալության գնահատման ընթացակարգի վերաբերյալ քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների և քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց շրջանում:***

[730] Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեի թիվ 5 ընդհանուր մեկնաբանությունն հասանելի է https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD%2FC%2FGC%2F5&Lang=en հղումով:

✓ ***վարչարարության իրականացման գործընթացում առաջնորդվել այնպիսի սկզբունքով, որը կբացառի միապեսակ փաստական հանգամանքների նկատմամբ անհավասար մոտեցում ցուցաբերելը, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք:***

✓ ***ապահովել, որ ֆունկցիոնալության գնահատման արդյունքում ընդունված որոշումը պարունակի ամփոփագրի, ֆունկցիոնալության գնահատման չափորոշիչների, դրանց կիրառման մեթոդաբանության և ֆունկցիոնալության գնահատման ողջ գործընթացի վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն՝ հնարավորություն տալով գնահատվող անձին ծանոթանալու իր նկատմամբ ընդունված որոշման բոլոր էական հանգամանքներին:***

✓ ***իրականացնել բժիշկների՝ «Արմեդ» էլեկտրոնային առողջապահության համակարգից օգտվելու հմտությունների զարգացմանն ուղղված միջոցներ:***

✓ ***օրենսդրությամբ ֆունկցիոնալության գնահատման ուղեգրելու գործընթացի համար սահմանել հստակ ժամկետներ և ներդնել ուղեգրմանը ներկայացվող պահանջների պահպանման նկատմամբ արդյունավետ վերահսկողական կառուցակարգեր:***

✓ ***անհետաձգելի միջոցներ ձեռնարկել ապահովելու «e-disability» էլեկտրոնային համակարգի մատչելիությունը:***

✓ ***ծառայությունների անհատական ծրագրով հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքի իրավունքն իրացնելու նպատակով սահմանված բոլոր ծառայությունների և միջոցառումների իրականացման համար ապահովել պետական բյուջեով նախատեսված միջոցներից դրանք ստանալու հնարավորություն:***

✓ ***գործուն միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող անձի կարիքին համապատասխան որակյալ աջակցող միջոցների իրազեկ և անխոչընդոտ ձեռքբերումը, վերանորոգումը և օգտագործման առանձնահատկությունների վերաբերյալ պատշաճ իրազեկումը:***

✓ ***գործուն միջոցներ ձեռնարկել, այդ թվում՝ օրենսդրական փոփոխություններ իրականացնելու միջոցով՝ ուղղված միջազգային չափորոշիչներին համապատասխան անձնական օգնականի ինստիտուտի կայացմանը:***

3. Հաշմանդամություն ունեցող անձանց՝ իրենց վերաբերելի հարցերում անձամբ որոշումներ կայացնելու իրավունքն ապահովելու հետ կապված խնդիրներ

«Անկախ ապրել» նշանակում է, որ հաշմանդամություն ունեցող անձինք ապահովված են անհրաժեշտ բոլոր միջոցներով՝ կայացնելու իրենց կյանքին վերաբերող բոլոր որոշումները, ունեն ընտրություն և վերահսկողություն սեփական կյանքի նկատմամբ:[731]:

ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների և 2023-2025 թվականների գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» թիվ 1987-Լ որոշման հավելված 2-ի համաձայն՝ որպես ակնկալվող արդյունք մինչև 2022 թվականի երկրորդ կիսամյակ նախատեսվել է ընդունել անգործունակության ինստիտուտին առնչվող իրավակարգավորումների վերանայման և աջակցության միջոցով որոշումների կայացման մեխանիզմի ներդրման վերաբերյալ գործողությունների ծրագիրը հաստատելու մասին

[731] Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեի թիվ 5 ընդհանուր մեկնաբանությունն հասանելի է https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD%2FC%2FGC%2F5&Lang=en հղումով:

Կառավարության որոշումը, ընդունել աջակցության միջոցով որոշումների կայացման մեխանիզմի վերաբերյալ օրենսդրությունը, ներդրել աջակցության միջոցով որոշումների կայացման մեխանիզմը: Նույն որոշման 3-րդ հավելվածի համաձայն՝ նախատեսվել է վերանայել անգործունակ ճանաչված անձանց՝ դատարանի մատչելիության իրավունքին առնչվող կարգավորումները՝ բացառելով իրենց իրավունքներին և շահերին առնչվող այլ խնդիրներով դատարան դիմելու կամ լսված լինելու իրավունքի անհամաչափ սահմանափակումները:

Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումների արդյունքները վկայում են, որ անգործունակության ինստիտուտին առնչվող իրավակարգավորումների վերանայման և աջակցության միջոցով որոշումների կայացման մեխանիզմի ներդրման վերաբերյալ գործողությունների ծրագիր հաստատված չէ, աջակցության միջոցով որոշումների կայացման մեխանիզմ ներդրված չէ: Օրենսդրական կարգավորումների մակարդակում առկա են մի շարք համակարգային խնդիրներ:

Այսպես, օրինակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 31-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացին, որը հոգեկան խանգարման հետևանքով չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք, կարող է դատարանով անգործունակ ճանաչվել՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Նրա նկատմամբ սահմանվում է խնամակալություն: Անգործունակ ճանաչված քաղաքացու անունից գործարքներ է կնքում նրա խնամակալը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածի համաձայն՝ անչափահասի, սահմանափակ գործունակ կամ անգործունակ ճանաչված անձի անունից դատարանում հանդես է գալիս նրա օրինական ներկայացուցիչը՝ ծնողը (որդեգրողը), հոգաբարձուն կամ խնամակալը և այլն:

Ընդ որում, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեն Հայաստանի Հանրապետության նախնական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ևս անդրադարձել է նշված հարցին՝ առաջարկելով դադարեցնել Սահմանադրությամբ և Քաղաքացիական դատավարության օրենսգրքով առկա խտրական իրավական ակտերի գործողությունները, ինչպես նաև վերականգնել հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց լիարժեք գործունակությունը և ներդնել աջակցող որոշումների կայացման ռեժիմ[732]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանը անկախ ապրելու իրավունքի երաշխավորման նպատակով կարևորում է պետության կողմից հաշմանդամություն ունեցող անձանց աջակցության միջոցով որոշումների կայացման կառուցակարգի ներդրմանն ու նրանց փոխարեն որոշումներ ընդունելու գործելակերպի բացառմանն ուղղված միջոցների ձեռնարկումն ու իրականացումը:

[732] Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեն Հայաստանի Հանրապետության նախնական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումները հասանելի են https://documents.un.org/doc/undoc/gen/g17/112/58/pdf/g1711258.pdf?token=cXW0eYgiqe6Gr6cpQW&fe=true հղումով:

ԳԼՈՒԽ 2. ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքի և հասարակության մեջ լիարժեք և հավասար մասնակցության նախապայման է: Առանց ֆիզիկական միջավայրի, տրանսպորտի, տեղեկատվության և հաղորդակցության, ներառյալ՝ տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների և համակարգերի, ինչպես նաև հանրության համար բաց հաստատությունների և հանրությանը մատուցվող ծառայությունների պատշաճ հասանելիության, հաշմանդամություն ունեցող անձինք չեն կարող հավասար մասնակցության ունենալ հասարակական կյանքում:

Մատչելիությունը «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով ամրագրված հիմնական սկզբունքներից է, որը կարևոր նախապայման է հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքի, կարծիքի արտահայտման ազատության և այլ իրավունքների իրացումն ապահովելու համար:

Մատչելիության ապահովման պարտավորությունն ամրագրված է միջազգային մի շարք փաստաթղթերում և ներպետական օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայում, դրան վերաբերող մեկնաբանություններում, Եվրոպայի խորհրդի «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» կոնվենցիայում, «Կույրերի, տեսողությունից հաշմանդամություն ունեցող կամ ընթերցողության ֆունկցիայի այլ դժվարություններ ունեցող անձանց համար հրատարակված ստեղծագործությունների մատչելիությունը դյուրացնելու մասին» Մարաքեշի պայմանագրում, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքում, ենթաօրենսդրական իրավական ակտերում և այլն:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը, հավասար հնարավորությունների և մատչելի պայմանների ապահովումը, խտրականության բացառումը որպես առաջնահերթություն է նախանշվել նաև ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 8-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2023-2027 թվականների համալիր ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 943-Լ որոշմամբ:

Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները, ստացված գրավոր և բանավոր դիմում-բողոքները, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ստացված ահազանգերը վկայում են, որ մատչելիության ապահովման տեսանկյունից առկա են մի շարք համակարգային խնդիրներ, որոնց անդրադարձ է կատարվել նաև նախորդ տարիների տարեկան հաղորդումներում[733] և արտահերթ հրապարակային զեկույցում[734]:

Մարդու իրավունքների պաշտպանն, ի թիվս այլնի, արձանագրել է.

- ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովման հետ կապված համակարգային խնդիրներ,

[733] Տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 1350-1364, հասանելի է https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf հղումով, 2024 թվականի փետրվարի 23-ի դրությամբ: Տե՛ս նաև 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 1335-1367, հասանելի է https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 2024 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

[734] Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ, Երևան, 2022թ., էջեր 62-101 հասանելի է https://www.ombuds.am/images/files/66d55894cd4c933cef65a7d6d7d7b35a.pdf հղումով, 2024 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

• տեղեկատվության և հաղորդակցության, ներառյալ տեղեկատվական ու հաղորդակցության տեխնոլոգիաների և համակարգերի մատչելիության ապահովման հետ կապված համակարգային խնդիրներ:

Մարդու իրավունքների պաշտպանը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման, խթանման և պաշտպանության տեսանկյունից խիստ կարևորում է կյանքի բոլոր ոլորտներում (այդ թվում՝ առողջապահության, կրթության, զբաղվածության) մատչելիության ապահովումը, որոնց ավելի մանրամասն անդրադարձ է կատարվել սույն բաժնի տարբեր գլուխներում:

1. Ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովման հետ կապված համակարգային խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումների արդյունքում ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովման հարցում արձանագրվել են օրենսդրական կարգավորումների, ինչպես նոր կառուցված և վերակառուցված շենքերի և շինությունների, այնպես էլ հաշմանդամություն ունեցող անձանց սեփականության կամ օգտագործման իրավունքով պատկանող բնակելի տարածքների, տրանսպորտային միջոցների, կանգառների և այլնի մատչելիության ապահովման հետ կապված խնդիրներ:

Մարդու իրավունքների պաշտպանը, հատկապես, խնդրահարույց է համարում այն, որ դեռևս շարունակվում են արձանագրվել նոր կառուցված և վերակառուցված շենքերի և շինությունների մատչելիության նորմերի պահպանման հետ կապված խնդիրներ: Ընդ որում՝ նման խախտումներ արձանագրվել են շենքերի և շինությունների կառուցման և վերակառուցման տարբեր փուլերում:

Վերոնշյալի մասին է վկայում նաև ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի տրամադրած տեղեկատվությունն առ այն, որ տեսչական մարմնի կողմից միջանկյալ համաձայնեցման շրջանակներում ուսումնասիրված 369 ճարտարապետաշինարարական նախագծերից 237 նախագծերի վերաբերյալ տրվել է բացասական եզրակացություն՝ մատչելիության ապահովմանն ուղղված նորմերի պահանջները չպահպանելու համար: Մատչելիության նորմերը չպահպանելու առնչությամբ կիրառվել է նաև վարչական պատասխանատվություն:

Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով, օրինակ, բողոք ներկայացրած անձը դիմել է իր վարչական շրջանի ղեկավարին շենքի մուտքի և ելքի մատչելիության ապահովման խնդրանքով, մինչդեռ, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի մասնագետների կողմից կառուցված թեքահարթակի անկյան աստիճանը ունեցել է շեղում գործող նորմերից, որը հնարավորություն չի տվել օգտվել թեքահարթակից: Մեկ այլ բողոքի շրջանակներում արձանագրվել է, որ մատչելիության ապահովման նպատակով համայնքի կողմից տեղադրված բռնակի համար օգտագործվել են ժանգոտված, մետաղյա ջրախողովակներ:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ շենքերի և շինությունների կառուցման և վերակառուցման գործընթացներում մատչելիության սկզբունքը չապահովելու պատճառները բազմաթիվ են: Այդպիսիք են թերի վերահսկողական կառուցակարգերը, օրինակ, մատչելիության նորմերի խախտումներ պարունակող նախագծերի առնչությամբ տրված թույլտվությունները վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի կողմից անվավեր ճանաչելու գործուն մեխանիզմների բացակայությունը, քաղաքաշինական գործունեության մեջ ներգրավված սուբյեկտների՝ մատչելիության նորմերի վերաբերյալ ոչ բավարար մասնագիտական գիտելիքները, մարդկային ռեսուրսները և այլն:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների 2-րդ ընդհանուր մեկնաբանություն

Բոլոր նոր շենքերն ու շինությունները պետք է նախագծվեն այնպես, որ դրանք ամբողջությամբ մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ համապատասխանելով համընդհանուր դիզայնի սկզբունքներին: Մեկնաբանության համաձայն՝ մասնակից պետությունները պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկեն հաշմանդամություն ունեցող անձանց առջև ծառացող մատչելիության հիմնահարցերի վերաբերյալ շահագրգիռ կողմերի համար ուսուցողական դասընթացներ կազմակերպելու ուղղությամբ, որը ներառում է նաև քաղաքաշինական գործունեության իրականացման մեջ ներգրավված բոլոր սուբյեկտների վերապատրաստումները:

Նշվածի առնչությամբ հատկանշական է, որ պետական մարմինների տրամադրած տեղեկատվության համաձայն՝ համընդհանուր դիզայնի և մատչելիության պահանջների վերաբերյալ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում իրականացվել են միայն «Ունիվերսալ դիզայն, մատչելիություն և խելամիտ հարմարեցումներ» վերնագրով դասընթացներ: 2023-2024 ուսումնական տարում մեկնարկել է «Ներառական ճարտարապետություն» խորագրով նախագծահենք աշխատանքային սեմինար:

Մինչդեռ, համընդհանուր մատչելիության նպատակին հասնելու հարցում Մարդու իրավունքների պաշտպանը կարևոր նախապայման է համարում ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերում մատչելիության ապահովման նպատակով կիրառելի չափանիշներին և համընդհանուր դիզայնի պահանջների ապահովմանը վերաբերող առարկայական ծրագրերի ներդնումը և մասնագետների շարունակական վերապատրաստումը: Նշված առաջարկը պայմանավորված է նաև նրանով, որ շատ հաճախ, պետական իրավասու մարմինների աշխատակիցները մատչելիության ապահովումը դիտարկում են բացառապես թեքահարթակների կառուցման տրամաբանությամբ:

Այսպես, օրինակ, Արարատի մարզպետի աշխատակազմի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ գործող հասարակական, արտադրական նշանակության շենք-շինությունների մի մասն է մատչելի հաշմանդամություն ունեցող անձանց համար: Մասնավոր սեկտորի հասարակական, արտադրական նշանակության նոր օբյեկտների շինարարության թույլտվության պարտադիր պահանջ է թեքահարթակների կառուցումը, ինչը մատչելի կդարձնի հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժը՝ մոտ 50%-ով: Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը նշել է, որ նոր կառուցվող հասարակական,

արտադրական նշանակության շենք-շինությունները, համաձայն նախագծային փաստաթղթերի, ունեն մատչելիության ապահովման բաղադրիչներ: Համայնքային և պետական նշանակության շենք-շինություններում իրականացվում են մատչելիության ապահովման միջոցառումներ՝ թեքահարթակների կառուցում:

Մարդու իրավունքների պաշտպանը արձանագրել է նաև խնդիրներ մատչելիության նորմերի ապահովման նպատակով գոյություն ունեցող շենքերի ու շինությունների վերակառուցման պարտավորության կատարման գործընթացում: Խնդրահարույց է այն, որ դեռևս ամբողջապես պլանավորված և համակարգված չեն Հայաստանի Հանրապետությունում բոլոր շենքերի և շինությունների փուլային վերակառուցման գործընթացները:

Այսպես, օրինակ, թեև որոշ շենքեր և շինություններ 2023 թվականի ընթացքում մատչելիության նորմերին համապատասխանեցնելու նպատակով անձնագրավորվել են, որոնց թվին է պատկանում նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին հատկացված շենքը, այնուամենայնիվ, անձնագրավորման օբյեկտների ցանկում ընդգրկված չեն այնպիսի կարևոր նշանակություն ունեցող շենքերի և շինությունների շահագործման մատչելիությունն ու անձնագրավորումն ապահովող միջոցառումների ծրագիրն ու ժամանակացույցը, ինչպիսիք են նախարարություններին, միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոններին հատկացված շենքերը, սպորտային, մշակութային և ժամանցային բոլոր վայրերը, քրեակատարողական հիմնարկները, Վճռաբեկ, վերաքննիչ դատարանները, առաջին ատյանի դատարանները և այլն: Հարկ է փաստել, որ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների 2-րդ ընդհանուր մեկնաբանության համաձայն, օրինակ, արդարադատության մատչելիություն չի կարող ապահովվել, եթե իրավապահ մարմինների և դատարանների շենքերը ֆիզիկապես հասանելի չեն:

Խնդրահարույց է, որ Մարդու իրավունքների պաշտպանի և աշխատակազմի կողմից իրականացված մշտադիտարկումների արդյունքում արձանագրվել է, որ 2023 թվականի ընթացքում ֆիզիկական մատչելիության հետ կապված խնդիրները շարունակել են արդիական մնալ այնպիսի հաստատություններում, ինչպիսիք են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն», «Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություններում, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Երևանի երաժշտական թիվ 13 հատուկ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում, ՀՀ ոստիկանության ձերբակալվածներին պահելու վայրերում, հոգեկան առողջության կենտրոններում, ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և այլն:

Այս համատեքստում հատկանշական է, որ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքում 2023 թվականի սեպտեմբերի 13-ին իրականացված փոփոխության արդյունքում ֆիզիկական միջավայրի մատչելիության մասին 17-րդ հոդվածի 4-րդ կետում «երեք տարվա ընթացքում» բառերը փոխարինվել են «փուլային կարգով» բառերով: Արդյունքում՝ կառուցված հասարակական, արտադրական նշանակության շենքերն ու շինությունները երեք տարվա ընթացքում մատչելիության նորմերին համապատասխանեցնելու օրենսդրական հստակ պահանջը փոխարինվել է՝ առանց որևէ հիմնավորման: Ավելին, «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2023-2027 թվականների համալիր ծրագիրը և ծրագրի իրականացումն

ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 943-Լ որոշմամբ որպես «Հասարակական, արտադրական նշանակության շենք-շինությունների մատչելիության ապահովում» միջոցառման արդյունք նշված է միայն հասարակական, արտադրական նշանակության շենք-շինությունների մատչելիության ապահովման ծրագիր-ժամանակացույցի վերաբերյալ իրավական ակտի մշակումը:

Նշվածի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է պետության կողմից այնպիսի միջոցառումների մշակումն ու իրականացումը, որոնց համատեքստում որպես արդյունք հստակ կնախանշվի կառուցված հասարակական, արտադրական նշանակության շենքերի ու շինությունների վերակառուցումը՝ նշելով ֆինանսական աղբյուրներն ու անհրաժեշտ ֆինանսական միջոցները, իրականացվելիք աշխատանքների մշտադիտարկման ընթացակարգերը: Կարևոր է, որ այդ միջոցառումները հստակ ժամանակացույց պարունակեն Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում կանգառների, ստորգետնյա և վերգետնյա անցումների, մայթերի և ճանապարհների, ավտոկայանատեղերի և այլնի մատչելիության, ինչպես նաև դրամարկղերի, առևտրային ավտոմատների, տակտիլային վերգետնյա ցուցանակների և այլնի հասանելիության ապահովման վերաբերյալ:

Խնդրահարույց է այն, որ տրամադրված տեղեկատվության համաձայն՝ ՀՀ մարզերում բարեկարգվել և վերանորոգվել է ընդամենը 5 կանգառ: Տեսողական խնդիր ունեցող կամ կույր անձանց համար հատուկ սալիկներ, ձայնային ազդանշաններ կամ այլ հարմարեցումներ չի նախատեսվել: 2023 թվականին ևս Հայաստանի Հանրապետությունում վերգետնյա անցումներում հաշմանդամություն ունեցող անձանց անվտանգ տեղաշարժն ապահովելու միջոցառումներ չեն իրականացվել:

Պաշտպանին առընթեր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի անդամ «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» հասարակական կազմակերպության կողմից 2023 թվականին ուսումնասիրություն է իրականացվել Վանաձորում նոր կառուցված և վերակառուցված հանրային տարածքների ու շենքերի մատչելիության վերաբերյալ: Ըստ ներկայացված տեղեկատվության՝ փողոցներում կառուցվել են թեքահարթակներ, որոնց մի մասն է համապատասխանում նորմերին, իսկ տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար նախատեսված շոշափելի սալիկներն ու ձայնային լուսացույցերը բացակայում են:

Նշվածի համատեքստում Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ թեև տարիներ շարունակ բարձրացվել է ֆիզիկական մատչելիության ապահովման հարցում անհետաձգելի միջոցառումներ իրականացնելու անհրաժեշտությունը, ներկայացվել են առաջարկություններ, սակայն մշտադիտարկումների արդյունքները, ստացված բողոքների ուսումնասիրությունները ու տրամադրված տեղեկությունները վկայում են այն մասին, որ չնայած պետության կողմից իրականացվող միջոցառումներին՝ դրանք բավարար չեն և չեն երաշխավորում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովումը: Տեղեկությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ խնդիրն առավել արդիական է Հայաստանի Հանրապետության մարզերում:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների 2-րդ ընդհանուր մեկնաբանություն
Պետությունը պարտավոր է ապահովել ֆիզիկական միջավայրի մատչելիությունը և՛ քաղաքներում, և՛ գյուղական համայնքներում:

Ֆիզիկական մատչելիության կարևոր բաղադրիչ է նաև փոխադրամիջոցների մատչելիության ապահովումը, որն ամրագրված է նաև «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի 9-րդ հոդվածով:

Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումների, գրավոր և բանավոր բողոքների ուսումնասիրության արդյունքում փոխադրամիջոցների մատչելիության ապահովման հարցում արձանագրվել են մի շարք խնդիրներ, որոնք, ի թիվս այլնի՝ վերաբերում են թերի օրենսդրական կարգավորումներին:

2023 թվականի հունիսի 1-ին ուժի մեջ է մտել «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքով նախատեսված կարգավորումն առ այն, որ ներհամայնքային (բացառությամբ բազմաբնակավայր համայնքների բնակավայրերի միջև) կանոնավոր երթուղիների մրցույթին ներկայացվող բոլոր ավտոբուսները պետք է մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար, իսկ միջմարզային, ներմարզային և բազմաբնակավայր համայնքների բնակավայրերի միջև կանոնավոր երթուղիների մրցույթին ներկայացվող՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի տրանսպորտային միջոցների նվազագույն քանակը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով ընդունվել է ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 5-ի «ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 1714-Ն որոշումը, որով նախատեսվել է, որ մրցույթին կարող են մասնակցել այն կազմակերպությունները, որոնք կապահովեն տեղաշարժվելու, տեսողության և լսողության խնդիրներ ունեցող անձանց (այսուհետ՝ հաշմանդամություն ունեցող անձ) համար մատչելի կամ հարմարեցված ԳՕՍՏ 30478-96 ստանդարտի պահանջներին համապատասխանող ավտոբուսներ՝ երթուղիներում ընդհանուր քանակի առնվազն 10 տոկոսի չափով՝ բացառությամբ «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ավտոբուսների ընդհանուր քանակի 100 տոկոսի չափով դեպքերի:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ միջմարզային, ներմարզային և բազմաբնակավայր համայնքների բնակավայրերի միջև կանոնավոր երթուղիների մրցույթին ներկայացվող պահանջ է ընդամենը երթուղիներում ընդհանուր քանակի առնվազն 10 տոկոսի չափով մատչելի կամ հարմարեցված ավտոբուսների ապահովումը:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների 2-րդ ընդհանուր մեկնաբանություն
Օրենսդրությունը պետք է պարունակի մատչելիության պահանջներ պետական գնումների ընթացակարգերում: Հանրային միջոցները չպետք է օգտագործվեն անհավասարություններ ստեղծելու կամ հարատևելու համար, որոնք անխուսափելիորեն բխում են ծառայությունների կամ օբյեկտների անհասանելիությունից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ օրենսդրությամբ նախատեսված է ոչ մատչելի նոր փոխադրամիջոցներ ձեռք բերելու հնարավորություն, որպիսի կարգավորումը չի բխում «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի պահանջներից:

Ավելին, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Արարատի, Արագածոտնի, Սյունիքի, Գեղարքունիքի Վայոց Ձորի, Արմավիրի մարզերում հասարակական տրանսպորտային միջոցները հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց

կարիքներին: Լոռու մարզում գործում է հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված մեկ ավտոբուս, որը սպասարկում է Դսեղ-Վանաձոր մարզային երթուղին: 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Կոտայքի միասնական երթուղային ցանցում գործող ավտոբուսների և միկրոավտոբուսների 30%-ն է հարմարեցված հաշմանդամություն ունեցող անձանց համար: Հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված հասարակական տրանսպորտային միջոցներ ՀՀ Շիրակի մարզում առկա են Գյումրի քաղաքի երթուղիներում՝ տոկոսը կազմում է 5,61%: Տավուշի մարզի վերաբերյալ տեղեկությունները բացակայում են:

Նշված ցուցանիշները վկայում են այն մասին, որ գործող կառուցակարգերը, որոնք հիմնված են մրցույթների միջոցով մատչելի տրանսպորտային միջոցների ձեռքբերմանը, չեն երաշխավորում հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի տրանսպորտային միջոցների ապահովումը ՀՀ մարզերում: Տրամադրված տեղեկատվության համաձայն՝ շատ հաճախ մրցույթները տեղի չեն ունենում հայտերի բացակայության պատճառով: Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը, անհրաժեշտ է ներդնել նոր կառուցակարգեր՝ ուղղված Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում փոխադրամիջոցների մատչելիության ապահովմանը՝ երաշխավորելով հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժի իրավունքը:

Ի պատասխան Պաշտպանի այն հարցմանը, թե հասարակական տրանսպորտի մատչելիության ապահովման համար ինչ քայլեր են ձեռնարկվել՝ Երևանի քաղաքապետարանը հայտնել է, որ 2023 թվականին մատչելի հասարակական տրանսպորտի ապահովման ուղղությամբ իրականացված բարեփոխումների արդյունքում, Երևանի ներհամայնքային ավտոբուսային երթուղիներ սպասարկող, ընդհանուր առմամբ թվով 877 ավտոբուսներից 448-ը կահավորված են թեքահարթակներով, որը կազմում է ընդհանուր քանակի 51.1%-ը: Միկրոավտոբուսային երթուղիները սպասարկող «ԳԱԶԵԼ-ՍԻԹԻ» մակնիշի, փոքր դասի բոլոր 100 ավտոբուսները կահավորված են թեքահարթակով: Թվով 56 տրոլեյբուսներից թեքահարթակով կահավորված են 17-ը (2-ը «ԼԻԱԶ» մակնիշի) կամ 30.4%-ը:

Նշվածի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանն ընդգծում է, որ մատչելիության ապահովումը չպետք է սահմանափակվի միայն տեղաշարժման հետ կապված դժվարություններ ունեցող անձանց համար մատչելի պայմանների ապահովմամբ: Մատչելիությունը պետք է ապահովված լինի հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց համար:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների 2-րդ ընդհանուր մեկնաբանություն
Մատչելիության չափորոշիչները սահմանելիս մասնակից պետությունները պետք է հաշվի առնեն հաշմանդամություն ունեցող անձանց բազմազանությունը և հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց համար ապահովեն հասանելիություն:

Փոխադրամիջոցների մատչելիության ապահովման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի նաև վարորդների իրազեկվածությունը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ: Մինչդեռ, Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները վկայում են, որ հասարակական տրանսպորտի վարորդները շատ հաճախ իրազեկված չեն հաշմանդամություն ունեցող ուղևորների իրավունքների մասին և չունեն նրանց հետ հաղորդակցվելու հմտություններ:

Մինչդեռ՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների 2-րդ ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ մասնակից պետությունները պետք է ձգտեն իրականացնել համակարգված և պարբերական աշխատանքներ՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրազեկվածության բարձրացմանը՝ այդ աշխատանքին ներգրավելով հաշմանդամություն ունեցող անձանց ևս:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրազեկվածության բարձրացման ծրագրերը, որոնց մասնակցում են նաև հաշմանդամություն ունեցող անձինք, կարևոր նախապայման են վարորդների որակավորման համար[735]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ***ներդնել շենքերի և շինությունների կառուցման և վերակառուցման գործընթացներում մատչելիության սկզբունքի ապահովմանն ուղղված գործուն կառուցակարգեր, ներառյալ՝ վերահսկողական մեխանիզմներ,***
- ***ներդնել ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերում մատչելիության ապահովման նպատակով կիրառելի չափանիշներին և համընդհանուր դիզայնի պահանջների ապահովմանը վերաբերող առարկայական ծրագրեր և իրականացնել մասնագետների շարունակական վերապատրաստում,***
- ***մշակել և իրականացնել միջոցառումներ, որոնք կնախանշեն կառուցված հասարակական, արտադրական նշանակության շենքերի ու շինությունների վերակառուցումը որպես վերջնարդյունք՝ նշելով ֆինանսական աղբյուրներն ու անհրաժեշտ ֆինանսական միջոցները, իրականացվելիք աշխատանքների մշտադիտարկման ընթացակարգերը:***
- ***գործուն քայլեր ձեռնարկել ՀՀ մարզերում ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովման ուղղությամբ:***
- ***իրականացնել ներհամայնքային, միջմարզային և ներմարզային բնակավայրերի միջև կանոնավոր երթուղիների բոլոր փոխադրամիջոցների մատչելիության ապահովմանն ուղղված օրենսդրական փոփոխություններ՝ երաշխավորելով հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց համար փոխադրամիջոցների հասանելիությունը:***
- ***իրականացնել կանոնավոր երթուղիների փոխադրամիջոցների վարորդների վերապատրաստումներ՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց հետ հաղորդակցվելու հմտությունների կատարելագործմանը:***

2. Տեղեկատվության և հաղորդակցության, ներառյալ տեղեկատվական ու հաղորդակցության տեխնոլոգիաների և համակարգերի մատչելիության ապահովման հետ կապված համակարգային խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումների արդյունքում տեղեկատվության և հաղորդակցության, ներառյալ տեղեկատվական ու հաղորդակցության տեխնոլոգիաների և համակարգերի մատչելիության ապահովման հարցում արձանագրվել են օրենսդրական կարգավորումների և դրանց կիրառումն

[735] Տե՛ս Եվրոպական միության թիվ No 181/2011 կարգավորումը: Հասանելի է https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32011R0181&from=EN հղմամաբ:

ապահովելու հետ կապված խնդիրներ, որոնք ընդգրկել են հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի բոլոր ոլորտները:

Հաշմանդամություն ունեցող անձանց տեղեկատվության և հաղորդակցության մատչելիության ապահովման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի մատչելի թվային ծառայությունների ապահովումը: Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում իրականացված ուսումնասիրությունները վկայում են, որ դեռևս ներդրված չէ հստակ գործիքակազմ այդ նպատակի իրագործման համար:

Այդ մասին է վկայում այն, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար դեռևս մատչելի չեն այնպիսի կարևոր նշանակություն ունեցող կայքէջեր, ինչպիսիք են՝ իրավական ակտերի նախագծերի միասնական կայքէջը՝ «e-draft.am» և Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգը՝ «arlis.am», դատական տեղեկատվական համակարգը՝ «datalex.am», «e-request.am» էլեկտրոնային հարցումների միասնական հարթակը և այլն:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների 2-րդ ընդհանուր մեկնաբանություն

Արդարադատության մատչելիության ապահովումը չի կարող երաշխավորվել պետության կողմից, եթե օրենսդիր և դատական համակարգի ծառայությունները չեն ապահովում իրենց կողմից տրամադրված տեղեկությունների և հաղորդակցման մեխանիզմների մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Ուշագրավ է, որ 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ մատչելի չէ նաև «e-disability.am» համակարգը, որը նախատեսված է անձին ֆունկցիոնալության գնահատում իրականացնելու համար և հնարավորություն է նախատեսում ֆունկցիոնալության գնահատման համար դիմել առցանց եղանակով:

Նշվածի առնչությամբ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի 2023 թվականի մայիսի 8-ի թիվ 918-Ա հրամանով հաստատվել է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանը նպաստող տեղեկատվության և հաղորդակցության, այդ թվում՝ վեբ բովանդակության մատչելիության խթանման և իրազեկվածության բարձրացման ուղեցույցը[736], որի նպատակն է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանը նպաստող տեղեկատվության և հաղորդակցության, այդ թվում՝ վեբ բովանդակության մատչելիության բարելավմանն ուղղված աշխատանքների պատշաճ կազմակերպման և միասնականության ապահովումը: Նախարարությունը 2022 թվականին մշակել է ծառայությունների թվայնացման ուղեցույց[737], որի բաղկացուցիչ մաս են կազմում թվայնացման սկզբունքները (ստանդարտներ)՝ ներառյալ մատչելիության սկզբունքները[738]: Թվայնացման սկզբունքներին համապատասխան՝ գործարկվել են Նախարարության «https://hightech.gov.am/hy» և ՀՀ ներքին գործերի նախարարության «https://mia.gov.am»

[736] Տե՛ս Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանը նպաստող տեղեկատվության և հաղորդակցության, այդ թվում՝ վեբ բովանդակության մատչելիության խթանման և իրազեկվածության բարձրացման ուղեցույցը, հասանելի է https://escs.am/files/files/2023-05-24/5a1ec5105ae133307910068bc3317b45.pdf հղումով:
[737] Թվայնացման ուղեցույց, հասանելի է https://standards.hightech.gov.am/ հղումով:
[738] Թվայնացման սկզբունքները հասանելի են https://rb.gy/3vnhee հղումով:

պաշտոնական կայքերը, ընթացքում են նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարության նոր պաշտոնական կայքի նախագծման և մշակման աշխատանքները: Թվայնացման ուղեցույցում հրապարակված են մատչելիության ստուգման ավտոմատացված գործիքները (օր.՝ https://wave.webaim.org, https://www.accessibilitychecker.org):

Կարևորելով պետության կողմից նշված միջոցառումների իրականացումը՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ 2023 թվականի դրությամբ դեռևս ներդրված չեն այնպիսի գործուն կառուցակարգեր, որոնք կբացառեն ոչ մատչելի կայքերի ստեղծումը և կապահովեն թվային ծառայությունների մատչելիությունը:

Պաշտպանը խիստ կարևորում է նաև Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայքէջի մատչելիության ապահովումը, ինչի առնչությամբ 2023 թվականին նախաձեռնվել և իրականացվում են կայքէջի փոփոխության հետ կապված աշխատանքներ:

Մարդու իրավունքների պաշտպանը արձանագրել է նաև բանկերի կողմից տրամադրվող ծառայությունների մատչելիության ապահովման հետ կապված խնդիրներ: Մասնավորապես, Պաշտպանի աշխատակազմ բողոք ներկայացրած անձը հայտնել է, որ ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձ է, ով ունի տեսողության հետ կապված խնդիրներ: Դիմում ներկայացրած անձը հայտնել է, որ բանկային ծառայությունների մատչելի չլինելու պատճառով չի կարողացել մյուսների հետ հավասար պայմաններով ստանալ հաշմանդամության կենսաթոշակը և ստիպված է եղել խնդրել երրորդ անձի՝ ստորագրել իր փոխարեն՝ կրելով լրացուցիչ ֆինանսական ծախսեր նոտարի ծառայություններից օգտվելու համար: Նշվածի առնչությամբ հատկանշական է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի համաձայն. «Եթե քաղաքացին ֆիզիկական արատի, հիվանդության կամ անգրագիտության պատճառով չի կարող իր ձեռքով ստորագրել, ապա նրա խնդրանքով գործարքը կարող է ստորագրել այլ քաղաքացի: Վերջինիս ստորագրությունը պետք է վավերացնի նոտարը կամ նման նոտարական գործողություն կատարելու իրավունք ունեցող այլ պաշտոնատար անձը՝ նշելով այն պատճառները, որոնց ուժով գործարք կնքողը չի կարողացել այն ստորագրել»:

Մարդու իրավունքների պաշտպանը, որպես «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների մշտադիտարկում իրականացնող անձ, խնդրահարույց է համարում նման կարգավորման առկայությունը և կիրառումը բանկային ծառայությունների մատուցման գործընթացում: Պետությունը պետք է գործուն միջոցներ ձեռնարկի՝ ապահովելու հասարակությանը տրամադրվող ծառայությունների մատչելիությունը՝ բացառելով մասնավոր սուբյեկտների կողմից այնպիսի խտրական մոտեցումներ կիրառելու օրենսդրական հնարավորությունը, ինչպիսին է մատչելի տեղեկատվության տրամադրման փոխարեն հաշմանդամություն ունեցող անձի վրա լրացուցիչ ֆինանսական բեռ դնելն ու երրորդ անձի գործարքների մեջ ներգրավելը:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների 2-րդ ընդհանուր մեկնաբանություն

Մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար անկախ ապրելու նախապայման է: Պետությունը պարտավոր է իրականացնել բոլոր համապատասխան միջոցները փոխելու այն օրենսդրական կարգավորումները, որոնք պարունակում են հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրական մոտեցումներ:

2023 թվականի ընթացքում արդիական են մնացել առողջական վիճակի, հիվանդության ախտորոշման, տրամադրված (տրամադրվող) բժշկական օգնության և սպասարկման, այդ թվում՝ բուժման մեթոդների ընտրության, կիրառման ընթացքի և արդյունքների, ինչպես նաև դրանց հետ կապված ռիսկերի վերաբերյալ մատչելի ձևով տեղեկատվությունը հաշմանդամություն ունեցող անձանց փոխանցելու, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող սպառողներին արտադրողի (կատարողի, վաճառողի), նրա աշխատանքային ռեժիմի և իրացվող ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) վերաբերյալ անհրաժեշտ և ստույգ տեղեկատվություն փոխանցելու գործուն կառուցակարգերի ներդրման հետ կապված խնդիրները: Նշված հարցերին Մարդու իրավունքների պաշտպանն առավել մանրամասն անդրադարձել է նախորդ տարեկան հաղորդումներում[739]:

ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 8-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2023-2027 թվականների համալիր ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 943-Լ որոշմամբ նախատեսվում է «Արև» ծրագրի միջոցով ապահովել թանգարաններում, գրադարաններում և ոչ նյութական մշակութային ժառանգության բնագավառում հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի հիմունքներով ծրագրերի իրականացում: Տրամադրված տեղեկատվության համաձայն՝ «Արև» ծրագրի շրջանակներում Հայաստանի ազգային գրադարանում կույր և թույլ տեսնող անձանց համար լսողական խորհրդանշանների միջոցով ստեղծվել է կարդալու հնարավորություն, ապահովվել տեղեկատվության հաղորդակցում: Սպասարկվել է 27 շահառու, տրամադրվել է 272 միավոր բրայլյան և ձայնային գիրք:

Մինչդեռ, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացված տեղեկությունները, իրականացված մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ «Արև» տեղեկատվական հաղորդակցման ծրագիրը չունի բավարար հասանելիություն, արդիական չէ և համատեղելի չէ ժամանակակից համակարգերի հետ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է պետության կողմից այնպիսի ծրագրերի իրականացումը, որոնք կերաշխավորեն հաշմանդամություն ունեցող անձանց՝ ժամանակակից մոտեցումներին համապատասխան մատչելի հաղորդակցության իրավունքի ապահովումը:

Պաշտպանը վերահաստատում է իր այն դիրքորոշումը, որ օրենքով սահմանված հեռարձակվող հեռուստահաղորդումների չափաքանակները քիչ են հաշմանդամություն

[739] Տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, հասանելի է https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf հղումով, 2024 թվականի փետրվարի 23-ի դրությամբ: Տե՛ս նաև 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, հասանելի է https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 2024 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

ունեցող անձանց՝ տեղեկատվություն ստանալու մատչելիության ապահովման տեսանկյունից:

Մասնավորապես՝ «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ հեռարձակողները, որոնք եթեր են հեռարձակում նաև մանկական կամ լրատվական տեսալսողական հաղորդումներ և ֆիլմեր, պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել լսողության խնդիրներ ունեցող սպառողների համար տեղեկատվության մատչելիությունը՝ օրվա ընթացքում՝ համապատասխանաբար առնվազն մեկական մանկական հաղորդում ներկայացնելով հայերեն ժեստերի լեզվով թարգմանությամբ, և լրատվական տեսալսողական հաղորդում և ֆիլմ՝ ներկայացնելով ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով՝ կարգավորող պետական մարմնի սահմանած ժամերին և տեխնիկական նվազագույն պահանջներին համապատասխան:

Մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ հեռարձակողների կողմից, հիմնականում, ապահովվում են օրենսդրական նվազագույն պահանջները, օրինակ, օրվա ընթացքում հեռարձակելով միայն մեկ մանկական հաղորդում:

Մինչդեռ՝ Կոնվենցիայի 30-րդ հոդվածից բխում է, որ պետությունը պետք է ձեռնարկի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի ձևաչափով հեռուստահաղորդումների և ֆիլմերի մատչելիությունը:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ մի շարք պետություններում (Ֆրանսիա, Հունգարիա, Իռլանդիա, Ավստրիա, Հունաստան, Կիպրոս,Գերմանի, Ֆինլանդիա և այլն) օրենսդրական կարգավորումները պահանջում են հանրային և մասնավոր հեռարձակվող (ռադիո և հեռուստատեսային) լրատվամիջոցներին տրամադրել ենթագրեր, ժեստերի լեզվի թարգմանություն և/կամ ձայնային նկարագրություններ բոլոր կամ հեռարձակվող հաղորդումների մի մասի համար: Որոշ երկրներում, օրինակ՝ Չեխիայի Հանրապետությունում, նման պարտավորությունը դրված է միայն հանրային հեռարձակողների վրա, սակայն այդ դեպքում ևս ապահովվում է ենթագրերի առնվազն 70 տոկոսի տրամադրում[740]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է իր այն դիրքորոշումը, որ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել՝ ավելացնելու մատչելի ձևաչափով հեռարձակվող նյութի չափաքանակը:

Տեղեկատվության և մատչելիության ապահովման տեսանկյունից Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է հասարակական տրանսպորտից օգտվելու ընթացքում մատչելի տեղեկատվություն ստանալու իրավունքի ապահովումը:

«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող ավտովարորդներն անհրաժեշտության դեպքում պետք է աջակցեն հաշմանդամություն ունեցող անձանց (ներառյալ՝ նստեցնել, իջեցնել, տեղեկատվություն տրամադրել)՝ օգտվելու տրանսպորտային սպասարկման իրենց իրավունքից:

Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ գործնականում չեն ապահովվում մատչելի ձևաչափով տեղեկատվության տրամադրումը հաշմանդամություն ունեցող ուղևորներին:

[740] Ավելի մանրամասն հասանելի է https://fra.europa.eu/en/content/are-there-legal-accessibility-standards-public-and-private-audiovisual-media հղումով:

Օրինակ՝ մատչելի եղանակով չի տրամադրվում կանգառների վերաբերյալ տեղեկատվությունը: Այսպիսի մոտեցումը անընդունելի է հաշմանդամություն ունեցող անձանց մի շարք իրավունքների ապահովման տեսանկյունից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ ներդնել գործուն կառուցակարգեր՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց համար թվային ծառայությունների, այդ թվում՝ կայքերի մատչելիությունն ու արդիականությունը:

✓ իրականացնել օրենսդրական փոփոխություններ, որոնք պարունակում են հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրական մոտեցումներ՝ բացառելով մյուսների հետ հավասար հիմունքներով ծառայություններից, այդ թվում՝ բանկերի կողմից տրամադրվող ծառայություններից օգտվելու սահմանափակումները:

✓ միջոցներ ձեռնարկել՝ ավելացնելու մատչելի ձևաչափով հեռուստատեսությամբ հեռարձակվող նյութի չափաքանակը:

✓ միջոցներ ձեռնարկել ապահովելու հասարակական տրանսպորտից օգտվելու ընթացքում մատչելի տեղեկատվություն, այդ թվում՝ կանգառների վերաբերյալ ինքնուրույն տեղեկատվություն, ստանալու իրավունքը:

ԳԼՈՒԽ 3. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Պետությունը հաշմանդամություն ունեցող անձանց կրթություն ստանալու իրավունքի նկատմամբ հարգանքը սահմանել է որպես հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման, խթանման և պաշտպանության պետական քաղաքականության հիմնական սկզբունքներից մեկը: Այդ նպատակով պետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակել է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Պետությունը պարտավորվել է ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց համար առանց խտրականության ու մյուսների հետ հավասար հիմունքներով ընդհանուր բարձրագույն կրթության, մասնագիտական կրթության, մեծահասակների ուսուցման և ամբողջ կյանքի ընթացքում կրթության մատչելիությունը:

Հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքն ապահովելու պարտավորությունն իր ամրագրումն է գտել միջազգային մի շարք փաստաթղթերում և ներպետական օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայում, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայում, «Կույրերի, տեսողության հետ կապված կամ ընթերցողության ֆունկցիայի այլ դժվարություններ ունեցող անձանց համար հրատարակված ստեղծագործությունների մատչելիությունը դյուրացնելու մասին» Մարաքեշի պայմանագրում, դրանց վերաբերող մեկնաբանություններում, «Հանրակրթության մասին» օրենքում, «Նախադպրոցական կրթության մասին» օրենքում, ենթաօրենսդրական իրավական ակտերում և այլն:

Այն նախանշվել է նաև պետության ընդունած ռազմավարական փաստաթղթերում, այդ թվում՝ «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքով, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի «Հայաստանի Հանրապետության նախադպրոցական կրթության ոլորտում համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանը և ժամանակացույցը հաստատելու մասին» թիվ 598-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» թիվ 1363-Ա որոշմամբ, ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 8-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2023-2027 թվականների համալիր ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 943-Լ որոշմամբ, ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 1524-Լ որոշմամբ և այլն:

Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները, ստացված գրավոր և բանավոր դիմում-բողոքները, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ստացված ահազանգերը վկայում են, որ հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի ապահովման տեսանկյունից առկա են մի շարք համակարգային խնդիրներ,

որոնց անդրադարձ է կատարվել նաև նախորդ տարիների տարեկան հաղորդումներում[741] և արտահերթ հրապարակային զեկույցում[742]:

Մարդու իրավունքների պաշտպանն, ի թիվս այլնի, արձանագրել է.

- մատչելիության ապահովման և խելամիտ հարմարեցումների տրամադրման հետ կապված խնդիրներ,
- կրթության որակի և արդյունավետության ապահովման հետ կապված խնդիրներ,
- հաշմանդամություն ունեցող երեխաների կրթությունը առանձին միջավայրում կազմակերպելու խնդիրը:

1. Մատչելիության ապահովման և խելամիտ հարմարեցումների տրամադրման հետ կապված խնդիրներ

2023 թվականի ընթացքում շարունակում են արդիական մնալ ուսումնական հաստատությունների, այդ թվում՝ մանկապարտեզների, հանրակրթական ուսումնական հաստատությունների, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող, բարձրագույն ուսումնական հաստատությունների շենքերի մատչելիության ապահովման հետ կապված խնդիրները: Ընդ որում, խոսքը վերաբերում է նաև նախագծվող և վերակառուցվող շենքերին:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ օրինակ, մատչելի են Երևանի ենթակայության հիմնանորոգված 13 դպրոց (20%), շուրջ 20 մանկապարտեզ (32%): ՀՀ Արագածոտնի մարզում ուսումնական հաստատությունների՝ շուրջ 35%-ն է հարմարեցված հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին: ՀՀ Գեղարքունիքի մարզի 116 հանրակրթական ուսումնական հաստատություններից 39 հաստատություն է հարմարեցված հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին և այլն: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տրամադրած տեղեկատվության վերլուծության համաձայն՝ բարձրագույն ուսումնական հաստատությունները, հիմնականում, մասամբ են հարմարեցված հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին:

Տրամադրած տեղեկատվության վերլուծությունից հետևում է նաև, որ շատ դեպքերում շենքերի և շինությունների մատչելիության վերաբերյալ պատկերացումները սահմանափակվում են միայն թեքահարթակների կառուցմամբ: Այդ մասին է վկայում նաև այն, որ Մարդու իրավունքների պաշտպանի հարցադրմանն առ այն, թե «2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ուսումնական, հաստատությունների շենք-շինությունների քանի՞ տոկոսն է համապատասխանում ֆիզիկական մատչելիության չափանիշներին, պետական իրավասու մարմինները հավելել են, որ օրինակ, թեքահարթակների կառուցման աշխատանքները կրում են շարունակական բնույթ կամ բոլոր ուսումնական հաստատությունները ապահովված են թեքահարթակներով և այլն:

---

[741] Տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 1385-1402, հասանելի է https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf հղումով, 2024 թվականի փետրվարի 23-ի դրությամբ: Տե՛ս նաև 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 1386-1402, հասանելի է https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 2024 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

[742] Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ, Երևան, 2022թ., էջեր 64-69 և 154-182 հասանելի է https://www.ombuds.am/images/files/66d55894cd4c933cef65a7d6d7d7b35a.pdf հղումով, 2024 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացված բողոքներից մեկով, օրինակ, բարձրացվել է հաշմանդամություն ունեցող երեխայի կրթության իրավունքի ապահովման հետ կապված հարց: Բողոքի համաձայն՝ տեղաշարժման հետ կապված դժվարություններ ունեցող երեխան հնարավորություն չի ունեցել մասնակցել «ֆիզիկա» և «քիմիա» առարկաների դասընթացներին այն պատճառով, որ դասասենյակները գտնվել են երկրորդ և երրորդ հարկերում, իսկ դասասենյակներ հասնելու ճանապարհը մատչելի չի եղել երեխայի համար: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ձեռնարկած միջոցառումների արդյունքում կատարվել է դասասենյակների փոփոխություն՝ ապահովելով երեխայի մասնակցությունը դասընթացի տեսական հատվածին: Հարկ է փաստել, սակայն, որ լուծումը դրվագային է, իսկ հաստատության մատչելիության ապահովման հետ կապված համակարգային խնդիրը շարունակում է մնալ արդիական՝ չապահովելով երեխայի մասնակցությունը նշված առարկաների գործնական դասընթացներին:

Արձանագրվել է, որ ուսումնական հաստատությունների շենքերի նախագծման և վերակառուցման ընթացքում ևս առկա են ֆիզիկական միջավայրի մատչելիությունն ապահովող պահանջների խախտման դեպքեր: ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի տրամադրած տեղեկատվության համաձայն, օրինակ, մանկապարտեզների վերակառուցման ընթացքում հայտնաբերվել են մի շարք անհամապատասխանություններ ՀՀՇՆ IV-11.07.01-2006 նորմերի պահանջներին:

Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է, որ 2023 թվականի ընթացքում կրթական համակարգի հասանելիության ապահովման հարցում շարունակում է արդիական մնալ հաշմանդամություն ունեցող անձանց համար տրանսպորտային համակարգի և ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների մատչելիության ապահովման հետ կապված հարցը:

Տրանսպորտային համակարգի անմատչելիությունը գործնականում կրթության իրավունքի իրացման հարցում իրական խոչընդոտ է հատկապես այն համայնքներում և բնակավայրերում, որտեղ չկան ուսումնական հաստատություններ, և երեխաները ստիպված են լինում կրթության իրավունքի իրացման համար տեղափոխվել այլ համայնքի դպրոց կամ մանկապարտեզ: Այսպես, օրինակ, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ՀՀ Արագածոտնի մարզի Մեծաձոր, Շամիրամ, Ալագյազ և Արևուտ համայնքներում չեն գործում նախադպրոցական ուսումնական հաստատություններ: ՀՀ Լոռու մարզի 17 բնակավայրում առկա չեն դպրոցներ:

Մինչդեռ՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների 4-րդ ընդհանուր մեկնաբանության համաձայն՝այն միջավայրը, որտեղ կան հաշմանդամություն ունեցող սովորողները, պետք է այնպես նախագծված լինի, որ նպաստի նրանց ուսումնական գործընթացում ընդգրկվելուն և ապահովի նրանց հավասար իրավունքները ուսման ողջ ընթացքում Օրինակ՝ դպրոցական տրանսպորտը, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը, սանհանգույցները, դպրոցական բուֆետները և հանգստի տարածքները պետք է լինեն ներառական, հասանելի և անվտանգ: Պետությունը պետք է արգելի ցանկացած ապագա կրթական ենթակառուցվածքի կառուցումը, որը չի ապահովում մատչելիություն:

Պետությունները պետք է ապահովեն հաշմանդամություն ունեցող սովորողների համար կրթական հաստատությունների լայն շրջանակի առկայությունը տեղական համայնքի բոլոր մակարդակներում[743]*:*

2023 թվականի ընթացքում արձանագրվել են նաև ուսումնական հաստատություններում տեղեկատվության և հաղորդակցության մատչելիության ապահովման հետ կապված խնդիրներ:

Մարդու իրավունքների պաշտպանի հարցադրմանն առ այն, թե 2023 թվականի ընթացքում պետության կողմից քանի՞ ժեստերի լեզվի թարգմանիչ է ներգրավվել հանրակրթական ուսումնական հաստատություններում և ի՞նչ ընթացակարգով՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հայտնել է, որ Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրում ներգրավվել է ժեստերի լեզվի 1 թարգմանիչ: Նախարարության տրամադրած տեղեկատվության վերլուծության համաձայն՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում ժեստերի լեզվի մասնագետներ կամ չեն ներգրավել, կամ ներգրավման անհրաժեշտություն չի առաջացել:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հայտնել է, որ ժեստերի լեզվի լրացուցիչ կրթական ծրագրի ներդրման հարցը քննարկվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հետ, որի արդյունքում հստակեցվել է, որ ժեստերի լեզուն՝ որպես առարկա դասավանդվում է «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների կրթական ծրագրերի ցանկ»-ի «Հատուկ մանկավարժություն» մասնագիտության «Սուրդոմանկավարժություն» և «Օլիգոֆրենոմանկավարժություն» կրթական ծրագրերի շրջանակներում: Այնուհետև, նախարարությունը հայտնել է նաև, որ ժեստերի լեզվի թարգմանչի կրթական ծրագրի ներդնումը այս պահին չի կարող իրականացվել, քանի որ անհրաժեշտ են լրացուցիչ ֆինանսական միջոցներ, արտասահմանից ներգրավված մասնագետներ, ինչպես նաև խրախուսման համակարգեր՝ մասնագիտությունը գրավիչ դարձնելու և ուսանողներին ներգրավելու համար:

Նշվածից հետևում է, որ ուսումնական հաստատություններում ժեստերի լեզվի թարգմանություն, գրեթե, չի ապահովվում:

Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքներից մեկի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ուսումնական հաստատություններում՝ քոլեջներում, ժեստերի լեզվի թարգմանության տրամադրումը մերժելու հիմքում դրվել է օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտությունը:

Մինչդեռ՝ *«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների 4-րդ ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար առանց խտրականության ու մյուսների հետ հավասար հիմունքներով մատչելի ընդհանուր բարձրագույն կրթություն, մասնագիտական կրթություն, մեծահասակների ուսուցում և ամբողջ կյանքի ընթացքում կրթություն ստանալու հնարավորություն ապահովելու համար պետությունը պետք է նույնականացնի և բացառի վերաբերմունքի հետ կապված, ֆիզիկական, լեզվական, հաղորդակցական, ֆինանսական, իրավական և այլ խոչընդոտները: Խելամիտ հարմարեցումները պետք է*

[743] Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի 4-րդ ընդհանուր մեկնաբանությունն հասանելի է https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD%2FC%2FGC%2F4&Lang=en հղումով, 2024 թվականի մարտի 8-ի դրությամբ:

ապահովվեն այնպես, որ հաշմանդամություն ունեցող անձինք չբախվեն խտրականության[744]*:*

Մեկնաբանության համաձայն՝ կոնվենցիայով նախատեսված պարտավորությունների աստիճանական իրականացման մոտեցումը չպետք է խաթարի պետության կողմից անհապաղ կատարման ենթակա պարտավորությունների կատարմանը: Անհապաղ կատարման ենթակա պարտավորություն է նաև կրթություն ստանալու իրավունքի իրացումը չբացառելու նպատակով խելամիտ հարմարեցումներ տրամադրելը: Խելամիտ հարմարեցումներ չտրամադրելը հաշմանդամության հիմքով խտրականություն է[745]*:*

ՀՀ կառավարության 2022 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1265-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ խելամիտ հարմարեցումների տեսակները ներառում են աջակցությունները որևէ գործողություն կատարելիս ((…) ժեստերի լեզվի թարգմանիչ (…)):

Նշվածից բխում է, որ պետությունը պարտավոր է վերացնել բոլոր, այդ թվում՝ իրավական խոչընդոտները, որոնք կարող են արգելք հանդիսանալ հաշմանդամություն ունեցող անձի կրթության իրավունքի իրացման համար, իսկ մինչև դրա վերացումը պետությունը պարտավոր է հաշմանդամություն ունեցող անձի կրթություն ստանալու իրավունքի իրացումը չբացառելու նպատակով ապահովել համապատասխան խելամիտ հարմարեցումների տրամադրումը: Նման խելամիտ հարմարեցում չտրամադրելը հաշմանդամության հիմքով խտրականություն է, որն էլ իր հերթին հանգեցնում է Կոնվենցիայով նախատեսված պարտավորության խախտման:

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման արդյունքները վկայում են նաև, որ տեսողության հետ կապված խնդիրներ ունեցող հաշմանդամություն ունեցող անձանց համար ևս շարունակում են արդիական մնալ կրթության իրավունքի ապահովման հետ կապված խնդիրները: Արձանագրվել է, որ բոլոր ուսումնական նյութերը չէ, որ տպագրվել են բրայլյան տառատեսակով, տպագրված դասագրքերը որոշ դեպքերում եղել են ոչ բավարար քանակությամբ: Արձանագրվել են դեպքեր, երբ տպագրված դասագրքերի հին լինելու պատճառով երեխաները չեն կարողացել յուրացնել նյութը: Խնդրահարույց է նաև տպագրված դասագրքերի սակավաթիվ լինելը, որով պայմանավորված՝ երեխաները ստիպված են եղել հերթով օգտվել դասագրքերից՝ երբեմն նաև զրկվելով դրանից օգտվելու հնարավորությունից:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հայտնել է, որ ելնելով դասագրքերի պահանջարկից՝ 2023 թվականին տեսողության հետ կապված խնդիրներ ունեցող երեխաների համար բրայլյան տառատեսակով տպագրվել և բաշխվել է 29 անուն՝ թվով 87 դասագիրք: Գործընթացը կրում է շարունակական բնույթ, 2024 թվականին ևս նախատեսվում է բրայլյան տառատեսակով դասագրքերի տպագրություն: Բացի այդ, նախարարությունը տեղեկացրել է նաև, որ տեսողության խնդիրներ ունեցող երեխաների հատուկ դպրոցում առկա է բրայլյան տառատեսակի վերափոխող պատճենահանման սարք, որի միջոցով հնարավոր է անհրաժեշտ ծրագրային նյութը տրամադրել սովորողներին: Բրայլյան տառատեսակով տպագրված դասագրքերը ծանր են

[744] Տե՛ս նույն տեղում, էջ 11:
[745] Տե՛ս նույն տեղում, էջ 12:

և մնում են դպրոցում, ինչը դպրոցում գիշերող սովորողներին հնարավորություն է տալիս դասագրքերն օգտագործել դասապատրաստման նպատակով:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների 4-րդ ընդհանուր մեկնաբանություն

Պետությունը պետք է ներդրումներ կատարի բրայլյան և թվային ձևաչափերով ուսումնական նյութերի ժամանակին արտադրության մեջ, այդ թվում՝ նորարարական տեխնոլոգիաների կիրառման միջոցով:

Նշվածից հետևում է, որ պետությունը պարտավոր է քայլեր ձեռնարկել, որպեսզի ժամանակին ապահովվի տեսողության հետ կապված խնդիրներ ունեցող անձանց կրթության իրավունքի իրացումը՝ անհրաժեշտ ժամանակում երաշխավորելով համապատասխան ուսումնական նյութերի հասանելիությունը:

Արձանագրվել են նաև մտավոր, խոսքի և հաղորդակցության հետ կապված խնդիրներ ունեցող հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի ուսումնական նյութերի և ուսումնական ծրագրերի կազմակերպման հետ կապված խնդիրներ: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում **Մարդու իրավունքների պաշտպանի** ներկայացուցիչների կողմից իրականացված այցի ընթացքում ստացվել են տեղեկություններ այն մասին, որ հաճախ, տնային ուսուցման կազմակերպման ժամանակ մատուցվող նյութերը չեն համապատասխանում սանի իրական կրթական կարիքներին և զարգացման հնարավորություններին:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների 4-րդ ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ հաղորդակցության հետ կապված դժվարություն ունեցող սովորողներին պետք է հնարավորություն տրվի ինքնադրսևորվելու և սովորելու հավելյալ հաղորդակցման միջոցներով: Սա կարող է ներառել ժեստերի լեզվի օգտագործումը, ցածր տեխնոլոգիաների և բարձր տեխնոլոգիաների աջակցող հաղորդակցման սարքերի տրամադրումը, ինչպիսիք են խոսակցական սարքերը կամ հաղորդակցվող գրքերը(...):

Խնդրահարույց է նաև այն, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2023 թվականի ընթացքում տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից իրականացված կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի բոլոր գնահատումների արդյունքում երեխաների կրթության արդյունավետ կազմակերպման համար առաջարկվել են բոլոր այն խելամիտ հարմարեցումները, որոնց կարիքը գնահատվող երեխաներն ունեցել են, սակայն ուսումնական հաստատությունները կարողացել են ապահովել հիմնականում ֆինանսական միջոցներ չպահանջող հարմարեցումները (օրինակ՝ ընթերցանության համար նախատեսված նյութի ձայնագրություն, տեքստի և տողերի նշիչներ, թավ տողերով աշխատանքային թուղթ, տեղի, դիրքի, դասարանի գույքի հարմարեցում, դիդակտիկ այնպիսի նյութեր, որոնք արդեն իսկ եղել են հաստատություններում կամ, ըստ անհրաժեշտության, պատրաստվել են մասնագետների կողմից և այլ): Նախարարությունը հայտնել է, որ վերոգրյալը պայմանավորված է նրանով, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 7-ի N 79-Ն հրամանով հաստատված հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսավորման նոր կարգը ուժի մեջ է մտել 2023 թվականի սեպտեմբերի 1-ին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ չնայած հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի մատչելիության ապահովման նպատակով պետության կողմից ձեռնարկած միջոցներին, ինչպիսիք են օրենսդրական փոփոխությունները, մատչելի և հարմարեցված դասագրքերի ապահովմանն ուղղված միջոցները, դպրոցի և մանկապարտեզների կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման ծրագրերը և այլն, այնուամենայնիվ 2023 թվականին շարունակում են արդիական մնալ հաշմանդամություն ունեցող անձանց կրթության մատչելիության ապահովման հետ կապված վերը նշված խնդիրները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է.

- ✓ ***ապահովել բոլոր ուսումնական հաստատությունների, ֆիզիկական միջավայրի, այդ թվում՝ շենքերի և շինությունների, հատկապես նոր կառուցվող և վերակառուցվող ենթակառուցվածքների, տրանսպորտային համակարգի մատչելիությունը:***
- ✓ ***անհետաձգելի միջոցներ ձեռնարկել հաշմանդամություն ունեցող անձանց համար խելամիտ հարմարեցումների տրամադրումը ապահովելու նպատակով՝ անհատական մոտեցմամբ երաշխավորելով յուրաքանչյուր հաշմանդամություն ունեցող անձի կրթության իրավունքի իրացումը:***
- ✓ ***ապահովել ուսումնական հաստատություններում տեղեկատվության և հաղորդակցության մատչելիությունը՝ անհրաժեշտ քանակի և որակի նյութերի, դասագրքերի և սարքավորումների ներգրավմամբ:***
- ✓ ***արագացնել օրենսդրական փոփոխությունների իրականացման գործընթացը, որոնք առավել արդյունավետ կերպով կերաշխավորեն հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի իրացումը:***

2. Կրթության որակի և արդյունավետության ապահովման հետ կապված խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները ցույց են տվել, որ շատ հաճախ հաշմանդամություն ունեցող անձանց կրթության նկատմամբ մոտեցումները միտված չեն սովորողի առանձնահատկություններին, զարգացման հնարավորություններին և առավելագույն ներուժին համապատասխան գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների ու արժեքների ձևավորմանը: Մասնագետների մոտ առկա է յուրաքանչյուր սովորողի համար ուսումնական գործընթացը հավասարապես խթանելու, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ներառումն ու ակտիվ մասնակցությունն ապահովելու, գնահատումների ճիշտ մեթոդաբանություն կիրառելու, ինչպես նաև սովորողների և ծնողների հետ հարաբերությունները կառուցելու հարցում համապատասխան հմտությունների կատարելագործման անհրաժեշտություն:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում **Մարդու իրավունքների պաշտպանի** ներկայացուցիչների կողմից իրականացված այցի ընթացքում անձնակազմի և սաների հետ տեղի ունեցած առանձնազրույցների, զրույցների, ինչպես նաև տրամադրած տեղեկությունների ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ տնային ուսուցմամբ սովորողների կրթության կազմակերպման ընթացքում ոչ միշտ է

ապահովվում դրա արդյունավետության բաղադրիչը, ինչի պատճառով լինում են դեպքեր, երբ երեխայի կրթության իրավունքի երաշխավորումը ձևական բնույթ է կրում: Օրինակ, Պաշտպանի աշխատակազմին ներկայացվել է, որ երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման արդյունքում սահմանված նպատակները, երբեմն, իրատեսական չեն, դրանց իրականացումը կրում է ձևական բնույթ և վերանայման անհրաժեշտություն է առաջանում:

ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի թիվ 216-Ն որոշման համաձայն՝ ուսուցչի օգնականների գործառույթներից է ուսուցիչներին՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ԱՈՒՊ-ով սահմանված նպատակներին հասնելու գործում աջակցության ցուցաբերումը, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար անհրաժեշտ կրթության առանձնահատուկ պայմանների ապահովման հարցերում աջակցության ցուցաբերումը և այլն: Մինչդեռ՝ ուսուցչի օգնականների հետ ունեցած առանձնազրույցները վկայում են, որ իրենց պատկերացմամբ իրենց հիմնական գործառույթը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին վերահսկելն ու ուսուցիչներին՝ մյուս երեխաների հետ անխափան դասապրոցեսն անցկացնելու նպատակով օգնություն ցուցաբերելն է:

ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի թիվ 216-Ն որոշմամբ սահմանվել են նաև հատուկ մանկավարժների՝ օլիգոֆրենոմանկավարժ, սուրդոմանկավարժ, տիֆլոմանկավարժ, լոգոպեդի, էրգոթերապիստի աշխատանքային գործառույթները, որոնց պատշաճ իրականացումը չափազանց կարևոր է կրթական համակարգի ներառականությունն ապահովելու համար: Մինչդեռ՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ուսումնական հաստատություններում նշված ծառայությունները տրամադրվում են տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից, սակայն որոշ մարզերում առկա է լոգոպեդի, սուրդոմանկավարժի, տիֆլոմանկավարժի և էրգոթերապիստի կարիք՝ մասնագիտական ռեսուրսի բացակայության պատճառով:

Համընդհանուր ներառական կրթության ապահովման տեսանկյունից կարևոր է հանրային իրազեկման բարձրացմանն ուղղված գործուն միջոցների ձեռնարկումը: Արձանագրվում են դեպքեր, երբ ծնողները հրաժարվում են իրենց երեխային տանել դպրոց՝ վախենալով, որ իրենց երեխան կարող է թիրախավորվել դասընկերների կողմից, կամ չեն ցանկանում, որ իրենց երեխան սովորի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ նույն դասարանում: Այսպես, օրինակ, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ արձանագրվել է դեպք, երբ ծնողը հրաժարվել է իր երեխային տանել դպրոց՝ պայմանավորված դասարանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող այլ երեխայի սովորելու հանգամանքով:

Մինչդեռ՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների 4-րդ ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ կրթությունը պետք է ուղղված լինի հաշմանդամություն ունեցող անձանց անհատականության, տաղանդների և ստեղծագործական ունակությունների, ինչպես նաև նրանց մտավոր, ֆիզիկական և հաղորդակցական կարողությունների լիարժեք զարգացմանը:

Ներառական կրթության ապահովման համար էական նշանակություն ունի բավարար թվով որակավորված և նվիրված անձնակազմի առկայության հանգամանքը[746]*:*

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ չնայած հաշմանդամություն ունեցող անձանց կրթության որակի և արդյունավետության ապահովման նպատակով պետության կողմից ձեռնարկած միջոցներին, ինչպիսիք են օրենսդրական փոփոխությունները, այդ թվում՝ հանրակրթության պետական չափորոշիչում կատարված փոփոխությունները, ուղեցույցների, ձեռնարկների, դիդակտիկ և ուսումնական օժանդակ նյութերի, դասընթացների մշակումը, այդ թվում՝ գնահատման նոր գործիքակազմի ներդրման և կիրառման նպատակով Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից 2023 թվականին մոդուլային դասընթացի մշակումը, վերապատրաստումների անցկացումը և այլն, այնուամենայնիվ, 2023 թվականին շարունակում են արդիական մնալ հաշմանդամություն ունեցող անձանց կրթության որակի և արդյունավետության ապահովման հետ կապված վերը նշված խնդիրները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է.

✓ միջոցներ ձեռնարկել ապահովելու, որ կրթությունը ուղղված լինի հաշմանդամություն ունեցող անձանց անհատականության, տաղանդների և ստեղծագործական ունակությունների, ինչպես նաև նրանց մտավոր, ֆիզիկական և հաղորդակցական կարողությունների լիարժեք զարգացմանը:

✓ կրթական գործընթացում ապահովել բազմամասնագիտական թիմի ներգրավվածությունն ու վերջիններիս շարունակական վերապատրաստումները:

✓ գործուն միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու համընդհանուր ներառականության վերաբերյալ հանրային իրազեկման բարձրացումը:

3. Հաշմանդամություն ունեցող երեխաների կրթությունը առանձին միջավայրում կազմակերպելը

Մարդու իրավունքների պաշտպանը խիստ մտահոգիչ է համարում այն, որ դեռևս հաշմանդամություն ունեցող որոշ երեխաներ շարունակում են կրթություն ստանալ առանձին միջավայրում: Հայաստանի Հանրապետությունում գործում են «Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրը», «Երևանի տեսողության խանգարումներ ունեցող երեխաների N 14 հատուկ դպրոցը» և այլն, որտեղ հաշմանդամություն ունեցող երեխաները կրթությունը ստանում են առանձնացված պայմաններում:

Նման մոտեցումը անթույլատրելի է և չի բխում համընդհանուր ներառականության ապահովման քաղաքականությունից:

Հասարակությունը, այդ թվում՝ նշված հաստատություններում կրթություն ստացող երեխաների ծնողները ավելի նպատակահարմար են համարում երեխաների՝ առանձնացված պայմաններում կրթություն ստանալը, քան մյուսների հետ հավասար պայմաններում հանրակրթական ուսումնական հաստատություններ հաճախելը, ինչը

[746] Տե՛ս նույն տեղում, էջ 12:

պայմանավորված է, ի թիվս այլնի, նշված ոլորտում պետության կողմից ներդրված կառուցակարգերի ոչ լիարժեքությամբ:

Այդ կապակցությամբ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեն կոչ է արել պետություններին տեղափոխել առանձնացված կրթական հաստատությունների ռեսուրսները՝ ուղղելով դրանք ներառական կրթական միջավայր ստեղծելուն[747]*:*

Առավել խնդրահարույց է այն, որ շարունակվում են բացահայտվել դեպքեր, երբ երեխաները դուրս են մնացել պարտադիր կրթությունից կամ ստանում են տնային ուսուցում հաշմանդամություն ունենալու հետևանքով: Օրինակ, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2023 թվականի ընթացքում ՀՀ Շիրակի մարզում բացահայտվել է հանրակրթությունից դուրս մնացած 20 երեխա: Կրթությունից դուրս մնալու պատճառներից է նաև հաշմանդամությունը: Արագածոտնի մարզում 2023 թվականի ընթացքում բացահայտվել են պարտադիր կրթությունից դուրս մնացած երեք հաշմանդամություն ունեցող երեխաներ և այլն: Նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ մարզպետի աշխատակազմում ստացվել է բողոք կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի կրթության կազմակերպման առնչությամբ և որպես լուծում տրվել է երեխայի համար տնային ուսուցում կազմակերպելը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է.

✓ ***գործուն քայլեր ձեռնարկել բացառելու հաշմանդամություն ունեցող երեխաների ուսուցումը առանձնացված պայմաններում կամ տնային ուսուցման տարբերակով կազմակերպելը՝ ապահովելով յուրաքանչյուր երեխայի՝ հավասար պայմաններում կրթություն ստանալու իրավունքը:***

✓ ***միջոցներ ձեռնարկել՝ բացառելու հաշմանդամության հետևանքով կրթությունից դուրս մնալու դեպքերը:***

[747] Տե՛ս նույն տեղում, էջ 19:

ԳԼՈՒԽ 4. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Առողջության պահպանման իրավունքը յուրաքանչյուրի, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց հիմնարար իրավունքներից է, որի իրացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը պետության պարտավորությունն է:

Առողջության պահպանման իրավունքը ամրագրված է մի շարք միջազգային փաստաթղթերում, մասնավորապես՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայում, Եվրոպական սոցիալական խարտիայում, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ –ի կոնվենցիայում և այլն:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ–ի կոնվենցիայով պետությունը պարտավորություն է ստանձնել ապահովել և օժանդակել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների, այդ թվում՝ առողջության պահպանման իրավունքի լիակատար իրականացումն՝ առանց հաշմանդամության պատճառով որևէ խտրականության:

ՄԱԿ-ի կայուն զարգացման 3-րդ նպատակն ուղղված է ամուր առողջության ու բարեկեցության ապահովմանը: Նույն նպատակի շրջանակներում ողջ հանրությունը քայլեր պետք է ձեռնարկի բոլորի համար առողջ կյանքի ապահովման և բարեկեցության խթանման ուղղությամբ: Նշվածից բխում է առողջապահության մատչելիությունը, որի շրջանակներում, ի թիվս այլնի՝ նույն նպատակի թիրախներից է որակյալ էական առողջապահական ծառայությունների ու անվտանգ, արդյունավետ, որակյալ և մատչելի էական դեղորայքի ու պատվաստանյութերի հասանելիությունը բոլորի համար:

ՄԱԿ-ի կայուն զարգացման 10-րդ նպատակն ուղղված է կրճատելու անհավասարությունը երկրների ներսում և դրանց միջև: Նպատակի իրագործման թիրախներից է՝ ապահովել հավասար հնարավորություններ և կրճատել արդյունքների անհավասարությունները:

Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները, ստացված գրավոր և բանավոր դիմում-բողոքները, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ստացված ահազանգերը վկայում են, որ առողջության պահպանման իրավունքի իրացման տեսանկյունից առկա են մի շարք համակարգային խնդիրներ, որոնց անդրադարձ է կատարվել նաև նախորդ տարիների տարեկան հաղորդումներում[748] և արտահերթ հրապարակային զեկույցում[749]:

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումների արդյունքները վկայում են, որ շարունակում է արդիական մնալ բժշկական հաստատությունների ֆիզիկական մատչելիության ապահովման հետ կապված խնդիրը: Հարցի առնչությամբ Պաշտպանը կարևորում է ինչպես սույն տարեկան հաղորդման «Մատչելիություն» գլխում ներկայացված՝ ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովմանն ուղղված

[748] Տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, հասանելի է https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf հղումով, 2024 թվականի փետրվարի 23-ի դրությամբ: Տե՛ս նաև 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, հասանելի է https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 2024 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

[749] Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ, Երևան, 2022թ., հասանելի է https://www.ombuds.am/images/files/66d55894cd4c933cef65a7d6d7d7b35a.pdf հղումով, 2024 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

միջոցառումների իրականացումը, այնպես էլ այլ կանխարգելիչ միջոցառումների ձեռնարկումը: Այդպիսի միջոցառում կարող է լինել բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններին ու անհատ ձեռնարկատերերին լիցենզավորելու համար շինարարական նորմերի համապատասխանությունը ստուգելու գործընթացում այնպիսի կառուցակարգերի ներդնումը, որոնք կերաշխավորեն մատչելիության նորմերի ապահովումը:

Պաշտպանի իրականացրած մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ բժշկական հաստատություններում, հիմնականում, ներդրված չեն բժշկական տեղեկատվությունը հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի ձևաչափով տրամադրելու ընթացակարգեր (օրինակ՝ բրայլյան համակարգ): Չի տրամադրվում մատչելի, այլընտրանքային և հեշտ ընթերցվող տեղեկատվություն մտավոր խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց համար: Մինչդեռ՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքում ամրագրված է, որ հաշմանդամություն ունեցող անձինք ամուսնության և ընտանեկան հարաբերությունները լիարժեքորեն իրականացնելու նպատակով իրավունք ունեն ազատ և պատասխանատու որոշումներ կայացնելու երեխաների թվի և նրանց ծնվելու ժամկետների մասին, ստանալու մատչելի տեղեկություններ վերարտադրողական առողջության և ընտանիքի պլանավորման վերաբերյալ:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների 2-րդ ընդհանուր մեկնաբանությամբ ևս անդրադարձ է կատարվել նշված խնդրին՝ արձանագրելով, որ մտավոր և զգայական խնդիրներ ունեցող հաշմանդամություն ունեցող անձինք հաճախ բախվում են իրենց վերաբերյալ բժշկական տեղեկատվությունը ստանալու հետ կապված խոչընդոտների, որոնք պայմանավորված են տեղեկատվության և հաղորդակցության մատչելիության՝ հեշտ ընթեռնելի ձևաչափերի և հաղորդակցման հավելյալ և այլընտրանքային եղանակների բացակայությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ շարունակում են արդիական մնալ հաշմանդամություն ունեցող անձանց համար դեղեր ստանալու իրավունք ունենալու մասին իրազեկված չլինելու, դրանց հասանելիության, որակի և արդյունավետության հետ կապված խնդիրները:

Բժշկական օգնության և սպասարկման տրամադրման կարգի, այդ թվում՝ դեղերի ստացման կարգի վերաբերյալ ոչ բավարար իրազեկվածության մասին է վկայում և այն, որ Մարդու իրավունքների պաշտպանին դիմած անձանցից շատերը տեղեկացված չեն, օրինակ, ՀՀ կառավարության 2023 թվականին անվճար դեղեր ստանալու իրավունքի առնչությամբ թիվ 1061-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների մասին:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում շարունակվել են ստացվել բողոքներ անվճար տրամադրվող դեղերի որակի և արդյունավետության վերաբերյալ: Մասնավորապես, հաշմանդամություն ունեցող անձինք տեղեկացրել են, որ հրաժարվել են անվճար տրամադրվող դեղերից՝ նախընտրելով սեփական միջոցներով ձեռք բերել ավելի որակյալ դեղեր: Նշված հարցերի առանձին մանրամասներին անդրադարձ է կատարվել սույն տարեկան հաղորդման այլ բաժիններում ևս:

Նշվածի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է այնպիսի կառուցակարգերի ներդնումը, որոնք հնարավորություն կտան հաշմանդամություն ունեցող անձանց անվճար հիմունքներով ստանալու առավել որակյալ դեղեր՝ բացառելով սեփական միջոցներով դրանք ձեռք բերելու անհրաժեշտությունը:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմումներով բարձրացվել է մարզերում անհրաժեշտ որակյալ բժշկական ծառայությունների բացակայությամբ պայմանավորված, ինչպես նաև ֆունկցիոնալության գնահատման նպատակով անհրաժեշտ բժշկական հետազոտություններ անցնելու համար՝ Երևանում գտնվող բժշկական հաստատություններ ուղղորդվելու վերաբերյալ խնդիրը: Ըստ անձանց հայտնած տեղեկատվության՝ նշված խնդիրը, երբեմն, հանգեցնում է ֆունկցիոնալության գնահատման համար դիմում ներկայացնելու ձգձգումների:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 25-րդ հոդված

Մասնակից պետությունները պարտավոր են հաշմանդամություն ունեցող անձանց առողջապահական ծառայությունները մատուցել նրանց բնակության վայրին հնարավորինս մոտ, ներառյալ՝ գյուղական վայրերում՝ ապահովելով նույն կարգի, որակի ու չափանիշների անվճար կամ մատչելի առողջապահական ծառայություններով ու ծրագրերով, որոնք տրամադրվում են այլ անձանց:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է այնպիսի միջոցների ձեռնարկումը, որոնք ՀՀ բոլոր մարզերում հասանելի կդարձնեն բժշկական որակյալ ծառայությունների տրամադրումը, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***գործուն միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու բժշկական հաստատություններում ֆիզիկական, տեղեկատվական և հաղորդակցական մատչելիությունը:***
- ✓ ***իրականացնել բժշկական օգնության և սպասարկման տրամադրման կարգի, այդ թվում՝ դեղերի ստացման կարգի իրազեկման բարձրացմանն ուղղված միջոցառումներ:***
- ✓ ***ներդնել կառուցակարգեր՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց անվճար հիմունքներով առավել որակյալ դեղերի տրամադրումը՝ բացառելով սեփական միջոցներով դրանք ձեռք բերելու անհրաժեշտությունը:***
- ✓ ***ապահովել բժշկական որակյալ ծառայությունների տրամադրման հասանելիությունը ՀՀ բոլոր մարզերում:***

ԳԼՈՒԽ 5. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Աշխատանքային իրավունքների իրացումը ոչ միայն հաշմանդամություն ունեցող անձի եկամտի, ապրուստի կայունությունն ապահովելու, այլ նաև նրա անկախ ապրելու և համայնքում ներգրավվելու իրավունքի իրացումը խթանող գործուն երաշխիքներից է:

Աշխատանքային իրավունքներն ամրագրված են միջազգային մի շարք փաստաթղթերում և ներպետական իրավական ակտերում, մասնավորապես՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայում, դրան վերաբերող մեկնաբանություններում, «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրում, «Աշխատանքի հիմնարար սկզբունքների և իրավունքների մասին» հռչակագրում, «Սոցիալական արդարության մասին հռչակագիրը՝ հանուն արդար գլոբալիզացիայի (2008թ.)» փաստաթղթում, ՀՀ Աշխատանքային օրենսգրքում, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքում, ենթաօրենսդրական իրավական ակտերում և այլն:

Հաշմանդամություն ունեցող անձանց արդյունավետ զբաղվածության և արժանապատիվ աշխատանքի ապահովումը որպես առաջնահերթություն է նախանշվել նաև ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 8-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2023-2027 թվականների համալիր ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 943-Լ որոշմամբ:

Միևնույն ժամանակ, Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները, ստացված գրավոր և բանավոր դիմում-բողոքները, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ստացված ահազանգերը վկայում են, որ հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային իրավունքների ապահովման տեսանկյունից առկա են մի շարք համակարգային խնդիրներ, որոնց անդրադարձ է կատարվել նաև նախորդ տարիների տարեկան հաղորդումներում[750] և արտահերթ հրապարակային **զեկույցում[751]:**

Մարդու իրավունքների պաշտպանը, ի թիվս այլնի, արձանագրել է.

- հաշմանդամության հիմքով խտրականության արգելքի պահպանման նկատմամբ վերահսկողության ապահովման հետ կապված խնդիրներ,
- հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության, ինքնազբաղվածության, ձեռնարկատիրության խթանման հետ կապված խնդիրներ:

[750] Տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, հասանելի է https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf հղումով, 2024 թվականի փետրվարի 23-ի դրությամբ: Տե՛ս նաև 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, հասանելի է https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 2024 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

[751] Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ, Երևան, 2022թ., հասանելի է https://www.ombuds.am/images/files/66d55894cd4c933cef65a7d6d7d7b35a.pdf հղումով, 2024 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

1. Հաշմանդամության հիմքով խտրականության արգելքի պահպանման նկատմամբ վերահսկողության ապահովման հետ կապված խնդիրներ

Հաշմանդամության հիմքով խտրականության արգելքի պահպանման նկատմամբ վերահսկողության ապահովման հետ կապված խնդիրներն արձանագրվել են նաև 2023 թվականի գործունեության արդյունքներով:

Օրինակ՝ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմումով անձը բարձրացրել է իրեն աշխատանքի չընդունելու հետ կապված հարց՝ նշելով, որ արդեն մի քանի տարի է, ինչ չի կարողանում անցնել աշխատանքի: Քաղաքացին հայտնել է, որ դիմել է իր գիտելիքներին և կարողություններին համապատասխան մի քանի աշխատանքի՝ ունենալով համապատասխան աշխատանքային փորձ, սակայն նրան պարբերաբար մերժել են՝ չմատնանշելով պատճառը: Մինչդեռ, անձի համոզմամբ, աշխատանքի չընդունման պատճառը հաշմանդամության հիմքով խտրականությունն է, թեև դրա մասին գործատուները ուղիղ չեն հայտնում: Ընդ որում, դիմում ներկայացրած անձը հայտնել է նաև, որ 2022 թվականից ընդգրկված է եղել Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնում և 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ աշխատանքի չեն ընդունել:

Նման դեպքերի մասին Մարդու իրավունքների պաշտպանին տեղեկատվություն են տրամադրել նաև Պաշտպանին առընթեր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի անդամները:

Մինչդեռ՝ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2023 թվականի ընթացքում տեսչական մարմնի կողմից աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման բնագավառում իրականացված վերահսկողության արդյունքում հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային իրավունքների խախտման դեպքեր չեն արձանագրվել: 2023 թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային իրավունքների խախտման վերաբերյալ բողոքներ տեսչական մարմին չի հասցեագրվել:

Վերը շարադրվածը վկայում է այն մասին, որ անհրաժեշտ է կատարելագործել հաշմանդամության հիմքով խտրականության արգելքի պահպանման նկատմամբ վերահսկողական կառուցակարգերը:

Այդ հարցի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանը, ի թիվս այլնի, կարևորում է ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կարողությունների զարգացումը, հաշմանդամության հիմքով խտրականության դեպքերի բացահայտման հստակ գործիքակազմերի մշակումն ու ներդնումը:

Խնդրահարույց է նաև ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի տրամադրած տեղեկատվությունն առ այն, որ 2023 թվականին տեսչական մարմնի աշխատակիցների համար հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում վերապատրաստումներ չեն իրականացվել:

Վերահսկողական կառուցակարգերի կատարելագործումից զատ, խնդրի համակարգային լուծման տեսանկյունից, արդիական է մնում «Իրավահավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման անհրաժեշտությունը:

2. Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության, ինքնազբաղվածության, ձեռնարկատիրության խթանման հետ կապված խնդիրներ

2023 թվականի ընթացքում Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության, ինքնազբաղվածության, ձեռնարկատիրության խթանման հետ կապված խնդիրները ևս շարունակում են մնալ արդիական:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հայտնել է, որ 2023 թվականին Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների աջակցությամբ աշխատանքի է տեղավորվել 199 հաշմանդամություն ունեցող անձ, որից 25-ը զբաղվածության պետական ծրագրերի արդյունքում: Հաշմանդամություն ունեցող անձինք աշխատանքի են անցել գյուղատնտեսության, արդյունաբերության, սպասարկման ծառայություններում, տեղեկատվության և կապի, կացության և հանրային սննդի ոլորտներում:

ՀՀ կառավարության 2023 թ. փետրվարի 23-ի թիվ 242 – Լ որոշմամբ հաստատվել են զբաղվածության խթանման նոր միջոցառումները, գործատուին տրամադրվող աջակցության չափերը և տևողությունը:

Նշված տեղեկատվության և Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման արդյունքները, ինչպես նաև Պաշտպանին առընթեր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի անդամների ներկայացրած տվյալները վկայում են այն մասին, որ անհրաժեշտ է կատարելագործել հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության, ինքնազբաղվածության, ձեռնարկատիրության խթանման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Այդ մասին է վկայում նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվությունն առ այն, որ 2023 ընթացքում «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպության 3 շահառու է ապահովված եղել աշխատանքով: 2 շահառու շարունակում է աշխատել՝ որպես կոշկակար, իսկ մեկ շահառու՝ կավագործությամբ՝ 2022 թվականի նոյեմբերից մինչև 2023թ. հուլիսն ընկած ժամանակահատվածում աշխատել է «Ճախրուկ» մշակութային կենտրոնում: «Գավառի մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում 2023 թվականի ընթացքում 18 տարին լրացած 10 շրջանավարտներից 5-ն են ապահովված եղել աշխատանքով: «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում 2023թ. ընթացքում աշխատանքով ապահովված շրջանավարտ առկա չէ:

Ավելին, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2023 թվականի ընթացքում մանկատների հաշմանդամություն ունեցող շրջանավարտների՝ աշխատանքի տեղավորման կամ ինքնազբաղվածության ուղղությամբ որևէ ծրագիր չի իրականացվել:

Մինչդեռ՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների 8-րդ ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ կոնվենցիայի ուղիղ պահանջներից է հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի իրավունքի

պաշտպանությունը, ինչպես նաև այդ նպատակով անհրաժեշտ այնպիսի քայլեր ձեռնարկելը, որոնք պետք է ուղղված լինեն այդ անձանց զբաղվածության խթանմանը:

Ավելին, ներդրված չեն նաև հաշմանդամություն ունեցող անձանց խնամքով զբաղվող անձանց համար զբաղվածության խթանման գործուն կառուցակարգեր:

Նշվածի առնչությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հայտնել է, որ ՀՀ կառավարության 2022թ. օգոստոսի 11-ի «Անձնական օգնականի ծառայություն տրամադրելու կարգը և պայմանները հաստատելու մասին» N 1264-Ն որոշման համաձայն՝ 2024 թվականից ներդրվելու է անձնական օգնականի ծառայությունը: Անձնական օգնականի ծառայությունը կարող է խթան հանդիսանալ հաշմանդամություն ունեցող երեխայի խնամք իրականացնող ծնողների՝ աշխատանքի իրավունքի իրացման առումով:

Հարկ է փաստել, սակայն, որ անձնական օգնականի ծառայության ներդնումը չի կարող փոխարինել հաշմանդամություն ունեցող անձանց խնամքով զբաղվող անձանց համար զբաղվածության խթանման միջոցառումներին: Ավելին, անձնական օգնականի ծառայությունների հետ կապված ևս առկա են մի շարք համակարգային խնդիրներ, որոնց վերաբերյալ նշված հարաբերությունները կարգավորող իրավական ակտի նախագծի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանը ներկայացրել է իր դիտողությունները: Դրանք, ի թիվս այլնի, վերաբերել են անձնական օգնականի ծառայությունների ժամաքանակին, անձնական օգնականի ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող անձին ներկայացվող պահանջներին և այլն:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***կատարելագործել հաշմանդամության հիմքով խտրականության արգելքի պահպանման նկատմամբ վերահսկողության կառուցակարգերը, ի թիվս այլնի, իրականացնելով ոլորտային պատասխանատու մարմնի կարողությունների զարգացմանը, հաշմանդամության հիմքով խտրականության դեպքերի բացահայտման հստակ գործիքակազմերի մշակմանն ու ներդրմանն ուղղված աշխատանքներ,***
- ✓ ***գործուն քայլեր ձեռնարկել՝ ընդունելու «Իրավահավասարության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը,***
- ✓ ***կատարելագործել հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության, ինքնազբաղվածության, ձեռնարկատիրության խթանման ուղղությամբ իրականացվող աշխատանքները,***
- ✓ ***ներդնել հաշմանդամություն ունեցող անձանց խնամքով զբաղվող անձանց համար զբաղվածության խթանման գործուն կառուցակարգեր:***

ԳԼՈՒԽ 6. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՆ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման, խթանման և պաշտպանության պետական քաղաքականության հիմնական ուղղություններից է հաշմանդամություն ունեցող անձանց՝ քաղաքական ու հասարակական կյանքին մյուսների հետ հավասար հիմունքներով, ուղղակիորեն կամ ազատ ընտրված ներկայացուցիչների միջոցով արդյունավետ ու լիարժեք մասնակցության, ներառյալ՝ քվեարկելու և ընտրվելու նրանց իրավունքի և հնարավորության ապահովումը, քվեարկության ընթացակարգերի, վայրերի և միջոցների մատչելիության ապահովումը, հաշմանդամություն ունեցող անձանց՝ ընտրությունների և հանրաքվեների գաղտնի քվեարկության իրավունքի պաշտպանությունը, պետական բոլոր մակարդակներում ընտրվելու, պաշտոն զբաղեցնելու և հանրային գործառույթներ իրականացնելու նրանց իրավունքի ապահովումը, հաշմանդամություն ունեցող անձանց՝ որպես ընտրողների կամքի ազատ արտահայտման երաշխավորումը, հաշմանդամություն ունեցող անձանց՝ առանց խտրականության և մյուսների հետ հավասար հիմունքներով հանրային գործերի կառավարմանը արդյունավետ ու լիարժեք կերպով մասնակցության ապահովումը, երկրի հանրային ու քաղաքական կյանքով զբաղվող ոչ կառավարական կազմակերպությունների և ընկերությունների գործունեության, ինչպես նաև քաղաքական կուսակցությունների գործունեության ու ղեկավարման մասնակցության ապահովումը և այլն:

Հաշմանդամություն ունեցող անձանց՝ քաղաքական և հասարակական կյանքին մասնակցության իրավունքն ամրագրվել է միջազգային մի շարք փաստաթղթերում և ներպետական օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայում, դրան վերաբերող մեկնաբանություններում, Ընտրական օրենսգրքում, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքում, ենթաօրենսդրական իրավական ակտերում և այլն:

Հաշմանդամություն ունեցող անձանց՝ ընտրական գործընթացներին ակտիվ մասնակցության ապահովումը որպես առաջնահերթություն է նախանշվել նաև ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 8-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2023-2027 թվականների համալիր ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 943-Լ որոշմամբ:

Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները, ստացված գրավոր և բանավոր դիմում-բողոքները, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ստացված ահազանգերը վկայում են, որ հաշմանդամություն ունեցող անձանց՝ քաղաքական և հասարակական կյանքում մասնակցության իրավունքի ապահովման տեսանկյունից առկա են մի շարք համակարգային խնդիրներ, որոնց անդրադարձ է

կատարվել նաև նախորդ տարիների տարեկան հաղորդումներում[752] և արտահերթ հրապարակային զեկույցում[753]:

Մարդու իրավունքների պաշտպանը, ի թիվս այլնի, արձանագրել է.

- ընտրական տեղամասերի մատչելիության հետ կապված խնդիրներ,
- ընտրություններին առնչվող տեղեկատվության և հաղորդակցության մատչելիության ապահովման հետ կապված խնդիրներ
- հաշմանդամություն ունեցող անձանց՝ հասարակական կյանքին մասնակցության իրավունքի իրացմանն առնչվող խնդիրներ:

1. Ընտրական տեղամասերի մատչելիության հետ կապված խնդիրներ

2023 թվականին շարունակել է խնդրահարույց մնալ տեղաշարժման հետ կապված դժվարություններ ունեցող անձանց ընտրական իրավունքի իրացման ապահովումը[754]:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 29-րդ հոդվածի համաձայն՝ պետությունը երաշխավորում է, որ հաշմանդամություն ունեցող անձինք մյուսների հետ հավասար հիմունքներով, ուղղակիորեն կամ ազատ կերպով ընտրված ներկայացուցիչների միջոցով, արդյունավետ ու լիարժեք կերպով մասնակցություն ունենան քաղաքական ու հասարակական կյանքին՝ ներառյալ քվեարկելու և ընտրվելու նրանց իրավունքը և հնարավորությունը: Պետության պոզիտիվ պարտավորությունը ներառում է նաև այն, որ քվեարկության ընթացակարգերը, վայրերը և միջոցները լինեն մատչելի, դյուրին հասկանալու և կիրառելու համար:

Ընտրական օրենսգրքի 3-րդ հոդվածը երաշխավորում է հավասար ընտրական իրավունքը՝ սահմանելով հանրային իշխանությունների՝ ընտրողների ընտրական իրավունքի իրականացման համար հավասար պայմաններ ապահովելու պարտականությունը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի հերթական ընտրությունների ժամանակ մատչելի տեղամասային կենտրոնների ցուցակը՝ կից ինտերակտիվ քարտեզով, հրապարակվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում, որը հնարավորություն է տվել տեղաշարժման դժվարություններ ունեցող ընտրողներին ընդգրկվել նախընտրած մատչելի տեղամասային կենտրոնի ընտրողների ցուցակում: Հանձնաժողովի տեղեկացմամբ՝ տեղական ինքնակառավարման մարմինների և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների ձեռնարկած աշխատանքների արդյունքում փոփոխվել են տեղամասային կենտրոնների շենք-շինությունները՝ հնարավորություն ստեղծելով մատչելի այլընտրանքային մուտքերի օգտագործման, երկրորդ հարկից քվեասենյակներն առաջին հարկում տեղակայելու համար, ինչպես նաև ապահովվել են ժամանակավոր թեքահարթակներ:

---

[752] Տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, հասանելի է https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf հղումով, 2024 թվականի փետրվարի 23-ի դրությամբ: Տե՛ս նաև 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, հասանելի է https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 2024 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

[753] Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ, Երևան, 2022թ., էջեր 101-182 հասանելի է https://www.ombuds.am/images/files/66d55894cd4c933cef65a7d6d7d7b35a.pdf հղումով, 2024 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

[754] Հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի իրացման խնդիրներն արձանագրվել են նաև Պաշտպանի 2018 և 2021 թվականների տարեկան հաղորդման շրջանակներում:

Մինչդեռ, 2023 թվականին Պաշտպանի ներկայացուցիչների կողմից իրականացված մշտադիտարկման այցերի արդյունքում պարզ է դարձել, որ ընտրատեղամասերի ճնշող մեծամասնությունն իրապես շարունակում է անմատչելի մնալ տեղաշարժման հետ կապված դժվարություններ ունեցող անձանց համար: Արձանագրվել է, որ հիմնականում բացակայել են կամ պատշաճ կառուցված չեն եղել ընտրական տեղամասերի մուտքի և շենքի ներսում թեքահարթակներն ու այլ հարմարեցումները: Առանձին դեպքերում շենքի մուտքից մինչև քվեախցիկ ընկած ճանապարհը մատչելի և հարմարեցված չի եղել հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին: Ավելին՝ թեքահարթակի բացակայության խնդիրը արձանագրվել է նաև այն ընտրական տեղամասերում, որոնք, ըստ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում տեղադրված տեղեկատվության, պետք է ունենային թեքահարթակներ:

Հատկանշական է նաև ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության տրամադրած տեղեկատվությունն առ այն, որ մատչելի տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվելու համար դիմել է միայն մեկ ընտրող:

Բացի ընտրական տեղամասերի ֆիզիկական մատչելիության ապահովումից և այլ հարմարեցումների առկայությունից, Պաշտպանը կարևոր է համարում նաև տրանսպորտի, կանգառների, հարակից տարածքների, բնակավայրի միջավայրային ֆիզիկական մատչելիության ապահովումը: Մինչդեռ, մշտադիտարկման արդյունքում արձանագրվել են նաև միջավայրային մի շարք խոչընդոտներ (օրինակ՝ մոտակա կանգառների բացակայությունը, ընտրատարածք տանող ճանապարհին թեքահարթակների բացակայությունը, պատշաճ ճանապարհային անցումների բացակայությունը), որոնք անհնարին են դարձրել հաշմանդամություն ունեցող անձանց կողմից ինքնուրույն՝ առանց լրացուցիչ աջակցության, ընտրատեղամաս հասնելու և մուտք գործելու, ինչպես նաև ներսում տեղաշարժվելու հնարավորությունը:

Պաշտպանն արձանագրել է նաև հաշմանդամությամբ պայմանավորված՝ իրենց բնակության վայրից դուրս գալու ֆիզիկական հնարավորություն չունեցող անձանց ընտրական իրավունքի ապահովման հետ կապված խնդիրներ:

Ընտրական օրենսգրքի 56-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատություններում ստացիոնար բուժման մեջ գտնվող, քվեարկության օրը տեղամասային կենտրոն ինքնուրույն ներկայանալու հնարավորություն չունեցող ընտրողների և ռազմաբժշկական հաստատությունում ստացիոնար բուժման մեջ գտնվող զինծառայող ընտրողների համար քվեարկությունը կազմակերպվում է ստացիոնար բժշկական և ռազմաբժշկական հաստատությունում՝ շրջիկ արկղի միջոցով:

Խնդրահարույց է, որ շրջիկ արկղի միջոցով քվեարկության կազմակերպման վերոնշյալ ընթացակարգը կիրառելի է միայն Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ և չի տարածվում տեղամասային կենտրոն ինքնուրույն ներկայանալու հնարավորություն չունեցող այն անձանց նկատմամբ, ովքեր չեն գտնվում ստացիոնար բուժման մեջ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ ***գործուն քայլեր ձեռնարկել՝ ապահովելու ընտրական տեղամասերի ֆիզիկական մատչելիությունը,***

- ✓ ***ներդնել այլընտրանքային կառուցակարգեր՝ երաշխավորելու հաշմանդամությամբ պայմանավորված՝ իրենց բնակության վայրից դուրս գալու ֆիզիկական հնարավորություն չունեցող անձանց ընտրական իրավունքի իրացումը:***

2. Ընտրություններին առնչվող տեղեկատվության և հաղորդակցության մատչելիության ապահովման հետ կապված խնդիրներ

Պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքում արձանագրվել են նախընտրական քարոզչության ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց համար տեղեկատվության տրամադրման մատչելիության հետ կապված խնդիրներ: Մասնավորապես՝ արձանագրվել է, որ նախընտրական քարոզչության ընթացքում չի ապահովվել բոլոր քարոզչական նյութերի, հեռուստահաղորդումների մատչելիությունը, այդ թվում՝ ժեստերի լեզվի թարգմանության, հայերեն ենթագրերի ապահովումը և այլն:

Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ վերոնշյալ խնդիրը պայմանավորված է ինչպես օրենսդրական թերի կարգավորումներով, այնպես էլ նախատեսված կարգավորումներով սահմանված պահանջների չպահպանմամբ:

Այսպես, օրինակ, Ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն՝ Հայաստանի հանրային հեռուստաընկերության անվճար եթերաժամերի և նախընտրական բանավեճերի ժամանակ ապահովվում է հայերեն ժեստերի լեզվով թարգմանություն: Հայաստանի հանրային հեռուստաընկերության եթերով նախընտրական քարոզչության հետ կապված տեսալսողական հաղորդումների տեսագրություններն ապահովվում են հայերեն ենթագրերով:

Վերոնշյալ դրույթի վերլուծությունից հետևում է, որ պետության պարտավորությունը՝ ապահովելու նախընտրական քարոզչության ընթացքում տեսալսողական հաղորդումների մատչելիությունը, սահմանափակվում է միայն Հայաստանի հանրային հեռուստաընկերության եթերներով:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 29-րդ հոդված
Պետությունը պարտավորում է ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձինք մյուսների հետ հավասար հիմունքներով, ուղղակիորեն կամ ազատ կերպով ընտրված ներկայացուցիչների միջոցով, արդյունավետ ու լիարժեք կերպով մասնակցություն ունենան քաղաքական ու հասարակական կյանքին, ներառյալ քվեարկելու և ընտրվելու նրանց իրավունքը և հնարավորությունը:

Ուստի, պետությունը պարտավոր է ստեղծել այնպիսի օրենսդրական դաշտ, որը հնարավորություն կտա լիարժեք կատարելու հաշմանդամություն ունեցող անձանց ընտրելու իրավունքն ապահովելու իր կոնվենցիոն պարտավորությունը:

Տեսալսողական հաղորդումների մատչելիության ապահովման օրենսդրական խնդրից զատ, Պաշտպանի աշխատակազմի իրականացրած մամուլի մշտադիտարկման արդյունքներով արձանագրվել են նաև Հայաստանի հանրային հեռուստաընկերության եթերով նախընտրական քարոզչության հետ կապված տեսալսողական հաղորդումների՝

առանց հայերեն ենթագրերի հեռարձակման դեպքեր[755]: Տեղեկատվության և հաղորդակցության մատչելիության ապահովման տեսանկյունից խնդրահարույց է նաև այն, որ Պաշտպանի աշխատակազմի կողմից դիտարկված՝ նախընտրական քարոզչությանն առնչվող տպագիր նյութերը ևս մատչելի չեն եղել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է գործուն քայլեր ձեռնարկել՝ ապահովելու ընտրություններին առնչվող տեղեկատվության և հաղորդակցության մատչելիությունը՝ ինչպես ստեղծելով կոնվենցիոն պարտավորությունից բխող բավարար օրենսդրական դաշտ, այնպես էլ գործնականում ապահովելով օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարումը:

3. Հաշմանդամություն ունեցող անձանց՝ հասարակական կյանքին մասնակցության իրավունքի իրացմանն առնչվող խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումներին հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք մասնակցությունն ապահովելու հետ կապված խնդիրներ: ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1146-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 10-րդ կետի համաձայն՝ հանրային քննարկումը իրականացվում է քննարկում իրականացնող մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից վարվող իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում հրապարակման եղանակով:

Հատկանշական է, որ իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումները, որպես կանոն, իրականացվում են վերոնշյալ եղանակով: Մինչդեռ, Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումների արդյունքում արձանագրվել է, որ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքը, այն է՝ e-draft.am-ը, մատչելի չէ հաշմանդամություն ունեցող անձանց համար: Այսպիսի պայմաններում խնդրահարույց է իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումը միայն ոչ մատչելի կայքերի միջոցով իրականացնելը, ինչը չի բխում միջազգային իրավական մոտեցումներից:

Այսպես, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի հաշմանդամություն ունեցող անձանց քաղաքական և հասարակական կյանքին մասնակցության վերաբերյալ թեմատիկ ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 25-րդ հոդվածի «ա» կետում նշված հանրային գործերի վարմանը մասնակցությունը լայն հասկացություն է, որը ներառում է նաև մասնակցությունը հանրային քննարկումներին[756]:

Մարդու իրավունքների պաշտպանը հանրային քննարկումների պատշաճ իրականացման տեսանկյունից կարևոր է համարում նաև հանրային քննարկումների ընթացակարգային նորմերի պահպանումը: Մինչդեռ, խնդրահարույց է այն, որ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացվել է տեղեկատվություն առ այն, որ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպության կողմից հանրային քննարկման դրված նախագծերից

[755] Հասանելի են https://www.youtube.com/watch?v=ykN7WwUxQPg, https://www.youtube.com/watch?v=zJNNhucOIv8, https://www.youtube.com/watch?v=K3dnzq9Kqbw հղումներով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[756] Հասանելի է https://digitallibrary.un.org/record/719452?ln=en&v=pdf հղումով, , 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

մեկի վերաբերյալ ներկայացված դիտարկումներն ու առաջարկությունները սահմանված կարգով չեն ներառվել նախագծի վերաբերյալ առաջարկությունների ամփոփաթերթում այն պատճառով, որ դրանք ներկայացվել էին հանրային քննարկումների 15-օրյա ժամկետի վերջին օրը՝ աշխատանքային ժամի ավարտից հետո:

Նշված դեպքի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում իրականացվում է քննարկման ընթացակարգ, միջոցներ են ձեռնարկվել՝ նախանշելու ինչպես կոնկրետ իրավիճակում իրավունքների վերականգնման, այնպես էլ խնդրի համակարգային լուծման հնարավոր ուղիները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***կատարելագործել իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումներին հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունն ապահովող կառուցակարգերը,***
- ✓ ***ապահովել հանրային քննարկումների ընթացակարգային նորմերի պահպանումը:***

ԲԱԺԻՆ 15. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

1. Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների հաշվառման վայրերում մարդու իրավունքների պաշտպանի փաստահավաք աշխատանքներն ու դրանց արդյունքները

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանության հարցերը գտնվում են Մարդու իրավունքների պաշտպանի հատուկ ուշադրության ներքո, և այդ ուղղություններով տարվող աշխատանքները կրում են շարունակական բնույթ: Նկատի ունենալով, որ Լեռնային Ղարաբաղը գտնվել է միջազգային մեկուսացման պայմաններում, ինչպես նաև այն, որ էթնիկ հայերի նկատմամբ Ադրբեջանի կողմից վարվող հայատյացության քաղաքականությունն անդրադառնում է նաև Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպանության ընդհանուր համակարգի վրա՝ Պաշտպանի հաստատությունը կարևորել է մարդու հիմնական իրավունքների խախտումների ու այդ առնչությամբ առկա վտանգների մասին տեղեկությունները մարդու իրավունքների միջազգային մասնագիտացված կառույցներին ու դերակատարներին ներկայացնելը:

2022 թվականի դեկտեմբերի 12-ին մի խումբ անձինք, ներկայանալով որպես Ադրբեջանցի «բնապահպան ակտիվիստներ», փակեցին Գորիս-Ստեփանակերտ մայրուղին՝ Լեռնային Ղարաբաղը Հայաստանի և աշխարհի հետ կապող միակ ճանապարհը՝ Ադրբեջանի՝ 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հրադադարի մասին հայտարարությամբ սահմանված պարտականության բացահայտ խախտմամբ:

Այս առումով ԵԽ մարդու իրավունքների հանձնակատար Դունյա Միյատովիչը նշել է, որ 2022 թվականի դեկտեմբերի 12-ից Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանը Հայաստանի հետ կապող միակ ճանապարհի՝ Լաչինի միջանցքի արգելափակումը խոչընդոտել է առաջին անհրաժեշտության ապրանքների և ծառայությունների մատակարարումը, հանգեցրել է Լեռնային Ղարաբաղի հայերի մեկուսացմանը: Հանձնակատարը նշել է, որ 2022 թվականի դեկտեմբերի 16-ին Ադրբեջանի իշխանությունների կողմից հովանավորվող ցուցարարները փակել էին ճանապարհը, և ադրբեջանական իշխանությունները 2023 թվականի ապրիլին նույն ճանապարհին անցակետ են տեղակայել[757]:

2023 թվականի հունիսի 15-ին Ադրբեջանը արգելափակեց մարդասիրական ողջ օգնության տեղափոխումը Լաչինի միջանցքով՝ ստեղծելով ծայրահեղ ծանր իրավիճակ և առաջ բերելով հատկապես սովի վտանգ: Շուրջ 9 ամիս տևած շրջափակման ընթացքում սաստիկ սովի, թերսնման ենթարկված և բոլոր կենսական նշանակության ապրանքների զրկանքին մատնված 120,000 մարդ, այդ թվում՝ 30,000 երեխա, 2,000 հղի և 20,000 տարեց, այնուհետ ենթարկվեցին իրենց ֆիզիկական գոյությանը սպառնացող վտանգին՝ 2023 թվականի սեպտեմբերի 19-ին ադրբեջանական զինուժի կողմից սանձազերծված ռազմական հարձակման արդյունքում:

Ստանալով բազմաթիվ բողոքներ և ահազանգեր Հայաստանի Հանրապետությունում գտնվող անձանցից, ովքեր կարիք ունեին վերամիավորվելու Լեռնային Ղարաբաղում

[757] Տե՛ս ԵԽ մարդու իրավունքների հանձնակատարի՝ Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանի շուրջ Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտությունից տուժած մարդկանց մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ դիտարկումները, 2024թ., հասանելի է https://rm.coe.int/observations-on-the-human-rights-situation-of-people-affected-by-the-c/1680ae228c հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

գտնվող իրենց հարազատների (այդ թվում՝ անչափահաս) հետ, ինչպես նաև իրականացնելով խնդրի մշտադիտարկում՝ Լաչինի միջանցքի արգելափակման հումանիտար հետևանքների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանը 2022 թվականի դեկտեմբերի 12-ից հրապարակել է թվով **4 արտահերթ հրապարակային զեկույց**[758]: Զեկույցները ներկայացվել են մարդու իրավունքների մանդատ ունեցող միջազգային կազմակերպություններին ու դերակատարներին, հասանելի են դարձվել միջազգային դատական այն ատյաններին, որտեղ ներկայացվել է Լեռնային Ղարաբաղը Հայաստանի ու աշխարհի հետ կապող միակ ճանապարհի արգելափակումը Ադրբեջանի կողմից դադարեցնելու մասին Հայաստանի պահանջը, ինչպես նաև պետական իրավասու գերատեսչություններին:

Լաչինի միջանցքի արգելափակման հետևանքով ստեղծված իրավիճակի կապակցությամբ 2023 թվականի օգոստոսի 28-ին հայտարարություն է տարածել ԵԽ մարդու իրավունքների հանձնակատար Դունյա Միյատովիչը՝ նշելով, որ շարունակում է լրջորեն մտահոգված լինել 2022 թվականի դեկտեմբերից Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքով անցնող ճանապարհի արգելափակումից հետո Լեռնային Ղարաբաղում տիրող հումանիտար իրավիճակով և բնակչության իրավունքներով: Հայտարարությամբ Դունյա Միյատովիչը վերահաստատել է նաև իր կոչը՝ վերականգնել ազատ տեղաշարժը Լաչինի միջանցքով[759]:

2023 թվականի սեպտեմբերի 19-ից սկսած ադրբեջանական զինված ուժերը հրետակոծել են Լեռնային Ղարաբաղի քաղաքացիական բնակավայրերը՝ թիրախավորելով քաղաքացիական բնակչությանն ու քաղաքացիական ենթակառուցվածքները, այդ թվում՝ բնակելի շենքերն ու ուսումնական հաստատությունները:

Այդ համատեքստում 2023 թվականի սեպտեմբերի 20-ին Մարդու իրավունքների պաշտպանը հադես է եկել հրապարակային հայտարարությամբ՝ ընդգծելով, որ Ադրբեջանի ագրեսիան կոպտորեն ոտնահարում է միջազգային իրավունքի և միջազգային մարդասիրական իրավունքի սկզբունքները[760]:

Պաշտպանը և աշխատակազմը Պաշտպանի մանդատի շրջանակներում տարբեր ուղղություններով շարունակաբար և հետևողականորեն իրականացրել են տարատեսակ միջոցառումներ և աշխատանքներ, այդ թվում՝ փաստահավաք աշխատանքներ, ադրբեջանական մամուլի ու սոցիալական ցանցերի մշտադիտարկում և այլն:

Մասնավորապես, 2023 թվականի սեպտեմբերի 24-ից 30-ն ընկած ժամանակահատվածում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն ամենօրյա ռեժիմով իրականացրել է մշտադիտարկում և փաստահավաք աշխատանքներ՝ ապահովելով արձանագրված խնդիրների հասցեագրումն ու լուծումը: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հանձնարարությամբ աշխատակազմում Լեռնային

---

[758] ՀՀ և Արցախի մարդու իրավունքների պաշտպանների համատեղ զեկույցը, 2022թ, հասանելի է https://ombuds.am/images/files/54e62052ad99432e130355ec768bd53f.pdf հղումով, ՀՀ և Արցախի մարդու իրավունքների պաշտպանների 2-րդ համատեղ զեկույցը, 2022թ, հասանելի է https://ombuds.am/images/files/c01555c03620fb8494eaef308fe9ca15.pdf?fbclid=IwAR2E9Th_Pz8CTaWnlDgBF1J9zaGQ3WL հղումով, ՀՀ և Արցախի մարդու իրավունքների պաշտպանների համատեղ զեկույցի թարմացված տարբերակը, 2023թ, հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2467 հղումով, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի զեկույցը Լաչինի միջանցի արգելափակման հումանիտար հետևանքների վերաբերյալ, 2023թ. հունիսի 16, հասանելի է https://www.ombuds.am/images/files/798e81176d93081e6199ca90cfa31466.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[759] Հասանելի է https://www.coe.int/en/web/portal/-/restore-free-movement-along-lachin-corridor-and-ensure-rapid-and-unimpeded-delivery-of-humanitarian-assistance-to-nagorno-karabakh հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[760] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2696 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանության նպատակով ձևավորվել են արագ արձագանքման աշխատանքային խմբեր: Սեպտեմբերի 24-ից սկսած՝ աշխատակազմում շուրջօրյա ռեժիմով իրականացվել է նաև աշխատակազմի թեժ գծի հեռախոսահամարներով ահազանգերի ու բողոքների ուսումնասիրություն: Մշտադիտարկվել և ամփոփվել են տեղական և միջազգային մամուլը, սոցիալական մեդիայի հրապարակումները, այդ թվում՝ ադրբեջանական աղբյուրները՝ փաստագրելով էթնիկ հայերի նկատմամբ բռնության կոչերը՝ հատկապես կանանց և երեխաների թիրախավորմամբ, ատելության և թշնամանքի քարոզը: Նմանօրինակ բոլոր հրապարակումներն ուսումնասիրվել են, և հավաքագրված տեղեկատվությունն ուղարկվել է միջազգային գործընկերներին: Միջազգային գործընկերներին և իրավասու մարմիններին են ներկայացվելու նաև հընթացս իրականացվող և ամփոփվող փաստահավաք աշխատանքների արդյունքները:

Փաստահավաք առաքելության շրջանակներում 2023 թվականի սեպտեմբերի 24-ից 26-ը Մարդու իրավունքների պաշտպանը և աշխատակազմի ներկայացուցիչներն այցելել են Գորիսում և Կոռնիձորում, հաջորդող օրերին նաև Վայքում տեղակայված հումանիտար կայաններ՝ իրականացնելով շուրջօրյա ռեժիմով մշտադիտարկում և փաստահավաք աշխատանքներ: Այցերի ընթացքում առանձնազրույցներ են տեղի ունեցել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց հետ և փաստագրվել նրանց կողմից բարձրացված խնդիրները: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները ուսումնասիրել են հաշվառման, կացարանով ապահովման և, ընդհանուր առմամբ, անձանց իրավունքների պաշտպանության հետ կապված հարցերը: Բռնի տեղահանված անձանց տրվել է իրավունքների պաշտպանության վերաբերյալ խորհրդատվություն: Մի շարք խնդիրներ Պաշտպանի աջակցությամբ տեղում ստացել են լուծումներ:

2023 թվականի սեպտեմբերի 25-ին Պաշտպանը ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի ղեկավարի հետ այցելել է Կոռնիձոր բնակավայրի դաշտային հատվածում հիմնված հումանիտար կայան: Տեղում հետևել են հաշվառման, կարիքների գնահատման գործընթացին, զրուցել անձնակազմի, այդ թվում՝ բուժաշխատողների հետ: Սեպտեմբերի 26-ին Պաշտպանը Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի ներկայացուցիչ Քրիսթինե Վայգանդի հետ

հետևել է պետական մարմինների կողմից կարիքների գնահատման գործընթացին և զրույցներ ունեցել անձնակազմի հետ[761]:

Սեպտեմբերի 30-ին Անահիտ Մանասյանը Վայքում հանդիպումներ է ունեցել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց հետ: Տեղում իրականացվել են փաստահավաք աշխատանքներ, հավաքագրվել են մանրամասն տեղեկություններ: Մասնավորապես՝ Վայքում տեղակայված գրանցման կենտրոնում բռնի տեղահանվածների հետ տեղի են ունեցել զրույցներ, ուսումնասիրվել են նրանց գրանցման, սննդի, բուժօգնության, հիգիենայի տրամադրման և կացարանով ապահովման հետ կապված և առաջնային լուծումներ պահանջող հարցեր: Մի շարք հարցերի տեղում լուծումներ տալու նպատակով դրանք քննարկվել են իրավասու պետական մարմինների հետ[762]:

Հաջորդ օրերին ևս փաստահավաք աշխատանքներ իրականացնելու և անձանց իրավունքների վիճակին հետևելու նպատակով Պաշտպանի աշխատակազմի արագ արձագանքման խմբերը գտնվել են բոլոր հումանիտար կայաններում, որտեղ բարձրացված մի շարք խնդիրների տեղում լուծումներ են տրվել (օրինակ, կացարանով, դեղորայքով ապահովման և այլն), բազմաթիվ հարցերի լուծման մեխանիզմներ գտնելու նպատակով պարբերական քննարկումներ են տեղի ունեցել իրավասու պետական մարմինների հետ:

Բացի հումանիտար կայաններից, Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց տեսակցելու նպատակով հաջորդ օրերին ևս Պաշտպանը և ՄԻՊ ներկայացուցիչները իրականացրել են մի շարք այցեր տարբեր մարզեր (Գեղարքունիք, Կոտայք, Տավուշ, Սյունիք), աշխատանքային կարգով կապի մեջ են եղել տարբեր համայնքների և մարզերի պատասխանատու ներկայացուցիչների հետ (Շիրակ, Արմավիր, Արարատ և այլն):

Պաշտպանը բազմաթիվ այցեր է իրականացրել բժշկական կենտրոններ (օրինակ, «Արմենիա», «Այրվածքաբանության և մաշկաբանության ազգային կենտրոն»)՝ տեսակցելու վառելիքի պահեստում տեղի ունեցած պայթյունի հետևանքով տուժած անձանց: Առանձնազրույցներ է ունեցել բուժում ստացող անձանց և նրանց հարազատների հետ, բուժանձնակազմի հետ քննարկվել են անձանց առողջական վիճակին և բուժման ընթացքին վերաբերելի մի շարք հարցեր[763]:

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց տեսակցելու նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն իրականացրել է նաև չհայտարարված այցեր հատուկ խնամքի և հոգեկան առողջության կենտրոններ: Օրինակ՝ հոկտեմբերի 3-ին և 5-ին Պաշտպանի ներկայացուցիչներն այցելել են Սևանի և «Ավան» հոգեկան առողջության կենտրոններ: Մշտադիտարկման շրջանակում առանձնազրույցներ են տեղի ունեցել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և հոգեբուժական հաստատությունում գտնվող բուժառուների հետ: Ուսումնասիրվել են վերջիններիս իրավունքների ապահովման վիճակը, պահման պայմանները, դրանց համապատասխանությունը սահմանված պահանջներին[764]:

---

[761] Հասանելի է հետևյալ հղումներով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/2708, https://ombuds.am/am/site/ViewNews/2710, https://ombuds.am/am/site/ViewNews/2709, https://ombuds.am/am/site/ViewNews/2712, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[762] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2717 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[763] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2713 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[764] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2726 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Լայնածավալ փաստահավաք աշխատանքների ամփոփմամբ 2023 թվականի հոկտեմբերի 6-ին Մարդու իրավունքների պաշտպանը Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին ներկայացրել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց հետ Հայաստանի տարբեր մարզերում իրականացված փաստահավաք աշխատանքների նախնական արդյունքները: Հարկ է հատուկ արձանագրել, որ փաստահավաք աշխատանքների և դրա արդյունքում կազմվող զեկույցների առաջնահերթ նպատակը ՀՀ իրավասու պետական մարմիններին նշված խումբ անձանց իրավունքների պաշտպանության առանձնահատուկ կառուցակարգերի մշակման և իրացման առաջարկություններ ներկայացնելն էր: Պաշտպանը, ի թիվս այլնի, կոնկրետ փաստերով անդրադարձել է Ադրբեջանի կողմից թույլ տրված մարդու իրավունքների միջազգային իրավունքի և միջազգային մարդասիրական իրավունքի խախտումներին, մասնավորապես՝ քաղաքացիական բնակավայրերի և ենթակառուցվածքների, խաղաղ բնակչության թիրախավորումներին, արդյունքում՝ քաղաքացիական բնակչության շրջանում մահվան դեպքերին, խոշտանգումների, վատ վերաբերմունքի այլ ձևերի դրսևորումներին: Տվյալները ձեռք են բերվել Հայաստանի Հանրապետությունում գտնվող՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց հետ Պաշտպանի և ՄԻՊ ներկայացուցիչների իրականացրած հարցազրույցների և դրանց ընթացքում տրամադրված տեղեկատվության արժանահավատությունը հետագայում կոնկրետ մեթոդաբանությամբ ստուգելու միջոցով: Փաստագրվել են ադրբեջանական ագրեսիայի հետևանքով քաղաքացիական անձանց շրջանում մահվան, մարմինների անարգման, անդամահատման ու այլ դեպքերի մասին տեղեկություններ, ներկայացվել են փաստերը հավաստող լուսանկարներ (պահպանելով դրանց խորհրդապահական բնույթը): Ներկայացվել են նաև վատ վերաբերմունքի այլ դրսևորումներին առնչվող հավաքագրված փաստերը: Պաշտպանը խոսել է նաև Հայաստանի Հանրապետության կողմից նշված խումբ անձանց իրավունքների պաշտպանության պատշաճ կառուցակարգերի առկայության և իրացման կարևորության մասին[765]:

Փաստահավաք առաքելությունների արդյունքներով 2023 թվականի հոկտեմբերի 10-ին Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակել է **արտահերթ նախնական զեկույց** Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց հաշվառման վայրերում իր և աշխատակազմի իրականացրած փաստահավաք աշխատանքների արդյունքների ու տեղահանված անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ[766]:

[765] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2725 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[766] Զեկույցը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2728 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Պաշտպանը, ի թիվս այլնի, զեկույցում ամփոփել ու վերլուծել է փաստահավաք աշխատանքների ընթացքում ձեռք բերված տեղեկություններն ադրբեջանական զինված ուժերի կողմից կատարված հանցանքների ու դաժանությունների վերաբերյալ, փաստագրել է բռնի տեղահանված անձանց, շտապօգնության մեքենաների թիրախավորման, երեխաների ու կանանց իրավունքների խախտումների ապացույցները:

Ներկայացվել են նաև քաղաքացիական անձանց ու կենսական ենթակառուցվածքների թիրախավորման, անձանց հասցված գույքային վնասների դեպքերը: Զեկույցում հատուկ ուշադրության են արժանացել և առաջինը փաստերով ներկայացվել խոշտանգումների, մարմինների անարգման, անդամախեղման հարցերը, որոնք փաստագրող լուսանկարներ ներառվել են զեկույցին կից խորհրդապահական մասում:

Նախնական զեկույցը, որը ներառում է առաջարկություններ ՀՀ իրավասու պետական մարմինների կողմից Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանության համակարգի կատարելագործման և առանձնահատուկ կառուցակարգերի ներդրման վերաբերյալ, ինչպես նաև զեկույցի խորհրդապահական մասը, ուղարկվել են մարդու իրավունքների պաշտպանության մանդատ ունեցող միջազգային կառույցներին, ինչպես նաև իրավասու պետական մարմիններին: Զեկույցի խորհրդապահական հատվածը, Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցչի կողմից ներկայացվել է ՄԱԿ-ի արդարադատության միջազգային դատարան՝ Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի 2023 թվականի հոկտեմբերի 13-ին գործի քննության շրջանակներում:

Զեկույցում նկարագրված փաստահավաք առաքելությունների արդյունքները ցույց են տալիս, որ ադրբեջանական զինուժի գործողություններն ուղեկցվել են խաղաղ բնակչության և քաղաքացիական օբյեկտների, այդ թվում՝ ենթակառուցվածքների վրա թիրախավորված և չտարբերակված հարձակումներով՝ միջազգային մարդասիրական իրավունքի և Ժնևի կոնվենցիաների կոպիտ խախտումներով[767]:

Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց իրավունքների պաշտպանության գործառույթի համատեքստում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 2023 թվականի հոկտեմբերի 17-ին և 18-ին համատեղ այց է իրականացրել Եվրոպայի Խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Դունյա Միյատովիչի հետ Աղավնաձոր բնակավայրում տեղակայված ժամանակավոր կացարանում և Կոտայքի մարզի ժամանակավոր կացարաններում ժամանակավոր բնակություն հաստատած Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց: Բռնի տեղահանված անձանց հետ իրականացվել են առանձնազրույցներ, ուսումնասիրվել են նրանց կեցության պայմանները, կարիքների գնահատման, բժշկական օգնության և սպասարկման, սննդի, անձնական հիգիենայի պարագաների տրամադրման գործընթացները: Հատուկ ուշադրության են արժանացել

[767] Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը, 2023թ., հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2728 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

երեխաների և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման հետ կապված հարցերը: Պաշտպանին և ԵԽ մարդու իրավունքների հանձնակատարին անձինք ներկայացրել են իրենց կրած զրկանքները և բռնի տեղահանման արդյունքում առաջացած խնդիրները[768]:

ԵԽ մարդու իրավունքների հանձնակատար Դունյա Միյատովիչը 2024 թվականի հունվարի 12-ին հրապարակել է 2023-ի հոկտեմբերի 16-ից 23-ն ընկած ժամանակահատվածում իրականացրած այցի ժամանակ Հանձնակատարի արձանագրումները:

Դունյա Միյատովիչը նշել է, որ Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանը ԵԽ Հանձնակատարին ծանոթացրել է տեղահանվածների հաշվառման վայրերում 2023 թվականի սեպտեմբերի 24-ից 30-ն իրականացրած փաստահավաք աշխատանքների արդյունքների վերաբերյալ նախնական զեկույցին և այլ հրապարակումներին:

Հանձնակատարն անդրադարձել է նաև Պաշտպանի զեկույցում նկարագրված բռնությունների, խոշտանգումների և անդամախեղումների հնարավոր դեպքերին՝ նշելով, որ տարբեր հարցազրույցների, զեկույցների և լրատվամիջոցների մշտադիտարկումների արդյունքների միջոցով հավաքագրված տեղեկատվության հիման վրա, ի թիվս այլ դեպքերի, Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է սեպտեմբերի 19-ից 20-ը քաղաքացիական օբյեկտների և ենթակառուցվածքների, այդ թվում՝ բնակելի շենքերի, դպրոցների և շտապօգնության մեքենաների թիրախավորման դեպքերին:

Դունյա Միատովիչը նշել է նաև, որ վախի և անորոշության զգացումը տեղի բնակչության շրջանում առավել ուժգնացել է 2023 թվականի սեպտեմբերի 19-ին և 20-ին ադրբեջանական ռազմական գործողությունների հետևանքով: Շրջափակմամբ պայմանավորված բարձր մակարդակի խոցելիության վիճակը և Լաչինի միջանցքի հանկարծակի բացումը 2023 թվականի սեպտեմբերին տեղի բնակչության մոտ առաջացրել են զգացողություն, որ իրենց գոյությունը պաշտպանելու համար նրանք չունեն այլ տարբերակ, քան անհապաղ տարածաշրջանը լքելը:

Հանձնակատարն ընդգծել է, որ Հայաստան տեղափոխված Լեռնային Ղարաբաղի հայերին և, մասնավորապես՝ խոցելի խմբերին պատկանողներին, պետք է երաշխավորվի կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում անհրաժեշտ աջակցության հասանելիություն[769]:

Պաշտպանն այցելել է նաև բռնի տեղահանված անձանց՝ Ծաղկաձորի ԵՊՀ «Համալսարան» հյուրանոցում տեղակայված ժամանակավոր կացարան, որտեղ ուսումնասիրել է բռնի տեղահանված հայրենակիցների պահման պայմանները, կարիքների գնահատման, բժշկական օգնության և սպասարկման, սննդի, անձնական հիգիենայի պարագաների տրամադրման գործընթացները[770]:

2023 թվականի նոյեմբերի 17-ին Մարդու իրավունքների պաշտպանը, ԵԱՀԿ Խորհրդարանական Վեհաժողովի նախագահ Պիա Կաուման և ԵԱՀԿ ԽՎ գլխավոր քարտուղար Ռոբերտո Մոնտելլան համատեղ այցելել են Կոտայքի մարզի Աբովյան խոշորացված համայնքում տեղակայված՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ժամանակավոր կացարան: Շրջայց է կատարվել կացարանում, առանձնազրույցներ են տեղի ունեցել բռնի տեղահանված անձանց հետ, քննարկվել են

[768] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2738 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[769] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2839 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[770] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2739 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

վերջիններիս պահման պայմանների, բժշկական օգնության և սպասարկման, սննդի հետ կապված և այլ հարցեր[771]:

Փաստահավաք այցերին զուգահեռ Պաշտպանի աշխատակազմն իրականացրել է ադրբեջանական մեդիա տիրույթի շարունակական մշտադիտարկման աշխատանքներ՝ փաստագրելով էթնիկ հայերի նկատմամբ բռնության կոչերը, ատելության և թշնամանքի քարոզը, այդ թվում՝ կանանց և երեխաների թիրախավորմամբ: Նմանօրինակ բոլոր հրապարակումներն ուսումնասիրվել ու ամփոփվել են, և հավաքագրված տեղեկատվությունն ուղարկվել է մարդու իրավունքների մանդատակիր միջազգային գործընկերներին:

Այս առումով Պաշտպանը բազմիցս արձանագրել է, որ ադրբեջանական հասարակության անհանդուրժողական վերաբերմունքը հետևանքն ու ապացույցն է Ադրբեջանի իշխանությունների հայատյաց և էթնիկ զտումների քաղաքականության[772]:

Ընդ որում, Ադրբեջանում հայերի նկատմամբ էթնիկ հիմքով ատելության քարոզչության առկայությունն արձանագրվել է նաև մարդու իրավունքների մոնիտորինգային միջազգային մարմինների կողմից, մասնավորապես՝ ՄԱԿ-ի Ռասայական խտրականության վերացման կոմիտեի 2022 թվականի սեպտեմբերի 22-ի՝ Ադրբեջանի՝ 10-ից 12-րդ պարբերական հաղորդումների վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում և Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի (ՌԵԱՀ) 2023 թվականի մարտի 29-ի զեկույցում:

Ինչպես կոմիտեն, այնպես էլ հանձնաժողովը իրենց մտահոգությունն են հայտնել հանրային քննարկումներում՝ ինչպես մամուլում և սոցիալական ցանցերում, այնպես էլ քաղաքական և հասարակական գործիչների խոսքում ազգությամբ հայերի նկատմամբ ռասայական ատելության հրահրման և ռասիստական կարծրատիպերի տարածման կապակցությամբ: Ավելին, մտահոգիչ է համարվել նաև դպրոցական դասագրքերում էթնիկ հայերի նկատմամբ խտրական խոսքի օգտագործումն ու անհանդուրժողականության քարոզչությունը: Այս կապակցությամբ ՌԵԱՀ-ն արձանագրել է նաև երիտասարդության շրջանում՝ դպրոցում և դրանից դուրս, հայերի նկատմամբ ատելության խոսքի տարածվածությունը՝ ընդգծելով, որ այն կարող է պարարտ հող ստեղծել հետագա ռազմական գործողությունների համար:

Մատնանշելով նաև էթնիկ հայերի նկատմամբ ադրբեջանական հասարակությունում, այդ թվում՝ պաշտոնատար անձանց կողմից հնչեցվող ագրեսիվ հռետորաբանության առկայությունը՝ ՌԵԱՀ-ն ընդգծել է, որ չնայած ադրբեջանական իշխանությունների առարկությանն առ այն, որ բացասական վերաբերմունքն ուղղված է ոչ թե ազգությամբ հայերի, այլ որոշումներ կայացնողների նկատմամբ, այնուամենայնիվ, ադրբեջանական հանրային խոսքում ազգությամբ հայ որոշումներ կայացնողներին ուղղված քննադատության և հայերի դեմ ուղղված ատելության խոսքի սահմանը լղոզված է և գործնականում դրանց տարանջատումն անհնար է[773]:

Նկատի ունենալով այն, որ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանության ընդհանուր համակարգի, նշված անձանց ընդհանուր վիճակի վրա անհերքելի ազդեցություն է թողնում Ադրբեջանի կողմից վարվող հայատյացության քաղաքականությունը, Պաշտպանը բազմիցս ընդգծել է, որ այս

[771] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2769 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[772] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2705 հղումով, 2024 թվականի 29-ի դրությամբ:
[773] ՌԱԵՀ-ի զեկույցը Ադրբեջանի վերաբերյալ, 2023թ., հասանելի է https://rm.coe.int/sixth-report-on-azerbaijan/1680ab9e3 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

վտանգավոր քաղաքականությունը պետք է լինի մարդու իրավունքների պաշտպանության մանդատ ունեցող կազմակերպությունների ուշադրության կենտրոնում: Ընդ որում՝ անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ տարիներ շարունակ իրականացված համակարգված քաղաքականության արդյունքում հասարակությունում արմատավորված այս վտանգավոր երևույթը հնարավոր չէ վերացնել ադրբեջանական իշխանությունների սոսկ բանավոր կամահայտնության միջոցով, այլ այդ ուղղությամբ անհրաժեշտ է կյանքի կոչել համակարգված լուրջ գործնական կառուցակարգեր: Ավելին, ՀՀ իրավասու մարմինները պետք է մշակեն և իրացնեն Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց սոցիալ-հոգեբանական աջակցության կոնկրետ կառուցակարգեր՝ նկատի ունենալով նաև նշված հանգամանքը:

Վերը նշված աշխատանքներին զուգահեռ Մարդու իրավունքների պաշտպանը Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշպանության հետ կապված հարցերը հատուկ կերպով բարձրացրել է 50-ից ավելի բարձրաստիճան հանդիպումների և տարբեր ձևաչափերով միջոցառումների ընթացքում (այդ թվում՝ միջազգային այցերի շրջանակում): Այս ամենի հետ մեկտեղ նշված հարցերի շուրջ Պաշտպանը բազմաթիվ խորհրդապահական քննարկումներ է ունեցել մարդու իրավունքների մանդատ ունեցող միջազգային տարբեր դերակատարների հետ:

2023 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի փաստահավաք առաքելության կարողությունների զարգացման նպատակով Պաշտպանի աշխատակազմում նախաձեռնվել են մի շարք միջոցառումներ, որոնց արդյունքում 2024 թվականի ընթացքում կազմակերպվել է վերապատրաստման դասընթաց՝ փորձագետների ներգրավմամբ, պատրաստվել է մարդու իրավունքների խախտումների առնչությամբ փաստահավաք աշխատանքների իրականացնելու ուղեցույց:

2. Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ժամանակավոր պաշտպանության ենթակա անձի կարգավիճակի, ինչպես նաև անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրման հետ կապված գործնականում առաջացող խնդիրներ

2023 թվականի սեպտեմբերյան իրադարձությունները մարդու իրավունքների պաշտպանության համակարգի տեսանկյունից առաջ բերեցին մի շարք մարտահրավերներ: Խնդիրների հիմնական մասն անձանց կողմից դիմում-բողոքներով և ահազանգներով ներկայացվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանին:

Բռնի տեղահանված անձանց կողմից Պաշտպանի աշխատակազմ ներկայացրած խնդիրների մի մեծ զանգված վերաբերել է նրանց ժամանակավոր պաշտպանության ենթակա անձի կարգավիճակի տրամադրմանը:

Այսպես, ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ժամանակավոր պաշտպանության տակ վերցնելու, ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի անձը հաստատող փաստաթղթի նկարագիրը և դրա տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 1864-Ն որոշման 1-ին կետի համաձայն՝ ժամանակավոր պաշտպանության տակ վերցվում են՝

1) Լեռնային Ղարաբաղի բնակչության ռեգիստրի հաշվառումներով անցնող անձինք.

2) Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող այն անձինք, որոնց վերջին հաշվառման հասցեն եղել է Լեռնային Ղարաբաղում.

3) այն անձինք, որոնք չեն ունեցել հաշվառում Լեռնային Ղարաբաղի բնակչության ռեգիստրում, սակայն բնակվել են Լեռնային Ղարաբաղում և 2023 թվականի սեպտեմբերի 19-ից Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծած ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանվելուց հետո հաշվառվել են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից: Նույն որոշման 2-րդ կետով սահմանվել է, որ այն չի տարածվում որոշման 1-ին կետում նշված, բայց այլ պետության քաղաքացիություն ունեցող անձանց նկատմամբ:

Պաշտպանի աշխատակազմում ստացված մի շարք բողոքներով և ահազանգներով անձինք պնդել են, որ առկա են ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1864-Ն որոշման համաձայն՝ ժամանակավոր պաշտպանության ենթակա անձի կարգավիճակ տրամադրելու հիմքերը, այդ թվում՝ տևական ժամանակ բնակվել են Լեռնային Ղարաբաղում և վերջին հաշվառման հասցեն եղել է այնտեղ, սակայն ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայությունում հայտնել են, որ ժամանակավոր պաշտպանության ենթակա չեն, քանի որ առկա են իրենց ՀՀ քաղաքացի ճանաչելու հիմքեր: Ընդ որում, ահազանգ ներկայացրած անձանցից ոմանք պնդում են, որ ԽՍՀ միության տարիներին տեղափոխվել են Լեռնային Ղարաբաղ և ԽՍՀՄ փլուզումից հետո ստացել են միայն ԼՂՀ քաղաքացիներին տրամադրվող անձնագիր (տրված՝ 070-ի կողմից):

Պաշտպանին դիմած անձինք, ովքեր ունեն ՀՀ քաղաքացիություն (կամ առկա են քաղաքացի ճանաչվելու հիմքեր), սակայն վերջին հաշվառումն ունեցել են ԼՂ-ում կամ տևական ժամանակ բնակվել են այնտեղ, պնդել են, որ իրենք ևս պետք է ստանան ժամանակավոր պաշտպանության ենթակա անձի կարգավիճակ:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում սկսվել է քննարկման ընթացակարգ, որի ընթացքում համապատասխան պարզաբանումներ ներկայացնելու պահանջով գրություն է հասցեագրվել ՀՀ ներքին գործերի նախարարություն:

ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայությունից ստացված պարզաբանման համաձայն՝ ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1864-Ն որոշման համատեքստում՝ այն դեպքում, եթե անձը բավարարում է ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1864-Ն որոշման 1-ին կետի պահանջներին, սակայն հանդիսանում է այլ պետության, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի, վերջինիս ժամանակավոր պաշտպանության կարգավիճակի տրամադրման իրավական հիմքերը բացակայում են:

Նույն պարզաբանման համաձայն՝ այն դեպքում, եթե անձը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ապա հիմք ընդունելով Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայի, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին», «Փախստականների և ապաստանի մասին» օրենքների, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի կարգավորումները, վերջինիս ժամանակավոր պաշտպանություն տրամադրելը հնարավոր չէ:

Այս համատեքստում հարկ է ընդգծել, որ բողոք ներկայացրած անձինք կարգավիճակի տրամադրման հարցերը բարձրաձայնելիս հայտնել են մտահոգություններ առ այն, որ փախստականի/ ժամանակավոր պաշտպանության ենթակա անձի կարգավիճակի բացակայության պայմաններում իրենք չեն կարող օգտվել պետության

կողմից իրականացվող սոցիալական աջակցության ծրագրերից կամ հետագայում չեն կարող օգտվել նշված կարգավիճակի պարագայում առկա տարատեսակ իրավունքներից: Բողոք ներկայացրած անձանց մի մասը նշել է նաև, որ իրենց կարծիքով՝ ԼՂ բնակչության պետական ռեգիստրում հաշվառված անձանց տրամադրվող անձնագրի (տրված՝ 070-ի կողմից) առկայությունը ինքնին հանդիսանում է փախստականի կարգավիճակը հաստատող փաստաթուղթ և նրանք չեն ցանկանում փոխանակել այդ անձնագիրը, քանի որ դրա բացակայության պարագայում, ըստ բողոք ներկայացրած անձանց, հնարավոր չէ հաստատել Լեռնային Ղարաբաղում նրանց տևական ժամանակ բնակվելու, աշխատելու, սեփականություն ունենալու հանգամանքները: Ընդ որում, նշված դեպքերում, եթե անձինք չեն փոխանակում անձնագիրը ու չեն հաշվառվում ՀՀ բնակչության պետական ռեգիստրում՝ փաստացի չեն կարողանում օգտվել սոցիալական աջակցության ծրագրերից կամ գրանցել տվյալները համապատասխան հարթակում՝ կենսաթոշակի վճարումները վերականգնելու նպատակով և այլն:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի՝ խնդրին առնչվող ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ շատ դեպքերում բռնի տեղահանված անձինք պատշաճ տեղեկացված չեն գործող իրավակարգավորումների, այդ թվում՝ այն հանգամանքի առնչությամբ, որ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված բոլոր անձինք դիտարկվում են որպես սոցիալական աջակցության իրականացվող ծրագրերի շահառու՝ անկախ իրավական կարգավիճակից: Միևնույն ժամանակ, անձինք ծանոթ չեն «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի և ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերի կարգավորումներին, քաղաքացու և փախստականի կարգավիճակի պարագայում անձի իրավունքներին և պարտականություններին, նշված կարգավիճակների արդյունքում առաջացող իրավական հետևանքներին, ինչպես նաև այն հանգամանքին, որ ՀՀ Սահմանադրության համաձայն՝ ազգությամբ հայերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն են ձեռք բերում օրենքով սահմանված պարզեցված կարգով:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է իրավասու պետական մարմինների կողմից ակտիվորեն իրականացնել իրազեկման աշխատանքներ ինչպես նշված իրավական կարգավիճակների և դրանց իրավական հետևանքների, այնպես էլ տարատեսակ ծրագրերից օգտվելու պայմանների ու հնարավորությունների մասին: Միևնույն ժամանակ, կարևոր է, որպեսզի յուրաքանչյուր անձ իրավասու պետական մարմնի ներկայացուցիչներից ստանա մանրամասն պարզաբանում գործող իրավակարգավորումների, կոնկրետ դեպքի պարագայում դրանց կիրառելիության և այլ անհրաժեշտ հարցերի կապակցությամբ:

Պաշտպանի աշխատակազմ մուտքագրված բողոքների մի մասն էլ վերաբերել է այն հանգամանքին, որ ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից պահանջվել են անձի կամ իր ծնողների վերաբերյալ փաստաթղթեր՝ ՀՀ քաղաքացիության առկայության հանգամանքը ստուգելու նպատակով: Բռնի տեղահանված անձանցից շատերը պնդել են, որ անհրաժեշտ փաստաթղթերը կամ դրանց մի մասը մնացել են Լեռնային Ղարաբաղի տարածքում և առկա չեն դրանց կրկնօրինակներ կամ լուսանկարներ: Նշված դեպքերում անձինք հիմնականում ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության աշխատակիցների կողմից ուղղորդվել են ՀՀ արդարադատության նախարարություն, այդ թվում՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններ, որտեղ առաջ են եկել մի շարք խնդիրներ: Մասնավորապես,

խնդիրները վերաբերել են համապատասխան տվյալների բացակայության , առկա տեղեկություններն անձանց տրամադրելու ընթացակարգերի թերություններին և հերթագրումներին: Ստեղծված խնդիրների պատճառով անձինք տևական ժամանակ չեն կարողանում ստանալ ՀՀ քաղաքացու անձնագիր կամ ժամանակավոր պաշտպանության ենթակա անձի կարգավիճակը հաստատող փաստաթուղթ և բնակության վայրի հաշվառում, ինչի հետևանքով չեն կարողանում իրականացնել գործարքներ, ընդունվել աշխատանքի, օգտվել սոցիալական աջակցության ծրագրերից և այլն:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է:

- ✓ ***իրավասու պետական մարմինների կողմից ակտիվորեն իրականացնել իրազեկման աշխատանքներ ինչպես նշված իրավական կարգավիճակների և դրանց իրավական հետևանքների, այնպես էլ տարատեսակ ծրագրերից օգտվելու պայմանների ու հնարավորությունների առնչությամբ: Միևնույն ժամանակ, կարևոր է, որպեսզի յուրաքանչյուր անձ իրավասու պետական մարմնի ներկայացուցիչներից ստանա մանրամասն պարզաբանում գործող իրավակարգավորումների, կոնկրետ դեպքի պարագայում դրանց կիրառելիության և այլ անհրաժեշտ հարցերի կապակցությամբ:***
- ✓ ***մշակել համակարգային կառուցակարգեր բռնի տեղահանված անձանց համապատասխան փաստաթղթերի տրամադրմանն առնչվող միջոցառումները հնարավորին արագ կազմակերպելու և անձանց սոցիալական ու իրավական ինտեգրումը հեշտացնելու նպատակով:***

3. Լեռնային Ղարաբաղից Հայաստան բռնի տեղահանված անձանց սոցիալական ապահովության իրավունքի երաշխավորման, ինչպես նաև սոցիալական աջակցության միջոցառումների հետ կապված խնդիրներ

Ինչպես սոցիալական ապահովության իրավունքին, այնպես էլ ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց մի շարք այլ իրավունքներին վերաբերելի խնդիրները և դրանց հնարավոր լուծման ուղիներն ի սկզբանե գտնվել են Պաշտպանի անմիջական ուշադրության ներքո:

Դրանց կարգավորման համար պետական իրավասու մարմինների, ՀԿ-ների, միջազգային դերակատարների հետ համատեղ տեղի են ունեցել մի շարք քննարկումներ: Ինչպես Պաշտպանն անձամբ, այնպես էլ ՄԻՊ աշխատակազմը բազմաթիվ այցեր են իրականացրել ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց գրանցման կենտրոններ, ժամանակավոր կեցավայրեր, տեղում նույնպես արձանագրվել են նրանց խնդիրները:

Բոլոր հարցերը շարունակվում են գտնվել Պաշտպանի ամենօրյա ուշադրության ներքո: Պաշտպանը ողջունելի է համարում պետության կողմից սոցիալական աջակցության միջոցառումների իրականացումն ու դրանց կատարելագործմանն ուղղված աշխատանքները, ինչպես նաև ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց սոցիալական ապահովության իրավունքի իրացման ընթացակարգերը պարզեցնելու ուղղությամբ ներկայում պետության կողմից գործադրվող ջանքերը:

Միևնույն ժամանակ, ՄԻՊ հաստատության կատարած մշտադիտարկումների և անհատական բողոքների ուսումնասիրության արդյունքում վեր են հանվել ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց սոցիալական ապահովության իրավունքին և սոցիալական աջակցության միջոցառումներին առնչվող որոշ խնդիրներ:

Ստորև ներկայացվում են 2023 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված՝ ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց կողմից սոցիալական ապահովության իրավունքի երաշխավորմանն առնչվող բողոքներով բարձրացված որոշ օրենսդրական խնդիրներ, որոնց լուծման համար անհրաժեշտ ուղիների նախանշման նպատակով Պաշտպանը կարևորում է շարունակական քննարկումների և քայլերի իրականացումը:

Այսպես, ՄԻՊ-ին հասցեագրված բողոքներից մեկով հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև ԼՂ-ում բռնադատվածի կարգավիճակ ունեցած անձը հայտնել է, որ տարիներ առաջ գերեվարվել է ադրբեջանական զինված ուժերի կողմից և 6 ամիս լինելով գերության մեջ՝ հայրենադարձվել է: Նշել է, որ ԼՂ-ում իրեն տրամադրվել է բռնադատվածի կարգավիճակ և այդ կարգավիճակով պայմանավորված՝ յուրաքանչյուր ամիս վճարվել է դրամական աջակցություն: Բողոք ներկայացրած անձը խնդրել է Պաշտպանի աջակցությունը՝ ՀՀ-ում բռնադատվածի կարգավիճակով պայմանավորված՝ դրամական աջակցություն ստանալու հարցում:

Բարձրացված հարցի կապակցությամբ ԱՍՀՆ պատասխան գրությամբ ներկայացրել է «Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մի շարք իրավակարգավորումներ *(այդ անձանց կարգավիճակի և նախատեսված արտոնությունների վերաբերյալ)*, սակայն բուն հարցադրմանն անդրադարձ չի կատարել:

Պաշտպանին հասցեագրած մեկ այլ բողոքով անձը տեղեկացրել է, որ Ադրբեջանի ագրեսիայի հետևանքով 2023 թվականի սեպտեմբեր ամսին ԼՂ-ից ընտանիքով բռնի տեղահանվել են Հայաստան, որին հաջորդել է կենսաթոշակառու ամուսնու մահը: Բողոքը ներկայացրած անձի պնդմամբ՝ իրեն, որպես հուղարկավորությունը կատարած անձի, չի նշանակվել և չի վճարվել թաղման նպաստ: Պաշտպանին ներկայացվել է նմանատիպ մեկ այլ բողոք ևս:

Նշվածի կապակցությամբ Պաշտպանի գրությանն ի պատասխան՝ նախարարությունը հայտնել է, որ գրությունում արծարծված հարցերին սպառիչ պատասխան տրամադրելու նպատակով կատարվում են հավելյալ ուսումնասիրություններ: Դրանց արդյունքների մասին լրացուցիչ տեղեկատվություն կտրամադրվի:

2023 թվականի սեպտեմբերի ամսին Ադրբեջանի ագրեսիայի հետևանքով ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց աջակցելու նպատակով ՀՀ-ի կողմից իրականացվել և շարունակում են իրականացվել սոցիալական աջակցության մի շարք միջոցառումներ, որոնց գործարկումից ի վեր Պաշտպանին ներկայացված գրավոր և բանավոր բողոքների ուսումնասիրության, ինչպես նաև իրականացված մշտադիտարկման արդյունքում արձանագրվել են դրանց վերաբերելի խնդիրներ: Դրանք, առավելապես, եղել են օրենսդրական բնույթի, սակայն առկա են նաև վարչարարությանն առնչվող առանձին հարցեր:

Այսպես, օրինակ՝ ԼՂ-ից Հայաստան բռնի տեղահանված անձինք Պաշտպանին հասցեագրել են բազմաթիվ գրավոր և բանավոր բողոքներ՝ ժամանակավոր կացարանում բնակվելու և կոմունալ ծառայությունների դիմաց կատարվող վճարումների համար սոցիալական աջակցություն ստանալու նպատակով ԱՍՀՆ դիմելու և ՀՀ-ում սեփականության (այդ թվում՝ համատեղ կամ բաժնային) իրավունքով բնակվելու համար նախատեսված անշարժ գույք ունենալու հիմքով մերժվելու վերաբերյալ:

ՄԻՊ աշխատակազմ 2023 թվականին մուտքագրված բողոքների ուսումնասիրությամբ պարզվել է, որ սոցիալական աջակցության տրամադրման դիմումները մերժելիս՝ ԱՍՀՆ-ն քննարկման առարկա չի դարձնում այդ անձանց անունով գրանցված բնակվելու համար նախատեսված անշարժ գույքն օգտագործելու, այն տիրապետելու իրական հնարավորությունը:

Այսպես, օրինակ՝ ՄԻՊ-ին հասցեագրած բողոքներից մեկով անձը տեղեկացրել է, որ իրեն համատեղ սեփականության իրավունքով պատկանող բնակարանի ընդհանուր մակերեսը կազմում է 16 քմ: Նշել է նաև, որ անշարժ գույքի մակերեսը չի բավարարում համատեղ բնակվելու համար: Բողոք ներկայացրած անձը հավելել է, որ ներկայում բնակվում է վարձակալական հիմունքներով:

Նմանատիպ մեկ այլ բողոքով անձը հայտնել է, որ համատեղ սեփականության իրավունքով ամուսնուն պատկանող բնակարանի ընդհանուր մակերեսը կազմում է 37 քմ: Նշել է, որ ներկայում այնտեղ բնակվում է 9 անձ: Հավելել է, որ անշարժ գույքի մակերեսը չի բավարարում այնտեղ համատեղ բնակվելու համար:

Պաշտպանին հասցեագրած մեկ այլ բողոքով անձը նշել է, որ դիմում է ներկայացրել ԱՍՀՆ՝ սոցիալական աջակցություն ստանալու համար, սակայն այն մերժվել է՝ համատեղ սեփականության իրավունքով անշարժ գույք ունենալու հիմնավորմամբ: Մինչդեռ, ըստ բողոք ներկայացրած անձի՝ իրեն համատեղ սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը գտնվում է ներկայում կառուցվող բազմաբնակարան շենքում, որը նախատեսվում է շահագործման հանձնել 2025 թվականի դեկտեմբեր ամսին:

Պաշտպանին ներկայացրած մեկ այլ բողոքով ԼՂ-ից Հայաստան բռնի տեղահանված, հաշմանդամություն ունեցող անձը տեղեկացրել է, որ երբ ինքը եղել է մանկահասակ տարիքում, ծնողներն ամուսնալուծվել են: Նշել է նաև, որ ամուսնալուծությունից հետո չի հանդիպել հորը: Հավելել է, որ վերջերս տեղեկացել է, որ հայրը կրկին ամուսնացել է և երկրորդ ամուսնությունից ունի երեխաներ:

Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ սոցիալական աջակցություն ստանալու դիմումը մերժվել է՝ ՀՀ-ում սեփականության իրավունքով իրեն պատկանող անշարժ գույք ունենալու հիմնավորմամբ: Այս կապակցությամբ բողոք ներկայացրած անձը տեղեկացրել է, որ ինքը տեղյակ չի եղել, որ համատեղ սեփականության իրավունքով իրեն պատկանող անշարժ գույք ունի: Համապատասխան տեղեկություններ ստանալու նպատակով դիմել է Կադաստրի կոմիտե, որտեղից իրեն հայտնել են, որ բնակարանի նկատմամբ իր անվամբ գրանցված է ընդհանուր բաժնային սեփականության իրավունք (բաժնեմասը՝ 3/15): Ըստ բողոք ներկայացրած անձի՝ պարզել է, որ հիշյալ անշարժ գույքը դեռևս 1994 թվականին ձեռք է բերել հայրը և որպես համատեղ սեփականատեր՝ գրանցել է նաև իրեն: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ հարազատներից տեղեկացել է, որ հայրը յոթ տարի առաջ մահացել է, իսկ հիշյալ բնակարանում ներկայում բնակվում են հոր երկրորդ կինը և նրա զավակները: Հավելել է, որ նկատի ունենալով բնակարանում իրեն հասանելիք բնակմակերեսի չափը (13.4 քմ), իր ընտանիքի անդամների թիվը (3 հոգի), ինչպես նաև այն հանգամանքը, որ բնակարանում ներկայում բնակվում են իր համար օտար և անծանոթ մարդիկ, որոնց չի ճանաչում, նրանց հետ երբեք չի շփվել, բողոք ներկայացրած անձը պնդել է, որ անհնարին է հիշյալ բնակարանում վերջիններիս հետ համատեղ բնակվելը:

Պաշտպանին ներկայացրած մեկ այլ դիմում-բողոքով անձը հայտնել է, որ համատեղ սեփականության իրավունքով ունի *հողամաս* (ըստ բողոքին կից ներկայացված տեղական հարկի պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի՝ *ջրովի վարելահող):* Նշել է նաև, որ հողամասը ծանրաբեռնված չէ շինությամբ: Հավելել է, որ սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմել է ԱՍՀՆ, սակայն ստացել է մերժում՝ *բնակվելու համար նախատեսված անշարժ գույք ունենալու հիմքով:*

Արձանագրված բողոքների վերաբերյալ ԱՍՀՆ-ն տեղեկություն է ներկայացրել այն մասին, որ սեփականության (այդ թվում՝ համատեղ կամ բաժնային) իրավունքով բնակվելու համար նախատեսված անշարժ գույք ունենալու վերաբերյալ տեղեկատվությունը ստացվում է անշարժ գույքի պետական ռեգիստրի տվյալների հետ համադրման արդյունքում՝ *առանց բնակվելու հնարավորությունը դիտարկելու:*

Հայտնել է նաև, որ ՀՀ-ում սեփականության (այդ թվում՝ համատեղ կամ բաժնային) իրավունքով բնակվելու համար նախատեսված անշարժ գույք ունեցող անձանց՝ այդ գույքը տնօրինելու, տիրապետելու կամ օգտագործելու (այդ թվում՝ բնակվելու) հնարավորությունը վերահսկելու առնչությամբ իրավական գործիքակազմ մշակելն ԱՍՀՆ-ն այս պահին նպատակահարմար չի համարում՝ պայմանավորված իրականացվող միջոցառումների հրատապությամբ ու կարիքների գնահատում և ուսումնասիրություն իրականացնելու համար անհրաժեշտ ռեսուրսների բացակայությամբ:

Միաժամանակ, նշել է, որ համատեղ կամ բաժնային սեփականության իրավունքով գույք ունենալու գործոնը որպես 40,000 դրամ սոցիալական աջակցության նվազեցման հիմք չհամարելը կառաջացնի հետևյալ խնդիրները.

1. անհավասար պայմաններ՝ գույք ունեցող, համատեղ կամ բաժնային իրավունքով գույք ունեցող և առհասարակ գույք չունեցող ընտանիքների միջև,
2. ընտանիքի անդամների կողմից նույն գույքի նկատմամբ համատեղ կամ բաժնային սեփականության իրավունք ունեցողները, որոնք կացարանի աջակցության կարիք չունեն, փաստացի կդառնան միջոցառման շահառու:

Հայտնել են նաև, որ նախարարությունը Կադաստրի կոմիտեի հետ քննարկում է 2-րդ խնդրին արձագանքելու նպատակով տեխնիկական լուծումներ գտնելու հնարավորությունը:

Միևնույն ժամանակ, հայտնել են, որ միջոցառման շրջանակներում բնակվելու համար նախատեսված անշարժ գույք ունենալու հարցում որոշակի վերապահումներ կատարելու հարցը գտնվում է նախարարության ուշադրության կենտրոնում, և այս մասով նախարարությունն իրականացնում է նաև ուսումնասիրություն և վերլուծություն:

Դրանից բացի, նշել են, որ բարձրացված հարցն աշխատանքային կարգով քննարկվել է Կադաստրի կոմիտեի հետ: 2023 թվականի դեկտեմբերի 18-ին կատարվել է նաև հարցում՝ անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքի համասեփականատերերի ցանկի և ընդհանուր բաժնային սեփականության իրավունք ունենալու դեպքում համասեփականատերերի բաժնեմասերի առկայության վերաբերյալ տեղեկատվության տրամադրման հնարավորության վերաբերյալ:

Նշվել է նաև, որ նախարարության կողմից ուսումնասիրության արդյունքների ամփոփումից հետո, որոշման մեջ՝ բնակվելու համար նախատեսված անշարժ գույք ունենալու հարցում որոշակի վերապահումներ կատարելու նպատակահարմարության հարցը կքննարկվի Հումանիտար կենտրոնում:

Այս առումով, Պաշտպանն ընդգծում է, որ հիշյալ որոշմամբ ամրագրված ձևակերպումների մեկնաբանումը չի կարող հանգել զուտ տառացի նշանակությանը՝ առանց նկատի ունենալու այն ընդունող մարմնի նպատակը: Մասնավորապես, որոշման մեջ օգտագործվող ***«բնակության համար նախատեսված»*** արտահայտության ամրագրումը նպատակ է հետապնդում նմանատիպ դեպքերով քննարկման առարկա դարձնել բնակարանում բնակվելու անձի իրական հնարավորությունը: Պաշտպանն ընդգծում է, որ նմանօրինակ դեպքերում անհրաժեշտ է հաշվի առնել նաև սեփականության իրավունքից բխող տիրապետման և օգտագործման իրավազորություններն իրացնելու փաստացի հնարավորությունը:

ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց տրամադրվող սոցիալական աջակցության միջոցառումներին առնչվող համակարգային խնդիրների քննարկման ու դրանց լուծման համար անհրաժեշտ ուղիների նախանշման նպատակով ՄԻՊ հաստատությունն արդյունավետ համագործակցություն է ունեցել իրավասու պետական մարմինների հետ: Մասնավորապես, Պաշտպանի գլխավորությամբ անցկացվել են աշխատանքային քննարկումներ և հանդիպումներ, Պաշտպանին ներկայացված բողոքների ուսումնասիրության և իրականացված մշտադիտարկման արդյունքում արձանագրված խնդիրներն աշխատանքային կարգով փոխանցվել են համապատասխան շահագրգիռ գերատեսչություններին՝ քննարկման և լուծման նպատակով: Պաշտպանը բարձր է գնահատում այն հանգամանքը, որ համատեղ քննարկումների արդյունքում, այդ թվում՝ ՄԻՊ հաստատության կողմից խնդիրների բարձրացումից հետո, ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց սոցիալական աջակցության տրամադրման հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավական ակտերում կատարվել են փոփոխություններ:

Մասնավորապես, իբրև դրական առաջընթաց պետք է նշել, որ ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշմամբ սահմանված շահառուի՝ ՀՀ-ում բաժնային սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակվելու համար նախատեսված անշարժ գույք ունենալու հետ կապված դրույթը 2024 թվականին

վերանայվել է *(ըստ այդմ, ժամանակավոր կացարանում բնակվելու համար սոցիալական աջակցության ամսական չափը կազմում է 40000 դրամ նաև այն դեպքերում, <u>երբ շահառուն ՀՀ-ում ունի բաժնային կամ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակվելու համար նախատեսված միայն մեկ անշարժ գույք, որի բաժնեմասին (ընդհանուր համատեղ սեփականության դեպքում համասեփականատերերի բաժնեմասերը դիտարկվում են հավասար չափերով) համապատասխան մակերեսը փոքր է 20 քառակուսի մետրից</u>):*

Ողջունելով կատարված փոփոխությունները՝ այնուամենայնիվ, հարկ է նկատի ունենալ, որ գործնականում հանդիպում են դեպքեր, երբ անձին բաժնային կամ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ բնակվելու համար նախատեսված անշարժ գույքի՝ 20 քառակուսի մետրից փոքր բաժնեմասի տարածքում բնակվում են (պետք է բնակվեն) մեկից ավելի անձինք: Այդ մասին են վկայում նաև ՄԻՊ աշխատակազմում ստացված բազմաթիվ դիմում-բողոքները: Ուստի, ոլորտին վերաբերող իրավակարգավորումները պետք է շարունակաբար կատարելագործվեն:

Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է նշել, որ Պաշտպանին բողոքներ են հասցեագրվել նաև այն մասին, որ ԱՍՀՆ-ն սոցիալական աջակցությունը տրամադրելու մասին դիմումները մերժում է բնակչության պետական ռեգիստրում մինչև 2023 թվականի սեպտեմբերի 19-ը ՀՀ-ում հաշվառված լինելու հիմքով (տե՛ս ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածի 8-րդ կետի 4-րդ ենթակետը):

ՄԻՊ աշխատակազմ մուտքագրված բողոքների ուսումնասիրությամբ պարզվել է նաև, որ սոցիալական աջակցության տրամադրման դիմումները մերժելիս՝ ԱՍՀՆ-ն քննարկման առարկա չի դարձնում այդ անձանց՝ ԼՂ-ում մշտապես բնակված լինելու կամ համանման այլ հանգամանքները: Օրինակ՝ Պաշտպանին հասցեագրած բողոքներից մեկով անձը հայտնել է, որ ծնվել է 1988 թվականին Ստեփանակերտ քաղաքում, մշտապես բնակվել և աշխատել է այնտեղ: Նշել է նաև, որ 2022 թվականի ապրիլ ամսին հաշվառվել է Երևան քաղաքում: Ըստ բողոքը ներկայացրած անձի՝ 2022 թվականի օգոստոս ամսին մեկնել է Շենգենյան երկիր և նույն թվականի հոկտեմբերի 2-ին վերադարձել է ԼՂ, որտեղ շարունակել է բնակվել և աշխատել մինչև 2023 թվականի սեպտեմբերի 25-ը: Հավելել է, որ միայնակ ծնող է և իր խնամքին ունի անչափահաս երեխա: Նշել է նաև, որ նախարարությունը ՀՀ-ում հաշվառված լինելու հիմքով մերժել է սոցիալական աջակցության տրամադրումը՝ հաշվի չառնելով վերը նշված հանգամանքները:

Նմանատիպ մեկ այլ բողոքով անձը տեղեկացրել է, որ թեև հաշվառված է ՀՀ-ում, սակայն ծնվել է ԼՂ-ում, մշտապես բնակվել և աշխատել է այնտեղ:

Արձանագրված բողոքների վերաբերյալ Պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ ԱՍՀՆ-ն հայտնել է, որ Կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածի 8-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ դիմումը մերժվում է այն անձի մասով, ում՝ (...) տվյալներն առկա են միանվագ դրամական աջակցության (100.000 դրամ) միջոցառման շահառուների ցուցակում, սակայն բնակչության պետական ռեգիստրում մինչև 2023 թվականի սեպտեմբերի 19-ը հաշվառված է ՀՀ-ում:

Հավելել է նաև, որ այս առումով դեռևս չեն նախատեսվում փոփոխություններ և լրացումներ ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշման մեջ:

Չնայած դրան, հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ և 2023 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 1957-Լ որոշումներով սահմանված՝ բնակչության պետական ռեգիստրում մինչև 2023 թվականի սեպտեմբերի 19-ը ՀՀ-ում հաշվառված անձանց աջակցություն տրամադրելու հարցը 2024 թվականին վերանայվել է՝ համապատասխան դրույթներն ուժը կորցրած են ճանաչվել:

ՄԻՊ-ին հասցեագրված դիմում-բողոքների ուսումնասիրությունը վկայում է նաև, որ սոցիալական աջակցության միջոցառումների շահառուները հաճախ հանդիպում են վարչարարական խոչընդոտների, որոնց պատճառով սոցիալական աջակցությունը ստանում են ուշացումով: Այսպես, օրինակ՝ բողոք ներկայացրած անձը հայտնել է, որ 2023 թվականի սեպտեմբերի 25-ին ԼՂ-ից բռնի տեղահանվել է Հայաստան, գտնվել է հումանիտար կենտրոնում, հաշվառվել Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունում: Հավելել է, որ դիմել է ՄՍԾ՝ ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1675-Լ որոշմամբ սահմանված աջակցությունը ստանալու նպատակով, սակայն դիմումը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ ՍԷԿՏ համակարգից ստացված տեղեկատվության համաձայն՝ դիմողը 2023 թվականի հունիս ամսին հատել է ՀՀ պետական սահմանը և հետադարձ մուտք չի գործել ՀՀ:

Այս կապակցությամբ բողոք ներկայացրած անձը հայտնել է, որ 2023 թվականի հունիս ամսին Կարմիր Խաչի աջակցությամբ ԼՂ-ից տեղափոխվել է Հայաստան, որից հետո մեկնել է Ռուսաստանի Դաշնություն, այնուհետև նույն թվականի հուլիս ամսին վերադարձել է ՀՀ և կրկին Կարմիր Խաչի օգնությամբ տեղափոխվել ԼՂ:

Դիմողի պնդմամբ՝ աջակցության տրամադրման մերժման վերաբերյալ տեղեկանալուց հետո դիմել է Ազգային անվտանգության ծառայություն, որտեղ կատարված լրացուցիչ ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ տեղի է ունեցել տեխնիկական սխալ: Մասնավորապես, ՀՀ մուտք գործելու վերաբերյալ տեղեկատվությունը չի մուտքագրվել համակարգ, ինչպես նաև դիմողի անձնագրում համապատասխան կնիք չի դրվել: Հաջորդիվ, ԱԱԾ ծառայողները կատարել են համապատասխան ուղղում, այն է՝ մուտքի վերաբերյալ նշում է կատարվել դիմողի անձնագրում, սակայն համակարգում լրացում կամ վրիպակի շտկում չի կատարվել: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ ՍԷԿՏ տեղեկատվական համակարգում համապատասխան շտկում չի կատարվել, ԱԱԾ-ի կողմից այդ մասին գրավոր փաստաթուղթ է տրամադրվել դիմողին՝ ՄՍԾ ներկայացնելու համար:

Բողոք ներկայացրած անձը հավելել է, որ պահանջվող բոլոր փաստաթղթերն իր կողմից ներկայացվել են ԱՍՀՆ, սակայն խնդիրը լուծում չի ստացել, ինչի արդյունքում վերջինս ամիսներ շարունակ զրկված է պետության կողմից տրամադրվող սոցիալական աջակցության միջոցառումներից օգտվելու հնարավորությունից: Բողոք ներկայացրած անձը 2024 թվականի փետրվարի 2-ին ՄԻՊ աշխատակազմ տեղեկատվություն է փոխանցել այն մասին, որ խնդիրը դեռևս լուծում չի ստացել:

Պաշտպանին հընթացս հասցեագրվում են նաև ոլորտին վերաբերելի այլ դիմումներ, որոնք գտնվում են քննարկումների փուլում և պահանջում են հետագա լրացուցիչ ուսումնասիրություններ:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, Պաշտպանն ընդգծում է, որ անհրաժեշտ է՝

- ✓ ***քայլեր ձեռնարկել ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց սոցիալական երաշխիքների շարունակական բարելավման ուղղությամբ՝ քննարկման առարկա դարձնելով նաև օրենսդրական խնդիրները:***
- ✓ ***քննարկման առարկա դարձնել սոցիալական աջակցության տրամադրման հնարավորությունն ու համապատասխան կառուցակարգերի մշակումը՝ հիմք ընդունելով ոչ թե անձի՝ իրեն բաժնային կամ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող բաժնեմասի չափը, այլ սեփականության իրավունքից բխող տիրապետման և օգտագործման իրավազորություններն իրացնելու փաստացի հնարավորությունը և այն հանգամանքը, թե քանի՞ անձ է բնակվում համապատասխան բաժնեմասի տարածքում՝ նկատի ունենալով, օրինակ, յուրաքանչյուր բնակվող անձի տեսանկյունից բնակվելու համար նախատեսված տարածքի նվազագույն ու բավարար չափերը:***
- ✓ ***մշակել և ներդնել գործուն կառուցակարգեր՝ ուղղված Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրմանը,***
- ✓ ***վարչարարությունն իրականացնել պատշաճ կերպով, որպեսզի սոցիալական աջակցության միջոցառումները տրամադրվեն օպերատիվ և ժամանակին:***

4. Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հետ կապված խնդիրներ

2023 թվականի սեպտեմբերի 19-ից Լեռնային Ղարաբաղի նկատմամբ ադրբեջանական զինված ուժերի ագրեսիայի հետևանքով բազմաթիվ անձինք ստացել են տարբեր աստիճանի վիրավորումներ և խեղումներ: Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանավել է հաշմանդամություն ունեցող 6520 անձ:

Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի անմիջական ուշադրության ներքո են Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման հետ կապված հարցերը:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պատշաճ իրացման նպատակով Պաշտպանի աշխատակազմում նախաձեռնված մշտադիտարկման շրջանակում ՀՀ իրավասու պետական մարմիններին հասցեագրվել են մի շարք գրություններ, ներկայացվել են խնդիրների լուծման առաջարկներ, կազմակերպվել են մի շարք քննարկումներ ինչպես պետական մարմինների, այնպես էլ հասարակական կազմակերպությունների և հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրներով զբաղվող անձանց ներգրավմամբ: Զուգահեռ իրականացվել են արագ արձագանքման այցեր, լրատվամիջոցների և սոցիալական ցանցերի մշտադիտարկում:

Տարեկան հաղորդման շրջանակներում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և խթանման տեսանկյունից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետությունում առկա բոլոր համակարգային խնդիրները վերաբերելի են նաև բռնի տեղահանված անձանց իրավունքների ապահովման համատեքստին: Այդ խնդիրներին Պաշտպանն անդրադարձել է հաղորդման այլ վերաբերելի հատվածներում:

Դրանից բացի, Մարդու իրավունքների պաշտպանը, ի թիվս այլնի, արձանագրել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված՝ հաշմանդամություն ունեցող անձանց անկախ

կյանքի ապահովման, ֆիզիկական մատչելիության պայմաններին համապատասխանող կացարանների տրամադրման, սոցիալական աջակցության ծրագրերի մատչելիության և դրանց վերաբերյալ իրազեկվածության ապահովման, բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների, հաշմանդամության կենսաթոշակի տրամադրման, ֆունկցիոնալության գնահատման գործընթացի ապահովման և հոգեբանական աջակցության տրամադրման հետ կապված խնդիրներ:

Օրինակ՝ արձանագրվել է, դեպք, երբ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված հաշմանդամություն ունեցող մի խումբ անձանց տրամադրվել է հաշմանդամություն ունեցող անձանց բնակության համար նվազագույն պայմաններին չբավարարող կացարան: Պաշտպանը խնդիրն անմիջապես հասցեագրել է իրավասու պետական մարմիններին, նրանց հետ հարցի առնչությամբ ունեցել է մի շարք քննարկումներ՝ ընդգծելով խնդրին շուտափույթ լուծում գտնելու անհրաժեշտությունը:

Այցերի ընթացքում բարձրացված՝ Մարդու իրավունքների պաշտպանի մանդատի ներքո գտնվող բոլոր հարցերը կոնկրետ առաջարկություններով և դրանց լուծման եղանակներով հրատապ հասցեագրվել են՝ ըստ ՀՀ իրավասու գերատեսչությունների: Խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքները Մարդու իրավունքների պաշտպանի շարունակական մշտադիտարկման ներքո են:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ անհրաժեշտ է գործուն միջոցներ ձեռնարկել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման և խթանման ուղղությամբ:

5. Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված երեխաների իրավունքների պաշտպանության հետ կապված խնդիրներ

Պաշտպանի աշխատակազմում հատուկ ուշադրություն է դարձվել Լեռանային Ղարաբաղից բռնի տեղահանված երեխաների իրավունքների իրացման ապահովման հարցերին, մասնավորապես՝ երեխաների իրավունքների երաշխավորման հարցերը դիտարկվել են ՀՀ-ում երեխաների ընդունելության, արագ արձագանքման հումանիտար կենտրոններում ծառայությունների կազմակերպման, տրամադրված կացարանների շենքային և բնակության պայմանների և դրանց՝ երեխայի առանձնահատկություններին և կարիքներին համապատասխանության տեսանկյունից:

Պաշտպանը գնահատում է նման արտակարգ պայմաններում բռնի տեղահանված երեխաների իրավունքների պաշտպանության ուղղությամբ պետության կողմից իրականացված աշխատանքները՝ միևնույն ժամանակ, ընդգծելով, որ դրանք ամբողջական չեն յուրաքանչյուր երեխայի սոցիալական, հոգևոր և բարոյական բարեկեցության ապահովման, ինչպես նաև նրանց ֆիզիկական ու հոգեկան առողջ զարգացմանն աջակցելու տեսանկյունից և պետք է շարունակաբար կատարելագործվեն:

Պետությունը Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված երեխաների իրավունքների պաշտպանության ուղղությամբ նախաձեռնել և իրականացնում է հասցեական ծրագրեր նաև միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ՝ ուղղված երեխաների սոցիալական պայմանների բարելավմանը, խնամքի ապահովմանը, կրթության իրավունքի լիաժեք իրացմանը, առողջության պահպանմանը և այլն:

Պաշպանի մշտադիտարկումները վկայում են, որ հումանիտար կայանում և հաշվառման կենտրոներում ներդրված չեն եղել երեխայակենտրոն մոտեցումներ և կառուցակարգեր, որոնք կապահովեին երեխաների կարիքներից և առանձնահատկություններից բխող արագ արձագանքում: Արձանագրվել են դեպքեր, երբ երեխաները իրենց ընտանքների հետ համատեղ տեղավորվել են պետության կողմից տրամադրված կացարանում, որը, սակայն, ապահովված չի եղել սոցիալ-կենցաղային անհրաժեշտ պայմաններով: Օրինակ՝ Պաշտպանի աշխատակազմի իրականացրած այցերից մեկի ընթացքում պարզվել է, որ Արարատի մարզի Արտաշատ քաղաքի մարզադպրոցում բնակեցվել է շուրջ 100 անձ, հաստատությունը ապահովված չի եղել անհրաժեշտ սոցիալ-կենցաղային պայմաններով, մահճակալները տեղադրված են եղել իրար շատ մոտ, մարդիկ զրկված են եղել բավարար անձնական տարածք ունենալու հնարավորությունից և այլն:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացվել են նաև ահազանգեր մանկահասակ երեխաներ ունեցող ընտանիքներում երեխաների համար մահճակալների, հագուստի, դեղորայքի, ինչպես նաև հոգեբանական ծառայությունների տրամադրման անհրաժեշտության մասին: Աջակցությունն ապահովելու նպատակով Պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացվել են ուղղորդումներ ինչպես պետական իրավասու մարմիններ, այնպես էլ՝ հասարակական կազմակերպություններ, որոնք տրամադրում են նման ծառայություններ:

Արձանագրված խնդիրներից են նաև Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված երեխաների՝ Երևան քաղաքում նախադպրոցական կրթության մեջ ներգրավման հարցը, ինչն ուղղակիորեն պայմանավորված է նաև Երևանում քաղաքում նախադպրոցական ուսումնական հաստատություններում ընդունելության դժվարությունների և սահմանափակ տեղեր ունենալու հանգամանքով[774]:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից հատուկ ուշադրություն է դարձվել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված՝ փաստացի առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների պաշտպանության հարցերին, ինչի առնչությամբ պարբերաբար քննարկումներ են իրականացվել իրավասու պետական մարմնի հետ:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված՝ փաստացի առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքը ապահովվել է առաջին իսկ պահից, ստեղծվել են երեխաների լիարժեք ինտեգրման համար անհրաժեշտ պայմաններ՝ այդ թվում կրթական, առողջապահական իրավունքների իրացման նպատակով: Պետությունը նաև ձեռնարկել է միջոցներ նշված երեխաների ընտանիքների հետ աշխատանքի տեսանկյունից՝ վերջիններիս լավագույն շահի հաշվառմամբ վերամիավորման հավանականությունը հստակեցնելու, իսկ դրա անհնարինության դեպքում՝ երեխաներին ընտանեկան միջավայրում խնամք և դաստիարակություն ապահովելու նպատակով: 2023 թ. սեպտեմբերի 24-ից հետո Լեռնային Ղարաբացից բռնի տեղահանված 11 երեխա խնամվել է *«Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ*-ի (այսուհետ՝ Հաստատություն) շուրջօրյա բաղադրիչում (երեխաները հաշմանդամություն չունեն): Հաստատությունում խնամվող երեխաներից 10-ը տեղափոխվել են ԼՂ-ի Երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ

[774] Առավել մանրամասն տե՛ս սույն հաղորդման «Երեխաների իրավունքներ» վերտառությամբ բաժնում:

հաստատությունից: *«Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն»* ՊՈԱԿ-ի շուրջօրյա բաղադրիչում են տեղավորվել Լեռնային Ղարաբացից տեղահանված 2 երեխա: «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ում 22.11.2023թ-ի դրությամբ խնամվում է երեք երեխա:

Չնայած պետության կողմից երեխաների կրթության ապահովման ուղղությամբ գործադրված ջանքերին՝ արձանագրվել են դեպքեր, երբ երեխայի ընդունելությունը իր բնակության վայրին մոտ հանրակրթական ուսումնական հաստատությունում չի կազմակերպվել՝ լիցենզիայով տրված սահմանային տեղերը լրացած լինելու պատճառով: Արձանագրված բոլոր դեպքերի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանի միջամտության արդյունքում պետական իրավասու մարմնի հետ համագործակցությամբ խնդիրը կարգավորվել է:

Արձանագրվել են նաև դեպքեր, երբ բռնի տեղահանումից հետո ընտանիքի կողմից բնակության վայրի պարբերական փոփոխությունների և երեխայի մշտական բնակության վայր չունենալու պատճառով երեխան շուրջ 2 ամիս չի ներառվել հանրակրթության մեջ: Այս համատեքստում կարևոր է համագործակցային ճկուն կառուցակարգերի ներդնումը, ինչը կապահովի նաև կայուն վերահսկողություն երեխայի կրթության իրավունքի իրացման ապահովման նկատմամբ:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2023 թվականի ընթացքում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված շուրջ 17 000 երեխա ներգրավվել է հանրակրթական ուսումնական հաստատություններում: Ստացած պատասխանների վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հանրակրթական ուսումնական հաստատություններին առաջարկվել է ապահովել երեխաների ընդգրկումը ուսումնական հաստատություններում՝ անկախ անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունից և լիցենզիայով տրված սահմանային տեղերի քանակից, մի քանի ուսումնական հաստատություններ ունեցող բնակավայրերում երեխաների ընդգրկումն իրականացնել ազատ տեղեր ունեցող հաստատություններում, իսկ տվյալ բնակավայրում դրանք ամբողջությամբ համալրված լինելու դեպքում, կրկին առաջնորդվելով երեխայի լավագույն շահով, ապահովել դասագրքերով, իսկ խնդրի չկարգավորման դեպքում ամփոփված պահանջարկը ներկայացնել ՀՀ ԿԳՄՍ նախարարություն՝ ըստ անհրաժեշտության դասագրքերի լրացուցիչ խմբաքանակ պատվիրելու համար և այլն:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 713 երեխա 2023 թվականի ընթացքում ստացել է առաջնային կամ շարունակականական հոգեբանական աջակցություն տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից: 2023 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ իրականացվել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված դպրոցահասակ 27 երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթաց, ինչի արդյունքում, ըստ կարիքի, տրամադրվել է համապատասխան մանկավարժահոգեբանական աջակցություն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է՝

- ***վերանայել ռազմական դրության կամ արտակարգ իրավիճակներում (ճգնաժամային իրավիճակներում) գործողությունների պլանները՝ ներդնելով արագ***

արձագանքման և երեխաների իրավունքների պաշտպանությանը միտված և ծառայությունների պատշաճ մատուցումը երաշխավորող հստակ ծրագիր՝ սահմանելով յուրաքանչյուր իրավիճակի համար կոնկրետ դերակատարներին և նրանց պարտականությունները:

- ✓ ***բարելավել և ընդլայնել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված երեխաներին և ընտանիքներին տրամադրվող ծառայությունները:***

ԲԱԺԻՆ 16. ՀՀ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԱՊՐՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2023 թվականին ադրբեջանական զինված ուժերի գործողությունները ՀՀ սահմանամերձ բնակավայրերի ուղղությամբ շարունակվել են:

Ադրբեջանական զինված ուժերը, տեղակայված սահմանամերձ բնակավայրերի անմիջական հարևանությամբ, հաճախակի կրակոցներ են արձակել, լարվածություն առաջացրել բնակչության շրջանում, խաթարել մարդկանց խաղաղ կյանքը, պարբերաբար իրականացրել քաղաքացիական բնակչության կյանքը դժվարացնող գործողություններ:

2023 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմ ստացվել են բազմաթիվ բողոքներ և ահազանգեր Սյունիքի, Գեղարքունիքի, Արարատի մարզերի սահմանամերձ բնակավայրերի բնակիչներից, որոնք վերաբերել են վերջիններիս կյանքի, ֆիզիկական ու հոգեկան անձեռնմխելիության, սեփականության և այլ հիմնարար իրավունքների ապահովմանը:

Ստացված բողոքների և ահազանգերի առնչությամբ Պաշտպանի աշխատակազմում նախաձեռնվել են ուսումնասիրություններ, իրականացվել է բողոքներում բարձրացված հարցերի քննարկում:

Միաժամանակ, սահմանամերձ բնակավայրերի բնակիչների կողմից բարձրացված հարցերի և վերջիններիս իրավունքների ապահովման նպատակով Պաշտպանի գլխավորությամբ՝ իրականացվել են այցեր Սյունիքի մարզի Տեղ համայնք[775], Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վերին և Ներքին Շորժա, այդ թվում՝ Վերին Շորժայի սարատեղի, Կութ, Նորաբակ, Սոթք և Կուտական բնակավայրեր[776], Արարատի մարզի Արարատ համայնքի Երասխ բնակավայր[777], ինչպես նաև Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Ոսկեպար, Ոսկեվան և Բաղանիս բնակավայրեր[778]:

Սյունիքի և Գեղարքունիքի[779], ինչպես նաև Արարատի[780] մարզերում իրականացված փաստահավաք աշխատանքների արդյունքում Պաշտպանը հրապարակել է արտահերթ զեկույցներ: Զեկույցներում վեր են հանվել և հաստատվել սահմանամերձ բնակավայրերի բնակիչների կողմից բարձրացված՝ մարդու իրավունքներին առնչվող խնդիրների խիստ արդիականությունը[781]: Իրականացված վերլուծության արդյունքում Պաշտպանը մարդու իրավունքների պաշտպանության համակարգին առնչվող բազմաթիվ առաջարկություններ է ներկայացրել ՀՀ պետական իրավասու մարմիններին:

Հավաքագրված փաստերը և իրականացված ուսումնասիրությունները վկայել են, որ ադրբեջանական կողմի իրականացրած գործողությունների արդյունքում խախտվել է խաղաղ բնակչության կյանքի, հոգեկան և ֆիզիկական անձեռնմխելիության, սեփականության, կրթության, աշխատանքի, ձեռնարկատիրությամբ զբաղվելու և մի շարք այլ հիմնարար իրավունքները:

---

[775] Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2489 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[776] Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2512 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[777] Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2582 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[778] Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2629 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[779] Հասանելի է https://ombuds.am/images/files/e12940a4c1afee3703896176aa538251.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[780] Հասանելի է https://ombuds.am/images/files/4e73af39ae6617df7437605f57eb01cd.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[781] Սահմանամերձ բնակավայրերում ապրող անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ անդրադարձ է կատարվել նաև Պաշտպանի 2020 և 2021 թվականների տարեկան հաղորդումներում:

1. ՀՀ սահմանամերձ բնակավայրերի բնակիչների կյանքի, խաղաղ և անվտանգ ապրելու իրավունքների խախտմանն առնչվող խնդիրներ

2023 թվականի մարտ-ապրիլ ամիսներին ադրբեջանական զինված ուժերը տեղակայվել են Տեղ համայնքի անմիջական հարևանությամբ՝ բնակիչների տներից մի քանի հարյուր մետր հեռավորությամբ: Ավելին՝ ապրիլի 11-ին բնակավայրի անմիջական հարևանությամբ ադրբեջանական զինված ուժերը դրսևորել են ագրեսիվ վարքագիծ. կրակոցներ են արձակել մոտակա հայկական դիրքերի ուղղությամբ, իսկ համայնքի հարևանությամբ կիրառել են խոշոր տրամաչափի զենքեր՝ իրական վտանգ ստեղծելով մարդկանց կյանքի ու առողջության համար: Արձակված կրակոցների պատճառով զոհվել են քաղաքացիական բնակչությանը պաշտպանող 4 հայ զինծառայողներ, 6-ը ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ[782]:

2023 թվականի ապրիլի 14-ին Պաշտպանը և ՄԻՊ ներկայացուցիչները այց են իրականացրել Տեղ համայնք՝ փաստահավաք աշխատանքներ իրականացնելու նպատակով: Այցի ընթացքում արձանագրվել է, որ ամբողջ բնակավայրը, այդ թվում՝ մարդկանց տները, դպրոցը, մանկապարտեզը, գտնվում են ադրբեջանական զինված ուժերի նշանառության և թիրախավորման ներքո: Բնակիչներից մեկի տեղեկացմամբ՝ իր տունը գտնվում է ադրբեջանական մոտակա մարտական դիրքից ընդամենը մի քանի հարյուր մետր հեռավորության վրա:

Պաշտպանի գլխավորած փաստահավաք խմբին բնակիչներն իրենց մտահոգություններն են ներկայացրել առ այն, որ ադրբեջանական զինված ուժերը պարբերաբար, այդ թվում՝ գիշերային ժամերին, տարբեր տրամաչափի զինատեսակներից կրակոցներ են արձակում գյուղի անմիջական հարևանությամբ: Բնակիչները տեղեկացրել են նաև, որ ադրբեջանական անօդաչու թռչող սարքերը, հատկապես՝ գիշերային ժամերին, թռիչքներ են կատարում համայնքի օդային տարածքում: Ավելին՝ 2023 թվականի ապրիլի 11-ին իրենց տներից մի քանի հարյուր մետր հեռավորության վրա կիրառվել են խոշոր տրամաչափի զենքեր, այդ թվում՝ ականանետային միջոցներ՝ իրական վտանգ ստեղծելով իրենց կյանքի ու առողջության համար: Մարդիկ հայտնել են նաև, որ կրակոցները գյուղում պարզ լսվել են՝ բնակիչների մոտ ստեղծելով լարվածություն և անորոշություն, ինչի պատճառով երեխաները և կանայք թաքնվել են տների նկուղներում:

2023 թվականի մայիսի 2-ին Պաշտպանը և ներկայացուցիչները այցելել են Վերին Շորժա, Կութ, Նորաբակ, Սոթք և Կուտական բնակավայրեր:

[782] Հասանելի է https://news.am/arm/news/754860.html հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Սահմանամերձ բնակավայրերի բնակիչները փաստահավաք աշխատանքների ժամանակ հայտնել են, որ ադրբեջանական զինծառայողները տեղակայվել են բնակավայրին շատ մոտ: Օրինակ, Կուտական բնակավայրում ադրբեջանական զինծառայողները հայտնվել են բնակավայրի անմիջապես հարևանությամբ գտնվող բլրի վրա և ամբողջ գյուղը հայտնվել է դիտարկման տակ:

Բացի այդ, բնակիչների պնդմամբ՝ հաճախակի են ադրբեջանական զինծառայողների կողմից կրակոցները բնակավայրերի անմիջական հարևանությամբ, այդ թվում՝ խոշոր տրամաչափի զենքերով, ինչն առաջացնում է անհանգստություն, տագնապ և լարված մթնոլորտ[783]:

2023 թվականի հունիսի 15-ին Պաշտպանի գլխավորած փաստահավաք խումբն այցելել է նաև Երասխ բնակավայր:

Բնակիչները փաստահավաք խմբին տեղեկացրել են, որ ադրբեջանական զինված ուժերը 2023 թվականի հունիսի 13-ի երեկոյան մեկուկես ժամից ավելի ինտենսիվ կրակ են բացել բնակավայրի ուղղությամբ՝ հատկապես թիրախավորելով նոր կառուցվող մետալուրգիական գործարանի տարածքը, ինչի արդյունքում վիրավորում են ստացել շինարարական աշխատանքներում ներգրավված Հնդկաստանի Հանրապետության 2 քաղաքացիներ: Գործարանի աշխատակիցները նշել են, որ մեծ դժվարությամբ են կարողացել վիրավորներին դուրս բերել տարածքից, քանի որ ադրբեջանական զինծառայողները կրակոցներ են արձակել ինչպես վիրավորներին տեղափոխող, այնպես էլ կրակոցներից թաքնվող մյուս աշխատակիցների ուղղությամբ:

Բնակիչների փոխանցմամբ՝ կրակոցները նոր ինտենսիվությամբ շարունակվել են նաև հունիսի 14-ին: Բացի այդ, ադրբեջանական զինված ուժերն, ի թիվս այլնի, կրակոցներ են արձակել նաև բնակավայրով անցնող միջպետական Մ2 ավտոմոբիլային ճանապարհի ուղղությամբ՝ թիրախավորելով և վնասելով ճանապարհին տեղադրված ՀՀ պետական դրոշը:

Արձանագրվել է նաև, որ բնակավայրի քաղաքացիական ենթակառուցվածքները, այդ թվում՝ տները, դպրոցը, մանկապարտեզը, գտնվում են ադրբեջանական զինված ուժերի ուղիղ նշանառության և թիրախավորման ներքո: Բնակիչները հայտնել են, որ իրենց տները ադրբեջանական մարտական դիրքերից գտնվում են մի քանի հարյուր մետր հեռավորությամբ:

Իրականացված փաստահավաք աշխատանքների արդյունքների ուսումնասիրությամբ պարզվել է, որ ադրբեջանական զինված ուժերի գործողությունների հետևանքով խախտվել են սահմանամերձ բնակավայրերի բնակիչների կյանքի, խաղաղ և անվտանգ ապրելու, հոգեկան և ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքները:

[783] Հասանելի է https://armeniasputnik.am/20230511/adrbejani-zinuzhy-verin-shvorzhaji-ughghutjamb-akananet-e-kirarel-59501876.html հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

«Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր» 3-րդ հոդված.
Յուրաքանչյուր մարդ ունի կյանքի (...) իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 11-րդ արձանագրության 2-րդ հոդվածի 1-ին մաս.
Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով (...):

ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հանձնաժողովը, թիվ 4 ընդհանուր մեկնաբանությունների շրջանակներում անդրադառնալով բավարար կենսամակարդակի բաղադրատարր հանդիսացող բնակարանի իրավունքին, արձանագրել է, որ «Բնակարան ունենալու իրավունքը (...) պետք է դիտվի որպես ինչ-որ տեղ **ապահով, խաղաղ և արժանապատիվ ապրելու իրավունք»**[784]**:**

Ադրբեջանական զինված ուժերի ծառայողների գործողությունների և նրանց ագրեսիվ վարքագծի պատճառով հնարավոր չի լինում ապահովել անձի՝ բնակարան ունենալու իրավունքի կարևոր բաղադրատարր հանդիսացող **ապահով և խաղաղ ապրելու իրավունքը:**

Բացի այդ, ՄԻԵԿ 8-րդ հոդվածով երաշխավորվում է յուրաքանչյուր անձի՝ անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը, որը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ ներառում է նաև **անձի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը**[785]**:**

Ակնհայտ է, որ վերը նշված գործողությունները հակասում են նաև Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության 1-ին և 2-րդ հոդվածներով սահմանված՝ անդամ պետությունների կողմից ստանձնած պարտավորությունների բարեխիղճ կատարման սկզբունքին և միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը ձգտելու նպատակին[786]: Հիշյալ իրողությունները ևս մեկ անգամ փաստում են, որ ադրբեջանական զինված ուժերը խաղաղ բնակչությանը շարունակաբար ահաբեկելու և նրանց շրջանում տագնապ առաջացնելու նպատակ են հետապնդում, ինչն ակնհայտ հակաօրինական է և ուղղակի կերպով հակասում է միջազգային-իրավական նորմերին: Այդ հանգամանքն ուղղակի ազդեցություն է ունենում Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպանության վիճակի վրա:

Նշված իրավունքների պատշաճ երաշխավորման համատեքստում Պաշտպանը կարևորում է քաղաքացիական պաշտպանության կառույցների և համապատասխան ենթակառուցվածքների արդիականացման և բարելավման անհրաժեշտությունը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ ՀՀ իրավասու մարմինները պետք է՝

[784] Տե՛ս ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հանձնաժողովի թիվ 4 ընդհանուր մեկնաբանություններ, պար. 7:

[785] Տե՛ս Բուտուրգան ընդդեմ Ռումինիայի գործով (Buturugă V. Romania) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2020 թվականի փետրվարի 11-ի վճիռը, դիմում թիվ 56867/15,
Վավրիցկան և այլոք ընդդեմ Չեխիայի Հանրապետության գործով (Vavřička and Others v. The Czech Republic) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2021 ապրիլի 8-ի վճիռը, դիմում թիվ 47621/13:

[786] Տե՛ս Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրություն, հասանելի է https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75801 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

✓ սահմանամերձ բնակավայրերի բնակիչների համար ապահովեն իրենց իրավունքների և անվտանգային հարցերի վերաբերյալ կանոնավոր, հստակ և մատչելի հանրային հաղորդակցություն: Կարևոր է մարդկանց հետ պարբերաբար հանդիպումների շրջանակներում թիրախային տեղեկատվության տրամադրումը, որպեսզի բնակիչներն անվտանգային մարտահրավերների հետ մեկտեղ չհայտնվեն նաև տեղեկատվական վակուումում և անորոշության մեջ,

✓ վերանայեն ռազմական դրության կամ արտակարգ իրավիճակներում (ճգնաժամային իրավիճակներում) գործողությունների պլանները՝ դրանք դարձնելով առկա իրավիճակին համադրելի, առավել գործուն ու ճկուն,

✓ համայնքների բնակիչների համար առավել հաճախ կազմակերպեն և իրականացնեն քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ,

✓ բարելավեն և արդիականացնեն քաղաքացիական պաշտպանության կառույցները և համապատասխան ենթակառուցվածքները:

2. ՀՀ սահմանամերձ բնակավայրերի բնակիչների սեփականության իրավունքի, զբաղվածության ապահովման և ապրուստի միջոցը հոգալու հետ կապված խնդիրներ

Սյունիքի և Գեղարքունիքի մարզերում Պաշտպանի աշխատակազմի իրականացրած փաստահավաք աշխատանքների արդյունքում արձանագրվել է, որ ադրբեջանական զինված ուժերը հաճախ տեղակայվել են բնակիչներին կամ համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողատարածքներում, այդ թվում՝ խոտհարքներում և արոտավայրերում:

Բնակիչները ադրբեջանական զինված ուժերի ծառայողների գործողությունների արդյունքում գործնականում զրկվել են իրենց հողատարածքներն ազատորեն տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու հնարավորությունից:

Վերը նկարագրված հանգամանքները հաստատվել են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ՀՀ զինված ուժերի ներկայացուցիչների հետ քննարկումներում, ինչպես նաև բնակիչների վկայություններով, լուսանկարների և մարդկանց սեփականության իրավունքի վկայականների միջոցով և այլն: Տեղ համայնքում, օրինակ, բնակիչներից մեկը հայտնել է, որ ադրբեջանական զինված ուժերի ծառայողները խրամատներ են փորել իրեն պատկանող ցորենի արտի մեջ՝ այդպիսով զրկելով իրեն բերք ստանալու և ապրուստը հոգալու հնարավորությունից[787]:

Ստեղծված իրավիճակն ուղղակիորեն հանգեցրել է նաև ապրուստի միջոց հոգալու հնարավորության փաստացի վերացմանը, քանի որ բնակիչները չեն կարողացել զբաղվել անասնապահությամբ, գյուղատնտեսությամբ: Ուստի դժվարացել է իրենց ընտանիքներին կենսական միջոցներով ապահովելու հնարավորությունը:

[787] «Ադրբեջանցիք իմ ցանած ցորենը արմատախիլ են արել, տեղը խրամատ են փորել», - Տեղ համայնքի բնակիչ, հասանելի է https://www.azatutyun.am/a/32345185.html հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Հաշվի առնելով սահմանամերձ բնակավայրերում բնակվող անձանց սեփականության իրավունքով պատկանող հողատարածքներից օգտվելու անհնարինության հանգամանքը՝ Պաշտպանը հարցը քննարկել է նաև պետական իրավասու մարմինների հետ:

Մասնավորապես, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Վարչապետի 2021 թվականի հունվարի 15-ի թիվ 23-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի 2021 թվականի օգոստոսի 24-ի նիստում որոշում է կայացվել ժամանակավորապես օգտագործման համար անհասանելի դարձած հողամասերի սեփականատերերին (համասեփականատերերին) տրամադրել մեկ հեկտար վարելահողի հաշվարկով տարեկան 200 հազար ՀՀ դրամ՝ որպես չստացված եկամուտների փոխհատուցում:

Արձանագրված խնդրի վերաբերյալ Էկոնոմիկայի նախարարությունը տեղեկացրել է, որ այն սահմանամերձ բնակավայրերի տնտեսավարողները, ովքեր զբաղվում են անասնապահությամբ, և որոնց արոտավայրերը գտնվում են հակառակորդի վերահսկողության կամ նշանառության տակ, հնարավորություն ունեն օգտվելու ՀՀ կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի թիվ 893-Լ որոշմամբ հաստատված ՀՀ ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրից և ձեռք բերելու հիդրոպոնիկ եղանակով կանաչ կերի արտադրություն կազմակերպելու համար սարքավորումներ՝ մեղմելով անասնակերի սակավությունը: Միաժամանակ, քննարկվում է նշված սարքավորումների ձեռքբերման համար ծրագրով լրացուցիչ արտոնություններ տրամադրելու հարցը:

Պաշտպանը կարևորում է բնակիչների իրավունքներին վերաբերող խնդիրներին հետամուտ ու արձագանքող լինելը: Դրա հետ մեկտեղ, առանցքային է մարդկանց իրավունքների պաշտպանությանն ու երաշխավորմանը միտված համակարգային մոտեցումներ ու լուծումներ գտնելը:

Վկայակոչված փաստերի ուսումնասիրությունը հաստատում է, որ ադրբեջանական զինված ուժերի կողմից կատարվող գործողությունները խախտում են Տեղ համայնքում խաղաղ բնակչության ինչպես սեփականության, այնպես էլ բավարար կենսամակարդակ ունենալու իրավունքը:

Սեփականության իրավունքի պաշտպանության իրավական հիմքերը դրված են ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային հիմնարար փաստաթղթերով: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք:

Այս առումով անհրաժեշտ է նաև վկայակոչել «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» և «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի սոցիալ-տնտեսական իրավունքների երաշխավորմանը վերաբերող իրավանորմերը և խնդիրները դիտարկել դրանց լույսի ներքո:

«Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր», 25-րդ հոդված, 1-ին մաս.
Յուրաքանչյուր ոք իրավունք ունի այնպիսի կենսամակարդակի, ներառյալ սնունդը, հագուստը, բնակարանը, բժշկական խնամքը և սոցիալական անհրաժեշտ սպասարկումը, որն անհրաժեշտ է իր և իր ընտանիքի առողջությունն ու

բարեկեցությունը պահպանելու համար, և գործազրկության, հիվանդության, հաշմանդամության, այրիանալու, ծերության կամ իր կամքից անկախ ապրուստի միջոցներից զրկվելու դեպքում՝ ապահովելու իրավունք:

«Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիր, 11-րդ հոդված.

Սույն դաշնագրին մասնակցող պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի համար և նրա ընտանիքի համար բավարար այնպիսի կենսամակարդակի իրավունքը, որն իր մեջ ներառում է բավարար սնունդ, հագուստ ու բնակարան և կյանքի պայմանների անընդհատ բարելավման իրավունքը: Մասնակից պետությունները կձեռնարկեն պատշաճ միջոցներ ապահովելու համար այդ իրավունքի իրականացումը, ընդունելով այդ առումով ազատ համաձայնության վրա հիմնված միջազգային համագործակցության կարևոր նշանակությունը:

Ավելին, ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հանձնաժողովն իր թիվ 3 ընդհանուր մեկնաբանություններում[788] հաստատել է, որ մասնակից պետություններն ունեն պարտավորություն՝ ապահովելու Դաշնագրի յուրաքանչյուր իրավունքի առնվազն նվազագույն էական մակարդակի բավարարումը:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի՝ «Տնտեսական պաշտպանության, սոցիալական և մշակութային իրավունքները հակամարտության մեջ» վերտառությամբ զեկույցի շրջանակներում արձանագրվել է, որ պետության պոզիտիվ պարտավորությունները, որոնք կապված են առողջության, սննդի, բնակարանի, ջրի հասանելիության և կրթության իրավունքների հետ, նույնիսկ արտակարգ իրավիճակների կամ զինված բախումների ժամանակ, շարունակում են ուժի մեջ մնալ[789]:

Անհրաժեշտ է ընդգծել, որ պետությունների կողմից ճանաչվում է յուրաքանչյուրի և նրա ընտանիքի բավարար կենսամակարդակի իրավունքը, ինչն իր հերթին ենթադրում է, որ անդամ պետությունները կրում են վկայակոչված իրավունքների ապահովմանն ուղղված գործողությունների ձեռնարկման պոզիտիվ պարտականություն:

Սահմանամերձ բնակավայրերի բնակիչների զբաղվածության ապահովման և ապրուստի միջոց հոգալու խնդիրն արդիական է նաև Ոսկեպար, Ոսկեվան և Բաղանիս բնակավայրերում:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տեղեկացմամբ՝ Միասնական սոցիալական ծառայության Նոյեմբերյանի տարածքային կենտրոնի միջոցով նշված բնակավայրերում իրականացվել է «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում» ծրագիրը, ինչի արդյունքում ժամանակավոր զբաղվածությամբ է ապահովվել 122 անձ:

Վերին և Ներքին Շորժա, Նորաբակ, ինչպես նաև Ոսկեպար, Ոսկեվան և Բաղանիս բնակավայրերում կատարված այցերի արդյունքում պարզվել է, որ շարունակում է լուրջ խնդիր մնալ ջրի՝ որպես մարդու կյանքի և առողջության համար հիմնային նշանակություն ունեցող հանրային բարիքի հասանելիությունը:

[788] Committee on Economic, Social and Cultural Rights, general comment No. 3 (1990) on the nature of States parties obligations (հոդ. 2 (1) o the Covenant), պար. 10:

[789] Տե՛ս ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի «Տնտեսական պաշտպանության, սոցիալական և մշակութային իրավունքները հակամարտության մեջ» վերտառությամբ զեկույցը, կետ 15, հասանելի է https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Issues/ESCR/E-2015-59.pdf հղումով, 29.03.2024թ:

Վերին և Ներքին Շորժա, Նորաբակ բնակավայրերի բնակիչները հայտնել են, որ այդ խնդիրն առաջացել է ադրբեջանական զինծառայողների կողմից բնակավայրի ջրի պաշարները վերահսկողության տակ վերցնելուց հետո, ինչը խնդրահարույց է նաև առողջության համար անվտանգ և որակյալ ջրի ապահովման տեսանկյունից:

Ոսկեպար, Բաղանիս, Ոսկեվան բնակավայրերում բնակիչները բարձրացրել են խմելու և ոռոգման ջրի հետ կապված խնդիրներ: Ոսկեվան բնակավայրում բնակիչները բարձրացրել են նաև բնակավայրի լուսավորության և գազաֆիկացման հետ կապված հարցեր: Նշված հարցերը ևս հասցեագրվել են՝ ըստ ՀՀ իրավասու գերատեսչությունների:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ խնդրի լուծման հնարավոր տարբերակները ուսումնասիրվում են:

Հարկ է նշել, որ ջուրը մարդու կյանքի և առողջության համար հիմնային նշանակություն ունեցող հանրային բարիք է, ջրի հասանելիությունը հիմնարար է մարդու իրավունքների տեսանկյունից[790]:


ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

14.06.2023թ

2023թ հունիսի 14-ին Հանրապետության Հանրապետության ադրբեջանական զորքերներում տեղի էր ունենում 12-րդ զորամասի պետական ավտոտանան ընտրություն Հարց պատմություն առաջարկվեց, ապ թվում՝ նաև Արարատի մարզի Երասխի միջնակարգ դպրոցում, որտեղ պետական ավտոտանան ընտրություն էին հանձնում թվով 4 շրջանավարտներ.

Կարգի համաձայն՝ ընտրություն մեկնարկը տրվել էր ժամը 10[00]-ին, ներկա էին ընտրության մասնակցելու թույլտվություն ստացած բոլոր աշակերտները (թվով 4 աշակերտ) :

Ընտրության օրը՝ 2023 թվականի հունիսի 14-ին, ժամը 11[00]-11[30] ընկած ժամանակահատվածում չսկսվեն Երասխ գյուղի ուղղությամբ ինտենսիվ կրակոցներ. երբեմն նման տրամաչափի կրակոցներ և այլոյնի ձայն ունեցող պայթյուններ չէինք լսել:

Դեպքի մասին (կրակոցների և պայթյունների) տեղեկացրեցի Արարատի մարզպետարանի Կրթության, մշակույթի և սպորտի վարչության ղեկավար Մարտին Մանուկյանին: Վերջինիս կողմից ստացա հանձնարարական՝ ընտրություն անմիջապես դադարեցնելու և տվյալ պահի դրությամբ արձանագրություն կազմելու վերաբերյալ, ինչպես նաև՝ ընտրության մասնակից աշակերտներին, անվտանգության կանոնները պահպանելով, տարհանելու մասին. երկրորդ փուլով՝ դպրոցի աշխատակիցներին տարհանելու մասին:

Նշեմ, որ ժամը 11[00] բոլոր արդեն իսկ դպրոցում գտնվում էին միայն դպրոցի տնօրենը, ուսումնական գծով տնօրենի տեղակալը, Մասնագիտական կրթական աշակերտությունների գծով տնօրենի տեղակալը, վիճակագիր և տնօրենի տնտեսական աշխատանքի գծով տեղակալը:

Սույն արձանագրությունը կազմվել է 2023 թ-ի հունիսի 14-ին Երասխի միջնակարգ դպրոցում՝ ներքին կանոնը ներկայությամբ, որի համար ստորագրում ենք.

4.

5.

Հաշվի առնելով վերոնշյալը՝ ՀՀ իրավասու մարմինները պետք է՝

- ***շահագրգիռ քննարկումների արդյունքում գտնեն բնակիչների իրավունքների պաշտպանությանն ու երաշխավորմանը միտված համակարգային մոտեցումներ ու լուծումներ՝ երաշխավորելով սեփականության իրավունքի և այլ հիմնարար իրավունքների պաշտպանությունը,***
- ***մշակեն և իրացնեն պատշաճ և բավարար կառուցակարգեր սահմանամերձ բնակավայրերի բնակիչների տնտեսական գործունեության խթանման և զբաղվածության ապահովման ուղղությամբ,***
- ***ձեռնարկեն պատշաճ և բավարար միջոցներ բնակավայրերում խմելու և ոռոգման ջրի հասանելիության, ինչպես նաև գազաֆիկացման և փողոցային լուսավորության խնդիրները լուծելու ուղղությամբ:***

3. ՀՀ սահմանամերձ բնակավայրերում երեխաների կրթության իրավունքի ապահովման խնդիրները

Պաշտպանի կողմից իրականացված փաստահավաք աշխատանքների արդյունքում արձանագրվել են սահմանամերձ բնակավայրերում կրթության իրավունքի իրացմանն առնչվող խնդիրներ:

Մասնավորապես, 2023 թվականի ապրիլի 11-ին Սյունիքի մարզի Տեղ համայնքի անմիջական հարևանությամբ ադրբեջանական զինուժի կողմից տարբեր տրամաչափի զինատեսակների կիրառումն առավել ինտենսիվ է եղել: Բնակիչների տեղեկացմամբ՝

[790] Տե՛ս ՄԱԿ-ի սոցիալ-տնտեսական հարցերի խորհրդի դիքորոշումը, հասանելի է http://surl.li/gvdsd հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

պարբերական կրակոցների պատճառով երեխաների մոտ առաջացել է տագնապի, անհանգստության ու անորոշության զգացողություն: Համայնքի դպրոցը գտնվում է ադրբեջանական զինված ուժերի ուղիղ նշանառության և թիրախավորման ներքո: Բնակիչները հայտնել են, որ ապրիլի 11-ին տևական ժամանակ անդադար կրակոցների պատճառով խաթարվել է դասապրոցեսը: Ադրբեջանական զինված ուժերի գործողությունների հետևանքով ստեղծված իրավիճակը իրական անվտանգային խնդիր է առաջացրել երեխաների համար և խոչընդոտել է նրանց կրթության իրավունքի ապահովմանը: Սույն խնդրի համատեքստում պետք է նշել, որ կրթության իրավունքն անձի հիմնական իրավունքներից է, որի ապահովումն ունի կարևոր նշանակություն նաև անձի այլ իրավունքների և ազատությունների իրականացման տեսանկյունից:

Կրթության իրավունքի ապահովման խնդիրն արձանագրվել է նաև Արարատի մարզի Երասխ բնակավայրում: 2023 թվականի հունիսի 15-ին Պաշտպանի գլխավորած փաստահավաք խումբն այցելել է Երասխ բնակավայր: Փաստահավաք աշխատանքների արդյունքում արձանագրվել է, որ բնակավայրի դպրոցն ու մանկապարտեզը գտնվում են ադրբեջանական զինված ուժերի ուղիղ նշանառության ներքո՝ ադրբեջանական մարտական դիրքերից մի քանի հարյուր մետր հեռավորությամբ:

Երասխի միջնակարգ դպրոցի տնօրենը տեղեկացրել է, որ հունիսի 14-ին տեղի էր ունենում 12-րդ դասարանի պետական ավարտական քննություն: Նույն օրն առավոտյան ժամը 11:30-ի սահմաններում՝ աշակերտների քննություն հանձնելու ժամանակ, սկսվել են կրակոցները: Ընդ որում, կրակոցներն արձակվել են անմիջապես դպրոցի դիմացի բլրին տեղակայված ադրբեջանական դիրքերից: Աշակերտները շուրջ 15 րոպե կրակահերթերի ձայների ներքո շարունակել են կատարել քննական աշխատանքը, սակայն կրակոցների աննախադեպ ինտենսիվության և դրանց բարձր ձայնի պատճառով երեխաների և ուսուցիչների անհանգստությունը հաշվի առնելով՝ ստիպված են եղել քննությունը 20 րոպե շուտ ավարտել: Տնօրենը նշել է, որ քննությունը նախատեսվածից շուտ ավարտելու մասին կազմվել է հատուկ արձանագրություն, որը ներկայացվել է նաև Պաշտպանին:

Դպրոցի տնօրենը հայտնել է նաև, որ անվտանգության նկատառումներից ելնելով՝ ստիպված են եղել երեխաներին ու ուսուցիչներին խումբ-խումբ տարհանել դպրոցից:

Փաստահավաք աշխատանքների արդյունքում ձեռք բերված տվյալների ուսումնասիրությամբ պարզ է դարձել, որ սահմանամերձ բնակավայրերում ադրբեջանական զինված ուժերի գործողությունների հետևանքով ստեղծված իրավիճակն իրական անվտանգային խնդիր է առաջացրել երեխաների համար և խոչընդոտել է նրանց կրթության իրավունքի իրացումը:

Պաշտպանն ընդգծում է, որ կրթության իրավունքն անձի հիմնական իրավունքներից է, որի ապահովումն ունի կարևոր նշանակություն նաև անձի այլ իրավունքների և ազատությունների իրականացման համար:

Հարկ է նաև նշել, որ ադրբեջանական զինված ուժերի գործողություններն ուղիղ կերպով հակասում են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 26-րդ, ինչպես

նաև «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 28-րդ հոդվածներին, ըստ որոնց՝ յուրաքանչյուր երեխա ունի կրթության իրավունք:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի, Գլխավոր ասամբլեայի, Երեխաների իրավունքների կոմիտեի, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի կողմից ընդունված փաստաթղթերով կարևորվել է ոչ միայն ռազմական գործողությունների ընթացքում երեխաների իրավունքների խախտման անթույլատրելի լինելը, այլ նաև հետևանքների կանխարգելման այն հրամայականը, որն անհրաժեշտ է երեխաների առօրյա կյանքի, նրանց մտավոր և ֆիզիկական զարգացման երաշխավորման համար: Այս կառույցների կողմից բազմիցս դատապարտվել է նաև ուսումնական հաստատությունների, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների վրա հարձակումն ու նրանց թիրախավորումը:

Երեխաների կրթության իրավունքի պատշաճ իրացման հետ կապված հարցը Պաշտպանին ներկայացվել է նաև Տավուշի մարզի Ոսկեպար բնակավայր կատարված այցի և բնակիչների հետ հանդիպումների ընթացքում: Մարդիկ նշել են, որ բնակավայրում չկա մանկապարտեզ, ինչի արդյունքում երեխաները զրկված են նախադպրոցական կրթություն ստանալու հնարավորությունից:

Բարձրացված հարցի կապակցությամբ Պաշտպանը գրություն է հասցեագրել Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն: Ստացվել է պատասխան առ այն, որ Ոսկեպար բնակավայրում մանկապարտեզի կառուցման համար Տավուշի մարզպետի աշխատակազմի կողմից ներկայացվել է հայտ, որը դեռևս չի հաստատվել: Կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման ծրագրի շրջանակներում նախատեսվում է նոր կրթահամալիրի կառուցում հարևան Ոսկեվան բնակավայրում՝ 144 անձի համար, որից 40-ը նախատեսված է լինելու նախադպրոցական կրթության համար:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ ՀՀ իրավասու մարմինները պետք է՝

- ***լրացուցիչ միջոցներ ձեռնարկեն ադրբեջանական զինված ուժերի ուղիղ նշանառության ներքո գտնվող դպրոցների և մանկապարտեզների անվտանգության ապահովման նպատակով՝ ներդնելով ստեղծված իրավիճակին համապատասխանող անվտանգային կառուցակարգեր, իրականացնելով քաղաքացիական պաշտպանության հատուկ միջոցառումներ և հանրային իրազեկման արշավներ,***
- ***իրականացնեն պատշաճ և բավարար միջոցառումներ՝ երեխաների նախադպրոցական կրթությունն ապահովելու նպատակով:***

4. ՀՀ սահմանամերձ բնակավայրերում տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունքի խախտմանն առնչվող խնդիրներ

Իրականացված փաստահավաք աշխատանքների ընթացքում Գեղարքունիքի մարզի սահմանային բնակավայրերի բնակիչները լուրջ մտահոգություն են հայտնել Սոթքի ոսկու հանքավայրի բնականոն աշխատանքի ապահովման խոչընդոտների վերաբերյալ՝ նշելով, որ բնակչության մեծ մասը հիմնական ապրուստի միջոցը հոգում է հանքավայրում աշխատելու միջոցով:

Մասնավորապես, 2020 թվականի 44-օրյա մարտական գործողություններից հետո «Գեոպրոմայնինգ Գոլդ» ընկերության կողմից շահագործվող Սոթքի ոսկու հանքավայրի տարածքի մեծ մասն անցել է ադրբեջանական զինուժի վերահսկողության տակ, ինչի

պատճառով խնդիրներ են առաջացել հանքի բնականոն աշխատանքի ապահովման հետ կապված:

Փաստահավաք աշխատանքներն իրականացնող խմբին փոխանցված տվյալների համաձայն՝ ադրբեջանական զինծառայողների կողմից հանքավայրի ուղղությամբ պարբերական բնույթ կրող կրակոցների արդյունքում հանքավայրի աշխատանքի ծավալները 2020 թվականից ի վեր նվազել են, ինչը հանգեցրել է աշխատողների քանակի զգալի կրճատման: Ավելին՝ կրակոցների պատճառով հանքավայրի աշխատանքները հարկադրաբար և պարբերաբար դադարեցվել են, իսկ աշխատակիցները՝ տարհանվել: Այդ կրակոցները հաճախ եղել են թիրախային՝ ուղղված նաև հանքավայրում շահագործվող տեխնիկային[791]:

«Գեոպրոմայնինգ Գոլդ» ընկերությունը պաշտոնապես հաստատել է, որ պարբերական դարձած կրակոցների պատճառով հանքավայրի տնօրինությունը ստիպված է եղել որոշում կայացնել դադարեցնելու հանքավայրի աշխատանքները՝ աշխատողների անվտանգության նկատառումներից ելնելով, իսկ աշխատողներն ուղարկվել են հարկադիր պարապուրդի[792]:

Տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունքի խախտումներ արձանագրվել են նաև Արարատի մարզի Երասխ բնակավայրում: Պաշտպանի գլխավորած փաստահավաք խումբն այցելել է բնակավայրի նոր կառուցվող մետալուրգիական գործարանի տարածք, որտեղ հանդիպել է գործարանի տնօրինության ու շինարարական աշխատանքներում ներգրավված անձանց հետ: Ընդ որում, գործարանում աշխատել են ազգությամբ շուրջ 130 հայ և 70 հնդիկ:

Գործարանի տնօրինությունը և աշխատակիցները Պաշտպանին մանրամասն տեղեկություններ են հայտնել այն մասին, թե ինչպես են ադրբեջանական զինծառայողները 2023 թվականի հունիսի 13-ի երեկոյան մեկուկես ժամից ավելի տևողությամբ ինտենսիվ կրակ բացել գործարանի վրա: Այդ ժամանակ գործարանի տարածքում ակտիվ շինարարական աշխատանքներ են ընթացել, սակայն կրակոցների պատճառով աշխատանքները հարկադրված դադարեցվել են:

Թիրախավորված կրակոցները եղել են գործարանի այն ուղղությամբ, որտեղ այդ պահի դրությամբ աշխատելիս են եղել 25 աշխատակից: Ըստ աշխատակիցների՝ կրակոցները նպատակ են ունեցել խաթարելու գործարանի տարածքում իրականացվող շինարարական աշխատանքները: Նրանք նաև պատմել են, որ կրակոցները հատկապես ինտենսիվ են դարձել այն ժամանակ, երբ աշխատանքներում ներգրավված են եղել մեծ թվով աշխատակիցներ և շինարարական տեխնիկա:

Աշխատողներն ու գործարանի տնօրինությունը Պաշտպանի հատուկ ուշադրությունն են հրավիրել այն հանգամանքի վրա, որ գործարանի տարածքում զինծառայողներ և զինտեխնիկա երբևէ չեն եղել:

Փաստահավաք խումբը շրջայց է կատարել կառուցվող գործարանի տարածքում՝ արձանագրելով ադրբեջանական կրակոցների հետևանքները: Մասնավորապես, արձանագրվել է, որ վնասվել են գործարանի նոր կառուցված բետոնե սյուները, պատերը, պարիսպը, գործարանի վարչական շենքը, շենքի դիմաց կայանած քաղաքացիական ավտոմեքենան, ինչպես նաև շինարարական աշխատանքներին ներգրավված տեխնիկան:

[791] Հասանելի է https://www.youtube.com/watch?v=c0ifsBF29Ak&t=216s հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[792] Հասանելի է https://www.azatutyun.am/a/32367260.html հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Ադրբեջանական կրակոցները և թիրախավորումը Երասխ բնակավայրի և հատկապես գործարանի ուղղությամբ շարունակվել են նաև հաջորդող օրերին (հունիսի 16-ին, 19-ին, 24-ին, հուլիսի 10-ին և այլն)[793]:

Գործարանի թիրախավորման և աշխատողների վիրավորում ստանալու կապակցությամբ հայտարարությամբ են հանդես եկել ՀՀ արտաքին գործերի նախարարությունը[794], ԱՄՆ պետդեպարտամենտը[795], ինչպես նաև գործարանի տնօրինությունը: Երասխ բնակավայր են մեկնել նաև ԵՄ դիտորդները[796], Հայաստանում հավատարմագրված միջազգային դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչները[797]:

Բացի այդ, գործարանի տնօրինությունը տարածել է հատուկ տեսանյութ[798], որում երևում են ադրբեջանական զինված ուժերի արձակած կրակոցների դրվագները:

Ադրբեջանական զինված ուժերի գործողությունների պատճառով խախտվել են գործարարությամբ զբաղվող անձանց միջազգայնորեն երաշխավորված, այդ թվում՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով և «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրով, ինչպես նաև ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունքը: Լրջորեն վտանգվել են հարյուրավոր քաղաքացիների աշխատանքային իրավունքները:

Փաստագրված բոլոր ապացույցների համադրության ու վերլուծության հաշվառմամբ՝ Պաշտպանն արձանագրում է, որ նման գործողությունները քաղաքացիական օբյեկտների և անձանց ակնհայտ և ուղղակի թիրախավորում են, ինչը կոպտորեն խախտում է ժամանակակից աշխարհում ընդունված իրավական չափանիշներն ու սկզբունքները, բացահայտ արհամարհանք է մարդու իրավունքների և միջազգային իրավունքի նկատմամբ, հակասում է Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությանը:

5. Սահմանամերձ բնակավայրերի բնակչության ահաբեկումը՝ որպես հայատյաց քաղաքականության դրսևորում





Ադրբեջանի կողմից վարվող հայատյաց և էթնիկ հիմքով ատելության քաղաքականության, ինչպես նաև հայերի նկատմամբ թշնամանքի հրապարակային քարոզչության իրականացման հերթական դրսևորումներն արձանագրվել են նաև 2023 թվականին՝ ՀՀ սահմանամերձ բնակավայրերի ուղղությամբ (օրինակ, Տեղ, Երասխ) ադրբեջանական զինված ուժերի ագրեսիվ գործողությունների ընթացքում:

Պաշտպանի փաստահավաք աշխատանքներով ձեռք բերված տեղեկությունները ցույց են տալիս, որ նրանց ներկայությունը և իրականացրած գործողությունները ՀՀ սահմանամերձ բնակավայրերի ուղղությամբ, ի թիվս այլնի, կրում են խաղաղ բնակչությանը ահաբեկելու, մշտապես լարված և սթրեսային

[793]Հասանելի է հետևյալ հղումներով՝ https://www.pastinfo.am/hy/news/2023/06/16/5scacoi6m/1595196 https://oragir.news/hy/material/2023/06/19/82876, https://hraparak.am/post/e3d6e4f09146de1ce9e48a26fe23130c, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[794]Հասանելի է https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2023/06/13/az_eraz/12049 հղումով, 29.03.20234թ.:

[795]Հասանելի է http://surl.li/rzlue հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[796] Հասանելի է https://www.freenews.am/post/e707d2af8343f5b1b49c4c04f311b034 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[797] Հասանելի է https://www.azatutyun.am/a/32460113.html հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[798] Հասանելի է https://www.youtube.com/watch?v=xOBXTKFBX7k հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

վիճակում պահելու նպատակ՝ մշտապես խրախուսվելով պետական մարմինների և պաշտոնատար անձանց մակարդակով[799], ինչն իր հերթին գեներացվել է ադրբեջանական հասարակությունում և իր արտացոլումը գտել սոցիալական ցանցերի ադրբեջանական տիրույթում, օրինակ՝ «Telegram», «Tik Tok», «Facebook» և այլ սոցիալական ցանցերում:

Ադրբեջանի կողմից պետական մակարդակով իրականացվող հայատյացության և էթնիկ հիմքով ատելության քաղաքականությունն ուղղակի ազդեցություն է ունենում Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպանության վիճակի վրա: Վերը շարադրվածը նկատի ունենալով՝ Պաշտպանն այդ հանգամանքին անդրադարձել է բազմաթիվ զեկույցներում, որոնք ուղարկվել են նաև մարդու իրավունքների պաշտպանության մանդատ ունեցող միջազգային կազմակերպություններին:

2023 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմի կողմից մեդիա տիրույթի ուսումնասիրությունների արդյունքում կրկին հաստատվել է այն հանգամանքը, որ սոցիալական ցանցերի ադրբեջանական օգտատերերի մեկնաբանությունները շարունակում են արտացոլել ակնհայտ թշնամանք ու հայատյացություն:

Օրինակ՝ Տեղ համայնքի անմիջական հարևանությամբ 2023 թվականի ապրիլի 11-ին ադրբեջանական զինված ուժերի ագրեսիայից անմիջապես հետո ադրբեջանական մեդիա տիրույթում նոր թափ են ստացել հայերի նկատմամբ բռնության կոչերը, ատելության և թշնամանքի քարոզը: Եվ այդ ամենն ուղղված է եղել հենց Տեղ գյուղի խաղաղ բնակիչներին[800]:

Մասնավորապես, նշված ժամանակահատվածում «Տելեգրամ» հարթակում սկսեցին տեղադրվել զոհված հայ զինծառայողների[801] լուսանկարները՝ կրկին ատելության խոսք, բռնության սպառնալիք պարունակող մեկնաբանություններով:

Այս համատեքստում հարկ է ընդգծել, որ ՄԱԿ-ի Ռասայական խտրականության վերացման կոմիտեն Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայով ստանձնած՝ Ադրբեջանի 10-12-րդ պարբերական հաղորդումների վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում մտահոգություն է հայտնել սոցիալական ցանցերում, այդ թվում՝ հասարակական գործիչների և պետական պաշտոնյաների կողմից ազգությամբ հայերի նկատմամբ ռասիստական կարծրատիպերի տարածման կապակցությամբ և Ադրբեջանի ղեկավարությանն առաջարկել է միջոցներ ձեռնարկել պաշտոնատար անձանց և հանրային հաստատությունների կողմից ազգությամբ հայերի դեմ ուղղված ատելության խոսքի, ռասայական ատելության և խտրականության հրահրման և խթանման մշտադիտարկման ու դրանց դեմ պայքարի ուղղությամբ[802]:

---

[799] Օրինակ, տե՛ս http://ask.org.az/en/2020/09/28/appeal-of-president-ilham-aliyev-to-the-people/, https://www.voltairenet.org/article211050.html, 29.04.2024թ.
https://teleqraf.com/news/siyaset/340649.html, 29.04.2024թ.
https://www.xalqcebhesi.az/news/politics/110634.html, 29.04.2024թ.
https://bit.ly/43chk8S, https://bit.ly/3Iljaws, 29.04.2024թ.

[800] Առավել մանրամասն տե՛ս https://ombuds.am/images/files/e12940a4c1afee3703896176aa538251.pdf հղումը:

[801] Ինչպես նշվել է վերևում, ադրբեջանական զինված ուժերի արձակած կրակոցների պատճառով զոհվել են 4 հայ զինծառայողներ, 6-ը ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

[802] Հասանելի է https://shorturl.at/gyJP4 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Կարևոր է նշել, որ 2021 թվականի դեկտեմբերի 7-ին ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանը հրապարակել է Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի շրջանակներում միմյանց դեմ քննվող դատական գործերի շրջանակներում Հայաստանի և Ադրբեջանի կողմից ներկայացված հրատապ միջոցների վերաբերյալ իր որոշումները[803], որոնց համաձայն՝ առկա է կոնվենցիայի շրջանակներում հայերի իրավունքներին անդառնալի վնաս հասցնելու անմիջական վտանգ:

Դատարանն Ադրբեջանին պարտավորեցրել է՝

ա) բռնությունից և մարմնական վնասվածքներից պաշտպանել բոլոր այն անձանց, որոնք 2020 թվականի հակամարտությամբ պայմանավորված հայտնվել և պահվում են Ադրբեջանում, ապահովել նրանց անվտանգությունն ու օրենքի առաջ հավասարությունը,

բ) ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները կանխելու ազգությամբ և էթնիկ հայերի դեմ ուղղված ռասայական խտրականության և ատելության հրահրումն ու խթանումը, այդ թվում՝ պաշտոնատար անձանց և պետական հաստատությունների կողմից,

գ) ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կանխելու և պատժելու հայկական մշակութային ժառանգության, այդ թվում՝ եկեղեցիների և պաշտամունքի այլ վայրերի, հուշարձանների, ուղենիշային պատկերների, գերեզմանատների և այլ ցուցանմուշների հանդեպ վանդալիզմի և պղծման գործողությունները:

Հատկանշական է նաև, որ Դատարանն իր որոշմամբ Ադրբեջանին պարտավորեցրել է ձեռնարկելու բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կանխելու խտրականությունն ու դրա հրահրումը, այդ թվում՝ հասարակական գործիչների և պետական պաշտոնյաների կողմից:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ ՀՀ իրավասու մարմինները պետք է՝

- ✓ ***շարունակեն ադրբեջանական զինծառայողների գործողությունների, ինչպես նաև սահմանամերձ բնակավայրերի բնակիչների անվտանգությանը սպառնացող շարունակաբար դրսևորվող ագրեսիվ վարքագծի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և ամփոփման հետևողական աշխատանքները՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանին, Արդարադատության միջազգային դատարանին, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության մանդատ ունեցող այլ միջազգային դերակատարներին համապատասխան տեղեկությունների ներկայացման նպատակով,***
- ✓ ***պարբերաբար միջազգային իրավական ատյաններին տեղեկացնեն Ադրբեջանի համար պարտավորություններ սահմանող՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Արդարադատության միջազգային դատարանի որոշումների կատարման ընթացքի, դրանց խախտումների մասին:***

[803] Հասանելի է https://www.icj-cij.org/public/files/case-related/180/180-20211207-ORD-01-00-EN.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

ԲԱԺԻՆ 17. ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՌԱՆՁԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Մարդու իրավունքների պաշտպանի մշտական ուշադրության ներքո են ՀՀ Սահմանադրությամբ ու մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերով ամրագրված օրենքի առջև հավասարության ու խտրականության արգելքի երաշխավորման հարցերը:

2023 թվականին շարունակել է արդիական մնալ խտրականության դեմ պայքարի օրենսդրական արդյունավետ կառուցակարգերի բացակայության խնդիրը, որոնց ամրագրման կարևորությունն արձանագրվել է Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդումներում:

Խտրականության դեմ պայքարը ենթադրում է գործուն կառուցակարգերի նախատեսում, այդ թվում՝ միասնական օրենքի ընդունում, որը կսահմանի խտրականության հասկացությունը, դրա տեսակներն ու խտրականության դեպքերով իրավունքների արդյունավետ պաշտպանությունն ապահովող ընթացակարգային երաշխիքները:

2023 թվականի ընթացքում խտրականության դեմ պայքարի համապարփակ օրենքի ընդունման անհրաժեշտությունն արձանագրել են նաև միջազգային կառույցները, այդ թվում՝ Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովը[804]:

ԵԽ նախարարների կոմիտե[805].
Կոմիտեն կոչ է արել ՀՀ իշխանություններին անհապաղ ավարտին հասցնել «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման գործընթացը՝ միջազգային չափանիշներին ու ՄԻԵԴ-ի «Օգանեզովան ընդդեմ Հայաստանի» գործով արձանագրումներին համապատասխան, և ընդունել նշված օրենքն առանց ձգձգումների:

Պաշտպանն ընդգծում է, որ մարդու իրավունքների պաշպանության պատշաճ մակարդակն անհնար է առանց խտրականության արգելքի սկզբունքի պահպանման: Ուստի՝ բարձրացված խնդիրները պահանջում են համակարգային լուծում՝ խտրականության դեմ պայքարի և դրա կանխարգելման օրենսդրական արդյունավետ կառուցակարգերի ամրագրում՝ միջազգային չափանիշներին համահունչ:

Խտրականության դեմ պայքարի ոլորտում Պաշտպանի գործունեության հիմնական ուղղություններից են կանանց, ազգային փոքրամասնությունների, ԼԳԲՏ անձանց, հաշմանդամություն ունեցող անձանց և երեխաների իրավունքների պաշտպանության հարցերը:

[804] Տե՛ս Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի՝ Հայաստանի վերաբերյալ 6-րդ զեկույցը, 2023թ., հասանելի է https://rm.coe.int/sixth-report-on-armenia/1680ab9e33 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[805] Տե՛ս ԵԽ նախարարների կոմիտեի 2023 թվականի հունիսի 7-ի թիվ CM/Del/Dec(2023)1468/H46-1 որոշումը, հասանելի է https://search.coe.int/cm/pages/result_details.aspx?objectid=0900001680ab57e5 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

ԳԼՈՒԽ 1. ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽԹԱՆՈՒՄԸ

Մարդու իրավունքների պաշտպանը[806] 2023 թվականի ընթացքում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության և խթանման ուղղությամբ գործունեությունն իրականացրել է մի շարք ուղղություններով:

Տարվա ընթացքում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց կողմից Պաշտպանի աշխատակազմ է մուտքագրվել 9 դիմում, այդ թվում՝ 5 գրավոր դիմում, և 4 հեռախոսազանգ Պաշտպանի աշխատակազմի թեժ գծի հեռախոսահամարին:

Դիմումների մեծ մասը չի վերաբերել ազգային պատկանելության հիմքով իրավունքների խախտմանը կամ խտրականությանը: Դիմումներից երկուսը վերաբերել են սեփականության իրավունքի ենթադրյալ խախտման վերաբերյալ հարցերին, մեկը՝ բանակ զորակոչվելու հարցին, մյուսը՝ աշխատանքային իրավահարաբերություններին: 5-րդ դիմումը վերաբերել է ազգային փոքրամասնության համայնքներից մեկում ընտանեկան բռնության կոնկրետ դեպքին:

Պաշտպանի աշխատակազմը ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության վիճակն ուսումնասիրել է նաև զանգվածային լրատվության միջոցների և սոցիալական ցանցերի մշտադիտարկման միջոցով:

Զանգվածային լրատվության միջոցների մշտադիտարկման արդյունքում տեղեկություններ են ստացվել առ այն, որ անհայտ անձը փորձել է հրկիզել Երևանում հրեական սինագոգի դռները: Պաշտպանը իր մտահոգությունն է հայտնել դեպքի առթիվ՝ նշելով, որ պաշտամունքի կառույցի նկատմամբ ցանկացած ոտնձգություն անընդունելի է և դատապարտելի: Պաշտպանը հատուկ ընդգծել է, որ իրավասու մարմինների կողմից գործի քննության շրջանակներում պատշաճ գնահատման պետք է արժանանա այն հանգամանքը, թե արդյոք արարքը կատարվել է ռասայական, ազգային, էթնիկ կամ կրոնով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով:

2023 թվականի ընթացքում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության և խթանման տեսանկյունից առանցքային դերակատարություն ունեցավ Մարդու իրավունքների պաշտպանի՝ 2023 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 101-Ա որոշմամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին առընթեր ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության և խթանման հարցերով հասարակական խորհրդի ձևավորումը:

Խորհրդի կազմում ընդգրկված են Հայաստանի Հանրապետությունում բնակվող ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող 15 հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ եզդիական, ռուսական, ասորական, քրդական, ուկրաինական, հունական, վրացական, բելառուսական, հրեական, լեհական, գերմանական համայնքներից: Խորհրդի կազմում ներառվել է նաև ուդի ժողովրդի իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպություն:

Նույն թվականի նոյեմբերի 30-ին տեղի է ունեցել խորհրդի անդրանիկ նիստը: Նիստի շրջանակներում անդրադարձ է կատարվել հասարակական խորհրդի ստեղծման նպատակներին, ոլորտում առկա խնդիրներին, ազգային փոքրամասնությունների

[806] Այսուհետ նաև՝ Պաշտպան:

ինքնության հիմնական տարրերի՝ կրոնի, լեզվի, մշակութային ժառանգության, ավանդույթների պահպանմանը նպաստող միջավայրի կատարելագործման անհրաժեշտությանը, ինչպես նաև համապատասխան ոլորտային օրենսդրության ընդունմանն ուղղված աշխատանքներին: Պաշտպանին առընթեր ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության և խթանման հարցերով հասարակական խորհրդի նիստն անցկացվել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի համաֆինանսավորմամբ՝ համատեղ «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագրի՝ «Հավասարության խթանումը և խտրականության բացառումը Հայաստանում» ծրագրի հետ համագործակցության շրջանակներում:

Նիստին մասնակցել են ինչպես միջազգային կազմակերպությունների, պետական կառավարման մարմինների ներկայացուցիչներ, Ազգային ժողովի՝ ազգային փոքրամասնության ներկայացուցիչ հանդիսացող պատգամավորներ, այնպես էլ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող և խորհրդի կազմում ընդգրկված հասարակական կազմակերպությունների անդամներ[807]:

Խորհրդի նպատակներն են՝

1. աջակցել Պաշտպանին ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների խթանման և արդյունավետ պաշտպանության հարցերում,

2. ներգրավվել համապատասխան ոլորտային օրենսդրության ընդունմանը կամ կատարելագործմանն ուղղված աշխատանքներում,

3. ստեղծել ազգային փոքրամասնությունների ինքնության հիմնական տարրերի՝ կրոնի, լեզվի, մշակութային ժառանգության, ավանդույթների պահպանմանը և խթանմանը նպաստող միջավայր,

4. ընդլայնել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության և խթանման ոլորտում գործունեություն իրականացնող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ համագործակցությունը,

5. նպաստել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների վիճակի անընդհատ բարելավմանը, ներառյալ՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացմանն ուղղված հետազոտությունների, ուսումնասիրությունների կամ վերլուծությունների իրականացմանը, համակարգային խնդիրների վերհանմանը և դրանց հիման վրա Պաշտպանին առաջարկների ներկայացմանը:

Պաշտպանը կարևորում է հանրային իշխանության մարմինների և քաղաքացիական հասարակության հետ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և խթանման հարցերով համագործակցությունը:

2023 թվականի ընթացքում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության և խթանման համատեքստում Պաշտպանն ակտիվ

[807] Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2784 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

համագործակցել է պետական մարմինների, ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության բնագավառում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվության միջոցների հետ:

Պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների հրավերներով Պաշտպանը և իր ներկայացուցիչները մասնակցել են ոլորտային տարբեր հարցերով քննարկումների, այցերի, ընդգծել նշված ոլորտում իրավունքների պաշտպանության և խթանման համակարգի կատարելագործման կարևորությունը:

Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես հիմնական զեկուցող, Ազգային ժողովում մասնակցել է «Ամուսնությունների տարիքային շեմը բարձրացնելու նպատակով օրենսդրական բարեփոխումները՝ մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության համատեքստում» թեմայով խորհրդարանական լսումներին:

Անդրադառնալով Հայաստանում վաղ ամուսնությունների խնդրին՝ Պաշտպանը նշել է, որ վերջիններս ունեն բազմաթիվ բացասական հետևանքներ, այդ թվում՝ անձանց կրթության իրավունքի, կանանց իրավունքների, առողջության պահպանման և մի շարք այլ իրավունքների տեսանկյունից: Կարևորելով առկա խնդիրների լուծման նպատակով օրենսդրական բարեփոխումների իրականացումը՝ Պաշտպանն ընդգծել է, որ դրանք չեն կարող ոլորտում փոփոխությունների ամենամեծ շարժիչ ուժը լինել: Նախևառաջ անհրաժեշտ է հիմնովին բարեփոխել կրթական համակարգը, այդ թվում՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում: Կարծրատիպային մոտեցումներն առաջին հերթին տարածվում են նշված հաստատություններում կրթական համակարգի և առկա միջավայրի միջոցով: Պաշտպանը շեշտել է, որ կրթության ինչպես բովանդակությունը, այնպես էլ դասավանդման գործընթացը պետք է համապատասխանեն այն չափորոշիչներին, որոնք առկա են ժամանակակից աշխարհում, հատկապես՝ իրավահավասարության և խտրականության արգելքին առնչվող հարցերի համատեքստում:

«Ուժեղացնելով Արևելյան հարևանության կայունությունը» ծրագրի շրջանակներում կազմակերպված «Կանայք, խաղաղություն, անվտանգություն» խորագրով միջոցառման շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանը, հանդես գալով բացման խոսքով, նշել է, որ անհնար է ունենալ մարդու իրավունքների պաշտպանության պատշաճ համակարգ՝ առանց

հանրային համերաշխության, իսկ հանրային համերաշխության տեսանկյունից բացառիկ կարևորություն ունի իրավահավասարության երաշխավորումը: Ազգային փոքրամասնությունների իրավունքների հետ կապված՝ պետությունն, ի թիվս այլնի, ունի պոզիտիվ պարտավորություն՝ երաշխավորելու և նպաստելու նրանց մշակույթի, կրոնի, լեզվի, ավանդույթների պահպանմանը, և այս առումով չափազանց կարևոր է նաև ազգային փոքրամասնությունների համայնքների ակտիվ ներգրավվածությունը: Պաշտպանը կարևորել է ազգային փոքրամասնության ներկայացուցիչ հանդիսացող կանանց իրավունքների պաշտպանության և խթանման ուղղությամբ համապատասխան աշխատանքների իրականացումը՝ ընդգծելով տարբեր կարծրատիպերի հաղթահարման անհրաժեշտությունը: Այս համատեքստում Պաշտպանը նշել է, որ անհրաժեշտ է լուրջ աշխատանքներ իրականացնել կրթական համակարգի բարեփոխման ուղղությամբ, քանի որ հենց կրթական համակարգի միջոցով են շատ հաճախ փոխանցվում կարծրատիպային մոտեցումները, որոնք չեն համապատասխանում մարդու իրավունքներին վերաբերելի ժամանակակից միտումներին:

Մարդու իրավունքների պաշտպանը և Ազգային ժողովում Հայաստանի եզդիական համայնքի ներկայացուցիչ, Ազգային ժողովում Հայաստան-Իրաք բարեկամական խմբի ղեկավար Ռուստամ Բաքոյանը՝ ՄԱԿ Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գործընկեր «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության և ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության ներկայացուցիչների մասնակցությամբ համատեղ այց են իրականացրել Իրաքից ժամանած և Հայաստանում ապաստան հայցող եզդիներին: Վերջիններս Պաշտպանին ներկայացրել են իրենց իրավունքներին առնչվող հարցեր, խնդիրներ՝ կապված կացարանի, պետության կողմից դրամական օգնության, աշխատանքի և հայերենի չիմացության հետևանքով հաղորդակցվելու հետ: Ներկայացված խնդիրները գույքագրվել են՝ վերջիններիս ուսումնասիրության և Պաշտպանի մանդատի շրջանակներում համապատասխան քայլեր ձեռնարկելու համար:

Պաշտպանը Արմավիրի մարզի Ակնալճի եզդիների հոգևոր կենտրոնում հարգանքի տուրք է մատուցել 2014 թվականին Իրաքի Սինջար քաղաքում ցեղասպանության զոհ դարձած եզդիների հիշատակին՝ ընդգծելով, որ վերջիններիս հետ տեղի ունեցած ողբերգությունը ազգություն չի ճանաչում և հանցագործություն է ընդդեմ համայն մարդկության: Նման երևույթներն այլևս չպետք է կրկնվեն, իսկ դրա համար անհրաժեշտ է քաղաքակիրթ աշխարհի կողմից վերջիններիս ճանաչումն ու դատապարտումը:

1. Խտրականության արգելքին առնչվող խնդիրները ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության համատեքստում

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 1-ին հոդվածի համաձայն՝ բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար իրենց արժանապատվությամբ և իրավունքներով: Հռչակագրի 2-րդ հոդվածով ամրագրված է, որ յուրաքանչյուր մարդ պետք է ունենա սույն Հռչակագրում հռչակված բոլոր իրավունքներն ու ազատություններն առանց որևէ տարբերության, անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական և այլ համոզմունքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, գույքային, դասային և այլ վիճակից:

Խտրականության արգելքի սկզբունքը իր ամրագրումն է ստացել մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում:

Ասվածին զուգահեռ՝ Սահմանադրության 29-րդ հոդվածի համաձայն՝ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Խտրականության արգելքի սկզբունքի համատեքստում կարևորվում է ազգային փոքրամասնությունների իրավունքների երաշխավորումն ու պաշտպանությունը, քանի որ վերջիններս բնակվում են տվյալ երկրի բնակչության մեծամասնության շրջանում և մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ հանգամանքներով, օրինակ՝ լեզվի, կրոնի, մշակույթի, ավանդույթների տարբերությամբ պայմանավորված՝ կարող են հանդիպել մի շարք բարդությունների, այդ թվում՝ նաև խտրական վերաբերմունքի դրսևորումների: Առանձին դեպքերում նշված դրսևորումները կարող են նաև կարծրատիպային մոտեցումների հետևանք լինել:

Ուստի պետությունը, հիմք ընդունելով խտրականության արգելքի սկզբունքին վերաբերելի միջազգային և ներպետական իրավական կարգավորումները, պարտավոր է ստեղծել ազգային փոքրամասնությունների իրավունքների պատշաճ իրացման համար անհրաժեշտ և բավարար նախապայմաններ, քայլեր ձեռնարկել հանրության շրջանում տարածված կարծրատիպային մոտեցումները վերացնելու ուղղությամբ՝ ազգային փոքրամասնությունների իրավունքների հարցը դիտարկելով ոչ միայն իրավունքների պաշտպանության, այլև խթանման համատեքստում:

Դեռևս 2016 թվականին մշակվել և շրջանառվել են «Իրավահավասարության ապահովման մասին» և «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքների նախագծերը, որոնք, սակայն, չեն ընդունվել: Այսինքն՝ ներկայում չկա խտրականության արգելքին վերաբերող համապարփակ օրենսդրական դաշտ: Ասվածից բխում է, որ նշված ոլորտին վերաբերելի խնդիրները դեռևս մնում են չկարգավորված՝ առաջ բերելով ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց իրավունքների պաշտպանությանն ու խթանմանն առնչվող մի շարք խնդիրներ:

2023 թվականին խտրականության դեմ պայքարի համապարփակ օրենքի ընդունման անհրաժեշտությունն արձանագրվել է նաև միջազգային կազմակերպությունների կողմից: Մասնավորապես՝ «Իրավահավասարության ապահովման մասին» օրենքի ընդունման առնչությամբ Հայաստանի Հանրապետությանը հանձնարարական են ներկայացրել ՄԱԿ-

ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն[808] և Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովը (ՌԱԵՀ): Վերջինս շեշտել է նաև հավասարության մարմին ստեղծելու կամ նման մարմնի գործառույթը Մարդու իրավունքների պաշտպանին ընձեռելու անհրաժեշտությունը[809]:

ԵԽ նախարարների կոմիտեն 2023 թվականի հունիսի 28-ի բանաձևում[810] որպես անհապաղ իրականացվող գործողություն առաջարկել է վերանայել «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագիծը՝ այն լիովին համապատասխանեցնելով միջազգային չափորոշիչներին, ներառյալ Շրջանակային կոնվենցիային՝ ապահովելով, որ վերջինիս բովանդակությունը քննարկվի բոլոր շահագրգիռ կողմերի հետ:

Այս համատեքստում հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների և 2023-2025 թվականների գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» թիվ 1978-Լ որոշմամբ որպես գործողություն նախատեսվել է ազգային փոքրամասնությունների իրավունքների և ազատությունների պաշտպանության համար օրենսդրական երաշխիքների ստեղծումը, որով ներպետական իրավական համակարգում կնախատեսվի ազգային փոքրամասնությունների իրավունքների և ազատությունների պաշտպանությանը վերաբերող առանձին և համապարփակ օրենսդրություն:

Վերոնշյալի համատեքստում Պաշտպանն ընդգծում է, որ Հայաստանի Հանրապետությանն անհրաժեշտ է խտրականության արգելքին առնչվող համապարփակ օրենսդրություն: Ընդ որում՝ վերջինիս մշակման և ընդունման աշխատանքները պետք է ընթանան միջազգային չափորոշիչների հաշվառմամբ և շահագրգիռ կողմերի պարտադիր ներգրավմամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***իրականացնել հանրության իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը, ներառյալ՝ կարծրատիպային մոտեցումների վերացմանն ու խտրականության բացառմանն ուղղված համակարգային միջոցառումներ,***
- ✓ ***խտրականությունն արգելող, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանն ու խթանմանը վերաբերելի օրենսդրության մշակումն ու ընդունումը իրականացնել միջազգային չափորոշիչների պահպանմամբ և շահագրգիռ կողմերի պարտադիր ներգրավմամբ:***

2. Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց լեզվի պահպանման իրավունքին առնչվող խնդիրներ

ՀՀ Սահմանադրության 56-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր ազգային և էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունք: Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք ունեն իրենց ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման ու զարգացման իրավունք:

---

[808] «Հայաստանի չորրորդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ», Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե, 2023 թվականի հոկտեմբերի 13, թիվ E/C.12/ARM/CO/4, 21-22 կետեր:

[809] Հասանելի է https://rm.coe.int/sixth-report-on-armenia/1680ab9e33 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[810] Հասանելի է https://search.coe.int/cm/pages/result_details.aspx?ObjectId=0900001680abccc9 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների համատեքստում բացառիկ կարևորություն ունի լեզվի պահպանման իրավունքը:

Պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքում ձեռք բերված տեղեկատվության[811] համաձայն՝ առանձին մասնագետներ բացասական կարծիք են հայտնել ազգային փոքրամասնության լեզուների, մասնավորապես՝ ասորերեն լեզվի ատեստավորման թեստերի առնչությամբ:

Ըստ ստացված տեղեկատվության՝ ատեստավորման անցողիկ շեմը չհաղթահարելու արդյունքում միջին մասնագիտական կրթություն ունեցող և ազգային փոքրամասնությունների լեզուներ դասավանդող ուսուցիչները կարող են ազատվել աշխատանքից, և, որպես կանոն, վերջիններս ուսումնական հաստատություններում ազգային փոքրամասնությունների լեզուներ դասավանդող միակ ուսուցիչներն են: Այսինքն՝ ուսուցիչների՝ աշխատանքից ազատվելու դեպքում վտանգվում է ազգային փոքրամասնության լեզուներ սովորող աշակերտների կրթության և լեզվի պահպանման իրավունքների իրացումը:

Ընդ որում՝ ըստ ստացված տեղեկությունների՝ ասորական համայնքի համար անընդունելի է ասորերենի դասաժամերը խմբակային պարապմունքների վերածելու մոտեցումը:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հայտնած տեղեկատվության համաձայն՝ ասորերեն լեզվի թեստի հետ կապված խնդիրները քննարկվել են նախարարությունում, այնուհետև՝ ուղարկվել թեստերի հեղինակներին: Հիմնական բարդությունը պայմանավորված է ասորերեն լեզվի մասնագետների սակավությամբ: Սակայն գտնվել է այնպիսի մասնագետ, ով շահերի բախման տեսանկյունից խնդիր չի ունենա և կկարողանա անկողմնակալ կարծիք ներկայացնել թեստում առկա խնդիրների առնչությամբ: Նշվել է նաև, որ նախարարությունում քննարկվում է բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան ամբիոններ բացելու և մասնագետներ կրթելու հարցը, որի ուղղությամբ որոշակի աշխատանքներ արդեն իրականացվում են:

Ինչ վերաբերում է ասորերեն լեզվի ուսուցչի աշխատանքը շարունակելուն և աշակերտների՝ նշված լեզվով ուսուցումը ապահովելուն՝ նշվել է, որ կքննարկվեն հարցին լուծում տալու հնարավորությունները:

Ստացված տեղեկությունների առնչությամբ պարզաբանումներ ստանալու նպատակով Մարդու իրավունքների պաշտպանը գրություններ է հասցեագրել իրավասու պետական մարմնին:

Գրությանն ի պատասխան՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը տեղեկացրել է, որ նախարարությունում քննարկում է տեղի ունեցել «Ասորերեն լեզու» առարկայի կամավոր ատեստավորման թեստային առաջադրանքների վերաբերյալ:

Քննարկման արդյունքներից ելնելով՝ նշվել է, որ բարձրագույն կրթություն ստանալու մասով պետական աջակցության ընթացակարգեր սահմանելու հարցը նախագծային փուլում է, այդ թվում՝ «Ասորերեն լեզու» առարկայի մասով, որի նպատակով առաջարկվել է հանրակրթական ուսումնական հաստատություններին՝ նախարարությանը տրամադրել կամավոր ատեստավորմանը մասնակցած և համապատասխան շեմը չհաղթահարած

[811] Հասանելի է https://factor.am/731525.html հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

բարձրագույն կրթություն չունեցող այն մասնագետների տվյալները, ովքեր ցանկանում են ստանալ բարձրագույն կրթություն:

Նշվել է նաև, որ բարձրագույն կրթություն չունեցող մասնագետների, ինչպես նաև «Ասորերեն լեզու» առարկան դասավանդող մասնագետների համար քննարկվում է կամավոր ատեստավորման լրացուցիչ փուլ կազմակերպելու հարցը:

Հիմք ընդունելով «Հանրակրթության մասին» օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն առաջարկել է հանրակրթական ուսումնական հաստատություններին, բարձրագույն կրթություն չունեցող այն մասնագետներին, ովքեր կամավոր ատեստավորման արդյունքում չեն հաղթահարել նվազագույն շեմը և սահմանված կարգով ազատվել են աշխատանքից, դիտարկել հանրակրթական ուսումնական հաստատությունում առկա թափուր այն հաստիքները զբաղեցնելու հնարավորությունը, որոնց դեպքում բարձրագույն կրթության պահանջ սահմանված չէ: Իսկ բարձրագույն կրթություն չունեցող, ազգային փոքրամասնության լեզուներ դասավանդող ուսուցիչների մասով նշվել է, որ ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի N 216-Ն որոշման հավելվածում կատարվել է փոփոխություն, համաձայն որի՝ ազգային փոքրամասնությունների լեզուների խմբակավարի պաշտոնը կարող է զբաղեցնել առնվազն միջին մասնագիտական կրթություն ունեցող և տվյալ լեզվին տիրապետող անձը:

Նախարարությունը նշել է, որ ձեռնարկված քայլերը իրականացվում են՝ կարևորելով ուսուցիչների բազմափորձ վաստակն ու ներդրումը կրթական համակարգում, և առաջարկված մեխանիզմներով ուսուցիչները աշխատանքի հնարավորություն կունենան՝ մինչ կամավոր ատեստավորման համապատասխան արդյունք գրանցելը կամ բարձրագույն կրթություն ապահովելը:

Հայաստանի Հանրապետությունը, վավերացնելով Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիան[812], ստանձնել է կոնկրետ պարտավորություններ ազգային փոքրամասնության պատկանող անձանց՝ իրենց փոքրամասնության լեզուն սովորելու, ինչպես նաև վերջիններիս կրթության իրավունքի պաշտպանության համատեքստում:

Շրջանակային կոնվենցիայի 12-րդ և 14-րդ հոդվածների համաձայն՝

Կողմերը պետք է համարժեք հնարավորություններ տրամադրեն ուսուցիչների պատրաստման, դպրոցական դասագրքերով ապահովման համար և դյուրացնեն շփումները տարբեր համայնքների ուսանողների և ուսուցիչների միջև: Կողմերը պարտավորվում են ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար բոլոր մակարդակներով ապահովել կրթության մատչելիության հավասար հնարավորություններ: Կողմերը պարտավորվում են ճանաչել ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձի իրավունքը՝ սովորել իր փոքրամասնության լեզուն: Ավանդաբար կամ զգալի քանակությամբ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանցով բնակեցված տարածքներում բավարար կարիքի դեպքում Կողմերը հնարավորությունների սահմաններում և իրենց կրթական համակարգերի շրջանակներում պետք է ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար երաշխավորեն իրենց լեզուն ուսումնասիրելու կամ այդ լեզվով կրթություն ստանալու համարժեք հնարավորություններ: Միևնույն ժամանակ,

[812] Այսուհետ նաև՝ Շրջանակային կոնվենցիա:

նշված պարտավորությունները չպետք է իրագործվեն՝ ի վնաս պաշտոնական լեզվի ուսուցման և դասավանդման:

Ասվածին զուգահեռ՝ Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի[813] 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը հայտարարում է, որ Եվրոպական խարտիայի իմաստով Հայաստանի Հանրապետության փոքրամասնությունների լեզուներ են ասորերենը, եզդիերենը, հունարենը, ռուսերենը և քրդերենը:

Համաձայն Եվրոպական խարտիայի 2-րդ հոդվածի 2-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է Եվրոպական խարտիայի համապատասխան կարգավորումները կիրառել ասորերենի, եզդիերենի, հունարենի, ռուսերենի և քրդերենի նկատմամբ:

Ասվածից բխում է, որ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է ճանաչել ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձի իրավունքը՝ սովորել իր փոքրամասնության լեզուն, բոլոր մակարդակներում ապահովել կրթության մատչելիության հավասար հնարավորություններ, տրամադրել համարժեք հնարավորություններ ուսուցիչների պատրաստման, դպրոցական դասագրքերով ապահովման համար և դյուրացնել շփումները տարբեր համայնքների ուսանողների և ուսուցիչների միջև: Պաշտպանն ընդգծում է, որ նշված պարտավորությունները չպետք է կրեն հռչակագրային բնույթ, և պետությունը պետք է ստեղծի պատշաճ կառուցակարգեր՝ վերոնշյալ իրավունքների իրացման համար:

Շրջանակային կոնվենցիայի Խորհրդատվական կոմիտեն Հայաստանի վերաբերյալ 5-րդ կարծիքում[814] նշել է, որ դպրոցական ուսումնական ծրագրերում ազգային փոքրամասնությունների վերաբերյալ շատ քիչ տեղեկություններ կան, և միջմշակութային կրթության միակ հնարավորությունը փոքրամասնությունների հետ միասին դասերին հաճախելն է: Ուսումնական ծրագրերում ազգային փոքրամասնությունների ներկայության ապահովումը կխթանի պատկանելության ավելի մեծ զգացում և կդառնա հանրակրթությունից դուրս մնալու դեպքերի նվազեցման ռազմավարության մի մասը:

Ընդգծվել է, որ եզդիերեն լեզվի ուսուցումն առաջարկվում է միայն որպես արտադասարանային առարկա, մինչդեռ ասորերենը դասավանդվում է ընդհանուր՝ ռուսաց լեզու ուսումնական ծրագրի շրջանակներում, սակայն շաբաթական ընդամենը 3 ժամ: Ավելի սակավաթիվ փոքրամասությունների համար նախատեսված կիրակնօրյա դպրոցներին կարող է անհրաժեշտ լինել լրացուցիչ աջակցություն իշխանությունների կողմից: Եզդիերեն լեզվով կրթության առաջարկի բարելավումը պահանջում է ավելի շատ ուսուցիչներ, և այդ հարցը դժվար է լուծել, երբ այդ լեզվով առկա առաջարկն այդքան ցածր է: Իշխանությունների կողմից պահանջվում են նախնական դրական քայլեր այս խնդրի լուծման ուղղությամբ:

Խորհրդատվական կոմիտեն հորդորել է իշխանություններին ապահովել ազգային փոքրամասնությունների մշակույթի, ավանդույթների, պատմության, կրոնի և լեզվի ու հասարակության կյանքում նրանց ունեցած ներդրումների մասին տեղեկատվության ներառումը դպրոցական ծրագրերում և ուսուցիչների վերապատրաստման ու ուսումնական հարակից նյութերում:

[813] Այսուհետ նաև՝ Եվրոպական խարտիա:
[814] Հասանելի է https://rm.coe.int/5th-op-armenia-en/1680aa2a81 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Խորհրդատվական կոմիտեն կոչ է արել իշխանություններին քայլեր ձեռնարկել՝ ընդլայնելու եզդիերենով ուսուցման առաջարկներն ընդհանուր ուսումնական ծրագրերում՝ տարրական և միջնակարգ մակարդակներում, ներառյալ՝ ուսուցիչների ավելի շատ վերապատրաստման և ֆինանսական խթանների միջոցով, որպեսզի եզդի աշակերտները վերապատրաստվեն և աշխատեն որպես ուսուցիչներ: Միևնույն ժամանակ, իշխանությունները պետք է ներդնեն հետագա մասնագիտական, մեծահասակների համար նախատեսված և շարունակական կրթություն եզդիերենով:

ԵԽ նախարարների կոմիտեն ևս 2023 թվականի հունիսի 28-ի բանաձևում[815] որպես անհապաղ իրականացվող գործողություն առաջարկել է ապահովել, որ ազգային փոքրամասնությունների մշակույթի, ավանդույթների, պատմության, կրոնի և լեզվի և հասարակության մեջ նրանց ներդրման մասին տեղեկատվությունը ներառվի դպրոցական ուսումնական ծրագրերում և ուղեկցող՝ ուսուցիչների համար նախատեսված վերապատրաստման ուսումնական նյութերում:

ԵԽ նախարարների կոմիտեն բանաձևում ներկայացրել է նաև լրացուցիչ առաջարկություններ, այն է՝ ընդլայնել փոքրամասնությունների լեզուներով, մասնավորապես ասորերենով ուսուցման առաջարկը, դրան աջակցելու համար ապահովել ուսուցիչների համապատասխան վերապատրաստումը և նորացված ուսումնական նյութերի առկայությունը, աջակցել ազգային փոքրամասնությունների կազմակերպություններին կիրակնօրյա դպրոցներ և փոքրամասնությունների լեզուներով նախադպրոցական նախաձեռնություններ առաջարկելու հարցում, ձեռնարկել քայլեր՝ ընդլայնելու եզդիերենով ուսուցման առաջարկը ընդհանուր ուսումնական ծրագրի հիմնական և միջնակարգ մակարդակներում, այդ թվում՝ ուսուցիչների վերապատրաստման և ֆինանսական խթանների միջոցով, որպեսզի եզդի աշակերտները վերապատրաստվեն և աշխատեն որպես ուսուցիչներ: Միևնույն ժամանակ, իշխանությունները պետք է ներդնեն եզդիերենով հետագա կրթություն (մասնագիտական, մեծահասակների համար նախատեսված և շարունակական):

Հայաստանի կողմից Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի կիրառման վերաբերյալ 5-րդ զեկույցում[816] Փորձագետների կոմիտեն առաջարկել է՝

1. նպաստել ասորերենով նախադպրոցական կրթության առնվազն զգալի մասի տրամադրմանը և նախնական և միջնակարգ կրթության մեջ ասորերենով ուսուցման մասին տեղեկատվություն տրամադրելուն,

2. խրախուսել ասորերենով տեղանունների օգտագործումը կամ օբյեկտների անվանակոչումը՝ այդ լեզվի գրությանը և ուղղագրությանը համապատասխան,

3. ընդլայնել գերմանացի փոքրամասնությունների կիրակնօրյա դպրոցին տրամադրվող աջակցությունը, այդ թվում՝ գերմաներենով ժամանակակից ուսումնական նյութեր տրամադրելու միջոցով,

4. նպաստել նախադպրոցական կրթության առնվազն զգալի մասի ապահովմանը հունարենով և դասավանդել հունարենը որպես տարրական և միջնակարգ կրթության ուսումնական ծրագրի անբաժանելի մաս,

5. խրախուսել հունարենով տեղանունների օգտագործումը կամ օբյեկտների անվանակոչումը՝ այդ լեզվի գրությանը և ուղղագրությանը համապատասխան,

[815] Հասանելի է https://search.coe.int/cm/pages/result_details.aspx?ObjectId=0900001680abccc9 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[816] Հասանելի է https://rm.coe.int/min-lang-2021-17-evalria5-armenia-en/1680a44d26 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

6. նպաստել նախադպրոցական կրթության առնվազն զգալի մասի ապահովմանը քրդերենով և տրամադրել տեղեկություններ տարրական և միջնակարգ կրթության մեջ քրդերենով դասավանդման մասին,

7. խրախուսել քրդերենով տեղանունների օգտագործումը կամ օբյեկտների անվանակոչումը՝ այդ լեզվի գրությանը և ուղղագրությանը համապատասխան,

8. ապահովել, որ ռուսերենին տիրապետողները կարողանան ռուսերենով գրավոր դիմումներ ներկայացնել պետական իշխանության մարմինների տարածքային ստորաբաժանումներ,

9. ընդլայնել ուկրաինացի փոքրամասնությունների կիրակնօրյա դպրոցին տրամադրվող աջակցությունը, այդ թվում՝ ուկրաիներենով ժամանակակից ուսումնական նյութեր տրամադրելու միջոցով,

10. նպաստել նախադպրոցական կրթության առնվազն զգալի մասի ապահովմանը եզդիերենով և տրամադրել տեղեկություններ տարրական կրթության մեջ եզդիերեն ուսուցման մասին,

11. խրախուսել եզդիերենով տեղանունների օգտագործումը կամ օբյեկտների անվանակոչումը՝ այդ լեզվի գրությանը և ուղղագրությանը համապատասխան:

Հարկ է նշել, որ դեռևս 2010 թվականին «Հանրակրթության մասին» օրենքով ուսուցիչների համար սահմանվել է բարձրագույն կրթության պահանջ, որի նպատակով բարձրագույն կրթություն չունեցող ուսուցիչներին տրվել է որոշակի ժամանակահատված, որը 2018 թվականին արդեն իսկ մեկ անգամ երկարաձգվել է: «Հանրակրթության մասին» օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջի համաձայն՝ ուսումնական հաստատությունում աշխատող այն ուսուցիչները, որոնք չեն համապատասխանում «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պահանջներին, կարող էին շարունակել իրենց մասնագիտական գործունեությունը մինչև 2023 թվականի օգոստոսի 20-ը: Բարձրագույն կրթություն չունեցող շատ ուսուցիչներ այդ ընթացքում ստացել են բարձրագույն կրթություն: Նախորդ տարի օրենքի այդ պահանջը հաշվի առնելով՝ ոչ բարձրագույն կրթությամբ մասնագետներին տրվել է նաև հավելյալ հնարավորություն՝ կամավոր ատեստավորման մասնակցության արդյունքում համապատասխան շեմը հաղթահարելու դեպքում շարունակելու աշխատանքը:

Հաշվի առնելով քննարկվող հարցի կապակցությամբ իրավասու մարմնի կողմից ներկայացված պարզաբանումները, ինչպես նաև վերաբերելի իրավակարգավորումները՝ Պաշտպանը ողջունելի է համարում կրթության ոլորտում ուսուցիչների մասնագիտական որակին ներկայացվող պահանջների նախատեսումը և կիրառումը: Միևնույն ժամանակ, Պաշտպանն ընդգծում է, որ դրանք չեն կարող իրականացվել այնպիսի մեթոդաբանությամբ, որի արդյունքում կխախտվեն ազգային փոքրամասնության ներկայացուցիչների՝ իրենց լեզուն պահպանելու իրավունքն ու այդ ոլորտում առկա միջազգային չափանիշները:

Այս համատեքստում հիշատակման է արժանի այն հանգամանքը, որ ազգային փոքրամասնության համայնքներում, հատկապես մարզային բնակավայրերում, համապատասխան մասնագետների սակավության լուրջ խնդիրն ու դրա հաղթահարման ուղղությամբ պետության կողմից ձեռնարկված քայլերի անբավարար լինելը վերջնարդյունքում կարող են հանգեցնել մի շարք իրավունքների, այդ թվում՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ իրենց լեզուն, ազգային և էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունքների խախտման: Այդ հանգամանքը նկատի

ունենալով՝ Պաշտպանը կարևորում է կադրային ապահովման խնդիրները լուծելու ուղղությամբ անհապաղ քայլերի ձեռնարկումը, ոլորտի մասնագետների պատրաստումն ու վերապատրաստումը:

Պաշտպանը հարկ է համարում արձանագրել, որ քննարկվող ժամանակահատվածում (մասնավորապես, 2010 թվականից 2023 թվականներին) պետության կողմից չեն ձեռնարկվել միջազգային չափորոշիչներին համապատասխան անհրաժեշտ և բավարար քայլեր ազգային փոքրամասնության լեզուներ դասավանդող ուսուցիչներին համապատասխան լեզուներով բարձրագույն կրթություն ստանալու հնարավորություն ստեղծելու նպատակով: Ավելին՝ ըստ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տրամադրած տեղեկատվության՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց լեզուներ դասավանդող ուսուցիչների մասնակցությամբ ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից կազմակերպվել են հանդիպումներ, իրականացվել է մեթոդական աջակցություն՝ նրանց ավանդույթների, կարիքների վեր հանման նպատակով, սակայն *լեզվի վերապատրաստումներ չեն իրականացվել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց լեզուների մասնագետներ չկան*:

Ըստ ստացված տեղեկատվության՝ 2023 թվականի կամավոր ատեստավորմանը ազգային փոքրամասնությունների լեզուներ դասավանդող ուսուցիչներից դիմել է 24-ը, մասնակցել է 22-ը, որից ատեստավորված է համարվում և ունի դրույքաչափի բարձրացում 7 ուսուցիչ, 9 ուսուցիչ համարվում է ատեստավորված, ունի դրույքաչափի բարձրացում և ստանում է համապատասխան տոկոսով հավելավճար: Նշվածից կարելի է եզրահանգել, որ թվով 6 ուսուցիչ չի հաղթահարել ատեստավորման անցողիկ շեմը, ինչը, ըստ «Հանրակրթության մասին» օրենքի կարգավորումների, մասնագիտական գործունեությունը դադարեցնելու հիմք է:

Թեև իրավասու մարմնի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ նախարարությունում քննարկվում են վերը նշված խնդիրների լուծմանն առնչվող հարցերը, իսկ որոշ քայլեր արդեն իսկ ձեռնարկվել են, սակայն նկարագրված խնդիրները համակարգային առումով մնում են չլուծված:Վերը շարադրվածը նկատի ունենալով՝ Պաշտպանը մտահոգիչ է համարում ստեղծված իրավիճակը ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և խթանման տեսանկյունից:

Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության և խթանման, այդ թվում՝ լեզվի պահպանման համատեքստում կարևոր նշանակություն ունի ավանդական տեղական անվանումների, փողոցների անվանումների, ինչպես նաև բնակչության համար նախատեսված տեղագրական այլ նշումների, փոքրամասնության լեզվով ցուցանակների տեղադրումը:

Շրջանակային կոնվենցիայի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

Ազգային փոքրամասնության պատկանող անձանց զգալի թվաքանակով ավանդաբար բնակեցված տարածքներում Կողմերը իրենց իրավական համակարգերի, անհրաժեշտության դեպքում՝ ներառյալ նաև այլ պետությունների հետ կնքված համաձայնագրերի շրջանակներում, ինչպես նաև հաշվի առնելով կոնկրետ պայմանները, պետք է ապահովեն ավանդական տեղական անվանումների, փողոցների անվանումների, ինչպես նաև բնակչության համար նախատեսված տեղագրական այլ

նշումների, փոքրամասնության լեզվով ցուցանակների տեղադրումը, երբ այդպիսի նշումների բավարար կարիք կա:

ՀՀ առանձին բնակավայրերում, օրինակ՝ Լոռու մարզի Ֆիոլետովո, Լերմոնտովո, Պրիվոլնոյե համայնքներում, բնակավայրերի անվանումների ցուցանակները տեղադրված են և՛ հայերեն, և՛ ռուսերեն լեզուներով: Կոտայքի մարզի Զովունի, Նոր Գեղի, Արզնի, Քանաքեռավան բնակավայրերի մուտքերի մոտ ազգային փոքրամասնությունների լեզուներով տեղադրվել են տեղագրական ցուցանակներ[817]:

Պաշտպանը ողջունելի է համարում նշված համայնքներում ազգային փոքրամասնությունների լեզուներով ցուցանակների տեղադրումը՝ միաժամանակ կարևորելով նաև այլ համայնքներում քննարկվող ցուցանակների տեղադրումը՝ ոլորտում առկա միջազգային չափանիշներին համապատասխան:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***մշակել և իրացնել պատշաճ և բավարար կառուցակարգեր ազգային փոքրամասնությունների լեզուների պահպանման իրավունքը երաշխավորելու նպատակով, բացառել պետության կողմից այնպիսի քաղաքականության իրականացումը, որը կարող է խախտել խնդրին առնչվող միջազգային չափանիշները,***
- ✓ ***ձեռնարկել և իրականացնել համակարգային միջոցառումներ ոլորտում համապատասխան մասնագետների սակավության խնդիրը լուծելու ուղղությամբ, մասնավորապես՝ անհապաղ քայլեր իրականացնել բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագետների կրթությունն ապահովելու նպատակով,***
- ✓ ***կազմակերպել և իրականացնել ազգային փոքրամասնությունների լեզուներ դասավանդող ուսուցիչների վերապատրաստումներ՝ վերջիններիս կրթական մակարդակի և կարողությունների բարձրացման նպատակով,***
- ✓ ***քայլեր ձեռնարկել ազգային փոքրամասնությունների լեզուներ դասավանդող ուսուցիչների աշխատանքի շարունակականությունն ապահովելու ուղղությամբ՝ ապահովելով ազգային փոքրամասնության ներկայացուցիչների՝ իրենց մայրենի լեզվով կրթություն ստանալու իրավունքի իրացումը,***
- ✓ ***ապահովել ազգային փոքրամասնության պատկանող անձանց զգալի թվաքանակով ավանդաբար բնակեցված տարածքներում ազգային փոքրամասնությունների լեզուներով ցուցանակների տեղադրումը՝ ոլորտում առկա միջազգային չափանիշների պարտադիր հաշվառմամբ:***

3. Վաղ ամուսնությունները ազգային փոքրամասնությունների համայնքներում

Հայաստանում շարունակում է մտահոգիչ լինել վաղ և հարկադիր ամուսնությունների խնդիրը: Թեև խնդիրը կարող է հանդիպել հանրապետության ամբողջ տարածքում, սակայն այն հատկապես տարածված և մտահոգիչ է ազգային փոքրամասնությունների առանձին, մասնավորապես՝ եզդիական համայնքում:

Մանկական կամ վաղ ամուսնություն է համարվում ցանկացած ամուսնություն, երբ կողմերից առնվազն մեկի 18 տարին չի լրացել: Հարկադիր ամուսնությունը սահմանվում է

[817] Հասանելի է https://rm.coe.int/5th-sr-armenia-am/16809ec233 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

որպես երկու անձանց միություն, որոնցից առնվազն մեկը չի տվել իր լիարժեք և ազատ համաձայնությունը ամուսնությանը[818]: Հարկ է նկատի ունենալ, որ հարկադիր ամուսնությունը խախտում է մարդու հիմնարար իրավունքները և չի կարող դիտարկվել որպես իրավաչափ երևույթ:

Վաղ ամուսնությունների հիմքում կարող են ընկած լինել մի շարք պատճառներ, օրինակ՝ կարծրատիպային մոտեցումները, խնդրի լատենտայնությունը, սոցիալական խնդիրները և այլն: Ազգային փոքրամասնության առանձին համայնքներ վաղ ամուսնությունները պայմանավորում են նաև ազգային ավանդույթներով[819]:

Նշված խնդրին անդրադարձել է Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը՝ «Բռնի ամուսնությունների և երեխաների ամուսնությունների մասին» 2005 թվականի բանաձևում[820]՝ նշելով, որ վրդովմունք է առաջացնում այն փաստը, որ կան իշխանություններ, որոնք գաղթական համայնքների մշակույթի և ավանդույթների նկատմամբ հարգանքի քողի լույսի ներքո հանդուրժողականություն են ցուցաբերում բռնի ամուսնությունների և երեխաների ամուսնությունների նկատմամբ՝ չնայած նրան, որ վերջիններս խախտում են յուրաքանչյուր զոհի հիմնարար իրավունքները:

Վեհաժողովն ընդգծել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի բանաձևի կարևորությունը, որով որոշ սովորույթները, ամուսնությանն ու ընտանիքին վերաբերող հնացած օրենքները և պրակտիկան անհամատեղելի են դիտարկվել ՄԱԿ-ի կանոնադրությունում ու Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ամրագրված սկզբունքներին:

Վաղ ամուսնությունները խնդրահարույց են նաև բացասական հետևանքների առաջացման, մասնավորապես՝ պարտադիր հանրակրթությունից դուրս մնալու, մի շարք իրավունքների, այդ թվում՝ առողջապահական և սոցիալական իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Առանձին դեպքերում վաղ ամուսնությունների բացասական հետևանքները կարող են դրսևորվել նաև ընտանիքում բռնության կիրառմամբ: Այդ առումով հարկ է ընդգծել, որ 2023 թվականին Պաշտպանի աշխատակազմ մուտքագրվել է դիմում՝ ազգային փոքրամասնության համայնքներից մեկում ընտանեկան բռնության դեպքի վերաբերյալ:

Վաղ ամուսնությունների բացասական հետևանքների առնչությամբ իրենց մտահոգությունն են հայտնել նաև միջազգային կազմակերպությունները:

Մասնավորապես՝ Շրջանակային կոնվենցիայի խորհրդատվական կոմիտեն[821] իր անհանգստությունն է հայտնել եզդիների շրջանում հանրակրթությունից դուրս մնալու բարձր ցուցանիշների առնչությամբ, հատկապես գենդերային կողմնակալությամբ պայմանավորված, քանի որ աղջիկներն ավելի շատ են դուրս մնում հանրակրթությունից, քան տղաները: Կոմիտեն նշել է, որ իշխանությունների կողմից շատ քիչ ջանքեր են գործադրվում այս խնդիրների լուծման ուղղությամբ: Գոյություն ունեն մի շարք գործոններ, որոնցից յուրաքանչյուրը նպաստում է այս իրավիճակին, և դրանք չի կարելի դիտարկել առանձին: Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ է համապարփակ ռազմավարություն, որը կմշակվի եզդիների մասնակցությամբ և նրանց համար:

Խորհրդատվական կոմիտեն հորդորել է իշխանություններին առաջնահերթ միջոցներ ձեռնարկել եզդի աշակերտների, հատկապես աղջիկների՝ հանրակրթությունից դուրս մնալու անհամաչափ բարձր ցուցանիշների դեմ պայքարելու ուղղությամբ:

---

[818] Հասանելի է https://rm.coe.int/media-guideline-arm-final/1680a15261 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[819] Առավել մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԱՐԱԴ1/0023/01/15 որոշումը:
[820] Հասանելի է https://www.refworld.org/legal/resolution/coepace/2005/en/34235 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[821] Հասանելի է https://rm.coe.int/5th-op-armenia-en/1680aa2a81 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Իշխանությունները պետք է տվյալներ հավաքագրեն և համագործակցեն քաղաքացիական հասարակության ու փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ՝ մշակելու և իրականացնելու հստակ ցուցիչներով ու արդյունքներով ռազմավարություն՝ դպրոցից դուրս մնալու ցուցանիշների նվազեցման նպատակով՝ հաշվի առնելով դրան նպաստող գործոնների ամբողջ շրջանակը:

Իր հերթին, պարտադիր հանրակրթությունից դուրս մնալու խնդիրը, ի թիվս այլնի, կարող է պայմանավորված լինել նաև ֆինանսական ծանր պայմաններով, երեխաների՝ աշխատանքում վաղաժամ ներգրավվածությամբ, համայնքում համապատասխան ենթակառուցվածքների բացակայությամբ[822]:

«Հայաստանում բնակվող ազգությամբ եզդի աղջիկների իրավունքներին և հնարավորություններին առնչվող խնդիրները» հետազոտության[823] մեջ, որն իրականացվել է Ֆերիկ և Ալագյազ համայնքներում, նկարագրվում են եզդի աղջիկների կրթական սահմանափակումները, որոնք պայմանավորված են ոչ այնքան ավանդական արժեքներով, որքան առկա ենթակառուցվածքների բացակայությամբ (մասնավորապես՝ ավագ դպրոցների կամ տրանսպորտի): Չնայած սոցիալական պայմաններին՝ ներկայիս դպրոցահասակ եզդի սերունդն ունի կրթությունը շարունակելու ձգտումներ և մասնագիտական նախընտրություններ, որոնք ոչ միշտ են իրականանում: Ըստ հետազոտության տվյալների՝ տղա աշակերտները դպրոցական տարիներին ձեռք են բերում անկախություն, այլ քաղաքներում կամ երկրներում սովորելու հնարավորություններ և այլն, մինչդեռ առևանգման վախով կամ գենդերային դերի համապատասխանությամբ պայմանավորված՝ աղջիկներից շատերը ստիպված են լինում իրենց ամբողջ ժամանակն անցկացնել տանը՝ կենցաղային աշխատանքներ կատարելով:

Ինչպես նշվեց, վաղ ամուսնությունները խնդրահարույց հետևանքների են հանգեցնում նաև առողջապահական իրավունքների տեսանկյունից:

Օրինակ՝ ըստ Առողջապահության նախարարության ներկայացրած տեղեկատվության՝ վաղ ամուսնությունները բացասական ազդեցություն են ունենում աղջիկների առողջության վրա: Դրանցից են բարդ ծննդաբերությունները, հետագա կյանքում ի հայտ եկող առողջական խնդիրները, երեխայի խնամքի հետ կապված հարցերը և այլն: 2000, 2005, 2010 թվականներին իրականացված ժողովրդագրական առողջապահական հետազոտությունները ցույց են տվել, որ մանկական մահացությունը շատ ավելի բարձր է կրթական ցածր ցենզ ունեցող մայրերի մոտ: Ըստ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2011 թվականին գրանցվել է 14-19 տարեկան աղջիկների 3372, իսկ 2021 թվականին՝ 1042 ծննդաբերություն: 2011 թվականին գրանցվել է 16-19 տարեկան աղջիկների 1747 վաղ ամուսնություն: 2021 թվականին այդ թիվը կրճատվել է՝ հասնելով 675-ի[824]:

Կոնկրետ դեպքերում վաղ կամ հարկադիր ամուսնությունները վկայում են քրեական օրենսդրությամբ արգելված արարքի առկայության մասին՝ ազատության, պատվի, արժանապատվության, ֆիզիկական կամ հոգեկան անձեռնմխելիության, սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված և այլ հանցագործությունների համատեքստում:

---

[822] Հասանելի է https://epfarmenia.am/sites/default/files/Document/Problems_of_Early_Marriage_and_School_Dropout_in_the_Yezidi_Community_2022_Armenian.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[823] Հասանելի է https://epfarmenia.am/sites/default/files/Document/Yezidi_Girls_Research_EPF_Arm.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[824] Հասանելի է https://www.1lurer.am/hy/2023/12/19/1/1049588 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Այս առումով Մարդու իրավունքների պաշտպանը հարկ է համարում ընդգծել, որ պետական իրավասու մարմինները պարտավոր են երաշխավորել նշված գործերի՝ պատշաճ և իրավունքի գերակայությանը բնորոշ չափանիշներին համապատասխան քննությունը՝ ապահովելով նշված դեպքերում պատասխանատվության անխուսափելիությունը:

Պաշտպանը ողջունելի է համարում վաղ ամուսնությունների և դրանց հետևանքների կանխարգելման ուղղությամբ քայլերի իրականացումը: Այդ առումով կարևոր էր 2023 թվականի դեկտեմբերին Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնակատար, Ազգային ժողովում եզդիական համայնքի ներկայացուցիչ Ռուստամ Բաքոյանի կողմից կազմակերպված աշխատանքային քննարկումը՝ նվիրված վաղ ամուսնության հարցերին, ազդեցություններին և այդ ոլորտում օրենսդրական բարեփոխումների իրականացմանը:

Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնակատար, Ազգային ժողովում եզդիական համայնքի ներկայացուցիչ Ռուստամ Բաքոյանի կողմից նախաձեռնվել են նաև խորհրդարանական լսումներ «Ամուսնությունների տարիքային շեմը բարձրացնելու նպատակով օրենսդրական բարեփոխումները՝ մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության համատեքստում» թեմայով:

Խորհրդարանական լսումների ընթացքում Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացրած տեղեկատվության համաձայն[825]՝ 2023-2024 ուսումնական տարվա դրությամբ հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորում են ազգությամբ եզդի 1319 աղջիկներ: 2023 թվականի ընթացքում 171 սովորող դուրս է եկել կրթական համակարգից: Երեխաների՝ կրթությունից դուրս մնալու շարժն ակնհայտ է ավագ դպրոցի տարիներին: Մասնավորապես, 10-րդ դասարանում նախորդ տարիների համեմատ դիտվում է սովորողների թվի 52,7%-ի չափով նվազում, 11-րդ դասարանում՝ 69,5%, իսկ 12-րդ դասարանում՝ 88,2%: Ըստ տեղեկատվության՝ վերջին 3 տարիների ընթացքում ազգային փոքրամասնությունների, մասնավորապես, ազգությամբ եզդի սովորողների թվի առումով բուհերում աճ է նկատվում: Մասնավորապես՝ 2020-2021 ուսումնական տարում բակալավրի կրթական աստիճանում եղել են ազգությամբ եզդի 34 ուսանողներ, որոնցից 9-ը՝ իգական սեռի ներկայացուցիչ: Մագիստրատուրայում կրթությունը շարունակել են ընդամենը 6 եզդի ուսանողներ, բոլորը՝ տղաներ: 2021-2022 ուսումնական տարում ուսանողների թիվը փոքր-ինչ ավելացել է. բակալավրում այն կազմել է 40 (13-ը՝ աղջիկ), իսկ մագիստրոսական աստիճանում կրթությունը շարունակել են ընդամենը 5 ուսանողներ: 2022-2023 ուսումնական տարում բակալավրում եղել են 55 ուսանողներ, որոնցից 17-ը՝ աղջիկ: Մեկ տղա էլ կրթությունը շարունակել է մագիստրատուրայում:

Ըստ ներկայացված տեղեկատվության՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը ձեռնարկում է քայլեր՝ վաղ ամուսնությունների խնդիրը կանխելու նպատակով: Մասնավորապես, հանրակրթության պետական նոր չափորոշչի ներդրման շրջանակում դպրոցներում ներդրվել է առողջ ապրելակերպի դասավանդման պարտադիր խմբակ: Վերջինս, իր հերթին, կարող է նպաստել երեխաների՝ վաղ ամուսնությունների, դրանց հնարավոր բացասական հետևանքների վերաբերյալ տեղեկացվածության բարձրացմանը:

[825] Հասանելի է https://escs.am/am/news/20718 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Ըստ նախարարության ներկայացրած տեղեկատվության՝ նախորդ տարեվերջին լրամշակվել է պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգը, որը գործում է դեռ 2021 թվականից: Հստակ առանձնացվել են ընթացակարգերը, և դրան համապատասխան՝ յուրաքանչյուր մարմին և գերատեսչություն գիտի իր անելիքները. տեղեկատվական համակարգն ամբողջությամբ ավտոմատացված է, ինչը հնարավորություն է տալիս ինչպես բացահայտել պարտադիր կրթությունից դուրս մնացած, այնպես էլ դուրս մնալու ռիսկի տակ գտնվող երեխաներին: 6 աշխատանքային օր անընդմեջ բացակայող երեխաները համարվում են ռիսկի տակ գտնվող, և եթե բացակայության համար չկա հիմնավոր պատճառ, երեխաներին դպրոց հետ բերելու ուղղությամբ պետք է լրացուցիչ աշխատանք կատարվի:

Պաշտպանը կարևորում է իրավասու մարմինների կողմից ձեռնարկված քայլերը՝ միաժամանակ արձանագրելով, որ կրթության իրավունքի իրացման և վաղ ամուսնությունների կանխարգելման հարցում էական նշանակություն ունեն նաև պարտադիր կրթությունից դուրս մնալու դեպքերի բացահայտման նպատակով իրականացվող աշխատանքները՝ նկատի ունենալով և այն, որ քննարկվող ամուսնությունները չեն կատարվում պետական գրանցման միջոցով, և շատ հաճախ խնդիրը կրում է լատենտային բնույթ: Միաժամանակ, Պաշտպանը այս գործընթացում արձանագրել է նաև մի շարք այլ համակարգային խնդիրներ, որոնց առավել մանրամասն անդրադարձ է կատարվել տարեկան հաղորդման «Երեխաների իրավունքներ» բաժնում:

Պաշտպանն ընդգծում է նաև, որ թեև ողջունելի են խնդրի հաղթահարմանն ուղղված օրենսդրական փոփոխություններ կատարելու նախաձեռնությունները, սակայն դրանք, առանձին վերցրած, չեն կարող լուծել ոլորտում առկա խորքային խնդիրները: Քննարկվող խնդրի հաղթահարմանն ուղղված քայլերը պետք է լինեն համակարգային, ամբողջական՝ նկատի ունենալով դրա հիմքում ընկած պատճառներն ու վերջիններիս հաղթահարման համար անհրաժեշտ կառուցակարգերը:

Այս համատեքստում բացառիկ կարևորություն ունեն իրավահավասարության և խտրականության արգելքի առնչությամբ հանրային իրավագիտակցության բարձրացմանն ու հանրային իրազեկմանն ուղղված աշխատանքները, կարծրատիպային մոտեցումների հաղթահարման ուղղությամբ համակարգային քայլերը:

Ամփոփելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***մշակել ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և խթանման հայեցակարգ, ռազմավարություն և դրանից բխող գործողությունների ծրագիր՝ հստակ անդրադառնալով նաև վաղ ամուսնությունների կանխարգելմանն ուղղված խնդիրների հաղթահարման կառուցակարգերին,***
- ✓ ***իրականացնել շարունակական վերապատրաստումներ կրթության ոլորտում ներգրավված անձանց համար՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների, այս ոլորտում առկա կարծրատիպային և ժամանակակից իրավունքի դոկտրինին չհամապատասխանող մոտեցումների հաղթահարման, իրավահավասարության և խտրականության արգելքի սկզբունքի առնչությամբ,***
- ✓ ***ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների, այս ոլորտում առկա կարծրատիպային և ժամանակակից իրավունքի դոկտրինին չհամապատասխանող մոտեցումների հաղթահարման, իրավահավասարության և***

խստրականության արգելքի սկզբունքի առնչությամբ իրականացնել լայնածավալ հանրային իրազեկման միջոցառումներ,

- ***ներդնել հստակ կառուցակարգեր՝ ուղղված ծնողների համար ծնողավարման հմտությունների ձեռքբերմանը վաղ ամուսնությունների կանխարգելման համատեքստում,***
- ***նկատի ունենալով այն, որ կոնկրետ դեպքերում վաղ ամուսնությունները վկայում են քրեական օրենսդրությամբ արգելված արարքի առկայության մասին, երաշխավորել նշված դեպքերում գործերի արդյունավետ քննությունն ու պատասխանատվության անխուսափելիությունը,***
- ***իրականացնել հանրային իրազեկման աշխատանքներ վաղ ամուսնությունների և դրանց բացասական հետևանքների առնչությամբ,***
- ***ոլորտին վերաբերելի խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներ նախաձեռնելիս և իրականացնելիս ապահովել պետություն-քաղաքացիական հասարակություն-համայնք դերակատարների պատշաճ ներգրավվածությունն ու համագործակցությունը:***

4. Ազգային փոքրամասնությունների մշակութային իրավունքների ապահովումը

Ազգային փոքրամասնությունների ինքնության պահպանման հարցում իր ուրույն տեղն ունի վերջիններիս մշակույթը:

Շրջանակային կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝
Կողմերը պարտավորվում են նպաստել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնք նրանց անհրաժեշտ են իրենց մշակույթը պահպանելու և զարգացնելու, ինչպես նաև ինքնության հիմնական տարրերը՝ կրոնը, լեզուն, ավանդույթները և մշակութային ժառանգությունը պահպանելու համար:

Ասվածին զուգահեռ՝ Սահմանադրության 56-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր ազգային և էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունք: Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք ունեն իրենց ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման ու զարգացման իրավունք:

Ոլորտային օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» օրենքի 8-րդ հոդվածով ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետությունն աջակցում է իր տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնության պահպանմանն ու զարգացմանը, պետական ծրագրերի իրականացման միջոցով նպաստում է նրանց կրոնի, ավանդույթների, լեզվի, մշակութային ժառանգության, մշակույթի պահպանման, տարածման և զարգացման համար պայմանների ստեղծմանը:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ վերջինիս «Ոչ պետական մամուլի հրատարակում» դրամաշնորհային ծրագրի առաջնահերթություններից է ՀՀ-ում գործող ազգային փոքրամասնությունների պարբերականներին աջակցելը: Այն միտված է ազգային փոքրամասնությունների լեզվի, կրոնի պահպանմանը, համայնքի մշակութային և հասարակական կյանքի լուսաբանմանը, մշակութային ժառանգության հանրահռչակմանը: Ծրագրի իրացումը լիակատար հավասարություն է ապահովում

ազգային փոքրամասնությունների և բնակչության մեծամասնության միջև: 2023 թվականի ընթացքում ֆինանսավորվել է ազգային փոքրամասնությունների 9 պարբերական:

Իրականացվել են միջոցառումներ մշակույթի տարբեր ոլորտներում. «Առնո Բաբաջանյան» համերգասրահում կայացել է «Տանիքը՝ Հայաստան» խորագրով համերգ՝ ազգային փոքրամասնությունների մասնակցությամբ: Երեկոն մեկնարկել է համերգասրահի ներքնահարկում՝ ազգային փոքրամասնությունները ներկայացնող կազմակերպությունների ղեկավարների և պատկան մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ պանելային քննարկմամբ: Դահլիճի ճեմասրահում զուգահեռ կայացել է կերպարվեստի և կիրառական արվեստի աշխատանքների ցուցահանդես, որից հետո ազգային երգի, պարի խմբերը և մենակատարները հանդես են եկել տոնական համերգային ծրագրով: Ծրագրի շրջանակում իրականացվել է 1 համերգ, 1 ցուցահանդես, 1 հանդիպում-քննարկում: Համերգին ներկա են գտնվել 400 հանդիսատես:

2023 թվականի ընթացքում կազմակերպվել են ազգային փոքրամասնությունների երաժշտական փառատոն, համերգներ, ցուցահանդեսներ: ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքում կազմակերպվել են դպրոցահասակ եզդի 60 երեխայի համար գեղագիտական ուղղվածությամբ «Լոռվա գունապնակ» խորագրով դասընթացներ:

Որպես ազգային փոքրամասնությունների մշակույթի պահպանման բաղադրիչ՝ մեր օրերում շատ են կարևորվում նաև զանգվածային լրատվության միջոցները, որոնք ազգապահպանության տեսանկյունից ևս ունեն իրենց ներդրումը:

Շրջանակային կոնվենցիան անդրադառնում է նաև ագային փոքրամասնությունների լրատվության միջոցների մատչելիության իրավունքին՝ որպես կարծիքն արտահայտելու ու տեղեկատվության ազատության իրավունքի իրացման կարևոր նախապայման:

Շրջանակային կոնվենցիայի 9-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝
Անդամ պետությունները չպետք է արգելեն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց կողմից տպագիր մամուլի միջոցների ստեղծումն ու օգտագործումը: Ռադիոյի և հեռուստահեռարձակման իրավական դաշտի շրջանակներում, որքանով դա հնարավոր է, Կողմերը ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար պետք է երաշխավորեն լրատվական սեփական միջոցների ստեղծման և օգտագործման հնարավորություն:

«Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասի՝ համապատասխանաբար «բ» և «ե» կետերի համաձայն՝ հանրային հեռարձակողները պարտավոր են սպառողներին մատուցել հաղորդումներ, որոնցում ներկայացվում են Հայաստանի Հանրապետության տարբեր տարածաշրջանների, ազգային փոքրամասնությունների, հասարակության տարբեր շերտերի ու սոցիալական խմբերի շահերը, Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների կյանքի և մշակույթի մասին հաղորդումներ հեռարձակելու նպատակով ոչ գիշերային ժամերին ազգային փոքրամասնությունների համար շաբաթական նվազագույնը 30 րոպե Հանրային տեսալսողական հեռարձակողների և 2 ժամ Հանրային լսողական հեռարձակողի եթերով տրամադրել եթերային ժամանակ:

Չնայած վերոնշյալ կարգավորումների առկայությանը՝ Փորձագետների կոմիտեն Հայաստանի կողմից Եվրոպական խարտիայի կիրառման վերաբերյալ 2021 թվականի հոկտեմբերի 1-ի զեկույցում[826] առաջարկել է՝

1. ապահովել հանրային հեռուստատեսությամբ ասորերեն լեզվով կանոնավոր և բավականաչափ երկարաժամկետ հեռարձակումը,

2. ապահովել հունարենով հանրային հեռուստատեսային ծրագրի կանոնավոր և բավականաչափ երկարաժամկետ հեռարձակումը,

3. ապահովել հանրային հեռուստատեսությամբ քրդերեն լեզվով կանոնավոր և բավականաչափ երկարաժամկետ հեռարձակումը,

4. ապահովել հանրային հեռուստատեսությամբ եզդիերեն լեզվով կանոնավոր և բավականաչափ երկարաժամկետ հեռարձակումը:

ԵԽ նախարարների կոմիտեն 2023 թվականի հունիսի 28-ի բանաձևում[827] առաջարկել է՝

1. ընդլայնել աջակցությունը ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին՝ իրենց լեզվական, կրոնական և մշակութային ինքնությունը պաշտպանելու և զարգացնելու հարցում: Անհրաժեշտ են նպատակաուղղված քայլեր՝ ազգությամբ փոքրաթիվ ազգային փոքրամասնությունների մշակույթի կարևոր բաղադրիչները վերակենդանացնելու համար: Պետք է մշակվի, կիրառվի և գնահատվի ազգային փոքրամասնությունների հարցերով համապարփակ ազգային ռազմավարություն՝ ազգային փոքրամասնությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ակտիվ ներգրավմամբ,

2. ձեռնարկել ակտիվ քայլեր՝ Հայաստանի էթնիկ բազմազանության, ինչպես նաև հասարակությունում ազգային փոքրամասնությունների մշակույթի, պատմության, ավանդույթների, կրոնների և լեզուների մասին տեղեկացվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ և բարելավել միջմշակութային երկխոսությունը:

Հարկ է նշել, որ Կառավարության 2021-2026 թվականների ծրագրով, ինչպես նաև ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությամբ նախատեսված չեն ծրագրեր կամ միջոցառումներ՝ ուղղված ազգային փոքրամասնությունների իրավունքներին ընդհանրապես, և մշակութային կյանքի զարգացմանը՝ մասնավորապես: Ինչ վերաբերում է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությանը և դրանից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագրին, ապա դրանում միայն ամրագրված է ազգային փոքրամասնությունների իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար օրենսդրական երաշխիքներ ստեղծելու գործողությունը: Մինչդեռ ազգային փոքրամասնությունների մշակութային կյանքը զարգացնելու, ինչպես նաև փոքրամասնությունների ներկայացուցիչներին մշակութային կյանքում ինտեգրելու վերաբերյալ միջոցառումներ նախատեսված չեն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ ***մշակել ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և խթանման հայեցակարգ, ռազմավարություն և դրանից բխող գործողությունների ծրագիր՝ հստակ անդրադառնալով նաև վերջիններիս մշակութային իրավունքների պաշտպանությանն ու խթանմանը առնչվող հարցերին,***

[826] Հասանելի է https://rm.coe.int/min-lang-2021-17-evalria5-armenia-en/1680a44d26 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[827] Հասանելի է https://search.coe.int/cm/pages/result_details.aspx?ObjectId=0900001680abccc9 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

- ✓ ***ապահովել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց մասնակցությունը մշակութային իրավունքների պահպանման և խթանման ոլորտում քաղաքականության մշակման և իրականացման աշխատանքներին,***
- ✓ ***ձեռնարկել համակարգային քայլեր՝ հանրային հեռուստատեսությամբ ազգային փոքրամասնությունների լեզուներով կանոնավոր և բավականաչափ երկարաժամկետ հեռարձակումն ապահովելու համար,***
- ✓ ***պարբերաբար նախաձեռնել և իրականացնել միջմշակութային միջոցառումներ (հատկապես՝ մարզային բնակավայրերում)՝ ամրապնդելով հանդուրժողական և միջմշակութային երկխոսության մթնոլորտը երկրի բնակչության մեծամասնության և ազգային փոքրամասնության համայնքների միջև,***
- ✓ ***իրականացնել տարատեսակ, այդ թվում՝ հանրային իրազեկման միջոցառումներ՝ ազգային փոքրամասնությունների մշակույթների, ավանդույթների վերաբերյալ հանրության տեղեկացվածության մակարդակը բարձրացնելու նպատակով:***

ԳԼՈՒԽ 2. ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը 2023 թվականի ընթացքում շարունակել է ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության և խթանման ուղղությամբ գործունեությունը: Տարվա ընթացքում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով անձի իրավունքների ոտնահարման վերաբերյալ Պաշտպանը ստացել է 9 դիմում-բողոք, այդ թվում՝ 4 գրավոր դիմում-բողոք և 5 հեռախոսազանգ Պաշտպանի աշխատակազմի թեժ գծի հեռախոսահամարին:

Ստացված դիմում-բողոքներից երեքն առնչվել են սեռական կողմնորոշման հիմքով ընտանեկան բռնության ենթարկվելու հանգամանքին, մյուս 3 դիմում բողոքները վերաբերել են սեռական կողմնորոշման հիմքով անհանդուրժողական, նվաստացնող վերաբերմունքին, որը դրսևորվել է մի դեպքում ոստիկանության ծառայողների, մյուս դեպքում՝ հոգեբուժական հաստատության աշխատակիցների, իսկ երրորդ դեպքում՝ զինված ուժերում ծառայակիցների կողմից: Գենդերային ինքնության հիմքով իրավունքների խախտման վերաբերյալ 2023 թվականի ընթացքում ստացվել է 3 դիմում-բողոք, որոնցից մեկն առնչվել է տրանս կնոջ սպանության դեպքին և այդ առնչությամբ սոցիալական ցանցերում տարածվող ատելության խոսքին, իսկ 2-ը՝ հավաքների ազատության իրավունքին:

Պաշտպանի աշխատակազմը ԼԳԲՏ անձանց իրավունքների վիճակը տարվա ընթացքում ուսումնասիրել է նաև զանգվածային լրատվամիջոցների և սոցիալական ցանցերի մշտադիտարկման միջոցով: Բացի այդ, շարունակվել է տրանս կնոջը ծեծի ենթարկելու դեպքի վերաբերյալ դեռևս 2022 թվականին սկսված քննարկման ընթացակարգը:

2023 թվականի ընթացքում իրականացվել են նաև սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության հարցերով՝ աշխատակազմի գիտելիքների կատարելագործման և զգայուն մոտեցումների ձևավորմանն ուղղված միջոցառումներ: Այսպես, նիդերլանդական COC Netherlands հասարակական կազմակերպության հետ համագործակցության շրջանակներում իրականացվել է սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության և սեռական հատկանիշներին առնչվող հարցերով Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձանց գիտելիքների և հմտությունների գնահատում՝ անանուն առցանց հարցման միջոցով:

Հարցման արդյունքների հիման վրա COC Netherlands հասարակական կազմակերպության աջակցությամբ անցկացվել է Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձանց երկօրյա վերապատրաստման դասընթաց՝ նվիրված ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրականության դեպքերին արձագանքման կարողությունների և զգայուն հաղորդակցության հմտությունների զարգացմանը:

1. ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության վիճակը ՀՀ-ում

Հասարակությունում ԼԳԲՏ անձանց նկատմամբ անհանդուրժող վերաբերմունք

Թեև ՀՀ-ում ԼԳԲՏ անձանց նկատմամբ վերաբերմունքի գնահատմանն ուղղված համապարփակ հետազոտություններ չեն իրականացվել, մի շարք հետազոտություններով հավաքագրված տվյալները, ինչպես նաև Պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկումը վկայում են այն մասին, որ հասարակությունում բավականին լայն տարածում ունեն ԼԳԲՏ

անձանց նկատմամբ անհանդուրժող վերաբերմունքն ու հոմոֆոբ[828] և տրանսֆոբ[829] գաղափարները:

Այսպես, Արժեքների համաշխարհային հետազոտության շրջանակներում 2021 թվականին Հայաստանում իրականացված հարցման համաձայն՝ հարցվածների 90.5%-ը նշել է, որ «նույնասեռականությունը երբեք չի կարող արդարացված լինել»: Բացի այդ, հարցվածների 82.1%-ը նշել է նույնասեռականներին այն անձանց թվում, որոնց նրանք չէին ցանկանա տեսնել որպես իրենց հարևանների: Հարցվածների 57.7%-ը նշել է, որ լիովին համաձայն չէ այն պնդման հետ, որ «նույնասեռական զույգերը նույնքան լավ ծնողներ են, որքան այլ զույգերը», իսկ 24.5%-ը նշել է, որ համաձայն չէ:[830]

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի (ՌԱԵՀ)՝ Հայաստանի վերաբերյալ 2023 թվականի զեկույց[831].

Հայաստանում շարունակում է գերակշռել ԼԳԲՏ անձանց նկատմամբ անհանդուրժողականությունը: ՌԱԵՀ-ն առաջարկել է ձեռնարկել հասարակության շրջանում բազմազանության և հանդուրժողականության կարևորության վերաբերյալ իրազեկման արշավներ՝ աջակցելով այս ուղղությամբ իրականցվող կոնկրետ միջոցառումներին և համագործակցելով Մարդու իրավունքների պաշտպանի և վերաբերելի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

2023 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքների ուսումնասիրությունը ևս վկայում է ԼԳԲՏ անձանց նկատմամբ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով անհանդուրժողական կամ խտրական վերաբերմունքի առկայության մասին:

Այսպես, Պաշտպանին ներկայացված 2 դիմում-բողոքը վերաբերել է տրանս կնոջ սպանությանը հաջորդող օրը ի հիշատակ վերջինիս իրականացված մոմավառության մասնակիցների վրա հարձակմանը:

Բացի այդ, 3 դիմում-բողոքով անձինք հայտնել են ընտանեկան բռնության դեպքերի մասին՝ նշելով, որ իրենց ընտանիքի անդամը նրանց նկատմամբ բռնություն է կիրառում՝ իրենց սեռական կողնորոշմամբ պայմանավորված: Նշված դեպքերից 2-ով բռնությունը կիրառվել է հոր կողմից որդու նկատմամբ, մեկ դեպքում՝ հոր և եղբայրների կողմից՝ համապատասխանաբար որդու և եղբոր նկատմամբ: Դեպքերից մեկով Պաշտպանի աշխատակազմ ահազանգած անձը բռնության տեսակի վերաբերյալ մատնանշում չի կատարել, մյուս երկու դեպքում անձինք հայտնել են իրենց նկատմամբ ֆիզիկական և

[828] «Հոմոֆոբիա» հասկացությունը Եվրոպական միության հիմնարար իրավունքների գործակալության (FRA) կողմից բնորոշվում է որպես նույնասեռականության և գեյ, լեսբի և երկսեռական (բիսեքսուալ) անձանց նկատմամբ նախապաշարմունքներից բխող իռացիոնալ վախ և զզվանք: Հասանելի է https://fra.europa.eu/sites/default/files/fra_uploads/397-FRA_hdgso_report_part2_en.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[829] «Տրանսֆոբիա» հասկացությունը Եվրոպական միության հիմնարար իրավունքների գործակալության (FRA) կողմից բնորոշվում է որպես գենդերային անհամապատասխանությունից կամ գենդերային տրանսգրեսիայից իռացիոնալ վախ, ինչպես օրինակ առնական կանանցից կամ կանանցի տղամարդկանցից, տրանսգենդեր, տրանսեքսուալ անձանցից և ծննդյան պահին հաստատված սեռի վերաբերյալ գենդերային կարծրատիպերին չհամապատասխանող այլ անձանցից վախ կամ զզվանք: Հասանելի է՝ https://fra.europa.eu/sites/default/files/fra_uploads/397-FRA_hdgso_report_part2_en.pdf հղումով:

[830] Հարցման արդյունքները, մեթոդաբանությունը և այլ վերաբերելի տեղեկավությունը հասանելի են հետևյալ https://www.worldvaluessurvey.org/WVSDocumentationWV7.jsp հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[831] Տե՛ս Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի (ՌԱԵՀ)՝ Հայաստանի վերաբերյալ մշտադիտարկման վեցերորդ փուլի զեկույցը, 2023թ., էջեր 10, 16, հասանելի է https://rm.coe.int/sixth-report-on-armenia/1680ab9e33 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

հոգեբանական բռնության կիրառման մասին (դեպքերից մեկում հոգեբանական բռնությունը դրսևորվել է ծայրահեղ սոցիալական մեկուսացմամբ):[832]

Մարդու իրավունքների պաշտպանին փոխանցված տեղեկատվությամբ՝ «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ն հայտնել է, որը 2023 թվականի ընթացքում արձանագրվել է մարդու իրավունքների խախտման 51 դեպք, որոնցից 49-ի պարագայում առկա են անհատ տուժողներ, իսկ 2-ը ԼԳԲՏ համայնքի դեմ ուղղված ատելության խոսքի ծանր դրսևորումներ են՝ բռնության կոչեր կամ արդարացում: Դեպքերից 22-ը ընտանեկան բռնության դեպքեր են, որոնց տուժողներից 5-ն են դիմել ոստիկանություն:

Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով ատելության խոսքը և բուլինգը

2023 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմն արձանագրել է ԼԳԲՏ անձանց նկատմամբ առցանց հարթակներում, հատկապես՝ սոցիալական ցանցերում ատելության հրահրման և բռնություն քարոզելու դեպքեր:

Մասնավորապես, ատելության խոսք պարունակող մեծաքանակ հրապարակումներ են կատարվել հատկապես 2023 թվականի օգոստոսի 21-ին տեղի ունեցած՝ տրանս կնոջ սպանության դեպքի առթիվ: Պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկումը ցույց է տվել, որ սոցիալական ցանցերում տարածվել են ինչպես սպանված կնոջ, այնպես էլ ընդհանուր առմամբ տրանս անձանց նկատմամբ ատելություն հրահրող, բռնություն քարոզող և արդարացնող գրառումներ: Ի թիվս այլնի, տարածվել են սպանությունն արդարացնող գրառումներ՝ հաշվի առնելով տուժողի տրանս կին լինելու հանգամանքը:

Դեպքի առթիվ Պաշտպանը հանդես է եկել հրապարակային հայտարարությամբ՝ դատապարտելով ինչպես սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության, այնպես էլ ցանկացած այլ հիմքով ատելության խոսքի և բռնության կոչերի տարածումը[833]:

2023 թվականի ընթացքում արձանագրվել են նաև հանրակրթական ուսումնական հաստատություններում երեխաների նկատմամբ վերջիններիս իրական կամ ենթադրյալ սեռական կողմնորոշմամբ պայմանավորված բուլինգի դեպքեր դասարանի և դպրոցի երեխաների կողմից: Ընդ որում, Պաշտպանի աշխատակազմի ուսումնասիրության շրջանակներում հարցումներին մասնակցած ուսուցիչներն ու աշակերտները, նշելով սեռական կողմնորոշմամբ պայմանավորված բուլինգի դեպքերի մասին, արդարացրել են նման վերաբերմունքը: Նշված խնդիրն առավել մանրամասն ներկայացվել է «Բուլինգի հիմնախնդիրը ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում» վերտառությամբ Պաշտպանի արտահերթ զեկույցում, որը մշակվել և հրապարակվել է 2023 թվականին[834]:

Սեռական կողնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրական վերաբերմունքը պետական մարմիններում և պետության կողմից ստեղծված կազմակերպություններում

2023 թվականի ընթացքում Պաշտպանը ստացել է 4 դիմում-բողոք պետական մարմիններում կամ պետության կողմից ստեղծված ոչ առևտրային

[832] Ընտանեկան բռնության դեմ պայքարին առնչվող խնդիրներն առավել մանրամասն տե՛ս սույն հաղորդման «Կանանց իրավունքներ» բաժնում:
[833] Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2657 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[834] Զեկույցը հասանելի է https://www.ombuds.am/images/files/34b7bedf65b11eccc9be20dd5ee9d22a.pdf հղումով, էջ 34, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

կազմակերպություններում ԼԳԲՏ անձանց նկատմամբ սեռական կողմնորոշման հիմքով իրավունքների խախտման, խտրական վերաբերմունքի և արժանապատվությունը նվաստացնելու դեպքերի մասին:

Ներկայացված բողոքներն առնչվել են՝

1) հոգեբուժական կազմակերպությունում պահվող անձի նկատմամբ նրա սեռական կողմնորոշմամբ պայմանավորված վիրավորանքներ հնչեցնելուն,

2) ոստիկանության ծառայողների կողմից ձերբակալվածի նկատմամբ սեռական կողմնորոշմամբ պայմանավորված նվաստացուցիչ վերաբերմունք ցուցաբերելուն՝ սպառնալիքներ հնչեցնելուն և վիրավորելուն, ինչպես նաև առանց օրենքով սահմանված կարգի պահպանման ձերբակալվածի նամակագրությունն ընթերցելուն,

3) սպանված տրանս կնոջ հիշատակին անցկացված մոմավառության մասնակիցների վրա հարձակման պայմաններում ոստիկանության ծառայողների կողմից անգործություն դրսևորելուն:

Դիմում-բողոքների քննարկման ընթացակարգը սույն հաղորդման հրապարակման պահին դեռևս շարունակվում է: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով ԼԳԲՏ անձանց նկատմամբ հասարակությունում առկա լայնորեն տարածված անհանդուրժողական վերաբերմունքը, Պաշտպանն ընդգծում է, որ նշված անձինք խոցելի են նաև պետական մարմինների և կազմակերպությունների հետ փոխհարաբերությունների շրջանակներում:

Այս առումով, «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ից Պաշտպանի աշխատակազմին տեղեկացրել են, որ կազմակերպության կողմից 2023 թվականի ընթացքում արձանագրված 51 դեպքերից ընդամենը 12-ի դեպքում են տուժողները դիմել իրավապահ մարմիններին, իսկ 2-ը՝ սպանության և ինքնասպանության դեպքեր են. նշված դեպքերով քրեական վարույթ նախաձեռնելը քննչական մարմնի պարտականությունն է: «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ի տվյալներով այս պատկերը պայմանավորված է իրավապահ համակարգի նկատմամբ տուժողների անվստահությամբ: Անվստահությունն իր հերթին կապված է մի կողմից իրավապահ մարմինների խտրական և անհարգալից վերաբերմունքի հետ, մյուս կողմից՝ դեպքերի ոչ արդյունավետ և ոչ արդար քննությամբ:

ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե.
Կոմիտեն մտահոգություն է հայտնել ԼԳԲՏ անձանց բժշկական ծառայություններ մատուցելու հարցում բժշկական անձնակազմի անբավարար կարողությունների առնչությամբ և նշել, որ ԼԳԲՏ անձինք շարունակում են բախվել խարանի առողջապահական հաստատություններում, ներառյալ՝ անձնական տվյալների պաշտպանության իրավունքի ապահովման տեսանկյունից: Կոմիտեն կոչ է արել իշխանություններին ապահովելու ԼԳԲՏ անձանց առողջության պահպանման իրավունքի իրացումը՝ առանց խտրականության, ներառյալ՝ բժշկական անձնակազմի համար համապատասխան վերապատրաստումներ անցկացնելու միջոցով: (Կետեր 51-52)

ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության խնդիրները ՀՀ զինված ուժերում

2023 թվականին Պաշտպանին հասցեագրվել է 1 դիմում-բողոք զինված ուժերում պարտադիր ժամկետային զինվորական ծառայողի նկատմամբ ծառայակիցների կողմից նրա սեռական կողմնորոշմամբ պայմանավորված խտրական վերաբերմունքի դրսևորման վերաբերյալ: Զինծառայողը հայտնել է նաև, որ զինվորական հոսպիտալի բժշկական

անձնակազմն իր սեռական կողմնորոշման վերաբերյալ հայտնել է հոսպիտալում գտնվող այլ զինծառայողներին:

Զինված ուժերում սեռական կողմնորոշման հիմքով խտրական վերաբերմունքի դրսևորման դեպքի վերաբերյալ Պաշտպանին դիմում-բողոք է հասցեագրվել նաև 2021 թվականին[835]:

Նկատի ունենալով զինված ուժերում փոխհարաբերությունների և զինծառայողների կարգավիճակի առանձնահատկությունները և դրանով պայմանավորված՝ հավելյալ խոցելիությունը, ինչպես նաև հայաստանյան հասարակությունում առկա հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի բարձր մակարդակը՝ ԼԳԲՏ զինծառայողների իրավունքների, ներառյալ՝ խտրականությունից, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից զերծ լինելու, ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիության իրավունքների պաշտպանությունը պետք է լինի պետության առանձնահատուկ ուշադրության կենտրոնում:

Այս տեսանկյունից մտահոգիչ է նաև Պաշտպանության նախարարության ներկայացրած պարզաբանումն առ այն, որ զինծառայողի նույնասեռական կամ բիսեքսուալ լինելու վերաբերյալ տեղեկատվության առկայությամբ պայմանավորված՝ վերջինս անցել է համապատասխան բուժում զինվորական հոսպիտալում:

2. Օրենսդրական խնդիրներ

Սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը՝ որպես պաշտպանված հատկանիշ, խտրականությանը, ատելության խոսքին և ատելության հիմքով հանցանքներին վերաբերելի կարգավորումներում նախատեսված չլինելը

Պաշտպանի տարեկան հաղորդումներում տարիներ ի վեր (2016-2021 թվականներ) որպես ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանությանը վերաբերելի օրենսդրական խնդիր արձանագրվել է այն հանգամանքը, որ ՀՀ քրեական օրենսգրքով որպես արարքի որակյալ հատկանիշ չի նախատեսվում ատելության շարժառիթով հանցանքի կատարումը՝ պայմանավորված տուժողի սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ:

Նոր՝ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված քրեական օրենսգրքով էականորեն ընդլայնվել է այն հանգամանքների ցանկը, որոնցով պայմանավորված՝ ատելության շարժառիթով արարք կատարելը համարվում է որակյալ հատկանիշ: Այսպես, օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով որպես քրեական պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք նախատեսվում է հանցանքը ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության (...) շարժառիթով կատարելը: Այսինքն, օրենսգրքով նախատեսվում է պաշտպանվող հատկանիշների ոչ սպառիչ ցանկ, որի շրջանակներում կարող են ներառվել նաև անձի սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը՝ թողնելով դա իրավակիրառ մարմինների մեկնաբանությանը:

Այնուամենայնիվ, հատկապես հաշվի առնելով հայաստանյան հասարակությունում առկա՝ ԼԳԲՏ անձանց նկատմամբ անհանդուրժողականության բարձր մակարդակը՝ խնդրահարույց է սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը որպես պաշտպանվող հանգամանք ուղղակիորեն չնախատեսելը:

[835] Տե՛ս առավել մանրամասն տե՛ս 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումները, էջ 875, հասանելի է https://ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով:

Նույնական խնդիր առկա է նաև քրեական օրենսգրքի 203-րդ, 329-րդ և 330-րդ հոդվածների ձևակերպումներում, որոնցով քրեական պատասխանատվություն է նախատեսվում համապատասխանաբար խտրականության, ատելություն հրահրելու, ինչպես նաև բռնություն գործադրելու հրապարակային կոչերի համար, սակայն որպես պաշտպանվող հատկանիշ ուղղակիորեն չեն նախատեսվում տուժողի սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը:

ՀՀ քննչական կոմիտեի տվյալներով՝ 2023 թվականի ընթացքում անձի սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված նրան վիրավորելու, նրա արժանապատվությունը նվաստացնելու, վատ վերաբերմունք դրսևորելու վերաբերյալ հաղորդումներ կամ այլ կերպ պարզված դեպքեր չեն արձանագրվել: Միաժամանակ, Քննչական կոմիտեից հայտնել են, որ 2023 թվականի ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով նախաձեռնվել է 1 քրեական վարույթ, որը պայմանավորված է հաղորդում տված անձի սեռական կողմնորոշման հետ:

Այս առումով, հարկ է նշել, որ խտրականության, ատելության խոսքի, ատելության շարժառիթով հանցանքի դեպքերում սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքերի վերաբերյալ տվյալների բացակայությունը պայմանավորված է նաև նրանով, որ տարանջատված տվյալներ չեն հավաքագրվում: Ուստի՝ թեև սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը խտրականության և ատելության դրսևորումներ են, այնուամենայնիվ, անհրաժեշտ է վերջիններիս, որպես պաշտպանվող հանգամանք, օրենսդրությամբ ուղղակիորեն ամրագումը:

Նմանապես, սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը՝ որպես պաշտպանվող հատկանիշ, ուղղակիորեն նախատեսված չեն «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասով:

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովը (ՌԱԵՀ) Հայաստանի վերաբերյալ 2023 թվականի զեկույցում ևս խնդրահարույց է համարել այս հանգամանքը՝ նշելով, որ նման օրենսդրական կարգավորումները, ինչպես նաև այն, որ ԼԳԲՏ անձանց ընկալմամբ՝ իշխանությունները դժկամությամբ են արձագանքում հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի շարժառիթով հանցանքներին, կարող են հիմք հանդիսանալ անպատժելիության մթնոլորտի ստեղծման համար:

Հանձնաժողովը նաև մտահոգություն է հայտնել այն կապակցությամբ, որ նման պաշտպանվող հատկանիշներ նախատեսված չեն «Իրավահավասարության ապահովման մասին» օրենքի նախագծով[836]:

Սեռական կողմնորոշմանը և գենդերային ինքնությանն առնչվող հատկանիշների դասակարգումը՝ որպես հոգեկան և վարքային խանգարումներ

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 871-Ն հրամանով հաստատված Հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների վիճակագրական դասակարգչի (այսուհետ նաև՝ Հիվանդությունների վիճակագրական դասակարգիչ) 5-րդ՝ «Հոգեկան և վարքային խանգարումներ» գլխում ներառված են տրանսսեքսուալիզմը[837], սեռական

[836] Տե՛ս Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի (ՌԱԵՀ)՝ Հայաստանի վերաբերյալ 2023 թվականի զեկույցը, էջեր 10-11, 18-19, հասանելի է https://rm.coe.int/sixth-report-on-armenia/1680ab9e33 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[837] «Տրանսսեքսուալիզմ» հասկացությունը բնորոշվում է որպես հակառակ սեռի կերպարով ապրելու և շրջապատի կողմից ընդունվելու ցանկություն, որը սովորաբար ուղեկցվում է սեփական անատոմիական կառուցվածքից և սեռային պատկանելությունից դժգոհ լինելու

նույնականացման այլ խանգարումներ, ինչպես նաև սեռական հասունության խանգարումը[838], էգոդիստոնիկ սեռական կողմնորոշումը[839] և սեռական զարգացման և կողմնորոշման հետ կապված հոգեբանական և վարքային այլ խանգարումներ:

Հիվանդությունների վիճակագրական դասակարգիչը չի համապատասխանեցվել Հիվանդությունների միջազգային դասակարգչի 11-րդ թարմացմանը, որը չի ներառում սեռական կողմնորոշմանն առնչվող հիվանդություններ, իսկ «տրանսսեքսուալիզմ» տերմինի փոխարեն օգտագործում է «դեռահասների կամ մեծահասակների գենդերային անհամապատասխանություն» տերմինը, որը ներառված է ոչ թե «Հոգեկան և վարքային խանգարումներ», այլ «Սեռական առողջությանն առնչվող վիճակներ» գլխում:

Պաշտպանն ընդգծում է, որ սեռական կողմնորոշմանը և գենդերային ինքնությանն առնչվող անձնային հատկանիշները որպես հոգեկան և վարքային խանգարում նախատեսելը նպաստում է նրանց նկատմամբ խարանին և կարող է ամրապնդել հասարակությունում առկա նախապաշարմունքներն ու խտրական վերաբերմունքը, հատկապես՝ առողջապահական համակարգում[840]:

3. Պետական մարմինների աշխատանքը և քաղաքացիական հասարակության արձագանքը կատարված աշխատանքներին

ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանությունը ուղղակիորեն չի մատնանշվում որպես ռազմավարական նպատակ ՀՀ կառավարության ռազմավարական որևէ փաստաթղթով կամ գործողությունների ծրագրով: 2023 թվականի սեպտեմբերի 28-ին ՀՀ կառավարության թիվ 1674-Լ որոշմամբ ընդունվել է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագիրը, որով անդրադարձ չի կատարվում ԼԳԲՏ անձանց իրավունքներին:

Գործողությունների ծրագրով որպես առանձին միջոցառումներ նախատեսվել են «Իրավահավասարության ապահովման մասին» օրենքի լրամշակումը, ատելության խոսքի առավել մեղմ դրսևորումների համար վարչական կամ քաղաքացիական պատասխանատվության միջոցների նախատեսումը: Գործողությունների ծրագրով նախատեսվում են նաև խտրականության արգելքի թեմայով շարունակական վերապատրաստումների անցկացումը դատավորների, քննիչների, դատախազների, ոստիկանների, բժշկական, կրթական, սոցիալական ոլորտի աշխատողների համար, խտրականության, ատելության խոսքի և ատելության հիմքով հանցագործությունների քննության ուղեցույցների մշակումը, ինչպես նաև խտրականության արգելքի և ատելության խոսքի վերաբերյալ իրազեկման արշավների իրականացումը:

զգացումով: Նշվում է, որ հիվանդը ցանկանում է վիրահատվել կամ ստանալ հորմոնային բուժում, որպեսզի հնարավորինս համապատասխանի նախընտրած սեռին:

[838] Նշվում է, որ հիվանդը տառապում է սեփական սեռական պատկանելության կամ սեքսուալ կողմնորոշման անորոշությունից, ինչը հանդիսանում է տագնապի և դեպրեսիայի պատճառ:

839 Նշվում է, որ սեռի պատկանելությունը և սեռական կողմնորոշումը կասկած չեն հարուցում, սակայն ուղեկցող հոգեբանական և վարքային խանգարումների հետևանքով անհատը ցանկանում է փոխել դա և այդ նպատակով կարող է դիմել բժշկական միջամտության:

[840] Տե՛ս, օրինակ, Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով բռնությունից և խտրականությունից պաշտանության հարցերով ՄԱԿ անկախ փորձագետի զեկույցը, որում անդրադարձ է կատարվում սեռական կողմնորոշման և գենդերային բռնության հետ կապված հատկանիշները որպես հիվանդություններ դասակարգելու և ԼԳԲՏ անձանց նկատմամբ խարանի (այդ թվում՝ բշկական հաստատություններում), խտրականության և բռնության միջև կապին, թիվ A/HRC/35/36, կետ 58, հասանելի https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G17/095/53/PDF/G1709553.pdf?OpenElement հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

«Հավասարության ապահովման և խտրականության արգելքի վերաբերյալ արդի հարցեր» վերտառությամբ դասընթացով 2023 թվականին վերապատրաստվել են 107 դատավոր և դատավորի թեկնածու և 25 դատախազ:

2023 թվականին «Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը արձանագրել է ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների քննության հետ կապված իրավակիրառ պրակտիկայում առկա խնդիրներ՝ նշելով, որ իրավապահ մարմինները պատշաճ որակում չեն տալիս նման հանցանքներին: Հասարակական կազմակերպությունը նաև նշել է նման գործերով կրկնազոհացման, զոհին մեղադրելու և ատելության հիմքով հանցագործություններն արդարացնելու պրակտիկայի առկայության մասին[841]:

Կազմակերպությունն արձանագրել է նաև 2023 թվականին պաշտոնատար անձանց, այդ թվում՝ ոստիկանության ծառայողների կողմից արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և անձնական տվյալների գաղտնիության իրավունքի խախտման դեպքեր: Հասարակական կազմակերպությունը նշել է ԼԳԲՏ անձանց խտրականությունից զերծ մնալու իրավունքի պաշտպանության գործուն մեխանիզմների բացակայության մասին[842]:

«Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպությունը 2023 թվականին հրապարակած զեկույցով ներկայացրել է Մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարությունից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրի շրջանակներում պաշտպանական ոլորտի միջոցառումների մշտադիտարկման արդյունքները: Զեկույցով նշվել է, որ գործողությունների ծրագիրը անդրադարձ չի կատարում զինված ուժերում սեռական կողմնորոշման հիմքով խտրականության բացառման և ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշպանության հարցերին այն դեպքում, երբ կազմակերպության ուսումնասիրությունները վկայում են զինված ուժերում ԼԳԲՏ անձանց ճնշելու և նվաստացման դեպքերի մասին[843]:

Դատախազության տրամադրած տվյալներով՝ ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան և «Վորլդ վիժն» միջազգային հասարակական կազմակերպության՝ «Միասին ընդդեմ մարդկանց թրաֆիքինգի» ծրագրի շրջանակներում ՀՀ գլխավոր դատախազության համապատասխան ներկայացուցիչները ներգրավված են եղել «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման վերաբերյալ քրեական վարույթներով զոհակենտրոն մոտեցումների և զոհակենտրոն քննության ապահովմանն ուղղված» մոդուլի մշակման աշխատանքային խմբում: Կազմված մոդուլի արդյունքներով Արդարադատության ակադեմիայում 2023 թվականի ընթացքում իրականացվել են սեմինարներ դատախազների, քննիչների և ոստիկանների համար: Բացի այդ, մոդուլի արդյունքներն արտացոլված են դատախազների վերապատրաստման շրջանակում անցկացվող «Անչափահաս կամ խոցելի այլ խմբերի պատկանող անձանց իրավունքների պաշտպանություն» դասընթացում: 2023 թվականի ընթացքում հիշյալ դասընթացի շրջանակներում վերապատրաստվել են շուրջ 50 դատախազներ, քննիչներ և ոստիկաններ:

---

[841] Հասանելի է https://pinkarmenia.org/news-events/եահկ-ժիմիգ-ի-տվյալները-2022-թ-ի-ընթացքում-ի/ հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[842] Հասանելի է https://pinkarmenia.org/news-events/2023%D5%A9-%D5%AB%D5%B6-%D5%A1%D6%80%D5%B1%D5%A1%D5%B6%D5%A1%D5%A3%D6%80%D5%BE%D5%A1%D5%AE-%D5%AC%D5%A3%D5%A2%D5%BF-%D5%A1%D5%B6%D5%B1%D5%A1%D5%B6%D6%81-%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%B8%D6%82%D5%B6/ հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[843] Տե՛ս «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի զեկույցը, 2023թ., էջեր 83-84, հասանելի է https://peacedialogue.am/wp-content/uploads/2023/05/Final_Report.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Քննչական կոմիտեից տեղեկացրել են, որ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածով (խտրականություն) նախատեսված թեմաներով վերապատրաստվել է 57 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ (քննիչների 7.31%-ը), դասընթացը ներառել է քրեական իրավունքի և դատավարության ոլորտում Եվրոպական կոնվենցիայով և միջազգային այլ պայմանագրերով երաշխավորված իրավունքների (այդ թվում՝ կյանքի իրավունքի, խոսքի ազատության և ազգային անվտանգության ապահովման հիմնախնդիրների, անձի ազատության և անձնական անձեռնմխելիության, մասնավոր կյանքի անձեռնմխելիության, անկախ դատաքննության իրավունքների պաշտպանության, անթույլատրելի ապացույցների օգտագործման արգելքի, խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի արգելքի, ռասիզմի և այլ խտրականության արգելքի) պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և ՀՀ նկատմամբ դրա կիրառման հիմնահարցերը, ինչպես նաև վերոհիշյալ հիմնահարցերի վերաբերյալ վերջին տարիներին ՄԻԵԴ իրավական դիրքորոշումները և քննչական պրակտիկայում դրանց կիրառման հմտությունները: ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ (Ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքը, ինչպես նաև այդ նպատակով նյութեր կամ առարկաներ տարածելը) և 330-րդ (Բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը, ինչպես նաև այդ նպատակով նյութեր կամ առարկաներ տարածելը) հոդվածներով նախատեսված թեմաներով վերապատրաստում չի իրականացվել:

Քննչական կոմիտեից հայտնել են նաև, որ Հունգարիայի Բուդապեշտ քաղաքում կայացած «ԱՄՆ դեսպանության թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության» գրասենյակի կողմից Բուդապեշտի միջազգային ակադեմիայում «Ընտանեկան և գենդերային բռնություն» թեմայով կազմակերպված դասընթացին մասնակցելու նպատակով գործուղվել է 3 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ իրականացնել ԼԳԲՏ անձանց նկատմամբ հանրության վերաբերմունքի առնչությամբ ուսումնասիրություն՝ պարզելու համար հասարակությունում առկա հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի տարածվածությունը, առկա հիմնական կարծրատիպերը,

✓ իրականացնել հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի, ԼԳԲՏ անձանց վերաբերյալ առկա կարծրատիպերի վերացմանն ուղղված հանրային իրազեկման արշավներ,

✓ անմիջականորեն հասցեավորել ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելության խոսքի և բուլինգի դրսևորումներն ատելության խոսքի և բուլինգի դեմ իրականացվող միջոցառումների շրջանակներում,

✓ վերապատրաստումներ իրականացնել ոստիկանների, քննիչների, դատախազների և դատավորների համար՝ ուղղված ԼԳԲՏ անձանց նկատմամբ զգայուն, ոչ խտրական մոտեցումների ձևավորմանը,

✓ վերապատրաստումներ իրականացնել բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձնակազմի համար՝ ուղղված ԼԳԲՏ անձանց նկատմամբ զգայուն, ոչ խտրական մոտեցումների ձևավորմանը և անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ կարողությունների զարգացմանը,

✓ լրացնել «սեռական կողնորոշումը» և «գենդերային ինքնությունը»՝ որպես պաշտպանվող հատկանիշ ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ, 329-330-րդ

հոդվածներում, ինչպես նաև «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 9-րդ հոդվածում,

✓ փոփոխություններ կատարել ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 871-Ն հրամանով հաստատված Հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների վիճակագրական դասակարգչում կամ հաստատել նոր դասակարգիչ՝ այն համապատասխանեցնելով Հիվանդությունների միջազգային դասակարգչի 11-րդ թարմացմանը:

ԳԼՈՒԽ 3. ՍԵՌԱԿԱՆ ՈՏՆԶԳՈՒԹՅՈՒՆ

Սեռական ոտնձգությունը գենդերային խտրականության դրսևորում է, ինչը հակասում է կանանց և տղամարդկանց միջև իրավահավասարության սկզբունքին:

Եվրոպայի խորհրդի Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի մասին կոնվենցիա (Ստամբուլյան կոնվենցիա), Հոդված 40[844].

Սեռական ոտնձգությունը սեռական բնույթի խոսքային, ոչ խոսքային կամ ֆիզիկական գործողությամբ դրսևորվող ցանկացած վարքագիծ է, որը նպատակ ունի խոցելու անձի արժանապատվությունը կամ հանգեցնում է դրան, մասնավորապես՝ ճնշող, թշնամական, նվաստացուցիչ, նվաստացնող կամ վիրավորական մթնոլորտ ստեղծելը և ենթակա է քրեական կամ որևէ այլ պատասխանատության:

2023 թվականի ընթացքում սեռական բռնության դեմ պայքարում առկա խնդիրները գտնվել են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության ներքո: Պաշտպանը հատուկ կարևորել է Պաշտպանին առընթեր կանանց իրավունքների հարցերով խորհրդի դերը գենդերային հիմքով բռնության ցանկացած դրսևորման և սեռական ոտնձգության դեմ պայքարի ոլորտում՝ որպես յուրօրինակ կամուրջ պետության և քաղաքացիական հասարակության միջև:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ հաշվետու տարում Մարդու իրավունքների պաշտպանը միացել է «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ» ամենամյա միջազգային քարոզարշավին, որի նպատակն է եղել բարձրացնել գենդերային հիմքով բռնության և սեռական ոտնձգության անթույլատրելիության վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակը[845]: Քարոզարշավի շրջանակներում Պաշտպանի նախաձեռնությամբ իրականացվել են սեռական ոտնձգության թեմայի վերաբերյալ հանրությանը իրազեկող հրապարակումներ և կազմակերպվել են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ հանդիպումներ: Իրազեկող նյութերը մշակվել են «Եվրամիությունը հանուն գենդերային հավասարության՝ բարեփոխումների օգնության պատուհան» ծրագրի շրջանակում՝ Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ:

2023 թվականի դեկտեմբերի 5-ին տեղի է ունեցել Պաշտպանին առընթեր կանանց իրավունքների հարցերով հասարակական խորհրդի նիստը՝ նվիրված «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ» քարոզարշավին: Նիստում քննարկվել են «Սեռական ոտնձգությունն աշխատավայրում և ուսումնական հաստատություններում» թեմաները:

Նիստի ընթացքում հատկապես կարևորվել է ինչպես սեռական ոտնձգության դեպքերի մասին հաղորդման և դրանց քննության, այնպես էլ դրանց բոլոր փուլերի նկատմամբ պատշաճ հսկողություն իրականացնելու օրենսդրական կառուցակարգերի և ընթացակարգերի սահմանումը ինչպես ուսումնական հաստատություններում, այնպես էլ աշխատավայրում: Քննարկման արդյունքում խորհրդի անդամները եզրահանգել են, որ անհրաժեշտ է աշխատանքներ տանել ՀՀ-ում գործող բոլոր ուսումնական հաստատությունների, հատկապես՝ բուհերի հետ՝ մշակելով սեռական ոտնձգության

[844] Տե՛ս Եվրոպայի խորհրդի Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին կոնվենցիան, 2011, հոդված 40, հասանելի է https://rm.coe.int/168008482e հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[845] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2791, https://ombuds.am/am/site/ViewNews/2798, https://ombuds.am/am/site/ViewNews/2798 հղումներով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

կանխարգելման քաղաքականություններ, ինչպես նաև իրականացնել լայնամասշտաբ իրազեկման աշխատանքներ:

Կարևորելով աշխատավայրում և ուսումնական հաստատություններում սեռական ոտնձգության հարցերում քաղաքացիական հասարակության ներդրումն ու այդ հարցի լուծմանը պետական մարմինների ներգրավվածության անհրաժեշտությունը՝ 2023 թվականի դեկտեմբերի 4-ին Պաշտպանը մասնակցել է նաև «Կանայք սեռական բռնության մասին. ընկալումներ, փորձառություն» և «Սեռական ոտնձգությունը ուսումնական հաստատություններում» թեմաներով հետազոտությունների շնորհանդեսին և հանդես եկել ողջույնի խոսքով[846]:

Դեռևս 2022 թվականին Պաշտպանը, կարևորելով հանրային ոլորտում աշխատավայրում սեռական ոտնձգության կանխարգելման միջոցառումների իրականացումը, հաստատել է Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները, որոնք բխում են «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի սկզբունքներից: Վարքագծի կանոնները կարգավորում են պաշտոն զբաղեցնող անձի բարեվարք գործելակերպը ծառայողական կամ պայմանագրային պարտականությունների կատարման ընթացքում և դրանից դուրս՝ տարածվելով Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող բոլոր անձանց նկատմամբ: Վարքագծի կանոններով սահմանվում է նաև, որ պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է զերծ մնալ ոտնձգության ցանկացած դրսևորումից, այդ թվում՝ սեռական ոտնձգությունից: Միաժամանակ, պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է զերծ մնալ Պաշտպանի աշխատակազմում սեռական ոտնձգության դեպքերի մասին հաղորդած անձի նկատմամբ այդ հիմքով նվազ բարենպաստ, ոչ հարգալից կամ ոչ բարեկիրթ վերաբերմունք դրսևորելուց[847]:

1. Սեռական ոտնձգությունն աշխատավայրում

ԱՄԿ թիվ 111 կոնվենցիայի և ԱՄԿ փորձագետների հանձնաժողովի 2002 թվականի Կոնվենցիաների և հանձնարարականների կիրառման վերաբերյալ ընդհանուր դիտարկման համաձայն (ԱՄԿ Փորձագետների հանձնաժողով)՝ աշխատավայրում սեռական ոտնձգության հիմնական դրսևորումները երկուսն են՝ ծառայություն

[846] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2790 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[847] Տե՛ս Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները, 2022թ., հասանելի է https://ombuds.am/images/files/3048e8fa9402101384132bd0f5914077.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

ծառայության դիմաց (quid pro quo) և անբարենպաստ աշխատանքային միջավայր (hostile working environment)[848]:

«Ծառայություն ծառայության դիմաց» սեռական ոտնձգության դեպքում գործատուն, վերադասը կամ այլ աշխատակից պարբերաբար ներկայացնում է սեռական բնույթի առաջարկներ, որոնք չընդունելու դեպքում անձին կարող են չընդունել աշխատանքի, նա կարող է կորցնել իր աշխատանքը կամ առաջընթացի վաստակած հնարավորությունը: *«Անբարենպաստ աշխատանքային միջավայր»* դրսևորման դեպքում սեռական բնույթի անցանկալի արտահայտությունները կամ վարքագիծը խոչընդոտում են աշխատանքին կամ ստեղծում են անբարենպաստ, թշնամանական կամ նվաստացուցիչ աշխատանքային միջավայր[849]:

ԱՄԿ փորձագետների հանձնաժողովի ընդհանուր դիտարկումներ[850].

Սեռական ոտնձգությունը խաթարում է աշխատավայրում հավասարությունը՝ ազդելով աշխատողների բարեկեցության և անձնական անձեռնմխելիության վրա, այն վնասում է գործատուին՝ թուլացնելով աշխատանքային հարաբերությունների հիմքը և բացասաբար ազդելով աշխատողների արդյունավետության վրա:

Հարկ է նշել, որ ՀՀ-ում աշխատավայրում սեռական բռնության դեմ պայքարի ոլորտում առկա է օրենսդրական կարգավորումների ու պատշաճ կառուցակարգերի լիարժեք ամրագրման խնդիր, այդ թվում՝ կանխարգելման քաղաքականության և արձագանքման ընթացակարգերի առումով: Միաժամանակ, առանցքային է նաև սեռական ոտնձգության դեպքերի վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացումը:

1.1 Օրենսդրական կարգավորումների և պատշաճ կառուցակարգերի անկատարությունը

Աշխատանքային իրավահարաբերությունների համատեքստում սեռական ոտնձգության ոլորտում կարևորություն ներկայացնող ԱՄԿ Աշխատանքի և զբաղվածության բնագավառում զբաղվածության մասին 1958 թվականի թիվ 111 կոնվենցիան ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 1995 թվականի հուլիսի 29-ից:

ԱՄԿ փորձագետների կոմիտեի Աշխատանքի և զբաղվածության ոլորտում խտրականության վերացման մասին թիվ 111 ԱՄԿ կոնվենցիայի վերաբերյալ ՀՀ կառավարությանն ուղղված ուղիղ հարցում, 2016թ[851].

Պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ կատարելու կամ առանձին օրենսդրական ակտ ընդունելու ուղղությամբ, որով կսահմանվեն սեռական ոտնձգության հասկացությունը, դրա արգելքը և պատժի կառուցակարգերը ինչպես «ծառայություն ծառայության դիմաց» (quid

[848] Տե՛ս ԱՄԿ-ի՝ աշխատավայրում սեռական ոտնձգության վերաբերյալ փաստաթուղթը, հասանելի է https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---dgreports/---gender/documents/briefingnote/wcms_738115.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[849] Տե՛ս նույն տեղում:

[850] Տե՛ս ԱՄԿ փորձագետների հանձնաժողովի Ընդհանուր դիտարկումները, 2003թ., հասանելի է https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORMLEXPUB:13100:0::NO::P13100_COMMENT_ID,P11110_COUNTRY_ID,P11110_COUNTRY_NAME,P11110_COMMENT_YEAR:3066659,,,2002 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[851] Տե՛ս ԱՄԿ փորձագետների հանձնաժողովի Հայաստանին ուղղված հարցումը, 2016թ., հասանելի է https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORMLEXPUB:13100:0::NO::P13100_COMMENT_ID:3300897 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

pro quo) ոտնձգությունների, այնպես էլ անբարենպաստ աշխատանքային միջավայր ստեղծելու հետ կապված ոտնձգությունների համար:

Աշխատավայրում բռնության ու ոտնձգությունների հարցերը կարգավորվում են նաև ԱՄԿ թիվ 190 Կոնվենցիայով, որը սահմանում է պետությունների պարտականությունները հարգելու, խրախուսելու և ապահովելու յուրաքանչյուրի՝ առանց բռնության և ոտնձգությունների աշխատանքի իրավունքի իրացումը: Այս առումով, Պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ ԱՍՀՆ-ից տեղեկացրել են, որ ՀՀ-ը նախաձեռնել է «Բռնության և ոտնձգության մասին» ԱՄԿ թիվ 190 կոնվենցիայի վավերացման գործընթացը, ինչը կարևոր նշանակություն ունի աշխատավայրում սեռական ոտնձգության կանխարգելման և բացառման համար:

ԱՄԿ բռնության և ոտնձգության մասին թիվ 190 կոնվենցիա.

Կոնվենցիան վավերացնող պետությունները պարտավոր են հարգել, խրախուսել և ապահովել յուրաքանչյուրի՝ առանց բռնության և ոտնձգությունների աշխատանքի իրավունքի իրացումը:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի Համընդհանուր պարբերական դիտարկման գործընթացի շրջանակում 2020 թվականին ներկայացրած երրորդ շրջանի զեկույցի պաշտպանությունից հետո ՀՀ-ին տրված հանձնարարականներում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդը առաջարկել է միջոցներ ձեռնարկել սեռական ոտնձգությունը սահմանելու, արգելելու և պատժելու համար[852]:

ՀՀ օրենսդրությամբ սեռական ոտնձգության սահմանումը տրվել է «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 21-րդ կետով: Ըստ այդմ՝

«գենդերային խտրականության դրսևորումների տեսակ՝ խոսքային կամ ֆիզիկական դրսևորում ունեցող սեռական բնույթի գործողություններ կամ ցանկացած իրավիճակ, որոնք ուղղված են անձի արժանապատվությունը նվաստացնելուն, վախեցնելուն, թշնամությանը, սպորացմանը կամ նմանատիպ իրավիճակներին»:

ԱՄՆ պետքարտուղարության Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրոն իր 2022 թվականի Հայաստանի վերաբերյալ ամփոփիչ ակնարկում նշել է, որ չնայած «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքն անդրադառնում է անառակաբարո գործողություններին և անվայելուչ պահվածքին, սակայն չի ներառում սեռական ոտնձգության բոլոր տարրերը: Ըստ ակնարկի՝ օրենքը ներառում է խոսքային կամ ֆիզիկական դրսևորում ունեցող սեռական բնույթի արարքներ կամ ցանկացած իրավիճակ, որն ուղղված է արժանապատվությունը նվաստացնելուն, ահաբեկմանը, թշնամանքին կամ նվաստացմանը: Այն չի ներառում նաև հղումներ «ծառայություն ծառայության դիմաց» (quid pro quo) տարրերին, ինչպիսիք են՝ պահանջներն առ այն, որ անհատն աշխատանքային կամ այլ համատեքստում համաձայնի սեռական պահանջների կատարմանը՝ դրանց դիմաց որևէ առավելություն կամ արտոնություն ստանալու համար[853]:

[852] Տե՛ս ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի հանձնարարականը, 2020թ., հասանելի է https://documents.un.org/doc/undoc/gen/g20/069/64/pdf/g2006964.pdf?token=0cGfhRA1Mfd0LWxVWw&fe=true հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[853] Տե՛ս ԱՄՆ պետական դեպարտամենտի Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրոն 2022 թվականի Հայաստանի վերաբերյալ ամփոփիչ ակնարկը, 2023թ., հասանելի է https://www.state.gov/reports/2022-country-reports-on-human-rights-practices/armenia/ հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Սեռական ոտնձգությունների կարգավորման խնդրին անդրադարձել է նաև ՄԱԿ-ի կանանց նկատմամբ խտրականության վերացման հանձնաժողովը Հայաստանի վերաբերյալ 2016 և 2022 թվականների իր եզրափակիչ դիտարկումներում: ***Կոմիտեն կոչ է արել ՀՀ-ին ընդունել աշխատավայրում սեռական ոտնձգություն հասկացությունը սահմանող և արգելող օրենսդրություն***[854]:

Հարկ է նշել, որ 2023 թվականի ընթացքում, որպես դրական առաջընթաց ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանվել են **աշխատանքում բռնության կամ սեռական ոտնձգության արգելքի սկզբունքն** (ՀՀ աշխ օր. հոդ. 3 և հոդ. 3.3**) ու սեռական ոտնձգության հասկացության սահմանումը** (ՀՀ աշխ օր. հոդ. 3.3, մաս 3**)՝ ի կատարումն միջազգային իրավական պարտավորությունների**:

Մասնավորապես, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3.3-րդ հոդվածի 3-րդ մասով սեռական ոտնձգությունը բնութագրվում է որպես *աշխատավայրում կամ աշխատանքային պարտականությունների կատարման այլ վայրում (ներառյալ՝ գործուղումները) սեռական բնույթի անցանկալի արարք, որն ունի ֆիզիկական կամ խոսքային կամ ոչ խոսքային դրսևորում (ներառյալ՝ սեռական բնույթի առաջարկները, հպումները), և որն ուղղակի կամ անուղղակի ազդում է անձի՝ աշխատանքի վերաբերյալ որոշումների կայացման վրա կամ ստեղծում է արժանապատվությունը նվաստացնող կամ սոցիալական մեկուսացման դրդող աշխատանքային միջավայր*:

Պաշտպանն ընդգծում է, որ ներպետական օրենսդրությամբ «սեռական ոտնձգություն» հասկացության՝ միջազգային չափանիշներին համահունչ սահմանումն ու դրա արգելքի ամրագրումն առանցքային նշանակություն ունի դեպքերի կանխարգելման տեսանկյունից:

Միաժամանակ, ԱՄՆ պետքարտուղարության Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրոյի Հայաստանի վերաբերյալ 2022 թվականի ակնարկում նշվել է, որ չկա հատուկ օրենք, որն արգելում է աշխատավայրում սեռական ոտնձգությունը կամ նախատեսում է քրեական պատիժներ կամ քաղաքացիական պաշտպանության միջոցներ աշխատավայրում սեռական ոտնձգությունների համար[855]:

Ստամբուլյան կոնվենցիայի վերաբերյալ բացատրական զեկույցում[856] նշվում է, որ Կոնվենցիայի 40-րդ հոդվածը սահմանում է այն սկզբունքը, որ սեռական ոտնձգությունը ենթակա է քրեական կամ *այլ* իրավական պատասխանատվության, ինչը նշանակում է, որ Ստամբուլյան կոնվենցիան նախագծողները թողել են պետության հայեցողությանը՝ ընտրելու ոտնձգողի համար նախատեսված պատասխանատվության միջոցը: Բացատրական զեկույցում նշվում է, որ թեև, ընդհանուր առմամբ, նախընտրելի է սեռական ոտնձգության արգելքը սահմանել քրեական օրենսդրությամբ, շատ ազգային իրավական համակարգերում սեռական ոտնձգությանն առնչվող հարցերը կարգավորվում են քաղաքացիական կամ աշխատանքային օրենսդրության ներքո:

ՀՀ քրեական օրենսգրքով անձի սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցակազմերը նախատեսված են 27-րդ գլխով, որոնց

[854] Տե՛ս ԿՆԽՎԿ-ի հանձնաժողովի, Հայաստանի վերաբերյալ 6-րդ և 7-րդ պարբերական զեկույցի եզրափակիչ դիտարկումներ, Հասանելի են https://www.refworld.org/policy/polrec/cedaw/2016/en/113973 (2016թ.) և https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CEDAW%2FC%2FSR.1913&Lang=en (2022թ.) հղումներով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[855] Տե՛ս ԱՄՆ պետական դեպարտամենտի Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրոն 2022 թվականի Հայաստանի վերաբերյալ ամփոփիչ ակնարկը, 2023թ., հասանելի է https://www.state.gov/reports/2022-country-reports-on-human-rights-practices/armenia/ հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[856] Տե՛ս ԵԽ Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի մասին կոնվենցիայի բացատրական զեկույցը, 2011թ., հասանելի է https://rm.coe.int/1680a48903 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

ցանկում աշխատանքային հարաբերություններում սեռական ոտնձգության համար քրեական պատասխանատվություն չի սահմանվում:

Թեև քրեաիրավական հարթությունում սեռական ոնտձգության համար պատասխանատվության միջոց նախատեսված չէ, Պաշտպանն ընդգծում է, որ սեռական ոտնձգությունից պաշտպանության և կանխարգելման հարցերում քրեական պատասխանատվությունը չի կարող լինել միակ և բավարար միջոցը՝ փոխարինելով իրավական պաշտպանության այլ միջոցներին:

Միաժամանակ, Պաշտպանը հատուկ նշում է, որ թեև Աշխատանքային օրենսգրքով ամրագրվում է աշխատողների նկատմամբ բռնությունների, սեռական ոտնձգության արգելքի սկզբունքը, այնուամենայնիվ, սկզբունքի ամրագրումն առանց դրա իրացումն ապահովող օրենսդրական կառուցակարգերի, չի կարող ծառայել իր նպատակին: Մասնավորապես, ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, անդրադարձ կատարելով սեռական ոտնձգությանը, չի սահմանում պատասխանատվության որևէ միջոց ոտնձգողի նկատմամբ: Բացի այդ, աշխատանքում սեռական ոտնձգության դեպքերի մասին հաղորդման ու դրանց քննության կարգ օրենսդրությամբ նախատեսված չէ:

Սեռական ոտնձգության ենթարկվող անձանց իրավունքների երաշխավորման տեսանկյունից հատկանշական է Աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածի 9-րդ մասով ամրագրված կարգավորումը, որով աշխատավայրում բռնության կամ սեռական ոտնձգության ենթարկված աշխատողին իր ցանկությամբ տրամադրվում է ամենամյա արձակուրդ՝ անկախ աշխատանքի կատարման ժամանակահատվածից:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 218-րդ հոդվածով աշխատանքում (աշխատավայրում) բռնության կամ սեռական ոտնձգության արգելքին, ինչպես նաև աշխատանքային հարաբերություններին վերաբերող հարցերը կանոնակարգվում են կազմակերպության ներքին կարգապահական կանոններով:

Պաշտպանը շեշտում է, որ թեև նախաձեռնվել և իրականացվել են ոլորտի օրենսդրության բարեփոխումներ, այնուամենայնիվ, պետք է հատուկ ընդգծել, որ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չեն «սեռական ոտնձգություն» եզրույթի աշխատանքային հարաբերություններում կիրարկման համար անհրաժեշտ օրենսդրական կառուցակարգեր: Օրենսդրությունը չի նախատեսում սեռական ոտնձգության դեպքերի կանխարգելման ու բացառման ոլորտում պետության ու գործատուի պարտականությունները, ինչպես նաև սեռական ոտնձգությունների կանխարգելման քաղաքականություն ընդունելու կարգավորումներ, դեպքերի վերաբերյալ բողոքների քննություն չիրականացնելու համար պատշաճ ընթացակարգեր: ՀՀ օրենսդրությամբ կարգավորված չեն նաև սեռական ոտնձգության դեպքում գործադրողի նկատմամբ առաջացող իրավական հետևանքները, ինչպիսիք են, օրինակ՝ կարգապահական պատասխանատվությունը և աշխատանքային պայմանագրի դադարեցումը: Այս պայմաններում չի ապահովվում աշխատավայրում սեռական ոտնձգության ենթարկվող անձանց իրավունքների, ներառյալ՝ արժանապատիվ աշխատանքի իրավունքի պաշտպանությունը:

Կարևոր է նաև «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը[857], որով ուղղակիորեն նախատեսվում է աշխատանքային հարաբերություններում խտրականության բնորոշումը, դրա արգելքը և թվարկվում են խտրականության տեսակները:

[857] Հասանելի է https://www.e-draft.am/projects/1801 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Նախագծի 9-րդ հոդվածը վերաբերում է աշխատանքային հարաբերություններում խտրականության արգելքի հետ կապված հարցերին՝ սահմանելով, որ աշխատանքային հարաբերություններում արգելվում է անձի նկատմամբ առանց օբյեկտիվ հիմքերի ցանկացած տարբերակում, բացառում, սահմանափակում կամ նախապատվություն, որի արդյունքում խախտվում է աշխատանքային հարաբերություններում իրավահավասարությունը, և անձը զրկվում է մյուսների համեմատ հավասար իրավունքներից և հնարավորություններից: Հարկ է նշել նաև, որ օրենքի նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանվում են նաև իրավահավասարությունն ապահովող սուբյեկտները, որոնց թվում է Մարդու իրավունքների պաշտպանը: «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը սույն զեկույցի հրապարակման պահին գտնվում է լրամշակման փուլում:

Հայաստանում շատ հաճախ աշխատավայրում սեռական ոտնձգության դեպքերը չեն բարձրաձայնվում՝ պայմանավորված այնպիսի գործոններով, ինչպիսիք են՝ աշխատանքը կորցնելու վախը, ոտնձգության դեպքի կատարված լինելուն չհավատալու մտահոգությունը, ամոթը, քննադատությունները, հասարակության կողմից թիրախավորվելը և այլն:

Այսպես, «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի իրականացրած հետազոտության արդյունքներով[858] սեռական ոտնձգության ենթարկված անձանց մեծ մասը՝ 87,0%-ը չի դիմել գործատուին, իսկ 98,6%-ը՝ որևէ պետական մարմնի կամ հասարակական կազմակերպության: Մասնակիցները ոտնձգության առնչվելիս գործատուին կամ մարդկային ռեսուրսների մասնագետին չդիմելու երկու առաջնային պատճառ են ներկայացրել՝ նախ, ոտնձգության ենթարկվում են հենց գործատուի կողմից, որի դեպքում միջոցը դառնում է առարկայազուրկ (28,0%): Բացի այդ, մասնակիցները նշել են, որ «չեն ցանկանում ավելորդ խոսակցությունների մեջ ընկնել» (28,3%)[859]:

Սոցիալական հարցումների արդյունքները ցույց են տվել, որ ոտնձգության առնչվելիս գործատուին կամ մարդկային ռեսուրսների մասնագետին չդիմելու պատճառներից է այն, որ սեռական ոտնձգության ենթարկված անձը մտավախություն ունի նաև շրջապատի կողմից չհասկացվելու, երևույթի սխալ մեկնաբանության հարցում: Հարցվածների 15,7%-ը չեն դիմել գործատուին՝ կարծելով, որ կատարվածի մեջ կմեղադրեն իրենց, 13,8%-ի դեպքերում կարծել են, որ իրենց չեն հավատա: Ոտնձգության ենթարկված անձիք չեն բարձրաձայնում խնդրի մասին՝ վախենալով, որ կկորցնեն աշխատանքը (9,4%)[860]:

Ելնելով հետազոտության արդյունքներից՝ կարող ենք եզրահանգել, որ ոտնձգության դեպքերի մասին չբարձրաձայնելու պատճառները պայմանավորված են ոտնձգության դեմ պայքարի քաղաքականության բացակայության ու հաճախ նաև հասարակությունում առկա որոշ ընկալումներով ու կարծրատիպերով:

---

[858] Հարցումներն իրականացրել է «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ն, որն արդյունքները հրապարակել է «Սեռական ոտնձգությունն աշխատավայրում» հետազոտությունում, հասանելի է https://womenofarmenia.org/wp-content/uploads/2023/01/%D5%8D%D5%A5%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B8%D5%BF%D5%B6%D5%B1%D5%A3%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6-%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A1%D5%BE%D5%A1%D5%B5%D6%80%D5%B8%D6%82%D5%B4-%D5%B0%D5%A5%D5%BF%D5%A1%D5%A6%D5%B8%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-1.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[859] Տե՛ս «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի «Սեռական ոտնձգությունն աշխատավայրում» հետազոտությունը, հասանելի է https://womenofarmenia.org/wp-content/uploads/2023/01/%D5%8D%D5%A5%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B8%D5%BF%D5%B6%D5%B1%D5%A3%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6-%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A1%D5%BE%D5%A1%D5%B5%D6%80%D5%B8%D6%82%D5%B4-%D5%B0%D5%A5%D5%BF%D5%A1%D5%A6%D5%B8%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-1.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[860] Տե՛ս նույն տեղում:

ԱՄԿ բռնության և ոտնձգության մասին թիվ 190 կոնվենցիա, Հոդված 4.

Գործատուները պետք է քայլեր ձեռնարկեն՝ իրենց վերահսկողության աստիճանին համապատասխան, որպեսզի կանխեն բռնությունն ու ոտնձգությունները աշխատանքային հարաբերություններում: Սա ներառում է, որքան հնարավոր է ողջամտորեն, աշխատավայրում քաղաքականության ընդունումն ու իրականացումը, վտանգների բացահայտումը և ռիսկերի գնահատումը, ինչպես նաև տեղեկատվության և ուսուցման տրամադրումը:

Աշխատավայրում սեռական ոտնձգությունների կանխարգելման և պատշաճ արձագանքման գործընթացի նկատմամբ վստահությունը բարձրացնելու հարցում կարևոր է այլ մասնակիցներին ներգրավելն ու նրանց դերակատարությունն ամրապնդելն՝ օրենսդրական մակարդակում վերջիններիս իրավունքների ու պարտականությունների հստակեցմամբ: Խոսքը, մասնավորապես, արհմիությունների, բժշկական օգնություն կամ ծառայություններ մատուցողների և այլ դերակատարների մասին է, ովքեր իրենց գործունեության բնույթով պայմանավորված՝ հաղորդակից են լինում աշխատավայրում ձևավորվող և փոփոխվող աշխատանքային ու միջանձնային հարաբերություններին:

ԱՄԿ թիվ 190 Կոնվենցիայով և թիվ 2019 թվականի բռնության և ոտնձգության վերաբերյալ թիվ 260 հանձնարարականով սահմանված միջոցառումների իրականացման գործում հիմնական գործընկերները աշխատողների կոլեկտիվներն են: Մասնավորապես, արհմիությունները խնդրին տալիս են տեսանելիություն ինչպես աշխատավայրում, այնպես էլ ազգային և ոլորտային մակարդակներում, հատկապես բռնության և ոտնձգությունների կանխարգելման և վերացման ուղիների բացահայտման նպատակով[861]:

Այսպիսով, Պաշտպանի դիտարկմամբ՝ պետության պարտականությունն ընդգրկում է ինչպես անհրաժեշտ օրենսդրության սահմանումը, այնպես էլ իրավունքի պաշտպանության արդյունավետ կառուցակարգերի (այդ թվում՝ ուղղված վնասների փոխհատուցմանը) մշակումն ու իրացումը: Միաժամանակ, Պաշտպանը կարևորում է սեռական ոտնձգությունների կանխարգելման քաղաքականության ընդունման գործատուների պարտականության ամրագրումն՝ անկախ աշխատողների քանակից:

Ի կատարումն միջազգային պարտավորությունների՝ Պաշտպանն ընդգծում է նաև, որ իրավունքների ապահովման երաշխավորման համար անհրաժեշտ է սահմանել քաղաքացիաիրավական, վարչական, կարգապահական պատասխանատվության միջոցներ սեռական ոտնձգության համար՝ նախատեսելով կատարված արարքի համար պատասխանատվության համաչափ տեսակներ՝ կախված արարքի հասարակական վտանգավորության աստիճանից:

1.2 Աշխատավայրում սեռական ոտնձգության դեպքերի վերաբերյալ իրազեկման աշխատանքներ

Սեռական ոտնձգության դեպքերի բացահայտման և դրանց հասցեագրման համար Պաշտպանը կարևորում է աշխատավայրում սեռական ոտնձգության կանխարգելման քաղաքականության մշակմանն ու իրականացմանը զուգահեռ հանրության

[861] Տե՛ս ԱՄԿ թիվ 190 Կոնվենցիայի և թիվ 260 Հանձնարարականի վերաբերյալ քաղաքականության համառոտագիրը, հասանելի է https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---ed_dialogue/---actrav/documents/briefingnote/wcms_749786.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

իրազեկվածության բարձրացմանն ուղղված շարունակական աշխատանքների իրականացումը:

ԱՄԿ թիվ 190 կոնվենցիայով իրազեկման միջոցառումների կազմակերպման պարտականությունները վերապահվում են գործատուին՝ սեռական ոտնձգության կանխարգելման քաղաքականության իրականացման համատեքստում: Ազգային մակարդակով նման օրենսդրական դրույթ նախատեսված չէ:

ԱՄԿ բռնության և ոտնձգության մասին թիվ 190 կոնվենցիայի 4-րդ հոդված.
Պետությունները, խորհրդակցելով գործատուների և աշխատողների ներկայացուցչական կազմակերպությունների հետ, պետք է ապահովեն նախաձեռնությունների, ներառյալ իրազեկման բարձրացման արշավների իրականացումը:

Սեռական ոտնձգության դրսևորումներն արգելելու և ոտնձգության ենթարկված անձանց իրավունքների պաշտպանության ու վերջիններիս նկատմամբ ճնշումները բացառելու նպատակով իրազեկման աշխատանքներ անհրաժեշտ է իրականացնել մի քանի ուղղություններով, ինչպիսիք են՝ նման դեպքերի կանխարգելման միջոցների վերաբերյալ աշխատողների իրազեկվածությունը բարձրացնելը և գործատուների կողմից նման վարքագիծը նույնացնելու կարողությունը զարգացնելը:

Ըստ ԱՍՀՆ-ի պարզաբանումների՝ 2023 թվականի ընթացքում սեռական ոտնձգությունների վերաբերյալ առանձնացված իրազեկման աշխատանքներ Նախարարությունը չի իրականացրել, սակայն կազմակերպվել են գենդերային բռնության, գենդերային հավասարության և այլ թեմաներով լուսաբանվող միջոցառումներ:

Պաշտպանը մտահոգիչ է համարում ինչպես, առհասարակ, հանրության շրջանում, այնպես էլ պետական համակարգի և մասնավոր հատվածի աշխատողների համար սեռական ոտնձգության դեպքերի մասին հաղորդման ընթացակարգերի մասին իրազեկման աշխատանքների բացակայությունը:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***ներդնել իրավական գործուն կառուցակարգեր՝ ներառյալ՝ հստակ օրենսդրական կարգավորումներ աշխատավայրում սեռական ոտնձգության դեմ պայքարում: Ընդ որում՝ իրավական կարգավորումներ սահմանելիս անհրաժեշտ է հստակ տարանջատել ինչպես պետական մարմինների գործառույթները, այնպես էլ գործատուների ու աշխատակիցների իրավունքների, պարտականությունների բնույթն ու ծավալը, նախատեսել համաչափ պատասխանատվության միջոցներ,***
- ✓ ***սահմանել գործատուի՝ սեռական ոտնձգությունների դեմ պայքարի քաղաքականություն ընդունելու պարտականությունը, որը պետք է ներառի սեռական ոտնձգությունների վերաբերյալ բողոքների ներկայացման ու դրանց քննության կարգն ու ժամկետները, ինչպես նաև սեռական ոտնձգության ենթարկված անձի իրավունքների պաշտպանության երաշխիքներն ու միջոցները,***
- ✓ ***հստակ սահմանել պետական լիազոր մարմնի՝ սեռական ոտնձգությունների դեմ պայքարի քաղաքականության ընդունման, դրա կիրարկման, սեռական ոտնձգության դեպքերի վերաբերյալ բողոքների քննության իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու լիազորությունը,***

- ✓ ***օրենսդրորեն սահմանել գործարքների համար սեռական ոտնձգության դեմ պայքարի քաղաքականության մշակման ուղենիշեր և չափանիշներ,***
- ✓ ***գործարքների համար մշակել սեռական ոտնձգությունների կանխարգելման և դրա հետևանքների վերացման ուղղությամբ հանրամատչելի ուղեցույցներ՝ սեռական ոտնձգության դեպքերի կանխարգելման և պաշտպանության գործընթացում ներգրավված անձանց ու մարմինների իրավունքների, պարտականությունների և լիազորությունների վերաբերյալ,***
- ✓ ***իրականացնել աշխատավայրում սեռական ոտնձգության արգելքի վերաբերյալ հանրության իրազեկվածությունը բարձրացնող աշխատանքներ՝ այդ թվում՝ իրազեկման արշավներ գործարքների ու աշխատողների շրջանում ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածի համար,***
- ✓ ***օրենսդրական կարգավորումների միջոցով ամրապնդել արհմիությունների դերը սեռական ոտնձգության դեմ պայքարի, այդ թվում՝ կանխարգելման հարցում:***

2. Սեռական ոտնձգությունը ուսումնական հաստատություններում

2023 թվականի ընթացքում Պաշտպանի ուշադրության ներքո են գտնվել նաև ուսումնական հաստատություններում սեռական ոտնձգության հարցերը:

Ուսումնական հաստատություններում բռնության ենթարկված անձանց պատշաճ աջակցություն չի ցուցաբերվում: Պատշաճ արձագանքի բացակայության պատճառներից են սեռական ոտնձգության ենթարկված անձանց ուղղորդման, արձագանքման ու ոտնձգության վերաբերյալ հաղորդման պատշաճ կառուցակարգերի, այդ թվում՝ օրենսդրական ընթացակարգերի անկատարությունն ու հստակ կանոնակարգումների բացակայությունը: Նշվածից բացի, նպաստող հանգամանքներ են անհետևողականությունն ու հաղորդակցման ոչ պատշաճ մակարդակը, ոտնձգության ենթարկված անձին չհավատալը, մեղադրելը, որոնք բխում են նաև հասարակությունում կարծրատիպային ընկալումներից ու մոտեցումներից, ինչպես նաև իրազեկվածության ցածր մակարդակից:

Թեև սեռական ոտնձգությունը հաճախ կրում է լատենտային բնույթ: Ոլորտում կատարված հետազոտությունները վկայում են, որ երևույթն առկա է բոլոր ուսումնական հաստատություններում[862], այդ թվում՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Հատկանշական է, որ դպրոցներում ոտնձգության դեպքերը հիմնականում արձանագրվում են համադասարանցիների կողմից: Հետազոտության տվյալներով՝ դպրոցում սեռական ոտնձգությունների գերակշռող մասը տեղի է ունեցել համադասարանցիների, իսկ մեկ քառորդ դեպքերում՝ ուսուցչի կողմից: Այսպես, այն հարցին, թե արդյոք հետազոտության մասնակիցներն իրենք կամ իրենց ծանոթներից մեկը երբևէ ենթարկվել են սեռական ոտնձգության կամ բռնության ուսումնական հաստատությունում, հարցվածների կեսից ավելին (66%) պատասխանել է «ոչ», մինչդեռ 19%-ը նշել է «այո»՝ իրենց ծանոթները, 8%-ը՝ հենց իրենք, իսկ 7%-ը՝ և՛ իրենք, և՛ իրենց ծանոթները: Մտահոգիչ է, որ «այո» պատասխանողների (454-ից 155-ը) կեսից ավելին

[862] Հանրակրթական ուսումնական և նախակրթական հաստատություններում արձանագրված սեռական ոտնձգության և բռնության դեպքերի, դրանց առնչությամբ Պաշտպանի նախաձեռնած գործողությունների և առաջարկությունների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը տե՛ս սույն հաղորդման «Երեխայի իրավունքներ» վերտառությամբ բաժնում:

(52%) նշել է, որ դեպքը տեղի է ունեցել դպրոցում (155-ից 81-ը), մեկ երրորդից ավելին (36%) նշել է՝ համալսարանում (155-ից 56-ը), իսկ ևս 12%-ը՝ քոլեջում (155-ից 18-ը) [863]:

Բուհերում պատկերն այլ է. սեռական ոտնձգության դրսևորումների մեծամասնության դեպքում ոտնձգողը դասախոսն է, իսկ շուրջ 10%-ի դեպքում՝ համակուրսեցիները: Հարցման ընթացքում պատասխանների մեջ նշվել են վարչական անձնակազմը, պահակը, անծանոթը, մեկ այլ ծնողը, իսկ որոշ հարցվողներ դժվարացել են նշել, թե ով է եղել[864]:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս նաև, որ ուսումնական հաստատություններում սեռական ոտնձգության դեպքերի համար նախատեսված չեն պատշաճ կանխարգելման և արձագանքման կառուցակարգեր, ինչի հետևանքով խնդիրը մնում է չբարձրաձայնված, և մեծանում է դրանց կրկնվելու հավանականությունը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն իր նախորդ տարեկան հաղորդումներում ընդգծել է հանրակրթական ուսումնական հաստատություններում երեխաների նկատմամբ կամ նրանց կողմից միմյանց նկատմամբ բռնության կասկածելի դեպքերի կանխարգելման, հայտնաբերման և հաղորդման ընթացակարգեր մշակելու անհրաժեշտության մասին[865]:

ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների մասին կոնվենցիա, Հոդված 28, մաս 2[866].

Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր օրենսդրական, վարչական, սոցիալական և կրթական միջոցները պաշտպանելու երեխային ծնողների, օրինական խնամակալների կամ երեխայի մասին հոգ տանող ցանկացած այլ անձի կողմից ֆիզիկական կամ հոգեկան բռնության բոլոր ձևերից, վիրավորանքից կամ չարաշահումից, հոգատարության բացակայությունից կամ անուշադրությունից, կոպիտ վերաբերմունքից կամ շահագործումից, ներառյալ՝ սեռական չարաշահումը: (Հոդված 19, մաս 1)

Մասնակից պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները երաշխավորելու համար, որ դպրոցական կարգապահությունն իրականացվում է երեխայի մարդկային արժանապատվության հետ համատեղելի մեթոդներով և Կոնվենցիային համապատասխան:

Բռնության դրսևորումները վաղ հայտնաբերելու և դրանք կանխարգելելու գործում Մարդու իրավունքների պաշտպանը հատկապես կարևորում է ուսումնական հաստատությունների առանցքային դերը: *Այս առումով Պաշտպանն ընդգծում է ուսումնական բոլոր հաստատություններում սեռական բռնության կանխարգելման, ինչպես նաև դեպքերի մասին հաղորդման և դրանց քննության քաղաքականության մշակման անհրաժեշտությունը:*

2023 թվականի նոյեմբեր ամսին ԱՄՀՆ-ն Պաշտպանի կարծիքին է ներկայացրել «Բռնության ենթարկված երեխայի՝ պաշտպանության կամ աջակցության տրամադրման նպատակով համապատասխան մարմիններ ուղղորդման կարգը, բռնության ենթարկված երեխային տրամադրվող աջակցության ձևերը և տրամադրման կարգը սահմանելու

[863] Հետազոտությունը իրականացրել է «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ-ն «Սեռական ոտնձգությունը ուսումնական հաստատություններում» թեմայով Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի «Կանանց դեմ բռնության վերացման ՄԱԿ-ի հավատարմագրային հիմնադրամ»-ի ծրագրի շրջանակներում, 2023թ. , 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[864] Տե՛ս նույն տեղում:

[865] Տե՛ս առավել մանրամասն տե՛ս 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումները, էջեր 1195-1200 հասանելի է https://ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[866] Տե՛ս ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների մասին կոնվենցիան, 1989թ., հասանելի է https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/convention-rights-child հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նախագծով երեխայի նկատմամբ բռնության դեպքի մասին տեղեկություն տրամադրող աղբյուրների շարքում նշված էին ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, զանգվածային լրատվամիջոցները կամ համացանցը և պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները կամ դրանց կազմակերպությունները:

Նախագծի վերաբերյալ իր կարծիքում Պաշտպանը նշել է, որ կրթական հաստատությունների և պետական մարմինների միջև կայուն համագործակցության հաստատումը հատկապես կարևորվում է երեխաների նկատմամբ բռնության դեպքերի բացահայտման տեսանկյունից: Ուստի՝ Պաշտպանն առաջարկել է Նախագծով նախատեսված անձանց և մարմինների շարքում ավելացնել նաև ուսումնական հաստատությունները՝ որպես երեխայի նկատմամբ բռնության հնարավոր դեպքերի մասին տեղեկատվություն տրամադրող սուբյեկտ: 2024 թվականի փետրվարի 12-ի Սոցիալական նախարարական կոմիտեի նիստում Պաշտպանի առաջարկն ընդունվել է և ուսումնական հաստատություններն ավելացվել են բռնության դեպքի մասին տեղեկություն տրամադրող սուբյեկտների ցանկում:

Վերոնշյալից բացի, հատկանշական է, որ 2022 թվականին շրջանառված և հանրային քննարկման դրված «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծով[867] նախատեսվում է բուհի և գիտական կազմակերպության պարտականությունը՝ հրապարակելու ակադեմիական բարեվարքության կանոնակարգը: Ըստ նախագծի՝ բարձրագույն կրթության և գիտության համակարգում լիազոր մարմինը մշակում և հաստատում է ակադեմիական բարեվարքության օրինակելի կանոնակարգը, իսկ գիտության համակարգում գիտության կոմիտեն՝ գիտական կազմակերպություններում ակադեմիական բարեվարքության կանոնակարգի մշակման մեթոդաբանական ուղեցույցը: Նախագծով նախատեսվել է նաև ուսանողի և Բուհի և գիտական կազմակերպության աշխատողի պարտականությունը պահպանել բուհի կամ գիտական կազմակերպության սահմանած ակադեմիական բարեվարքության կանոնակարգի պահանջները: Հարկ է նշել, որ ԿԳՄՍՆ-ից ստացված տեղեկատվության համաձայն՝ 2022 թվականին շրջանառված «Բարձրագույն կրթության և գիտության մասին» և հարակից օրենքների նախագծերի փաթեթը 2023 թվականի դրությամբ լրամշակման փուլում է:

Հետևաբար, նախագծային կարգավորման իրավական պահանջներին համապատասխան այլ գործուն կառուցակարգ, ընթացակարգ կամ քաղաքականություն դեռևս չի մշակվել:

Ուսումնական հաստատություններում սեռական ոտնձգության դեմ պայքարի հարցերում մտահոգություն է առաջացնում նաև իրազեկվածության պակասը: Նշվածը վերահաստատվում է նաև ոլորտի քաղաքացիական հասարակության գործունեության արդյունքներով: Մասնավորապես, հարցվածների 36%-ը նշել է, որ միանշանակ գիտի, թե ուր պետք է դիմի սեռական բռնության ենթարկված անձը, մյուս 44%-ը նշել է, որ մոտավոր գիտի, իսկ 20%-ը նշել է, որ տեղյակ չէ, թե ուր կարող է կամ պետք է դիմի սեռական բռնության ենթարկվածը[868]:

Միաժամանակ, ըստ ԿԳՄՍՆ-ից ստացած տեղեկությունների՝ ՀՀ-ում գործող բարձրագույն ուսումնական հաստատություններում սեռական ոտնձգության դեպքերի վերաբերյալ բողոքներ չեն ստացվել: Այնուամենայնիվ, նշվածը վկայում է ոչ թե սեռական

[867] Հասանելի է https://www.e-draft.am/projects/4788 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[868] Տե՛ս «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ-ի «Սեռական ոտնձգությունը ուսումնական հաստատություններում» թեմայով հետազոտությունը, 2023թ.:

ոտնձգության դեպքերի բացակայության, այլ ուսումնական հաստատություններում սեռական ոտնձգության դեմ պայքարի ընթացակարգերի վերաբերյալ իրազեկվածության ցածր մակարդակի մասին:

Այսպես, օրինակ՝ Երևանի պետական համալսարանում մշակվել է սեռական ոտնձգության դեպքերի կանխարգելման և հասցեագրման քաղաքականությունը, իրականացվում են ինստիտուցիոնալ բարեփոխումներ՝ խնդրի հասցեագրման ուղղությամբ: Հայկական պետական մանկավարժական համալսարանում ուսանողական խորհուրդը իրականացրել է իրազեկման հանդիպումներ, որոնց ընթացքում անդրադարձ է կատարվել սեռական ոտնձգության դեպքերի պատշաճ հասցեագրման մեխանիզմներին: Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի 2019 թվականին հաստատված Էթիկայի մշտական հանձնաժողովի աշխատակարգի 7-րդ հոդվածի 7.2 մասում «Հանձնաժողովի քննարկմանը ենթակա դիտարկվեիք հնարավոր խախտումների օրինակները» դրույթների շարքում ներառված է «սեռական բնույթի ոտնձգություն» կետը՝ ուղղված աշխատակիցների և ուսանողների համար սեռական ոտնձգության դեպքերից զերծ միջավայր ապահովելուն: Հայաստանում Ֆրանսիական համալսարանում գործում է կարգապահական հանձնաժողով, որն իր լիազորությունների շրջանակում կարող է զբաղվել վերոնշյալ խնդրով:

ԿԳՄՍՆ-ից ստացած տեղեկությունների հիման վրա՝ Պաշտպանը եզրահանգում է, որ որոշ համալսարաններում գործում են սեռական ոտնձգության դեպքերի արձագանքման ընթացակարգեր, որոնք, սակայն, լիարժեք չեն: Այնուամենայնիվ, ԿԳՄՍՆ-ից ստացված տեղեկություններով՝ 2023 թվականի ընթացքում կոնկրետ միջոցառումներ և գործողություններ չեն նախաձեռնվել ուսումնական հաստատություններում սեռական ոտնձգության դեպքերի պատշաճ հասցեագրման մեխանիզմների և ընթացակարգերի ներդրման ուղղությամբ:

Ուսումնական հաստատություններում սեռական ոտնձգության դեպքերի վերաբերյալ բողոքների բացակայությունը ևս փաստում է ինչպես կառուցակարգերի բացակայության, այնպես էլ դրանց մասին իրազեկվածության ցածր մակարդակի մասին:

Այսպիսով՝ Պաշտպանը հատուկ ընդգծում է ինչպես հասարակության, այնպես էլ ուսումնական հաստատություններում սովորողների, ուսուցչական, դասախոսական և վարչական անձնակազմի իրազեկվածության բարձրացման անհրաժեշտությունը, ինչն, առհասարակ, սեռական ոտնձգության դեմ պայքարի և, մասնավորապես, կանխարգելման միջոցներից մեկն է:

Այսպիսով՝ վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***ներդնել իրավական գործուն կառուցակարգեր՝ ներառյալ՝ հստակ օրենսդրական կարգավորումներ ուսումնական հաստատություններում սեռական ոտնձգության դեմ պայքարում՝ այդ թվում՝ ուսումնական հաստատություններում սեռական ոտնձգության դեպքերի մասին հաղորդման, քննության ու դրա համար պատասխանատվության կանոնակարգման նպատակով,***
- ✓ ***օրենսդրությամբ սահմանել սեռական բռնության դեմ պայքարի քաղաքականություն մշակելու ուսումնական հաստատությունների պարտականությունը և դրա ներդրման համար անհրաժեշտ ուղենիշային չափանիշները,***

- ✓ ***մշակել ուսումնական հաստատություններում ոտնձգության դեպքերի մասին հաղորդելու ընթացակարգերի և դրանց պատշաճ արձագանքի ապահովման նկատմամբ արդյունավետ վերահսկողական կառուցակարգեր,***
- ✓ ***իրականացնել ուսումնական հաստատությունների պատասխանատուների վերապատրաստումներ՝ սեռական ոտնձգության դեպքերը նույնացնելու, բացահայտելու, դրանք վարելու և պատշաճ ու զգայուն արձագանք ցուցաբերելու համար,***
- ✓ ***իրականացնել հանրության իրազեկման պարբերական աշխատանքներ, այդ թվում՝ ինչպես ուսումնական հաստատություններում սովորողների, այնպես էլ սովորող երեխաների ծնողների համար: Ընդ որում՝ անհրաժեշտ է հստակ սահմանել սովորողների վերապատրաստման դասընթացների ժամանակացույցը:***

ԳԼՈՒԽ 4. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ԻՄՈՒՆԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԻՐՈՒՍ/ՁԵՌՔԲԵՐՈՎԻ ԻՄՈՒՆԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇ (ՄԻԱՎ/ՁԻԱՀ) ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԻՄՔՈՎ

Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ-ի նկատմամբ դրական կարգավիճակ ունեցող անձանց թիվը՝ բնակչության թվի համեմատ բավականին բարձր տոկոս է կազմում: ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունեցող անձանց թիվը տարեց տարի աճում է: Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնի (ԻՀԱԿ) վիճակագրության տվյալներով Հայաստանի Հանրապետությունում 2023 թվականին ընթացքում գրանցվել է.

- ՄԻԱՎ վարակի 500 դեպք, որից 346-ը՝ արական (69,2%), 154-ը՝ իգական (30,8%) սեռի շրջանում:
- ՁԻԱՀ-ի 221 դեպք, որից 162-ը՝ արական (73,3%) և 59-ը՝ իգական (26,7%) սեռի շրջանում:
- Մահվան 79 դեպք, որից 61-ը՝ արական (77,2%) և 18-ը՝ իգական (22,8%) սեռի շրջանում:
- Երեխաների շրջանում (0-14 տարեկան) արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 5 դեպք:

2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ-ում ՄԻԱՎ-ով ապրող 0-14 տարեկան երեխաների թիվը կազմում է 44: Նրանցից 20-ն ունեն ՁԻԱՀ ախտորոշում:

ՄԻԱՎ-ով ապրողների բաշխվածությունն՝ ըստ սեռի, տարիքային խմբերի և փոխանցման ուղիների ներկայացվում է ստորև:







Մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունները՝ որպես մարդու իրավունքները խթանելու և պաշտպանելու հատուկ մանդատ ունեցող անկախ ազգային մարմիններ, կարևոր դերակատարություն կարող են ունենալ ազգային մակարդակում ՄԻԱՎ-ի դեմ պայքարի համար մշակված ռազմավարություններում համապարփակ և իրավունքահեն մոտեցում որդեգրելու հարցում: Մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունները աջակցում են ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և վարակի նկատմամբ խոցելի անձանց խտրականությունից զերծ մնալու հարցում[869]: Դրանք կարող են աջակցել նաև ՄԻԱՎ-ի կանխարգելման, բուժման, խնամքի

[869] Տե՛ս «ՄԻԱՎ-ը և մարդու իրավունքները Մարդու իրավունքների ազգային հաստատությունների համար» ձեռնարկը, հասանելի է https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Publications/HandbookHIVNHRIs.pdf հղումով:

և աջակցության համընդհանուր հասանելիության ուղղությամբ առաջընթացի մշտադիտարկում իրականացնելու հարցում:

Դեռ 2017 թվականի «ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունեցող անձանց հիմնախնդիրները Հայաստանում և քաղաքականության արձագանքը» հետազոտության[870] արդյունքները ցույց են տվել, որ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հիմնախնդիրը Հայաստանում ավելի շատ սոցիալական, մշակութային և իրավական հարթությունում է, քան առողջապահական: Պատճառն այն է, որ Հայաստանում շատ մեծ է ՄԻԱՎ և ՁԻԱՀ ունեցող անձանց պարսավանքը, նրանց հանդեպ անհանդուրժող և խտրական վերաբերմունքը, իրավունքների ոտնահարումը:

Խտրական վերաբերմունքի պատճառով ՄԻԱՎ-ի նկատմամբ դրական կարգավիճակ ունեցող անձինք խուսափում են ախտորոշումից, որոշ դեպքերում՝ նաև բուժումից: Նրանք կարող են մերժվել բժշկական օգնություն և սպասարկում, կրթություն և/կամ աշխատանք ստանալու համար դիմելիս: Հաճախ գործատուն հրաժարվում է աշխատանքի ընդունել ՄԻԱՎ-ով ապրող մարդուն կամ իմանալով աշխատակցի ՄԻԱՎ կարգավիճակի մասին՝ հեռացնում է նրան: ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ, վախենալով տնից վտարվելու կամ բնակավայրում ճնշվելու հեռանկարից, հաճախ թաքցնում են իրենց հիվանդությունը և չեն դիմում օգնության, որը կարող էր բարելավել նրանց կյանքի որակը և երկարացնել կյանքի տևողությունը[871]:

Մարդու իրավունքների պաշտպանը իր գործունեության ընթացքում տարեկան հաղորդումներում, հայտարարություններում, հանդիպումների ժամանակ անդրադարձել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող անձանց հասարակության տարբեր անդամների կողմից խարանի ու խտրական վերաբերմունքի ենթարկվելու պատճառներին: Դրա հիմնական պատճառներից է ՄԻԱՎ-ով ապրող անձանց իրավունքների վերաբերյալ հանրության շրջանում իրազեկության բացը, որն առավել մտահոգիչ է առողջության պահպանման ծառայությունների մատուցման ոլորտում:

Առաջին հերթին հասարակության շրջանում պատկերացում չկա վարակի բնույթի ու ՄԻԱՎ/ՁԻԱՀ տարբերությունների մասին: «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» օրենքի համաձայն՝ մարդու իմունային անբավարարության վիրուսը (ՄԻԱՎ) վիրուսի այն տեսակն է, որն ախտահարում է մարդու իմունային համակարգը և հանգեցնում իմունային անբավարարության համախտանիշի առաջացմանն ու զարգացմանը (հոդ. 1): **Նույն օրենքում տրվում է ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշի (ՁԻԱՀ) սահմանումը, ըստ որի՝ այն** հիվանդություն է, որը զարգանում է ՄԻԱՎ-ով վարակված մարդկանց մեջ, համարվում է ՄԻԱՎ-ի վարակի վերջին փուլը, բնորոշվում է իմունային համակարգի գործունեության խաթարմամբ, որի հետևանքով օրգանիզմը դառնում է անպաշտպան զանազան վարակիչ և ուռուցքային հիվանդությունների նկատմամբ (հոդ. 1):

---

[870] Տե՛ս «ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունեցող անձանց հիմնախնդիրները Հայաստանում և քաղաքականության արձագանքը» հետազոտությունը, Երևան, 2017թ., հասանելի է https://www.osf.am/wp-content/uploads/2017/11/%D5%84%D4%BB%D4%B1%D5%8E-%D5%81%D4%BB%D4%B1%D5%80-%D5%B8%D6%82%D5%B6%D5%A5%D6%81%D5%B8%D5%B2-%D5%A1%D5%B6%D5%B1%D5%A1%D5%B6%D6%81-%D5%B0%D5%AB%D5%B4%D5%B6%D5%A1%D5%AD%D5%B6%D5%A4%D5%AB%D6%80%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8-%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4-%D6%87-%D6%84%D5%A1%D5%B2%D5%A1%D6%84%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%A1%D6%80%D5%B1%D5%A1%D5%A3%D5%A1%D5%B6%D6%84%D5%A8.pdf հղումով:

[871] ՄԻԱՎ-ով ապրող միգրանտների շրջանում ՄԻԱՎ ծառայությունների հասանելիության հետ կապված իրավական և ինստիտուցիոնալ խոչընդոտների վերաբերյալ վերլուծությունը, հասանելի է https://eecaplatform.org/wp-content/uploads/2021/12/study_armenia_arm_final.pdf հղումով:

Խտրականության արգելքի սկզբունքը երաշխավորված է ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածով, ըստ որի՝ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Օրենսդրական մակարդակում խտրականության արգելքի սկզբունքը ամրագրվել է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածում որպես պացիենտի իրավունք, որով յուրաքանչյուր ոք (պացիենտ) իրավունք ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս արժանանալու հոգատար, անխտրական և հարգալից վերաբերմունքի, իսկ նույն օրենքի 31-րդ հոդվածում որպես բժշկի պարտականություն, համաձայն որի՝ բուժաշխատողներն էլ պարտավոր են հոգատար, անխտրական և հարգալից վերաբերմունք ցուցաբերել պացիենտի նկատմամբ:

Խտրականության արգելքն ամրագրված է նաև մի շարք միջազգային փաստաթղթերով:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 14-րդ հոդված.
Սույն Կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելը ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից:

«Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» ՄԱԿ-ի միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածի 2-րդ մաս.
Սույն դաշնագրին մասնակցող պետությունները պարտավորվում են երաշխավորել, որ սույն դաշնագրի մեջ հռչակված իրավունքները կիրականացվեն առանց որևէ խտրականության, այն է, ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային դրության, ծննդի կամ այլ հանգամանքի բերումով:

Խտրական վերաբերմունքի դրսևորումն ուղիղ համեմատական է անձի առողջության պահպանման հիմնարար իրավունքի իրացմանը: Խտրական և տարբերակված վերաբերմունքի պատճառով բուժման կարիք ունեցող մարդիկ շատ հաճախ խուսափում են դիմելու բժշկական հաստատություններին: Խտրական վերաբերմունք ծնող պատճառներից մեկն էլ բուժաշխատողների մասնագիտական կարողությունների պակասն է:

Առողջապահության նախարարության տրամադրած տվյալներով 2023 թվականի ընթացքում բժշկական կազմակերպություններում պացիենտների (ներառյալ՝ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց) նկատմամբ խտրականության դեպքերի վերաբերյալ բողոքներ թեև չեն ստացվել, սակայն հասարակական ու միջազգային կազմակերպությունների Հայաստանի վերաբերյալ հրապարակած զեկույցներում այդպիսի դեպքեր արձանագրվել են:

Մարդու իրավունքների 2021 թվականի զեկույցում[872] նշվում է, որ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի առումով խոցելի համարվող անձանց, մասնավորապես՝ մարմնավաճառների (այդ թվում՝ տրանսգենդեր սեռական աշխատողներ) նկատմամբ կա խտրականության ու բռնության դրսևորում հասարակության կողմից, ինչպես նաև ոչ իրավաչափ վերաբերմունք ոստիկանության կողմից: Նմանօրինակ խտրականությունն առավելապես նկատվում է, երբ ՄԻԱՎ-դրական անձինք փորձում են բուժօգնություն ստանալ:

Պետք է նշել նաև, որ ՄԻԱՎ-ով ապրող անձանց նկատմամբ խտրականության դրսևորման պատճառներից է նաև ՄԻԱՎ կարգավիճակի վերաբերյալ բժշկական գաղտնիք համարվող տեղեկությունների ապօրինի բացահայտումը: Առանց անձի համաձայնության բժշկական գաղտնիք հայտնելու դեպքեր արձանագրվել են հասարակական կազմակերպությունների կողմից:

«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» հասարակական կազմակերպության կողմից արձանագրած դեպքերից մեկով շահառուի և իր նախկին ամուսնու ՄԻԱՎ դրական կարգավիճակ ունենալու մասին տեղյակ են եղել միայն նրանց ընտանիքների անդամները: Շահառուի դուստրը ՄԻԱՎ դրական կարգավիճակ չի ունեցել: Շահառուի դստեր բժշկական քարտում, որը բացվել է տեղամասային պոլիկլինիկայում, նշվել է, որ նա «ՄԻԱՎ վարակակիր է»՝ իբրև թե պայմանավորված այն հանգամանքով, որ ծնողներն ունեն ՄԻԱՎ-ի նկատմամբ դրական կարգավիճակ: Անհրաժեշտ բժշկական միջամտության ենթարկվելու նկատառումներից ելնելով՝ շահառուն դիմել է իր դստեր տեղամասային պոլիկլինիկա և հայտնաբերել, որ դստեր բժշկական քարտում կան բժշկական գաղտնիք պարունակող այնպիսի տեղեկություններ, որոնք նշվել են առանց իրենց համաձայնության: Ավելին, տվյալ բժշկական քարտը (անկետան), տեղամասային բժշկի կողմից ուղարկվել է մեկ այլ պոլիկլինիկա՝ պայմանավորված այն հանգամանքով, որ անձի հաշվառման հասցեն փոխվել է[873]:

Յուրաքանչյուրի՝ իր մասնավոր կյանքի անձեռնմխելիության, իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունքը երաշխավորվում է միջազգային ակտերով և ներպետական օրենսդրությամբ:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով՝ հատուկ կատեգորիայի անձնական տվյալներն են նաև անձի առողջական վիճակին վերաբերող տեղեկությունները, որոնք նույն օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ առանց անձի համաձայնության արգելվում է մշակելը, բացառությամբ, երբ տվյալի մշակումն ուղղակիորեն նախատեսված է օրենքով:

Պացիենտի առողջական վիճակի մասին կամ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու համար դիմելու կամ ստանալու մասին, ինչպես նաև բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու ընթացքում պարզված տվյալներն էլ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով համարվում են բժշկական գաղտնիք, որը բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները և

[872] Տե՛ս Մարդու իրավունքների 2021 թվականի զեկույցը, 2022 թվականի ապրիլի 12, հասանելի է https://am.usembassy.gov/wp-content/uploads/sites/92/hrr2022_arm.pdf հղումով:

[873] Տե՛ս ՄԻԱՎ-ով ապրող անձանց նկատմամբ իրավախախտումների վերաբերյալ զեկույցը, Երևան, 2023թ., հասանելի է https://realwrp.org/news_attachments/144_-_%D5%84%D4%BB%D4%B1%D5%8E-%D5%B8%D5%BE%20%D5%A1%D5%BA%D6%80%D5%B8%D5%B2%20%D5%A1%D5%B6%D5%B1%D5%A1%D5%B6%D6%81%20%D5%B6%D5%AF%D5%A1%D5%BF%D5%B4%D5%A1%D5%B4%D5%A2%20%20%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%A1%D5%AD%D5%A1%D5%AD%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB%20%D5%BE%D5%A5%D6%80%D5%A1%D5%A2%D5%A5%D6%80%D5%B5%D5%A1%D5%AC%20%D5%A6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81.pdf հղումով:

բուժաշխատողները պարտավոր են պահպանել՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Բժշկական գաղտնիքի պահպանության կարևորությանն անդրադարձել է նաև ՄԻԵԴ-ը:

Անձնական, այդ թվում՝ բժշկական տվյալների պաշտպանությունն ունի հիմնարար նշանակություն Կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված՝ անձի անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի իրացման համար: Անդրադառնալով ՄԻԱՎ-ով ապրող անձանց բժշկական գաղտնիք պարունակող տեղեկատվության բացահայտմանը՝ Եվրոպական դատարանը նշել է, որ մարդու մոտ ՄԻԱՎ վարակի առկայության վերաբերյալ տվյալների բացահայտումը կարող է կտրուկ ազդեցություն ունենալ վերջինիս, ինչպես մասնավոր և ընտանեկան կյանքի, այնպես էլ՝ սոցիալական կյանքի և զբաղվածության վրա՝ ենթարկելով նրան մերժված լինելու վտանգին: Այս հանգամանքն այլ անձանց նույնպես կարող է հետ պահել հետազոտվելու և բուժում ստանալու մտքից՝ այդպիսով վտանգելով հասարակության համար կանխարգելման անվտանգության միջոցառումների պահպանմանն ուղղված ջանքերը[874]:

Եվրոպական դատարանը նշել է նաև, որ բժշկական տվյալների խորհրդապահության հարգումն ունի հիմնարար նշանակություն պացիենտի գաղտնիությունը պաշտպանելու համար[875]:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ (2015)5 հանձնարարականի հավելվածի 9.5-րդ կետ.

Առողջական տվյալները, որոնց վրա տարածվում է բժշկական խորհրդապահություն պահպանելու անհրաժեշտությունը, պետք է միայն հասանելի լինեն և մշակվեն այն անձանց կողմից, որոնց համար ուղղակիորեն կամ մասնագիտական գաղտնիքի կամ գաղտնիության այլ կանոններով սահմանված է նման պարտավորություն:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ (2015)5 հանձնարարականի հավելվածի 9.6-րդ կետ.

Առողջական տվյալները, որոնց վրա տարածվում է բժշկական խորհրդապահություն պահպանելու անհրաժեշտությունը, պետք է պահվեն գործատուի կողմից պահվող այլ անձնական տվյալներից անջատ: Գործատուի բուժծառայության անդամ չհանդիսացող անձանց կողմից այդ տվյալներին հասանելի լինելը կանխելու ուղղությամբ պետք է իրականացվեն տեխնիկական և կազմակերպական անվտանգության միջոցառումներ:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ (89)14 հանձնարարականի հավելվածի 40-րդ կետ.

Հանրային առողջապահական մարմնին խորհուրդ է տրվում խստորեն հարգանք դրսևորել խորհրդապահության պահպանման նկատմամբ՝ անհրաժեշտության դեպքում առողջապահական ոլորտի աշխատողների համար իրականացնել հատուկ քաղաքականություն և առաջ քաշել կրթական ծրագրեր՝ հստակեցնելով ՄԻԱՎ վարակի խորհրդապահության անհրաժեշտության հետ կապված հարցերը:

[874] Տե՛ս օրինակ՝ Զն ընդդեմ Ֆինլանդիայի (Z v. Finland) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 1997 թվականի փետրվարի 25-ի վճիռը, գանգատ թիվ 22009/93:

[875] Տե՛ս Լ. Լ-ն ընդդեմ Ֆրանսիայի (L.L. v. France) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2006 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 7508/02:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ (89)14 հանձնարարականի հավելվածի 95-րդ կետ.

Առողջապահության ոլորտի աշխատակիցները, տեղեկանալով աշխատողի մոտ ՄԻԱՎ-ի առկայության վերաբերյալ, տվյալ աշխատողի գործը պետք է վարեն՝ պահպանելով խորհրդապահության կանոնները, և օգտագործեն այդ տվյալները միայն ելնելով պացիենտի շահերից:

Բժշկական գաղտնիության պահպանման իրավունք ունեն նաև ՄԻԱՎ ունեցող անձինք: ՄԻԱՎ-ով ապրող անձանց առողջական տվյալները, որոնց վրա տարածվում է բժշկական գաղտնիք պահպանելու անհրաժեշտությունը, պետք է միայն հասանելի լինեն և մշակվեն այն անձանց կողմից, որոնք ունեն նման պարտավորություն: Անձնական, այդ թվում՝ բժշկական, տվյալների պաշտպանությունը հիմնարար նշանակություն ունի անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի իրացման համար:

Ուստի՝ առողջապահական մարմինները պարտավոր են միջոցներ ձեռնարկել ՄԻԱՎ-ով ապրող անձանց բժշկական տվյալների գաղտնիության պահպանման համար:

ՄԱԿ-ի Հատուկ զեկուցողը ևս արձանագրել է Հայաստանում առողջության իրավունքից օգտվելու խոչընդոտների անհավասարությունները, որոնք ազդում են որակյալ հիմնական ծառայությունների հասանելիության վրա, մասնավորապես ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով և տուբերկուլյոզով հիվանդ մարդկանց դեպքում:

ՄԱԿ-ի Հատուկ զեկուցողը մտահոգություն է հայտնել ոչ միայն ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդների գաղտնիության իրավունքի հարգման հետ կապված, այլև նրա, որ Հայաստանի օրենսդրությունը քրեականացնում է ՄԻԱՎ-ի վտանգումը և փոխանցումը:

Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի՝ մեկ ուրիշին մարդու իմունային անբավարարության վիրուսով վարակելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով (հոդ.177), իսկ մեկ ուրիշին մարդու իմունային անբավարարության վիրուսով հանցավոր ինքնավստահությամբ վարակելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով (հոդ. 178):

ՄԱԿ-ի Հատուկ զեկուցողը մտահոգություն է հայտնել, որ ՄԻԱՎ վարակի վտանգի ենթարկման և փոխանցման քրեականացումը չի համապատասխանում առողջության իրավունքի ներքո ստանձնած միջազգային պարտավորություններին: Այն գործում է որպես լուրջ խոչընդոտ ռիսկի տակ գտնվող անձանց առողջության իրավունքից օգտվելու ճանապարհին՝ նրանց հեռացնելով անհրաժեշտ ծառայություններից և մեծացնելով առողջության հետ կապված ռիսկերը նրանց և ամբողջ հասարակության համար[876]:

2023 թվականի ընթացքում հոսպիտալացվել է երեք ՄԻԱՎ վարակով երեխա, որից երկուսը՝ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի ստացիոնար բաժանմունքում թոքաբորբերի բուժման կապակցությամբ և ստացել են համապատասխան բուժում, երրորդը՝ «Մեծամորի բժշկական կենտրոնում» ՓԲԸ-ում՝ սուր բրոնխիտի կապակցությամբ՝ նույնպես ստացել է համապատասխան բուժում: Պետք է նշել, որ 2023 թվականի ընթացքում ՄԻԱՎ-ով վարակված երեխաների իրավունքների ապահովման և տրամադրվող ծառայությունների բարելավման ուղղությամբ Առողջապահության նախարարության կողմից միջոցառումներ չեն իրականացվել:

[876] Տե՛ս Հայաստան կատարած այցի ժամանակ ՄԱԿ-ի Հատուկ զեկուցողի «Ֆիզիկական ամենաբարձր հասանելի ստանդարտից օգտվելու
և հոգեկան առողջության յուրաքանչյուրի իրավունքի վերաբերյալ» զեկույցը, հասանելի է https://digitallibrary.un.org/record/1627460/files/A_HRC_38_36_Add-2-EN.pdf?ln=en հղումով:

Ըստ Առողջապահության նախարարության՝ բժշկական հաստատություններում 2023թ. ընթացքում ՄԻԱՎ-ով վարակված երեխաների հետազոտության իրականացման, բուժման, հիվանդանոցում բուժման իրականացման, հիվանդանոցում խնամքի ապահովման և այլ գործընթացներում որևէ դժվարություններ և խոչընդոտներ չեն առաջացել: Դժվարություններ առաջացել են որոշ երեխաների առումով՝ իրենց ծնողների կողմից ցուցաբերվող ոչ պարտաճանաչ վերաբերմունքի պատճառով, կանոնավոր չեն տրամադրում ՀՌՎ բուժումը, ուշացումներով են բերում կենտրոն անհրաժեշտ հետազոտությունների համար և այլն: Դժվարությունների լուծման նպատակով կենտրոնի մասնագետների (բժիշկ-վարակաբան, բժիշկ-համաճարակաբան, հոգեբան) կողմից իրականացվում են բացատրական աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում տեղեկատվություն է տրվում ՄԻԱՎ վարակով անձանց խնամքի ծառայություն տրամադրող հասարակական կազմակերպությանը և համատեղ ջանքերով խնդիրները լուծվում են:

Այն հարցին, թե 2023 թվականի ընթացքում իրականացվել են արդյոք բժշկական ոլորտի աշխատողների՝ իրավահավասարության, խտրականության արգելքի թեմաներով վերապատրաստումներ, Առողջապահության նախարարությունը պատասխանել է, որ 2023 թվականի սեպտեմբերի 8-ին կայացել է «Խարանն ու խտրականությունը ՄԻԱՎ-ով ապրող անձանց հանդեպ. հաղթահարման հոգեբանական կողմը» թեմայով մեկօրյա առկա սեմինար, որին մասնակցել են 47 ներկայացուցիչ՝ ԻՀԱԿ ՓԲԸ-ի, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ԻՀԱԿ-ի հետ համագործակցող բժշկական կազմակերպությունների բժշկական կազմակերպությունների ավագ բուժաշխատողները, քրեակատարողական հիմնարկների բուժաշխատողները, Ներքին գործերի նախարարության և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները: Ավագ բուժաշխատողներին շնորհվել է շարունակական մասնագիտական զարգացման 3 տեսական կրեդիտ: Դասընթացն ուղղված է եղել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ խոցելի խմբերի շրջանում (ներառյալ ԼԳԲՏ անձանց) ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պայմանավորված խարանի և խտրականության դեմ պայքարի ընդհանուր ասպեկտներին: 2023թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ԻՀԱԿ-ը մշակել և իրականացրել է «ՄԻԱՎ-ի կանխարգելման, հայտնաբերման և բուժման հիմունքները» թեմայով մեկօրյա վերապատրաստման դասընթացների շարք՝ Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերի գյուղական ամբուլատորիաների, առողջության առաջնային պահպանման օղակի, բժշկական կազմակերպությունների ավագ և միջին բուժաշխատողների համար: Երևանում և ՀՀ մարզերում իրականացված ութ հաջորդական դասընթացներին մասնակցել են թվով 166 բուժաշխատող: Ավագ բուժաշխատողներին շնորհվել է շարունակական մասնագիտական զարգացման 6 տեսական կրեդիտ: Դասընթացի նպատակը՝ բուժաշխատողների շրջանում իրազեկվածությունը ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակի, համաճարակաբանության, դասակարգման, ինչպես նաև ՄԻԱՎ վարակի կանխարգելման, հայտնաբերման և բուժման վերաբերյալ բարձրացնելն էր:

Հասարակության, հատկապես՝ անչափահասների շրջանում ՄԻԱՎ վարակի վերաբերյալ գիտելիքների տարածման, ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ հանդուրժողականության ձևավորման համար 2023 թվականի ընթացքում իրականցվել է ութ հանրային միջոցառում ՀՀ մարզերում, մասնավորապես՝ Արտաշատում, Աբովյանում,

Գավառում, Վանաձորում, Գյումրիում և երեք հանրային միջոցառում՝ Երևան քաղաքում: Հանրային միջոցառումների ժամանակ ԻՀԱԿ-ի շարժական կլինիկաներում ՄԻԱՎ-ի, վիրուսային հեպատիտ «Բ»-ի և «Ց»-ի վերաբերյալ խորհրդատվություն և հետազոտություն է անցել 600 անձ: Հանրային միջոցառումների նպատակն է եղել նաև հասարակության շրջանում ՄԻԱՎ վարակի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը, ինչպես նաև ՄԻԱՎ-ով ապրողների նկատմամբ հանդուրժողականության ձևավորումը:

2023 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ԻՀԱԿ-ի կողմից իրականացվել են հանրային իրազեկման հոլովակի պատրաստման աշխատանքներ, որոնց նպատակն է՝ խթանել խոցելի խմբերի շրջանում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունը, իրազեկել նախակոնտակտային կանխարգելման և ԻՀԱԿ-ում դրա հասանելիության վերաբերյալ, ինչպես նաև շեշտադրել հետևողական բուժման կարևորությունը:

Նաև, ՄԻԱՎ/ՁԻԱՀ վարակի վերաբերյալ իրազեկման աշխատանքների շրջանակում Արմենպրեսի ակումբում կազմակերպվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի օրվան նվիրված ասուլիս[877], ինչպես նաև ՄԻԱՎ վարակի վերաբերյալ երկու հարցազրույց Հ1[878] և Կենտրոն TV «Առողջարան» հաղորդման շրջանակում[879]:

Միաժամանակ, ՄԻԱՎ/ՁԻԱՀ վարակի վերաբերյալ պատրաստվել և Առողջապահության նախարարության պաշտոնական կայքէջում և Առողջապահության նախարարության ֆեյսբուքյան էջում տեղադրվել է 2 պաստառ[880]:

Համաձայն Առողջապահության նախարարի 2020 թվականի հունվարի 2 թիվ 198-Լ հրամանով հաստատված «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում արտահիվանդանոցային պայմաններում ցուցաբերվող մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման ընթացակարգի» և Առողջապահության նախարարի 2017 թվականի օգոստոսի 04-ի թիվ 2412-Ա հրամանով հաստատված «ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտության և խորհրդատվության, լաբորատոր ախտորոշման կլինիկական ուղեցույց»-ի նախաձեռնության հսկողություն իրականացնող բոլոր բժշկական կազմակերպություններում հղիների շրջանում իրականացվում է ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվություն և հետազոտություն:

Առողջապահության նախարարի 2020 թվականի հունվարի 22-ի թիվ 198-Լ հրամանով հաստատված հղիների նախաձեռնության հսկողությունը ներառում է.

Մարդու իմունային անբավարարության վիրուսով պայմանավորված վարակի վերաբերյալ հետազոտություն և խորհրդատվության տրամադրում.

ա. առաջին այցի ժամանակ բոլոր հղիներին՝ անկախ ռիսկի գործոններից

բ. կրկնակի հետազոտություն հղիության 30-րդ շաբաթական ժամկետում՝ առավել վտանգի ենթարկվող խմբերի (ԱՎԵԽ) ներկայացուցիչ հանդիսացող (թմրամիջոցների ներարկային օգտագործողներ, կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կանայք, քրեակատարողական հիմնարկներում գտնվողներ, միգրանտներ), ԱՎԵԽ-ներին

[877] Հասանելի է https://www.youtube.com/watch?v=_TQKBPierMg հղումով, 2024 թվականի փետրվարի 12-ի դրությամբ:
[878] Հասանելի է https://www.youtube.com/watch?v=CgA90MWVEk0 հղումով, 2024 թվականի փետրվարի 12-ի դրությամբ:
[879] Հասանելի է https://www.facebook.com/NationalCenterForInfectiousDiseases/videos/747205673706593/ հղումով, 2024 թվականի փետրվարի 12-ի դրությամբ:
[880] Հասանելի է https://www.facebook.com/photo/?fbid=686002843721589&set=a.178228194499059, https://www.facebook.com/photo/?fbid=684781063843767&set=a.178228194499059 հղումներով, 2024 թվականի փետրվարի 12-ի դրությամբ:

պատկանող զուգընկերներ և ՄԻԱՎ վարակ ախտորոշմամբ զուգընկերներ ունեցող հղիներին

գ. նախածննդյան հսկողություն չանցած կամ ՄԻԱՎ վարակի նկատմամբ անհայտ կարգավիճակով հղիների ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունը և խորհրդատվությունն անցկացվում են ծննդօգնության ծառայություն դիմելիս, իսկ դրա անհնարինության դեպքում՝ հետծննդյան շրջանում հնարավորին վաղ ժամկետում:

«Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ԻՀԱԿ-ը իրականացնում է ՄԻԱՎ վարակի կանխարգելմանն ու հայտնաբերմանն ուղղված աշխատանքներ:

Մասնավորապես՝ աշխատանքային միգրանտների և նրանց զուգընկերների շրջանում ՄԻԱՎ-ի վաղ հայտնաբերման նպատակով, ԻՀԱԿ-ը համագործակցում է ՀՀ մարզերում գտնվող 83 բժշկական կազմակերպությունների հետ, և 160 բուժաշխատող իրականացնում է ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն և դրական արդյունքի դեպքում՝ ԻՀԱԿ ուղեգրում:

Վերոնշյալ ծրագրի շրջանակներում ԻՀԱԿ-ը ենթապայմանագրային սկզբունքով նաև համագործակցում է «Նոր Սերունդ» և «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» հասարակական կազմակերպությունների հետ, որոնք համապատասխանաբար իրականացնում են «ՏՍՏ-ների, ԿՍԿ-մերի և ՏԱ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելում» և «ԹՆՕ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելում և ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց խնամք և աջակցություն» ծրագրերը:

Ծրագրերի հիմնական նպատակն է՝ կանխարգելիչ միջոցառումների հասանելիության ապահովումը, ՄԻԱՎ վարակի վաղ հայտնաբերումը և ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտությունների դրական պատասխանի դեպքում ԻՀԱԿ ուղղորդումը:

Խոցելի խմբերի շրջանում նշված աշխատանքների ծածկույթը տարիներ ի վեր ընդլայնվում է՝ համապատասխան թիրախների մեծացման շնորհիվ:

Այսպիսով, ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ արձանագրված խտրականության դեպքերը հիմնականում կատարվել են առողջապահական համակարգում: Դրանք, մասնավորապես, դրսևորվել են բժշկական հաստատություններում բուժաշխատողների կողմից անհրաժեշտ բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ տրամադրելը մերժելով, պացիենտների նկատմամբ տարբերակված մոտեցում ցուցաբերելով, ինչպես նաև բժշկական վիրահատական միջամտության համար լրացուցիչ գումար և (կամ) մյուս մարդկանց հետ անհավասար այլ պայմաններ առաջադրելով[881]:

Խարանն ու խտրականությունը ՄԻԱՎ-ի դեմ արդյունավետ արձագանքման հիմնական խոչընդոտներն են: Խարանն ու խտրականությունը կարող են դիտվել որպես ՄԻԱՎ վարակի և՛ պատճառ, և՛ հետևանք:

Այսպիսով, պետք է փաստել, որ շարունակվում են ՄԻԱՎ-ով ապրող անձանց նկատմամբ հասարակական կյանքի տարբեր ոլորտներում խտրական վերաբերմունքի

[881] Տե՛ս ՄԻԱՎ-ով ապրող անձանց նկատմամբ իրավախախտումների վերաբերյալ զեկույցը, Երևան, 2023թ., հասանելի է https://realwrp.org/news_attachments/144_-_%D5%84%D4%BB%D4%B1%D5%8E-%D5%B8%D5%BE%20%D5%A1%D5%BA%D6%80%D5%B8%D5%B2%20%D5%A1%D5%B6%D5%B1%D5%A1%D5%B6%D6%81%20%D5%B6%D5%AF%D5%A1%D5%BF%D5%B4%D5%A1%D5%B4%D5%A2%20%20%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%A1%D5%AD%D5%A1%D5%AD%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB%20%D5%BE%D5%A5%D6%80%D5%A1%D5%A2%D5%A5%D6%80%D5%B5%D5%A1%D5%AC%20%D5%A6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81.pdf հղումով:

դրսևորումները, որոնք ոչ միայն խախտում են մարդու իրավունքները, այլև խոչընդոտում են ՄԻԱՎ-ի արդյունավետ կանխարգելմանը և ՄԻԱՎ-ի ազդեցությունը նվազեցնելուն:

Ընդ որում, բնակչության որոշ խմբերի անդամներն ավելի խոցելի են խտրականության նկատմամբ (կանայք, միգրանտները, փախստականները, բանտարկյալները, ներքին տեղահանվածները, էթնիկ փոքրամասնությունները, աղքատները, երիտասարդները):

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***ապահովել ոչ միայն օրենսդրական մակարդակում, այլև գործնականում ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունեցող անձանց բժշկական գաղտնիքի պահպանությունը՝ նկատի ունենալով նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի ՄԻԱՎ-ին առնչվող հանձնարարականների պահանջները,***
- ✓ ***ապաքրեականացնել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ և 178-րդ հոդվածները,***
- ✓ ***իրականացնել տեխնիկական և կազմակերպական անվտանգության միջոցառումներ՝ ՄԻԱՎ ունեցող անձանց գաղտնիության իրավունքի ապահովման համար,***
- ✓ ***աջակցության ծրագրեր մշակել ՄԻԱՎ-ով ապրող անձանց բուժման և խնամքի համար,***
- ✓ ***ՄԻԱՎ-ով վարակված երեխաների իրավունքների ապահովման և տրամադրվող ծառայությունների բարելավման ուղղությամբ աշխատանքներ կատարել,***
- ✓ ***առողջապահական ոլորտի աշխատողների համար մշակել հատուկ կրթական ծրագրեր ու ուղեցույցներ՝ հստակեցնելով ՄԻԱՎ վարակի գաղտնիության անհրաժեշտության հետ կապված հարցերը,***
- ✓ ***բուժաշխատողների համար իրականացնել շարունակական վերապատրաստումներ, ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ շրջաններում՝ ՄԻԱՎ-ի, ՄԻԱՎ-ի փոխանցման, կանխարգելման, բուժման, ինչպես նաև պացիենտների իրավունքների մասին,***
- ✓ ***ՄԻԱՎ-ի վերաբերյալ խարանին և խտրականությանը վերաբերող թեմաները ներառել ուսումնական դասընթացներում,***
- ✓ ***իրականացնել հանրային իրազեկման միջոցառումներ ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունեցող անձանց իրավունքների և ՄԻԱՎ-ի փոխանցման, կանխարգելման, բուժման վերաբերյալ,***
- ✓ ***ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող անձանց համար մշակել ուղեցույցներ՝ իրենց իրավունքների վերաբերյալ:***

ԳԼՈՒԽ 5. ՊՏՂԻ ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄՆԵՐ

Հայաստանում պտղի սեռի խտրական ընտրության և սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների խնդիրները 2023 թվականի ընթացքում շարունակել են մտահոգիչ մնալ՝ չնայած դրանց դեմ պայքարի շարունակական միջոցառումների իրականացմանը: Խնդիրների շարունակականության մասին են վկայում Մարդու իրավունքների պաշտպանի ինչպես նախորդ տարիների տարեկան հաղորդումներում խնդրի առնչությամբ բարձրացված հարցերն, այնպես էլ միջազգային կազմակերպությունների և հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված մտահոգությունները:

Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման խնդրի դեմ պայքարի և դրա կանխարգելման ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության հիմնական ուղղություններից է հասարակությունում կանանց դերի բարձրացումը, նրանց կարողությունների զարգացումը, կանանց կողմից որոշումների կայացման ազատության և վերջիններիս իրավունքների մասին իրազեկման աշխատանքների իրականացնումը:

2023 թվականի ընթացքում խնդրին համապարփակ լուծում տալու նպատակով Մարդու իրավունքների պաշտպանը «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025թթ. գործողությունների ծրագրի» նախագծի մշակման փուլում ՀՀ արդարադատության նախարարություն գրավոր առաջարկություն է ներկայացրել՝ նախատեսել միջոցառում, որը կսահմանի պարտադիր բնույթ կրող մեխանիզմների մշակում և կիրառում՝ վերահսկելու բուժաշխատողների կողմից «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված պահանջը՝ հղիության 12-րդ շաբաթից հետո արհեստական ընդհատման ժամանակ բժշկասոցիալական ցուցումները պահպանելու վերաբերյալ: Այնուամենայնիվ, Ռազմավարությամբ բուժաշխատողների կողմից հղիության 12-րդ շաբաթից հետո արհեստական ընդհատման գործընթացում բժշկասոցիալական ցուցումների պահպանման վերահսկողական մեխանիզմների մշակում և կիրառում չի նախատեսվել:

Հայաստանում պտղի սեռի խտրական ընտրության և սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների հետ կապված խնդիրները շարունակում են մտահոգիչ մնալ՝ չնայած «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքի 10-րդ հոդվածի կարգավորումներով բժշկի կողմից բժշկական կամ սոցիալական ցուցումների՝ սեռով պայմանավորված 12-ից մինչև 22 շաբաթական ընդհատումն արգելվում է:

Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումն իրականացվում է հիմնականում այն հասարակություններում, որտեղ մշակութային նորմերով կամ ավանդույթներով է պայմանավորված երեխայի կոնկրետ սեռի նախապատվությունը: Այս երևույթը կանանց նկատմամբ խտրականության դրսևորում է, երբ երեխայի սեռը պարզելու դեպքում հղիությունն ընդհատվում է՝ նախապատվություն տալով տղա երեխաներին: Խնդրի պատճառները կարող են շատ տարբեր և խորքային լինել, այդ թվում՝ հասարակությունում ավանդաբար հաստատված պատկերացումները,

արու զավակ ունենալու նախապատվությունը կամ կանանց դերի վերաբերյալ առկա կարծրատիպային մոտեցումները:

Առհասարակ, երեխայի սեռի խտրական ընտրության առաջին նախապայմանը տղա երեխաներին տրվող նախապատվությունն է: Մյուս երկու նախապայմանները վերարտադրողական առողջության և ախտորոշման տեխնոլոգիաների առկայությունն են և ծնելիության ցածր մակարդակը[882]:

ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի «Պտղի սեռի խտրական ընտրության տարածվածությունն ու պատճառները Հայաստանի Հանրապետությունում» զեկույցի շրջանակներում իրականացված հարցումների շրջանակներում հարցվածների 91%-ը նշել է, որ ընտանիքում որդիներին նախապատվություն տալիս են, քանի որ «տոհմը շարունակում են որդիները»: 83%-ը նշել է, որ «տղաները հայրենիքի պաշտպանն են», 67%-ը՝ «որդիները ունեցվածքի ժառանգորդներ են», 59%-ը նշել է այն մասին, որ «ծնողին ցավ է պատճառում տեսնել դստեր դժվարությունները»: Ստորև ներկայացված գծապատկերում բոլոր պնդումները խմբավորվել են ըստ ֆինանսական, սոցիալ-տնտեսական և անվտանգային գործոնների: «Ամուսնանալուց հետո դուստրն այլևս քոնը չէ» պնդումով հանդես եկած հարցվածները 75% դեպքերում (112 հարցված) նշել են, որ «ծնողին ցավ է պատճառում տեսնել դստեր դժվարությունները» և 69% (102 հարցված) դեպքերում էլ նշել, որ «դստերը ամուսնացնելը հոգեբանորեն դժվար է»: 19-29 տարեկան հարցվածների 16%-ն է կարծում, որ իրենց ընտանիքում նախապատվությունը տալիս են տղաներին, աղջիկների՝ կյանքում և հասարակության մեջ ավելի քիչ հնարավորություններ ունենալու պատճառով, իսկ այդպես է կարծում 30-39 տարեկան հարցվածների 31%-ը[883]:

ՀՀ-ում նորածինների սեռերի անհամամասնությունը սկսել է աստիճանաբար աճել 1990-ականների սկզբից: 1995 թվականին 100 աղջկա հաշվով ծնվել է 110 տղա, 1998 թվականի այդ ցուցանիշը գերազանցել է 115-ը, իսկ 2000 թ.-ին հասել է 120-ի (նորածինների սեռերի համամասնության բնական մակարդակ է համարվում 104-106 տղայի հաշվով 100 աղջիկ ցուցանիշը):

Սակայն ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի «Պտղի սեռի խտրական ընտրության տարածվածությունն ու պատճառները Հայաստանի Հանրապետությունում» զեկույցում նշվում է, որ Հայաստանում նկատելի է որոշակի փոփոխություն: Հասարակության շրջանում ոչ միայն տղա երեխայի փոխարեն սկսել են նախընտրել աղջիկ երեխա, այլև սկսել են կարևորել երեխայի առողջությունը, ոչ թե սեռը: Վերջինս մասնագետները բացատրում են 2020թ. հայ-ադրբեջանական պատերազմով և COVID-19 համավարակով, որոնց ժամանակ գրանցած մահերի արդյունքում մարդիկ սկսել են կարևորել կյանքը: Այնուամենայնիվ, ըստ մասնագետների, դեռևս կան ընտանիքներ, որոնց համար առաջին երեխայի տղա լինելու հանգամանքը կարևոր է, ինչը բացատրում են հետևյալ պատճառաբանություններով՝ ազգանունը շարունակողը տղան է, Հայաստանը մշտական պատերազմի վտանգի առջև է կանգնած, իսկ բանակում ծառայում և սահմանները պահում են տղաները, տղան տղամարդուն տնային հարցերում աջակից և օգնող է, հատկապես

[882] Տե՛ս ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի գրասենյակի զեկույցը, «Սեռերի հարաբերակցության անհավասարակշռությունը ծնելիության մակարդակի և ներկայիս պտղաբերության օրինաչափությունների, արդյունքների և քաղաքական ենթահայտարարություններ», 2012թ., հասանելի է https://www.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Sex%20Imbalances%20at%20Birth.%20PDF%20UNFPA%20APRO%20publication%202012.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[883] Տե՛ս ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի «Պտղի սեռի խտրական ընտրության տարածվածությունն ու պատճառները ՀայաստանիՀանրապետությունում» զեկույցը, 2022թ., հասանելի է https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/gbss_report_final_arm.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

մարզերում գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ, տղան արագ է հասնում ծնողներին օգնության, եթե կարիք է լինում[884]:

Համաշխարհային տնտեսական ֆորումի 2023 թվականի զեկույցի տվյալներով՝ **Հայաստանը գենդերային խզման ցուցանիշով 153 երկրների մեջ 61-րդ տեղում է, իսկ տարածաշրջանում 3-րդը:**[885]

Առողջապահության նախարարությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ նորածինների սեռերի հարաբերակցության գործակիցը 2018 թվականին կազմել է 1.11, 2019 թվականին՝ 1.10, 2020 թվականին՝ 1.10, 2021 թվականին՝ 1.08, 2022 թվականին՝ 1.12, 2023 թվականի հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածի համար՝ 1.10:

ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներով նորածինների սեռերի համամասնությունը 2021 թվականին եղել է 108.8 տղա 100 աղջկա հաշվով: 2022 թվականի առաջին կիսամյակի տվյալներով ցուցանիշը կրկին աճել է՝ հասնելով 111-ի, ինչը 2021 թվականի առաջին կիսամյակի տվյալների (108) համեմատությամբ աճել է 3 նիշով[886]:

Ըստ 2023 թվականի Հայաստանի ժողովրդագրական ժողովածուի՝ սեռերի հարաբերակցության գործակիցը 2021 թվականի համեմատ 2022 թվականին աճել է՝ կազմելով 1.12: Վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2021 թվականի դրությամբ սեռերի հարաբերակցության շեղումը հատկապես արտահայտված է Վայոց ձորի մարզում, որին հաջորդում են Տավուշը, Արմավիրը, Շիրակը և Գեղարքունիքը:

Վիճակագրական տվյալները վկայում են խնդրի առկայության մասին, որը հատկապես ընդգծվում է երրորդ և չորրորդ երեխաների դեպքում: Այսպես, ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ 2023 թվականի Հայաստանի ժողովրդագրական տվյալներով սեռերի հարաբերակցության գործակիցն, ըստ ծննդի կարգի՝ առաջին երեխայի դեպքում 1.06 է, երկրորդի դեպքում՝ 1.08, երրորդի երեխայի դեպքում՝ 1.23, չորրորդ երեխայի դեպքում՝ 1.27[887]: Սեռերի հարաբերակցության գործակիցների համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2021 թվականի համեմատ 2022 թվականին առաջին, երկրորդ և չորրորդ երեխաների դեպքում սեռերի հարաբերակցության գործակիցը աճել է, առաջինի դեպքում՝ 1.03-ից դառնալով 1.06, երկրորդի դեպքում՝ 1.03-ից դառնալով 1.08, երրորդի դեպքում՝ 1.21-ից դառնալով 1.23, իսկ չորրորդի երեխայի դեպքում՝ 1.26-ից՝ 1.27:

Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների հիմքում ընկած են նաև օրենսդրությամբ ոլորտի ոչ ամբողջական կարգավորումը և հանրային իրազեկման աշխատանքների ոչ բավարար մակարդակով իրականացումը:

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման արգելքը: Մասնավորապես, բժշկի կողմից բժշկական կամ սոցիալական ցուցումների սեռով պայմանավորված 12-ից մինչև 22 շաբաթական ընդհատումն արգելվում է: ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի «Հղիության արհեստական ընդհատման կարգն ու պայմանները հաստատելու և

---

[884] Տե՛ս նույն տեղում:

[885] Տե՛ս Համաշխարհային տնտեսական ֆորումի զեկույցը, 2023թ., հասանելի է https://www3.weforum.org/docs/WEF_GGGR_2023.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[886] Տե՛ս ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի «Պտղի սեռի խտրական ընտրության տարածվածությունն ու պատճառները ՀայաստանիՀանրապետությունում» զեկույցը, 2022թ., հասանելի է https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/gbss_report_final_arm.pdf զեկույցը, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[887] Տե՛ս https://armstat.am/file/article/demog_2023_3.pdf հղումով, էջ 73, 2024 թվականի փետրվարի 23-ի դրությամբ, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի N 1116-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 180-Ն Կառավարության որոշումը սահմանում է հղիության արհեստական ընդհատման բժշկական և սոցիալական ցուցումները, ինչպես նաև աբորտների իրականացման կարգը և պայմանները:

Այնուամենայնիվ, բուժհաստատություններում տվյալներ չեն հավաքագրվում արհեստական ընդհատումների կազմակերպման ընթացակարգի և սահմանված իրավական նորմերի պահանջների պահպանման վերաբերյալ, ուստիև չի իրականցվում մշտադիտարկում օրենսդրական պահանջների պահպանման նկատմամբ:

Որոշ ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ սովորաբար մարզային փոքր բժշկական կենտրոններում սեռով պայմանավորված արհեստական ընդհատումներ չեն իրականացվում, մասնագետների կարծիքով տեղական բժշկական այն կենտրոններում, որտեղ հնարավոր է աբորտ իրականացնել, այն իրականացնում են գաղտնի, առանց գրանցման, երեկոյան ժամերին կամ ոչ աշխատանքային օրերին: Բժշկի աջակցությանը դիմելն առավել տարածված է ավելի մեծ քաղաքներում և հատկապես՝ Երևանում[888]:

Խնդրի մշտադիտարկման շուրջ ուսումնասիրությունները նաև ցույց են տալիս, որ այն կարող է լատենտային բնույթ ստանալ: Ավելին, մասնագետները նշում են, որ արդեն հնարավոր է պտղի սեռը որոշել առավել վաղ ժամկետներում՝ հաշվի առնելով բժշկական տեխնոլոգիաների զարգացումը[889]:

Ըստ հետազոտությունների՝ սեռով պայմանավորված հղիության ընդհատման երկու մեխանիզմ է կիրառվում՝ սեփական ուժերով և բժշկական աբորտ: Որոշ հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ հատկապես մարզերում որոշ բուժաշխատողներ ևս ներգրավված են տղա երեխայի ընտրության հաշվարկներում[890]: Ավելին, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սեռի ընտրության վերջին փուլը հղիության արհեստական ընդհատումն է այն պարագայում, երբ երեխան աղջիկ է[891]:

Առողջապահական համակարգի, մասնավորապես՝ առաջնային օղակի բուժաշխատողները և վերջիններիս բարեվարքությունը նույնպես առանցքային դեր ունեն պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման, կանանց և նրանց ընտանիքի անդամների վերաբերմունքի փոփոխության, պտղի սեռի խտրական ընտրության իրավական կարգավորումների կիրարկման հարցում, հատկապես՝ սեռով պայմանավորված հղիության ընդհատումների կանխարգելման և այդպիսի ընդհատումների կոծկման դեպքերի բացառման առումով:

Ակնհայտ է, որ գործող օրենսդրությամբ սեռով պայմանավորված 12-ից մինչև 22 շաբաթական հղիության արհեստական ընդհատման արգելքի սահմանմամբ կամ միայն հանրային իրազեկմանն ուղղված աշխատանքների իրականացմամբ խնդրի լուծմանն ուղղված քայլերը չեն կարող սահմանափակվել: Խնդրի դեմ պայքարի նպատակով պետք

---

[888] Տե՛ս ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի «Ինչպե՞ս տղա ունենալ. արու զավակի նախընտրության մշակութային պրակտիկաները հայաստանում» աշխատությունը, էջ 39, հասանելի է https://www.wvi.org/sites/default/files/how%20to%20have%20boy--arm.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[889] Տե՛ս ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի «ՀՀ-ում պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելմանն ուղղված պետական քաղաքականության և ծրագրերի մշտադիտարկման զեկույցը» կետ 68, հասանելի է https://cutt.ly/qtlovQM հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[890] Տե՛ս ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի «Ինչպե՞ս տղա ունենալ. արու զավակի նախընտրության մշակութային պրակտիկաները հայաստանում» աշխատությունը, էջ 27, հասանելի է https://www.wvi.org/sites/default/files/how%20to%20have%20boy--arm.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[891] Տե՛ս ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի «Ինչպե՞ս տղա ունենալ. արու զավակի նախընտրության մշակութային պրակտիկաները հայաստանում» աշխատությունը, էջ 36, հասանելի է https://www.wvi.org/sites/default/files/how%20to%20have%20boy--arm.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

է իրականացվեն համալիր միջոցառումներ՝ ուղղված համապարփակ ձևով հարցի խորքային պատճառների վերացմանը:

Պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելելման համար առանցքային նշանակություն ունի կանանց հզորացման և կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը՝ հաշվի առնելով սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման որոշման՝ կանանց կողմից ինքնուրույն չկայացնելու հնարավորությունը: Հաճախ կանայք այդ քայլին կարող են դիմել ընտանիքի անդամների ճնշումների, հարկադրանքի կամ ավանդական ընկալումների ներքո: ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի՝ «Պտղի սեռի խտրական ընտրության տարածվածությունն ու պատճառները Հայաստանի Հանրապետությունում» զեկույցի՝ դուստրերի և որդիների քանակի վերաբերյալ որոշում կայացնողների վերաբերյալ տվյալների համաձայն՝ հարցվածների 72%-ը նշել է, որ ինքը և իր ամուսինն են որոշում, թե քանի դուստր և որդի պետք է ունենան: 10%-ը նշել է, որ միայն ինքն է որոշում, 2%-ը նշել է ամուսինը/զուգընկերը, իսկ 8%-ը՝ ոչ ոք[892]:

ՄԱԿ-ի կանանց նկատմամբ խտրականության հիմնախնդիրների վերաբերյալ աշխատանքային խումբն ընդգծել է, որ «իր մարմնի և վերարտադրողական գործառույթների վերաբերյալ ինքնուրույն որոշումներ կայացնելու կնոջ կամ աղջկա իրավունքը հավասարության և գաղտնիության նրա հիմնարար իրավունքների հիմքում է՝ ներառելով ֆիզիկական և հոգեբանական ամբողջականության ինտիմ հարցերը, և հանդիսանում է այլ իրավունքներից օգտվելու նախապայման»[893]:

Դեռևս 2011 թվականի ԵԽԽՎ-ի թիվ 1829 հանձնարարականով Հայաստանին հանձնարարվել է, ի թիվս այլ գործողությունների, առաջին հերթին ուսումնասիրել սեռով պայմանավորված հղիությունների ընդհատման պատճառները, քայլեր ձեռնարկել կանանց դերի բարձրացման ուղղությամբ, ապահովել կանանց նկատմամբ խտրականությունն արգելող իրավական նորմերի կիրառումը, աշխատանքներ իրականացնել համապատասխան բուժաշխատողների հետ՝ ներկայացնելով խնդիրը և վերջինիս հնարավոր հետևանքները[894]:

ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով հանձնաժողովի Հայաստանի 7-րդ պարբերական զեկույցի եզրափակիչ դիտարկումներ.
Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների դեմ պայքարի նպատակով ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով հանձնաժողովի՝ Հայաստանի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում նշվել է, որ կանանց և աղջիկներին վնասող կարծրատիպերը պետք է ենթարկվեն

[892] Տե՛ս ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի «Պտղի սեռի խտրական ընտրության տարածվածությունն ու պատճառները Հայաստանի Հանրապետությունում» զեկույցը, 2022թ., հասանելի է https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/gbss_report_final_arm.pdf զեկույցը, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[893] Տե՛ս ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի օրենսդրական և գործնական մակարդակներում կանանց նկատմամբ խտրականության հիմնախնդիրների վերաբերյալ աշխատանքային խմբի թիվ A/HRC/38/46 զեկույցը, 2018թ., հասանելի է https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Issues/Women/WG/A_HRC_38_46_EN.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[894] Տե՛ս ԵԽԽՎ-ի թիվ 1829 հանձնարարականը, 2011թ., հասանելի է https://pace.coe.int/pdf/4d16042ed0c877ae91a9d3e2af9a68a585ef129f1137f65e9f93a5efd59cfa64/rec.%201979.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

պատժամիջոցների, որոնք հետ կպահեն լրատվամիջոցներին դրանք հավերժացնելուց[895]:

ԵՀ կենսաբանության և բժշկության նվաճումների կիրառման առնչությամբ մարդու իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին կոնվենցիա (Օվիեդոյի կոնվենցիա).

Արգելվում է ապագա երեխայի սեռն ընտրելու նպատակով բժշկական օգնությամբ սերունդ տալու տեխնիկայի օգտագործումը, բացառությամբ այն դեպքերի, երբ պետք է խուսափել սեռով պայմանավորված լուրջ ժառանգական հիվանդությունից: (Հոդված 14)

Եվրոպայի խորհրդի «Մարդու իրավունքները և կենսաբժշկությունը»[896] վերտառությամբ փաստաթղթի 93-րդ և 94-րդ կետերով բժշկության օգնությամբ բեղմնավորումը ներառում է արհեստական բեղմնավորում, արտամարմնային բեղմնավորում և ցանկացած ազդեցություն ունեցող նույն տեխնիկան, որը թույլ է տալիս բեղմնավորում բնական ընթացքից դուրս: Սույն հոդվածի համաձայն՝ ապագա երեխայի սեռը ընտրելու համար չի թույլատրվում օգտագործել բժշկական օգնությամբ սերունդ տալու տեխնիկա, բացառությամբ այն դեպքերի, երբ պետք է խուսափել սեռի հետ կապված լուրջ ժառանգական հիվանդությունից: Ազգային օրենսդրության համաձայն՝ յուրաքանչյուր անդամ պետությունում կիրառվող ընթացակարգերը պետք է որոշեն սեռական ժառանգական հիվանդության լրջությունը: Որոշ երկրներում ուղեցույցները սահմանվում են քաղաքական կամ վարչական մարմինների կողմից կամ ազգային էթիկայի հանձնաժողովների, ժամանակավոր հանձնաժողովների, մասնագիտական մարմինների և այլ մարմինների կողմից: Յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է իրականացնել գենետիկական խորհրդատվություն:

Բժշկական օժանդակ վերարտադրության և սաղմի ցողունային բջիջների հետազոտության ոլորտում Եվրոպայի միության անդամ երկրների օրենսդրության վերաբերյալ հետազոտությունը վկայում է, որ բոլոր այն երկրներում, որտեղ կա նման կարգավորում, սեռի ընտրությունն արգելված է կամ թույլատրվում է միայն սեռի հետ կապված հիվանդության ժառանգման հավանականության առկայությամբ[897]:

Առողջապահության և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարների համատեղ հրամանով հաստատված «Պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման 2020-2023 թվականների ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ցանկի» շրջանակներում մշակվել և Առողջապահության նախարարի հրամանով հաստատվել է «Պտղի սեռով պայմանավորված խտրական ընտրության կանխարգելումը՝ բուժաշխատողների վերաբերմունքի փոփոխության և խորհրդատվական հմտությունների բարելավման միջոցով»[898] ուսումնական ձեռնարկը մանկաբարձ-

[895] Տե՛ս ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով հանձնաժողովի Հայաստանի 7-րդ պարբերական զեկույցի եզրափակիչ դիտարկումներ, թիվ CEDAW/C/SR.1913 զեկույցը, 2022թ., հասանելի է https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CEDAW%2FC%2FSR.1913&Lang=en հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[896] Տե՛ս Եվրոպայի խորհրդի «Մարդու իրավունքները և կենսաբժշկությունը» զեկույցը, հասանելի է https://rm.coe.int/human-rights-and-biomedicine-convention-arm/1680a206db հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[897] Տե՛ս նույն տեղում:

[898] Տե՛ս ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի «Պտղի սեռով պայմանավորված խտրական ընտրության կանխարգելումը բուժաշխատողների վերաբերմունքի փոփոխության և խորհրդատվական հմտությունների բարելավման միջոցով» կրթական ձեռնարկը,

գինեկոլոգի, ընտանեկան բժիշկների, սոնոգրաֆիստերի և մանկաբարձների համար, Երևանում և ՀՀ 4 մարզերում իրականացվել են վերապատրաստումներ:

Առողջապահության նախարարության աշխատակիցները մասնակցել են գործընկեր կազմակերպությունների կազմակերպած՝ աղջիկ երեխաների արժևորմանը և պտղի սեռի խտրականության դեմ պայքարին նվիրված միջոցառումներին:

2023 թվականի ընթացքում տպագրվել է նաև «Պտղի սեռով պայմանավորված խտրական ընտրության կանխարգելումը բուժաշխատողների վերաբերմունքի փոփոխության և խորհրդատվական հմտությունների բարելավման միջոցով» կրթական ձեռնարկի ուղեցույցը՝ դասավանդողների համար:

Առողջապահության նախարարությունից տեղեկացրել են, որ 2023 թվականին սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման խնդրի վերաբերյալ կազմակերպվել է 2 լուսաբանում, աղջիկ երեխայի արժևորման, կարծրատիպային մոտեցումների վերացման և ծնելիության բարձրացման նպատակով՝ 1 ասուլիս, պատրաստվել է 1 հոլովակ, 1 տեսանյութ, 3 մամուլի հաղորդագրություն, և իրականացվել են հարցազրույցներ:

Չնայած պետության կողմից իրականացված միջոցառումներին՝ սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման խնդրի հաղթահարման տեսանկյունից առանցքային են հասարակությունում առկա ավանդույթների և ընկալումների փոփոխությունները:

Խնդրի դեմ պայքարը և դրա կանխարգելումը ենթադրում են նաև կանանց կարողությունների զարգացման, որոշումների կայացման ազատության և իրավունքների մասին իրազեկելու, ինչպես նաև բուժաշխատողների նկատմամբ վերահսկողության ուժեղացման նպատակով իրականացվող միջոցառումներ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***նպաստել կանանց տնտեսական, սոցիալական և քաղաքական մասնակցությունը խթանող քաղաքականությունների մշակմանը՝ ուղղված հասարակությունում կանանց դերի բարձրացմանն ու արժևորմանը,***
- ✓ ***զանգվածային լրատվության միջոցներով իրականացնել հանրային իրազեկման համակարգված միջոցառումներ՝ ուղղված երեխայի արժևորմանը, սոցիալական նորմերի վերափոխմանը, կարծրատիպերի վերացմանը, կնոջ՝ որպես որոշում կայացնողի դերի ընդգծմանը,***
- ✓ ***իրականացնել առողջապահական համակարգի աշխատակիցների կարողությունների ամրապնդման վերապատրաստման դասընթացներ՝ հատկապես թիրախային խմբին պատշաճ խորհրդատվության տրամադրման ու իրազեկման առումներով, և բարձրացնել բուժաշխատողների գենդերազգայունությունը,***
- ✓ ***մշակել և կիրառել կառուցակարգեր՝ վերահսկելու բուժաշխատողների կողմից հղիության 12-րդ շաբաթից հետո արհեստական ընդհատման ժամանակ բժշկասոցիալական ցուցումների պահպանումը,***
- ✓ ***մշակել կառուցակարգեր Պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման 2020-2023թթ. գործողությունների ազգային ծրագրի***

2023թ., հասանելի է https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/dzerhnark_0.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

մշտադիտարկումն ու գնահատումն ապահովելու համար՝ ազգային և տեղական մակարդակներում շահագրգիռ կառույցների ակտիվ ներգրավմամբ,

- ✓ ***ապահովել ամուսինների և տղամարդկանց ներգրավումը պտղի սեռով պայմանավորված խտրական ընտրության թեմայով անցկացվող դասընթացներին,***
- ✓ ***վերահսկել հիվանդանոցների աշխատանքը՝ մասնավորապես 12 շաբաթականից հետո պտղի հեռացման դեպքերի բացահայտման և կանխարգելման նպատակով,***
- ✓ ***դպրոցներում և բուհերում իրականացնել լայնամասշտաբ կրթական քարոզարշավներ ու հանրային իրազեկման նախաձեռնություններ՝ ուղղված առհասարակ, երեխայի և հատկապես, աղջիկ երեխաների արժևորմանը,***
- ✓ ***ուշադրության կենտրոնում պահել առողջապահական հաստատությունների աշխատանքը, մասնավորապես՝ 12 շաբաթականից հետո պտղի հեռացման դեպքերի ուսումնասիրման, վերջիններիս պատճառները հասկանալու նպատակով:***

ԲԱԺԻՆ 18. ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերին անդրադարձ է կատարվել ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ Պաշտպան) բոլոր տարեկան հաղորդումներում, այդ թվում՝ ոլորտին վերաբերող արտահերթ զեկույցի շրջանակներում:[899]

Պատերազմները, միջազգային և ազգամիջյան հակամարտությունները, խտրականության ու անհանդուրժողականության բարձր մակարդակը և մարդու իրավունքները կամ հասարակական կարգը խախտող մի շարք այլ բացասական երևույթներ ու իրադարձություններ պատճառ են դառնում բազմաթիվ մարդկանց՝ իրենց բնակության վայրերը լքելու և այլ երկրներում ապաստան փնտրելու:

Հարկադրող պատճառների հետևանքով իր քաղաքացիության կամ նախկին մշտական բնակության երկիրը լքած և միջազգային պաշտպանության կարիք ունեցող անձանց իրավունքների ապահովումը պետությունների պոզիտիվ պարտականությունն է, որը սահմանված է ՀՀ կողմից վավերացված միջազգային տարբեր փաստաթղթերով:

1993 թվականի հոկտեմբերի 4-ին Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 1951 թվականի «Փախստականների կարգավիճակի մասին» միջազգային կոնվենցիան, իսկ դրան կից՝ 1967 թվականի Արձանագրությունը՝ նույն թվականի հուլիսի 6-ին:[900]

Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող անձանց իրավունքները, ապաստան հայցելու ընթացակարգը և այլ վերաբերելի հարցերը՝ ի թիվս այլ օրենքների և ենթաօրենսդրական ակտերի, կարգավորվում են 2008 թվականի նոյեմբերի 27-ին ընդունված և 2009 թվականի հունվարի 24-ին ուժի մեջ մտած՝ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք):

1990-ականներից սկսած՝ Հայաստանի Հանրապետություն եղել է փախստականների մի քանի խոշոր ներհոսք:

- Առաջին ներհոսքն արձանագրվել է, երբ Ադրբեջանից 1988-1992 թվականների ընթացքում տեղի ունեցան տեղահանումներ: Հատկանշական է, որ տեղահանությունների համար պատճառ հանդիսացան էթնիկ պատկանելության հիմքով տեղի ունեցած զանգվածային ջարդերը, ինչի արդյունքում Ադրբեջանի տարբեր քաղաքներում՝ ներառյալ Բաքվում, Սումգայիթում հարյուրավոր հայեր սպանվեցին, ենթարկվեցին բռնության և անմարդկային վերաբերմունքի:
- Երկրորդ խոշոր ներհոսքը եղել է Սիրիայի Արաբական Հանրապետությունից: ՄԱԿ ՓԳՀ-ի պաշտոնական տվյալների համաձայն՝ 2011 թվականից ի վեր ավելի քան 5,2 միլիոն մարդ լքել է Սիրիան[901]:
- Երրորդ խոշոր ներհոսքը գրանցվել է 2020 թվականի Լեռնային Ղարաբաղի 44-օրյա պատերազմի ժամանակ:
- Չորրորդ և վերջին ներհոսքը գրանցվել է 2023 թվականի սեպտեմբերի 19-ին՝ Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի ժողովրդի նկատմամբ սանձազերծած

[899] Տե՛ս «Փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցը, հասանելի է https://www.ombuds.am/images/files/ddd65506a847cc7a7a4be2e24c580a60.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:
[900] Հասանելի է https://www.unhcr.org/media/convention-and-protocol-relating-status-refugees հղումով:
[901] Հասանելի է https://reporting.unhcr.org/operational/situations/syria-situation հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

հերթական լայնածավալ ագրեսիայի հետևանքով: Արդյունքում, Լեռնային Ղարաբաղում բնակվող ավելի քան 101,848 մարդ բռնի տեղահանվել է:

2023 թվականին Պաշտպանի աշխատակազմում շարունակվել են աշխատանքները ապաստան հայցողների ու փախստականների իրավունքների պաշտպանության ուղղությամբ:

Անհատական բողոքների քննարկման, թեժ գծին ստացված հեռախոսազանգերի, մշտադիտարկման այցերի ընթացքում իրականացված առանձնազրույցների ընթացքում Պաշտպանի և Պաշտպանի աշխատակազմի կողմից փախստականներին և ապաստան հայցողներին են ներկայացվել թե՛ ապաստանի վերաբերյալ ներպետական և միջազգային իրավական կարգավորումները, թե՛ Պաշտպանի և այլ լիազոր մարմինների լիազորությունների շրջանակը:

Համաձայն Ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության (այսուհետ՝ Միգրացիոն ծառայություն) տրամադրած տվյալների՝ 2023 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում ապաստան է հայցել 817 անձ:

Միգրացիոն ծառայության տրամադրած տվյալներով՝ 2023 թվականի ընթացքում փախստականի կարգավիճակ է ստացել 372 անձ, իսկ մերժում ստացած ապաստան հայցողների թիվը կազմել է 156: Միգրացիոն ծառայության տրամադրած տվյալների համաձայն՝ գրանցվել է նաև առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված երեխաների՝ ՀՀ ժամանման 4 դեպք, որոնցից 2-ը ժամանել են Եգիպտոսից, 1-ը՝ Իրանի Իսլամական Հանրապետությունից և 1-ը՝ Ուկրաինայից:



Նախորդ տարվա համեմատ՝ փախստականի կարգավիճակ ստացած անձանց թիվն աճել է շուրջ 40%-ով: 2022 թվականին արձանագրվել էր 263 դեպք:

Այս համատեքստում հարկավոր է նաև նշել, որ ՀՀ կառավարության՝ «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ժամանակավոր պաշտպանության տակ վերցնելու, ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի անձը հաստատող փաստաթղթի նկարագիրը և դրա տրամադրման կարգը հաստատելու մասին» 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1864-Ն որոշմամբ հաստատվել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ժամանակավոր պաշտպանության տակ վերցնելու, ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի անձը հաստատող փաստաթղթի նկարագիրը և դրա տրամադրման կարգը:

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված, ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի կարգավիճակ ստացած անձանց իրավունքների մասին տեղեկատվությունը ներկայացված է զեկույցի «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավունքներ» գլխում:

Միգրացիոն ծառայության կողմից ներկայացվել են նաև վիճակագրական տվյալներ՝ հաշվետու ժամանակահատվածում ՀՀ-ում ապաստան հայցած և փախստականի կարգավիճակ ստացած անձանց քաղաքացիության երկրների վերաբերյալ, որոնք ներկայացվում են ստորև՝



Ինչպես երևում է ներկայացված տվյալներից, ապաստան հայցող անձանց մեծամասնությունը եղել են Իրաքի Հանրապետությունից՝ ընդհանուր թվի 29%-ը: Թվաքանակով երկրորդը Ուկրաինայի քաղաքացիներն են՝ 209 ապաստան հայցող կամ ապաստան հայցող անձանց ընդհանուր թվի 25%-ը: Նշված երկրներից բացի՝ ապաստան են հայցել նաև Եգիպտոսի, Իրանի Իսլամական Հանրապետության, Հայիթիի, Ռուսաստանի և այլ երկրների քաղաքացիներ:

Միգրացիոն ծառայության տրամադրած վիճակագրական տվյալների համաձայն՝ 2023 թվականին Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ստացածների մեծ մասը եղել է Ուկրաինայից՝ 218 անձ: Հայաստանում փախստականի կարգավիճակ ստացած՝ Իրաքի Հանրապետության քաղաքացիների թիվը կազմել է 40: Այլ երկրներից՝ Հայիթիից, Սիրիայից, Իրանի Իսլամական Հանրապետությունից և մի շարք այլ երկրներից ապաստան են ստացել ընդհանուր թվով ևս 114 անձ:

Հաշվի առնելով 2023 թվականին և նախորդող տարիների ընթացքում փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների ապահովմանն ու պաշտպանությանն առնչվող օրենսդրության զարգացումները, ոլորտում դեռևս առկա են խնդիրներ, որոնք պահանջում են օրենսդրական կարգավորումներ:

1. Պաշտպանի գործունեության հիմնական ուղղությունները

Քննարկվող ոլորտում 2023 թվականի ընթացքում իրականացվել են մի շարք մշտադիտարկման այցեր, այդ թվում՝ չհայտարարված այց, ինչպես նաև հանդիպումներ միջազգային կազմակերպությունների, ազգային և միջազգային բարձրաստիճան պաշտոնյաների հետ:

ՀՀ-ում փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների երաշխավորման առումով կարևոր են Պաշտպանի և Պաշտպանի ներկայացուցիչների չհայտարարված կամ մշտադիտարկման այցերը այնպիսի թիրախային կառույցներ, ինչպիսիք են ՀՀ արդարադատության նախարարության կազմում քրեակատարողական հիմնարկներ (այսուհետ՝ ՔԿՀ), «Հատուկ կացարան» ՊՈԱԿ, ՀՀ սահմանային անցման կետեր, «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի տարանցիկ գոտի: Նմանօրինակ այցեր իրականացվում և վերապատրաստման դասընթացներ կազմակերպվում են նաև ՄԱԿ-ի փախստականների գերագույն հանձնակատարի գրասենյակի ներկայացուցիչների, Հայկական Կարմիր խաչի ընկերության գործընկերների և պետական այլ մարմինների ներկայացուցիչների հետ համատեղ՝ նպատակ ունենալով նպաստել փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների իրացման իրական պատկերին տեղում ծանոթանալուն, առկա խնդիրները վեր հանելուն, հասցեագրելուն, ինչպես նաև համապատասխան լիազոր մարմինների աշխատակիցների կարողությունների զարգացմանը:

2023 թվականի ապրիլի 6-ին ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի և ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտեի ներկայացուցիչների ուղեկցությամբ՝ Պաշտպանի աշխատակազմի, Հայկական Կարմիր խաչի ընկերության, ՄԱԿ-ի փախստականների գերագույն հանձնակատարի գրասենյակի ներկայացուցիչները համատեղ մշտադիտարկման այց են իրականացրել Հայաստանի Հանրապետության պետական սահմանի տարանցիկ գոտու հատուկ կացարան:

2023 թվականի ապրիլի 12-ին Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը մարդու իրավունքների պաշտպանության և ՄԻՊ մանդատի վերաբերյալ վերապատրաստում է իրականացրել ՀՀ պետական սահմանի պահպանության ծառայություն իրականացնող ԱԱԾ սահմանապահ զորքերի ծառայողների և սպայական անձնակազմի համար: Վերապատրաստման դասընթացի շրջանակում Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը ներկայացրել է Պաշտպանի լիազորությունները, գործունեության երաշխիքները, Պաշտպանին դիմելու կարգը, բողոքների քննարկման ընթացակարգը, ինչպես նաև փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացվելիք գործողություններն ու ծրագրերը:

2023 թվականի նոյեմբերի 22-ին Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը «Փախստականների և ապաստան հայցողների պաշտպանության միջազգային և ազգային չափանիշները» խորագրով դասընթացի շրջանակներում ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի և ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության ներկայացուցիչներին ներկայացրել է Մարդու իրավունքների պաշտպանի դերը փախստականների, ապաստան հայցողների և ՄԱԿ ՓԳՀ-ի մտահոգության ներքո գտնվող այլ անձանց իրավունքների պաշտպանության գործում: Ներկայացվել են Պաշտպանի իրավական կարգավիճակը, աշխատանքի հիմնական ուղղությունները, Պաշտպանի իրավասությանը վերապահված հարցերն ու քննարկման ընթացակարգը:

Պաշտպանի՝ միջազգային կազմակերպությունների, ազգային և միջազգային բարձրաստիճան պաշտոնյաների հետ հանդիպումների շրջանակում փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների վերաբերյալ քննարկումները, խնդիրների վերհանումն ու բարձրաձայնումը ևս հանդիսանում են Պաշտպանի մանդատի իրացման կարևոր գործիքներ:

Պաշտպանի աշխատակազմում փախստականների և ապաստան հայցողների իրավունքների պաշտպանության հարցում կարևոր դերակատարություն ունի գործընկեր միջազգային կազմակերպությունների հետ սերտ և համակողմանի համագործակցությունը:

Անկյունաքարային է համագործակցությունը, հատկապես ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան ներկայացուցչության հետ այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են՝ սահմանային անցակետեր, ՔԿՀ-ներ համատեղ մշտադիտարկման այցերի, վերապատրաստման դասընթացների իրականացումը, ինչպես նաև արդյունավետ համագործակցությունը ոլորտի իրավական կատարելագործման նպատակով ստեղծված աշխատանքային խմբի շրջանակներում:

Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը ՄԱԿ ՓԳՀ-ի, Միգրացիոն ծառայության (ՄՔԾ), «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի ներկայացուցիչների հետ 2023 թվականի սեպտեմբերի 13-ին կատարել է համատեղ մշտադիտարկման այց «Արմավիր» ՔԿՀ, որտեղ պահվում են ապաստան հայցողներ, քաղաքացիություն չունեցող և փաստաթղթեր չունեցող անձինք՝ ծանոթանալու մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող խնդիրներին, ազատությունից զրկման պայմաններին, ապաստան հայցողների բացահայտման և դեպի ապաստան տրամադրող մարմին նրանց ուղղորդման հետ կապված հարցերին:

Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները մասնակցել են «Փախստականների պաշտպանության մուտքի զգայուն համակարգի» միջգերատեսչական աշխատանքային խմբի նիստին: Նիստի նպատակն էր ամփոփել 2023 թվականի ընթացքում իրականացված աշխատանքները, ներառյալ՝ ձեռքբերումներն ու մարտահրավերները, ինչպես նաև ներկայացնել 2024 թվականի ծրագրերը:

Պաշտպանն ու ՀՀ Ազգային ժողովում Հայաստանի եզդիական համայնքի ներկայացուցիչ, խորհրդարանում Հայաստան-Իրաք բարեկամական խմբի ղեկավար Ռուստամ Բաքոյանը 2024 թվականի հունվարի 12-ին համատեղ այց են իրականացրել Իրաքից ժամանած և Հայաստանում ապաստան հայցող եզդիներին:

Ապաստան հայցող անձինք այցի ընթացքում Պաշտպանին ներկայացրել են իրենց իրավունքներին առնչվող հարցեր, խնդիրներ՝ կապված կացարանի, պետության կողմից տրամադրվող դրամական օգնության, աշխատանքի և հայերենի չիմացության հետևանքով հաղորդակցվելու խնդիրների հետ:[902]

2.Արձանագրված հիմնական խնդիրները

2023 թվականի ընթացքում փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների ապահովման ոլորտի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են մի շարք խնդիրներ:

[902] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/2838 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում Պաշտպանի աշխատակազմում քննարկվել է թվով 8 դիմում-բողոք և իրականացվել է 35 հեռախոսազանգ-խորհրդատվություն: Պարզաբանումներ են ներկայացվել Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից՝ Պաշտպանի աշխատակազմի էլեկտրոնային հասցեին և հեռահաղորդակցության մյուս միջոցներին ստացված՝ ապաստան հայցելու իրավական կարգավորումների վերաբերյալ հարցումներին ի պատասխան, ինչպես նաև Պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացված ուսումնասիրություններին արդյունքում:

2.1 Մահապատժի ենթարկվելու վտանգի առկայության պարագայում՝ անձի արտաքսման կամ հանձնման օրենսդրական արգելքի բացակայությունը

Մարդասիրական և սովորութային միջազգային իրավունքի համաձայն՝ չվերադարձելիության սկզբունքն արգելում է պետություններին արտաքսել կամ հանձնել անձին, երբ կան էական հիմքեր՝ ենթադրելու, որ անձը վերադառնալիս կհայտնվի անուղղելի վնասի վտանգի տակ՝ ներառյալ հալածանքները, խոշտանգումները, վատ վերաբերմունքը կամ մարդու իրավունքների այլ լուրջ խախտումները:

Չվերադարձելիության սկզբունքը ներառված է «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի դեմ» կոնվենցիայում:

Ըստ մարդու իրավունքների պաշտպանության միջազգային կառուցակարգերի՝ չվերադարձելիության սկզբունքը վերաբերում է մարդու իրավունքների կոպիտ խախտումների այնպիսի լայն շրջանակների, ինչպիսիք են՝ խոշտանգումները և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը, կյանքի, անձեռնմխելիության իրավունքների ոտնահարման ռիսկերը և մահապատժի ենթարկվելու վտանգի առկայությունը:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի 31-րդ ընդհանուր մեկնաբանության՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածով նախատեսված պարտավորությամբ սահմանվում է՝
«... անձին պետության տարածքից չվերադարձնելու, չարտաքսելու, չվտարելու կամ այլ կերպ չհեռացնելու պարտավորությունը, եթե կան էական հիմքեր ենթադրելու, որ գոյություն ունի անուղղելի վնասի իրական վտանգ, ինչպիսին է Դաշնագրի 6-րդ և 7-րդ հոդվածներով նախատեսվածը»:[903]

Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է չվերադարձելիության սկզբունքը, ըստ որի՝ «*Չվերադարձելիության սկզբունքը…փախստականին որևէ կերպ չվերադարձնելն է այն տարածքների սահմանները, որտեղ նրա կյանքին կամ ազատությանը կարող է վտանգ սպառնալ ռասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության, քաղաքական հայացքների կամ համատարած բռնության, արտաքին հարձակման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձությունների հիմքով»:* Օրենքի 9-րդ հոդված 3-ի մասի համաձայն՝ «*Օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը չի կարող արտաքսվել, վերադարձվել կամ հանձնվել այլ*

[903] Հասանելի է https://www.refworld.org/legal/general/hrc/2004/en/52451 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

երկիր, որտեղ հիմնավոր պատճառներով վտանգ կա, որ նա կենթարկվի դաժան և անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի կամ պատժի, ներառյալ՝ խոշտանգումների»:

Այս համատեքստում, ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Ոչ ոք չի կարող արտաքսվել կամ հանձնվել օտարերկրյա պետությանը, եթե իրական սպառնալիք կա, որ տվյալ անձը կարող է այդ երկրում ենթարկվել մահապատժի, խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»*: Նման մոտեցումը համապատասխանում է Մարդու իրավունքների Եվրոպական միության խարտիայի 19-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումներին:

Պաշտպանը ողջունում է 2023 թվականին Հայաստանի Հանրապետության կողմից «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիային կից՝ «Բոլոր դեպքերում մահապատժի վերացման մասին» թիվ 13 արձանագրության վավերացումը: Սույնով ամրագրվում է, որ ոչ ոք չի կարող դատապարտվել և ենթարկվել մահապատժի, իսկ արձանագրության դրույթների որևէ վերապահում կոնվենցիայի 57-րդ հոդվածի մասով թույլատրելի չէ:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարևոր է Օրենքի՝ չվերադարձելիության սկզբունքն ամրագրող համապատասխան հոդվածում ներառել նաև մահապատժի ենթարկվելու վտանգի առկայության պարագայում՝ անձի արտաքսման կամ հանձնման արգելքը:

2.2 Պետական սահմանի անցման բոլոր կետերում Պաշտպանին դիմելու հնարավորության վերաբերյալ իրազեկող պաստառների բացակայությունը

2023 թվականին Պաշտպանի աշխատակազմը պետական անցման կետերում, մասնավորապես՝ Մեղրիում և «Շիրակ» օդանավակայանում արձանագրել է Պաշտպանին դիմելու հնարավորության վերաբերյալ իրազեկող պաստառների բացակայության խնդիր:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարկադրող պատճառների հետևանքով իր քաղաքացիության կամ նախկին մշտական բնակության երկիրը լքած և միջազգային պաշտպանության կարիք ունեցող անձինք, անցնելով պետական սահմանը, առաջնային կարիք ունեն տեղեկանալու համապատասխան օգնություն ստանալու հնարավոր ձևերի վերաբերյալ, սահմանային պաստառների առկայությունը վերջիններիս համար ունի կենսական նշանակություն՝ միաժամանակ հիմք ընդունելով այն փաստը, որ անձանց իրավունքների ապահովումը պետությունների պոզիտիվ պարտականությունն է, որը սահմանված է ՀՀ կողմից վավերացված միջազգային տարբեր փաստաթղթերով:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է պետական սահմանի բոլոր անցման կետերում տեղադրել Մարդու իրավունքների պաշտպանին դիմելու հնարավորության վերաբերյալ իրազեկող պաստառներ:

2.3 Ռեսուրսների բացակայության պատճառով ապաստան հայցողներին հատուկ կացարանում տեղավորելու անհնարինությունը

«Հատուկ կացարանը» (ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնը) ունի միաժամանակ առավելագույնը 55-56 անձի բնակեցման հնարավորություն: 2022 թվականից սկսած՝ Հայաստանի Հանրապետությանը տարեկան դիմում է 800-1000 ապաստան հայցող, որի մոտավորապես 50%-ն ունի կացարանի

կարիք: Պաշտպանը ողջունում է ապաստան հայցողների համար նոր կացարանի շինարարական աշխատանքների իրականացումը: Նոր կացարանը կառուցվում է Աբովյան քաղաքում և շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2024 թվականի կեսերին: Կացարանը կունենա միաժամանակ 100 անձի բնակեցման հնարավորություն: ՀՀ կառավարության՝ «Ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորման անհնարինության դեպքում՝ կենսաապահովման հիմնական կարիքները հոգալու հնարավորություն չունեցող ապաստան հայցողներին դրամական օգնություն տրամադրելու կարգը սահմանելու մասին» 2016 թվականի սեպտեմբերի 15-ի N 951-Ն որոշման համաձայն՝ Միգրացիոն ծառայության կողմից տրամադրվում է ընդամենը 20.000 դրամ, իսկ ընտանիքի յուրաքանչյուր անդամին՝ 15.000-ական դրամ:

Ապաստան հայցողներին տրամադրվող դրամական օգնության նպատակով անհրաժեշտ ծախսերի նախատեսման հնարավորության հարցը քննարկվում է յուրաքանչյուր տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի մշակման գործընթացի շրջանակներում:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն արձանագրել է, որ Միգրացիոն ծառայության դրամական օգնությունը տրամադրվում է 3 ամիս ժամկետով, որը կարող է երկարաձգվել՝ առավելագույնը մինչև 6 ամիս՝ կացարանի, կոմունալ և այլ հարցերը լուծելու նպատակով, որը սակայն բավարար չէ անհրաժեշտ կարիքները հոգալու համար:

Պաշտպանն իր տարեկան հաղորդումներում բարձրացրել է ապաստան հայցող անձանց՝ առանց աշխատանքի թույլտվության աշխատելու իրավունք ունեցող անձանց ցանկում ընդգրկելու հարցը:

Ապաստան հայցող անձանց դեպքում առաջնային է կենսաապահովման տարրական խնդիրների լուծումը, և այս համատեքստում կարևոր է օրենսդրական մակարդակում վերջիններիս առանց աշխատանքի թույլտվության աշխատելու իրավունք ունեցող անձանց ցանկում ներառելու հնարավորությունը:

Նախկինում, «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի ժա) կետը, ամրագրելով աշխատանքի թույլտվության բացառությունները, կարգավորման շրջանակից դուրս է թողել ապաստան հայցող անձանց. *«Առանց աշխատանքի թույլտվության Հայաստանի Հանրապետությունում կարող են աշխատել փախստականի կարգավիճակ ունեցող, Հայաստանի Հանրապետությունում քաղաքական ապաստան ստացած օտարերկրյա քաղաքացիներն ու քաղաքացիություն չունեցող անձինք՝ կացության ժամկետը չգերազանցող ժամանակահատվածով»*:

2023 թվականին իրականացված օրենսդրական փոփոխությունների արդյունքում ապաստան հայցող անձինք ներառվել են առանց աշխատանքի թույլտվության աշխատելու իրավունք ունեցող անձանց ցանկում, ինչը Պաշտպանը ողջունելի է համարում: Մասնավորապես, «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի ժա) կետը սահմանում է, որ առանց աշխատանքի թույլտվության Հայաստանի Հանրապետությունում կարող են աշխատել Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող, փախստականի կարգավիճակ ունեցող և Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած օտարերկրյա քաղաքացիներն ու քաղաքացիություն չունեցող անձինք՝ կացության ժամկետը չգերազանցող ժամանակահատվածով:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***նախատեսված ժամկետներում ավարտին հասցնել հատուկ կացարանի շինարարական աշխատանքները և հանձնել շահագործման:***
- ✓ ***հաշվի առնելով Հայաստանում ապաստան հայցող անձանց ներհոսքի թվի աճը, ինչպես նաև որոշմամբ նախատեսված աջակցության գումարի՝ ապաստան հայցող անձանց կենսաապահովման հիմնական կարիքները հոգալու ծախսերը չբավարարելու հանգամանքը, անհրաժեշտ է հավելյալ ֆինանսական միջոցներ նախատեսել ապաստան հայցող անձանց տրամադրվող ֆինանսական աջակցության նպատակով:***

2.4 Ապաստանի հայցեր ընդունող պետական մարմիններում հարցազրույցի ընթացքում անվճար թարգմանության բացակայություն

Ինչպես Պաշտպանի նախորդ[904], այնպես էլ 2023 թվականի տարեկան հաղորդումներով արձանագրվում է ապաստանի հայցեր ընդունող պետական մարմիններում հարցազրույցի ընթացքում անվճար թարգմանության բացակայության խնդիրը: Օրենքի 51-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանվում է, որ *«եթե ապաստան հայցողը չունի հայերենի բավարար իմացություն, ապա միգրացիայի հարցերով լիազոր մարմինը նրան տրամադրում է անվճար թարգմանիչ (...)»:* Հետևաբար, օրենքով սահմանված դեպքերում Միգրացիոն ծառայությունը պարտավոր է հարցազրույցի ընթացքում ապահովել անվճար թարգմանություն:

Հատկանշական է նաև, որ Օրենքի 46-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *միգրացիոն ծառայությունից բացի՝ ապաստան հայցողի հետ հարցազրույց անցկացնելու լիազորություն ունեն նաև Սահմանապահ զորքերը, Ոստիկանությունը և ազատազրկման վայրի վարչակազմը:*

Հետևաբար Միգրացիոն ծառայությունից բացի, ապաստան հայցող անձանց հետ հարցազրույց են անցկացնում նաև այլ իրավասու մարմիններ: Սակայն նման դեպքերում թարգմանչի ծառայություններից օգտվելու հնարավորությունը օրենսդրական ամրագրում մինչ օրս չի ստացել, ինչը խնդրահարույց է ապաստան հայցող անձանց իրավունքների լիարժեք իրացման տեսանկյունից:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է Օրենքում նախատեսել հարցազրույցի ընթացքում անվճար թարգմանչական ծառայություններ տրամադրելու պարտավորություն՝ ապաստան հայցողների հետ հարցազրույցներ անցկացնող բոլոր իրավասու մարմինների համար:

2.5 Ապաստան հայցող անձանց կողմից Ոստիկանություն հաղորդում ներկայացնելու դեպքում՝ վերջիններիս թարգմանչի ծառայությունից անվճար օգտվելու հնարավորություն չտրամադրելու հետ կապված խնդիր

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ մուտքագրվել են դիմումներ օտարերկրյա քաղաքացիների, ներառյալ՝ ապաստան հայցող անձանց համար հասկանալի լեզվով հաղորդակցվելու խնդիրների վերաբերյալ: Մասնավորապես՝ օտարերկրյա քաղաքացիների, ներառյալ՝ ապաստան հայցող անձանց կողմից Ոստիկանություն

[904] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2021 թվի տարեկան հաղորդումը, հասանելի է https://ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

հաղորդում ներկայացնելու դեպքում՝ վերջիններիս չի տրամադրվում թարգմանչի ծառայությունից անվճար օգտվելու հնարավորություն:

ՀՀ կառավարության՝ «Հայաստանի Հանրապետության Ոստիկանության կողմից հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և դրանց ընթացք տալու կարգը սահմանելու մասին» 2017 թվականի նոյեմբերի 23-ի N 1495-Ն որոշմամբ սահմանված է, որ Ոստիկանություն հաղորդում ներկայացնողի կողմից հայերենին չտիրապետելու դեպքում հաղորդումն ընդունվում է հայերենին և այն օտար լեզվին տիրապետող, համապատասխան որակավորում ունեցող թարգմանչի մասնակցությամբ, որին տիրապետում է հաղորդում ներկայացնող անձը: *Հաղորդում ներկայացնող անձը հաղորդումը շարադրում է այն լեզվով, որին ինքը տիրապետում է*, ինչին հաջորդում է արձանագրությունում թարգմանչի կատարած թարգմանության շարադրումը, որը հաստատվում է թարգմանչի կողմից: Այս դեպքում հաղորդումն ամրագրվում է միայն իրավասու ստորաբաժանումում կամ Ոստիկանության տարածքային մարմնում հանցագործության մասին բանավոր հաղորդում ընդունելու վերաբերյալ արձանագրության մեջ:

Այսինքն՝ լիազոր մարմինը պարտավոր է հայերենին չտիրապետող անձի կողմից հաղորդում ներկայացնելու դեպքում ապահովել հայերենին և այն օտար լեզվին տիրապետող, համապատասխան որակավորում ունեցող թարգմանչի մասնակցությունը, որին տիրապետում է հաղորդում ներկայացնող անձը:

Մինչդեռ Պաշտպանի աշխատակազմ մուտքագրված դիմումների ուսումնասիրությունը վկայում է, որ լիազոր մարմինը չի ապահովում համապատասխան թարգմանչի մասնակցությունը:

Տվյալ համատեքստում Պաշտպանն ընդգծում է, որ պետությունը պետք է ձեռնարկի քայլեր համապատասխան անձանց իրավունքի պատշաճ իրացումն ապահովելու տեսանկյունից:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է պետական իրավասու մարմինների կողմից պատշաճ կերպով իրականացնել օտարերկրյա քաղաքացիներին, ինչպես նաև ապաստան հայցող անձանց իրենց հասանելի լեզվով թարգմանության տրամադրման ապահովումը:

2.6 Կացարանում բնակվելու իրավունք ստացած՝ ապաստան հայցող անձանց ուղեգիրն ուժը կորցրած ճանաչելու լիազորությունն օրենքով նախատեսված չլինելը

Ապաստան հայցող անձանց համար առաջնային կարևորություն ունեցող հարցը ժամանակավոր կացարանի խնդրի կարգավորումն է, որի հրատապ ապահովումը բխում է վերջիններիս բնակության վայրի բացակայության հանգամանքից:

Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Կացարանի կարիք ունեցող ապաստան հայցողները, մինչև նրանց ապաստանի հայցի վերաբերյալ վերջնական որոշում կայացվելը, տեղավորվում են ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում…որն այդ նպատակով ստեղծված հատուկ հաստատություն է»:

ՀՀ կառավարության՝ «Ապաստան հայցողներին ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորելու և կենսաապահովման պայմաններ տրամադրելու կարգը

հաստատելու մասին» 2009 թվականի նոյեմբերի 19-ի N 1440-Ն որոշմամբ կարգավորվում են կացարանում ապաստան հայցող անձանց բնակեցման հարցերը:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի՝ «Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակության ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» 2016 թվականի օգոստոսի 10-ի հրամանի հավելվածի 44-րդ կետը սահմանում է՝ «*Բնակության ներքին կարգապահական կանոնները 2 և ավելի անգամ խախտելու դեպքում՝ բնակչին տրված «Ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորման» ուղեգիրը, Կենտրոնի տնօրենի առաջարկության հիման վրա, կարող է ուժը կորցրած ճանաչվել…միգրացիոն ծառայության կողմից»:*

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդված 3-րդ մասով ամրագրված են բարենպաստ վարչական ակտի ուժը կորցնելու համար սահմանված հիմքերը: Նույն մասի բ) կետի համաձայն՝ *«Բարենպաստ վարչական ակտը կարող է ուժը կորցրած ճանաչվել, եթե դա թույլատրվում է օրենքով կամ պայմանավորված է իրավաչափ վարչական ակտում այդպիսի վերապահմամբ»:*

Նշվածից ակնհայտ է դառնում, որ եթե վերապահում նախատեսված չէ, ապա նման սահմանափակում ամրագրող նորմը, որով բարենպաստ վարչական ակտը ուժը կորցրած կճանաչվի, անհրաժեշտ է սահմանել օրենքով:

Այսպիսով՝ «Ժամանակավոր տեղավորման Կենտրոնում տեղավորման» ուղեգիրն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումն ընդունվում է վարչական մարմնի՝ Միգրացիոն ծառայության կողմից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն որոշումը վարչական ակտ է, հարցն անհրաժեշտ է քննարկել վարչարարության հիմունքների և վարչական վարույթի շրջանակներում:

Պաշտպանի աշխատակազմի կողմից խնդրի կարգավորման անհրաժեշտությունն արձանագրվել է նաև նախորդ տարիներին՝ Միգրացիոն ծառայության տրամադրած տվյալների արդյունքում, սակայն հարցը դեռևս որևէ կարգավորում չի ստացել օրենքի շրջանակներում:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է Միգրացիոն ծառայության՝ ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակվելու իրավունք ստացած ապաստան հայցող անձանց ուղեգիրն ուժը կորցրած ճանաչելու լիազորությունը նախատեսել օրենքով և ուժը կորցրած ճանաչել Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակության ներքին կարգապահական կանոնների 44-րդ կետը:

2.7 Ժամանակավոր տեղավորման Կենտրոնում տեղավորման ուղեգիրն ուժը կորցրած ճանաչելու արդյունքում սենյակն ազատելու համար նախատեսված ժամկետի խնդիր

«Ապաստան հայցողներին ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորելու և կենսաապահովման պայմաններ տրամադրելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության՝ «Ապաստան հայցողներին ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորելու և կենսաապահովման պայմաններ տրամադրելու կարգը հաստատելու մասին» 2009 թվականի նոյեմբերի 9-ի N 1440-Ն որոշման 12.2-րդ կետի համաձայն՝

ապաստան հայցողին տրված ուղեգիրն ուժը կորցրած ճանաչելու մասին ապաստան հայցողը գրավոր ծանուցվում է 3 աշխատանքային օրվա ընթացքում: Ուղեգիրն ուժը կորցրած ճանաչելու մասին տեղեկանալու օրվանից սկսած եռօրյա ժամկետում ապաստան հայցողն ազատում է զբաղեցրած սենյակը: Ապաստան հայցողի զբաղեցրած սենյակն ազատելու համար նախատեսված ժամկետի (3 օր) քննարկման համատեքստում անհրաժեշտ է վկայակոչել այն հանգամանքը, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածով վարչական ակտի բողոքարկման համար նախատեսված է 2 ամիս ժամանակահատված: Հետևաբար, անձը պետք է հնարավորություն ունենա շարունակել բնակվել սենյակում նվազագույնը մինչև բողոքարկման համար նախատեսված ժամկետի ավարտը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է նախատեսել այնպիսի կառուցակարգեր, որոնք սենյակն ազատելու ժամկետը կպայմանավորեն բողոքարկման ժամկետով, իսկ բողոքարկման դեպքում՝ դրա վերջնական արդյունքներով:

2.8 1988-1992 թվականներին Ադրբեջանից Հայաստան բռնագաղթած անձանց բնակարանային ապահովման խնդիր

2023 թվականի ընթացքում Պաշտպանի նախաձեռնությամբ տեղի են ունեցել քննարկումներ 1988-1992 թվականներին բռնագաղթած անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ: Հանդիպմանը մասնակցել են Ազգային ժողովի, Աշխատանքի և սոցիալական հարցերի, Արդարադատության, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ու Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների, Ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության, Անվտանգության խորհրդի գրասենյակի ներկայացուցիչներ, ինչպես նաև բռնի տեղահանված անձանց խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Քննարկվել են նշված անձանց իրավունքների պաշտպանությանը վերաբերելի մի շարք հարցեր: Պաշտպանը կարևորել է բարձրացված, այդ թվում՝ բնակարանային ապահովման խնդիրների լուծումը՝ նշելով, որ բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանությունը մշտապես գտնվում է իր ուշադրության կենտրոնում:

Պետության կողմից ձեռնարկված միջոցներից գնահատելի են ՀՀ կառավարության կողմից ընդունված «Հայաստանի Հանրապետության տարեկան պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով բնակարանային ապահովման ծրագրի մասին» որոշումները, որոնցով լուծվել են 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած ժամանակավոր կացարաններում բնակվող բազմաթիվ ընտանիքների բնակարանի խնդիրը: Այնուամենայնիվ, ընթացիկ տարում Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ բռնագաղթած անձանցից բնակապահովման խնդրի վերաբերյալ, ինչը հիմք է տալիս եզրակացնելու, որ պետության կողմից ձեռնարկված միջոցները բավարար չեն:

Այսպես, ընթացիկ տարում Պաշտպանին հասցեագրած բողոքներից մեկով ներկայացվել է, որ 34 տարի առաջ ընտանիքն Ադրբեջանից բռնագաղթել է Հայաստան և ապրում է վարձակալած բնակարանում: Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ ունի ՀՀ քաղաքացիություն, ծնողների մահից հետո բնակվում է հաշմանդամություն ունեցող

քրոջ հետ եղբոր բնակարանում: Բնակարանով ապահովելու համար բազմիցս դիմել է իրավասու մարմիններին, սակայն արդյունքի չի հասել: Դիմողի պնդմամբ՝ իր ընտանիքը ՀՀ կառավարության՝ «1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագրի մասին» 2004 թվականի մայիսի 20-ի N 747-Ն որոշմամբ հաստատված 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնի տեղահանված անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագրի շահառու չի ճանաչվել, քանի որ հաշվառում իրականացնելու ընթացքում փաստացի չի բնակվել որևէ ժամանակավոր կացարանում, այլ բնակվել է անհատական հասցեում:

Բարձրացված խնդրի կապակցությամբ Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունից Պաշտպանին ներկայացվել է պարզաբանում առ այն, որ բողոք ներկայացրած անձի ընտանիքը չի հաշվառվել որպես՝ 1988-1992թթ. Ադրբեջանից բռնի տեղահանված ժամանակավոր կացարանում բնակվող ընտանիք նաև 2005 և 2008 թվականներին կատարված ուսումնասիրությունների ժամանակ: Այդ իսկ պատճառով ընտանիքը չի ընդգրկվել նաև ՀՀ կառավարության՝ «Հայաստանի Հանրապետության տարեկան պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով բնակարանային ապահովման ծրագրի մասին» 2019 թվականի նոյեմբերի 21-ի N 1666-Ն որոշմամբ հաստատված ծրագրում, քանի որ ծրագրով որևէ բացառություն չի նախատեսվում: Վերոնշյալ ծրագրերում չընդգրկված Ադրբեջանից բռնի տեղահանված բնակարանի կարիքավոր ընտանիքները հաշվառվում են՝ ՀՀ կառավարության՝ «Հայաստանի Հանրապետությունում բնակարանի կարիք ունեցող փախստականների հաշվառման և բնակելի տարածությունների հատկացման կարգը հաստատելու մասին» 1997 թվականի օգոստոսի 9-ի թիվ 330 որոշմամբ հաստատված կարգի համաձայն: Բնակարանի կարիք ունեցող փախստականների հաշվառումն իրականացվում է ըստ նրանց փաստացի բնակության վայրի՝ միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնում:

Ըստ պարզաբանման՝ դիմողի ընտանիքը, որպես բնակարանի կարիքավոր, հաշվառվել է Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնում և ընդգրկված է բնակարանային հաշվառման համար դիմում ներկայացրած փախստականների արտահերթ ցուցակում (հերթի համարը՝ 1): Միևնույն ժամանակ տեղեկացրել են, որ ներկայում ՀՀ կառավարության թիվ 330 որոշման շրջանակներում բնակարանային ապահովության ծրագիր չի իրականացվում:

Մեկ այլ բողոքով անձը տեղեկացրել է, որ 1989 թվականին ընտանիքով բռնագաղթել են Ադրբեջանից և մինչ օրս բնակվում են վարձակալած բնակարանում: Նշել է, որ բռնագաղթելիս վնասվել է ողնաշարը, որով էլ պայմանավորված՝ ունի հաշմանդամություն: Նշել է, որ իր ընտանիքը հաշվառված է Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնում՝ բնակարանի կարիք ունեցող փախստականների հերթացուցակի 8-րդ տեղում, սակայն առ այսօր քայլեր չեն ձեռնարկվել բնակարանով ապահովելու ուղղությամբ:

Բողոքի կապակցությամբ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստացված պարզաբանման համաձայն՝ ՀՀ կառավարության 1997 թվականի սեպտեմբերի 9-ի N 330 որոշմամբ սահմանված կարգով դիմողը բնակարանի կարիք ունեցող փախստականների հերթացուցակում հաշվառված է Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնում: Նա բնակարանի կարիք ունեցող փախստականների առաջնահերթ հերթացուցակում 8-րդն է: Նշված որոշման համաձայն՝

բնակելի տարածությունների հատկացման հետ կապված նախարարությունը լիազորություններ չունի՝ դրանք վերապահված են ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայությանը:

Այսպես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ սահմանադրաիրավական կարգավորումը միտված է մի կողմից՝ կանխորոշելու պետության սոցիալական ուղղվածությունը, մյուս կողմից՝ ստեղծելու երաշխիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածի երրորդ մասում ամրագրված հիմնարար այն դրույթի իրականացման համար, համաձայն որի՝ հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Սահմանադրորեն իրավական պետության հռչակումն ամենից առաջ պետության բնույթի և հասարակական հարաբերությունների յուրահատկության վկայությունն է, պետության կազմակերպական առանձնահատկության արտահայտությունն է՝ ի հաստատումն այն բանի, որ տվյալ հասարակության մեջ փոխհարաբերությունների հիմքում մարդն է՝ որպես բարձրագույն արժեք և իրավունքը, հետևաբար՝ իրավակիրառ պրակտիկայի հիմքում պետք է դրվի այն հիմնական մոտեցումը, որ իրավունքի պաշտպանության սկզբունքը հանդիսանում է իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերից մեկը:

«1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց իրավունքների իրականացման և օրինական շահերի պաշտպանության իրավական և սոցիալ-տնտեսական երաշխիքների մասին» օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ սույն օրենքի գործողությունը տարածվում է 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց վրա: Նույն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց բնակարաններ հատկացնելու կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթված և ՀՀ քաղաքացիություն ստացած անձանց բնակարաններ հատկացնելու կարգը սահմանելու իրավասությունը վերապահել է ՀՀ կառավարությանը:

ՀՀ կառավարության 20.05.2004 թիվ 747-Ն որոշման 1-ին կետի համաձայն՝ ՀՀ կառավարության գործունեության ծրագրին համապատասխան, 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած՝ բնակարանի առաջնահերթ կարիք ունեցող անձանց մշտական օթևանով ապահովելու նպատակով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի իրականացման քաղաքականության 2003-2006 թվականների հիմնական ուղղությունները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշել է հաստատել 1988-1992 թվականներին

Ադրբեջանից բռնագաղթած անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի, որի 4-րդ բաժնի 1-ին պարբերության՝ հաշվի առնելով փախստականներով բնակեցված ժամանակավոր կացարանների բնակկենցաղային անմխիթար պայմանները և ելնելով այդ կացարաններից ու վագոն-տնակներից փախստականների առաջնահերթ տեղափոխման անհրաժեշտությունից (…) սույն ծրագրի շահառուներ են 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած այն փախստական (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած նախկին փախստական) ընտանիքները, որոնք՝

-բնակվում են ժամանակավոր կացարաններում,

-բնակվում են իրենց հատկացված տնամերձ հողամասերում և այլ տարածքներում տեղադրված վագոն-տնակներում կամ բնակվում են տնամերձ հողամասերի վրա եղած կիսակառույց տներում, որոնց տեխնիկական պայմանները հնարավորություն են տալիս դրանց շինարարությունը հասցնել ավարտի:

ՀՀ կառավարության 09.08.1997 թիվ 330 որոշման 1-ին կետի համաձայն՝ նկատի ունենալով բնակարանի կարիք ունեցող փախստականների հաշվառման և բնակելի տարածությունների հատկացման կարևորությունը փախստականների հիմնահարցերի լուծման գործում և փախստականների բնակարանների հաշվառման ու բաշխման մեկ միասնական համակարգ ունենալու անհրաժեշտությունը՝ ՀՀ կառավարությունը որոշում է հաստատել Հայաստանում բնակարանի կարիք ունեցող փախստականների հաշվառման և բնակելի տարածությունների հատկացման կարգը, որի 2005 թվականի դրությամբ գործած խմբագրությամբ 5-րդ կետի համաձայն՝ բնակարանի կարիք ունեցող փախստականների հաշվառումը, բնակելի տարածությունների հատկացման հերթականության որոշումը, ինչպես նաև բնակելի տարածության հատկացումն իրականացվում են հրապարակայնության պայմաններում: Նույն կարգի 6-րդ կետի համաձայն՝ բնակարանի կարիք ունեցող փախստականների հաշվառումն իրականացվում է ըստ նրանց փաստացի բնակության վայրի՝ սոցիալական ծառայության տարածքային կենտրոնում:

Ընդ որում, նշված կարգավորումը գործում է նաև այժմ՝ նույն որոշմամբ սահմանված կարգի 6-րդ կետով:

Մարդու իրավունքների պաշտպանի՝ 2023 թվականի տարեկան հաղորդման պատրաստման շրջանակներում խնդրի կարգավորման համար տեսանելի ապագայում ձեռնարկվող միջոցների վերաբերյալ ՀՀ վարչապետի աշխատակազմ ուղղված հարցմանն ի պատասխան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից տեղեկացվել է, որ Ադրբեջանից բռնագաղթած (1988-1992թթ.) անձանց բնակարանային խնդիրները լուծելու նպատակով Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոններում նոր գործառույթներ նախատեսված չեն:

Պաշտպանն ընդգծում է, որ «Փախստականների կարգավիճակի մասին» կոնվենցիայի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանավորվող պետություններն իրենց օրենքներին և սահմանադրություններին համապատասխան գործադրում են իրենց լավագույն ջանքերը՝ ապահովելու նման փախստականների բնակեցումը: Նույն կոնվենցիայի 21-րդ հոդվածը սահմանում է, որ բնակարանով ապահովելու կապակցությամբ Պայմանավորվող պետություններն իրենց տարածքում օրինական կարգով բնակվող փախստականների հանդեպ հնարավորության սահմաններում

ցուցաբերում են բարեհաճ վերաբերմունք, ինչպիսին ցուցաբերվում է նույն հանգամանքներում օտարերկրացիներին:

1988-1992 թվականներին Ադրբեջանից Հայաստան բռնագաղթած անձանց բնակարանային ապահովման խնդրին Պաշտպանն անդրադարձել է նաև 2018 և 2019 թվականների տարեկան հաղորդումներում:[905] Պաշտպանն, ի թիվս այլնի, առաջարկել է ՀՀ պետբյուջեում նախատեսել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած ծրագրի շահառու փախստականների բնակապահովման խնդիրը լուծելու համար՝ ապահովելով նրանց ինտեգրման այս կարևոր բաղադրիչի իրականացումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել ՀՀ կառավարության թիվ 330 որոշման շրջանակներում Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոններում հաշվառման վերցված փախստականներին բնակարանով ապահովելու հարցը և ապահովել այդ ուղղությամբ պետության ջանքերի շարունակականությունը:

2.9 Ազատությունից զրկված օտարերկրացիների իրավունքների ապահովման խնդիրներ

Պաշտպանը՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմ, 2023 թվականին մշտադիտարկման այցերի ընթացքում, ուսումնասիրելով նախկինում վերհանված խնդիրներն ու դրանք վերացնելու ուղղությամբ ձեռնարկված քայլերը, արձանագրել է ազատությունից զրկված օտարերկրացիների իրավունքների իրացման հիմնական խնդիրները: Նրանց են ներկայացվել նաև հիմնական իրավունքների և ազատությունների շրջանակը, Պաշտպանի իրավասությունը և վերջինիս դիմելու ընթացակարգը:

Մշտադիտարկման այցերի ընթացքում վեր են հանվել մի շարք խնդիրներ, այդ թվում՝

1) Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից արձանագրվել է, որ ՔԿՀ-ների աշխատակիցները բավարար չափով իրազեկված չեն ապաստան հայցողներին գրանցելու և համապատասխան պետական մարմիններին ուղղորդելու իրենց պարտավորության վերաբերյալ:

2) Արձանագրված հիմնական խնդիրներից է նաև ազատությունից զրկված օտարերկրացիների հետ հաղորդակցության հարցը: ՔԿՀ-ներում թարգմանչական ծառայությունների ոչ լիարժեք գործելու պատճառով հայերեն լեզվին չտիրապետող ազատությունից զրկված անձանց հետ հաղորդակցության ընթացքում շարունակում են առկա լինել դժվարություններ:

3) Խնդրահարույց է ազատությունից զրկված օտարերկրացիների առողջության պահպանման, ինչպես նաև սոցիալ-հոգեբանական աջակցություն ստանալու և այլ հասանելի ծառայություններից օգտվելու իրավունքների ապահովման հարցը:

Ազատությունից զրկված օտարերկրացիների իրավունքների իրացման հետ կապված խնդիրները, ինչպես նաև այդ խնդիրների լուծմանն ուղղված՝ Պաշտպանի ներկայացրած առաջարկներն առավել մանրամասն ներկայացված են Պաշտպանի՝ որպես

[905] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2018, https://www.ombuds.am/images/files/8f03a4f279d0491fd510fca443f8f269.pdf (էջեր՝ 677-679), և 2019 թթ. https://www.ombuds.am/images/files/15b2661f76d10eb07746d7d4d4dec84f.pdf (էջեր՝ 782-784) տարեկան հաղորդումները, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

կանխարգելման ազգային մեխանիզմի 2023 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցում:

Փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների ապահովմանն ու պաշտպանությանն առնչվող օրենսդրության ուսումնասիրությունները, որոնք տեղ են գտել ինչպես նախորդ տարիների, այնպես էլ՝ 2023 թվականի տարեկան հաղորդման մեջ, վկայում են, որ խնդիրները, ունենալով համակարգային բնույթ, շարունակում են մնալ արդիական և գտնվում են Պաշտպանի ուշադրության կենտրոնում:

ԲԱԺԻՆ 19. ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն[906] ազդարարների պաշտպանության ոլորտում իրականացնում է մոնիթորինգ և տվյալների հավաքում, ինչպես նաև հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց, կազմակերպությունների կողմից ազդարարների իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է ազդարարների իրավունքների և ազատությունների վերականգնմանը:

2023 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմ չեն մուտքագրվել ազդարարների իրավունքների խախտմանն առնչվող դիմումներ:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքի[907] 30.2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Պաշտպանն ազդարարների պաշտպանության իրականացման նպատակով իրավասու է հետևելու պաշտպանական և վերականգնողական միջոցառումների իրականացմանը, իրականացնելու ազդարարների պաշտպանության մեխանիզմների արդյունավետության մոնիթորինգ և գնահատում, հանդես գալու ազդարարների պաշտպանության իրականացման վերաբերյալ հրապարակային զեկույցներով, իրականացնելու սույն օրենքով սահմանված այլ լիազորություններ: Պաշտպանն իրավասու է ազդարարի կամ նրա փոխկապակցված անձի խնդրանքով խորհրդապահական կարգով տրամադրելու խորհրդատվություն և ներկայացնելու անձին իր իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունները:

Օրենքի նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Պաշտպանն իր տարեկան հաղորդման շրջանակներում ամփոփում և հրապարակում է ազդարարման հետ կապված հաշվետվությունը և վիճակագրությունը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ ազդարարման հետ կապված համապատասխան վիճակագրական տվյալների հիման վրա:

Միևնույն ժամանակ, ՀՀ կառավարության 2023 թվականի հուլիսի 6-ի N 1148-Ն որոշմամբ հաստատված 3-րդ հավելվածի 6-րդ կետի համաձայն՝ իրավասու մարմինը պարտավոր է իր կողմից վարվող վիճակագրությունը տարեկան վիճակագրական հաշվետվությունների ձևով ամփոփելուց հետո մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 10-ն ուղարկել Մարդու իրավունքների պաշտպանին:

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավակարգավորումները և պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ՀՀ կառավարության վերոնշյալ որոշման 3-րդ

[906] Այսուհետ նաև՝ Պաշտպան:
[907] Այսուհետ նաև՝ Օրենք:

հավելվածով հաստատված ձևին համապատասխան ներկայացված վիճակագրական տվյալները՝ ստորև ներկայացվում է ազդարարման հետ կապված վիճակագրությունը.

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Պետական մարմնի անվանումը	Տողի համարը	Ազդարարման հաղորդումների ընդհանուր քանակը	Այդ թվում						
			Ներքին, որից		Արտաքին, որից		Հանրությանը, որից		Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակին
	1.	2.	3.		4.		5.		6.
ՀՀ գլխավոր դատախազություն		116	Բանավոր	0	Բանավոր	0	Բանավոր	0	116
			Գրավոր	0	Գրավոր	0	Գրավոր	0	
ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով		1	Բանավոր	0	Բանավոր	0	Բանավոր	0	1
			Գրավոր	0	Գրավոր	0	Գրավոր	0	
ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե		11	Բանավոր	0	Բանավոր	0	Բանավոր	0	11
			Գրավոր	0	Գրավոր	0	Գրավոր	0	
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	0001/23	1	Բանավոր	0	Բանավոր	0	Բանավոր	0	0
			Գրավոր	0	Գրավոր	1	Գրավոր	0	
ՀՀ պաշտպանության նախարարություն		3	Բանավոր	1	Բանավոր	2	Բանավոր	0	0
			Գրավոր	0	Գրավոր	0	Գրավոր	0	

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Պետական մարմնի անվանումը	Տողի համար	Ազդարարման հաղորդումներ իրականացրած սուբյեկտների ընդհանուր թիվը	Ազդարարման հաղորդումներ իրականացրած սուբյեկտների թիվը՝ ըստ սուբյեկտների տեսակի	Այդ թվում							
				Ներքին, որից		Արտաքին, որից		Հանրությանը, որից		Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակին	
	1.	2.	3.	4.		5.		6.		7.	
ՀՀ գլխավոր դատախազություն		Նման հաշվառում չի վարվել	Ֆիզիկական անձ	Ֆիզիկական անձ		Ֆիզիկական անձ		Ֆիզիկական անձ		Ֆիզիկական անձ	
			Իրավաբանական անձ	Իրավաբանական անձ		Իրավաբանական անձ		Իրավաբանական անձ		Իրավաբանական անձ	
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	0001/23	1	Ֆիզիկական անձ	Ֆիզիկական անձ		Ֆիզիկական անձ		Ֆիզիկական անձ		Ֆիզիկական անձ	
			Իրավաբանական անձ	Իրավաբանական անձ		Իրավաբանական անձ		Իրավաբանական անձ		Իրավաբանական անձ	

Պետական մարմնի անվանումը	Տողի համարը	Ազդարարման հաղորդման դեպքը՝ ըստ օրենքի	Ընդհանուր թիվը՝ ըստ դեպքի տեսակի	Որից		
				Ազդարարման հաղորդումների այլ մարմիններ վերահասցեագրումների թիվը	Ազդարարման հաղորդման հիմքով վարույթի հարուցումը մերժված դեպքերի թիվը	Ազդարարման հաղորդման հիմքով հարուցված վարույթների թիվը
	1.	2.	3.	4.	5.	6.
ՀՀ գլխավոր դատախազություն				1	22	94
		Կոռուպցիոն բնույթի դեպք	53			
		Անհամատեղելիության պահանջի խախտման դեպք	1			
		Այլ բնույթի դեպքեր	34			
ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով		Անհամատեղելիության պահանջի խախտման դեպք	1			
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	0001/23	Հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ տեղեկություն	1			

ԱՂՅՈՒՍԱԿ 3

Պետական մարմնի անվանումը	Ազդարարման հաղորդման հիմքով հարուցված վարույթի արդյունքում ընդունված ակտերի ընդհանուր թիվը	Որից			
		Պաշտոնատար անձին կարգապահական պատասխանատվության ենթարկելու դեպքերի թիվը	Հանցագործության առերևույթ հատկանիշներ հայտնաբերելու և իրավասու մարմնին դիմելու դեպքերի թիվը	Հարուցված վարույթների կարճման դեպքերի թիվը	Խախտում չհայտնաբերելու դեպքերի թիվը
	7.	8.	9.	10.	11.

ՀՀ գլխավոր դատախազություն	0	0	1	47	0
ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով	0	0	1	0	0
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	1	0	0	0	0

*Դեպքերն ըստ օրենքի՝

1) Կոռուպցիոն բնույթի դեպքի մասին տեղեկություն

2) Շահերի բախման, հայտարարագրման պահանջի խախտման մասին տեղեկություն

3) Վարքագծի կանոնի խախտման մասին տեղեկություն

4) Անհամատեղելիության պահանջի խախտման մասին տեղեկություն

5) Այլ սահմանափակումների խախտման մասին տեղեկություն՝ նշել կոնկրետ խախտման անվանումը

6) Հայտարարագրման հետ կապված խախտման մասին տեղեկություն

7) Հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ տեղեկություն

ԱՂՅՈՒՍԱԿ 4

Պետական մարմնի անվանումը	Տողի համարը	Ազդարարին տրամադրված պաշտպանության միջոցի տեսակը*	Ընդհանուր թիվը՝ ըստ պաշտպանության տեսակի	Պաշտպանության նախաձեռնման հիմքը, որից	
				Մարմնի նախաձեռնությամբ տրամադրված պաշտպանության տեսակների թիվը	Ազդարարի դիմումի հիման վրա տրամադրված պաշտպանության տեսակների թիվը
	1.	2.	3.	4.	5.
ՀՀ գլխավոր դատախազություն		0	0	0	0
ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով		0	0	0	0
ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե		0	0	0	0

ՀՀ պետական եկամուտների կոմիտե	0001/23	0	0	0	0
ՀՀ պաշտպանության նախարարություն		0	0	0	0

Ազդարարին պաշտպանություն տրամադրելու մերժման դեպքերի ընդհանուր թիվը	Որից	
	Իրավասու մարմնի մերժման որոշումների թիվը	Դիմումին որևէ այլ հիմքով ընթացք չտալու դեպքերի թիվը
6.	7.	8.
0	0	0
0	0	0
0	0	0
0	0	0
0	0	0

Ազդարարի անձի գաղտնիության պահպանման պարտականության խախտման դեպքերը	Որից		Ազդարարի անձի գաղտնիության պահպանման պարտականության խախտման դեպքում օրենքով նախատեսված վարույթ հարուցելու միջնորդությունների թիվը	Ազդարարման հետևանքով ազդարարի նկատմամբ իրականացված վնասակար գործողությունների ընդհանուր թիվը
	Իրավասու մարմնի պատասխանատու անձի մեղքով	Այլ պատճառներով		
9.	10.	11.	12.	13.
0	0	0	0	0
0	0	0	0	0
0	0	0	0	0
0	0	0	0	0
0	0	0	0	0

Ազդարարի նկատմամբ իրականացված վնասակար գործողությունների վերացմանն ուղղված միջոցառումների թիվը	Որից		
	Ազդարարի իրավունքների պաշտպանությանը կամ խախտված իրավունքների վերականգնմանն ուղղված միջոցառումների թիվը	Վնասակար գործողություն կատարած պաշտոնատար անձանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու դեպքերի թիվը	Վնասակար գործողություն կատարած պաշտոնատար անձանց այլ պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությունների թիվը
14.	15.	16.	17.
0	0	0	0
0	0	0	0

0	0	0	0
0	0	0	0
0	0	0	0

*

1. Անձնական տվյալների գաղտնիություն

2. Վնասակար գործողություններից և դրանց հետևանքներից պաշտպանության իրավունք

3. Մարդու իրավունքների պաշտպանից խորհրդատվական բնույթի գաղտնի խորհրդատվություն իրավաբանական աջակցություն ստանալու իրավունք

4. Հատուկ պաշտպանություն, այդ թվում՝

1) պաշտպանվող անձին մոտենալու կամ նրա հետ շփվելու սահմանափակումը.

2) պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների գաղտնիացումը.

3) պաշտպանվող անձի, նրա բնակարանի և գույքի նկատմամբ հսկողությունը.

4) պաշտպանվող անձին անհատական պաշտպանության միջոցի տրամադրումը.

5) պաշտպանվող անձին բնակության այլ վայր փոխադրումը.

6) պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերի փոխարինումը կամ պաշտպանվող անձի արտաքինի փոփոխումը.

7) պաշտպանվող անձի աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրի փոխումը.

5. Այլ

Մնացյալ իրավասու մարմինների կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ վերջիններս ազդարարման հաղորդումներ չեն ստացել, հետևաբար վիճակագրական տվյալներ առկա չեն:

Վերոգրյալ վիճակագրությունը ցույց է տալիս, որ ազդարարման դեպքերը սակավաթիվ են, ինչի պատճառները կարող են տարբեր լինել: Մասնավորապես՝ վերջիններս կարող են պայմանավորված լինել հանրային իրազեկվածության, իրավագիտակցության և սոցիալական պատասխանատվության ցածր մակարդակով, համակարգի նկատմամբ անվստահությամբ, ազդարարման հաղորդումների վերաբերյալ վիճակագրության վարման կարգի ոչ պատշաճ կիրառմամբ և այլ հանգամանքներով:

Այսպես, համաձայն ՀՀ-ում «Կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի» ուսումնասիրության[908]՝ հարցվածների 44%-ը հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող ոչ մի պետական մարմնի և հասարակական կազմակերպության առհասարակ չի ճանաչել: Չկա լայն հասարակական ընկալում, որ ազդարարման ուղիները վստահելի են և արդյունավետ: Հարցվածների կեսից ավելին (51,1%) նշել է, որ չի հայտնի համապատասխան մարմիններին, եթե անձամբ առնչվի կոռուպցիայի հետ: Հարցվողների մեծ մասը համարում է, որ կոռուպցիոն դեպքերի մասին հայտնելու դեպքում քննադատության կարժանանա կամ կկրի այլ բացասական հետևանքներ: Խնդրահարույց է նաև հարցվողների 47,5%-ի մտավախությունն առ այն, որ «սովորական մարդիկ ոչինչ չեն կարող անել կոռուպցիան նվազեցնելու համար»: Առավել մտահոգիչ է քաղաքացիների 63%-ի կարծիքն առ այն, որ կոռուպցիան հնարավոր չէ նվազեցնել կամ հնարավոր է նվազեցնել միայն մասամբ:

[908] Տե՛ս Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն, Կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն, Երևան, 2022:

Ասվածը վկայում է, որ հանրության մի մասը չունի պատշաճ և բավարար տեղեկացվածություն հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող իրավասու մարմինների վերաբերյալ, մի մասը չի վստահում ազդարարման համակարգին, մյուս մասը տարբեր պատճառներով խուսափում է կոռուպցիոն դեպքերի մասին հաղորդում ներկայացնելուց և այլն:

Ուստի պետության կողմից պետք է ձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ՝ հանրության իրազեկման, իրավագիտակցության, սոցիալական պատասխանատվության մակարդակի բարձրացման, ազդարարին տրվող պաշտպանության միջոցների և, առհասարակ, ազդարարման համակարգի նկատմամբ վստահության ձևավորման ուղղությամբ:

Այս համատեքստում կարևորվում է ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1871-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը, որով, ի թիվս այլնի, նախատեսվել է հանրային հաղորդակցության և իրազեկման ծրագրի մշակման և հաստատման միջոցառումը:

Իրավասու մարմինների կողմից ներկայացրած տեղեկատվության վերլուծությունը վկայում է նաև վիճակագրության վարման կարգի միասնականության բացակայության մասին:

Մասնավորապես՝ ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 15-ի N 272-Ն որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 1-ին կետի համաձայն՝ ներքին և արտաքին ազդարարման հաղորդումների հաշվառումը և ձևակերպումն իրականացնում է «Ազդարարման համակարգի մասին» օրենքով նախատեսված մարմնի կամ կազմակերպության ղեկավարի կողմից համապատասխան իրավական ակտով նշանակված աշխատողը (պատասխանատու անձ):

Մինչդեռ՝ առանձին իրավասու մարմիններում ներքին և արտաքին ազդարարման հաղորդումների հաշվառումն ու ձևակերպումն իրականացնող պատասխանատու անձինք նշանակված չեն, ավելին՝ ազդարարման հաղորդումների հաշվառում չի իրականացվում, հետևաբար՝ նշված մարմիններում առկա չեն վիճակագրական տվյալներ ազդարարման հաղորդումների վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ***իրականացնել հանրային իրազեկումներ և վերապատրաստումներ՝ ըստ տարբեր թիրախային խմբերի՝ նպաստելով վերջիններիս իրավագիտակցության և սոցիալական պատասխանատվության մակարդակի բարձրացմանը, ազդարարին տրվող պաշտպանության միջոցների և, առհասարակ, ազդարարման համակարգի առնչությամբ իրազեկվածության բարձրացմանն ու նշված համակարգի և պաշտպանության միջոցների նկատմամբ վստահության ձևավորմանը,***
- ***ապահովել վիճակագրության վարման կարգի միատեսակ և պատշաճ կիրառումը իրավասու բոլոր մարմիններում:***

ԲԱԺԻՆ 20. ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1.Ընդհանուր տեղեկատվություն

Հայաստանում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի համապարփակ միջգերատեսչական մոտեցումն ու ազգային մեխանիզմը մեկնարկել է դեռևս 2002 թվականին՝ Հայաստանի Հանրապետությունից շահագործման նպատակով մարդկանց ապօրինի փոխադրման, տեղափոխման ու առուվաճառքի (թրաֆիքինգ) հետ կապված հարցերն ուսումնասիրելու և առաջարկություններ ներկայացնելու նպատակով 2002 թ. հոկտեմբերի 14-ին ՀՀ վարչապետի թիվ 591-Ա «ՀՀ թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի» ստեղծման որոշմամբ: ՀՀ կառավարությունն իր եռամյա ազգային ծրագրում, որն ընդունվել է 2023 թվականի սկզբին, առաջնահերթություն է տվել առավել արդյունավետ կանխարգելիչ միջոցառումների իրականացմանը, պոտենցիալ զոհերի բացահայտմանը, ինչպես նաև աջակցության կատարելագործմանն ու պաշտպանության մեխանիզմների հստակեցմանը: 2020 թվականից ի վեր՝ ՀՀ կառավարության առաջնահերթությունները զգալիորեն ընդլայնվել են՝ ներառելով Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի լայնամասշտաբ ռազմական գործողություններից և հաջորդիվ 2021 թվականին Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքի ուղղությամբ ռազմական ագրեսիայից տուժած բնակչությանը հոգեկան և ֆիզիկական օգնություն տրամադրող աջակցության մեխանիզմների ստեղծումը: Աջակցություն է ցուցաբերվում հատկապես խոցելի խմբերին, ինչպիսիք են՝ երեխաները, կանայք, հաշմանդամություն ունեցող անձինք, բռնի տեղահանված բնակչությունը՝ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարը դարձնելով ավելի ընդգրկուն և համապարփակ: Որդեգրված ազգային քաղաքականության շրջանակում Հայաստանը ստանձնել է գործելու պատասխանատվությունը թրաֆիքինգի մեղավորներին կանխելու, հետաքննելու և պատժելու, ինչպես նաև զոհերին պաշտպանելու և աջակցելու ուղղությամբ:

Հայաստանը նաև համագործակցում է ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի և Եվրոպայի խորհրդի, մասնավորապես՝ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի փորձագետների խմբի (ԳՐԵՏԱ) հետ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարում: 2021 թվականին Հայաստան կատարած իր վերջին մոնիթորինգային այցից հետո ԳՐԵՏԱ-ն հրապարակել է Հայաստանի մասին զեկույցը, որտեղ օրենսդրական և քաղաքական դաշտի բարելավումների ճանաչման հետ մեկտեղ ԳՐԵՏԱ-ն կենտրոնացել է մարդկանց թրաֆիքինգի զոհերի՝ արդարադատության և արդյունավետ պաշտպանության հասանելիության վրա: ԳՐԵՏԱ-ն ողջունել է նաև ՀՀ ոստիկանության և Քննչական կոմիտեի կազմում մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասնագիտացված կառույցների առկայությունը:[909]

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած վիճակագրության համաձայն՝ 2023 թվականի 12 ամիսների ընթացքում 25 անձ ճանաչվել է թրաֆիքինգի կամ շահագործման զոհ/հատուկ կատեգորիայի զոհ: Նրանցից 12-ն արական սեռի են, 13-ը՝ իգական, 7 անձ ենթարկվել է սեռական, իսկ 18-ը՝ աշխատանքային շահագործման: Նույնացված զոհերից 9-ը հատուկ կատեգորիայի զոհեր են (3-ը հոգեկան

[909] Տե՛ս GRETA's Country Report, «Access to justice and effective remedies for victims of trafficking in human beings», https://rm.coe.int/greta-third-evalution-report-on-armenia/1680a6b4ba հղումով 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

առողջության խնդիրներ ունեցող, 6-ը՝ երեխաներ, որոնք ենթարկվել են ինչպես սեռական, այնպես էլ աշխատանքային շահագործման): Բոլորը ՀՀ քաղաքացիներ են:

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տրամադրած տվյալների համաձայն՝ 2023 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 26 դեպք, որոնցից 4-ը՝ ներքին սեռական, 20-ը՝ ներքին աշխատանքային, իսկ 2-ն արտաքին աշխատանքային շահագործման դեպքեր են:



ՀՀ քննչական կոմիտեի վիճակագրության համաձայն՝ 2023թ. ընթացքում քննվել է թրաֆիքինգի վերաբերյալ 38 քրեական վարույթ, որից 5-ն ուղարկվել է դատարան, 5-ը կարճվել է, 19-ի նախաքննությունը շարունակվում է:

2.Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության հիմնական ուղղությունները

Մարդու իրավունքների պաշտպանը (այսուհետ՝ Պաշտպան) մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ոլորտում գործունեությունն իրականացնում է Պաշտպանի մանդատին վերաբերելի գործիքակազմի շրջանակներում:

Պաշտպանի աշխատակազմը շարունակել է ակտիվ մասնակցությունը Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի հարցերով խորհրդի աշխատանքային խմբի աշխատանքներին, մասնավորապես՝ ուղղված Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի կազմակերպման 2023-2025 թվականների ազգային ծրագրի և դրա իրականացման ժամանակացույցի մշակմանը:

Ընդ որում՝ ծրագրի և դրա իրականացման ժամանակացույցի մշակման շրջանակներում, ի թիվս այլ առաջարկությունների, Պաշտպանը ներկայացրել է առաջարկություններ՝ ուղղված ԳԱԾ մշտադիտարկման և գնահատման մեխանիզմի բարելավմանը: Մասնավորապես՝ հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով փորձագետների խմբի՝ 2022 թվականի Հայաստանի վերաբերյալ երրորդ զեկույցում մատնանշված մշտադիտարկման մեխանիզմի ներդրման անհրաժեշտությունը, այդ թվում՝ անկախ ազգային զեկուցողի նախատեսմամբ, Պաշտպանն առաջարկություն է ներկայացրել ներդնելու մարդկանց

թրաֆիքինգի և շահագործման հարցերով Ազգային զեկուցողի ինստիտուտը և վերջինիս իրավասությունը վերապահել Պաշտպանին:

Այս առումով հարկ է նշել, որ Հոլանդիայի թրաֆիքինգի հարցերով ազգային զեկուցողի բյուրոն իր հերթին հրապարակել է առաջարկ՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով ազգային զեկուցողների վերաբերյալ, համաձայն որի՝ «…կողմնակալության կամ նախապաշարմունքի որևէ երևույթ կանխելու համար նախընտրելի է, որ զեկուցողը զբաղեցնի անկախ պաշտոն»:[910]

Ողջունելով պետության կողմից իրականացված աշխատանքները՝ Պաշտպանն ընդգծում է, որ Հայաստանում դեռևս առկա է թրաֆիքինգի վերացման նվազագույն չափանիշներին չբավարարելու խնդիրը: Դասակարգման սանդղակում Հայաստանը պահպանել է իր դիրքը 2-րդ խմբում՝ համաձայն ԱՄՆ Պետքարտուղարության Մարդկանց թրաֆիքինգի մասին Հայաստանի վերաբերյալ 2023 թվականի զեկույցի:[911]

Պաշտպանի աշխատակազմը 2023 թվականին Պաշտպանի մանդատի շրջանակներում շարունակել է իր ակտիվ մասնակցությունը Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի հարցերով խորհրդին կից գործող աշխատանքային խմբի աշխատանքներին:

Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները 2023 թվականի ապրիլի 27-ին և մայիսի 30-ին ՀՀ արտաքին գործերի նախարարության դիվանագիտական դպրոցում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման թեմայով դասախոսություններ են անցկացրել դիվանագիտական դպրոցի ունկնդիրների և գործող դիվանագետների համար:

Պաշտպանի աշխատակազմը շարունակել է ընդլայնել միջազգային կազմակերպությունների հետ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի ուղղությամբ համագործակցությունը: Մասնավորապես՝ ՄԻՊ աշխատակազմի ներկայացուցիչը մասնակցել է 2023թ. մարտի 23-24-ը Վարշավայում կայացած «Մարդկանց թրաֆիքինգի ռիսկերի հաղթահարում Ուկրաինայի դեմ ռազմական հարձակման լույսի ներքո» խորագրով քաղաքացիական հասարակության և առաջնային արձագանքողների համար կազմակերպված վերապատրաստման դասընթացին, որը կազմակերպվել է ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի կողմից: Հանդիպումներ են տեղի ունեցել ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների մարդու իրավունքների դեպարտամենտի ղեկավարի հետ, որի ընթացքում ներկայացվել են ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպանության մարտահրավերները և թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում հիմնական խնդիրները, ինչպես նաև պայմանավորվածություն է ձեռք բերվել թրաֆիքինգի դեմ պայքարի ուղղությամբ առավել ակտիվ համագործակցություն իրականացնելու ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի հետ, ներառյալ՝ Պաշտպանի աշխատակազմի ներկայացրած կարիքների գնահատման հիման վրա հաստատության հետ առանձին ծրագրերի շրջանակներում:

[910] Տե՛ս «National rapporteurs on Trafficking in Human Beings (THB)», հասանելի է https://www.osce.org/files/f/documents/6/1/25185.pdf հղումով 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[911] Տե՛ս ԱՄՆ Պետքարտուղարության 2022 թվականի «Մարդկանց թրաֆիքինգի մասին» զեկույցը, հասանելի է https://am.usembassy.gov/wp-content/uploads/sites/92/tip2023_arm.pdf հղումով 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության հետ համագործակցության շրջանակներում Պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացման նպատակով 2023թ. հուլիսի 27-ին անցկացվել է «Հայաստանում թրաֆիքինգի դեմ պայքարի մշտադիտարկման համակարգի ուժեղացում» խորագրով աշխատաժողով: Այն կազմակերպվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող «Տվյալներ ազդեցության համար» (D4I) ծրագրի շրջանակում Պաշտպանի աշխատակազմի տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչների համար: Հանդիպման նպատակն էր զարգացնել աշխատակազմի՝ տվյալների հավաքագրման և օգտագործման կարողությունները, բացահայտել թրաֆիքինգի վտանգը, Պաշտպանի աշխատակազմում ամրապնդել մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի (C-TIP) ծրագրակազմի մշտադիտարկման գործընթացը: Քննարկվել են մի շարք հարցեր՝ կապված մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարում տվյալների հավաքագրման եղանակների և գործիքակազմերի կիրառման վերաբերյալ: Որպես անկախ մարմին՝ կարևորվել է Պաշտպանի ինստիտուտի դերը՝ հատկապես ոլորտում մշտադիտարկում իրականացնելու, վիճակագրություն հավաքագրելու և դեպքերն արձանագրելու և բացահայտելու, ինչպես նաև պետական իրավասու մարմիններին առաջարկներ ներկայացնելու տեսանկյունից:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող «Տվյալներ ազդեցության համար» (D4I) ծրագրի շրջանակում Պաշտպանի աշխատակազմի համար մշակվել է նաև թրաֆիքինգի զոհերի նախնական նույնականացման ուղեցույց՝ նախանշելով, թե ինչպես Պաշտպանի աշխատակազմը կարող է վաղ և ճշգրիտ հայտնաբերել թրաֆիքինգի զորհերին և արդյունավետ արձագանքել՝ ապահովելով թրաֆիքինգի զորհերի պաշտպանությունը:[912]

Խնդրի առնչությամբ արդիական է հանրային իրազեկվածության ոչ բավարար մակարդակը մարդկանց թրաֆիքինգի և շահագործման կանխարգելման տեսանկյունից: Հաշվի առնելով այս հանցագործության առանձնահատկությունները՝ չափազանց կարևոր

[912] Տե՛ս «Պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացման նպատակով անցկացվել է «Հայաստանում թրաֆիքինգի դեմ պայքարի մշտադիտարկման համակարգի ուժեղացում» խորագրով աշխատաժողով», հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/2631 հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

է իրազեկվածությանն ուղղված միջոցառումների շարունակական իրականացումը: Այդ նպատակով Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության և խնդիրների կանխարգելման վերաբերյալ մարզային և Երևանում քննարկումների ընթացքում պարբերաբար անդրադարձ են կատարել նաև մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հիմնախնդիրներին:

2023թ. դեկտեմբերի 4-ին Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը մասնակցել է Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի լուսաբանման ամենամյա լրագրողական մրցանակաբաշխության եզրափակիչ փուլին: Մրցանականաբաշխությունն իրականացվել է՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 1-ի N 33 և ՀՀ ԱՍՀ նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 2-ի N 115 համատեղ հրամանով հաստատված «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի լուսաբանման ամենամյա լրագրողական մրցանակաբաշխության կանոնակարգ»-ի համաձայն: Մրցանակաբաշխության նպատակն է խրախուսել Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի բազմակողմանի, օբյեկտիվ և արդյունավետ լուսաբանումը՝ դրանով իսկ նպաստելով մարդկանց թրաֆիքինգի և շահագործման կանխարգելմանն ուղղված ազգաբնակչության իրազեկվածության մակարդակի բարձրացմանը:

3.Խնդրի համակարգային դիտարկում

Հայաստանում թրաֆիքինգի զոհերի համար օրենսդրությամբ սահմանվում է աջակցության փաթեթ: Գործընթացը համակարգում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը: «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «...զոհերի և հատուկ կատեգորիայի զոհերի աջակցությունը կարող է ներառել՝

1. կացարանի տրամադրում.
2. բնաիրային օգնություն.
3. անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրում կամ վերականգնում.
4. բժշկական օգնություն և սպասարկում.
5. հոգեբանական օգնություն.
6. խորհրդատվական օգնություն.
7. իրավաբանական օգնություն.
8. խնամքի տրամադրում, այդ թվում՝ համապատասխան հաստատությունում.
9. թարգմանչական ծառայությունների մատուցում.
10. հիմնական կրթության ապահովում.
11. միջնակարգ կրթության կամ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության հասանելիության ապահովում.
12. աշխատանքի ապահովում.
13. անվտանգ վերադարձի կազմակերպում.
14. միանվագ դրամական փոխհատուցում»:

Արդեն երեք տարի է, ինչ պետությունն ամբողջապես հոգում է մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց համար նախատեսված կացարանի ծախսերը: Մինչ այդ՝ պետությունը տվյալ ծախսերն իրականացնում էր համաֆինանսավորմամբ: 2023 թվականի պետական բյուջեից այդ նպատակով

հատկացվել է շուրջ 37 միլիոն դրամ:[913] Բացի այդ՝ թրաֆիքինգի ենթարկված անձանց նաև դրամական միանվագ աջակցություն է տրամադրվում՝ 250 հազար դրամ՝ առաջին անհրաժեշտության կենցաղային կարիքները հոգալու համար: 2023 թվականին մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման զոհի կարգավիճակ ստացած 25 անձանցից 3-ին տրամադրվել է Կառավարության՝ 2016 թվականի մայիսի 5-ի «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հավանական զոհերին, զոհերին և հատուկ կատեգորիայի զոհերին «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքով նախատեսված աջակցության տրամադրման կարգը, չափերը, ինչպես նաև աջակցության և պաշտպանության նպատակով հատուկ կատեգորիայի երեխա զոհերի ուղղորդման ընթացակարգը սահմանելու մասին» N 492-Ն որոշմամբ սահմանված 250.000 ՀՀ դրամական միանվագ աջակցություն՝ առաջնային կարիքները հոգալու համար, իսկ 7-ն օգտվել են բժշկական տարբեր ծառայություններից:

Թեև պետությունը քայլեր ձեռնարկում է թրաֆիքինգի կանխարգելման և պաշտպանության կառուցակարգերը կատարելագործելու նպատակով, սակայն մինչ օրս առկա են բազմաթիվ խնդրահարույց հարցեր, որոնք պետք է ստանան անհապաղ լուծում: Դրանց թվում է, օրինակ, հարկադիր աշխատանքի կամ մուրացկանության մեջ երեխաների ներգրավվածության հարցը: 2023 թվականին բացահայտված դեպքերից միայն 2-ն է վերաբերում երեխաների թրաֆիքինգին: Միևնույն ժամանակ ակնհայտ է, որ խնդիրը շատ դեպքերում ունի լատենտային բնույթ, և դեպքերի հիմնական մասը բացահայտված չէ:

Նշված տեսանկյունից, որպես առավել խոցելի խումբ, կարելի է դիտարկել նաև աշխատանքային միգրացիայի նպատակով Հայաստան ժամանող օտարերկրացիներին: 2023 թվականին միայն Հնդկաստանից շուրջ 60.000 մարդ է ժամանել Հայաստան: Այդ հանգամանքը նկատի ունենալով՝ Պաշտպանը Հայաստանում Հնդկաստանի դեսպանության հետ համաձայնություն է ձեռք բերել քայլեր ձեռնարկել հետագա համագործակցության շրջանակներում՝ թրաֆիքինքի հնարավոր դեպքերը կանխելու նպատակով:

Պաշտպանը կարևորում է նաև Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց թրաֆիքինգի և շահագործման կանխարգելմանն ուղղված համակարգային աշխատանքների, այդ թվում՝ նրանց շրջանում իրազեկման միջոցառումների իրականացումը:

2023 թվականին առաջին անգամ Հայաստանում փորձարկվել է նաև մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ինքնանույնացման համակարգը, ինչը կարևոր է նաև այն տեսանկյունից, որ թրաֆիքինգը շարունակում է մնալ առավելապես լատենտ բնույթ ունեցող երևույթ, և հաճախ մարդիկ չեն գիտակցում թրաֆիքինգի զոհ դառնալու հանգամանքը:

2018 թվականի հունվարի 24-ին ՀՀ-ն ստորագրել է «Մարդու օրգանների թրաֆիքինգի դեմ» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան:[914] Կոնվենցիայի նպատակն է սահմանել կենդանի կամ մահացած դոնորներից մարդու օրգանների անօրինական հեռացումը՝ որպես քրեական հանցագործություն հետևյալ դեպքերում.

---

[913] Տե՛ս ԱՄՆ Պետքարտուղարության 2022 թվականի «Մարդկանց թրաֆիքինգի մասին» զեկույցը, հասանելի է https://am.usembassy.gov/hy/2023-tip-report-arm/ հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

[914] Տե՛ս 2015 թվականի մարտի 25-ի «Մարդու օրգանների թրաֆիքինգի դեմ» Եվրոպայի խորհրդի Կոնվենցիան https://rm.coe.int/16806dca3a հղումով, 2024 թվականի մարտի 29-ի դրությամբ:

• եթե հեռացումն իրականացվում է առանց կենդանի կամ մահացած դոնորի ազատ, տեղեկացված և կոնկրետ համաձայնության, կամ մահացած դոնորի դեպքում՝ առանց նրա ներպետական օրենսդրության համաձայն հեռացման թույլտվության.

• երբ օրգանների հեռացման դիմաց կենդանի դոնորը կամ երրորդ անձը ստանում է ֆինանսական շահ կամ համադրելի առավելություն.

• որտեղ մահացած դոնորից օրգանները հեռացնելու դիմաց երրորդ անձը ստանում է ֆինանսական շահ կամ համադրելի առավելություն:

Կոնվենցիան նաև նախատեսում է պաշտպանական միջոցներ և փոխհատուցում զոհերի համար, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումներ՝ ապահովելու փոխպատվաստման ծառայությունների թափանցիկությունը և արդարացի հասանելիությունը:

Կառավարության 2023 թվականի հունվարի 5-ի՝ «Հայաստանի Հանրապետությունում 2023-2025 թվականների ընթացքում մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» N 31-Լ որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում 2022-2025թթ. ընթացքում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագրով «Մարդու օրգանների թրաֆիքինգի դեմ» ԵԽ կոնվենցիայի վավերացումը նախատեսվել էր որպես 2023 թվականի 3-րդ եռամսյակի միջոցառում, սակայն կոնվենցիան մինչ օրս չի վավերացվել:

Պաշտպանը կարևորում է նշված կոնվենցիայի վավերացումը և ընդգծում, որ այն կարող է կարևոր իրավական հիմք դառնալ Հայաստանի Հանրապետությունում այս ոլորտում գործող իրավական ակտերի և կառուցակարգերի վերանայման ու կատարելագործման համար:

Անհրաժեշտ է շարունակաբար կատարելագործել ոլորտային օրենսդրությունը՝ կատարելագործելով մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման զոհերին կամ հավանական զոհերին ցուցաբերվող աջակցության որակը, նրանց իրավունքների պաշտպանության համակարգը և զոհակենտրոն քաղաքականության իրականացման մեթոդաբանությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ ***տարբեր թիրախային խմբերի ներգրավմամբ իրականացնել իրազեկման պարբերական միջոցառումներ՝ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման երևույթի, դրա կանխարգելման կառուցակարգերի և պաշտպանության գործիքակազմերի առնչությամբ:***

✓ ***շարունակաբար կատարելագործել Հայաստանի Հանրապետության ոլորտային օրենսդրությունը, մշակել գործուն կառուցակարգեր թրաֆիքինգի դեմ պայքարն ավելի արդյունավետ ու նպատակային դարձնելու համար:***

✓ ***վավերացնել «Մարդու օրգանների թրաֆիքինգի դեմ» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան:***

✓ ***ձեռնարկել առաջնահերթ քայլեր՝ աշխատանքային շահագործման նպատակով թրաֆիքինգի կանխարգելման և դրա դեմ պայքարելու համար, մասնավորապես՝***

• ***կազմակերպել վերապատրաստման դասընթացներ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ներկայացուցիչների համար, ինչպես նաև իրավապահ մարմինների աշխատակիցների, դատախազների և դատավորների***

համար աշխատանքային շահագործման նպատակով թրաֆիքինգի դեմ պայքարի և զոհերի իրավունքների վերաբերյալ.

● ուժեղացնել համացանցի և սոցիալական մեդիայի միջոցով տարածված աշխատանքի խարդախ առաջարկների զսպման կառուցակարգերը և անվտանգ միգրացիայի և թրաֆիքինգի ռիսկերի վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ջանքերը:

✓ լրացուցիչ միջոցներ ձեռնարկել մարդկանց թրաֆիքինգի դեմ քրեական արդարադատության արձագանքն ուժեղացնելու համար, այդ թվում՝

● մարդկանց թրաֆիքինգի դեպքերի քննության, բավարար ապացույցների հավաքագրման վերաբերյալ մասնագիտացված դասընթացների անցկացում.

● քննիչների, դատախազների և դատավորների համար թրաֆիքինգի զոհերի իրավունքների վերաբերյալ իրազեկման բարձրացում:

✓ «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին» ԵԽ կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների՝ ՀՀ կողմից իրականացման լույսի ներքո, օրենսդրական փոփոխությունների իրականացմամբ նախատեսել ազգային զեկուցողի ինստիտուտի ներդրումը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատությանը օժտելով պետական հաստատությունների՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգ) դեմ ուղղված գործողությունները մշտադիտարկելու իրավասությամբ: